

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

ՀԱՏՈՐ XIV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

ՀԱՏՈՐ XIV

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410
Հ 247

Կազմողներ՝

*Աշխեն Ղարալյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության պետ,
իրավագիտության թեկնածու*

*Նարինե Առաքելյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետ*

*Օքսանա Դիլբանդյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետ*

*Լիլի Դրմեյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետ*

*Անի Սարգսյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար
մասնագետ*

*Լիլիանա Միսակյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջին կարգի
մասնագետ*

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ: ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020, ՀԱՏՈՐ XIV.- ԵՐ. ԱՆՏԱՐԵՍ:
2022.- 864 էջ:

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-76-920-2

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2022

Partnership for good Governance Գործընկերություն հանուն լավ կառավարման



Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2020 թվականի որոշումների ընտրանու տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) ծրագրային ձևաչափի շրջանակներում ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի շրջանակներում: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2020 թվականի որոշումների ընտրանիում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում կողմերի պաշտոնական տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Արդարադատության իրականացումը ՀՀ վճռաբեկ դատարանի հիմնական, սակայն ոչ միակ գործառնություն է: Անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործընթացում Վճռաբեկ դատարանն իրականացնում է նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնություն, որի հիմքերը դրվեցին 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով և ամրապնդվեցին 2015 թվականի համապատասխան փոփոխություններով: Իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների միջոցով ՀՀ վճռաբեկ դատարանը ստեղծում է մեկ միասնական իրավական հարթություն այդ օրենքների տարաբնույթ դրույթների գործողության համար: Այլ կերպ ասած՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր ամենօրյա գործունեությամբ ապահովում է բազմաբնույթ իրավանորմերի կանխատեսելիությունը և կայունությունը՝ նպաստելով իրավական որոշակիության ու իրավական անվտանգության մակարդակի բարձրացմանը, կանխատեսելի արդարադատության ձևավորմանը:

Ուրախությամբ պետք է փաստել, որ տարեցտարի կարևորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների նշանակությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներն այսօր արդեն ոչ միայն ուղղորդող նշանակություն ունեն դատական պրակտիկայի համար, այլև որոշ դեպքերում օրենսդրական նախաձեռնությունների ազդակ են հանդիսանում՝ արդյունքում ձեռք բերելով նաև օրենսդրական գործունեության համար կողմնորոշիչ բնույթ: Հատկանշական է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների դերի բարձրացումն իրավագիտության ֆակուլտետներ ունեցող բուհերի, ինչպես նաև Արդարադատության սկադեմիայի և Փաստաբանական դպրոցի ուսումնական գործընթացում:

Վերոգրյալն ուղղակիորեն հաստատում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հասանելիությունն իրավական հանրությանն ապահովելու անհրաժեշտությունը, որը յուրաքանչյուր տարի իրականացվում է նաև հաշվետու տարվա նախադեպային որոշումների ընտրանու կազմման և հրատարակման միջոցով:

Սույն ընտրանին, որը թվով 14-րդն է, այդ գործընթացի մի դրսևորումն է, որն ամփոփում է 2020 թվականի ընթացքում ներկայացված վճռաբեկ բողոքների քննության արդյունքում քաղաքացիական և վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած ուղղորդող դիրքորոշումները: Այն բաղկացած է որոշումների համառոտագրումներից, երկու բաժնից՝ «Գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) որոշումներ» և «Միջանկյալ դատական ակտերի վերաբերյալ որոշումներ»: Բաժիններն իրենց հերթին ընդգրկում են քաղաքացիական իրավունքին, քաղաքացիական դատավարությանը, վարչական իրավունքին և վարչական դատավարությանը վերաբերող գլուխներ: Բացի կայացված որոշումներից, ներկայացված են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորների կողմից կոնկրետ որոշման կապակցությամբ ներկայացված հատուկ կարծիքները:

Ընտրանին ներառում է նաև լագերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Վստահ եմ, որ սույն ընտրանին, ինչպես և նախորդները, շարունակելու է նպաստել կայացված նախադեպային որոշումների հասանելիության և կիրառության ապահովմանը, խթանելու է դատավորների, դատարանների աշխատակազմի, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, իրավակիրառ հանրության այլ ներկայացուցիչների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

**ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատի նախագահ
Ռ. Հակոբյան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 14

Հունվար-դեկտեմբեր 2020

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՌԻԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ
(ԵԶՐԱՓՎԱԿԻՉ) ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ.....	1
Ընդհանուր սեփականություն.....	1
Գրավի իրավունք	17
Ներկայացուցչություն	50
Հայցային վաղեմություն	86
Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին.....	126
Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ	126
Պայմանագրերից ծագող պարտավորություններ	133
Ապրանքների մատակարարում	133
Վարձակալություն.....	144
Վարկ.....	161
Վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ	204
Ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները	204
Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունները.....	220
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	265
Ծտողների իրավունքներն ու պարտականությունները.....	265
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	281
Աշխատանքային պայմանագրի լուծումը.....	281
ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ	334

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Դատական ակտի ստորագրումը379

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարչական պատասխանատվություն386
Վարչարարություն և վարչական վարույթ462
Հարկային իրավունք.....550

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապացույցները.....597
Դատավարական ժամկետները618
Դատական ծախսերը628
Վարույթը վերաքննիչ դատարանում638

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Վարույթը վերաքննիչ դատարանում646

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Գործերի ընդդատությունը707
Դատավարական ժամկետները740
Գործի վարույթը կասեցնելը և կարճելը784
Դատական կարգով վարչական պատասխանատվության
ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը.....793

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

06.05.2020թ.

1. Իրինա Մաթևոսյանն ընդդեմ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և մյուսների, քաղ. գործ թիվ
ԵԱԴԴ/1345/02/14

Էջ
1-16

Խնդիր. 1. Ընդհանուր սեփականության մասնակցի կողմից պարտապան համասեփականատիրոջ պարտքը մարելը բավարար է արդյոք ընդհանուր սեփականությունում պարտապան համասեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման և վերջինիս բաժնի նկատմամբ պարտապանի պարտքը մարած ընդհանուր սեփականության մասնակցի սեփականության իրավունքի ծագման համար:

2. Արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձի՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ ներկայացված հայցը քննության ենթակա՞ է արդյոք գույքի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանում այն դեպքում, երբ արգելանքի տակ գտնվող գույքը ներառված է սնանկության գործով պարտապանի գույքային գանգվածում:

Վճռարկի դատարանի դիրքորոշումը. 1. Վճռարկի դատարանը փաստել է, որ բոլոր այն դեպքերում, երբ պարտապան չհանդիսացող ընդհանուր սեփականության մասնակցի մոտ առկա է համաձայնություն՝ գնելու պարտապան համասեփականատիրոջ բաժինը, ապա վերջինս պարտավոր է կատարել կոնկրետ և համարժեք գործողություններ՝ ուղղված ընդհանուր սեփականության մեջ պարտապանի բաժնի գնմանը: Ընդ որում, Վճռարկի դատարանն ընդգծել է, որ պարտատիրոջ հանդեպ առկա պարտավորության կատարումը պարտապան չհանդիսացող ընդհանուր սեփականության մասնակցի կողմից չի կարող համարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պարտապանի բաժնի ձեռքբերում, քանի որ օրենսդիրը վերոհիշյալ իրավական նորմով սահմանել է ընդհանուր սեփականության մասնակցի՝ պարտապանի բաժինը շուկայական գնով գնելու իրավունքը, ինչը ենթադրում է պարտապանի բաժնեմասի օտարում՝ զուգորդված ընդհանուր սեփականությունում պարտապանի սեփականության իրավունքի դադարմամբ և ընդհանուր սեփականությունում պարտապանի ունեցած բաժնի նկատմամբ այդ բաժինը շուկայական գնով ձեռք բերած ընդհանուր սեփականության մասնակցի սեփականության իրավունքի ծագմամբ: Վճռարկի դատարանի նման հետևությունը բխում է այն հանգամանքից, որ պարտապանի սեփականության իրավունքը՝ որպես սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունք, դադարման ենթակա է միայն օրենքով սահմանված դեպքերում, իսկ տվյալ դեպքում օրենքը որպես պարտապան համասեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման հիմք նախատեսել է ոչ թե այլ անձի (այդ թվում՝ մյուս համասեփականատիրոջ) կողմից պարտապանի պարտքի մարումը, այլ՝ շուկայական գնով ընդհանուր սեփականությունում պարտապանին պատկանող բաժնի գնումը՝ վաճառքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղելու նպատակով: Ուստի, բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձը վկայակոչում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրակարգավորման հիման վրա պարտապան համասեփականատիրոջ պարտքը մարելու արդյունքում պարտապանի բաժնի նկատմամբ իր սեփականության իրավունքի ծագման հանգամանքը, վերջինս պարտավոր է ապացուցել պարտապան համասեփականատիրոջ և իր միջև պարտապանի բաժնի օտարման գործարք կնքված լինելու և այդ գործարքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղելու փաստերի առկայությունը:

Վճռարկի դատարանն արձանագրել է, որ թեև օրենքը նախատեսում է անձանց քաղաքացիական իրավունքների ծագման մի շարք հիմքեր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն միաժամանակ նախատեսում է նաև պարտադիր պահանջ՝ պետական գրանցման ենթարկելու այն իրավունքները, որոնք օրենքի հիման վրա ենթակա

են այդպիսի գրանցման: Ընդ որում, գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից, ինչը ենթադրում է, որ նույնիսկ օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը բավարար չէ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման համար: Նշվածից բացառություն է նախատեսված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, որով սահմանված են գույքի նկատմամբ այն իրավունքները և սահմանափակումները, որոնք ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից: Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այնի, պետական գրանցման ենթակա իրավունք է համարվում նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձը վկայակոչում է օրենքով նախատեսված այս կամ այն հիմքով անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի ծագման հանգամանքը, վերջինս պարտավոր է ապացուցել նաև այն փաստը, որ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման է ենթարկել իր վերոհիշյալ իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապան համասեփականատիրոջը պատկանող բաժնի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքի դադարման և այդ բաժնի նկատմամբ ընդհանուր սեփականության մյուս մասնակցի սեփականության իրավունքի ծագման փաստը հաստատված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վերոհիշյալ փաստերը վկայակոչող գործին մասնակցող անձն ապացուցում է պարտապան համասեփականատիրոջ և ընդհանուր սեփականության մասնակցի միջև շուկայական գնով պարտապանի բաժնի օտարման գործարք կնքված լինելու, այդ գործարքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղված լինելու փաստերի առկայությունը, ինչպես նաև այդ գործարքից ծագած սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման ենթարկված լինելու հանգամանքը:

2. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությանը, փաստել է, որ նշված կարգավորումը չի ենթադրում ցանկացած հարցի ըննություն սնանկության գործի շրջանակում: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված հայցի բավարարումը կհանգեցնի սնանկության գործով պարտապանի գույքային գանգվածի փոփոխության, նման հայցը ըննության ենթակա է միայն պարտապանի սնանկության գործի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից օրենքով նախատեսված պահանջներով քաղաքացիական գործերի վարույթները պետք է կենտրոնանան մեկ վարույթում, այն է՝ սնանկության վարույթում:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ արգելանքի տակ գտնվող գույքը ներառված է սնանկության գործով պարտապանի գույքային գանգվածում, արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձի կողմից ներկայացված՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ըննության ենթակա է ոչ թե գույքի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանում, այլ գույքի սեփականատեր հանդիսացող պարտապանի սնանկության գործի շրջանակներում:

ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆԵՐ

27.08.2020թ.

2. Ռոբերտ Մելիք-Ստեփանյանն ընդդեմ Արմեն Աճեմյանի, Սուսաննա Մանուկյանի, քաղ. գործ թիվ ԵՄԳ/0863/02/17

Էջ 17-38

Ննդիր. Արդյո՞ք գրավի առարկան օտարելու դեպքում օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը դադարում է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնույթագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը

խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Վճռաբեկ դատարանը հավելել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ կետն ապառիկ վաճառված ապրանքի վաճառողի իրավունքների պաշտպանությանն ուղղված հատուկ կարգավորում է նախատեսել, որի համաձայն՝ մինչև գնորդի կողմից պարտքի համար վճարելու պարտավորության ամբողջական և պատշաճ կատարումը վաճառված ապրանքը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված: Այսինքն՝ նման պարագայում վաճառողը գրավատուի կարգավիճակ է ստանում օրենսդրական հատուկ կարգավորման հետևանքով, եթե, իհարկե, առուվաճառքի պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ի տարբերություն պայմանագրի ուժով ծագող գրավի՝ օրենքի հիման վրա գրավի ծագումն օրենսդիրը պայմանավորել է օրենսգրքում նշված հանգամանքների երևան գալով, մասնավորապես՝ ապրանքի ապառիկ վաճառքի դեպքում: Գրավատուի իրավունքներից վաճառողը կարող է օգտվել օրենքի ուժով՝ սահմանված կարգով ապրանքի ապառիկ առուվաճառքի պայմանագիր կնքելու փաստի հիման վրա: **Օրենքի ուժով գրավ համարվող ապրանքն օտարելիս ապառիկ առուվաճառքի պայմանագրի գնորդը պարտավոր է գույքի նոր ձեռքբերողին նախագույնացնել այդ գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների առկայության մասին, ընդ որում, անկախ այդ պարտականությունը կատարված լինելու կամ չլինելու հանգամանքից՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելու դեպքում գրավի իրավունքը պահպանում է իր ուժը, և գրավը չի դադարում:**

15.05.2020թ.

3. Արմեն Մուրադյանն ընդդեմ «Գառնի ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1159/02/17

Էջ 39-49

Խնդիր. Արդյո՞ք գրավի իրավունքը ենթակա է դադարման այն դեպքում, երբ գրավի պայմանագիրը կնքելուց հետո գրավի առարկայի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անվավեր է ճանաչվում՝ որպես կեղծ գործարքների անվավերության հետևանք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների, այդ թվում նաև՝ գրավի իրավունքի դադարման համար: Այս կանոնից բացառությունները պետք է սահմանված լինեն բացառապես օրենքով:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթի իրավական վերլուծությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նշված իրավական նորմով, ի լրումն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի, սահմանված է գրավի դադարման ևս մեկ հիմք, այն է՝ գրավը դադարում է այն դեպքում, երբ գրավի առարկա գույքն օրենքով սահմանված կարգով *առգրավվել է գրավարուից այն հիմքով, որ իրականում այդ գույքի սեփականատերն ուրիշ անձ է:*

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոհիշյալ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ փաստական հանգամանքի առկայությունը՝ գրավի առարկա գույքը պետք է օրենքով սահմանված կարգով առգրավված լինի այն այլ անձի սեփականությունը հանդիսանալու փաստով: Այսինքն՝ առգրավման հիմքը բացառապես պետք է պայմանավորված լինի գրավադրված գույքն այլ անձին սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գրավի առարկայի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը պետք է առկա լինի հենց գրավադրման պահին, հակառակ պարագայում, երբ խոսքը գնում է գրավի պայմանագրի կնքումից հետո գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխության մասին, կիրառման են ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ և 242-րդ հոդվածի 1-ին կետերը, այսինքն՝ գրավի իրավունքը պահպանում է իր ուժը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ նման դեպքում առուվաճառքի պայմանագրի առարկայի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի գրանցումը տեղի է ունենում իրական սեփականատիրոջ կամքով և ցանկությամբ, հետևաբար վերջինս կեղծ առուվաճառքի պայմանագիրը կնքելիս կանխատեսում է, որ գնորդը առուվաճառքի պայմանագրի առարկայի նկատմամբ կարող է կատարել սեփականության իրավունքից բխող ցանկացած գործողություն, այդ թվում նաև՝ որպես պարտավորության կատարման ապահովման միջոց գրավ դնել առուվաճառքի պայմանագրի առարկան:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

10.12.2020թ.

4. Հայկ Շեկյանն ընդդեմ Ռազմիկ Կարապետյանի, Մարինե Խաչատրյանի, Աննա Խաչատրյանի, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/2401/02/15

Էջ
50-85

Խնդիր. Կարո՞ղ է արդյոք սեփականատիրոջ կողմից տրված լիազորագիրը վերացված համարվել, իսկ այդ լիազորագրով կատարված գործարքը և դրանից ծագած իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչվել, եթե մինչև այդ լիազորագրով նախատեսված գործարքի կնքումը գույքի սեփականատերը երրորդ անձի հետ նոտարական կարգով ձևակերպել է առուվաճառքի պայմանագիր, սակայն դրանից ծագող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վերոգրյալ հարցադրմանը պատասխանելու համար Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարել պարզաբանել, թե.

1. որ **պահից է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում կնքված, որն է պայմանագրով գույք ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման պահը, և որ դեպքում** պայմանագիրն ու դրանից ծագած իրավունքի պետական գրանցումը կարող են ճանաչվել անվավեր,

2. որ դեպքում և ինչ կարգով լիազորագիրը կարող է համարվել դադարած:

1) Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագումն անմիջականորեն կապված է գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման կարգի պահպանման հետ: Այսինքն, որպեսզի անշարժ գույքը ձեռք բերողի մոտ ծագի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ է ձեռք բերվող գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքը ենթարկել պետական գրանցման: Միայն այս պահանջի կատարումից հետո է պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը կոնկրետ գույքի նկատմամբ: Ուստի, քանի դեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը կատարված չէ, պայմանագրի առարկա անշարժ գույքը ձեռք բերողն օրենքի իմաստով չի կարող ակնկալել պետության կողմից կոնկրետ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի պաշտպանություն:

Վճռարեկ դատարանը գտել է, որ շարժական գույքի առուվաճառքի վերաբերյալ կողմերի միջև ձեռքբերված համաձայնությունը՝ պայմանագիրը, համարվում է կնքված համապատասխան գույքը հանձնելու պահից (եթե դրա համար օրենսդիրը չի նախատեսել իրավունքի պետական գրանցում), մինչդեռ **անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը** կնքված համարելու համար բավարար չէ կողմերի ստորագրությամբ դրա բոլոր էական պայմաններին համաձայնելը և պայմանագիրը նոտարական վավերացման ենթարկելը, քանի որ պայմանագիրը **կնքված է համարվում դրանից ծագող իրավունքները**, տվյալ դեպքում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը, **պետական գրանցման ենթարկելու պահից:** Ընդ որում, օրենսդիրը հստակեցրել է, որ անշարժ գույքի նկատմամբ ծագած սեփականության իրավունքը պետք է պետական գրանցման ներկայացվի 30 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նշված գույքի նկատմամբ գործարքը ենթարկվել է նոտարական վավերացման:

Վճռարեկ դատարանը հանգել է ամփոփիչ հետևության, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, իսկ գնորդի մոտ պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է ծագած առուվաճառքի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքի պետական գրանցման պահից: **Ուստի, քանի դեռ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցում տեղի չի ունեցել, անկախ կողմերի միջև առուվաճառքով կատարված գործողությունների ծավալից՝ այդ պայմանագիրն ինքնին չի կարող գույքը ձեռք բերողի մոտ առաջացնել սեփականության իրավունք՝ որպես պայմանագրից բխող իրավական հետևանք:**

2) Վճռարեկ դատարանը արձանագրել է, որ այն դեպքում, երբ լիազորողը որոշում է դադարեցնել նոտարական կարգով վավերացված լիազորագրի գործողությունը, պարտավոր է կատարել հետևյալ՝ միայնաց հետ փոխկապակցված գործողությունները, մասնավորապես՝

1. լիազորագիրը վերացնել նոտարական կարգով,
2. լիազորագրի վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը:

Հակառակ պարագայում այն իրավունքների և պարտականությունների շրջանակը, որոնք ծագել են լիազորված անձի գործողությունների հետևանքով և մինչև այն պահը, երբ վերջինս իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերից որևէ մեկով լիազորագրի դադարման մասին, շարունակում են պահպանել իրենց իրավաբանական ուժը լիազորողի և նրա իրավահաջորդների համար երրորդ անձանց նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երրորդ անձը գիտեր կամ օբյեկտիվորեն պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

24.09.2020թ.

5. ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Նունե Իսկոյանի, քաղ. գործ թիվ ԵԱՔԳ/2855/02/15

Էջ 86-115

Խնդիր. Ո՞ր պահից է ծագում դատախազության՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը, և նման հայցի հարուցման համար արդյո՞ք պարտադիր պայման է վնաս պատճառած անձի՝ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջով դատախազության՝ հայց հարուցելու իրավունքի ծագման պահը ճիշտ որոշելու համար առանցքային նշանակություն ունի այն հարցի պատասխանը, թե որ պահից սկսած է վերջինս տիրապետում պետության գույքային շահի խախտման վերաբերյալ բավարար տեղեկությունների, ինչպես նաև իր տնօրինության ներքո ունենում այդ խախտման փաստը հիմնավորող ապացույցների բավարար համակցություն, ինչպիսի հանգամանքներով էլ պայմանավորված հնարավոր կլինի փաստել, որ դատախազության մոտ հենց այդ պահից սկսած հաստատապես ձևավորվում է համոզմունք առ այն, որ պետությանը պատճառվել է գույքային վնաս, և վերջինս այդ պահից սկսած հնարավորություն է ստանում պատշաճ հայց ներկայացնելու միջոցով դիմելու դատական պաշտպանության: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատախազության՝ պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը ծագում է անկախ այն հանգամանքից, թե արդյոք վնաս պատճառած անձը պետությանը վնաս է պատճառել հանցագործության կատարման հետևանքով, թե այլ հակաիրավական վարքագծի արդյունքում, ինչպես նաև անկախ այն հանգամանքից, թե վնաս պատճառած անձն արդյոք մեղավոր է ճանաչվել այդ արարքի կատարման մեջ, թե ոչ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ քաղաքացիական հայցը կարող է հարուցվել ինչպես ավելի վաղ, քան մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու փուլը, այնպես էլ քրեական գործի դատական քննության ցանկացած փուլում՝ մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը՝ կախված այն հանգամանքից, թե երբ են ի հայտ եկել հայց հարուցելու նախադրյալները: Միևնույն տրամաբանությունն է գործում նաև քաղաքացիական դատավարությունում՝ հայց կարող է հարուցվել ցանկացած պահի, երբ առկա են հայց հարուցելու նախադրյալները: Մասնավորապես՝ հանցագործությամբ պետության գույքային շահերին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Դատախազությունը կարող է հայց հարուցել ցանկացած պահի, երբ իր տիրապետության ներքո առկա կլինեն քրեական օրենսգրքով չօրոյաարված արարքի կատարման հետևանքով պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ բավարար փաստեր: Հակառակ մեկնաբանությունը կնշանակի, որ, բացի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքերից, ոչ մի այլ դեպքում (օրինակ՝ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու և այլն) անձի նկատմամբ հնարավոր չի լինի քրեական օրենսգրքով չօրոյաարված արարքի կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց հարուցել: Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի տառացի մեկնաբանությունից բխում է, որ Դատախազությունը քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցում է ցանկացած պահի, երբ օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ փաստ՝ անկախ քրեական գործի հարուցման, օրինական ուժի մեջ մտած դատավճռով վնաս պատճառած անձի դատապարտված լինելու հանգամանքներից:

17.12.2020թ.

6. Հրայա Գրիգորյանն ընդդեմ Գեորգի Բաղդասարյանի, երրորդ անձ Ավետիք Պողոսյանի, քաղ. գործ թիվ ԵԱԴԳ/3423/02/14

Էջ
116-125

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայցային վաղեմության կիրառման առանձնահատկություններին առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ ներկայացված լինելու պայմաններում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետը, պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության ժամկետը լրանալու հարցը: Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը հայցը մերժելու հիմք է՝ անկախ այն հանգամանքից՝ հայցը հիմնավոր է, թե՛ ոչ: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հարցը քննարկելիս դատարանը նախևառաջ պարզում է այն հարցը, թե հայցային վաղեմության ինչպիսի ժամկետներ են կիրառելի տվյալ դեպքում: Մասնավորապես, առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջի քննության դեպքում, եթե գործին մասնակցող անձը դատարանին խնդրել է կիրառել հայցային վաղեմություն, դատարանը պետք է պարզի, թե ինչ տեսակի պայմանագրի անվավերության հետևանքներ են տվյալ գործով քննարկվում, ինչ բնույթի հարաբերություններ են կարգավորվում դրանով, և արդյոք տվյալ տեսակի պայմանագրին ներկայացված են այնպիսի պահանջներ, որոնք չպահպանելը հանգեցնում է առոչնչության: Միայն այդ հանգամանքները պարզելուց հետո դատարանը կարող է հետևություն անել այն մասին, թե տվյալ գործարքի նկատմամբ հայցային վաղեմության ինչպիսի ժամկետներ են կիրառելի՝ ընդհանուր, թե հատուկ, և հայցային վաղեմության համապատասխան ժամկետի խախտում տեղի ունեցել է, թե՛ ոչ:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԱՆՁԱՆՑ ՓՈՓՈԽՎԵԼԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

10.07.2020թ.

7. «ԱՐԱՐԱՏԲԱՆ» ԲԲԸ-ն ընդդեմ Խաչիկ Կոսյանի, սնանկ. գործ թիվ ԵԷԴ-0057/04/17

Էջ
126-132

Խնդիր. Արդյո՞ք իրավաբանական անձանց միացման հետևանքով պահանջի իրավունքը փոխանցվելու դեպքում նոր պարտատերը պարտավոր է այդ մասին իրազեկել պարտապանին՝ առաջացած կետանցի հետևանքով տոկոսներ հաշվեգրելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատերը կարող է իր պահանջի իրավունքը զիջել այլ անձի, և դրա համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում: Իսկ ահա պարտքի փոխանցման դեպքում օրենսդիրը սահմանել է պարտատիրոջ համաձայնության առկայության ինպերատիվ պահանջը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի նման մոտեցումը ինքսանպատակ չէ: Տարբերակված մոտեցման էությունը կայանում է նրանում, որ պարտավորության մեջ պարտատիրոջ համար միշտ կարևոր է, թե ով է պարտապանը, քանի որ հաճախ պարտապանի անձից է կախված պարտավորության ժամանակին և պատշաճ կատարումը: Մինչդեռ, պարտապանի համար, ըստ էության, կարևոր է ոչ թե պարտատիրոջ անձը, այլ իր պարտավորության պատշաճ կատարումը՝ հետագա անբարենպաստ հետևանքներից զերծ մնալու համար: Նշված հիմնավորմամբ է, որ պարտավորական իրավահարաբերության մեջ պարտատիրոջ փոխվելու համար օրենսդիրը չի սահմանել պարտապանի համաձայնությունը ստանալու պահանջ, բացառությամբ, երբ նման բան նախատեսված է օրենքով կամ պայմանագրով:

Անդրադառնալով պահանջի գիշման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը սկզբնական կամ նոր պարտատիրոջ համար չի սահմանել պարտապանի համաձայնության առկայության կամ վերջինիս ծանուցելու ինպերատիվ պահանջ: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին (պահանջը զիջելու մասին), նոր պարտատերն է կրում դրա բացասական հետևանքը:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել երկու

իրավիճակ: Առաջին դեպքում խոսքը գնում է պահանջի զիջման այն դեպքերի մասին, երբ սկզբնական պարտատերը, շարունակելով իր գործունեությունը, զիջում է իր պահանջի իրավունքը մեկ այլ անձի և պարտապանին չի տեղեկացնում պահանջի զիջման մասին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տվյալ դեպքում պարտապանի տեսանկյունից որևէ խնդիր չի առաջանում պարտավորության կատարման համար: Ավելին, տվյալ դեպքում պարտապանը կարող է պարտավորությունը կատարել սկզբնական պարտատիրոջ հանդեպ, որը գործող օրենսդրական կարգավորման համաձայն կհամարվի պարտավորության պատշաճ կատարում: Փաստորեն այս դեպքում ռիսկը կրում է նոր պարտատերը, և նա պետք է շահագրգռված լինի պարտապանին տեղեկացնելու պահանջի զիջման մասին:

Երկրորդ դեպքում, երբ պահանջի իրավունքը իրավահաջորդության (սկզբնական պարտատիրոջ՝ այլ իրավաբանական անձի միանալու) հետևանքով սկզբնական պարտատիրոջից փոխանցվում է նոր պարտատիրոջը, սկզբնական պարտատերը, որպես այդպիսին, դադարում է գոյություն ունենալուց, իսկ նրա պահանջի իրավունքը անցնում է վերջինիս իրավահաջորդին: Այս պայմաններում, եթե ոչ սկզբնական պարտատերը, ոչ էլ նրա իրավահաջորդը պարտապանին չեն տեղեկացնում իրավահաջորդության հիմքով պարտավորության պարտատիրոջ փոփոխության մասին, ապա պարտապանի համար ստեղծվում է անորոշ իրավիճակ: Մասնավորապես, պարտապանի համար անորոշ է դառնում, թե հոգուտ ում պետք է կատարի պարտավորությունը, քանի որ սկզբնական պարտատերն այլևս գոյություն չունի:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե առաջին իրավիճակում պարտապանը, անտեղյակ լինելով պահանջի զիջման մասին, կարող էր պարտավորությունը կատարել սկզբնական պարտատիրոջ հանդեպ, և դա կհամարվեր պարտավորության պատշաճ կատարում, ապա երկրորդ իրավիճակում պարտապանը գրկված է նման հնարավորությունից, քանի որ սկզբնական պարտատերն այլևս գոյություն չունի:

Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ իրավահաջորդությանը (սկզբնական պարտատիրոջ՝ այլ իրավաբանական անձի միանալու) պարտատիրոջ անձի փոփոխության դեպքում պարտավորությունը խախտելիս պարտապանի համար անբարենպաստ հետևանքները կարող են վրա հասնել այն դեպքում, երբ պարտապանն իրազեկված է եղել պարտատիրոջ փոփոխության մասին: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում նոր պարտատերը պարտապանից կարող է պահանջել պարտավորությունը խախտելու համար համապատասխան պայմանագրով նախատեսված տոկոսները և/կամ տույժերը կամ օրենքով սահմանված տոկոսները, եթե սկզբնական պարտատերը (կամ իրավահաջորդը) պարտապանին տեղեկացրել է իրավահաջորդության մասին:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

07.08.2020թ.

8. «ՀՄՌ- Ֆարինա» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանի ընդդեմ Ա/Ձ Արթուր Ասոյանի, քաղ. գործ թիվ Ե-Գ/4101/02/18

Էջ
133-143

Խնդիր. Արդյո՞ք մի կողմի՝ ապրանքներ մատակարարողի՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված և էլեկտրոնային ստորագրությանը վավերացված (հաստատված) հարկային հաշիվը կարող է դիտվել բավարար կողմերի միջև մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը հաստատված համարելու համար, եթե այդ հաշիվը ստորագրված չէ մյուս կողմի՝ ապրանքներ ձեռքբերողի կողմից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Ջարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ մատակարարման գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում մատակարարման հարաբերությունների համար էական համարվող պայմանների՝ կողմերի, ապրանքների անվանման, քանակի, գնի, մատակարարման ժամկետի մասին տեղեկություններ պարունակող հարկային հաշիվը, որը հաստատված է (ստորագրված է) միայն ապրանքներ մատակարարող անձի կողմից, չի կարող գնահատվել որպես անհրաժեշտ և բավարար գրավոր ապացույց՝ կողմերի միջև մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը հաստատված համարելու համար: Նման փաստը հաստատված որակելու համար անհրաժեշտ է նաև մյուս կողմի՝ ապրանքներ ձեռքբերողի՝ այդ հաշիվն ստանալու փաստը հաստատող էլեկտրոնային ստորագրությունը, որպեսզի հիմնավորվի նաև վերջինիս կամահայտությունը՝ ուղղված մատակարարման հարաբերությունների առաջացմանը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային հաշիվը կարող է գնահատվել որպես մատակարարման հարաբերությունների առկայությունը հիմնավորող անհրաժեշտ և բավարար գրավոր ապացույց բացառապես այն դեպքում, երբ այն *փավերացված և հասարակված է ինչպես սպրանքներ մատակարարող անձի, այնպես էլ գնորդի (սպրանքներ ձեռքբերողի)՝ նման փաստաթղթերը փավերացնելու կամ հասարարելու իրավասություն ունեցող անձի կողմից:*

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

25.12.2020թ.

Էջ
144-160

9. Աղասի Տեր-Եսայանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3193/02/13

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է անշարժ գույքի վարձակալության պայմանագրի գործառնության ժամկետի ավարտից հետո տվյալ անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի պետական գրանցումը պահպանված լինելու պայմաններում վարձակալության պայմանագիրը վերսկսված համարելու առանձնահատկություններին և դրանից բխող իրավական հետևանքներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկելու վերաբերյալ օրենսդրի պահանջն ինքնանպատակ չէ: Այն հետապնդում է մի քանի խնդիրներ, որոնցից են մասնավորապես՝ անշարժ գույքի բնականոն շրջանառության ապահովումը, գործարքների մասնակիցների և երրորդ անձանց իրավունքների ճանաչումը, պաշտպանությունը և երաշխավորումը, անշարժ գույքի շուկայի կայունությունը և զարգացումն ապահովելը և այլն: Վկայակոչված խնդիրներից Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորել է գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության խնդիրը: Պետությունը, սահմանելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահանջ, միաժամանակ ստանձնել է պարտավորություն՝ երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն է հենց այն մեխանիզմը, որի միջոցով պետությունը ճանաչում է անձանց այս կամ այն իրավունքն անշարժ գույքի նկատմամբ, ստեղծում է միասնական տեղեկատվական բանկ այդ իրավունքների և դրանք կողմ սուբյեկտների վերաբերյալ և համապատասխանաբար հնարավորություն է ունենում երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ օրենսդիրը, նախատեսելով անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պարտադիր պետական գրանցման ենթակա լինելու պայման, ըստ էության, կողմերի միջև անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքված համարելու պահը դիտել է վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահը: Այսինքն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում ստանալու պահից կողմերը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և կրում պայմանագրից բխող պարտականությունները պատշաճ կատարելու պարտավորություն, իսկ պետությունը երաշխավորում և պաշտպանում է վարձակալության պայմանագրից բխող և պետական գրանցում ստացած՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանի դեռ այդ իրավունքների պետական գրանցումը չի դադարել:

ՎԱՐԿ

03.07.2020թ.

Էջ
161-187

10. «Ինելկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, քաղ. գործ թիվ ԼԳ/0522/02/13

Խնդիր. Արդյո՞ք վարկային հարաբերություններից բխող ռիսկի ապահովագրության դեպքում վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները կարող են համարվել դադարած, եթե ապահովագրական պատահարը ծագել է հանցագործությամբ պատճառված վնասի արդյունքում, որի համար տրվել է ապահովագրական հատուցում, իսկ վարկային պայմանագրից բխող պարտավորությունը դադարած համարելու՝ օրենքով սահմանված որևէ հիմք առկա չէ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով վարկային հարաբերություններից բխող ռիսկերի ապահովագրության դեպքում վարկային պայմանագրից բխող

պարտականությունը փոխառուի կողմից կատարելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ վարկային հարաբերություններն ու ապահովագրական հարաբերություններն ինքնուրույն պարտավորական հարաբերություններ են: Ընդ որում, փոխառուն ապահովագրական հարաբերությունների կողմ չէ: Հետևաբար, փոխառուն չի կարող հրաժարվել վարկային պարտավորությունից բխող պարտականությունը կատարելուց՝ վկայակոչելով ապահովագրական հարաբերությունների առկայությունը:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ վարկատուն արդեն իսկ հատուցում է ստացել ապահովագրական ընկերությունից, ապա Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դեպքում անհրաժեշտ է տարանջատել թեև միմյանց հետ փոխկապակցված, սակայն այդուհանդերձ երկու տարբեր իրավահարաբերությունները՝ վարկային իրավահարաբերությունը և ապահովագրական իրավահարաբերությունը, և դրանց ծագման հիմքերը: Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ անգամ վարկատուի կողմից ապահովագրական հատուցում ստանալը չի դադարեցնում վարկային իրավահարաբերությունը փոխառուի համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածը, ինչպես նաև նույն օրենսգրքի 27-րդ գլուխը («Պարտավորությունները դադարելը») պարտավորության դադարման նման հիմքի կիրառման հնարավորություն չեն սահմանում: Տվյալ իրավիճակում ոչ թե վարկային պարտավորությունը դադարում է, այլ այն պահից սկսած, երբ վարկատուն ամբողջ ծավալով ստանում է ապահովագրական հատուցում ապահովագրական ընկերությունից, վարկային պայմանագրից բխող պահանջի իրավունքը փոխանցվում է ապահովագրական ընկերությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ անգամ ապահովագրական հատուցումն ամբողջությամբ վճարված լինելու պայմաններում փոխառուն չի կարող վկայակոչել այդ հանգամանքը և հրաժարվել պարտավորության կատարումից, քանի որ սուբբոգացիայի նշված հոդվածով սահմանված՝ վնասի հատուցման պահանջի իրավունքն ապահովագրից ապահովագրողին անցնելու (սուբբոգացիա) կանոնները կիրառելի են ապահովագրի-ապահովագրող հարաբերությունների նկատմամբ և չեն բացառում վարկային պայմանագրից բխող պահանջի բավարարումը: Վճռաբեկ դատարանը վիստել է, որ փոխառուն կարող է ազատվել **վարկարուի առջև** վարկային պարտավորությունից միայն այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ապացուցվի, որ վարկատուն ամբողջությամբ ստացել է ապահովագրական հատուցում հենց նույն՝ ապահովագրական պատահար հանդիսացող պարտավորության համար և իր պահանջի իրավունքը զիջել է ապահովագրական ընկերությանը՝ վերջինիս հանձնելով պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ: Ընդ որում, անգամ այս պարագայում փոխառուն չի ազատվում **ապահովագրական ընկերության** նկատմամբ հնարավոր հետագա պարտավորություններից:

Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ պարտավորությունների տարանջատման և միմյանց բացառելու կամ փոխադարձ լրացնելու հանգամանքները պարզելու հարցում էական նշանակություն ունի պարտավորության ծագման հիմքի որոշումը:

14.08.2020թ.

11. «Մաքս Նիկել Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն ընդդեմ «Առեկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «Ռեդուտ Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԿ/3660/02/14

Էջ
188-203

Խնդիր. 1. Արդյո՞ք իրավաչափ է վարկատուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց մասնակի հրաժարվելն այնպիսի հանգամանքների առկայության պարագայում, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվելու:

2. Արդյո՞ք վարկատուի կողմից վարկավորումից հրաժարվելու դեպքում սնանկ ճանաչված վարկառուն իրավունք ունի պահանջելու պարտավորեցնել վարկառուին կատարել վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը վարկային պայմանագրի կողմերի՝ վարկ տրամադրելուց կամ այն ստանալուց հրաժարվելու հետ կապված հարաբերությունները կարգավորել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածով: Նշված հոդվածը սահմանում է, որ **այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի**, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց: **Վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկի նպատակային օգտագործման պարտականությունը խախտելու դեպքում** (հոդված 884) **վարկատուն իրավունք ունի հրաժարվել վարկառուին վարկավորելուց:**

Նույն հոդվածով սահմանվել է նաև Վարկառուի իրավունքը՝ լրիվ կամ մասնակի

հրաժարվելու վարկը ստանալուց՝ այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ ամկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի, կամ եթե ամկա է Վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկի նպատակային օգտագործման պարտականության խախտում, օրենսդիրն ամրագրել է Վարկատուի իրավունքը՝ նույնիսկ վարկային պայմանագրով նախատեսված համապատասխան պարտավորության ամկայության պայմաններում հրաժարվելու Վարկառուին վարկավորելուց՝ հնարավորություն ընձեռելով Վարկատուին ինչպես ամբողջ ծավալով, այնպես էլ մասնակիորեն մերժել Վարկառուին վարկ տրամադրելը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող 47-րդ գլխի նորմերով, ինչպես նաև նույն օրենսգրքի՝ փոխառության հարաբերությունները կարգավորող 46-րդ գլխի նորմերով սահմանված չեն այն հանգամանքները, որոնք կարող են ակնհայտորեն վկայել Վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չվերադարձվելու մասին: Հետևաբար, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով և հիմք ընդունելով վարկային պայմանագրի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարկատուի՝ Վարկառուին վարկավորելուց հրաժարվելու համար հիմք հանդիսացող հանգամանքները և կարգը կարող են նախատեսված լինել *վարկային պայմանագրով*: Ընդ որում, վարկային պայմանագրի կողմերն ազատ են որոշել այդ պայմաններն իրենց հայեցողությամբ՝ համապատասխան պայմաններն ամրագրելով վարկային պայմանագրի տեքստում, պայմանով, որ դրանք չհակասեն վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի իմպերատիվ պահանջներին:

2) Անդրադառնալով վարկավորումից հրաժարվելու դեպքում սնանկ ճանաչված վարկառուի նկատմամբ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները վարկատուի կողմից կատարելու իրավական հնարավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ կետի թ) ենթակետ, 61-րդ հոդվածի 5-րդ կետ) հետևում է, որ արդեն իսկ սնանկ ճանաչված պարտապանի կողմից նոր վարկի ստացումը հնարավոր է միայն պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող միջոցառումների, այն է՝ վերջինիս ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում:

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՉ ՆՅՈՒԹՎԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

21.07.2020թ.

12. Ստեփան Բաղդասարյանն ընդդեմ Հասմիկ Աբովյանի, քաղ. գործ թիվ ԵԳ/7480/02/18

Էջ 204-219

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գրպարտության հետևանքով անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գործերով «գնահատողական դատողություն» եզրույթի իրավական ընկալմանը կարծիքի արտահայտման ազատության լույսի ներքո՝ զարգացնելով նախկինում հայտնած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ վիրավորանքի և գրպարտության հետևանքով անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գործերով Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածների միջև արդարացի հավասարակշռություն սպահովելու նպատակով կարևոր է պարզել կարծիք արտահայտած անձի իրական մտադրությունը, այսինքն՝ **արդյոք այն ուղղված է եղել անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելուն, թե՛ որոշակի հարցի վերաբերյալ իր տեսակետն արտահայտելուն (թեկուզև դրա արդյունքում որոշակի ոտնձգություն է տեղի ունեցել այլ անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին):** Իրական մտադրությունը բացահայտելու համար էական նշանակություն կարող են ունենալ կարծիքի արտահայտմանը նախորդած

վարքագիծը, այն միջավայրը, որտեղ արտահայտվել է տեսակետը, այն հանգամանքը, թե իր կարծիքն արտահայտող անձն ինչ տեղեկատվության հիման վրա է արտահայտել իր կարծիքը և այլն:

Հետևաբար, որևէ արտահայտության կամ բառի վիրավորական կամ զրպարտող իմաստ ունենալը, ոչ կոռեկտ լինելն ինքնաբերաբար չի կարող հանգեցնել պատասխանատվության, եթե պահպանված են կարծիքի արտահայտման ազատության սահմանները, և կարծիքի արտահայտման նպատակը հասցեատիրոջը վիրավորելը կամ զրպարտելը չէ: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ **կարևոր է նաև կարծիք արտահայտողի նպատակի օբյեկտիվ ընկալումը՝ մասնավորապես այն հանգամանքը, թե հասարակության միջին վիճակագրական անդամը կրնալի արդյոք այդ կարծիքը որպես այլ անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի արատավորման ուղղակի նպատակ ունեցող, թե որպես փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություն, սեփական կարծիք՝ որոշակի դեպքերի, իրադարձությունների կամ անձանց վարքագծի վերաբերյալ (այլ կերպ ասած՝ քննադատություն):** Ընդ որում, նմանատիպ գործերով էական նշանակություն ունի հենց զրպարտչական բնույթի փաստական տվյալների տարբերակումը փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություններից:

Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ որևէ արտահայտություն որպես զրպարտություն դիտարկելիս անհրաժեշտ է նաև պարզել արատավորող տվյալներ հրապարակող անձի իրական մտադրությունը, տվյալներ հրապարակելուն նախորդած հանգամանքները, տվյալները հրապարակված և տուժող անձանց վարքագիծը մինչև արտահայտություն հրապարակելը, տվյալների բովանդակությունը և մասնավորապես հանրության համար դրանց հետաքրքրություն ունենալը:

ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.11.2020թ.

13. Միխայի Աղայանն ընդդեմ Գարիկ Բոշյանի, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/3780/02/17

Էջ
220-242

Խնդիր. Արդյո՞ք գույքը կամ այլ դրամական գումարները՝ որպես անհիմն հարստացում, ենթակա են վերադարձման այն դեպքում, երբ գույքը ձեռքբերված կամ խնայած կողմը չի ներկայացրել ապացույցներ ի հավաստումն այն հանգամանքի, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձն իմացել է իրենց միջև պարտավորության բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի և 1099-րդ հոդվածի 4-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ անհիմն հարստացման հատկանիշների առկայության դեպքում անհիմն հարստացման արդյունքում ձեռքբերված կամ խնայված գույքը, որպես կանոն, ենթակա է վերադարձման, սակայն միաժամանակ օրենսդիրը նախատեսում է դեպքեր, երբ նույնիսկ անհիմն հարստացման հատկանիշների առկայության դեպքում ձեռքբերված կամ խնայված գույքը չի կարող վերադարձվել (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդված): Անդրադառնալով հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերից 4-րդ կետով նկարագրվածին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրն այդ կանոնի կիրառման համար սահմանել է մի քանի պայմանի միաժամանակյա առկայություն, որոնք հանգում են հետևյալին՝

1. գույքը ձեռք բերողի և գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձի միջև պետք է առկա չլինեն ձեռք բերված կամ խնայված գույքի կապակցությամբ պարտավորական հարաբերություններ,

2. գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գույքը ձեռք բերողին գույքը պետք է փոխանցած լինի՝ իմանալով, որ գոյություն չունի պարտավորություն, կամ որ փոխանցում է բարեգործական նպատակներով,

3. գույքը ձեռք բերողը պետք է ապացուցի 2-րդ պայմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով օրենսդիրը կարևորել է գույքը փոխանցողի ներքին վերաբերմունքը գույքի փոխանցման գործողության կապակցությամբ: Այսինքն՝ օրենսդիրը գտել է, որ այդ կանոնի կիրառման համար հատկապես կարևոր է, թե անձն ինչ գիտակցմամբ է կատարել գույքի փոխանցումը: Այլ կերպ ասած՝ եթե գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գույքը փոխանցելիս ի սկզբանե գիտակցում էր և գիտեր, որ իր և գույքը ձեռքբերողի միջև չկան պարտավորական հարաբերություններ, սակայն ամեն դեպքում նա ցանկացել է փոխանցել համապատասխան գույքը, ապա օրենսդիրը, կարևորելով նրա կողմից դրսևորած

կամահայտնությունը, այլևս իրավունք չի տալիս գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձին հետ ստանալու փոխանցված գույքը: Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը գույքն անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված լինելու կամ չլինելու հարցի լուծման փուլում չի կարևորում տուժողի կամքը, սակայն գույքը որպես անհիմն հարստացման արդյունքում ձեռքբերված կամ խնայված որակելից հետո՝ այն տուժողին հետ վերադարձնելու հարցի լուծման փուլում, արդեն արժևորում է գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձի ներքին վերաբերմունքը գույքն ուրիշին փոխանցելու գործողության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի այդ մոտեցումը որոշակիություն է մտցնում գույքի բնականոն շրջանառության մեջ, քանի որ հնարավորություն է ստեղծում այս կամ այն գույքին տալու անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի իրավական կարգավիճակ:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ի թիվս այլ պայմանների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված կարգավորման կիրառման համար հարկավոր է հետևյալ պայմանը. **գույքը ձեռք բերող պետք է ապացուցի, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր իր և գույքը ձեռք բերողի միջև պարտավորության բացակայության մասին:** Ապացուցման բաշխման սույն կանոնը ենթադրում է, որ գույքը ձեռքբերողը ոչ թե պետք է այդ մասին ուղղակի հայտարարի, այլ ներկայացնի այդ փաստը հիմնավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցներ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ **միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ վերը վկայակոչված պայմանները պարզելուց հետո է հնարավոր հետևություն անել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք տվյալ գործով քննարկվող անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքը ենթակա է վերադարձման, թե՛ ոչ:**

23.10.2020թ.

14. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Արթուր Կարապետյանի, քաղ. գործ թիվ ՍԳ/0431/02/18

Էջ
243-264

Խնդիր. Արդյո՞ք հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով անձին (վարկառուին) վերադարձված եկամտային հարկի գումարները կարող են որակվել անհիմն հարստացում այն դեպքում, երբ առկա է այդ գումարներն անձին վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ վարչական ակտ, որն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ, կատարելով հարկեր վճարելու սահմանադրական պարտականությունը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված եկամտային հարկ վճարողները նույն օրենքով սահմանված կարգով վճարում էին եկամտային հարկ՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ձևավորմանը, որի միջոցով էլ պետությունն իրականացնում է իր գործառնությունները: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունն իր սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման շրջանակներում սահմանել է որոշակի դեպքեր, երբ անձին հնարավորություն է տրվում ետ ստանալ վճարված եկամտային հարկի գումարները (դրանց մի մասը): Մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է, որ եկամտային հարկը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նույնպես կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով (սակայն ոչ ավել, քան օրենքով սահմանված չափով): Ընդ որում, քննարկվող դեպքում եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու իրավասությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ անձը (վարկառուն) եկամտային հարկը վերադարձնելու դիմումով դիմել է հարկային (տարածքային) մարմնին, և հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունվել է բարենպաստ վարչական ակտ, այդ վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: **Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման պայմաններում ի կատարումն վարչական ակտի անձին (վարկառուին) վերադարձված գումարները չեն կարող որակվել անհիմն հարստացում, քանի որ թեև այդ դեպքում անձը (վարկառուն) ուրիշի հաշվին ձեռք է բերում գույք, սակայն նման հարստացումը չի կարող համարվել անօրինական:**

Այսինքն՝ այդ դեպքում բացակայում է անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ պայմաններից մեկը, այն է՝ իրավական հիմք չլինելը, ինչը բավարար է անհիմն հարստացման առկայությունը բացառելու համար:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23.10.2020թ.

15. Աշոտ Ղազարյանն ընդդեմ Աննա Վարդանյանի, քաղ. գործ թիվ ԵՂ/2440/02/18

Էջ
265-280

Խնդիր. 1. Ո՞ր դեպքում է Հաազայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով երեխայի նկատմամբ խնամակալության իրավունք ունեցող ծնողի կողմից երեխայի տեղափոխումը կամ պահումն իր նախկին մշտական բնակության վայրից այլ վայրում համարվում անօրինական:

2. Արդյո՞ք երեխայի անօրինական պահման փաստ արձանագրելու պարագայում բոլոր դեպքերում դատարանը պարտավոր է երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վճռաբեկ դատարանը, զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը, արձանագրել է, որ Հաազայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական համարելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա) երեխային տեղափոխելով կամ պահելով խախտվել են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շտրկված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

բ) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվելին, եթե չլինե՞ր տեղափոխումը կամ պահելը:

Այսինքն, Հաազայի կոնվենցիայի իմաստով տեղափոխումը կամ պահումը համարվում է ապօրինի, եթե երեխան իր մշտական բնակության վայրից այլ վայր է տեղափոխվել առանց վերադարձ պահանջող ծնողի համաձայնության կամ պահվել է տեղափոխման երկրում առանց վերջինիս համաձայնության, և վերադարձ պահանջող ծնողն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրա տեղափոխելը կամ պահելը: Ընդ որում, Հաազայի կոնվենցիայի 3-րդ հոդվածը վերաբերում է նաև համատեղ (միասնական) կարգով իրականացվող խնամակալության իրավունքներին: «Համատեղ (միասնական) կարգով իրականացվող խնամակալության իրավունքը» ենթադրում է, որ ծնողներն իրենց այդ իրավունքն իրացնում են հավասար հիմունքներով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հաազայի կոնվենցիայի 1-ին 3-րդ, 4-րդ, 5-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ այն դեպքում, երբ երեխան տեղափոխվել է իր մշտական բնակության վայրի երկրից, իսկ վերադարձ պահանջող ծնողն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրա տեղափոխելը կամ պահելը, և այդ ծնողի համաձայնությունն երեխային տեղափոխելու հարցում առկա է միայն որոշակի ժամանակահատվածի համար, իսկ երեխան պահվել է տեղափոխված երկրում այդ ժամանակահատվածից ավելի, առկա չէ Հաազայի կոնվենցիայի իմաստով անօրինական տեղափոխում, սակայն՝ կարող է առկա լինել Հաազայի կոնվենցիայի իմաստով անօրինական պահում:

2) Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում նրանց լավագույն շահը պետք է առաջնահերթ լինի: Նույն գաղափարն արտացոլված է նաև Հաազայի կոնվենցիայում, որտեղ այս շահը պայմանավորված է ստատուս քվոյի վերականգնումով, այսինքն՝ երեխայի անհապաղ վերադարձն իր մշտական բնակության երկիր սպահովելով, եթե առկա է անօրինական առևանգում՝ մինևնույն ժամանակ հաշվի առնելով, որ վերադարձնելու անհարիսությունը, երբեմն, կարող է արդարացվել օբյեկտիվ պատճառներով, որոնք բխում են երեխայի շահից, ինչն էլ բացատրում է Հաազայի կոնվենցիայում բացառությունների առկայությունը: Հաազայի կոնվենցիայի հիման վրա վերադարձի վարույթի շրջանակներում «երեխայի լավագույն շահ» գաղափարը պետք է գնահատվի Հաազայի կոնվենցիայով նախատեսված բացառությունների լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հաազայի կոնվենցիայի 4-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումներին, նշել է, որ եթե Պայմանավորվող պետության

դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու օրվանից անցել է մեկ տարի, ապա վերադարձի իմպերատիվ պահանջը այլևս չի գործում և առաջնային է դառնում որոշելը՝ արդյոք երեխան ինտեգրվել է նոր միջավայրին: Գործակալն ունի դա հիմնավորվում է երեխայի սոցիալականացման վերաբերյալ փաստերով և դրանք հիմնավորող ապացույցներով՝ նոր միջավայրում դպրոց, մանկապարտեզ, տարբեր խմբակներ հաճախելով, հոգեբանի եզրակացությամբ, հարազատների, բարեկամների (տատիկ, պապիկ, քույր, հորաքույր) առկայությամբ, որոնց հետ երեխան պարբերաբար շփվում է, սոցիալականացման և ընտանեկան միջավայրի մասին այլ փաստերով և ապացույցներով:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ Հաագայի կոնվենցիայով երեխայի՝ իր նոր միջավայրին արդեն լիովին համակերպվելու վերաբերյալ գնահատման չափորոշիչներ չեն սահմանվել: Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը յուրաքանչյուր դեպքում երեխայի՝ իր նոր միջավայրին արդեն լիովին համակերպվելու հանգամանքը գնահատելիս պետք է հաշվի առնի երեխայի տարիքը, նոր միջավայրում երեխայի բնակվելու կայունությունը, երեխայի դպրոց կամ այլ հաստատություն հաճախելը, նոր միջավայրում ընկերներ կամ բարեկամներ ունենալու հանգամանքը, առևանգող (տեղափոխող) ծնողի աշխատանքի կայունությունը և այլն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «երեխան արդեն լիովին համակերպվել է իր նոր միջավայրին» պայմանը ենթակա է քննարկման միայն այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու օրվանից անցել է մեկ տարի:

Անդրադառնալով Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի «բ» կետի ուժով սահմանված բացառությունը հաստատված համարելու համար դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի «լուրջ վտանգի» առկայությունը՝ սույն կետում նշված բոլոր հանգամանքները քննարկման առարկա դարձնելով:

Անդրադառնալով Հաագայի կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներին՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ նշված հոդվածով նախատեսված է ապացուցման բարձր շեմ, և յուրաքանչյուր դեպքում պետք է ոչ միայն հիմնավորվի հակասությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սկզբունքներին, այլև՝ նման արգելքը պետք է հիմնավորվի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սկզբունքներով:

Ամփոփելով և զարգացնելով *Արևև Բարսայանս ընդդեմ Արմինե Բարսայանի* թիվ ԵԱԿԴ/0229/02/16 քաղաքացիական գործով 07.06.2017 թվականի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը Հաագայի կոնվենցիայի շրջանակներում նախատեսված իրավական կառուցակարգերի միջոցով իրականացնելու համար դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի հետևյալ հանգամանքները.

- 1) արդյո՞ք դեպքը վերաբերում է մինչև 16 տարեկան երեխայի նկատմամբ Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով «խնամակալության իրավունքներին» կամ «տեսակցության իրավունքներին»,
- 2) արդյո՞ք երեխան տեղափոխվել է որևէ Պայմանավորվող պետությունից,
- 3) արդյո՞ք վայրը, որտեղից երեխան տեղափոխվել է, երեխայի մշտական բնակության վայրն էր մինչև երեխային տեղափոխելը կամ պահելը,
- 4) արդյո՞ք երեխան տեղափոխվել կամ պահվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,
- 5) արդյո՞ք վերադարձ պահանջող ծնողն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրա տեղափոխելը կամ պահելը:
- 6) արդյո՞ք երեխան իր մշտական բնակության վայրից այլ վայր է տեղափոխվել առանց վերադարձ պահանջող ծնողի համաձայնության կամ պահվել է տեղափոխման երկրում առանց վերջինիս համաձայնության:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը կարգադրություն է անում երեխային վերադարձնելու մասին՝ այն երկիր, որտեղից երեխան տեղափոխվել է հետևյալ պայմաններին միաժամանակյա առկայության դեպքում՝

- երեխան սպորինսթարտ տեղափոխվել կամ պահվել է Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով,
- դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու փարսիս ամիս-ամսաթվից չի անցել մեկ փարսի,
- դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու փարսիս ամիս-ամսաթվից անցել է մեկ փարսի և չի ապացուցվել, որ երեխան արդեն լիովին համակերպվել է իր նոր միջավայրին,

- երեխան գրեմիում է հայցվող Պերրոյությունում,
- սուկա չեն Հասագայի կրավնցիայի 13-րդ և 20-րդ հորվածներով սահմանված երեխայի վերադարձը մերժելու հիմքերը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

10.07.2020թ.

16. Սիրանուշ Մելիքյանն ընդդեմ «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի, քաղ. գործ թիվ ՇԳ/2860/02/18

Էջ
281-298

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանել է ինչպես անորոշ, այնպես էլ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու հիմքը, որի համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով:
2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի աշխատողի կողմից մեկ ամբողջ աշխատանքային օր (հերթափոխ) աշխատանքի չներկայանալու հանգամանքով:
3. աշխատողի կողմից մեկ ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատանքի չներկայանալը պետք է լինի անհարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատանքային վեճերի լուծման դեպքում օրենսդիրը, ի տարբերություն կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի, սահմանել է բացառություն, ըստ որի՝ աշխատանքային վեճերով վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև տվյալ անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Այլ կերպ ասած՝ աշխատանքային վեճերով ապացուցման բեռն ծանրությունն օրենսդրի կողմից դրվել է պատասխանող (գործատուի) վրա: Նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պետք է ապացուցի՝ կողմերի միջև անորոշ կամ որոշակի ժամկետով պայմանագիր կնքված լինելու, աշխատողի կողմից մեկ ամբողջ աշխատանքային օր (հերթափոխ) աշխատանքի չներկայանալու և աշխատանքի չներկայանալու պատճառն անհարգելի լինելու փաստերը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու հիմքով գործատուի կողմից վերջինիս նկատմամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու տեսքով կարգապահական տույժ կիրառելու դեպքում գործատուի կողմից պետք է հիմնավորվի մեկ ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի կողմից աշխատանքից բացակայելու հարգելի պատճառների բացակայությունը: Ընդ որում աշխատողի՝ մեկ ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքից անհարգելի բացակայությունն անհրաժեշտ և բավարար է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար:

Վճռաբեկ դատարանի եզրահանգումը դատական ծախսերի մասով.

Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե հայցը հարուցվում է պետական տուրքի վճարումից ազատված հայցվորի կողմից և հետագայում այն մերժվում է անհիմն լինելու հիմքով, հայցվորը պետք է կրի այլ անձանց կրած՝ իրենց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը:

05.11.2020թ.

17. Արամ Կարապետյանն ընդդեմ «ՎեոնԱրմենիա» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԱՔԳ/0008/02/14

Էջ
299-317

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների

փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով և զարգացնելով նախկինում հայտնած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հաստիքների կրճատում կատարելիս համապատասխան աշխատակցին առնվազն 2 ամիս առաջ ծանուցելու պահանջից բացի օրենսդիրը նախատեսել է ևս մեկը, որի համաձայն՝ գործատուն ծանուցման ժամկետի ավարտից հետո 5 օրվա ընթացքում պետք է լուծի աշխատանքային պայմանագիրը: Հաշվի առնելով այն, որ ծանուցումն անպայմանորեն չի ենթադրում աշխատանքից ազատում՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը ծանուցման ժամկետի ավարտից հետո 5 օրվա ընթացքում գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու պահանջը նախատեսել է, որպեսզի աշխատողի համար չստեղծվի անորոշություն: Այլ կերպ ասած՝ ծանուցման ժամկետի ավարտից հետո հնգօրյա ժամկետում աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենսդրական պահանջը հստակություն է մտցնում աշխատող-գործատու հարաբերություններում, այսինքն՝ դրանով աշխատողի համար պարզ է դառնում տվյալ գործատուի հետ ունեցած իր աշխատանքային հարաբերությունների հետագա ճակատագիրը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետն օրենսդիրը դիտարկել է որպես անհրաժեշտ և բավարար ժամանակահատված աշխատանքային պայմանագրի լուծման մասին աշխատողին ծանուցելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հատկապես ընդգծել է, որ նշված ժամկետը առնվազն երկու ամիսը, օրենսդիրը համարել է ծանուցման համար անհրաժեշտ նվազագույն ժամանակահատված՝ հնարավոր և ընդունելի համարելով նաև ծանուցման ավելի երկար ժամկետները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրական նման կարգավորումը հնարավորություն է տալիս գործատուին իր հայեցողությամբ տրամադրելու աշխատողին ավելի երկար ժամանակահատված փնտրելու նոր աշխատանք տեղեկացման ժամանակահատվածում աշխատելով և ստանալով աշխատավարձ: Ընդ որում, ծանուցման համար նախատեսված այս ժամկետի մեջ չեն հաշվարկվում աշխատողի արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածները: Ուստի, եթե աշխատողը չի հիմնավորում հստակ ժամանակահատվածում իր՝ ժամանակավոր անաշխատունակ լինելու հանգամանքը, այդ ժամանակահատվածը մտնում է ծանուցման ժամկետի հաշվարկի մեջ:

09.11.2020թ.

18. Ռադիկ Մարոյանյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0521/02/15

Էջ
318-333

Խնդիր. 1) Կարո՞ղ է արդյոք աշխատողն իր հարկադիր պարապորդի գումարը բռնագանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի և փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի առկայության պայմաններում պահանջել միևնույն ժամանակահատվածի հարկադիր պարապորդի գումարի վերահաշվարկի արդյունքում ստացված այլ գումարի բռնագանձում:

2) կարո՞ղ է արդյոք աշխատանքից անօրինական կերպով ազատված և դատարանի վճռով իր նախկին աշխատանքում վերականգնված աշխատողը պահանջել հարկադիր պարապորդում գտնվելու ժամանակահատվածի համար ամենամյա արձակուրդի գումարը,

3) կարո՞ղ է արդյոք աշխատանքից անօրինական կերպով ազատված և դատարանի վճռով իր նախկին աշխատանքում վերականգնված աշխատողը պահանջել հարկադիր պարապորդի գումարի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքի գումարը, ինչպես նաև բռնագանձված գումարի վերահաշվարկի արդյունքում ստացված տարբերության գումարի և հարկադիր պարապորդում գտնվելու ժամանակահատվածի համար ամենամյա արձակուրդի գումարի նկատմամբ նույն հոդվածով նախատեսված տուժանքի գումար՝ հարկադիր պարապորդի գումարը բռնագանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի և դրա փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի առկայության պայմաններում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ գործատուն լուծում է աշխատանքային պայմանագիրն առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ, և հետագայում աշխատողը դատարանի վճռով վերականգնվում է աշխատանքում, օրենսդիրն աշխատողին հնարավորություն է տվել ստանալու դրա հետևանքով առաջացած հարկադիր պարապորդի ողջ ժամանակահատվածի համար հաշվարկված միջին աշխատավարձի չափով հատուցում: Ընդ որում, սահմանելով միջին աշխատավարձի հաշվարկման միասնական կարգ՝ օրենսդիրը որպես հաշվարկի հիմք դիտարկել է պարապորդի գումարները վճարելու պահանջն առաջանալու ամսվան նախորդող

վերջին տասներկու ամիսների ընթացքում տվյալ գործատուի կողմից աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրության բոլոր տեսակների հանրագումարը: Ուստի, վարձատրության Նշված տեսակների ամբողջության հիման վրա գործատուն հաշվարկում է միջին աշխատավարձ և այն հիմք ընդունելով՝ աշխատողին վճարում ամբողջ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա գտնվել է հարկադիր պարապորդում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե աշխատողն անօրինական կերպով աշխատանքից ազատվելու վերաբերյալ վեճի դեպքում որոշակի ժամանակահատվածի համար պահանջել է հարկադիր պարապորդի ամբողջ գումարը՝ առանց կոնկրետ հաշվարկներ ներկայացնելու, դատարանը նույն կարգով վճիռ է կայացրել և այն մտել է օրինական ուժի մեջ, ապա ստացվում է, որ վճարման ենթակա հարկադիր պարապորդի ամբողջ գումարի վերաբերյալ արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ, իսկ վճարման ենթակա հարկադիր պարապորդի գումարի հաշվարկը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման վարույթում: Այդ դեպքում հաշվարկը կատարելիս հաշվի են առնվում ինչպես կատարողական վարույթում ձեռք բերված ապացույցները, այնպես էլ վարույթի կողմերի դիրքորոշումները, իսկ հաշվարկը վերջին հաշվով կատարվում է պատասխանատու պաշտոնատար անձի՝ հարկադիր կատարողի կողմից: Եթե վերջինս վճռի կատարման արդյունքում հանգում է այն եզրակացության, որ դատական ակտի պահանջն ամբողջությամբ կատարվել է, և Նշված հիմքով կատարողական վարույթը կարճում է, իսկ կատարողական վարույթի կողմն էլ չի վիճարկում Նշված որոշումը, ապա այն դառնում է պարտադիր կատարման ենթակա վարչական ակտ իրավահարաբերության բոլոր մասնակիցների համար: Այլ կերպ՝ սկսում է գործել վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը և դրանից հետո ոչ ոք, այդ թվում նաև կատարողական վարույթի մասնակիցները, իրավունք չունեն կասկածի տակ դնել այդ վարույթում հարկադիր կատարողի կատարած հաշվարկները: Հակառակ պարագայում օրինական ուժի մեջ մտած միևնույն դատական ակտը կարող է տարբեր հաշվարկների հիմքով կատարվել մեկից ավելի անգամ, ինչը կհանդիսանա իրավական որոշակիության սկզբունքի խախտում, ինչպես նաև կհանգեցնի վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի խաթարման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատողը, նոր հաշվարկներ կատարելով, չի կարող պահանջել միևնույն ժամանակահատվածի համար հարկադիր պարապորդի այլ գումար, եթե այդ գումարը մեկ անգամ արդեն իսկ վճռվել է բռնագանձել գործատուից օրինական ուժի մեջ մտած վճռով, և բռնագանձվել է կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով կարճված կատարողական վարույթով: Հարկադիր պարապորդի գումարների հաշվարկի հետ կապված իր անհամաձայնությունն աշխատողը կարող է հայտնել վճիռը բողոքարկելով, եթե վճարման ենթակա գումարները հաշվարկվել են վճռով, իսկ կատարողական վարույթի կարճման դեպքում՝ հարկադիր կատարողի որոշումը՝ վարչական ակտը, բողոքարկելով, եթե վճարման ենթակա գումարները հաշվարկվել են կատարողական վարույթի ընթացքում:

2) Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե աշխատողն աշխատանքից ազատվելու պատճառով շարունակաբար հարկադիր պարապորդում գտնվելու պատճառով փաստացի աշխատանք չի կատարել գործատուի համար, ապա չի առաջանում նաև աշխատունակության վերականգնման խնդիր, այսինքն՝ անհրաժեշտություն աշխատողին տրամադրելու շարունակական անընդմեջ հանգիստ, որպեսզի նա այնուհետև կարողանա արդյունավետ կատարել իր աշխատանքը: Նշված եզրահանգումը հիմնված է այն իրողության վրա, որ աշխատողը հարկադիր պարապորդում գտնվելու ժամանակահատվածում փաստացի չի աշխատում:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում որպես առանց օրինական հիմքերի կամ օրենսդրության սահմանված կարգի խախտումով աշխատողին աշխատանքից ազատելու հետևանք գործատուի համար նախատեսել է միայն հարկադիր պարապորդի վճարումը: Փաստորեն, նման դեպքերի համար օրենսդիրը սահմանել է, որ աշխատողը կարող է պահանջել հարկադիր պարապորդի գումարը՝ միջին աշխատավարձի չափով: Օրենսդիրը չի նախատեսել աշխատողի իրավունքը՝ պահանջելու հարկադիր պարապորդի ժամանակահատվածում իրեն հասանելիք արձակուրդի գումարը՝ նկատի ունենալով այն, որ հարկադիր պարապորդի ընթացքում աշխատողը փաստացի աշխատանք չի կատարում, իսկ սովորական պայմաններում տրամադրման ենթակա արձակուրդի ժամանակահատվածն ընդգրկված է հարկադիր պարապորդի ժամանակահատվածում, այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկադիր պարապորդի գումարը վճռով բռնագանձելիս, ըստ էության, միջին աշխատավարձի չափով գումար է բռնագանձվում նաև սովորական պայմաններում տրամադրման ենթակա արձակուրդի

ժամանակահատվածի համար: Նման պայմաններում աշխատողն այլևս իրավունք չունի պահանջելու հարկադիր պարապորդի ժամանակահատվածում ընդգրկված պարապորդի ժամանակահատվածի համար առանձին փոխհատուցում, քանի որ դա կհանգեցնի աշխատանք կատարած չլինելու պայմաններում արձակուրդի ժամանակահատվածի համար կրկնակի փոխհատուցման, ինչը չի կարող իրավաչափ համարվել:

3) Վճռաբեկ դատարանը նշել է, որ աշխատողը չի կարող նոր հաշվարկներ կատարելով միևնույն ժամանակահատվածի համար պահանջել հարկադիր պարապորդի այլ գումար, եթե այդ գումարը մեկ անգամ արդեն իսկ վճռվել է բռնագանձել գործատուից օրինական ուժի մեջ մտած վճռով, և բռնագանձվել է կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով կարճված կատարողական վարույթով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե նման պայմաններում աշխատողը դիմում է դատարան՝ պահանջելով նաև կատարողական վարույթի ընթացքում իր կարծիքով իրեն պակաս վճարված գումարի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով հաշվարկվող տուժանքը, ապա այդ պահանջը ենթակա է մերժման:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

18.12.2020թ.

19. Վարդան Պետրոսյանն ընդդեմ Սպարտակ Խաչատրյանի, սնանկության գործ թիվ ԱՎԴ1/0049/04/16

Էջ
334-357

Խնդիր. Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի արդար դատաբանության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մասն անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը:

Վճռաբեկ դատարանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածներով ամրագրված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ կատարողական վարույթը կասեցնելը, ավարտելը և կատարողական վարույթը կարճելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանայուղեպայծառ կատարողական վարույթը կարող է վերսկսվել, իսկ կատարողական վարույթը կարճելու դեպքում կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վերադատության կամ դատական կարգով վերացման դեպքերի: Կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, այն չի կարող վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը նախատեսված է իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է, որ կատարողական վարույթը կարող է վերսկսվել միայն հետևյալ երեք դեպքերում.

1. եթե կատարողական վարույթը կասեցվել է, և կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են,

2. եթե կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն,

3. Եթե վերադատության կամ դատական կարգով վերացվել է կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճարային պարտավորության հաշվանցի (սվագեցման կամ գրոյացման) հնարավորությունը տվյալ դեպքում պահպանված է, քանի որ կատարողական վարույթի շարունակման դեպքում վճարային պարտավորությունը կարող է նվազել կամ իսպառ դադարել (սկսնհայտ է, որ պարտապանն իր պարտքը փակելու համար անհրաժեշտ չափի գույք ունի, գույքն էլեկտրոնային աճուրդով իրացման գործընթացում է, և դրա իրացմամբ պարտավորությունը կարող է դադարել): Դա նշանակում է, որ ստորադատարանները հաշվի չեն առել, որ տվյալ դեպքում անձին սնանկ ճանաչելու համար առկա չի եղել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում եղած «, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը» պայմանը՝ հաշվանցի հնարավորությունը չի բացակայել, իսկ միայն վճարային պարտավորությունն օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված լինելու հանգամանքը բավարար չէ անձին սնանկ ճանաչելու համար:

05.06.2020թ.

20. Ժիրայր Մարգարյանի դիմումը՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ԱՎԳ/0060/04/17

Էջ
358-364

Խնդիր. 1. Արդյո՞ք պարտատերերի պահանջների բավարարման նպատակով կարող է իրացվել քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի բաժնեմասը, եթե այդ բաժնեմասի արժեքը գերազանցում է ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի 808-Ն որոշմամբ սահմանված նվազագույն գումարի և միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալը.

2. արդյո՞ք մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածով սահմանված պարտապանի գույքի իրացման արգելքը կարող է նույնացվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված գույքի իրացման արգելքի հետ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն եզրահանգել է, որ սնանկության վարույթում բռնագանձում չի կարող տարածվել ֆիզիկական անձ պարտապանին պատկանող այն բնակարանի վրա, որը պարտապանի համար հանդիսանում է մշտական բնակության միակ վայր, եթե դրա մեկնարկային գինը ցածր է 4.900.000 ՀՀ դրամից: Մինևնյն ժամանակ բռնագանձում չի կարող տարածվել ֆիզիկական անձ պարտապանին պատկանող միակ այն բնակարանի բաժնեմասի վրա, որի մեկնարկային գինը ցածր է 4.900.000 ՀՀ դրամի և նրա միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալի գումարից: Վճռաբեկ դատարանը հավելել է, որ եթե ֆիզիկական անձ պարտապանի միակ բնակարանը իրացվում է 4.900.000 ՀՀ դրամը գերազանցող գումարով, կամ ֆիզիկական անձ պարտապանի միակ բնակարանի բաժնեմասը իրացվում է 4.900.000 ՀՀ դրամի և բաժնեմասի արտադրյալը կազմող գումարը գերազանցող գումարով, ապա պարտապանի միակ բնակարանի կամ պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի իրացման համար ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված նվազագույն գումարը վերադարձվում է պարտապանին, իսկ գումարի մնացած մասն ուղղվում է պահանջների բավարարմանը:

27.05.2020թ.

21. Արայիկ Սարգսյանն ընդդեմ Երանուհի Ծովիկյանի, սնանկության գործ թիվ ԵԷԳ/0057/04/15

Էջ
365-371

Խնդիր. Արդյո՞ք ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման փուլում պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված գործողությունները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը միջոցառումների համալիր է, որի իրականացման հետևանքով ակնկալվում է այնպիսի արդյունքի ստացում, որի շրջանակներում հնարավոր կլինի բավարարել պարտատերերի պահանջները: Ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է ունենալ իրականացման որոշակի հավանականություն, որի բարձր կամ ցածր լինելը պետք է որոշի դատարանը՝ հաշվի առնելով նաև պարտատերերի կողմից ներկայացված առարկությունները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման հաջողության վերաբերյալ ապացույցները ծրագրի հաստատման փուլում գործնականորեն չեն կարող ներկայացվել, և այդ կապակցությամբ է, որ օրենսդիրը նախատեսել է ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հնարավորություն:

30.04.2020թ.

22. Արաքսյա Բոժեվոլնովան ընդդեմ «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի, սնանկության գործ թիվ ԵԿԴ/0287/04/15

Էջ
372-378

Խնդիր. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ սնանկության գործերը ենթակա են Հայաստանի Հանրապետության դատարանների քննությանը:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանը նշել է, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն օտարերկրյա իրավաբանական անձանց սնանկության հետ կապված գործերով ընդդատության կանոններ, ուստի նշված հարցը պարզելու համար մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է անդրադառնալ քաղաքացիադատավարական նորմերին:

Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ դատարանները կարող են քննել այն քաղաքացիական գործերը, որոնցով կողմ հանդիսացող օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ տարածքում ունի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն:

Անդրադառնալով «քաղաքացիական գործեր» եզրույթին՝ Վճռարեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, սահմանելով մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում սնանկության գործերի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննելու կանոն, չի ամրագրել որևէ դրույթ այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավանքների՝ սնանկության գործերի նկատմամբ կիրառման դեպքում պետք է տարբերակել և մատնանշել տվյալ նորմի՝ սնանկության գործով կիրառման ենթակա լինելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ անկախ այն հանգամանքից, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ամրագրել է «քաղաքացիական» գործերի վարման կարգ, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով դրա կանոններն ամբողջությամբ կիրառելի են սնանկության գործերի նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության դատարանները կարող են քննել օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիական՝ այդ թվում սնանկության գործեր, եթե օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ սնանկության գործերը 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, 15-րդ հոդվածի 1-ին մասի և «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի ուժով 01.01.2019 թվականից ընդդատյա են ՀՀ սնանկության դատարանին, իսկ մինչև 01.01.2019 թվականը ընդդատյա են եղել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

15.05.2020թ.

23. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Հենրիխ Կարապետյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵՄԴ/2035/02/15

Էջ
379-385

Խնդիր. Վճռարեկ դատարանը անդրադարձել է դատական ակտը դատավորի կողմից ստորագրելու օրենսդրական պահանջի բովանդակության բացահայտմանը:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի վճռի յուրաքանչյուր էջը ստորագրում և կնքում է վճիռը կայացրած դատավորը: Դատավորի կողմից դատական ակտը պատշաճ կարգով չստորագրելու հանգամանքը պետք է վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսանա:

Վճռի անվերապահ բեկանման հիմքերի ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իրեն իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք:

Բարձրացված իրավական հարցադրմանը պատասխանելու նկատառումով Վճռաբեկ դատարանը նշված որոշման շրջանակներում անհրաժեշտ է համարել բացահայտել «ստորագրություն» եզրույթի ստուգաբանական բովանդակությունը: Այսպես՝ ըստ Էդուարդ Ադամյանի բացատրական բառարանի «ստորագրություն» է՝ անուն-ազգանվան կամ դրանց կրճատումով կազմվող տառերի յուրահատուկ գրային-գծագրական ինքնագիրը, անուն-ազգանուն կամ կեղծանունը, որը մեկը դնում է իր գրածների տակ: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ «ստորագրություն» է համարվում որևէ բանի տակ սեփական ձեռքով գրված անուն-ազգանունը: Ընդհանրացնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ստորագրությունը դա անձի անվան, մականվան կամ այլ բառերի, նշանների ձեռագիր պատկերումն է (ինքնագիր), որի միջոցով տվյալ անձը հաստատում է իր ինքնությունը, միաժամանակ այլ անձանց հնարավորություն է ընձեռում նույնականացնել ստորագրողի անձը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատական ակտը դատավորի կողմից ստորագրված լինելու վերաբերյալ դատավարական օրենքի պահանջն ինքնանպատակ չէ: Այդ պահանջը պայմանավորված է դատավորի՝ արդարադատության առաքելության իրականացման սահմանադրական և միջազգային իրավունքի նորմերով ամրագրված մի շարք հանրաճանաչ սկզբունքներով: Այսինքն՝ դատական ակտը կայացնում է այն դատավորը, որը ՀՀ Սահմանադրությանը և դատավարական օրենքին համապատասխան հանդես է գալիս որպես դատարան: *Մինչդեռ դատավորի արտագրությունը դրոշմի տեսքով դնելը կամ դրա արտարպումը (բացատրությամբ էլեկտրոնային արտագրության և նույնականացման օրենքով թույլատրված այլ միջոցների կիրառման) չի կարող համարվել դատական ակտը դատավորի կողմից արտագրված լինելու հանգամանք:*

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

03.07.2020թ.

24. Հարություն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/7809/05/16

Էջ
386-391

Խնդիր. Արդյո՞ք ճանապարհային գծանշման պահանջների՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար վարչական պատասխանատվության հարցի լուծումը կարող է պայմանավորվել արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջները ողջամտորեն պահպանելու հնարավորության հանգամանքով:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 08.02.2006 թվականին) 4-րդ հոդվածի «ա» կետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային գծանշումները պետք է կատարվեն այնպես, որ ճանապարհային երթևեկության մասնակիցները հեշտությամբ դրանք ընկալելու հնարավորություն ունենան: Այլ կերպ ասած՝ ճանապարհային գծանշումների պահանջները պետք է ողջամտորեն ընկալելի լինեն ճանապարհային երթևեկության մասնակիցներին, ինչն էլ հանդիսանում է այդ պահանջների կատարման անհրաժեշտ նախադրյալը: Փաստորեն, ճանապարհային գծանշումները՝ որպես ճանապարհային երթևեկությունը կարգավորող կարևոր միջոցներ, պետք է օժտված լինեն ընկալելիության և կատարելիության բավարար մակարդակով:

Վճռարեկ դատարանը, անդրադառնալով ճանապարհային գծանշման պահանջները պահպանելու համար սահմանված պատասխանատվության կիրառման պայմաններին, արձանագրել է, որ այն դեպքում, երբ ճանապարհային գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել բնականոն երթևեկության պայմաններում, ապա երթևեկության մասնակիցը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ գծանշման պահանջները չկատարելու համար (*լրեն Հարություն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/5620/05/15 վարչական գործով Վճռարեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ճանապարհային գծանշման պահանջների տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար վարչական պատասխանատվության հարցի լուծումը պայմանավորված է արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջները ողջամտորեն պահպանելու հնարավորության հանգամանքով:

Վճռարեկ դատարանը փաստել է, որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 2 Ձևի համաձայն՝ թիվ 1.1 գիծը՝ որպես հորիզոնական գծանշում, սահմանում է երթևեկության որոշակի ուղիքի և կարգ: Ընդ որում, տրանսպորտային միջոցների վարորդներին արգելված է հատել այդ հորիզոնական գիծը: Փաստորեն, տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նաև թիվ 1.1 գծանշման պահանջները չկատարելու, այսինքն՝ հանդիպակց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող և այլ գործառնություններ իրականացնող հոծ գիծը հատելու համար: Ընդ որում, նույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջը ողջամտորեն պահպանելու հնարավորությունը:

Վճռարեկ դատարանի գնահատմամբ՝ այն դեպքում, երբ թիվ 1.1 գծանշման պահանջը չկատարելը հայտնաբերվել է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով, ապա տվյալ տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար պատասխանատվություն կրող սուբյեկտը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած

չի հարուցում (յրե՛ս նաև Արթուր Նսազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում թիվ 1.1 գծանշման պահանջները չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ ընդունելու իրավական նախադրյալներից մեկն այն է, որ տվյալ իրավիճակում թիվ 1.1 գծանշման պահանջը կատարելու օբյեկտիվ հնարավորությունը ողջամտորեն կասկած չի հարուցում: Այսինքն՝ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարի կամ տեսանյութի ուսումնասիրությունից չպետք է կասկած հարուցի նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում թիվ 1.1 գծանշման պահանջը ողջամտորեն հնարավոր էր կատարել:

03.07.2020թ.

25. Քրիստինա Գևորգյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/6661/05/15

Էջ 392-399

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող սնապարթությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշմամբ հաստատված Ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին և 21-րդ մասերով նախատեսված իրավախախտումներից որի հատկանիշներն է պարունակում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Կանոնների XXI բաժնով նախատեսվել են ճանապարհային նշանները և գծանշումները: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կանոնների 167-րդ կետով սահմանված են նաև արգելող նշանները, որոնք, ըստ թիվ 955-Ն որոշման հավելված 1-ի Ձև 1-ի, բնորոշվում են որպես երթևեկության որոշակի սահմանափակումներ մտցնող կամ վերացնող նշաններ: Դրանցից է նաև 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը, որով արգելվում են տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը:

Վերը նշված իրավանորմների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կանոններով հստակ սահմանվել են այն վայրերը, որտեղ թույլատրվում և արգելվում են կանգառը և (կամ) կայանումը: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ դեպքերում կարող է անհրաժեշտություն առաջանալ Կանոններով ուղղակիորեն չարգելված վայրերում բացառել տրանսպորտային միջոցների կանգառը և (կամ) կայանումը, Կանոններով սահմանվել է հնարավորություն ճանապարհային նշանների, այդ թվում՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի, և գծանշումների կիրառմամբ արգելել կանգառն այն վայրերում, որտեղ կանգառ և (կամ) կայանում կատարելու արգելք Կանոններով նախատեսված չէ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թե՛ կանգառի և կայանման կանոններով, թե՛ ճանապարհային նշաններով, այդ թվում՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանով, և գծանշումներով սահմանված՝ որոշակի վայրում կանգառի և (կամ) կայանման արգելքի չպահպանումն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հսգապետիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի իրավա-հարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հսգապետիկի չափով:

Վկայակոչված իրավանորմների բովանդակությունից հետևում է, որ Վարչական իրավա-խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը վարչական պատասխանատվություն է սահմանում ճանապարհային նշանների կամ գծանշումների պահանջները չկատարելու համար, որոնք սահմանված են թիվ 955-Ն որոշման հավելված 1-ի Ձև 1-ի և

Ձև 2-ի դրույթներով, մինչդեռ նույն հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 21-րդ մասը վարչական պատասխանատվություն է սահմանում կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու համար, որոնք սահմանված են Կանոնների 78-86-րդ կետերով: Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վարորդը չի ենթարկվել ճանապարհային նշանների (այդ թվում՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի) կամ գծանշումների պահանջներին, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 21-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել, երբ վարորդը խախտել է կանգառի և (կամ) կայանման կանոնները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ կանգառի և (կամ) կայանման կանոններն իրավական նորմեր են, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտով (թիվ 955-Ն որոշում) անորոշ թվով անձանց համար սահմանված վարքագծի պարտադիր կանոններ, որոնց պահանջները չկատարելու հետևանքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված պատասխանատվություն կիրառելն է, մինչդեռ Կանոնների 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը ոչ թե կանգառի և (կամ) կայանման կանոն (իրավական նորմ) է, այլ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այլ ձևի վարչական ակտ, որի պահանջը չկատարելը պարունակում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշները, ուստի վարչական պատասխանատվություն է առաջացնում հենց այդ մասի համաձայն:

03.07.2020թ.

26. Վարդան Մկրտչյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/7748/05/18

Էջ
400-421

Խնդիր. Արդյո՞ք տրանսպորտային միջոցի վարորդը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ ճանապարհային նշանի պատկերը հաստատված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Մեկնաբանելով կիրառելի իրավանորմերը դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, մի դեպքում, ամբողջ հոդվածների, իսկ մյուս դեպքում, ամբողջ բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտերի դրույթներից ելնելով, նաև ի կատարումն որոնց ընդունվել են ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն և ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի կատարած արարքը վարչական իրավախախտում համարելու և նրան Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման է, որ նա կատարած չլինի տվյալ դեպքում ճանապարհային նշանի պահանջը: Ընդ որում, ՀՀ կառավարությունը սպառիչ սահմանել է այդ ճանապարհային նշանների ցանկը՝ դրա մեջ ներառելով նաև հատուկ թելադրանքի ճանապարհային նշանների խումբը, որոնց միջոցով մտցվում կամ վերացվում են երթևեկության որոշակի ուղիներ: Այդ խմբին է դասվում նաև «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը, որի միջոցով սշվում են գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով: Այսպես՝ այդ նշանի վրա պատկերված է երթևեկության երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ: Ավելին՝ ոչ ներառնալով տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով՝ դրանց առկայության դեպքում: Այսպես՝ որպեսզի տրանսպորտային միջոցի վարորդի կատարած արարքը համարվի «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի խախտում

և նա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվի վարչական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ նա կատարած չլինի հենց 5.15.1 «Երթնելության ուղղությունները գոտիներով» նշանի պահանջները: Ավելին՝ չի թույլատրվում նշանների մեջ այնպիսի փոփոխությունների կատարումը, որոնք փոխում են նշանների հիմնական բնութագրերը, իսկ նշանների խմբերի, նշանների վրա պատկերների, պարամետրերի փոփոխությունները, նշանների թվի ավելացման և այլ ազդանշանների փոփոխությունները պետք է հաստատվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

27.08.2020թ.

27. Աշոտ Իսկանդարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/1500/05/17

Էջ
422-440

Խնդիր. Արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, եթե կարգավորվող խաչմերուկում առկա է անսարք լուսացույց, իսկ հիմնական լուսացույցը տեսանելի չէ տվյալ համընթաց շարքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լուսացույցն ըստ էության հանդիսանում է այլ ձևով ընդունված վարչական ակտ, որի յուրաքանչյուր գույնի միացված ազդանշանը որոշակի պարտականություններ է սահմանում անձանց հատուկ կատեգորիայի (վարորդ, հետիոտն) համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այլ ձևի վարչական ակտերը պետք է հասանելի (տեսանելի) լինեն այն անձանց (սուբյեկտների) համար, որոնց վրա դրվում են որոշակի պարտականություններ, հակառակ դեպքում պետք է բացառվի նաև պատասխանատվությունը դրա չկատարման համար, քանի որ այդ դեպքում բացակայում է անձի մեղքը:

Շեղանաբար այլ տվյալ տեսակի վարչական ակտի առանձնահատկությունից ելնելով՝ վարչական պատասխանատվության համար ելակետային նշանակության ունի վարչական ակտի հասցեատիրոջը դրա հասանելիության հարցը, որն էլ էական է վարչական պատասխանատվության համար առանցքային նշանակություն ունեցող պայմանի՝ մեղքի առկայությունը հաստատելու համար:

03.07.2020թ.

28. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Նիկոլայ Բարխուդարյանի, վարչ. գործ թիվ ՎԳ/7527/05/16

Էջ
441-461

Խնդիր. Արդյո՞ք կարող է անձը, ում կողմից մաքսանենգություն կատարված լինելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումը մերժվել է կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է արարքի ապաքրեականացման արդյունքում, հետագայում նույն արարքի համար ենթարկվել վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչև 25.06.2016 թվականը գործել է մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու համար պատասխանատվության հետևյալ իրավակարգավորումը:

Այսպես՝ օրենսդիրը մաքսային կանոնի խախտում էր համարել անձի կողմից կատարված հետևյալ անօրինական գործողությունը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝ **հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝** որպես դրա համար պատասխանատվություն նախատեսելով այդ ապրանքների մաքսային արժեքի չափով տուգանք նշանակելը:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը քրեական պատասխանատվություն էր նախատեսել այն դեպքերի համար, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով տեղափոխվում էին հանցագործության պահին 1.000.000 ՀՀ դրամ արժեքը գերազանցող ապրանքներ, մշակութային կամ այլ արժեքներ՝ այն որակելով որպես մաքսանենգություն՝ միևնույն ժամանակ դրա համար որպես պատիժ նախատեսելով նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով տուգանքը, կամ ազատազրկումը՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, բացառելով միևնույն արարքի համար միաժամանակ թե՛ քրեական, թե՛ վարչական պատասխանատվության առաջացումը,

սահմանել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը կարող է առաջանալ անձի արարքում հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հիման վրա անձին պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է, ի թիվս այնի, պարզել՝ արդյոք անձի արարքը, կիրառելի քրեական օրենքի համաձայն, պարունակում է հանցագործության հատկանիշներ, և այդ հարցին միայն բացասական պատասխան տալու դեպքում (նշված հանգամանքը հաստատվում է քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ) կարելի է քննարկել անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ մինչև 25.06.2016 թվականը գործող իրավակարգավորումները մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու համար առաջացող պատասխանատվության տեսակը պայմանավորել են տեղափոխվող ապրանքների արժեքով, այսինքն՝ մինչև 25.06.2016 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով 1.000.000 ՀՀ դրամ արժեքը գերազանցող ապրանքների տեղափոխումն առաջացնում էր ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն (հանցագործության մնացած տարրերի առկայության դեպքում), ինչի արդյունքում այդ արարքի կատարման համար բացառվում էր ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության կիրառումը:

Մինչդեռ 16.05.2016 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածով 25.06.2016 թվականից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, իսկ նույն օրենքի 6-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով ՀՀ քրեական օրենսգրքը լրացվել է համապատասխանաբար 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում մաքսանենգության առանձին տեսակների համար: Այսինքն՝ օրենսդիրն ըստ էության ապաքրեականացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը, բացառությամբ որոշակի տեսակի ապրանքների մաքսանենգության:

Հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար քրեական պատասխանատվության վերացման հետևանքով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու դեպքում նույն արարքի համար անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ օրենքի հետադարձ ուժի կիրառման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությամբ որպես ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության հիմնական կանոն սահմանված է, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Մինչև նույն ժամանակ այս կանոնից սահմանված է բացառություն այն դեպքերի համար, երբ արարքի կատարումից հետո ընդունված օրենքով վերացվում է արարքի հանցավորությունը, մեղմացվում է պատիժը կամ այլ կերպ բարելավվում է հանցանք կատարած անձի վիճակը: Ընդ որում, արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը ՀՀ Սահմանադրության, իսկ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի ուժով օժտված է հետադարձ ուժով, այսինքն՝ մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա այն տարածվում է անկախ այդ օրենքում հետադարձ ուժի մասին նշում առկա լինելու հանգամանքից:

Մաքսանենգության (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված դրա որոշ տեսակների) պատժելիությունը վերացվել է 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով, այսինքն՝ նշված օրենքն արարքի պատժելիությունը վերացնող է, և այդ հիմքով ունենալով հետադարձ ուժ, ըստ էության փոխարինում է մինչև դրա ուժի մեջ մտնելը գործող օրենքին: Ուստի մինչև 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարքի հանցավորությունը տվյալ դեպքում ենթակա է որոշման ոչ թե արարքի կատարման պահին գործող, այլ դրանից հետո ընդունված և հետադարձ ուժով օժտված 16.05.2016 թվականի ՀՕ-83-Ն օրենքով:

Մինչև նույն ժամանակ, օրենսդիրը որևէ օրենսդրական փոփոխություն չի կատարել ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածում, ինչպես նաև ուժը կորցրած չի ճանաչել այդ նորմը, հետևաբար անձի արարքը կարող է որակվել ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով և

առաջացնել դրանով սահմանված պատասխանատվություն, եթե անձի արարքում առկա չեն հանցագործության հատկանիշներ:

Վերոգրյալի լուսի ներքո անդրադառնալով մինչև 25.06.2016 թվականը կատարված, 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով սպաքրեականացված արարքի համար անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե անձի կողմից կատարվել է արարք, որը 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում հանցագործության հատկանիշներ չի պարունակում, հետևաբար ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման հատկանիշների առկայության դեպքում այդ անձը կարող է պատասխանատվության ենթարկվել մաքսային կանոնների խախտման համար: Նշված եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու համար էական է անձի կողմից կատարված արարքին տրված քրեաիրավական գնահատականը (արարքում հանցակազմի բացակայությունը)՝ հաստատված քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ: Իսկ այն հանգամանքը, թե քրեական որ օրենքի (արարքի կատարման պահին գործող, թե դրանից հետո ընդունված, արարքի պատժելիությունը վերացնող օրենքի) հիման վրա է իրավասու մարմինը եկել արարքում հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ եզրահանգման, բացառապես քրեաիրավական հարց է՝ կապված ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության և նոր քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման հետ, և այն որևէ նշանակություն չունի ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու իրավաչափության հարցը գնահատելու տեսանկյունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը թույլատրելի է համարել մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությանը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումն արարքի ապաքրեականացման հետևանքով մերժվելու կամ քրեական գործի վարույթը դրա հետևանքով կարճվելու դեպքում՝ վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում, անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելը, եթե, իհարկե, չեն լրացել անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

03.07.2020թ.

29. «Ալմաբար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/4860/05/16

Էջ
462-472

Խնդիր. Ի՞նչ տեղեկություններ պետք է պարունակի վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ վարույթի մասնակցին հասցեագրված ծանուցագիրը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերի, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքի բացակայության պայմաններում վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի ընթացքում անցկացնել լուումներ: Ընդ որում, վարչական մարմինը պետք է ապահովի վարչական վարույթի մասնակիցների պատշաճ ծանուցումը լուումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վարչական վարույթի մասնակցի՝ վարչական վարույթի լուումների մասնակցելու հնարավորությունը չպետք է անհիմն կերպով սահմանափակվի, այդ հնարավորությունից վարչական վարույթի մասնակիցը չպետք է զրկվի վարչական մարմնի գործողությամբ կամ անգործությամբ: Մասնավորապես՝ վարչական վարույթի հարուցման և իրականացման մասին վարչական վարույթի մասնակցի իրազեկումը

(ծանուցումը) պետք է կատարվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին: Իսկ այդ մասնակցության ապահովման համար նախնառաջ վարույթի մասնակիցը պետք է ծանուցված լինի ինչպես վարչական վարույթի հարուցման մասին, այնպես էլ հարուցված վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների, այդ թվում՝ լուումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին: Նման կերպ, վարույթի մասնակիցներին հնարավորություն կտրվի վարչական վարույթի լուումների ժամանակ վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդել վարչական մարմնի վերջնական որոշման վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի հարուցման մասին միայն վարույթի մասնակցին ծանուցելու պարտականության կատարումը վարչական մարմնին չի ազատում վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ վարույթի մասնակցին հասցեագրված ծանուցագիրը, ի թիվս այլնի, պետք է տեղեկություններ պարունակի լուումների անցկացման տեղի, օրվա, ժամի մասին: Հակառակ դեպքում վարույթի մասնակիցը կհամարվի վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ պատշաճ կերպով չճանուցված:

24.07.2020թ.

30. Գագիկ Բարսեղյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/7317/05/16

Էջ
473-490

Խնդիր. Կարո՞ղ է արդյոք մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվել վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ՝ վերջինիս ուղարկված ծանուցագիրը «Չպահանջված» նշումով վերադարձվելու դեպքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *որպես ընդհանուր կանոն սահմանված է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը քննել վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի մասնակցությամբ, և նշված կանոնից բացառություն են միայն հերկյալ դեպքերը.*

1. քննության տեղի ու ժամանակի մասին սահմանված կարգով վարչական պարասխանաարվության ենթարկվող անձին տեղյակ է պահել, սակայն վերջինիս կողմից որևէ միջնորդություն չի հարուցվել, կամ
2. վարչական պարասխանաարվության ենթարկվող անձը բացակայում է, և հայրնի չէ նրա գրնվելու վայրը, կամ
3. վարչական պարասխանաարվության ենթարկվող անձը գրնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված հանգամանքների բացակայության դեպքում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը չի կարող իրականացվել վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի բացակայությամբ: Ընդ որում, օրենսդիրը ոչ միայն սահմանել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի մասնակցությամբ իրականացնելու պահանջ (բացառությամբ վերը նշված դեպքերի), այլև վարչական իրավախախտման (այդ թվում՝ մաքսային կանոնների խախտման) վերաբերյալ գործի քննության նախապարասարելիս գործը քննող մարմնի (պաշտոնապարս անձի) կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակում ներառել է գործի քննության ժամանակի և տեղի մասին դրան մասնակցող անձանց ծանուցված լինելու հարցը, ավելին՝ սահմանվել է նաև, որ գործի քննության ընթացքում գործը քննող մարմինը (պաշտոնապարս անձը), ի թիվս այլնի, լուում է գործի քննությանը մասնակցող անձանց:

Անդրադառնալով մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ իրականացնելու հնարավորությանը այն դեպքում, երբ այդ անձին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է «Չպահանջված» նշումով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փոստային առաքանին հանձնվում է դրա վրա նշված հասցեին համապարասխան կամ սրվում է փոստային կապի օբյեկտում: Միևնույն ժամանակ գործնականում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ որոշակի հանգամանքներով պայմանավորված (օրինակ՝ միայն առաքման պահին հասցեատրերը (սրսցողը) բացակայել է նշված հասցեից, կամ հասցեատրերը (սրսցողը) տեղափոխվել է այլ բնակավայր) փոստային առաքանին հնարավոր չի լինում սահմանված վայրում հանձնել հասցեատրիդքը կամ նախքան այն հասցեատրիդքը հանձնելն ուղարկողը դիմում է փոստային կապի օպերատորին՝ ինտրելով վերադարձնել փոստային առաքանին: Առաջին դեպքում փոստային

առաքանիները մինչև մեկ ամիս պահպանվում են փոստային կապի օբյեկտում: Ընդ որում, պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել ուղարկողի կամ ստացողի (օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն: Ավելին՝ առաջին տեղեկացումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոստային առաքանին ստանալու համար ստացողի չներկայանալու դեպքում ստացողի ստորագրությամբ նրան է հանձնվում երկրորդ տեղեկացումը, իսկ նշված ժամկետը լրանալուց հետո հասցեատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից այն չարանալու դեպքում չարացված հասարակ նամակագրական թղթակցությունը փոխանցվում է որպես չպահանջված փոստային առաքանի (...):

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ փոստային առաքանին վերադարձվում է փոստային առաքանին վերադարձվելու վերաբերյալ CN 15 ձևաթղթում առկա «Չպահանջված» նշումով, պետք է ելնել այն կանխավարկածից, որ ստաբիլ միջավայրից հասցեատիրոջ (արագողի) բացակայելու հիմքով փոստային առաքանին մինչև մեկ ամիս պահպանվել է փոստային կապի օբյեկտում, հասցեատերը (արագողը) համապատասխան փոփոխությունները վերջին ամիսում նրան համարվում ստանալուց հետո սահմանված ժամկետում չի ներկայացել առաքանին ստանալու համար, որի արդյունքում չարացված առաքանին փոխանցվել է որպես չպահանջված փոստային առաքանի:

Վերոգրյալի համարեքաբարձրում քննարկելով մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործի քննությունն առանց վարչական պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցության իրականացնելու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե վարչական պատասխանատվության ենթարկվող անձին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է մեկ անգամ՝ «Չպահանջված» նշումով, ապա վերջինս չի կարող համարվել գործի քննության տեղի և ժամանակի մասին սահմանված կարգով տեղյակ պահված, իսկ առաքանին հանձնելու պահին նրա՝ համապատասխան հասցեից բացակայությունը՝ գնահատվել որպես վերջինիս գտնվելու վայրն անհայտ լինելու կամ նրա՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու փաստը հաստատող ապացույց:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի բացակայության և գտնվելու վայրը հայրնի չլինելու հիմքով մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը կարող է իրականացվել վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ միայն այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում վարչական մարմնի մտքը ձևավորվել է որչափոր կենսաթողություն այն մասին, որ վարչական պատասխանատվության ենթարկվող անձը չի գտնվում վարչական մարմնին հայրնի հասցեում: Ընդ որում, Ընդ որում, Կլավյա դեպքում խոսքը կարող է վերաբերել այն միջոցներին, որոնք ձեռնարկվել են համապատասխան ծանուցագիրը «Չպահանջված» նշումով վերադարձվելուց հետո, որի ժամանակ վարչական մարմնին հնարավոր է ձեռնարկի հնարավոր և որչափոր բոլոր միջոցներն անձին մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի ու վայրի մասին ծանուցելու համար (օրինակ՝ անձին ծանուցել վարչական մարմնին հայրնի այլ հասցեով կամ ուղարկել կրկնակի ծանուցում վարչական մարմնին հայրնի միակ հասցեով, և այլն), և եթե որևէից հետո հնարավոր չի լինի ապահովել մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի և վայրի մասին վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ծանուցումը, վարչական մարմնին կարող է որչափոր ենթարկել, որ անձը բացակայում է, և հայտնի չէ նրա գտնվելու վայրը: Հակառակ դեպքում մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը չի կարող իրականացվել վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ:

03.07.2020թ.

31. Արտաշես Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի, վարչ. գործ թիվ ՎԳ/1309/05/16

Էջ 491-549

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ իրավական համակարգում վարչական ակտին բնորոշ հատկանիշներին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե՛ ոչ: Նույն դատողությունը հավասարապես կիրառելի է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցի դեպքում:

Ջարգացնելով վարչական ակտի հատկանիշների վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել առավել մանրամասն անդրադառնալ վարչական ակտի երկու հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված լինելու և կոնկրետ անձանց համար իրավական հետևանքներ առաջացնելու հատկանիշներին:

Այսպիսով, օրենսդրի ձևակերպման համաձայն՝ վարչական ակտի նպատակն է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործ: Դա նշանակում է, որ վարչական մարմնի որևէ գրավոր փաստաթուղթ, որտեղ արտահայտված են տեսակետներ, դիրքորոշումներ, կարծիքներ, մեկնաբանություններ, համաձայնություններ, որը, սակայն, ուղղված չէ կոնկրետ գործի կարգավորմանը, չի կարող համարվել վարչական ակտ: Ընդ որում, նշված հատկանիշի հետ սերտորեն կապված է վարչական ակտի մյուս՝ կոնկրետ գործով իրավական հետևանքներ առաջացնելու հատկանիշը, ըստ որի՝ եթե վարչական մարմնի որևէ փաստաթղթում կոնկրետ անձի համար կոնկրետ իրավունքներ և պարտականություններ չեն սահմանվում, փոփոխվում, վերացվում կամ (հարցը) ճանաչվում, ապա այն չի կարող հանդիսանալ վարչական ակտ: Այսպիսով, վարչական ակտի քննարկվող հատկանիշներին համապատասխանելու համար վարչական մարմնի որևէ գրավոր փաստաթուղթ ոչ միայն պետք է ուղղված լինի կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը, այլև պետք է անմիջականորեն կարգավորի այդ գործը (հարցը)՝ առաջացնելով կոնկրետ անձի իրավունքների ու պարտականությունների սահմանում, փոփոխում, վերացում կամ ճանաչում: Այդ պատճառով էլ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրել է վարչական ակտի որոշակի լինելու պահանջը, սահմանելով, որ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, որպեսզի դրա բովանդակությունից դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Հանրային իրավունքի բնագավառում վարչական ակտով կոնկրետ գործի (հարցի) հստակ կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ուժի մեջ մտնելուց հետո վարչական ակտը ենթակա է կատարման, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև հարկադիր կատարման, այսինքն՝ վարչական ակտը ենթակա է պարտադիր կատարման՝ վարչական ակտով տրված լուծմանը համապատասխան, իսկ եթե վարչական մարմնի տրված փաստաթղթով որևէ գործի կոնկրետ (հարցի) լուծում չի տրվել, ապա այդ փաստաթուղթը զուրկ կլինի նաև կատարելիության հատկանիշից: Այսպես, եթե վարչական մարմինը գրավոր փաստաթղթով իր համաձայնությունը կամ անհամաձայնությունն է արտահայտում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հնարավոր վարքագծի վերաբերյալ, ապա ակնհայտ է, որ այդ համաձայնությունը կամ անհամաձայնությունը որևէ կերպ չի կարող կատարվել, քանի դեռ անձը չի դրսևորել իր վարքագիծը, իսկ վարչական մարմինն էլ իր իրավասության սահմաններում կոնկրետ կարգավորում չի տվել այդ անձի վարքագծին կամ դրա իրավական հետևանքներին: Այսինքն՝ այդ պարագայում վարչական մարմինը չի ընդունել վարչական ակտ, որն ուժի մեջ մտնելուց հետո ենթակա կլինի պարտադիր կատարման այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

Վարչական մարմնի դիրքորոշումն անկախ նրանից՝ դա անձի համար բարենպաստ է, թե ոչ, անձը կարող է հաշվի առնել իր հնարավոր վարքագիծն ընտրելիս: Մակայն այդ դիրքորոշումն անձի համար պարտադիր չէ, քանի դեռ վարչական մարմինն այն չի արտահայտել կոնկրետ գործի (հարցի) լուծման նպատակով ընդունված վարչական ակտում՝ վարչարարության իրականացմամբ իրացնելով կոնկրետ գործի (հարցի) կարգավորման իր հանրային-իշխանական լիազորությունը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև արձանագրել, որ գրավոր փաստաթղթում դիրքորոշում արտահայտելով անձի հնարավոր վարքագծի իրավաչափության վերաբերյալ՝ վարչական մարմինը չի կարող ենթադրել, որ անձը հետագայում անպայման կդրսևորի իր դիրքորոշմանը համապատասխան ենթադրյալ իրավաչափ վարքագիծ: Վարչական գործին կոնկրետ լուծում չտվող ակտում վարչական մարմնի արտահայտած դիրքորոշումն անձի վարքագծի վրա անմիջականորեն չի կարող ազդել, քանի որ անձը տվյալ իրավահարաբերության վերաբերյալ կարող է ունենալ սեփական դիրքորոշումը և պարտավորված չէ ղեկավարվելու վարչական մարմնի դիրքորոշմամբ: Հետևաբար, վարչական մարմնի այնպիսի գրավոր փաստաթուղթը, որն անձին չի պարտադրում հարկադրանքի միջոցով երաշխավորված կատարման ենթակա վարքագիծ, վարչական ակտ համարվել չի կարող:

Նշված վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտ չի կարող համարվել վարչական մարմնի կողմից տրված այնպիսի գրավոր փաստաթուղթ, որը թեև պարունակում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի (հարցի) լուծման վերաբերյալ դատողություններ, դիրքորոշումներ (այդ թվում՝ համաձայնության կամ

անհամաձայնության ձևով), սակայն դրանք ուղղված չեն կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը և չեն լուծում այդ գործը (հարցը):

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԲ

03.07.2020թ.

32. «Գ ԸՆԴ Ը ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության, վարչ. գործ թիվ ՎԳ/1495/05/17

Էջ
550-565

Խնդիր. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը, նախևառաջ անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համարվո՞ւմ է արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, եթե դրա միակ մասնակիցը, ում միաժամանակ պատկանում է մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսից ավել բաժնեմասը, մինչև հաշվետու տարվա սկիզբը վաճառել է առաջին ընկերությունում իրեն պատկանող 20 տոկոսից ավել բաժնեմասը, սակայն մինչև հաշվետու տարվա սկիզբը բաժնեմասի օտարման պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը անդրադարձել է քննարկվող իրավահարաբերության պայմաններում՝ ապացուցման պարտականություն կրելու և դրանք չկատարելու բացասական հետևանքներին, այն դեպքում, երբ մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) սեփականատեր հանդիսանալու փաստը վիճելի է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ քննարկվող իրավահարաբերության պայմաններում՝ շրջանառության հարկից դեպի ավելացված արժեքի հարկատեսակ անցում կատարելու համար բաժնեմասի օտարման գործարքը որևէ իրավաբանական նշանակություն ունենալ չի կարող, եթե նշված գործարքն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չի ենթարկվել:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկվող իրավահարաբերության պայմաններում, երբ վարչական մարմինն իր կայացրած վարչական ակտի հիմքում դրել է կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին պատկանելու և այդ ֆիզիկական անձին միաժամանակ մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանելու հանգամանքը, ապա նշված փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է տվյալ վարչական մարմինը: Ընդ որում, երկու դեպքում էլ նշված փաստական հանգամանքները պետք է հաստատվեն վարչական վարույթի նյութերում առկա գրավոր ապացույցներով՝ մասնավորապես՝ իրավունքների վերաբերյալ պետական գրանցումները հաստատող համապատասխան փաստաթղթերով:

03.07.2020թ.

33. «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչության, վարչ. գործ թիվ ՎԳ/6212/05/15

Էջ
566-578

Խնդիր. Ի՞նչ իրավական հետևանք է առաջանում այն դեպքում, երբ հարկային մարմինն օրենքով սահմանված կարգով հայտնաբերում է փաստաթղթերով չհիմնավորված, սակայն շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս հարկ վճարողի կողմից նվազեցված ծախսեր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս որևէ ծախս նվազեցնելու համար այն պետք է, ի թիվս այլնի, լինի փաստաթղթերով հիմնավորված: Նշված կանոնից բացառություններ են սահմանված «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով: Փաստորեն, առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսերը շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս համախառն եկամտից ենթակա են նվազեցման միայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, իսկ այլ դեպքերում հիմնավորող փաստաթղթի բացակայությունը բացառում է համապատասխան ծախսը նվազեցնելու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հարկ վճարողները շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ նվազեցնում են փաստաթղթերով չհիմնավորված, նվազեցման ոչ ենթակա ծախսեր: Նման իրավիճակներում անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե ինչ լիազորություններ պետք է կիրառի հարկային մարմինը, մասնավորապես՝ արդյոք այդ դեպքերում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հաշվարկելու լիազորությունը:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարզելու համար, թե արդյոք հարկ վճարողի կողմից առանց հիմնավորող փաստաթղթերի (նվազեցման ոչ ենթակա) ծախսերը նվազեցվելու դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հաշվարկելու լիազորությունը, անհրաժեշտ է գնահատել նշված լիազորության կիրառման համար անհրաժեշտ իրավիճակների (հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինություն կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելը) առկայությունը կամ բացակայությունը:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հարկ վճարողի կողմից շահութահարկի հաշվարկում առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր (անթույլատրելի նվազեցումներ) ներառված լինելու հանգամանքն ինքնին չի վկայում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինության կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելու մասին: Վճռաբեկ դատարանի նման դատողության հիմքում ընկած է այն իրողությունը, որ եթե հայտնի են տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, ապա նշված տվյալները բավարար են տնտեսվարող սուբյեկտի հարկային պարտավորությունները հաշվարկելու համար, քանի որ հարկվող շահույթը համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում, ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր կնվազեցնելու դեպքում հարկվող շահույթը երբեմն կարող է համահունչ չլինել փաստացի կատարված ծախսերին, ապա Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ որևէ ծախս կատարած լինելու հանգամանքը դեռևս չի նշանակում, որ այդ ծախսը ենթակա է համախառն եկամտից նվազեցման: Եթե որևէ ծախս չի համապատասխանում թույլատրելի նվազեցում համարվելու չափանիշներին, ապա այն ենթակա չէ նվազեցման՝ ոչ հարկ վճարողի, և ոչ էլ հարկային մարմնի կողմից՝ անկախ նրանից, թե այդ ծախսն իրականում առկա է, թե՛ ոչ: Այսինքն՝ ծախսերի գծով թույլատրելի նվազեցումները կարող են պակաս լինել հարկ վճարողի կողմից փաստացի կատարված ծախսերից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դեպքերում շահութահարկի գծով հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալների հիման վրա հաշվարկելու կարգը համահունչ է նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտի ծախսերը նվազեցնելու կարգավորումներին: Մասնավորապես՝ հակառակ մտտեցման դեպքում, եթե միայն հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր (անթույլատրելի նվազեցումներ) ներառված լինելու հանգամանքը հանգեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկելու լիազորության կիրառման, ապա հարկային մարմինը յուրաքանչյուր դեպքում պարտավոր կլինի պարզել և շահութահարկի գծով հարկային պարտավորությունները հաշվարկելիս հաշվի առնել նաև այնպիսի ծախսեր, որոնց նվազեցումն օրենքով թույլատրված չէ: Արդյունքում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտի ծախսերը նվազեցնելու վերաբերյալ կարգավորումները կիմաստազրկվեն, ինչը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, անթույլատրելի է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ հայտնի են տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ երկու տարրերը՝ համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, ապա միայն այն հանգամանքը, որ հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված փաստաթղթերում արտացոլված են նաև առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր (անթույլատրելի նվազեցումներ), չի վկայում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով

հաշվարկելու լիազորության կիրառման հիմքերից (հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինություն կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելը) որևէ մեկի առկայության մասին: Նման դեպքերում որպես հարկվող շահույթ պետք է դիտարկել համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը, որի հիման վրա էլ պետք է հաշվարկվի օրենքով սահմանված շահութահարկի գումարը:

25.12.2020թ.

34. Մասուն Վարդագարյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտոտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԿ/5662/05/16

Էջ
579-596

Խնդիր. Արդյո՞ք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված գույքի օտարման անհատույց գործարքները կարող են համարվել ապրանքի մատակարարում և առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վճարելի դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված ապրանքի մատակարարում համարվող գործարքներ են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանված գործարքները:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, եթե վերջինս օտարել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս: Ընդ որում, վերը նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի շեմ է սահմանվել 58,35 մլն դրամը: Այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն դրամ), ապա վերը նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի պարտավորության մեծությունը որոշվում է գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն դրամ) գերազանցող գումարից:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետում կիրառված «օտարում» բառի նշանակությունը:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների (գործառնությունների) թվին դասելով ապրանքների մատակարարումը, միաժամանակ բացահայտում է նաև դրա հասկացությունը: Մասնավորապես, օրենսդիրն ապրանքների մատակարարում է համարել այն գործարքը, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը *որևէ ձևով կազարվող հարստման դիմաց* այլ անձի փոխանցելու միջոցով: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի մատակարարում են միայն հատուցելի գործարքները, այսինքն՝ այն գործարքները, որոնցով ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվում հատուցման դիմաց:

Միևնույն ժամանակ, օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական

անձի կողմից իրականացվող, ապրանքի մատակարարում համարվող գործարքները՝ դրանց թվին դասելով՝ նաև ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված՝ վերը նշված դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե այդ հոդվածի ընդհանուր համատեքստից դուրս, այլ՝ հաշվի առնելով նաև դրանով սահմանված մնացած իրավակարգավորումները, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ **ապրանքի մատակարարում կարող են համարվել բացառապես հապուցելի գործարքները**: Փաստորեն, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված գույքի օտարումը համարվում է ապրանքի մատակարարում միայն այն դեպքում, երբ այդ գործարքով գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված հատուկ կարգավորումը նպատակ է հետապնդում սահմանափակել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող այն գործարքները, որոնք վերջինիս համար առաջացնում են ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի համաձայն՝ ապրանքի մատակարարում է համարվում ոչ թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կնքված գույքի օտարման հատուցելի ցանկացած գործարք, այլ միայն գույքի օտարման այն գործարքները, որոնց առարկան ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով համարվում է ապրանքի մատակարարում և անձի մոտ կարող է առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն այն դեպքում, երբ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել հատուցելի գործարքով, այսինքն՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Հետևաբար, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված՝ վերագրյալ գույքի օտարման **անհարույց գործարքները** չեն կարող համարվել ապրանքի մատակարարում և չեն կարող առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

10.12.2020թ.

35. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Լիլիթ Մկրտչյանի, վարչ. գործ թիվ ՎԴ/4450/05/17

Խնդիր. Արդյո՞ք փոստային հավաստագրի վրա առկա որպես ստացողի ստորագրության պատկանելության վերաբերյալ փորձագետի հավանական եզրակացությունը բավարար է

հասցեատիրոջ կողմից վարչական ակտի մասին իրազեկված չլինելու փաստը հաստատված համարելու համար:

Վճռարենկ դատարանի դիրքորոշումը. Վճռարենկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հարկային մարմնի հսկողությունը գործնականում ապահովելու նպատակով սահմանել է, որ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս, որից հետո, գումարը գանձելու վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում, գումարը գանձվում է օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ եթե առկա են իրավահարաբերության ծագման պահին գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերը, ապա վարչական ակտի հիման վրա դրամական պահանջը հարկադիր կատարման է ենթակա դատական կարգով:

Վճռարենկ դատարանը եզրակացրել է, որ վարույթ իրականացնող վարչական մարմինը գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին ընդունված գրավոր վարչական ակտի մասին պետք է իրազեկի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով, այն է՝ հանձնման եղանակով: Մասնավորապես՝ գրավոր վարչական ակտը պետք է հանձնվի ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ: Բացի այդ, գրավոր վարչական ակտը վարույթի մասնակիցներին կարող է հանձնվել նաև այլ եղանակով, եթե որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա կամ վարչական ակտի հասցեատերն ինքն է խնդրել օգտագործել վարչական ակտի հանձնման այլ միջոցներ: Գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարույթի մասնակիցներին հանձնելու հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ քան նախատեսված չէ, մտնում է ուժի մեջ:

Վճռարենկ դատարանը գտել է, որ թեև *Սամվել Ֆրանգոյանն ընդդեմ Հենրիկ Ֆրանգոյանի թիվ ԵԷԴ/1089/02/13 քաղաքացիական գործով* Վճռարենկ դատարանի 22.07.2016 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն արտահայտվել է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն այն հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկությունները նույնական են:

Վճռարենկ դատարանն արձանագրել է, որ փորձագիտական եզրակացության արդյունքում տրված *հավանական եզրահանգումները* ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի ուժով *չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի ստվայությունն ապացուցելու ստույգով*: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու քաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ո՛չ հավանական եզրակացությունն ինքնին և ո՛չ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն. այդպիսին չեն համարվում նաև հիպոթետիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ շատ դրանք լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն. հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

21.07.2020թ.

36. Մհեր Մնացականյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ԳԴ/3194/05/16

Էջ
618-627

Խնդիր. Արդյո՞ք վիճարկման հայցը դատավարական ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ Վերաքննիչ դատարանը կարող է կարճել գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, եթե ստորադաս դատարանում չի ապահովվել վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու և այն վերականգնելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություն կամ ներկայացված միջնորդությունը քննարկման առարկա չի դարձվել ու դրա վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վճարելի դատարանը փաստել է, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետների հարցի լուծումն ուղղակիորեն պայմանավորված է վիճարկվող վարչական ակտի, այդ թվում նաև վարչական բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելու կամ բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելու հանգամանքով:

Վիճարկման հայցադիմումը դատարան ներկայացնելու դատավարական ժամկետ սահմանելով՝ օրենսդիրը թեև նախատեսել է դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմք, այդուհանդերձ այդ ժամկետները բաց թողնված լինելու կամ չլինելու հարցի գնահատումը թողել է դատարանի հայեցողությանը:

Վճարելի դատարանը գտել է, որ որոշմամբ վկայակոչված դատարանի մատչելիության վերաբերյալ իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետների վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում:

Այսպիսով, Վճարելի դատարանը եզրահանգել է, որ շահագրգիռ անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իր իրավունքներին միջամտող վարչական ակտը՝ պահպանելով վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը, իսկ այդ դատավարական ժամկետը բաց թողնված լինելու դեպքում՝ այն վերականգնելու ընդհանուր կառուցակարգը:

Նշված կառուցակարգն առաջին հերթին ենթադրում է, որ վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը բաց թողնված անձը պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն: Նման միջնորդության ներկայացումն օբյեկտիվ իրավական անհրաժեշտություն է և հետապնդում է վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու հարցը քննարկելու և լուծելու միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովելու իրավաչափ նպատակ:

Վճարելի դատարանն ընդգծել է, որ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը կարող է հաստատված համարվել միայն վիճարկվող վարչական ակտի, այդ թվում նաև վարչական բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվա վերաբերյալ անհերքելի ապացույցների առկայության պարագայում: Իսկ նշված հանգամանքի վիճելի լինելու դեպքում հայցվորը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին:

Վճարելի դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ այն դեպքում, երբ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը վիճելի է, այսինքն՝ առկա է դատական պաշտպանության դիմած անձի կողմից դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ ողջամիտ կասկած, անձը գործնականում պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պարտավոր է քննարկման առարկա դարձնել և գնահատել դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները, որովհետև այդ փաստը վիճելի մնալու դեպքում անձին դատական պաշտպանության տրամադրման մերժումը կհանդիսանա դատարանի մատչելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում, ինչի հետևանքով կխախտվի այդ իրավունքի բուն էությունը, քանի որ անձն այլևս կզրկվի իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու հնարավորությունից:

Մինևույն ժամանակ, Վճարելի դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումները լրացուցիչ երաշխիք են հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը չսահմանափակելու իրավաչափ նպատակի իրագործման համար, քանի որ դատավարական նորմերի ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում գործնականում ապահովվում է դատավարական ժամկետները բաց չթողնելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները քննարկելու և համապատասխան եզրահանգում կատարելու օբյեկտիվ հնարավորություն:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև 72-րդ հոդվածը պետք է մեկնարանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրությամբ ու Կոնվենցիայով երաշխավորված՝ հիմնարար իրավունքների և ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո (տե՛ս Հովհաննես Չամսարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/7268/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներ կիրառելուց առաջ դատարանները պարտավոր են ապահովել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու իրական (ռեալ) հնարավորություն: Միևնույն ժամանակ դատարանները պարտավոր են քննարկման առարկա դարձնել վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջնորդությունը և դրա վերաբերյալ կայացնել համապատասխան դատական ակտ: Հակառակ պարագայում, այսինքն՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը չընձեռնելով հանդերձ դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներ կիրառելով՝ կարող է խաթարվել արդարադատության բուն էությունը:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հայցվորի իրավունքի իրացումը դատարանի կողմից ապահովված չլինելու կամ միջնորդությունը Դատարանի կողմից քննարկված չլինելու ու դրա վերաբերյալ որոշում կայացված չլինելու պարագայում Վերաքննիչ դատարանն իրավասու չէ վիճարկման հայցը դատավարական ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կարճել գործի վարույթը, քանի որ դրա հետևանքով ոչ իրավաչափորեն կսահմանափակվի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

03.07.2020թ.

37. Վլերսան Թ-ումապանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/14079/05/17

Էջ
628-637

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական դատարանի կողմից դատական ծախսերի բաշխման (ներառյալ՝ դատավարության մասնակցի ներկայացուցչի վճարի հատուցման) հարցի լուծմանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորվում են յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները, որոնց բաղկացուցիչ տարրերից մեկն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է. այդ իրավունքը երաշխիք է իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները դատական ծախսերի մաս են կազմում և ենթակա են հատուցման օրենքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատարանի կողմից վճռով լուծման ենթակա հարցերից է դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխումը: Ըստ այդմ, օրենսդիրը վարչական դատարանի վրա դրել է դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ պարտադիր եզրահանգում կատարելու պարտականություն, որը պետք է արտացոլվի վճռի եզրափակիչ մասում: Այսինքն՝ վճռի եզրափակիչ մասն անվերապահորեն պետք է պարունակի վերջնական եզրահանգումներ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման, այդ թվում՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարների հատուցման վերաբերյալ: Ընդ որում, դատարանի կողմից կատարվող եզրահանգումը պետք է ունենա հստակ, միանշանակ, անպայմանական, հրամայական, կատեգորիկ բնույթ և բացառի դատական ակտը մեկնաբանելու անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, դատարանը պետք է նաև պատճառաբանի դատական ծախսերի բաշխումը՝ դրա վերաբերյալ հիմնավորումները

ներկայացնելով վճռի պատճառաբանական մասում, սակայն վճռի պատճառաբանական մասում տեղ գտած՝ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի դատողությունները չեն կարող փոխարինել այդ ակտի եզրափակիչ մասում արտացոլվող եզրահանգմանը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման (ներառյալ՝ դատավարության մասնակցի ներկայացուցչի վճարի հատուցման) հարցը համարվում է ամբողջությամբ լուծված միայն այն դեպքում, երբ վճռի եզրափակիչ մասը բովանդակում է դատարանի եզրահանգումը՝ այդ դատական ակտով բաշխման ենթակա դատական ծախսերի բաշխման վերաբերյալ: Իսկ այն դեպքերում, երբ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է դիրքորոշում դատական ծախսերի բաշխման վերաբերյալ, իսկ դատական ակտի եզրափակիչ մասում նշված դիրքորոշումներից բխող եզրահանգումներն ամբողջությամբ արտացոլված չեն, այսինքն՝ բոլոր դատական ծախսերի բաշխման վերաբերյալ վերջնական և ամբողջական եզրահանգումը բացակայում է, ապա դատական ծախսերի բաշխման հարցն այդ դատական ակտով ամբողջությամբ լուծված չէ:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև դատական ծախսերի հարցը վճռով լուծված չլինելու կամ թերի լուծված լինելու դեպքում վարչական դատավարության մասնակցին օրենքով վերապահված իրավունքներին:

Այսպես, վերահաստատելով *Կուրայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքն ընդդեմ Գյոյնարա Սարգսյանի թիվ ԿԳ2/0189/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշմամբ* արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի քննության ժամանակ գործող իրավակարգավորումների համաձայն՝ եթե վարչական դատարանը համապատասխան սպացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում դատական ծախսերի կողմերի միջև բաշխման հարցին, ապա վարչական դատավարության մասնակցին վերապահված է երկու հնարավորություն.

- 1. դատական ակտը կայացրած դատարան ներկայացնել լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ դիմում.
- 2. դատական ծախսերի բաշխման մասով բողոքարկել վարչական դատարանի դատական ակտը:

Վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ վերը նշված դիրքորոշումը կիրառելի է նաև 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում, քանի որ վերջինս նույնպես նախատեսում է գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ վճիռ կայացրած դատարանի նախաձեռնությամբ լրացուցիչ վճիռ կայացնելու հնարավորություն, մասնավորապես, այն դեպքում, երբ դատարանը չի լուծել կամ թերի է լուծել դատական ծախսերի հարցը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մաս):

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱԲՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

03.07.2020թ.

38. Ռուզաննա Սարգսյանն ընդդեմ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավարի, վարչ. գործ թիվ ՎԳ-5/0054/05/15

Էջ
638-645

Խնդիր. Ի՞նչ կարգով դատավարությանը մասնակից չդարձված անձը կարող է իրացնել իր իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը բողոքարկելու իրավունքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն եզրահանգել է, որ դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից բողոքարկման իր իրավունքն իրացնելու յուրաքանչյուր դեպքում որոշիչ է այն հարցի պարզումը, թե որ դատարանի առաջին ատյանի, թե վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտով է շոշափվում տվյալ անձի իրավունքները և պարտականությունները:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 155-րդ և 156-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումները:

Այսինքն, օրենքով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ այն դեպքում, երբ դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափվում են առաջին ատյանի դատարանի դատական ակտով, ապա տվյալ անձը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հիմքով կարող է իրացնել առաջին ատյանի դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը, իսկ վերաքննիչ դատարանի կողմից նշված հիմքով իրականացված բողոքի քննության արդյունքով կայացված դատական ակտն ընդհանուր կարգով բողոքարկել ՀՀ վճռաբեկ դատարան: Այլ կերպ ասած, եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը

կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից, ապա վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատարանի դատական ակտը պետք է բողոքարկի վերաքննության կարգով, քանի որ վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու պարագայում, անձն այլևս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հիմքով չի կարող բողոքարկել վերաքննիչ դատարանի դատական ակտը: Մինևույն ժամանակ, եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է վերաքննիչ դատարանի կողմից, ապա վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատական ակտը կարող է բողոքարկել վճռաբեկության կարգով:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել վերլուծության ենթարկել հետևյալ հնարավոր իրավիճակները.

1) առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ, որը մեկ այլ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում թողնվել է անփոփոխ: Քանի որ այդ դեպքում անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից (վերաքննիչ դատարանն ընդամենն այն անփոփոխ է թողել), անձն իրավունք ունի առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքարկել վերաքննության կարգով: Իսկ այդ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան: Քննարկվող իրավիճակում առանց առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու՝ անձը չի կարող վճռաբեկության կարգով բողոքարկել վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը.

2) առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ, որը մեկ այլ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ամբողջությամբ բեկանվել է և փոփոխվել է, և վերաքննիչ դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ: Այդ դեպքում առաջին ատյանի դատարանի ամբողջությամբ բեկանված դատական ակտն այլևս գոյություն չունի, ուստի քննարկվող իրավիճակում անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է ոչ թե առաջին ատյանի դատարանի, այլ վերաքննիչ դատարանի կողմից: Նման պայմաններում դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից կարող է բողոքարկվել ոչ թե առաջին ատյանի դատարանի, այլ վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը.

3) առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ, որը մեկ այլ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում մասնակիորեն է բեկանվել և փոփոխվել: Այդ դեպքում դատավարությանը մասնակից չդարձված անձն իրավունք ունի վճռաբեկության կարգով բողոքարկել վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու մատով: Նկարագրված դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ելնակա է գնահատման այն հարցը, թե վերաքննիչ բողոքի քննության արդյունքում մասնակիորեն բեկանված և փոփոխված դատական ակտն ինչ ծավալով է միջամտում գործին մասնակից չդարձված անձի իրավունքներին ու պարտականություններին:

Անփոփոխվող վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից բողոքարկման իրավունքն իրացնելու յուրաքանչյուր դեպքում պետք է որոշակի լինի, թե որ ատյանի դատարանի կայացրած դատական ակտով են շոշափվում տվյալ անձի իրավունքներն ու պարտականությունները, քանի որ եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացրել է առաջին ատյանի դատարանը, ապա վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատարանի դատական ակտը կարող է բողոքարկել միայն վերաքննության կարգով, իսկ եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացրել է վերաքննիչ դատարանը, ապա՝ վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատական ակտը կարող է բողոքարկել վճռաբեկության կարգով:

Ըստ այդմ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը կարող է կիրառելի լինել, և այդ հիմքով դատական ակտը ելնակա կլինի անվերապահ բեկանման միայն այն պարագայում, եթե դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից բողոքարկման իրավունքն իրացվել է վերը նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

18.12.2020թ.

1. Աշոտ Դումանյանն ընդդեմ Արամայիս, Կարեն, Էմիլ Թումանյանների և Մարինա Մարտիրոսյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Իննա Շահնազարյանի, քաղ. գործ. թիվ ԵԱԲԳ/2549/02/17

Էջ
646-660

Խնդիր. 1) Արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը կայացնելու գործի վարույթը կասեցնելու մասին որոշում,

2) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձի ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու փուլում օրենսդիրը վերաքննիչ դատարանին օժտել է բացառապես վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու լիազորությամբ, քանի որ այդ հիմքերի բացակայությամբ է պայմանավորել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը: Հակառակ դեպքում համապատասխան հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման կամ դրա ընդունումը ենթակա է մերժման, որի պայմաններում այլևս վերաքննիչ վարույթ չի հարուցվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ գլխում (հոդվածներ 374-387) ամրագրված իրավանորմերով կարգավորված է վերաքննիչ դատարանի կողմից վարույթ ընդունված բողոքների քննության կարգը: Նույն գլխում է ներառված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածը, որի 5-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 41-րդ հոդվածների հիմքով մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն, բովանդակությամբ համասեռ այլ՝ 374-387-րդ հոդվածների հետ միավորված լինելով «Վարույթ ընդունված բողոքի քննության կարգը վերաքննիչ դատարանում» վերնագիրը կրող 54-րդ գլխում, դրանում նշված՝ գործի վարույթը կասեցնելու վերաքննիչ դատարանի լիազորությունը կարող է իրացվել բացառապես վարույթ ընդունված բողոքների քննության ժամանակ: *Վճռաբեկ դատարանը գտել է, որ քանի որ վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունվել (վերաքննիչ վարույթ չի հարուցվել), վերաքննիչ դատարանն իրավասու չէ կայացնել գործի վարույթը կասեցնելու մասին որոշում:*

2) Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանի վճիռների և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը սահմանված է նույն օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ ի թիվս այլոց վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև գործին մասնակցող անձինք:

Ընդ որում, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն միայն նյութական և դատավարական իրավունակությամբ օժտված անձինք, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը կարող է մերժվել հետևյալ դեպքերում.

1) վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված սուբյեկտ չհանդիսացող անձը,

2) վերաքննիչ բողոք է ներկայացվել նյութական և դատավարական իրավունակություն չունեցող անձի անունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը գործին մասնակցող անձի ներկայացուցչի նկատմամբ չի կարող կիրառվել, քանի որ վերջինս հանդիսանում է ոչ թե գործին մասնակցող անձ, այլ՝ նրա ներկայացուցիչ:

24.09.2020թ.

Էջ
661-666

2. Գվին Գոմցյան ընդդեմ «Ջարգացման Հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդ «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2174/02/15

Խնդիր. Վճարել դատարանն անդրադարձել է վերաքննության փուլում գործի վարույթի կասեցման առանձնահատկություններին:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ և 380-րդ հոդվածներով ամրագրված դրույթների համադրված վերլուծության արդյունքում գտել է, որ և՛ առաջին ատյանի դատարանում, և՛ վերաքննիչ դատարանում գործի վարույթի կասեցումն օժտված է որոշակի առանձնահատկությամբ: Նշված առանձնահատկությունը հանգում է նրան, որ առաջին ատյանի դատարանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածում ամրագրված են՝ գործի վարույթը կասեցնելու պարտադիր և հայեցողական հիմքեր, որոնց առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը կամ պարտավոր է կասեցնել գործի վարույթը կամ իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, մինչդեռ նույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է «կարող է կասեցնել գործի վարույթը» ձևակերպումը, ինչը ենթադրում է, որ վերաքննիչ դատարանը գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում օժտված է հայեցողական լիազորությամբ և տվյալ գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում վերաքննիչ դատարանն է որոշում, թե արդյոք վերաքննիչ վարույթում ի հայտ եկած տվյալ հանգամանքը խոչընդոտում է վերաքննիչ բողոքի քննության հետագա ընթացքին, թե՛ ոչ: Նման իրավակարգավորումը թույլ է տալիս վերաքննիչ դատարանին ստուգել և գնահատել կոնկրետ գործի հանգամանքների համակցությունը՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կասեցման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը լուծելիս: Միաժամանակ, Վճարել դատարանն արձանագրել է, որ վարույթը կասեցնելու հարցը լուծելիս պետք է առաջնորդվել մի կողմից գործի վարույթի կասեցման ինստիտուտի կիրառմամբ հետապնդվող վերոնշյալ իրավապահ նպատակի և մյուս կողմից դատավարության մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջև ողջամիտ համաչափություն ապահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ գործի վարույթի կասեցման հանգամանքը կարող է խոչընդոտել գործին մասնակցող շահագրգիռ անձանց իրավունքների, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացմանը:

29.06.2020թ.

Էջ
667-674

3. «Ակբա-Կրեդիտ Ազրիկոյ բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Ռազմիկ Մեդոյանի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0273/02/18

Խնդիր. Արդյո՞ք կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու համար բողոք ներկայացնող անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն:

Վճարել դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի վերլուծության արդյունքում Վճարել դատարանը փաստել է, որ օրենսդիրը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները դիտարկել է որպես եզրափակիչ դատական ակտեր, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանել է նաև վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման կարգը և պայմանները: Ըստ այդմ էլ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածը, ի թիվս այլ պայմանների, սահմանել է նաև վերաքննիչ բողոքին պետական տուրքը վճարված լինելու մասին ապացույց կցելու բողոք բերող անձի պարտականությունը: Այդուհանդերձ, նշված պարտականության կատարումն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ բողոք բերող անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճարել դատարանը փաստել է, որ կատարողական թերթի տրամադրումը կոչված է կատարողական վարույթի միջոցով ապահովելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման գործընթացը, ինչն իր հերթին հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը:

Ըստ այդմ էլ, Վճարել դատարանը գտել է, որ օրենսդիրը սահմանել է հատուկ ընթացակարգ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան տրվող դիմումների համար: Մասնավորապես՝

պայմանավորված այդ դիմումների քննության առանձնահատկությամբ՝ տվյալ դիմումի քննության համար օրենսդիրը սահմանել է առավել սեղմ ժամկետ՝ 10 օր, դիմումը ստանալու օրվանից՝ միաժամանակ իրավունք վերապահելով գործին մասնակցող անձանց բողոքարկելու տվյալ գործերով կայացված դատական ակտը (տվյալ դեպքում՝ դատարանի որոշումը): Վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ **վերը նշված վարույթն անմիջականորեն ուղղված չէ որևէ վեճի լուծմանը կամ գործի փաստական հանգամանքների պարզմանը: Տվյալ դեպքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործի քննությունն արդեն իսկ ավարտվել է, և դատարանի միակ գործողությունը կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու հարցի պարզումն ու գնահատումն է:** Այսինքն՝ տվյալ վարույթի ընթացքում դատարանի կողմից կատարվող դատավարական գործողությունները կրում են սահմանափակ բնույթ, **բացակայում է պետական տուրքի գանձման օբյեկտը**, ըստ այդմ՝ նաև պետական տուրք վճարելու պարտականությունը:

Վերը նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով առկա չէ պետական տուրքի գանձման օբյեկտը, որպիսի պայմաններում դիմողների վրա չի կարող դրվել վերը նշված գործերով կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար պետական տուրքի վճարման պարտականություն:

27.07.2020թ.

4. Արտակ, Վեներա Գալստյաններն ընդդեմ Արթուր Անդրեասյանի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/4950/02/16

Էջ 675-684

Խնդիր. Կարո՞ղ է արդյոք վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը դիտվել բողոքում նշված հիմքով նույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից արդեն իսկ կայացված որոշում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվում վերաքննիչ բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության և/կամ գնահատման առարկա չեն դառնում: Այլ կերպ ասած, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացվում է առանց բողոքն ըստ էության քննելու, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս վերաքննիչ դատարանը չի անդրադառնում բողոքում նշված հիմքերի քննարկմանը: Հետևաբար բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելը չի վերաբերում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելու հանգամանքը նախատեսելով որպես բողոքի ընդունումը մերժելու հիմք՝ **օրենսդիրը նկատի է ունեցել վարույթ ընդունված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված եզրափակիչ դատական ակտերը**, հետևաբար վերոգրյալ հիմքով վերաքննիչ դատարանը կարող է բողոքի ընդունումը մերժել միայն այն դեպքում, երբ իրացվել է վերաքննիչ բողոք բերելու անձի իրավունքը, և բողոքում ներկայացված հիմքերի վերաբերյալ վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել՝ ըստ էության քննելով վերաքննիչ բողոքը:

15.05.2020թ.

5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Ամայա Բեգլարյանի, սնանկ. գործ թիվ ՄԵԳ/0104/04/19

Էջ 685-695

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետները հաշվարկելու կարգին, ինչպես նաև այն հարցին, թե որ իրավական ակտն է ենթակա կիրառման սնանկության վարույթում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ժամկետները հաշվարկելիս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Նկատի ունենալով, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը եզրափակիչ դատական ակտերը սահմանել է սպառիչ ցանկով, իսկ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը այդ մասով հատուկ կարգավորում չունի՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով Դատարանի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը պետք է համարել միջանկյալ դատական ակտ հաշվի առնելով, որ վերջինս քաղաքացիական դատավարության օրենսդրության համապատասխան նորմերով թվարկված չէ եզրափակիչ դատական ակտերի ցանկում:

Վճռարեկ դատարանը, վերլուծելով մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, 25-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի 2-րդ ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը և վեր հանելով օրենսդրի նպատակը, արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված տարբեր գործողությունների կատարման համար օրենսդիրը սահմանել է ըստ էության միանյացից տարբերվող ժամկետներ: Այդ ժամկետները ճիշտ ընկալելու և ճշգրիտ հաշվարկելու համար «Մասնկության մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներում կատարվել է «աշխատանքային օր» գրառումը, իսկ մյուս դեպքերում նման գրառում առկա չէ: Ըստ այդմ՝ Վճռարեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը «Մասնկության մասին» ՀՀ օրենքով տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետների հաշվարկը մի դեպքում պայմանավորել է միայն աշխատանքային օրերով, մյուս դեպքում՝ նաև ոչ աշխատանքային օրերով: Նման կարգավորումը սահմանվել է՝ հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով), և միտված է այդ վարույթի արդյունավետության ապահովմանն ու սնանկության վարույթի անհարկի ձգձգումները բացառելուն: Վճռարեկ դատարանը նշված հետևությունը պայմանավորել է նաև այն հանգամանքով, որ հակառակ պարագայում ի հայտ կգար մի իրավիճակ, երբ, օրինակ, դատարանի որոշմամբ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիմքով պարտատերերի առաջին ժողովը, որը նշանակվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 80 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում, առանց ոչ աշխատանքային օրերը հաշվարկի մեջ ներառելու՝ կնշանակվեր անհարկի ուշ ժամանակահատվածում, ինչը Վճռարեկ դատարանի գնահատմամբ հիմնավոր չէ: Նման դիրքորոշումը պայմանավորված է նաև սնանկության վարույթը ողջամիտ ժամկետներում և հնարավորինս արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու անհրաժեշտությամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ եթե գործողությունների կատարման համար «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված է որևէ ժամկետ՝ առանց «աշխատանքային օր» գրառման, ապա այն պետք է հասկանալ և հաշվարկել ոչ աշխատանքային օրերը ներառելով, իսկ այն դեպքում, երբ ժամկետի հաշվարկի վերաբերյալ կարգավորումն ուղղակիորեն պարունակում է «աշխատանքային օր» գրառումը, ապա ժամկետի հաշվարկի մեջ չպետք է ներառել ոչ աշխատանքային օրերը:

14.08.2020թ.

Էջ 696-706

6. Հասմիկ Զատիկյանն ընդդեմ Պետրոս Սարգսյանի, Մարիաննա Սարգսյանի, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/2005/02/17

Ինդիք. Վճռարեկ դատարանն անդրադարձել է դատական ակտը վերաքննության կարգով մասնակիորեն՝ միայն հակընդդեմ հայցի մասով բողոքարկելիս դրա համար պետական տուրքի չափը որոշելու առանձնահատկություններին:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Սույն գործով առկա է եղել երեք ոչ դրամական պահանջ՝ սկզբնական հայցի մասով՝ 1. ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջը, **իսկ հակընդդեմ հայցի մասով՝ 1. ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջը և 2. ընդհանուր գույքից բաժնեմասն առանձնացնելու պահանջը:**

Բողոքաբերը, բողոքարկելով Դատարանի 23.04.2018 թվականի վճիռը, ինչպես սկզբնական, այնպես էլ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքներով ներկայացրել է այլընտրանքային պահանջ՝ միաժամանակ հստակեցնելով, որ Դատարանի վճիռը բողոքարկվում է **հակընդդեմ հայցը մերժելու մասով:** Ավելին, կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքաբերը հստակեցրել է, որ «(...) վճիռը ենթակա է (իմ պահանջի, իմ **հակընդդեմ հայցի մասով**) բեկանման (...):»:

Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով հակընդդեմ հայցը բաղկացած է երկու ոչ դրամական պահանջներից, ինչից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե դատական ակտը միայն հակընդդեմ հայցի մասով բողոքարկելու արդյունքում ինչպիսի իրավական հետևանքներ կառուցանան՝ օրենքի ուժով բողոք ներկայացնելու պահին ենթակա էր վճարման բացառապես դատական ակտի բողոքարկվող պահանջի համար նախատեսված պետական տուրքի գումարը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

01.07.2020թ.

7. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, վարչ. գործ թիվ ՎԴ/5605/05/19

Էջ
707-739

Խնդիր. (1) Արդյո՞ք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտն ենթակա է բողոքարկման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, (2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը, որով անմիջականորեն հարկային պարտավորություններ չեն սահմանվում տնտեսվարող սուբյեկտի համար, պետք է բողոքարկվի վիճարկման, թե՛ ճանաչման հայցի ներկայացմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից պարզ է դառնում, որ օրենսդիրը հստակորեն սահմանել է անձի իրավունքը՝ վարչական կարգով կամ դատական կարգով բողոքարկելու ստուգման արդյունքում կազմված ակտը: Ընդ որում, հատուկ նաև սահմանվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը ենթակա է բողոքարկման ընդհանուր կարգով, այսինքն՝ կարող է բողոքարկվել նաև դատարան այն նույն կարգով, ինչ ոչ քրեադատավարական կարգով նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը:

Շեռնաբար, Եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա կազմված ստուգման ակտի բողոքարկման իրավունքն արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի դրսևորում է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ եթե օրենսդիրը հստակ ամրագրել է ստուգման ակտի դատական բողոքարկման իրավունքը, նման ակտի բողոքարկմամբ պայմանավորված վեճը *ենթակա է քննության* դատարանում: Ուստի վարչական դատավարության կարգով ներկայացված հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել կամ հարուցված գործի վարույթը չի կարող կարճվել այն հիմքով, որ հայցը կամ վեճը ենթակա չէ քննության որևէ դատարանում:

Ավելին, Վճռաբեկ դատարանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ օրենքով ուղղակիորեն սահմանված դատական բողոքարկման իրավունքի առկայության պայմանում ՀՀ վարչական դատարանը ոչ միայն չի կարող մերժել հայցադիմումի ընդունումը կամ կարճել գործի վարույթը, այլ նաև պարտավոր է օգտվել հայցադիմումի վերահասցեագրման կառուցակարգից, եթե կարծում է, որ տվյալ վեճը չի կարող քննվել վարչական դատավարության կարգով:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ քրեադատավարական կարգով նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը ենթակա է բողոքարկման դատական կարգով, ուստի՝ վարչական դատավարության կարգով ակտի բողոքարկում իրականացված լինելու պայմաններում դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել կամ գործի վարույթը կարճել չի կարող՝ հայցը կամ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

2) Նախորդ կետում կատարված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը նաև անդրադարձել է այն հարցին, թե որ դատարանը պետք է քնն քրեադատավարական կարգով նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտի բողոքարկման վեճը:

Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ստուգումների իրականացման արդյունքում ծագող իրավահարաբերությունները հանրային են, քանի որ նախ ստուգում իրականացնող անձը ստուգումների ընթացքում հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, որը հիմնավորվում է նույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ստուգում իրականացնող անձի լիազորությունների շրջանակով (օրինակ՝ պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացառություններ, տեղեկանքներ, սահմանել ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների

և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն, ստուգման հրամանում նշված հարցերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջել անցկացնելու ակտիվների և պարտավորությունների գույքագրումներ և այլն): Բացի այդ, նույն օրենքի 2-րդ հոդվածով թվարկվում են այն պետական մարմինները, որոնք օժտված են Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ:

Ինչ վերաբերում է հանրային շահի իրացման կապակցությամբ իրավահարաբերության առաջացման պայմանին, ապա Վճռաբեկ դատարանը գտել է, որ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված **ստուգման նպատակը** (*այն է՝ արուզման նպատակը փորձաքննության արդյունքի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանափաստությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կարարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և փորձաքննության արդյունքի գույքային իրավունքները պաշտպանելը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված արուզումների ղեկավարում նաև փորձաքննության արդյունքի գործունեության հետ կապված առանձին փորձերի փաստացի իրավիճակը պարզելն է*) բավարար է արձանագրելու համար, որ ստուգումների իրականացման հիմքում հենց հանրային շահն է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ստուգումների արդյունքում ծագող իրավահարաբերությունները հանրային բնույթի են: Ուստի, բացառվում է ստուգումների իրականացման կապակցությամբ ստուգում իրականացնող մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև ծագող վեճերի քննությունը ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես քաղաքացիական գործ, կամ ՀՀ սնանկության դատարանում:

Նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով տարանջատվել է ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի **որոշման** բողոքարկումն ստուգման ընթացքում ստուգող անձի **գործողությունների** և ստուգման արդյունքում կազմված **ակտի** բողոքարկումից, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի նպատակն է եղել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը չտարբերակել նույն օրենքով իրականացվող այլ ստուգումների արդյունքում կազմված ակտերից:

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանման կանոնը (...), կարևորելով նաև ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 04.02.2010 թվականին ընդունված և 30.03.2010 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-17-Ն օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ արտահայտված օրենսդրի նպատակը (*մասնավորապես, նախագծի հիմնավորումները կարևորվել է, որ քրեադատական կարգով իրականացված արուզումների վրա տարածվեն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթները*)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում նշված բողոքարկումը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատարանում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը, որում պարզապես արձանագրվում են որոշակի խախտումներ, սակայն ուղղակի պարտավորություններ չեն առաջադրվում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում պետք է բողոքարկվի ճանաչման հայցի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն տվող միակ դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

10.11.2020թ.

8. «ՆորրՄար Սուիթ» բնակարանաշինարարական ոչ առևտրային սպառողական կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԴ/10906/05/18

Էջ
740-760

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե կարող է սնանկության գործով կառավարչի կողմից վիճարկման հայցով դատարան դիմելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարվել այն պայմաններում, երբ սնանկության գործով կառավարչի լիազորություններից բխում է վիճարկվող վարչական ակտերի մասին ավելի վաղ տեղեկանալու վերջինիս պարտականությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վիճարկվող պետական գրանցումների հիմքում դրվել են Կոոպերատիվի 30.12.2010, 17.01.2011 թվականների կանոնադրությունները և 18.01.2011 թվականի քաղվածքը, որոնց վերաբերյալ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը գիտեր կամ թերևս հնարավորություն ուներ իմանալու 2015 թվականից, այլ ոչ թե թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործով հրապարակված վճռից, քանի որ սույն գործի փաստերով հաստատվում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2015 թվականի վճռով Կոոպերատիվը ճանաչվել է սնանկ, և հայցվորը նշանակվել է սնանկության գործով կառավարիչ: Հետևաբար, Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը դեռևս 2015 թվականից արդեն իսկ հնարավորություն էր ունեցել տեղեկանալու վիճարկվող անշարժ գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցումների հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցվորի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումների մասին միայն իրավասու դատարանի կողմից այդ հիմքերին իրավական գնահատական տալուց հետո տեղեկանալու հնարավորություն ունենալու հարցին, նշել է, որ դրանք չեն բխում սույն գործի փաստերից և չեն կարող հիմք հանդիսանալ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու համար այն պատճառաբանությամբ, որ դատավարական ժամկետի բացթողումը կարող է վերականգնվել, եթե հիմնավորվում է, որ հայցվորը ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները հայցը սահմանված ժամկետում դատարան ներկայացնելու համար, և դատավարական ժամկետի բացթողումը տեղի է ունեցել իրենից անկախ պատճառներով, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորը, դեռևս 2015 թվականից տեղեկացված լինելով սեփականության իրավունքի գրանցման հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ, չի վիճարկել դրանք:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցվորը սեփականության իրավունքի պետական գրանցումները փորձել է վիճարկել վարչական, այնուհետև նաև դատական կարգով միայն դրանց հիմքում ընկած իրեն արդեն իսկ հայտնի հանգամանքների վերաբերյալ այլ քաղաքացիական գործի շրջանակներում համապատասխան դատարանի կողմից իրավական գնահատական տալուց հետո, որը որևէ կերպ չի կարող գնահատվել որպես հայցվորի կողմից ձեռնարկված ակտիվ գործողություններ, որպիսի գնահատականի արժանացել է ստորադաս առյանների կողմից: Հակառակը՝ հայցվորն ուներ իրավական հնարավորություն վիճարկման հայց ներկայացնելու համար, մինչդեռ ձեռնամուխ չի եղել վիճարկելու վկայակոչված վարչական ակտերը, ուստիև օբյեկտիվ պատճառներից ելնելով պետք է գրվի դատավարական ժամկետի վերականգնման հնարավորությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարչի միջնորդությունն անհիմն է, քանի որ վերջինս չի ապացուցել օրենքով սահմանված ժամկետի ընթացքում դատարան դիմելու ուղղությամբ իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ ձեռնարկելու և իր կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքների առկայությունը:

10.11.2020թ.

9. Գարեգին Հարությունյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԴ/3118/05/19

Էջ
761-783

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական ակտի հասցեատեր շահ-դիսացող երրորդ անձի կողմից վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար) կողմից 25.12.2018 թվականին Արմեն Չատյանին տրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում բնակելի տան կառուցման համար: Սույն գործով Ղեկավարի տեղակալի կողմից ի պատասխան Արմենուհի Հարությունյանի 05.03.2019 թվականի դիմումի՝ հայտնվել է, որ Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում իրականացվում է բնակելի տան կառուցման աշխատանքներ՝ Ղեկավարի 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվության համաձայն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցվորի պնդմամբ վերջինս վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է ի պատասխան Արմենուհի Հարությունյանի դիմումի՝ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի գրությունը 12.03.2019 թվականին ստանալուց հետո, որով հայտնվել է, որ վիճելի հասցեում բնակելի տան կառուցման աշխատանքներն իրականացվում են Արմեն Չատյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրված թիվ 23/35-23 շինարարության թույլտվության հիման վրա: Այսինքն՝ հայցվորի պնդմամբ վերջինս Արմեն Չատյանին տրամադրված շինարարության թույլտվության ամկայության մասին տեղեկացել է վերոնշյալ գրությունից: Մյուս կողմից, սույն գործում առկա ապացույցներով չի հաստատվում, որ հայցվորը վիճարկվող շինարարության թույլտվության մասին իմացել է ավելի վաղ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակառակը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում հայցվորի հայտնած տվյալը՝ վիճարկվող շինարարության թույլտվության մասին իր իրազեկման ժամանակի վերաբերյալ, պետք է համարել հավաստի:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով Երևանի քաղաքապետարան ներկայացված՝ շինարարության սկսման մասին դիմումի գրանցման վերաբերյալ ծանուցմամբ և համապատասխան պաստառ-վահանակը տեղադրված լինելու վերաբերյալ լուսանկարների համակարգչային պատճեններով չի հիմնավորվում այն հանգամանքը, թե փաստացի երբ է տեղադրվել համապատասխան պաստառ-վահանակը, որը հնարավորություն կտար հայցվորին առնվազն տեղեկանալու վիճարկվող վարչական ակտի գոյության մասին: Ինչ վերաբերում է կառուցապատողի կողմից շինարարությունը սկսելուն, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, դա դեռևս չի փաստում այն մասին, որ հայցվորը պետք է անպայմանորեն եզրակացներ, որ Ղեկավարի կողմից Արմեն Չատյանին 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը, որով վերջինիս տրվել է իրավունք՝ վիճելի հասցեում բնակելի տուն կառուցելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պատասխան գրությունից հետո է միայն Գարեգին Հարությունյանն իրազեկվել, որ Արմեն Չատյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում շինարարություն իրականացնելու նպատակով, որով խախտվում են կամ կարող են խախտվել հայցվորի իրավունքները: Այսինքն՝ Գարեգին Հարությունյանը մինչև 12.03.2019 թվականը տեղեկացված չէր վարչական ակտի գոյության մասին, հետևաբար, վերջինս, չհանդիսանալով վարչական ակտի հասցեատեր, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով և այդ մասին իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին, վիճարկման հայցով դիմել է դատարան:

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼԸ ԵՎ ԿԱՐՃԵԼԸ

12.03.2020թ.

10. ԹԵՐԵԿԱ Բարայանն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Տավուշի տարածքային ստորաբաժանման, վարչ. գործ թիվ ՎԳ-2/0007/05/15

Էջ
784-792

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե երբ է դատարանը պարտավոր վերսկսել վարչական դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցված գործի վարույթը և պարզել դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդության հարցը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով Սամվել Մսիսյան և Սուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԿ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նախ արձանագրել, որ այն հավասարապես կիրառելի է նաև վարչական գործերում՝ հաշվի առնելով քաղաքացու մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու հարցի վերաբերյալ քաղաքացիական և վարչական դատավարության

օրենսդրությամբ համանման կարգավորումները, ապա հավելել, որ դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով իրավահաջորդությանը վերաբերող իրավաւորումները պետք է կիրառվեն այնպես, որ ապահովվի ողջամիտ հավասարակշռություն դատավարության տարբեր մասնակիցների (սրանց իրավահաջորդների) իրավունքների միջև: Այսինքն՝ գործի վարույթը կասեցնելու միջոցով դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդների իրավունքների պաշտպանությունն ապահովելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև դատավարության մնացած մասնակիցների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման անհրաժեշտությունը: Մասնավորապես, գործի վարույթը կասեցնելու միջոցով դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդների իրավունքների պաշտպանության ապահովումը չպետք է անհաղթահարելի խոչընդոտներ առաջացնի դատավարության մնացած մասնակիցների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը պարզաբանել է, թե վարչական գործի վարույթը դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցվելու դեպքում երբ է իրավահաջորդության հարցը համարվում լուծված, իսկ կասեցումն առաջացրած հանգամանքը՝ վերացած:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ֆիզիկական անձի մահից հետո իրավահաջորդության հարցերի կարգավորման է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Ժառանգական իրավունք» վերնաոտյամբ տասնմեկերորդ բաժինը:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, սահմանելով ժառանգելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ժառանգությունն ընդունելու եղանակները, միաժամանակ նախատեսել է նաև այն ժամկետը, որի ընթացքում կարող է ընդունվել ժառանգությունը:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ժառանգության ընդունման համար որպես ընդհանուր կանոն սահմանված է վեցամսյա ժամկետ, որը սկսում է հաշվարկվել ժառանգության բացման օրվանից: Մինևն այն ժամանակ, օրենսդիրը ժառանգությունն ընդունելու այլ ժամկետներ է սահմանել այն անձանց համար, որոնք ժառանգության իրավունք են ստացել ժառանգությունից այլ ժառանգի հրաժարվելու կամ վերջինիս կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում: Մասնավորապես, ժառանգությունից ժառանգի հրաժարվելու դեպքում ժառանգության իրավունք ստացած անձինք ժառանգությունը կարող են ընդունել ժառանգության բացման օրվանից հաշվարկվող վեցամսյա ժամկետի մնացած մասի ընթացքում, սակայն եթե այդ ժամկետը պակաս է երեք ամսից, ապա ժառանգությունը կարող է ընդունվել երեք ամսվա ընթացքում: Իսկ այն անձինք, որոնք ժառանգության իրավունք են ստացել այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, ապա կարող են ժառանգությունն ընդունել ժառանգության բացման օրվանից հաշվարկվող վեցամսյա ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում: Սահմանված ժամկետների ավարտից հետո ժառանգության ընդունումը հնարավոր է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով: Ընդ որում, նշված կարգավորումները կիրառելի են նաև ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելու (ժառանգության տրանսմիսիա) դեպքում ժառանգության իրավունքի իրացման նկատմամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդված):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետը ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետն է՝ սահմանված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 3-րդ կետով: Բացառություն է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգը, երբ հնարավոր է ժառանգությունն ընդունել սահմանված ժամկետի ավարտից հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով վարչական գործի վարույթը կասեցնելու ժամանակահատվածն այն ժամանակահատվածն է, որն օրենքով սահմանված է որպես ժառանգությունն ընդունելու առավելագույն հնարավոր ժամկետ, քանի որ առավելագույն այդ ժամկետում է լուծվում դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի իրավահաջորդության հարցը: Փաստորեն, դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով վարչական գործի վարույթը կասեցնելու առավելագույն ժամանակահատվածը ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետն է: Իսկ այդ ժամկետի ավարտը վկայում է գործի վարույթը կասեցնելու համար հիմք հանդիսացած հանգամանքի վերացման մասին: Վերջինս էլ իր հերթին նշանակում է, որ այդ ժամկետի ավարտից հետո դատարանը պարտավոր է վերսկսել գործի վարույթը և համարժեք միջոցներ ձեռնարկել դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի իրավահաջորդության հարցը պարզելու նպատակով: Այսինքն՝ այդ դեպքում դատարանը, վերսկսելով գործի վարույթը, պետք է համարժեք միջոցներ ձեռնարկի պարզելու համար, թե ժառանգությունն

ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ինչպես է լուծվել իրավահաջորդության հարցը: Ընդ որում, դրա իրավական հնարավորությունը ևս սահմանված է օրենսդրությամբ, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, որի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»): Դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ վարչական դատավարությանը պատասխանողի կամ երրորդ անձի կարգավիճակով մասնակցող ֆիզիկական անձի իրավահաջորդները տարբեր պատճառներով, այդ թվում՝ իրենց իրավանախորդի մասնակցությամբ վարչական գործի առկայության մասին անտեղյակության կամ դիտավորությամբ, հնարավոր է համապատասխան դիմում չներկայացնեն դատարան, և գործի վարույթը կասեցված մնալու արդյունքում կարող է վրա հասնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավական հետևանքը, համաձայն որի՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործի վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել (բացառությամբ նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի), և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ դեպքում կխախտվի դատավարության մասնակիցների իրավունքների միջև ողջամիտ հավասարակշռությունը, իսկ դատավարության մնացած մասնակիցների իրավունքների դատական պաշտպանությունը կդառնա անհնարին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե վարչական գործի վարույթը կասեցվում է դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ապա կասեցումն առաջացած հանգամանքը համարվում է վերացած՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետն ավարտվելու պահից, և գործի վարույթը ենթակա է վերսկսման: Հետևաբար, ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի ավարտից հետո դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ վերսկսել կասեցված գործի վարույթը և գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի պահպանմամբ ձեռնամուխ լինել դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդության հարցը պարզելուն:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառելիության սահմաններին, նշել է, որ նախ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի են բացառապես այն դեպքում, երբ վարչական գործի վարույթը կասեցվում է վարչական դատավարությունում պատասխանող կամ երրորդ անձ հանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով (եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն): Գործի վարույթը սեփական նախաձեռնությամբ վերսկսելու դատարանի լիազորությունը կիրառելի չէ վարչական գործի վարույթը հայցվոր ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցվելու դեպքում, քանի որ օրենսդիրը հայցվորի փոխարինման համար անհրաժեշտ է համարել նաև հայցվորի իրավահաջորդի միջնորդության առկայությունը (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսինքն՝ հայցվոր ֆիզիկական անձի մահվան դեպքում վարչական գործի վարույթը վերսկսելու համար միայն ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի ավարտը բավարար չէ, այլ անհրաժեշտ է նաև հայցվորի փոխարինման վերաբերյալ հայցվորի իրավահաջորդի միջնորդությունը:

Երկրորդ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները չեն բացառում գործի վարույթի վերսկսումը մինչև ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի (ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետ) ավարտը: Մասնավորապես, գործի վարույթը ենթակա է վերսկսման նաև այն դեպքում, երբ մինչև վերը նշված ժամկետի ավարտը դատարանին հայտնի են դառնում դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդության հարցը լուծված լինելու վերաբերյալ տեղեկություններ:

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

08.07.2020թ.

11. «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպությունը և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունն ընդդեմ Ավետիք Միքայելյանի ու Յուրիկ Ավագյանի, վարչ. գործ թիվ ՎԳ/12139/05/18

Էջ 793-801

Խնդիր. Արդյո՞ք վարչական դատարանն իրավասու է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժել ընտրությունների ժամանակ նույն ընտրական տեղամասում դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպության կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի կարգով ներկայացված՝ ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ այդ խախտումը դիտարկվել է նույն ընտրական տեղամասում դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպության դիտորդի կողմից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընտրությունները որպես ժողովրդի իշխանության արտահայտման ուղղակի (անմիջական) ձև, ունեն կարևոր իրավական և քաղաքական նշանակություն: Դրանք ապահովում են ժողովրդի մասնակցությունը պետական գործերի կառավարմանը՝ ներկայացուցչական մարմինների ձևավորման միջոցով: Ժողովրդավարական պետությունում ընտրությունների դերը և նշանակությունը հաշվի առնելով՝ ՀՀ Սահմանադրությունը ոչ միայն հստակ սահմանել է, թե որ մարմիններն են ձևավորվում ընտրությունների միջոցով, այլև ամրագրել է այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է ընտրական իրավունքի համակարգը: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են *ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:*

Ժողովրդավարական ընտրությունների չափանիշներից է դրանք թափանցիկությունը, քանի որ միայն թափանցիկ ընտրությունները կարող են ապահովել ընտրական իրավունքի վերջին նշված սկզբունքների կիրառումը և արտահայտել ժողովրդի կամքը: Նշված չափանիշը, օրինակ, սահմանված է «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 07.10.2002 թվականի կոնվենցիայում, որը վավերացնելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է 28.02.2005 թվականին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընտրությունների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օրենսդիրը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանել է նաև դիտորդական առաքելության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դիտորդական առաքելությունն ընտրությունների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու արդյունավետ միջոց է, որը հանրությանը հնարավորություն է տալիս վերահսկողություն իրականացնել ընտրությունների կազմակերպման և անցկացման նկատմամբ: Դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությունը, ի թիվս այլնի, կարող է նպաստել ընտրությունների ժամանակ օրինականության ապահովմանը, ապահովել ընտրական գործընթացի վերաբերյալ անկախ և անկողմնակալ տեսակետի տրամադրումը, կանխել ընտրախախտումները, խթանել ընտրական գործընթացի թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահության աճին:

Օրենսդիրը դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացումն ապահովելու համար սահմանել է մի շարք իրավական միջոցներ և երաշխիքներ՝ նախատեսված ինչպես «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, այնպես էլ այլ իրավական ակտերով: Այս համատեքստում օրենսդիրն ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին նաև օժտել է օրենքով սահմանված դեպքերում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու հնարավորությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի համար սահմանել է որոշակի կարգ,

որի համաձայն՝ այդ գործերը քննելու իրավասությունը վերապահել է ՀՀ վարչական դատարանին, իսկ այդ գործերը հարուցելու նպատակով վարչական դատարան դիմելու՝ հայցադիմումներ ներկայացնելու իրավունք է վերապահել նաև այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմված լինելու հանգամանքից: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շարքում նախատեսելով նաև այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ օրենսդիրը վերջիններիս նշված իրավունքի իրացումը որևէ ձևով չի պայմանավորել համապատասխան վարչական իրավախախտումը հենց իրենց դիտորդի կողմից դիտարկված լինելու հանգամանքով: Ավելին, եթե օրենսդիրը նույն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական դատարան դիմելու իրավունք է վերապահել նույն մասում նշված հիմքերից որևէ մեկի պարտադիր առկայության պայմաններում, ապա 2.1-րդ մասով նախատեսված՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ դատարան դիմելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայման է համարել միայն օրենքով նախատեսված դեպքը՝ կոնկրետ դեպքում օրենքով այդ սուբյեկտներին դատարան դիմելու իրավունքի վերապահումը (տվյալ դեպքում նման հնարավորություն նախատեսված է **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի** 6-րդ կետով): Այսինքն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների՝ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունքը ծագում է այդ ընտրությունների ժամանակ հայցվոր կազմակերպության կողմից դիտորդական առաքելություն իրականացվելու փաստի ուժով, իսկ համապատասխան խախտումը հենց հայցվոր հասարակական կազմակերպության դիտորդի կողմից դիտարկված լինելը այդ կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի իրացման պայման չէ:

Վերը նշված եզրահանգումը բխում է նաև ժողովրդավարական հասարակությունում ընտրությունների ժամանակ իրականացվող դիտորդական առաքելության դերից և նշանակությունից: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասով սահմանված իրենց իրավունքն իրացնում են ընտրությունների ժամանակ իրենց առջև դրված խնդիրները (օրինակ՝ ընտրությունների ժամանակ օրինականության ապահովմանը նպաստելը, ընտրախախտումները կանխելը, ընտրական գործընթացի թափանցիկությունը խթանելը) իրականացնելու շրջանակներում, ուստի, պետք է հնարավորություն ունենան օրենքով սահմանված ընտրախախտումների վերաբերյալ տեղեկությունների տիրապետելու դեպքում համապատասխան իրավախախտումը կատարած անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դիմել դատարան՝ անկախ այն հանգամանքից, թե որն է (ով է) այդ ընտրախախտման վերաբերյալ հայցվորի տեղեկատվության աղբյուրը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն գործի փաստերը, արձանագրել է, որ ընտրությունների ժամանակ նույն ընտրական տեղամասում դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունն ունի ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունք՝ անկախ այն հանգամանքից, թե այդ խախտումը դիտարկվել է հենց հայցվոր հասարակական կազմակերպության դիտորդի, թե՛ նույն ընտրական տեղամասում դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպության դիտորդի կողմից:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ (ԵԶՐԱՓԱԿԻՉ)

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/1345/02/14
Նախագահող դատավորի Դատավորներ
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/1345/02/14
Ն. Բարսեղյան
Տ. Նազարյան
Ս. Թորոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող
զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2020 թվականի մարտի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով Շահբազ Շահբազյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Իրինա Մաթևոսյանի հայցի ընդդեմ «Ամերիկաբանկ» ՓԲԸ-ի, «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, Շահբազ Շահբազյանի, Հայկ Պողոսյանի, Լուսինե Մաթևոսյանի, երրորդ անձ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Աջափնյակ և Դավթաշեն բաժնի գույքն արգելանքից հանելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Իրինա Մաթևոսյանը պահանջել է հանել Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքները, մասնավորապես՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 25.01.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0080/02/13 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-408/13, այնուհետև, 01/06-2106/13 համարը ստացած կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի՝ **04.02.2013 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը**, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 18.11.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1472/02/13 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-7560/13 կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի՝ **13.12.2013 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը**, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 08.05.2012 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0434/02/12 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-2322/12, այնուհետև, 01/06-3619/12, 01/06-1638/14 համարները ստացած կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի որոշմամբ կիրառված արգելանքը և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 21.11.2012 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-5601/12, այնուհետև, 01/06-1489/13 համարը ստացած կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի՝ **14.12.2012 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը**:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Փիլոսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.01.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.09.2018 թվականի որոշմամբ Շահբազ Շահբազյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.01.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շահբազ Շահբազյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Իրինա Մաթևոսյանի կողմից, ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 27.02.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի, Լուսինե Մաթևոսյանի դրամական պարտավորության դիմաց բաժնեմասի արժեքի հատուցում կատարելու հիմքով Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ Լուսինե Մաթևոսյանի իրավունքները փոխանցվել են Իրինա Մաթևոսյանին, անտեսել է այն հանգամանքը, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է պետական գրանցման պահից, հետևաբար տվյալ պարագայում վերը նշված գույքը հանդիսացել է Լուսինե Մաթևոսյանի սեփականությունը և վերջինիս նկատմամբ սնանկության վարույթ հարուցված լինելու պայմաններում Դատարանը չէր կարող վերացնել սահմանափակումները վերը նշված գույքի նկատմամբ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.09.2018 թվականի որոշումը և փոփոխել հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Ծառայության վճարել բողոքի պարտասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է պետական գրանցման պահից, հետևաբար տվյալ դեպքում Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող բնակարանը հանդիսացել է պարտապան Լուսինե Մաթևոսյանի սեփականությունը և վերջինիս նկատմամբ հարուցված է եղել սնանկության վարույթ:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 17.08.2005 թվականին տրված՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1986158 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող բնակարանը համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Անժելա Կարապետյանի, Լուսինե Մաթևոսյանի, Իրինա Մաթևոսյանի և Ալբերտ Վարդխաթունյանի անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 7-9**):

2. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 25.01.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0080/02/13 կատարողական թերթի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, բավարարվել է և որոշվել է հայցագնի՝ 322.602,1 ՀՀ դրամի չափով արգելանք դնել պատասխանող Լուսինե Մաթևոսյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա (**հատոր 1-ին, գ.թ. 40**):

3. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 04.02.2013 թվականի որոշմամբ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.01.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/0080/02/13 կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 01/06-408/13 կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 41**):

4. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» 04.02.2013 թվականի որոշումների համաձայն՝ հարուցված թիվ 01/06-408/13 կատարողական վարույթի շրջանակներում պարտապան Լուսինե Մաթևոսյանին պատկանող դրամական միջոցների և գույքի վրա արգելանք է դրվել (**հատոր 1-ին, գ.թ. 42, 44**):

5. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 27.02.2013 թվականի որոշմամբ թիվ 01/06-408/13 կատարողական վարույթն ավարտվել է և կատարողական գործողությունների արդյունքում արգելանք է դրվել պարտապան Լուսինե Մաթևոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Բաշինջաղյան 188-րդ շենք, թիվ 32 բնակարանի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 46**):

6. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 09.04.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0080/02/13 կատարողական թերթի համաձայն՝ նույն դատարանի 27.02.2014 թվականի վճռով վճռվել է Լուսինե Մերյոժայի Մաթևոսյանից հօգուտ «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲ ընկերության բռնագանձել 419.054,10 ՀՀ դրամ, որից 332.602,10 ՀՀ դրամ՝ որպես վարկի հիմնական պարտքի գումար, նախապես վճարված պետական տուրքի գումար՝ 6.452 ՀՀ դրամ, 80.000 ՀՀ դրամ՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 47**):

7. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Բ. Գրիգորյանի՝ «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» 03.05.2013 թվականի որոշման համաձայն՝ թիվ 01/06-408/13 ավարտված կատարողական վարույթը վերսկսվել է և ստացել 01/06/-2106/13 համարը **(հատոր 1-ին, գ.թ. 48):**

8. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Բ. Գրիգորյանի՝ (թիվ 01/06/-2106/13 կատարողական վարույթ) «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 27.06.2013 թվականի որոշման համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել Լուսինե Մաթևոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Բաշինջաղյան 188-րդ շենք, թիվ 32 բնակարանի վրա և պարտատիրոջն առաջարկվել է դիմել գույքի վայրի ընդհանուր իրավասության դատարան՝ պարտապանի բաժնետնան առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով **(հատոր 1-ին, գ.թ. 49):**

9. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.11.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1472/02/13 կատարողական թերթի համաձայն՝ նույն դատարանի կողմից Շահբազ Շահբազյանի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, բավարարվել է և որոշվել է հայցագնի՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնել պատասխանող Լուսինե Մաթևոսյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 50):**

10. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Բ. Գրիգորյանի՝ «Կատարողական վարույթ հարուցելու», «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին», «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» **13.12.2013 թվականի որոշումների համաձայն՝** Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 18.11.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/1472/02/13 կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 01/06-7560/13 կատարողական վարույթը, որի շրջանակներում արգելանք է դրվել Լուսինե Մաթևոսյանին պատկանող անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև 1.000.000 ՀՀ դրամի չափով՝ դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 51-52, 54):**

11. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.05.2012 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0434/02/12 կատարողական թերթի համաձայն՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, բավարարվել է և որոշվել է հայցագնի չափով արգելանք դնել պատասխանող Լուսինե Մաթևոսյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 56):**

12. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ 28.05.2012 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» և 11.06.2012 թվականի «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշումների համաձայն՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 08.05.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/0434/02/12 կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 01/06-2322/12 կատարողական վարույթը, արգելանք է դրվել Լուսինե Մաթևոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Բաշինջաղյան 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի վրա **(հատոր 1-ին, գ.թ. 58, 60):**

13. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 14.08.2012 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0434/02/12 կատարողական թերթի համաձայն՝ նույն դատարանի 03.07.2012 թվականի վճռով վճռվել է Լուսինե Սերյոժայի Մաթևոսյանից, «Եվրոքրիսիս» ՍՊԸ-ից համապարտության կարգով հոգուտ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 1.231.481 ՀՀ դրամ, որից վարկի մնացորդը 1.000.000 ՀՀ դրամ, տոկոսը՝ 204.481 ՀՀ դրամ, միանվագ վճարները՝ 27.000 ՀՀ դրամ և 24.629,60 ՀՀ դրամը՝ նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև բռնագանձել վարկի մնացորդի՝ 1.000.000 ՀՀ դրամի նկատմամբ պայմանագրով սահմանված օրական 0,1 տոկոս տոկոսադրույքը՝ հաշվարկված 27.04.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը **(հատոր 1-ին, գ.թ. 61):**

14. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» 31.08.2012 թվականի որոշման համաձայն՝ թիվ 01/06-2322/12 ավարտված կատարողական վարույթը վերսկսվել է և ստացել 01/06-3619/12 համարը **(հատոր 1-ին, գ.թ. 63):**

15. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 15.10.2012 թվականի որոշման համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել Լուսինե Մաթևոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Բաշինջաղյան 188-րդ շենք, թիվ 32 բնակարանի վրա **(հատոր 1-ին, գ.թ. 64):**

16. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 21.11.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի համաձայն՝ նույն դատարանի որոշմամբ Հայկ Պողոսյանի միջնորդությունը բավարարվել է և որոշվել է հայցագին՝ 2.300.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնել սեփականության իրավունքով Լուսինե Մաթևոսյանին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 69):**

17. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Կատարողական վարույթ հարուցելու մասին», «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» 14.12.2012 թվականի որոշումների համաձայն՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 01/06-5601/12 կատարողական վարույթը և արգելանք է դրվել Լուսինե Մաթևոսյանին պատկանող դրամական միջոցների և գույքի վրա **(հատոր 1-ին, գ.թ. 70, 72-73):**

18. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.03.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի համաձայն՝ նույն դատարանի 05.02.2013 թվականի վճռով վճռվել է Լուսինե Մաթևոսյանից հօգուտ Հայկ Պողոսյանի բռնագանձել 2.300.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառմամբ՝ Լուսինե Մաթևոսյանից հօգուտ Հայկ Պողոսյանի բռնագանձել պարտքի գումարի՝ 2.300.000 ՀՀ դրամի տոկոսներ՝ սկսած 16.09.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման պահը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափի և 300.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար **(հատոր 1-ին, գ.թ. 77):**

19. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Սողոմոնյանի՝ «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» 02.04.2013 թվականի որոշման համաձայն՝ թիվ 01/06-5601/12 ավարտված կատարողական վարույթը վերսկսվել է և ստացել 01/06-1489/13 համարը **(հատոր 1-ին, գ.թ. 78):**

20. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Ա. Ավագյանի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 29.05.2013 թվականի որոշման համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել Լուսինե Մաթևոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Բաշինջաղյան 188-րդ շենք, թիվ 32 բնակարանի վրա և պարտատիրոջն առաջարկվել է դիմել գույքի վարի ընդհանուր իրավասության դատարան՝ պարտապանի բաժնետնան առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով **(հատոր 1-ին, գ.թ. 79):**

21. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2014 թվականի թիվ ԵԱԴԴ/0081/02/13 օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացիական գործով ըստ հայցի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Լուսինե Մաթևոսյանի, երրորդ անձինք Անժելա Կարապետյանի, Իրինա Մաթևոսյանի, Ալբերտ Վարդիսաթունյանի ընդհանուր գույքում պարտապանի բաժինը որոշելու, բնեղենով առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում ընդհանուր գույքը հրապարակային

սակարկություններով վաճառելու, պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, և ըստ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Հայկ Պողոսյանի հայցի ընդդեմ Լուսինե Մաթևոսյանի, Անժելա Կարապետյանի, Իրինա Մաթևոսյանի, Ալբերտ Վարդխաթունյանի՝ ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, վճռվել է. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հայցը բավարարել մասնակի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Հայկ Պողոսյանի հայցը բավարարել. Իրինա Մաթևոսյանին թույլատրել վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում գնելու Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանում Լուսինե Մաթևոսյանի 1/4 բաժինը՝ 4.390.000 ՀՀ դրամով, և այդ գումարը բաշխել «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության՝ ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/0434/02/12 վճռի պահանջների, և Հայկ Պողոսյանի՝ ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.02.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/1261/02/12 վճռի (թիվ ԵԱԴԴ/1261/02/12 վճռի հիման վրա 20.03.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի) պահանջների, միջև: Գումարը վճարելուց հետո դադարեցնել Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանում բաժնի նկատմամբ Լուսինե Մաթևոսյանի սեփականության իրավունքը, և նույն բաժնի նկատմամբ ճանաչել Իրինա Մաթևոսյանի սեփականության իրավունքը: Իրինա Մաթևոսյանի կողմից վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Լուսինե Մաթևոսյանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարից Լուսինե Մաթևոսյանին պատկանող 1/4 բաժնի վրա բռնագանձում տարածել ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/0434/02/12 վճռի և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.02.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/1261/02/12 վճռի (թիվ ԵԱԴԴ/1261/02/12/ վճռի հիման վրա 20.03.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1291/02/12 կատարողական թերթի) պահանջների: Ստացված գումարի 3/4 մասը հավասարապես բաշխել Անժելա Կարապետյանի, Իրինա Մաթևոսյանի, Ալբերտ Վարդխաթունյանի միջև (**հատոր 1-ին, գ.թ. 13-20**):

22. «Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից տրված 15.04.2014 թվականի թիվ 000150/90496430/ և 000149 /303474760/ վճարման անդորրագրերի համաձայն՝ Իրինա Մաթևոսյանը որպես դրամական պարտավորության դիմաց բաժնետնասի արժեքի հատուցում Հայկ Պողոսյանին վճարել է 2.490.000 ՀՀ դրամ, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությանը՝ 1.900.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 11**):

23. «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության նախագահ-գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Թառումյանի կողմից Ծառայության Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետին հասցեագրված 22.04.2014 թվականի գրությամբ հայտնվել է, որ ի կատարումն թիվ ԵԱԴԴ/0081/02/13 կատարողական թերթի՝ Իրինա Մաթևոսյանի կողմից կամավոր մարվել են պարտապան Լուսինե Մաթևոսյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության նկատմամբ ունեցած բոլոր պարտավորությունները և առաջարկվել է նշված հիմքով կարճել հարուցված կատարողական վարույթները (**հատոր 1-ին, գ.թ. 67**):

24. Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարող Գ. Արզումանյանի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 25.04.2014 թվականի որոշման համաձայն՝ կատարողական թերթի պահանջը կատարված լինելու հիմքով որոշվել է ավարտել 03.04.2014 թվականին վերսկսված կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 68**):

25. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 28.04.2014 թվականի թիվ Մ-23/04/2014-1-0159 որոշմամբ՝ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ Իրինա Մաթևոսյանի իրավունքի պետական գրանցումը մերժվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

26. Թիվ ԵԱԴԴ/0043/04/15 սնանկության գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2015 թվականի որոշմամբ Շահբազ Շահբազյանի դիմումը Լուսինե Սերյոժայի Մաթևոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ (**հատոր 4-րդ, գ.թ. 14**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է առդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 135-րդ հոդվածի 1-ին մասի, 200-րդ հոդվածի 2-րդ մասի և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի այնպիսի խախտում, որով խաթարվել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *ընդհանուր սեփականության մասնակցի կողմից պարտապան համասեփականատիրոջ պարտքը մարելը բավարար է արդյոք ընդհանուր սեփականությունում պարտապան համասեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման և վերջինիս բաժնի նկարուման պարտապանի պարտքը մարած ընդհանուր սեփականության մասնակցի սեփականության իրավունքի ծագման համար:*

2. *արգելանքի փակ գրնվող գույքի պարկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձի՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ ներկայացված հայցը քննության ենթակա՞ է արդյոք գույքի գրնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանում այն դեպքում, երբ արգելանքի փակ գրնվող գույքը ներառված է սնանկության գործով պարտապանի գույքային գանգվածում:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իրավական վերլուծությանը, արձանագրել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգը գուցակցում է ինչպես ընդհանուր սեփականության մեջ պարտապան մասնակցի, պարտատիրոջ, այնպես էլ մյուս սեփականատերերի շահերը: Մասնավորապես՝ վերջիններիս շահերից ելնելով՝ սահմանված է, որ բաժնի վրա բռնագանձում տարածելը հնարավոր է միայն պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում: Ընդհանուր սեփականության մասնակիցներն իրավունք ունեն շուկայական գնով գնելու գույքի այն բաժինը, որի վրա բռնագանձում

է տարածվում: Ընդ որում, վաճառքից ստացված գումարը կուղղվի պարտքի մարմանը: Իսկ պարտատիրոջ շահերի պաշտպանության համար սահմանված է, որ վերջինս իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել պարտապանի բաժինը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար, ինչպես նաև իրավունք ունի առաջարկելու ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներին գնել պարտապանի բաժինը, իսկ վերջիններիս կողմից հրաժարվելու դեպքում՝ պահանջել ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը վաճառել հրապարակային սակարկություններով (յրեն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դերենիկ Մարգարյանի և մյուսների թիվ ԳԴԿ/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի՝ պարտապանի բաժնետմանն առանձնացնելու անհնարինության կամ բաժնետմանը բնեղենով առանձնացնելու պահանջի դեմ առարկելու դեպքում ընդհանուր սեփականության մասնակիցներն իրավունք են ստանում գնելու ընդհանուր սեփականության մեջ պարտապանի բաժինը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով ներկայացված հայցապահանջի քննության պայմաններում ընդհանուր սեփականության մասնակիցներից պահանջվում է կոնկրետ և համարժեք գործողությունների կատարում, որոնք ուղղված են ընդհանուր սեփականության մեջ պարտապանի բաժնի գնմանը՝ օրենքով սահմանված կարգով: Հակառակ դեպքում օրենսդիրը նախատեսել է ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժնի առանձնացման և/կամ դրա իրացման կարգ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանված կարգով (յրեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Իջևանի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհար ձեռնարկատեր Հոհիսիմե Մարանյանի, երրորդ անձինք Սամվել, Սոս և Ավետիք Մարգարյանների թիվ ՏԳ/0045/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պարտապան չհանդիսացող ընդհանուր սեփականության մասնակցի մոտ առկա է համաձայնություն գնելու պարտապան համասեփականատիրոջ բաժինը, ապա վերջինս պարտավոր է կատարել կոնկրետ և համարժեք գործողություններ՝ ուղղված ընդհանուր սեփականության մեջ պարտապանի բաժնի գնմանը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պարտատիրոջ հանդեպ առկա պարտավորության կատարումը պարտապան չհանդիսացող ընդհանուր սեփականության մասնակցի կողմից չի կարող համարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պարտապանի բաժնի ձեռք բերում, քանի որ օրենսդիրը վերոհիշյալ իրավական նորմով սահմանել է ընդհանուր սեփականության մասնակցի՝ պարտապանի բաժինը շուկայական գնով գնելու իրավունքը, ինչը ենթադրում է պարտապանի բաժնետման օտարում՝ զուգորդված ընդհանուր սեփականությունում պարտապանի սեփականության իրավունքի դադարմամբ և ընդհանուր սեփականությունում պարտապանի ունեցած բաժնի նկատմամբ այդ բաժինը շուկայական գնով ձեռք բերած ընդհանուր սեփականության մասնակցի սեփականության իրավունքի ծագմամբ: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը բխում է այն հանգամանքից, որ պարտապանի սեփականության իրավունքը, որպես սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունք, դադարման ենթակա է միայն օրենքով սահմանված դեպքերում, իսկ տվյալ դեպքում օրենքը որպես պարտապան համասեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման հիմք՝ նախատեսել է ոչ թե այլ անձի (այդ թվում՝ մյուս համասեփականատիրոջ) կողմից պարտապանի պարտքի մարումը, այլ շուկայական գնով ընդհանուր սեփականությունում պարտապանին պատկանող բաժնի գնումը՝ վաճառքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղելու նպատակով: Ուստի, բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձը վկայակոչում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավարգավորման հիման վրա պարտապան համասեփականատիրոջ պարտքը մարելու արդյունքում պարտապանի բաժնի նկատմամբ իր սեփականության իրավունքի ծագման հանգամանքը, ապա վերջինս

պարտավոր է ապացուցել պարտապան համասեփականատիրոջ և իր միջև պարտապանի բաժնի օտարման գործարք կնքված լինելու և այդ գործարքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղելու փաստերի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցումը նույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացման ենթակա պարտադիր գործառույթ է, որն ուղղված է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝ 1) պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը, 2) գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, գույքի կադաստրային գնահատման, հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը և կառավարումը, 3) գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության և միասնականության ապահովումը, 4) անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցությունը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից՝ 1) մինչև նույն օրենքի ընդունումը՝ հասարակական կարիքների համար, գծային և ինժեներատրանսպորտային կառույցների (էլեկտրահաղորդակցության, ռադիոհեռախոսակապի, ջրագծերի, ջրանցքների, երկաթգծի, ավտոճանապարհների և այլն), շինությունների սպասարկման և պահպանման նպատակով մուտքի իրավունքը, 2) ամուսինների, երեխաների և խնամքի տակ գտնվող այլ անձանց իրավունքները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, եթե նույնիսկ այդ իրավունքներն առանձին չեն գրանցվել, 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, ընդհանուր կանոն և արգելք հանդիսացող սահմանափակումները (առողջապահական, պաշտպանական, շրջակա միջավայրի պահպանման և այլն), 4) մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների օգտին նույն օրենքով սահմանված սերվիտուտը:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև օրենքը նախատեսում է անձանց քաղաքացիական իրավունքների ծագման մի շարք հիմքեր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն միաժամանակ նախատեսում է նաև պարտադիր պահանջ պետական գրանցման ենթարկելու այն իրավունքները, որոնք օրենքի հիման վրա ենթակա են այդպիսի գրանցման: Ընդ որում, գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից, ինչը ենթադրում է, որ նույնիսկ օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը բավարար չէ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման համար: Նշվածից բացառություն է նախատեսված «Գույքի նկատմամբ

իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, որով սահմանված են գույքի նկատմամբ այն իրավունքները և սահմանափակումները, որոնք ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլնի, պետական գրանցման ենթակա իրավունք է համարվում նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձը վկայակոչում է օրենքով նախատեսված այս կամ այն հիմքով անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի ծագման հանգամանքը, ապա վերջինս պարտավոր է ապացուցել նաև այն փաստը, որ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման է ենթարկել իր վերոհիշյալ իրավունքը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 17.08.2005 թվականին տրված՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1986158 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող բնակարանը համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Անժելա Կարապետյանի, Լուսինե Մաթևոսյանի, Իրինա Մաթևոսյանի և Ալբերտ Վարդիսաթունյանի անվամբ:

Վերոհիշյալ բնակարանի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա կիրառված են մի շարք արգելանքներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 25.01.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0080/02/13 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-408/13, այնուհետև, 01/06-2106/13 համարը ստացած կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի՝ 04.02.2013 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 18.11.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1472/02/13 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-7560/13 կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի՝ 13.12.2013 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 08.05.2012 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/0434/02/12 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-2322/12, այնուհետև 01/06-3619/12, 01/06-1638/14 համարները ստացած կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի որոշմամբ կիրառված արգելանքը և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 21.11.2012 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/06-5601/12, այնուհետև 01/06-1489/13 համարը ստացած կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի հարկադիր կատարողի՝ 27.02.2013 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2014 թվականի թիվ ԵԱԴԴ/0081/02/13 օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացիական գործով ըստ հայցի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Լուսինե Մաթևոսյանի, երրորդ անձինք Անժելա Կարապետյանի, Իրինա Մաթևոսյանի, Ալբերտ Վարդիսաթունյանի՝ ընդհանուր գույքում պարտապանի բաժինը որոշելու, բնեղենով առանձնացնելու, դրա անհնարիության դեպքում ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու, պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, և ըստ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Հայկ Պողոսյանի հայցի ընդդեմ Լուսինե Մաթևոսյանի, Անժելա Կարապետյանի, Իրինա Մաթևոսյանի, Ալբերտ Վարդիսաթունյանի՝

ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, վճռվել է. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հայցը բավարարել մասնակի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Հայկ Պողոսյանի հայցը բավարարել. Իրինա Մաթևոսյանին թույլատրել վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում գնելու Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանում Լուսինե Մաթևոսյանի 1/4 բաժինը՝ 4.390.000 ՀՀ դրամով, և այդ գումարը բաշխել «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/0434/02/12 վճռի պահանջների, և Հայկ Պողոսյանի ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.02.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/1261/02/12 վճռի (թիվ ԵԱԴԴ/1261/02/12 վճռի հիման վրա 20.03.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1261/02/12 կատարողական թերթի) պահանջների, միջև: Գումարը վճարելուց հետո դադարեցնել Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանում բաժնի նկատմամբ Լուսինե Մաթևոսյանի սեփականության իրավունքը, և նույն բաժնի նկատմամբ ճանաչել Իրինա Մաթևոսյանի սեփականության իրավունքը: Իրինա Մաթևոսյանի կողմից վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Լուսինե Մաթևոսյանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188 շենքի թիվ 32 բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարից Լուսինե Մաթևոսյանին պատկանող 1/4 բաժնի վրա բռնագանձում տարածել ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի թիվ ԵԱԴԴ/0434/02/12 վճռի և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.02.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/1261/02/12 վճռի (թիվ ԵԱԴԴ/1261/02/12/ վճռի հիման վրա 20.03.2013 թվականին տրված թիվ ԵԱԴԴ/1291/02/12 կատարողական թերթի) պահանջների: Ստացված գումարի 3/4 մասը հավասարապես բաշխել Անժելա Կարապետյանի, Իրինա Մաթևոսյանի, Ալբերտ Վարդիաթունյանի միջև:

«Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից տրված 15.04.2014 թվականի թիվ 000150/90496430/ և 000149 /303474760/ վճարման անդորրագրերի համաձայն՝ Իրինա Մաթևոսյանը որպես դրամական պարտավորության դիմաց բաժնեմասի արժեքի հատուցում Հայկ Պողոսյանին վճարել է 2.490.000 ՀՀ դրամ, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությանը՝ 1.900.000 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 28.04.2014 թվականի թիվ Մ-23/04/2014-1-0159 որոշմամբ՝ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ Իրինա Մաթևոսյանի իրավունքի պետական գրանցումը մերժվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով:

Թիվ ԵԱԴԴ/0043/04/15 սնանկության գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2015 թվականի որոշմամբ Շահբազ Շահբազյանի դիմումը՝ Լուսինե Մեղոյանի Մաթևոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Իրինա Մաթևոսյանը, դիմելով դատարան, պահանջել է հանել Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքները:

Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջների կատարմամբ, այն է՝ 15.04.2014 թվականին Իրինա Մաթևոսյանի կողմից ընդհանուր գույքում Լուսինե Մաթևոսյանի բաժնի արժեքի դիմաց փոխհատուցում վճարելու փաստի ուժով ընդհանուր գույքում՝ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանում Լուսինե Մաթևոսյանը կորցրել է իր բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը: Այսինքն՝ հիշյալ գույքը սկսած 15.04.2014 թվականից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ

հողվածի 5-րդ մասի և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ուժով չի հանդիսացել Լուսինե Մաթևոսյանին պատկանող գույք:

Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը և դրանով սահմանված պահանջները կատարելու հանգամանքը Իրինա Մաթևոսյանի մոտ առաջացրել են գույքի՝ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի՝ Լուսինե Մաթևոսյանի 1/4-րդ բաժինը, ձեռք բերելու օրինական ակնկալիք, իրավաչափ սպասելիք, որոնք իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների շրջանակներում ենթակա են համարժեք պաշտպանության իրավական պետության կողմից:

Այսպիսով, Դատարանը, հաստատված համարելով, որ սկսած 15.04.2014 թվականից Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի 1/4 բաժնի նկատմամբ դադարել է Լուսինե Մաթևոսյանի սեփականության իրավունքը, փաստել է նաև այն, որ վերջինիս պարտավորությունների համար հիշյալ գույքի վրա բռնագանձում չի կարող տարածվել: Մինչև ժամանակ, նկատի ունենալով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը երաշխավորում են արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ քննարկվող պարագայում Իրինա Մաթևոսյանի իրավունքների պաշտպանությունը՝ Դատարանը գտել է, որ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ կիրառված արգելադրությունները ենթակա են վերացման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Շահբազ Շահբազյանի վերաքննիչ բողոքը, ըստ էության հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումները, միաժամանակ արձանագրելով, որ Շահբազ Շահբազյանի դիմումը՝ Լուսինե Սերյոժայի Մաթևոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից ընդունվել է վարույթ 03.06.2015 թվականին, մինչդեռ, գործի նյութերի համաձայն, Իրինա Մաթևոսյանի կողմից, ի կատարումն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 27.02.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի, որպես Լուսինե Մաթևոսյանի դրամական պարտավորության դիմաց բաժնետնասի արժեքի հատուցում կատարված վճարումները կատարվել են դեռևս 15.04.2014 թվականին, այսինքն՝ նախքան Լուսինե Մաթևոսյանին սնանկ ճանաչելու մասին դիմումի վարույթ ընդունվելը: Հետևաբար հիմք ընդունելով այն, որ դրամական պարտավորության դիմաց բաժնետնասի արժեքի հատուցումը կատարվել է ոչ թե բողոքաբերի կողմից վկայակոչած սնանկության գործի շրջանակներում պարտապան հանդիսացող Լուսինե Մաթևոսյանի, այլ Իրինա Մաթևոսյանի կողմից, ավելին, վերջինիս կողմից Լուսինե Մաթևոսյանի դրամական պարտավորության դիմաց բաժնետնասի արժեքի հատուցումը կատարվել է մինչև Լուսինե Մաթևոսյանին սնանկ ճանաչելու մասին դիմումի վարույթ ընդունվելը, այսինքն՝ սնանկության դիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ Լուսինե Մաթևոսյանի իրավունքներն արգելադրված՝ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ արդեն իսկ ենթակա էին փոխանցման Իրինա Մաթևոսյանին՝ վերջինիս կողմից Իրինա Մաթևոսյանի կողմից բաժնետնասի արժեքի հատուցում կատարելու հիմքով, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ կիրառված արգելադրությունները վերացնելը չի կարող դիտվել որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտում:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (տե՛ս Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ՝ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, համադրելով սույն գործում առկա ապացույցները վերոգրյալ իրավական դիրքորոշումների հետ, գտնում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով 15.04.2014 թվականից սկսած Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի 1/4 բաժնի նկատմամբ Լուսինե Մաթևոսյանի սեփականության իրավունքի դադարման փաստը, անտեսել են այն, որ Իրինա Մաթևոսյանը, նախևառաջ, պարտավոր էր ապացուցել Լուսինե Մաթևոսյանի և իր միջև Լուսինե Մաթևոսյանի բաժնի օտարման գործարք կնքված լինելու և այդ գործարքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղելու փաստերի առկայությունը, ինչպես նաև Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի Լուսինե Մաթևոսյանի կողմից օտարված 1/4 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման ենթարկված լինելու հանգամանքը: Մինչդեռ, Իրինա Մաթևոսյանը, ի հաստատումն իր սեփականության իրավունքի ծագման փաստի, Դատարան է ներկայացրել միայն «Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից տրված 15.04.2014 թվականի թիվ 000150/90496430/ և 000149 /303474760/ վճարման անդորրագրերը, որոնցով հաստատվում է այն փաստը, որ Իրինա Մաթևոսյանը Հայկ Պողոսյանին վճարել է 2.490.000 ՀՀ դրամ, իսկ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին 1.900.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոհիշյալ անդորրագրերով հաստատվում է միայն այն փաստը, որ Իրինա Մաթևոսյանը մարել է Լուսինե Մաթևոսյանի ունեցած պարտավորությունները Հայկ Պողոսյանի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հանդեպ, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորմանը համապատասխան Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի Լուսինե Մաթևոսյանին պատկանող 1/4 բաժնեմասի նկատմամբ Իրինա Մաթևոսյանի սեփականության իրավունքի ծագման փաստի հաստատման համար վերոհիշյալ անդորրագրերը բավարար ապացույցներ չեն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապան համասեփականատիրոջը պատկանող բաժնի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքի դադարման և այդ բաժնի նկատմամբ ընդհանուր սեփականության մյուս մասնակցի սեփականության իրավունքի ծագման փաստը հաստատված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վերոհիշյալ փաստերը վկայակոչող գործին մասնակցող անձն ապացուցում է պարտապան համասեփականատիրոջ և ընդհանուր սեփականության մասնակցի միջև շուկայական գնով պարտապանի բաժնի օտարման գործարք կնքված լինելու, այդ գործարքից ստացված գումարը պարտքի մարմանն ուղղված լինելու փաստերի առկայությունը, ինչպես նաև այդ գործարքից ծագած սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման ենթարկված լինելու հանգամանքը:

Մինչդեռ սույն գործով Իրինա Մաթևոսյանը չի ներկայացրել համապատասխան թույլատրելի, վերաբերելի, արժանահավատ և բավարար ապացույցներ առ այն, որ թիվ ԵԱԴԴ/0081/02/13 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2014 թվականի

վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Լուսինե Մաթևոսյանից 4.390.000 ՀՀ դրամով գնել է Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի՝ Լուսինե Մաթևոսյանին պատկանող 1/4 բաժնեմասը և այդ գործարքից ստացված գումարն ուղղվել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և Հայկ Պողոսյանի հանդեպ Լուսինե Մաթևոսյանի ունեցած պարտքի մարմանը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոհիշյալ փաստերը հաստատող ապացույցներ ներկայացնելուց հետո Իրինա Մաթևոսյանը պարտավոր էր ներկայացնել նաև համապատասխան ապացույցներ առ այն, որ բաժնեմասի առուվաճառքի պայմանագրից ծագած իր սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթարկել է պետական գրանցման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԵԱԴԴ/0043/04/15 սնանկության գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2015 թվականի որոշմամբ Շահբազ Շահբազյանի դիմումը՝ Լուսինե Մաթևոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ, իսկ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի 1/4 բաժինը սեփականության իրավունքով վերը նշված պատճառաբանություններով դեռևս պատկանում է Լուսինե Մաթևոսյանին, գտնում է, որ սույն քաղաքացիական գործը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա քննության ենթակա է Լուսինե Մաթևոսյանի սնանկության գործի շրջանակներում հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը, այնպես էլ դրա օրինական տիրապետողը:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերոգրյալ նորմի վերլուծությանը և արձանագրել է, որ ի տարբերություն վարույթի կողմերի, ովքեր իրավունք ունեն բողոքարկելու հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) ինչպես վերադատության, այնպես էլ դատական կարգով, կատարողական վարույթի կողմ չհանդիսացող շահագրգիռ անձինք արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում իրավունք ունեն դիմել դատարան: Արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճի առկայության դեպքում շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը թե՛ քաղաքացիական, և թե՛ քրեական գործերով երաշխավորում են արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքների պաշտպանությունը նաև այն դեպքում, երբ գործով վարույթն ավարտվել է: Ի դեպ, նախատեսվել են նաև այդ իրավունքի իրականացման մեխանիզմները, այն է՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Վերոնշյալից հետևում է, որ թե՛ քաղաքացիական, և թե՛ քրեական գործերի վարույթների ավարտից հետո շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով (լրենս ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի թիվ ԿԴՆ/0289/02/10 և 04.10.2013 թվականի թիվ ԵԱԴԴ/0858/02/10 որոշումները):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոհիշյալ հոդվածի վերլուծությանը, փաստում է, որ նշված կարգավորումը չի ենթադրում ցանկացած հարցի քննություն սնանկության գործի շրջանակում: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված հայցի բավարարումը կհանգեցնի սնանկության գործով պարտապանի գույքային գանգվածի փոփոխության, ապա նման հայցը քննության ենթակա է միայն պարտապանի սնանկության գործի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից օրենքով նախատեսված պահանջներով քաղաքացիական գործերի վարույթները պետք է կենտրոնանան մեկ վարույթում, այն է՝ սնանկության վարույթում:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ արգելանքի տակ գտնվող գույքը ներառված է սնանկության գործով պարտապանի գույքային գանգվածում, ապա արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձի կողմից ներկայացված՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը քննության ենթակա է ոչ թե գույքի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանի, այլ գույքի սեփականատեր հանդիսացող պարտապանի սնանկության գործի շրջանակներում:

Հետևաբար սույն գործով Իրինա Մաթևոսյանի կողմից ներկայացված հայցը՝ Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 188-րդ շենքի թիվ 32 բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքները վերացնելու պահանջի մասին, քննության ենթակա է գույքի համասեփականատեր Լուսինե Մաթևոսյանի սնանկության գործի շրջանակներում, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և սույն քաղաքացիական գործը նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի հիմքով 01.01.2019 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ սնանկության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել ՀՀ սնանկության դատարան:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.02.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.02.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0863/02/17**
2020թ.
Նախագահող դատավոր՝ **Լ. Գրիգորյան**
Դատավորներ՝ **Գ. Խանդանյան**
Հ. Ենքյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 27-ին գրավոր ընթացակարգով քննելով Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցիչ Ավետիս Քալաշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ընդդեմ Արմեն Աճեմյանի, Մուսաննա Մանուկյանի՝ գումարի բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանը պահանջել է անշարժ գույքի տարածանկետ առուվաճառքի՝ 28.03.2011 թվականին կնքված պայմանագրով չվճարված 1.600.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձումը տարածել գրավի առարկա հանդիսացող Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տան վրա:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 06.12.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2018 թվականի որոշմամբ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.12.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետը, 504-րդ հոդվածի 6-րդ կետը, 505-րդ հոդվածի 2-րդ կետը, 242-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ, 379-րդ, 381-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գրավ դրված գույքը շարունակում է համարվել գրավ դրված և գրավի իրավունքը պահպանում է իր ուժը նույնիսկ այն դեպքում, երբ այդ գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարվում է կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի: Այսինքն՝ եթե գրավ դրված գույքի սեփականատերը հատուցելի կամ անհատույց գործարքի հիման վրա փոխվում է, ապա գրավ դրված գույքը շարունակում է համարվել գրավ դրված, և նոր սեփականատերը կրում է գրավատուի բոլոր պարտականությունները: Ընդ որում, որևէ նշանակություն չունի, թե գույքի նախորդ սեփականատիրոջ պարտավորության մասին նոր սեփականատերն իրագել էղել է, թե ոչ: Տվյալ դեպքում, Արմեն Աճեմյանը հատուցելի գործարքի՝ առուվաճառքի պայմանագրի հիման վրա ձեռք է բերել վիճելի գույքը և գրավատուի տեղը կրում է նրա բոլոր պարտականություններն անկախ այն բանից, որ պայմանագրի կողմ և պարտավանի կողմից գրավով ապահովված պարտավորության պարտապան չի հանդիսացել:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում գործում բացակայում է որևէ ապացույց՝ հիմնավորող այն հանգամանքը, որ վիճելի տունը գրավադրվել է և Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի կողմից իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ ունեցած գրավի իրավունքի պետական գրանցում, որպիսի պայմաններում գրավի իրավունքը վերջինիս մոտ չի ծագել, սակայն Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները և չի անդրադարձել բողոքի հիմքերին, չի պատճառաբանել, թե ինչու հայցվորի մոտ օրենքի ուժով չի ծագել նշված գույքի նկատմամբ գրավի իրավունք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Խաչատուր Գրիգորյանի և նրա իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանի կողմից ամբողջությամբ չեն կատարվել անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի՝ 28.03.2011 թվականին կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ չի վճարվել պայմանագրով սահմանված գնի մնացած 1.600.000 ՀՀ դրամը: Սուսաննա Մանուկյանը ոչ միայն չի կատարել իր պարտավորությունը, այլև փաստացի խաբել է հայցվորին՝ տունն աճուրդով էժան գնով չվաճառվելու համար խնդրել է վերջինիս այն հանել արգելանքից, որպեսզի բանկում գրավադնելու միջոցով, գումար վերցնելու եղանակով մարի մնացած պարտքը, որից հետո առանց հայցվորին տեղեկացնելու, տունը 18.000.000 ՀՀ դրամով օտարել է Արմեն Աճեմյանին և վաճառքից ստացած գումարից պարտավորությունը չի մարել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.05.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.06.2012 թվականի որոշմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ/1114/02/11 գործով 12.03.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Խաչատուր Գրիգորյանից հօգուտ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի բռնագանձվել է 5.505.000 ՀՀ դրամ՝ որպես 28.03.2011 թվականին կնքված «Անշարժ գույքի տարածանկետ առուվաճառքի պայմանագրով» սահմանված գումարի չվճարված մաս, որի նկատմամբ 01.08.2011 թվականից սկսած հաշվարկվել են տոկոսներ՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը: Նշված որոշման հիման վրա տրվել է կատարողական թերթ **(հատոր 1-ին, գ.թ.10-14, 15):**

2. Կատարողական վարույթի ընթացքում կողմերը կնքել են հաշտության համաձայնություն, որը Դատարանի 26.12.2012 թվականի վճռով հաստատվել է՝ Խաչատուր Գրիգորյանը պարտավորվել է մինչև 2013 թվականի հունիս ամիսը նշված կատարողական թերթով սահմանված 5.505.000 ՀՀ դրամը, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներն ամեն ամիս, մաս-մաս վճարել Ռոբերտ Մելիք-Ստեփանյանին: Նշված պարտավորությունն ամբողջությամբ և ժամանակին կատարելու դեպքում պահանջատերը պարտավորվել է ներկայացված թիվ ԵՄԴ/1114/02/11 կատարողական թերթը հետ վերցնել: Խաչատուր Գրիգորյանի կողմից նշված պարտավորությունն ամբողջությամբ չկատարվելու դեպքում հաշտության համաձայնությունը չեղյալ է համարվում և նշված գումարի բռնագանձումը ենթակա է կատարման ԴԱՀԿ ծառայության միջոցով հարկադիր կարգով՝ հաշվանցելով Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականին արդեն իսկ վճարված գումարները **(հատոր 1-ին, գ.թ. 16):**

3. Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականի դրությամբ վճարվել է 1.221.000 ՀՀ դրամ: Խաչատուր Գրիգորյանի կողմից հաշտության համաձայնությամբ սահմանված պարտավորությունը չկատարելու հիմքով ԴԱՀԿ ծառայության Մալաթիա-Սեբաստիա բաժնի 13.05.2013 թվականի որոշմամբ կասեցված թիվ 01/12-4291/11 կատարողական վարույթը վերսկսվել է **(հատոր 1-ին, գ.թ. 20):**

4. Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Խաչատուր Գրիգորյանը մահացել է: 27.04.2015 թվականի պարտավորագրի համաձայն՝ Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանը պարտավորվել է Ավետիս Քալաշյանին՝ որպես Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի լիազորված անձ, մինչև 01.08.2015 թվականը վճարել 1.600.000 ՀՀ դրամ: Պարտավորվել է նաև Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը գրավադրել բանկում նշված գումարը վերադարձնելու համար, որն իրականացնելու համար իր խնդրանքով Ավետիս Քալաշյանը պետք է դիմում ներկայացներ ԴԱՀԿ ծառայություն՝ նշված տան վրա դրված արգելանքը հանելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 18):**

5. 18.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Սուսաննա Մանուկյանը վաճառել, իսկ Արմեն Աճեմյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը, որը պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել **(հատոր 1-ին, գ.թ. 19):**

6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102016-01-0104 վկայականի համաձայն՝ 18.05.2015 թվականի թիվ 2089 առուվաճառքի պայմանագրի հիման վրա Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 բնակելի տան նկատմամբ գրանցվել է Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարյանի ընդհանուր համատեղ սեփականությունը **(հատոր 1-ին, գ.թ.96):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական

նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գրավի իրավունքի պահպանման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք գրավի առարկան օտարելու դեպքում օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը դադարում է:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (...) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավը ծագում է պայմանագրի ուժով: Գրավը ծագում է նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով: Օրենքում պետք է նախատեսվի այն գույքը, որը համարվում է պարտավորության կատարման ապահովման համար գրավ դրված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականատերեր չհամարվող անձինք կարող են ունենալ հետևյալ գույքային իրավունքները (...): (4) գրավի (...) իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների դադարման համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրով նախատեսված է ապրանքի համար վճարել այն գնորդին հանձնելուց որոշակի ժամանակ հետո (ապրանքի ապառիկ վաճառք), գնորդը պարտավոր է վճարել պայմանագրով նախատեսված ժամկետում, իսկ եթե նման ժամկետ նախատեսված չէ պայմանագրով՝ նույն օրենսգրքի 352-րդ հոդվածին համապատասխան որոշվող ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքների ապառիկ վաճառքը կատարվում է վաճառքի օրվա գներով: Ապառիկ վաճառված ապրանքների գնի հետագա փոփոխությունները վերահաշվարկի չեն հանգեցնում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վաճառողի կողմից ապրանքը հանձնելու պարտականությունը չկատարելու դեպքում կիրառվում են նույն օրենսգրքի 367-րդ հոդվածով նախատեսված կանոնները:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ ապրանք ստացած գնորդն առուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում դրա

համար, վաճառողն իրավունք ունի պահանջել վճարելու հանձնված ապրանքի համար կամ վերադարձնելու չվճարված ապրանքը:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե գնորդը պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում հանձնված ապրանքի համար, և այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ առուվաճառքի պայմանագրով, կետանցի գումարին, սույն օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան, ենթակա են վճարման տոկոսներ՝ սկսած այն օրվանից, երբ պայմանագրի համաձայն, ապրանքի համար պետք է վճարված լիներ մինչև գնորդի կողմից ապրանքի համար վճարելու օրը:

Պայմանագրով կարող է նախատեսվել ապրանքի գնին համապատասխանող գումարին տոկոսներ վճարելու գնորդի պարտականությունը՝ սկսած վաճառողի կողմից ապրանքը հանձնելու օրվանից:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 505-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրով կարող է նախատեսվել ապրանքի համար տարածամկետ վճարելու՝ գնորդի իրավունքը:

Տարածամկետ վճարելու պայմանով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, եթե դրանում առուվաճառքի պայմանագրի այլ էական պայմանների հետ միասին նշված են ապրանքի գինը, վճարելու կարգը, ժամկետները և չափերը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տարածամկետ վճարելու պայմանով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 504-րդ հոդվածի 2-6-րդ կետերով նախատեսված կանոնները:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ և 226-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավառուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Վերոգրյալ բնորոշումից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի նկատմամբ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապանի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ (1) գրավի իրավունքը հանդիսանում է գրավառուի սահմանափակ իրային իրավունքը, (2) գրավառուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք»։ Հետևաբար սեփականության իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ (*լրև'ս օրինակ, «Մելվր» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Նշան Ալեքսանյանի Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԳ/0169/02/15 քաղաքացիական գործով 26.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ կետը ապառիկ վաճառված ապրանքի վաճառողի իրավունքների պաշտպանությանն ուղղված հատուկ կարգավորում է նախատեսել, համաձայն որի՝ մինչև գնորդի կողմից պարտքի համար վճարելու պարտավորության ամբողջական և պատշաճ կատարումը վաճառված ապրանքը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված։ Այսինքն՝ նման պարագայում վաճառողը գրավատուի կարգավիճակ է ստանում օրենսդրական հատուկ կարգավորման հետևանքով, եթե իհարկե, առուվաճառքի պայմանագրով այլ բան նախատեսված չէ։ Ի տարբերություն պայմանագրի ուժով ծագող գրավի, օրենքի հիման վրա գրավի ծագումն օրենսդիրը պայմանավորել է օրենսգրքում նշված հանգամանքների երևան գալով։ Մասնավորապես՝ ապրանքի ապառիկ վաճառքի դեպքում։ Գրավատուի իրավունքներից վաճառողը կարող է օգտվել օրենքի ուժով՝ սահմանված կարգով ապրանքի ապառիկ առուվաճառքի պայմանագիր կնքելու փաստի հիման վրա։ Օրենքի ուժով գրավ համարվող ապրանքն օտարելիս ապառիկ առուվաճառքի պայմանագրի գնորդը պարտավոր է գույքի նոր ձեռքբերողին նախազգուշացնել այդ գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների առկայության մասին, ընդ որում, անկախ այդ պարտականությունը կատարված լինելու կամ չլինելու հանգամանքից, գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելու դեպքում գրավի իրավունքը պահպանում է իր ուժը, և գրավը չի դադարում։

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.06.2012 թվականի որոշմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԳ/1114/02/11 գործով 12.03.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Խաչատուր Գրիգորյանից հոգուտ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի բռնագանձվել է 5.505.000 ՀՀ դրամ՝ որպես 28.03.2011 թվականին կնքված «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրով» սահմանված գումարի չվճարված մաս, որի նկատմամբ 01.08.2011 թվականից սկսած հաշվարկվել են տոկոսներ՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը։ Նշված որոշման հիման վրա տրվել է կատարողական թերթ։

Կատարողական վարույթի ընթացքում կողմերը կնքել են հաշտության համաձայնություն, որը Դատարանի 26.12.2012 թվականի վճռով հաստատվել է՝ Խաչատուր Գրիգորյանը պարտավորվել է մինչև 2013 թվականի հունիս ամիսը նշված կատարողական թերթով սահմանված 5.505.000 ՀՀ դրամը, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներն ամեն ամիս, մաս-մաս վճարել Ռոբերտ Մելիք-Ստեփանյանին։ Նշված պարտավորությունն ամբողջությամբ և ժամանակին կատարելու դեպքում պահանջատերը

պարտավորվել է ներկայացված թիվ ԵՄԴ/1114/02/11 կատարողական թերթը հետ վերցնել: Խաչատուր Գրիգորյանի կողմից նշված պարտավորությունն ամբողջությամբ չկատարվելու դեպքում հաշտության համաձայնությունը չեղյալ է համարվում և նշված գումարի բռնագանձումը ենթակա է կատարման ԴԱՀԿ ծառայության միջոցով հարկադիր կարգով՝ հաշվանցելով Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականին արդեն իսկ վճարված գումարները:

Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականի դրությամբ վճարվել է 1.221.000 ՀՀ դրամ: Խաչատուր Գրիգորյանի կողմից հաշտության համաձայնությամբ սահմանված պարտավորությունը չկատարելու հիմքով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Մալաթիա-Սեբաստիա բաժնի 13.05.2013 թվականի որոշմամբ կասեցված թիվ 01/12-4291/11 կատարողական վարույթը վերսկսվել է:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Խաչատուր Գրիգորյանը մահացել է: 27.04.2015 թվականի պարտավորագրի համաձայն՝ Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանը պարտավորվել է Ավետիս Քալաշյանին՝ որպես Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի լիազորված անձ, մինչև 01.08.2015 թվականը վճարել 1.600.000 ՀՀ դրամ: Պարտավորվել է նաև Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը գրավադրել բանկում նշված գումարը վերադարձնելու համար, որն իրականացնելու համար իր խնդրանքով Ավետիս Քալաշյանը պետք է դիմում ներկայացնել ԴԱՀԿ ծառայություն՝ նշված տան վրա դրված արգելանքը հանելու համար:

18.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Սուսաննա Մանուկյանը վաճառել, իսկ Արմեն Աճեմյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը, որը պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102016-01-0104 վկայականի համաձայն՝ 18.05.2015 թվականի թիվ 2089 առուվաճառքի պայմանագրի հիման վրա Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 բնակելի տան նկատմամբ գրանցվել է Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարջյանի ընդհանուր համատեղ սեփականությունը:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Ջիանի Գրիգորյանի միջև 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրի 3.5 կետով սահմանվել է, որ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով: Դատարանը գտել է, որ պայմանագրով սահմանված նորմը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածով սահմանված համանման դրույթը չեն կարող հիմք հանդիսանալ վիճելի գույքը Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի մոտ գրավ դրված համարելու և համապատասխանաբար դրա վրա բռնագանձում տարածելու համար: Ինչ վերաբերում է Սուսաննա Մանուկյանի կողմից որպես իր ամուսնու՝ Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ, թիվ ԵՄԴ/1114/02/11 քաղաքացիական գործով կայացված վճռով պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ 27.04.2015 թվականին գրված պարտավորագրի պատճենին, ապա Դատարանը գտել է, որ դա ևս չի կարող հիմք հանդիսանալ գումարի բռնագանձումն այլ անձի՝ Արմեն Աճեմյանի գույքի վրա տարածելու համար՝ նկատի ունենալով, որ վերջինս տվյալ պարտավորության կողմ չի հանդիսանում և չի կարող որևէ պարտականություն կրել Սուսաննա Մանուկյանի կողմից ստանձնած պարտականությունը չկատարելու համար:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանելով, որ 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրից հետո Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Ջիանի Գրիգորյանի հարաբերություններն արդեն իսկ կարգավորվել են ոչ

թե կողմերի միջև նախկինում կնքված պայմանագրի դրույթներով, այլ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով, հետևաբար 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագիրը չի կարող բավարար հիմք հանդիսանալ վիճելի անշարժ գույքը Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի մոտ գրավ դրված լինելու հիմքով դրա վրա բռնագանձում տարածելու համար: Բացի այդ, 18.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Արմեն Հրայրի Աճեմյանի կողմից վիճելի անշարժ գույքը ձեռք բերելիս անշարժ գույքը գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել, ուստի Արմեն Աճեմյանը ձեռք է բերել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք, հետևաբար օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ ձեռք բերված գույքի վրա չի կարող բռնագանձում տարածվել գույքի նախկին սեփականատիրոջ և այլ անձի միջև առկա պայմանագրով նախատեսված որևէ դրույթի չկատարման համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի նկատմամբ Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանի ստանձնած պարտավորությունն ապահովված է եղել գրավով, որի առարկան է Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 հասցեում գտնվող բնակելի տունը, որի օտարումից ստացված գումարից Սուսաննա Մանուկյանը պարտավորվել է կատարել իր ստանձնած պարտավորությունը 1.600.000 ՀՀ դրամ վճարելով Ռոբերտ Մելիք-Ստեփանյանին, ինչը չի կատարել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված գույքի նկատմամբ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի գրավի իրավունքը պետք է դիտարկել այն համատեքստում, որ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը: Հետևաբար անկախ այն հանգամանքից, որ գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքն անցել է այլ անձանց՝ Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարջյանի սեփականությանը, դեռևս չի նշանակում, որ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանը կորցրել է իր գրավի իրավունքն այդ գույքի նկատմամբ, քանի որ գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականությանը: Այդ տեսանկյունից անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ գրավի վրա բռնագանձում տարածելու մասին դատական ակտի կայացումից հետո կողմերի հարաբերությունները կարգավորվել են այդ դատական ակտով և ոչ թե պայմանագրով, քանի որ անկախ գրավի իրավահարաբերությունների վերաբերյալ դատական ակտի կայացումից, օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ գրավով ապահովված պարտավորությունն ամբողջությամբ և պատշաճ չի կատարվել: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի մյուս պատճառաբանությանն այն մասին, որ Արմեն Աճեմյանը ձեռք է բերել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք, ապա դա ևս չի կարող հանդիսանալ հայցի մերժման մասին վճիռն անփոփոխ թողնելու հիմնավոր պատճառաբանություն, քանի որ տվյալ դեպքում գրավի իրավունքը ծագել է օրենքի ուժով՝ տարածամկետ առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում, իսկ գույքն օտարելիս Սուսաննա Մանուկյանը պարտավոր էր գնորդին նախագգուշացնել գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների առկայության մասին: Մինչդեռ Խաչատուր Գրիգորյանի և նրա իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանի կողմից ամբողջությամբ չի կատարվել անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի 28.03.2011 թվականին կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ չի վճարվել պայմանագրով սահմանված գնի գումարից 1.600.000 ՀՀ դրամը: Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանի պարտավորությունն ապահովված է եղել այդ գույքի գրավով, իսկ օրենքի ուժով գրավի նպատակն է ապահովել ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորությունը: Քանի դեռ ապառիկ վաճառված գույքի գնի գումարն ամբողջությամբ չի վճարվել,

գույքը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ անկախ այդ գույքի սեփականատիրոջ հետագա փոփոխությունից:

Նկատի ունենալով, որ գրավադրված գույքն անցել է Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարցյանի ընդհանուր համատեղ սեփականությանը, սակայն վերջինս գործին մասնակից չի դարձվել, իսկ սույն գործով վեճն առնչվում է նաև նրա իրավունքներին ու պարտականություններին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհրաժեշտ է բեկանել, իսկ գործը պետք է ուղարկել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ «ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 12.12.2017 թվականի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի հիմքով 25.01.2018 թվականից Երևան քաղաքում գործում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի] կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ, 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ԵՄԴ/0863/02/17 քաղաքացիական գործով
27.08.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 27.08.2020 թվականին քննելով Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցիչ Ավետիս Քալաշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ընդդեմ Արմեն Աճեմյանի, Մուսաննա Մանուկյանի՝ գումարի բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանը պահանջել է անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի՝ 28.03.2011 թվականին կնքված պայմանագրով չվճարված 1.600.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձումը տարածել գրավի առարկա հանդիսացող Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տան վրա:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 06.12.2017 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2018 թվականի որոշմամբ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.12.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետը, 504-րդ հոդվածի 6-րդ կետը, 505-րդ հոդվածի 2-րդ կետը, 242-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ, 379-րդ, 381-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գրավ դրված գույքը շարունակում է համարվել գրավ դրված և գրավի իրավունքը պահպանում է իր ուժը նույնիսկ այն դեպքում, երբ այդ գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարվում է կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի: Այսինքն՝ եթե գրավ դրված գույքի սեփականատերը հատուցելի կամ անհատույց գործարքի հիման վրա փոխվում է, ապա գրավ դրված գույքը շարունակում է համարվել գրավ դրված, և նոր սեփականատերը կրում է գրավատուի բոլոր պարտականությունները: Ընդ որում, որևէ նշանակություն չունի, թե գույքի նախորդ սեփականատիրոջ

պարտավորության մասին նոր սեփականատերն իրազեկ եղել է, թե՛ ոչ: Տվյալ դեպքում, Արմեն Աճեմյանը հատուցելի գործարքի՝ առուվաճառքի պայմանագրի հիման վրա ձեռք է բերել վիճելի գույքը և գրավատուի տեղը կրում է նրա բոլոր պարտականություններն անկախ այն բանից, որ պայմանագրի կողմ և պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորության պարտապան չի հանդիսացել:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում գործում բացակայում է որևէ ապացույց՝ հիմնավորող այն հանգամանքը, որ վիճելի տունը գրավադրվել է և Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի կողմից իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ ունեցած գրավի իրավունքի պետական գրանցում, որպիսի պայմաններում գրավի իրավունքը վերջինիս մոտ չի ծագել, սակայն Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները և չի անդրադարձել բողոքի հիմքերին, չի պատճառաբանել, թե ինչու հայցվորի մոտ օրենքի ուժով չի ծագել նշված գույքի նկատմամբ գրավի իրավունք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Խաչատուր Գրիգորյանի և նրա իրավահաջորդ Մուսաննա Մանուկյանի կողմից ամբողջությամբ չեն կատարվել անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի՝ 28.03.2011 թվականին կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ չի վճարվել պայմանագրով սահմանված գնի մնացած 1.600.000 ՀՀ դրամը: Մուսաննա Մանուկյանը ոչ միայն չի կատարել իր պարտավորությունը, այլև փաստացի խաբել է հայցվորին՝ տունն աճուրդով էժան գնով չվաճառվելու համար խնդրել է վերջինիս այն հանել արգելանքից, որպեսզի բանկում գրավադնեյու միջոցով, գումար վերցնելու եղանակով մարի մնացած պարտքը, որից հետո առանց հայցվորին տեղեկացնելու, տունը 18.000.000 ՀՀ դրամով օտարել է Արմեն Աճեմյանին և վաճառքից ստացած գումարից պարտավորությունը չի մարել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.05.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Որպես վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճարելի դատարանն արձանագրել է հետևյալը

1) Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.06.2012 թվականի որոշմամբ Երևան քաղաքի Մայաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ/1114/02/11 գործով 12.03.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Խաչատուր Գրիգորյանից հօգուտ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի բռնագանձվել է 5.505.000 ՀՀ դրամ՝ որպես 28.03.2011 թվականին կնքված «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրով» սահմանված գումարի չվճարված մաս, որի նկատմամբ 01.08.2011 թվականից սկսած հաշվարկվել են տոկոսներ՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը: Նշված որոշման հիման վրա տրվել է կատարողական թերթ (հատոր 1-ին, գ.թ.10-14, 15).

2) Կատարողական վարույթի ընթացքում կողմերը կնքել են հաշտության համաձայնություն, որը Դատարանի 26.12.2012 թվականի վճռով հաստատվել է՝ Խաչատուր Գրիգորյանը պարտավորվել է մինչև 2013 թվականի հունիս ամիսը նշված կատարողական թերթով սահմանված 5.505.000 ՀՀ դրամը, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներն ամեն ամիս, մաս-մաս վճարել Ռոբերտ Մելիք-Ստեփանյանին: Նշված պարտավորությունն ամբողջությամբ և ժամանակին կատարելու դեպքում պահանջատերը պարտավորվել է ներկայացված թիվ ԵՄԴ/1114/02/11 կատարողական թերթը հետ վերցնել: Խաչատուր Գրիգորյանի կողմից նշված պարտավորությունն ամբողջությամբ չկատարվելու դեպքում հաշտության համաձայնությունը չեղյալ է համարվում և նշված գումարի բռնագանձումը ենթակա է կատարման ԴԱՀԿ ծառայության միջոցով հարկադիր կարգով՝ հաշվանցելով Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականին արդեն իսկ վճարված գումարները (հատոր 1-ին, գ.թ. 16).

3) Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականի դրությամբ վճարվել է 1.221.000 ՀՀ դրամ: Խաչատուր Գրիգորյանի կողմից հաշտության համաձայնությամբ սահմանված

պարտավորությունը չկատարելու հիմքով ԴԱՀԿ ծառայության Մալաթիա-Սերաստիա բաժնի 13.05.2013 թվականի որոշմամբ կասեցված թիվ 01/12-4291/11 կատարողական վարույթը վերսկսվել է (**հատոր 1-ին, գ.թ. 20**).

4) Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Խաչատուր Գրիգորյանը մահացել է: 27.04.2015 թվականի պարտավորագրի համաձայն Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանը պարտավորվել է Ավետիս Քալաշյանին որպես Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի լիազորված անձ, մինչև 01.08.2015 թվականը վճարել 1.600.000 ՀՀ դրամ: Պարտավորվել է նաև Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը գրավադրել բանկում նշված գումարը վերադարձնելու համար, որն իրականացնելու համար իր խնդրանքով Ավետիս Քալաշյանը պետք է դիմում ներկայացներ ԴԱՀԿ ծառայություն՝ նշված տան վրա դրված արգելանքը հանելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 18**).

5) 18.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Սուսաննա Մանուկյանը վաճառել, իսկ Արմեն Աճեմյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը, որը պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել (**հատոր 1-ին, գ.թ. 19**).

6) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102016-01-0104 վկայականի համաձայն՝ 18.05.2015 թվականի թիվ 2089 առուվաճառքի պայմանագրի հիման վրա Երևան քաղաքի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 բնակելի տան նկատմամբ գրանցվել է Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարջյանի ընդհանուր համատեղ սեփականությունը (**հատոր 1-ին, գ.թ.96**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործը հարուցվել է Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամեկեր առուվաճառքի պայմանագրով չվճարված 1.600.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձումը՝ տարածել գրավի առարկա հանդիսացող Երևան քաղաքի Հաղթանակ թիվ 7-րդ փողոցի թիվ 33 տան վրա:

Դատարանը մերժել է Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի հայցը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Զիվանի Գրիգորյանի միջև 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամեկեր առուվաճառքի պայմանագրի 3.5 կետով սահմանվել է, որ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով: Դատարանը գտել է, որ պայմանագրով սահմանված նորմը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածով սահմանված համանման դրույթը չեն կարող հիմք հանդիսանալ վիճելի գույքը Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի մոտ գրավ դրված համարելու և համապատասխանաբար դրա վրա բռնագանձում տարածելու համար, որպես հիմնավորում նշելով հետևյալը. «*Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Զիվանի Գրիգորյանի միջև 28.03.2011թ-ին կնքված անշարժ գույքի տարածամեկեր առուվաճառքի պայմանագրով Արմեն Աճեմյանը պայմանագրի կողմ չի հանդիսացել, և Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Զիվանի Գրիգորյանի միջև առաջացած պարտավորությունը չի կարող պարտականություններ արեղծել այդ պարտավորությանը որպես կողմ չմասնակցած Արմեն Աճեմյանի համար:*

Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Զիվանի Գրիգորյանի միջև 28.03.2011թ-ին կնքված անշարժ գույքի տարածամեկեր առուվաճառքի պայմանագրից հետո վերջիններիս միջև առաջացած վեճը լուծվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտնող 15.06.2012թ. որոշմամբ, (...): Այսինքն, 28.03.2011թ-ին կնքված անշարժ գույքի տարածամեկեր առուվաճառքի պայմանագրից հետո Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Զիվանի Գրիգորյանի հարաբերություններն արդեն իսկ կարգավորվել են ոչ թե կողմերի միջև նախկինում կնքված պայմանագրի դրույթներով, այլ դատարանի օրինական ուժի մեջ մտնող ակտով, հետևաբար 28.03.2011թ-ին կնքված անշարժ գույքի տարածամեկեր

առուվաճառքի պայմանագիրը չի կարող բավարար հիմք հանդիսանալ վիճելի անշարժ գույքը Ռոբերտո Մելիք-Սրեփանյանի մոր գրավ դրված լինելու հիմքով դրա վրա բռնագանձում տարածելու համար:

Բացի այդ, 18.05.2015թ-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Արմեն Հրայրի Աճեմյանի կողմից վիճելի անշարժ գույքը ձեռք բերելիս անշարժ գույքը գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել, հետևաբար Արմեն Աճեմյանը ձեռք է բերել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք, հետևաբար օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ ձեռք բերված գույքի վրա չի կարող բռնագանձում տարածվել գույքի նախկին սեփականատիրոջ և այլ անձի միջև առկա պայմանագրով նախատեսված որևէ դրույթի չկատարման համար»:

Ինչ վերաբերում է Սուսանա Մանուկյանի կողմից որպես իր ամուսնու՝ Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ, թիվ ԵՄԴ/1114/02/11 քաղաքացիական գործով կայացված վճռով պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ 27.04.2015 թվականին գրված պարտավորագրի պատճենին, ապա Դատարանը գտել է, որ դա ևս չի կարող հիմք հանդիսանալ գումարի բռնագանձումն այլ անձի՝ Արմեն Աճեմյանի գույքի վրա տարածելու համար՝ նկատի ունենալով, որ վերջինս տվյալ պարտավորության կողմ չի հանդիսանում և չի կարող որևէ պարտականություն կրել Սուսանա Մանուկյանի կողմից ստանձնած պարտականությունը չկատարելու համար:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանելով, որ 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրից հետո Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Ջիվանի Գրիգորյանի հարաբերություններն արդեն իսկ կարգավորվել են ոչ թե կողմերի միջև նախկինում կնքված պայմանագրի դրույթներով, այլ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով, հետևաբար 28.03.2011 թվականին կնքված անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագիրը չի կարող բավարար հիմք հանդիսանալ վիճելի անշարժ գույքը Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի մոտ գրավ դրված լինելու հիմքով դրա վրա բռնագանձում տարածելու համար: Բացի այդ, 18.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Արմեն Հրայրի Աճեմյանի կողմից վիճելի անշարժ գույքը ձեռք բերելիս անշարժ գույքը գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել, ուստի Արմեն Աճեմյանը ձեռք է բերել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք, հետևաբար օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ ձեռք բերված գույքի վրա չի կարող բռնագանձում տարածվել գույքի նախկին սեփականատիրոջ և այլ անձի միջև առկա պայմանագրով նախատեսված որևէ դրույթի չկատարման համար:

Վճռաբեկ դատարանը, քննելով Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացուցիչ Ավետիս Բալաշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2018 թվականի որոշման դեմ և վերլուծության ենթարկելով գրավի իրավունքը որպես իրային իրավունքների շարքում առանձնահատուկ տեղ զբաղեցնող իրավունքի տեսակի, ու վերահաստատելով «Մեյվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ (1) գրավի իրավունքը հանդիսանում է գրավառուի սահմանափակ իրային իրավունքը, (2) գրավառուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք», հետևաբար սեփականության իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ (յուն Վճռաբեկ դատարանի որոշման 6-7-րդ էջերը), արձանագրել է, որ Երևանի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի գրավի իրավունքը պետք է դիտարկել այն համատեքստում, որ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ

իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը, հետևաբար անկախ այն հանգամանքից, որ գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքն անցել է այլ անձանց՝ Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարցյանի սեփականությանը, դեռևս չի նշանակում, որ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանը կորցրել է իր գրավի իրավունքն այդ գույքի նկատմամբ, քանի որ գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականությանը: Այս տեսանկյունից Վճռաբեկ դատարանն անհիմն է գնահատել Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ գրավի վրա բռնագանձում տարածելու մասին դատական ակտի կայացումից հետո կողմերի հարաբերությունները կարգավորվել են այդ դատական ակտով և ոչ թե պայմանագրով, քանի որ անկախ գրավի իրավահարաբերությունների վերաբերյալ դատական ակտի կայացումից, օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ գրավով ապահովված պարտավորությունն ամբողջությամբ և պատշաճ չի կատարվել: Անդրադառնալով նաև Վերաքննիչ դատարանի մյուս պատճառաբանությանն այն մասին, որ Արմեն Աճեմյանը ձեռք է բերել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դա ևս չի կարող հանդիսանալ հայցի մերժման մասին վճիռն անփոփոխ թողնելու հիմնավոր պատճառաբանություն, քանի որ տվյալ դեպքում գրավի իրավունքը ծագել է օրենքի ուժով՝ տարածամկետ առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում, իսկ գույքն օտարելիս Սուսանա Մանուկյանը պարտավոր էր գնորդին նախագուշացնել գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների առկայության մասին: Մինչդեռ տվյալ դեպքում հսաչատուր Գրիգորյանի և նրա իրավահաջորդ Սուսանա Մանուկյանի կողմից ամբողջությամբ չի կատարվել անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի 28.03.2011 թվականին կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ չի վճարվել պայմանագրով սահմանված գնի գումարից 1.600.000 ՀՀ դրամը, հսաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսանա Մանուկյանի պարտավորությունն ապահովված է եղել այդ գույքի գրավով, իսկ օրենքի ուժով գրավի նպատակն է ապահովել ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորությունը, քանի դեռ ապառիկ վաճառված գույքի գնի գումարն ամբողջությամբ չի վճարվել, գույքը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ անկախ այդ գույքի սեփականատիրոջ հետագա փոփոխությունից: Մինևույն ժամանակ արձանագրելով, որ նկատի ունենալով, որ գրավադրված գույքն անցել է Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարցյանի ընդհանուր համատեղ սեփականությանը, սակայն վերջինս գործին մասնակից չի դարձվել, իսկ սույն գործով վեճն առնչվում է նաև վերջինիս իրավունքներին ու պարտականություններին (*որև՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 9-10-րդ էջերը*), Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դարավոր Ռուզաննա Հակոբյան, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դարավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմանը արդա-հայրած կարծիքի հեղ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը դրա վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ**

իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օբեկտներով և այլ օբեկտներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կարգը և դրանց գրանցումը մերժելու հիմքերը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ գրավը ծագում է պայմանագրի ուժով: Գրավը ծագում է նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով: Օրենքում պետք է նախատեսվի այն գույքը, որը համարվում է պարտավորության կատարման ապահովման համար գրավ դրված:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ուժով ծագած գրավի մասին նույն օրենսգրքի կանոնները համապատասխանաբար կիրառվում են օրենքի հիման վրա ծագած գրավի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 234-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում գրավի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ գրավի իրավունքը՝ պետական գրանցման: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի կանոնները չպահպանելը հանգեցնում է գրավի պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Գրավի իրավունքի ծագումը» վերտառությամբ 235-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից: (...)

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է գրավի իրավունքի ծագման երկու հիմք.

1. *պայմանագրի ուժով,*
2. *օրենքի հիման վրա:*

Օրենսդիրը նախատեսել է անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագման, փոխանցման և դադարման համար պետական գրանցման պարտադիր պահանջ: Ընդ որում, անշարժ գույքի գրավի պայմանագրի ուժով գրավի իրավունքի ծագման պահն օրենսդիրը պայմանավորել է այդ պայմանագրի պետական գրանցման հանգամանքով: Այսինքն՝ անշարժ գույքի գրավի պայմանագրի ուժով գրավի իրավունքը կարող է ծագել միայն այն դեպքում, երբ կատարվել է այդ իրավունքի պետական գրանցման պարտադիր պահանջը:

Հարկ է նկատել, որ անշարժ գույքի գրավի պայմանագրից ծագող գրավի իրավունքի պետական գրանցման ենթակա լինելն անվիճելի է ու հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Մինչև նույն ժամանակ օրենքի հիման վրա ծագած գրավի իրավունքի պետական գրանցման ենթակա լինելու պարտադիրությունը բխում է ինչպես վերոգրյալ իրավանքների համակարգային վերլուծությունից, այնպես էլ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում ամրագրված իրավակարգավորումներից:

Այսպես. իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման հիմնական սկզբունքներն են՝

ա) գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանությունը պետության կողմից.

(...):

Օրենքի¹ 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման հիմնական խնդիրներն են՝ ա) պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը.

(...):

Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման օբյեկտներն են՝ նույն օրենքով սահմանված պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման իրավունքը, **գրավը**, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև, օրենքով նախատեսված դեպքերում, այլ իրավունքները, դրանց ծագումը, փոխանցումը, փոփոխումը, դադարումը:

Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **գույքի նկատմամբ չգրանցված իրավունքները, որոնք նշվում են այլ փաստաթղթերում, բացի անշարժ գույքի պետական գրանցման միասնական մատյանի գրանցման թերթիկներից, չեն համարվում ճանաչված և գրանցված:**

Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործն իր մեջ ընդգրկում է անշարժ գույքի առանձին միավորների նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող հետևյալ փաստաթղթերը՝

(...)

ե) անշարժ գույքի օգտագործման սահմանափակումների մասին որոշումներն ու պայմանագրերը.

(...)

թ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքները և այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումը, փոփոխումը կամ դադարումը հաստատող փաստաթղթեր:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները՝ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոթեքը, սերվիտուտները, այլ սահմանափակումները, (...) ենթակա են (պետք է ներկայացվեն) պետական գրանցման՝ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումներում՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի:

Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքները համարվում են գրանցված՝ գրանցման մատյանում գրանցելու պահից:

Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ հիփոթեքի իրավունքի պետական գրանցումը կատարվում է հիփոթեքի առարկա հանդիսացող գույքի գտնվելու վայրում անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

Հիփոթեքի իրավունքի պետական գրանցումը կատարվում է գրանցման մատյանում՝ հիփոթեքի առարկա հանդիսացող գույքի գրանցման թերթիկի համապատասխան բաժնում:

Հիփոթեքով պարտավորության ծավալի, ժամկետի, ինչպես նաև հիփոթեք դրված անշարժ գույքի սեփականատիրոջ փոփոխման դեպքում, իսկ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ գրավառուի համաձայնությամբ, գրանցման մատյանում կատարվում է հիփոթեքի իրավունքի գրանցման փոփոխություն:

Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցումից հետո գույքի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում է սահմանափակում (արգելադրում):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պետության կողմից ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում են միայն գրանցված գույքային իրավունքներն ու սահմանափակումները: Այլ կերպ ասած՝ ցանկացած հիմքով ծագած իրավունքները պետությունը ճանաչում ու պաշտպանում է, եթե դրանք գրանցված են պետական իրավասու մարմնի՝ Կադաստրի կոմիտեի (անշարժ գույքի պետական ռեգիստրի) կողմից:

¹ Հղումները կատարվում են իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Անհրաժեշտ են համարում ընդգծել, որ օրենսդիրն անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի ծագման պահը չի պայմանավորել գրավի իրավունքի ծագման հիմքով: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, գրավի իրավունքը ծագել է պայմանագրի, թե օրենքի ուժով, այն ենթակա է պետական գրանցման:

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ հարկ են համարում անդրադառնալ օրենքի ուժով գրավի իրավունքի ծագման և դրա գրանցման ենթակա լինելու առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այն դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրով նախատեսված է ապրանքի համար վճարել այն գնորդին հանձնելուց որոշակի ժամանակ հետո (ապրանքի ապահով վաճառք), գնորդը պարտավոր է վճարել պայմանագրով նախատեսված ժամկետում, իսկ եթե նման ժամկետ նախատեսված չէ պայմանագրով՝ նույն օրենսգրքի 352 հոդվածին համապատասխան որոշվող ժամկետում:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի սպասովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 505-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրով կարող է նախատեսվել ապրանքի համար փարսժամկետ վճարելու՝ գնորդի իրավունքը:

Տարածամկետ վճարելու պայմանով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, եթե դրանում առուվաճառքի պայմանագրի այլ էական պայմանների հետ միասին նշված են ապրանքի գինը, վճարելու կարգը, ժամկետները և չափերը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փարսժամկետ վճարելու պայմանով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 504-րդ հոդվածի 2-6-րդ կետերով նախատեսված կանոնները:

Ամբողջությամբ ընդունելի է սույն գործով կայացված որոշմամբ Վճարել դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի և 226-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավատուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Վերոգրյալ բնորոշումից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի նկատմամբ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապանի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով:

Գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Ամբողջությամբ ընդունելի է նաև սույն գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած մյուս իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Այդուհանդերձ գտնում են, որ վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառելի լինելն ուղղակի պայմանավորված է գրավի իրավունքի ծագման հանգամանքով:

Ինչպես վերև արդեն նշել են, անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի ծագման պահն օրենսդիրը չի պայմանավորել գրավի իրավունքի ծագման հիմքով, հետևաբար անկախ այն հանգամանքից, գրավի իրավունքը ծագել է պայմանագրի, թե օրենքի ուժով, այն ենթակա է պետական գրանցման: Այլ կերպ ասած, անկախ գրավի իրավունքի ծագման հիմքից (պայմանագիր կամ օրենք) այդ իրավունքը կարող է իրացվել, այդ թվում՝ **գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս պահպանել իր ուժը և** հիմք հանդիսանալ գրավով ապահովված պարտավորության կատարման համար միայն պետական գրանցման ենթարկված լինելու պարագայում:

Այսպիսով, գտնում են, որ այն դեպքերում, երբ օրենքի հիման վրա գրավի իրավունքի ծագումը պայմանավորված է անշարժ գույքի ապառիկ վաճառքի պայմանագրով, որի դեպքում ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը **համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝** ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, ապա նշված պայմանագրի կն քման փաստով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ կետի ուժով ծագած գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Վերոգրյալ դատողությունը հաստատվում նաև 23.06.2011 թվականին ընդունված և 01.01.2012 թվականից ուժի մեջ մտած ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով, որով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ: Ըստ այդմ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի «Հիփոթեքի պետական գրանցման առանձնահատկությունները» վերտառությամբ 39-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված դրույթները տարածվում են նաև **օրենքի հիման վրա ծագած գրավի իրավունքի պետական գրանցման, դրա փոփոխման կամ դադարեցման վրա:** Եթե օրենքի հիման վրա գրավի իրավունքի ծագումը պայմանավորված է այնպիսի գործարքի կն քմամբ, որից ծագող իրավունքը նույն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման (հիմնական պարտավորությունից ծագող իրավունք), ապա գրավի իրավունքի պետական գրանցում չի կարող իրականացվել, եթե պետական գրանցման չի ներկայացվել հիմնական պարտավորությունից ծագող իրավունքը, կամ այդ իրավունքի պետական գրանցումը մերժվել է:

Այսինքն՝ օրենսդրական զարգացումները ևս վկայում են այն մասին, որ անկախ գրավի իրավունքի ծագման հիմքից, այդ իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում են, որ օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը գրավառուի համար կարող է իրավական հետևանքներ առաջացնել, այդ թվում միջոց հանդիսանալ վերջինիս հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար, եթե այդ իրավունքը ենթարկվել է պետական գրանցման և ստացել է պետական պաշտպանություն: Հակառակ պարագայում, այսինքն՝ օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը պետական գրանցման ենթարկված չլինելու դեպքում խոսք չի կարող լինել այդ իրավունքի գոյության մասին ընդհանրապես և գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի

Նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանվելու մասին մասնավորապես, քանի որ իր ուժը կարող է պահպանել միայն գոյություն ունեցող, այսինքն՝ գրանցված իրավունքը:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ հարկ են համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի և Խաչատուր Գրիգորյանի միջև 28.03.2011 թվականին կնքվել է «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագիր» (**հատոր 1-ին, գ.թ. 17**), որից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման (**անվիճելի փաստ, որը հաստատված է նաև թիվ ԵՄԴ/1114/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.06.2012 թվականի որոշմամբ՝ հ. 1-ին, գ.թ. 10-14**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.06.2012 թվականի որոշմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 12.03.2012 թվականի թիվ ԵՄԴ/1114/02/11 վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Խաչատուր Գրիգորյանից հոգուտ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի բռնագանձվել է 5.505.000 ՀՀ դրամ՝ որպես 28.03.2011 թվականին կնքված «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրով» սահմանված գումարի չվճարված մաս, որի նկատմամբ 01.08.2011 թվականից սկսած հաշվարկվել են տոկոսներ՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը: Նշված որոշման հիման վրա տրվել է կատարողական թերթ:

Կատարողական վարույթի ընթացքում կողմերը կնքել են հաշտության համաձայնություն, որը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2012 թվականի վճռով հաստատվել է՝ Խաչատուր Գրիգորյանը պարտավորվել է մինչև 2013 թվականի հունիս ամիսը նշված կատարողական թերթով սահմանված 5.505.000 ՀՀ դրամը, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներն ամեն ամիս, մաս-մաս վճարել Ռոբերտ Մելիք-Ստեփանյանին: Նշված պարտավորությունն ամբողջությամբ և ժամանակին կատարելու դեպքում պահանջատերը պարտավորվել է ներկայացված թիվ ԵՄԴ/1114/02/11 կատարողական թերթը հետ վերցնել: Խաչատուր Գրիգորյանի կողմից նշված պարտավորությունն ամբողջությամբ չկատարվելու դեպքում հաշտության համաձայնությունը չեղյալ է համարվում և նշված գումարի բռնագանձումը ենթակա է կատարման ԴԱՀԿ ծառայության միջոցով հարկադիր կարգով՝ հաշվանցելով Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականին արդեն իսկ վճարված գումարները:

Խաչատուր Գրիգորյանի կողմից 15.11.2012 թվականի դրությամբ վճարվել է 1.221.000 ՀՀ դրամ: Խաչատուր Գրիգորյանի կողմից հաշտության համաձայնությամբ սահմանված պարտավորությունը չկատարելու հիմքով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Մալաթիա-Սեբաստիա բաժնի 13.05.2013 թվականի որոշմամբ կասեցված թիվ 01/12-4291/11 կատարողական վարույթը վերսկսվել է:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Խաչատուր Գրիգորյանը մահացել է: 27.04.2015 թվականի պարտավորագրի համաձայն՝ Սուսաննա Մանուկյանը պարտավորվել է Ավետիս Քալաշյանին՝ որպես Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի լիազորված անձ, մինչև 01.08.2015 թվականը վճարել 1.600.000 ՀՀ դրամ: Պարտավորվել է նաև Երևանի Հաղթանակի 7-րդ փողոց 33 տունը գրավադրել բանկում նշված գումարը վերադարձնելու համար, որն իրականացնելու համար իր խնդրանքով Ավետիս Քալաշյանը պետք է դիմում ներկայացնել ԴԱՀԿ ծառայություն նշված տան վրա դրված արգելանքը հանելու համար:

18.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Սուսաննա Մանուկյանը վաճառել, իսկ Արմեն Աճեմյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը, որը պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ գրավի, կալանքի, արգելանքի տակ չի եղել:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102016-01-0104 վկայականի համաձայն՝ 18.05.2015 թվականի թիվ 2089 առուվաճառքի պայմանագրի հիման վրա Երևանի Հաղթանակի 7-րդ փողոց, 33 բնակելի տան նկատմամբ գրանցվել է Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարջյանի ընդհանուր համատեղ սեփականությունը:

Սույն գործով անդրադառնալով այն իրավական հարցին, թե արդյո՞ք գրավի առարկան օտարելու դեպքում օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը դադարում է, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը, հետևաբար անկախ այն հանգամանքից, որ գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքն անցել է այլ անձանց՝ Արմեն Աճեմյանի և Արմինե Հայդարջյանի սեփականությանը, դեռևս չի նշանակում, որ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանը կորցրել է իր գրավի իրավունքն այդ գույքի նկատմամբ, քանի որ գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականությանը:

Փաստորեն Վճռաբեկ դատարանն անտեսել է գրավի իրավունքի պարտադիր գրանցման ենթակա լինելու օրենսդրական պահանջը՝ 28.03.2011 թվականի «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրի» կն քման փաստն ու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված իրավակարգավորումը դիտելով բավարար գրավի իրավունքին իրավական պաշտպանություն տալու, մասնավորապես այդ իրավունքի գոյությունը, որպես հաստատված փաստ, ընդունելու և գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանված համարելու համար: Մինչդեռ պահպանվել կարող է միայն գրանցված գրավի իրավունքը, քանի որ միայն գրանցված իրավունքն է ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում պետության կողմից, հետևաբար օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը գրանցված լինելու դեպքում միայն գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը կպահպանի իր ուժը:

Այսպիսով, սույն հատուկ կարծիքում շարադրված հիմնավորումներով գտնում եմ, որ տվյալ դեպքում 28.03.2011 թվականի «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրի» կն քման փաստով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով, այսինքն՝ օրենքի ուժով ծագել է գրավի իրավունքը, այն է՝ նշված պայմանագրի առարկա հանդիսացող Երևանի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը գնորդին՝ Խաչատուր Գրիգորյանին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվել է վաճառողի՝ Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի մոտ գրավ դրված՝ ի պահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման: **Այդուհանդերձ, օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը ենթակա էր պետական գրանցման, ուստի նշված գրավի իրավունքը Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի համար կարող էր իրավական հետևանքներ առաջացնել, այդ թվում գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս պահպանել իր ուժն ու միջոց հանդիսանալ վերջինիս հանդեպ Խաչատուր Գրիգորյանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար միայն գրավի իրավունքի պետական գրանցման պահանջը կատարված լինելու պարագայում:**

Մինչդեռ սույն գործով օրենքի ուժով ծագած գրավի իրավունքի պետական գրանցման փաստը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել: Ավելին, 28.03.2011 թվականին կնքված «Անշարժ գույքի տարածամկետ առուվաճառքի պայմանագրից» ծագող իրավունքների պետական գրանցումից ավելի քան չորս տարի անց՝ 18.05.2015 թվականին

կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Խաչատուր Գրիգորյանի իրավահաջորդ Սուսաննա Մանուկյանը վաճառել է, իսկ Արմեն Աճեմյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Հաղթանակի 7-րդ փողոցի թիվ 33 տունը, որը պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ **գրավի**, կալանքի, արգելանքի **տակ չի եղել**:

Նման պայմաններում, գտնում եմ, որ խոսք չի կարող լինել գրավ դրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց՝ Արմեն Աճեմյանին և Արմինե Հայդարջյանին անցնելիս Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի գրավի իրավունքի պահպանման, հետևաբար և գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու վերջինիս պահանջը բավարարելու մասին, քանի որ դրա համար նախևառաջ պետք է առկա լինի իրավական պաշտպանություն ստացած, այսինքն՝ Կադաստրի կոմիտեի (անշարժ գույքի պետական ռեգիստրի) կողմից գրանցված գրավի իրավունք, որպիսի պայմանը սույն գործով բացակայում է:

Այսպիսով, գրնում եմ, որ Դատարանը, մերժելով Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անիուրիուս թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, ուստի Ռոբերտ Մելիք-Ստեփանյանի ներկայացրած կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ սրորադաս դատարանի դատական ակտն անիուրիուս թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ռ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1159/02/17
Քաղաքացիական գործ թիվ	ԵԿԴ/1159/02/17
Նախագահող դատավոր	Հ. Ենքյան
Դատավորներ	Լ. Գրիգորյան Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի մայիսի 15-ին գրավոր ընթացակարգով քննելով «Գառնի ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Մուրադյանի ընդդեմ Ընկերության, երրորդ անձինք Արթուր և Գեղամ Պետրոսյանների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (ներկայումս՝ ՀՀ կադաստրի կոմիտեի) գրավի դադարեցման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Մուրադյանը պահանջել է դադարեցնել Ընկերության գրավի իրավունքը Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 27.06.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.01.2019 թվականի որոշմամբ Արմեն Մուրադյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 27.06.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայրը բավարարվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետը, 135-րդ հոդվածի 1-ին կետը, 228-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնարկանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Արթուր Պետրոսյանը անշարժ գույքի գրավի պայմանագրերը կնքելիս հանդիսացել է գրավի առարկայի՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի միակ սեփականատերը, ինչը հիմք է տվել Ընկերությանը, վստահելով սեփականության իրավունքի պետական գրանցման վարչական ակտի գոյությանը, ի ապահովումն վարկային պարտավորությունների կատարման՝ օրենքով սահմանված կարգով կնքելու գրավի պայմանագրերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունը գրավի պայմանագրերի կնքման ժամանակ չգիտեր և պարտավոր էլ չէր իմանալ գրավի առարկայի նկատմամբ այլ անձանց հավակնությունների մասին:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «առգրավել» եզրույթը և անտեսել է այն հանգամանքը, որ դատական ակտով գրավատուի սեփականության իրավունքն անվավեր ճանաչելը և մեկ այլ անձի սեփականության իրավունքը վերականգնելն անձի փաստացի տիրապետությունից գույքը վերցնելու գործողություններ չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.06.2018 թվականի վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 30.11.2010 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2671710 վկայականի պատճենի համաձայն՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է Գեղամ Պետրոսյանին (**հատոր 1-ին, գ.թ. 58**):

2) 30.08.2011 թվականին Գեղամ Պետրոսյանի և Իրինա Սիմոնյանի միջև կնքված և նոտար Ա. Աբրահամյանի կողմից վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի պատճենի համաձայն՝ Գեղամ Պետրոսյանը Իրինա Սիմոնյանին վաճառել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը (գրանցվել է սեղանամատյանում՝ 6189) (**հատոր 1-ին, գ.թ. 57**):

3) 30.09.2011 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2805261 վկայականի պատճենի համաձայն՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է Իրինա Սիմոնյանին (**հատոր 1-ին, գ.թ. 55**):

4) 27.12.2012 թվականին Իրինա Սիմոնյանի և Արթուր Պետրոսյանի միջև կնքված և նոտար Ա. Աբրահամյանի կողմից վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի պատճենի համաձայն՝ Իրինա Սիմոնյանը Արթուր Պետրոսյանին է վաճառել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը (գրանցվել է սեղանամատյանում՝ 8942) (**հատոր 1-ին, գ.թ. 54**):

5) 09.01.2013 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09012013-01-1302 վկայականի պատճենի համաձայն՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ գրանցվել է Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 27.12.2012 թվականի թիվ 8942 առուվաճառքի պայմանագիրը) **(հատոր 1-ին, գ.թ. 83):**

6) 08.05.2013 թվականին Ընկերության և Արթուր Պետրոսյանի միջև կնքված և նոտար Ա. Աբրահամյանի կողմից վավերացված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ Գ068-13 պայմանագրի պատճենի համաձայն՝ Արթուր Պետրոսյանը, ի սպառնալուծում իր և Ընկերության միջև 08.05.2013 թվականին կնքված թիվ Վ068-13 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման, գրավադրել է Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը (գրանցվել է սեղանամատյանում՝ 1966) **(հատոր 1-ին, գ.թ. 78-82):**

7) 13.05.2013 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13052013-01-0004 վկայականի պատճենի համաձայն՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը (հիմք՝ 08.05.2013 թվականի թիվ 1966 գրավի, հիփոթեքի պայմանագիրը) **(հատոր 1-ին, գ.թ. 87-88):**

8) 13.09.2013 թվականին Ընկերության և Արթուր Պետրոսյանի միջև կնքված և նոտար Ա. Աբրահամյանի կողմից վավերացված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ Գ150-13 պայմանագրի պատճենի համաձայն՝ Արթուր Պետրոսյանը, ի սպառնալուծում իր և Ընկերության միջև 13.09.2013 թվականին կնքված թիվ Վ150-13 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման, գրավադրել է Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը (գրանցվել է սեղանամատյանում՝ 4891) **(հատոր 1-ին, գ.թ. 73-77):**

9) 17.09.2013 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17092013-01-0004 վկայականի պատճենի համաձայն՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը (հիմք՝ 13.09.2013 թվականի թիվ 4891 հաջորդող գրավի, հիփոթեքի պայմանագիրը) **(հատոր 1-ին, գ.թ. 85-86):**

10) Թիվ ԵԿԴ/2202/02/14 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Արմեն Մուրադյանի ընդդեմ Գեղամ Պետրոսյանի, երրորդ անձինք Արթուր Պետրոսյանի, Իրինա Սիմոնյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Ընկերության՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հաստատվել են հետևյալ փաստական հանգամանքները.

10.1) Արմեն Մուրադյանի և Գեղամ Պետրոսյանի միջև 19.08.2011 թվականին կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ Արմեն Մուրադյանը Գեղամ Պետրոսյանին առանց տոկոսի տվել է 56.000.000 ՀՀ դրամ, որը Գեղամ Պետրոսյանը պարտավորվել է վերադարձնել 19.09.2011 թվականին:

10.2) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից արձակվել է թիվ ԱՎԴ/0599/03/11 վճարման կարգադրությունը, որի համաձայն Գեղամ Պետրոսյանին կարգադրվել է կատարել հոգուտ Արմեն Մուրադյանի 56.000.000 ՀՀ դրամ վճարելու պահանջը **(հատոր 2-րդ, գ.թ. 65-80):**

11) Թիվ ԵԿԴ/2202/02/14 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Արմեն Մուրադյանի ընդդեմ Գեղամ Պետրոսյանի, երրորդ անձինք Արթուր Պետրոսյանի, Իրինա Սիմոնյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Ընկերության՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.05.2015 թվականի վճռով վճռվել է Արմեն Մուրադյանի հայցը բավարարել, անվավեր ճանաչել 30.08.2011 թվականին Գեղամ Պետրոսյանի և Իրինա Սիմոնյանի միջև և 27.12.2012 թվականին Իրինա Սիմոնյանի և Արթուր Պետրոսյանի միջև կնքված՝ Երևան

քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի առուվաճառքի պայմանագրերը, որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 30.09.2011 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010064-3 մատյանի թիվ 000234 համարի տակ գրանցված՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ Իրինա Միմոնյանի սեփականության իրավունքը և 09.01.2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրանցված Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 65-80**):

12) Թիվ ԵԿԴ/2202/02/14 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Արմեն Մուրադյանի ընդդեմ Գեղամ Պետրոսյանի, երրորդ անձինք Արթուր Պետրոսյանի, Իրինա Միմոնյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Ընկերության՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.12.2015 թվականի որոշմամբ որոշվել է Գեղամ և Արթուր Պետրոսյանների վերաքննիչ բողոքները բավարարել մասնակիորեն, մասնակիորեն բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.05.2015 թվականին կայացված վճիռը՝ 30.08.2011 թվականին Գեղամ Պետրոսյանի և Իրինա Միմոնյանի միջև և 27.12.2012 թվականին Իրինա Միմոնյանի և Արթուր Պետրոսյանի միջև կնքված՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի պայմանագրերը անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 30.09.2011 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010064-3 մատյանի թիվ 000234 համարի տակ գրանցված՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ Իրինա Միմոնյանի սեփականության իրավունքը և 09.01.2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրանցված Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքը անվավեր ճանաչելու մասերով, և այդ մասերը փոփոխել հետևյալ կերպ. որպես առոչինչ (կեղծ) գործարքի իրավական հետևանք՝ անվավեր ճանաչել 30.08.2011 թվականին Գեղամ Պետրոսյանի և Իրինա Մերգեյի Միմոնյանի միջև կնքված՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի առուվաճառքի պայմանագրի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, որպես առոչինչ (կեղծ) գործարքի իրավական հետևանք՝ անվավեր ճանաչել 27.12.2012 թվականին Իրինա Միմոնյանի և Արթուր Պետրոսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիմքով՝ Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ, վճիռը՝ մնացած մասով, թողնել անփոփոխ: Վերոհիշյալ որոշումը մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 2-րդ, գ.թ. 85-103**):

13) Թիվ ԵԿԴ/2202/02/14 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Արմեն Մուրադյանի ընդդեմ Գեղամ Պետրոսյանի, երրորդ անձինք Արթուր Պետրոսյանի, Իրինա Միմոնյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Ընկերության՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.05.2016 թվականի որոշմամբ Արթուր Պետրոսյանի և Նրա ներկայացուցչի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության (**հատոր 2-րդ, գ.թ. 61-63**):

14) Թիվ ԵԿԴ/1979/02/16 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Գեղամ Պետրոսյանի ընդդեմ Ընկերության, Արթուր Պետրոսյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Արմեն Մուրադյանի՝ անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու և

գույքն արգելանքից հանելու պահանջների մասին, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.09.2017 թվականի վճռով վճռվել է Գեղամ Պետրոսյանի հայցը մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2017 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշմամբ որոշվել է մերժել Գեղամ Պետրոսյանի վերաքննիչ բողոքը վերոհիշյալ վճիռը թողնելով անփոփոխ (**հատոր 2-րդ, գ.թ. 47-58, տե՛ս նաև «datalex.am»**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարող են էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետի միատեսակ կիրառության համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետը կիրառելու արդյունքում թույլ է տրվել այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. գրավի իրավունքն արդյո՞ք ենթակա է դադարման այն դեպքում, երբ գրավի պայմանագիրը կնքելուց հետո գրավի առարկայի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անվավեր է ճանաչվում՝ որպես կեղծ գործարքների անվավերության հետևանք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականատերեր չհամարվող անձինք կարող են ունենալ հետևյալ գույքային իրավունքները՝ (...) 4) գրավի (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների դադարման համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (...) գրավատուի գույքի նկատմամբ գրավատուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավատուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը: Գրավատուի իրավահաջորդը զբաղեցնում է գրավատուի տեղը և կրում նրա բոլոր պարտականությունները, եթե այլ բան նախատեսված չէ գրավատուի հետ համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ գրավի առարկա գույքն օրենքով սահմանված կարգով առգրավվել է գրավատուից այն հիմքով, որ իրականում այդ գույքի սեփականատերն ուրիշ անձ է, այդ գույքի նկատմամբ գրավը դադարում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավը դադարում է՝ գրավով ապահովված պարտավորությունը դադարելով, գրավատուի պահանջով՝ նույն օրենսգրքի 237 հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմքերով, գրավ դրված գույքի ոչնչացման կամ գրավ դրված իրավունքը դադարելու դեպքում, եթե գրավատուն չի օգտվել նույն օրենսգրքի 240 հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքից, գրավ դրված գույքը նույն օրենսգրքով սահմանված կարգով իրացվելու (վաճառվելու) դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է գրավի ինստիտուտի առանձնահատկություններին:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետի առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր կանոնի համաձայն գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների, այդ թվում նաև՝ գրավի իրավունքի դադարման համար: Այս կանոնից բացառությունները պետք է սահմանված լինեն բացառապես օրենքով:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթի իրավական վերլուծությանը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված իրավական նորմով, ի լրումն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի, սահմանված է գրավի դադարման ևս մեկ հիմք, այն է՝ գրավը դադարում է այն դեպքում, երբ գրավի առարկա գույքն օրենքով սահմանված կարգով **առգրավվել է գրավարուից այն հիմքով, որ իրականում այդ գույքի սեփականատերն ուրիշ անձ է:**

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոհիշյալ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ փաստական հանգամանքի առկայությունը՝ գրավի առարկա գույքը պետք է օրենքով սահմանված կարգով առգրավված լինի այն այլ անձի սեփականությունը հանդիսանալու փաստով: Այսինքն՝ առգրավման հիմքը բացառապես պետք է պայմանավորված լինի գրավադրված գույքն այլ անձին սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքով:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գրավի առարկայի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը պետք է առկա լինի հենց գրավադրման պահին, հակառակ պարագայում, երբ խոսքը գնում է գրավի պայմանագրի կնքումից հետո գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխության մասին, ապա նման իրավիճակներում կիրառման են ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ և 242-րդ հոդվածի 1-ին կետերը, այսինքն՝ գրավի իրավունքը պահպանում է իր ուժը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով անդրադառնալով «առգրավվել» եզրույթի բովանդակության բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա կարող է վերաբերվել ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

275-րդ հոդվածով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջը վերադարձնելու, այնպես էլ քրեական դատավարության կարգով առգրավված գույքն օրինական սեփականատիրոջը վերադարձնելու դեպքերին: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ «առգրավում» եզրույթը վերաբերում է այն դեպքերին, երբ իրական սեփականատիրոջ սեփականության իրավունքը պաշտպանվում է առանց գործարքների վիճարկման:

Վճռաբեկ դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում անդրադառնալ կեղծ գործարքի՝ որպես առոչինչ գործարքի իրավական հետևանքների կիրառման արդյունքում առանց գրավի պայմանագիրը վիճարկելու գրավը դադարեցնելու իրավական հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ կեղծ գործարքներն առոչինչ համարելը պայմանավորված է նրանով, որ դրանցում իրականությունը խեղաթյուրվում է դիտավորյալ կերպով՝ բացասական ազդելով քաղաքացիական շրջանառության բարեխիղճ մասնակիցների շահերի վրա: Կեղծ գործարք կնքվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստեղծել իրավահարաբերության առկայության պատրանք՝ քողարկելու համար գործարքի կնքման իրական շարժառիթները: Այլ կերպ ասած՝ կեղծ գործարքը ծառայում է որպես միջոց՝ գործարքին մասնակից չհանդիսացող երրորդ անձի համար իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելու համար (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու համար գույքն առերևույթ օտարելը՝ պարտատիրոջ մոտ գույքի անբավարարության տպավորություն ստեղծելու համար):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կեղծ գործարքը համարվում է կամքի արատով գործարք, քանի որ այն չի պարունակում գործարքի կողմերի նպատակադրված կամային ակտը՝ ներքին կամքը, ուղղված իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Կեղծ գործարքի դեպքում կողմերը չունեն իրական նպատակ՝ կնքելու գործարք՝ իրավունքներ և պարտականություններ առաջացնելով, փոփոխելով կամ դադարեցնելով, նրանց իրական նպատակը իրավահարաբերության պատրանք ստեղծելն է՝ իրական կամքը թաքցնելու նպատակով: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործարքը կեղծ որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի գործարքի բոլոր կողմերի կամքն ուղղված լինի առերևույթ հարաբերության ծագման տպավորություն ստեղծելուն, հակառակ դեպքում, եթե գործարքի կողմերից միայն մեկն է նման նպատակ հետապնդում, ապա առկա կլինի կամքի արատով այլ գործարք, քանի որ երկկողմ գործարքը համաձայնեցված կամքի արտահայտություն է, և եթե գործարքը ձևակերպվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, ապա դա չի կարող լինել միայն մեկ կողմի ցանկությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ չնայած կեղծ գործարքի կողմերը ձևակերպվող գործարքի որևէ իրավական հետևանք փաստացի առաջացնելու մտադրություն չունեն, այդուհանդերձ, որպեսզի երրորդ անձինք հնարավորություն ունենան վստահելու կեղծ գործարքին, գործարքի կողմերը, որպես կանոն, ստեղծում են փաստացի հարաբերության առկայության պատրանք՝ այդ թվում ձևականորեն առաջացնելով այն հետևանքները, որոնք պետք է առաջանային, եթե կնքվեր իրական գործարք (այդ թվում նաև՝ գործարքից բխող իրավունքները պետական գրանցման ենթարկելով):

ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է, որ կեղծ գործարքի առկայությունը գնահատելիս դատարանները պետք է գնահատման արժանացնեն գործարքի կողմերի մոտակա և հեռահար նպատակները՝ հաշվի առնելով, որ գործարքի կնքման մոտակա նպատակը գործարքի տպավորություն ստեղծելն է, իսկ հեռահար նպատակը՝ կողմերի կամ նրանցից մեկի համար որևէ առավելություն ստանալը կամ որևէ սահմանափակում շրջանցելը:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ կեղծ գործարքի դեպքում գործարքի փաստացի կատարում, որպես կանոն, տեղի չի ունենում (*տե՛ս Այրերպր Պերրոսյանի մասնկության գործով կառավարիչ Արսեն Չիպչյանն ընդդեմ «Նորոլի» ՍՊԸ-ի թիվ*

ԿԴԿ/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վճռարեկ դատարանն ընդգծում է, որ նման դեպքում առուվաճառքի պայմանագրի առարկայի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի գրանցումը տեղի է ունենում իրական սեփականատիրոջ կամքով և ցանկությամբ, հետևաբար վերջինս կեղծ առուվաճառքի պայմանագիրը կնքելիս կանխատեսում է, որ գնորդը առուվաճառքի պայմանագրի առարկայի նկատմամբ կարող է կատարել սեփականության իրավունքից բխող ցանկացած գործողություն, այդ թվում նաև՝ դրպես պարտավորության կատարման ապահովման միջոց՝ գրավ դնել առուվաճառքի պայմանագրի առարկան:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունները համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված իրավակարգավորման հետ՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ այս հիմքով գրավը դադարած ճանաչելու պահանջի իրավունքը պատկանում է բացառապես գրավադրված գույքի սեփականատիրոջը, իսկ այլ շահագրգիռ անձինք իրենց խախտված իրավունքները կարող են վերականգնել բացառապես օրենքով սահմանված կարգով գրավի գործարքը վիճարկելով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Մուրադյանը Գեղամ Պետրոսյանին տվել է 56.000.000 ՀՀ դրամ, որը Գեղամ Պետրոսյանը պարտավորվել է վերադարձնել 19.09.2011 թվականին:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից արձակված թիվ ԱՎԿ/0599/03/11 վճարման կարգադրությամբ Գեղամ Պետրոսյանին կարգադրվել է Արմեն Մուրադյանին վճարել 56.000.000 ՀՀ դրամ:

Գեղամ Պետրոսյանն Իրինա Սիմոնյանին է վաճառել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանը, ինչի հիման վրա նշված բնակարանի նկատմամբ պետական գրանցման է ենթարկվել Իրինա Սիմոնյանի սեփականության իրավունքը:

Վերոհիշյալ բնակարանը Իրինա Սիմոնյանի կողմից վաճառվել է Արթուր Պետրոսյանին, ինչի հիման վրա նշված բնակարանի նկատմամբ պետական գրանցման է ենթարկվել Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքը:

Այնուհետև Արթուր Պետրոսյանը նույն բնակարանը գրավադրել է Ընկերությունում՝ ի ապահովումն իր և Ընկերության միջև կնքված վարկային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման:

Ընկերությունն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման է ենթարկել գրավի պայմանագրերի հիման վրա Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ ծագած՝ Ընկերության գրավի իրավունքը:

Թիվ ԵԿԿ/2202/02/14 քաղաքացիական գործով հաստատվել է Գեղամ Պետրոսյանի և Իրինա Սիմոնյանի, ինչպես նաև Իրինա Սիմոնյանի և Արթուր Պետրոսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրերի կեղծ լինելու հանգամանքը, և այդ գործարքների նկատմամբ կիրառվել են անվավերության հետևանքներ, մասնավորապես՝ անվավեր են ճանաչվել Իրինա Սիմոնյանի և Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումները:

Սույն գործով Արմեն Մուրադյանը, ում հանդեպ Գեղամ Պետրոսյանն ունի չկատարված դրամական պարտավորություն, դիմել է դատարան՝ պահանջելով գրավի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ դադարեցնել Ընկերության գրավի իրավունքը:

Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ Գեղամ Պետրոսյանը, լինելով կեղծ գործարքի մասնակից (անբարեխիճ սեփականատեր), չի կարող նախապատվության իրավունք ունենալ բարեխիճ գործած գրավառուի՝ Ընկերության համեմատությամբ (հաշվի առնելով, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.09.2017 թվականի թիվ ԵԿԿ/1979/02/16 վճռով հաստատվել է, որ Արթուր Պետրոսյանը վիճելի պայմանագրերը կնքելիս եղել է

գրավի առարկայի՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի միակ սեփականատերը, ինչը հիմք է տվել Ընկերությանը վստահելու վարչական ակտի գոյությանը և ի ապահովումն Արթուր Պետրոսյանի վարկային պարտավորության կատարման՝ օրենքով սահմանված կարգով կնքելու վիճելի հիփոթեքի պայմանագրերը): Դատարանը գտել է, որ սույն դեպքում գործում է գրավի իրավունքի «հետևելու» հատկանիշը և, անկախ սեփականատերերի փոփոխությունից, գույքի նկատմամբ գրավի իրավունքը պահպանվում է:

Միաժամանակ վերոհիշյալ դիրքորոշումը դիտարկելով նաև Գեղամ Պետրոսյանի պարտատեր Արմեն Մուրադյանի իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ Դատարանը հարկ է համարել նշել, որ Գեղամ Պետրոսյանի՝ իր գույքը գրավադրելու (այդ թվում նաև ի կատարումն երրորդ անձի պարտավորությունների) իրավունքը Արմեն Մուրադյանի հանդեպ ունեցած պարտավորությամբ որևէ կերպ սահմանափակված չէր: Այսինքն՝ Արմեն Մուրադյանը որևէ իրավական կամ պայմանագրային հիմք չի ունեցել ենթադրելու, որ Գեղամ Պետրոսյանն իր գույքը չի գրավադրի կամ այլ կերպ օտարի, հետևաբար Դատարանի գնահատմամբ նման իրավիճակում Արմեն Մուրադյանի իրավունքները որևէ կերպ չեն խախտվել:

Վերաքննիչ դատարանն Արմեն Մուրադյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ պատճառաբանելով, որ սույն պարագայում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետը, քանի որ օրինական ուժի մեջ մտած վճռով կիրառվել են կեղծ գործարքի անվավերության հետևանքներ, ինչի արդյունքում Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ վերականգնվել է Գեղամ Պետրոսյանի սեփականության իրավունքը և անվավեր է ճանաչվել Արթուր Պետրոսյանի գրանցված իրավունքը, ով այդ ընթացքում գրավադրել է վերոնշյալ հասցեում գտնվող անշարժ գույքը, հետևաբար գույքը հարկադրաբար վերցվել է Արթուր Պետրոսյանից կամ, այլ կերպ ասած, առգրավվել է նրանից և հանձնվել սեփականատիրոջը՝ Գեղամ Պետրոսյանին:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի թիվ 13 բնակարանի առգրավվումը տեղի է ունեցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով, և իրականում վերոնշյալ գույքի սեփականատերը հանդիսանում է Գեղամ Պետրոսյանը, մինչդեռ այն գրավադրվել է այլ անձի կողմից:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետից հետևում է, որ գույքի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության մասով օրենսդիրը որևէ վերապահում չի կատարել, դրանով հանդերձ՝ գրավառուի շահերի պաշտպանությանն ուղղված իրավակարգավորումներ ևս նախատեսված չեն, հետևաբար Դատարանի այն հետևությունները, որ այն ուղղված է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանը, Վերաքննիչ դատարանը համարել է անհիմն: Վերաքննիչ դատարանը նաև հարկ է համարել նշել, որ թեև տվյալ դեպքում ակնհայտ է գրավառուի բարեխղճությունը, այնուամենայնիվ, այդ մասով ևս հողվածը վերապահում չի պարունակում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243-րդ հոդվածի 3-րդ կետով գրավը դադարեցնելու հարցը որևէ կերպ չի առնչվում սեփականատիրոջ բարեխղճությանը, քանի որ այն հանդիսանում է գույքն առգրավվելու հետևանք, ինչն էլ հստակ սահմանված է օրենսդրի կողմից:

Մինչդեռ Վճռարեկ դատարանը, վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործարքի վիճարկումը կամ առոչինչ գործարքի հետևանքներ կիրառելը չի կարող նույնացվել առգրավման հետ, ապա սույն գործով բացակայում է գրավ դրված գույքի «առգրավման» փաստը, քանի որ դատարան է ներկայացվել կեղծ գործարքի հետևանքներ կիրառելու պահանջ, և դրա հետ միաժամանակ չի հաստատվել որ գրավառու ընկերությունը կեղծ գործարքի մասնակից է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել վերոհիշյալ հանգամանքները և եկել է սխալ եզրահանգման առ այն, որ Ընկերության գրավի իրավունքը ենթակա է դադարման՝ գրավադրված գույքն այլ անձին պատկանելու հիմքով առգրավվելու հիմքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ, հանգել է ճիշտ հետևության առ այն, որ Ընկերության գրավի իրավունքը ենթակա չէ դադարման, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով Արթուր Պետրոսյանի սեփականության իրավունքի գրանցման անվավերության հիմք հանդիսացող Գեղամ Պետրոսյանի անբարեխղճության հանգամանքը, իսկ Ընկերության գրավի իրավունքի ծագման հիմքում վերջինիս բարեխղճության առկայությունը, եկել է սխալ եզրահանգման՝ Ընկերության գրավի իրավունքը դադարման ենթակա լինելու վերաբերյալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 30.01.2019 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 27.06.2018 թվականի վճռի օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրավակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արմեն Մուրադյանը նախապես վճարել է ներկայացված հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրքի գումարները: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի համար Ընկերության կողմից նախապես վճարվել է 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, գտնում է, որ վճռաբեկ բողոքը բավարարման ենթակա լինելու պայմաններում վերոհիշյալ գումարն Արմեն Մուրադյանից պետք է բռնագանձել հոգուտ Ընկերության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 27.06.2018 թվականի վճռին:

2. Արմեն Մուրադյանից հոգուտ «Գառնի ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/2401/02/15**
 դատարանի որոշում **2020թ.**
 Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/2401/02/15**
 Նախագահող դատավոր՝ **Ա. Պետրոսյան**
 Դատավորներ՝ **Ա. Մկրտչյան**
Լ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
 զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂԻՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 10-ին
 գրավոր ընթացակարգով քննելով Մարինե Խաչատրյանի ներկայացուցիչ Վազգեն
 Թաղևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2018
 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Շեկյանի ընդդեմ Ռազմիկ Կարապետյանի,
 Մարինե Խաչատրյանի, Աննա Խաչատրյանի՝ պայմանագիրը և իրավունքի պետական
 գրանցումն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների
 մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Շեկյանը պահանջել է անվավեր ճանաչել Ռազմիկ Կարա-
 պետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ
 գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ. Համ-
 բարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի
 16.02.2015 թվականի պետական գրանցումը և նշված գույքի նկատմամբ ճանաչել իր սե-
 փականության իրավունքը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշբաբյան) 21.07.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահությամբ՝ Ա. Հունանյան, մասնակցությամբ՝ դատավորներ Կ. Հակոբյան, Ա. Սմբատյան) 09.11.2016 թվականի որոշմամբ Հայկ Շեկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2016 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.10.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.05.2018 թվականի որոշմամբ Մարինե Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.10.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարինե Խաչատրյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայկ Շեկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 304-րդ հոդվածները, 325-րդ հոդվածի 2-րդ կետը, 449-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ3/0150/05/10 գործով կայացված որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ և 449-րդ հոդվածների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներից հետևում է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված պայմանագիրը կնքված համարվել չի կարող: Ոստի, նման հանգամանքը բացառում է Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սյուզաննա Նազիբյանի կողմից 17.10.2014 թվականի թիվ 3441 համարի տակ գրանցամատյանում գրանցված 17.10.2014 թվականի լիազորագրի գործողության դադարած լինելը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հայկ Շեկյանի և Ռազմիկ Կարապետյանի միջև ստորագրված պայմանագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանում չկա որևէ նշում այն մասին, որ Հայկ Շեկյանը վճարել է պայմանագրի գինը: Միաժամանակ սույն քաղաքացիական գործում ևս առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ պայմանագրի գինը վճարվել է:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ Դատարանում տեղի ունեցած գործի քննության ընթացքում հայցվորը չի վկայակոչել, հետևաբար նաև չի ապացուցել այն փաստը, որ Աննա Խաչատրյանը մինչև 11.02.2015 թվականի առուվաճառքի պայմանագիրը կնքելը տեղեկացված է եղել, որ 17.10.2014 թվականի լիազորագրի գործողությունը դադարեցված է եղել: Նույն կերպ, հայցվորը չի հիմնավորել, որ Մարինե Խաչատրյանը մինչև 11.02.2015 թվականի առուվաճառքի պայմանագիրը կնքելը տեղեկացված է եղել, որ իր հետ պայմանագիր կնքող անձին՝ Աննա Խաչատրյանին 17.10.2014 թվականին տրված լիազորագրի գործողությունը դադարեցված է եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Բողոք բերած անձը չի հիմնավորել, թե հատկապես ինչպիսի դատավարական կամ նյութական իրավունքի նորմերի խախտումներ են թույլ տրվել, այն պարագայում, երբ երեք տարբեր դատարաններ, քննելով նույն գործը, հանգել են միևնույն եզրակացության:

Ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են օրենքի պահանջներին համապատասխան և օրինական են: Դատարանները թույլ չեն տվել դատավարական կամ նյութական իրավունքի նորմերի խախտում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Համաձայն 17.10.2014 թվականի լիազորագրի՝ Ռազմիկ Կարապետյանն Աննա Խաչատրյանին լիազորել է, ի թիվս այլնի, իր հայեցողությամբ և ցանկացած գնով վաճառել Երևան քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 23 հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող բաժինը և Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղին: Լիազորագիրը տրվել է երեք տարի ժամկետով: Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սյուզաննա Նազինյանի կողմից լիազորագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել գրանցամատյանում թիվ 3441 համարի ներքո (**հատոր 2-րդ, գ.թ. 120**):

2) Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի «ա» կետի համաձայն՝ «վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում անշարժ գույք՝ 15.0 քմ ընդհանուր մակերեսով ավտոկայանատեղի (օբյեկտ), գտնվող ՀՀ քաղ. Երևան, Վ.Համբարձումյան փողոց 119 շենքի թիվ 20 հասցեում»: Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանամատյանում թիվ 311 համարի ներքո (**հատոր 2-րդ, գ.թ. 116-117**):

3) Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված, Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սյուզաննա Նազինյանի կողմից 17.10.2014 թվականին հաստատված, թիվ 3441 համարի ներքո գրանցամատյանում գրանցված լիազորագրի հիման վրա՝ Աննա Խաչատրյանը Մարինե Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Աննա Խաչատրյանը վաճառում է, իսկ Մարինե Խաչատրյանը որպես սեփականություն ձեռք է բերում Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը բաղկացած է 15.0 քմ մակերեսով ավտոկայանատեղիից: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով և գրանցվել գրանցամատյանում՝ թիվ 274 համարի ներքո (**հատոր 2-րդ, գ.թ. 118-119**):

4) Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16022015-01-0109 վկայականի՝ Երևան, Արաբկիր, Վ.Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղի հասցեի անշարժ գույքը 11.02.2015 թվականի թիվ 274 առուվաճառքի պայմանագրի հիման վրա 16.02.2015 թվականին գրանցվել է Մարինե Սուրիկի Խաչատրյանի անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

5) Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացումից հետո դրանից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 449-րդ և 325-րդ հոդվածների խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների այնպիսի հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն

էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռարեկ դատարանը հարկ է համարում անդրադարձնալ հետևյալ հարցադրմանը.

Սեփականատիրոջ կողմից տրված լիազորագիրը կարող է արդյոք վերացված համարվել, իսկ այդ լիազորագրով կատարված գործարքը և դրանից ծագած իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչվել, եթե մինչև այդ լիազորագրով նախատեսված գործարքի կկրումը, գույքի սեփականատերերը երրորդ անձի հետ նույնպիսի կարգով ձևակերպվել է առուվաճառքի պայմանագիր, սակայն չի կատարվել դրանից ծագող իրավունքների պետական գրանցում:

Վերոգրյալ հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է պարզաբանել, թե

1. ո՞ր պահից է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում կնքված, ո՞րն է պայմանագրով գույք ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման պահը, և որ դեպքում պայմանագիրն ու դրանից ծագած իրավունքի պետական գրանցումը կարող են ճանաչվել անվավեր,

2. ո՞ր դեպքում և ի՞նչ կարգով լիազորագիրը կարող է համարվել դադարած:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի համաձայն 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450 հոդվածի 3-րդ կետ): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին ենթակա է պետական գրանցման: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցումն անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կատարելը հիմք չէ այդ պայմանագրի կողմերի հետ երրորդ անձանց ունեցած հարաբերությունների փոփոխման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (քացառությամբ միակողմ

գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկով արձանագրել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքված համարելու համար բավարար չէ կողմերի ստորագրությամբ դրա բոլոր էական պայմաններին համաձայնվելը և նոտարական վավերացման ենթարկելը: Պայմանագիրը կնքված է համարվում պայմանագրից ծագող իրավունքները՝ տվյալ դեպքում անշարժ գույքի սեփականության իրավունքը, գրանցելու պահից: Այսինքն, նման իրավիճակներում պայմանագրի կնքման և դրանից ծագող իրավունքի պետական գրանցման պահերը համընկնում են *(դե՛ս Արմեն Շահրազյանն և Քրիստինա Տոնոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի փարածքային ստորաբաժանման թիվ 3-65(ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի հետ կապված գործարքների համար օրենսդիրը սահմանել է հետևյալ հատուկ պահանջները՝ նոտարական կարգով վավերացող պայմանագիր և դրանից բխող իրավունքների պետական գրանցում: Բացառապես այս պայմանների կատարման արդյունքում են պայմանագրի կողմերի համար առաջանում քաղաքացիական-իրավական իրավունքներ և պարտականություններ: Ընդ որում, ի տարբերություն այլ պայմանագրերի, այն պայմանագրերի համար, որոնցից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, օրենսդիրը տվել է պայմանագրի կնքման պահը որոշելու այլ կարգավորում, որը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի կարգավորումից, այսինքն՝ պայմանագիրը կնքված է համարվում, իսկ գործարքը վավեր՝ իրավունքի պետական գրանցման պահից: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ անշարժ գույքի հետ կապված գործարքները վավեր են, իսկ անշարժ գույքին առնչվող պայմանագրերը կնքված են համարվում իրավունքների պետական գրանցման պահից: Այսինքն՝ մինչև իրավունքների պետական գրանցումը չի կարող լինել վավեր գործարք և կնքված պայմանագիր *(դե՛ս Դավիթ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի փարածքային ստորաբաժանման թիվ ՎԴ3/0150/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագումն անմիջականորեն կապված է

գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման կարգի պահպանման հետ: Այսինքն, որպեսզի անշարժ գույքը ձեռք բերողի մոտ ծագի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ է ձեռք բերվող գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքը ենթարկել պետական գրանցման: Միայն այս պահանջի կատարումից հետո է պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը կոնկրետ գույքի նկատմամբ: Ուստի, քանի դեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը կատարված չէ, պայմանագրի առարկա անշարժ գույքը ձեռք բերողն օրենքի իմաստով չի կարող ակնկալել պետության կողմից կոնկրետ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի պաշտպանություն:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վերը վկայակոչված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ շարժական գույքի առուվաճառքի վերաբերյալ կողմերի միջև ձեռքբերված համաձայնությունը՝ պայմանագիրը, համարվում է կնքված համապատասխան գույքը հանձնելու պահից (եթե դրա համար օրենսդիրը չի նախատեսել իրավունքի պետական գրանցում), մինչդեռ անշարժ գույքի դեպքում գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքված համարելու համար հարկավոր է առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացում և իրավունքի պետական գրանցում, և արդեն իրավունքի պետական գրանցման պահից սկսած է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված: Այլ կերպ ասած՝ **անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը** կնքված համարելու համար բավարար չէ կողմերի ստորագրությամբ դրա բոլոր էական պայմաններին համաձայնելը և պայմանագիրը նոտարական վավերացման ենթարկելը, քանի որ պայմանագիրը **կնքված է համարվում դրանից ծագող իրավունքները**, տվյալ դեպքում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը, **պետական գրանցման ենթարկելու պահից**: Ընդ որում, օրենսդիրը հստակեցրել է, որ անշարժ գույքի նկատմամբ ծագած սեփականության իրավունքը պետք է պետական գրանցման ներկայացվի 30 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նշված գույքի նկատմամբ գործարքը ենթարկվել է նոտարական վավերացման:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, իսկ գնորդի մոտ պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է ծագած առուվաճառքի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքի պետական գրանցման պահից: Ուստի, քանի դեռ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցում տեղի չի ունեցել, անկախ կողմերի միջև առուվաճառքով կատարված գործողությունների ծավալից, այդ պայմանագիրն ինքնին չի կարող գույքը ձեռք բերողի մոտ առաջացնել սեփականության իրավունք՝ որպես պայմանագրից բխող իրավական հետևանք:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ գլխով օրենսդիրը կարգավորվել է «Ներկայացուցչություն» վերտառությամբ լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով մեկ անձի կողմից ուրիշ անձի անունից հանդես գալու, գործարքներ կնքելու, քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ստանձնելու կարգը և առանձնահատկությունները:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը

քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորագրողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորագրողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) *(տե՛ս Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԳ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ լիազորվողն օգտվում է լիազորագրի շրջանակներում լիազորագրողի կողմից իրեն վերապահված գործողություններ կատարելու իրավունքից, որը հստակ ձևակերպվում է լիազորագրի բովանդակությունում և երրորդ անձանց հնարավորություն է տալիս հստակ եզրակացնել, թե լիազոր ներկայացուցչին ինչպիսի իրավազորությամբ է օժտված *(տե՛ս «Վաղարշ և որդիներ Կոնցետն» ՄՊԸ-ն ընդդեմ Մարինա Հայրապետյանի, Կարեն, Վարդգես, Իսա Եղիազարյանների և Աննայա Բագրասրունու թիվ ԵԿԳ/1769/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը)*:

Վերոգրյալ իրավանդումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լիազորագիրը միակողմանի գործարք է, որով սահմանվում են ներկայացուցչի իրավունքները, լիազորությունների շրջանակը, ինչպես նաև լիազորագրողի անունից երրորդ անձանց հետ հարաբերությունների մեջ մտնելու այլ պայմանները: Օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածով սահմանելով լիազորագրի գործողության ժամկետին վերաբերող ընդհանուր դրույթներ, միաժամանակ նույն օրենսգրքի 324-րդ հոդվածում անդրադարձել է նաև լիազորագրի գործողության դադարման հիմքերին:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝

- 1) լիազորագրի ժամկետը լրացել է.
- 2) իրավանացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները.
- 3) լիազորագրողը վերացրել է այն.
- 4) անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել է.
- 5) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը.
- 6) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունով տրվել է լիազորագիրը.
- 7) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.
- 8) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ում տրվել է լիազորագիրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրվել է այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնցից որևէ մեկի վրա հասնելու դեպքում դադարում է լիազորագրի գործողությունը: Ընդ որում, այդ իրավանդումը հանդիսանում է բացարձակ որոշակի. դրանում սպառնիչ կերպով թվարկվել են լիազորագրի դադարման հիմք հանդիսացող պայմանները, որոնք չեն կարող կամայական ընդլայնման ենթարկվել: Ուստի, հիմք ընդունելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին

կետով թվարկված դեպքերը ոչ այլ ինչ են, քան օրենսդրի կողմից նախատեսված իրավաբանական փաստեր, որոնց հետ վերջինս կապել է լիազորագրի գործողության դադարումը: Այսինքն՝ այդ փաստերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում է միայն լիազորագիրը դադարում, և լիազորված անձն այլևս իրավասու չի լինում ներկայացնել լիազորագրողի շահերը:

Վերը շարադրված վերլուծությունը տարածելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Լիազորագրով նախատեսված գործողությունների իրականացված լինելն օրենսդիրը որակել է որպես ինքնուրույն իրավաբանական փաստ, որի ուժով դադարում է լիազորագրի գործողությունը: Ընդ որում, օրենսդիրը չի տարբերակել, թե ում կողմից է իրականացվել լիազորագրով նախատեսված գործողությունը՝ լիազորողի, լիազորվածի, թե օրենքով նախատեսված այլ անձի կողմից: Տվյալ դեպքում, չառանձնացնելով իրավունքի սուբյեկտին, օրենսդիրն այդ հիմքով լիազորագրի դադարման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում ամրագրված հիպոթեզում, որպես իրավաբանական փաստ, բացառապես սահմանել է լիազորագրով նախատեսված գործողության իրականացված լինելու իրավաբանական փաստի առկայությունը: Այդ կապակցությամբ հարկ է բացահայտել «իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները» բառակապակցությունը:

Քննարկվող պարագայում այդ բառակապակցությունն իր մեջ ներառում է երեք միմյանց հետ փոխկապակցված՝

1. գործողություններ,
2. գործողություններ սահմանված լիազորագրով,
3. գործողություններ, որոնք պետք է լինեն իրականացված:

Տվյալ դեպքում, գործողությունը, որպեսզի հանդես գա լիազորագրի դադարման համար բավարար իրավաբանական փաստ, պետք է ոչ միայն նախատեսված լինի լիազորագրով, այլև լինի կատարված: Այդ առումով, եթե գործողության էությունը բացահայտվում է լիազորագրում նշված իրավական հետևանքներ առաջ բերող արարքների բովանդակությամբ, ապա այդ գործողության կատարված լինելը բացահայտվում է այն իրավական հետևանքների վրա հասած լինելու հանգամանքով, որի համար տրվել էր լիազորագիր:

Քննարկվող պարագայում, առուվաճառքի լիազորագրի բովանդակությունը կազմում է լիազորագրում սահմանված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման վերաբերյալ լիազորողի անունից պայմանագրի կն քման գործողությունը, իսկ այդ գործողության իրականացված լինելը դրսևորվում է առուվաճառքի պայմանագրի կնքված լինելու իրողությամբ:

Այն բոլոր դեպքերում, երբ լիազորագրի բովանդակությունը կազմում է անշարժ գույքի օտարման պայմանագրի կն քման գործընթացը, ապա նման լիազորագրի դադարման համար, որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառման իրավաբանական փաստ, հանդես է գալիս անշարժ գույքի նկատմամբ օտարման պայմանագրի կնքված լինելու հանգամանքը: Այսինքն, երբ պահպանվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառության իրավական կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լիազորագրողի կողմից լիազորագիրը վերացնելն օրենսդիրը որակել է որպես ինքնուրույն իրավաբանական փաստ, որի ուժով կարող է դադարել լիազորագրի գործողությունը: Ուստի, լիազորագիրը վերացնելու պահից սկսած ներկայացվողի մոտ դադարում է նաև լիազորագրով սահմանված իրավական վիճակը: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիազորագրողն իրավասու է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը (վերալիազորագիրը):

Օրենսդիրը կարգավորել է նաև լիազորագրի վերացման իրավական մեխանիզմը: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիրը վերացնելը կատարվում է նոտարական

կարգով: Այս իրավանորմից հետևում է, որ լիազորագիրը վերացնելու վերաբերյալ լիազորագրողի կամահայտնությունը դեռևս չի կարող հիմք հանդիսանալ նոտարական կարգով տրված լիազորագրի գործողությունը դադարած դրակելու համար, քանի դեռ պահպանված չէ այդ կամահայտնությունը նոտարական ձևակերպման ենթարկելու օրենսդրի պահանջը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոտարական կարգով տրված լիազորագրի վերացման հիմքով դադարման իրավաբանական փաստը վրա է հասնում միայն լիազորագրի վերացմանը նոտարական կարգով ձևակերպում տալու պահից: Տվյալ դեպքում, վճռորոշ նշանակություն է ձեռք բերում նոտարական կարգով լիազորագրի վերացման իրավական կարգավորումը: Ըստ այդմ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է լիազորագրի վավերացման ընթացակարգը, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին կետով սահմանվել է, որ նոտարը վավերացնում է լիազորագիրը մեկ կամ մի քանի անձանց անունից մեկ կամ մի քանի անձանց անունով, իսկ 5-րդ կետով ամրագրվել է, որ լիազորագիրը վավերացնելուց հետո նոտարն այն մուտքագրում է լիազորագրերի առցանց շտեմարան: Նշված հոդվածի 6-րդ կետով սահմանվել է, որ լիազորագրից հրաժարվելու կամ լիազորագիրը դադարեցնելու մասին դիմում ստանալու դեպքում նոտարը համապատասխան տվյալները մուտքագրում է լիազորագրերի առցանց շտեմարան:

Հարկ է նշել, որ լիազորագրողի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ լիազորագիրը վերացնելն ինքնին առաջ չի բերում լիազորված անձի կողմից լիազորագրով տրված իրավական վիճակի դադարում: Մասնավորապես՝ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրել է, որ լիազորագիր տված և այն հետագայում վերացրած անձը պարտավոր է դրա վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև իրեն հայտնի երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրված է լիազորագիրը: (...) Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ լիազորագիր տված և հետագայում այն վերցրած անձին օրենսդիրը ներկայացրել է իմպերատիվ պահանջ՝ դրա վերացման մասին տեղեկացնել ինչպես լիազորագիրն ստացած անձին, այնպես էլ այն երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչություն է իրականացնելու լիազորագիրն ստացած անձը: Այսինքն՝ չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվել է, որ նոտարական կարգով տրված լիազորագրի գործողությունը համարվում է դադարած՝ վերացումը նոտարական կարգով ձևակերպելուց հետո, այդուհանդերձ, որպեսզի լիազորագրի դադարման հետևանքները լիազորված անձի համար վրա հասնեն, անհրաժեշտ է, որ լիազորագրի վերացման մասին լիազորագրողը տեղեկացնի ինչպես լիազորված անձին, այնպես էլ այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած իրավունքները և պարտականությունները, որոնք ծագել են մինչև այն պահը, երբ նա իմացել է կամ պետք է իմանար լիազորագիրը դադարելու մասին, պահպանում են իրենց ուժը լիազորագրողի և նրա իրավահաջորդների համար երրորդ անձանց նկատմամբ: Այս կանոնը չի կիրառվում, եթե երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

Նշված իրավանորմի դիսպոզիցիան սահմանում է, որ լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած իրավունքները և պարտականությունները պահպանում են իրենց իրավական ուժը միայն նույն իրավանորմի հիպոթեզում ամրագրված վավերապայմանների առկայության դեպքում: Այդ վավերապայմանները հետևյալն են.

1. լիազորագրով առաջ եկած իրավունքները և պարտականությունները ծագել են լիազորագրի դադարման վերաբերյալ տեղեկացված լինելուն նախորդած ժամանակահատվածում,

2. լիազորագրով առաջ եկած իրավունքները և պարտականությունները ծագել են մինչև այն ժամանակահատվածը, երբ լիազորված անձը լիազորագրի դադարման մասին տեղեկացված չի եղել, սակայն օբյեկտիվորեն պետք է այդ մասին իրագեկված լիներ:

Վերագրյալից ակնհայտ է, որ օրենսդիրը լիազորագրի դադարման իրավական հետևանքներն ուղղակիորեն պայմանավորել է դադարման վերաբերյալ լիազորված անձի իրազեկվածության իրավաբանական փաստի վրա հասնելու հանգամանքով:

Ամփոփելով վերագրյալը և հինք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ ու 325-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը՝ կարելի է արձանագրել, որ այն դեպքում, երբ լիազորագրողը որոշում է դադարեցնել նոտարական կարգով վավերացված լիազորագրի գործողությունը, ապա պարտավոր է կատարել հետևյալ՝ միայնաց հետ փոխկապակցված գործողությունները, մասնավորապես՝

1. լիազորագիրը վերացնել նոտարական կարգով,

2. լիազորագրի վերացման մասին տեղեկացնել լիազորագրի ստացած անձին, ինչպես նաև այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը:

Հակառակ պարագայում, այն իրավունքների և պարտականությունների շրջանակը, որոնք ծագել են լիազորված անձի գործողությունների հետևանքով և մինչև այն պահը, երբ վերջինս իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերից որևէ մեկով լիազորագրի դադարման մասին, շարունակում են պահպանել իրենց իրավաբանական ուժը լիազորագրողի և նրա իրավահաջորդների համար՝ երրորդ անձանց նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ երրորդ անձը գիտեր կամ օբյեկտիվորեն պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ռազմիկ Կարապետյանը, 17.10.2014 թվականին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագրով, ի թիվս այլնի, լիազորել է Աննա Խաչատրյանին իր հայեցողությամբ և ցանկացած գնով վաճառել Երևան քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 23 հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող բաժինը և Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղին:

Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի հիման վրա՝ Աննա Խաչատրյանը Մարինե Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Աննա Խաչատրյանը վաճառում է, իսկ Մարինե Խաչատրյանը որպես սեփականություն ձեռք է բերում Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը բաղկացած է 15.0 քմ մակերեսով ավտոկայանատեղիից: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով և գրանցվել գրանցամատյանում՝ թիվ 274 համարի ներքո:

Այնուհետև, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16022015-01-0109 վկայականի՝ Երևան, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղի հասցեի անշարժ գույքը 11.02.2015 թվականի թիվ 274 առուվաճառքի պայմանագրի հիման վրա 16.02.2015 թվականին գրանցվել է Մարինե Սուրիկի Խաչատրյանի անվամբ:

Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կազմվել ու ստորագրվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի «ա» կետի համաձայն՝ «վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում անշարժ գույք՝ 15.0 քմ ընդհանուր մակերեսով ավտոկայանատեղի (օբյեկտ), գտնվող ՀՀ քաղ. Երևան, Վ. Համբարձումյան փողոց 119 շենքի թիվ 20 հասցեում»: Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանամատյանում թիվ 311 համարի ներքո: Պայմանագրի նոտարական վավերացումից հետո դրանից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Հայկ Շեկյանի հայցի հիման վրա, որով վերջինս, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ,

313-րդ հոդվածների դրույթները, պահանջել է անվավեր ճանաչել Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումը և ճանաչել նշված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը:

Դատարանի 06.10.2017 թվականի վճռով բավարարվել է Հայկ Շեկյանի հայցը՝ այն պատճառաբանությամբ, որ Աննա Խաչատրյանի կողմից Մարինե Սուրիկի Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին առուվաճառքի պայմանագիր կնքելիս Աննա Խաչատրյանի մոտ բացակայել է նշված գործարքը ստորագրելու լիազորությունը, քանի որ 17.10.2014 թվականին Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը 05.02.2015 թվականից, այսինքն՝ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև վեճի առարկա գույքի կապակցությամբ առուվաճառքի պայմանագիր կնքելու և նոտարական վավերացում տալու պահից, դադարել էր: Հետևաբար, Դատարանն անվավեր է ճանաչել Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119 շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղիի առուվաճառքի պայմանագիրը, վերացրել վեճի առարկա գույքի նկատմամբ Մարինե Խաչատրյանի անվամբ կատարված պետական գրանցումը և ճանաչել Հայկ Շեկյանի սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է Մարինե Խաչատրյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 06.10.2017 թվականի վճիռը թողել է օրինական ուժի մեջ այն հիմնավորմամբ, որ Հայկ Շեկյանը 05.12.2015 թվականի առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերել վեճի առարկա գույքը, իսկ վաճառող Ռազմիկ Կարապետյանն իր իրավունքը փոխանցել, օտարել է գնորդին՝ չպահպանելով այդ գույքի նկատմամբ որևէ գույքային, այդ թվում՝ նաև՝ սեփականության իրավունք: Այսինքն, չունենալով գույքի ճակատագիրը որոշելու իրավունք՝ Ռազմիկ Կարապետյանը չէր կարող լիազորագրով օտարման իրավունքը փոխանցել ներկայացուցչին, իսկ նախկինում տրված լիազորագիրը գույքի օտարման պայմաններում դադարում է, հետևաբար, նույն գույքը չէր կարող երկրորդ անգամ օտարվել: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև առուվաճառքի պայմանագիրն ստորագրվել է 05.02.2015 թվականին, որը նույն օրը ենթարկվել է նոտարական վավերացման: Ուստի, Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ պայմանագրի կողմերը պայմանագրից ծագող իրավունքները կարող էին ենթարկել պետական գրանցման ներառյալ 06.03.2015 թվականը: Այսինքն, Հայկ Շեկյանն օրինական սպասելիք ուներ վեճի առարկա գույքի նկատմամբ, քանի որ դրա նկատմամբ իր իրավունքները ենթակա են եղել պետական գրանցման առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուրյա ժամկետում:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործով, ինչպես արդեն վերը նշվեց, հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 313-րդ հոդվածների հիմքով, որով Հայկ Շեկյանը պահանջել է անվավեր ճանաչել Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումը և ճանաչել նշված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2016 թվականի վճռով մերժելով հայցը՝ արձանագրել է, որ հայցվորը չի ապացուցել, որ թե իր և թե Մարինե Խաչատրյանի մասնակցությամբ գործարքներ կնքելիս վաճառողը կամ վերջինիս լիազորված անձը

դրանք ստորագրել են խաբեությանը, հայցվորը չի պարզաբանել թե ինչու է կայանում խաբեությունը և որն էր գնորդ Մարինե Խաչատրյանի խաբելու նպատակը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 09.11.2016 թվականի որոշմամբ Հայկ Շեկյանի վերաքննիչ բողոքը բավարարել է և գործն ուղարկել նոր քննության՝ ըստ էության սահմանել է գործի նոր քննության ծավալը: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա 11.02.2015 թվականին Աննա Խաչատրյանի կողմից կատարվել է գործարք այն դեպքում, երբ նշված լիազորագրի գործողությունը դադարել է Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով:

Այնուհետ, Դատարանը գործը քննել է 06.10.2017 թվականին վճիռ է կայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.11.2016 թվականի որոշմամբ տրված գործի նոր քննության ծավալի շրջանակներում: Արդյունքում՝ Դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթը, Հայկ Շեկյանի հայցը բավարարել է: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Փաստորեն, սույն գործով ստորադաս դատարաններն ըստ էության ապացուցված են համարել, որ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքով գործարքն անվավեր ճանաչելու համար Հայկ Շեկյանը չի ներկայացրել այնպիսի բավարար ապացույցներ, որոնցով կհիմնավորվեր, որ վիճելի գործարքը կնքվել է մյուս կողմի խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, կամ մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ, ինչն էլ հնարավոր կդարձներ սույն վեճի լուծման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի կիրառման հանգամանքը: Միաժամանակ, թե՛ Դատարանը՝ Հայկ Շեկյանի հայցը բավարարելիս, թե՛ Վերաքննիչ դատարանը՝ Մարինե Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժելիս, գտել են, որ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա 11.02.2015 թվականին Աննա Խաչատրյանի կողմից կատարվել է գործարք այն դեպքում, երբ նշված լիազորագրի գործողությունը դադարել է Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով:

Նման պայմաններում, սույն գործի փաստերի և վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 2-րդ կետով և 563-րդ հոդվածի 1-ին կետով օրենսդիրն ամրագրել է, որ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ այդ պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին՝ պետական գրանցման: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ և 449-րդ հոդվածի 3-րդ կետով հստակեցվել է, որ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա **պայմանագիրը կնքված է համարվում և ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից**, ուստի միայն այդ պահից սկսած է պետության կողմից ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը:

Փաստորեն, օրենսդիրը հստակեցրել է, որ կողմերի միջև ստորագրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կարող է համարվել կնքված, իսկ դրանից ծագող քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները կողմերի համար կարող են ունենալ իրավական հետևանքներ, եթե կատարված են հետևյալ պահանջները՝

1. պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման,

2. պայմանագրից բխող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման են ենթակա հետևյալ հարցադրումները.

1. արդյոք Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման, և

2. արդյոք նշված պայմանագրից ծագած՝ Հայկ Շեկյանի սեփականության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով հաստատվել է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրվել է Երևան քաղաքի, Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող 15,0 քմ ընդհանուր մակերեսով ավտոկայանատեղիի նկատմամբ առուվաճառքի պայմանագիր: Նշված պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանամատյանում թիվ 311 համարի ներքո: Գործի նյութերում, սակայն առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին նոտարական վավերացմամբ ձևակերպված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև անշարժ գույքի առուվաճառքի 05.02.2015 թվականի կնքված համարելու համար անհրաժեշտ **պայմաններից կատարվել է միայն մեկը՝** պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման, իսկ երկրորդ պայմանը՝ պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցումը, չի կատարվել:

Հիմք ընդունելով վերը կատարված վերլուծություններն առ այն, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, իսկ գնորդի մոտ պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է ծագած առուվաճառքի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքի պետական գրանցման պահից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականի առուվաճառքի պայմանագրի կնքման և դրանով իսկ վիճելի անշարժ գույքի նկատմամբ Հայկ Շեկյանի մոտ սեփականության իրավունքի ծագման պահ կարող էր հանդիսանալ բացառապես այդ պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահը: Ուստի, նկատի ունենալով, որ Հայկ Շեկյանի մոտ վիճելի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով նախատեսված սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցում տեղի չի ունեցել՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կողմերի միջև 05.02.2015 թվականին կնքված պայմանագիրն իրավական առումով չի կարող կնքված համարվել: Ավելին, ի տարբերություն Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև ձևակերպված պայմանագրի՝ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրով Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև կնքված պայմանագրից ծագած սեփականության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման:

Վերոգրյալի համատեքստում, պատասխանելով վերը նշված հարցադրմանն այն մասին, թե որ դեպքում և ինչ կարգով լիազորագիրը կարող է համարվել դադարած, միաժամանակ անդրադառնալով Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագրին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով Ռազմիկ Կարապետյանի անունից Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև առուվաճառքի պայմանագրի կնքման պահին Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի դադարած լինելու վերաբերյալ դատարանների փաստարկներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի և սույն գործի փաստերի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ նշված հոդվածի 1-ին կետով նախատեսված վավերապայմաններից Ռազմիկ Կարապետյանի կողմից լիազորագիրը **վերացնելը** կարող էր հիմք հանդիսանալ Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի գործողությունը դադարած որակելու համար:

Տվյալ դեպքում, սակայն գործի նյութերով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ վերացրել է իր կողմից Աննա Խաչատրյանին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը: Ավելին, գործով ձեռք

չի բերվել, որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետի և 325-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների պահպանմամբ, միջոցներ է ձեռնարկել լիազորագիրը նոտարական կարգով վերացնելու, ինչպես նաև՝ լիազորագրի վերացման մասին Աննա Խաչատրյանին և երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը, տեղեկացնելու վերաբերյալ:

Սույն պարագայում նշված ընթացակարգը պահպանելուց հետո միայն Ռազմիկ Կարապետյանը կարող էր համարել, որ լիազորագիրը վերացել է, իսկ Աննա Խաչատրյանը դադարել հանդես գալ որպես իր ներկայացուցիչ:

Քննարկվող պարագայում, սակայն, ինչպես նշվեց, այդ՝ միմյանց հետ փոխկապակցված գործողությունների կատարման վերաբերյալ որևէ ապացույց ձեռք չի բերվել: Հետևաբար՝ Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը չվերացնելու պայմաններում այն շարունակել է համարվել վավեր և պահպանել է իր գործողությունը՝ մինչև լիազորագրում տրված ժամկետը:

Նման պայմաններում, այն իրավունքների և պարտականությունների շրջանակը, որոնք ծագել են լիազորված անձի՝ Աննա Խաչատրյանի գործողությունների հետևանքով և մինչև այն պահը, երբ վերջինս իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար լիազորագրի դադարման մասին, շարունակել են պահպանել իրենց իրավաբանական ուժը լիազորագրողի՝ Ռազմիկ Կարապետյանի և նրա իրավահաջորդների համար՝ երրորդ անձանց նկատմամբ:

Այսպիսով, վերոգրյալի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

1. Աննա Խաչատրյանն ունեցել է լիազորություն Ռազմիկ Կարապետյանի անունից կնքելու վիճելի անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի պայմանագիր,

2. գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանն իր կողմից տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը վերացրել է նոտարական կարգով,

3. գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանն իր կողմից տրված լիազորագրի վերացման մասին տեղեկացրել է Աննա Խաչատրյանին, ինչպես նաև այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը:

Նման պայմաններում, առկա չէ լիազորության բացակայության հիմքով Աննա Խաչատրյանի անունից Մարինե Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հիմք, որի կապակցությամբ ոչ իրավաչափ եզրահանգման են եկել դատարանները: Հետևաբար վիճելի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջը ենթակա է մերժման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Միաժամանակ, եթե նույնիսկ դատարանները համարել են, որ սույն գործով առկա է լիազորագրի դադարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքը, ապա սույն գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռազմիկ Կարապետյանի ու Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված պայմանագիրը չի կարող համարվել կնքված՝ հաշվի առնելով այն, որ այդ պայմանագրից ծագած իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման: Նման պայմաններում Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագրով նախատեսված՝ գույքը վաճառելու վերաբերյալ գործողությունը կատարված համարվել չի կարող, այն ավարտին չհասցվելու և ըստ այդմ՝ Ռազմիկ Կարապետյանի սեփականության իրավունքը դադարած չլինելու հիմնավորմամբ: Հետևաբար, տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջը լիազորագրով նախատեսված գործողությունների իրականացման արդյունքում լիազորագրի գործողության դադարման հիմքը կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ վերլուծությունների հիման վրա Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ Հայկ Շեկյանի պահանջն անհիմն է: Նման պայմաններում մերժման են ենթակա նաև

Հայկ Շեկյանի կողմից ներկայացված մյուս՝ Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և նշված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջները՝ նկատի ունենալով, որ դրանք անձանցվում են հիմնական պահանջից և ներկայացվել են որպես պայմանագիրն անվավեր ճանաչելու հետևանք:

Վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարտնակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում

է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ Հայկ Շեկյանից հօգուտ Մարինե Խաչատրյանի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումարներ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայկ Շեկյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձման է ենթակա 10.000 ՀՀ դրամ՝ որպես երկու ոչ գույքային պահանջով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2016 թվականի վճռի դեմ Հայկ Շեկյանի ներկայացուցիչ Մոնիկա Հակոբյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2016 թվականի որոշմամբ չվճարված մասով հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայքը մերժել:

2. Հայկ Շեկյանից հօգուտ Մարինե Խաչատրյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումարներ:

Հայկ Շեկյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2016 թվականի որոշմամբ չվճարված մասով հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է ստնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԱԲԴ/2401/02/15 քաղաքացիական գործով 10.12.2020 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2020 թվականի դեկտեմբերի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով Մարինե Խաչատրյանի ներկայացուցիչ Վազգեն Թադևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Շեկյանի ընդդեմ Ռազմիկ Կարապետյանի, Մարինե Խաչատրյանի և Աննա Խաչատրյանի՝ պայմանագիրը և իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ նաև որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, Ռ. Հակոբյանս և Ն. Տավարացյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարմություն նշել է հերկյալը

«Դիմելով դատարան՝ Հայկ Շեկյանը պահանջել է անվավեր ճանաչել Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումը և նշված գույքի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշբարյան) 21.07.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահությամբ՝ Ա. Հունանյան, մասնակցությամբ՝ դատավորներ Կ. Հակոբյան, Ա. Սմբատյան) 09.11.2016 թվականի որոշմամբ Հայկ Շեկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2016 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.10.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.05.2018 թվականի որոշմամբ Մարինե Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.10.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարինե Խաչատրյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայկ Շեկյանը»:

2. Վճուարեկ դատարանը որպես վճուարեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 304-րդ հոդվածները, 325-րդ հոդվածի 2-րդ կետը, 449-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ վճուարեկ դատարանի թիվ ՎԳ3/0150/05/10 գործով կայացված որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ և 449-րդ հոդվածների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներից հետևում է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված պայմանագիրը կնքված համարվել չի կարող: Ոստի, նման հանգամանքը բացառում է Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սյուզաննա Նազիսյանի կողմից 17.10.2014 թվականի թիվ 3441 համարի տակ գրանցամատյանում գրանցված 17.10.2014 թվականի լիազորագրի գործողության դադարած լինելը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հայկ Շեկյանի և Ռազմիկ Կարապետյանի միջև ստորագրված պայմանագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանում չկա որևէ նշում այն մասին, որ Հայկ Շեկյանը վճարել է պայմանագրի գինը: Միաժամանակ սույն քաղաքացիական գործում ևս առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ պայմանագրի գինը վճարվել է:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ Դատարանում տեղի ունեցած գործի քննության ընթացքում հայցվորը չի վկայակոչել, հետևաբար նաև չի ապացուցել այն փաստը, որ Աննա Խաչատրյանը մինչև 11.02.2015 թվականի առուվաճառքի պայմանագիրը կնքելը տեղեկացված է եղել, որ 17.10.2014 թվականի լիազորագրի գործողությունը դադարեցված է եղել: Նույն կերպ, հայցվորը չի հիմնավորել, որ Մարինե Խաչատրյանը մինչև 11.02.2015 թվականի առուվաճառքի պայմանագիրը կնքելը տեղեկացված է եղել, որ իր հետ պայմանագիր կնքող անձին Աննա Խաչատրյանին 17.10.2014 թվականին տրված լիազորագրի գործողությունը դադարեցված է եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել»:

2.1 Վճուարեկ դատարանը որպես վճուարեկ բողոքի պարասխանի հիմնավորումներ նշել է հետևյալը

«Բողոք բերած անձը չի հիմնավորել, թե հատկապես ինչպիսի դատավարական կամ նյութական իրավունքի նորմերի խախտումներ են թույլ տրվել, այն պարագայում, երբ երեք տարբեր դատարաններ, քննելով նույն գործը, հանգել են միևնույն եզրակացության:

Ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են օրենքի պահանջներին համապատասխան և օրինական են: Դատարանները թույլ չեն տվել դատավարական կամ նյութական իրավունքի նորմերի խախտում»:

3. Վճուարեկ դատարանը որպես վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«1) Համաձայն 17.10.2014 թվականի լիազորագրի՝ Ռազմիկ Կարապետյանն Աննա Խաչատրյանին լիազորել է, ի թիվս այլնի, իր հայեցողությամբ և ցանկացած գնով վաճառել Երևան քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 23 հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող բաժինը և Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղին: Լիազորագիրը տրվել է երեք տարի ժամկետով: Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սյուզաննա Նազիսյանի կողմից լիազորագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել գրանցամատյանում թիվ 3441 համարի ներքո (**հատոր 2-րդ, գ.թ. 120**):

2) Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի «ա» կետի համաձայն՝ «վաճառողը

վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում անշարժ գույք՝ 15.0 քմ ընդհանուր մակերեսով ավտոկայանատեղի (օբյեկտ), գտնվող ՀՀ քաղ. Երևան, Վ.Համբարձումյան փողոց 119 շենքի թիվ 20 հասցեում»։ Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանամատյանում թիվ 311 համարի ներքո (**հատոր 2-րդ, գ.թ. 116-117**):

3) Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված, Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սյուզաննա Նազիյանի կողմից 17.10.2014 թվականին հաստատված, թիվ 3441 համարի ներքո գրանցամատյանում գրանցված լիազորագրի հիման վրա՝ Աննա Խաչատրյանը Մարինե Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Աննա Խաչատրյանը վաճառում է, իսկ Մարինե Խաչատրյանը որպես սեփականություն ձեռք է բերում Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը բաղկացած է 15.0 քմ մակերեսով ավտոկայանատեղիից։ Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով և գրանցվել գրանցամատյանում՝ թիվ 274 համարի ներքո (**հատոր 2-րդ, գ.թ. 118-119**):

4) Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16022015-01-0109 վկայականի՝ Երևան, Արաբկիր, Վ.Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղի հասցեի անշարժ գույքը 11.02.2015 թվականի թիվ 274 առուվաճառքի պայմանագրի հիման վրա 16.02.2015 թվականին գրանցվել է Մարինե Սուրիկի Խաչատրյանի անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

5) Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացումից հետո դրանից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել»:

4. Վճարել դատարանը որպես Վճարել դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 449-րդ և 325-րդ հոդվածների խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների այնպիսի հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

Սեփականատիրոջ կողմից տրված լիազորագիրը կարող է արդյոք վերացված համարվել, իսկ այդ լիազորագրով կատարված գործարքը և դրանից ծագած իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչվել, եթե մինչև այդ լիազորագրով նախատեսված գործարքի կնքումը, գույքի սեփականատերը երրորդ անձի հետ նոտարական կարգով ձևակերպվել է առուվաճառքի պայմանագիր, սակայն չի կատարվել դրանից ծագող իրավունքների պետական գրանցում:

Վերոգրյալ հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է պարզաբանել, թե

1. *ո՞ր պահից է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում կնքված, ո՞րն է պայմանագրով գույք ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման պահը, և որ դեպքում պայմանագիրն ու դրանից ծագած իրավունքի պետական գրանցումը կարող են ճանաչվել անվավեր,*

2. *ո՞ր դեպքում և ի՞նչ կարգով լիազորագիրը կարող է համարվել դադարած:*

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի համաձայն 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450 հոդվածի 3-րդ կետ): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին ենթակա է պետական գրանցման: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցումն անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կատարելը հիմք չէ այդ պայմանագրի կողմերի հետ երրորդ անձանց ունեցած հարաբերությունների փոփոխման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն

հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկով արձանագրել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքված համարելու համար քավարար չէ կողմերի ստորագրությամբ դրա բոլոր էական պայմաններին համաձայնվելը և նոտարական վավերացման ենթարկելը: Պայմանագիրը կնքված է համարվում պայմանագրից ծագող իրավունքները՝ տվյալ դեպքում անշարժ գույքի սեփականության իրավունքը, գրանցելու պահից: Այսինքն, նման իրավիճակներում պայմանագրի կնքման և դրանից ծագող իրավունքի պետական գրանցման պահերը համընկնում են *(լրեն Արմեն Շահբաղյան և Քրիստինա Տոնոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի փարածքային ստորաբաժանանն թիվ 3-65(ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի հետ կապված գործարքների համար օրենսդիրը սահմանել է հետևյալ հատուկ պահանջները՝ նոտարական կարգով վավերացող պայմանագիր և դրանից բխող իրավունքների պետական գրանցում: Բացառապես այս պայմանների կատարման արդյունքում են պայմանագրի կողմերի համար առաջանում քաղաքացիական-իրավական իրավունքներ և պարտականություններ: Ընդ որում, ի տարբերություն այլ պայմանագրերի, այն պայմանագրերի համար, որոնցից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, օրենսդիրը տվել է պայմանագրի կնքման պահը որոշելու այլ կարգավորում, որը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի կարգավորումից, այսինքն՝ պայմանագիրը կնքված է համարվում, իսկ գործարքը վավեր՝ իրավունքի պետական գրանցման պահից: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ անշարժ գույքի հետ կապված գործարքները վավեր են, իսկ անշարժ գույքին առնչվող պայմանագրերը կնքված են համարվում իրավունքների պետական գրանցման պահից: Այսինքն՝ մինչև իրավունքների պետական գրանցումը չի կարող լինել վավեր գործարք և կնքված պայմանագիր *(լրեն Դավիթ Խաչարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի փարածքային ստորաբաժանանն թիվ ՎԳ3/0150/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագումն անմիջականորեն կապված է գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման կարգի պահպանման հետ: Այսինքն, որպեսզի անշարժ գույքը ձեռք բերողի մոտ ծագի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ է ձեռք բերվող գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքը ենթարկել պետական գրանցման: Միայն այս պահանջի կատարումից հետո է պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը կոնկրետ գույքի նկատմամբ: Ուստի, քանի դեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը կատարված չէ, պայմանագրի առարկա անշարժ գույքը ձեռք բերողն օրենքի իմաստով չի կարող ակնկալել պետության կողմից կոնկրետ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի պաշտպանություն:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վերը վկայակոչված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ շարժական գույքի առուվաճառքի վերաբերյալ կողմերի միջև ձեռքբերված համաձայնությունը՝ պայմանագիրը, համարվում է կնքված համապատասխան գույքը հանձնելու պահից (եթե դրա համար օրենսդիրը չի նախատեսել իրավունքի պետական գրանցում), մինչդեռ անշարժ գույքի դեպքում գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքված համարելու համար հարկավոր է առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացում և իրավունքի պետական գրանցում, և արդեն իրավունքի պետական գրանցման պահից սկսած է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված: Այլ կերպ ասած՝ **անշարժ**

գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքված համարելու համար բավարար չէ կողմերի ստորագրությամբ դրա բոլոր էական պայմաններին համաձայնելը և պայմանագիրը նոտարական վավերացման ենթարկելը, քանի որ պայմանագիրը **կնքված է համարվում դրանից ծագող իրավունքները**, տվյալ դեպքում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը, **պետական գրանցման ենթարկելու պահից**: Ընդ որում, օրենսդիրը հստակեցրել է, որ անշարժ գույքի նկատմամբ ծագած սեփականության իրավունքը պետք է պետական գրանցման ներկայացվի 30 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նշված գույքի նկատմամբ գործարքը ենթարկվել է նոտարական վավերացման:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, իսկ գնորդի մոտ պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է ծագած առուվաճառքի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքի պետական գրանցման պահից: Ուստի, քանի դեռ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցում տեղի չի ունեցել, անկախ կողմերի միջև առուվաճառքով կատարված գործողությունների ծավալից, այդ պայմանագիրն ինքնին չի կարող գույքը ձեռք բերողի մոտ առաջացնել սեփականության իրավունք՝ որպես պայմանագրից բխող իրավական հետևանք:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ գլխով օրենսդիրը կարգավորվել է «Ներկայացուցչություն» վերտառությամբ լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով մեկ անձի կողմից ուրիշ անձի անունից հանդես գալու, գործարքներ կնքելու, քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ստանձնելու կարգը և առանձնահատկությունները:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորագրողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորագրողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) (*տես Վարդուշ Դազարյանն ընդդեմ Գևորգ Դազարյանի թիվ ԼԿ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ լիազորվողն օգտվում է լիազորագրի շրջանակներում լիազորագրողի կողմից իրեն վերապահված գործողություններ կատարելու իրավունքից, որը հստակ ձևակերպվում է լիազորագրի բովանդակությունում և երրորդ անձանց հնարավորություն է տալիս հստակ եզրակացնել, թե լիազոր ներկայացուցիչն ինչպիսի իրավազորությամբ է օժտված (*տես «Վաղարշ և որդիներ Կոնցենս»*):

ՄՊԸ-ն ընդդեմ Մարինա Հայրապետյանի, Կարեն, Վարդգես, Ինա Եղիազարյանների և Անայա Բագրատունու թիվ ԵԿԻ/1769/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավանդումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լիազորագիրը միակողմանի գործարք է, որով սահմանվում են ներկայացուցչի իրավունքները, լիազորությունների շրջանակը, ինչպես նաև լիազորագրողի անունից երրորդ անձանց հետ հարաբերությունների մեջ մտնելու այլ պայմանները: Օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածով սահմանելով լիազորագրի գործողության ժամկետին վերաբերող ընդհանուր դրույթներ, միաժամանակ նույն օրենսգրքի 324-րդ հոդվածում անդրադարձել է նաև լիազորագրի գործողության դադարման հիմքերին:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝

- 1) լիազորագրի ժամկետը լրացել է.
- 2) իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները.
- 3) լիազորագրողը վերացրել է այն.
- 4) անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել է.
- 5) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը.
- 6) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունով տրվել է լիազորագիրը.
- 7) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.
- 8) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ում տրվել է լիազորագիրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրվել է այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնցից որևէ մեկի վրա հասնելու դեպքում դադարում է լիազորագրի գործողությունը: Ընդ որում, այդ իրավանդումը հանդիսանում է բացարձակ որոշակի. դրանում սպառիչ կերպով թվարկվել են լիազորագրի դադարման հիմք հանդիսացող պայմանները, որոնք չեն կարող կամայական ընդլայնման ենթարկվել: Ուստի, հիմք ընդունելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետով թվարկված դեպքերը ոչ այլ ինչ են, քան օրենսդրի կողմից նախատեսված իրավաբանական փաստեր, որոնց հետ վերջինս կապել է լիազորագրի գործողության դադարումը: Այսինքն՝ այդ փաստերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում է միայն լիազորագիրը դադարում, և լիազորված անձն այլևս իրավասու չի լինում ներկայացնել լիազորագրողի շահերը:

Վերը շարադրված վերլուծությունը տարածելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Լիազորագրով նախատեսված գործողությունների իրականացված լինելն օրենսդիրը որակել է որպես ինքնուրույն իրավաբանական փաստ, որի ուժով դադարում է լիազորագրի գործողությունը: Ընդ որում, օրենսդիրը չի տարբերակել, թե ում կողմից է իրականացվել լիազորագրով նախատեսված գործողությունը՝ լիազորողի, լիազորվածի, թե օրենքով նախատեսված այլ անձի կողմից: Տվյալ դեպքում, չառանձնացնելով իրավունքի սուբյեկտին, օրենսդիրն այդ հիմքով լիազորագրի դադարման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում ամրագրված հիպոթեզում, որպես իրավաբանական փաստ, բացառապես սահմանել է լիազորագրով նախատեսված գործողության իրականացված լինելու իրավաբանական փաստի առկայությունը: Այդ կապակցությամբ հարկ է բացահայտել «իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները» բառակապակցությունը:

Քննարկվող պարագայում այդ բառակապակցությունն իր մեջ ներառում է երեք միմյանց հետ փոխկապակցված՝

1. գործողություններ,

2. գործողություններ՝ սահմանված լիազորագրով,
3. գործողություններ, որոնք պետք է լինեն իրականացված:

Տվյալ դեպքում, գործողությունը, որպեսզի հանդես գա լիազորագրի դադարման համար բավարար իրավաբանական փաստ, պետք է ոչ միայն նախատեսված լինի լիազորագրով, այլև լինի կատարված: Այդ առումով, եթե գործողության էությունը բացահայտվում է լիազորագրում նշված իրավական հետևանքներ առաջ բերող արարքների բովանդակությամբ, ապա այդ գործողության կատարված լինելը բացահայտվում է այն իրավական հետևանքների վրա հասած լինելու հանգամանքով, որի համար տրվել էր լիազորագիր:

Քննարկվող պարագայում, առուվաճառքի լիազորագրի բովանդակությունը կազմում է լիազորագրում սահմանված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման վերաբերյալ լիազորողի անունից պայմանագրի կնքման գործողությունը, իսկ այդ գործողության իրականացված լինելը դրսևորվում է առուվաճառքի պայմանագրի կնքված լինելու իրողությամբ:

Այն բոլոր դեպքերում, երբ լիազորագրի բովանդակությունը կազմում է անշարժ գույքի օտարման պայմանագրի կնքման գործընթացը, ապա նման լիազորագրի դադարման համար, որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառման իրավաբանական փաստ, հանդես է գալիս անշարժ գույքի նկատմամբ օտարման պայմանագրի կնքված լինելու հանգամանքը: Այսինքն, երբ պահպանվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառության իրավական կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լիազորագրողի կողմից լիազորագիրը վերացնելն օրենսդիրը որակել է որպես ինքնուրույն իրավաբանական փաստ, որի ուժով կարող է դադարել լիազորագրի գործողությունը: Ուստի, լիազորագիրը վերացնելու պահից սկսած ներկայացվողի մոտ դադարում է նաև լիազորագրով սահմանված իրավական վիճակը: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիազորագրողն իրավասու է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը (վերալիազորագիրը):

Օրենսդիրը կարգավորել է նաև լիազորագրի վերացման իրավական մեխանիզմը: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիրը վերացնելը կատարվում է նոտարական կարգով: Այս իրավանորմից հետևում է, որ լիազորագիրը վերացնելու վերաբերյալ լիազորագրողի կամահայտնությունը դեռևս չի կարող հիմք հանդիսանալ նոտարական կարգով տրված լիազորագրի գործողությունը դադարած որակելու համար, քանի դեռ պահպանված չէ այդ կամահայտնությունը նոտարական ձևակերպման ենթարկելու օրենսդրի պահանջը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոտարական կարգով տրված լիազորագրի վերացման հիմքով դադարման իրավաբանական փաստը վրա է հասնում միայն լիազորագրի վերացմանը նոտարական կարգով ձևակերպում տալու պահից: Տվյալ դեպքում, վճռորոշ նշանակություն է ձեռք բերում նոտարական կարգով լիազորագրի վերացման իրավական կարգավորումը: Ըստ այդմ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է լիազորագրի վավերացման ընթացակարգը, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին կետով սահմանվել է, որ նոտարը վավերացնում է լիազորագիրը մեկ կամ մի քանի անձանց անունից մեկ կամ մի քանի անձանց անունով, իսկ 5-րդ կետով ամրագրվել է, որ լիազորագիրը վավերացնելուց հետո նոտարն այն մուտքագրում է լիազորագրերի առցանց շտեմարան: Նշված հոդվածի 6-րդ կետով սահմանվել է, որ լիազորագրից հրաժարվելու կամ լիազորագիրը դադարեցնելու մասին դիմում ստանալու դեպքում նոտարը համապատասխան տվյալները մուտքագրում է լիազորագրերի առցանց շտեմարան:

Հարկ է նշել, որ լիազորագրողի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ լիազորագիրը վերացնելն ինքնին առաջ չի բերում լիազորված անձի կողմից լիազորագրով տրված իրավական վիճակի դադարում: Մասնավորապես՝ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրել է, որ լիազորագիր տված և այն հետագայում վերացրած անձը

պարտավոր է դրա վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև իրեն հայտնի երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրված է լիազորագիրը: (...) Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ լիազորագիր տված և հետագայում այն վերցրած անձին օրենսդիրը ներկայացրել է իմպերատիվ պահանջ՝ դրա վերացման մասին տեղեկացնել ինչպես լիազորագիրն ստացած անձին, այնպես էլ այն երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչություն է իրականացնելու լիազորագիրն ստացած անձը: Այսինքն՝ չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվել է, որ նոտարական կարգով տրված լիազորագրի գործողությունը համարվում է դադարած՝ վերացումը նոտարական կարգով ձևակերպելուց հետո, այդուհանդերձ, որպեսզի լիազորագրի դադարման հետևանքները լիազորված անձի համար վրա հասնեն, անհրաժեշտ է, որ լիազորագրի վերացման մասին լիազորագրողը տեղեկացնի ինչպես լիազորված անձին, այնպես էլ այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած իրավունքները և պարտականությունները, որոնք ծագել են մինչև այն պահը, երբ նա իմացել է կամ պետք է իմանար լիազորագիրը դադարելու մասին, պահպանում են իրենց ուժը լիազորագրողի և նրա իրավահաջորդների համար երրորդ անձանց նկատմամբ: Այս կանոնը չի կիրառվում, եթե երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

Նշված իրավանորմի դիսպոզիցիան սահմանում է, որ լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած իրավունքները և պարտականությունները պահպանում են իրենց իրավական ուժը միայն նույն իրավանորմի հիպոթեզում ամրագրված վավերապայմանների առկայության դեպքում: Այդ վավերապայմանները հետևյալն են.

1. լիազորագրով առաջ եկած իրավունքները և պարտավորությունները ծագել են լիազորագրի դադարման վերաբերյալ տեղեկացված լինելուն նախորդած ժամանակահատվածում,

2. լիազորագրով առաջ եկած իրավունքները և պարտականությունները ծագել են մինչև այն ժամանակահատվածը, երբ լիազորված անձը լիազորագրի դադարման մասին տեղեկացված չի եղել, սակայն օբյեկտիվորեն պետք է այդ մասին իրազեկված լիներ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ օրենսդիրը լիազորագրի դադարման իրավական հետևանքներն ուղղակիորեն պայմանավորել է դադարման վերաբերյալ լիազորված անձի իրազեկվածության իրավաբանական փաստի վրա հասնելու հանգամանքով:

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ ու 325-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը՝ կարելի է արձանագրել, որ այն դեպքում, երբ լիազորագրողը որոշում է դադարեցնել նոտարական կարգով վավերացված լիազորագրի գործողությունը, ապա պարտավոր է կատարել հետևյալ միմյանց հետ փոխկապակցված գործողությունները, մասնավորապես՝

1. լիազորագիրը վերացնել նոտարական կարգով,

2. լիազորագրի վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը:

Հակառակ պարագայում, այն իրավունքների և պարտականությունների շրջանակը, որոնք ծագել են լիազորված անձի գործողությունների հետևանքով և մինչև այն պահը, երբ վերջինս իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերից որևէ մեկով լիազորագրի դադարման մասին, շարունակում են պահպանել իրենց իրավաբանական ուժը լիազորագրողի և նրա իրավահաջորդների համար՝ երրորդ անձանց նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ երրորդ անձը գիտեր կամ օբյեկտիվորեն պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստաթղթի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ռագմիկ Կարապետյանը, 17.10.2014 թվականին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագրով, ի թիվս այլնի, լիազորել է Աննա Խաչատրյանին իր հայեցողությամբ և ցանկացած գնով վաճառել Երևան քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 23 հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող բաժինը և Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղին:

Ռագմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի հիման վրա՝ Աննա Խաչատրյանը Մարինե Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Աննա Խաչատրյանը վաճառում է, իսկ Մարինե Խաչատրյանը որպես սեփականատերություն ձեռք է բերում Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը բաղկացած է 15.0 քմ մակերեսով ավտոկայանատեղիից: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով և գրանցվել գրանցամատյանում՝ թիվ 274 համարի ներքո:

Այնուհետև, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16022015-01-0109 վկայականի՝ Երևան, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղի հասցեի անշարժ գույքը 11.02.2015 թվականի թիվ 274 առուվաճառքի պայմանագրի հիման վրա 16.02.2015 թվականին գրանցվել է Մարինե Սուրիկի Խաչատրյանի անվամբ:

Ռագմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կազմվել ու ստորագրվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի «ա» կետի համաձայն՝ «վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում անշարժ գույք՝ 15.0 քմ ընդհանուր մակերեսով ավտոկայանատեղի (օբյեկտ), գտնվող ՀՀ քաղ. Երևան, Վ. Համբարձումյան փողոց 119 շենքի թիվ 20 հասցեում»: Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանանատյանում թիվ 311 համարի ներքո: Պայմանագրի նոտարական վավերացումից հետո դրանից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Հայկ Շեկյանի հայցի հիման վրա, որով վերջինս, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 313-րդ հոդվածների դրույթները, պահանջել է անվավեր ճանաչել Ռագմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումը և ճանաչել նշված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը:

Դատարանի 06.10.2017 թվականի վճռով բավարարվել է Հայկ Շեկյանի հայցը՝ այն պատճառաբանությամբ, որ Աննա Խաչատրյանի կողմից Մարինե Սուրիկի Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին առուվաճառքի պայմանագիր կնքելիս Աննա Խաչատրյանի մոտ բացակայել է նշված գործարքը ստորագրելու լիազորությունը, քանի որ 17.10.2014 թվականին Ռագմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը 05.02.2015 թվականից, այսինքն՝ Ռագմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև վեճի առարկա գույքի կապակցությամբ առուվաճառքի պայմանագիր կնքելու և նոտարական վավերացում տալու պահից, դադարել էր: Հետևաբար, Դատարանն անվավեր է ճանաչել Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված Երևան քաղաքի Համբարձումյան փողոցի 119 շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղիի առուվաճառքի պայմանագիրը, վերացրել վեճի առարկա գույքի նկատմամբ Մարինե Խաչատրյանի անվամբ կատարված պետական գրանցումը և ճանաչել Հայկ Շեկյանի սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է Մարինե Խաչատրյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 06.10.2017 թվականի վճիռը թողել է օրինական ուժի մեջ այն հիմնավորմամբ, որ Հայկ Շեկյանը 05.12.2015 թվականի առուվաճառքի

պայմանագրով ձեռք է բերել վեճի առարկա գույքը, իսկ վաճառող Ռազմիկ Կարապետյանն իր իրավունքը փոխանցել, օտարել է գնորդին՝ չպահպանելով այդ գույքի նկատմամբ որևէ գույքային, այդ թվում նաև՝ սեփականության իրավունք: Այսինքն, չունենալով գույքի ճակատագիրը որոշելու իրավունք՝ Ռազմիկ Կարապետյանը չէր կարող լիազորագրով օտարման իրավունքը փոխանցել ներկայացուցչին, իսկ նախկինում տրված լիազորագիրը գույքի օտարման պայմաններում դադարում է, հետևաբար, նույն գույքը չէր կարող երկրորդ անգամ օտարվել: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև առուվաճառքի պայմանագիրն ստորագրվել է 05.02.2015 թվականին, որը նույն օրը ենթարկվել է նոտարական վավերացման: Ուստի, Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ պայմանագրի կողմերը պայմանագրից ծագող իրավունքները կարող էին ենթարկել պետական գրանցման ներառյալ 06.03.2015 թվականը: Այսպիսով, Հայկ Շեկյանն օրինական սպասելիք ուներ վեճի առարկա գույքի նկատմամբ, քանի որ դրա նկատմամբ իր իրավունքները ենթակա են եղել պետական գրանցման առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուրյա ժամկետում:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործով, ինչպես արդեն վերը նշվեց, հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 313-րդ հոդվածների հիմքով, որով Հայկ Շեկյանը պահանջել է անվավեր ճանաչել Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց, 119-րդ շենք, թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումը և ճանաչել նշված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2016 թվականի վճռով մերժելով հայցը՝ արձանագրել է, որ հայցվորը չի ապացուցել, որ թե իր և թե Մարինե Խաչատրյանի մասնակցությամբ գործարքներ կնքելիս վաճառողը կամ վերջինիս լիազորված անձը դրանք ստորագրել են խաբեությամբ, հայցվորը չի պարզաբանել թե ինչու է կայանում խաբեությունը և որն էր գնորդ Մարինե Խաչատրյանի խաբելու նպատակը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 09.11.2016 թվականի որոշմամբ Հայկ Շեկյանի վերաքննիչ բողոքը բավարարել է և գործն ուղարկել նոր քննության՝ ըստ էության սահմանել է գործի նոր քննության ծավալը: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա 11.02.2015 թվականին Աննա Խաչատրյանի կողմից կատարվել է գործարք այն դեպքում, երբ նշված լիազորագրի գործողությունը դադարել է Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով:

Այնուհետ, Դատարանը գործը քննել և 06.10.2017 թվականին վճիռ է կայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.11.2016 թվականի որոշմամբ տրված գործի նոր քննության ծավալի շրջանակներում: Արդյունքում՝ Դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթը, Հայկ Շեկյանի հայցը բավարարել է: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Փաստորեն, սույն գործով ստորադաս դատարաններն ըստ էության ապացուցված են համարել, որ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքով գործարքն անվավեր ճանաչելու համար Հայկ Շեկյանը չի ներկայացրել այնպիսի բավարար ապացույցներ, որոնցով կհիմնավորվեր, որ վիճելի գործարքը կնքվել է մյուս կողմի խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, կամ մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ, ինչն էլ հնարավոր կդարձներ սույն վեճի լուծման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի կիրառման

հանգամանքը: Միաժամանակ, թե՛ Դատարանը՝ Հայկ Շեկյանի հայցը բավարարելիս, թե՛ Վերաքննիչ դատարանը՝ Մարինե Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժելիս, գտել են, որ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա 11.02.2015 թվականին Աննա Խաչատրյանի կողմից կատարվել է գործարք այն դեպքում, երբ նշված լիազորագրի գործողությունը դադարել է Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով:

Նման պայմաններում, սույն գործի փաստերի և վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 2-րդ կետով և 563-րդ հոդվածի 1-ին կետով օրենսդիրն ամրագրել է, որ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ այդ պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին՝ պետական գրանցման: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ և 449-րդ հոդվածի 3-րդ կետով հստակեցվել է, որ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա **պայմանագիրը կնքված է համարվում և ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից**, ուստի միայն այդ պահից սկսած է պետության կողմից ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը:

Փաստորեն, օրենսդիրը հստակեցրել է, որ կողմերի միջև ստորագրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կարող է համարվել կնքված, իսկ դրանից ծագող քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները կողմերի համար կարող են ունենալ իրավական հետևանքներ, եթե կատարված են հետևյալ պահանջները՝

1. պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման,

2. պայմանագրից բխող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման են ենթակա հետևյալ հարցադրումները.

1. արդյոք Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման, և

2. արդյոք նշված պայմանագրից ծագած՝ Հայկ Շեկյանի սեփականության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով հաստատվել է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրվել է Երևան քաղաքի, Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող 15,0 քմ ընդհանուր մակերեսով ավտոկայանատեղիի նկատմամբ առուվաճառքի պայմանագիր: Նշված պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանամատյանում թիվ 311 համարի ներքո: Գործի նյութերում, սակայն առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին նոտարական վավերացմամբ ձևակերպված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև անշարժ գույքի առուվաճառքի 05.02.2015 թվականի կնքված համարելու համար անհրաժեշտ **պայմաններից կատարվել է միայն մեկը՝** պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման, իսկ երկրորդ պայմանը՝ պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցումը, չի կատարվել:

Հիմք ընդունելով վերը կատարված վերլուծություններն առ այն, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված, իսկ գնորդի մոտ պայմանագրի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է ծագած առուվաճառքի պայմանագրի առարկա գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքի պետական գրանցման պահից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականի առուվաճառքի պայմանագրի կնքման և դրանով իսկ վիճելի անշարժ գույքի նկատմամբ Հայկ Շեկյանի մոտ

սեփականության իրավունքի ծագման պահ կարող էր հանդիսանալ բացառապես այդ պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահը: Ուստի, նկատի ունենալով, որ Հայկ Շեկյանի մոտ վիճելի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով նախատեսված սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցում տեղի չի ունեցել՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կողմերի միջև 05.02.2015 թվականին կնքված պայմանագիրն իրավական առումով չի կարող կնքված համարվել: Ավելին, ի տարբերություն Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև ձևակերպված պայմանագրի՝ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրով Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև կնքված պայմանագրից ծագած սեփականության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման:

Վերոգրյալի համատեքստում, պատասխանելով վերը նշված հարցադրմանն այն մասին, թե որ դեպքում և ինչ կարգով լիազորագիրը կարող է համարվել դադարած, միաժամանակ անդրադառնալով Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագրին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով Ռազմիկ Կարապետյանի անունից Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև առուվաճառքի պայմանագրի կնքման պահին Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի դադարած լինելու վերաբերյալ դատարանների փաստարկներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի և սույն գործի փաստերի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ նշված հոդվածի 1-ին կետով նախատեսված վավերապայմաններից Ռազմիկ Կարապետյանի կողմից լիազորագիրը *վերացնելը* կարող էր հիմք հանդիսանալ Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի գործողությունը դադարած որակելու համար:

Տվյալ դեպքում, սակայն գործի նյութերով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ վերացրել է իր կողմից Աննա Խաչատրյանին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը: Ավելին, գործով ձեռք չի բերվել, որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետի և 325-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների պահպանմամբ, միջոցներ է ձեռնարկել լիազորագիրը նոտարական կարգով վերացնելու, ինչպես նաև՝ լիազորագրի վերացման մասին Աննա Խաչատրյանին և երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը, տեղեկացնելու վերաբերյալ:

Սույն պարագայում նշված ընթացակարգը պահպանելուց հետո միայն Ռազմիկ Կարապետյանը կարող էր համարել, որ լիազորագիրը վերացել է, իսկ Աննա Խաչատրյանը դադարել հանդես գալ որպես իր ներկայացուցիչ:

Քննարկվող պարագայում, սակայն, ինչպես նշվեց, այդ՝ միմյանց հետ փոխկապակցված գործողությունների կատարման վերաբերյալ որևէ ապացույց ձեռք չի բերվել: Հետևաբար Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը չվերացնելու պայմաններում այն շարունակել է համարվել վավեր և պահպանել է իր գործողությունը՝ մինչև լիազորագրում տրված ժամկետը:

Նման պայմաններում, այն իրավունքների և պարտականությունների շրջանակը, որոնք ծագել են լիազորված անձի՝ Աննա Խաչատրյանի գործողությունների հետևանքով և մինչև այն պահը, երբ վերջինս իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար լիազորագրի դադարման մասին, շարունակել են պահպանել իրենց իրավաբանական ուժը լիազորագրողի՝ Ռազմիկ Կարապետյանի և նրա իրավահաջորդների համար՝ երրորդ անձանց նկատմամբ:

Այսպիսով, վերոգրյալի համապատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

1. Աննա Խաչատրյանն ունեցել է լիազորություն Ռազմիկ Կարապետյանի անունից կնքելու վիճելի անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի պայմանագիր,

2. գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանն իր կողմից տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը վերացրել է նոտարական կարգով,

3. գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանն իր կողմից տրված լիազորագրի վերացման մասին տեղեկացրել է Աննա Խաչատրյանին, ինչպես նաև այն երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը:

Նման պայմաններում, առկա չէ լիազորության բացակայության հիմքով Աննա Խաչատրյանի անունից Մարինե Խաչատրյանի հետ 11.02.2015 թվականին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հիմք, որի կապակցությամբ ոչ իրավաչափ եզրահանգման են եկել դատարանները: Հետևաբար վիճելի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջը ենթակա է մերժման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Միաժամանակ, եթե նույնիսկ դատարանները համարել են, որ սույն գործով առկա է լիազորագրի դադարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքը, ապա սույն գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռազմիկ Կարապետյանի ու Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված պայմանագիրը չի կարող համարվել կնքված՝ հաշվի առնելով այն, որ այդ պայմանագրից ծագած իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման: Նման պայմաններում Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագրով նախատեսված՝ գույքը վաճառելու վերաբերյալ գործողությունը կատարված համարվել չի կարող, այն ավարտին չհասցվելու և ըստ այդմ՝ Ռազմիկ Կարապետյանի սեփականության իրավունքը դադարած չլինելու հիմնավորմամբ: Հետևաբար, տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ լիազորագրով նախատեսված գործողությունների իրականացման արդյունքում լիազորագրի գործողության դադարման հիմքը կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ վերլուծությունների հիման վրա Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ Հայկ Շեկյանի պահանջն անհիմն է: Նման պայմաններում մերժման են ենթակա նաև Հայկ Շեկյանի կողմից ներկայացված մյուս՝ Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և նշված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջները՝ նկատի ունենալով, որ դրանք ածանցվում են հիմնական պահանջից և ներկայացվել են որպես պայմանագրին անվավեր ճանաչելու հետևանք:

Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում

քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը»:

Վճռաբեկ դատարանի դարավոր Գ. Հակոբյան, Ռ. Հակոբյան և Ն. Տախարացյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման պարճատարանական և եզրահանգիչ մասերում Վճռաբեկ դատարանի դարավորների մեծամասնության կողմից արքայապարված կարծիքի հետ, շարադրում ենք մեր հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 364-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառել, կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառել, սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հիմքով վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենսգրքի 364-րդ հոդվածի իմաստով՝ նյութական իրավունքի նորմերի խախտման առումով այդպիսի խախտում, իսկ դրա արդյունքում՝ դատական ակտի բեկանման հիմք է համարում նյութական իրավունքի նորմերի այնպիսի խախտումը կամ դրանց սխալ կիրառումը, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բացառապես պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ արձանագրելով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել արդարադատության

բուն էությունը խաթարող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 449-րդ և 325-րդ հոդվածների խախտում, ու Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել է և փոփոխել՝ հայցը մերժել է:

Դրանից ելնելով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բացառապես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններին՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանցում նշվածները կարող էին բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանին արդարադատության բուն էությունը խաթարող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 449-րդ և 325-րդ խախտում վերագրելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի համաձայն բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցում Վճռաբեկ դատարանը չի համաձայնվել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել է և փոփոխել՝ հայցը մերժել է, ըստ էության, հետևյալ շարժառիթներով՝

1) չնայած Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված առուվաճառքի պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման, սակայն առկա չէ որևէ ապացույց այդ պայմանագրից ծագած իրավունքները պետական գրանցման ենթարկված լինելու վերաբերյալ, այսինքն՝ նշված պայմանագիրը կնքված համարելու համար անհրաժեշտ պայմաններից կատարվել է միայն մեկը, որի պայմաններում այն չի կարող համարվել կնքված:

2) ի տարբերություն Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև ձևակերպված պայմանագրի՝ Ռազմիկ Կարապետյանի կողմից տրված լիազորագրով Աննա Խաչատրյանի և Մարինե Խաչատրյանի միջև կնքված պայմանագրից ծագած սեփականության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման:

3) գործի նյութերով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ վերացրել է իր կողմից Աննա Խաչատրյանին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը, կամ նույն օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետի և 325-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների պահպանմամբ միջոցներ է ձեռնարկել լիազորագիրը նոտարական կարգով վերացնելու, ինչպես նաև՝ լիազորագրի վերացման մասին Աննա Խաչատրյանին և երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը, տեղեկացնելու վերաբերյալ:

4) Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը չվերացվելու պայմաններում այն շարունակել է համարվել վավեր և պահպանել է իր գործողությունը՝ մինչև լիազորագրում տրված ժամկետը:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը Հայկ Շեկյանի պահանջները՝ կապված Ռազմիկ Կարապետյանի և Մարինե Խաչատրյանի միջև 11.02.2015 թվականին կնքված թիվ 274 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 ավտոկայանատեղիի նկատմամբ իրավունքի 16.02.2015 թվականի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու նշված գույքի նկատմամբ Հայկ Շեկյանի սեփականության իրավունքը ճանաչելու հետ, անհիմն է համարել, ըստ էության, այն պատճառաբանությամբ, որ՝

1) ի տարբերություն Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի, որը բացառապես ենթարկվել է նոտարական վավերացման, Ռազմիկ Կարապետյանի, որի անունից հանդես է եկել Աննա Խաչատրյանը՝ որպես ներկայացուցիչ, և Մարինե Խաչատրյանի միջև նույն գույքի վերաբերյալ 11.02.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից, որը ևս ենթարկվել է նոտարական վավերացման, նաև բխող իրավունքն է ենթարկվել պետական գրանցման, և

2) քանի որ գործի նյութերով ձեռք չի բերվել որևէ ապացույց Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը վերացնելու կամ այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկված լինելու, լիազորագիրը վերացնելու մասին Աննա Խաչատրյանին և

երրորդ անձանց տեղեկացնելու վերաբերյալ, ուստի Աննա Խաչատրյանին տրված լիազորագիրը շարունակել է համարվել վավեր և պահպանել է իր գործողությունը՝ մինչև լիազորագրում տրված ժամկետը:

Կարծում ենք, որ վերը նշված շարժառիթները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ հայցը մերժելու համար հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ լիազորագրի գործողությունը դադարում է, եթե իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները:

Նույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ լիազորագրի գործողությունը դադարում է, եթե լիազորագրողը վերացրել է այն:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիազորագիր տվող անձը կարող է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը կամ վերալիազորումը, իսկ անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել դրանից: Այդ իրավունքներից հրաժարվելու մասին համաձայնությունն առոչինչ է:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիրը վերացնելը կամ լիազորագրից հրաժարվելը կատարվում է նոտարական կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր տված և այն հետագայում վերացրած անձը պարտավոր է դրա վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև իրեն հայտնի երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրված է լիազորագիրը: (...)

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած իրավունքները և պարտականությունները, որոնք ծագել են մինչև այն պահը, երբ նա իմացել է կամ պետք է իմանար լիազորագիրը դադարելու մասին, պահպանում են իրենց ուժը լիազորողի և նրա իրավահաջորդների համար երրորդ անձանց նկատմամբ: Այս կանոնը չի կիրառվում, եթե երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանափակմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի շահ նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հետագայում ուղղակի հավանություն չի տալիս սույլ գործարքին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հետագայում ներկայացվողի կողմից գործարքին հավանություն տալը սույլ գործարքով նրա համար քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ է ստեղծում, փոփոխում և դադարեցնում այն կնքելու պահից:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ լիազորագիր տալը ինքնանպատակ գործողություն չէ, այն հետապնդում է կոնկրետ նպատակ՝ այլ անձի լիազորելու երրորդ անձանց առջև ներկայացնելու լիազորագիր տված անձին: Դրանից ելնելով՝ օրենսդիրը որպես լիազորագրի գործողության դադարման հիմք նախատեսել է լիազորագրով նախատեսված գործողությունն իրականացված լինելու փաստի առկայությունը՝ առանց կոնկրետ նշելու, թե խոսքը ում կողմից իրականացված գործողության մասին է: Ընդ որում, սույլ գործողությունն իրականացրած անձին ճշտելու առումով պարտադիր պայման չնախատեսելու օրենսդրի նման կարգավորումը համարում ենք իրավաչափ, քանի որ այս դեպքում ոչ թե էական է պարզելը, թե այդ անձը լիազորագիր տվողն է, թե՛ ներկայացուցիչը, այլ՝ այն, թե արդյո՞ք լիազորագրով նախատեսված գործողությունն իրականացվել է, և այդ փաստի առկայությունը հաստատված համարվելու պայմաններում արդեն իսկ իմաստազրկվում է տրված լիազորագրի գործողությունը պահպանելու

անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով, որ այն տված անձը, ըստ էության, հասել է ակնկալվող նպատակին:

Լիազորագրի դադարման վերը նշված հիմքից բացի, օրենսդիրը նախատեսել է նաև այլ հիմք՝ այն պայմանավորելով լիազորագրողի կողմից վերացնելու հետ: Կարծում ենք, որ այս հիմքը լրիվ ինքնուրույն և անկախ հիմք է, որևէ առնչություն չունի վերը նշված հիմքի հետ, ու չի կարող գոյություն ունենալ վերջինիս հետ միաժամանակ, քանի որ այս երկրորդ դեպքը կարող է առաջանալ (լիազորագրի գործողությունը դադարեցվել) բացառապես այն ժամանակ, երբ առկա է լիազորագիր, որով նախատեսված գործողությունը դեռևս չի կատարվել, կամ առկա չեն օրենքի ուժով դրա գործողության դադարման այլ հիմքեր, սակայն լիազորագրողը ցանկանում է այն դադարեցնել վերացնելու եղանակով, որպիսի իրավունքից նա կարող է օգտվել ցանկացած ժամանակ: Ընդ որում, այս դեպքում լիազորագիր տված և այն հետագայում վերացրած անձի վրա պարտավորություն է դրվել վերացման մասին տեղեկացնելու լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև իրեն հայտնի երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրված է լիազորագիրը: Հակառակ պարագայում նաև լիազորողի համար երրորդ անձանց նկատմամբ իրենց ուժն են պահպանում լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած այն իրավունքները և պարտականությունները, որոնք ծագել են մինչև այն պահը, երբ ներկայացուցիչն իմացել է կամ պետք է իմանար լիազորագիրը դադարելու մասին: Նշված կանոնից առկա է միայն մեկ բացառություն, երբ երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարած լինելու մասին: Մինևույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է, որ եթե ներկայացուցիչը ներկայացվողի անունից կնքում է գործարք՝ չունենալով դրա համար լիազորություն կամ սահմանազանցմամբ է այն կնքում, ապա այս դեպքում այդ գործարքը կնքված է համարվում ներկայացուցչի անունից և ի շահ նրա, եթե ներկայացվողը հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին, իսկ այդպիսի հավանության դեպքում տվյալ գործարքով ներկայացվողի համար քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ են ստեղծվում, փոփոխվում և դադարեցվում այն կնքելու պահից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռազմիկ Կարապետյանը լիազորագիր է տվել Աննա Խաչատրյանին իր հայեցողությամբ և ցանկացած գնով վաճառել նաև Երևան քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 119-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող ավտոկայանատեղին: Լիազորագիրը տրվել է երեք տարի ժամկետով, և այն վավերացրել է նոտարը:

05.02.2015 թվականին Ռազմիկ Կարապետյանը Հայկ Շեկյանի հետ կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վերջինիս է վաճառել վերը նշված ավտոկայանատեղին: Պայմանագիրը նույն օրը ենթարկվել է նոտարական վավերացման: Դրանից բխող իրավունքը գրանցելու ժամկետը դեռևս չլրացած՝ 11.02.2015 թվականին, այսինքն՝ վերը նշված պայմանագիրը կնքելուց վեց օր հետո, նույն գույքի վերաբերյալ Ռազմիկ Կարապետյանի անունից առուվաճառքի պայմանագիր է կնքել վերջինիս ներկայացուցիչ Աննա Խաչատրյանը՝ այն վաճառելով Մարինե Խաչատրյանին: Պայմանագիրը նույն օրը ենթարկվել է նոտարական վավերացման, իսկ դրանից բխող իրավունքը ենթարկվել է պետական գրանցման:

Հիմք ընդունելով մեր կողմից արտահայտված դիրքորոշումները, հետագոտելով վերը նշված լիազորագիրը կարծում ենք, որ Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Կարապետյանին տրված լիազորագիրը տվյալ դեպքում հետապնդել է կոնկրետ նպատակ՝ վերջինիս լիազորելու երրորդ անձանց առջև իրեն ներկայացնելու նաև վերը նշված գույքի առուվաճառքի հետ կապված իրավահարաբերություններում, այսինքն՝ նաև կատարելու (կնքելու) այդ գույքի վաճառքի հետ կապված գործողություն: Սակայն այդ լիազորագիրը տալուց հետո Ռազմիկ Կարապետյանն անձամբ է իրականացրել վերը նշված գույքի վաճառքի հետ կապված գործողությունը՝ այն առանց ներկայացուցչի՝ անմիջականորեն, 05.02.2015 թվականին վաճառելով Հայկ Շեկյանին: Դրանից ելնելով՝ կարծում են, որ տրված լիազորագրի գործողությունն այդ պահից դադարել է օրենքի ուժով:

Նման պայմաններում կարծում ենք, որ լիազորագրի գործողությունը դեռևս 05.02.2015 թվականից դադարած լինելու դեպքում Աննա Կարապետյանը համարվում է 11.02.2015 թվականին վերը նշված պայմանագիրը կնքելու լիազորություն չունեցող, և այս դեպքում այդ գործարքը կարող է համարվել բացառապես նրա անունից և ի շահ նրա կնքված, քանի որ Ռազմիկ Կարապետյանը հետագայում ուղղակի հավանություն չի տվել այդ գործարքին:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և այն փոփոխելու՝ հայցը մերժելու հիմքում դրված շարժառիթին, որ «առկա չէ որևէ ապացույց Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին ստորագրված առուվաճառքի պայմանագրից ծագած իրավունքները պետական գրանցման ենթարկված լինելու վերաբերյալ», ապա կարծում ենք, որ այն չի կարող հիմք հանդիսանալ վերը նշված լիազորագրի գործողությունն օրենքի ուժով դադարած համարելու փաստը ժխտելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ վերը նշեցինք, այն դադարել է Ռազմիկ Կարապետյանի կողմից իր գույքի վաճառքի հետ կապված կամք արտահայտելու՝ գործողությունն անձամբ 05.02.2015 թվականին իրականացնելու փաստի ուժով, որը, կարծում են, որևէ ձևով չի կարող ժխտվել և պայմանավորված լինել զուտ գործարքից բխող իրավունքը պետական գրանցման ենթարկված չլինելու պատճառաբանությամբ, այն էլ այն դեպքում, երբ պայմանագիրը կնքելուց հետո անցել էր ընդամենը վեց օր, և գործով չի վկայակոչվել ու հաստատված համարվել փաստ, որ պայմանագրի կողմերը սահմանված ժամկետում չէին գրանցելու այդ պայմանագրից բխող իրավունքը:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և այն փոփոխելու՝ հայցը մերժելու հիմքում դրված մյուս շարժառիթին, որ «գործի նյութերով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ռազմիկ Կարապետյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ վերացրել է իր կողմից Աննա Բազադյանին տրված և նուտարական կարգով վավերացված լիազորագիրը, կամ նույն օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ կետի և 325-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների պահպանմամբ միջոցներ է ձեռնարկել լիազորագիրը նուտարական կարգով վերացնելու, ինչպես նաև՝ լիազորագրի վերացման մասին Աննա Բազադյանին և երրորդ անձանց, որոնց հանդեպ պետք է իրականացվեր ներկայացուցչությունը, տեղեկացնելու վերաբերյալ», կարծում են, որ այն ևս չէր կարող հիմք հանդիսանալ նման դատական ակտ կայացնելու համար, քանի որ մեր կողմից հայտնված վերը նշված դիրքորոշումների համատեքստում ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և 324-րդ հոդվածի 3-րդ կետը, այնպես էլ նույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին կետը սույն իրավահարաբերության վերաբերյալ կիրառելի չեն՝ նկատի ունենալով, որ Ռազմիկ Կարապետյանը ոչ վերացրել է իր կողմից տրված լիազորագիրը, ոչ էլ նման փաստ է վկայակոչվել. այն, ինչպես նշեցինք վերը, դադարել է օրենքի ուժով: Դրա հիման վրա անհիմն ենք համարում նաև մյուս շարժառիթն այն մասին, որ «Ռազմիկ Կարապետյանի կողմից 17.10.2014 թվականին Աննա Բազադյանին տրված լիազորագիրը չվերացվելու պայմաններում այն շարունակել է համարվել վավեր և պահպանել է իր գործողությունը՝ մինչև լիազորագրում տրված ժամկետը»:

Նման պայմաններում, կարծում ենք, որ Վերաքննիչ դատարանին չէր կարող վերագրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ, 449-րդ և 325-րդ հոդվածների խախտում թույլ տալը, առավել ևս՝ արդարադատության բուն էությունը խաթարող:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված վերը նշված շարժառիթը չէր կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ հայցը մերժելու համար:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2016 թվականի վճռի դեմ Հայկ Շեկյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը, 09.11.2016 թվականին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու, վճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին նաև այն պատճառաբանությամբ, որ «*դարարանը գործի քննության*

ընթացքում չի պարզել, թե ինչպես է Ռազմիկ Կարապետյանի կողմից արդեն իսկ 3.332.000 ՀՀ դրամով վաճառված ավերակայանատեղին վեց օր անց կրկին վաճառվել մեկ այլ անձի, փոխյալ դեպքում սեփականատիրոջ կողմ՝ Աննա Խաչատրյանի մոտը՝ Մարինե Խաչատրյանին, այն էլ 10.000.000 ՀՀ դրամ արժեքով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորագրի գործողությունը դադարում է, եթե իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները: Դադարանը հաշվի չի նարել այն հանգամանքի հետ, որ վերը նշված իրավական նորմի հիման վրա Ռազմիկ Կարապետյանի կողմից Աննա Խաչատրյանին տրված ավերակայանատեղին վաճառելու լիազորագրի գործողությունը դադարել է այն պահից, երբ Ռազմիկ Կարապետյանը 05.02.2015 թվականին ավերակայանատեղին վաճառել է սույն գործով հայցվոր Հայկ Շեկյանին: Փաստորեն, Ռազմիկ Կարապետյանի և Հայկ Շեկյանի միջև 05.02.2015 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով դադարել է Աննա Խաչատրյանին տրված լիազորագրի գործողությունը, մինչդեռ 11.02.2015 թվականին նույն լիազորագրի հիման վրա Աննա Խաչատրյանի կողմից կատարվել է գործարք: Արդյունքում, պարասխանող Մարինե Խաչատրյանը, 16.02.2015 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում կատարելով իրավունքի պետական գրանցում, գրկել է հայցվոր Հայկ Շեկյանին օրենքով սահմանված 30-օրյա ժամկետում իր իրավունքները պետական գրանցման ենթարկելու հնարավորությունից»:

Նշված որոշումը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, որպիսի հանգամանքները, կարծում ենք, նույնպես անտեսվել են Վճռաբեկ դատարանի կողմից:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
 Գ. Հակոբյան
 Ն. Տավարացյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/2855/02/15 2020թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱՔԴ/2855/02/15
Նախագահող դատավոր	Ն. Մարգարյան
Դատավորներ	Ա. Մխիթարյան Ա. Սմբատյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող զեկուցող

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով Նունե Իսկոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ՝ ըստ ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) հայցի ընդդեմ Նունե Իսկոյանի՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է Նունե Իսկոյանից բռնագանձել 2.828.671 ՀՀ դրամ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) 01.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ս. Թորոսյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Ն. Բարսեղյան) 25.11.2016 թվականի որոշմամբ Նունե Իսկոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն

վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.07.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) (այսուհետ՝ Դատարան) 02.07.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.11.2018 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.07.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունե Իսկոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Դատախազությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 335-րդ, 337-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ հոդվածները, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 74-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 272-րդ հոդվածը, 277-րդ հոդվածի 1-ի մասը:

Բողոք բերած անձը նշված պետույթը պարտավորված է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պետությանը պատճառված վնասի հատուցումը պայմանավորված չէ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությամբ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դատախազությունը՝ ի դեմս դատախազի, քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու գործառույթն իրականացնելիս չէր կարող չիմանալ, որ առկա է պետությանը պատճառված վնաս, որը ենթակա է բավարարման: Հետևաբար սույն գործով հայցվոր կողմի՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը ծագել է առնվազն 10.05.2012 թվականին՝ գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու պահից, մինչդեռ հայցը հարուցվել է միայն 18.06.2015 թվականին՝ հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.11.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 02.07.2018 թվականի վճռին:

2.1. Դատախազության վճռաբեկ բողոքի պարտախանի հիմնավորումները

Սույն գործով բողոքարկվող դատական ակտով սահմանված բռնագանձման ենթակա գումարը ոչ թե հարկային պարտավորություն է, ինչպես նշում է բողոքաբերը, այլ հանցագործության հետևանքով պետությանը պատճառած վնաս: Այդ իսկ պատճառով Վերաքննիչ դատարանը նշել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը պետք է իրականացվի ոչ թե քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու, այլ մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:

Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը հիմնավոր է և պայմանավորված է անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման անհրաժեշտությամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Դատախազությունը հայց է հարուցել դատարան՝ հանցագործության հետևանքով պետությանը պատճառված վնասը հատուցելու պահանջով, իսկ հանրորեն վտանգավոր արարքը կարող է համարվել հանցագործություն, և այն կատարած անձի վրա կարող է դրվել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտականություն միայն վերոհիշյալ հանգամանքներն օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվելուց հետո: Քննարկվող դեպքում Դատախազությունը հանցագործությամբ պետության իրավունքի խախտման փաստի, ինչպես նաև հանցագործություն կատարած անձի մասին իմացել է միայն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի մեղադրական դատավճռից, որն օրինական ուժ է ստացել 03.08.2012 թվականին, իսկ հայցը հարուցվել է 18.06.2015 թվականին՝ իրավունքի պաշտպանության համար սահմանված եռամյա ժամկետի սահմաններում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 10.05.2012 թվականին Նունե Իսկոյանի վերաբերյալ թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան: Նունե Իսկոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով՝ այն արարքի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչությունում հաշվառված «Նելի Կարոլինա» ՍՊԸ-ի միակ մասնակիցն ու տնօրենը, 2008-2009 թվականների ընթացքում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, սակայն հարկային տեսչություն ներկայացված հաստատագրված վճարի, եկամտահարկի, պետական տուրքի և պարտադիր սոցիալական ապահովագրության հաշվետվություններով հաշվարկված հարկերի և վճարների գումարներն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելով, սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում, պարտքերի չվճարման նպատակով ստեղծել է կեղծ սնանկության հատկանիշներ՝ 26.11.2010 թվականին սեփական սնանկության ճանաչման մասին դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի կողմից այն ճանաչվել է, և դրա հետևանքով պետությանը պատճառվել է խոշոր չափի՝ 2.828.671 ՀՀ դրամի վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**):

2) Նունե Իսկոյանի կողմից պետությանը պատճառված 2.828.671 ՀՀ դրամ գումարի չափով վնասը հատուցելու պահանջի վերաբերյալ Դատախազության հայցը դատարան է ներկայացվել 18.06.2015 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-6**):

3) Նունե Իսկոյանը 12.04.2018 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն (**հատոր 2-րդ, գ.թ. 96-97**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. ո՞ր պահից է ծագում դատախազության պետությանը պարճատված վնասի հարուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը և նման հայցի հարուցման համար պարտադիր պայման է արդյոք վնաս պարճատած անձի հանցագործության կարարման մեջ մեղավոր ճանաչված լինելու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

1) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

3) քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն, եթե՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրագրել լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ

3) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, կամ

4) հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս, կամ

5) պետական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է այլ երկրների դատարաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունեցող արբիտրաժներում, քացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) լիազորում է այլ մարմնի կամ կազմակերպության:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի իրավական վերլուծությանը, նշել է, որ դատախազությունն իրավասու է, որպես **պետությանը պատճառված վնասի** հատուցում, հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու հայց ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով (*տե՛ս օրինակ, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԿ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չվճարված հարկերը կամ տուրքերը, որպես պետությանը պատճառված վնաս գանձելու համար կարող է առկա լինել ինչպես հանցագործություն կատարելու փաստը և վնաս պատճառելը (22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), այնպես էլ առանց հանցագործության փաստը հիմնավորող թույլատրելի ապացույցի առկայության վնաս պատճառելը (...): Ընդ որում, նշված դեպքում որպես պատասխանող հանդես է գալիս այն անձը, ում լիազորությունների շրջանակում է եղել հարկային հաշվետվությունների ներկայացումը, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով չկատարելու արդյունքում պետությունը կրել է գույքային կորուստ:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված

գումարները գանձելու հայրը դատախազությունը կարող է ներկայացնել քրեական գործի դատավարության ընթացքում քաղաքացիական հայցի ձևով կամ քաղաքացիական դատավարության կարգով: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն դեպքերում, երբ պետությանը պատճառված վնասի հատուցման հայրը ներկայացվել է տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի դեմ, ում լիազորությունն է հարկային հաշվետվությունների ներկայացումը, անհրաժեշտ է ապացուցել տվյալ անձի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության կատարած լինելու փաստի առկայությունը, որպիսին հիմնավորվում է օրենքով սահմանված ապացույցներով (*յրեն ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վարդան Հարությունյանի, երրորդ անձ ՀՀ կատավարությանն առնաթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ԵԱՆԳ/0789/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերոնշյալ եզրահանգումների համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ չնայած քաղաքացիական պատասխանատվության ծագման պայմանները հանգամանքների բերումով կարող են որոշ դեպքերում համընկնել քրեական պատասխանատվության առաջացման պայմանների հետ, այդուհանդերձ քաղաքացիաիրավական հայրը պետք է լուծվի քաղաքացիական պարտավորական իրավունքի սկզբունքների հիման վրա: Քրեական գործով իրականացված դատավարության արդյունքը որոշիչ չէ վնասի հատուցման վերաբերյալ գործով: Տուժողն իրավունք ունի պահանջել վնասների հատուցում անկախ այն հանգամանքից պատասխանողը դատապարտվել է, թե՛ արդարացվել, և փոխհատուցման հարցը պետք է դառնա իրավական ինքնուրույն գնահատման առարկա, որի պարագայում ապացուցման չափորոշիչները էականորեն տարբերվում են քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով՝ այն, որ միևնույն արարքը կարող է առաջացնել քրեական գործի հետ նույնական (ընդհանուր) հանգամանքներից (փաստերից) բխող վնասը հատուցելու քաղաքացիաիրավական պարտականություն, բավարար հիմքեր չի ստեղծում անձի նկատմամբ կիրառված քաղաքացիաիրավական պատասխանատվությունը դիտել նաև «քրեական պատիժ» (*յրեն Ռինգվորն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 11.02.2003 թվականի վճիռը, պարբ. 38*): Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումներից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, որ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով ամրագրված է, որ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն եթե հանցագործությունը ուղղակիորեն պետությանը պատճառվել է գույքային վնաս, այդուհանդերձ, վնասի առկայությունը կախվածության մեջ չպետք է դրվի վնաս պատճառած անձի՝ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված լինելու հանգամանքից, քանի որ, թեև քաղաքացիական պատասխանատվության ծագման պայմանները հանգամանքների բերումով կարող են որոշ դեպքերում համընկնել քրեական պատասխանատվության առաջացման պայմաններին, այնուամենայնիվ, պետությանը վնաս պատճառած անձի արարքում հանցակազմի բացակայությունը չի բացառում ինքնուրույն ոչ օրինաչափ վարքագծի առկայությունը, որն առաջացնում է քաղաքացիաիրավական պատասխանատվություն:

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության նկատմամբ, որպես քաղաքացիաիրավական հարաբերության, կիրառելի են քաղաքացիական իրավունքի ընդհանուր ինստիտուտները, այդ թվում նաև՝ հայցային վաղեմության ինստիտուտը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերը նշված հոդվածների վերլուծությանը, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*լրեն Ասգ-միկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասարողյանի թիվ ԵԷԳ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հարկ է համարել արձանագրել հետևյալը. ինչպես բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից՝ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապել է ոչ թե իրավունքի խախտման պահի, այլ այն օրվա հետ, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Օրենսդրի այս կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, ըստ որի՝ եթե անձն իր իրավունքի խախտման մասին չիմանա, ապա չի էլ կարող ձեռնամուխ լինել որևէ եղանակով՝ այդ թվում և հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքի պաշտպանությանը: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի երկու նախապայմանների դեպքում էլ օրենսդիրը գործածել է «իմացել է» և «պետք է իմացած լիներ» արտահայտությունները, որոնց տառացի մեկնաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու համար անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա կամ իմացած լինի իր իրավունքի խախտման մասին:

Վերոգրյալից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող սկսվել, եթե հայցվորին հասանելի տեղեկությունները նրան թույլ տան եզրակացնել միայն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին: Իրավակիրառ պրակտիկայում շահագրգիռ անձը դատական պաշտպանության իր իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի հաստատապես խախտման հարցում: Այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձը պետք է համոզված լինի իր իրավունքի խախտման հարցում՝ անկախ նրանից, թե իրականում իրավունքի խախտում տեղի ունեցել է, թե ոչ, ինչը դատարանի գնահատման առարկա է:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիտարկմամբ շահագրգիռ անձի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու համար վերջինս պետք է տիրապետի խախտման վերաբերյալ բավարար տեղեկությունների, իսկ եթե այդ տեղեկությունները բավարար չեն, այսինքն՝ եթե հայցվորը կարող է միայն ենթադրություններ անել իր իրավունքի հնարավոր խախտման մասին, ապա նա չի էլ կարող հստակ պահանջ ներկայացնել իր իրավունքի խախտման վերացման վերաբերյալ: Այսպիսով, օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու իրավական հետևանքը պայմանավորել է հայցվորի կողմից ոչ թե իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորությամբ, այլ այդ խախտման մասին հավաստի կերպով իմանալու կամ իմացած լինելու փաստերով:

ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հայցային վաղեմության ժամկետը կմեկնարկի այն օրվանից, երբ շահագրգիռ անձը տիրապետի անհրաժեշտ և բավարար տեղեկությունների՝ պատշաճ հայցադիմում դատարան ներկայացնելու համար (*լրեն «Այլանս*

այլու» ՄՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱՔԴ/4524/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ փաստել է, որ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար առավել կարևորվում է իրավագոր անձի կարգավիճակը: Քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից գատ, որպես իրավագոր անձ կարող է հանդես գալ նաև պետությունը: Վերջինս քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է այդ նպատակի համար լիազորված պետական մարմինների միջոցով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ որպես իրավագոր անձ քաղաքացիական դատավարության կարգով դատարան է դիմում պետությունը՝ ի դեմս պետական մարմնի, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք տվյալ պետական մարմին իրավասու է վիճելի իրավահարաբերության շրջանակներում ներկայացնելու պետության շահերը և երկրորդ՝ երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը: Ընդ որում, թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցադրումների շրջանակներում պետք է ուսումնասիրել տվյալ պետական մարմնի՝ օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակը (դեմս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հենրիկ Սարգսյանի թիվ ԵՄԴ/1149/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ հաստատել մեղադրական եզրակացությունը (...), իսկ 15-րդ կետի համաձայն՝ գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 272-րդ հոդվածի համաձայն՝ ստորագրելով մեղադրական եզրակացությունը՝ քննիչը նույն օրը քրեական գործն ուղարկում է նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ դատախազն ուսումնասիրում է մեղադրական եզրակացությամբ ստացված գործը, որպեսզի ստուգի՝ 1) ապացուցված է արդյոք մեղադրյալին մեղսագրվող արարքը և այն պարունակում է արդյոք հանցակազմ, 2) հիմնավորված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը, (...) 10) կատարված է արդյոք գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատախազը մեղադրական եզրակացությամբ գործն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝ հաստատել մեղադրական եզրակացությունը, իր որոշմամբ մեղադրանքի ձևակերպումից հանել առանձին կետեր, որակել հանցագործությունն այն օրենքին համապատասխան, որն, ի տարբերություն մեղադրական եզրակացությամբ կատարված որակումից, նախատեսում է նվազ ծանր պատասխանատվություն, և այդ փոփոխություններով հաստատել մեղադրական եզրակացությունը, իր ցուցումներով գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար, կասեցնել քրեական գործով վարույթը, կարճել քրեական գործի վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատելով մեղադրական եզրակացությունը՝ դատախազը գործն ուղարկում է այն դատարան, որին գործն ընդդատյա է (...):

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատախազությունը որպես քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող իրավասու պետական մարմին, օրենսդրորեն օժտված է նաև քննիչի կողմից կազմած մեղադրական եզրակացությունը հաստատելու լիազորությամբ: Այսպես՝ քննիչը, ստորագրելով մեղադրական եզրակացությունը, նույն օրը քրեական գործն ուղարկում է համապատասխան դատախազին, իսկ վերջինս այն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, մեղադրական եզրակացությունը հաստատելու դեպքում գործն ուղարկում է այն դատարան, որին այն ընդդատյա է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝ 1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն), 2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, 3) հանցագործության քրեական օրենքով նախատեսված հատկանիշները, 4) **անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ**, 5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները, 6) **այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով**, 7) այն հանգամանքները, որոնք հիմնավորում են, որ գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործել որպես հանցագործության գործիք կամ միջոց կամ ուղղվել է ահաբեկչության ֆինանսավորմանը կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215.1-ին հոդվածի 7-րդ մասով նախատեսված մաքսանենգության առարկա:

Վերոհիշյալ նորմի մեկնաբանությունից բխում է, որ դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու պարագայում ապացուցված է համարում ինչպես անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ, այնպես էլ այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը, մասնավորապես՝ պետության գույքային շահերին վնաս պատճառվելու դեպքում՝ դատախազությունը, հիմնավորում է իր պահանջները, իսկ պետության գույքային շահերի խախտում հայտնաբերելու դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածին համապատասխան դատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված քաղաքացիական հայցը:

Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց չհարուցելու դեպքում անձն իրավունք ունի քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով, սակայն քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելիս արդեն ոչ թե գործում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված այն կանոնակարգումը, համաձայն որի՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները, այլ գործում են քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները, իսկ դատախազությունն էլ, իբրև Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի ուժով՝ քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես է գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Դա իր հերթին նշանակում է, որ դատախազի կողմից մեղադրական եզրակացությամբ քրեական գործը դատարան ուղարկելուց հետո, անկախ քրեական գործի հետագա ընթացքից, դատախազության կողմից քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելու պարագայում լիովին կիրառելի են հայցային վաղեմության վերաբերյալ ՀՀ վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես՝ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ դատախազությունն իմացել է կամ պետք է իմացած լինել պետության գույքային շահերին վնաս պատճառված լինելու մասին:

Քրեական գործի հետագա ընթացքն այս դեպքում որևէ ազդեցություն չի կարող ունենալ հայցային վաղեմության ժամկետի հոսքի վրա, քանի որ դրա հետ կապված ՀՀ քաղաքացիական օրենսգրքը չի նախատեսել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատում կամ կասեցում: Ավելին, ինչպես քրեական դատավարությունում, քաղաքացիական դատավարությունում ևս արգելված չէ քաղաքացիական հայցի հարուցումը հայցն առանց քննության թողնելու պարագայում, սակայն այս դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է ընդհանուր կարգով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջով դատախազության՝ հայց հարուցելու իրավունքի ծագման պահը ճիշտ որոշելու համար առանցքային նշանակություն ունի այն հարցի պատասխանը, թե որ պահից սկսած է վերջինս տիրապետում պետության գույքային շահի խախտման վերաբերյալ բավարար տեղեկությունների, ինչպես նաև իր տնօրինության ներքո ունենում այդ խախտման փաստը հիմնավորող ապացույցների բավարար համակցություն, ինչպիսի հանգամանքներով էլ պայմանավորված հնարավոր կլինի փաստել, որ դատախազության մոտ հենց այդ պահից սկսած հաստատապես ձևավորվում է համոզմունք առ այն, որ պետությանը պատճառվել է գույքային վնաս և վերջինս այդ պահից սկսած հնարավորություն է ստանում պատշաճ հայց ներկայացնելու միջոցով դիմելու դատական պաշտպանության: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատախազության՝ պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը ծագում է անկախ այն հանգամանքից, թե արդյոք վնաս պատճառած անձը պետությանը վնաս է պատճառել հանցագործության կատարման հետևանքով, թե այլ հակաիրավական վարքագծի արդյունքում, ինչպես նաև անկախ այն հանգամանքից, թե վնաս պատճառած անձն արդյոք մեղավոր է ճանաչվել այդ արարքի կատարման մեջ, թե ոչ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանող Նունե Իսկոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով՝ այն արարքի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ պետական եկամտոստների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչությունում հաշվառված «Նելի Կարոլինա» ՍՊԸ-ի միակ մասնակիցն ու տնօրենը, 2008-2009 թվականների ընթացքում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, սակայն հարկային տեսչություն ներկայացված հաստատագրված վճարի, եկամտահարկի, պետական տուրքի և պարտադիր սոցիալական ապահովագրության հաշվետվություններով հաշվարկված հարկերի և վճարների գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելով, սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում, պարտքերի չվճարման նպատակով ստեղծել է կեղծ սնանկության հատկանիշներ: Մասնավորապես, Նունե Իսկոյանը 26.11.2010 թվականին սեփական սնանկության ճանաչման մասին դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի կողմից ճանաչվել է սնանկ: Դրա հետևանքով պետությանը պատճառվել է խոշոր չափի՝ 2.828.671 ՀՀ դրամի վնաս:

10.05.2012 թվականին Նունե Իսկոյանի վերաբերյալ թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Դատախազությունը պետությանը պատճառված 2.828.671 ՀՀ դրամ գումարի չափով վնասը հատուցելու պահանջի վերաբերյալ հայցը դատարան է ներկայացրել 18.06.2015 թվականին:

12.04.2018 թվականին Նունե Իսկոյանը Դատարան է ներկայացրել միջնորդություն՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ:

Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ 10.05.2012 թվականին թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան ուղարկելիս Դատախազությունն իմացել է (պետք է իմացած լիներ) պետությանը պատճառված վնասի առկայության, և որ նույնն է՝ իր իրավունքների խախտման մասին, հետևաբար հայցային վաղեմության ժամկետները սկսել են հոսել 10.05.2012 թվականից: Մինչդեռ հայցվորն իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության նպատակով Դատարան է դիմել 18.06.2015 թվականին, որպիսի պայմաններում բաց է թողել իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Դատախազության վերաքննիչ բողոքը և դատական ակտը բեկանելով ու այն փոփոխելով՝ հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, իսկ պետությանը պատճառված վնասի հատուցումը հնարավոր է միայն հանցագործության մեջ մեղադրվող անձի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում: Հետևաբար Դատարանը հայցային վաղեմության հաշվարկի սկիզբը ոչ թե պետք է հաշվարկեր քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու հաջորդ օրվանից, այլ պետք է որպես իրավախախտման փաստը հավաստող ապացույց դիտեր Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և հայցային վաղեմության ժամկետի սկիզբը պետք է համարվեր դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է, որ սույն գործով պետությունը ի դեմս Դատախազության, տնտեսվարող սուբյեկտի տնօրենի կողմից պետության գույքային շահերի խախտման ենթադրյալ փաստի մասին իմացել է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից: Այլ կերպ ասած՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը ծագել է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից: Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահին արդեն իսկ առկա է եղել բավարար ապացույցների համակցություն առ այն, որ մեղադրյալի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում պետությանը պատճառվել է վնաս: Ընդ որում, անկախ այն հանգամանքից, թե մեղադրյալն իր կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունների համար ենթակա էր արդյոք քրեական պատասխանատվության, թե՛ ոչ, այնուամենայնիվ, դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից ծագել է մեղադրյալին քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Ուստի դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից սկսել է հոսել պետության՝ խախտված իրավունքի պաշտպանության կամ որ նույնն է՝ հայցային վաղեմության ժամանակահատվածը:

Ինչ վերաբերում է սույն գործով Դատախազության ներկայացրած այն փաստարկին, թե հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար հնարավոր է հայց ներկայացնել միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր արարքը հանցագործություն է համարվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչ-յուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

Նշված նորմի մեկնաբանությունից բխում է, որ քաղաքացիական հայցը կարող է հարուցվել ինչպես ավելի վաղ, քան մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը

դատարան ուղարկելու փուլը, այնպես էլ քրեական գործի դատական քննության ցանկացած փուլում՝ մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը՝ կախված այն հանգամանքից, թե երբ են ի հայտ եկել հայց հարուցելու նախադրյալները: Միևնույն տրամաբանությունն է գործում նաև քաղաքացիական դատավարությունում՝ հայց կարող է հարուցվել ցանկացած պահի, երբ առկա են հայց հարուցելու նախադրյալները: Մասնավորապես՝ հանցագործությամբ պետության գույքային շահերին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Դատախազությունը կարող է հայց հարուցել ցանկացած պահի, երբ իր տիրապետության ներքո առկա կլինեն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման հետևանքով պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ բավարար փաստեր: Հակառակ մեկնաբանությունը կնշանակի, որ, բացի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքերից, ոչ մի այլ դեպքում (օրինակ՝ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու և այլն) անձի նկատմամբ հնարավոր չի լինի քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց հարուցել:

Հատկանշական է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը սահմանազատել են քրեական և քաղաքացիական դատավարություններում Դատախազության՝ հայց հարուցելու լիազորությունները, և ըստ այդ իրավակարգավորման՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումն առանձնացված է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումից: Նշված նորմերի տառացի մեկնաբանությունից բխում է, որ Դատախազությունը քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցում է ցանկացած պահի, երբ օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ փաստ՝ անկախ քրեական գործի հարուցման, օրինական ուժի մեջ մտած դատավճռով վնաս պատճառած անձի դատապարտված լինելու հանգամանքներից:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցային վաղեմության ժամանակահատվածը սկսել է հոսել թիվ 83150912 քրեական գործով դատախազի կողմից Նունե Իսկոյանի մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե երբ է Դատախազությունը հաստատել Նունե Իսկոյանի մեղադրական եզրակացությունը: Գործում առկա է միայն ապացույց այն մասին, որ 10.05.2012 թվականին Դատախազությունը Նունե Իսկոյանի վերաբերյալ թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործը դատարան ուղարկելը հաջորդում է մեղադրական եզրակացությունը հաստատելուն, գտնում է, որ Նունե Իսկոյանի մեղադրական եզրակացությունն ակնհայտորեն հաստատվել է ոչ ուշ, քան 10.05.2012 թվականին: Ընդ որում, թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու (10.05.2012 թվական) պահից սկսած մինչև սույն գործով Դատախազության կողմից հայցադիմումը դատարան մուտքագրելու (18.06.2015 թվական) պահն ընկած ժամանակահատվածն արդեն իսկ երեք տարուց ավելի է:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով լրացել է հայցային վաղեմության ժամկետը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ Դատարանը որպես իրավախախտման փաստը հավաստող ապացույց պետք է դիտեր Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և հայցային վաղեմության ժամկետի սկիզբը դիտեր օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հաջորդ օրը:

Ամփոփելով վերոհիշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայ-ցը ենթակա էր մերժման հայցային վաղեմության ժամկետը բաց թողնված լինելու հիմքով, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել էր Դատարանը:

Վճռաբեկ բողոքի պարասիսանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 02.07.2018 թվականի վճռի օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցագնի մեջ մտնում են նաև պահանջվող տուճանքի (տուճանքի, տույճի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի իրավակարգավորումը վերաբերում է միայն պետության հանդեպ պետական տուրքի գծով պարտավորությունների բացակայությանը և չի կարող մեկնաբանվել որպես մյուս կողմի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականության բացակայություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի հիմքով պետք է կրի մյուս կողմի կրած դատական ծախսերը փոխհատուցելու պարտականություն: Նման մոտեցումը բխում է կողմերի իրավահավասարության սկզբունքից և կոչված է կանխելու պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտի կողմից իր դատավարական իրավունքների անբարեխիղճ իրականացման արդյունքում մյուս կողմին հնարավոր պատճառվելիք վնասները: Հետևաբար, եթե հայցը հարուցվում է պետական տուրքի վճարումից ազատված հայցվորի կողմից և հետագայում այն մերժվում է անհիմն լինելու հիմքով, հայցվորը պետք է կրի այլ անձանց կրած՝ իրենց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը:

Սույն գործով բողոք բերած անձը վճռաբեկ բողոք ներկայացնելիս վճարել է վճռաբեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի գումարը: Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Դատախազության հայցը՝ մերժման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի հիմքով վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատախազությունից հոգուտ Նունե Իսկոյանի ենթակա է բռնագանձման 85.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.07.2018 թվականի վճռին:
2. ՀՀ գլխավոր դատախազությունից հոգուտ Նունե Իսկոյանի բռնագանձել 85.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԱՔԴ/2855/02/15 քաղաքացիական գործով 24.09.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 24.09.2020 թվականին քննելով ըստ ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) հայցի ընդդեմ Նունե Իսկոյանի՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2018 թվականի որոշման դեմ Նունե Իսկոյանի վճռաբեկ բողոքը, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.07.2018 թվականի վճռին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Գոռ Հակոբյանս և Նախշուն Տավարացյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է Նունե Իսկոյանից բռնագանձել 2.828.671 ՀՀ դրամ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) 01.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Թորոսյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Ն. Բարսեղյան) 25.11.2016 թվականի որոշմամբ Նունե Իսկոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.07.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիայան) (այսուհետ՝ Դատարան) 02.07.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.11.2018 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.07.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունե Իսկոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Դատախազությունը:

2. Վճռաբեկ դարարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դարարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 335-րդ, 337-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դարավարության օրենսգրքի 6-9-րդ հոդվածները, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 74-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 272-րդ հոդվածը, 277-րդ հոդվածի 1-ի մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ և հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պետությանը պատճառված վնասի հատուցումը պայմանավորված չէ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությամբ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դատախազությունը՝ ի դեմս դատախազի, քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու գործառնություն իրականացնելիս չէր կարող չիմանալ, որ առկա է պետությանը պատճառված վնաս, որը ենթակա է բավարարման: Հետևաբար սույն գործով հայցվոր կողմի՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը ծագել է առնվազն 10.05.2012 թվականին՝ գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու պահից, մինչդեռ հայցը հարուցվել է միայն 18.06.2015 թվականին՝ հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.11.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 02.07.2018 թվականի վճռին:

2.1. Դատախազության վճռաբեկ բողոքի պայտասիանի հիմնավորումները

Սույն գործով բողոքարկվող դատական ակտով սահմանված բռնագանձման ենթակա գումարը ոչ թե հարկային պարտավորություն է, ինչպես նշում է բողոքաբերը, այլ հանցագործության հետևանքով պետությանը պատճառված վնաս: Այդ իսկ պատճառով Վերաքննիչ դատարանը նշել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը պետք է իրականացվի ոչ թե քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու, այլ մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:

Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը հիմնավոր է և պայմանավորված է անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման անհրաժեշտությամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Դատախազությունը հայց է հարուցել դատարան՝ հանցագործության հետևանքով պետությանը պատճառված վնասը հատուցելու պահանջով, իսկ հանրորեն վտանգավոր արարքը կարող է համարվել հանցագործություն, և այն կատարած անձի վրա կարող է դրվել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտականություն միայն վերոհիշյալ հանգամանքներն օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվելուց հետո: Քննարկվող դեպքում Դատախազությունը հանցագործությամբ պետության իրավունքի խախտման փաստի, ինչպես նաև հանցագործություն կատարած անձի մասին իմացել է միայն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի մեղադրական դատավճռից, որն օրինական ուժ է ստացել 03.08.2012 թվականին, իսկ հայցը հարուցվել է 18.06.2015 թվականին՝ իրավունքի պաշտպանության համար սահմանված եռամյա ժամկետի սահմաններում:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը

1) 10.05.2012 թվականին Նունե Իսկոյանի վերաբերյալ թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան: Նունե Իսկոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով՝ այն արարքի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մյանսիկյանի հարկային տեսչությունում հաշվառված «Նելի Կարոլինա» ՍՊԸ-ի միակ մասնակիցն ու տնօրենը, 2008-2009 թվականների ընթացքում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, սակայն հարկային տեսչություն ներկայացված հաստատագրված վճարի, եկամտահարկի, պետական տուրքի և պարտադիր սոցիալական ապահովագրության հաշվետվություններով հաշվարկված հարկերի և վճարների գումարներն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելով, սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում, պարտքերի չվճարման նպատակով ստեղծել է կեղծ սնանկության հատկանիշներ՝ 26.11.2010 թվականին սեփական սնանկության ճանաչման մասին դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի կողմից այն ճանաչվել է, և դրա

հետևանքով պետությանը պատճառվել է խոշոր չափի՝ 2.828.671 ՀՀ դրամի վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**):

2) Նույն Իսկոյանի կողմից պետությանը պատճառված 2.828.671 ՀՀ դրամ գումարի չափով վնասը հատուցելու պահանջի վերաբերյալ Դատախազության հայցը դատարան է ներկայացվել 18.06.2015 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-6**):

3) Նույն Իսկոյանը 12.04.2018 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն (**հատոր 2-րդ, գ.թ. 96-97**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործը հարուցվել է Դատախազության կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է Նույն Իսկոյանից բռնագանձել 2.828.671 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս:

12.04.2018 թվականին Նույն Իսկոյանը Դատարան է ներկայացրել միջնորդություն՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ:

Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ 10.05.2012 թվականին թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան ուղարկելիս Դատախազությունն իմացել է (պետք է իմացած լիներ) պետությանը պատճառված վնասի առկայության, և որ նույն է՝ իր իրավունքների խախտման մասին, հետևաբար հայցային վաղեմության ժամկետները սկսել են հոսել 10.05.2012 թվականից: Մինչդեռ հայցվորն իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության նպատակով Դատարան է դիմել 18.06.2015 թվականին, որպիսի պայմաններում բաց է թողել իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Դատախազության վերաքննիչ բողոքը և դատական ակտը բեկանելով ու այն փոփոխելով՝ հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, իսկ պետությանը պատճառված վնասի հատուցումը հնարավոր է միայն հանցագործության մեջ մեղադրվող անձի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում: Հետևաբար Դատարանը հայցային վաղեմության հաշվարկի սկիզբը ոչ թե պետք է հաշվարկեր քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու հաջորդ օրվանից, այլ պետք է որպես իրավախախտման փաստը հավաստող ապացույց դիտեր Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.07.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և հայցային վաղեմության ժամկետի սկիզբը պետք է համարվեր դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե *ո՞ր պահից է ծագում դատախազության պետությանը պատճառված վնասի հարուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը և նման հայցի հարուցման համար պարտադիր պայման է արդյոք վնաս պատճառած անձի՝ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված լինելու հանգամանքը*, վկայակոչելով և վերլուծության ենթարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետը, 17-րդ հոդվածի 1-ին կետը, 1058-րդ հոդվածի 1-ին կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և այդ իրավանդումի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածները, 335-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 337-րդ հոդվածի 1-ին կետը և վերահաստատելով պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության, որպես

քաղաքացիաիրավական հարաբերության, նկատմամբ քաղաքացիական իրավունքի ընդհանուր ինստիտուտները, այդ թվում նաև հայցային վաղեմության ինստիտուտը կիրառելի լինելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշումներով և Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) 11.02.2003 թվականի վճռով արտահայտած իրավական դիրքորոշումները (*դրեն Կճուսբեկ դատարանի որոշման 4-7-րդ էջերը*), որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 07.11.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 02.07.2018 թվականի վճռին:

Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 2-րդ մասի 14-րդ, 15-րդ կետերը, 107-րդ հոդվածը, 154-րդ հոդվածի 4-րդ մասը, 155-րդ հոդվածի 2-րդ մասը, 272-րդ, 273-րդ հոդվածները, 274-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 277-րդ հոդվածի 1-ին մասը՝ արձանագրելով հետևյալը.

«(...) դատախազությունը՝ որպես քրեական գործով մինչդատարանական վարույթի օրինականության նկատմամբ հակողություն իրականացնող իրավասու պետական մարմին, օրենսդրությունն օժտված է նաև քննիչի կողմից կազմած մեղադրական եզրակացությունը հաստատելու լիազորությամբ: Այսպես՝ քննիչը, ստորագրելով մեղադրական եզրակացությունը, նույն օրը քրեական գործն ուղարկում է համապարասխան դատախազին, իսկ վերջինս այն սրահայուց հետո՝ 5 օրվա ընթացքում, մեղադրական եզրակացությունը հաստատելու դեպքում գործն ուղարկում է այն դատարան, որին այն ընդդարյա է:

(...) դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարանն ուղարկելու պարագայում ապացուցված է համարում ինչպես անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ, այնպես էլ այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը, մասնավորապես՝ պետության գոյքային շահերին վնաս պատճառվելու դեպքում՝ դատախազությունը, հիմնավորում է իր պահանջները, իսկ պետության գոյքային շահերի խախտում հայտնաբերելու դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածին համապարասխան դատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված քաղաքացիական հայցը:

Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց չհարուցելու դեպքում անձն իրավունք ունի քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով, սակայն քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելիս արդեն ոչ թե գործում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված այն կանոնակարգումը, համաձայն որի՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները, այլ գործում են քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները, իսկ դատախազությունն էլ, իբրև Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի ուժով՝ քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես է գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Դա իր հերթին նշանակում է, որ դատախազի կողմից մեղադրական եզրակացությամբ քրեական գործը դատարանն ուղարկելուց հետո, անկախ քրեական գործի հետագա ընթացքից, դատախազության կողմից քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելու պարագայում լիովին կիրառելի են հայցային վաղեմության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես՝ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ դատախազությունն ինքն էլ կամ պետք է ինքնաձ լինել պետության գոյքային շահերին վնաս պատճառված լինելու մասին: Քրեական գործի հետագա ընթացքն այս դեպքում որևէ ազդեցություն չի կարող ունենալ հայցային վաղեմության ժամկետի հոսքի վրա, քանի որ դրա հետ կապված ՀՀ քաղաքացիական օրենսգրքը չի նախատեսել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատում կամ կասեցում: Ավելին, ինչպես քրեական

դատարվարությունում, քաղաքացիական դատարվարությունում և արգելված չէ քաղաքացիական հայցի հարուցումը հայցն առանց քննության թողնելու պարագայում, սակայն այս դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է ընդհանուր կարգով» (դրեն՝ Վճռաբեկ դատարանի որոշման 8-10-րդ էջերը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «(...) պետությունը ի դեմս Դատախազության, տնտեսվարող սուբյեկտի տնօրենի կողմից պետության գույքային շահերի խախտման ենթադրյալ փաստի մասին իմացել է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից: Այլ կերպ ասած՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը ծագել է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից: Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահին արդեն իսկ առկա է եղել բավարար ապացույցների համակցություն առ այն, որ մեղադրյալի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում պետությանը պատճառվել է վնաս: Ընդ որում, անկախ այն հանգամանքից, թե մեղադրյալն իր կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունների համար ենթակա էր արդյոք քրեական պատասխանատվության, թե ոչ, այնուամենայնիվ, դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից ծագել է մեղադրյալին քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Ուստի դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից սկսել է հոսել պետության խախտված իրավունքի պաշտպանության կամ որ նույնն է՝ հայցային վաղեմության ժամանակահատվածը:

Ինչ վերաբերում է սույն գործով Դատախազության ներկայացրած այն փաստարկին, թե հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար հնարավոր է հայց ներկայացնել միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր արարքը հանցագործություն է համարվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

Նշված նորմի մեկնաբանությունից բխում է, որ քաղաքացիական հայցը կարող է հարուցվել ինչպես ավելի վաղ, քան մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու փուլը, այնպես էլ քրեական գործի դատական քննության ցանկացած փուլում՝ մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը՝ կախված այն հանգամանքից, թե երբ են ի հայտ եկել հայց հարուցելու նախադրյալները: Մինևնույն տրամաբանությունն է գործում նաև քաղաքացիական դատավարությունում՝ հայց կարող է հարուցվել ցանկացած պահի, երբ առկա են հայց հարուցելու նախադրյալները: Մասնավորապես՝ հանցագործությամբ պետության գույքային շահերին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Դատախազությունը կարող է հայց հարուցել ցանկացած պահի, երբ իր տիրապետության ներքո առկա կլինեն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման հետևանքով պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ բավարար փաստեր: Հակառակ մեկնաբանությունը կնշանակի, որ, բացի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքերից, ոչ մի այլ դեպքում (օրինակ՝ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու և այլն) անձի նկատմամբ հնարավոր չի լինի քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց հարուցել:

Հատկանշական է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը սահմանազատել են քրեական և քաղաքացիական դատավարություններում Դատախազության՝ հայց

հարուցելու լիազորությունները, և ըստ այդ իրավակարգավորման՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումն առանձնացված է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումից: Նշված նորմերի տառացի մեկնաբանությունից բխում է, որ Դատախազությունը քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցում է ցանկացած պահի, երբ օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ փաստ՝ անկախ քրեական գործի հարուցման, օրինական ուժի մեջ մտած դատավճռով վնաս պատճառած անձի դատապարտված լինելու հանգամանքներից:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցային վաղեմության ժամանակահատվածը սկսել է հոսել թիվ 83150912 քրեական գործով դատախազի կողմից Նունե Իսկոյանի մեղադրական եզրակացությունը հաստատելու պահից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե երբ է Դատախազությունը հաստատել Նունե Իսկոյանի մեղադրական եզրակացությունը: Գործում առկա է միայն ապացույց այն մասին, որ 10.05.2012 թվականին Դատախազությունը Նունե Իսկոյանի վերաբերյալ թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործը դատարան ուղարկելը հաջորդում է մեղադրական եզրակացությունը հաստատելուն, գտնում է, որ Նունե Իսկոյանի մեղադրական եզրակացությունն ակնհայտորեն հաստատվել է ոչ ուշ, քան 10.05.2012 թվականին: Ընդ որում, թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու (10.05.2012 թվական) պահից սկսած մինչև սույն գործով Դատախազության կողմից հայցադիմումը դատարան մուտքագրելու (18.06.2015 թվական) պահն ընկած ժամանակահատվածն արդեն իսկ երեք տարուց ավելի է:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով լրացել է հայցային վաղեմության ժամկետը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից» *(որևս Վճռաբեկ դատարանի որոշման 11-13 էջերը):*

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Գոռ Հակոբյանս և Նախշուն Տավարացյանս, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմանը արդարհայրած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հայրուկ կարծիքը այդ որոշման վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

Հայցադիմումը ներկայացնելու պահի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի

ժամկետ, հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այդ ժամկետի ավարտամբ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկն սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

ՀՀ վճարեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վերոգրյալ նորմերի մեկնաբանությանը, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, որի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*Կրեն Դուգմիկ Գարրիսյանն ընդդեմ Դանիել Ղասարողյանի թիվ ԵԷԳ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճարեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը (*Կրեն Սերգեյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի թիվ ԵԷԳ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճարեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ հայց հարուցելու իրավունքը ծագած է համարվում միայն այն պահին, երբ իրավագոր անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իրավախախտման փաստի մասին: Հետևաբար հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու համար էական է իրավունքի խախտման առկայությունը և դրա մասին շահագրգիռ անձի իմանալու կամ այդպիսի հավանականության առկայության պահը:

ՀՀ վճարեկ դատարանի գնահատմամբ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը:

Միաժամանակ ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար առավել կարևորվում է իրավագոր անձի կարգավիճակը: Քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից գառ, որպես իրավագոր անձ կարող է հանդես գալ նաև պետությունը: Վերջինս քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է այդ նպատակի համար լիազորված պետական մարմինների միջոցով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ որպես իրավագոր անձ քաղաքացիական դատավարության կարգով դատարան է դիմում պետությունը՝ ի դեմս պետական մարմնի, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք տվյալ պետական մարմինն իրավասու է վիճելի իրավահարաբերության շրջանակներում ներկայացնելու պետության շահերը և երկրորդ՝ երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը: Ընդ որում, թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցադրումների շրջանակներում պետք է ուսումնասիրել տվյալ պետական մարմնի՝ օրենսդրությանը ամրագրված լիազորությունների շրջանակը:

Նույն որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանը նաև արձանագրել է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու պահանջի հիմքում ընկած իրավահարաբերությունը պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություն է, իսկ այդ իրավահարաբերությունից բխող պահանջի իրավունքը պատկանում է դատախազությանը, որը

վերջինս կարող է իրացնել քաղաքացիադատավարական կարգով հայց հարուցելով: Այսինքն՝ դատարանում վերը նշված իրավահարաբերությունից բխող պետական շահը ներկայացնելու իրավասու մարմինը դատախազությունն է, իսկ թե երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել հայցի փաստական հանգամանքները և ի հիմնավորումն դրանց՝ դատարան ներկայացված ապացույցները (որեն ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հենրիկ Սարգսյանի թիվ ԵՄԳ/1149/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

1) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

3) քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն, եթե՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ

3) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, կամ

4) հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս, կամ

5) պետական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է այլ երկրների դատարաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունեցող արբիտրաժներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ կառավարություն) լիազորում է այլ մարմնի կամ կազմակերպության:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի իրավական վերլուծությանը, արձանագրել է հետևյալը.

«(...) պետական շահերի պաշտպանության իրականացումը կախված լիազորությունների բովանդակությունից, ունի իրականացման տարբեր մեխանիզմներ:

Այսպես.

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն օգտվում է դատավարական այն իրավունքներից և կրում է այն պարտականությունները, որոնք ունենալու էր պետական այն մարմինը, ով հայց ներկայացնելու պարտականություն ուներ: Հետևաբար դատախազությունը զրկված չէ վարչական դատավարության կարգով տնտեսվարող սուբյեկտի դեմ հարկային պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու հայց ներկայացնելու

հնարավորությունից, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ:

Վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված դատախազության լիազորությունը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայց հարուցելու լիազորությամբ օժտված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Նշված դրույթի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ դատախազության՝ հայց հարուցելու դատավարական պարտականության իրացման նախապայման է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորության բացակայությունը: Նշված կանոնակարգումը քննարկելով չվճարված հարկային պարտավորությունների արդյունքում պետությանը պատճառված վնասը բռնագանձելու հարցի համատեքստում, նախ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք կոնկրետ վիճելի իրավահարաբերության առկայության պարագայում բացակայում է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորությունը:

(...) տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հիման վրա հարուցված քրեական գործի կարճման պարագայում, արարքի՝ որպես հանցագործության վերաբերյալ խոսք լինել չի կարող, մինչդեռ քաղաքացիաիրավական հարաբերությունը (վնաս պատճառելու հիմքով ծագող հարաբերությունը), որի ծագման պայմանները կարող են համընկնել քրեական պատասխանատվության ծագման պայմանների հետ, շարունակում է գոյություն ունենալ: Նման իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում պետությանը պատճառված վնասը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից բռնագանձելու պահանջ ներկայացնելու լիազորությամբ որևէ պետական մարմին օժտված չէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված է դատախազության լիազորությունը **հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու** հայց ներկայացնելու մասին, որպիսի լիազորության իրականացումը պայմանավորված է երկու փաստերի առկայությամբ՝

1) **հանցանքի կատարում, որը կարող է հաստատվել միակ թույլատրելի ապացույցով, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով և**

2) հանցանքի արդյունքում պետությանը պատճառված գույքային վնաս:

(...) բոլոր այն դեպքերում, երբ հարկերի և (կամ) տուրքերի չվճարման կամ պակաս վճարման համար դատախազությունը գործում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված լիազորությունների շրջանակում, ապա հայցապահանջը պետք է վերաբերի կոնկրետ տնտեսվարող սուբյեկտին հարկային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելուն: Մինչդեռ չվճարված հարկերը կամ տուրքերը, որպես պետությանը պատճառված վնաս գանձելու համար կարող է առկա լինել ինչպես հանցագործություն կատարելու փաստը և վնաս պատճառելը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), այնպես էլ առանց հանցագործության փաստը հիմնավորող թույլատրելի ապացույցի առկայության վնաս պատճառելը և համապատասխան լիազոր մարմնի բացակայությունը կամ այդպիսի մարմնի մոտ համապատասխան լիազորության բացակայությունը: (...)

Դատախազության կողմից ներկայացված հայցերում և բողոքներում հիշատակվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դրույթները, որոնցում ամրագրված են դատախազական մարմինների լիազորությունները պետական շահերի պաշտպանության հարցում: (...) Այս առումով լիազորություններն ամրագրող կոնկրետ դրույթների հիշատակումը հայցում կամ բողոքում չեն կարող դիտվել որպես հայցի հիմք (իրավական հիմք), քանի որ հայցի հիմքը նյութական իրավունքի այն նորմն է, որի վրա հիմնվում է ներկայացված պահանջը: (...) հիշատակված հոդվածի դրույթների գնահատումը կարող է տեղի ունենալ պատշաճ հայցվորի հարցը քննարկելու համատեքստում: Հետևաբար, դատարանը պարտավոր է ստուգել դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության

անկայությունը, անկախ նրանից նշվել է լիազորություններից մեկը, թե մյուսը կամ էլ որևէ մեկը չի նշվել» *(լրենս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԿ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշումամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չվճարված հարկերը կամ տուրքերը, որպես պետությանը պատճառված վնաս գանձելու համար կարող է առկա լինել ինչպես հանցագործություն կատարելու փաստը և վնաս պատճառելը (22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), այնպես էլ առանց հանցագործության փաստը հիմնավորող թույլատրելի ապացույցի անկայության վնաս պատճառելը (...):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու հայցը դատախազությունը կարող է ներկայացնել քրեական գործի դատավարության ընթացքում քաղաքացիական հայցի ձևով կամ քաղաքացիական դատավարության կարգով: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն դեպքերում, երբ պետությանը պատճառված վնասի հատուցման հայցը ներկայացվել է տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի դեմ, ում լիազորությունն է հարկային հաշվետվությունների ներկայացումը, **անհրաժեշտ է ապացուցել տվյալ անձի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության կատարած լինելու փաստի առկայությունը, որպիսին հիմնավորվում է օրենքով սահմանված ապացույցներով** *(լրենս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վարդան Հարությունյանի, երրորդ անձ ՀՀ կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ԵԱԿԿ/0789/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում ամրագրված պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու իր լիազորությունը դատախազությունն իրավասու է եղել իրացնել կախված կոնկրետ լիազորության բովանդակությունից և դրա իրականացման մեխանիզմից:

Ըստ այդմ՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն իրավասու է հայց ներկայացնել վարչադատավարական կամ քաղաքացիադատավարական կարգով, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ կամ երբ հայց հարուցելու լիազորությամբ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին օժտված չէ: Նման դեպքերում դատախազությունն օգտվում է ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով հայցվորին վերապահված բոլոր իրավունքներից և կրում նրանց պարտականությունները:

Այսինքն՝ վերոգրյալ դեպքերում, անկախ այն հանգամանքից, թե վնասի առաջացման հիմքում ընկած անձի ոչ իրավաչափ արարքի հետևանքով վերջինս ենթակա է արդյոք քրեական պատասխանատվության, թե ոչ, առկա է արդյոք անձի մեղավորությունը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, թե ոչ, պետությանը վնաս պատճառելու փաստը հաստատող բավարար հիմքերի առկայության պարագայում դատախազությունն իրավասու է և նույնիսկ պարտավոր է վարչադատավարական կամ քաղաքացիադատավարական կարգով հայց հարուցելու համապատասխան դատարան՝ հարկերի և (կամ) տուրքերի չվճարման կամ պակաս վճարման համար կոնկրետ տնտեսվարող սուբյեկտին հարկային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու կամ վնասի հատուցման միջոցով պետության խախտված իրավունքը վերականգնելու նպատակով՝

պահպանելով նաև հայցային վաղեմության օրենքով սահմանված կամ դատավարական ժամկետները:

Մինչդեռ այլ է իրավիճակը 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված լիազորությունն իրականացնելու պարագայում: Նշված հիմքով հայց հարուցելու համար անհրաժեշտ նախապայման է հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը գույքային վնաս պատճառած լինելը:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածում ամրագրված է աննեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Նույն սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Այսինքն՝ խոսք կարող է լինել հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը գույքային վնաս պատճառած լինելու մասին միայն այն դեպքում, երբ անձի մեղքն ապացուցվել է օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, հետևաբար հանցանքի կատարումը հաստատող միակ թույլատրելի ապացույցն օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հարկ ենք համարում վերստին վկայակոչել ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԻ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ **հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու** հայց ներկայացնելու «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված լիազորության իրականացումը պայմանավորված է երկու փաստերի առկայությամբ՝

1) **հանցանքի կատարում, որը կարող է հաստատվել միակ թույլատրելի ապացույցով, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով և,**

2) հանցանքի արդյունքում պետությանը պատճառված գույքային վնաս:

Այսպիսով, գտնում ենք, որ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու պահանջ ներկայացնելու իր իրավունքը դատախազությունն իրավասու է իրացնել միայն այն դեպքում, երբ առկա է վնասի առաջացման հիմքում ընկած անձին մեղադրվող հանցանքը հաստատող թույլատրելի ապացույցը օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հայցային վաղեմության ժամկետի հոսքը պայմանավորված է այն հանգամանքով, թե վերջինս 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կոնկրետ որ կետով նախատեսված իր լիազորության շրջանակում է դիմում դատարան:

Մասնավորապես, 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված իր լիազորությունների շրջանակներում քաղաքացիադատավարական կարգով հայց հարուցելու համար դատավճռի առկայությունը պարտադիր չէ և պետության գույքային շահերին վնաս պատճառված լինելու մասին դատախազությունը կարող է իմանալ ինչպես իր լիազորություններն իրականացնելիս պետական մարմինների անգործությունը հայտնաբերելու, հայց հարուցելու լիազորությամբ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի օժտված չլինելու հանգամանքը պարզելու, պետական կամ տեղական ինքնակառավարման

մարմնի կողմից հայց հարուցելու մասին դատախազությանը դիմում ներկայացնելու, այնպես էլ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներ կայացնելու արդյունքում: Ըստ այդմ՝ նշված իրավանորմերի հիմքով հայցը դատախազությունը կարող է հարուցել այն պահից սկսած երեք տարվա ընթացքում, երբ վերը նկարագրված դեպքերում իրեն հայտնի կդառնա պետության գույքային շահերին վնաս պատճառված լինելու մասին:

Մինչդեռ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված՝ հանցագործությանը ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու հայց ներկայացնելու իր լիազորությունը դատախազությունը կարող է իրականացնել միայն հետևյալ երկու փաստերի առկայությամբ՝

1) հանցանքի կատարում, որը կարող է հաստատվել միակ թույլատրելի ապացույցով, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով և

2) հանցանքի արդյունքում պետությանը պատճառված գույքային վնաս²:

Վերոգրյալի համատեքստում պետք է փաստել, որ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու հայցը դատախազությունը կարող է ներկայացնել հակաօրինական արարքի կատարման մեջ անձի մեղավորությունը հաստատող դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԿԴ/0084/04/10 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 29.12.2010 թվականի վճռով բավարարվել է «Նելի Կարոլինա» ՍՊԸ-ի սեփական սնանկությունը ճանաչելու մասին դիմումը և «Նելի Կարոլինա» ՍՊԸ ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հատոր 2-րդ, գ.թ. 64-66**):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 14.11.2011 թվականի վճռով «Նելի Կարոլինա» ՍՊԸ-ի սնանկության վերաբերյալ գործն ավարտվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 61-63**):

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Վ. Չարխիֆալսյանի 17.02.2011 թվականի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (Կանխամտածված սնանկությունը) հատկանիշներով հարուցվել է թիվ 83150912 քրեական գործը (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչ Վ.Աբրահամյանի 26.04.2012 թվականի որոշմամբ նշված քրեական գործով Նունե Ժորայի Իսկոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով (Կեղծ սնանկությունը)՝ այն արարքի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչությունում հաշվառված «Նելի Կարոլինա» ՍՊԸ-ի միակ մասնակիցն ու տնօրենը, 2008-2009 թվականների ընթացքում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, սակայն հարկային տեսչություն ներկայացված հաստատագրված վճարի, եկամտահարկի, պետական տուրքի և պարտադիր սոցիալական ապահովագրության հաշվետվություններով հաշվարկված հարկերի և վճարների գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելով, սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում, պարտքերի չվճարման նպատակով ստեղծել է կեղծ սնանկության հատկանիշներ: Մասնավորապես, Նունե Իսկոյանը 26.11.2010 թվականին սեփական սնանկության ճանաչման մասին դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան,

² Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԴ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռարկել դատարանի 05.04.2013 թվականի որոշումը:

որի կողմից ճանաչվել է սնանկ: **Դրա հետևանքով պետությանը պատճառվել է խոշոր չափի՝ 2.828.671 ՀՀ դրամի վնաս:**

10.05.2012 թվականին Նունե Իսկոյանի վերաբերյալ թիվ 83150912 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 03.07.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով Նունե Իսկոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով և պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ զրկելով որոշակի գործունեությամբ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011 թվականի թիվ ԱԺՌ-277-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Նունե Իսկոյանն ազատվել է 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը կրելուց:

Դատախազությունը պետությանը պատճառված 2.828.671 ՀՀ դրամ գումարի չափով վնասը հատուցելու պահանջի վերաբերյալ հայցը դատարան է ներկայացրել 18.06.2015 թվականին:

Սույն գործով վեճի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելու համար անհրաժեշտ է պարզել, թե **պատասխանողի կողմից իրականացված ոչ իրավաչափ ինչ գործողության կամ անգործության** հետևանքով է պետությանը վնաս պատճառվել, երբ է իրավասու մարմինը, տվյալ դեպքում Դատախազությունը բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը:

Նախևառաջ հարկ ենք համարում ընդգծել, որ տվյալ դեպքում դատարան ներկայացված հայցադիմումում Դատախազությունը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, համաձայն որի՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը: Միևնույն ժամանակ, սակայն, դատախազությունը ներկայացված հայցում չի հիշատակել վերոգրյալ հոդվածի 2-րդ մասում թվարկված կոնկրետ այն լիազորությունը, որի հիման վրա հարուցել է պետական շահերի պաշտպանության հարց:

Թեև ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԴ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր 05.04.2013 թվականի որոշմամբ արձանագրել է, որ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված կոնկրետ դրույթների հիշատակումը հայցում կամ բողոքում չեն կարող դիտվել որպես հայցի հիմք (իրավական հիմք) և, որ դատարանը պարտավոր է ստուգել դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության առկայությունը, անկախ նրանից նշվել է լիազորություններից մեկը, թե մյուսը կամ էլ որևէ մեկը չի նշվել, այդուհանդերձ ստորադաս դատարանները սույն գործով չեն բացահայտել, թե Դատախազությունը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում նշված կոնկրետ որ լիազորության իրացմամբ է հայցադիմումը ներկայացրել դատարան:

Ընդ որում նշված հարցը բացահայտված չէ նաև սույն գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ, որով Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել միայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին և որևէ վերլուծություն չի կատարել նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի վերաբերյալ: Մասնավորապես, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջը միայն հանրորեն վտանգավոր

արարքը հանցագործություն համարվելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պարագայում ներկայացնելու հնարավորության մասին Դատախազության փաստաթղթի առնչությամբ վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական հայցը կարող է հարուցվել ինչպես ավելի վաղ, քան մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու փուլը, այնպես էլ քրեական գործի դատական քննության ցանկացած փուլում՝ մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը՝ կախված այն հանգամանքից, թե երբ են ի հայտ եկել հայց հարուցելու նախադրյալները: Մինևույն տրամաբանությունն է գործում նաև քաղաքացիական դատավարությունում՝ հայց կարող է հարուցվել ցանկացած պահի, երբ առկա են հայց հարուցելու նախադրյալները: Մասնավորապես՝ հանցագործությամբ պետության գույքային շահերին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Դատախազությունը կարող է հայց հարուցել ցանկացած պահի, երբ իր տիրապետության ներքո առկա կլինեն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման հետևանքով պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ բավարար փաստեր: Հակառակ մեկնաբանությունը կնշանակի, որ, բացի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքերից, ոչ մի այլ դեպքում (օրինակ՝ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու և այլն) անձի նկատմամբ հնարավոր չի լինի քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց հարուցել:

Վճռաբեկ դատարանը հատկանշական է համարել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը սահմանազատել են քրեական և քաղաքացիական դատավարություններում Դատախազության՝ հայց հարուցելու լիազորությունները, և ըստ այդ իրավակարգավորման՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումն առանձնացված է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումից: Նշված նորմերի տառացի մեկնաբանությունից բխում է, որ Դատախազությունը քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցում է ցանկացած պահի, երբ օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է պետության գույքային շահերին վնաս պատճառելու վերաբերյալ փաստ՝ անկախ քրեական գործի հարուցման, օրինական ուժի մեջ մտած դատավճռով վնաս պատճառած անձի դատապարտված լինելու հանգամանքներից:

Փաստորեն Վճռաբեկ դատարանն անտեսել է ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԳ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն իրավասու է հայց ներկայացնել վարչադատարանական կամ քաղաքացիադատարանական կարգով, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ կամ երբ հայց հարուցելու լիազորությամբ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին օժտված չէ, որպիսի պարագայում դատախազությունն օգտվում է ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով հայցվորին վերապահված բոլոր իրավունքներից և կրում նրանց պարտականությունները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված հիմքով հայց հարուցելու համար անհրաժեշտ նախապայման է հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը գույքային վնաս պատճառած լինելը:

Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանի վերը վկայակոչված որոշման համաձայն՝ հիշատակված հոդվածի դրույթների գնահատումը կարող է տեղի ունենալ պատշաճ հայցվորի

հարցը քննարկելու համատեքստում: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում նշված կոնկրետ լիազորության հիմքով է պայմանավորված ինչպես պատշաճ հայցվորի հարցի պարզումը, այնպես էլ վնասի առաջացման և հատուցման հիմքերը հաստատող ապացույցների գնահատումը, քանի որ պետական շահերի պաշտպանության իրականացումը կախված լիազորությունների բովանդակությունից, ունի իրականացման տարբեր մեխանիզմներ: Մասնավորապես, եթե իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն իրավասու է հայց ներկայացնել վարչադատավարական կամ քաղաքացիադատավարական կարգով՝ անկախ հանրորեն վտանգավոր արարքի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության, ապա նույն իրավանորմի 4-րդ կետով նախատեսված դեպքում դատավճռի առկայությունը, մեր գնահատմամբ, պարտադիր է:

Վերոգրյալի համատեքստում գտնում ենք, որ առանց բացահայտելու այն հարցը, թե սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացող հայցադիմումը Դատախազության կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր որ լիազորությունների շրջանակներում է ներկայացվել, հնարավոր չէ գնահատական տալ պետական շահերի պաշտպանության իրականացման համապատասխան լիազորության կիրառման հիմքերի թույլատրելի լինելու և դրա իրականացման մեխանիզմների վերաբերյալ: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, այդ հարցը քննարկման առարկա չի դարձվել ինչպես ստորադաս դատարանների, այնպես էլ Վճռաբեկ դատարանի կողմից:

Սույն գործով Դատախազության կողմից ներկայացված հայցադիմումի բովանդակության և հայցապահանջի հիմքում ընկած փաստական հանգամանքների ու դրանք հիմնավորող ապացույցների համադրմամբ հանգում ենք այն եզրակացության, որ տվյալ դեպքում պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջը ներկայացվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված լիազորության շրջանակներում:

Այսպես. պետությանը պատճառված 2.828.671 ՀՀ դրամի վնասի առաջացման հիմքը Նունե Իսկոյանի կողմից կատարված ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված հակաիրավական արարքն է: Մասնավորապես, Նունե Իսկոյանը, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչությունում հաշվառված «Նելի Կարոլինա» ՍՊ ընկերության միակ մասնակիցն ու տնօրենը, ստեղծել է կեղծ սնանկության հատկանիշներ ու սնանկության ճանաչման մասին դիմում ներկայացնելու արդյունքում նշված ընկերությունը ճանաչվել է սնանկ: **Դրա հետևանքով պետությանը պատճառվել է խոշոր չափի՝ 2.828.671 ՀՀ դրամի վնաս:**

Այսինքն՝ հաշվի առնելով սույն գործով հայցի փաստական հանգամանքները և ի հիմնավորումն դրանց՝ դատարան ներկայացված ապացույցները, գտնում ենք, որ պետությանը 2.828.671 ՀՀ դրամի վնասը հասցվել է հանցագործության, այն է՝ կեղծ սնանկության հետևանքով:

Գտնում ենք, որ սույն գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 03.07.2012 թվականի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո միայն Դատախազությունը կարող էր իմանալ հանցանքի կատարման և դրա հետևանքով ուղղակիորեն պետությանը գույքային վնաս պատճառելու, այսինքն՝ պետության իրավունքի խախտման մասին, հետևաբար հիմնավոր է վճռաբեկ բողոքի պատասխանում Դատախազության ներկայացրած այն փաստարկը, որ հանցագործությունը պատճառված վնասի հատուցման համար հնարավոր է հայց ներկայացնել միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր արարքը հանցագործություն է համարվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Նման պայմաններում անհիմն ենք համարում Դատարանի հետևությունն այն մասին, որ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ

վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ուղարկելիս Դատախազությունն իմացել է (պետք է իմացած լիներ) պետությանը պատճառված վնասի առկայության, և որ նույնն է՝ իր իրավունքների խախտման մասին, հետևաբար հայցային վաղեմության ժամկետները սկսել են հոսել 10.05.2012 թվականից:

Անդրադառնալով սույն գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշմանը, ըստ որի՝ դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու պարագայում ապացուցված է համարում անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ, հարկ են համարում արձանագրել հետևյալը.

Ռեն ԸԸ քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի կանոնակարգումների համաձայն, դատախազն ուսումնասիրելով մեղադրական եզրակացությանը արացված գործը՝ ի թիվս այլնի պնդում է՝ նաև այն հարցը, թե ապացուցված է արդյոք մեղադրյալին մեղազրկող արարքը և այն պարունակում է արդյոք հանցակազմ, հիմնավորված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը, այդուհանդերձ մեղադրական եզրակացության հաստատումը դեռևս բավարար չէ քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելու համար, քանի որ իրավական պետությունում, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, անձի մեղավորությունը հանցագործության մեջ, րվյալ դեպքում կեղծ սնանկությունը, կարող է հասարակել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռով և ոչ երբեք մեղադրական եզրակացությամբ:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 11.02.2003 թվականի վճռի վկայակցմանը, ապա հարկ ենք համարում ընդգծել, որ մեր համոզմամբ նշված վճռով արտահայտված իրավական դիրքորոշումը սույն գործով կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործի փաստերի համաձայն՝ դիմումատու Իվար Ռինգվոլդին ներկայացված է եղել մեղադրանք անչափահաս Գ-ի նկատմամբ 1986-ից մինչև 1990 թվականներն ընկած ժամանակահատվածում սեռական բնույթի բռնություն իրականացնելու համար: Քրեական գործը հարուցվել է Էյդսիվաթինգի Բարձր դատարանում, որը քննելով այն, որոշել է դիմումատուին արդարացնել՝ մինչև ժամանակ մերժելով 110.000 նորվեգական կրոն՝ որպես ոչ դրամական վնաս հատուցելու անչափահաս Գ-ի պահանջը: Գերագույն դատարանը, քաղաքացիական դատավարության կանոնակարգումներին համապատասխան քննելով գործը, որոշել է պարտավորեցնել դիմումատուին Գ-ին վճարել 75.000 նորվեգական կրոն՝ որպես ոչ նյութական վնաս (**non-pecuniary**) (կետեր 11-12, 16):

Եվրոպական դատարան ներկայացված դիմումով դիմումատուն առաջարկել է իր գործը քննել *Sekanina v. Austria* (judgment of 15 August 1993, Series A no. 266-A)-ի գործի նմանությամբ, որտեղ դատարանը տվել է **ծանրակշիռ նշանակություն քրեական գործի քննության և վնասների հատուցման գործի միջև առկա կապի աստիճանին**՝ հայտնելով, որ վերջինիս նկատմամբ կիրառվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը (կետ 30):

Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք տվյալ գործով հատուցման գործի քննությունը հանգեցրել է դիմումատուին «քրեորեն մեղադրելուն», և այն դեպքում, երբ դա այդպես չէ, այսինքն՝ չի հանգեցրել դրան, արդյո՞ք հատուցման գործի քննությունը քրեական գործի քննության հետ այնպես էր կապված, որ հատուցման գործի քննությունը ևս ընկներ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի³ գործողության դաշտ, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ հատուցման վճարման վերաբերյալ քննարկվող պահանջը չի դիտարկվել որպես «քրեական մեղադրանք» իրենց ազգային օրենսդրության համաձայն (կետ 37):

³ Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

Միննույն ժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը կրկին հարկ է համարում նշել, որ քրեական գործի ելքը որոշիչ չէր հայրուցման գործի համար: Կոնկրետ այս գործով իրավիճակը հակասակ էր. չնայած դիմումնապետի արդարացմանը՝ իրավաբանորեն հնարավոր էր փալ հայրուցում: Անկախ դիմումնապետի դեմ քրեական գործով կատարված եզրահանգումից հայրուցման գործը քրեական գործի ուղղակի սիքվելը՝⁴ չէր: Այս կապակցությամբ սույն գործը միանշանակ փարբերվում է վերը վկայակցված այն գործերից, որոնցում դատարանը գրել է, որ քննարկվող գործերը քրեական գործի հետևանքն էին կամ ուղեկցում էին դրան (...) (կետ 41)»:

Համեմատելով վերոգրյալ գործի և սույն գործի փաստական հանգամանքները, գտնում ենք, որ Եվրոպական դատարանի վերոգրյալ վճռով արտահայտած իրավական դիրքորոշումը չի կարող կիրառվել կեղծ սնանկության հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի հատուցման պահանջի նկատմամբ, քանի որ տվյալ դեպքում կեղծ սնանկության հատկանիշներով հարուցված քրեական գործի ելքը որոշիչ է հատուցման գործի համար, մասնավորապես Դատախազության կողմից պահանջվող գումարը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հակաիրավական արարքի՝ կեղծ սնանկության ուղղակի հետևանքով առաջացած վնաս է, որպիսի պահանջ ներկայացնելու համար պարտադիր է այդ արարքի կատարման մեջ անձի մեղավորությունը հաստատող դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ սույն գործի հարուցման հիմք հանդիսացող հայցադիմումը դատարան է ներկայացվել հայցային վաղեմության ժամկետի պահպանմամբ, այն է՝ 18.06.2015 թվականին, այսինքն՝ Նունե Իսկոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով մեղավոր ճանաչելու և նրան 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման շրջանապարտելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 03.07.2012 թվականի դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ժամկետում, ուստի հայցային վաղեմության ժամկետը բաց թողնված լինելու հիմքով Դատախազության հայցը մերժման ենթակա լինելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգման հետ համակարծիք չենք:

Վերը նշվածի հաշվառմամբ գտնում ենք, որ հայցադիմումը հայցային վաղեմության ժամկետի պահպանմամբ ներկայացված լինելու հիմքով Դատարանի վճիռը բեկանելով և Դատախազության հայցը բավարարելով՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է իրավաչափ դատական ակտ, ուստի համաձայն չենք Վերաքննիչ դատարանի 07.11.2018 թվականի որոշումը բեկանելու և Դատարանի 02.07.2018 թվականի վճռին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի եզրահանգման հետ և գտնում ենք, որ տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան
Ն. Տավարացյան

⁴ Տվյալ դեպքում գործ, որը շարունակում կամ ընդլայնում է ավելի վաղ քննված գործը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԴԴ/3423/02/14**
2020թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԱԴԴ/3423/02/14

Նախագահող դատավոր՝

Մ. Հարթենյան

Դատավորներ՝

Կ. Չիլինգարյան

Ա. Սմբատյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 17-ին
գրավոր ընթացակարգով քննելով Գեորգի Բաղդասարյանի ներկայացուցիչ Լևոն
Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.07.2019
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հրաչյա Գրիգորյանի ընդդեմ Գեորգի Բաղդասարյա-
նի, երրորդ անձ Ավետիք Պողոսյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ
կիրառելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Հրաչյա Գրիգորյանը պահանջել է 06.11.2011 թվականի առուվա-
ճառքի պայմանագրով իրեն ճանաչել Երևան քաղաքի Կովկասյան փողոցի թիվ 42 հաս-
ցեում գտնվող տան 1/2 բաժնի գնորդ փոխանցելով պայմանագրով տան 1/2 մասի գնորդի
իրավունքները և պարտականությունները և որպես հետևանք տան 1/2 բաժնի նկատմամբ
անվավեր ճանաչել Գեորգի Բաղդասարյանի անվամբ կատարված իրավունքի պետական
գրանցումը:

22.01.2016 թվականին Հրաչյա Գրիգորյանը դատարան է ներկայացրել հայցի հիմքերը
լրացնելու և հայցային պահանջները փոփոխելու վերաբերյալ դիմում և խնդրել է Գեորգի

Բաղդասարյանից բռնագանձել 172.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ Գեորգի Բաղդասարյանի համաձայնության դեպքում՝ 06.11.2011 թվականի առուվաճառքի պայմանագրով իրեն ճանաչել ք. Երևան, Կովկասյան փողոց, 42 հասցեում գտնվող անհատական բնակելի տան 2/3 բաժնի գնորդ իրեն փոխանցելով 2/3 մասի գնորդի իրավունքներն ու պարտականությունները, որպես հետևանք անվավեր ճանաչել 2/3 մասի նկատմամբ Գեորգի Բաղդասարյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը:

04.12.2018 թվականին Հրաչյա Գրիգորյանը դարձյալ հայցի հիմքերը լրացնելու և հայցային պահանջները փոփոխելու մասին դիմում է ներկայացրել դատարան, որով խնդրել է Հրաչյա Գրիգորյանի, Գեորգի Բաղդասարյանի և Մաթևոս Գևորգյանի միջև 08.09.2011 թվականին կնքված գործարքի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ Գեորգի Բաղդասարյանին պարտավորեցնելով վերադարձնել գործարքով ստացած 172.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարը:

Դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) 04.02.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է՝ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ Գեորգի Բաղդասարյանից հոգուտ Հրաչյա Գրիգորյանի բռնագանձել 172.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Գեորգի Բաղդասարյանից հոգուտ Հրաչյա Գրիգորյանի բռնագանձել 172.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ 06.11.2011 թվականից հաշվեգրված տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի համապատասխան, մինչև գումարը վերադարձնելու օրը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.07.2019 թվականի որոշմամբ Գեորգի Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.02.2019 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գեորգի Բաղդասարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հրաչյա Գրիգորյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-305-րդ հոդվածները, 331-րդ, 411-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածը, խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ և 130.1-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, 172.000 ԱՄՆ դոլար գումարը դիտարկելով առոչնչության հետևանք, կիրառել է առոչինչ գործարքների անվավերության հետևանքների համար սահմանված հայցային վաղեմության 10 տարվա ժամկետը, սակայն գործով ձեռք բերված փաստերով հիմնավորվում է, որ Դատարանը պետք է կիրառեր հայցային վաղեմության եռամյա ժամկետը, քանի որ 172.000 ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու պահանջը, ըստ էության, փոխառությամբ տրամադրված գումարը վերադարձնելու պահանջ է, իսկ այդպիսի պահանջի նկատմամբ կիրառման ենթակա է հայցային վաղեմության երեք տարվա ժամկետը:

Քաղաքացիական գործից բացակայում են 14.07.2015 թվականի նախնական դատական նիստի, 19.07.2016 թվականի նախնական դատական նիստի և 12.05.2017 թվականի դատական նիստի ձայնային արձանագրությունները, և առկա են միայն տվյալ նիստերի համակարգչային համառոտագրությունները:

Բացի այդ, 10.10.2017 թվականի, 27.11.2017 թվականի, 26.02.2018 թվականի, 15.06.2018 թվականի դատական նիստերի արձանագրումը կատարվել է պարզ թղթային եղանակով,

և առկա չէ ապացույց առ այն, որ դատական նիստերի ժամանակ համակարգչային ձայնագրման համակարգն անսարք է եղել, ընդ որում, 15.06.2018 թվականի դատական նիստի արձանագրությունը ստորագրված չէ դատական նիստերի քարտուղարի կողմից: Այսինքն՝ վերը նշված 4 դատական նիստերի արձանագրումը դատարանում կատարվել է օրենքի պահանջների խախտմամբ, ըստ այդմ՝ փաստացի ձայնագրման համակարգի առկայության պայմաններում, չի իրականացվել ձայնային արձանագրում, որի հիմքով փաստացի վերը նշված 4 դատական նիստերի ձայնային արձանագրությունները ևս բացակայել են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.07.2019 թվականի որոշումը և հայցը մերժել ամբողջությամբ կամ գործն ուղարկել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պապաստանի հիմնավորումները

Դատական նիստերի արձանագրությունների բացակայության վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներն անհիմն են, քանի որ գործն այլ դատավորի կողմից վարույթ ընդունվելուց հետո գործի քննությունն ամբողջ ծավալով վերսկսվել է, և բողոքաբերը չի ներկայացրել որևէ փաստարկ առ այն, որ գործի նախորդ դատաքննության ընթացքում իր նշած թվով յոթ դատական նիստերի ժամանակ որևէ ապացույց է ներկայացրել կամ դիրքորոշում է հայտնել, որը հաշվի չի առնվել Դատարանի կողմից: Բացի դրանից, բողոքաբերը նշված փաստերի առնչությամբ դիրքորոշում չի հայտնել վերաքննիչ ատյանում:

Բողոքաբերի փաստարկները ձևական են և չեն կարող դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ: Բողոքաբերը չի հիմնավորել դատավարական իրավունքի նորմի խախտման փաստը, որը հանգեցրել է արդարադատության բուն էության խաթարմանը, որի պայմաններում վճռաբեկ բողոքը ենթակա չէ վարույթ ընդունելու: Բողոքաբերի փաստարկները, որոնք դրված են վճռաբեկ բողոքի հիմքում, անհիմն են, քանի որ Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատել է բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով հաստատվել է այն հանգամանքը, որ Համաձայնագիր-պարտավորագիրը՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելու մասով, առոչինչ էր, ինչն ընդունել է պատասխանողը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ամալյա Տոնոյանի՝ որպես վաճառողի և Գեորգի Բաղդասարյանի՝ որպես գնորդի միջև 06.09.2011 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում ք. Երևան, Կովկասյան փողոց, 42 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 127.800.000 ՀՀ դրամ, որը վճարվելու է պայմանագրի կն քման պահին: Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման, պայմանագրից ծագող իրավունքը՝ պետական գրանցման (**հատոր 1-ին, գ.թ. 9-11**):

2) Հրայր Գրիգորյանի, Գեորգի Բաղդասարյանի և Մաթևոս Գևորգյանի կողմից 08.09.2011 թվականին ստորագրվել է «Համաձայնագիր-պարտավորագիր» վերտառությամբ փաստաթուղթը հետևյալ բովանդակությամբ. «Մենք՝ Հրայր Գրիգորյան, Գեորգի Բաղդասարյան և Մաթևոս Գևորգյան կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին: Մենք բոլորս գնեցինք ք. Երևան, Կովկասյան փողոց, 42 հասցեի սեփական տունը՝ պատկանող Ամալյա Ազատի Տոնոյանին, այն արժեքով, որը նշված է 06.09.2011թ. առուժալի պայմանագրով՝ կնքված Գեորգի Բաղդասարյանի և Ամալյա Տոնոյանի միջև վերը նշված գույքի առուժալի վերաբերյալ: Այդ տան արժեքի 68.000 ԱՄՆ դոլար վճարել է Գ. Բաղդասարյանը, 60 000 ԱՄՆ դոլար վճարել է Մ. Գևորգյանը, իսկ մնացած գումարը վճարել է Հ. Գրիգորյանը: Այդ տունն իրականում հանդիսանում է մեր բոլորի

սեփականությունը, սակայն ձևակերպվել է ժամանակավոր Գ. Բաղդասարյանի անունով: Մինչև 05.11.11թ. Գ. Բաղդասարյանը պարտավորվել է վճարել Մ. Գևորգյանի և Հ. Գրիգորյանի վճարած գումարները, հակառակ դեպքում գույքը պետք է վերաձևակերպվի Մ. Գևորգյանի և Հ. Գրիգորյանի անունով՝ որպես սեփականություն: Մինչև վերը նշված ժամկետը Գ. Բաղդասարյանն իրավունք չունի այդ գույքն օտարել, գրավ դնել, որևէ գործարք անել առանց Մ. Գևորգյանի և Հ. Գրիգորյանի: Մինչև 05.11.2011թ. Գ. Բաղդասարյանի կողմից նշված գումարները մեզ չվճարելու դեպքում նշված տունը պետք է վաճառվի, իսկ ստացված գումարը՝ բաշխվի մեզ համամասնորեն» (**հատոր 2-րդ, գ.թ. 145**):

3) Հրայա Գրիգորյանը **05.11.2014 թվականին** հայցադիմում է ներկայացրել Դատարան (հանձնել է փոստային կապի ծառայությանը) ընդդեմ Գեորգի Բաղդասարյանի գնորդի իրավունքները և պարտականությունները փոխանցելու պահանջի մասին, որով խնդրել է 06.11.2011 թվականի առուվաճառքի պայմանագրով իրեն ճանաչել ք. Երևան, Կովկասյան փողոց, 42 հասցեում գտնվող տան 1/2 բաժնի գնորդ՝ իրեն փոխանցելով պայմանագրով տան 1/2 մասի գնորդի իրավունքները և պարտականությունները և որպես հետևանք տան 1/2 բաժնի նկատմամբ անվավեր ճանաչել Գեորգի Բաղդասարյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցման համապատասխան համարի տակ կատարված գրառումը (**հատոր 1-ին, գ.թ. 3-6**):

4) 04.12.2018 թվականին Հրայա Գրիգորյանը դարձյալ հայցի հիմքերը լրացնելու և հայցային պահանջները փոփոխելու մասին դիմում է ներկայացրել դատարան, որով խնդրել է Հրայա Գրիգորյանի, Գեորգի Բաղդասարյանի և Մաթևոս Գևորգյանի միջև 08.09.2011 թվականին կնքված գործարքի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ Գեորգի Բաղդասարյանին պարտավորեցնելով վերադարձնել գործարքով ստացած 172.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարը (**հատոր 3-րդ, գ.թ. 46**):

5) 14.11.2014 թվականին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Մխիթարյանը կայացրել է որոշում Հրայա Գրիգորյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 1**):

6) 24.09.2018 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ.Գրիգորյանը կայացրել է որոշում սույն քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին (**հատոր 3, գ.թ. 1**):

4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ վճարել բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի վերաբերյալ գործերով քննության ենթակա հարցերը պարզելու ինչպես նաև այդ համատեքստում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճարել դատարանը սույն վճարել բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ

1. *հայցային վաղեմության կիրառման առանձնահատկություններին՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ ներկայացված լինելու պայմաններում:*

2. *դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերից՝ դատական նիստի արձանագրությունը գործից բացակայելու հիմքին:*

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արձանագրել է, որ ցանկացած քաղաքացիաիրավական գործարք կարող է դրա մասնակիցների համար առաջացնել ցանկալի իրավական հետևանքներ, եթե այն վավեր է, այսինքն՝ համապատասխանում է օրենքից բխող որոշակի պահանջների ու պայմանների: Այն դեպքում, երբ գործարքը չի համապատասխանում այդ պահանջներին, ապա այն համարվում է անվավեր կամ օրենքով սահմանված հիմքերով դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում (վիճահարույց գործարք), կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, քանի որ այդպիսի գործարքն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա, այսինքն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ օրենքով նախատեսված չեն (*լրեն Վահագն Կապլանյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն սպահովող ծառայության թիվ ԼԳ/0435/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Նույն օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է հայցային վաղեմության հատուկ ժամկետներ՝ ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը եթե օրենքով դիմում տալու համար այլ ժամկետ նախատեսված չէ: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել դրա կատարման օրվանից տասը տարվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշումներից մեկով անդրադառնալով հայցային վաղեմության կիրառման հարցին, նշել է, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հայցի մերժման ինքնուրույն և բացառիկ հիմք է: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ, սակայն, հայցը մերժելու նշված հիմքը չի կարող մեկուսացված լինել գործի փաստական հանգամանքներից և դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերից: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հայցային վաղեմության ինստիտուտի առանձնահատկությունները, գտել է, որ հայցը մերժելու նշված հիմքի առկայությունը որոշակիորեն պայմանավորված է վիճելի իրավահարաբերության ճիշտ որակմամբ, դրա առանձին տարրերի՝ սուբյեկտի, օբյեկտի և բովանդակության բացահայտմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխել է օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ նման անհրաժեշտությունը որոշ դեպքերում ուղղակի բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումից: Այսպես, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ: Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քանի դեռ դատարանը չի պարզել կիրառելի օրենսդրության հարցը, նյութական իրավունքի նորմերով արժևորվող փաստերի շրջանակը, չի վերլուծել կողմերի փոխհարաբերություններում առկա պայմանագրային դրույթները, չի պարզել սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության ծագման պահը, չի կարող եզրահանգման գալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ (յո՛ւն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ալյակի» ՄՊԸ-ի թիվ ՄԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմության կիրառելու վերաբերյալ, դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետը, պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը: Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը հայցը մերժելու հիմք է, անկախ այն հանգամանքից, թե հայցը հիմնավոր է, թե՛ ոչ: Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում

ընդգծել, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը քննարկելիս դատարանը նախ և առաջ պարզում է հարցն առ այն, թե հայցային վաղեմության ինչպիսի ժամկետներ են կիրառելի տվյալ դեպքում: Մասնավորապես, առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջի քննության դեպքում, եթե գործին մասնակցող անձը դատարանին խնդրել է կիրառել հայցային վաղեմություն, դատարանը պետք է պարզի, թե ինչ տեսակի պայմանագրի անվավերության հետևանքներ են տվյալ գործով քննարկվում, ինչ բնույթի հարաբերություններ են կարգավորվում դրանով, և արդյոք տվյալ տեսակի պայմանագրին ներկայացված են այնպիսի պահանջներ, որոնք չպահպանելը հանգեցնում է առոչնչության: Միայն այդ հանգամանքները պարզելուց հետո կարող է դատարանը հետևություն անել այն մասին, թե տվյալ գործարքի նկատմամբ հայցային վաղեմության ինչպիսի ժամկետներ են կիրառելի՝ ընդհանուր, թե հատուկ, և հայցային վաղեմության համապատասխան ժամկետի խախտում տեղի ունեցել է, թե՛ ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) 04.02.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է կիրառել առոչինչ գործարքի հետևանքներ՝ Գեորգի Արսենի Բաղդասարյանից հոգուտ Հրաչյա Մարատի Գրիգորյանի բռնագանձել 172.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ հետևյալ հիմնավորմամբ. «Դատարանը փաստում է, որ պատասխանող կողմը, ներկայացված դիրքորոշմամբ ընդունել է համաձայնագիր-պարտավորագրի՝ մատով առոչինչ լինելու, ինչպես նաև համաձայնագրով ամրագրված հանգամանքները, այդ թվում նաև՝ գումարի չափը: Դատարանը հաստատված է համարում, որ պայմանագիրը կնքվել է հասարակ գրավոր ձևով առանց նոտարական վավերացման, որի հիմքով խնդրո առարկա գործարքն առոչինչ է, որպիսի փաստն ընդունել է նաև պատասխանողը: Այսինքն, խնդրո առարկա գործարքի առոչինչ լինելն անվիճելի փաստ է: Հետևաբար, գործարքն առոչինչ լինելու պարագայում դրա նկատմամբ ենթակա են կիրառման անվավերության հետևանքներ, այսինքն՝ կողմերը պետք է վերադարձնեն դրա արդյունքում իրենց ստացածն ամբողջությամբ: (...): Դատարանը, հաշվի առնելով այն, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ներառում է առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառում, իսկ առոչինչ գործարքի նկատմամբ կիրառման ենթակա 10 տարի հայցային վաղեմության ժամկետը չի լրացել հայցը ներկայացնելու պահին, գտնում է, որ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ենթակա է մերժման, հետևաբար՝ հայցվորի բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը հարգելի համարելու և հայցային վաղեմությունը վերականգնելու մասին միջնորդությունը, դրա իրավաչափությունը չի քննարկվում դատարանի կողմից»:

Վերաքննիչ դատարանի 19.07.2019 թվականի որոշմամբ Գեորգի Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.02.2019 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ հետևյալ հիմնավորմամբ. «Դատարանը հաստատված է համարել, և վերաքննիչ բողոքում չի վիճարկվում համաձայնագիր-պարտավորագրի առոչինչ լինելու հանգամանքը (անվիճելի փաստ): (...): Վկայակոչված հողվածներից հետևում է, որ գործարքն առոչինչ է՝ անվավեր, օրենքի ուժով, անկախ այն այդպիսին ճանաչելուց, և կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ստացածը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխհատուցել դրա արժեքը: Հետևաբար համաձայնագիր-պարտավորագրով ամրագրված գումարը՝ որպես առոչինչ գործարքով վճարված գումար հայցվորին վերադարձնելու վերաբերյալ Դատարանի հետևությունը Վերաքննիչ դատարանը գնահատում է իրավաչափ:

(...)

Անդրադառնալով բողոք ներկայացրած անձի պնդմանն այն մասին, որ Դատարանը պետք է կիրառեր հայցային վաղեմության եռամյա ժամկետը, քանի որ պատասխանողի կողմից նաև միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի ուժով ներկայացված հայցապահանջի նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ հայցվորի կողմից հայցապահանջի իրավական հիմքը փոփոխվել է 04.12.2018 թվականի միջնորդությամբ (տես հատոր 3-րդ, գ.թ. 44-46), որում որպես հայցապահանջի իրավական հիմք վկայակոչվել են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ, 305-րդ հոդվածները:

(...)

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Գրիգորյանը քաղաքացիական գործը վարույթ է ընդունել 24.09.2018 թվականի որոշմամբ, գործի քննությունը սկսել սկզբից և հրավիրել նախնական դատական նիստեր: Հայցվորը հայցի հիմքերը լրացնելու և հայցապահանջները փոփոխելու մասին միջնորդությունը Դատարան է ներկայացրել 04.12.2018 թվականին՝ մինչև գործով դատաքննություն նշանակելը, ինչը բխում է օրենքով սահմանված իրավակարգավորումներից, իսկ մինչ դատավորի փոխարինումն իրականացված դատավարական գործողությունները չեն կարող գործը քննող Դատարանին որպես դատավարական սխալ վերագրվել»:

Այսպիսով հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի՝ վերը շարադրված եզրահանգումներից հետևում է, որ խնդրո առարկա գործարքի առոչինչ լինելու փաստը հաստատված է համարվել բացառապես դրա անվիճելիության հիմքով՝ առանց քննության առարկա դարձնելու գործարքը ձևակերպող պայմանագրի տեսակը, մասնավորապես՝ դրանով կարգավորվող իրավահարաբերության բնույթը: Մինչդեռ որոշելու համար, թե արդյոք գործարքն առոչինչ է, պետք է պարզել նախ գործարքի (պայմանագրի) տեսակը, ապա այն, թե արդյոք ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է տվյալ տեսակի պայմանագրերին ներկայացվող պահանջներ, որոնք չպահպանելը հանգեցնում է առոչնչության: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ գործարքի առոչնչության հարցի քննությունը չի կարող սահմանափակվել անվիճելի լինելու ուժով այդ փաստը հաստատված համարելով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս առոյաններում առնվազն քննության առարկա չի դարձել սույն գործի քննության համար էական և առանցքային նշանակություն ունեցող այն հանգամանքը, թե արդյոք վիճարկվող գործարքը կնքելիս կողմերը չեն պահպանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այնպիսի պահանջներ, որոնք չպահպանելու դեպքում տվյալ գործարքն առոչինչ է: Ուստի, նշված հանգամանքները ենթակա են պարզման սույն գործի նոր քննության ժամանակ:

Այս համատեքստում անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետի կիրառմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միայն վերոնշյալ հանգամանքները (*գործարքի (պայմանագրի) տեսակը, տվյալ տեսակի պայմանագրերին ներկայացվող պահանջները, որոնք չպահպանելը հանգեցնում է առոչնչության*) պարզելուց հետո է հնարավոր եզրահանգում կատարել հետևյալ հարցերի վերաբերյալ՝ տվյալ գործով ներկայացված պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ինչպիսի՞ ժամկետներ են գործում՝ ընդհանուր, թե հատուկ, ե՞րբ են սկսել հոսել այդ ժամկետները, և արդյո՞ք հայցային վաղեմության ժամկետները տվյալ գործով բաց են թողնված, թե՛ ոչ: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նոր քննության ժամանակ պայմանագրին վերաբերող հանգամանքները պարզելուց հետո է միայն հնարավոր անդրադառնալ հայցային վաղեմություն կիրառելու կամ չկիրառելու հարցին, ինչպես նաև հայցվորի կողմից ներկայացված՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողած ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդության հիմնավորվածությանը:

2) Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև վճռաբեկ բողոքում բարձրացված այն փաստարկներին, որոնք վերաբերում են դատական ակտի պարտադիր բեկանման հիմք հանդիսացող դատական սխալի առկայության հարցին, մասնավորապես՝ դատական նիստի արձանագրությունը գործից բացակայելուն:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի քննությունն

իրականացվում է դատարանի անփոփոխ կազմով: Գործի քննության ընթացքում դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունն սկսվում է սկզբից:

Նույն օրենսգրքի 220.4 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը:

Սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձի պնդմամբ՝ 14.07.2015 թվականի նախնական դատական նիստի, 19.07.2016 թվականի նախնական դատական նիստի և 12.05.2017 թվականի դատական նիստի ձայնային արձանագրությունները բացակայում են, և առկա են միայն տվյալ նիստերի համակարգչային համառոտագրությունները: Միաժամանակ, 10.10.2017 թվականի, 27.11.2017 թվականի, 26.02.2018 թվականի, 15.06.2018 թվականի դատական նիստերի արձանագրումը կատարվել է պարզ թղթային եղանակով, և առկա չէ ապացույց առ այն, որ դատական նիստերի ժամանակ համակարգչային ձայնագրման համակարգը անսարք է եղել, ընդ որում, 15.06.2018 թվականի դատական նիստի արձանագրությունը ստորագրված չէ դատական նիստերի քարտուղարի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նախկին օրենսգրքի 9-րդ հոդվածի կարգավորումների տրամաբանությունից բխում է, որ դատարանին կարող են վերագրվել միայն տվյալ կազմով գործի քննության ժամանակ թույլ տրված խախտումները, քանի որ օրենսդիրն ինպեստիվ կերպով սահմանում է գործի քննությունը սկզբից սկսելու պահանջ այն նպատակով, որպեսզի կատարվեն բոլոր անհրաժեշտ գործողությունները սկզբից, բայց արդեն փոխարինված դատավորի կազմով գործող դատարանի կողմից գործին մասնակցող անձանց համար կրկին ապահովելով բոլոր հնարավորությունները ներկայացնելու իրենց դիրքորոշումները: Ինչ վերաբերում է մինչև դատավորի փոխարինումը դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտումներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունը սկզբից սկսելու վերաբերյալ պարտադիր պահանջը միտված է նաև բացառելու մինչև դատավորի փոխարինումը դատարանի կողմից թույլ տրված հնարավոր խախտումները կամ թերացումները: Ուստի, այն դեպքում երբ տեղի է ունենում դատավորի փոխարինում և գործի քննությունը սկսվում է սկզբից, տվյալ գործը քննող արդեն այլ կազմով գործող դատարանին կարելի է վերագրել միայն այնպիսի խախտումներ, որպիսիք գործի քննությունը սկզբից սկսելուց հետո թույլ են տրվել հենց փոխարինված կազմով գործող դատարանի կողմից:

Վերը շարադրված վերլուծությունների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Գրիգորյանի կողմից վարույթ է ընդունվել 24.09.2018 թվականի որոշմամբ, գործի քննությունը սկսվել է սկզբից և հրավիրվել են նախնական դատական նիստեր, հետևաբար մինչև դատավորի փոխարինումն իրականացված դատական նիստերի արձանագրման հետ կապված դատավարական գործողությունները չեն կարող գործը քննող Դատարանին որպես դատավարական սխալ վերագրվել:

Նման պայմաններում հերքվում է վճռաբեկ բողոքի հիմքում դրված փաստարկն առ այն, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված պարտադիր բեկանման հիմք:

Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները՝ գործարքի առոչնչության մասով, հերքվում են վերը նշված պարճառարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 19.07.2019 թվականի որոշումը բեկանելու և գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատարանական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Սնանկության գործ թիվ ԵԷԴ/0057/04/17
2020թ.

Սնանկության գործ թիվ ԵԷԴ/0057/04/17

Նախագահող դատավոր՝ Ա. Մխիթարյան

Դատավորներ՝ Ն. Կարապետյան
Ն. Մարգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 10-ին
գրավոր ընթացակարգով քննելով Խաչիկ Կոսյանի ներկայացուցիչ Սուրեն Բաղդամ-
յանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2019 թվականի
որոշման դեմ՝ ըստ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) դիմումի ընդդեմ Խաչիկ
Կոսյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Խաչիկ Կոսյանին ճանաչել սնանկ:
Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի (դատավոր՝ Ե. Եսոյան) 18.07.2017 թվականի վճռով դիմումը բավարարվել է:
Նույն դատարանի 21.07.2017 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է
նշանակվել Վահագն Ավագյանը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի (դատավոր՝ Ե. Եսոյան) 05.09.2017 թվականի «Խաչիկ Հակոբի Կոս-
յանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին»

որոշմամբ հաստատվել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Կ. Հակոբյան) 02.11.2017 թվականի որոշմամբ պարտապանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.09.2017 թվականի «Խաչիկ Հակոբի Կոսյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ բեկանված մասով նոր քննության:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Գ. Նարինյան) (այսուհետ՝ Դատարան) 21.05.2019 թվականի որոշմամբ հաստատվել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.08.2019 թվականի որոշմամբ պարտապանի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել պարտապանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 350-րդ, 397-րդ, 400-րդ, 401-րդ, 403-րդ և 432-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարսպ է հերքելով փաստարկներով: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ իրավահաջորդության հետևանքով պարտատիրոջ փոփոխությունից հետո անհնարին է եղել մարում կատարելը՝ նշված փոփոխության վերաբերյալ բողոքաբերի իրազեկվածության բացակայության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.08.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ կայացնելով նոր դատական ակտ:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է և այն բեկանելու հիմքեր առկա չեն, քանի որ ինչպես պայմանագրով, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ Բանկը որևէ պարտավորություն չի ունեցել պարտապանին տեղեկացնելու իր իրավահաջորդ հանդիսանալու հանգամանքի մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.07.2017 թվականի վճռի պատճենի համաձայն՝ Խաչիկ Կոսյանի և Բանկի իրավանախորդ «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի միջև 28.06.2013 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որով «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն Խաչիկ Կոսյանին տրամադրել է 7.000.000 ՀՀ դրամի չափով վարկ, իսկ վարկի մարման ժամկետ է սահմանվել 28.06.2018 թվականը (**գործի հավելված 1-ին, գ.թ. 6**).

2) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.07.2017 թվականի վճռի պատճենի համաձայն՝ «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն 2016 թվականին վերակազմակերպվել է՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ին միանալու եղանակով, և վերջինս շարունակել է իր գործունեությունը որպես իրավահաջորդ (**գործի հավելված 1-ին, գ.թ. 6**).

3) Իրավահաջորդության մասին պարտապահին տեղեկացնելու փաստը հաստատող որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

4) Բանկի կողմից ներկայացվել է դիմում՝ պահանջի գրանցման մասին, որով խնդրել է Խաչիկ Կոսյանի նկատմամբ իր՝ 4.285.629,92 ՀՀ դրամի չափով պահանջը հաստատել և գրանցել որպես ապահովված պահանջ (**գործի հավելված 1-ին, գ.թ. 12-13**).

5) Բանկի պահանջին կից ներկայացված թիվ 0127-է/2013 է վարկային պայմանագրի գրաֆիկի համաձայն՝ վճարումներ են կատարվել 2013 թվականի հուլիսից մինչև 10.10.2016 թվականը, իսկ 18.07.2017 թվականի դրությամբ վարկի մնացորդը կազմել է 3.351.291,90 ՀՀ դրամ (**գործի հավելված 1-ին, գ.թ. 14-15**).

6) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.09.2017 թվականի «Խաչիկ Հակոբի Կոսյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշման պատճենի համաձայն՝ սնանկության գործով կառավարչի կողմից 30.08.2017 թվականին ներկայացվել է պարտատերերի պահանջների նախնական ցուցակը (**գործի հավելված 1-ին, գ.թ. 29**).

7) Խաչիկ Կոսյանի ներկայացուցչի կողմից 05.09.2017 թվականին ներկայացվել է առարկություն, որով հայտնվել է, որ Խաչիկ Կոսյանը գրկված է եղել «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի հանդեպ ստանձնած պարտավորությունները մարելու հնարավորությունից իրավահաջորդության մասին ծանուցված չլինելու հետևանքով: Հաշվի առնելով, որ «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի նկատմամբ 05.09.2016 թվականի դրությամբ ունեցել է 3.351.299,50 ՀՀ դրամի չափով չմարված պարտավորություն ընդունել է Բանկի պահանջը միայն վարկի մայր գումարի մասով և խնդրել է Բանկի պահանջը գրանցել 3.351.299,50 ՀՀ դրամի չափով (**գործի հավելված 1-ին, գ.թ. 40-42**):

4. Վճարելի դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ իրավահաջորդության հետևանքով պահանջի զիջման մասին պարտապահին իրազեկելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իրավաբանական անձանց միացման հետևանքով պահանջի իրավունքը փոխանցվելու դեպքում նոր պարտարեղեր պարտավոր է այդ մասին իրազեկել պարտապահին առաջացած կերպանցի հետևանքով փոփոխություն հաշվեդրելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշման հիման վրա:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնում են վերջինիս՝ փոխանցման ակտին համապատասխան:

Վերլուծելով վերոգրյալ իրավադրույթները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է այն կառուցակարգերը, որոնք թույլ են տալիս իրավաբանական անձանց վերակազմակերպվել: Այդ կառուցակարգերի թվին է դասվում նաև իրավաբանական անձանց միացումը: Այս դեպքում՝ իրավաբանական անձինք համարվում են վերակազմակերպված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից: Միաժամանակ իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնում են վերջինիս՝ փոխանցման ակտին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերոնշյալ իրավանորմերը, նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ պարտավորական հարաբերություններում պարտատիրոջ փոփոխվելու դեպքում զիջվող իրավունքները նոր պարտատիրոջն են անցնում (փոխանցվում) որոշակի՝ անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով (*տե՛ս «Կլին Կոնցոն» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրազդանի ջերմարանային րնտեսություն» ՓԲԸ-ի թիվ ԿԳ/0197/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 402-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի հիման վրա և դրանում նշված հանգամանքների ի հայտ գալով, պարտատիրոջ իրավունքներն այլ անձի են անցնում՝

1) պարտատիրոջ իրավունքների համընդհանուր իրավահաջորդության հետևանքով.

(...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 400-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանն իրավունք ունի չկատարել պարտավորությունը նոր պարտատիրոջ օգտին, մինչև պահանջն այդ անձին անցնելու վերաբերյալ նրան ապացույցներ ներկայացնելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին, ապա նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը: Այդ դեպքում պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը կարող է իր պարտքն այլ անձի փոխանցել միայն պարտատիրոջ համաձայնությամբ, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Վկայակոչված հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտատերը կարող է իր պահանջի իրավունքը զիջել այլ անձի, և դրա

համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում: Իսկ ահա պարտքի փոխանցման դեպքում, օրենսդիրը սահմանել է պարտատիրոջ համաձայնության առկայության իմպերատիվ պահանջը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից սահմանված նման մոտեցումը ինքնանպատակ չէ: Տարբերակված մոտեցման էությունը կայանում է նրանում, որ պարտավորության մեջ պարտատիրոջ համար միշտ կարևոր է, թե ով է պարտապանը, քանի որ հաճախ պարտապանի անձից է կախված պարտավորության ժամանակին և պատշաճ կատարումը: Մինչդեռ պարտապանի համար, ըստ էության, կարևոր է ոչ թե պարտատիրոջ անձը, այլ իր պարտավորության պատշաճ կատարումը՝ հետագա անբարենպաստ հետևանքներից զերծ մնալու համար: Նշված հիմնավորմամբ է, որ պարտավորական իրավահարաբերության մեջ պարտատիրոջ փոխվելու համար օրենսդիրը չի սահմանել պարտապանի համաձայնությունը ստանալու պահանջ, բացառությամբ, երբ նման բան նախատեսված է օրենքով կամ պայմանագրով:

Անդրադառնալով պահանջի զիջման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը սկզբնական կամ նոր պարտատիրոջ համար չի սահմանել պարտապանի համաձայնության առկայության կամ վերջինիս ծանուցելու իմպերատիվ պահանջ: Այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին (պահանջը զիջելու մասին), նոր պարտատերն է կրում դրա բացասական հետևանքը:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկման առարկա դարձնել երկու իրավիճակ: Առաջին դեպքում խոսքը գնում է պահանջի զիջման այն դեպքերի մասին, երբ սկզբնական պարտատերը, շարունակելով իր գործունեությունը, զիջում է իր պահանջի իրավունքը մեկ այլ անձի և պարտապանին չի տեղեկացնում պահանջի զիջման մասին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տվյալ դեպքում պարտապանի տեսանկյունից որևէ խնդիր չի առաջանում պարտավորության կատարման համար: Ավելին, տվյալ դեպքում պարտապանը կարող է պարտավորությունը կատարել սկզբնական պարտատիրոջ հանդեպ, որը գործող օրենսդրական կարգավորման համաձայն կհամարվի պարտավորության պատշաճ կատարում: Փաստորեն այս դեպքում ռիսկը կրում է նոր պարտատերը և նա պետք է շահագրգռված լինի պարտապանին տեղեկացնելու պահանջի զիջման մասին: Նշված հիմնավորմամբ է նաև, որ օրենսդիրը չի սահմանել պահանջի զիջման դեպքում պարտապանին տեղյակ պահելու պարտադիր պահանջ:

Երկրորդ դեպքում բոլորովին այլ է իրավիճակը, երբ պահանջի իրավունքը իրավահաջորդության (սկզբնական պարտատիրոջ այլ իրավաբանական անձի միանալու) հետևանքով սկզբնական պարտատիրոջից փոխանցվում է նոր պարտատիրոջը: Նման իրավիճակում սկզբնական պարտատերը, որպես այդպիսին, դադարում է գոյություն ունենալուց, իսկ նրա պահանջի իրավունքը անցնում է վերջինիս իրավահաջորդին: Այս պայմաններում, եթե ոչ սկզբնական պարտատերը, ոչ էլ նրա իրավահաջորդը, պարտապանին չեն տեղեկացնում իրավահաջորդության հիմքով պարտավորության պարտատիրոջ փոփոխության մասին, ապա պարտապանի համար ստեղծվում է անորոշ իրավիճակ: Մասնավորապես, պարտապանի համար անորոշ է դառնում, թե ովն է պետք է կատարի պարտավորությունը, քանի որ սկզբնական պարտատերն այլևս գոյություն չունի: Ավելին, պարտապանը ողջամտորեն կարող է կարծել, թե պարտատերը լուծարվել է, իսկ պարտավորությունը դադարել է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 435-րդ հոդվածի հիմքով:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե առաջին իրավիճակում պարտապանը, անտեղյակ լինելով պահանջի զիջման մասին, կարող էր պարտավորությունը կատարել սկզբնական պարտատիրոջ հանդեպ և դա կհամարվեր պարտավորության պատշաճ կատարում, ապա երկրորդ իրավիճակում պարտապանը գրկված է նման հնարավորությունից, քանի որ սկզբնական պարտատերն այլևս գոյություն չունի:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ իրավահաջորդությամբ (սկզբնական պարտատիրոջ այլ իրավաբանական անձի միանալու) պարտատիրոջ անձի փոփոխության դեպքում պարտավորությունը խախտելիս

պարտապանի համար անբարենպաստ հետևանքները կարող են վրա հասնել այն դեպքում, երբ պարտապանն իրագրված է եղել պարտատիրոջ փոփոխության մասին: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում նոր պարտատերը պարտապանից կարող է պահանջել պարտավորությունը խախտելու համար համապատասխան պայմանագրով նախատեսված տոկոսները և/կամ տույժերը կամ օրենքով սահմանված տոկոսները, եթե սկզբնական պարտատերը (կամ իրավահաջորդը) պարտապանին տեղեկացրել է իրավահաջորդության մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Խաչիկ Կոսյանի և Բանկի իրավանախորդ «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի միջև 28.06.2013 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որով «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն Խաչիկ Կոսյանին տրամադրել է 7.000.000 ՀՀ դրամի չափով վարկ, իսկ վարկի մարման ժամկետ է սահմանվել 28.06.2018 թվականը: «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն 2016 թվականին վերակազմակերպվել է միանալու եղանակով «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ին, և վերջինս շարունակել է իր գործունեությունը որպես իրավահաջորդ: Այնուհետև Բանկի դիմումի հիման վրա Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով Խաչիկ Կոսյանը ճանաչվել է սնանկ: Բանկը որպես պարտատեր, ներկայացված դիմումով խնդրել է Խաչիկ Կոսյանի նկատմամբ իր՝ 4.285.629,92 ՀՀ դրամի չափով պահանջը հաստատել և գրանցել որպես ապահովված պահանջ: Բանկի պահանջին կից ներկայացված թիվ 0127-Է/2013Է վարկային պայմանագրի գրաֆիկի համաձայն՝ վերջին վճարումը եղել է 10.10.2016 թվականին, իսկ 18.07.2017 թվականի դրությամբ վարկի մնացորդը կազմել է 3.351.291,90 ՀՀ դրամ: Այնուհետև սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվել է պարտատերերի պահանջների նախնական ցուցակը, որի դեմ Խաչիկ Կոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված առարկության համաձայն՝ Խաչիկ Կոսյանը գրկված է եղել «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի հանդեպ ստանձնած պարտավորությունները մարելու հնարավորությունից՝ իրավահաջորդության մասին ծանուցված չլինելու հետևանքով: Հաշվի առնելով, որ «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի նկատմամբ 05.09.2016 թվականի դրությամբ ունեցել է 3.351.299,50 ՀՀ դրամի չափով չմարված պարտավորություն՝ Խաչիկ Կոսյանն ընդունել է Բանկի պահանջը միայն վարկի մայր գումարի մասով և խնդրել է Բանկի պահանջը գրանցել 3.351.299,50 ՀՀ դրամի չափով:

Դատարանի որոշմամբ հաստատվել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը և Բանկի պահանջը 4.185.629,92 ՀՀ դրամի չափով գրանցվել է որպես ապահովված պահանջ: Նույն որոշմամբ Դատարանն արձանագրել է, որ վարկային պայմանագրում առկա չէ որևէ դրույթ, որով կհիմնավորվի «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի վերակազմակերպվելու կամ այլ իրավաբանական անձի միանալու պարագայում վերջինիս՝ Խաչիկ Կոսյանին տեղեկացնելու պարտականությունը:

Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Դատարանի եզրահանգումն առ այն, որ Բանկը չի կրել իրավաբանական անձի վերակազմակերպման և այդ հիմքով պարտատիրոջ իրավունքներն իրեն անցնելու դեպքում պարտապանին ծանուցելու պարտականություն, վերաքննիչ բողոքը մերժել է:

Վերը շարադրված վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 2016 թվականից իրավահաջորդության հիմքով «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն, որպես այդպիսին, դադարել է գոյություն ունենալուց, որպես իրավահաջորդ գործել է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն, ինչի մասին Խաչիկ Կոսյանը չի տեղեկացվել:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տվյալ դեպքում պարտապան Խաչիկ Կոսյանի համար առաջացել է անորոշ իրավիճակ, գոյություն չի ունեցել «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ն, որի հանդեպ նա ունեցել է չկատարված պարտավորություն, հետևաբար՝ Խաչիկ Կոսյանը չի իմացել, թե հօգուտ ում պետք է կատարի պարտավորությունը, որպիսի պայմաններում Խաչիկ Կոսյանն իրենից անկախ պատճառներով, չի կատարել վարկի մարման վճարումները:

Ավելին, Բանկի պահանջին կից ներկայացված պայմանագրի գրաֆիկի համաձայն՝ վարկային պարտավորության վճարումները 2013 թվականի հուլիսից մինչև 10.10.2016 թվականը կատարվել են, այսինքն՝ մինչև իրավահաջորդությունը Խաչիկ Կոսյանը չի խուսափել պարտավորությունը կատարելուց, ինչից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 10.10.2016 թվականից հետո հերթական վճարումները չեն կատարվել իրավահաջորդության մասին ծանուցված չլինելու հետևանքով:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստեղծված իրավիճակում Բանկը՝ պարտավորության կետանցի հիմքով տոկոսներ պահանջելու համար, նախ և առաջ պարտավոր էր իրավահաջորդության մասին տեղեկացնել Խաչիկ Կոսյանին: Իրավահաջորդության մասին վերջինիս ծանուցելուց հետո թույլ տրված պարտավորության կետանցի առկայության դեպքում միայն Բանկը կարող էր պահանջել համապատասխան տոկոսները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս դեպքում Խաչիկ Կոսյանը չպետք է կրի իրավահաջորդության մասին «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի կամ Բանկի կողմից չծանուցվելու հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել լրիվ և բազմակողմանի քննություն, հետևաբար առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի հանգամանքները պարզելու համար:

Վճռաբեկ բողոքի պատրաստումն աշխատանքները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քեկանելու և գործը՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի մասով, ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2019 թվականի որոշումը և գործը՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի պահանջի մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4101/02/18
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/4101/02/18
Նախագահող դատավոր՝	Հ. Ենոքյան
Դատավորներ՝	Ա. Մկրտչյան Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 07-ին գրավոր ընթացակարգով քննելով Ա/Ձ Արթուր Ասոյանի ներկայացուցիչ Անետա Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՀՄՌ Ֆարինա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանի ընդդեմ Ա/Ձ Արթուր Ասոյանի, երրորդ անձինք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանը պահանջել է Ա/Ձ Արթուր Ասոյանից բռնագանձել 2.736.036 ՀՀ դրամ:

03.05.2018 թվականին դատարան ներկայացված՝ պահանջի չափն ավելացնելու մասին միջնորդությամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանը պահանջել է Ա/Ձ Արթուր Ասոյանից բռնագանձել 5.896.037,52 ՀՀ դրամ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 14.05.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի. վճռվել է Ա/Ձ Արթուր Ասոյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 2.736.036 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար, իսկ հայցը՝ մնացած մասով, մերժել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.09.2019 թվականի որոշմամբ Ա/Ձ Արթուր Ասոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.05.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ա/Ձ Արթուր Ասոյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 290-րդ, 294-րդ, 296-րդ, 298-րդ, 448-րդ և 521-րդ հոդվածները, 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պետումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ ուսումնասիրության և գնահատման չի ենթարկել հայցապահանջի հիմքում դրված ապացույցները՝ հարկային հաշիվները, և հաշվի չի առել, որ դրանք ստորագրված ու վավերացված չեն եղել Ա/Ձ Արթուր Ասոյանի կողմից: Այն հանգամանքը, որ հարկային հաշիվները ստորագրվել են միայն այդ հաշիվը դուրս գրելու իրավունք ունեցող անձի կողմից, չի կարող պարտավորություն առաջացնել մեկ այլ անձի համար, քանի որ բացակայում է պատասխանողի համաձայնեցված կամքի արտահայտությունը:

Վերաքննիչ դատարանը 20.09.2019 թվականի որոշմամբ հղում է կատարել Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0724/02/17 քաղաքացիական գործով 17.09.2018 թվականի որոշմանը, սակայն կայացրել է դրան հակասող որոշում, քանի որ հաշվի չի առել, որ հարկային հաշիվները ստորագրված չեն Ա/Ձ Արթուր Ասոյանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2019 թվականի որոշումը և «կայացնել նոր դատական ակտ՝ մերժել Ընկերության սնանկության գործով կատարված Տիգրան Սահակյանի ներկայացրած հայցադիմումը»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունը 14.05.2015 թվականին, 27.05.2015 թվականին, 26.12.2016 թվականին և 29.12.2016 թվականին էլեկտրոնային եղանակով դուրս է գրել ընդհանուր 2.736.036 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ Ա/Ձ Արթուր Ասոյանին մատակարարելու վերաբերյալ համապատասխանաբար թիվ Ա5083551425, թիվ Ա9011253811, թիվ Ա5335148730, թիվ Ա8933371084 էլեկտրոնային հարկային հաշիվները: Էլեկտրոնային հարկային հաշիվներն Ընկերության անունից վավերացվել են (հաստատվել են) ոմն Ռազմիկ Սարգսյանի էլեկտրոնային ստորագրությամբ: Հարկային հաշիվները պարունակում են ապրանքներ մատակարարող (առաքող) և ապրանքներ ձեռք բերող անձանց տվյալները, մատակարարվող ապրանքների անվանումը, չափման միավորը, քանակը, միավորի գինը, արժեքը, ԱԱՀ դրույքաչափը, ԱԱՀ գումարը, ընդհանուր արժեքը: Ա/Ձ Արթուր Ասոյանի անունից հարկային հաշիվները վավերացված և հաստատված չեն Ա/Ձ Արթուր Ասոյանի կամ որևէ այլ անձի կողմից (**գ.թ. 10-13**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ, 450-րդ հոդվածներին տրված մեկնաբանությունը հակասում է թիվ ԵՇԴ/0724/02/17 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 17.09.2018 թվականի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ, 450-րդ հոդվածներին, ինչպես նաև 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի այնպիսի խախտում, որով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադատապես հերկյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք մի կողմի՝ սպրանքներ մատակարարողի՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված և էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված (հաստատված) հարկային հաշիվը կարող է դիտվել բավարար կողմերի միջև մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը հաստատված համարելու համար, եթե այդ հաշիվը ստորագրված չէ մյուս կողմի՝ սպրանքներ ձեռքբերողի կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, կնիքով դրոշմված լինելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ (...): Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ սպայանյութեր ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական

ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկված անձի կողմից դրա ակցեպտան ստանալու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե օրենքին համապատասխան, պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք, պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը հանձնելու պահից (հոդված 177):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագրի կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: (...) Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունված է նույն օրենսգրքի 454 հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ վճռաբեկ դատարանը «ԴԵԿՈՐՊՐՈՅ» ՍՊԸ-ն «ԿՈՐՈՎ ԲԱԶՈՒԿ» ՍՊԸ-ի քաղաքացիական գործով անդրադարձել է մատակարարման հարաբերությունների առկայությանն այն դեպքում, երբ կողմերի միջև թեև մատակարարման պայմանագիր չի կնքվել, սակայն կողմերը ստորագրել են հարկային հաշիվներ:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է, որ ինչպես ցանկացած պայմանագիր, ապրանքների մատակարարման պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ ապրանքների մատակարարման իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ *պայմանագրի կողմերը հսկայորեն դրսևորեն իրենց կամահայրությունն ապրանքների մատակարարման պայմանագրի կնքելու վերաբերյալ*, և այդ կամքն ուղղված լինի մատակարար-վաճառողի դեպքում՝ իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) գնորդին հանձնելուն, իսկ գնորդի դեպքում՝ այդ ապրանքներն ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ ապրանքների մատակարարման իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայրությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքների մատակարարման պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Ընդ որում, օրենսդիրը, ապրանքների մատակարարման պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, միևնույն ժամանակ որևէ նշում չի կատարել այդ ձևը չպահպանելու հետևանքների մասին, որի դեպքում գործում է [այն] կանոնը, որի համաձայն՝ կողմերը գրկված չեն վեճի դեպքում ի հավաստումն ապրանքների մատակարարման պայմանագրի և դրա պայմանների գրավոր ու այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Ավելին՝ օրենսդիրը նաև չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկը՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը կարող է տեղեկություններ պարունակել և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծել է իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 11.10.2010 թվականին ընդունված, 01.01.2011 թվականին ուժի մեջ մտած և 23.06.2018 թվականին ուժը կորցրած «**Հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը հաստատելու մասին**» ՀՀ կառավարության թիվ 1504-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման» կարգի, ինչպես նաև 05.12.2013 թվականին ընդունված, 28.12.2013 թվականին ուժի մեջ մտած և 23.06.2018 թվականին ուժը կորցրած «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը **հաստատելու մասին**» ՀՀ կառավարության թիվ 1364-Ն որոշման հավելվածով հաստատված «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգի», նույն որոշմամբ հաստատված արտադրանքների, ապրանքների առաքման հաշիվ-ապրանքագրի ձևի վերաբերյալ կարգավորումները:

Նշված իրավական ակտերի համապատասխան նորմերի վերլուծության հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ կառավարության կողմից սահմանվել են էլեկտրոնային եղանակով **հարկային հաշիվների դուրսգրման վերաբերյալ համապատասխան կարգեր**: Ընդ որում, էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվ դուրս գրելու իրավասություն է վերապահվել օրենքի համաձայն ավելացված արժեքի հարկ վճարող համարվող այն անձանց, ովքեր հարկային մարմնից ստացել են էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ: Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող բոլոր հարկային հաշիվները պետք է պարունակեն տվյալ տեսակի հաշվի համար պարտադիր համարվող տեղեկությունները, այդ թվում՝ համապատասխան գործարքի մասին տեղեկությունները, ունենան չկրկնվող և սահմանված կարգով գեներացված սերիա ու համար, որը հաշիվը նույնականացնող հիմնական վավերապայմանն է, ինչպես նաև պարտադիր վավերացվեն (հաստատվեն) նման իրավասություն ունեցող առնվազն մեկ անձի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, լրացված հարկային հաշիվը չի կարող վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ, եթե դրանում լրացված չէ հարկային հաշվում պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալ (վավերապայման): Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե հարկային հաշիվը վավերացված է (հաստատված է) էլեկտրոնային ստորագրությամբ, և եթե այլ բան ապացուցված չէ, ապա դա նշանակում է, որ հարկային հաշիվը պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, իսկ այն էլեկտրոնային

ստորագրությամբ վավերացրած և հաստատած անձինք նման իրավասություն ունեցող անձինք են, որոնց կողմից հարկային հաշիվը վավերացնելը և հաստատելը կարող է վկայել մատակարարման հարաբերություններ առաջացնելու կամահայտնության մասին:

Նույն որոշմամբ ՀՀ վճարելի դատարանը փաստել է, որ մատակարարման գրավոր պայմանագիր կնքված չլինելու դեպքում մատակարարման հարաբերությունները կարող են հասարակել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթով պայմանով, որ վերջինս պարունակի մատակարարման հարաբերությունների առկայությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ և ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևին համապատասխան տեղեկությունները, վավերացված և հաստատված լինի ինչպես ապրանքներ մատակարարող անձի, այնպես էլ գնորդի՝ նման փաստաթղթերը վավերացնելու կամ հաստատելու իրավասություն ունեցող անձի կողմից, այդ թվում՝ վերջինիս էլեկտրոնային արտագրությամբ (տե՛ս «ԴԵԿՈՐՊՐՈՅ» ՍՊԸ-ն «ԿՈՐՈՎ ԲԱԶՈՒԿ» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/0724/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 17.09.2018 թվականի որոշումը):

Ջարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը հարկ է համարում հավելել, որ մատակարարման գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում մատակարարման հարաբերությունների համար էական համարվող պայմանների՝ կողմերի, ապրանքների անվանման, քանակի, գնի, մատակարարման ժամկետի մասին տեղեկություններ պարունակող հարկային հաշիվը, որը հաստատված է (արտագրված է) միայն ապրանքներ մատակարարող անձի կողմից, չի կարող գնահատվել որպես անհրաժեշտ և բավարար գրավոր ապացույց կողմերի միջև մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը հաստատված համարելու համար: Նման փաստը հաստատված որակելու համար անհրաժեշտ է նաև մյուս կողմի՝ ապրանքներ ձեռքբերողի՝ այդ հաշիվն սրանապու փաստը հաստատող էլեկտրոնային արտագրությունը, որպեսզի հիմնավորվի նաև վերջինիս կամահայտնությունը ուղղված մատակարարման հարաբերությունների առաջացմանը:

Այսպիսով՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հարկային հաշիվը կարող է գնահատվել որպես մատակարարման հարաբերությունների առկայությունը հիմնավորող անհրաժեշտ և բավարար գրավոր ապացույց բացառապես այն դեպքում, երբ այն **վավերացված և հաստատված է ինչպես ապրանքներ մատակարարող անձի, այնպես էլ գնորդի (ապրանքներ ձեռքբերողի)՝ նման փաստաթղթերը վավերացնելու կամ հաստատելու իրավասություն ունեցող անձի կողմից:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունն էլեկտրոնային եղանակով դուրս է գրել Ա/Ձ Արթուր Ասոյանին ընդհանուր 2.736.036 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հարկային հաշիվներ, որոնք էլեկտրոնային եղանակով հաստատված (ստորագրված են) միայն Ընկերության կողմից, իսկ Ա/Ձ Արթուր Ասոյանի անունից որևէ ստորագրություն առկա չէ հարկային հաշվի վրա:

Դատարանը պատճառաբանել է, որ Ա/Ձ Արթուր Ասոյանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ իր կողմից վկայակոչված այն փաստերը հաստատելու համար, որ կողմերի միջև գործարք չի կնքվել, ներկայացված հարկային հաշիվներով ապրանք չի մատակարարվել և հարկային հաշիվները չեն հաստատվել Ա/Ձ Արթուր Ասոյանի կողմից: Վերոգրյալի հիման վրա Դատարանն Ընկերության հայցը բավարարել է մասնակի՝ վճռել է Ա/Ձ Արթուր Ասոյանից հոգուտ Ընկերության բռնագանձել 2.736.036 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար (պահանջի մնացած մասով պատասխանողի միջնորդության հիման վրա Դատարանը կիրառել է հայցային վաղեմություն և հայցն այդ մասով մերժել է):

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ ի հաստատումն Ընկերության և Ա/Ձ Արթուր Ասոյանի միջև ապրանքների մատակարարման իրավահարաբերությունների առկայության՝ ներկայացվել են գրավոր ապացույցներ՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներ, եկել է այն եզրահանգման, որ Դատարանն իրավացիորեն է դրանք դրել հայցի բավարարման հիմքում: Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ վճարելի դատարանի թիվ ԵՇԴ/0724/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշումը, եկել է այն եզրահանգման, որ ներկայացված հարկային հաշիվները

համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ և վերոնշյալ որոշման իրավական դիրքորոշումներով բացահայտված պահանջներին և մերժել է Ա/Ձ Արթուր Ասոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ գործող 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Ընդ որում, համանման կարգավորում ստկա է նաև սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքի քննության պահին գործող՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական գանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա *(տե՛ս «Շենքերի կառավարում» համադիրությունն ընդդեմ Մասիս Դազանյանի թիվ ԵԱԲԳ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատում անտեսելով այն հանգամանքը, որ չնայած Ընկերությունը սույն գործով ներկայացրել է Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով դուրս գրված՝ Ա/Ձ Արթուր Ասոյանին ընդհանուր 2.736.036 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ մատակարարելու վերաբերյալ էլեկտրոնային հարկային հաշիվներ, սակայն դրանք վավերացված և հաստատված չեն Ա/Ձ Արթուր Ասոյանի անունից: Ավելին, սույն գործով ոչ միայն չի ներկայացվել Ընկերության և Ա/Ձ Արթուր Ասոյանի միջև կնքված մատակարարման պայմանագիր, այլ նաև գործում առկա չեն այլ ապացույցներ այն մասին, որ Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ դուրս գրելուց հետո ենթադրաբար առկա մատակարարման պայմանագրի կատարման ուղղությամբ որևէ գործողություններ են ձեռնարկվել Ա/Ձ Արթուր Ասոյանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը նշված հարկային հաշիվները գնահատելիս հաշվի չի առել, որ դրանք Ա/Ձ Արթուր Ասոյանի կամ վերջինիս անունից նման փաստաթղթերը վավերացնելու կամ հաստատելու իրավասություն

ունեցող անձի կողմից վավերացված և հաստատված չեն, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը ոչ իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ նշված հարկային հաշիվները համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված և ՀՀ վճարեկ դատարանի թիվ ԵՇԴ/0724/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ բացահայտված պահանջներին: Մինչդեռ վերոգրյալ որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանը կարևորել է հարկային հաշիվների **երկկողմանի** հաստատված լինելու հանգամանքը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի հետևությունը հակասել է թիվ ԵՇԴ/0724/02/17 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ, 450-րդ հոդվածներին տրված մեկնաբանությանը, որն էլ հանգեցրել է սույն գործի սխալ լուծման:

Այսպիսով, Վճարեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Ընկերությունը, ի հաստատումն Ա/Ձ Արթուր Առոյանի հետ ապրանքների մատակարարման իրավահարաբերությունների փաստի առկայության, որպես գրավոր ապացույց ներկայացրել է **միայն էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվները**, և գործում առկա չեն այլ ապացույցներ, որոնք կարող են տեղեկություններ պարունակել կողմերի միջև ապրանքների մատակարարման իրավահարաբերությունների փաստի առկայության մասին: Հետևաբար, միայն նման միակողմանի հաստատված հարկային հաշիվները բավարար չեն հաստատված համարելու Ընկերության և Ա/Ձ Արթուր Առոյանի միջև ապրանքների մատակարարման իրավահարաբերությունների փաստի առկայությունը, որպիսի պայմաններում Ընկերության սնանկության գործով կառավարչի հայցը ենթակա էր մերժման: Մինչդեռ ստորադաս դատարանները, սխալ մեկնաբանելով նյութական իրավունքի նորմը և թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտում, ոչ իրավաչափ եզրահանգման են եկել՝ բավարարելով Ընկերության սնանկության գործով կառավարչի հայցը:

Այսպիսով, վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտարկել է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հիմքերով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճարեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պարճատարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ծախսերը» վերտառությամբ 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա.1» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են սնանկության կառավարիչները՝ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝ պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վճեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար կառավարիչն ազատվում է պետական տուրքի վճարումներից:

Նույն հոդվածի 3-րդ մասի՝ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրության համաձայն՝ նույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ:

Վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից դատարան հայց ներկայացնելու իրավունքն իրացնում է վերջինիս կառավարիչը, որը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ազատված է դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի վճարումներից: Օրենսդրական նման կարգավորման հիմքում, ըստ էության, ընկած է այն տրամաբանությունը, որ կառավարիչը հայց հարուցում կամ պարտապանի մասնակցությամբ դատավարություններին ներգրավվում է պարտապանի անունից, հետևաբար նրա վրա պետական տուրքի վճարման պարտականություն չի կարող դրվել այլ անձի իրավունքներն ու օրինական շահերն ի պաշտոնե իրականացնելու համար: Նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետությունը, որպես անձի հիմնարար իրավունք հոչակելով դատական պաշտպանության իրավունքը, կոնկրետ երաշխիքներ է նախատեսում այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար՝ ընդ որում, որոշակի խումբ անձանց համար սահմանելով նաև հավելյալ երաշխիքներ, ինչպես օրինակ՝ պետական տուրքի վճարումից ազատումն է: Այդուհանդերձ, քննարկվող իրավակարգավորումը վերաբերում է **միայն պետության հանդեպ** պետական տուրքի գծով պարտավորությունների բացակայությանը և չի կարող մեկնաբանվել որպես մյուս կողմի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականության բացակայություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի հիմքով պետք է կրի մյուս կողմի կրած դատական ծախսերը **փոխհատուցելու** պարտականություն: Նման մոտեցումը բխում է կողմերի իրավահավասարության սկզբունքից և կոչված է կանխելու պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտի կողմից իր դատավարական իրավունքների անբարեխիղճ իրականացման արդյունքում մյուս կողմին հնարավոր պատճառվելիք վնասները: Ավելին, կառավարչի պարագայում նշված եզրահանգումը հիմնավորվում է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մինչև

15.04.2020 թվականը գործող իրավակարգավորմամբ, ըստ որի՝ նույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ: Հետևաբար թեև կառավարիչը հայցը հարուցում է պարտապանի անունից, այնուամենայնիվ, նման հայց հարուցելու կամ այլ դատավարական գործողություններ իրականացնելու հիմքերն ու անհրաժեշտությունը գնահատում է իր իսկ հայեցողությամբ, ուստիև պետք է պատասխանատվություն կրի դրանց արդյունքում այլ անձանց կրած դատական ծախսերի փոխհատուցման համար (*լրեն նաև Արթուր Բաղդասյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանն ընդդեմ Սեդա Մելիք-Թանգյանի թիվ ԵԿԴ/0598/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թվականի, Գևորգ Աֆանդյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Թոռյանն ընդդեմ Վահե Աֆանդյանի թիվ ԵԿԴ/0298/02/16 քաղաքացիական գործով 30.07.2018 թվականի ՀՀ վճարելի դատարանի որոշումները*):

Նկատի ունենալով, որ սույն գործով վճարելի բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ քեկանման ու փոփոխման և դրա արդյունքում՝ հայցը՝ մերժման, Վճարելի դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ պատասխանողի կողմից բերված վերաքննիչ և վճարելի բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարները պատասխանողին փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը: Հետևաբար, Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանից հօգուտ Ա/Չ Արթուր Ասոյանի պետք է բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար, և 82.081 ՀՀ դրամ (2.736.036*3%) ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Հաշվի առնելով, որ հայցը հարուցված է սնանկության գործով կառավարիչի կողմից, ով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա.1» կետի հիմքով ազատված է դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճարելի բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի վճարումից, Վճարելի դատարանը գտնում է, որ նման պայմաններում հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի, ինչպես նաև պատասխանողի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես չվճարված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.08.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի հետ կապված հարցը պետք է համարել լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերը և կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը պարտավոր է դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացող հանգամանքները:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Սույն գործով նկատի ունենալով, որ Ա/Չ Արթուր Ասոյանը վճարելի բողոքի համար վճարել է ընդհանուր 87.100 (20.000+67.100) ՀՀ դրամ, մինչդեռ վճարման էր ենթակա 82.081 ՀՀ դրամ, Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ավել վճարված պետական տուրքի գումարը՝ 5.019 ՀՀ դրամը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2019 թվականի որոշումը և այն փոփոխել. «ՀՍՌ Ֆարինա» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանի հայցն ընդդեմ Ա/Ձ Արթուր Ասոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, մերժել:

2. «ՀՍՌ Ֆարինա» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանից հոգուտ Ա/Ձ Արթուր Ասոյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար, և 82.081 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Դատական ծախսերի հարցը՝ հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես չվճարված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.08.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի հետ կապված, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «խ.1» կետի հիմքով համարել լուծված:

Վճռաբեկ բողոքի համար ավել վճարված պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3193/02/13**
 դատարանի որոշում **2020թ.**
 Ֆաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3193/02/13**
 Նախագահող դատավոր՝ **Ս. Միքայելյան**
 Դատավորներ՝ **Ն. Բարսեղյան**
Հ. Ենոքյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴԻՄԵՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 25-ին գրավոր ընթացակարգով քննելով Աղասի Տեր-Եսայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աղասի Տեր-Եսայանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի գործողություններն ապօրինի (ոչ իրավաչափ) ճանաչելու և վնասի հատուցման պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Աղասի Տեր-Եսայանը պահանջել է Երևան համայնքի (քաղաքապետարանի) գործողությունները, որոնցով Աղասի Տեր-Եսայանի անվանը վարձակալության իրավունքով գրանցված 0,0020 հա մակերեսով հողամասից քանդվել է Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում սեփականության իրավունքով Աղասի Տեր-Եսայանին պատկանող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակը, ճանաչել ապօրինի, ինչպես նաև որպես հետևանք՝ Երևան համայնքին պարտավորեցնել հատուցելու ապօրինի գործողությունների արդյունքում Աղասի Տեր-Եսայանին պատճառված վնասը՝ բռնագանձելով 4.750.000 ՀՀ դրամ՝ որպես գույքի կորստի գումար, 1.705.000 ՀՀ դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, ինչպես նաև 2011 թվականի օգոստոս

ամսից սկսած 4.750.000 ՀՀ դրամին հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան տոկոսներ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.06.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.11.2015 թվականի որոշմամբ Ադասի Տեր-Եսայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.06.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ Ադասի Տեր-Եսայանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը և այն վերացվել է, միաժամանակ Ադասի Տեր-Եսայանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ադասի Տեր-Եսայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ, 624-րդ և 625-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Երևանի Գլխավոր պողոտայի» և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի և այդ հողամասի վրա գտնվող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակի նկատմամբ գրանցված է Ադասի Տեր-Եսայանի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքները: Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո պատասխանողը չի դադարեցրել պայմանագրի գործողությունը, պայմանագիրը շարունակել է գործել անորոշ ժամկետով, հայցվորը վճարել է վարձավճարը: Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցները քանդել են առևտրի տաղավարն այն պայմաններում, երբ որոշակի ժամկետով կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո պատասխանողը չի դադարեցրել պայմանագրի գործողությունը, պայմանագիրը շարունակել է գործել անորոշ ժամկետով, և հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքն ու առևտրի տաղավարի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցված չեն եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Ադասի Տեր-Եսայանը որպես վարձակալության պայմանագիր կնքելու առաջարկ է գնահատել Երևանի քաղաքապետարանի 25.07.2011 թվականի գրությունը, սակայն նշված գրությամբ պայմանագիր կնքելու առաջարկ չի արվել, այլ միայն տեղեկացվել է, որ

07.06.2011 թվականի դրությամբ Աղասի Տեր-Եսայանի մոտ առկա է հողամասի վարձավճարի պարտք և առաջարկվել է սահմանված ժամկետում այն վճարել և հայտնել դիրքորոշում վարձավճարի չափի փոփոխության վերաբերյալ համապատասխան համաձայնագիր կնքելու մասին:

Այսպիսով՝ վեճի առարկա կրպակի համար վարձակալության տրամադրված հողամասի վարձակալության պայմանագիրը համարվել է դադարած, իսկ վարձակալության պայմանագրի ժամկետը երկարացնելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել, ինչպես նաև Աղասի Տեր-Եսայանին իրավասու մարմնի կողմից չի ուղարկվել հողամասի վարձակալության պայմանագիր կնքելու օֆերտա:

3. Վճուարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի կողմից 20.03.2003 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1045311 վկայականի համաձայն՝ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի նկատմամբ գրանցվել է Աղասի Տեր-Եսայանի վարձակալության իրավունքը: Իրավունքի գրանցման համար հիմք է հանդիսացել, ի թիվս այլնի, Երևանի քաղաքապետարանի և Աղասի Տեր-Եսայանի միջև 12.03.2003 թվականին կնքված թիվ 866 վարձակալության պայմանագիրը (5 տարի ժամկետով): Նշված վկայականի համաձայն՝ հողատարածքում առկա է 19 քմ մակերեսով առևտրի կրպակ (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**):

2) Երևանի քաղաքապետարանի 25.07.2011 թվականի թիվ 02/20-6441 գրության համաձայն՝ ի թիվս այլնի, Աղասի Տեր-Եսայանին տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշմամբ Երևան քաղաքի 1-ին գոտում գտնվող հողամասի կադաստրային արժեքը 1 քմ հողամասի համար սահմանվել է 60.000 ՀՀ դրամ, իսկ Երևանի ավագանու 23.12.2009 թվականի թիվ 55-Ն որոշման 35-րդ կետի համաձայն՝ հողամասերի տարեկան վարձավճարի չափը 1 քմ հողամասի նկատմամբ կազմում է 6.000 ՀՀ դրամ: Ելնելով վերը շարադրվածից՝ Երևանի քաղաքապետարանն առաջարկել է գրությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում հայտնել դիրքորոշում՝ թիվ 866 վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափի փոփոխության վերաբերյալ համապատասխան համաձայնագիր կնքելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

3) Աղասի Տեր-Եսայանը 09.08.2011 թվականի գրությամբ Երևանի քաղաքապետարանին հայտնել է իր համաձայնությունը՝ թիվ 866 վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

4) ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի 06.08.2011 թվականի նախագգուշացմամբ Աղասի Տեր-Եսայանը տեղեկացվել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվել է և առաջարկվել է եռօրյա ժամկետում ապամոնտաժել կրպակը (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

5) Աղասի Տեր-Եսայանին պատկանող Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի վրա գտնվող կրպակն ապամոնտաժվել է 24.08.2011 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 96**):

6) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի 21.03.2012 թվականի թիվ ԱՄ-19/03/2012-2-0210 տեղեկանքի համաձայն՝ Աղասի Տեր-Եսայանի անվամբ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում 19 քմ մակերեսով առևտրի կրպակի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք, իսկ 0,0020 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ վարձակալության իրավունք (**հատոր 1-ին, գ.թ. 20**):

7) ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոնի 20.10.2014 թվականի թիվ Կ-076/14-01 տեղեկատվական նամակի համաձայն՝ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 19 քմ մակերեսով կրպակը ներկայումս գոյություն չունի: Նույն նամակի համաձայն՝ կրպակի 1

քմ մակերեսը 2011 թվականի օգոստոս ամսվա դրությամբ կարող էր կազմել 250.000 ՀՀ դրամ [ընդհանուր կրպակի արժեքը կարող էր կազմել 4.750.000 ՀՀ դրամ]: Նույն կրպակի վարձավճարը 2011 թվականի հունվար ամսից մինչև 2014 թվականի սեպտեմբեր ամիսը կարող էր կազմել 1.705.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 33-34**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ անշարժ գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո տվյալ անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի պետական գրանցումը պահպանված լինելու պայմաններում վարձակալության պայմանագիրը վերսկսված համարելու առանձնահատկություններին և դրանից բխող իրավական հետևանքներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք): Օրենքով կարող են սահմանվել գույքի տեսակներ, որոնց վարձակալության հանձնելը չի թույլատրվում կամ սահմանափակված է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է պայմանագրով որոշված ժամկետով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը դադարեցնելու համար օրենքով կամ պայմանագրով կարող է սահմանվել տեղեկացման այլ ժամկետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված իր որոշումներից մեկով անդրադառնալով ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելու հարցին, գտել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո այն նույն պայմաններով անորոշ ժամկետով վերսկսված ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ վարձակալած գույքից վարձակալի կողմից

օգտվել շարունակելը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում այդ գույքից օգտվելու վերաբերյալ վարձատուի առարկությունների բացակայությունը (*յրեն Երևանի քաղաքապետին ընդդեմ Գոհար Արամյանի թիվ ԵԿԴ/3032/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.10.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է, որ վարձակալության պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով, եթե դրանում բացակայում է պայմանագիրը որոշակի ժամկետով կնքելու վերաբերյալ պայմանը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված է ժամկետով որոշված վարձակալության պայմանագիր, և դրա գործողության ժամկետն ավարտվել է, ապա այդ պայմանագիրը համարվում է վերսկսված, և դրանից բխող հարաբերությունները շարունակվում են, եթե միաժամանակ առկա են որոշակի պայմաններ, այն է՝ վարձակալի կողմից վարձակալված գույքից օգտվել շարունակելը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում այդ գույքից օգտվելու վերաբերյալ վարձատուի առարկությունների բացակայությունը:

Վերոհիշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում վարձակալության պայմանագրի գործողությունը, ընդհանուր կանոնի համաձայն, վերսկսվում է այն նույն պայմաններով, որոնք գործում էին մինչև պայմանագրի ժամկետի ավարտը՝ չսահմանափակելով դրանք փոփոխելու՝ պայմանագրի կողմերի հնարավորությունը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժամկետի ավարտից հետո վարձակալության պայմանագիրը վերսկսվում է արդեն այն առանձնահատկությամբ, որ դրա գործողությունն այլևս սահմանափակված չէ ժամկետով, այսինքն՝ այն գործում է անորոշ ժամկետով, քանի դեռ կողմերից որևէ մեկը չի հրաժարվել պայմանագրից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը (...):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պետական գրանցումն ընդգրկում է գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման, հիփոթեքի, հողամասի կառուցապատման, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքների, այդ թվում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների գրավի *ծագման, դադարման, փոխանցման, փոփոխման* պետական գրանցումը:

Հիմնվելով վերոշարադրյալ իրավական նորմերի վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկելու վերաբերյալ օրենսդրի պահանջն ինքնասպառակ չէ: Այն հետապնդում է մի քանի խնդիրներ, որոնցից են մասնավորապես՝ անշարժ գույքի բնականոն շրջանառության ապահովումը, գործարքների մասնակիցների և երրորդ անձանց

իրավունքների ճանաչումը, պաշտպանությունը և երաշխավորումը, անշարժ գույքի շուկայի կայունությունը և զարգացումն ապահովելը և այլն: Վկայակոչված խնդիրներից Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատկապես ընդգծել գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունը: Պետությունը, սահմանելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահանջ, միաժամանակ ստանձնել է պարտավորություն երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն է հենց այն մեխանիզմը, որի միջոցով պետությունը ճանաչում է անձանց այս կամ այն իրավունքն անշարժ գույքի նկատմամբ, ստեղծում է միասնական տեղեկատվական բանկ այդ իրավունքների և դրանք կրող սուբյեկտների վերաբերյալ և համապատասխանաբար հնարավորություն է ունենում երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը գրանցելու պահից մինչ այդ իրավունքի գրանցումը դադարեցնելու պահը պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է այդ իրավունքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ օրենսդիրը, նախատեսելով անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պարտադիր պետական գրանցման ենթակա լինելու պայման, ըստ էության, կողմերի միջև անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքված համարելու պահը դիտել է վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահը: Այսինքն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում ստանալու պահից կողմերը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և կրում պայմանագրից բխող պարտականությունները պատշաճ կատարելու պարտավորություն, իսկ պետությունը երաշխավորում և պաշտպանում է վարձակալության պայմանագրից բխող և պետական գրանցում ստացած՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանի դեռ այդ իրավունքների պետական գրանցումը չի դադարել:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով մերժելով հայցապահանջը՝ Դատարանը պատասխանողի կողմից կրպակն ապամոնտաժելու գործողությունները ոչ իրավաչափ համարելու հարցի կապակցությամբ գտել է, որ կրպակի նկատմամբ իր իրավունքների պաշտպանության համատեքստում հայցվորը վկայակոչել է անշարժ գույքի նկատմամբ կիրառելի իրավա-նորմերը, մինչդեռ ապամոնտաժված կրպակը հանդիսանում է ժամանակավոր օբյեկտ: Ինչ վերաբերում է Երևանի քաղաքապետի տեղակալի 25.07.2011 թվականի հ.02/20-6441 գրությանը, ապա Դատարանը գտել է, որ այն վերաբերել է ոչ թե վարձակալության ժամկետը երկարաձգելուն, այլ՝ վարձավճարի գանձումը գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելուն: Բացի այդ, Երևանի քաղաքապետի տեղակալի 25.07.2011 թվականի թիվ 02/20-6441 գրությունը, ըստ Դատարանի եզրահանգումների, չի հանդիսանում հողամասի վարձակալության պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ (օֆերտա) նաև այն պատճառով, որ այն չի պարունակում պայմանագիր կնքելուն ուղղված որևէ առաջարկ: Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտել է, որ պատասխանողի հակաիրավական արարքի բացակայության պայմաններում վնասի հատուցման պահանջն իմաստագուրկ է դառնում:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի արտահայտած դիրքորոշումը, մերժել է վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (տե՛ս *Ռուզաննա Թորոյանն ընդդեմ Նվեր Մլիրոյանի թիվ ԵԱԲԲ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (տե՛ս *Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչարյանի թիվ ԵՄԲ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի 21.03.2012 թվականի թիվ ԱՍ-19/03/2012-2-0210 տեղեկանքի համաձայն՝ Աղասի Տեր-Եսայանի անվամբ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գրանցված է սեփականության իրավունքով 19 քմ մակերեսով առևտրի կրպակ և վարձակալության իրավունքով՝ 0,0020 հա մակերեսով հողամաս: Այսինքն՝ առնվազն 21.03.2012 թվականի դրությամբ դեռ շարունակել են գրանցված մնալ Աղասի Տեր-Եսայանի վարձակալության և սեփականության իրավունքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանին պատկանող հողատարածքի վրա Աղասի Տեր-Եսայանին պատկանող կրպակի առկայության կամ այն Երևանի քաղաքապետարանի կողմից ապամոնտաժելու իրավաչափությունը պայմանավորված է այդ հողատարածքի նկատմամբ Աղասի Տեր-Եսայանի՝ վարձակալության իրավունքի առկայությամբ կամ բացակայությամբ, այսինքն՝ օրինական հնարավորությունների առկայությամբ կամ բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ քանի դեռ անձն ունի կոնկրետ հողամասի նկատմամբ գրանցված վարձակալության իրավունք նա օժտված է օրինական հնարավորությամբ տիրապետել և (կամ) օգտագործել տվյալ հողատարածքը, սույն կոնկրետ գործով՝ տեղադրել կրպակ կամ տեղահանել այն հողամասից: Մինչդեռ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի վրա գտնվող կրպակն ապամոնտաժվել է այն դեպքում, երբ Աղասի Տեր-Եսայանը դեռևս ունեցել է պետական գրանցում ստացած վարձակալության և սեփականության իրավունքներ, այսինքն՝ ապամոնտաժումը տեղի է ունեցել այն դեպքում, երբ պետությունը դեռևս ճանաչում և պաշտպանում էր Աղասի Տեր-Եսայանի իրավունքը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Երևանի քաղաքապետարանն առաջարկել է գրությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում հայտնել դիրքորոշում թիվ 866 վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափի փոփոխության վերաբերյալ համապատասխան համաձայնագիր կնքելու համար, իսկ պատասխան գրությամբ Աղասի Տեր-Եսայանը Երևանի քաղաքապետարանին հայտնել է իր համաձայնությունը՝ թիվ 866 վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխելու վերաբերյալ: Վերլուծելով Երևանի քաղաքապետարանի 25.07.2011 թվականի համար 02/20-6441 գրությամբ հայտնված առաջարկի բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրության բովանդակությունն առնվազն կարող էր վկայել այն մասին, որ՝

1. 2008 թվականից հետո պայմանագիրը դեռևս համարվում էր շարունակված,

2. վարձակալության պայմանագրի գործողությունը դեռևս չէր դադարեցվել, ավելին՝ Երևանի քաղաքապետարանը նշված գրությամբ ձեռնամուխ է եղել վարձակալության պայմանագրի պայմաններից մեկը՝ վարձավճարի չափը, փոփոխելուն:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները վարձակալության հարաբերությունների անորոշ ժամկետով վերսկսված լինելու հարցը և Աղասի Տեր-Եսայանին պատկանող գույքի ապամոնտաժման հետևանքով պատճառված վնասի հատուցման պայմանները պետք է քննարկելին Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում 0,0020հա մակերեսով հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքի պետական գրանցման առկայության և վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո դրա պայմաններից մեկը՝ վարձավճարի չափը փոփոխելու առաջարկի վերաբերյալ վերը կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանի փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունները և եզրահանգումները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.11.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԿԴ/3193/02/13 քաղաքացիական գործով
25.12.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 25.12.2020 թվականին քննելով Աղասի Տեր-Եսայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աղասի Տեր-Եսայանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի գործողություններն ապօրինի (ոչ իրավաչափ) ճանաչելու և վնասի հատուցման պահանջների մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.11.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան և Մամիկոն Դրսեյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատաստանական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Աղասի Տեր-Եսայանը պահանջել է Երևան համայնքի (քաղաքապետարանի) գործողությունները, որոնցով Աղասի Տեր-Եսայանի անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 0,0020 հա մակերեսով հողամասից քանդվել է Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում սեփականության իրավունքով Աղասի Տեր-Եսայանին պատկանող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակը, ճանաչել ապօրինի, ինչպես նաև որպես հետևանք՝ Երևան համայնքին պարտավորեցնել հատուցելու ապօրինի գործողությունների արդյունքում Աղասի Տեր-Եսայանին պատճառված վնասը՝ բռնագանձելով 4.750.000 ՀՀ դրամ՝ որպես գույքի կորստի գումար, 1.705.000 ՀՀ դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, ինչպես նաև 2011 թվականի օգոստոս ամսից սկսած 4.750.000 ՀՀ դրամին հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան տոկոսներ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.06.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.11.2015 թվականի որոշմամբ Աղասի Տեր-Եսայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.06.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ Աղասի Տեր-Եսայանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, և այն վերացվել է, միաժամանակ Աղասի Տեր-Եսայանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աղասի Տեր-Եսայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը:

2. Վճուարենկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ, 624-րդ և 625-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Երևանի Գլխավոր պողոտայի» և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի և այդ հողամասի վրա գտնվող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակի նկատմամբ գրանցված է Ադասի Տեր-Եսայանի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքները: Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո պատասխանողը չի դադարեցրել պայմանագրի գործողությունը, պայմանագիրը շարունակել է գործել անորոշ ժամկետով, հայցվորը վճարել է վարձավճարը: Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցները քանդել են առևտրի տաղավարն այն պայմաններում, երբ որոշակի ժամկետով կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո պատասխանողը չի դադարեցրել պայմանագրի գործողությունը, պայմանագիրը շարունակել է գործել անորոշ ժամկետով, և հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքն ու առևտրի տաղավարի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցված չեն եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1. Վճուարենկ բողոքի պայասխանի հիմնավորումները

Ադասի Տեր-Եսայանը որպես վարձակալության պայմանագիր կնքելու առաջարկ է գնահատել Երևանի քաղաքապետարանի 25.07.2011 թվականի գրությունը, սակայն նշված գրությամբ պայմանագիր կնքելու առաջարկ չի արվել, այլ միայն տեղեկացվել է, որ 07.06.2011 թվականի դրությամբ Ադասի Տեր-Եսայանի մոտ առկա է հողամասի վարձավճարի պարտք և առաջարկվել է սահմանված ժամկետում այն վճարել և հայտնել դիրքորոշում վարձավճարի չափի փոփոխության վերաբերյալ համապատասխան համաձայնագիր կնքելու մասին:

Այսպիսով, վեճի առարկա կրպակի համար վարձակալության տրամադրված հողամասի վարձակալության պայմանագիրը համարվել է դադարած, իսկ վարձակալության պայմանագրի ժամկետը երկարացնելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել, ինչպես նաև Ադասի Տեր-Եսայանին իրավասու մարմնի կողմից չի ուղարկվել հողամասի վարձակալության պայմանագիր կնքելու օֆերտա:

3. Որպես վճուարենկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճուարենկ դատարանն արձանագրել է հետևյալը

1) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի կողմից 20.03.2003 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1045311 վկայականի համաձայն՝ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի նկատմամբ գրանցվել է Ադասի Տեր-Եսայանի վարձակալության իրավունքը: Իրավունքի գրանցման համար հիմք է հանդիսացել, ի թիվս այլնի, Երևանի քաղաքապետարանի և Ադասի Տեր-Եսայանի միջև 12.03.2003 թվականին կնքված թիվ 866 վարձակալության պայմանագիրը (5 տարի ժամկետով): Նշված վկայականի համաձայն՝ հողատարածքում առկա է 19 քմ մակերեսով առևտրի կրպակ (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**).

2) Երևանի քաղաքապետարանի 25.07.2011 թվականի թիվ 02/20-6441 գրության համաձայն՝ ի թիվս այլնի, Աղասի Տեր-Եսայանին տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշմամբ Երևան քաղաքի 1-ին գոտում գտնվող հողամասի կադաստրային արժեքը 1 քմ հողամասի համար սահմանվել է 60.000 ՀՀ դրամ, իսկ Երևանի ավագանու 23.12.2009 թվականի թիվ 55-Ն որոշման 35-րդ կետի համաձայն՝ հողամասերի տարեկան վարձավճարի չափը 1 քմ հողամասի նկատմամբ կազմում է 6.000 ՀՀ դրամ: Ելնելով վերը շարադրվածից՝ Երևանի քաղաքապետարանն առաջարկել է գրությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում հայտնել դիրքորոշում՝ թիվ 866 վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափի փոփոխության վերաբերյալ համապատասխան համաձայնագիր կնքելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 12**).

3) Աղասի Տեր-Եսայանը 09.08.2011 թվականի գրությամբ Երևանի քաղաքապետարանին հայտնել է իր համաձայնությունը թիվ 866 վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 10**).

4) ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի 06.08.2011 թվականի նախագգուշացմամբ Աղասի Տեր-Եսայանը տեղեկացվել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվել է և առաջարկվել է եռօրյա ժամկետում ապամոնտաժել կրպակը (**հատոր 1-ին, գ.թ. 16**).

5) Աղասի Տեր-Եսայանին պատկանող Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 0,0020 հա մակերեսով հողամասի վրա գտնվող կրպակն ապամոնտաժվել է 24.08.2011 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 96**).

6) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի 21.03.2012 թվականի թիվ ԱՍ-19/03/2012-2-0210 տեղեկանքի համաձայն՝ Աղասի Տեր-Եսայանի անվամբ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում 19 քմ մակերեսով առևտրի կրպակի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք, իսկ 0,0020 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ վարձակալության իրավունք (**հատոր 1-ին, գ.թ. 20**).

7) ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոնի 20.10.2014 թվականի թիվ Կ-076/14-01 տեղեկատվական նամակի համաձայն՝ Երևանի Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում գտնվող 19 քմ մակերեսով կրպակը ներկայումս գոյություն չունի: Նույն նամակի համաձայն՝ կրպակի 1 քմ մակերեսը 2011 թվականի օգոստոս ամսվա դրությամբ կարող էր կազմել 250.000 ՀՀ դրամ [ընդհանուր կրպակի արժեքը կարող էր կազմել 4.750.000 ՀՀ դրամ]: Նույն կրպակի վարձավճարը 2011 թվականի հունվար ամսից մինչև 2014 թվականի սեպտեմբեր ամիսը կարող էր կազմել 1.705.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 33-34**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Նույն գործի փաստերի համաձայն՝ դատարան ներկայացրած հայցադիմումով Աղասի Տեր-Եսայանը պահանջել է Երևան համայնքի (քաղաքապետարանի) գործողությունները, որոնցով Աղասի Տեր-Եսայանի անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 0,0020 հա մակերեսով հողամասից քանդվել է «Երևանի Գլխավոր պողոտայի» և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում սեփականության իրավունքով Աղասի Տեր-Եսայանին պատկանող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակը, ճանաչել ապօրինի: Որպես հետևանք՝ պահանջել է Երևան համայնքին պարտավորեցնել հատուցելու ապօրինի գործողությունների արդյունքում Աղասի Տեր-Եսայանին պատճառված վնասը՝ բռնագանձելով 4.750.000 դրամ՝ որպես գույքի կորստի գումար, 1.705.000 դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, ինչպես նաև 2011 թվականի օգոստոս ամսից սկսած 4.750.000 դրամին հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան տոկոսներ:

Դատարանի 17.06.2015 թվականի վճռով հայրը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշմամբ Աղասի Տեր-Եսայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.06.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ կյուբական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների, ինչպես նաև օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու հիմքերով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ադասի Տեր-Եսայանի ներկայացուցիչը: Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ, 624-րդ և 625-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.06.2013 թվականի թիվ ԵՄԴ/0599/02/12 որոշմանը, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 և 18.07.2014 թվականի թիվ ՍԴ3/0055/02/13 որոշումներին:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ Ադասի Տեր-Եսայանի **վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է այն հիմնավորմամբ, որ՝**

- «սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար»,
- «թեև բողոքաբերը բերված վճռաբեկ բողոքում վկայակոչել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.06.2013 թվականի թիվ ԵՄԴ/0599/02/12 որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 և 18.07.2014 թվականի թիվ ՍԴ3/0055/02/13 որոշումները և մեջբերել է դրանց և բողոքարկվող դատական ակտի ենթադրյալ հակասող մասերը, սակայն չի կատարել բավարար համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և վերոնշյալ դատական ակտերում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը նույնպես հիմնավորված չէ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ նոր հանգամանքի, այն է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի թիվ ՍԴՈ-1334 որոշման հիմքով վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը և այն վերացվել է, միաժամանակ Ադասի Տեր-Եսայանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Վճռաբեկ դատարանը, քննելով Ադասի Տեր-Եսայանի վճռաբեկ բողոքը, որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան և Մամիկոն Դրմեյանս, համաձայն չինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմանը ապրահայրված կարծիքի հետ, շարադրում ենք մեր հասրուկ կարծիքն այդ որոշման վերաբերյալ:

I. Վճռաբեկ դատարանի որոշման 4-րդ կետով արձանագրվել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը չէր կարող արձանագրել, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վերը նշված հիմքով և անդրադառնար Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման առկայության հետևանքով առերևույթ դատական սխալին և գործի ելքի վրա դրա ազդեցությանը հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես. ինչպես վերը նշվեց՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ նոր հանգամանքի, այն է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի թիվ ՍԴՈ-1334 որոշման հիմքով վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը և այն վերացվել է, միաժամանակ Աղասի Տեր-Եսայանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(..) **Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի թիվ ՍԴՈ-1334 որոշումը՝ որպես նոր հանգամանք, վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման միայն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմանի բացակայության հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելուն:**

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նշված դատական ակտի վերանայման արդյունքում այն ենթակա է վերացման ամբողջությամբ, իսկ Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ Աղասի Տեր-Եսայանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը ենթակա է վարույթ ընդունման վճռաբեկ բողոքում ներկայացված բոլոր հիմքերով: Այսինքն թեև րվյալ դեպքում առկա նոր հանգամանքը վերաբերում է միայն Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ Աղասի Տեր-Եսայանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վարույթ ընդունելը մերժելու հարցին, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման վերանայման պայմաններում ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա է վարույթ ընդունման թե՛ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, թե՛ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

Վերոգրյալ դատորության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն իրողությունը, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի մի քանի հիմքերով ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ օրենքով սահմանված հիմքերից միայն մեկի առկայության դեպքում այդ վճռաբեկ բողոքը մասնակիորեն վարույթ ընդունելու իրավական կառուցակարգ չի նախատեսել: Այդ կերպ ասած՝ այն դեպքում, երբ առկա է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մի քանի հիմքերով ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից որևէ մեկը, ապա այդ վճռաբեկ բողոքն ընդունվում է վարույթ ոչ թե միայն առկա հիմքի մասով, այլ՝ ամբողջությամբ: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը վերացնելու պայմաններում Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ Աղասի Տեր-Եսայանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը ենթակա է վարույթ ընդունման իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի թե՛ 1-ին և թե՛ 2-րդ կետերով նախատեսված հիմքերով» (րենս ՀՀ վճռաբեկ դատարանի 22.06.2018 թվականի որոշման 8-րդ էջը):

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշման դեմ

Ադասի Տեր-Եսայանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանը պայմանավորել է բացառապես բողոքը մասնակիորեն վարույթ ընդունելու իրավական կառուցակարգի բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանի 22.06.2018 թվականի որոշմամբ Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել ոչ թե այն պատճառով, որ առերևույթ հիմնավորված է համարվել նշված հիմքի առկայությունը, այլ այն պատճառով, որ բացակայել է բողոքը մասնակիորեն վարույթ ընդունելու իրավական կառուցակարգը:

Ման պայմաններում գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ նախևառաջ պետք է իրավական գնահատական տրվեր վճռաբեկ բողոքի՝ Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքին և դրա հիմնավորվածությանը, որից հետո միայն իրավական դիրքորոշում արտահայտվեր նույն իրավանորմի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի և դրա հիմնավորվածության վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը, սակայն, անտեսելով վերոգրյալը, իր որոշմամբ արձանագրել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է միայն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ և բողոքի քննությունն էլ իրականացրել է միայն նշված հիմքով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հատուկ կարծիքը կարող է վերաբերել դատական ակտի ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասին, իսկ Վճռաբեկ դատարանի որոշմամբ որևէ իրավական դիրքորոշում չի հայտնվել վճռաբեկ բողոքի հիմքերից մեկի, այն է՝ Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի և դրա հիմնավորվածության վերաբերյալ, հնարավոր չենք համարում կարծիք արտահայտել նշված հիմքի մասին:

II. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առերևույթ դատական սխալի առկայության և գործի ելքի վրա դրա ազդեցության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման, արձանագրվել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի թիվ ՍԴԻ-1334 որոշումը՝ **որպես նոր հանգամանք, վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման՝ միայն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմանի բացակայության հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելուն:**

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը նախևառաջ պետք է անդրադառնար ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման՝ Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմանի բացակայության հիմքին և իրավական դիրքորոշում արտահայտեր նշված հիմքի և դրա հիմնավորվածության վերաբերյալ: Ինչ վերաբերում է Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքին, ապա այդ մասով իրավական դիրքորոշում արտահայտելիս Վճռաբեկ դատարանը պետք է հաշվի առներ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի

«Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ տրված իրավական գնահատականը:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, անդրադառնալով վերաքննիչ դատարանին վերագրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքին և դրա հիմնավորվածությամբ, դեռևս 10.02.2016 թվականին կայացրած՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ եզրահանգել է, որ *«սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար»* (լրեն սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի որոշման 4-րդ էջի առաջին պարբերության վերջին նախադասությունը):

Նախկին օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Ինչպես վերն արդեն նշել ենք, սույն գործով նոր հանգամանքը վերաբերել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման միայն Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմանի բացակայության հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելուն, ինչն արձանագրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2018 թվականի որոշմամբ:

Փաստորեն, Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքին վերաբերող մասով նոր հանգամանք սույն գործով առկա չէ, իսկ այդ հիմքով բողոքը վարույթ է ընդունվել զուտ այն պատճառով, որ բացակայել է բողոքը մասնակիորեն վարույթ ընդունելու իրավական կառուցակարգը:

Նման պայմաններում գտնում ենք, որ Ադասի Տեր-Եսայանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի բացակայության մասին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն այն մասին, որ *«սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար»* չի կարող կասկածի տակ դրվել և այն պարտադիր է բոլորի, այդ թվում նաև դատավարության մասնակիցների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Մինչդեռ, տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի որոշմամբ ոչ միայն կասկածի տակ է դրվում վերաքննիչ դատարանին վերագրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքի և դրա հիմնավորվածության մասին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, այլ նաև այդ իրավական դիրքորոշմանը տրամագծորեն հակառակ՝ դատական սխալի առկայությունը հիմնավորված լինելու մասին իրավական դիրքորոշում է արտահայտվում:

Այսպիսով, գտնում ենք, որ Ադասի Տեր-Եսայանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում ներառված, Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքին վերաբերող մասով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արված եզրահանգումները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը, ուստի այդ որոշման վերանայման արդյունքում վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում նշված հիմքի վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշմանը տրամագծորեն հակառակ իրավական գնահատական չէր կարող տրվել, ու պետք է վերահաստատվեր

դատական սխալի բացակայության մասին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ **ՀՀ սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի թիվ ՍԳՈ-1334 որոշումը՝ որպես նոր հանգամանք, վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման՝ միայն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմանի բացակայության հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելուն:**

Ամփոփելով վերոգրյալը, հարկ ենք համարում նշել, որ Ադաի Տեր-Եսայանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված, այն է՝ դատական սխալի հիմքով Վերաքննիչ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը ենթակա չէ բեկանման, քանի որ օրինական ուժի մեջ մտած՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ հաստատվել է նշված հիմքի բացակայությունը:

Ինչ վերաբերում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքին, ապա Վճռաբեկ դատարանի որոշման եզրափակիչ մասի վրա դրա ազդեցության վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն չունենք, քանի որ այդ հիմքին Վճռաբեկ դատարանի որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվել:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Մ. Դրմեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ԼԳ/0522/02/13
Քաղաքացիական գործ թիվ	ԼԳ/0522/02/13	2020թ.
Նախագահող դատավոր՝	Ն. Բարսեղյան	
Դատավորներ՝	Ա. Խառատյան	
	Ս. Թորոսյան	

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան Բանկը պահանջել է վաղաժամկետ լուծել իր և Լիլիթ Բոթոյանի միջև կնքված վարկային պայմանագրերը և Լիլիթ Բոթոյանից բռնագանձել 1.273.389,3 ՀՀ դրամ, ինչպես նաև մայր գումարի՝ 1.093.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով հաշվարկել տոկոսներ՝ սկսած 23.05.2013 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Դատարան ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու պահանջի մասին 14.08.2017 թվականի դիմումով Բանկը պահանջել է Լիլիթ Բոթոյանից բռնագանձել 495.173,3 ՀՀ դրամ, ինչպես նաև 23.05.2013 թվականից մինչև 30.01.2014 թվականը վարկի մայր գումարի՝ 1.093.000 ՀՀ դրամի վրա, իսկ 30.01.2014 թվականից մինչև գումարը փաստացի Բանկին վերադարձնելու օրը 314.784 ՀՀ դրամի նկատմամբ բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Բոթոյանը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի Վանաձոր մասնաճյուղի և իր միջև կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրը:

Գործի քննության ընթացքում դատարան ներկայացված 10.03.2016 թվականի դիմումով Լիլիթ Բոթոյանը հրաժարվել է հակընդդեմ հայցից:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Գազիկյան) (այսուհետ՝ Դատարան) 16.01.2019 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Բանկի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասով, ինչպես նաև ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճվել է: Բանկից հօգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, բռնագանձելու մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Լիլիթ Բոթոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.01.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ դատական ծախսերի մասով, բեկանվել և փոփոխվել է. Բանկից հօգուտ Լիլիթ Բոթոյանի բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Բանկի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասով, ինչպես նաև ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճելու, ըստ Բանկի հայցի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասով մերժելու, ինչպես նաև նշված պահանջների համար բռնագանձման ենթակա պետական տուրքի գումարների բաշխման մասերով Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 347-րդ, 423-րդ, 437-րդ, 887-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, ինչը հանգեցրել է գործում առկա յուրաքանչյուր սպառույցի՝ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված գնահատման պարզակամության խախտման:

Բողոք բերած անձը՝ նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ կնքված վարկային պայմանագրի հիման վրա պահանջներ են ներկայացվել բռնագանձելու վարկային պայմանագրի հիման վրա հաշվարկված գումարները, որում առկա են ինչպես մայր գումարը, պայմանագրային տույժերի և տոկոսների գումարները, այնպես էլ ՀՀ քաղաքացիական

օրենսգրքով սահմանված տոկոսները, ինչը Դատարանը քննարկման առարկա չի դարձրել՝ փոխարենը քննարկելով վնասի հատուցման հարաբերությունները և դրանով իսկ դուրս գալով հայցի շրջանակներից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սպառիչ սահմանված են պարտավորությունը դադարելու հիմքերը, իսկ սույն գործով փաստացի վճարված չեն վարկային իրավահարաբերություններից բխող ամբողջ գումարները:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի կատարել ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, նույնացրել է հանցագործությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունը վարկային պայմանագրից բխող իրավահարաբերությունների հետ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է հիշյալ հարցի հետ կապված ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԼԳ/0647/02/13 գործով կայացված որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունն ինքնին բավարար հիմք չէ գումարները վճարված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, ինչպես նաև մերժել Բանկից հօգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ գումար փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման պահանջը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի (Վարկատու) և Լիլիթ Բոթոյանի (Վարկառու) միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրի համաձայն՝ Վարկատուն պարտավորվել է 1.093.000 ՀՀ դրամի չափով վարկ տրամադրել Վարկառուին՝ տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով՝ մինչև 21.11.2013 թվականը մարման ժամկետով, իսկ Վարկառուն պարտավորվել է վերադարձնել ստացված գումարը, վճարել տոկոսներ դրանից, ինչպես նաև վճարել հաշվի սպասարկման միանվագ և ամսական վճարներ **(հատոր 1-ին, գ.թ. 7-8)**:

2) Բանկի (Գրավառու) և Լիլիթ Բոթոյանի (Գրավատու) միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/083385 գրավի պայմանագրի համաձայն՝ Գրավատուն գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող և պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում նշված ոսկյա զարդերը՝ ի սպառնալուսին Գրավատուի և Գրավառուի միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրով Գրավատուի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարման **(հատոր 1-ին, գ.թ. 9-10)**:

3) Բանկի կողմից 22.05.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ 21.11.2012 թվականի թիվ GA12/41762 պայմանագրով ստանձնած պարտավորությունների գծով 22.05.2013 թվականի դրությամբ Լիլիթ Բոթոյանի պարտքը Բանկի հանդեպ կազմում է 1.273.389,30 ՀՀ դրամ, որից 1.093.000 ՀՀ դրամ՝ վարկի գումարի մնացորդ, 130.800,50 ՀՀ դրամ՝ հաշվարկված տոկոսագումար, 39.751,80 ՀՀ դրամ՝ հաշվարկված տույժերի գումար, 9.837 ՀՀ դրամ՝ վարկային հաշվի սպասարկման վճար **(հատոր 1-ին, գ.թ. 6)**:

4) Բանկի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև 02.07.2011 թվականին կնքված թիվ DI000015 բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով Բանկն ապահովագրել է իր բանկային ռիսկերը (այդ թվում՝ աշխատակիցների անազնվությունը) **(հատոր 1-ին, գ.թ. 109-126)**:

5) Բանկի 14.02.2014 թվականի թիվ 809 գրության համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից կատարվել է հատուցում՝ 32.489.351 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 108)**:

6) 14.08.2017 թվականին ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու մասին դիմումով Բանկը հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին վճարվել է ապահովագրական հատուցում, որոնցով թվով 50 վարկային պայմանագրերի մայր գումարների հանրագումարը (45.586.000) և ապահովագրությամբ վճարված գումարի (32.489.351) տոկոսային հարաբերակցությունը կազմում է 71,2%, իսկ մայր գումարի չհատուցված մասը տոկոսային տեսքով՝ 28,8%: Վերոգրյալի հիման վրա Բանկը հայցից մասնակի հրաժարվել է և նվազեցրել հայցապահանջը (**հատոր 3-րդ, գ.թ. 30**):

7) Թիվ ԼԴ/0184/01/13 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2015 թվականի դատավճռով Կամո Աֆիցերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Վահրամ Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Դատավճռով հաստատված է համարվել, որ Կամո Աֆիցերյանը, հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի ոսկերիչ-փորձագետ և ունենալով նույն բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է ելել իր ծանոթ Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար, կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր՝ վերացրել է խոջընդոտները: Կամո Աֆիցերյանը չարաշահել է բանկի վստահությունը և օգտագործելով որպես փորձագետ ներկայացված զարդերը գնահատելու և համապատասխան ակտ կազմելու իրեն վերապահված լիազորությունները՝ 2011 թվականից մինչև 07.02.2013 թվականն ընկած ժամանակահատվածում շարունակաբար քաղաքացիների անվամբ որպես ոսկի գրավադրել է Վահրամ Բարսեղյանի կողմից նախապես ձեռք բերված ոչ ոսկյա զարդերը և նրանց կողմից օգտագործելու նպատակով կազմելով իրավունք վերապահող 50 հատ կեղծ փաստաթուղթ՝ թանկարժեք մետաղների գնահատման ակտ, 2.035.200 ՀՀ դրամ արժողության զարդերը գնահատել է 50.732.880 ՀՀ դրամ: Դրանց հիման վրա ձևակերպվել են լուրսարդային վարկի 50 պայմանագիր, որի արդյունքում քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, իսկ նա էլ խաբեությամբ բանկից ստացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կամո Աֆիցերյանի օժանդակությամբ հափշտակել և տնօրինել է իր հայեցողությամբ: (...)

Դատավճռի համաձայն՝ գործով որպես վկա ցուցմունք է տվել նաև Լիլիթ Բոթոյանը՝ հայտնելով, որ 2011 թվականի դեկտեմբերի վերջերին իր ծանոթ Գոհար Գալստյանը խնդրել է իր անվամբ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության Վանաձորի մասնաճյուղում ոսկյա զարդեր գրավադնել՝ նշելով, որ մի քանի վարկ ունենալու պատճառով այլևս իրեն վարկեր չեն տալիս: Ինքը համաձայնվել է, և պայմանավորվածության համաձայն՝ հաջորդ օրը գնացել են նշված բանկ: Հասնելով բանկ՝ Գոհար Գալստյանը իրեն է տվել թափանցիկ փաթեթով փաթեթավորված ոսկյա զարդեր, ապա միասին մտել են ոսկերիչի մոտ, ով, առանց փաթեթը բացելու և ոսկին ստուգելու, կշռել է, գնահատել և կազմել համապատասխան պայմանագիր, որից հետո դրամարկղից ստացել է 900.000 դրամ և պայմանագրի հետ միասին տվել է Գոհար Գալստյանին: (...) Դատաքննության ժամանակ Լիլիթ Բոթոյանը, պնդելով նախաքննական ցուցմունքները, հայտնել է, որ (...) ոսկերիչն առանձին-առանձին զարդերը չի ուսումնասիրել, ընդհանուր կշռել է, հետո փաթեթավորել, ակտ է տվել, որը ստորագրել է, մոտեցել են, վարկը ձևակերպել, պայմանագիրը ստորագրել է, գումարը ստացել են, տվել է Գոհարին, նա էլ նախապես մեկ ամսվա տոկոսը վճարել է և բանկից դուրս են եկել: (...) Դրանից հետո իրեն է գումար պետք եղել, դիմել է «Արեգակ» վարկային կազմակերպությանը, որտեղ իմացել է, որ իր անունը «սև ցուցակում» է: Ջանգահարել է Գոհարին և իմացել, որ նրա կողմից տրված զարդերը ոսկի չեն, նաև հայտնել է, որ ինքն էլ չի իմացել դրա մասին: Դրանից հետո դատարանից փաստաթուղթ է ստացել, որի համաձայն՝ բանկը դիմել է դատարան իրենից մոտ 1.000.000 դրամ գումարի բռնագանձման պահանջով (**հատոր 2-րդ, գ.թ. 12-27**):

8) Թիվ ԼԴ1/0428/02/15 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացիական գործով ըստ հայցի Բանկի ընդդեմ Կամո Աֆիցերյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է: Վճռվել է Կամո Աֆիցերյանից հօգուտ Բանկի բռնագանձել 10.271.579 ՀՀ դրամ՝ **որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում**, ինչպես նաև 10.271.579 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 19.02.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափերի, և հաշվարկված գումարները բռնագանձել Կամո Աֆիցերյանից հօգուտ Բանկի (**հատոր 3-րդ, գ.թ. 46-53, 61-67, հատոր 4-րդ, գ.թ. 13-16**):

9) Թիվ ԼԴ/0458/02/17 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2018 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ըստ հայցի Բանկի ընդդեմ Վահրամ Բարսեղյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Վահրամ Բարսեղյանից հօգուտ Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամ՝ **որպես հանցագործության կատարման արդյունքում հայցվորին պատճառված վնասի գումար**, ինչպես նաև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պատասխանողի կողմից գումարն ամբողջությամբ բանկին վճարելն ընկած ժամանակահատվածի համար հօգուտ Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամի՝ նկատմամբ հաշվարկվող տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով (**հատոր 5-րդ, գ.թ. 129, դատական տեղեկատվական համակարգ**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարկային հարաբերություններից բխող ռիսկի ապահովագրության պայմաններում վարկային պարտավորությունների կատարման առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 423-րդ, 437-րդ, 887-րդ հոդվածների այնպիսի խախտում, որով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. վարկային հարաբերություններից բխող ռիսկի ապահովագրության դեպքում արդյո՞ք վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները կարող են համարվել դադարած, եթե ապահովագրական պարտահարը ծագել է հանցագործությամբ պարճատված վնասի արդյունքում, որի համար տրվել է ապահովագրական հարուցում, իսկ վարկային պայմանագրից բխող պարտավորությունը դադարած համարելու՝ օրենքով սահմանված որևէ հիմք առկա չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր

գործերին որևէ մեկի կամայական միջանորոգության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմերից մեկի պահանջով թույլատրվում է դադարեցնել պարտավորությունը միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր կնքելու հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է նույն օրենսգրքով, օրենքով կամ կանոնի ստանձնած պարտավորությամբ: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9831-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ՝ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը **վնասը պատճառած անձի նկատմամբ** անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն ապահովագրողին

անցնելը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է ապահովագրի (ապահովագրված անձի, շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապահովագրի (ապահովագրված անձը, շահառուն) պարտավոր է ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե ապահովագրի (ապահովագրված անձը, շահառուն) հրաժարվել է ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել ապահովագրի (ապահովագրված անձի, շահառուի) մեղքով, ապա ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ կարևորել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների՝ մասնավորապես պայմանագրի ազատության սկզբունքի առանցքային դերը քաղաքացիաիրավական իրավահարաբերություններում (*յրեն «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ընդդեմ «ԼԵՎ ԳՐՈՒԻ ԻՐԱՎԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԻ/1489/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցները ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն (*յրեն «ՓԼԵՅ ԳՈՈՒԻ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԻ/4072/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

«Ինելկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Մարինե Ալավերդյանի քաղաքացիական գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարկային պայմանագրից բխող պահանջների դեպքում ապացուցման առարկայի մեջ է մտնում վարկային հարաբերությունների (վարկային պայմանագրի) առկայությունը, վարկատուի կողմից վարկի գումարը փոխառուին տրամադրած լինելը, փոխառուի կողմից պարտավորության կետանց թույլ տալը, ինչպես նաև փոխառուի մեղքի առկայությունը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի ուժով ենթադրվում է, եթե փոխառուն չապացուցի իր մեղքի բացակայությունը:

Նկատի ունենալով, որ վարկային պայմանագրով որպես վարկատու հանդես են գալիս բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, որոնք ռիսկային ֆինանսական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են, վերջիններս հնարավորություն ունեն ապահովագրելու վարկային հարաբերություններից ծագող որոշակի ռիսկեր: Ընդ որում, որոշ դեպքերում ապահովագրման պահանջը սահմանվում է օրենքով: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ վարկային պայմանագրի կատարումն ապահովված է գրավով, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն գրավատուն կամ գրավառուն, կախված այն բանից, թե նրանցից ում մոտ է գտնվում գրավ դրված գույքը, պարտավոր է գրավ դրված գույքն ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից: Այսինքն՝ վարկային հարաբերությունների շրջանակում հնարավոր է ապահովագրության հարաբերությունների ծագում:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարկային հարաբերություններից ծագող որոշակի ռիսկեր ապահովագրելիս ապահովագրական հատուցում վճարելուց հետո վարկային հարաբերություններից բխող պահանջն օրենքի ուժով անցնում է ապահովագրական

ընկերությանը: Ընդ որում, պահանջի զիջման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը (եթե այլ բան նախատեսված չլինի ապահովագրության պայմանագրով):

1. ապահովագրության հարաբերությունների առկայությունը, ընդ որում, նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի պահանջը՝ տվյալ փաստն ապացուցող միակ թույլատրելի ապացույցն ապահովագրության պայմանագիրն է կամ ապահովագրական վկայագիրը, եթե վերջինս պարունակում է ապահովագրության պայմանագրի՝ օրենքով սահմանված բոլոր էական պայմանները,

2. ապահովագրական պատահարի առկայությունը. ապահովագրական պատահարը պետք է ծագի ապահովագրական պայմանագրով նախատեսված իրավաբանական փաստերի ուժով, որպիսի պարագայում ապահովագրողը պարունակոր է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

3. ապահովագրական հատուցում վճարած լինելն ապահովադրին կամ շահառուին (բնէն թիվ ԼՅ/0647/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ վարկային պայմանագրից բխող գումարի բռնագանձման պահանջի դեպքում ապացուցման առարկայի մեջ է մտնում վարկային հարաբերությունների (վարկային պայմանագրի) առկայությունը, վարկատուի կողմից վարկի գումարը փոխառուին տրամադրած լինելը, փոխառուի կողմից պարտավորության կետանց թույլ տալը, ինչպես նաև փոխառուի մեղքի առկայությունը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի ուժով ենթադրվում է, եթե փոխառուն չապացուցի իր մեղքի բացակայությունը: Ընդ որում, պարտավորության դադարած լինելու հանգամանքը ապացուցված չլինելու դեպքում, գործում է պարտավորության առկայության կանխավարկածը:

Անդրադառնալով վարկային հարաբերություններից բխող ռիսկերի ապահովագրության դեպքում վարկային պայմանագրից բխող պարտականությունը փոխառուի կողմից կատարելու հարցին՝ Վճարելի դատարանը կարևորում է, որ վարկային հարաբերություններն ու ապահովագրական հարաբերություններն ինքնուրույն պարտավորական հարաբերություններ են: Ընդ որում, փոխառուն ապահովագրական հարաբերությունների կողմ չէ: Հետևաբար, փոխառուն չի կարող հրաժարվել վարկային պարտավորությունից բխող պարտականությունը կատարելուց՝ վկայակոչելով ապահովագրական հարաբերությունների առկայությունը:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ վարկատուն արդեն իսկ հատուցում է ստացել ապահովագրական ընկերությունից, ապա Վճարելի դատարանը գտնում է, որ նման դեպքում անհրաժեշտ է տարանջատել թեև միմյանց հետ փոխկապակցված, սակայն այդուհանդերձ երկու տարբեր իրավահարաբերությունները՝ վարկային իրավահարաբերությունը և ապահովագրական իրավահարաբերությունը, և դրանց ծագման հիմքերը: Վճարելի դատարանը կարևորում է, որ անգամ վարկատուի կողմից ապահովագրական հատուցում ստանալը չի դադարեցնում վարկային իրավահարաբերությունը փոխառուի համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածը, ինչպես նաև նույն օրենսգրքի 27-րդ գլուխը («Պարտավորությունները դադարելը») պարտավորության դադարման նման հիմքի կիրառման հնարավորություն չեն սահմանում: Տվյալ իրավիճակում ոչ թե վարկային պարտավորությունը դադարում է, այլ այն պահից սկսած, երբ վարկատուն ամբողջ ծավալով ստանում է ապահովագրական հատուցում ապահովագրական ընկերությունից, վարկային պայմանագրից բխող պահանջի իրավունքը փոխանցվում է ապահովագրական ընկերությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճարելի դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ անգամ ապահովագրական հատուցումն ամբողջությամբ վճարված լինելու պայմաններում փոխառուն չի կարող վկայակոչել այդ հանգամանքը և հրաժարվել պարտավորության կատարումից, քանի որ սուրբորոգացիայի նշված հոդվածով սահմանված՝ վնասի հատուցման պահանջի իրավունքն ապահովադրից ապահովագրողին անցնելու (սուրբորոգացիա) կանոնները կիրառելի են

ապահովալիք-ապահովագրող հարաբերությունների նկատմամբ և չեն բացառում վարկային պայմանագրից բխող պահանջի բավարարումը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փոխառուն կարող է ազատվել *վարկարուհի առջև* վարկային պարտավորությունից միայն այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ապացուցվի, որ վարկատուն անբողջությամբ ստացել է ապահովագրական հատուցում հենց նույն ապահովագրական պատահար հանդիսացող պարտավորության համար և իր պահանջի իրավունքը զիջել է ապահովագրական ընկերությանը՝ վերջինիս հանձնելով պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ: Ընդ որում, անգամ այս պարագայում փոխառուն չի ազատվում **ապահովագրական ընկերության** նկատմամբ հնարավոր հետագա պարտավորություններից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի (Վարկատու) և Լիլիթ Բոթոյանի (Վարկառու) միջև 21.11.2012 թվականին կնքված վարկային պայմանագրով Բանկը 1.093.000 ՀՀ դրամի չափով, տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով վարկ է տրամադրել Լիլիթ Բոթոյանին՝ մինչև 21.11.2013 թվականը մարման ժամկետով: Ըստ Բանկի և Լիլիթ Բոթոյանի միջև կնքված գրավի պայմանագրի՝ վարկային պարտավորության կատարման ապահովման նպատակով Լիլիթ Բոթոյանը գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ոսկյա իրերը:

Բանկի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև 02.07.2011 թվականին կնքված բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով Բանկն ապահովագրել է իր բանկային ռիսկերը (այդ թվում՝ աշխատակիցների անագնությունը):

Թիվ ԼԳ/0184/01/13 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2015 թվականի դատավճռով Կամո Աֆիցերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Վահրամ Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Դատավճռով հաստատված է համարվել, որ Կամո Աֆիցերյանը, հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի ոսկերիչ-փորձագետ և ունենալով նույն բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է եկել իր ծանոթ Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար, կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր՝ վերացրել է խոչընդոտները: Դատավճռի համաձայն՝ Լիլիթ Բոթոյանի հետ պայմանագրերը նույնպես վերոնշյալ արարքների կատարման արդյունքում են կնքվել:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին կատարվել է հատուցում՝ 32.489.351 ՀՀ դրամի չափով:

14.08.2017 թվականին ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու մասին դիմումով Բանկը հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին վճարվել է ապահովագրական հատուցում, որոնցով թվով 50 վարկային պայմանագրերի մայր գումարների հանրագումարը (45.586.000) և ապահովագրությամբ վճարված գումարի (32.489.351) տոկոսային հարաբերակցությունը կազմում է 71,2%, իսկ մայր գումարի չհատուցված մասը տոկոսային տեսքով՝ 28,8%: Վերոգրյալի հիման վրա Բանկը հայցից մասնակի հրաժարվել է և նվազեցրել հայցապահանջը:

Դատարանը հայրը մերժելիս գտել է, որ Բանկի կողմից Լիլիթ Բոթոյանից պահանջվող գումարները ներառված են Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից պահանջվող և բռնագանձվող գումարների ծավալների մեջ: Բացի այդ, Դատարանը եզրահանգել է, որ վարկային հարաբերություններից ծագող ռիսկերն ապահովագրելիս ապահովագրական հատուցում վճարելուց հետո վարկային հարաբերություններից բխող պահանջն օրենքի ուժով անցել է ապահովագրական ընկերությանը: Դատարանը եզրահանգել է, որ Բանկին պատճառված վնասի համար հատուցման պարտականությունը չի կարող դրվել

Լիլիթ Բոթոյանի վրա նաև այն հիմնավորմամբ, որ Կամո Աֆիցերյանից բռնագանձվել է այն գումարի տարբերությունը, որը չի հատուցվել ապահովագրական ընկերության կողմից:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի դիրքորոշումը, եզրահանգել է, որ սույն գործով պատասխանողից պահանջվող գումարը նույնանում է արդեն իսկ ապահովագրական ընկերության կողմից Բանկին հատուցված և բռնագանձման ենթակա գումարների հետ, ինչն էլ իր հերթին հիմք է տալիս եզրահանգելու, որ հայցվորի կողմից չի հիմնավորվել պարտավորության խախտման արդյունքում փոխհատուցման արժեքը և դրա արժեքի սահմաններում պահանջի իրավունք ունենալը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Դատարանի և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Ընդ որում, համանման կարգավորում առկա է նաև սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքների քննության պահին գործող՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ Բանկի և պատասխանողի միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրով հիմնավորվել է, որ կողմերի միջև առկա են եղել վարկային հարաբերություններ, իսկ գործում առկա չեն ապացույցներ՝ վարկային պարտավորության դադարման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Բանկի կողմից ապահովագրական հատուցում ստանալու հանգամանքին, ապա Վճռաբեկ դատարանը, այդ թվում հիմք ընդունելով թիվ ԼԴ/0647/02/13 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականին հայտնած իր դիրքորոշումը, կարևորում է, որ սույն գործի շրջանակներում թեև հիմնավորվել է Բանկի կողմից ապահովագրական հատուցում ստանալու հանգամանքը, սակայն այն բավարար չէ վարկային պարտավորությունը դադարած համարելու համար: Ավելին, Բանկը, նվազեցնելով հայցապահանջը, հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին վճարվել է ապահովագրական հատուցում, որոնցով թվով 50 վարկային պայմանագրերի մայր գումարների հանրագումարը (45.586.000) և ապահովագրությամբ վճարված գումարի (32.489.351) տոկոսային հարաբերակցությունը կազմում է 71,2%, իսկ մայր գումարի չհատուցված մասը տոկոսային տեսքով՝ 28,8%: Այսինքն՝ սույն գործով անգամ չի ներկայացվել ապացույց այն մասին, որ ստացված ապահովագրական հատուցումն ամբողջությամբ մարել է Լիլիթ Բոթոյանի վարկային պարտավորությունը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ անկախ Բանկի՝ ապահովագրական հատուցում ստանալու հանգամանքից՝ Բանկի և Լիլիթ Բոթոյանի միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրից բխող պարտավորությունը չի դադարել Լիլիթ Բոթոյանի համար (այն չափով, որով Բանկը ներկայացրել է վերջնական հայցապահանջը՝ սկզբնական հայցապահանջի նվազեցման արդյունքում):

Անդրադառնալով Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից գումար բռնագանձելու վերաբերյալ դատական ակտերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել

աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ պարտավորությունների տարանջատման և միմյանց բացառելու կամ փոխադարձ լրացնելու հանգամանքները պարզելու հարցում էական նշանակություն ունի պարտավորության ծագման հիմքի որոշումը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից գումար բռնագանձելու վերաբերյալ դատական ակտերը վերաբերում են **այլ հիմքով պարտավորությանը**՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, որոնց անկայությունն ինքնին չի բացառում գործող վարկային պայմանագրով պարտավորության կատարումը Լիլիթ Բոթոյանի կողմից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն, որ սույն գործի քննության շրջանակներում անգամ չի ապացուցվել այդ դատական ակտերից բխող պարտավորությունը փաստացի կատարված լինելու հանգամանքը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստորադաս դատարանները խեղաթյուրել են վարկային իրավահարաբերության էությունը, գործում անկա ապացույցները լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության առարկա չեն դարձրել, մասնավորապես հաշվի չեն առել, որ սույն գործով անկա ապացույցներով չի հիմնավորվում վարկային պայմանագրից բխող պարտավորության դադարման հանգամանքը: Ուստի ստորադաս դատարանների եզրահանգումն այն մասին, որ սույն գործով Բանկի կողմից չի ապացուցվել պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում փոխհատուցման արժեքի սահմաններում *պահանջի իրավունք ունենալը*, հիմնավոր չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի անկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հիմքերով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, մասնավորապես՝ ապահովագրական և վարկային իրավահարաբերությունների բովանդակության սխալ բացահայտման և այդ իրավահարաբերություններից բխող պահանջի իրավունքի էության խաթարման հետևանքով բացառվել է վարկային պայմանագրից բխող պարտավորության կատարումն այն դեպքում, երբ գործում անկա ապացույցներով չի հիմնավորվել, որ վարկային պարտավորությունը որևէ հիմքով դադարած է:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո նոր քննություն իրականացնելու համար:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Բանկը Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացրել է միայն մերժված հայցապահանջի մասով, իսկ Լիլիթ Բոթոյանը՝ միայն փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման պահանջը մերժելու մասով: Այսինքն՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասով Դատարանի վճիռը չի բողոքարկվել (ինչպես Բանկի, այնպես էլ Լիլիթ Բոթոյանի վերաքննիչ բողոքները որևէ փաստարկ նշված հարցի վերաբերյալ չեն պարունակում): Այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանը որոշման եզրափակիչ մասում թեև ոչ իրավաչափորեն, բայցևայնպես անդարդարձել է նաև Դատարանի վճռի չբողոքարկված մասին անփոփոխ թողնելով այն: Նկատի ունենալով, որ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասով վճռաբեկ բողոքը որևէ փաստարկ չի պարունակում (ավելին, հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը հակընդդեմ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով կարճելու մասով դատական ակտը չի շոշափում Բանկի շահերը), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել մասնակիորեն՝ մերժված հայցապահանջի մասով Դատարանի վճիռն անփոփոխ թողնելու մասով: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բանկի հայցապահանջը մերժելու

մասով դատական ակտի բեկանման պայմաններում անհրաժեշտ է բեկանել նաև Վերաքննիչ դատարանի որոշման՝ Բանկից հոգուտ Լիլիթ Բոթոյանի փաստաբանի վարձատրության գումար բռնագանձելու մասը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշման՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.01.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի հայցը մերժելու մասով անփոփոխ թողնելու, ինչպես նաև «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից հոգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, բռնագանձելու մասը, և այդ մասով գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԼԴ/0522/02/13 քաղաքացիական գործով 03.07.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշման՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.01.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի հայցը մերժելու մասով անփոփոխ թողնելու, ինչպես նաև «Ինտելոբանկ» ՓԲԸ-ից հոգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, բռնագանձելու մասը, և այդ մասով գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Էդ. Սեդրակյանս, համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 03.07.2020 թվականին թիվ ԼԴ/0522/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է վաղաժամկետ լուծել իր և Լիլիթ Բոթոյանի միջև կնքված վարկային պայմանագրերը և Լիլիթ Բոթոյանից բռնագանձել 1.273.389,3 ՀՀ դրամ, ինչպես նաև մայր գումարի՝ 1.093.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով հաշվարկել տոկոսներ՝ սկսած 23.05.2013 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Դատարան ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու պահանջի մասին 14.08.2017 թվականի դիմումով Բանկը պահանջել է Լիլիթ Բոթոյանից բռնագանձել 495.173,3 ՀՀ դրամ, ինչպես նաև 23.05.2013 թվականից մինչև 30.01.2014 թվականը վարկի մայր գումարի՝ 1.093.000 ՀՀ դրամի վրա, իսկ 30.01.2014 թվականից մինչև գումարը փաստացի Բանկին վերադարձնելու օրը 314.784 ՀՀ դրամի նկատմամբ բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Բոթոյանը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի Վանաձոր մասնաճյուղի և իր միջև կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրը:

Գործի քննության ընթացքում դատարան ներկայացված 10.03.2016 թվականի դիմումով Լիլիթ Բոթոյանը հրաժարվել է հակընդդեմ հայցից:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Գազիկյան) (այսուհետ՝ Դատարան) 16.01.2019 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Բանկի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասով, ինչպես նաև ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային

պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճվել է: Բանկից հոգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, բռնագանձելու մասով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Լիլիթ Բոթոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.01.2019 թվականի վճիռը մասնակիորեն դատական ծախսերի մասով, բեկանվել և փոփոխվել է. Բանկից հոգուտ Լիլիթ Բոթոյանի բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Բանկի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք՝ Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասով, ինչպես նաև ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճելու, ըստ Բանկի հայցի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք՝ Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասով մերժելու, ինչպես նաև նշված պահանջների համար բռնագանձման ենթակա պետական տուրքի գումարների բաշխման մասերով Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 347-րդ, 423-րդ, 437-րդ, 887-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, ինչը հանգեցրել է գործում առկա յուրաքանչյուր ապացույցի՝ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված գնահատման պարզականության խախտման:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ կնքված վարկային պայմանագրի հիման վրա պահանջներ են ներկայացվել բռնագանձելու վարկային պայմանագրի հիման վրա հաշվարկված գումարները, որում առկա են ինչպես մայր գումարը, պայմանագրային տույժերի և տոկոսների գումարները, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված տոկոսները, ինչը Դատարանը քննարկման առարկա չի դարձրել՝ փոխարենը քննարկելով վնասի հատուցման հարաբերությունները և դրանով իսկ դուրս գալով հայցի շրջանակներից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սպառիչ սահմանված են պարտավորությունը դադարելու հիմքերը, իսկ սույն գործով փաստացի վճարված չեն վարկային իրավահարաբերություններից բխող ամբողջ գումարները:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի կատարել ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, նույնացրել է հանցագործությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունը վարկային պայմանագրից բխող իրավահարաբերությունների հետ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է հիշյալ հարցի հետ կապված ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԼԴ/0647/02/13 գործով կայացված որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունն ինքնին բավարար հիմք չէ գումարները վճարված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը բավարարել, ինչպես նաև մերժել Բանկից հոգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ գումար փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման պահանջը:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի (Վարկատու) և Լիլիթ Բոթոյանի (Վարկառու) միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրի համաձայն՝ Վարկատուն պարտավորվել է 1.093.000 ՀՀ դրամի չափով վարկ տրամադրել Վարկառուին՝ տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով՝ մինչև 21.11.2013 թվականը մարման ժամկետով, իսկ Վարկառուն պարտավորվել է վերադարձնել ստացված գումարը, վճարել տոկոսներ դրանից, ինչպես նաև վճարել հաշվի սպասարկման միանվագ և ամսական վճարներ **(հատոր 1-ին, գ.թ. 7-8):**

2) Բանկի (Գրավատու) և Լիլիթ Բոթոյանի (Գրավատու) միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/083385 գրավի պայմանագրի համաձայն՝ Գրավատուն գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող և պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում նշված ոսկյա զարդերը՝ ի սպառնումն Գրավատուի և Գրավառուի միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրով Գրավատուի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարման **(հատոր 1-ին, գ.թ. 9-10):**

3) Բանկի կողմից 22.05.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ 21.11.2012 թվականի թիվ GA12/41762 պայմանագրով ստանձնած պարտավորությունների գծով 22.05.2013 թվականի դրությամբ Լիլիթ Բոթոյանի պարտքը Բանկի հանդեպ կազմում է 1.273.389,30 ՀՀ դրամ, որից 1.093.000 ՀՀ դրամ՝ վարկի գումարի մնացորդ, 130.800,50 ՀՀ դրամ՝ հաշվարկված տոկոսագումար, 39.751,80 ՀՀ դրամ՝ հաշվարկված տույժերի գումար, 9.837 ՀՀ դրամ՝ վարկային հաշվի սպասարկման վճար **(հատոր 1-ին, գ.թ. 6):**

4) Բանկի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև 02.07.2011 թվականին կնքված թիվ DI000015 բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով Բանկն ապահովագրել է իր բանկային ռիսկերը (այդ թվում՝ աշխատակիցների անազնվությունը) **(հատոր 1-ին, գ.թ. 109-126):**

5) Բանկի 14.02.2014 թվականի թիվ 809 գրության համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից կատարվել է հատուցում՝ 32.489.351 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 108):**

6) 14.08.2017 թվականին ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու մասին դիմումով Բանկը հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին վճարվել է ապահովագրական հատուցում, որոնցով թվով 50 վարկային պայմանագրերի մայր գումարների հանրագումարը (45.586.000) և ապահովագրությամբ վճարված գումարի (32.489.351) տոկոսային հարաբերակցությունը կազմում է 71,2%, իսկ մայր գումարի չհատուցված մասը տոկոսային տեսքով՝ 28,8%: Վերոգրյալի հիման վրա Բանկը հայցից մասնակի հրաժարվել է և նվազեցրել հայցապահանջը **(հատոր 3-րդ, գ.թ. 30):**

7) Թիվ ԼԴ/0184/01/13 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2015 թվականի դատավճռով Կամո Աֆիցեդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Վահրամ Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Դատավճռով հաստատված է համարվել, որ Կամո Աֆիցեդյանը, հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի ոսկերիչ-փորձագետ և ունենալով նույն բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է եկել իր ծանոթ Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար, կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր՝ վերացրել է խոչընդոտները: Կամո Աֆիցեդյանը չարաշահել է բանկի վստահությունը և օգտագործելով որպես փորձագետ ներկայացված զարդերը գնահատելու և համապատասխան ակտ կազմելու իրեն վերապահված լիազորությունները՝ 2011 թվականից մինչև 07.02.2013 թվականն ընկած ժամանակահատվածում շարունակաբար քաղաքացիների անվամբ որպես ոսկի գրավադրել է Վահրամ Բարսեղյանի կողմից նախապես ձեռք բերված ոչ ոսկյա

գարդերը և նրանց կողմից օգտագործելու նպատակով կազմելով իրավունք վերապահող 50 հատ կեղծ փաստաթուղթ՝ թանկարժեք մետաղների գնահատման ակտ, 2.035.200 ՀՀ դրամ արժողության գարդերը գնահատել է 50.732.880 ՀՀ դրամ: Դրանց հիման վրա ձևակերպվել են լուրջարդային վարկի 50 պայմանագիր, որի արդյունքում քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, *իսկ նա էլ խարեությունը բանկից սրացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կամո Աֆիցերյանի օժանդակությամբ հափշտակել և փնտրիներ է իր հայեցողությամբ: (...)*

Դատավճռի համաձայն՝ գործով որպես վկա ցուցմունք է տվել նաև Լիլիթ Բոթոյանը՝ հայտնելով, որ 2011 թվականի դեկտեմբերի վերջերին իր ծանոթ Գոհար Գալստյանը խնդրել է իր անվամբ «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերության Վանաձորի մասնաճյուղում ոսկյա գարդեր գրավադնել՝ նշելով, որ մի քանի վարկ ունենալու պատճառով այլևս իրեն վարկեր չեն տալիս: Ինքը համաձայնվել է, և պայմանավորվածության համաձայն՝ հաջորդ օրը գնացել են նշված բանկ: Հասնելով բանկ՝ Գոհար Գալստյանը իրեն է տվել թափանցիկ փաթեթով փաթեթավորված ոսկյա գարդեր, ապա միասին մտել են ոսկերիչի մոտ, ով, առանց փաթեթը բացելու և ոսկին ստուգելու, կշռել է, գնահատել և կազմել համապատասխան պայմանագիր, որից հետո դրամարկղից ստացել է 900.000 դրամ և պայմանագրի հետ միասին տվել է Գոհար Գալստյանին: (...): Դատաքննության ժամանակ Լիլիթ Բոթոյանը, պնդելով նախաքննական ցուցմունքները, հայտնել է, որ (...) ոսկերիչն առանձին-առանձին գարդերը չի ուսումնասիրել, ընդհանուր կշռել է, հետո փաթեթավորել, ակտ է տվել, որը ստորագրել է, մոտեցել են, վարկը ձևակերպել, պայմանագիրը ստորագրել է, գումարը ստացել են, տվել է Գոհարին, նա էլ նախապես մեկ ամսվա տոկոսը վճարել է և բանկից դուրս են եկել: (...) Դրանից հետո իրեն է գումար պետք եղել, դիմել է «Արեգակ» վարկային կազմակերպությանը, որտեղ իմացել է, որ իր անունը «սև ցուցակում» է: Ջանգահարել է Գոհարին և իմացել, որ նրա կողմից տրված գարդերը ոսկի չեն, նաև հայտնել է, որ ինքն էլ չի իմացել դրա մասին: Դրանից հետո դատարանից փաստաթուղթ է ստացել, որի համաձայն՝ բանկը դիմել է դատարան իրենից մոտ 1.000.000 դրամ գումարի բռնագանձման պահանջով (**հատոր 2-րդ, գ.թ. 12-27**):

8) Թիվ ԼԴ/0428/02/15 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացիական գործով ըստ հայցի Բանկի ընդդեմ Կամո Աֆիցերյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է: Վճռվել է Կամո Աֆիցերյանից հոգուր Բանկի բռնագանձել 10.271.579 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պարճատված վնասի հատուցում, ինչպես նաև 10.271.579 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 19.02.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափերի, և հաշվարկված գումարները բռնագանձել Կամո Աֆիցերյանից հոգուր Բանկի (**հատոր 3-րդ, գ.թ. 46-53, 61-67, հատոր 4-րդ, գ.թ. 13-16**):

9) Թիվ ԼԴ/0458/02/17 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2018 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ըստ հայցի Բանկի ընդդեմ Վահրամ Բարսեղյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Վահրամ Բարսեղյանից հոգուր Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության կատարման արդյունքում հայցվորին պարճատված վնասի գումար, ինչպես նաև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պատասխանողի կողմից գումարն ամբողջությամբ բանկին վճարելն ընկած ժամանակահատվածի համար հոգուր Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով (**հատոր 5-րդ, գ.թ. 129, դատական տեղեկատվական համակարգ**):

4. Հարուկ կարծիքը հիմնավորող պարճատարանությունները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով, իսկ նույն օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ քաղաքացիական դատավարությունում իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով քննարկվող հարցին, գտել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման

պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*լրեն Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱԵԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով ապացուցում պահանջող փաստերի շրջանակի, այդ փաստերի ապացուցման պարտականությունը կողմի վրա դնելու պայմաններում բացասական հետևանքները կողմի վրա թողնելու հարցերին արձանագրել է, որ ապացուցման պարտականությունը՝ որպես սուբյեկտիվ պարտականություն, բովանդակային առումով ներառում է հետևյալ երկու տարրերը.

1) պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու պարտականություն (հաստատման ծանրություն), որը դիտարկվում է որպես պահանջները կամ առարկությունները փաստերով հիմնավորելու՝ պահանջների կամ առարկությունների հիմքում դրված որոշակի փաստական հանգամանքներ դնելու և օրենքով սահմանված ձևով դատարանին ներկայացնելու անհրաժեշտություն,

2) ապացույցներ ներկայացնելու պարտականություն (բացահայտման ծանրություն), որը գործին մասնակցող անձի կողմից պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստական հանգամանքները հաստատող ապացույցները դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց ներկայացնելու անհրաժեշտություն է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի (Վարկատու) և Լիլիթ Բոթոյանի (Վարկառու) միջև 21.11.2012 թվականին կնքված վարկային պայմանագրով Բանկը 1.093.000 ՀՀ դրամի չափով, տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով վարկ է տրամադրել Լիլիթ Բոթոյանին՝ մինչև 21.11.2013 թվականը մարման ժամկետով: Ըստ Բանկի և Լիլիթ Բոթոյանի միջև կնքված գրավի պայմանագրի՝ վարկային պարտավորության կատարման ապահովման նպատակով Լիլիթ Բոթոյանը գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ոսկյա իրերը:

Բանկի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև 02.07.2011 թվականին կնքված բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով Բանկն ապահովագրել է իր բանկային ռիսկերը (այդ թվում՝ աշխատակիցների անագվությունը):

Թիվ ԼԴ/0184/01/13 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2015 թվականի դատավճռով Կամո Աֆիցերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Վահրամ Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Դատավճռով հաստատված է համարվել, որ Կամո Աֆիցերյանը, հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի ոսկերիչ-փորձագետ և ունենալով նույն բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է ելել իր ծանոթ Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար, կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր՝ վերացրել է խոչընդոտները: Դատավճռի համաձայն՝ քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, *իսկ նա էլ խաբեությանը բանկից արացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կամո Աֆիցերյանի օժանդակությամբ հափշտակել և փրօթիներ է իր հայեցողությամբ*: Դատավճռի համաձայն՝ Լիլիթ Բոթոյանի հետ պայմանագրերը նույնպես վերոնշյալ արարքների կատարման արդյունքում են կնքվել:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին կատարվել է հատուցում՝ 32.489.351 ՀՀ դրամի չափով:

14.08.2017 թվականին ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու մասին դիմումով Բանկը հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին վճարվել է ապահովագրական հատուցում, որոնցով թվով 50 վարկային պայմանագրերի մայր գումարների հանրագումարը (45.586.000) և ապահովագրությամբ վճարված գումարի (32.489.351) տոկոսային հարաբերակցությունը կազմում է 71,2%, իսկ մայր գումարի չհատուցված մասը տոկոսային տեսքով՝ 28,8%: Վերոգրյալի հիման վրա Բանկը հայցից մասնակի հրաժարվել է և նվազեցրել հայցապահանջը:

Թիվ ԼԴ/0428/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացիական գործով ըստ հայցի Բանկի ընդդեմ Կամո Աֆիցերյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է: Վճռվել է Կամո Աֆիցերյանից հոգուտ Բանկի բռնագանձել **10.271.579 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պարճառված վնասի հատուցում**, ինչպես նաև 10.271.579 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 19.02.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափերի, և հաշվարկված գումարները բռնագանձել Կամո Աֆիցերյանից հոգուտ Բանկի:

Թիվ ԼԴ/0458/02/17 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2018 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ըստ հայցի Բանկի ընդդեմ Վահրամ Բարսեղյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Վահրամ Բարսեղյանից հոգուտ Բանկի բռնագանձել **8.812.579 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության կատարման արդյունքում հայցվորին պարճառված վնասի գումար**, ինչպես նաև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պատասխանողի կողմից գումարն ամբողջությամբ բանկին վճարելն ընկած ժամանակահատվածի համար հոգուտ Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով:

Սույն գործի քննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը 14.06.2017 թվականին Բանկին ուղղված թիվ ՄՄ/343 գրությամբ խնդրել է տրամադրել տեղեկություններ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննված քաղաքացիական գործերով Բանկի կողմից ներկայացված հայցերով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից հատուցված գումարների, ինչպես նաև Բանկի կողմից ընդդեմ Կամո Աֆիցերյանի և Վահրամ Բարսեղյանի ներկայացված պահանջների մեջ այդ գումարները ներառված լինելու մասին, որի կապակցությամբ բանկի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել: Ընդ որում սույն գործով Դատարանը Բանկի հայցը մերժելիս հստակ արձանագրել է, որ «դատարանն ակնկալել է պարզել, թե ապահովագրական Ընկերության կողմից ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո Բանկի հետ կնքած վարկային պայմանագրերով վարկառուների վարկային պարտավորություններն ինչ մասով են կատարվել, արդյո՞ք նշված ապահովագրական հատուցման գումարը ներառվել է վարկի գումարների մեջ և ինչ կարգով, Բանկի կողմից ներկայացված հայցերով ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված ԼԴ/0428/02/15 վճռի կատարման մասին: Սակայն, ինչպես հետագայում, այնպես էլ 19.12.2018 թվականի դատաքննությանը չեն ներկայացվել դատական պաշտպանությանն ուղղված այնպիսի ապացույցներ, լրացուցիչ փաստաթղթեր և միջնորդություններ՝ դրանք քննարկելու առումով, որի պարագայում Դատարանի համար կձևավորվեր ներքին համոզմունք, որ հայցը ենթակա է բավարարման, այլ կերպ ասած Հայցվոր կողմը ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (բացահայտման ծանրություն) չի կատարել»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում են, որ նշված փաստերը բավարար են արձանագրելու, որ Բանկի կողմից գործի քննության ընթացքում չի հիմնավորվել ապացուցման ենթակա փաստը՝ պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում

փոխհատուցման արժեքը և այդ արժեքի սահմաններում պահանջի իրավունք ունենալը: Ավելին՝ սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ Բանկի կողմից պահանջվող՝ Լիլիթ Բոթոյանի կողմից չկատարված վարկային պարտավորությունների խախտման հետևանքով չվճարված գումարն ըստ էության նույնանուն է Կամո Աֆիցերյանի և Վահրամ Բարսեղյանի հանցավոր գործողություններով Բանկին պատճառված վնասի գումարի հետ:

Մինչդեռ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ սույն գործով Բանկի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց՝ Կամո Աֆիցերյանի և Վահրամ Բարսեղյանի հանցավոր գործողություններով Բանկին պատճառված վնասի գումարի՝ Բանկի կողմից քաղաքացիներին տրված վարկի գումարների հետ որևէ առնչություն չունենալու վերաբերյալ, այսինքն՝ Բանկի կողմից չի հիմնավորվել, որ Վահրամ Բարսեղյանից, ինչպես նաև Բանկի աշխատակից Կամո Աֆիցերյանից բռնագանձվող գումարները չեն ներառվում քրեական գործի շրջանակներում հաստատված՝ Բանկից խաբեությամբ հափշտակված 42.760.930 ՀՀ դրամի մեջ:

Սույն գործի փաստերից երևում է, որ պատասխանողից պահանջվող գումարը ներառված է արդեն իսկ ապահովագրական ընկերության կողմից Բանկին հատուցված և դատական ակտերով բռնագանձման ենթակա գումարների մեջ, իսկ Բանկի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավորում որպես հանցագործությամբ պատճառված վնաս բռնագանձված գումարների՝ քաղաքացիներին հանձնված վարկերի գումարների մեջ չներառելու վերաբերյալ, ինչն էլ իր հերթին հիմք է տալիս եզրահանգելու, որ Բանկի կողմից չի հիմնավորվել ապացուցման ենթակա փաստը՝ պայմանագրային պարտավորությունների խախտման արդյունքում փոխհատուցման արժեքի չափը և այդ արժեքի սահմաններում պահանջի իրավունք ունենալը:

Վերոնշյալ հիմնավորմամբ պետք է արձանագրել, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Հայրուկ կարծիքի եզրահանգումները

4-րդ կետում շարադրված հիմնավորումներից և պայրճատարանություններից ելնելով՝ գրնում եմ, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշումը պետք է թողնվեր օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Է. Սեդրակյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԼԴ/0522/02/13 քաղաքացիական գործով 03.07.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2019 թվականի որոշման՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.01.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի հայցը մերժելու մասով անփոփոխ թողնելու, ինչպես նաև «Ինտելոբանկ» ՓԲԸ-ից հոգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, բռնագանձելու մասը, և այդ մասով գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ս. Անտոնյանս, համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 03.07.2020 թվականին թիվ ԼԴ/0522/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան Բանկը պահանջել է վաղաժամկետ լուծել իր և Լիլիթ Բոթոյանի միջև կնքված վարկային պայմանագրերը և Լիլիթ Բոթոյանից բռնագանձել 1.273.389,3 ՀՀ դրամ, ինչպես նաև մայր գումարի՝ 1.093.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով հաշվարկել տոկոսներ՝ սկսած 23.05.2013 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Դատարան ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու պահանջի մասին 14.08.2017 թվականի դիմումով Բանկը պահանջել է Լիլիթ Բոթոյանից բռնագանձել 495.173,3 ՀՀ դրամ, ինչպես նաև 23.05.2013 թվականից մինչև 30.01.2014 թվականը վարկի մայր գումարի 1.093.000 ՀՀ դրամի վրա, իսկ 30.01.2014 թվականից մինչև գումարը փաստացի Բանկին վերադարձնելու օրը 314.784 ՀՀ դրամի նկատմամբ բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Բոթոյանը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի Վանաձոր մասնաճյուղի և իր միջև կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրը:

Գործի քննության ընթացքում դատարան ներկայացված 10.03.2016 թվականի դիմումով Լիլիթ Բոթոյանը հրաժարվել է հակընդդեմ հայցից:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Գագիկյան) (այսուհետ՝ Դատարան) 16.01.2019 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Բանկի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասով,

ինչպես նաև ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճվել է: Բանկից հոգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, բռնագանձելու մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Լիլիթ Բոթոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.01.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ դատական ծախսերի մասով, բեկանվել և փոփոխվել է: Բանկից հոգուտ Լիլիթ Բոթոյանի բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Բանկի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք՝ Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասով, ինչպես նաև ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Բոթոյանի ընդդեմ Բանկի՝ թիվ GA12/41762 վարկային պայմանագիրը և թիվ G12/083385 գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճելու, ըստ Բանկի հայցի ընդդեմ Լիլիթ Բոթոյանի, երրորդ անձինք՝ Կամո Աֆիցերյանի, Վահրամ Բարսեղյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասով մերժելու, ինչպես նաև նշված պահանջների համար բռնագանձման ենթակա պետական տուրքի գումարների բաշխման մասերով Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 347-րդ, 423-րդ, 437-րդ, 887-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, ինչը հանգեցրել է գործում առկա յուրաքանչյուր ապացույցի՝ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված գնահատման պարտականության խախտման:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարան է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ կնքված վարկային պայմանագրի հիման վրա պահանջներ են ներկայացվել բռնագանձելու վարկային պայմանագրի հիման վրա հաշվարկված գումարները, որում առկա են ինչպես մայր գումարը, պայմանագրային տույժերի և տոկոսների գումարները, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված տոկոսները, ինչը Դատարանը քննարկման առարկա չի դարձրել՝ փոխարենը քննարկելով վնասի հատուցման հարաբերությունները և դրանով իսկ դուրս գալով հայցի շրջանակներից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սպառիչ սահմանված են պարտավորությունը դադարելու հիմքերը, իսկ սույն գործով փաստացի վճարված չեն վարկային իրավահարաբերություններից բխող ամբողջ գումարները:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի կատարել ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, նույնացրել է հանցագործությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունը վարկային պայմանագրից բխող իրավահարաբերությունների հետ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է հիշյալ հարցի հետ կապված ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԼԴ/0647/02/13 գործով կայացված որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունն ինքնին բավարար հիմք չէ գումարները վճարված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, ինչպես նաև

մերժել Բանկից հօգուտ Լիլիթ Բոթոյանի 95.000 ՀՀ դրամ գումար փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման պահանջը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի (Վարկատու) և Լիլիթ Բոթոյանի (Վարկառու) միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրի համաձայն՝ Վարկատուն պարտավորվել է 1.093.000 ՀՀ դրամի չափով վարկ տրամադրել Վարկառուին՝ տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով՝ մինչև 21.11.2013 թվականը մարման ժամկետով, իսկ Վարկառուն պարտավորվել է վերադարձնել ստացված գումարը, վճարել տոկոսներ դրանից, ինչպես նաև վճարել հաշվի սպասարկման միանվագ և ամսական վճարներ (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**):

2) Բանկի (Գրավառու) և Լիլիթ Բոթոյանի (Գրավատու) միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/083385 գրավի պայմանագրի համաձայն՝ Գրավատուն գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող և պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում նշված ոսկյա զարդերը՝ ի ապահովումն Գրավատուի և Գրավառուի միջև 21.11.2012 թվականին կնքված թիվ GA12/41762 վարկային պայմանագրով Գրավատուի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարման (**հատոր 1-ին, գ.թ. 9-10**):

3) Բանկի կողմից 22.05.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ 21.11.2012 թվականի թիվ GA12/41762 պայմանագրով ստանձնած պարտավորությունների գծով 22.05.2013 թվականի դրությամբ Լիլիթ Բոթոյանի պարտքը Բանկի հանդեպ կազմում է 1.273.389,30 ՀՀ դրամ, որից 1.093.000 ՀՀ դրամ՝ վարկի գումարի մնացորդ, 130.800,50 ՀՀ դրամ՝ հաշվարկված տոկոսագումար, 39.751,80 ՀՀ դրամ՝ հաշվարկված տույժերի գումար, 9.837 ՀՀ դրամ՝ վարկային հաշվի սպասարկման վճար (**հատոր 1-ին, գ.թ. 6**):

4) Բանկի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև 02.07.2011 թվականին կնքված թիվ DI000015 բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով Բանկն ապահովագրել է իր բանկային ռիսկերը (այդ թվում՝ աշխատակիցների անագնվությունը) (**հատոր 1-ին, գ.թ. 109-126**):

5) Բանկի 14.02.2014 թվականի թիվ 809 գրության համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից կատարվել է հատուցում՝ 32.489.351 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 108**):

6) 14.08.2017 թվականին ներկայացված հայցից մասնակի հրաժարվելու և հայցապահանջը նվազեցնելու մասին դիմումով Բանկը հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության կողմից Բանկին վճարվել է ապահովագրական հատուցում, որոնցով թվով 50 վարկային պայմանագրերի մայր գումարների հանրագումարը (45.586.000) և ապահովագրությամբ վճարված գումարի (32.489.351) տոկոսային հարաբերակցությունը կազմում է 71,2%, իսկ մայր գումարի չհատուցված մասը տոկոսային տեսքով՝ 28,8%: Վերոգրյալի հիման վրա Բանկը հայցից մասնակի հրաժարվել է և նվազեցրել հայցապահանջը (**հատոր 3-րդ, գ.թ. 30**):

7) Թիվ ԼԴ/0184/01/13 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2015 թվականի դատավճռով Կամո Աֆիցեդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Վահրամ Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Դատավճռով հաստատված է համարվել, որ Կամո Աֆիցեդյանը, հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի նուկերիչ-փորձագետ և ունենալով նույն բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է եկել իր ծանոթ Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար, կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր՝ վերացրել է խոչընդոտները: Կամո Աֆիցեդյանը չարաշահել է բանկի վստահությունը և օգտագործելով որպես փորձագետ ներկայացված զարդերը գնահատելու և համապատասխան ակտ

կազմելու իրեն վերապահված լիազորությունները՝ 2011 թվականից մինչև 07.02.2013 թվականն ընկած ժամանակահատվածում շարունակաբար քաղաքացիների անվամբ որպես ոսկի գրավադրել է Վահրամ Բարսեղյանի կողմից նախապես ձեռք բերված ոչ ոսկյա զարդերը և նրանց կողմից օգտագործելու նպատակով կազմելով իրավունք վերապահող 50 հատ կեղծ փաստաթուղթ՝ թանկարժեք մետաղների գնահատման ակտ, 2.035.200 ՀՀ դրամ արժողության զարդերը գնահատել է 50.732.880 ՀՀ դրամ: Դրանց հիման վրա ձևակերպվել են լուրջարդային վարկի 50 պայմանագիր, որի արդյունքում քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, *իսկ նա էլ խաբեությանը բանկից սրացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կամո Աֆիցեղյանի օժանդակությամբ հափշտակել և տնօրինել է իր հայեցողությամբ: (...)*

Դատավճռի համաձայն գործով որպես վկա ցուցմունք է տվել նաև Լիլիթ Բոթոյանը՝ հայտնելով, որ 2011 թվականի դեկտեմբերի վերջերին իր ծանոթ Գոհար Գալստյանը խնդրել է իր անվամբ «Ինելկորանկ» ՓԲ ընկերության Վանաձորի մասնաճյուղում ոսկյա զարդեր գրավադնել նշելով, որ մի քանի վարկ ունենալու պատճառով այլևս իրեն վարկեր չեն տալիս: Ինքը համաձայնվել է, և պայմանավորվածության համաձայն՝ հաջորդ օրը գնացել են նշված բանկ: Հասնելով բանկ՝ Գոհար Գալստյանը իրեն է տվել թափանցիկ փաթեթով փաթեթավորված ոսկյա զարդեր, ապա միասին մտել են ոսկերիչի մոտ, ով, առանց փաթեթը բացելու և ոսկին ստուգելու, կշռել է, գնահատել և կազմել համապատասխան պայմանագիր, որից հետո դրամարկից ստացել է 900.000 դրամ և պայմանագրի հետ միասին տվել է Գոհար Գալստյանին: (...): Դատաքննության ժամանակ Լիլիթ Բոթոյանը, պնդելով նախաքննական ցուցմունքները, հայտնել է, որ (...) ոսկերիչն առանձին-առանձին զարդերը չի ուսումնասիրել, ընդհանուր կշռել է, հետո փաթեթավորել, ակտ է տվել, որը ստորագրել է, մոտեցել են, վարկը ձևակերպել, պայմանագիրը ստորագրել է, գումարը ստացել են, տվել է Գոհարին, նա էլ նախապես մեկ ամսվա տոկոսը վճարել է և բանկից դուրս են եկել: (...) Դրանից հետո իրեն է գումար պետք եղել, դիմել է «Արեգակ» վարկային կազմակերպությանը, որտեղ իմացել է, որ իր անունը «սև ցուցակում» է: Ջանգահարել է Գոհարին և իմացել, որ նրա կողմից տրված զարդերը ոսկի չեն, նաև հայտնել է, որ ինքն էլ չի իմացել դրա մասին: Դրանից հետո դատարանից փաստաթուղթ է ստացել, որի համաձայն՝ բանկը դիմել է դատարան իրենից մոտ 1.000.000 դրամ գումարի բռնագանձման պահանջով (**հատոր 2-րդ, գ.թ. 12-27**):

8) Թիվ ԼԴ1/0428/02/15 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացիական գործով ըստ հայցի Բանկի ընդդեմ Կամո Աֆիցեղյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է: Վճռվել է *Կամո Աֆիցեղյանից հոգուր Բանկի բռնագանձել 10.271.579 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պարճատված վնասի հատուցում*, ինչպես նաև 10.271.579 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 19.02.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափերի, և հաշվարկված գումարները բռնագանձել Կամո Աֆիցեղյանից հոգուտ Բանկի (**հատոր 3-րդ, գ.թ. 46-53, 61-67, հատոր 4-րդ, գ.թ. 13-16**):

9) Թիվ ԼԴ/0458/02/17 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2018 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ըստ հայցի Բանկի ընդդեմ Վահրամ Բարսեղյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է *Վահրամ Բարսեղյանից հոգուր Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության կատարման արդյունքում հայցվորին պարճատված վնասի գումար*, ինչպես նաև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պատասխանողի կողմից գումարն ամբողջությամբ բանկին վճարելն ընկած ժամանակահատվածի համար հոգուտ Բանկի բռնագանձել 8.812.579 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով (**հատոր 5-րդ, գ.թ. 129, դատական տեղեկատվական համակարգ**):

4. Հարուկ կարծիքը հիմնավորող պարճատարանությունները

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ դատարանի գնահատմամբ եղած փաստերը բավարար են արձանագրելու, որ հայցվորի կողմից չի հիմնավորվել ապացուցման ենթակա փաստը՝ պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում փոխհատուցման արժեքը և այդ արժեքի պահանջի իրավունք ունենալը:

Դատարանի այդ եզրահանգումը պայմանավորված է եղել հետևյալ փաստական հանգամանքներով.

1. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից որպես ապահովագրական հատուցում վճարվել է 32.489.351 ՀՀ դրամ:

2. Ապահովագրական դեպքը կապված է եղել Բանկի աշխատակցի կողմից կեղծված ոսկյա զարդերը Բանկում գրավադրելու և ստացված լուրբարդային վարկի գումարները յուրացնելու հետ:

Նույն փաստական հանգամանքներից է բխել նաև թիվ ԼԴ/0184/01/13 քրեական գործով ամբաստանյալներ Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից քաղաքացիական դատավարության կարգով այն գումարի տարբերության բռնագանձումը, որը չի հատուցվել ապահովագրական ընկերության կողմից:

Հաշվի առնելով ապահովագրական հատուցման չափով հայցապահանջը նվազեցնելու հանգամանքը, պետք է արձանագրել, որ իրավաչափ է Դատարանի եզրահանգումն այն մասին, որ հայցվորը դրամական պարտավորության առկայության հետ միաժամանակ հայցվորը պարտավոր էր հիմնավորել նաև այդ պարտավորության մեջ պահանջի իրավունքը պահպանված լինելու հանգամանքը, քանի որ օրինական ուժի մեջ մտած գումարի բռնագանձման վճռի առկայության պայմաններում Բանկը հավակնում է ստանալ և՛ գրավի կորստի հատուցումը, և՛ դրանով ապահովված դրամական պարտավորության գումարը, ինչը հակասում է քաղաքացիաիրավական հարաբերությունների ընդհանուր սկզբունքներին: Ակնհայտ է նաև, որ չնայած գումարի բռնագանձման մասին դատական ակտերի հիմքում հանցագործությանը պատճառված վնասի հատուցման պահանջն է, սակայն հանցագործության փաստը հաստատող դատավճռի վերլուծությունից հետևում է, որ քրեական օրենսգրքով արգելված արարքն ուղղակիորեն առնչվել է սույն գործով առկա պարտավորության ապահովմանը՝ գրավադրված գույքին: Խոսքը վերաբերում է Կամո Աֆիցերյանից 10.271.579 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ թիվ ԼԴ/0428/02/15 քաղաքացիական գործով 07.03.2017 թվականի վճռին և Վահրամ Բարսեղյանից 8.812.579 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ 21.11.2018 թվականի թիվ ԼԴ/0458/02/17 քաղաքացիական գործով կայացված վճռին:

Դատարանը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Բանկը դիրքորոշում չի հայտնել վերը նշված վճիռներով բռնագանձված գումարները ստացված լինելու հանգամանքի մասին միանգամայն իրավաչափորեն եզրահանգել է, որ Բանկի կողմից պահանջվող գումարներն արդեն իսկ ներառված են Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից պահանջվող և բռնագանձվող գումարների ծավալի մեջ: Դատարանի գնահատմամբ վերը նշված դատական ակտերով հաստատված հանգամանքները նախադատելի են սույն գործով, հետևաբար նույն փաստերը կրկին ապացուցելու անհրաժեշտություն չկա:

Վերաքննիչ դատարանը ևս գնահատել է օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարման վերաբերյալ հայցվորի կողմից որևէ դիրքորոշման բացակայությունը և այդ հիմով իրավաչափ է ճանաչել Դատարանի եզրահանգումը՝ վարկային պայմանագրից բխող պահանջի իրավունքը Բանկին պատկանելու հարցի վերաբերյալ:

Գտնում են, որ Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններն ըստ էության չեն հիմնավորում ստորադաս դատարանների կողմից թույլ տրված այնպիսի դատական սխալ, որը թույլ կտար բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները հիմնականում վերաբերվում են վարկային պայմանագրից ծագած պարտավորությունները դադարած չլինելու պայմաններում հայցվորի կողմից այլ փաստական հանգամանքներ ապացուցելու պարտականություն չունենալուն, իսկ գործով երրորդ անձինք Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից

օրինական ուժ մեջ մտած վճիռներով բռնագանձված գումարները հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում են և չեն առնչվում պատասխանողի վարկային պարտավորությանը:

Կատարելով իրավական վերլուծություններ ապահովագրական իրավահարաբերությունների և ապահովագրական հատուցման դեպքում պարտավորությունների պահպանման և պարտավորության ծագման հիմքի կարևորության վերաբերյալ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ստորադաս դատարանները խեղաթյուրել են վարկային իրավահարաբերության էությունը, հաշվի չեն առել, որ սույն գործով առկա ապացույցներով չի հիմնավորվում վարկային պայմանագրից բխող պարտավորության դադարման հանգամանքը: Այս հիմքով էլ հիմնավոր չի համարել ստորադաս դատարանների եզրահանգումն այն մասին, որ Բանկի կողմից չի ապացուցվել պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում փոխհատուցման արժեքի սահմաններում պահանջի իրավունք ունենալը:

Ընդունելով որոշակի փաստական հանգամանքների դեպքում արված իրավական վերլուծությունների կիրառելիությունը, գտնում են, որ դրանք կիրառելի չեն սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ հետևյալ հիմնավորմամբ.

Նախ և առաջ որպես ելակետ պետք է ընդունել, որ ինչպես ապահովագրական հատուցման, այնպես էլ սույն գործով երրորդ անձի դատավարական կարգավիճակ ունեցող Կամո Աֆիցերյանից և Վահրամ Բարսեղյանից գումարի բռնագանձման վճիռների հիմքում դրված է նույն թիվ ԼԴ/0184/08/13 գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2015 թվականի դատավճիռը: Դատավճռով հաստատված է համարվել, որ Կամո Աֆիցերյանը, հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի նսկերիչ-փորձագետ և ունենալով նույն բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է եկել իր ծանոթ Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար, կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր՝ վերացրել է խոչընդոտները: Կամո Աֆիցերյանը չարաշահել է բանկի վստահությունը և օգտագործելով որպես փորձագետ ներկայացված զարդերը գնահատելու և համապատասխան ակտ կազմելու իրեն վերապահված լիազորությունները՝ 2011 թվականից մինչև 07.02.2013 թվականն ընկած ժամանակահատվածում շարունակաբար քաղաքացիների անվամբ որպես ոսկի գրավադրել է Վահրամ Բարսեղյանի կողմից նախապես ձեռք բերված ոչ ոսկյա զարդերը և նրանց կողմից օգտագործելու նպատակով կազմելով իրավունք վերապահող 50 հատ կեղծ փաստաթուղթ՝ թանկարժեք մետաղների գնահատման ակտ, 2.035.200 ՀՀ դրամ արժողության զարդերը գնահատել է 50.732.880 ՀՀ դրամ: Դրանց հիման վրա ձևակերպվել են լուրբարդային վարկի 50 պայմանագիր, որի արդյունքում քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, *իսկ նա էլ խարտիթային բանկից արացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կամո Աֆիցերյանի օժանդակությամբ հափշտակել և փրփրինել է իր հայեցողությամբ: (...)*

Դատավճռի համաձայն գործով որպես վկա ցուցմունք է տվել նաև Լիլիթ Բոթոյանը՝ հայտնելով, որ 2011 թվականի դեկտեմբերի վերջերին իր ծանոթ Գոհար Գալստյանը խնդրել է իր անվամբ «Ինելոբանկ» ՓԲ ընկերության Վանաձորի մասնաճյուղում ոսկյա զարդեր գրավադնել՝ նշելով, որ մի քանի վարկ ունենալու պատճառով այլևս իրեն վարկեր չեն տալիս: Ինքը համաձայնվել է, և պայմանավորվածության համաձայն՝ հաջորդ օրը գնացել են նշված բանկ: Հասնելով բանկ՝ Գոհար Գալստյանը իրեն է տվել թափանցիկ փաթեթով փաթեթավորված ոսկյա զարդեր, ապա միասին մտել են ոսկերիչի մոտ, ով, առանց փաթեթը բացելու և ոսկին ստուգելու, կշռել է, գնահատել և կազմել համապատասխան պայմանագիր, որից հետո դրամարկղից ստացել է 900.000 դրամ և պայմանագրի հետ միասին տվել է Գոհար Գալստյանին: (...): Դատաքննության ժամանակ Լիլիթ Բոթոյանը, պնդելով նախաքննական ցուցմունքները, հայտնել է, որ (...) ոսկերիչն առանձին-առանձին զարդերը չի ուսումնասիրել, ընդհանուր կշռել է, հետո փաթեթավորել, ակտ է տվել, որը ստորագրել է, մոտեցել են, վարկը ձևակերպել, պայմանագիրը ստորագրել է,

գումարը ստացել են, տվել է Գոհարին, նա էլ նախապես մեկ ամսվա տոկոսը վճարել է և բանկից դուրս են եկել: (...) Դրանից հետո իրեն է գումար պետք եղել, դիմել է «Արեգակ» վարկային կազմակերպությանը, որտեղ իմացել է, որ իր անունը «սև ցուցակում» է: Ջանգահարել է Գոհարին և իմացել, որ նրա կողմից տրված զարդերը ոսկի չեն, նաև հայտնել է, որ ինքն էլ չի իմացել դրա մասին: Դրանից հետո դատարանից փաստաթուղթ է ստացել, որի համաձայն՝ բանկը դիմել է դատարան իրենից մոտ 1.000.000 դրամ գումարի բռնագանձման պահանջով:

Վերոգրյալից բխում է վնասի հատուցման հիմքը ուղղակիորեն կապված է վարկային պայմանագրից ծագած պարտավորությունների կատարումն ապահովող գրավի պայմանագրի հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բանկի օգտին բռնագանձված գումարն, ըստ օրինական ուժ ստացած դատական ակտի հիմնավորումների, իրական վնասի հատուցումն է, ապա ակնհայտ է դառնում, որ գրավի առարկայի կորուստի հատուցումը դրամաբանական ձևով չի կարող չանդրադառնալ վարկային պայմանագրից ծագող պարտավորության պահանջի իրավունքին, փաստացի հատուցման գումարի չափով: Տվյալ հարցի վերաբերյալ հայցվորի կողմից ընդհանուր իրավասության դատարանում դիրքորոշում չհայտնելը և Վերաքննիչ դատարանին դրանք ներկայացնելու հնարավորությունից Դատարանում գրկված լինելու հանգամանքի վերաբերյալ փաստարկներ չներկայացնելու պայմաններում գտնում են, որ վճարելիության կարգով չէր կարող գնահատական տրվել և անհիմն ճանաչվել Դատարանի եզրահանգումն օրինական ուժի մեջ մտած վճիռներով հատուցման չափով վարկային պարտավորության պահանջի իրավունքի առկայության մասին:

Վճարել դատարանը նման եզրահանգման համար պետք է հաշվի առներ, որ վնասի հատուցման հիմքում ոչ թե հայցվորի Բանկին սեփականության իրավունքով պատկանող գույքի կորուստն է ընդհանրապես, այլ՝ երրորդ անձինք Կամո Աֆիցերյանի և Վահրամ Բարսեղյանի հանցավոր գործողություններով կեղծ ոսկյա զարդերի գրավադրմամբ 1.093.000 ՀՀ դրամ վարկ ստանալը, որպիսի հանգամանքը պարզելու համար էլ Դատարանը գրություն է ուղարկել հայցվորին ակնկալելով վերջինիս դիրքորոշումը դատական ակտերի կատարված լինելու հարցի վերաբերյալ: Հակառակ մեկնաբանության դեպքում առկա կլինի այնպիսի իրավիճակ, երբ միևնույն գումարը հայցվորը կարող է ստանալ մի դեպքում որպես վարկային պայմանագրով պարտավորության գումար և մյուս դեպքում՝ նույն վարկային պարտավորությունն ապահովող գրավի առարկա՝ կեղծ ոսկյա զարդերի կապակցությամբ տրված փոխհատուցում:

Ներքերով Բանկի օգտին կայացված դատական ակտով գումարի բռնագանձման վերաբերելիությունը սույն գործին, պատճառաբանել է, որ դրա հիմքում ընկած է հանցագործությամբ պատճառված վնասը, մինչդեռ սույն գործով հայցի հիմքում չկատարված վարկային պարտավորություններն են:

Անտեսվել է այն պարզ իրողությունը, որ այդ հանցագործությունն ուղղակի առնչվում է սույն գործով առկա վարկային և գրավի իրավահարաբերություններին և գրավադրված գույքի կորստի և/կամ ցանկացած վնասի (այդ թվում հանցագործությամբ պատճառված) դեպքում այդ հատուցումները Բանկի կողմից ստանալու դեպքում ենթակա են ուղղման վարկի մարմանը:

Այս առումով Վճարել դատարանի վերլուծությունը պետք է ուղված լիներ վերը նշված դատական ակտի ազդեցությանը գնահատելուն և ոչ թե դրա ժխտմանը:

Վերոգրյալի հիման վրա գտնում են, որ հայցվորի դրսևորված դատավարական վարքագծի փաստով վճարել բողոքի հիմքը չէր կարող հիմնավորված ճանաչվել և ուղարկվել նոր քննության այն ծավալով, որն ըստ Վճարել դատարանի ապահովված է եղել և ենթակա էր բավարարման:

5. Հարուկ կարծիքի եզրահանգումները

4-րդ կետում շարադրված հիմնավորումներից և պարճատարանություններից ելնելով՝ գրնում են, որ վճարել բողոքը ենթակա էր մերժման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. Անտոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3660/02/14**
2020թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3660/02/14**

Նախագահող դատավոր՝ **Լ. Գրիգորյան**

Դատավորներ՝ **Ս. Հարթենյան**

Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 14-ին
գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Մաքս Նիկել Դիվելոփմենթ» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Առեկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրա-
վահաջորդ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), «Ռեդուտ Ասեթ Մենեջմենթ»
ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ վարկային գործառնությունների իրականացման
պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու
պահանջի նստին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարա-
նի 11.01.2018 թվականի որոշման դեմ Բանկի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայումրությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Բանկին կատա-
րելու վարկային գործառնությունների իրականացման թիվ V04625 պայմանագրով նա-
խատեսված պարտավորությունները:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրա-
վասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) 11.11.2014 թվականի վճռով հայրը բա-
վարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան, դատավորներ՝ Ս. Միքայելյան, Ն. Բարսեղյան) 19.03.2015 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2014 թվականի վճիռը և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Էդ. Ավետիսյան) 30.11.2015 թվականի վճռով հայր բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան, դատավորներ՝ Կ. Հակոբյան, Ա. Հունանյան) 26.12.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2015 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 31.07.2017 թվականի վճռով հայր բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2018 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.07.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչ Արմեն Հարությունյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնարանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետը, 348-րդ հոդվածի 1-ին կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետը, 887-րդ հոդվածը, 889-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր, ինչպես նաև խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ու գնահատում:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ թիվ V04625 գլխավոր պայմանագրով Բանկը Հայցվորի նկատմամբ ստանձնել է որոշակի պարտավորություններ, իսկ Հայցվորը կրում է այդ պայմանագրով նախատեսված պարտավորություններ, ինչպես նաև ձեռք է բերել իրավունքներ, մասնավորապես՝ պայմանագրի պայմանները կատարելուն պարտավորեցնելու պահանջի իրավունք:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է նաև, որ գլխավոր պայմանագրի գոյության փաստը հաստատվում է այն հանգամանքով, որ կողմերը մասնակիորեն կատարել են վերը նշված պայմանագիրը՝ ի թիվս այլ գործողությունների մատնանշելով նաև այն հանգամանքը, որ որպես վարկի ապահովման միջոց գրավադրվել է գույք, ինչպես նաև կնքվել են երաշխավորության պայմանագրեր:

Վերաքննիչ դատարանի վերը նշված հետևությունները հիմնավոր չեն, քանի որ նման խոշոր չափերի վարկը կարող է տրամադրվել միայն պարտավորությունների կատարման համար համապատասխան ապահովման առկայության դեպքում: Բացի այդ, սույն գործով Բանկի և Ընկերության միջև կնքված գլխավոր պայմանագրի և համաձայնագրերի հիման վրա որպես Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում կնքվել են նաև 23.08.2012 թվականի թիվ V04625/1 հիփոթեքի պայմանագիրը, երաշխավորության 23.08.2012 թվականի թիվ V04625/2, 23.08.2012 թվականի թիվ V04625/3, 23.08.2012 թվականի թիվ V04625/5 պայմանագրերը, 25.09.2012 թվականի

թիվ V04625/7 բաժնեմասի գրավի պայմանագիրը և 01.11.2012 թվականի թիվ V04625/8 հիփոթեքի պայմանագիրը:

Ստորադաս դատարանները, պարտավորեցնելով Բանկին վարկ տրամադրել սնանկ ճանաչված Ընկերությանը, անտեսել են նաև, որ տրամադրվող վարկը լինելու է առանց տոկոս՝ հաշվի առնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները, քանի որ վարկը տրամադրելու պահից տոկոսները չեն հաշվեգրվելու: Արդյունքում, Բանկը կպարտավորվի վարկ տրամադրել սնանկ ճանաչված Ընկերությանը՝ առանց ապահովման և տոկոսների հաշվեգրման, ինչը հակասում է Բանկի կողմից իրականացվող գործառույթներին և խարխուլում վարկի էությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է րեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճարել բողոքի պայտասիանի հիմնավորումները

Տվյալ դեպքում Բանկը չի տրամադրել վարկի գումարը՝ նշելով, որ փոխվել է բանկի քաղաքականությունը՝ կապված շինարարության ֆինանսավորման հետ ընդհանրապես: Արդյունքում Ընկերությունը ոչ միայն չի կարողանում իրականացնել շինարարական աշխատանքներ և մարել վարկի գումարը, այլ նաև կրում է վնասներ, այսինքն՝ կոպտորեն խախտվում են նրա իրավունքները, մասնավորապես՝ վարկ ստանալու իրավունքը:

Ի հիմնավորումն իր վարքագծի իրավաչափության՝ Բանկը ներկայացրել է 01.08.2014 թվականին Բանկում կայացված բանակցությունների նիստի արձանագրությունը, որն ուղղակի հերքում է վարկ տրամադրելուց հրաժարվելու համար որևէ իրավական հիմքի առկայությունը և հաստատում, որ վարկ չտրամադրելու պատճառը միայն Բանկի քաղաքականության փոփոխությունն է, որպիսի իրավական կատեգորիա գոյություն չունի:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.08.2012 թվականին Ընկերության և «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի միջև կնքվել է վարկային գործառնությունների իրականացման թիվ V04625 գլխավոր պայմանագիրը, որի համաձայն՝ պայմանագրով կողմերը համագործակցության սկզբունքներով միմյանց հետ պարտավորվել են իրականացնել օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ: Պայմանագրով վարկերի, վարկային գծերի, օվերդրաֆտների և երաշխիքների տրամադրման առավելագույն սահմանաչափը սահմանվել է 5.500.000 ԱՄՆ դոլարի չափով, 3.651 օրով, մինչև 22.08.2022 թվականը ներառյալ (**հատոր 1-ին, գ.թ. 11-22**):

2) 24.08.2012 թվականին Ընկերության և «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի միջև կնքված վարկի տրամադրման թիվ V04625/6 համաձայնագրի համաձայն՝ 1.469 օր ժամկետով, մինչև 01.09.2016 թվականը վարկի մարման վերջնաժամկետով, տարեկան 12,5% տոկոսադրույքով, վարկի մարումն ըստ համաձայնագրի անբաժան մասը կազմող ժամանակացույց-պարտավորագրով սահմանված չափերով, հաճախականությամբ և ժամկետներում Ընկերությունը «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ից ստացել է **930.000 ԱՄՆ դոլար վարկ**՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 42/1 հասցեում գտնվող հողամասում շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 23-26**):

3) 01.11.2012 թվականին Ընկերության և «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի միջև կնքված վարկի տրամադրման թիվ V04625/9 համաձայնագրի համաձայն՝ 1.400 օր ժամկետով, մինչև 01.09.2016 թվականը վարկի մարման վերջնաժամկետով, տարեկան 12,5% տոկոսադրույքով, վարկի մարումն ըստ համաձայնագրի անբաժան մասը կազմող ժամանակացույց-պարտավորագրով սահմանված չափերով, հաճախականությամբ և ժամկետներում Ընկերությունն «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ից

ստացել է **300.000 ԱՄՆ դոլար վարկ՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 42/1** հասցեում գտնվող հողամասում շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 27-30**).

4) 14.12.2012 թվականին Ընկերության և «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի միջև կնքված վարկի տրամադրման թիվ V04625/10 համաձայնագրի համաձայն 1.357 օր ժամկետով, մինչև 01.09.2016 թվականը վարկի մարման վերջնաժամկետով, տարեկան 12,5% տոկոսադրույքով, վարկի մարումն ըստ համաձայնագրի անբաժան մասը կազմող ժամանակացույց-պարտավորագրով սահմանված չափերով, հաճախականությամբ և ժամկետներում Ընկերությունն «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ից ստացել է **2.000.000 ԱՄՆ դոլար վարկ՝ ՀՀ, ք.Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 42/1** հասցեում գտնվող հողամասում շինարարական աշխատանքներ իրականացնելու, ընթացիկ ֆինանսական պարտավորությունների կատարման, կրեդիտորական պարտքի մարման նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 31-34**).

5) Ընկերությունը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.12.2015 թվականի վճռով սնանկ է ճանաչվել (**հատոր 6-րդ, գ.թ. 46**).

6) 23.08.2012 թվականին կնքված թիվ V 04625 գլխավոր պայմանագրով սահմանված առավելագույն սահմանաչափից պակաս է տրամադրվել 2.270.000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Գործում առկա չէ նշված գումարը Բանկից ստանալու վերաբերյալ Ընկերության հայտը և դրա վերաբերյալ Բանկի մերժման որոշումը:

7) Ընկերությունը, «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենին ուղղված 01.04.2014 թվականի գրությամբ, հայտնել է, որ Ընկերությունը մտադիր է սեփականատերերի միջոցներով շարունակել ներդրումները շինարարական աշխատանքները շարունակելու համար, սակայն տվյալ պահին ելնելով ֆինանսատնտեսական իրավիճակից տվյալ ներդրումների իրականացումը և վարկերի մարումները ծանր կանդրադառնան Ընկերության վրա: Այդ պատճառով դիմել է վարկերի մարումների ժամանակացույցի վերանայման, այն է՝ տոկոսների մարումը մինչև 01.11.2014 թվականը, իսկ մայր գումարի մարումը մինչև 01.04.2015 թվականը հետաձգելու խնդրանքով (**հատոր 1-ին, գ.թ. 129**).

8) «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի 26.04.2014 թվականի վարկային կոմիտեի նիստի թիվ 024 արձանագրությամբ որոշվել է հաստատել վերը նշված դիմումը հետևյալ պայմաններով՝ «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի հաճախորդ Ընկերության հետ 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրերի շրջանակներում 24.08.2012 թվականին կնքված թիվ V04625/6, 01.11.2012 թվականին կնքված թիվ V04625/9, 14.12.2012 թվականին կնքված թիվ V04625/10 վարկի տրամադրման համաձայնագրերով տրամադրված վարկերի վճարումների ժամանակացույցերը վերանայել հետևյալ կերպ՝

1. վերանայումից հետո առաջին 12 ամիսների համար տոկոսագումարների վճարումները նշանակել եռամսյակային,
2. վերանայումից հետո սկսած 13-րդ ամսվանից նշանակել մայր գումարների և տոկոսագումարների ամենամսյա մարման անուիտետային ժամանակացույց (**հատոր 1-ին, գ.թ. 130**).

9) «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքվել են համաձայնագրեր՝ 24.08.2012 թվականին կնքված V04625/6, 01.11.2012 թվականին կնքված V04625/9 և 14.12.2012 թվականին կնքված V04625/10 վարկի տրամադրման համաձայնագրերի անբաժան մասը կազմող վարկի մարման ժամանակացույց-պարտավորագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 109-110, 115-116, 125-126**).

10) Ընկերությունը պարբերաբար թույլ է տվել վարկային համաձայնագրերի ժամանակացույց-պարտավորագրերով սահմանված վճարման ժամկետների կետանցներ, որոնք շարունակվել են նաև փոփոխված ժամանակացույցով նախատեսված վճարումներն իրականացնելիս (**հատոր 4-րդ, գ.թ. 34-53, 56-75, 97-104**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածով սահմանված՝ վարկատուի վարկավորումից հրաժարվելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածի, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- *արդյո՞ք իրավաչափ է Վարկատուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկը Վարկատուին տրամադրելուց մասնակի հրաժարվելն այնպիսի հանգամանքների առկայության պարագայում, որոնք ակնհայտ վկայում են, որ Վարկատուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվելու.*

- *արդյո՞ք Վարկատուի կողմից վարկավորումից հրաժարվելու դեպքում սնանկ ճանաչված Վարկատուն իրավունք ունի պահանջելու պարտավորեցնել Վարկատուին կատարել վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր կնքելու հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է նույն օրենսգրքով, օրենքով կամ կանոնի ստանձնած պարտավորությամբ: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել չի թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և **վարկային պայմանագրով:**

ՀՀ վճարել դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի վերլուծությանը, նշել է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցներն ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն:

Միաժամանակ նշված հոդվածով ամրագրվել է, որ վարկային հարաբերությունների նկատմամբ փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով և բուն վարկային պայմանագրով: **Այսինքն՝ վարկային հարաբերությունները կարգավորելու առումով օրենսդիրը նախապատվությունը տվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերին և վարկային պայմանագրին, որոնցով այլ բան նախատեսված չլինելու դեպքում միայն տվյալ հարաբերությունների նկատմամբ կարող են գործել փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը** (տես՝ «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՄՊԸ-ն ընդդեմ «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԲ/4072/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վճարել դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վարկային պայմանագրի կողմերի վարկ տրամադրելուց կամ այն ստանալուց հրաժարվելու հետ կապված հարաբերությունները կարգավորել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածով: Նշված հոդվածը սահմանում է, որ **այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի**, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց: **Վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկի նպատակային օգտագործման պարտականությունը խախտելու դեպքում** (հոդված 884) **վարկատուն իրավունք ունի հրաժարվել վարկառուին վարկավորելուց:**

Նույն հոդվածով սահմանվել է նաև Վարկառուի իրավունքը՝ լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկը ստանալուց՝ այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի, կամ եթե առկա է Վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկի նպատակային օգտագործման պարտականության խախտում, օրենսդիրն ամրագրել է Վարկատուի իրավունքը՝ նույնիսկ վարկային պայմանագրով նախատեսված համապատասխան պարտավորության առկայության պայմաններում հրաժարվելու Վարկառուին վարկավորելուց՝ հնարավորություն ընձեռելով Վարկատուին ինչպես ամբողջ ծավալով, այնպես էլ մասնակի մերժել Վարկառուին վարկ տրամադրելու:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճարել դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող 47-րդ գլխի նորմերով,

ինչպես նաև նույն օրենսգրքի՝ փոխառության հարաբերությունները կարգավորող 46-րդ գլխի նորմերով սահմանված չեն այն հանգամանքները, որոնք կարող են ակնհայտ վկայել Վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չվերադարձվելու մասին: Հետևաբար, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով և հիմք ընդունելով վարկային պայմանագրի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարկառուի՝ Վարկառուին վարկավորելուց հրաժարվելու համար հիմք հանդիսացող հանգամանքները և կարգը կարող են նախատեսված լինել *վարկային պայմանագրով*: Ընդ որում, վարկային պայմանագրի կողմերն ազատ են որոշել այդ պայմաններն իրենց հայեցողությամբ՝ համապատասխան պայմաններն ամրագրելով վարկային պայմանագրի տեքստում, պայմանով, որ դրանք չհակասեն վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի իմպերատիվ պահանջներին:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

23.08.2012 թվականին Ընկերության և «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի միջև կնքվել է թիվ V04625 Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագիր, ըստ որի՝

«1. Պայմանագրով Կողմերը համագործակցության սկզբունքներով միմյանց հետ իրականացնում են օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ, որոնք սահմանված են Պայմանագրի սույն բաժնի Ա-Դ ենթաբաժիններում, եթե դրանց իրականացման պահին Վարկառուն բավարարում է Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի պահանջներին:

Եթե այլ բան չի նախատեսվում Պայմանագրով, ապա Ա-Դ ենթաբաժիններում նշված ֆինանսական գործառնությունները միասին կանվանվեն «Վարկային գործառնություններ», Պայմանագրի Ա-Դ ենթաբաժիններում նշված համաձայնագրերը՝ «Համաձայնագրեր»:

2. Պայմանագրով վարկերի, վարկային գծերի, օվերդրաֆտների և երաշխիքների տրամադրման առավելագույն սահմանաչափը (այսուհետ՝ Սահմանաչափ) սահմանվում է 5.500.000 ԱՄՆ դոլարի (կամ դրան համարժեք այլ արժույթի) չափով, 3651 օրով, մինչև 22.08.2022 թվականը ներառյալ գործողության ժամկետով: Ընդ որում, մինչև Բանկի համար ընդունելի գրավներով ապահովման միջոցների համալրումը (և/կամ գրավադրված գույքի բարելավումն ու վերագնահատումը), ընկերության հետ կարող են կնքվել *մինչև 930.000 ԱՄՆ դոլարը* (կամ դրան համարժեք այլ արժույթը) չգերազանցող վարկային գործառնություններ, իսկ համապատասխան գրավներով ապահովելու դեպքում՝ վարկային գործառնություններ՝ *մինչև 5.500.000 ԱՄՆ դոլար* գումարի շրջանակներում՝ պայմանով, որ վարկային գործառնությունների ընդհանուր գումարի և դրանց ապահովման միջոց հանդիսացող գույքերի գնահատված արժեքի հարաբերակցությունը չի գերազանցի 70%-ը»:

Կողմերի միջև 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 գլխավոր պայմանագրով 5.500.000 ԱՄՆ դոլար առավելագույն սահմանաչափով նախատեսված գումարից Բանկն Ընկերությանը 24.08.2012 թվականին կնքված թիվ V04625/6 վարկի տրամադրման համաձայնագրով տրամադրել է 930.000 ԱՄՆ դոլար, 01.11.2012 թվականին կնքված թիվ V04625/9 վարկի տրամադրման համաձայնագրով՝ 300.000 ԱՄՆ դոլար, իսկ 14.12.2012 թվականին կնքված թիվ V04625/10 վարկի տրամադրման համաձայնագրով՝ 2.000.000 ԱՄՆ դոլար վարկեր, ընդամենը՝ 3.230.000 ԱՄՆ դոլար:

Վերոգրյալ համաձայնագրերով տրամադրված վարկային գումարների շրջանակում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները պատշաճ չի կատարել՝ թույլ տալով վճարային պարտավորությունների կետանց, ինչից հետո Բանկի կողմից Ընկերությանն այլևս վարկ չի տրամադրվել:

Ընկերությունը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.12.2015 թվականի վճռով ճանաչվել է սնանկ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է

պարտավորեցնել Բանկին՝ իր հետ կնքված թիվ V04625 գլխավոր պայմանագրով նախատեսված առավելագույն սահմանաչափով վարկ տրամադրել:

Դատարանը, բավարարելով հայցապահանջը, պատճառաբանել է, որ «Բանկն առանց որևէ իրավական հիմքի հրաժարվել է տրամադրել վարկ՝ չներկայացնելով թույլատրելի և վերաբերելի որևէ ապացույց վարկը տրամադրելու կամ այն չտրամադրելու իրավաչափ հիմքերի /փաստերի/ առկայության մասին, մինչդեռ [իրավահարաբերության ծագման պահին գործող] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ուժով այդ փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է բանկը: Ավելին՝ վարկի այս գումարը գերապահովված է անշարժ գույքի գրավի, անձնական երաշխավորության պայմանագրերով, որոնք հետագուովել և գնահատվել են գործի ողջ քննության ընթացքում, ինչպես նաև նշված գումարից 2.000.000 ԱՄՆ դոլարի չափով առկա է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված բանկային երաշխիքը, որը նույնպես հանդիսանում է ապահովման միջոց, բացի այդ գործի նյութերում առկա վճարման գրաֆիկների համաձայն, հայցվոր ընկերությունը չի խուսափել պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց»:

Դատարանն արձանագրել է նաև, որ «Բանկը վարկ տրամադրելու պարտականությունը ստանձնել է՝ ստորագրելով գլխավոր պայմանագիրը, նույն հիմքով Ընկերության մոտ ծագել է վարկ պահանջելու և ստանալու իրավունքը, և վճել է վերացնել Ընկերության իրավունքի խախտումը և պարտավորեցնել Բանկին կատարել վերջինիս և Ընկերության միջև 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 գլխավոր պայմանագրով ստանձնած 5.500.000 ԱՄՆ դոլար առավելագույն սահմանաչափով վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ և երաշխիքներ տրամադրելու պարտականությունը»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, ըստ էության, հիմնավոր է համարել դատարանի վերը նշված եզրահանգումները, մինևույն ժամանակ արձանագրելով, որ «(...) թիվ V04625 գլխավոր պայմանագրով Բանկն Ընկերության նկատմամբ ստանձնել է որոշակի պարտավորություններ, իսկ վերջինս կրում է այդ պայմանագրով նախատեսված պարտավորություններ, ինչպես նաև ձեռք է բերել իրավունքներ, մասնավորապես՝ պայմանագրի պայմանները կատարել պարտավորեցնելու պահանջի իրավունք: Նշված պայմանագրի գոյության փաստը հաստատվել է այն հանգամանքով, որ կողմերը մասնակիորեն կատարել են այդ պայմանագրի պահանջները, այն է՝ Բանկի իրավանախորդը և հայցվորը կնքել են վարկի հատկացման պայմանագրեր և կատարել են դրանք՝ հատկացվել են վարկեր, կատարվել են դրանց մարումներ, որպես վարկի ապահովման միջոց գրավադրվել է գույք, ինչպես նաև կնքվել է երաշխավորության պայմանագրեր: Բացի այդ կողմերը երբեք չեն վիճարկել թիվ V04625 գլխավոր պայմանագիրը, կամ որևէ մեկը չի առաջարկել այն լուծել կամ դադարեցնել, հետևաբար այդ պայմանագիրը բանկի համար առաջացրել է պարտավորություններ: (...) Պատասխանողը երբեք հիմքեր չի ունեցել և դրանց մատնանշմամբ Ընկերությանը չի մերժել գլխավոր պայմանագրից բխող վարկերի տրամադրումը, սակայն պատասխանողի գործողությունների արդյունքում Ընկերությունը կրել է վնասներ և հայտնվել ֆինանսական վատթարագույն վիճակում»:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ «(...) Ընկերության իրավունքի խախտումը տեղի է ունեցել դեռևս 2013 թվականից սկսած, և այդ հանգամանքից ելնելով է նաև վերջինս սնանկ ճանաչվել Դատարանի 01.12.2015 թվականի վճռով, ինչպես նաև հաշվառմամբ այն հանգամանքի, որ Բանկը հայցվորին վարկի տրամադրումը նշված /սնանկության/ հիմքով երբեք չի մերժել, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պատասխանողի կողմից դեռևս 2013 թվականին թույլ տրված գլխավոր պայմանագրի պայմանների խախտման փաստն արձանագրելու համար այն էական չէ, իսկ հետագայում Բանկն այդ պայմանագրից ծագած իր պարտավորությունների կատարման փուլում պետք է առաջնորդվի գործող օրենսդրությամբ և նշված պայմանագրով»:

Վճռաբեկ դատարանը, վերոհիշյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը,

հարկ է համարում նշել, որ գործի քննության պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականից ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականից ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացույցողական գանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (յրեն՝ «Շենքերի կառավարում» համալիրությունն ընդդեմ Մասիս Դազանչյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (յրեն՝ Թուգանյան Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործում առկա ապացույցները չեն գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով 23.08.2012 թվականի թիվ V04625 Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրի 1-ին և 2-րդ կետերով սահմանվել է, որ՝

«1. Պայմանագրով Կողմերը համագործակցության սկզբունքներով միմյանց հետ իրականացնում են օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ, որոնք սահմանված են Պայմանագրի սույն բաժնի Ա-Դ ենթաբաժիններում, եթե դրանց իրականացման պահին Վարկառուն բավարարում է Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի պահանջներին:

Եթե այլ բան չի նախատեսվում Պայմանագրով, ապա Ա-Դ ենթաբաժիններում նշված ֆինանսական գործառնությունները միասին կանվանվեն «Վարկային գործառնություններ», Պայմանագրի Ա-Դ ենթաբաժիններում նշված համաձայնագրերը՝ «Համաձայնագրեր»:

2. Պայմանագրով վարկերի, վարկային գծերի, օվերդրաֆտների և երաշխիքների տրամադրման առավելագույն սահմանաչափը (այսուհետ՝ Սահմանաչափ) սահմանվում է 5.500.000 ԱՄՆ դոլարի (կամ դրան համարժեք այլ արժույթի) չափով, 3651 օրով, մինչև 22.08.2022 թվականը ներառյալ գործողության ժամկետով: Ընդ որում, մինչև Բանկի համար ընդունելի գրավներով ապահովման միջոցների համալրումը (և/կամ գրավադրված

գույքի բարելավումն ու վերագնահատումը, ընկերության հետ կարող են կնքվել մինչև 930.000 ԱՄՆ դոլարը (կամ դրան համարժեք այլ արժույթը) չգերազանցող վարկային գործառնություններ, իսկ համապատասխան գրավներով ապահովելու դեպքում՝ վարկային գործառնություններ՝ մինչև 5.500.000 ԱՄՆ դոլար գումարի շրջանակներում՝ պայմանով, որ վարկային գործառնությունների ընդհանուր գումարի և դրանց ապահովման միջոց հանդիսացող գույքերի գնահատված արժեքի հարաբերակցությունը չի գերազանցի 70%-ը»:

Նույն 1-ին բաժնի «Ե» ենթաբաժնի 16-րդ կետով ամրագրվել է վերը նշված վարկային գործառնությունների իրականացման կարգը՝ սահմանելով, որ «Յուրաքանչյուր անգամ Վարկային գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից հաստատված Վարկային գործառնությունները կանոնակարգող ներքին իրավական ակտերի համաձայն (կանոնակարգեր, կարգեր, ընթացակարգեր, հրահանգեր և այլն) քննարկելուց և համապատասխան որոշում ընդունելուց հետո: Եթե քննարկման արդյունքներով Բանկի կողմից որոշում է կայացվում մերժել Վարկային գործառնությունների իրականացումը, ապա Վարկառուն իրավունք ունի մերժման հիմքերը վերացնելուց հետո կրկին անգամ դիմել Վարկային գործառնություններ իրականացնելու խնդրանքով: Բանկի կողմից Վարկային գործառնությունների իրականացումը կրկին անգամ մերժելուց հետո, Վարկառուն իրավունք ունի Վարկային գործառնությունների իրականացման խնդրանքով դիմելու Բանկ պաշտոնական մերժումը ստանալուց երեք ամիս հետո»:

Նշված պայմանագրի 1-ին բաժնի «Բ» ենթաբաժնի 8-րդ կետով սահմանվել են այն պայմանները, որոնց առկայության դեպքում Բանկն իրավունք ունի չորամադրել գումարներ վարկային գծից, ամրագրելով, որ (...), եթե Վարկառուն վարկային միջոցներն օգտագործում է Վարկային գծի տրամադրման համաձայնագրով չնախատեսված նպատակներով (ոչ նպատակային) կամ խախտել է Պայմանագրով և/կամ Վարկային գծի տրամադրման համաձայնագրով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, ունի ժամկետանց դրամական պարտավորություններ Բանկի, այլ բանկերի կամ պետական բյուջեի հանդեպ, Վարկառուի բանկային հաշիվների վրա արգելանք է դրված, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ վարկային գծի գործողության ժամկետի ավարտին մնացել է 30 (երեսուն) օրացուցային օր:

Համանման կարգավորում է նախատեսվել նաև Պայմանագրի 28-րդ կետով, ըստ որի՝ «Բանկն իրավունք ունի հրաժարվել Վարկառուին Վարկ տրամադրելուց, ինչպես նաև միակողմանիորեն վերանայել Պայմանագրի և Համաձայնագրերի շրջանակներում արդեն իսկ տրամադրված Վարկի էական պայմանները (գումարի չափ, մարման ժամկետ, տարեկան տոկոսադրույք, Վարկի արժույթ և այլ) կամ պահանջել Պայմանագրի և Համաձայնագրերի շրջանակներում տրամադրված Վարկի մասնակի կամ ամբողջական վաղախլետ մարում, եթե՝

- *Վարկառուի կողմից խախտվել են Պայմանագրի և/կամ Համաձայնագրերի պայմանները,*
- *Վարկառուն չի կարարել Պայմանագրով կամ Համաձայնագրերով սահմանված իր պարտավորություններից որևէ մեկը. (...)*
- *Առկա են վարկառուի անվճարունակությունը /անանկությունը/ հիմնավորող հանգամանքներ կամ փաստաթղթեր,*
- *Բանկի, այլ բանկերի, վարկային կամ այլ կազմակերպությունների, կամ պետական բյուջեի նկատմամբ Վարկառուն ունի ժամկետանց պարտավորություններ,*
- *Էապես վարկառուից են ներքոշարադրյալ ցուցանիշներով արտահայտված ֆինանսական վիճակը, (...)*
- *Բանկի մոտ առկա են արժանահավասար տրեդերություններ, որոնք վկայում են այնպիսի դեպքերի հնարավոր առաջացման մասին, որոնք կարող են էապես վարկառուից վարկառուի ֆինանսական վիճակը:(...):»:*

Մինևույն ժամանակ, թիվ V04625 Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրի 1-ին բաժնի «Ե» ենթաբաժնի 17-րդ կետով կողմերն ամրագրել են, որ «Վարկային գործառնություններ իրականացնելն ու դրա հիման վրա համապատասխան Համաձայնագրեր կնքելը հանդիսանում է Բանկի իրավունքը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ անդրադարձել է պայմանագրի մեկնաբանման հարցին և արձանագրել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*սեւ*՝ «Կարապետ ՄՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի թիվ ՇԴՆ/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով Գլխավոր վարկային պայմանագրի 1-ին և 2-րդ կետերը՝ դրանցում առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով, արձանագրում է, որ դրանցով կողմերը համաձայնություն են ձեռք բերել առավելագույնը 5.550.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար սահմանաչափով, որոշակի ֆինանսական գործառնություններ իրականացնելու նպատակով կնքել Գլխավոր պայմանագրով սահմանված՝ Ա-Դ ենթաբաժիններով նախատեսված բանկային գործունեությանը բնորոշ պայմանագրերը, պայմանով, որ **համապատասխան ֆինանսական գործառնության իրականացման պահին Վարկառուն բավարարի Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի պահանջներին:**

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարկային գործառնությունների գլխավոր պայմանագրով նախանշված սահմանաչափի գումարները Բանկի կողմից Ընկերությանը տրամադրվել են վարկի տրամադրման առանձին համաձայնագրերով, հիմք ընդունելով կողմերի միջև կնքված Գլխավոր պայմանագրի 1-ին բաժնի Ա ենթաբաժինը, ինչպես նաև նկատի ունենալով, որ համապատասխան համաձայնագրերի կնքման պահին Վարկառուն բավարարել է Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի պահանջներին:

Այլ կերպ ասած՝ Բանկի կողմից Ընկերությանը 3.230.000 ԱՄՆ դոլարի տրամադրման իրականացվել է ոչ թե անմիջականորեն Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրի շրջանակում, այլ նույն Գլխավոր պայմանագրից բխող Ընկերության և Բանկի միջև կնքված թվով երեք՝ **24.08.2012 թվականին կնքված թիվ V04625/6, 01.11.2012 թվականին կնքված թիվ V04625/9 և 14.12.2012 թվականին կնքված թիվ V04625/10 վարկի ստանալու համաձայնագրերի շրջանակներում:**

Վճռաբեկ դատարանը, Գլխավոր վարկային պայմանագրի 16-րդ կետը մեկնաբանելով դրանում առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով, արձանագրում է, որ դրանով կողմերն ամրագրել են գլխավոր պայմանագրից բխող վարկային գործառնությունների իրականացման ընթացակարգը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր Վարկային գործառնություն իրականացվելու է Բանկի կողմից հաստատված՝ Վարկային գործառնությունները կանոնակարգող ներքին իրավական ակտերի համաձայն (կանոնակարգեր, կարգեր, ընթացակարգեր, հրահանգեր և այլն) քննարկելուց և համապատասխան որոշում ընդունելուց հետո՝ Վարկառուի խնդրանքի /հայտի/ հիման վրա:

Այլ կերպ ասած՝ կողմերը վերը նշված կետով սահմանել են միմյանց հետ Գլխավոր պայմանագրից բխող վարկի տրամադրման առանձին համաձայնագրերով վարկավորման կարգը, որի պահպանումը հանդիսացել է համապատասխան ֆինանսական գործառնության իրականացման նախապայման:

Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի քննության ընթացքում Բանկը բազմիցս փաստարկել է, որ Ընկերությունը 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 գլխավոր պայմանագրով սահմանված առավելագույն սահմանաչափից պակաս տրամադրված 2.270.000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ ստանալու վերաբերյալ որևէ «վարկային հայտ» չի ներկայացրել, մինչդեռ այդպիսիք առկա են եղել նախորդող թիվ 3 վարկավորումների ժամանակ: Ընդ որում, նշված գումարը ստանալու վերաբերյալ Ընկերության կողմից հայտ ներկայացված լինելու և դրա վերաբերյալ Բանկի մերժման որոշման առկայությունը հավաստող ապացույց առկա չէ նաև գործի նյութերում:

Անդրադառնալով Գլխավոր վարկային պայմանագրի 8-րդ և 28-րդ կետերի դրույթներին և դրանք մեկնաբանելով դրանցում առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանագրի վերը նշված կետերով կողմերը սահմանել են այն պայմանները, որոնց առկայության դեպքում Բանկն իրավասու է հրաժարվել Վարկառուին Վարկ տրամադրելուց, ինչպես նաև միակողմանիորեն վերանայել Պայմանագրի և Համաձայնագրերի շրջանակներում արդեն իսկ տրամադրված Վարկի էական պայմանները՝ դրանց շարքում, ի թիվս այլնի, ներառելով այն դեպքերը, երբ՝

- Վարկառուի կողմից խախտվել են Պայմանագրի և/կամ Համաձայնագրերի պայմանները,
- Վարկառուն չի կատարել Պայմանագրով կամ Համաձայնագրերով սահմանված իր պարտավորություններից որևէ մեկը,
- Առկա են վարկառուի անվճարունակությունը /անանկությունը/ հիմնավորող հանգամանքներ կամ փաստաթղթեր,
- Բանկի, այլ բանկերի, վարկային կամ այլ կազմակերպությունների, կամ պետական բյուջեի նկատմամբ Վարկառուն ունի ժամկետանց պարտավորություններ,
- Վարկառուն վարկային միջոցներն օգտագործում է Վարկային գծի տրամադրման համաձայնագրով չնախատեսված նպատակներով (ոչ նպատակային):

Տվյալ դեպքում, Բանկը 23.08.2012 թվականին կնքված թիվ V 04625 գլխավոր պայմանագրով սահմանված առավելագույն սահմանաչափով Ընկերությանը վարկ չտրամադրելը պատճառաբանել է նրանով, որ Ընկերությունը վարկը ծախսել է ոչ նպատակային նշանակությամբ, և վերջինս պայմանագրով ու համաձայնագրերով պարտավորվել է կատարել ամենամյա մարումներ, սակայն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և վարկը դասակարգվել է (հիմք՝ հայցադիմումի պատասխան, հատոր 1-ին, գ.թ. 77-81):

Ի հիմնավորումն վերը նշված փաստարկների՝ Բանկի կողմից ներկայացվել են վարկային համաձայնագրերի ժամանակացույց-պարտավորագրերը, ինչպես նաև Ընկերության հետ կնքված գրաֆիկով վարկային պայմանագրերի քաղվածքները, որոնց ուսումնասիրությունից հետևում է, որ Ընկերությունը դեռևս 02.05.2013 թվականից պարբերաբար թույլ է տվել վարկային համաձայնագրերի ժամանակացույց-պարտավորագրերով սահմանված վճարման ժամկետների կետանց, որը շարունակվել է նաև փոփոխված ժամանակացույցով նախատեսված վճարումներն իրականացնելիս, (հիմք՝ թիվ V04625-6, թիվ V04625-9 գրաֆիկով վարկային պայմանագրերի քաղվածքներ), իսկ ըստ Ընկերության տնօրենի կողմից կազմված տեղեկանքի՝ վարկի տրամադրումը Բանկը դադարեցել է 2013 թվականի հուլիս ամսից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գլխավոր պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով տրամադրված վարկային գումարների շրջանակում Ընկերությունը, պարտավորված լինելով կատարել ամենամյա մարումներ, պարբերաբար թույլ է տվել կետանց, ընկերության ֆինանսական վիճակը վատթարացել է, ինչը, համաձայն կողմերի միջև կնքված վարկային պայմանագրի դրույթների, արդեն իսկ բավարար է եղել Բանկի կողմից Վարկառուին վարկի տրամադրումից հրաժարվելու,

այն է՝ 23.08.2012 թվականին կնքված թիվ V 04625 գլխավոր պայմանագրով սահմանված առավելագույն սահմանաչափով վարկ չորամադրելու իր իրավունքն իրացնելու համար:

Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունների համար հիմք է հանդիսանում նաև այն, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը Բանկի գլխավոր տնօրենին ուղղված 01.04.2014 թվականի գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մտադիր է սեփականատերերի միջոցներով շարունակել ներդրումները շինարարական աշխատանքները շարունակելու համար, սակայն տվյալ պահին ելնելով ֆինանսատնտեսական իրավիճակից տվյալ ներդրումների իրականացումը և վարկերի մարումները ծանր կանդրադառնան Ընկերության վրա: Այդ պատճառով դիմել է վարկերի մարումների ժամանակացույցի վերանայման, այն է՝ տոկոսների մարումը մինչև 01.11.2014 թվականը, իսկ մայր գումարի մարումը մինչև 01.04.2015 թվականը հետաձգելու խնդրանքով:

Բանկի 26.04.2014 թվականի վարկային կոմիտեի նիստի թիվ 024 արձանագրությամբ որոշվել է հաստատել վերը նշված դիմումը, հետևյալ պայմաններով՝ «Բանկի հաճախորդ Ընկերության հետ 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրերի շրջանակներում 24.08.2012 թվականին կնքված թիվ V04625/6, 01.11.2012 թվականին կնքված թիվ V04625/9, 14.12.2012 թվականին կնքված թիվ V04625/10 վարկի տրամադրման համաձայնագրերով տրամադրված վարկերի վճարումների ժամանակացույցները վերանայել հետևյալ կերպ՝

1. վերանայումից հետո առաջին 12 ամիսների համար տոկոսագումարների վճարումները նշանակել եռամսյակային,

2. վերանայումից հետո սկսած 13-րդ ամսվանից նշանակել մայր գումարների և տոկոսագումարների ամենամսյա մարման անուիտետային ժամանակացույց»:

Նշված որոշումից հետո Բանկի և Ընկերության միջև կնքվել են համաձայնագրեր՝ 24.08.2012 թվականին կնքված V04625/6, 01.11.2012 թվականին կնքված V04625/9 և 14.12.2012 թվականին կնքված V04625/10 վարկի տրամադրման համաձայնագրերի անբաժան մասը կազմող վարկի մարման ժամանակացույց-պարտավորագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից վարկային համաձայնագրերի ժամանակացույց-պարտավորագրերով սահմանված վճարման ժամկետների կետանցները շարունակվել են նաև վճարումների ժամանակացույցի փոփոխություններից հետո:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև վարկային պայմանագիրը համարվում է կոնսենսուալ, այն է՝ կնքված է համարվում, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ, այդուհանդերձ վարկային պայմանագրի կնքումից հետո կողմերի պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը չի կրում բացարձակ բնույթ: Մասնավորապես, եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ Վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի, Վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց, որպիսի իրավունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածով:

Սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Ընկերությունը թույլ է տվել վարկային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման կետանց, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ արդեն իսկ բավարար էր Բանկի կողմից Ընկերությանը լրացուցիչ վարկ տրամադրելուց հրաժարվելու համար՝ անկախ կողմերի միջև կնքված Գլխավոր պայմանագրով սահմանված առավելագույն սահմանաչափով վարկի մի մասն Ընկերությանն արդեն իսկ տրամադրված լինելու հանգամանքից:

Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Բանկն իրավասու էր օգտվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածով սահմանված՝ վարկի մի մասը Վարկառուին տրամադրելուց հրաժարվելու իր իրավունքից, որը և կատարել է:

Միաժամանակ, անդրադառնալով վարկավորումից հրաժարվելու դեպքում սնանկ ճանաչված Ընկերության նկատմամբ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները Բանկի կողմից կատարելու իրավական հնարավորության հարցին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Մասնկության մասին» ՀՀ

օրենքի կարգավորումներից հետևում է, որ արդեն իսկ սնանկ ճանաչված պարտապանի կողմից նոր վարկի ստացումը հնարավոր է միայն պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող միջոցառումների, այն է՝ վերջինիս ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում: Մասնավորապես՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ կետի թ) ենթակետի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում ներառվող միջոցառումների շարքին, ի թիվս այլնի, դասվում է նաև պարտապանի կողմից նոր վարկի ստացումը: Նույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսվում է այլ անձանց կողմից պարտապանին ֆինանսավորման տրամադրում, ապա տվյալ ծրագրի հաստատման համար ֆինանսավորողի համաձայնությունը պարտադիր է (...):

Տվյալ դեպքում սույն գործով հաստատված է, որ Ընկերությունը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.12.2015 թվականի վճռով ճանաչվել է սնանկ: Վերոնշյալ փաստն արդեն իսկ վկայում է Ընկերության ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման մասին, ավելին, ըստ կողմերի միջև 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 գլխավոր պայմանագրի դրույթների, հանդիսանում է ինքնուրույն հիմք՝ Բանկի կողմից Վարկատուի հետագա վարկավորումից հրաժարվելու և սահմանված առավելագույն սահմանաչափով վարկ չտրամադրելու իր իրավունքն իրացնելու համար:

Նկատի ունենալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված իրավակարգավորումները, ինչպես նաև այն, որ Ընկերության հետ 23.08.2012 թվականին կնքված թիվ V04625 գլխավոր պայմանագրից ծագող իր պարտավորությունների կատարման փուլում Բանկը պարտավոր է առաջնորդվել այդ պահին գործող օրենսդրությամբ և վերը նշված պայմանագրի դրույթներով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոգրյալը բավարար է արձանագրելու, որ սնանկ ճանաչված Ընկերությանը նոր վարկ տրամադրելու պարտականություն Բանկի վրա կարող է դրվել միայն Ընկերության սնանկության վարույթի շրջանակներում ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացված լինելու, դրանում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով կիրառվելիք միջոցառումների ցանկում նոր վարկի ստացման միջոցառումը ներառված լինելու, ինչպես նաև տվյալ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման համար Բանկի համաձայնությունը հաստատող ապացույցների առկայության պարագայում, որպիսիք սույն գործով ներկայացված չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հաստատված փաստերը հիմք են հանդիսացել Բանկի համար՝ իրավաչափորեն հրաժարվելու 23.08.2012 թվականի թիվ V04625 գլխավոր պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումից, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Մասնավորապես՝ թե Դատարանը, և թե Վերաքննիչ դատարանն անտեսել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 889-րդ հոդվածի կարգավորումը, 23.08.2012 թվականի թիվ V04625 գլխավոր պայմանագրի դրույթները, նշված կարգավորումների համատեքստում չեն պարզել և գնահատել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, որի արդյունքում սխալ եզրահանգման են եկել հայցի հիմնավոր և բավարարման ենթակա լինելու վերաբերյալ, ինչն էլ հանգեցրել է սխալ դատական ակտի կայացման:

Վերոնշյալ պատճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրաստմանի փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և

փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով հայցադիմումի և բողոքների ներկայացման պահին՝ մինչև 09.02.2018 թվականի փոփոխությունները գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ առաջին աստիճանի դատարաններ տրվող հայցադիմումների, (...) դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. հայցադիմումների (...) համար՝
(...) ք) ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով (...),
8. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝

(...) Բ) ոչ գույքային պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով (...),

9. դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝

(...)բ) ոչ գույքային պահանջի գործերով՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով (...):

Սույն գործով հայցադիմումը դատարան ներկայացնելիս Ընկերությունը վճարել է 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2014 թվականի, 30.11.2015 թվականի և 31.07.2017 թվականի վճիռների դեմ վերաքննիչ բողոքներ ներկայացնելու համար Բանկի կողմից վճարվել է ընդհանուր 30.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանի 11.01.2018 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար Բանկի կողմից վճարվել է 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման և փոփոխման, իսկ հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի և 112-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումները, գտնում է, որ հայցադիմում ներկայացնելու համար Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված: Ընկերությունից հոգուտ Բանկի ենթակա է բռնագանձման 30.000 ՀՀ դրամ՝ որպես Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2014 թվականի, 30.11.2015 թվականի և 31.07.2017 թվականի վճիռների դեմ Բանկի ներկայացրած վերաքննիչ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես Բանկի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «Մաքս Նիկել Դիվելոփմենթ» ՍՊԸ-ի հայցը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին վարկային գործառնությունների իրականացման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. «Մաքս Նիկել Դիվելոփմենթ» ՍՊԸ-ից հոգուտ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/7480/02/18
	2020թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/7480/02/18
Նախագահող դատավոր՝	Տ. Նազարյան
Դատավորներ՝	Հ. Ենոքյան Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2020 թվականի հուլիսի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով Հասմիկ Աբովյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ստեփան Բաղդասարյանի ընդդեմ Հասմիկ Աբովյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության՝ վիրավորանքի և զրպարտության հետևանքով պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և հրապարակային ներողություն խնդրելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ստեփան Բաղդասարյանը պահանջել է Հասմիկ Աբովյանին պարտավորեցնել ՀՀ հանրային հեռուստաընկերության Հ1 հեռուստաալիքի «Առաջին տաղավար» հաղորդաշարում հրապարակել հրապարակային ներողություն, ինչպես նաև Հասմիկ Աբովյանից բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության և վիրավորանքի փոխհատուցում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Փիլոսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.08.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.12.2019 թվականի որոշմամբ Ստեփան Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 16.08.2019 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել՝ Ստեփան Բաղդասարյանի հայցն ընդդեմ Հասմիկ Աբովյանի՝ վիրավորանքի և գրպարտության հետևանքով պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և հրապարակային ներողություն խնդրելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն, այն է՝ որոշվել է Հասմիկ Աբովյանի կողմից Ստեփան Բաղդասարյանին ուղղված «հանցագործ է» արտահայտությունը որակել որպես գրպարտություն, և Հասմիկ Աբովյանից հոգուտ Ստեփան Բաղդասարյանի բռնազանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես գրպարտության հետևանքով պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցում: Որոշվել է Հասմիկ Աբովյանից հոգուտ Ստեփան Բաղդասարյանի բռնազանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, և 6.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը որոշել է Հասմիկ Աբովյանից հոգուտ Ստեփան Բաղդասարյանի բռնազանձել 5.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վերջինիս կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, Հասմիկ Աբովյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնազանձել 6.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված և հետաձգված պետական տուրքի գումար, Ստեփան Բաղդասարյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնազանձել 54.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված և հետաձգված պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Աբովյանը:
 Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերկյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «մեղադրվող» եզրույթը կարող է վերաբերել քրեական գործով մեղադրյալին (կասկածյալին, ամբաստանյալին), և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում անձին անմեղ համարելու պարտականությունը դրված է ոչ թե կարծիք արտահայտող քաղաքացու, այլ դատարանի վրա: Ստեփան Բաղդասարյանի վերաբերյալ քրեական գործը կարճվել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող՝ վաղեմության ժամկետները լրանալու հիմքով: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը պաշտպանել է մի անձի իրավունք, ով համաձայնություն է տվել իր նկատմամբ քրեական գործի վարույթը ոչ արդարացնող հիմքով կարճելու վերաբերյալ:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բողոքաբերը հաղորդմանը հրավիրված է եղել որպես բժիշկ-էնդոկրինոլոգ: Որպես բժիշկ՝ ինքն այլ կերպ չէր կարող որակել Ստեփան Բաղդասարյանի արարքը, եթե հաղորդման ժամանակ իրեն հայտնի է դարձել, որ Ստեփան Բաղդասարյանն առաջին տիպի շաքարային դիաբետով հիվանդի համար կենսական անհրաժեշտ ինսուլինը փոխարինել է բույսերով, իսկ լյարդի տոքսիկ ախտահարումը տեսնելով՝ խորհուրդ է տվել ձկներ գնել, որպեսզի հիվանդը «խաղա» դրանց հետ, «ձկները կդեղնեն և կսատկեն», հիվանդի դեղնությունն էլ կանցնի:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ բողոքաբերը՝ որպես բժիշկ, «տգետ և հանցագործ» գնահատողական արտահայտությունները կատարել է, որպեսզի հանրությունը

տեղեկանա, որ նման «բուժումները» կարող են անդառնալի հետևանքներ ունենալ, և գերծ մնա նման ոչ պրոֆեսիոնալ «բուժումներից»:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է հայրը բավարարելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 13.12.2019 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հանրային հեռուստաընկերության «Առաջին տաղավար» հաղորդման 14.03.2018 թվականի եթերը վերաբերել է բուսաբուժությանը (հեքիմությանը): Հաղորդմանը որպես հյուր հրավիրվել է Սուրեն Նիկողոսյանը, ում հանգուցյալ որդու՝ Հովհաննես Նիկողոսյանի նկատմամբ ոչ գիտական մեթոդներով բուժում է իրականացրել Ստեփան Բաղդասարյանը: Նախքան Սուրեն Նիկողոսյանի խոսքը՝ հաղորդավարը, շնորհակալություն հայտնելով Սուրեն Նիկողոսյանին՝ հաղորդմանը ներկայանալու համար, նշել է, որ վերջինիս ներկայության նպատակն է «գերծ պահել բոլոր մարդկանց, ում մտքով երբևէ կանցնի կրկին ոչ ապացուցողական բժշկությանը դիմել և հանգել այսպիսի արդյունքների»: Հաղորդման ընթացքում Սուրեն Նիկողոսյանը պատմել է, որ իր որդին հիվանդացել է շաքարային դիաբետով, հոսպիտալացվել, այնուհետև դուրս գրվել և հետագայում անընդհատ ստացել է ինսուլին: Բուժման ընթացքում որդին մի գովազդ է տեսել, որ մի շաքար անբուժելի հիվանդություններ, այդ թվում՝ շաքարային դիաբետը, հեքիմ Ստեփան Բաղդասարյանը բուժում է: Սուրեն Նիկողոսյանը նաև նշել է, որ անգամ ներկայումս գովազդը դեռևս շարունակվում է, չնայած հարուցվել է քրեական գործ:

Հաղորդման ժամանակ Սուրեն Նիկողոսյանի փաստաբան Տաթև Սարգսյանը նշել է, որ Ստեփան Բաղդասարյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, աշխատանքային պայմանագիր է կնքել բժիշկ թերապևտ Լուսինե Բաչատրյանի հետ, ստացել է ընդհանուր թերապևտիկ լիցենզիա, սակայն սույն դեպքում իրականացրել է ներգատաբանական տիպի գործունեություն, ինչը դուրս է իր լիցենզիայի շրջանակներից: Արդյունքում Սուրեն Նիկողոսյանի որդու մոտ առաջացել է տոքսիկ հեպատիտ, ինչը հանգեցրել է մահվան, որը, ըստ փորձաքննության արդյունքների, ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում բուժման մեթոդների հետ:

Հաղորդման ժամանակ ներկայացվել է նաև Ստեփան Բաղդասարյանի տեսակետը (հեռախոսագրույցի ձայնագրությունը), ով հայտնել է, որ. «Էդ տղեն մանկուց հիվանդ էր, ես իրեն ասել եմ՝ այ բալա ջան, ես քո շաքարը կիջեցնեմ, կբուժեմ քո լյարդը, ենթաստամոքսային գեղձը: Շաքարը մեկ ամսում 27-ից իջել է 14-ի, հետո մուծել են երկրորդ ամսվա գումարը, իջել է 7-ի (...): (...) կինը զանգ տվեց, ասում է՝ Ձեզ չի լսել, գնացել է բասեին, ջերմությունը 39 է, ինչ անեմ: Ասել եմ՝ ջերմիջեցնող տուր: Ջերմիջեցնող տվել է, քնել է, առավոտյան նորից դեղնած եկել է ինձ մոտ (...): Դա ես կարող էի բուժել, որովհետև ես կարող էի նոր լեդու հումքը տալ բույսերով, հինը մղել դուրս, իսկ բժշկությունը միայն լեդին մղում է դուրս, չի օգնում, որ նորը արտադրվի: Ես դա իմանալով ասեցի՝ մի գնացեք, մի տարեք, ես դա էլ կբուժեմ (...): Ես էլ խորհուրդ տվի՝ կենդանի ձուկ առ, տար տուն, գցիր թասի մեջ, ջուրը լիքը, թող ինքը լողանա: Հենց բռնեց, ձուկը կղեղնի, կսատկի, քո գույնը օր օրի կբացվի (...):»:

Ստեփան Բաղդասարյանի հեռախոսագրույցի ձայնագրությունը լսելուց հետո Հասմիկ Աբովյանը հստակեցնող հարց է տալիս, թե արդյոք Ստեփան Բաղդասարյանը բժիշկ է, որին ի պատասխան՝ Տաթև Սարգսյանը հայտնում է, որ Ստեփան Բաղդասարյանը բժիշկ չէ, իսկ թերապևտ Լուսինե Բաչատրյանի վերաբերյալ առկա է քրեական գործ՝ բժշկի կողմից բժշկական օգնություն և սպասարկում պատշաճ չիրականացնելու հանցակազմով, բացի այդ, Ստեփան Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Փաստաբանը հայտնում է, որ իրենք բողոքարկել են այդ որոշումը, սակայն վերջնական արդյունքն իրենց օգտին չի եղել, և իրենք պատրաստվում են դիմել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ նաև անձի կյանքի իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Այնուհետև բժիշկ Հասմիկ Աբովյանը մանրամասն ներկայացրել է բույսերի և դեղերի օգտակարության, վնասակարության և դրանցով բուժման հետևանքների մասին՝ մասնավորապես նշելով, որ բույսերը հետազոտված չեն, դրանցում կան բազմաթիվ վտանգավոր նյութեր, և որ բուսաբուժությունը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Հասմիկ Աբովյանը ներկայացրել է դեղորայքային բուժման առավելությունները՝ հայտնելով, որ դեղագործական ընկերությունները միլիարդավոր դոլարներ են ներդնում դեղերի հետազոտման համար, ինչը չի արվում բույսերի դեպքում: Հասմիկ Աբովյանը հնչեցրել է նման կարծիք. «Այսօր կա խայտառակ մի իրավիճակ, երբ բժշկությունից շատ հեռու մարդիկ զբաղվում են բժշկությամբ, վաճառում են «բիոդաբավկաններ», խոստանում են հրաշք բուժումներ»: Հասմիկ Աբովյանը նշել է, որ այդ մարդիկ համոզում են գնել թանկ դեղեր՝ վստահեցնելով, որ դրանք կօգնեն, սակայն նման բուժումը «լավագույն դեպքում ոչինչ չի տալու, իսկ վատագույն դեպքում լինելու է այն, ինչ եղավ այս ցավալի դեպքի ժամանակ»:

Պատասխանելով լրագրողի այն հարցին, թե արդյոք պահանջել է լիցենզիա Ստեփան Բաղդասարյանից, Սուրեն Նիկողոսյանը հայտնել է, որ ընդհանուր թերապևտիկ լիցենզիան և բժիշկ Լուսինե Խաչատրյանի առկայությունն իրենց շփոթության մեջ են գցել: Հաղորդավարը հնչեցրել է կարծիք, որ փաստորեն որպես խայծ է օգտագործվել Լուսինե Խաչատրյանի լիցենզիան: Հաղորդավարը հարց է հնչեցրել հաղորդմանը հրավիրված այլ իրավաբանի, թե արդյոք Լուսինե Խաչատրյանը կարող է հանցանքից դիտվել, որին ի պատասխան՝ իրավաբանը հայտնել է, որ բժշկական գործունեության բոլոր տեսակները լիցենզավորման ենթակա են, բացառություն են կազմում բուսաբուժությունը, տգրուկաբուժությունը, ասեղնաբուժությունը, և դրանց նկատմամբ հսկողություն չի իրականացվում:

Այնուհետև փաստաբան Տաթև Սարգսյանը մանրամասնեցրել է, որ Ստեփան Բաղդասարյանը խորհուրդ է տվել ձկներով բուժում իրականացնել՝ նշելով, որ դեղնությունը կանցնի ձկներին: Արձագանքելով այս տեղեկությանը՝ Հասմիկ Աբովյանը նշել է. «Խայտառակություն է ուղղակի, լսել հնարավոր չէ»: Ընդ որում, Սուրեն Նիկողոսյանը նաև հայտնել է, որ իր որդին լողավազան չի գնացել, ինչպես որ նշել էր Ստեփան Բաղդասարյանը:

Ի պատասխան Հասմիկ Աբովյանի այն հարցին, թե ինչն է իրենց ստիպել դիմել հեքիմին, չէ որ իրենք գոհ էին գիտական բուժման ընթացքից, միթե իրենք չգիտեին, որ կան շաքարային դիաբետի տեսակներ, երբ մարդու օրգանիզմն այլևս չի արտադրում ինսուլին, իսկ առանց ինսուլինի՝ մարդը չի կարող ապրել, նրանք մահանում են առանց ինսուլինի, Սուրեն Նիկողոսյանը հայտնել է. «Էդ մարդը, եթե Դուք էլ իր դեմը կանգնեք, խոսեք, կարող է Ձեզ էլ համոզի, տանի իր մոտ բուժման»: Արձագանքելով այս արտահայտությանը՝ Հասմիկ Աբովյանը նշել է. «Ինձ չի կարող համոզել այդ մարդը, որովհետև նաև տգետ է և հանցագործ»:

Որպես հաղորդման ամփոփում՝ հաղորդավարը նշել է, որ հաղորդման նպատակը հասարակության լայն շերտերի իրազեկումն էր բուսաբուժության բացասական հետևանքների մասին (**հատոր 1-ին, գ.թ. 8, տեսաձայնագրություն**):

2) «Քրեական հետապնդումը դադարեցնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին» 17.11.2016 թվականի որոշման համաձայն՝ Ստեփան Բաղդասարյանը, չունենալով բարձրագույն բժշկական կրթություն, երկար տարիներ զբաղվել է բուսաբուժությամբ և բժշկական ծառայություններ մատուցել քաղաքացիներին: 01.07.2014 թվականին Ստեփան Բաղդասարյանի բուժօգնությանն է դիմել Հովհաննես Նիկողոսյանը շաքարային դիաբետ 1-ին տիպի ախտորոշմամբ: «Ստեփան Բաղդասարյանի կողմից Հովհաննես Նիկողոսյանին շուրջ 2 ամսից ավելի տրվել են ոչ նպատակային, կիրառման համար գիտականորեն չհիմնավորված տեսակներով և չափաբաժիններով լորենի, օշինդր, հագարաթերթիկ, մարիամախոտ, երիցուկ, ձիաձեթ, կոատուկի արմատներ, կզմուղ հեղինների արմատներ, եղինջ, կատվալեզու եռաբուժակ և այլ դեղաբույսեր, բացատրել դրանց պատրաստման և օգտագործման եղանակները՝ փաստացի անձամբ բուժելով վերջինիս և չնախատեսելով Հովհաննես Նիկողոսյանին մահ պատճառելու հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դա, քանի որ բացակայել

է Հովհաննես Նիկողոսյանի նկատմամբ ձեռնարկված գործողությունների բնույթի գիտական հիմնավորվածությունը՝ նրա մոտ եղած հիվանդության՝ թիվ 1 տիպի շաքարային դիաբետի առկայության պայմաններում, որի հետևանքով էլ Հովհաննես Նիկողոսյանի վիճակը վատացել է, և վերջինս 06.10.2014 թվականին «Էրեբունի» ԲԿ-ում մահացել է օրգանիզմի ընդհանուր ինքնաթունավորումից, բազմաօրգանային անբավարարությունից»:

Ըստ որոշման՝ Ստեփան Բաղդասարյանը չի առարկել, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու համար օրենքով նախատեսված ժամկետներն անցնելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 10-12**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ դատարանի կիրառած նյութական իրավունքի նորմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի մեկնաբանության և մասնավորապես «գնահատողական դատողություն» եզրույթի իրավական ընկալման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի այնպիսի խախտում, որով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ գրպարտության հետևանքով անձի պարվին, արժանապարտությանը կամ գործարար համբավին պարճատված վնասի հարուցման գործերով «գնահատողական դատողություն» եզրույթի իրավական ընկալմանը՝ կարծիքի արտահայտման ազատության լույսի ներքո՝ զարգացնելով նախկինում հայտնած իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց

պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև **այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու**, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ նույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Հանտ Երիզազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի, բովանդակային առումով վերջինիս փոխկապված և պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների հայեցողական լիազորության ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից սահմանված չափորոշիչները խոսքի ազատության իրավունքի և դրա սահմանափակումների վերաբերյալ, մասնավորապես.

1. խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով,
2. դրանք պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում,
3. դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ,
4. կիրառված սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող իրավաչափ նպատակներին:

Մեկնաբանելով «Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում և համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակներին» պայմանները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի

մեկնաբանմանը, բազմիցս նշել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ, իսկ վերջինիս սահմանները կախված են գործի բնույթից: Բոլոր այն դեպքերում, երբ արձանագրվում է միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով երաշխավորված ազատություններին և իրավունքներին, եվրոպական կառույցները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն, ինչը պայմանավորված է այդ իրավունքների կարևորությամբ (*լրեն՝ «Աուրորնիկ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 22.05.1990 թվականի վճիռը, կետ 61, «Գրուպերա ոսդիո» բաժնետիրական ընկերությունը և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 28.03.1990 թվականի վճիռը, կետ 61*):

Նույն որոշմամբ անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,
2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,
3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,
4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողությունների և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ (*լրեն՝ Դյուլդին և Կիսովը ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կետ 44*):

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը զրպարտության դեպքում հավասարապես կիրառելի է համարել վիրավորանքի դեպքում «հրապարակային ներկայացնել», «փաստեր» և «գնահատողական դատողություններ» եզրույթներին տրված մեկնաբանությունները:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է **բացասական կարծիքի կամ գնահատող դատողության արտահայտումն այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել, գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել:** Գնահատող դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Այնուամենայնիվ, երբ հայտարարությունը որակվում է որպես գնահատող դատողություն, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի բավարար փաստական կազմի վրա (*լրեն՝ Պերերսները և Բաստազասարոն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 76*): Գնահատողական դատողությունը կարող է անընդունելի համարվել, քանի որ այն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված համարվել (*լրեն՝ Ռիգոսը և Դասկյանն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 27.05.2004 թվականի վճիռը, կետ 45*):

Անդրադառնալով «Ստույգ փաստեր» եզրույթին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այդպիսիք հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով

տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստերի և գնահատող դատողությունների տարբերակման խնդրին, քանի որ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում գործի քննության համար և մեծապես կարող են ազդել գործի ելքի վրա: Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով նշված խնդրին, հստակ տարանջատում է կատարում **փաստերի և գնահատող դատողությունների** միջև, որի վերաբերյալ ձևավորել է հետևյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է, և նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է:» (յրենս *Լինգենան ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը*, կետ 46):

Վերոգրյալից զատ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ **գնահատող դատողությունը, դիտարկելով որպես կարծիքի ազատ արտահայտման, այլ ոչ թե տեղեկություններ տարածելու իրավունքի դրսևորում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնել այն, թե արդյոք տվյալ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա:** Փաստական հիմքից զուրկ գնահատող դատողությունը պաշտպանված չէ պետական միջամտությունից: ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նաև նրանով, որ անդրադառնալով նշված հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական կարծիքը կարող է չափազանցված համարվել՝ հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում (յրենս *Օբերշլիբե ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը*, կետ 33):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ **պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՛ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում** (յրենս թիվ *ԼԳ/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ «գնահատողական դատողություն» եզրույթի իրավական ընկալմանը՝ կարծիքի արտահայտման ազատության լույսի ներքո՝ այդ թվում ներկայացնելով այդ կապակցությամբ Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները:

Այսպես, Եվրոպական դատարանի գնահատմամբ կարծիքի արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության ամենակարևոր հիմնասյուններից է, ժողովրդավարության զարգացման և յուրաքանչյուր անձի ինքնադրսևորման հիմնական պայմաններից մեկը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի հաշվառմամբ՝ այն կիրառվում է ոչ միայն այն տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք կարող են ընկալվել դրական կամ դիտարկվել որպես անվնաս կամ անտարբեր, **այլ նաև այնպիսի տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք վիրավորում են, ցցում կամ անհանգստացնում:** Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և տեսակետների բազմազանության պահանջները, առանց որոնց՝ «ժողովրդավարական հասարակությունը» չի կարող գոյություն ունենալ: Ինչպես սահմանված է 10-րդ հոդվածում, այդ ազատությունից կարող են լինել բացառություններ, որոնք, սակայն, պետք է խստորեն մեկնաբանվեն, և որևէ սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով ապացուցվի (յրենս *Bédat v. Switzerland (IGC) (զանգար թիվ 56925/08) գործով Եվրոպական դատարանի 29.03.2016 թվականի վճիռը*, կետ 48):

Եվրոպական դատարանը նաև կարևորել է, որ պետք է հստակ տարանջատում մտցվի քննադատության և վիրավորանքի միջև, և վերջինը, որպես կանոն, կարող է հանգեցնել պատասխանատվության կիրառման (*յրենու Palomo Sánchez and Others v. Spain [GC] (զանգասար թիվ 28955/06, 28957/06, 28959/06 և 28964/06) գործով Եվրոպական դատարանի 12.09.2011 թվականի վճիռը, կետ 67*): Իրավախախտում թույլ տալը կարող է դուրս գալ կարծիքի արտահայտման ազատության պաշտպանության սահմաններից, եթե այն հավասարազոր է անհիմն զրպարտությանը, օրինակ, այն ժամանակ, երբ արատավորող տեղեկության միակ նպատակը անձին վիրավորելն է: Այդուհանդերձ, ոչ կոռեկտ արտահայտությունների օգտագործումն ինքնին որոշիչ չէ արատավորող տեղեկությունների գնահատման համար, քանի որ այն կարող է պարզապես ծառայել ոճային նպատակներով: Եվրոպական դատարանի համար ոճը հաղորդակցման մաս է՝ որպես արտահայտման ձև և որպես այդպիսին պաշտպանվում է արտահայտության բովանդակության հետ միասին (*յրենու Uj v. Hungary (զանգասար թիվ 23954/10) գործով Եվրոպական դատարանի 19.07.2011 թվականի վճիռը, կետ 20*):

Բացի այդ, Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածների հարաբերակցությանը, արձանագրել է, որ անձի համբավի պաշտպանության իրավունքը Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունք է՝ որպես անձնական կյանքի հարգման տարր (*յրենու Denisov v. Ukraine [GC], (զանգասար թիվ 76639/11) գործով Եվրոպական դատարանի 25.09.2018 թվականի վճիռը, կետ 97*): «Անձնական կյանք» արտահայտությունը լայն հասկացողություն է, որը հնարավոր չէ սպառնիչ բնութագրել, այն ներառում է նաև մարդու հոգեբանական բարեկեցությունը և արժանապատվությունը: Այդուհանդերձ, որպեսզի 8-րդ հոդվածը գործի, անձի համբավի վրա ոտնձգությունը պետք է հասած լինի **լրջության որոշակի աստիճանի**, ընդ որում այնպիսի եղանակով, որպեսզի այն վնաս հասցնի անձի անձնական կյանքի հարգման իրավունքի իրականացմանը (*յրենու Axel Springer AG v. Germany [GC] (զանգասար թիվ 39954/08) գործով Եվրոպական դատարանի 07.02.2015 թվականի վճիռը, կետ 83, Medžlis Islamske Zajednice Brčko and Others v. Bosnia and Herzegovina [GC] (զանգասար թիվ 17224/11) գործով Եվրոպական դատարանի 27.07.2017 թվականի վճիռը, կետ 75, Beizaras and Levickas v. Lithuania (զանգասար թիվ 41288/15) գործով Եվրոպական դատարանի 14.01.2020 թվականի վճիռը, կետ 117*): Մյուս կողմից, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա չի կարելի հենվել՝ բարձրացնելով համբավի կորստի հարց, **որը սեփական գործողությունների կանխատեսելի հետևանքն է (ինչպես, օրինակ, քրեական օրենսդրությամբ սահմանված հանցագործության կատարումը)** (*յրենու Axel Springer AG v. Germany [GC] (զանգասար թիվ 39954/08) գործով Եվրոպական դատարանի 07.02.2015 թվականի վճիռը, կետ 83, Denisov v. Ukraine [GC], (զանգասար թիվ 76639/11) գործով Եվրոպական դատարանի 25.09.2018 թվականի վճիռը, կետ 98*):

Եվրոպական դատարանը փաստել է, որ պետությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքով մի անձի իրավունքը պաշտպանելու իր պոզիտիվ պարտականությունն իրականացնելու համար ստիպված է ինչ-որ աստիճանով սահմանափակել այլ անձի իրավունքները, որոնք երաշխավորված են Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Ժողովրդավարական հասարակությունում նման սահմանափակումների անհրաժեշտությունը «այլ անձանց համբավը կամ իրավունքները պաշտպանելու» շահերից ելնելով գնահատելիս՝ Եվրոպական դատարանը ստուգում է, թե արդյոք ազգային իշխանություններն արդարացի հավասարակշռություն ապահովել են Կոնվենցիայով երաշխավորված երկու արժեքների միջև, որոնք կարող են հակասության մեջ լինել որոշ դեպքերում, մասնավորապես, մի կողմից՝ 10-րդ հոդվածով պաշտպանվող կարծիքի արտահայտման ազատությունը, և մյուս կողմից՝ 8-րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքի հարգման իրավունքը (*յրենու Bédat v. Switzerland ([GC] (զանգասար թիվ 56925/08) գործով Եվրոպական դատարանի 29.03.2016 թվականի վճիռը, կետ 74*): Ընդ որում, անդրադառնալով «գնահատողական դատողությունների» և «փաստերի» արտահայտման տարբերակման կարևորությանը՝ Եվրոպական դատարանը նաև ընդգծել է, որ տարանջատման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գործի փաստական

հանգամանքներին և արված դիտողությունների ընդհանուր տոնին՝ նկատի ունենալով, որ **հանրային նշանակություն ունեցող գործերով դիտողությունները կարող են իրականում լինել գնահատողական դատողություններ**, ոչ թե ներկայացված փաստեր (յրև՝ *Morice v. France [GC]*, (զանգար թիվ 29369/10) գործով Եվրոպական դատարանի 23.04.2015 թվականի վճիռը, կետ 126):

Միաժամանակ Եվրոպական դատարանը սահմանել է մի շարք չափանիշներ, որոնց համապատասխան կարծիքի արտահայտման ազատությունը հավասարակշռվում է մասնավոր կյանքի հարգման իրավունքի հետ, այդ թվում՝

- 1) վիճարկվող արտահայտությունը նպաստել է արդյոք ընդհանուր շահի քննարկմանը,
- 2) որքանով է հայտնի շահագրգիռ անձը և ո՞րն է հրապարակման առարկան,
- 3) շահագրգիռ անձի նախորդ վարքագիծը,
- 4) տեղեկատվության ստացման միջոցը և դրա արժանահավատությունը,
- 5) հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները,
- 6) կիրառված պատասխանատվության խստությունը (յրև՝ *EDITORIAL BOARD OF GRIVNA NEWSPAPER v. UKRAINE* (զանգանարներ թիվ 41214/08 և 49440/08) գործով Եվրոպական դատարանի 16.04.2019 թվականի վճիռը, կետ 97):

Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ գնահատող դատողություններին այն դեպքում, երբ դրանք առերևույթ պարունակում են զրպարտությանը բնորոշ տարրեր:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ վիրավորանքի և զրպարտության հետևանքով անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գործերով Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու նպատակով կարևոր է պարզել կարծիք արտահայտած անձի իրական մտադրությունը, այսինքն՝ արդյո՞ք այն ուղղված է եղել անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելուն, թե՞ որոշակի հարցի վերաբերյալ իր տեսակետն արտահայտելուն (թեկուզև դրա արդյունքում որոշակի ոտնձգություն է տեղի ունեցել այլ անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին): Իրական մտադրությունը բացահայտելու համար էական նշանակություն կարող են ունենալ կարծիքի արտահայտմանը նախորդած վարքագիծը, այն միջավայրը, որտեղ արտահայտվել է տեսակետը, այն հանգամանքը, թե իր կարծիքն արտահայտող անձն ինչ տեղեկատվության հիման վրա է արտահայտել իր կարծիքը և այլն:

Հետևաբար որևէ արտահայտության կամ բառի վիրավորական կամ զրպարտող իմաստ ունենալը, ոչ կոռեկտ լինելն ինքնաբերաբար չի կարող հանգեցնել պատասխանատվության, եթե պահպանված են կարծիքի արտահայտման ազատության սահմանները, և կարծիքի արտահայտման նպատակը հասցեատիրոջը վիրավորելը կամ զրպարտելը չէ: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կարևոր է նաև կարծիք արտահայտողի նպատակի օբյեկտիվ ընկալումը՝ մասնավորապես այն հանգամանքը, թե հասարակության միջին վիճակագրական անդամը կրնալի արդյոք այդ կարծիքը՝ որպես այլ անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի արատավորման ուղղակի նպատակ ունեցող, թե որպես փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություն, սեփական կարծիք՝ որոշակի դեպքերի, իրադարձությունների կամ անձանց վարքագծի վերաբերյալ (այլ կերպ ասած՝ քննադատություն): Ընդ որում, նմանատիպ գործերով էական նշանակություն ունի հենց զրպարտչական բնույթի փաստական տվյալների տարբերակումը փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություններից:

Այսպիսով, նաև հիմք ընդունելով Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ որևէ արտահայտություն որպես զրպարտություն դիտարկելիս անհրաժեշտ է նաև պարզել արատավորող տվյալներ հրապարակող անձի իրական մտադրությունը, տվյալներ հրապարակելուն նախորդած

հանգամանքները, տվյալները հրապարակած և տուժող անձանց վարքագիծը մինչև արտահայտություն հրապարակելը, տվյալների բովանդակությունը և մասնավորապես հանրության համար դրանց հետաքրքրություն ունենալը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հանրային հեռուստաընկերության «Առաջին տաղավար» հաղորդման 14.03.2018 թվականի եթերը վերաբերել է բուսաբուծությանը (հեքիմությանը): Հաղորդմանը որպես հյուր հրավիրվել է Սուրեն Նիկողոսյանը, ում հանգուցյալ որդու՝ Հովհաննես Նիկողոսյանի նկատմամբ ոչ գիտական մեթոդներով բուժում է իրականացրել Ստեփան Բաղդասարյանը: Նախքան Սուրեն Նիկողոսյանի խոսքը՝ հաղորդավարը, շնորհակալություն հայտնելով Սուրեն Նիկողոսյանին՝ հաղորդմանը ներկայանալու համար, նշել է, որ վերջինիս ներկայության նպատակն է «**գերծ պահել բոլոր մարդկանց, ում մտքով երբևէ կանցնի կրկին ոչ ապացուցողական բժշկությանը դիմել և հանգել այսպիսի արդյունքների**»: Ընդ որում, որպես հաղորդման ամփոփում՝ նշվել է, որ հաղորդման նպատակը հասարակության լայն շերտերի իրագրելուն էր բուսաբուծության բացասական հետևանքների մասին:

Հաղորդման ընթացքում Սուրեն Նիկողոսյանը և վերջինիս փաստաբան Տաթև Սարգսյանը ներկայացրել են Սուրեն Նիկողոսյանի որդու հիվանդության պատմությունը, հեքիմ Ստեփան Բաղդասարյանի կողմից որդու նկատմամբ իրականացրած ոչ գիտական բուժման մանրամասները, որը հանգեցրել է մահվան: Մասնավորապես Սուրեն Նիկողոսյանի փաստաբան Տաթև Սարգսյանը նշել է, որ Ստեփան Բաղդասարյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, աշխատանքային պայմանագիր է կնքել բժիշկ թերապևտ Լուսինե Խաչատրյանի հետ, ստացել է ընդհանուր թերապևտիկ լիցենզիա, սակայն սույն դեպքում իրականացրել է ներգատաբանական տիպի գործունեություն, ինչը դուրս է իր լիցենզիայի շրջանակներից: Արդյունքում Սուրեն Նիկողոսյանի որդու մոտ առաջացել է տոքսիկ հեպատիտ, ինչը հանգեցրել է մահվան, որը, ըստ փորձաքննության արդյունքների, ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում բուժման մեթոդների հետ:

Հաղորդման ժամանակ ներկայացվել է նաև Ստեփան Բաղդասարյանի տեսակետը (հեռախոսագրույցի ձայնագրությունը), ով, մասնավորապես, հայտնել է. «Ես էլ խորհուրդ տվի՛ կենդանի ձուկ առ, տար տուն, գցիր թասի մեջ, ջուրը լիքը, թող ինքը լողանա: Հենց բռնեց, ձուկը կղեղնի, կատակի, քո գույնը օր օրի կբացվի»: Ստեփան Բաղդասարյանի հեռախոսագրույցի ձայնագրությունը լսելուց հետո Հասմիկ Աբովյանը հստակեցնող հարց է տալիս, թե արդյոք Ստեփան Բաղդասարյանը բժիշկ է, որին ի պատասխան՝ Տաթև Սարգսյանը հայտնում է, որ Ստեփան Բաղդասարյանը բժիշկ չէ, իսկ թերապևտ Լուսինե Խաչատրյանի վերաբերյալ առկա է քրեական գործ՝ բժշկի կողմից բժշկական օգնություն և սպասարկում պատշաճ չիրականացնելու հանցակազմով, բացի այդ, Ստեփան Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Այնուհետև բժիշկ Հասմիկ Աբովյանը մանրամասն ներկայացրել է բույսերի և դեղերի օգտակարության, վնասակարության և դրանցով բուժման հետևանքների մասին, ինչպես նաև ներկայացրել խոտաբույսերով բուժման մահացու լինելու հնարավորության մասին:

Պատասխանելով լրագրողի այն հարցին, թե արդյոք պահանջել է լիցենզիա Ստեփան Բաղդասարյանից, Սուրեն Նիկողոսյանը հայտնել է, որ ընդհանուր թերապևտիկ լիցենզիան և բժիշկ Լուսինե Խաչատրյանի առկայությունն իրենց շփոթության մեջ են գցել: Հաղորդավարը հնչեցրել է կարծիք, որ փաստորեն որպես խայծ է օգտագործվել Լուսինե Խաչատրյանի լիցենզիան:

Ի պատասխան Հասմիկ Աբովյանի այն հարցին, թե ինչն է իրենց ստիպել դիմել հեքիմին, չէ որ իրենք գոհ էին գիտական բուժման ընթացքից, միթե իրենք չգիտեին, որ կան շաքարային դիաբետի տեսակներ, երբ մարդու օրգանիզմն այլևս չի արտադրում ինսուլին, իսկ առանց ինսուլինի՝ մարդը չի կարող ապրել, նրանք մահանում են առանց ինսուլինի, Սուրեն Նիկողոսյանը հայտնել է. «Էդ մարդը, եթե Դուք էլ իր դեմը կանգնեք, խոսեք, կարող է Ձեզ էլ համոզի, տանի իր մոտ բուժման»: Արձագանքելով այս արտահայտությանը՝

Հասմիկ Աբովյանը նշել է. «Ինձ չի կարող համոզել այդ մարդը, որովհետև նաև տգետ է և հանցագործ»:

Դատարանը հայցը մերժել է՝ նախ և առաջ արձանագրելով, որ անձի վերաբերյալ բացասական կարծիք հայտնելն ինքնին բավարար չէ այն վիրավորանք գնահատելու համար, և «տգետ» արտահայտությունը Հասմիկ Աբովյանի անձնական, բացասական գնահատականն է Ստեփան Բաղդասարյանի կողմից առանց համապատասխան կրթության և գիտականորեն չհիմնավորված և ավանդական, ապացուցողական բժշկության կողմից մերժվող մեթոդներով իրականացվող գործողություններին կամ բուժմանը: Անդրադառնալով գրպարտության հետևանքով պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջին՝ Դատարանը փաստել է, որ «հանցագործ» եզրույթն ինքնին չի ենթադրում կոնկրետ, հստակ տեղեկություններ այս կամ այն գործողությունը կամ անգործությունը դրսևորելու մասին: Դատարանը գտել է, որ Հասմիկ Աբովյանի կողմից եզրույթի վկայակոչումը չի բավարարում և հաղթահարում արտահայտության վերացական չլինելու չափանիշը՝ նկատի ունենալով, որ հնարավորություն չի տալիս հստակ պարզելու, թե ինչ գործողությունների կամ անգործության դրսևորում է վերագրվում հայցվորին, որպեսզի պարզվի նաև դրանց իրականությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու և անձի պատիվը, արժանապատվությունը և բարի համբավն իրականում գրպարտության միջոցով արատավորելու հարցերը: Ոստի Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից չի ապացուցվել իր վերաբերյալ փաստացի տվյալների հրապարակման փաստը, ինչն արդեն իսկ հիմք է բացառելու արտահայտության՝ գրպարտություն հանդիսանալու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել «տգետ» բառի՝ որպես վիրավորանք գնահատելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումներն այն մասին, որ տվյալ դեպքում առկա է բավարար փաստական կազմի վրա հիմնված գնահատողական դատողություն: Անդրադառնալով գրպարտության հետևանքով պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի վերաբերյալ Դատարանի եզրահանգումներին՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ «հանցագործ է» արտահայտությունն իր մեջ պարունակում է կոնկրետ, հստակ տեղեկություններ կոնկրետ անձի կողմից որոշակի գործողության, մասնավորապես՝ առանձին հանցանքի կատարման վերաբերյալ: Հիմք ընդունելով անմեղության կանխավարկածը և արված հայտարարությունների կապակցությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի բացակայությունը՝ Վերաքննիչ դատարանն արված արտահայտությունը համարել է արատավորող և գրպարտչական բնույթ կրող: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի՝ որպես գրպարտության համար փոխհատուցման ողջամիտ գումար, ենթակա է բռնագանձման 200.000 ՀՀ դրամ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ կոնկրետ արտահայտության՝ գրպարտություն գնահատելու չափանիշների առկայությունը որոշելիս պետք է գնահատել դրանց առկայությունը հենց արտահայտության հրապարակման ժամանակ: Այլ կերպ ասած՝ պետք է պարզել, թե արդյոք արտահայտությունն անելու ժամանակ այդ արտահայտությունը պարունակել է անձի որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ կոնկրետ, հստակ տեղեկություններ, արդյոք այդ փաստացի տվյալները ներկայացվել են հրապարակային, արդյոք դրանք համապատասխանել են իրականությանը և արդյոք դրանք իրականում արատավորել են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Բացի այդ, անհրաժեշտ է հստակ տարանջատել փաստական հիմք ունեցող գնահատողական դատողությունները գրպարտող բնույթի փաստական տվյալներից՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումները:

Սույն գործով ներկայացված տեսանյայնագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաղորդումն ունեցել է հստակ ուղղվածություն՝ հանրությանը տեղեկացնել բուսաբուժություն, հեքիմության բացասական և անդառնալի հետևանքների մասին:

Հաղորդմանը ներկա հյուրերը ներկայացրել են տարբեր տեղեկություններ բուսաբուծության վերաբերյալ: Հասմիկ Աբովյանը որևէ կոնկրետ տվյալ չի ներկայացրել Ստեփան Բաղդասարյանի գործողությունների վերաբերյալ, ավելին՝ Հասմիկ Աբովյանը հաղորդման ընթացքում է տեղեկացել Ստեփան Բաղդասարյանի կողմից ընտրված բուծման մեթոդների, բժշկական կրթություն և բժշկական գործունեություն իրականացնելու լիցենզիա չունենալու մասին: Ամբողջ հաղորդման ընթացքում Հասմիկ Աբովյանը՝ որպես որակավորված բժիշկ, փորձել է բացատրել գիտական բժշկության և ավանդական բժշկության տարբերությունները, այդ թվում՝ նկարագրել է ծանր աստիճանի շաքարային դիաբետի բուծման գիտական մեթոդի էությունը: Ավելին, տեսաձայնագրության ուսումնասիրությունից հստակ երևում է Հասմիկ Աբովյանի էմոցիոնալ արձագանքը Ստեփան Բաղդասարյանի կողմից ընտրված բուծման մեթոդների, ոչ գիտական մեթոդներով բուծման անդառնալի հետևանքների կապակցությամբ (հատկապես այն ժամանակ, երբ տեղեկանում է «ձկներով բուծման» մասին):

Այս ամենը Վճռաբեկ դատարանի մոտ ձևավորում է համոզմունք այն մասին, որ Հասմիկ Աբովյանը, ցանկանալով հանրությանը բացատրել ոչ գիտական մեթոդներով բուծման հնարավոր անդառնալի հետևանքների մասին, նպատակ չի ունեցել արատավորել Ստեփան Բաղդասարյանի համբավը, այլ իր բացասական գնահատականը, քննադատությունը, հետևաբար՝ գնահատողական դատողությունն է արտահայտել Ստեփան Բաղդասարյանի վարքագծին՝ ունենալով բավարար փաստական հիմք:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Հասմիկ Աբովյանը՝ լինելով բժիշկ և չհանդիսանալով իրավաբան, պարտավոր չէր գիտակցել հնչեցված արտահայտության իրավական բովանդակությունը: Ավելին, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հաղորդման ընթացքում Հասմիկ Աբովյանի հնչեցրած արտահայտությանը նախորդել են քրեական գործի վերաբերյալ Սուրեն Նիկողոսյանի և Տաթև Սարգսյանի ներկայացրած տվյալները, այդ թվում՝ այն, որ քրեական գործը կարճվել է քրեական պատասխանատվության ելթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Ուստի Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Հասմիկ Աբովյանի հնչեցրած «հանցագործ» արտահայտությունը փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություն է Ստեփան Բաղդասարյանի վարքագծին: Նման հետևության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ինչպես իր, այնպես էլ Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները՝ մասնավորապես այն, որ տուժողը չի կարող հավակնել ամբողջ ծավալով պաշտպանվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով, եթե իր հասցեին հնչեցված արտահայտություններն իր՝ միջին վիճակագրական քաղաքացու տեսանկյունից բացասական գործողությունների հետևանք են, իսկ հրապարակված տեղեկությունները հանրային լայն շրջանակների համար հետաքրքրություն են ներկայացնում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, խիստ կարևորելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով երաշխավորված մարդու բարձրագույն արժեք լինելը և մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք լինելը, այդուհանդերձ գտնում է, որ կարծիքի արտահայտման ազատությունը չպետք է ենթարկվի այնպիսի սահմանափակումների, որոնք հանգեցնեն այդ իրավունքի փաստացի անիրացվելիության: Սույն գործով Հասմիկ Աբովյանը, ով մասնագիտությամբ բժիշկ է, ոչ իրավաբան և պարտավոր չէր իրապես պատկերացնել արված արտահայտության իրավական բովանդակությունը, ոչ թե հնչեցված արտահայտությամբ նպատակ է ունեցել խախտել անմեղության կանխավարկածի սկզբունքը և արատավորել Ստեփան Բաղդասարյանի պատիվն ու արժանապատվությունը, այլ ունենալով բավարար փաստական հիմք՝ ներկայացրել է իր բացասական կարծիքը (քննադատությունը) Ստեփան Բաղդասարյանի արարքին:

Նկատի ունենալով մի կողմից անձի պատվի և արժանապատվության պահպանման անհրաժեշտությունը և մյուս կողմից կարծիքի արտահայտման ազատության իրական երաշխիքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից չի ապահովվել արդարացի հավասարակշռություն երկու հիմնարար իրավունքների միջև, և Հասմիկ Աբովյանի կարծիքի արտահայտման ազատությունն անհարկի

սահմանափակվել է: Նախ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «հանցագործ» արտահայտությունն ինքնին չի հաղթահարում վերացական չլինելու արգելքը, և երկրորդ՝ արված արտահայտությունը հաղորդման շրջանակներում նպատակ չի ունեցել արատավորել Ստեփան Բաղդասարյանի պատիվն ու արժանապատվությունը, այլ պարզապես եղել է Հասմիկ Աբովյանի գնահատողական դատողությունը մինչև այդ իր լսած տեղեկություններին՝ Ստեփան Բաղդասարյանի վարքագծի վերաբերյալ:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ Հասմիկ Աբովյանը «տգետ» և «հանցագործ» արտահայտությունները հնչեցրել է հաջորդաբար՝ արձագանքելով մինչև այդ իր լսած տեղեկություններին՝ Ստեփան Բաղդասարյանի կողմից իրականացրած բուժման մեթոդների և վերջինիս վերաբերյալ առկա քրեական գործի մանրամասների վերաբերյալ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը մի արտահայտությունը համարել է գնահատողական դատողություն, իսկ մյուս արտահայտությունը՝ զրպարտություն՝ անտեսելով, որ երկու արտահայտություններն էլ հնչեցվել են որպես ստացած տեղեկությունների անմիջական արձագանք՝ այդպիսով արտահայտելով Հասմիկ Աբովյանի կարծիքը, քննադատությունը, գնահատողական դատողությունը Ստեփան Բաղդասարյանի վարքագծի վերաբերյալ:

Ոստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհարկի սահմանափակում է Հասմիկ Աբովյանի կարծիքի արտահայտման ազատությունը, չի ապահովում անձի անձնական կյանքի հարգման իրավունքի և կարծիքի արտահայտման ազատության միջև արդարացի հավասարակշռությունը, ավելին՝ փաստացի հանգեցնում է Հասմիկ Աբովյանի կարծիքի ազատ արտահայտման իրավունքի անիրացվելիության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, մասնավորապես՝ կարծիքի ազատ արտահայտման իրավունքը սահմանափակվել է այն աստիճան, որ հանգեցրել է այդ իրավունքի փաստացի անիրացվելիության՝ արդյունքում նաև խաթարելով արտահայտությունը զրպարտություն համարելու չափանիշների բուն էությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է միայն Հասմիկ Աբովյանի կողմից՝ հայցը մասնակի բավարարելու

մասով, իսկ հայքը մերժելու մասով որոշումը չի բողոքարկվել: Ուստի Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայում է միայն հայքը մասնակի բավարարելու մասով:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ (...) դատարանի դատական ակտերի դեմ (...) վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

(...) 7. դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝

ա) դրամական պահանջի գործերով՝ հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Մույն գործով Հասմիկ Աբովյանի կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարվել է 20.000 ՀՀ դրամ, մինչդեռ վճարման էր ենթակա 10.000 ՀՀ դրամ՝ որպես դրամական պահանջի գործերով վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի նվազագույն գումար՝ նկատի ունենալով, որ բողոքարկված դատական ակտով Հասմիկ Աբովյանից հոգուտ Ստեփան Բաղդասարյանի պետք է բռնագանձվեր 200.000 ՀՀ դրամ ($200.000 * 3/100 = 6.000$): Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի հիմքով ավելի վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամը, ենթակա է վերադարձման Հասմիկ Աբովյանին:

Միաժամանակ նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է մասնակի բեկանման, և օրինական ուժ է տրվում Դատարանի 16.08.2019 թվականի վճռին, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ստեփան Բաղդասարյանից հոգուտ Հասմիկ Աբովյանի պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Բացի այդ, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշման մասնակի բեկանման արդյունքում բեկանվում է նաև որոշման՝ հայքը մասնակի բավարարելու մասով պետական տուրքի բաշխման մասը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ստեփան Բաղդասարյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 6.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 18.10.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշման՝ Ստեփան Բաղդասարյանի հայցը մասնակիորեն բավարարելու՝ Հասմիկ Աբովյանի կողմից Ստեփան Բաղդասարյանին ուղղված «հանցագործ է» արտահայտությունը որպես գրպարտություն որակելու և Հասմիկ Աբովյանից հոգուտ Ստեփան Բաղդասարյանի 200.000 ՀՀ դրամ՝ որպես գրպարտության հետևանքով պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցում, բռնագանձելու մասերը, ինչպես նաև դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման՝ Հասմիկ Աբովյանից հոգուտ Ստեփան Բաղդասարյանի 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, 6.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար և 5.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար բռնագանձելու, Հասմիկ Աբովյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության 6.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված և հետաձգված պետական տուրքի գումար բռնագանձելու մասերը, և այդ մասերով օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.08.2019 թվականի վճռին:

2. Ստեփան Բաղդասարյանից հոգուտ Հասմիկ Աբովյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ստեփան Բաղդասարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 6.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.10.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Վճռաբեկ բողոքի համար ավել վճարված պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/3780/02/17
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԲԳ/3780/02/17
Նախագահող դատավոր՝	Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝	Ա. Մկրտչյան Մ. Հարթենյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴԻՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով Միխայի Աղայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Միխայի Աղայանի ընդդեմ Գարիկ Բոշյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Միխայի Աղայանը պահանջել է Գարիկ Բոշյանից բռնագանձել 11.416.397 ՀՀ դրամ՝ որպես անհիմն հարստացում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Շահնազարյան) (այսուհետ՝ Դատարան) 31.07.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Գարիկ Բոշյանից բռնագանձել 10.860.957 ՀՀ դրամ: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.01.2019 թվականի որոշմամբ Գարիկ Բոշյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 31.07.2018 թվականի վճիռը՝ հայցը բավարարելու մասով, բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միխայի Աղայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գարիկ Բոշյանի ներկայացուցիչ Նորայր Յուզբաշյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը, 1099-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 9-րդ, 66-րդ, 381-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով առկա է անհիմն հարստացում, ոչ թե՛ գույքի ձեռքբերման, այլ՝ գույքի խնայման եղանակով: Ընդ որում, այդ փաստարկը ներկայացրել էր հայցվորը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններում առանց որևէ հիմնավորման գույքի ձեռքբերում և գույքի խնայում հասկացությունները նույնացվել են: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորի բնակարանի անբաժանելի բարելավումները կատարվել են ոչ թե՛ ի կատարումն պատասխանողի հանդեպ գոյություն չունեցող որևէ պարտավորության, որի գոյության մասին հայցվորը գիտեր, այլ իր դատեր՝ Նինա Աղայանի համար, վերջինիս կյանքի պայմանները բարելավելու նպատակով:

Բողոք բերած անձի վարքագիծը չի կարող բարեգործություն որակվել, քանի որ ֆիզիկական անձի կողմից բարեգործությունը՝ մեկ այլ ֆիզիկական անձի «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված նպատակներով կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված նյութական և հոգևոր օգնության տրամադրումն է, որը սույն գործով առկա չէ, հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ բնակարանի վերանորոգումը բարեգործություն գնահատելու մասին, անհիմն է և չպատճառաբանված:

Բացի այդ, պատասխանող կողմը չի ապացուցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերի՝ նախապայմանների առկայության փաստը, ինչը Վերաքննիչ դատարանի կողմից ընդհանրապես հաշվի չի առնվել, և Վերաքննիչ դատարանը հաստատել է դրանց գոյությունը՝ առանց պատասխանողի կողմից ներկայացված որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույցի առկայության, հաստատել է դրանց գոյությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 31.07.2018 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը կարող է կիրառվել ոչ միայն գույքը ձեռք բերելու, այլև խնայելու դեպքում: Անհիմն հարստացման երկու տեսակների՝ գույք ձեռք բերելու կամ խնայելու դեպքում, եթե հետ պահանջող կողմն իր ակտիվ գործողություններով նպաստում է անհիմն հարստացմանը և ի սկզբանե իմանում է պարտավորության բացակայության մասին, ապա անհիմն հարստացումը երկու տեսակների պարագայում էլ պետք է վերադարձման ենթակա չլինի: Սույն գործով բողոք բերող անձն ի սկզբանե իմացել է, որ բնակարանը Նինա Աղայանին չի պատկանել, որ ինքը չի ունեցել բնակարանը վերանորոգելու պարտավորություն, բայց և այնպես վերանորոգումը կատարել է իր կամքով և ցանկությամբ: Հնարավոր չէ կատարել անբաժանելի բարելավումներ բնակարանի վրա և չիմանալ պարտավորության բացակայության մասին:

Բողոք բերող անձը նշել է, որ պատասխանող կողմը չի ներկայացրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորող ապացույցներ, մինչդեռ դա հիմնավորվում է հենց հայցվոր կողմի ներկայացրած ապացույցներով, կողմերի բացատրություններով և վկաների ցուցմունքներով:

Վճռաբեկ դատարանի կողմից, ի թիվս այլնի, կարող է անդրադարձ կատարվել հարցադրմանն առ այն, թե արդյոք առկա է անհիմն հարստացում այն ժամանակ, երբ մի

կողմը մյուս կողմի համար իր կամքով, իր ցանկությամբ և իր միջոցներով կատարել է որոշակի աշխատանքներ, ինչպես նաև տրամադրել է որոշակի գույք:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18022016-01-0013 վկայականի համաձայն՝ Երևանի Դեմիիդյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի նկատմամբ 18.02.2016 թվականին գրանցվել է Գարիկ Բոշյանի սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 39-41**):

2) «Հ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.07.2017 թվականի թիվ 42461707 եզրակացության համաձայն՝ Երևանի Դեմիիդյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման արժեքը կարող է կազմել 12.069.790 ՀՀ դրամ, որի հաշվարկում ներառված չեն խոհանոցի ներկառուցված կահույքի և խոհանոցային սարքավորումների, ինչպես նաև միջանցքի ներկառուցված զգեստապահարանի արժեքները (**հատոր 1-ին, գ.թ. 9-16**):

3) Սույն գործում առկա մի շարք տեղեկանքներից և հայտարարություններից հետևում է, որ Միխայիլ Աղայանի կողմից ձեռք են բերվել տարբեր տեսակի շինարարական և այլ տեսակի ապրանքներ, որոնք 2016 թվականի ընթացքում օգտագործվել են Երևանի Դեմիիդյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման համար (**հատոր 1-ին, գ.թ. 62-86, 150-161, հատոր 2-րդ, գ.թ. 1-6, 21-31**):

4) Պատասխանող Գարիկ Բոշյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Դեմիիդյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքները հիմնականում կատարվել են հայցվորի կողմից և չի հիշում, թե կոնկրետ, որ աշխատանքն է ինքը կատարել: Պատասխանողը նաև հայտնել է, որ ինքը դեմ չի եղել վերանորոգմանը, դա դիտել է որպես նվեր և պարտավորություն չի ստանձնել գումարը վերադարձնելու համար և միգուցե հուզական վիճակում է ասել, որ կվերադարձնի վերանորոգման գումարը (**հատոր 2-րդ, գ.թ. 65-69**):

5) Գարիկ Բոշյանի և Նինա Աղայանի էլեկտրոնային լատինատառ կարճ հաղորդագրությունների վերձանումներից հետևում է, որ Գարիկ Բոշյանն ընդունում է, որ վերանորոգման աշխատանքները կատարվել են հայցվորի կողմից և խոստանում է բնակարանի վերանորոգման համար ծախսված ամբողջ գումարը վերադարձնել հայցվորին (**հատոր 1-ին, գ.թ. 105-149**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի վերաբերյալ կարող են էական նշանակություն ունենալ տվյալ իրավադրույթի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անորատառնալ հերկյալ հարցադրմանը. արդյո՞ք գույքը կամ այլ դրամական գումարները՝ որպես անհիմն հարստացում, ենթակա են վերադարձման այն դեպքում, երբ գույքը ձեռքբերած կամ խնայած կողմը չի ներկայացրել ասպացույցներ ի հավասարումն այն հանգամանքի, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձն խնայել է իրենց միջև պարտավորության բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, ի թիվս այլնի, ծագում են նաև անհիմն հարստացման հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ նույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անհիմն հարստացման կամ խնայման միջոցով ձեռք բերված գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում ձեռք բերողը պետք է տուժողին հատուցի ձեռքբերման պահին այդ գույքի իրական արժեքը, ինչպես նաև գույքի արժեքի հետագա փոփոխությունների պատճառով ծագած վնասները, եթե ձեռք բերողն անհիմն հարստացման մասին խնայելուց հետո անմիջապես չի հատուցել գույքի արժեքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձը, ով ժամանակավորապես չի անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, կամ ուրիշի ծառայություններից, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման՝ ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները և այլ գույքը, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին կամ գույքը տրամադրել է բարեգործական նպատակներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (*ipso iure* մեծելիկա Գասպարյանն ընդդեմ Ջեյիմ Միսնոյանի թիվ ԵԱԲԳ/0455/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը տարբերակում է անհիմն հարստացման երկու տեսակ՝

1) առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի **գույքի ձեռքբերում**,

2) առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի **գույքի խնայում**:

Ըստ այդմ, գույքի ձեռքբերման դեպքում տեղի է ունենում անհիմն հարստացողի գույքի ավելացում՝ տուժողի գույքի հաշվին, իսկ գույքի խնայումը նշանակում է, որ անձը պետք է իր գույքի հաշվին կատարեր որոշակի ծախսեր, սակայն դա չի անում՝ ի հաշիվ տուժողի ծախսերի, որի արդյունքում անհիմն հարստացողի գույքի ծավալային փոփոխություն

տեղի չի ունենում: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ անհիմն հարստացման հետևանքով պարտավորությունների ծագման համար էական չէ ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց կամքը: Այլ կերպ ասած՝ անհիմն հարստացում կարող է տեղի ունենալ ինչպես ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանքով, այնպես էլ՝ նրանց կամքից անկախ: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նորմի վերլուծությունից, որի համաձայն՝ նույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ (*տես Էլզա Մուրադովան և Լարիսա Հարությունյանն ընդդեմ Ջանիբեկ Ազարյանի թիվ ԱՐԳ/1065/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վկայակոչված նորմերի բովանդակությունից բխում է, որ անհիմն հարստացման ինստիտուտը կարգավորող նորմերի կիրառման համար անհրաժեշտ և բավարար է օբյեկտիվ արդյունքի առկայությունը, այլ կերպ ասած՝ իրավաբանորեն չհիմնավորված և փաստացի գույքային օգուտի առկայությունը՝ մի կողմի համար մյուս կողմի հաշվին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորության բովանդակությունն են կազմում անհիմն հարստացողից անհիմն ձեռք բերածը պահանջելու՝ տուժողի իրավունքը և անհիմն ձեռք բերածը կամ անհիմն խնայածը վերադարձնելու՝ անհիմն հարստացողի պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի և 1099-րդ հոդվածի 4-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ անհիմն հարստացման հատկանիշների առկայության դեպքում անհիմն հարստացման արդյունքում ձեռքբերված կամ խնայված գույքը, որպես կանոն, ենթակա է վերադարձման, սակայն միաժամանակ օրենսդիրը նախատեսում է դեպքեր, երբ նույնիսկ անհիմն հարստացման հատկանիշների առկայության դեպքում ձեռքբերված կամ խնայված գույքը չի կարող վերադարձվել (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդված): Անդրադառնալով հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերից 4-րդ կետով նկարագրվածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն այդ կանոնի կիրառման համար սահմանել է մի քանի պայմանի միաժամանակյա առկայություն, որոնք հանգում են հետևյալին՝

1. գույքը ձեռք բերողի և գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձի միջև պետք է առկա չլինեն ձեռք բերված կամ խնայված գույքի կապակցությամբ պարտավորական հարաբերություններ,

2. գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գույքը ձեռք բերողին գույքը պետք է փոխանցած լինի՝ իմանալով, որ գույքություն չունի պարտավորություն, կամ որ փոխանցում է բարեգործական նպատակներով

3. գույքը ձեռք բերողը պետք է ապացուցի 2-րդ պայմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով օրենսդիրը կարևորել է գույքը փոխանցողի ներքին վերաբերմունքը գույքի փոխանցման գործողության կապակցությամբ: Այսինքն՝ օրենսդիրը գտել է, որ այդ կանոնի կիրառման համար հատկապես կարևոր է, թե անձն ինչ գիտակցմամբ է կատարել գույքի փոխանցումը: Այլ կերպ ասած՝ եթե գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գույքը փոխանցելիս ի սկզբանե գիտակցում էր և գիտեր, որ իր և գույքը ձեռքբերողի միջև չկան պարտավորական հարաբերություններ, սակայն ամեն դեպքում նա ցանկացել է փոխանցել համապատասխան գույքը, ապա օրենսդիրը, կարևորելով նրա կողմից դրսևորած կամահայտությունը, այլևս իրավունք չի տալիս գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձին հետ ստանալու փոխանցված գույքը: Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը գույքն անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված լինելու կամ չլինելու հարցի լուծման փուլում չի կարևորում տուժողի կամքը, սակայն գույքը որպես անհիմն հարստացման արդյունքում ձեռքբերված կամ խնայված որակելից հետո՝ այն տուժողին հետ վերադարձնելու հարցի լուծման փուլում, արդեն արժևորում է գույքը վերադարձնելու պահանջով դիմած

անձի ներքին վերաբերմունքը գույքն ուրիշին փոխանցելու գործողության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի այդ մոտեցումը որոշակիություն է մտցնում գույքի բնականոն շրջանառության մեջ, քանի որ հնարավորություն է ստեղծում այս կամ այն գույքին տալու անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի իրավական կարգավիճակ: Միաժամանակ սահմանելով նման հնարավորություն օրենսդիրը վերոնշյալ գույքը վերադարձնելու հարցի լուծման փուլում ընդունելի է համարում այն մոտեցումը, որ թեև գույքը կարող է ունենալ անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի կարգավիճակ, սակայն այն կարող է և ենթակա չլինել վերադարձման:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ի թիվս այլ պայմանների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված կարգավորման կիրառման համար հարկավոր է հետևյալ պայմանը. գույքը ձեռք բերողը պետք է ապացուցի, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր իր և գույքը ձեռք բերողի միջև պարտավորության բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացուցման բաշխման սույն կանոնը ենթադրում է, որ գույքը ձեռքբերողը ոչ թե պետք է այդ մասին ուղղակի հայտարարի, այլ ներկայացնի այդ փաստը հիմնավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ վերը վկայակոչված պայմանները պարզելուց հետո է հնարավոր հետևություն անել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք տվյալ գործով քննարկվող անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքը ենթակա է վերադարձման, թե՛ ոչ: Այդ պայմանների պարզման համար դատարանն օժտված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան լիազորություններով: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Համանման դրույթներ է բովանդակում նաև Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննության պահին գործող՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, որի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական

եզրակացությունների և դատողությունների վրա (լրեն «Շենքերի կառավարում» համապի-
րությունն ընդդեմ Մասիս Ղազանչյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ
վճարելի դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճարելի դատարանը գտնում է, որ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քա-
ղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ապացուցման վերաբերյալ կարգավորում-
ներով, պետք է պարզի, թե արդյոք առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ
հոդվածի 4-րդ կետով նախատեսված բոլոր պայմանները, թե՛ ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պե-
տական գրանցման թիվ 18022016-01-0013 վկայականի համաձայն՝ Երևանի Դեմիրճյան
փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի նկատմամբ գրանցված է Գարիկ Բոշ-
յանի սեփականության իրավունքը: Սույն գործում առկա տեղեկանքներից, հայտարարու-
թյուններից հետևում է, որ Միխայի Աղայանի կողմից ձեռք են բերվել տարբեր տեսակի
շինարարական և այլ տեսակի ապրանքներ, որոնք օգտագործվել են նշված հասցեի բնա-
կարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման համար, որի արժեքը «ՀՀ
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.07.2017 թվականի թիվ 42461707 եզրակացու-
թյան համաձայն՝ կարող է կազմել 12.069.790 ՀՀ դրամ, որի հաշվարկում ներառված չեն
խոհանոցի ներկառուցված կահույքի և խոհանոցային սարքավորումների, ինչպես նաև
միջանցքի ներկառուցված զգեստապահարանի արժեքները: Պատասխանող Գարիկ Բոշ-
յանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ սեփականության իրավունքով իրեն
պատկանող՝ Երևանի Դեմիրճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կա-
պիտալ նորոգման աշխատանքները հիմնականում կատարվել են հայցվորի կողմից և չի
հիշում, թե կոնկրետ, որ աշխատանքն է ինքը կատարել, հայտնել է, որ ինքը դեմ չի եղել
վերանորոգմանը, դա դիտել է որպես նվեր և պարտավորություն չի ստանձնել գումարը
վերադարձնելու համար և միգուցե հուզական վիճակում է ասել, որ կվերադարձնի վերա-
նորոգման գումարը:

Սույն գործով Դատարանը, բավարարելով հայցը, նշել է, որ եթե գործի փաստերով
անհիմն հարստացման պահանջ ներկայացնող կողմը հիմնավորում է, որ կատարված
ծախսերի արդյունքում մյուս կողմն անհիմն հարստացել է, այսինքն՝ առկա է անհիմն
հարստացում, ապա անհիմն հարստացման գումարը չվերադարձնելու հիմք հանդիսա-
ցող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով սահմանված փաստերի ապա-
ցուցման պարտականությունը կրում է մյուս կողմը: Հետևաբար անհիմն հարստացման
գումարի վերադարձը բացառող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ
կետով սահմանված փաստերը գործով պատասխանողը չի հիմնավորել, ուստի դրանից
բխող բացասական հետևանքները կրում է պատասխանողը, ինչը նշանակում է, որ ան-
հիմն հարստացման չվերադարձման հիմք առկա չէ, ուստի այդ գումարը որպես անհիմն
հարստացում ենթակա է բռնագանձման: Վերոգրյալի արդյունքում Դատարանը գտել է,
որ պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող բնակարանում կատար-
ված վերանորոգման ընդհանուր ծախսը, ինչի արդյունքում բնակարանի արժեքը զգալիոր-
քն բարձրացել է, անհիմն հարստացում է, որը պետք է բռնագանձվի պատասխանողից:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, գտել է, որ Դատարանն
անտեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի կարգավորու-
մը, որի կիրառման համար անհրաժեշտ է, որ գույքի ձեռքբերմանը կամ խնայմանը հան-
գեցրած գործողությունները կատարվեն՝ իմանալով պարտավորության բացակայության
մասին, կամ որ վերոնշյալ գործողությունները կատարվեն որպես բարեգործություն, որ-
պիսի պայմանի առկայությունը հիմնավորվել է սույն գործով: Մասնավորապես, գործի
քննության ընթացքում հայցվորն ընդունել է կողմերի միջև պարտավորական իրավահա-
րաբերությունների բացակայության փաստը և պնդել է, որ վեճի առարկա բնակարանի
վերանորոգումը կատարել է սեփական ցանկությամբ՝ պատասխանողի հետ բնակվող
իր դստեր կյանքը բարելավելու նպատակով: Հետագայում պատասխանողից հատուցում
ստանալու՝ հայցվորի իրավաչափ ակնկալիքի առկայության մասին վկայող ապացույցնե-
րի բացակայության պայմաններում ակնհայտ է, որ հայցվորը ոչ միայն ի սկզբանե տեղ-
յակ է եղել պատասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին,

այլև պատասխանողի՝ վեճի առարկա բնակարանը նորոգել է սուկ բարեգործական հիմունքներով, ուստի հայցվորի կատարած աշխատանքների արժեքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով ենթակա չէ վերադարձման որպես անհիմն հարստացում, մինչդեռ Դատարանը չի կիրառել նյութական իրավունքի այդ նորմը թույլ տալով գործի սխալ լուծման հանգեցրած դատական սխալ, և դրա վերաբերյալ բողոքում բերված փաստարկները հիմնավորված են:

Վճռաբեկ դատարանը, նախ և առաջ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դատողությանն առ այն, որ հայցվորն ի սկզբանե տեղյակ է եղել պատասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին, գտնում է, որ հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Գարիկ Բոշյանը կրել է պարտականություն ապացուցելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված պայմանն առ այն, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը՝ Միխայիլ Աղայանը, իմացել է իր և Գարիկ Բոշյանի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ որպես անհիմն հարստացում խնայած գույքը վերադարձման ենթակա չլինելու պարտադիր պայման հանդիսացող՝ գույքը տրամադրած անձի և վերջինիս հաշվին գույքը խնայած անձի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին տեղյակ լինելու փաստի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով կրում է գույքը կամ դրամական այլ միջոցներ ձեռքբերած կամ խնայած անձը, մինչդեռ պատասխանողը սույն գործով չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհավաստվեր այն փաստը, որ հայցվորը գիտեր այդ մասին և հետևաբար պետք է կրեր այն ռիսկը, որ իր կողմից կատարված վերանորոգման աշխատանքների համար ծախսված դրամական միջոցներն այլևս ենթակա չեն վերադարձման պատասխանողի կողմից: Ավելին՝ սույն գործում առկա ապացույցներից հետևում է, որ Գարիկ Բոշյանը պարտավորվել է Միխայիլ Աղայանին վերադարձնել նշված բնակարանի վերանորոգման համար կատարված ծախսերը: Մասնավորապես՝ գործում առկա Գարիկ Բոշյանի և Նինա Աղայանի միջև էլեկտրոնային լատինատառ կարճ հաղորդագրությունների վերձանումներից հետևում է, որ Գարիկ Բոշյանն ընդունել է այն փաստը, որ վերանորոգման աշխատանքները կատարվել են Միխայիլ Աղայանի կողմից և խոստացել է բնակարանի վերանորոգման համար ծախսված ամբողջ գումարը վերադարձնել վերջինիս: Ընդ որում, տվյալ պարագայում նշանակություն չի կարող ունենալ այն հանգամանքը, որ բնակարանի վերանորոգումն իրականացվել է հայցվորի կամքով՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետի իրավակարգավորումը: Ավելին՝ Գարիկ Բոշյանի վարքագծից էլ է հետևում, որ վերջինս ընդունել է ծախսված գումարը վերադարձնելու իր պարտականությունը և խոստացել է այն վերադարձնել հայցվորին, ինչը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես պատասխանողի կողմից անհիմն հարստացման փաստի ընդունում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ հայցվորն ի սկզբանե տեղյակ է եղել պատասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին, հիմնավոր չի կարող համարվել այն պայմաններում, երբ գույքը ձեռք բերողի՝ Գարիկ Բոշյանի, կողմից չի ապացուցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պայմանն առ այն, որ Միխայիլ Աղայանն իմացել է իր և Գարիկ Բոշյանի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին:

Այնուհետև անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դատողությանն այն մասին, որ Միխայիլ Աղայանը պատասխանողի բնակարանը նորոգել է սուկ բարեգործական հիմունքներով՝ Վճռաբեկ դատարանն այն համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ բարեգործությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նույն օրենքի 2-րդ հոդվածի նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց, առողջապահական և ոչ առևտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց

կամ արտոնյալ պայմաններով) նյութական և հոգևոր օգնության (այսուհետ՝ բարեգործական աջակցության) տրամադրումն է:

«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բարեգործության նպատակն է՝

- 1) աջակցել այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողագուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաև սակավ ապահովված ընտանիքներին, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները.
- 2) աջակցել ոչ առևտրային այլ կազմակերպություններին.
- 21) աջակցել առողջապահության զարգացմանը.
- 3) նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների և արտակարգ այլ իրավիճակների հետևանքով տուժած անձանց և մասնակցել դրանց հետևանքների վերացմանը.
- 4) աշխատատեղերի ստեղծման կամ գործազուրկների վերապատրաստման ճանապարհով աջակցել սոցիալական օգնության կարիք ունեցող գործազուրկներին՝ աշխատանքի տեղավորման հարցում.
- 5) աջակցել գիտության, կրթության, արվեստի, գրականության, առողջապահության, սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտների ծրագրերի իրականացմանը.
- 6) աջակցել պատմական, ճարտարապետական, մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանման և վերականգնման ծրագրերի իրականացմանը.
- 7) աջակցել բնության և շրջակա միջավայրի պահպանման և բարեկարգման աշխատանքների իրականացմանը.
- 8) աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Հիմք ընդունելով վկայակոչված կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների իմաստով բարեգործությունն այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողագուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաև սակավ ապահովված ընտանիքներին աջակցությունն է, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Միխայիլ Աղայանի միջոցներով իրականացված՝ Գարիկ Բոշյանին պատկանող բնակարանի վերանորոգումը չի համապատասխանում «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի՝ վերը վկայակոչված հոդվածների իմաստով սահմանված բարեգործությանը բնորոշ հատկանիշներին (սույն գործում առկա ապացույցների համակարգային գնահատման արդյունքում): Ուստի, Միխայիլ Աղայանի միջոցներով իրականացված վերանորոգումը չի կարող որևէ կերպ գնահատվել որպես բարեգործություն՝ հօգուտ Գարիկ Բոշյանի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գարիկ Բոշյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի արժեքն ավելացել է Միխայիլ Աղայանի կատարած վերանորոգման աշխատանքների արդյունքում, այսինքն՝ Գարիկ Բոշյանը Միխայիլ Աղայանի հաշվին խնայել է գույք, որը ենթակա է վերադարձման, հետևաբար Միխայիլ Աղայանի պահանջը ենթակա է բավարարման, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Միխայիլ Աղայանի պահանջը ենթակա է բավարարման՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ Գարիկ Բոշյանի կողմից սույն գործով չի ապացուցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված վերը նշված պայմանը:

Վերոնշյալ պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի

7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Գարիկ Բոշյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 325.829 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, Գարիկ Բոշյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 325.829 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար Վճռաբեկ դատարանի 20.06.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2019 թվականի որոշումը և հայցը մասնակիորեն՝ 10.860.957 ՀՀ դրամ Գարիկ

Բոշյանից բռնագանձելու պահանջը բավարարելու մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 31.07.2018 թվականի վճռին:

2. Գարիկ Բոշյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 325.829 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Գարիկ Բոշյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 325.829 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար ՀՀ վճռաբեկ դատարանի 20.06.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար;

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԱԲԳ/3780/02/17 քաղաքացիական գործով 10.11.2020 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2020 թվականի նոյեմբերի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով Միխայիլ Աղայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Միխայիլ Աղայանի ընդդեմ Գարիկ Բոշյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2019 թվականի որոշումը և հայցը մասնակիորեն՝ 10.860.957 ՀՀ դրամ Գարիկ Բոշյանից բռնագանձելու պահանջը բավարարելու մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 31.07.2018 թվականի վճռին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյանս, Ռ. Հակոբյանս և Ն. Տավարացյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարունություն նշել է հետևյալը

«Դիմելով դատարան՝ Միխայիլ Աղայանը պահանջել է Գարիկ Բոշյանից բռնագանձել 11.416.397 ՀՀ դրամ՝ որպես անհիմն հարստացում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Շահնազարյան) (այսուհետ՝ Դատարան) 31.07.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Գարիկ Բոշյանից բռնագանձել 10.860.957 ՀՀ դրամ: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.01.2019 թվականի որոշմամբ Գարիկ Բոշյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 31.07.2018 թվականի վճիռը՝ հայցը բավարարելու մասով, բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միխայիլ Աղայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գարիկ Բոշյանի ներկայացուցիչ Նորայր Յուզբաշյանը»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը, 1099-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 9-րդ, 66-րդ, 381-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով առկա է անհիմն հարստացում, ոչ թե՛ գույքի ձեռքբերման, այլ՝ գույքի խնայման եղանակով: Ընդ որում, այդ փաստարկը ներկայացրել էր հայցվորը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններում առանց որևէ հիմնավորման գույքի ձեռքբերում և գույքի խնայում հասկացությունները նույնացվել են: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորի բնակարանի անբաժանելի բարելավումները կատարվել են ոչ թե ի կատարումն պատասխանողի հանդեպ

գոյություն չունեցող որևէ պարտավորության, որի գոյության մասին հայցվորը գիտեր, այլ իր դատեր՝ Նինա Աղայանի համար, վերջինիս կյանքի պայմանները բարելավելու նպատակով:

Բողոք բերած անձի վարքագիծը չի կարող բարեգործություն որակվել, քանի որ ֆիզիկական անձի կողմից բարեգործությունը՝ մեկ այլ ֆիզիկական անձի «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված նպատակներով կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված նյութական և հոգևոր օգնության տրամադրումն է, որը սույն գործով առկա չէ, հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ բնակարանի վերանորոգումը բարեգործություն գնահատելու մասին, անհիմն է և չպատճառաբանված:

Բացի այդ, պատասխանող կողմը չի ապացուցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերի՝ նախապայմանների առկայության փաստը, ինչը Վերաքննիչ դատարանի կողմից ընդհանրապես հաշվի չի առնվել, և Վերաքննիչ դատարանը հաստատել է դրանց գոյությունը՝ առանց պատասխանողի կողմից ներկայացված որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույցի առկայության, հաստատել է դրանց գոյությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 31.07.2018 թվականի վճռին»:

2.1 Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումներ նշել է հերկյալը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը կարող է կիրառվել ոչ միայն գույքը ձեռք բերելու, այլև խնայելու դեպքում: Անհիմն հարստացման երկու տեսակների՝ գույք ձեռք բերելու կամ խնայելու դեպքում, եթե հետ պահանջող կողմն իր ակտիվ գործողություններով նպաստում է անհիմն հարստացմանը և ի սկզբանե իմանում է պարտավորության բացակայության մասին, ապա անհիմն հարստացումը երկու տեսակների պարագայում էլ պետք է վերադարձման ենթակա չլինի: Սույն գործով բողոք բերող անձն ի սկզբանե իմացել է, որ բնակարանը Նինա Աղայանին չի պատկանել, որ ինքը չի ունեցել բնակարանը վերանորոգելու պարտավորություն, բայց և այնպես վերանորոգումը կատարել է իր կամքով և ցանկությամբ: Հնարավոր չէ կատարել անբաժանելի բարելավումներ բնակարանի վրա և չիմանալ պարտավորության բացակայության մասին:

Բողոք բերող անձը նշել է, որ պատասխանող կողմը չի ներկայացրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորող ապացույցներ, մինչդեռ դա հիմնավորվում է հենց հայցվոր կողմի ներկայացրած ապացույցներով, կողմերի բացատրություններով և վկաների ցուցումներով:

Վճռաբեկ դատարանի կողմից, ի թիվս այլնի, կարող է անդրադարձ կատարվել հարցադրմանն առ այն, թե արդյոք առկա է անհիմն հարստացում այն ժամանակ, երբ մի կողմը մյուս կողմի համար իր կամքով, իր ցանկությամբ և իր միջոցներով կատարել է որոշակի աշխատանքներ, ինչպես նաև տրամադրել է որոշակի գույք:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հերկյալը

«1) ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18022016-01-0013 վկայականի համաձայն՝ Երևանի Դեմիիճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի նկատմամբ 18.02.2016 թվականին գրանցվել է Գարիկ Բոշյանի սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 39-41**):

2) «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.07.2017 թվականի թիվ 42461707 եզրակացության համաձայն՝ Երևանի Դեմիիճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման արժեքը կարող է կազմել 12.069.790 ՀՀ դրամ, որի հաշվարկում ներառված չեն խոհանոցի ներկառուցված կահույքի և խոհանոցային սարքավորումների, ինչպես նաև միջանցքի ներկառուցված զգեստապահարանի արժեքները (**հատոր 1-ին, գ.թ. 9-16**):

3) Սույն գործում առկա մի շարք տեղեկանքներից և հայտարարություններից հետևում է, որ Միխայի Ադայանի կողմից ձեռք են բերվել տարբեր տեսակի շինարարական և այլ տեսակի ապրանքներ, որոնք 2016 թվականի ընթացքում օգտագործվել են Երևանի Դեմիրճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման համար (**հատոր 1-ին, գ.թ. 62-86, 150-161, հատոր 2-րդ, գ.թ. 1-6, 21-31**):

4) Պատասխանող Գարիկ Բոշյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Դեմիրճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքները հիմնականում կատարվել են հայցվորի կողմից և չի հիշում, թե կոնկրետ, որ աշխատանքն է ինքը կատարել: Պատասխանողը նաև հայտնել է, որ ինքը դեմ չի եղել վերանորոգմանը, դա դիտել է որպես նվեր և պարտավորություն չի ստանձնել գումարը վերադարձնելու համար և միգուցե հուզական վիճակում է ասել, որ կվերադարձնի վերանորոգման գումարը (**հատոր 2-րդ, գ.թ. 65-69**):

5) Գարիկ Բոշյանի և Նինա Ադայանի էլեկտրոնային լատինատառ կարճ հաղորդագրությունների վերծանումներից հետևում է, որ Գարիկ Բոշյանն ընդունում է, որ վերանորոգման աշխատանքները կատարվել են հայցվորի կողմից և խոստանում է բնակարանի վերանորոգման համար ծախսված ամբողջ գումարը վերադարձնել հայցվորին (**հատոր 1-ին, գ.թ. 105-149**):

4. Վճարել դատարանը որպես Վճարել դատարանի պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի վերաբերյալ կարող են էական նշանակություն ունենալ տվյալ իրավադրույթի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք գույքը կամ այլ դրամական գումարները՝ որպես անհիմն հարստացում, ենթակա են վերադարձման այն դեպքում, երբ գույքը ձեռքբերած կամ խնայած կողմը չի ներկայացրել սպացույցներ ի հավաստումն այն հանգամանքի, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձն խնայել է իրենց միջև պարտավորության բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, ի թիվս այլնի, ծագում են նաև անհիմն հարստացման հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ նույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անհիմն հարստացման կամ խնայման միջոցով ձեռք բերված գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում ձեռք բերողը պետք է տուժողին հատուցի ձեռքբերման պահին այդ գույքի իրական արժեքը, ինչպես նաև գույքի արժեքի հետագա փոփոխությունների պատճառով ծագած վնասները, եթե ձեռք բերողն անհիմն հարստացման մասին խանալուց հետո անմիջապես չի հատուցել գույքի արժեքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, կամ ուրիշի ծառայություններից, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման՝ ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները և այլ գույքը, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին կամ գույքը տրամադրել է բարեգործական նպատակներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (*լրենս Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Ջեյիմ Միսոնյանի թիվ ԵԱԲԳ/0455/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը տարբերակում է անհիմն հարստացման երկու տեսակ՝

1) առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի **գույքի ձեռքբերում**,

2) առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի **գույքի խնայում**:

Ըստ այդմ, գույքի ձեռքբերման դեպքում տեղի է ունենում անհիմն հարստացողի գույքի ավելացում՝ տուժողի գույքի հաշվին, իսկ գույքի խնայումը՝ նշանակում է, որ անձը պետք է իր գույքի հաշվին կատարեր որոշակի ծախսեր, սակայն դա չի անում՝ ի հաշիվ տուժողի ծախսերի, որի արդյունքում անհիմն հարստացողի գույքի ծավալային փոփոխություն տեղի չի ունենում: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ անհիմն հարստացման հետևանքով պարտավորությունների ծագման համար էական չէ ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց կամքը: Այլ կերպ ասած՝ անհիմն հարստացում կարող է տեղի ունենալ ինչպես ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանքով, այնպես էլ՝ նրանց կամքից անկախ: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նորմի վերլուծությունից, որի համաձայն՝ նույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ (*լրենս Էլզա Մորադովան և Լարիսա Հարությունյանն ընդդեմ Ջանիբեկ Ագաբյանի թիվ ԱԲԳ/1065/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վկայակոչված նորմերի բովանդակությունից բխում է, որ անհիմն հարստացման ինստիտուտը կարգավորող նորմերի կիրառման համար անհրաժեշտ և բավարար է օբյեկտիվ արդյունքի առկայությունը, այլ կերպ ասած՝

իրավաբանորեն չհիմնավորված և փաստացի գույքային օգուտի առկայությունը՝ մի կողմի համար մյուս կողմի հաշվին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորության բովանդակությունն են կազմում անհիմն հարստացողից անհիմն ձեռք բերածը պահանջելու՝ տուժողի իրավունքը և անհիմն ձեռք բերածը կամ անհիմն խնայածը վերադարձնելու՝ անհիմն հարստացողի պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի և 1099-րդ հոդվածի 4-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ անհիմն հարստացման հատկանիշների առկայության դեպքում անհիմն հարստացման արդյունքում ձեռքբերված կամ խնայված գույքը, որպես կանոն, ենթակա է վերադարձման, սակայն միաժամանակ օրենսդիրը նախատեսում է դեպքեր, երբ նույնիսկ անհիմն հարստացման հատկանիշների առկայության դեպքում ձեռքբերված կամ խնայված գույքը չի կարող վերադարձվել (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդված): Անդրադառնալով հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերից 4-րդ կետով նկարագրվածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն այդ կանոնի կիրառման համար սահմանել է մի քանի պայմանի միաժամանակյա առկայություն, որոնք հանգում են հետևյալին՝

1. գույքը ձեռք բերողի և գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձի միջև պետք առկա չլինեն ձեռք բերված կամ խնայված գույքի կապակցությամբ պարտավորական հարաբերություններ,

2. գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գույքը ձեռք բերողին գույքը պետք է փոխանցած լինի իմանալով, որ գոյություն չունի պարտավորություն, կամ որ փոխանցում է բարեգործական նպատակներով

3. գույքը ձեռք բերողը պետք է ապացուցի 2-րդ պայմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով օրենսդիրը կարևորել է գույքը փոխանցողի ներքին վերաբերմունքը գույքի փոխանցման գործողության կապակցությամբ: Այսինքն՝ օրենսդիրը գտել է, որ այդ կանոնի կիրառման համար հատկապես կարևոր է, թե անձն ինչ գիտակցմամբ է կատարել գույքի փոխանցումը: Այլ կերպ ասած՝ եթե գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գույքը փոխանցելիս ի սկզբանե գիտակցում էր և գիտեր, որ իր և գույքը ձեռքբերողի միջև չկան պարտավորական հարաբերություններ, սակայն ամեն դեպքում նա ցանկացել է փոխանցել համապատասխան գույքը, ապա օրենսդիրը, կարևորելով նրա կողմից դրսևորած կամահայտնությունը, այլևս իրավունք չի տալիս գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձին հետ ստանալու փոխանցված գույքը: Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը գույքն անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված լինելու կամ չլինելու հարցի լուծման փուլում չի կարևորում տուժողի կամքը, սակայն գույքը որպես անհիմն հարստացման արդյունքում ձեռքբերված կամ խնայված որակելուց հետո՝ այն տուժողին հետ վերադարձնելու հարցի լուծման փուլում, արդեն արժևորում է գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձի ներքին վերաբերմունքը գույքն ուրիշին փոխանցելու գործողության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի այդ մոտեցումը որոշակիություն է մտցնում գույքի բնականոն շրջանառության մեջ, քանի որ հնարավորություն է ստեղծում այս կամ այն գույքին տալու անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի իրավական կարգավիճակ: Միաժամանակ սահմանելով նման հնարավորություն՝ օրենսդիրը վերոնշյալ գույքը վերադարձնելու հարցի լուծման փուլում ընդունելի է համարում այն մոտեցումը, որ թեև գույքը կարող է ունենալ անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի կարգավիճակ, սակայն այն կարող է և ենթակա չլինել վերադարձնելու:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ի թիվս այլ պայմանների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված կարգավորման կիրառման համար հարկավոր է հետևյալ պայմանը. գույքը ձեռք բերողը պետք է ապացուցի, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր իր և գույքը ձեռք բերողի միջև պարտավորության բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

ապացուցման բաշխման սույն կանոնը ենթադրում է, որ գույքը ձեռքբերողը ոչ թե պետք է այդ մասին ուղղակի հայտարարի, այլ ներկայացնի այդ փաստը հիմնավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված վերը վկայակոչված պայմանները պարզելուց հետո է հնարավոր հետևություն անել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք տվյալ գործով քննարկվող անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքը ենթակա է վերադարձման, թե՛ ոչ: Այդ պայմանների պարզման համար դատարանն օժտված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան լիազորություններով: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության պահին գործող 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Համանման դրույթներ է բովանդակում նաև Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննության պահին գործող 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, որի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (տե՛ս «Շենքերի կառավարում» համադիրությունն ընդդեմ Մասիս Դազանյանի թիվ ԵԱԲԳ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ապացուցման վերաբերյալ կարգավորումներով, պետք է պարզի, թե արդյոք առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված բոլոր պայմանները, թե՛ ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18022016-01-0013 վկայականի համաձայն՝ Երևանի Դեմիրճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի նկատմամբ գրանցված է Գարիկ Բոշյանի սեփականության իրավունքը: Սույն գործում առկա տեղեկանքներից, հայտարարություններից հետևում է, որ Միխայիլ Ադայանի կողմից ձեռք են բերվել տարբեր տեսակի շինարարական և այլ տեսակի ապրանքներ, որոնք օգտագործվել են նշված հասցեի

բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման համար, որի արժեքը «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.07.2017 թվականի թիվ 42461707 եզրակացության համաձայն՝ կարող է կազմել 12.069.790 ՀՀ դրամ, որի հաշվարկում ներառված չեն խոհանոցի ներկառուցված կահույքի և խոհանոցային սարքավորումների, ինչպես նաև միջանցքի ներկառուցված զգեստապահարանի արժեքները: Պատասխանող Գարիկ Բոշյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Դեմիրճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքները հիմնականում կատարվել են հայցվորի կողմից և չի հիշում, թե կոնկրետ, որ աշխատանքն է ինքը կատարել, հայտնել է, որ ինքը դեմ չի եղել վերանորոգմանը, դա դիտել է որպես նվեր և պարտավորություն չի ստանձնել գումարը վերադարձնելու համար և միգուցե հուզական վիճակում է ասել, որ կվերադարձնի վերանորոգման գումարը:

Սույն գործով Դատարանը, բավարարելով հայցը, նշել է, որ եթե գործի փաստերով անհիմն հարստացման պահանջ ներկայացնող կողմը հիմնավորում է, որ կատարված ծախսերի արդյունքում մյուս կողմն անհիմն հարստացել է, այսինքն՝ առկա է անհիմն հարստացում, ապա անհիմն հարստացման գումարը չվերադարձնելու հիմք հանդիսացող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով սահմանված փաստերի ապացուցման պարտականությունը կրում է մյուս կողմը: Հետևաբար անհիմն հարստացման գումարի վերադարձը բացառող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված փաստերը գործով պատասխանողը չի հիմնավորել, ուստի դրանից բխող բացասական հետևանքները կրում է պատասխանողը, ինչը նշանակում է, որ անհիմն հարստացման չվերադարձման հիմք առկա չէ, ուստի այդ գումարը որպես անհիմն հարստացում ենթակա է բռնագանձման: Վերոգրյալի արդյունքում Դատարանը գտել է, որ պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող բնակարանում կատարված վերանորոգման ընդհանուր ծախսը, ինչի արդյունքում բնակարանի արժեքը զգալիորեն բարձրացել է, անհիմն հարստացում է, որը պետք է բռնագանձվի պատասխանողից:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, գտել է, որ Դատարանն անտեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի կարգավորումը, որի կիրառման համար անհրաժեշտ է, որ գույքի ձեռքբերմանը կամ խնայմանը հանգեցրած գործողությունները կատարվեն՝ իմանալով պարտավորության բացակայության մասին, կամ որ վերոնշյալ գործողությունները կատարվեն որպես բարեգործություն, որպիսի պայմանի առկայությունը հիմնավորվել է սույն գործով: Մասնավորապես, գործի քննության ընթացքում հայցվորն ընդունել է կողմերի միջև պարտավորական իրավահարաբերությունների բացակայության փաստը և պնդել է, որ վեճի առարկա բնակարանի վերանորոգումը կատարել է սեփական ցանկությամբ՝ պատասխանողի հետ բնակվող իր դստեր կյանքը բարելավելու նպատակով: Հետագայում պատասխանողից հատուցում ստանալու՝ հայցվորի իրավաչափ ակնկալիքի առկայության մասին վկայող ապացույցների բացակայության պայմաններում ակնհայտ է, որ հայցվորը ոչ միայն ի սկզբանե տեղյակ է եղել պատասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին, այլև պատասխանողի՝ վեճի առարկա բնակարանը նորոգել է սույն բարեգործական հիմունքներով, ուստի հայցվորի կատարած աշխատանքների արժեքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով ենթակա չէ վերադարձման որպես անհիմն հարստացում, մինչդեռ Դատարանը չի կիրառել նյութական իրավունքի այդ նորմը՝ թույլ տալով գործի սխալ լուծման հանգեցրած դատական սխալ, և դրա վերաբերյալ բողոքում բերված փաստարկները հիմնավորված են:

Վճռաբեկ դատարանը, նախ և առաջ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դատողությանն առ այն, որ հայցվորն ի սկզբանե տեղյակ է եղել պատասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին, գտնում է, որ հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները՝ Գարիկ Բոշյանը կրել է պարտականություն ապացուցելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված պայմանն առ այն, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը՝ Միխայիլ Ադայանը, իմացել է իր և Գարիկ Բոշյանի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ որպես անհիմն հարստացում խնայած գույքը վերադարձման ենթակա չլինելու պարտադիր պայման հանդիսացող գույքը տրամադրած անձի և վերջինիս հաշվին գույքը խնայած անձի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին տեղյակ լինելու փաստի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով կրում է գույքը կամ դրամական այլ միջոցներ ձեռքբերած կամ խնայած անձը, մինչդեռ պատասխանողը սույն գործով չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհավաստվեր այն փաստը, որ հայցվորը գիտեր այդ մասին և հետևաբար պետք է կրեր այն ռիսկը, որ իր կողմից կատարված վերանորոգման աշխատանքների համար ծախսված դրամական միջոցներն այլևս ենթակա չեն վերադարձման պատասխանողի կողմից: Ավելին՝ սույն գործում առկա ապացույցներից հետևում է, որ Գարիկ Բոշյանը պարտավորվել է Միխայիլ Աղայանին վերադարձնել նշված բնակարանի վերանորոգման համար կատարված ծախսերը: Մասնավորապես՝ գործում առկա Գարիկ Բոշյանի և Նինա Աղայանի միջև էլեկտրոնային լատինատառ կարճ հաղորդագրությունների վերծանումներից հետևում է, որ Գարիկ Բոշյանն ընդունել է այն փաստը, որ վերանորոգման աշխատանքները կատարվել են Միխայիլ Աղայանի կողմից և խոստացել է բնակարանի վերանորոգման համար ծախսված ամբողջ գումարը վերադարձնել վերջինիս: Ընդ որում, սովորապես պարագայում նշանակություն չի կարող ունենալ այն հանգամանքը, որ բնակարանի վերանորոգումն իրականացվել է հայցվորի կամքով՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետի իրավակարգավորումը: Ավելին՝ Գարիկ Բոշյանի վարքագծից էլ է հետևում, որ վերջինս ընդունել է ծախսված գումարը վերադարձնելու իր պարտականությունը և խոստացել է այն վերադարձնել հայցվորին, ինչը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես պատասխանողի կողմից անհիմն հարստացման փաստի ընդունում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ հայցվորն ի սկզբանե տեղյակ է եղել պատասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին, հիմնավոր չի կարող համարվել այն պայմաններում, երբ գույքը ձեռք բերողի՝ Գարիկ Բոշյանի, կողմից չի ապացուցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պայմանն առ այն, որ Միխայիլ Աղայանն իմացել է իր և Գարիկ Բոշյանի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին:

Այնուհետև անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դատողությանն այն մասին, որ Միխայիլ Աղայանը պատասխանողի բնակարանը նորոգել է սոսկ բարեգործական հիմունքներով՝ Վճռաբեկ դատարանն այն համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ բարեգործությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նույն օրենքի 2-րդ հոդվածի նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց, առողջապահական և ոչ առևտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական և հոգևոր օգնության (այսուհետ՝ բարեգործական աջակցության) տրամադրումն է:

«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բարեգործության նպատակն է՝

1) աջակցել այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաև սակավ ապահովված ընտանիքներին, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները.

2) աջակցել ոչ առևտրային այլ կազմակերպություններին.

21) աջակցել առողջապահության զարգացմանը.

3) նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների և արտակարգ այլ իրավիճակների հետևանքով տուժած անձանց և մասնակցել դրանց հետևանքների վերացմանը.

4) աշխատատեղերի ստեղծման կամ գործազուրկների վերապատրաստման ճանապարհով աջակցել սոցիալական օգնության կարիք ունեցող գործազուրկներին՝ աշխատանքի տեղավորման հարցում.

5) աջակցել գիտության, կրթության, արվեստի, գրականության, առողջապահության, սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտների ծրագրերի իրականացմանը.

6) աջակցել պատմական, ճարտարապետական, մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանման և վերականգնման ծրագրերի իրականացմանը.

7) աջակցել բնության և շրջակա միջավայրի պահպանման և բարեկարգման աշխատանքների իրականացմանը.

8) աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Հիմք ընդունելով վկայակոչված կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների իմաստով բարեգործությունն այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաև սակավ ապահովված ընտանիքներին աջակցությունն է, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Միխայի Աղայանի միջոցներով իրականացված՝ Գարիկ Բոշյանին պատկանող բնակարանի վերանորոգումը չի համապատասխանում «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի՝ վերը վկայակոչված հոդվածների իմաստով սահմանված բարեգործությանը բնորոշ հատկանիշներին (սույն գործում առկա ապացույցների համակարգային գնահատման արդյունքում): Ուստի, Միխայի Աղայանի միջոցներով իրականացված վերանորոգումը չի կարող որևէ կերպ գնահատվել որպես բարեգործություն՝ հոգուտ Գարիկ Բոշյանի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գարիկ Բոշյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի արժեքն ավելացել է Միխայի Աղայանի կատարած վերանորոգման աշխատանքների արդյունքում, այսինքն՝ Գարիկ Բոշյանը Միխայի Աղայանի հաշվին խնայել է գույք, որը ենթակա է վերադարձման, հետևաբար Միխայի Աղայանի պահանջը ենթակա է բավարարման, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Միխայի Աղայանի պահանջը ենթակա է բավարարման՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ Գարիկ Բոշյանի կողմից սույն գործով չի ապացուցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված վերը նշված պայմանը:

Վերոնշյալ պարճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր դեռ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից,

քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է»:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյանս, Ռ. Հակոբյանս և Ն. Տախարացյանս, համաձայն ջինեյով վերը նշված որոշման պարճատարանական և եզրափակիչ մատերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամանատության կողմից արարահայրված կարծիքի հեղ, շարադրում ենք մեր հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Նույն հողվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հողվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 364-րդ հողվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հողվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 365-րդ հողվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հողվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: (...)

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հիմքով վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերի ու նույն օրենսգրքի 364-րդ հողվածի և 365-րդ հողվածի 1-ին մասի իմաստով՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման առումով այդպիսի խախտում, իսկ դրա արդյունքում՝ դատական ակտի բեկանման հիմք է համարում նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումը կամ դրանց սխալ կիրառումը, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ինչպես ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն հիմնավորմամբ, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ գտել է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարող են էական նշանակություն ունենալ տվյալ իրավադրույթի միատեսակ կիրառության համար, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ արձանագրելով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Դրա արդյունքում Վճռաբեկ դատարանը բեկանել է Վերաքննիչ դատարանի 21.01.2019 թվականի որոշումը, և «հայցը մասնակիորեն՝ 10.860.957 ՀՀ դրամ Գարիկ Բոշյանից բռնագանձելու պահանջը բավարարելու մասով», օրինական ուժ է տվել Դատարանի 31.07.2018 թվականի վճռին:

Դրանից ելնելով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բացառապես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններին՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանցում նշվածները կարող էին բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանին արդարադատության բուն էությունը խաթարող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածների խախտում վերագրելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով Վճռաբեկ դատարանը չի համաձայնվել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել է և «հայցը մասնակիորեն՝ 10.860.957 ՀՀ դրամ Գարիկ Բոշյանից բռնագանձելու պահանջը բավարարելու մասով», օրինական ուժ է տվել Դատարանի 31.07.2018 թվականի վճռին, ըստ էության, հետևյալ շարժառիթներով՝

1) «Վերաքննիչ դատարանի այն պարզաբանությունները, որ հայցվորն ի սկզբանե պետք է եղել պարտասխանողի հանդեպ որևէ պարտավորության բացակայության մասին, հիմնավոր չի կարող համարվել այն պայմաններում, երբ գույքը ձեռք բերողի՝ Գարիկ Բոշյանի, կողմից չի սպառնացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պայմանն առ այն, որ Միխայիլ Աղայանն ինսցել է իր և Գարիկ Բոշյանի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին»:

2) «Միխայիլ Աղայանի միջոցներով իրականացված՝ Գարիկ Բոշյանին պարտավորող բնակարանի վերանորոգումը չի համապարտասխանում «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի՝ վերը վկայակոչված հոդվածների իմաստով սահմանված բարեգործությանը բնորոշ հարկանիշներին (սույն գործում առկա սպառույցների համակարգային գնահատման արդյունքում): Ուարի, Միխայիլ Աղայանի միջոցներով իրականացված վերանորոգումը չի կարող որևէ կերպ գնահատվել որպես բարեգործություն՝ հոգուր Գարիկ Բոշյանի»:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Գարիկ Բոշյանին սեփականության իրավունքով պարտավորող անշարժ գույքի արժեքն ավելացել է Միխայիլ Աղայանի կատարած վերանորոգման աշխատանքների արդյունքում, այսինքն՝ Գարիկ Բոշյանը Միխայիլ Աղայանի հաշվին ինսցել է գույք, որը ենթակա է վերադարձման, հետևաբար Միխայիլ Աղայանի պահանջը ենթակա է բավարարման, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Միխայիլ Աղայանի պահանջը ենթակա է բավարարման հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ Գարիկ Բոշյանի կողմից սույն գործով չի սպառնացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված վերը նշված պայմանը»:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը, ըստ էության, բեկանել է այն շարժառիթներից ելնելով, որ Գարիկ Բոշյանը Միխայիլ Աղայանի հաշվին անհիմն հարստացել է՝ խնայելով վերջինիս 11.416.397 ՀՀ դրամը, և այդ անհիմն հարստացումը ենթակա է վերադարձման, քանի որ Գարիկ Բոշյանը չի ապացուցել, որ Միխայիլ Աղայանն իմացել է իր և Գարիկ Բոշյանի միջև պարտավորական հարաբերությունների բացակայության մասին, ու այդ գումարն էլ չի տրամադրվել բարեգործական նպատակներով:

Կարծում ենք, որ վերը նշված շարժառիթները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու համար հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ ցանկանում ենք նշել, որ հենց Վճռաբեկ դատարանի վկայակոչած *Ամժելիկա Գասպարյանն ընդդեմ Ջելիմ Միմոնյանի թիվ ԵԱԲԳ/0455/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝* անհիմն հարստացման առկայությունը հաստատված համարելու համար միաժամանակ անհրաժեշտ է նաև այն պայմանի առկայությունը, որ տվյալ դեպքում գույքը պետք է խնայված լինի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ առկա լինի անօրինական ձևով հարստացում: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ եզրահանգում է կատարել Գարիկ Բոշյանի՝ անհիմն հարստացած լինելու մասին՝ մեր կարծիքով, առանց պատճառաբանելու, թե փաստական կամ իրավական որ հիմքերի առկայության պայմաններում է հանգել նման հետևության և հաստատված համարել վերը նշված պայմանի՝ հարստացումն անօրինական ձևով, այսինքն՝ առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի տեղի ունեցած լինելու առկայությունը:

Նման պայմաններում, կարծում ենք, որ Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները բավարար չեն եզրահանգում կատարելու համար այն մասին, որ Գարիկ Բոշյանը Միխայիլ Աղայանի հաշվին *անհիմն* է հարստացել՝ խնայելով վերջինիս 11.416.397 ՀՀ դրամը:

Դրանից ելնելով էլ՝ կարծում ենք, որ Վերաքննիչ դատարանին չէր կարող վերագրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում թույլ տալը, առավել ևս՝ արդարադատության բուն էությունը խաթարող, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածը սահմանում է այն գույքի և դրամական միջոցների տեսակները, որոնք ենթակա չեն վերադարձման *ոչպես անհիմն հարստացում*: Այսինքն՝ որպեսզի տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառելի լինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը, անհրաժեշտ պայման է, որ նախ այդ հարստացումը վերը նշված իմաստով հանդիսանա անհիմն (դատարանը հաստատված համարի այդ փաստի առկայությունը), որից հետո միայն կարող է խոսք լինել այն չվերադարձնելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետում նշված իրավական հնարավորության մասին:

Նման պայմաններում կարծում ենք, որ վերը նշված պատճառաբանությամբ Վերաքննիչ դատարանին չէր կարող վերագրվել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի խախտում թույլ տալը:

ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան
Ն. Տավարացյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0431/02/18
Քաղաքացիական գործ թիվ	ՍԴ/0431/02/18
Նախագահող դատավոր՝	Հ. Ենոքյան
Դատավորներ՝	Տ. Նազարյան
	Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող և զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Մ. ԴՐՄԵՅԱՆ
	Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
	Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի 23-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացուցիչ Արման Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.11.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Արթուր Կարապետյանի՝ 98.350 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Արթուր Կարապետյանից բռնագանձել 98.350 ՀՀ դրամ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Թումանյան) (այսուհետ՝ Դատարան) 19.07.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.11.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.07.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետը և 1099-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Անհիմն հարստացման հետևանքով պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ անձն ուրիշի հաշվին ձեռք բերի կամ խնայի գույք, գույքի ձեռքբերումը կամ խնայումը տեղի ունենա իրավական հիմքի բացակայությամբ: Արթուր Կարապետյանը ՀՀ պետական բյուջեից ձեռք է բերել 98.350 ՀՀ դրամի չափով գումար, որպիսի պարագայում առկա է վերը նշված վավերապայմաններից առաջինը: Նշված հանգամանքը հաստատված է համարվել Վերաքննիչ դատարանի կողմից: Մինչդեռ անկախ այն հանգամանքից, որ տվյալ ձեռքբերումը սույն գործով պատասխանողի համար դիտարկվում է անօրինական հարստացում, Դատարանը գործի փաստական հանգամանքները վերլուծել է այն եղանակով, որ անհիմն հարստացման գումարները ենթակա չեն վերադարձման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը պատշաճ վերլուծության չի արժանացրել այն հանգամանքը, որ խնդրո առարկա գումարն ստանալու իրավունք սույն գործով պատասխանողը չի ունեցել: Դատարանը շեշտադրել է այն, որ Կոմիտեն նման գումարի վերադարձը չպետք է կատարեր, մինչդեռ չի անդրադարձել այն հանգամանքին, որ Արթուր Կարապետյանն առհասարակ չի ունեցել նման դրամական միջոցներ ստանալու իրավունք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արթուր Կարապետյանը տեղյակ է եղել խնդրո առարկա բնակարանը ոչ թե կառուցապատողից, այլ երկրորդային շուկայից գնելու մասին, ինչը նշանակում է, որ Արթուր Կարապետյանը գիտակցված գործողություններով փորձել է մոլորեցնել վարչական մարմնին, որպեսզի օգտվի այն իրավունքից, որն օրենքով իրեն վերապահված չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ բացառվում է հարկային մարմնի կողմից պարտավորության գոյություն չունենալու հանգամանքին տիրապետելու պայմանը. վարչական մարմինը, կրելով պարտականություն հավաստի համարելու անձի կողմից ներկայացված տվյալները, ուղղակիորեն կրել է նաև պահանջված գումարները վերադարձնելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.11.2019 թվականի որոշումը և փոփոխել այն, կամ գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 05.04.2016 թվականին Արթուր Կարապետյանի, Հովակիմ Կարապետյանի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) միջև կնքված թիվ ՎՊ 16/796-08 վարկային պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է Արթուր Կարապետյանին և Հովակիմ Կարապետյանին տրամադրել նպատակային վարկ՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 2ա շենքի թիվ 91 բնակարան և Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 15 շենքի թիվ 4 բնակարան հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռք բերելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 10-23**).

2) Նույն օրն Ալբերտ Ղոնյանի (վաճառող), Նվարդ Մարտիրոսյանի (վաճառող), Արթուր Կարապետյանի (գնորդ, վարկառու և գրավատու), Գայանե Ավագյանի (գնորդ և գրավատու), Հովակիմ Կարապետյանի (վարկառու) և Բանկի (վարկատու և գրավատու) միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) թիվ ԳՊ 16/426-08

պայմանագրի համաձայն՝ Ալբերտ Ղոնյանը և Նվարդ Մարտիրոսյանը պարտավորվել են Արթուր Կարապետյանի և Գայանե Ավագյանի սեփականությանը հանձնել Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 15 շենքի թիվ 4 հասցեում գտնվող բնակարանը, վերջիններս էլ պարտավորվել են սեփականության իրավունքով ընդունել նշված անշարժ գույքը և վճարել պայմանավորված գինը: Արթուր Կարապետյանի և Գայանե Ավագյանի՝ նշված պայմանագրից ծագող սեփականության իրավունքը 11.04.2016 թվականին գրանցվել է **(հատոր 1-ին, գ.թ. 24-37, 54-55)**։

3) Արթուր Կարապետյանը 23.09.2016 թվականին և 31.10.2016 թվականին Կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել 2016 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ դիմումներ **(հատոր 1-ին, գ.թ. 40, 49)**։

4) Կապանի տարածքային հարկային տեսչության պետի կողմից 24.09.2016 թվականին և 01.11.2016 թվականին կազմվել են «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» համապատասխանաբար թիվ 102 և 142 եզրակացությունները **(հատոր 1-ին, գ.թ. 39, 48)**, որոնց հիման վրա ՀՀ պետական բյուջեից Արթուր Կարապետյանին վերադարձվել է ընդհանուր 98.350 ՀՀ դրամ գումար **(անվիճելի փաստ)**։

5) Կոմիտեի կողմից Արթուր Կարապետյանին ուղղված «Վերադարձված եկամտային հարկի գումարների վճարման վերաբերյալ» 29.11.2017 թվականին ելքագրված ծանուցմամբ հայտնվել է, որ վերջինիս վերադարձված եկամտային հարկի գումարները չեն համապատասխանում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշման պահանջներին՝ բնակարանը ձեռք չի բերվել անմիջապես կառուցապատողից: Հետևաբար հիպոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով հարկային մարմին չի ներկայացվել ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքը կառուցապատողի կողմից տրված տեղեկանք բնակարանն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված լինելու մասին (անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն): Ուստի Արթուր Կարապետյանը տեղեկացվել է, որ վերադարձված 98.350 ՀՀ դրամը ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պետք է վճարվի ՀՀ կենտրոնական գանձապետարանի եկամտային հարկի համապատասխան հաշվեհամարին: Միևնույն ժամանակ նույն գրությամբ հայտնվել է, որ նշված ժամկետում վճարում չկատարելու դեպքում գումարը կբռնագանձվի դատական կարգով **(հատոր 1-ին, գ.թ. 56)**։

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով հարկային մարմնի կողմից անձին (վարկառուին) վերադարձված եկամտային հարկի գումարներն անհիմն հարստացում համարելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնել հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով անձին (վարկառուին) վերադարձված եկամտային հարկի գումարները կարող են որակվել անհիմն հարստացում այն դեպքում, երբ առկա է այդ գումարներն անձին վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ վարչական ակտ, որն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են նաև անհիմն հարստացման հետևանքով:

Վերը նշված պարտավորությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 61-րդ գլխով նախատեսված նորմերով:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ նույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վկայակոչված նորմի բովանդակությունից բխում է, որ անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորության բովանդակությունն են կազմում անհիմն հարստացողից անհիմն ձեռք բերածը պահանջելու՝ տուժողի իրավունքը և անհիմն ձեռք բերածը կամ անհիմն խնայածը վերադարձնելու՝ անհիմն հարստացողի պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (*լրենս Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Զելին Մինոնյանի թիվ ԵԱԲԳ/0455/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը տարբերակում է անհիմն հարստացման երկու տեսակ՝

1) առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի գույքի ձեռքբերում,

2) առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի գույքի խնայում:

Ըստ այդմ, գույքի ձեռքբերման դեպքում տեղի է ունենում անհիմն հարստացողի գույքի ավելացում՝ տուժողի գույքի հաշվին, իսկ գույքի խնայումը նշանակում է, որ անձը պետք է իր գույքի հաշվին կատարեր որոշակի ծախսեր, սակայն դա չի անում՝ ի հաշիվ տուժողի ծախսերի, որի արդյունքում անհիմն հարստացողի գույքի ծավալային փոփոխություն տեղի չի ունենում:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ անհիմն հարստացման հետևանքով պարտավորությունների ծագման համար էական չէ ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց կամքը: Այլ կերպ ասած՝ անհիմն հարստացում կարող է տեղի ունենալ ինչպես ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանքով, այնպես էլ՝ նրանց կամքից անկախ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նման եզրահանգումը կատարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նորմի հիման վրա, որի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ (*լրենս Էլզա Մուրադովան, Լարիսա Հարությունյանն ընդդեմ Զանիբեկ Ազարյանի թիվ ԱԼՊ/1065/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհիմն հարստացման ինստիտուտը կարգավորող նորմերի կիրառման համար անհրաժեշտ և բավարար է

օրյեկտիվ արդյունքի առկայությունը, այն է՝ անձն առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի տուժողի հաշվին ձեռք է բերել կամ խնայել է գույք:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարան ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հետ կապված իրավական նորմերին, դրանցով կարգավորվող իրավահարաբերությունների բնույթին և առանձնահատկություններին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վարչական մարմինների հիմնական գործառնությանն նպատակը ՀՀ Սահմանադրության և օրենքների կատարումն է իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինների վերոնշյալ նպատակներով պայմանավորված արտաքին ներգործությանն ուղղված գործունեությունը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի, արտահայտվելով որոշակի իրավական ակտի կամ փաստացի ներգործության տեսքով: Այդ գործունեությունը, ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես նաև գործողությամբ կամ անգործությամբ, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Այսինքն՝ վարչարարության արդյունքը վրա է հասնում հետևյալ եղանակներով.

- 1) վարչական կամ նորմատիվ ակտի ընդունում,
- 2) ռեալ ակտի ընդունում (գործողության կամ անգործության կատարում):

Առաջին դեպքում ընդունվում է իրավական (վարչական կամ նորմատիվ) ակտ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կամ այլ օրենքների պահանջներին, այդ թվում՝ ընթացակարգերին համապատասխան, իսկ երկրորդ դեպքում ընդունվում է ռեալ ակտ, որը դրսևորվում է վարչական մարմնի կողմից գործողության կատարմամբ կամ անգործության դրսևորմամբ, որն էլ անձանց համար առաջացնում է փաստացի հետևանքներ:

Սույն գործի փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչական վարույթին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ): Իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում

է, որ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

- ա) անձի դիմումը, բողոքը.
- բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, նույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը (յրեն՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հանքարտադրողների ոլորտային հարկային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սպառնիչ կերպով թվարկել է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքները. դրանք են՝ (1) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումը կամ բողոքը և (2) վարչական մարմնի նախաձեռնությունը: Ընդ որում, անձի դիմումի կամ բողոքի հիման վրա վարչական վարույթը, որպես կանոն, համարվում է հարուցված համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, ինչը նշանակում է, որ այդ հիմքով վարչական վարույթի հարուցումը պայմանավորված չէ վարչական մարմնի կողմից որոշակի գործողությունների կատարմամբ:

Փաստորեն, որպես կանոն, անձի դիմումի կամ բողոքի հիման վրա հարուցվում է վարչական վարույթ (հարուցման փուլ), դիմումին համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ), և այդ վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև վարչական վարույթի արդյունքում ընդունվող վարչական ակտի հասկացությունը և դրա տեսակները՝ ըստ կարգավորման ներգործության:

Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝

ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որն է պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական վարույթի հարուցումը և դրա արդյունքում վարչական ակտի ընդունումը

պայմանավորված են հանրային իրավունքի բնագավառում որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմի առկայությամբ, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին (վարչական մարմնին) լիազորում է արձակել միակողմանի կարգադրություն՝ ուղղված կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը: Փաստորեն, վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունն առաջանում է այն բոլոր դեպքերում, երբ հարկավոր է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում որևէ կոնկրետ հարց, որն առնչվում է վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներին և պարտականություններին (*տե՛ս Գերբի Թովմասյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3310/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր որոշումներում բազմիցս անդրադառնալով վարչական ակտի հասկացության վերլուծությանը, արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հատկորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*տե՛ս Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես

կառուցապատողից բնակարան ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հետ կապված իրավակարգավորումներին Վճռաբեկ դատարանն հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը կարգավորում էր Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում էր Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողների շրջանակը, եկամտային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը (1-ին հոդված):

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով վճարված) եկամտային հարկը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով, բայց ոչ ավելի, քան՝

1) համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված եկամտային հարկի գումարը.

2) համապատասխան հաշվետու տարվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից հաշվարկված եկամտային հարկի գումարը:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված վարձու աշխատողին, անհատ ձեռնարկատիրոջը և նոտարին եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, կատարելով հարկեր վճարելու սահմանադրական պարտականությունը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված եկամտային հարկ վճարողները նույն օրենքով սահմանված կարգով վճարում էին եկամտային հարկ՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ձևավորմանը, որի միջոցով էլ պետությունն իրականացնում է իր գործառույթները: Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունն իր սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման շրջանակներում սահմանել է որոշակի դեպքեր, երբ անձին հնարավորություն է տրվում ետ ստանալ վճարված եկամտային հարկի գումարները (դրանց մի մասը): Մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է, որ եկամտային հարկը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական

բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով (սակայն ոչ ավել, քան օրենքով սահմանված չափով): Ընդ որում, քննարկվող դեպքում եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու իրավասությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ կառավարությունը 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշմամբ հաստատել է «Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման» կարգը (այսուհետ՝ Կարգ):

Այսպես՝ Կարգի 5-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի կողմից հիպոթեքային վարկի վճարված տոկոսների չափով առաջին անգամ եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով վարկառուին հարկային (տարածքային) մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և դրանց լուսապատճենները՝

1) եկամտային հարկի վերադարձի համար հարկային մարմնի կողմից սահմանված ձևի դիմում՝ վարկառուի բնակության վայրի հասցեի, կոնտակտային տվյալների, վարկառուին վերադարձվող եկամտային հարկի գումարները փոխանցելու համար բանկի անվանման և հաշվի համարի նշումով.

2) վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կամ, առկայության դեպքում, նույնականացման քարտը, կամ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը, կամ փախտակների կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.

3) վարկառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում).

4) հիպոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի նոտարական կարգով վավերացված պատճեն և գրավադրված գույքի սեփականության (կամ գրավադրված գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայական.

5) հիպոթեքային վարկը տրամադրած՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կողմից տրված տեղեկանք հաշվետու ժամանակահատվածում վարկառուի կողմից վճարված տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված) գումարների մասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վարկառուն համաձայնություն է տվել ԱԲՌԱ վարկային բյուրոյին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություններ կայացնել տեղեկատվություն տվյալ վարկառուի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում վճարված տոկոսների մասին.

6) Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքը կառուցապատողի կողմից տրված տեղեկանք բնակարանն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված լինելու մասին, կամ անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն.

7) Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում բնակարանի առքուվաճառքի պայմանագիր:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ հետագա հաշվետու ժամանակահատվածներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար վարկառուն հարկային (տարածքային) մարմին է ներկայացնում եկամտային հարկի վերադարձի համար հարկային մարմնի կողմից սահմանված ձևի դիմում՝ ապահովելով միայն նույն կարգի 5-րդ կետի 5-րդ ելթակետով սահմանված պահանջները, եթե մինչև այդ ներկայացված՝ նույն կարգի 5-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը մնացել է անփոփոխ:

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվության փոփոխությունների դեպքում վարկառուն պարտավոր է փոփոխության կատարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ դրա մասին տեղեկացնել

հարկային (տարածքային) մարմնին՝ ներկայացնելով փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը մերժվում է, եթե այն ներկայացնելու պահին համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված կամ համապատասխան հաշվետու տարվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից հաշվարկված եկամտային հարկի գումարներն ամբողջությամբ մարված չեն, և (կամ), եթե չեն ներկայացվել նույն կարգի 5-7-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը: Եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը հարկային (տարածքային) մարմնի կողմից մերժվելու դեպքում դիմումը ներկայացնելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մերժման հիմքերի մասին ծանուցվում է վարկառուին:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկի վերադարձի մերժման հիմքերի բացակայության դեպքում հարկային (տարածքային) մարմինը դիմումը ներկայացնելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմում է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձվող գումարի վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի եզրակացություն և ուղարկում է վերադաս հարկային մարմին՝ եզրակացությունների հիման վրա վերադարձը, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, կատարելու հանգամանքներն ստուգելու և հաշվառում իրականացնելու համար:

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ կատարվող վերադարձը վերադաս հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում ոչ ուշ, քան եզրակացությունն ստանալու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը գանձապետարան է ներկայացվում վճարման հանձնարարական: Վերադաս հարկային մարմնի կողմից եկամտային հարկի վերադարձը մերժվելու դեպքում եզրակացությունն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ մերժման հիմքերի մասին կազմված տեղեկանքը՝ արձանագրության հետ միասին, վերադարձվում է այն ներկայացրած հարկային (տարածքային) մարմին՝ մերժման հիմքերի մասին վարկառուին ծանուցելու համար:

Կարգի 12-րդ կետի համաձայն՝ հանձնարարականը ներկայացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվող գումարը փոխանցվում է վարկառուի բանկային հաշվին:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Կարգով մանրամասն նկարագրված գործընթացն իրենից ներկայացնում է վարչարարություն, այն է՝ վարչական վարույթ: Այսպես՝ անձը (վարկառու) հարկային (տարածքային) մարմին է ներկայացնում եկամտային հարկի վերադարձի համար հարկային մարմնի կողմից սահմանված ձևի դիմում, որը հարկային (տարածքային) մարմնում ստանալու օրվանից վարչական վարույթը համարվում է հարուցված (հարուցման փուլ): Այնուհետև վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում հարկային (տարածքային) մարմինն ուսումնասիրում է ներկայացված դիմումը և դրան կից փաստաթղթերը (դրանց լուսապատճենները), պարզում եկամտային հարկի գումարը վերադարձնելու կամ ներկայացված դիմումը մերժելու հիմքերի առկայությունը (բացակայությունը): Ընդ որում, ներկայացված դիմումը մերժելու հիմքերի առկայության դեպքում հարկային (տարածքային) մարմինը մերժում է այն, իսկ նման հիմքերի բացակայության դեպքում հարկային (տարածքային) մարմինը սահմանված ժամկետում կազմում է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձվող գումարի վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի եզրակացություն և ուղարկում է վերադաս հարկային մարմին՝ եզրակացության հիման վրա վերադարձը, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, կատարելու հանգամանքներն ստուգելու և հաշվառում իրականացնելու համար: Եթե կազմված եզրակացության հիման վրա կատարվող վերադարձն ընդունվում է վերադաս հարկային մարմնի կողմից, ապա անձի (վարկառուի) դիմումը համարվում է բավարարված (ինչի արդյունքում կատարվում է եկամտային հարկի վերադարձը), իսկ եթե վերադաս հարկային մարմինը մերժում է եկամտային հարկի վերադարձը, ապա մերժման հիմքերի մասին կազմված տեղեկանքը՝ արձանագրության հետ

միասին սահմանված ժամկետում վերադարձնում է այն ներկայացրած հարկային (տարածքային) մարմին՝ մերժման հիմքերի մասին վարկառուին ծանուցելու համար: Դա նշանակում է, որ անձի (վարկառուի) դիմումը մերժվել է: Փաստորեն, քննարկվող վարչական վարույթի արդյունքում հնարավոր են հետևյալ երեք իրավիճակները.

1) հարկային (տարածքային) մարմինը կազմում է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձվող գումարի վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի եզրակացություն, և կատարվող վերադարձն ընդունվում է վերադաս հարկային մարմնի կողմից,

2) հարկային (տարածքային) մարմինը մերժում է եկամտային հարկի գումարը վերադարձնան դիմումը,

3) հարկային (տարածքային) մարմինը կազմում է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձվող գումարի վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի եզրակացություն, սակայն վերադաս հարկային մարմինը մերժում է եկամտային հարկի վերադարձը և մերժման հիմքերի մասին կազմված տեղեկանքը՝ արձանագրության հետ միասին վերադարձնում այն ներկայացրած հարկային (տարածքային) մարմին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հարկային մարմնի կողմից ընդունվող ակտը բավարարում է վարչական ակտի բնորոշման համար բոլոր պայմաններին: Այսպես՝

1) **այն անհատական իրավական ակտ է** և ունի հստակորեն որոշված հասցեատեր՝ եկամտային հարկը վերադարձնելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու համար դիմած անձը (վարկառուն),

2) **այն ընդունվում է վարչական մարմնի՝ հարկային մարմնի կողմից,**

3) **այն ունի արտաքին ներգործություն,** քանի որ եկամտային հարկը վերադարձնելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու համար դիմած անձը (վարկառուն) կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի՝ հարկային մարմնի հետ,

4) **այն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,** քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) **այն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով,** քանի որ ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ վարչական ակտ ընդունելու համար դիմած անձի (վարկառուի) կողմից ի կատարումն իր հարկային պարտավորությունների վճարված եկամտային հարկի գումարների (դրանց մի մասի) վերադարձման հարցի լուծմանը,

6) **դրա ուղղակի հետևանքը** վարչական ակտ ընդունելու համար դիմած անձին (վարկառուին) եկամտային հարկը ետ ստանալու իրավունքի տրամադրման մերժումն է, որն ուղեկցվում է հայցվող գումարն անձի (վարկառուի) չստանալով, կամ եկամտային հարկը ետ ստանալու՝ անձի (վարկառուի) իրավունքի ձեռքբերումը՝ որպես օրենսդրությամբ սահմանված իրավունքի կենսագործում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քննարկվող վարչական վարույթի արդյունքում ընդունվող վարչական ակտն ըստ կարգավորման ներգործության կարող է լինել երկու տեսակի՝

1) **բարենպաստ վարչական ակտ.** *սուկա է այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից կազմվել է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձվող գումարի վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի եզրակացություն, և կատարվող վերադարձն ընդունվել է վերադաս հարկային մարմնի կողմից:* Ընդ որում, այս վարչական ակտին հաջորդում է դրա կատարումը: Այն ենթադրում է վճարման հանձնարարականի ներկայացում գանձապետարան՝ ոչ ուշ, քան նշված եզրակացությունը վերադաս հարկային մարմնի կողմից ստանալու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը: Դրանից

հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվող գումարը փոխանցվում է վարկառուի բանկային հաշվին:

2) **միջամտող վարչական ակտ.** *առկա է այն դեպքում, երբ եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը հարկային մարմնի կողմից մերժվել է:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը, ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալու այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց (*տե՛ս Լյուբով Փիլյոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և այլոց թիվ՝ ՎԴԿ/2085/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վերը նշված իրավական նորմերի և վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը (վարկառուն) եկամտային հարկը վերադարձնելու դիմումով դիմել է հարկային (տարածքային) մարմնին, և հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունվել է բարենպաստ վարչական ակտ, այդ վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ի կատարումն վարչական ակտի անձին (վարկառուին) վերադարձված գումարները չեն կարող որակվել անհիմն հարստացում, քանի որ թեև այդ դեպքում անձը (վարկառուն) ուրիշի հաշվին ձեռք է բերում գույք, սակայն նման հարստացումը չի կարող համարվել անօրինական: Այսինքն՝ այդ դեպքում բացակայում է անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ պայմաններից մեկը, այն է՝ իրավական հիմք չլինելը, ինչը բավարար է անհիմն հարստացման առկայությունը բացառելու համար:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է քաղաքացիական օրենսդրությամբ և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների շրջանակը: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները (այսուհետ՝ այլ իրավական ակտեր) սահմանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ: (...):

Միաժամանակ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքային իրավահարաբերություններն իրենց բնույթով կարող են լինել ոչ միայն մասնավոր, այլև հանրային: Հաշվի առնելով

իրավունքի տարբեր ճյուղերով կարգավորվող գույքային իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետով ամրագրել է սկզբունքային դրույթ՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ: Նշված կանոնից բացառություն են միայն այն դեպքերը, երբ օրենսդրությամբ նախատեսված է այդ հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրառման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին (վարկառուին) հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների (դրանց մի մասի) վերադարձման հետ կապված հարաբերություններն իրենց ընդունելով հարկային հարաբերություններ են, և դրանց շրջանակներում ընդունված վարչական ակտի հիման վրա անձին (վարկառուին) տրամադրված գումարների վերադարձման նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերը (այդ թվում՝ դրանցով սահմանված՝ անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները) կարող են կիրառվել բացառապես օրենսդրությամբ նման հնարավորություն նախատեսված լինելու դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ինչպես դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու, այնպես էլ վարչական ակտն ընդունելու պահից՝ նույն մասի երկրորդ պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառություններով:

Նույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում [երբ վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի] ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվում այդ ակտն ընդունելու պահից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների: Սակայն եթե մինչև ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչելը դրա կատարման կամ կիրառման հետևանքով որևէ անձի կամ Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի վնաս է պատճառվել, ապա դա ենթակա է հատուցման սույն օրենքի VII բաժնի («Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար») դրույթներին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով, արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում **կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները:**

Հատուցման ենթակա օգուտի չափը պետք է սահմանի այն վարչական մարմինը, որն անվավեր է ճանաչել ոչ իրավաչափ վարչական ակտը:

Ընդ որում, օգուտ ստացողը չի կարող հղում վստահության իրավունքի վրա, եթե վարչական մարմինը բավարար ապացույցներ ունի, որ օգուտ ստացող անձը համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է նույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խախտումների միջոցով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով սահմանված են ոչ իրավաչափ վարչական

ակտն անվավեր ճանաչելու հետևանքները: Մասնավորապես՝ այդ հողվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչական ակտի հիման վրա անձին տրամադրված օգուտների վերադարձման (հատուցման) հարցը կարող է քննարկվել իրավասու վարչական մարմնի կողմից կատարվող վարչարարության շրջանակներում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդիրը քննարկվող հարաբերություններում որոշակի դեպքերում կիրառելի է համարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները, սակայն դրանք թույլատրել է կիրառել իրավասու վարչական մարմնի կողմից կատարվող վարչարարության շրջանակներում: Իսկ որևէ այլ դեպքում (վարչարարությունից կամ դրա նկատմամբ իրավասու մարմնի կողմից իրականացվող վերահսկողությունից դուրս) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները վարչական ակտի հիման վրա անձին տրամադրված օգուտները վերադարձնելու (հատուցելու) նկատմամբ կիրառելու հնարավորություն օրենսդրությամբ սահմանված չէ:

Հաշվի առնելով, որ անձին (վարկառուին) հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների (դրանց մի մասի) վերադարձը կատարվում է վարչական ակտի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող դեպքում անձին (վարկառուին) տրամադրված գումարները վերադարձնելու նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումներից դուրս չեն կարող կիրառվել՝ օրենսդրությամբ նման հնարավորություն նախատեսված չլիներու պայմաններում:

Այսպիսով, հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով անձին (վարկառուին) վերադարձված եկամտային հարկի գումարները չեն կարող որակվել անհիմն հարստացում այն դեպքում, երբ առկա է այդ գումարներն անձին վերադարձնան ենթակա լինելու վերաբերյալ վարչական ակտ, որն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործը հարուցվել է Կոմիտեի կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա, որով վերջինս պահանջել է Արթուր Կարապետյանից բռնագանձել 98.350 ՀՀ դրամ:

Դատարանը, մերժելով հայցը, պատճառաբանել է, որ «Արթուր Կարապետյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կասյանի ՏՀՏ է ներկայացվել 2016թ. 2-րդ, 3-րդ եռամսյակների հիփոթեքային վարկի վճարված գումարների վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ դիմումներ, սակայն ի խախտումն ՀՀ Կառավարության 19.05.2015թ. թիվ 205-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի ՀՀ ԿԱ ՊԵԿ Կասյանի ՏՀՏ չի ներկայացրել Հասարակական Հանրապետության փարսածրում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքը կառուցապարտի կողմից փրված տեղեկանք բնակարանն անմիջապես կառուցապարտից ձեռքբերված լինելու մասին, կամ անհարկական բնակելի փան շինարարության թույլտվություն: Արդյունքում Արթուր Կարապետյանին 2016թ. 2-րդ, 3-րդ եռամսյակների ընդհանուր 98,350 ՀՀ դրամ եկամտային հարկի գումարները՝ ձեռք է բերել՝ անհիմն, այսինքն հարստացումն անօրինակական է», «(...) ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գիրքեր եկամտահարկի վերադարձի պարտավորության բացակայության մասին, որ նշված գումարները պարտախանութին փվել է ի կարարումն գոյություն չունեցող պարտավորության, որի հիմքով էլ (...) պարտախանութի կողմից անհիմն հարստացված գումարները ենթակա չեն վերադարձման»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանը, վերագրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին և եզրահանգումներին, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արթուր Կարապետյանը 23.09.2016 թվականին և 31.10.2016 թվականին Կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել 2016 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ դիմումներ:

Կապանի տարածքային հարկային տեսչության պետի կողմից 24.09.2016 թվականին և 01.11.2016 թվականին կազմվել են «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» համապատասխանաբար թիվ 102 և 142 եզրակացությունները, և ՀՀ պետական բյուջեից Արթուր Կարապետյանին վերադարձվել է ընդհանուր 98.350 ՀՀ դրամ գումար:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արթուր Կարապետյանի կողմից 23.09.2016 թվականին և 31.10.2016 թվականին Կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչություն ներկայացված դիմումների հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ, որոնք եզրակակվել են բարենպաստ վարչական ակտերի ընդունմամբ՝ 24.09.2016 թվականի և 01.11.2016 թվականի «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» համապատասխանաբար թիվ 102 և 142 եզրակացություններ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված վարչական ակտերն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչված չլինելու պայմաններում (դրանք ոչ իրավաչափ ճանաչված լինելու փաստ չի վկայակոչվել և համապատասխան ապացույց չի ներկայացվել Կոմիտեի կողմից), սույն գործի քննության շրջանակներում էլ դատարանները պետք է ելնեն այդ վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածից՝ կասկածի տակ չդնելով դրանց իրավաչափությունը: Ուստի ի կատարումն քննարկվող վարչական ակտերի Արթուր Կարապետյանին վերադարձված ընդհանուր 98.350 ՀՀ դրամ գումարը որևէ պարագայում չի կարող որակվել անհիմն հարստացում: Դա իր հերթին նշանակում է, որ այդ գումարները չեն կարող վերադարձվել որպես անհիմն հարստացում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման պայմաններում Արթուր Կարապետյանին վերադարձված (տրամադրված) գումարները որպես անհիմն հարստացում վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկը չի կարող հիմնավոր լինել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները Կոմիտեի հայրը մերժման ենթակա լինելու հիմքում դրել են ոչ թե վերը նշված պատճառաբանությունները, այլ՝ ըստ էության գնահատական տալով օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չճանաչված վարչական ակտերին, դրանք համարել են ոչ իրավաչափ, իսկ ի կատարումն այդ ակտերի Արթուր Կարապետյանին վերադարձված (տրամադրված) գումարները որակել են անհիմն հարստացում, ապա քննարկելով անհիմն հարստացում հանդիսացող գումարները վերադարձման ենթակա լինելու հարցը, գտել են, որ դրանք ենթակա չեն վերադարձման պատճառաբանելով, որ Կոմիտեն գիտեր համապատասխան պարտավորության բացակայության մասին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհիմն հարստացման բացակայության պայմաններում առհասարակ չի կարող քննարկվել Արթուր Կարապետյանին վերադարձված (տրամադրված) գումարները որպես անհիմն հարստացում վերադարձման ենթակա լինելու հարցը:

Իսկ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ վարչական մարմինը, կրելով պարտականություն հավաստի համարելու անձի կողմից ներկայացված տվյալները, ուղղակիորեն կրել է նաև պահանջված գումարները վերադարձնելու պարտականություն, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այդ գումարներն Արթուր Կարապետյանին վերադարձվել (տրամադրվել) են օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չճանաչված (հետևաբար ենթադրվում է՝ իրավաչափ) վարչական ակտերի հիման վրա, իսկ թե ինչպես, ինչ տվյալների և փաստաթղթերի հիման վրա են այդ վարչական ակտերն ընդունվել, նշված հարցերը սույն գործով քննության առարկա չեն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը սխալ է պատճառաբանված՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ պատճառաբանում է Վերաքննիչ դատարանի դատական ակտը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.11.2019 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՄԴ/0431/02/18 քաղաքացիական գործով 23.10.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 23.10.2020 թվականին քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.11.2019 թվականի որոշման դեմ, ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Արթուր Կարապետյանի՝ 98.350 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, սույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.11.2019 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ որոշման պատճառաբանություններով:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Տ. Պետրոսյանս, Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան Կոմիտեն պահանջել է Արթուր Կարապետյանից բռնագանձել 98.350 ՀՀ դրամ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Թումանյան) (այսուհետ՝ Դատարան) 19.07.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.11.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.07.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 2-րդ կետը և 1099-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Անհիմն հարստացման հետևանքով պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ անձն ուրիշի հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, գույքի ձեռքբերումը կամ խնայումը պետք է տեղի ունենա իրավական հիմքի բացակայությամբ: Արթուր Կարապետյանը ՀՀ պետական բյուջեից ձեռք է բերել 98.350 ՀՀ դրամի չափով գումար, որպիսի պարագայում առկա է վերը նշված վավերապայմաններից առաջինը: Նշված հանգամանքը հաստատված է համարվել Վերաքննիչ դատարանի կողմից: Մինչդեռ անկախ այն հանգամանքից, որ տվյալ ձեռքբերումը սույն գործով պատասխանողի համար դիտարկվում է անօրինական հարստացում, Դատարանը գործի փաստական հանգամանքները վերլուծել է այն եղանակով, որ անհիմն հարստացման գումարները ենթակա չեն վերադարձման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը պատշաճ վերլուծության չի արժանացրել այն հանգամանքը, որ խնդրո առարկա գումարն ստանալու իրավունք սույն գործով պատասխանողը չի ունեցել: Դատարանը շեշտադրել է այն, որ Կոմիտեն նման գումարի վերադարձը չպետք է կատարեր, մինչդեռ չի անդրադարձել այն հանգամանքին,

որ Արթուր Կարապետյանն առհասարակ չի ունեցել նման դրամական միջոցներ ստանալու իրավունք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արթուր Կարապետյանը տեղյակ է եղել խնդրո առարկա բնակարանը ոչ թե կառուցապատողից, այլ՝ երկրորդային շուկայից գնելու մասին, ինչը նշանակում է, որ Արթուր Կարապետյանը գիտակցված գործողություններով փորձել է մոլորեցնել վարչական մարմին, որպեսզի օգտվի այն իրավունքից, որն օրենքով իրեն վերապահված չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ բացառվում է հարկային մարմնի կողմից պարտավորության գոյություն չունենալու հանգամանքին տիրապետելու պայմանը. վարչական մարմինը, կրելով պարտականություն հավաստի համարելու անձի կողմից ներկայացված տվյալները, ուղղակիորեն կրել է նաև պահանջված գումարները վերադարձնելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.11.2019 թվականի որոշումը և փոփոխել այն, կամ գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

3. Որպես վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճարելի դատարանն արձանագրել է հետևյալը

1) 05.04.2016 թվականին Արթուր Կարապետյանի, Հովակիմ Կարապետյանի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) միջև կնքված թիվ ՎՊ 16/796-08 վարկային պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է Արթուր Կարապետյանին և Հովակիմ Կարապետյանին տրամադրել նպատակային վարկ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 2ա շենքի թիվ 91 բնակարան և Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 15 շենքի թիվ 4 բնակարան հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռք բերելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 10-23**).

2) սույն օրն Ալբերտ Ղոնյանի (վաճառող), Նվարդ Մարտիրոսյանի (վաճառող), Արթուր Կարապետյանի (գնորդ, վարկառու և գրավատու), Գայանե Ավագյանի (գնորդ և գրավատու), Հովակիմ Կարապետյանի (վարկառու) և Բանկի (վարկատու և գրավատու) միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) թիվ ԳՊ 16/426-08 պայմանագրի համաձայն՝ Ալբերտ Ղոնյանը և Նվարդ Մարտիրոսյանը պարտավորվել են Արթուր Կարապետյանի և Գայանե Ավագյանի սեփականությանը հանձնել Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 15 շենքի թիվ 4 հասցեում գտնվող բնակարանը, վերջիններս էլ պարտավորվել են սեփականության իրավունքով ընդունել նշված անշարժ գույքը և վճարել պայմանավորված գինը: Արթուր Կարապետյանի և Գայանե Ավագյանի՝ նշված պայմանագրից ծագող սեփականության իրավունքը 11.04.2016 թվականին գրանցվել է (**հատոր 1-րդ, գ.թ. 24-37, 54-55**).

3) Արթուր Կարապետյանը 23.09.2016 թվականին և 31.10.2016 թվականին Կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել 2016 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ դիմումներ (**հատոր 1-րդ, գ.թ. 40, 49**).

4) Կապանի տարածքային հարկային տեսչության պետի կողմից 24.09.2016 թվականին և 01.11.2016 թվականին կազմվել են «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» համապատասխանաբար թիվ 102 և 142 եզրակացությունները (**հատոր 1-րդ, գ.թ. 39, 48**), որոնց հիման վրա ՀՀ պետական բյուջեից Արթուր Կարապետյանին վերադարձվել է ընդհանուր 98.350 ՀՀ դրամ գումար (անվիճելի փաստ).

5) Կոմիտեի կողմից Արթուր Կարապետյանին ուղղված «Վերադարձված եկամտային հարկի գումարների վճարման վերաբերյալ» 29.11.2017 թվականին ելքագրված ծանուցմամբ հայտնվել է, որ վերջինիս վերադարձված եկամտային հարկի գումարները չեն համապատասխանում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշման պահանջներին՝ բնակարանը ձեռք

չի բերվել անմիջապես կառուցապատողից: Հետևաբար հիպոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով հարկային մարմին չի ներկայացվել ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքը կառուցապատողի կողմից տրված տեղեկանք բնակարանն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված լինելու մասին (անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն): Ուստի Արթուր Կարապետյանը տեղեկացվել է, որ վերադարձված 98.350 ՀՀ դրամը ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պետք է վճարվի ՀՀ կենտրոնական գանձապետարանի եկամտային հարկի համապատասխան հաշվեհամարին: Մինևույն ժամանակ նույն գրությանը հայտնվել է, որ նշված ժամկետում վճարում չկատարելու դեպքում գումարը կբռնագանձվի դատական կարգով (**հատոր 1-րդ, գ.թ. 56**):

4. Հարուկ կարծիքի պարճառությանությունները և եզրահանգումները

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արթուր Կարապետյանը 23.09.2016 թվականին և 31.10.2016 թվականին Կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել 2016 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ դիմումներ:

Կապանի տարածքային հարկային տեսչության պետի կողմից 24.09.2016 թվականին և 01.11.2016 թվականին կազմվել են «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» համապատասխանաբար թիվ 102 և 142 եզրակացությունները, և ՀՀ պետական բյուջեից Արթուր Կարապետյանին վերադարձվել է ընդհանուր 98.350 ՀՀ դրամ գումար: Վճարելի դատարանն արձանագրել է, որ Արթուր Կարապետյանի կողմից 23.09.2016 թվականին և 31.10.2016 թվականին Կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչություն ներկայացված դիմումների հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ, որոնք եզրափակվել են բարենպաստ վարչական ակտերի ընդունմամբ՝ 24.09.2016 թվականի և 01.11.2016 թվականի «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» համապատասխանաբար թիվ 102 և 142 եզրակացություններ:

Վճարելի դատարանը գտել է, որ նշված վարչական ակտերն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչված չլինելու պայմաններում (դրանք ոչ իրավաչափ ճանաչված լինելու փաստ չի վկայակոչվել և համապատասխան ապացույց չի ներկայացվել Կոմիտեի կողմից), սույն գործի քննության շրջանակներում էլ դատարանները պետք է ելնեն այդ վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածից՝ կասկածի տակ չընելով դրանց իրավաչափությունը: Ուստի ի կատարումն քննարկվող վարչական ակտերի՝ Արթուր Կարապետյանին վերադարձված ընդհանուր 98.350 ՀՀ դրամ գումարը որևէ պարագայում չի կարող որակվել անհիմն հարստացում: Դա իր հերթին նշանակում է, որ այդ գումարները չեն կարող վերադարձվել որպես անհիմն հարստացում: Վճարելի դատարանի գնահատմամբ նման պայմաններում Արթուր Կարապետյանին վերադարձված (տրամադրված) գումարները որպես անհիմն հարստացում վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ վճարելի բողոքի փաստարկը չի կարող հիմնավոր լինել:

Վերաքննիչ դատարանի դատողությունների հիման վրա Վճարելի դատարանի դատավորների մեծամասնությունը գտել է, որ Կոմիտեի վճարելի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման: Համաձայնելով որոշման եզրափակիչ մասի հետ, հայտնում ենք մեր անհամաձայնությունը դրա պատճառաբանական մասի վերաբերյալ:

Համադրելով վճարելի դատարանի կողմից որպես վարչական ակտ որակված հիշյալ եզրակացությունները ՀՀ կառավարության 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշմամբ հաստատված «Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման» կարգի իրավակարգավորումների և վճարելի դատարանի որոշման մեջ վկայակոչված նախադեպային որոշումների հետ պետք է փաստենք, որ դրանք չեն կարող Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դիտվել որպես վարչական ակտ հետևյալ նկատառումներով.

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով վճարված) եկամտային հարկը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով, բայց ոչ ավելի, քան՝

1) համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված եկամտային հարկի գումարը.

2) համապատասխան հաշվետու տարվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից հաշվարկված եկամտային հարկի գումարը:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված՝ վարձու աշխատողին, անհատ ձեռնարկատիրոջը և նոտարին եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարությունը 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշմամբ հաստատել է «Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման» կարգը (այսուհետև՝ Կարգ):

Կարգի 5-րդ կետը սահմանում է հարկային մարմնի կողմից հիպոթեքային վարկի վճարված տոկոսների չափով առաջին անգամ եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով վարկառուն հարկային (տարածքային) մարմին ներկայացվող փաստաթղթերի և դրանց լուսապատճենների անվանացանկը:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ հետագա հաշվետու ժամանակահատվածներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար վարկառուն հարկային (տարածքային) մարմին է ներկայացնում եկամտային հարկի վերադարձի համար հարկային մարմնի կողմից սահմանված ձևի դիմում՝ ապահովելով միայն նույն կարգի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջները, եթե մինչև այդ ներկայացված՝ նույն կարգի 5-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը մնացել է անփոփոխ:

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվության փոփոխությունների դեպքում վարկառուն պարտավոր է փոփոխության կատարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ դրա մասին տեղեկացնել հարկային (տարածքային) մարմնին՝ ներկայացնելով փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը մերժվում է, եթե այն ներկայացնելու պահին համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված կամ համապատասխան հաշվետու տարվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից հաշվարկված եկամտային հարկի գումարներն ամբողջությամբ մարված չեն, և (կամ), եթե չեն ներկայացվել նույն կարգի 5-7-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը: *Եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը հարկային (տարածքային) մարմնի կողմից մերժվելու դեպքում դիմումը ներկայացնելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մերժման հիմքերի մասին ծանուցվում է վարկառուն:*

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկի վերադարձի մերժման հիմքերի քաջակալության դեպքում հարկային (տարածքային) մարմինը դիմումը ներկայացնելուն

հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմում է արվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձվող գումարի վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի եզրակացություն և ուղարկում է վերադաս հարկային մարմին՝ եզրակացությունների հիման վրա վերադարձը, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, կարարելու հանգամանքներն արտգելու և հաշվառում իրականացնելու համար:

Կարգի 10-րդ կերի համաձայն՝ կարարվող վերադարձը վերադաս հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում ոչ ուշ, քան եզրակացությունն արանապու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը գանձապետարան է ներկայացվում վճարման հանձնարարական: Վերադաս հարկային մարմնի կողմից եկամտային հարկի վերադարձը մերժվելու դեպքում եզրակացությունն արանապու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ մերժման հիմքերի մասին կազմված տեղեկանքը՝ արձանագրության հետ միասին, վերադարձվում է այն ներկայացրած հարկային (տարածքային) մարմին՝ մերժման հիմքերի մասին վարկառուին ծանուցելու համար:

Կարգի 12-րդ կերի համաձայն՝ հանձնարարականը ներկայացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվող գումարը փոխանցվում է վարկառուի քանկային հաշվին:

Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ եկամտահարկի վերադարձի առնչությամբ իրականացվող վարչարարությունը սկսվում է սահմանված կարգով տարածքային հարկային տեսչություն համապատասխան դիմումի ներկայացմամբ և ավարտվում վերադաս հարկային մարմնի կողմից գանձապետարան ներկայացվող վճարման հանձնարարագրով կամ դիմողին եկամտահարկի վերադարձի մերժման պատճառների մասին գրավոր ծանուցումով: Այսինքն Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասում որպես վարչական ակտ բնութագրված 24.09.2016թ. և 01.11.2016թ. կազմված «Եկամտային հարկի գումարների վերադարձ կատարելու մասին» թիվ 102 և 142 եզրակացությունները չեն եզրափակում սկսված վարչարարությունը և վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներից ելնելով չեն կարող դիտվել որպես վարչական ակտ:

Տարածքային հարկային տեսչության պետի կողմից վերադաս հարկային մարմնին տրված եզրակացության բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ տվյալ փաստաթուղթը ընդամենը հավաստում է դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերի լրիվությունը, ներկայացված տեղեկությունների իսկությունը, և այդ եզրակացության հիման վրա *վերադաս հարկային մարմնի կողմից գանձապետարանին վճարման հանձնարարագիր ներկայացնելու պարտադիր չէ*, քանի որ տարածքային հարկային տեսչության դրական եզրակացության պայմաններում վերադաս հարկային մարմինը կարող է որոշել չվերադարձնել եկամտահարկի գումարը՝ դիմողին ծանուցելով մերժման հիմքերի և պատճառների մասին՝ չկայացնելով գրավոր վարչական ակտ:

Կառավարության կողմից ընդունված Կարգի իրավակարգավորումներից բխում է, որ ՀՀ կառավարությունը 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշմամբ հաստատված «Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման» կարգի բովանդակությունից հետևում է, որ վարչարարությունը սկսվում է դիմող կողմից համապատասխան դիմում ներկայացնելով և դիմումը Կարգի պահանջներին բավարարելու դեպքում ավարտվում է Գանձապետարան վճարման հանձնարարագիր ներկայացնելով կամ եկամտահարկի վերադարձը մերժելով՝ դիմողին ծանուցելով մերժման պատճառների մասին: Նշված գործընթացում բացակայում է գրավոր վարչական ակտի ընդունման հանգամանքը:

Վերադաս հարկային մարմնին ուղղված տարածքային հարկային տեսչության գրավոր եզրակացությունը վարչական ակտ դիտելու դեպքում պետք է ընդունենք, որ գրավոր վարչական ակտ պետք է համարվի նաև Կոմիտեի կողմից Արթուր Կարապետյանին ուղղված «Վերադարձված եկամտային հարկի գումարների վճարման վերաբերյալ» 29.11.2017 թվականի ծանուցումը, որով հայտնվել է, որ «վերադարձված եկամտային հարկի գումարները չեն համապատասխանում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի

և ՀՀ կառավարության 19.02.2015 թվականի թիվ 205-Ն որոշման պահանջներին՝ բնակարանը ձեռք չի բերվել անմիջապես կառուցապատողից: Հետևաբար հիպոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով հարկային մարմին չի ներկայացվել ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքը կառուցապատողի կողմից տրված տեղեկանք բնակարանն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված լինելու մասին (անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն): Ուստի Արթուր Կարապետյանը տեղեկացվել է, որ վերադարձված 98.350 ՀՀ դրամը ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պետք է վճարվի ՀՀ կենտրոնական գանձապետարանի եկամտային հարկի համապատասխան հաշվեհամարին: Նույն գրությամբ հայտնվել է, որ նշված ժամկետում վճարում չկատարելու դեպքում գումարը կբռնագանձվի դատական կարգով»:

Վերը նշված պատճառաբանությամբ հիմնավոր չենք համարում որոշմամբ կատարված իրավական վերլուծությունը և եզրահանգումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի կիրառելիության հետ կապված, քանի որ նշված հոդվածի կիրառումը պայմանավորված է բացառապես գրավոր վարչական ակտի անվավեր ճանաչման և անվավերության հետևանքներ կիրառելու հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ անհիմն հարստացման իրավահարաբերությունն առկա է այն դեպքում, երբ ձեռքբերողը գույք է ձեռք բերել կամ խնայել առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի: Ընդ որում «այլ իրավական ակտեր» ձևակերպումը նշված նորմում տրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ հոդվածում գործածված «այլ իրավական ակտեր» հասկացության իմաստով, այսինքն՝ տվյալ դեպքում օրենսդիրն ի նկատի ունի քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերը: Վարչական ակտերը տվյալ նորմում գործածված «այլ իրավական ակտեր» հասկացության մեջ ներառված չեն: Այսինքն՝ եթե անգամ ձեռք բերողը գույքը ձեռք է բերել կամ խնայել վարչական ակտի հիման վրա, սակայն առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, ապա միևնույն է, անհիմն հարստացման իրավահարաբերություններն առկա են, ուստի դրանց նկատմամբ կիրառելի են անհիմն հարստացման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումները: Հետևաբար, հիմնավոր չէ որոշման այն հետևությունը, որ տվյալ դեպքում Արթուր Կարապետյանին վերադարձված գումարը չի կարող որակվել որպես անհիմն հարստացում: Այլ բան է, որ անհիմն հարստացման այդ գումարը ենթակա չէ վերադարձման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, ըստ որի որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված գումարները: Այսինքն՝ Կոմիտեն իր վկայակոչած փաստական հանգամանքների պայմաններում պարտավորություն չունեն վիճարկվող գումարը Արթուր Կարապետյանին տրամադրելու, և այդ գումարը վերջինիս կողմից ենթակա չէ վերադարձման, քանի որ այն Կոմիտեի կողմից նրան է տրվել ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման՝ վերը շարադրված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Աստուկյան Ա. Բարսեղյան
Ս. Պետրոսյան Էդ. Սեդրակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/2440/02/18
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/2440/02/18
Նախագահող դատավոր՝	Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝	Ա. Խառատյան Մ. Հարթենյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ա. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի 23-ին գրավոր ընթացակարգով քննելով Աննա Վարդանյանի ներկայացուցիչ Ավետիս Քալաշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Ղազարյանի ընդդեմ Աննա Վարդանյանի՝ երեխային մշտական բնակության վայր անհապաղ վերադարձնելուն կարգադրելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Ղազարյանը պահանջել է կարգադրել Աննա Վարդանյանին երեխային՝ Մարկ Աշոտի Ղազարյանին, անհապաղ վերադարձնել իր մշտական բնակության վայր՝ Ռուսաստանի Դաշնություն, Նովոռուսիյսկ քաղաք, Ձերժինսկոյ թիվ 7 հասցե:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Ետյան) (այսուհետ՝ Դատարան) 14.11.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2019 թվականի որոշմամբ Աշոտ Ղազարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 14.11.2018 թվականի վճիռը փոփոխվել է՝ հայցը բավարարվել է և կարգադրվել է Աննա Վարդանյանին՝ 25.02.2015 թվականին ծնված և իր կողմից Հայաստանի Հանրապետությունում անօրինական պահվող Մարկ Ղազարյանին անհապաղ վերադարձնելու նրա մշտական բնակության վայր՝ «Ռուսաստանի Դաշնություն, ք. Նովոռոսիյսկ, Ձերժինսկու թիվ 7» հասցե:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աննա Վարդանյանի ներկայացուցիչ Ավետիս Քալաշյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Աշոտ Ղազարյանի ներկայացուցիչ Աշոտ Ապրետյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մեթոդները մասին» 25.10.1980 թվականի Հաագայի կոնվենցիայի⁵ (այսուհետը՝ Հաագայի կոնվենցիա) 1-ին, 3-րդ, 5-րդ, 12-րդ, 20-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 18-րդ հոդվածները, ՀՀ Սահմանադրության 36-րդ, 37-րդ հոդվածները, ՀՀ ընդհանրական օրենսգրքի 41-րդ, 42-րդ, 49-րդ, 51-րդ, 54-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հաագայի կոնվենցիայի համապատասխան հոդվածների վերլուծությունից բխում է, որ երեխային վերադարձնելու պարտականությունը բացարձակ բնույթ չի կրում, և ոչ բոլոր դեպքերում է, որ դատարանը պարտավոր է նման կարգադրություն արձակել: Մասնավորապես՝ այդ պարտականությունը ենթակա է նաև ժամկետային և բովանդակային սահմանափակումների, հատկապես այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս երեխայի շահերին վերաբերող հարցեր, այն ինքնաբերաբար պետք է դառնա ստեղծված իրավիճակի կամ վեճի առաջնահերթ և կարևորագույն պայման, և բոլոր դեպքերում առաջնայինը և գերական երեխայի լավագույն շահն է:

Ծնողները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են դաստիարակել իրենց երեխաներին, ինչպես նաև պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման հարցում, ընդ որում՝ այս հարցերում ծնողների իրավունքներն ու պարտականությունները հավասար են: Երեխայից առանձին ապրող ծնողը ևս իրավունք ունի շփվելու իր երեխայի հետ և մասնակցելու նրա դաստիարակությանը, իսկ այն ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը չի վնասում երեխայի ֆիզիկական ու հոգեկան վիճակին, նրա բարոյական զարգացմանը: Ավելին՝ երեխան իր հերթին ունի շփվելու իրավունք, իսկ ծնողներից առանձին ապրելու հանգամանքը չի կարող խոչընդոտել այդ իրավունքի պատշաճ իրականացմանը:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, խախտելով իրավական նորմերի պահանջները, ճիշտ չի գնահատել գործում եղած ապացույցները և լիովին ոտնահարել է ինչպես Աննա Վարդանյանի՝ որպես ծնողի իրավունքները, այնպես էլ երեխայի՝ Մարկ Ղազարյանի շահերը:

Ինչպես Դատարանը, այնպես էլ՝ վերաքննիչ դատարանը գտել են, որ սույն դեպքում բացակայում է երեխային անօրինական տեղափոխելու հանգամանքը, իսկ ինչ

⁵ Ընդունվել է 1980 թվականի հոկտեմբերի 25-ին Միջազգային մասնավոր իրավունքի գծով Հաագայի Խորհրդածոլովի տասնչորսերորդ նստաշրջանում, ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006 թվականի հոկտեմբերի 23-ին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից:

վերաբերում է երեխային անօրինական պահելուն, ապա վերաքննիչ դատարանը պետք է ճիշտ գնահատեր բնտանիքում ստեղծված իրադրությունը: Վերաքննիչ դատարանը, կայացնելով երեխային վերադարձնելու մասին որոշում, փաստացի զրկել է Աննա Վարդանյանին իր երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու իրավունքից, քանի որ նա ՌԴ չի կարող մեկնել, հաշվի չի առել ծնողական շահը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.11.2018 թվականի վճիռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխաանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ սույն իրավահարաբերությունները կարգավորվում են Հաագայի կոնվենցիայի դրույթներով: Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի 14.11.2018 թվականի վճիռը, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ և վերականգնել է երեխայի խախտված իրավունքները և շահերը: Վերաքննիչ դատարանն օբյեկտիվորեն եզրահանգել է, որ Մարկ Ղազարյանը Հայաստանի Հանրապետությունում պահվում է անօրինական կերպով: Երեխային իր մշտական բնակության վայր չվերադարձնելն առաջին հերթին խախտում է Մարկ Ղազարյանի իրավունքներն ու շահերը, նա զրկված է հոր և եղբոր հետ շփվելու, նրանց տեսակցելու հնարավորությունից:

Աննա Վարդանյանը որևէ ապացույց չի ներկայացրել, որ երեխայի նկատմամբ խնամք իրականացնող անձը տեղափոխման կամ պահելու պահին փաստացի չի իրականացրել խնամակալության իրավունքները կամ համաձայնություն են տվել կամ հետագայում ընդունել են տեղափոխման կամ պահման փաստը կամ գոյություն ունի լուրջ վտանգ, որ երեխայի վերադարձը ֆիզիկական կամ հոգեկան վնաս կհասցնի կամ երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 29.12.2006 թվականի I-ԱԳ N 860527 ամուսնության վկայականի հայերեն թարգմանության համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Աշոտ Ղազարյանի և Հայաստանի Հանրապետության քաղաքացի Աննա Վարդանյանի ամուսնությունը գրանցվել է 29.12.2006 թվականին (**հատոր 1-ին, գ.թ 34**):

2. 02.02.2018 թվականի V-ԱԳ թիվ 804739 ծննդյան վկայականի հայերեն թարգմանության համաձայն՝ 25.02.2015 թվականին ծնված Մարկ Ղազարյանի հայրն Աշոտ Ղազարյանն է, մայրը՝ Աննա Վարդանյանը (**հատոր 1-ին, գ.թ. 33**):

3. Աննա Վարդանյանը կողմերի փոխադարձ համաձայնությամբ Մարկ Ղազարյանի հետ 05.01.2018 թվականին մեկնել է Հայաստանի Հանրապետություն՝ իր ծնողներին տեսնելու պատրվակով և 20.01.2018 թվականին վերադառնալու պայմանով (նախապես գնվել են նաև ավիատոմսեր՝ 20.01.2018 թվականին ՌԴ վերադառնալու համար), բայց հետագայում հրաժարվել է վերադառնալ և երեխային վերջինիս մշտական բնակության վայր վերադարձնելուց (**հատոր 1-ին, գ.թ. 5-8, 40-41**):

4. Ըստ բնակության վայրի հաշվառման մասին N 1110 և N 1346 հայերեն թարգմանության վկայականների՝ Միհրան Աշոտի Ղազարյանը /ծնված՝ 06.04.2007թ./ և Մարկ Աշոտի Ղազարյանը /ծնված՝ 25.02.2015թ./ հաշվառված և բնակվում են ՌԴ Կրասնոդարի երկրամասի Ցենտրալնի շրջանի Նովոռոսիյսկ քաղաքի Ձերժինսկու փողոցի թիվ 7 տուն հասցեում (**հատոր 2-րդ, գ.թ. 41-42**):

5. Աշոտ Ղազարյանի 23.01.2018 թվականի դիմումի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարությունում 12.02.2018 թվականին հարուցվել է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Մարկ Ղազարյանին Ռուսաստանի Դաշնություն վերադարձնելու վերաբերյալ վարույթ, որի արդյունքում 22.03.2018 թվականին կայացրած թիվ 03 որոշմամբ ՀՀ

արդարադատության նախարարը կարգադրել է. «Վերադարձնել ՌԴ քաղաքացի, անչափահաս Մարկ Ղազարյանին այն տարածք, որտեղ երեխան սովորաբար բնակվել է՝ ՌԴ, ք. Նովոռոսիյսկ» (**հատոր 2-րդ, գ.թ. 45-52**):

6. Աշոտ Ղազարյանը 26.02.2018 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Աննա Վարդանյանի, Գագիկ Վարդանյանի և Հասմիկ Խուդավերդյանի՝ երեխային անհապաղ վերադարձնելու պահանջի մասին (**հատոր 1-ին, գ.թ. 5-8**):

7. Երևանի Ավան վարչական շրջանի «Ավանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի կողմից 02.04.2018 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Մարկ Ղազարյանը նույն թվականի ապրիլի 02-ից հաճախում է «Ավանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի ժամանակակից պարերի խումբ՝ երկուշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը 15:30-ին՝ վարձավճարը կազմում է 5.000 ՀՀ դրամ, նկարչության խումբ՝ երկուշաբթի և շաբաթ օրերին, ժամը 17:30-ին, վարձավճարը կազմում է 5.000 ՀՀ դրամ, ինչպես նաև երգչախումբ՝ երեքշաբթի և շաբաթ օրերին՝ ժամը 12:00-ին (անվճար) (**հատոր 1-ին, գ.թ. 107**):

8. Երևանի Ավանի Քույզակ թաղամասի 16-րդ շենքի լիազորի կողմից 12.06.2018 թվականին և 25.09.2018 թվականին տրված բնութագրերով հայտնվել է, որ Մարկ Ղազարյանը բնակվում և գրանցված է Երևանի Ավանի Քույզակ թաղամասի 16-րդ շենքի թիվ 7 բնակարանում, այստեղ, որտեղ մայրն է բնակվում: Ըստ բնութագրի՝ երեխան աղապտացվել է շրջապատի միջավայրին, ընտելացել է շրջապատի երեխաներին, ունի ընկերներ, և այդ պայմաններում երեխան իրեն լավ է զգում: Երեխան սիրով է հաճախում Երևան քաղաքի Ավանի մշակույթի տուն, մասնակցում է պարի, նկարչության և երգչախմբի խմբակներին: Ինչպես նաև մասնակցելու է գովազդային հոլովակների նկարահանումներին, որը նպաստում է երեխայի ինտելեկտի զարգացմանը: Երեխան գրանցված է Երևան քաղաքի Ավանի թիվ 12-րդ մանկական պոլիկլինիկայում, որտեղ և ստանում է իրեն համապատասխան պատվաստումները: Երեխան գրանցված է Երևանի Ավան թիվ 52-րդ մանկապարտեզում: Երեխայի հոգեկրթության և զարգացման համար կան նպաստավոր բոլոր պայմանները: Լիազորի ստորագրությունը հաստատվել է «Ավան 4» համատիրության նախագահի ստորագրությամբ և կնիքով (**հատոր 2-րդ, գ.թ. 27-28, 64-65**):

9. Երևանի քաղաքապետարան «Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ի կողմից 02.05.2018 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Մարկ Ղազարյանը (ծնված 25.02.2015թ.) հերթագրված է ՀՀ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի «Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ. 52 մանկապարտեզում (**հատոր 1-ին, գ.թ. 108**):

10. Ավանի թիվ 53 մանկապարտեզի հիմնական ղեկավար Ե. Դանիելյանի կողմից 25.09.2018 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Մարկ Ղազարյանը հաճախում է Ավան թիվ 53 մանկապարտեզ (**հատոր 2-րդ, գ.թ. 66**):

11. Սույն գործով չի վիճարկվել փաստն առ այն, որ մինչև Մարկ Ղազարյանի տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն՝ երեխայի խնամքը համատեղ իրականացրել են Աննա Վարդանյանը և Աշոտ Ղազարյանը (**հատոր 1-ին, գ.թ. 5-8, 2-րդ, գ.թ. 24-25**):

12. Համաձայն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 26.09.2018 թվականի որոշմամբ Աննա Վարդանյանի հայցն ընդդեմ Աշոտ Ղազարյանի, Ավան վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ ամուսնալուծության և երեխայի բնակության վայրը որոշելու պահանջների մասին ընդունվել է վարույթ (**հատոր 2-րդ, գ.թ. 60**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Հաագայի կոնվենցիայի իմաստով այդ կոնվենցիայի անդամ որևէ պետությունից Հայաստանի Հանրապետություն երեխայի անօրինական տեղափոխման կամ պահելու գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ,

կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճուռեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *որ դեպքում է Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով երեխայի նկատմամբ խնամակալության իրավունք ունեցող ծնողի կողմից երեխայի փեղափոխումը կամ պահումն իր նախկին մշտական բնակության վայրից այլ վայրում համարվում անօրինական.*
2. *արդյո՞ք երեխայի անօրինական պահման փաստ արձանագրելու պարագայում բոլոր դեպքերում դատարանը պարտավոր է երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անել:*

I. Հաագայի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն կոնվենցիայի նպատակներն են.

ա) ապահովել որևէ Պայմանավորվող պետության անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և

բ) երաշխավորել մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումը այլ Պայմանավորվող պետություններում:

Հաագայի կոնվենցիայի բացատրական զեկույցի⁶ (այսուհետ՝ Բացատրական զեկույց) **57-րդ կետի համաձայն**՝ «անօրինական պահվող» արտահայտությունը վերաբերում է այն դեպքերին, երբ երեխան խնամակալի համաձայնությամբ գտնվում է (բնակվում է) իր հիմնական (habitual) բնակության վայրից դուրս այլ վայրում և չի վերադարձվում այն անձի կողմից, որի հետ նա բնակվում է (գտնվում է) իր հիմնական (habitual) բնակության վայրից դուրս այլ վայրում: Սա այն դեպքն է, որն ի հայտ է գալիս, երբ երեխայի տեղափոխումը հանդիսանում է տեսակցության իրավունքի չարաշահման արդյունք:

Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի տեղափոխումը կամ պահելը անօրինական է դիտվում, եթե.

ա) դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն Պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

բ) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը:

«ա» կետում նշված խնամակալության իրավունքները կարող են առաջանալ, մասնավորապես, օրենքի ուժով կամ դատական կամ վարչական որոշման կամ տվյալ Պետության օրենսդրությանը համապատասխան իրավական ուժ ունեցող համաձայնության արդյունքում:

Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիան կիրառվում է ցանկացած երեխայի նկատմամբ, որը խնամակալության կամ տեսակցության իրավունքների խախտումից անմիջապես առաջ մշտապես բնակվել է որևէ Պայմանավորվող

⁶ Հաագայի կոնվենցիայի բացատրական զեկույց, 14-րդ նստաշրջանի ակտեր և փաստաթղթեր (1980), հատոր III, Երեխայի առևանգում: Հեղինակ՝ Էլիսա Պերեզ-Վերա՝ 1980-ի հոկտեմբերի 6-ից հոկտեմբերի 25-ը տեղի ունեցած Միջազգային մասնավոր իրավունքի գծով Հաագայի հորինողաժողովի տասնչորսերորդ նստաշրջանի առաջին հանձնաժողովի (առաջին հանձնաժողովին է վերապահվել Հաագայի կոնվենցիայի կազմումը) զեկույցող: Բացատրական զեկույցը անդրադառնում է Հաագայի կոնվենցիայի կն քման հանգամանքներին, ուստի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 32-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է Հաագայի կոնվենցիայի մեկնաբանման լրացուցիչ միջոց: Բացատրական զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով. <https://assets.hcch.net/docs/a5fb103c-2ceb-4d17-87e3-a7528a0d368c.pdf>

պետությունում: Կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան:

Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիայի նպատակների համար՝

ա) խնամակալության իրավունքները ներառում են երեխայի անձի նկատմամբ խնամք տանելուն և, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելուն վերաբերող իրավունքները.

բ) տեսակցության իրավունքները ներառում են երեխային սահմանափակ ժամանակով իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը:

Բացատրական զեկույցի 84-րդ կետի համաձայն՝ 3-րդ հոդվածի ընդհանուր մեկնաբանությունից բխում է, որ այն պաշտպանում է նաև համատեղ (միասնական) խնամակալության իրավունքի իրականացումը:

Հաագայի կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ պարզելու համար, թե արդյոք առկա է 3-րդ հոդվածի իմաստով անօրինական տեղափոխման կամ պահման փաստ, հայցվող պետության դատական կամ վարչական մարմինները կարող են ուղղակի հաշվի առնել երեխայի մշտական բնակության պետության իրավունքը և այնտեղ պաշտոնապես ճանաչված կամ չճանաչված դատական կամ վարչական որոշումները՝ առանց դիմելու տվյալ իրավունքը ստուգելու կամ օտարերկրյա որոշումը ճանաչելու հատուկ ընթացակարգերի, որոնք այլ կերպ կիրառելի կլինեն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հաագայի կոնվենցիայով նախատեսված՝ երեխային իրեն վերադարձնելու ծնողի իրավունքի դատական պաշտպանության հարցին, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ Հաագայի կոնվենցիայի նպատակներն են.

1) ապահովել որևէ Պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և

2) երաշխավորել մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումն այլ Պայմանավորվող պետություններում:

Այս նպատակների իրականացման համար Պայմանավորվող պետություններն անհապաղ պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները: Երեխաները, ովքեր անօրինական կերպով տեղափոխվել կամ պահվում են որևէ Պայմանավորվող պետության տարածքում, գրկված են իրենց խնամքն իրականացնելու իրավունք ունեցող անձի հետ կայուն հարաբերություններ պահպանելու հնարավորությունից, և հենց այդ հարաբերություններն անհապաղ վերականգնելուն է ուղղված Հաագայի կոնվենցիայի նպատակների իրագործումը: Թեև այս կոնվենցիան օգտագործում է «առևանգում» եզրույթը, այնուամենայնիվ, այն չպետք է ընկալվի քրեաիրավական իմաստով, քանի որ Հաագայի կոնվենցիան վերաբերում է երեխայի միջազգային առևանգման միայն քաղաքացիական ձևերին և դրանում օգտագործվող հասկացություններն ունեն ինքնուրույն իմաստ:

Մասնավորապես՝ Հաագայի կոնվենցիայի նպատակների լույսի ներքո դրա 3-րդ և 12-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ «առևանգում» հասկացությունն այդ կոնվենցիայի իմաստով ընդգրկում է երեխային մի Պայմանավորվող պետությունից մյուս Պայմանավորվող պետություն անօրինական տեղափոխելու կամ պահելու դեպքերը: Իսկ այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է այն դեպքում, երբ՝

1) դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

2) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվելին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը:

Բացի այդ, Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ կոնվենցիայի պաշտպանության ներքո են գտնվում երեխայի նկատմամբ խնամակալության և տեսակցության իրավունքները: Ըստ այդմ՝ «խնամակալության իրավունքները» ներառում են երեխայի անձի նկատմամբ խնամք տանելուն և, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելուն վերաբերող իրավունքները, իսկ «տեսակցության իրավունքները» ներառում են երեխային սահմանափակ ժամանակով իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը (որն Արսեն Բաբայանն ընդդեմ Արմինե Բաբայանի թիվ ԵԱԲԴ/0229/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.06.2017 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը, արձանագրում է, որ Նշված հոդվածների վերլուծությունից բխում է, որ Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական համարելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա) երեխային տեղափոխելով կամ պահելով խախտվել են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

բ) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլինեք տեղափոխումը կամ պահելը:

Այսինքն, Հաագայի կոնվենցիայի իմաստով տեղափոխումը կամ պահումը համարվում է ապօրինի, եթե երեխան իր մշտական բնակության վայրից այլ վայր է տեղափոխվել առանց վերադարձ պահանջող ծնողի համաձայնության կամ պահվել է տեղափոխման երկրում առանց վերջինիս համաձայնության, և վերադարձ պահանջող ծնողն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրա տեղափոխելը կամ պահելը: Ընդ որում, Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածը վերաբերում է նաև համատեղ (միասնական) կարգով իրականացվող խնամակալության իրավունքներին: «Համատեղ (միասնական) կարգով իրականացվող խնամակալության իրավունքը» ենթադրում է, որ ծնողներն իրենց այդ իրավունքն իրացնում են հավասար հիմունքներով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հաագայի կոնվենցիայի վերոնշյալ դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ այն դեպքում, երբ երեխան տեղափոխվել է իր մշտական բնակության վայրի երկրից, իսկ վերադարձ պահանջող ծնողն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրա տեղափոխելը կամ պահելը, և այդ ծնողի համաձայնությունն երեխային տեղափոխելու հարցում առկա է միայն որոշակի ժամանակահատվածի համար, իսկ երեխան պահվել է տեղափոխված երկրում այդ ժամանակահատվածից ավելի, առկա չէ Հաագայի կոնվենցիայի իմաստով անօրինական տեղափոխում, սակայն՝ կարող է առկա լինել Հաագայի կոնվենցիայի իմաստով անօրինական պահում:

II. ՀՀ վճռաբեկ դատարանն Արսեն Բաբայանն ընդդեմ Արմինե Բաբայանի թիվ ԵԱԲԴ/0229/02/16 քաղաքացիական գործով 07.06.2017 թվականի որոշմամբ արձանագրել է, որ Հաագայի կոնվենցիան կիրառվում է միայն 16 տարին չլրացած երեխաների նկատմամբ, և դրա կիրառումը դադարեցվում է երեխայի 16 տարին լրանալու դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը Հաագայի կոնվենցիայի շրջանակներում նախատեսված իրավական կառուցակարգերի միջոցով իրականացնելու համար դատարանը պետք է պարզի այդ կոնվենցիայից բխող նաև հետևյալ հանգամանքները.

1) արդյո՞ք խնդրո առարկա դեպքը գտնվում է Հաագայի կոնվենցիայի գործողության ոլորտում՝ դեպքը վերաբերում է մինչև 16 տարեկան երեխայի նկատմամբ Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով «խնամակալության իրավունքներին» կամ «տեսակցության իրավունքներին»,

2) արդյոք երեխան տեղափոխվել կամ պահվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,

3) արդյոք երեխային տեղափոխելը կամ պահելը այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով անօրինական է:

Վերոգրյալի հիման վրա, եթե դատարանը գալիս է եզրահանգման, որ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է, ապա կոնվենցիայի 12-րդ հոդվածի ուժով պարտավոր է կարգադրություն անել երեխային անհապաղ վերադարձնելու մասին: Մինևն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխային վերադարձնելու պարտականությունը բացարձակ չէ և ոչ բոլոր դեպքերում է, երբ Հաագայի կոնվենցիայի իմաստով երեխային անօրինական տեղափոխելու կամ պահելու վերաբերյալ հետևություն անելուց հետո, դատարանը պարտավոր է երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անել: Մասնավորապես՝ այդ պարտականությունը ենթակա է ժամկետային սահմանափակումների՝ նախատեսված Հաագայի կոնվենցիայի 4-րդ, 12-րդ և 35-րդ հոդվածներով, ինչպես նաև բովանդակային սահմանափակումների՝ նախատեսված նույն կոնվենցիայի 13-րդ և 20-րդ հոդվածներով (*լրեն Արսեն Բարսայանն ընդդեմ Արմեն Բարսայանի թիվ ԵԱԳԳ/0229/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.06.2017 թվականի որոշումը*):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (**այսուհետ՝ Եվրոպական դատարան**) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (**այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա**) 8-րդ հոդվածի լույսի ներքո անդրադառնալով ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքին՝ իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիան պետք է կիրառվի միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես՝ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությանը վերաբերող նորմերին համապատասխան: Անդամ պետությունների վրա Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով դրվող ծնողներին իրենց երեխաների հետ վերամիավորելու պոզիտիվ պարտականությունը պետք է մեկնաբանվի «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի Հաագայի կոնվենցիայի լույսի ներքո (*լրեն Iglesias Gil and A.U.I. v. Spain գործով Եվրոպական դատարանի 29.04.2003 թվականի վճիռը, 51-րդ կետ*):

Եվրոպական դատարանը նշել է, որ որոշիչ խնդիրն այն է, թե արդյոք ներպետական դատարաններն այս գործերով իրենց հայեցողության սահմաններում ապահովել են մրցակից կողմերի՝ երեխայի, ծնողների և հասարակական կարգի շահերի ճիշտ հավասարակշռումը՝ հաշվի առնելով այն, որ երեխայի լավագույն շահերն առաջնային ուշադրության առարկա են:

Ինչպես Եվրոպական կոնվենցիայից, այնպես էլ Հաագայի կոնվենցիայից բխում է, որ երեխայի վերադարձն իր մշտական բնակության վայր չի կարող կատարվել մեխանիկորեն: Եվրոպական կոնվենցիայի և Հաագայի կոնվենցիայի ներդաշնակ մեկնաբանությունն ապահովելու համար՝ գործը քննող դատարանն այս հարցի վերաբերյալ պետք է բավարար կերպով հիմնավորված որոշում կայացնի՝ դիտարկելով Հաագայի կոնվենցիայի 12-րդ, 13-րդ և 20-րդ հոդվածներով նախատեսված երեխայի անհապաղ վերադարձման բացառությունները, այսուհետև դրանք գնահատելով Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո (*լրեն X. v. Latvia գործով Եվրոպական դատարանի 26.11.2013 թվականի վճիռը, 95, 98, 106 կետեր*):

Մեկ այլ որոշմամբ Եվրոպական դատարանը նշել է, որ Հաագայի կոնվենցիայի հիման վրա հարուցված վերադարձի վարույթում, որը համապատասխանաբար տարբերվում է երեխայի խնամքը որոշելու ընթացակարգից, «երեխայի լավագույն շահ» գաղափարը պետք է գնահատվի Հաագայի կոնվենցիայով նախատեսված բացառությունների լույսի ներքո, որոնք վերաբերում են ժամկետներին (հոդված 12), Հաագայի կոնվենցիայի կիրառելիության պայմաններին (հոդված 13-րդ, «ա» կետ), «լուրջ վտանգի» առկայությանը (հոդված 13, «բ») և պետության հիմնարար սկզբունքներին համապատասխանությանը, որոնք վերաբերում են մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին

(հոդված 20): Այս պարտականությունը դրված է ներպետական իշխանությունների վրա, ովքեր հնարավորություն ունեն անմիջապես շփվելու կողմերի հետ:

Կա լայն կոնսենսուս, ներառյալ միջազգային իրավունքում, ի պաշտպանություն այն գաղափարի, որ երեխաներին վերաբերող բոլոր որոշումների մեջ նրանց լավագույն շահը պետք է առաջնահերթ լինի: Նույն փիլիսոփայությունն արտացոլված է նաև Հաագայի կոնվենցիայում, որտեղ այս շահը կապում է ստատուս քվոյի «*status quo*» վերականգնման հետ՝ իր մշտական բնակության երկիր երեխայի անհապաղ վերադարձի մասին կարգադրություն անելու միջոցով, եթե առկա է անօրինական առևանգում՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ վերադարձնելու անհնարինությունը, երբեմն, կարող է արդարացվել օբյեկտիվ պատճառներով, որոնք բխում են երեխայի շահից, ինչն էլ բացատրում է բացառությունների առկայությունը, մասնավորապես՝ լուրջ վտանգի (*grave risk*) դեպքում, երբ երեխայի վերադարձը ֆիզիկական կամ հոգեկան վնաս կհասցնի կամ այլ ճանապարհով երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ (*Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը*):

Երեխայի շահը ներառում է երկու տարր: Մի կողմից այն թելադրում է, որ երեխայի կապն իր ընտանիքի հետ պահպանվի, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտանիքը պատշաճ չէ: Նշվածից հետևում է, որ ընտանեկան կապերը կարող են խզվել միայն բացառիկ հանգամանքներում և ամեն ինչ պետք է արվի անձնական կապերը պահպանելու և հարկ եղած դեպքում ընտանիքը «վերականգնելու» ուղղությամբ: Մյուս կողմից, ակնհայտ է նաև, որ երեխայի շահից ելնելով՝ պետք է ապահովել նրա զարգացումը առողջ միջավայրում, և Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ ծնողը իրավասու չէ այնպիսի գործողություններ կատարել, որոնք վնաս կհասցնեն երեխայի առողջությանը և զարգացմանը (*Կրենն Ushakov v. Russia գործով Եվրոպական դատարանի 18.06.2019 թվականի վճիռը, 79-81 կետեր*):

Վերը շարադրվածի համատեքստում Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում նրանց լավագույն շահը պետք է առաջնահերթ լինի: Նույն գաղափարն արտացոլված է նաև Հաագայի կոնվենցիայում, որտեղ այս շահը պայմանավորված է ստատուս քվոյի վերականգնումով, այսինքն՝ երեխայի անհապաղ վերադարձն իր մշտական բնակության երկիր ապահովելով, եթե առկա է անօրինական առևանգում՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ վերադարձնելու անհնարինությունը, երբեմն, կարող է արդարացվել օբյեկտիվ պատճառներով, որոնք բխում են երեխայի շահից, ինչն էլ բացատրում է Հաագայի կոնվենցիայում բացառությունների առկայությունը: Հաագայի կոնվենցիայի հիման վրա վերադարձի վարույթի շրջանակներում «*երեխայի լավագույն շահ*» գաղափարը պետք է գնահատվի Հաագայի կոնվենցիայով նախատեսված բացառությունների լույսի ներքո: Նշվածը հիմք ընդունելով՝ Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հաագայի կոնվենցիայով սահմանված՝ երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անելու պարտականության սահմանափակումներին, մասնավորապես՝ *Հաագայի կոնվենցիայի 4-րդ, 12-րդ, 13-րդ, 20-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումներին*:

Հաագայի Կոնվենցիայի 4-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումներ.

Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիան կիրառվում է ցանկացած երեխայի նկատմամբ, որը խնամակալության կամ տեսակցության իրավունքների խախտումից անմիջապես առաջ մշտապես բնակվել է որևէ Պայմանավորվող պետությունում: Կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան:

Հաագայի Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ եթե երեխան ապօրինաբար տեղափոխվել կամ պահվել է, ըստ 3-րդ հոդվածի դրույթների, երեխայի գտնվելու վայրի Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու տարվա ամիս-ամսաթվից անցել է մեկ տարուց պակաս, համապատասխան մարմինները կարգադրություն են անում երեխային անհապաղ վերադարձնելու մասին:

Դատական կամ վարչական մարմինները նույնիսկ այն դեպքերում, երբ ընթացակարգերը սկսվել են նախորդ կետում նշված մեկամյա ժամկետն անցնելուց հետո, նույնպես կարգադրություն են անում երեխային վերադարձնելու մասին, եթե միայն ապացուցված չէ, որ երեխան արդեն լիովին համակերպվել է իր նոր միջավայրին:

Եթե դատական կամ վարչական մարմինները հայցվող Պետությունում հիմքեր ունեն հավատալու, որ երեխան դուրս է բերվել այլ Պետություն, նրանք կարող են դադարեցնել ընթացակարգերը կամ մերժել երեխայի վերադարձման մասին դիմումը:

Հաագայի կոնվենցիայի վերը թվարկված դրույթներից հետևում է, որ եթե Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու օրվանից անցել է մեկ տարի, ապա վերադարձի իմպերատիվ պահանջը այլևս չի գործում և առաջնային է դառնում որոշելը՝ արդյո՞ք երեխան ինտեգրվել է նոր միջավայրին: Գործնականում դա հիմնավորվում է երեխայի սոցիալականացման վերաբերյալ փաստերով և դրանք հիմնավորող ապացույցներով՝ նոր միջավայրում դպրոց, մանկապարտեզ, տարբեր խմբակներ հաճախելով, հոգեբանի եզրակացությամբ, հարազատների, բարեկամների (տատիկ, պապիկ, քույր, հորաքույր) առկայությամբ, որոնց հետ երեխան պարբերաբար շփվում է, սոցիալականացման և ընտանեկան միջավայրի մասին այլ փաստերով և ապացույցներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Հաագայի կոնվենցիայով երեխայի՝ իր նոր միջավայրին արդեն լիովին համակերպվելու վերաբերյալ գնահատման չափորոշիչներ չեն սահմանվել: Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը յուրաքանչյուր դեպքում երեխայի՝ իր նոր միջավայրին արդեն լիովին համակերպվելու հանգամանքը գնահատելիս պետք է հաշվի առնի երեխայի տարիքը, նոր միջավայրում երեխայի բնակվելու կայունությունը, երեխայի դպրոց կամ այլ հաստատություն հաճախելը, նոր միջավայրում ընկերներ կամ բարեկամներ ունենալու հանգամանքը, առևանգող (տեղափոխող) ծնողի աշխատանքի կայունությունը և այլն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ «երեխան արդեն լիովին համակերպվել է իր նոր միջավայրին» պայմանը ենթակա է քննարկման միայն այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու օրվանից անցել է մեկ տարի:

Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներ.

Հաագային կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ չնայած նախորդ հոդվածի դրույթներին՝ հայցվող Պետության դատական կամ վարչական մարմինները պարտավորված չեն կարգադրություններ անել երեխային վերադարձնելու մասին, եթե երեխայի վերադարձին դեմ հանդես եկող անձը, հաստատությունը կամ այլ մարմինն ապացուցում են, որ.

ա) երեխայի նկատմամբ ինչպե՞ս իրականացնող անձը, հաստատությունը կամ այլ մարմինը տեղափոխման կամ պահելու պահին փաստացի չեն իրականացրել խնամակալության իրավունքները, կամ համաձայնություն են տվել, կամ հետագայում ընդունել են տեղափոխման կամ պահելու փաստը.

բ) գոյություն ունի լուրջ վտանգ, որ երեխայի վերադարձը ֆիզիկական կամ հոգեկան վնաս կհասցնի կամ այլ ճանապարհով երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ:

Դատական կամ վարչական մարմինները կարող են նաև մերժել երեխայի վերադարձման մասին կարգադրություն անելը, եթե նրանք պարզում են, որ երեխան դեմ է վերադարձին և հասել է այնպիսի տարիքի և հասունության մակարդակի, որ նպատակահարմար է հաշվի առնել նրա կարծիքը:

Քննարկելով սույն հոդվածում նշված հանգամանքները՝ դատական կամ վարչական մարմիններն ուշադրություն են դարձնում երեխայի մշտական բնակության երկրի Կենտրոնական մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ երեխայի սոցիալական ծագմանը վերաբերող տեղեկատվությանը:

Բացատրական գեկույցի 116-րդ կետի համաձայն՝ Բացատրությունները, որոնք ներառված են «բ» կետում, վերաբերում են այն իրավիճակներին, երբ իսկապես տեղի է ունեցել երեխայի միջազգային առևանգում, սակայն՝ երեխայի վերադարձը կհակասի երեխայի շահին այն իմաստով, ինչ իմաստով որ այդ արտահայտությունը հասկացվում է սույն ենթակետում: Սույն դրույթում օգտագործված տերմիններից յուրաքանչյուրը Հատուկ հանձնաժողովի քննարկումների ընթացքում ձեռք բերված նուրբ փոխզիջման արդյունքն է և պահպանվել է անփոփոխ: Սրանից չի կարելի բխեցնել, որ եթե վերադարձը երեխային կարող է պատճառել տնտեսական վնաս կամ խայթարել նրա կրթական հետանկարները, ապա կարող է համարվել Կոնվենցիայով նախատեսված բացատրությունը, այսինքն՝ բացատրությունները չպետք է լայն մեկնաբանել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով առանձնացվում է յուրջ վտանգի (Grave Risk)» հետևյալ տեսակները.

- յուրջ վրանագ, որ վերադարձը երեխային կենթարկի ֆիզիկական վնասի,
- յուրջ վրանագ, որ վերադարձը երեխային կենթարկի հոգեկան վնասի,
- յուրջ վրանագ, որ վերադարձն այլ կերպ երեխային կդնի անհանդուրժելի (անսրանելի) իրավիճակում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ԼՈՒԲՁ» (grave) տերմինը վերագրվում է ռիսկին (վտանգին), այլ ոչ փաստացի վնասին: Այն ցույց է տալիս, որ ռիսկը պետք է լինի *իրական և հասնի ծանրության այնպիսի մակարդակի, որ բնութագրվի որպես «յուրջ»*: Լուրջ վտանգը գնահատելիս անհրաժեշտ է վերլուծել այն տեղեկությունները (ապացույցները), որոնց վրա հիմնվում է անձը, որը դեմ է երեխայի վերադարձմանը (սովորաբար՝ առևանգող ծնողը), վերլուծել ինչպես այն հանգամանքները, որոնք առկա էին մինչև անօրինական տեղափոխումը կամ պահումը, այնպես էլ այն հանգամանքները, որոնք ի հայտ են գալու երեխային վերադարձնելիս: Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվի նաև պաշտպանության անհրաժեշտ և արդյունավետ միջոցների առկայությունը երեխայի հիմնական բնակության երկրում:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի «բ» կետի ուժով սահմանված բացատրությունը հաստատված համարելու համար դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի «յուրջ վտանգի» առկայությունը՝ սույն կետում նշված բոլոր հանգամանքները քննարկման առարկա դարձնելով:

Հաագայի կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներ.

Հաագայի կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ 12-րդ հոդվածի դրույթների իմաստով երեխայի վերադարձը կարող է մերժվել, եթե դա չի թույլատրվում հայցվող Պետության հիմնարար սկզբունքներով, որոնք վերաբերում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը:

Հաագայի կոնվենցիայի Բացատրական գեկույցի 33-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմինը, որպեսզի մերժի երեխայի վերադարձը 20-րդ հոդվածի հիմքով, պետք է ցույց տա ոչ միայն այդպիսի հակասությունը, այլև՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սկզբունքներով պետք է արգելվի վերադարձը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հաագայի կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսված է ապացուցման բարձր շեմ, և յուրաքանչյուր դեպքում պետք է ոչ միայն հիմնավորվի հակասությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սկզբունքներին, այլև՝ նման արգելքը պետք է հիմնավորվի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սկզբունքներով:

Ամփոփելով վերը նշված դրույթների վերլուծությունը և զարգացնելով թիվ ԵԱԲԴ/0229/02/16 քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը Հաագայի

կոնվենցիայի շրջանակներում նախատեսված իրավական կառուցակարգերի միջոցով իրականացնելու համար դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի հետևյալ հանգամանքները.

1) արդյո՞ք դեպքը վերաբերում է մինչև 16 տարեկան երեխայի նկատմամբ Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով «խնամակալության իրավունքներին» կամ «տեսակցության իրավունքներին»,

2) արդյո՞ք երեխան տեղափոխվել է որևէ Պայմանավորվող պետությունից,

3) արդյո՞ք վայրը, որտեղից երեխան տեղափոխվել է, երեխայի մշտական բնակության վայրն էր մինչև երեխային տեղափոխելը կամ պահելը,

4) արդյո՞ք երեխան տեղափոխվել կամ պահվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,

5) արդյո՞ք վերադարձ պահանջող ծնողն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրա տեղափոխելը կամ պահելը:

6) արդյո՞ք երեխան իր մշտական բնակության վայրից այլ վայր է տեղափոխվել առանց վերադարձ պահանջող ծնողի համաձայնության կամ պահվել է տեղափոխման երկրում առանց վերջինիս համաձայնության:

Նշված դրույթների վերլուծությունից բխում է, որ դատարանը կարգադրություն է անում երեխային վերադարձնելու մասին՝ այն երկիր, որտեղից երեխան տեղափոխվել է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- երեխան ապօրինաբար տեղափոխվել կամ պահվել է Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով,

- դատարան կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու տարվա ամիս-ամսաթվից չի անցել մեկ տարի,

- դատարան կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու տարվա ամիս-ամսաթվից անցել է մեկ տարի և չի ապացուցվել, որ երեխան արդեն լիովին համակերպվել է իր նոր միջավայրին,

- երեխան գրավում է հայցվող Պետությունում,

- սույն Հաագայի կոնվենցիայի 13-րդ և 20-րդ հոդվածներում սահմանված երեխայի վերադարձը մերժելու հիմքերը:

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով Դատարանն արձանագրել է, որ երեխայի տեղափոխման հարցում առկա է հայցվորի համաձայնությունը, և գտել է, որ երեխայի մոր մոտ գտնվելու հանգամանքը չի կարող համարվել ապօրինի, քանի որ ծնողներից յուրաքանչյուրն ունի հավասար իրավունքներ և կրում է հավասար պարտականություններ իրենց երեխայի նկատմամբ, հետևաբար Դատարանը եզրահանգել է, որ հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց, որ երեխային տեղափոխումը և պահումն անօրինական է եղել, որի հիման վրա խախտվել են իր խնամակալության իրավունքները, ուստի և հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանն Աշոտ Ղազարյանի վերաքննիչ բողոքը բավարարել է, Դատարանի վճիռը բեկանել ու փոփոխել է՝ հայցը բավարարել է և կարգադրել է Աննա Վարդանյանին՝ 25.02.2015 թվականին ծնված և իր կողմից Հայաստանի Հանրապետությունում անօրինական պահվող Մարկ Ղազարյանին անհապաղ վերադարձնել նրա մշտական բնակության վայր՝ «Ռուսաստանի Դաշնություն, ք. Նովոռոսիյսկ, Ձերժինսկու թիվ 7» հասցե: Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ մինչև պատասխանողի կողմից երեխային Հայաստանի Հանրապետությունում անօրինական պահելը հայցվորը պատշաճ իրականացրել է նրա նկատմամբ իր խնամակալության իրավունքները և երբևէ համաձայնություն չի տվել 2018 թվականի հունվարի 20-ից հետո նրան Հայաստանի Հանրապետությունում պահելուն, իսկ պատասխանողն էլ երեխայի վերադարձի դեմ հանդես է եկել սոսկ այն պատճառաբանությամբ, որ վերադառնալու դեպքում երեխան կենթարկվի ծեծի և հոգեբանական ճնշումների, բայց չի նշել, թե ինչ հանգամանքների հիման վրա է իր մոտ նման համոզմունք ձևավորվել և չի ներկայացրել նախկինում

հայցվորի կողմից երեխայի նկատմամբ նման վերաբերմունք դրսևորած լինելու փաստը հիմնավորող կամ այդպիսի վերաբերմունքի հավանականության մասին վկայող ապացույցներ, ուստի Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պայմանների առկայությունն արձանագրելու հիմքերը բացակայում են:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվում է, որ

- Մարկ Աշոտի Ղազարյանը ծնվել է 25.02.2015 թվականին, նրա նկատմամբ երկու ծնողները Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով ունեն խնամակալության իրավունք, Աշոտ Ղազարյանն ունեցել է և փաստացի իրականացրել է խնամակալության իրավունք երեխայի նկատմամբ մինչև նրան մշտական բնակության վայրից տեղափոխելը կամ պահելը, երեխան տեղափոխվել է Պայմանավորվող պետությունից՝ Ռուսաստանի Դաշնությունից, որը հանդիսացել է երեխայի մշտական բնակության վայրը մինչև երեխային տեղափոխելը կամ պահելը,

- երեխան տեղափոխվել է պահվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,

- երեխան իր մշտական բնակության վայրից Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել վերադարձ պահանջող ծնողի՝ Աշոտ Ղազարյանի համաձայնությամբ, սակայն պահվել է Հայաստանի Հանրապետությունում առանց վերջինիս համաձայնության,

- Աշոտ Ղազարյանը պահանջել է վերադարձնել Մարկ Ղազարյանին իր մշտական բնակության վայր անօրինական տեղափոխման կամ պահելու օրվանից մեկ տարվա ընթացքում. Աննա Վարդանյանը կողմերի փոխադարձ համաձայնությամբ Մարկ Ղազարյանի հետ 05.01.2018 թվականին մեկնել է Հայաստանի Հանրապետություն՝ 20.01.2018 թվականին վերադառնալու պայմանով, Աշոտ Ղազարյանը 23.01.2018 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոնշյալ փաստերը, գտնում է, որ սույն դեպքում առկա է Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով երեխային ապօրինի պահելու դեպք: Նկատի ունենալով, որ երեխայի նկատմամբ խնամք իրականացնող անձինք փաստացի իրականացրել են իրենց խնամակալության իրավունքները, դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերն սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու օրվանից չէր անցել մեկ տարին, ինչպես նաև՝ առկա չէ երեխայի վերադարձի ուղղակի արգելք՝ պայմանավորված հայցվող Պետության, տվյալ պարագայում՝ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սկզբունքներով, ուստի սույն դեպքում Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ պետք է քննարկման առարկա դարձնել միայն Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի «բ» կետով սահմանված բացառությունների առկայությունը:

Սույն գործով հիմնավորվում է փաստն առ այն, որ Մարկ Ղազարյանն իր մշտական բնակության վայրից տեղափոխվել է 05.01.2018 թվականին, երբ երեխան երեք տարեկան չի եղել, և մինչ օրս բնակվում է Հայաստանի Հանրապետությունում: Գործում առկա տեղեկանքների համաձայն՝ 2018 թվականի ապրիլից սկսած երեխան հաճախում է տարբեր խմբակներ, իսկ 2018 թվականի սեպտեմբերից՝ նաև մանկապարտեզ: Նկատի ունենալով, որ երեխայի լավագույն շահը պետք է լինի առաջնահերթ քննարկման առարկա, ուստի երեխայի վերադարձի հարցը սույն դեպքում պետք է դիտարկել լուրջ վտանգ (grave risk) հասկացության լույսի ներքո՝ պարզելու համար արդյո՞ք երեխայի վերադարձը ֆիզիկական կամ հոգեկան վնաս կհասցնի կամ այլ ճանապարհով երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հաագայի կոնվենցիայով սահմանված նպատակների իրականացման համար Պայմանավորվող պետություններն անհապաղ պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները: Երեխաները, ովքեր անօրինական կերպով տեղափոխվել կամ պահվում են որևէ Պայմանավորվող պետության տարածքում, զրկված են իրենց խնամքն իրականացնելու իրավունք ունեցող անձի հետ կայուն հարաբերություններ պահպանելու հնարավորությունից, և հենց այդ հարաբերություններն անհապաղ վերականգնելուն է ուղղված Հաագայի կոնվենցիայի նպատակների իրագործումը: Նշվածից հետևում է, որ Հաագայի կոնվենցիայի նպատակն է, որպեսզի

երեխայի նկատմամբ սահմանված խնամակալության կարգում փոփոխություն չլինի մի ծնողի կողմից, այսինքն՝ Հաագայի կոնվենցիան կոչված չէ որոշելու երեխայի խնամակալության ապագային վերաբերող հարցերը, այլ՝ կոչված է պահելու վիճակն այնպես, ինչպես որոշված էր մինչև անօրինական տեղափոխումը: Հաագայի կոնվենցիայով սահմանված միջոցառումները պահանջում են օպերատիվություն և գործողությունների անհապաղություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական գործընթացներն ընթացել են ավելի քան երկու տարի, ինչը թեև Հաագայի կոնվենցիայի տեսանկյունից անթույլատրելի է, սակայն պայմանավորված է եղել նախկինում գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքով հատուկ ընթացակարգային կարգավորումների բացակայությամբ: Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքով այս հայցատեսակի քննության կարգը նախատեսված է հատուկ հայցային վարության քննությանը վերաբերող իրավակարգավորումներով և Դատարանի համար պարտականություն են նախատեսում տվյալ գործի քննությունն իրականացնել առանց դատական նիստի և խիստ սահմանափակ ժամանակահատվածում:

Նախկինում գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքով հատուկ ընթացակարգային կարգավորումների բացակայության արդյունքում փաստացի արդեն երկու տարուց ավել է՝ երեխան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, հաճախում է տարբեր խմբակներ, մանկապարտեզ: Մարկ Աշոտի Դազարյանն իր մշտական բնակության վայրում բնակվել է մինչև երեք տարեկանը, այսինքն՝ եղել է այն տարիքային խմբում, երբ երեխան առավելապես գտնվել է ընտանեկան միջավայրում: Երեք տարեկանից ի վեր երեխան երկու տարի գտնվել է նոր միջավայրում և ըստ էության համակերպվել է նոր միջավայրին: Ակնհայտ է, որ երեխայի ներկայիս տարիքային առանձնահատկությունների պայմաններում Հայաստանի Հանրապետությունից տեղափոխությունը, նոր սոցիալական միջավայրում հարմարվելու անհրաժեշտությամբ պայմանավորված, կպահանջի համապատասխան լեզվամտածողության, շփման հնոտությունների և հաղորդակցման ձևերի յուրացման և կիրառման անհրաժեշտություն, ինչը բացասաբար կանդրադառնա Մարկ Դազարյանի հոգեբանական ներդաշնակ զարգացման վրա: Հատկանշական է, որ նման իրավիճակներում էական ազդեցություն ունեն ընտանիքի բարոյահոգեբանական դրական մթնոլորտը և ծնողների մոտեցումների փոխհամաձայնությունը, ինչն առկա պայմաններում գործնականորեն հնարավոր չէ, ուստի երեխայի տեղափոխությունը նպատակահարմար չէ ոչ միայն նրա անհատական զարգացման առանձնահատկությունների առումով, այլ՝ ցանկացած լարված և կոնֆլիկտային իրավիճակում նոր սոցիալական միջավայրում հարմարողական ռեսուրսների դրսևորման դժվարությունների բարձր ռիսկայնության առումով:

Վերոնշյալի հիման վրա, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ երեխան վաղուց հարմարվել է հայկական միջավայրին, հաճախում է մանկապարտեզ, որտեղ իրեն հարմարված և լավ է զգում, ինչը բարենպաստ է ազդում երեխայի վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում երեխայի տեղափոխումը Հայաստանի Հանրապետությունից երեխայի համար կստեղծի Հաագայի կոնվենցիայի իմաստով լուրջ վտանգ (grave risk) երեխայի վերադարձը հոգեկան վնաս կհասցնի և երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հայցը մերժելով, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերը նշված պարճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայտասիսում նշված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Աշոտ Ղազարյանից հօգուտ Աննա Վարդանյանի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.11.2018 թվականի վճռին:

2. Աշոտ Ղազարյանից հոգուտ Աննա Վարդանյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/2860/02/18
2020թ.
 Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/2860/02/18
 Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
 Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
 Դ. Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կ'ազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սիրանուշ Մելիքյանի ընդդեմ Կազմակերպության՝ 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Սիրանուշ Մելիքյանը պահանջել է անվավեր ճանաչել Կազմակերպության տնօրենի 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բաղմանյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2019 թվականի որոշումն էր Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սիրանուշ Մելիքյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 9-րդ, 61-րդ, 62-րդ, 66-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պարունը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանն արձանագրել է, որ հայցվորն ինչպես իր կողմից Կազմակերպությանը ներկայացված բացատրագրով, այնպես էլ գործի քննության ընթացքում ընդունել է, որ 2018 թվականի հունիսի 2-ին չի ներկայացել աշխատանքի: Այսինքն, նշված փաստական հանգամանքը Դատարանի կողմից իրավացիորեն գնահատվել է որպես անվիճելի փաստ: Միաժամանակ Դատարանը հաստատված է համարել, որ հայցվորը բացակայել է առողջական խնդիրներ ունենալու պատճառով՝ այդ փաստը հաստատված համարելով միայն հայցվորի կողմից Կազմակերպությանը հասցեագրված արձակուրդ տրամադրելու մասին դիմումով: Մասնավորապես, Դատարանն արձանագրել է, որ «աշխատանքի չներկայանալու նախորդ օրը վերջինս հայտնել է Դպրոցի տնօրենին առողջական խնդիրներ ունենալու և այդ կապակցությամբ արձակուրդ տրամադրելու մասին»:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ արձակուրդ տրամադրելու վերաբերյալ դիմումը հայցվորը Կազմակերպությանը ներկայացրել է 31.05.2018 թվականին և ոչ թե 02.06.2018 թվականի (աշխատանքի չներկայանալու օր) նախորդ օրը, այն է՝ 01.06.2018 թվականին: Այսինքն, կարելի է եզրահանգել, որ Սիրանուշ Մելիքյանն աշխատանքի չներկայանալու նախորդ օրը՝ 01.06.2018 թվականին, առողջական խնդիրներ ունենալու և այդ կապակցությամբ արձակուրդ տրամադրելու մասին Կազմակերպության տնօրենին չի տեղեկացրել: Տվյալ դեպքում հայցվորի առողջական խնդիրներ ունենալու փաստի վերաբերյալ գործում առկա է միայն «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կողմից շտապ և անհետաձգելի բժշկական կանչի թիվ 35 թերթիկը՝ թվագրված 04.06.2018 թվականով, ինչպես նաև Գյումրու ընտանեկան բժշկության կենտրոնի կողմից 05.06.2018 թվականին տրված անաշխատունակության թերթիկը, ըստ որի՝ անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբը 05.06.2018 թվականն է, վերջը՝ 02.07.2018 թվականը: Այսինքն, տվյալ դեպքում գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր, որ հայցվորը 02.06.2018 թվականին ունեցել է առողջական խնդիրներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից չեն հաստատվել իր հրամանի հիմքում ընկած փաստական հանգամանքները: Ավելին, գործի քննության ընթացքում վկաների կողմից տրված ցուցմունքներով հաստատվել է, որ հայցվորը 2018 թվականի մայիսի 29-ին, 30-ին և 31-ին ներկայացել է դպրոց, իսկ «02.07.2018 թվականին» չի ներկայացել աշխատանքի՝ վատառողջ լինելու պատճառաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացրած անձը խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը այն անհիմն լինելու պատճառաբանությամբ և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի 25.04.2019 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կազմակերպության և Սիրանուշ Մելիքյանի միջև 01.09.2007 թվականին կնքված թիվ 23 աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Սիրանուշ Մելիքյանը նշանակվել է Կազմակերպության ուսմասվարի պաշտոնում: Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ աշխատողի պարտականությունների կատարման համար սահմանվել է նորմավորված աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ն, միաժամանակ սահմանվել է 6-օրյա աշխատանքային շաբաթ՝ 1 հանգստյան օրով **(հատոր 1-ին, գ.թ. 14-15):**

2) Սիրանուշ Մելիքյանը 31.05.2018 թվականին Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանին հասցեագրված դիմումով խնդրել է տրամադրել 30 օր տևողությամբ չվճարվող արձակուրդ՝ առողջական խնդիրներ ունենալու և բժշկական հետազոտության կարիք ունենալու պատճառաբանությամբ **(հատոր 1-ին, գ.թ. 43):**

3) Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանի 01.06.2018 թվականի գրությամբ Սիրանուշ Մելիքյանին տրվել է պատասխան, որ չեն կարող ընդառաջել և դրական պատասխան տալ 31.05.2018 թվականի դիմումին, քանի որ այն չի բխում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի պահանջներից **(հատոր 1-ին, գ.թ. 34):**

4) «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կողմից շտապ և անհետաձգելի բժշկական կանչի թիվ 35 թերթիկի համաձայն՝ 04.06.2018 թվականին՝ ժամը 12:15-ին, ընդունվել է կանչ: Հիվանդի անունը, ազգանունը՝ Սիրանուշ Մելիքյան: Գանգատները դող՝ վերջույթների յարվածություն **(հատոր 1-ին, գ.թ. 17-18):**

5) Գյումրու ընտանեկան բժշկության կենտրոնի կողմից 05.06.2018 թվականին տրված թիվ 064259 անաշխատունակության թերթիկի համաձայն՝ Սիրանուշ Մելիքյանի մոտ ախտորոշվել է սուր դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթյա արթնոնկրոտիկ համախտանիշ: Որպես անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբ նշվել է 05.06.2018 թվականը, վերջ՝ երկուսը հուլիսի, աշխատանքի ներկայանալու ժամանակը՝ 03.07.2018 թվականը **(հատոր 1-ին, գ.թ. 20):**

6) Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանի՝ Սիրանուշ Մելիքյանին 04.07.2018 թվականին հասցեագրած գրությամբ պահանջվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացատրություն 2018 թվականի մայիսի 29-ից մինչև 2018 թվականի հունիսի 5-ը աշխատանքի չներկայանալու պատճառների մասին **(հատոր 1-ին, գ.թ. 36):**

7) Սիրանուշ Մելիքյանի կողմից 07.07.2018 թվականին ներկայացվել է բացատրագիր, որով, մասնավորապես, հայտնվել է. «Ես՝ Սիրանուշ Մելիքյանս, մայիսի 29-ին ներկայացել եմ աշխատանքի, դուք չարաշահելով Ձեր պաշտոնական դիրքը, ինձ անձնական վիրավորանքներ հասցրեցիք, անվանելով ինձ «անինքնասեր, անսամուս, նամուս ունենայիր աշխատանքի չէիր գա»: Վեճ չստեղծելու պատճառով ես դուրս եմ եկել դպրոցից և մշակույթի բաժնի նախկին պետ Ա. Մկրտչյանի գանգով գնացել եմ քաղաքապետարան, որտեղ հանդիպել եմ Ձեզ: Մայիսի 30-ին ես ժամանակին ներկայացել եմ աշխատանքի և դուք ինձ հորդորել եք «քեզ 1 ժամ ժամանակ, դիմումդ գրի գնա»: 10 րոպե անց ես գանգ եմ ստացել առողիտի բաժնի պետ Կ. Խաչատրյանից և ներկայացել եմ մշակույթի բաժնի: Քանի որ դուք և մշակույթի բաժնի պետը, չարաշահելով Ձեր պաշտոնական դիրքը, բարոյահողգեքանական ճնշում էիք գործադրում օրեր շարունակ, ես ունեցա առողջական խնդիրներ: Մայիսի 31-ին ես, ներկայանալով աշխատանքի, դիմում եմ ներկայացրել Ձեզ, որ դուք ինձ տրամադրեք 30 օր չվճարվող արձակուրդ՝ պատճառաբանելով, որ ունեմ առողջական խնդիրներ: Դուք, առանց պատճառաբանելու, մերժեցիք իմ դիմումը հունիսի 1-ին: Ես աշխատանքի չեմ ներկայացել հունիսի 2-ին, իսկ հունիսի 4-ին ես գալիս էի աշխատանքի, ինձ զանգահարում է հարևանուհիս և ասում, որ հետ արի, մշակույթի

բաժնի նախկին պետ Ա. Մկրտչյանը, դուք, Ազգանուշը և էլի ինչ-որ մեկը եկել են Ձեր տուն քո հետևից: Ես ճանապարհին վատանում եմ և մինչև տուն հասնելը կարիք եմ ունենում շտապ բժշկական օգնության, կարող եք ճշտել: Ես ունեմ բոլոր փաստաթղթերը և ներկայացրել եմ մշակույթի բաժնի պետ Ա. Շահինյանին: Հիշեցնեմ նաև, որ դպրոցի տեսախցիկները ֆիքսում են: Խնդրում եմ Ձեզ գրավոր հիմնավորեք և ինձ տեղեկացրեք, թե ինչ հիմքով, առանց հրամանի և նախազգուշացման, ինձ չեք վճարել մայիս ամսի 29, 30, 31 օրերի աշխատավարձը: Իմ անունը տաբելի գրքում հայտնվել է հունիսի 11-ից» (**հատոր 1-ին, գ.թ. 29, 107**):

8) Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանի 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանից քաղվածքի համաձայն՝ 2018 թվականի մայիսի 29-ին, 30-ին և 31-ին, հունիսի 1-ին, 2-ին և 4-ին անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու, ինչպես նաև այդ օրերին աշխատանքի չներկայանալու պատճառների մասին Սիրանուշ Մելիքյանի կողմից 07.07.2018 թվականին ներկայացված բացատրագրում «տեղ գտած ստի ու զրպարտության համար» ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 6-րդ կետերի հիմքով գործատուի նախաձեռնությամբ Սիրանուշ Մելիքյանի հետ կնքված թիվ 23 աշխատանքային պայմանագիրը լուծվել է (**հատոր 1-ին, գ.թ. 37**):

4. Վճուրքի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճուրքի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուրքը բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճուրքի դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության նպատակն է՝

1) (...).

2) (...).

3) պաշտպանել աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են՝ աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների իրականացմամբ և պարտականությունների կատարմամբ չպետք է խախտվեն այլ անձանց՝ օրենքներով պաշտպանվող իրավունքներն ու շահերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, (...) բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպության ներքին կարգապահական կանոնները (գործատուի ներքին իրավական ակտը) կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը. 1) նկատողություն, 2) խիստ նկատողություն, 3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն

առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝ գործատուի նախաձեռնությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով: Աշխատանքային պայմանագիրը, ըստ էության, հանդիսանում է աշխատողի և գործատուի միջև կնքված համաձայնություն, ըստ որի՝ թե աշխատողը և թե գործատուն ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Մասնավորապես, աշխատողը պարտավորվում է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտականությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

Ընդ որում, այն դեպքում, երբ աշխատողը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում աշխատանքային պայմանագրով սահմանված պարտավորությունները, այդ թվում՝ չի պահպանում աշխատանքային կարգապահությունը, գործատուն կարող է կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական տույժերից որևէ մեկը՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի 224-րդ հոդվածով սահմանված՝ աշխատողի կողմից թույլ տրված խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի նախկինում կատարած աշխատանքը: Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ աշխատողի կողմից աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքում գործատուն ինքն է որոշում կիրառման ենթակա կարգապահական տույժի տեսակը, այնուամենայնիվ, այն չի կարող կրել կամայական բնույթ, և յուրաքանչյուր դեպքում գործատուի կողմից ընտրված կարգապահական տույժի տեսակը պետք է համաչափ լինի աշխատողի կողմից կատարված խախտման ծանրությանը, որի ապահովմանն էլ ուղղված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված՝ մինչև կարգապահական տույժի կիրառումն աշխատողից խախտման մասին պարտադիր գրավոր բացատրություն պահանջելու գործատուի պարտականությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է, և այն աշխատողից պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանել է ինչպես անորոշ, այնպես

էլ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու հիմքը, որի համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով.

2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի աշխատողի կողմից մեկ ամբողջ աշխատանքային օր (հերթափոխ) աշխատանքի չներկայանալու հանգամանքով.

3. աշխատողի կողմից մեկ ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատանքի չներկայանալը պետք է լինի անհարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով կարգավորել է նաև «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ աշխատանքային վեճերի քննության կարգը և առանձնահատկությունները: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև տվյալ անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող անհատական իրավական ակտում օրենքով սահմանված՝ անհատական իրավական ակտերին վերաբերող պահանջների խախտումն ինքնին հիմք չէ այդ ակտն անվավեր ճանաչելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վիճարկվող անհատական իրավական ակտն ընդունվել է մեկից ավելի փաստական հիմքերով, ապա դրանցից առնվազն մեկի առկայությունը հաստատվելը բավարար է վիճարկվող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու համար:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ աշխատանքային վեճերի լուծման դեպքում օրենսդիրը, ի տարբերություն կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի, սահմանել է բացառություն, ըստ որի՝ աշխատանքային վեճերով վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև տվյալ անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Այլ կերպ ասած՝ աշխատանքային վեճերով ապացուցման բեռի ծանրությունն օրենսդրի կողմից դրվել է պատասխանող (գործատուի) վրա: Նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պետք է ապացուցի՝ կողմերի միջև անորոշ կամ որոշակի ժամկետով պայմանագիր կնքված լինելու, աշխատողի կողմից մեկ ամբողջ աշխատանքային օր (հերթափոխ) աշխատանքի չներկայանալու և աշխատանքի չներկայանալու պատճառն անհարգելի լինելու փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ապացույց է այն տվյալը, որի հետագոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում գործը

լուծելու համար նշանակություն ունեցող որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը, քան այն կլինե՞ր առանց այդ ապացույցի: Դատարանը հետազոտում և գնահատում է միայն այն ապացույցները, որոնք, հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին մասի պահանջը, կարող են հաստատել կամ ժխտել գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հետազոտված ապացույցը ճանաչում է անարժանահավատ, եթե դրա հետազոտման, գնահատման կամ այլ ապացույցների հետ համադրման արդյունքով հաստատվում է, որ դրանում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատարանների կողմից ապացույցների գնահատման գործընթացին, արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս Սվեդլանսա Ժոյիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԿ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս Թուգանսա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝

Կազմակերպության և Սիրանուշ Մելիքյանի միջև 01.09.2007 թվականին կնքված թիվ 23 Պայմանագրի համաձայն՝ Սիրանուշ Մելիքյանը նշանակվել է Կազմակերպության ուսմասվարի պաշտոնում: Պայմանագրի 3.1 կետով աշխատողի՝ իր պարտականությունների կատարման համար սահմանվել է նորմավորված աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ն, 6-օրյա աշխատանքային շաբաթով՝ 1 հանգստյան օրով: Սիրանուշ Մելիքյանը 31.05.2018 թվականին Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մանյա Հովհաննիսյանին հասցեգրված դիմումով խնդրել է տրամադրել 30 օր տևողությամբ չվճարվող արձակուրդ՝ առողջական խնդիրներ ունենալու և բժշկական հետազոտության կարիք ունենալու պատճառաբանությամբ: Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանի 01.06.2018 թվականի գրությամբ Սիրանուշ Մելիքյանին պատասխան է տրվել այն մասին, որ վերջինիս խնդրանքին չեն կարող ընդառաջել և դրական պատասխան տալ 31.05.2018 թվականին դիմումին, քանի որ այն չի բխում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի պահանջներից: «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կողմից շտապ և անհետաձգելի բժշկական կանչի թիվ 35 թերթիկի համաձայն՝ 04.06.2018 թվականին ժամը 12:15-ին ընդունվել է կանչ: Հիվանդի անունը, ազգանունը՝ Սիրանուշ Մելիքյան: Գանգատները դող, վերջույթների լարվածություն: Հետազայում, ըստ Գյումրու ընտանեկան բժշկության կենտրոնի կողմից 05.06.2018 թվականին տրված թիվ 064259 անաշխատունակության թերթիկի, Սիրանուշ Մելիքյանի մոտ ախտորոշվել է սուր դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթյա սաթենոներոտիկ համախտանիշ: Անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբը սահմանվել է 05.06.2018 թվականը, վերջը՝ երկուսը հուլիսի: Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 03.07.2018 թվականը:

Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանի 04.07.2018 թվականի՝ Սիրանուշ Մելիքյանին հասցեագրած գրությամբ պահանջվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացատրություն 2018 թվականի մայիսի 29-ից մինչև 2018 թվականի հունիսի 5-ը աշխատանքի չներկայանալու պատճառների մասին: Սիրանուշ Մելիքյանի կողմից **07.07.2018 թվականին** ներկայացվել է բացատրագիր, որում, ի թիվ այլևի, Սիրանուշ Մելիքյանը նշել է, որ *հունիսի 2-ին չի ներկայացել աշխատանքի*:

Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանյա Հովհաննիսյանի 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանից քաղվածքի համաձայն՝ 2018 թվականի մայիսի 29-ին, 30-ին և 31-ին, հունիսի 1-ին, 2-ին և 4-ին անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու, ինչպես նաև այդ օրերին աշխատանքի չներկայանալու պատճառների մասին Սիրանուշ Մելիքյանի կողմից 07.07.2018 թվականին ներկայացված բացատրագրում «տեղ գտած ստի ու զրպարտության համար» ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ և 6-րդ կետերի հիմքով գործատուի նախաձեռնությամբ Սիրանուշ Մելիքյանի հետ կնքված թիվ 23 աշխատանքային պայմանագիրը լուծվել է:

Սույն գործով Դատարանը հայրը բավարարելիս, հաստատված համարելով 02.06.2018 թվականին և 04.06.2018 թվականին Սիրանուշ Մելիքյանի կողմից աշխատանքի չներկայանալու հանգամանքը, արձանագրել է, որ վերջինս ունեցել է առողջական խնդիրներ, որպիսի պայմաններում Սիրանուշ Մելիքյանի կողմից 02.06.2018 թվականին և 04.06.2018 թվականին աշխատանքի չներկայանալը չի կարող գնահատվել անհարգելի:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կազմակերպության կողմից բերված վերաքննիչ բողոքը և դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, հանգել է այն հետևության, որ Կազմակերպությունը չի ապացուցել իր ազատման հրամանի հիմքում ընկած հանգամանքները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ որպես վիճելի հրամանի հիմքում դրված փաստերը հաստատող ապացույց Կազմակերպության կողմից վկայակոչվել է Ջվարթ Գինոյանի անունից գրված և ստորագրված 12.06.2018 թվականի հայտարարությունը, մինչդեռ այդ փաստաթուղթը՝ որպես անհարգելի պատճառներով ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում Սիրանուշ Մելիքյանի կողմից աշխատանքի չներկայանալու փաստը հիմնավորող ապացույց հանդիսանալ չի կարող, քանի որ սույն գործով չի հիմնավորվել, որ պատասխանողի մոտ 2018 թվականի մայիսի 29-ից մինչև հունիսի 4-ը ներառյալ աշխատել է Ջվարթ Գինոյան անձնավորությունում, որն ի պաշտոնե պարտավոր է եղել հսկողություն իրականացնել աշխատողների կարգապահության նկատմամբ: Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ Կազմակերպությունը պետք է ապացուցեր իր վկայակոչած փաստերը, սակայն դրանք մնացել են անապացույց, և այս հանգամանքի հիմնավորմամբ Դատարանի հետևությունն այն մասին, որ հայրը պետք է բավարարել, միանգամայն հիմնավոր է:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի աշխատանքի չներկայանալու հիմքով գործատուի կողմից վերջինիս նկատմամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու տեսքով կարգապահական տույժ կիրառելու դեպքում գործատուի կողմից պետք է հիմնավորվի մեկ ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի կողմից աշխատանքից բացակայելու հարգելի պատճառների բացակայությունը: Ընդ որում աշխատողի՝ մեկ ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքից անհարգելի բացակայությունն անհրաժեշտ և բավարար է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կազմակերպության կողմից Սիրանուշ Մելիքյանն ազատվել է աշխատանքից 2018 թվականի մայիսի 29-ին, 30-ին և 31-ին, հունիսի 1-ին, 2-ին և 4-ին անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու հիմքով:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի հիմնավորվում առողջական խնդիրների պատճառով Սիրանուշ Մելիքյանի կողմից 02.06.2018 թվականին աշխատանքի չներկայանալու հանգամանքը (հարգելի պատճառը), ավելին՝ Սիրանուշ Մելիքյանը 07.07.2018 թվականին Կազմակերպություն ներկայացրած բացատրագրով ևս ընդունել է 02.06.2018 թվականին աշխատանքի չներկայանալու հանգամանքը, ինչպես նաև որևէ բացատրություն չի ներկայացրել 02.06.2018 թվականի մեկ ամբողջ աշխատանքային օր աշխատանքի չներկայանալու հիմքերի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը բխում է նաև այն հանգամանքից, որ Սիրանուշ Մելիքյանի կողմից 04.06.2018 թվականին աշխատանքի չներկայանալու պատճառի հարգելի լինելու հանգամանքը հաստատվում է գործում առկա 04.06.2018 թվականի «Գյուրբու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կողմից շտապ և անհետաձգելի բժշկական կանչի թիվ 35 թերթիկով: Մինչդեռ Սիրանուշ Մելիքյանի կողմից 02.06.2018 թվականին աշխատանքի չներկայանալու պատճառի հարգելի լինելու հանգամանքի առկայությունը հիմնավորող որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ Սիրանուշ Մելիքյանն աշխատանքից բացակայել է հարգելի պատճառներով, հաստատված են համարել առանց որևէ թույլատրելի ապացույցի առկայության:

Ստորադաս դատարանները պատշաճ չեն ուսումնասիրել սույն գործում առկա ապացույցները: Մասնավորապես Վերաքննիչ դատարանն ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել այն փաստական հանգամանքը, որ Սիրանուշ Մելիքյանը 07.07.2018 թվականին Կազմակերպություն ներկայացրած բացատրագրով ընդունել է առանց որևէ պատճառի 02.06.2018 թվականին աշխատանքի չներկայանալու հանգամանքը: Ավելին՝ Դատարանն իր եզրահանգումները կատարելիս հիմնվել է միայն դատական նիստի ընթացքում կողմի բանավոր հայտարարության վրա՝ առանց դրա վերաբերյալ բավարար և թույլատրելի ապացույցներ ունենալու:

Փաստորեն, Դատարանը 02.06.2018 թվականի աշխատանքի չներկայանալու հիմքի մասին կատարել է սխալ հետևություններ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանն ապացույցների սխալ գնահատմամբ կատարել է անհիմն եզրահանգումներ հայցի հիմնավոր և բավարարման ենթակա լինելու մասին, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պարասիանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի 25.04.2019 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որոշումից ուղղակի ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցագրի մեջ նմանում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրավակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորումը վերաբերում է միայն պետության հանդեպ պետական տուրքի գծով պարտավորությունների բացակայությանը և չի կարող մեկնաբանվել որպես մյուս կողմի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականության բացակայություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի հիմքով պետք է կրի մյուս կողմի կրած դատական ծախսերը փոխհատուցելու պարտականություն: Նման մոտեցումը բխում է

կողմերի իրավահավասարության սկզբունքից և կոչված է կանխելու պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտի կողմից իր դատավարական իրավունքների անբարեխիղճ իրականացման արդյունքում մյուս կողմին հնարավոր պատճառվելիք վնասները: Հետևաբար, եթե հայրը հարուցվում է պետական տուրքի վճարումից ազատված հայցվորի կողմից և հետագայում այն մերժվում է անհիմն լինելու հիմքով, հայցվորը պետք է կրի այլ անձանց կրած՝ իրենց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը:

Սույն գործով բողոք բերած անձը վճարել է բողոք ներկայացնելիս վճարել է վճարել բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի գումարը: Նկատի ունենալով, որ սույն գործով վճարել է բողոքը ենթակա է բավարարման, իսկ Սիրանուշ Մելիքյանի հայցը՝ մերժման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի հիմքով վճարել է բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը, վճարել դատարանը գտնում է, որ Սիրանուշ Մելիքյանից հոգուտ Կազմակերպության ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել է բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարների փոխհատուցում: Միաժամանակ, սակայն, նկատի ունենալով, որ հայրը հարուցված է այն անձի կողմից, որը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի հիմքով ազատված է դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճարել է բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի վճարումից, իսկ սույն գործով պատասխանողը Դատարանում պետական տուրք չի վճարել, վճարել դատարանը գտնում է, որ նման պայմաններում հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի հետ կապված հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ վճարել է դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. վճարել է բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Սիրանուշ Մելիքյանի հայցն ընդդեմ «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի՝ 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին, մերժել:

2. Սիրանուշ Մելիքյանից հոգուտ «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել է բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարների փոխհատուցում:

Դատական ծախսերի հարցը՝ հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի հետ կապված, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՇԴ/2860/02/18 քաղաքացիական գործով 10.07.2020 թվականին կայացված որոշման գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանական և եզրափակիչ մասերում արված եզրահանգումների մասին

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2020 թվականի հուլիսի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սիրանուշ Մելիքյանի ընդդեմ Կազմակերպության՝ 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Սիրանուշ Մելիքյանի հայցն ընդդեմ «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի՝ 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին, մերժել, Սիրանուշ Մելիքյանից հոգուր «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարների փոխհատուցում: Դատական ծախսերի հարցը՝ հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի հետ կապված, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի հիմքով համարել է լուծված:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյան և Ն. Տավարացյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ եզրահանգումների վերաբերյալ:

Դիմելով դատարան՝ Սիրանուշ Մելիքյանը պահանջել է անվավեր ճանաչել Կազմակերպության տնօրենի 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բաղմանյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2019 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սիրանուշ Մելիքյանը:

Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ՝

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորումը վերաբերում է միայն պետության հանդեպ պետական տուրքի գծով պարտավորությունների բացակայությանը և չի կարող մեկնաբանվել որպես նյութ կողմի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականության բացակայություն,

2. պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի հիմքով պետք է կրի մյուս կողմի կրած դատական ծախսերը փոխհատուցելու պարտականություն: Նման մոտեցումը բխում է կողմերի իրավահավասարության սկզբունքից և կոչված է կանխելու պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտի կողմից իր դատավարական իրավունքների անբարեխիղճ իրականացման արդյունքում մյուս կողմին հնարավոր պատճառվելիք վնասները, եզրահանգել է, որ **էթե հայցը հարուցվում է պետական տուրքի վճարումից ազատված հայցվորի կողմից և հերազայում այն մերժվում է անհիմն լինելու հիմքով, հայցվորը պետք է կրի այլ անձանց կրած՝ իրենց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը:**

Դրա հիման վրա Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործով վճարելի բողոքը ենթակա է բավարարման, իսկ Սիրանուշ Մելիքյանի հայցը մերժման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի հիմքով վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը, Սիրանուշ Մելիքյանից հոգուտ Կազմակերպության բռնագանձել է 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարների փոխհատուցում:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյանս և Ն. Տախարացյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պարճատարանական և եզրահակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արված եզրահանգումների հեղ, շարաբրում ենք մեր հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝
 ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ սահմանադրական դատարանը Կարեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 10.07.2018 թվականի թիվ ՄԴՌ-1423 որոշմամբ արճանագրել է, որ պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անձին գրկելու կամ այդ իրավունքի իրացումը սահմանափակելու նպատակ: Օրենսդիրը, կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված հարաբերությունները, կաշկանդված է անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության և այն իրացնելու անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու, դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորման սահմանադրական պարտականություններով, որոնք ուղղակիորեն բխում են Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, 63-րդ հոդվածի 1-ին մասում, 75-րդ հոդվածում ամրագրված նորմերից: Պետության այդ պարտականություններից բխող խնդիրն է՝ օրենքով երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից՝ պետական տուրք վճարելու՝ անձի պարտականության և, մյուս կողմից՝ դատարանում իր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու՝ անձի սահմանադրական իրավունքի իրացման արդյունավետության ապահովման միջև:

Մինևույն ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ վճարված պետական տուրքը դրա վճարման պարտավորություն ունեցող դատավարության մասնակցի հաշվին կարող է հատուցվել օրենքով սահմանված կարգով, որը նաև պայմանավորված է մրցակցային արդարադատության էությանը:

Տվյալ դեպքում օրենսդիրը կարգավորել է դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված հարաբերությունները՝ անձանց համար սահմանելով նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության և դրանք իրացնելու համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույթաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ սույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ սահմանադրական դատարանը նույն որոշմամբ արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «թ» կետի 6-րդ պարբերության վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը սահմանել է նաև որոշակի լրացուցիչ իրավական երաշխիքներ, որոնք միտված են որոշակի հավասարակշռություն ապահովելուն: Այդպիսի իրավակարգավորումը դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակներում նպատակ ունի իրավական որոշակի չափանիշներով պայմանավորված, հնարավորություն ստեղծել երաշխավորելու արդար հավասարակշռություն մի կողմից՝ դատարանի մատչելիության, մյուս կողմից՝ (...) հանրային բնույթի առանձին գործերով դատական պաշտպանությունն ապահովելու սահմանադրաիրավական անհրաժեշտության միջև:

Մինևույն ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակներում պետական տուրքի վճարման արտոնությունների կառուցակարգի և դատավարական տարբեր փուլերում այն կիրառելու կանոնակարգման ու իրավակիրառական պրակտիկայում դրա մեկնաբանման սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին, արձանագրել է, որ վերադաս դատարանի ակտի հիման վրա նոր քննության արդյունքում ստորադաս դատարանի կողմից ընդունված ակտը ևս հետապնդում է ինքնուրույն նպատակ՝ տվյալ գործի քննության գործընթացում կողմերի համար առաջացնելով իրավական հնարավոր նոր հետևանքներ: Հետևաբար, դատական նման ակտի արդյունքում առաջանում են նաև տվյալ ակտի բողոքարկման հետ կապված նոր իրավահարաբերություններ, որոնց պայմաններում դատաքննության արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վերադաս դատարանի կողմից վերահսկողության նոր օբյեկտ: Դրանով պայմանավորված՝ վերադաս դատարանը, վերահսկողություն իրականացնելով դատական ենթադրյալ վխալ պարունակող՝ ստորադաս ատյանի դատական ակտի նկատմամբ, կատարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պետական տուրքի գանձման ինքնուրույն օբյեկտ:

ՀՀ սահմանադրական դատարանը, նշելով, որ տվյալ գործով դիմողի մատնանշած իրավիճակում բողոք բերող կողմը, ելնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից, շարունակում է օգտվել օրենսդրական այն երաշխիքներից, որոնք միտված են բացառելու դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը պետական տուրք վճարելու պարտականությամբ խոչընդոտելու հնարավորությունը, գտել է, որ վիճարկվող հիշյալ դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարության շրջանակներում կայացված դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերում պետական տուրքի գծով արտոնություն չի տրամադրվում այդ արտոնությունից օգտված անձին, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր է առաջացնում: Օրենքի վերոհիշյալ հոդվածի վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազոր մարմինների ընդունած որոշման դեմ, բողոքներով պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելով, օրենսդիրը որևէ սահմանափակում կամ բացառություն չի նախատեսել՝ կապված այդ գործերով կայացված դատական ակտերի հետագա հնարավոր բողոքարկման շրջանակներում հիշյալ արտոնության շարունակական կիրառման հետ:

Այնուհետև ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի վիճարկվող նորմերի համատեղ կիրառման շրջանակներում դատական ծախսերի բաշխման կանոնները չեն կարող մեկնաբանվել այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ պետական տուրքի գծով արտոնություն ունեցող անձից այդ ծախսերը գանձվեն՝ ներառելով նաև վճարման ենթակա պետական տուրքի գումարը: Այն դեպքերում, երբ դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ

կարող է կրել դատական ծախսերն օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը:

Նաև վերոգրյալի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը, և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում:

Թեև նշված իրավական դիրքորոշումներն արտահայտվել են վարչական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում՝ կապված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի հետ, գտնում ենք, որ այդ դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև քաղաքացիական դատավարության կարգով քննվող այն գործերի նկատմամբ, որոնք վերաբերում են աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման ու աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սիրանուշ Մելիքյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Կազմակերպության՝ պահանջելով անվավեր ճանաչել վերջինիս տնօրենի 10.07.2018 թվականի թիվ 156 հրամանը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը: Այսինքն՝ Սիրանուշ Մելիքյանի կողմից ներկայացվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետով նախատեսված հայցը, որի պայմաններում վերջինս նույն հոդվածի առաջին մասի համաձայն՝ ազատված է դատարաններում պետական տուրքի վճարումից: Դրանից ելնելով՝ Սիրանուշ Մելիքյանը նշված հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար պետական տուրք չի վճարել: Դատարանի 16.11.2018 թվականի վճռով Սիրանուշ Մելիքյանի հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը՝ վերաքննիչ բողոքը ներկայացնելու համար նախապես վճարելով 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանը, քննելով Կազմակերպության վերաքննիչ բողոքը, 25.04.2019 թվականին որոշում է կայացրել Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 16.11.2018 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասին:

Դրանից հետո Կազմակերպությունը ներկայացրել է վճարել բողոք՝ պահանջելով բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել: Միաժամանակ Կազմակերպությունը վճարել բողոքի համար նախապես վճարել է 40.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Այժմ Վճարել դատարանը, քննելով Կազմակերպության վճարել բողոքը, որոշել է այն բավարարել՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել: Միաժամանակ Վճարել դատարանը որոշել է Սիրանուշ Մելիքյանից հօգուտ Կազմակերպության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարների փոխհատուցում, իսկ դատական ծախսերի հարցը՝ հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի հետ կապված, «Պետական

տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

Կարծում ենք, որ Վերաքննիչ և Վճարեկ դատարաններում պետական տուրքի ձևով Կազմակերպության կողմից կատարված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև սխալ են բաշխվել, այն չի բխում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված վերը նշված դիրքորոշումներից հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում օրենսդիրը կարգավորել է դատարաններում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետի հիմքով ներկայացված հայցադիմումների համար պետական տուրքի գանձման հետ կապված հարաբերությունները՝ մի կողմից՝ պետական տուրք վճարելու՝ անձի պարտականության և, մյուս կողմից՝ դատարանում նրա իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու՝ անձի սահմանադրական իրավունքի իրացման արդյունավետության ապահովման միջև հավասարակշռություն երաշխավորելու նպատակով սահմանելով համապատասխան կազմակերպական կառուցակարգ, որի համաձայն՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասով հայցվորին ազատել է նույն մասի «ա» կետի հիմքով հայցադիմում, իսկ երկրորդ մասով՝ տվյալ գործով կայացված դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ ու վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական տուրքի վճարումից:

Մինևույն ժամանակ օրենսդիրը պետական տուրքի վճարումից ազատված հայցվորի համար չի սահմանել պարտականություն՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար վճարված պետական տուրքը հատուցելու դրա վճարման պարտավորությունն ունեցող դատավարության մասնակցին, և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումների համատեքստում սույն գործով հայցվորը, ելնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետի և երկրորդ մասի իրավակարգավորումների բովանդակությունից, շարունակում է օգտվել օրենսդրական այն երաշխիքներից, որոնք միտված են բացառելու նրա՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը պետական տուրք վճարելու պարտականությամբ խոչընդոտելու հնարավորությունը՝ անկախ նրանից, թե ում կողմից են ներկայացվել վերաքննիչ և վճռաբեկ բողոքները:

Հակառակ պարագայում գտնում ենք, որ եթե քաղաքացիական դատավարության շրջանակներում կայացված դատական ակտի բողոքարկման ընթացակարգերում պետական տուրքի գծով արտոնություն չտրամադրվի հայցադիմումը դատարան ներկայացնելու համար այդ արտոնությունից օգտված անձին, ապա կխախտվի վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանի նույն դիրքորոշումների համաձայն՝ սույն գործով հայցվորը կարող էր բացառապես կրել մյուս դատական ծախսերն օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը: Մինչդեռ սույն գործով նման դատական ծախսեր կատարված լինելու վերաբերյալ փաստ չի վկայակոչվել:

Նման պայմաններում գտնում ենք, որ սույն գործով նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարվեր լուծված:

Մինևույն ժամանակ ցանկանում ենք արձանագրել, որ եթե առկա է օրենսդրական բաց՝ հաղթած դատավարության մասնակցի կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար վճարված պետական տուրքի վերադարձման հարցը լուծելու առումով, ապա այն ենթակա է լուծման բացառապես օրենսդրական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու եղանակով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Գ. Հակոբյան
Ն. Տավարացյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0008/02/14 2020թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԲԴ/0008/02/14
Նախագահող դատավոր՝	Ա. Սմբատյան
Դատավորներ՝	Ն. Մարգարյան Ա. Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ Մ. ԴՐՄԵՅԱՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
-------------------------------	---

2020 թվականի նոյեմբերի 05-ին գրավոր ընթացակարգով քննելով «ՎեոնԱրմենիա» ՓԲԸ-ի (իրավանախորդ՝ «ԱրմենՏել» ՓԲԸ) (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Յուլյա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արամ Կարապետյանի ընդդեմ Ընկերության՝ անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, Ընկերությունից հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար գումար բռնագանձելու, Ընկերությունից աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցման գումարը բռնագանձելու և ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու համար տուժանքի գումարը բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արամ Կարապետյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության 29.11.2013 թվականի թիվ 3681-Կ հրամանը (դրանում կատարված փոփոխությունները) ամբողջությամբ, իրեն վերականգնել նախկին պաշտոնում, իսկ անհնարինության դեպքում՝ համարժեք այլ պաշտոնում, Ընկերությունից հոգուտ իրեն բռնագանձել միջին աշխատավարձի չափով գումար՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 04.07.2014 թվականից մինչև աշխատանքում փաստացի վերականգնման օրը, վերականգնման անհնարինության դեպքում Ընկերությունից բռնագանձել

միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով գումար՝ որպես աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում, սկսած 04.07.2014 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով գումար՝ որպես հատուցում հարկադիր պարապորդի համար, ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու համար տուժանք 60 օրվա համար՝ հաշվի առնելով միջին օրական աշխատավարձը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշքարյան) 11.02.2015 թվականի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն: Վճռվել է. «...Ընկերության 29.11.2013թ. թիվ 3681-Կ հրամանը (դրանում կատարված փոփոխությունները) ամբողջությամբ ճանաչել անվավեր: Հայցվոր Արամ Վարապետյանի Կարապետյանին վերականգնել իր նախկին պաշտոնին համարժեք՝ վերանվանված Հյուսիսի վաճառքի և սպասարկման գրասենյակների ուղղության ղեկավարի պաշտոնում: Ընկերությունից հոգուտ հայցվոր Արամ Վարապետյանի Կարապետյանից բռնագանձել նրա միջին աշխատավարձի չափով գումար՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար, սկսած 04.07.2014 թվականից մինչև աշխատանքում փաստացի վերականգնման օրը: Վերականգնման անհնարինության դեպքում պատասխանողից հոգուտ հայցվորի բռնագանձել:

ա/ նրա միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով գումար՝ որպես աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում,

բ/ սկսած 04.07.2014թ.-ից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածի համար հայցվորի միջին աշխատավարձի չափով գումար՝ որպես հատուցում հարկադիր պարապորդի համար,

գ/ ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու համար տուժանք՝ 60 օրվա համար՝ հաշվի առնելով հայցվորի միջին օրական աշխատավարձը»: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Հունանյան, Մ. Հարթենյան, Ն. Տավարացյան) 22.04.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.02.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.12.2015 թվականի որոշմամբ Ընկերության վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2015 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Գործի նոր քննության ընթացքում հայցվորը փոխել է հայցի առարկան և պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության 29.11.2013 թվականի թիվ 3681-Կ հրամանը, Ընկերությունից բռնագանձել գումար՝ պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 04.07.2014 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, հայցվորին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով, ինչպես նաև ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու դիմաց տուժանք 60 օրվա համար՝ հիմք ընդունելով հայցվորի միջին աշխատավարձը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) 18.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է՝ անվավեր ճանաչել Ընկերության 29.11.2013 թվականի թիվ 3681-Կ հրամանը, Ընկերությունից հոգուտ Արամ Կարապետյանի բռնագանձել միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 04.07.2014 թվականից մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը պայմանագիրը համարել լուծված, Ընկերությունից հոգուտ Արամ Կարապետյանի բռնագանձել նրա միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով գումար՝ որպես աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում, Ընկերությունից հոգուտ Արամ Կարապետյանի բռնագանձել ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու համար տուժանքի գումար՝ 60 օրվա համար՝ հաշվի առնելով Արամ Կարապետյանի միջին աշխատավարձը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Միքայելյան, Գ. Խսանդանյան, Հ. Ետոբյան) 16.03.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.07.2016 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) (այսուհետ՝ Դատարան) 21.11.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է՝ Ընկերության անհատական իրավական ակտն անվավեր ճանաչել, բռնագանձել միջին աշխատավարձի չափով գումար հարկադիր պարսպուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, ինչպես նաև բռնագանձել աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում և ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու համար տուժանք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.07.2018 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.11.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 115-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Վերաքննիչ դատարանը Ընկերության՝ թիվ 3681-Կ հրամանի անվավերությունը պատճառաբանել է այն հանգամանքով, որ Ընկերության կողմից հաստատված նոր հաստիքացուցակում եղել են այնպիսի հաստիքներ, որոնք Ընկերությունը կարող էր առաջարկել Արամ Կարապետյանին, սակայն չի առաջարկել, որի հետևանքով վերջինս ապօրինի կերպով գրկվել է այլ աշխատանք ունենալու հնարավորությունից, մինչդեռ անտեսվել է այն փաստը, որ Ընկերությունը բազմիցս նշել է, որ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Արամ Կարապետյանի զբաղեցրած պաշտոնն այլևս գոյություն չի ունեցել, ուստի նախկին աշխատանքում վերականգնելը պարզապես անհնարին էր, իսկ Արամ Կարապետյանի վկայակոչած հաստիքները, որոնք ստեղծվել են վարչակազմակերպչական փոփոխության արդյունքում, պահանջում են այնպիսի պայմաններ և մասնագիտական պատրաստվածություն, որոնց վերջինս իր մասնագիտական պատրաստվածությամբ, որակավորմամբ, առողջական վիճակով պարզապես չի համապատասխանում, այդ իսկ պատճառով այդ աշխատանքներից ոչ մեկը չի առաջարկվել նրան:

Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ Ընկերության նոր վարչակազմակերպչական կառուցվածքը հաստատվել, իսկ թիվ 3681-Կ հրամանը տրվել է հիմք ընդունելով Ընկերության տնօրենների խորհրդի 13.11.2013 թվականի թիվ 17/13 որոշումը: Ուստի, Ընկերությունում աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և հաստիքների կրճատման պատճառով, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, 11.03.2014 թվականից լուծվել է Արամ Կարապետյանի և Ընկերության միջև կնքված աշխատանքային պայմանագիրը: Այլ կերպ ասած՝ հայցվորի հետ աշխատանքային պայմանագրի լուծումը պայմանավորված է եղել Ընկերությունում արտադրության ծավալների և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ:

Անդրադառնալով աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման հանգամանքին՝ հարկ է նշել, որ Ընկերության տնօրենների խորհրդի 02.09.2013 թվականի թիվ

14/13 որոշմամբ հաստատված հաստիքացուցակում շարժական կապի բլոկի և ֆիքսված կապի բլոկի կոմերցիոն տնօրինություններում առկա էր 544 հաստիք, իսկ Ընկերության տնօրենների խորհրդի թիվ 17/13 որոշմամբ հաստատված հաստիքացուցակում՝ շարժական կապի բլոկի և ֆիքսված կապի բլոկի կոմերցիոն տնօրինություններում՝ 504 հաստիք, հետևաբար, անվիճելի փաստ է նաև, որ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի փոփոխության արդյունքում տեղի են ունեցել հաստիքների կրճատումներ, 544-ը դարձել է 504, ինչպես նաև մեկ, երկու և ավելի բաժինների միաձուլումներ, որպիսի պարագայում հաստատվում է նաև հաստիքների կրճատման փաստը: Այսպիսով, Ընկերության թիվ 17/13 որոշմամբ հաստատված հաստիքացուցակով ըստ էության դադարել է գոյություն ունենալ Շարժական կապի բլոկի Կոմերցիոն տնօրինության արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայությունը, որն իր մեջ ներառել է նաև Հյուսիսի վաճառքի ուղղությունը, որպիսի պայմաններում կրճատվել են նաև այդ ծառայությունը և նրանում առկա բոլոր հաստիքները, այդ թվում նաև՝ հայցվորի զբաղեցրած հաստիքը, այսինքն՝ հայցվորի հաստիքն այլևս գոյություն չի ունեցել:

Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.12.2015 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ստորադաս ատյանը չի նշել այն սպացույցը, որը կհաստատեր Հյուսիսի վաճառքի և սպասարկման գրասենյակների ուղղության ղեկավարի պաշտոնը հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան լինելու փաստը: Սույն բողոքով բողոքարկվող դատական ակտի մեջ նշվել է, որ Դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ պատասխանողի մոտ առկա է եղել հայցվորին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորություն, ինչը պատասխանողի կողմից չի կատարվել, սակայն Վերաքննիչ դատարանը չի հստակեցրել, թե որն է այդ աշխատանքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորն աշխատանքից ազատման պահին զբաղեցրել է շարժական կապի բլոկի կոմերցիոն տնօրինության արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայության, Հյուսիսի վաճառքի ուղղության ղեկավարի հաստիքը, ինչից պարզ երևում է, որ հայցվորի աշխատանքային փորձն, ըստ սույն գործի հանգամանքների, վաճառքի ոլորտում է, բայց ոչ սպասարկման, իսկ վաճառքի և սպասարկման ծառայությունները բոլորովին այլ բաժիններ են և սպասարկման ոլորտում աշխատողը պետք է ունենա հաճախորդներին սպասարկելու և նրանց հետ աշխատելու փորձ: Եթե մանրակրկիտ ուսումնասիրվեն հայցվորի զբաղեցրած և Դատարանի կողմից նախատեսված հաստիքների տարբերությունը, ապա ակնհայտ է դառնում նրանց ներկայացվող պահանջների տարբերությունը, իսկ գործատուն ինքն է շահագրգռված իր մոտ առկա թափուր հաստիքները համարել պատրաստված, ներկայացվող հաստիքի պահանջները բավարարող թեկնածուի միջոցով:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտի վերլուծություններում նշելով, որ հայցվորին կարող էր առնվազն առաջարկվեր վաճառքի և սպասարկման ուղղության ծառայության ղեկավարի, բաժնի պետի, մասնագետի կամ ավագ մասնագետի հաստիքները, չի նշել, թե կոնկրետ, որ սպացույցով է հաստատված համարել, որ հայցվորն ունի համապատասխան կրթություն, որակավորում, փորձառություն, համապատասխան կազմակերպական հմտություններ, մասնավորապես՝ տիրապետում է գործարար նամակագրության և բանակցությունների վարման հմտություններին, արդյունավետ տիրապետում է «Trade marketing» ռազմավարության ձևավորման հմտություններին:

Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածը, իսկ Վերաքննիչ դատարանն անտեսել է այդ հանգամանքը: Մասնավորապես, Դատարանը գտել է, որ առկա է նշված նորմով սահմանված ժամկետի խախտում 60 օրով, քանի որ ծանուցման ժամկետը ընդհատվել է, մինչդեռ ընդհատումը տեղի է ունեցել ոչ թե Ընկերության մեղքով, այլ՝ հայցվորի, քանի որ վերջինիս կողմից անընդհատ ներկայացվել են անաշխատունակության թերթիկներ, որոնց հիման վրա փոփոխվել է ազատման օրը, ուստի ծանուցման ժամկետներն անընդհատ կրճատվել են:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.07.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճուարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 26.09.2008 թվականի թիվ 4933/1 աշխատանքային պայմանագրի և դրա անբաժանելի մասը հանդիսացող լրացուցիչ համաձայնագրերի համաձայն՝ Ընկերության և Արամ Կարապետյանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, և Արամ Կարապետյանի՝ Ընկերությունում զբաղեցրած վերջին պաշտոնը եղել է վերջինիս կողմից 01.01.2013 թվականից զբաղեցրած՝ «Շարժական կապի բլոկի կոմերցիոն տնօրինության արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի տնօրինության Հյուսիսի վաճառքի ուղղության ղեկավարի պաշտոնը» (**հատոր 1-ին, գ.թ. 86-98**):

2. 26.09.2008 թվականի թիվ 4933/1 աշխատանքային պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 28.12.2012 թվականի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի 3.1 կետով փոփոխություն է կատարվել աշխատանքային պայմանագրի 1.1 կետում՝ սահմանելով Շարժական կապի բլոկի կոմերցիոն տնօրինության արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի տնօրինության Հյուսիսի վաճառքի ուղղության ղեկավարի աշխատանքային գործառույթները (**հատոր 1-ին, գ.թ. 97-98**):

3. 29.11.2013 թվականի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 3681-Կ հրամանի համաձայն՝ Ընկերությունում աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և հաստիքների կրճատման պատճառով 11.03.2014 թվականից լուծվել է Արամ Կարապետյանի և Ընկերության միջև կնքված թիվ 4933/1 աշխատանքային պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 99-100**):

4. Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 29.11.2013 թվականի թիվ Ե-11-1038 ծանուցմամբ Արամ Կարապետյանը տեղեկացվել է 11.03.2014 թվականից աշխատանքային պայմանագրի լուծման մասին: Ծանուցմամբ միաժամանակ հայտնվել է, որ Ընկերությունում Արամ Կարապետյանին այլ աշխատանք չի առաջարկվում՝ համապատասխան հնարավորության բացակայության պատճառով: Նշված ծանուցումն Արամ Կարապետյանը ստացել է 18.12.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 101-104**):

5. Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Պյատախինի՝ «Անհատական իրավական ակտում փոփոխություններ կատարելու մասին» 17.02.2014 թվականի թիվ 670-Կ, 29.04.2014 թվականի թիվ 1449-Կ և 21.05.2014 թվականի թիվ 2104-Կ հրամաններով 29.11.2013 թվականի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 3681-Կ հրամանի մեջ Արամ Կարապետյանի հետ աշխատանքային պայմանագրի լուծման ամսաթիվը՝ 11.03.2014 թվականը, համապատասխանաբար փոխարինվել է 04.07.2014 թվականով (**հատոր 1-ին, գ.թ. 105-107**):

6. Ընկերության կադրային վարչության և մարդկային ռեսուրսների (ՄՌ) կառավարման ծառայության ղեկավարի ժ/պ Ս. Նշանյանցի կողմից հաստատված 21.05.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերության տնօրենների խորհրդի 02.09.2013 թվականի թիվ 14/13 որոշմամբ հաստատված հաստիքացուցակում շարժական կապի բլոկի և ֆիքսված կապի բլոկի կոմերցիոն տնօրինություններում առկա էր 544 հաստիք, իսկ Ընկերության տնօրենների խորհրդի 13.11.2013 թվականի թիվ 17/13 որոշմամբ հաստատված հաստիքացուցակում շարժական կապի բլոկի և ֆիքսված կապի բլոկի կոմերցիոն տնօրինություններում առկա է 504 հաստիք: Ընկերության տնօրենների խորհրդի 02.09.2013 թվականի թիվ 14/13 որոշումով հաստատված հաստիքացուցակում շարժական կապի բլոկի կոմերցիոն տնօրինության Արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայությունում Հյուսիսի վաճառքի ուղղությունը պատասխանատու էր Լոռի և Տավուշ մարզերում աշխատանքների կազմակերպման և ապահովման համար, իսկ Ընկերության տնօրենների խորհրդի 13.11.2013 թվականի թիվ 17/13 որոշմամբ հաստատված

հաստիքացուցակում բացակայում է շարժական կապի բյուլի Կոմերցիոն տնօրինության Արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայությունը (**հատոր 1-ին, գ.թ. 132**):

7. 02.09.2013 թվականի Ընկերության տնօրենների խորհրդի թիվ 14/13 որոշման համաձայն՝ շարժական կապի բյուլի կոմերցիոն տնօրինության և ֆիքսված կապի բյուլի կոմերցիոն տնօրինության մասով Ընկերության հաստիքացուցակից քաղվածքի համաձայն՝ Շարժական կապի բյուլն ունեցել է, մասնավորապես՝ Կոմերցիոն տնօրինություն, որում առկա են եղել Կոմերցիոն տնօրենի՝ 1, առևտրային մարքեթինգի մենեջերի՝ 1, առևտրային մարքեթինգի առաջատար մասնագետի՝ 1, կորորդինատորի՝ 1 հաստիքներ, Արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայություն, որն իր մեջ ներառել է Երևանի վաճառքի կենտրոն, Արևելքի, Արևմուտքի, Կենտրոնի, Հյուսիսի և Հարավի վաճառքի ուղղություններ: Հյուսիսի վաճառքի ուղղությունում առկա են եղել՝ Հյուսիս վաճառքի ուղղության ղեկավարի 1, ավագ տարածքային մասնագետի 1, տարածքային մասնագետի 2 հաստիքներ: Շարժական կապի բյուլն ունեցել է նաև Վաճառքի և սպասարկման գրասենյակների (ՎևՍԳ) միջոցով վաճառքի ծառայություն, որն իր մեջ ներառել է Երևանի, Կենտրոնի, Հյուսիսի, Հարավի գրասենյակների ուղղություն: Հյուսիսի գրասենյակների ուղղությունում առկա են եղել գրասենյակների ուղղության ղեկավարի 1, գրասենյակի մենեջերի 4, գրասենյակի առաջատար մասնագետի 20, գրասենյակի ավագ մասնագետի 13 և գրասենյակի մասնագետի 43 հաստիքներ (**հատոր 1-ին, գ.թ. 68-72**):

8. 13.11.2013 թվականի Ընկերության տնօրենների խորհրդի թիվ 17/13 որոշման համաձայն՝ շարժական կապի բյուլի կոմերցիոն տնօրինության և ֆիքսված կապի բյուլի կոմերցիոն տնօրինության մասով Ընկերության հաստիքացուցակից քաղվածքի համաձայն՝ Շարժական կապի բյուլն ունի, մասնավորապես՝ Կոմերցիոն տնօրինություն, որում առկա են կոմերցիոն տնօրենի 1, Արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի սուպերվայզերի 1, Կորորդինատորի 1 հաստիքներ: Շարժական կապի բյուլում առկա չէ Արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայություն: Շարժական կապի բյուլում առկա է Վաճառքի և սպասարկման գրասենյակների (ՎևՍԳ) վաճառքի ծառայություն, որն իր մեջ ներառել է Երևանի, Կենտրոնի, Հյուսիսի, Հարավի գրասենյակների ուղղություն: Հյուսիսի գրասենյակների ուղղությունում առկա են եղել գրասենյակների ուղղության ղեկավարի 1, գրասենյակի մենեջերի 4, գրասենյակի առաջատար մասնագետի 20, գրասենյակի ավագ մասնագետի 13 և գրասենյակի մասնագետի 43 հաստիքներ (**հատոր 1-ին, գ.թ. 73-76**):

9. Ընկերության կադրային վարչարարության և ՄԻ կառավարման ծառայության ղեկավար Վ. Բաղդասարյանի կողմից 08.09.2014 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ ֆիքսված կապի բյուլի Կոմերցիոն տնօրինության Պետական մարմինների և հատուկ հաճախորդների հետ աշխատող խմբի ղեկավարի հաստիքն Արամ Կարապետյանին չի առաջարկվել, քանի որ այդ հաստիքով նախատեսված աշխատանքը կատարելու համար հարկավոր է՝ տենդերների անցկացման ոլորտում օրենսդրական պահանջների իմացություն, գործնականում դրանց կիրառման փորձ, պայմանագրային իրավունքի իմացություն, գնագոյացման և գնային քաղաքականության հիմունքների իմացություն, բիզնես-քեյսեր հաշվարկելու կարողություն՝ շահավետ տենդերային առաջարկներ մշակելու համար, ֆինանսական մասնագիտացում Ընկերության ռեսուրսների գնահատման հիման վրա տենդերներ շահելու նպատակով արդյունավետ լուծումներ գտնելու համար: Այդ թափուր հաստիքը համալրելու համար մրցույթը հայտարարվել է դեռ 02.08.2013 թվականին, սակայն առ 08.09.2014 թվականն այդ հաստիքը համալրված չէ, քանի որ բազմաթիվ դիմորդների մեջ Ընկերության պահանջներին համապատասխանող թեկնածու այդպես էլ չի գտնվել անգամ նրանց մեջ, ովքեր ունեցել են ֆինանսական կրթություն, հատուկ հաճախորդների հետ, տենդերներին անմիջական մասնակցությամբ աշխատանքի փորձ: Եթե ղեկավարի վերագրյալից՝ Արամ Կարապետյանի ազատման պահին նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, նաև կատարած աշխատանքին համապատասխան ազատ հաստիք չի եղել: Ի լրումն՝ հայտնել է, որ վերոհիշյալ հաստիքը համալրելու համար Ընկերությունն իր հնարավորությունների շրջանակներում

պատրաստ է թեկնածուին վարձատրել ոչ ավել, քան 335.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 2-րդ, գ.թ. 32**):

10. Վաճառքի ուղղության ղեկավարի պաշտոնեական հրահանգի համաձայն՝ տվյալ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են՝ **ցանկացած բարձրագույն կրթությունը**, հեռահաղորդակցության բնագավառում, առևտրի և/կամ խոշոր ընկերության ծառայությունների մատուցման, սպառման ցանցերի կազմակերպման, վաճառքի և ուղիղ առաքման համակարգի զարգացման ասպարեզներում երկու տարվա և ավել աշխատանքային փորձը, նվազագույնը մեկ տարվա ղեկավար պաշտոնի աշխատանքային փորձ, առևտրի կառուցվածքի, վաճառքի ուղիների, հեռահաղորդակցության շուկայի, ՀՀ օրենսդրության հիմունքների, մերչընդայզինգի սկզբունքների, լոգիստիկայի վերաբերյալ հատուկ գիտելիքներ, հայերենի պարտադիր, ռուսերենի և ցանկալի է անգլերենի իմացությունը, հաղորդակցման ունակություն, անմիջականություն, սովորելու ընդունակություն, ճկունություն, թիմում աշխատելու ունակություն, կոնֆլիկտային իրավիճակներում մարդկանց հետ շփվելու ունակություն, ինքնուրույն աշխատանքի և որոշումների կայացման կարողություն, նախաձեռնություն, նորամուծություններ, պատրաստակամությունը փոփոխություններին, Microsoft Office-ի և կազմտեխնիկայի հետ աշխատանքի փորձ, կոնտրագենտների հետ աշխատանքի հմտություն, թիմ ձևավորելու լավ հատկանիշներ, հաշվետվությունների և գործարար թղթակցության պատրաստման հմտություններ, B կարգի վարորդական իրավունքի առկայություն, ամենաքիչը մեկ տարվա վարելու փորձ (**հատոր 2-րդ, գ.թ. 74-77**):

11. Կոմերցիոն տնօրենի պաշտոնեական հրահանգի համաձայն՝ տվյալ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են՝ **բարձրագույն տնտեսագիտական, մարքեթինգային կամ տեխնիկական կրթությունը**, 5 տարուց ավել աշխատանքային փորձ վաճառքի տնօրենի, մարքեթինգի տնօրենի պաշտոններում, 30-ից ավել մարդուց բաղկացած կոլեկտիվի նվազագույնը երկու տարվա կառավարման փորձ, հայերենի, ռուսերենի և **անգլերենի ազատ տիրապետում**, համակարգչի իմացություն, ղեկավարի հմտություններ, կազմակերպչական և անալիտիկ հմտություններ, թիմ ղեկավարելու հմտություններ, արդյունքին հասնելու ուղղվածություն և շահութաբերության բարձրացում, ռազմավարական պլանավորման, բանակցային հմտությունների, երկարատև համագործակցության հարաբերությունների կառուցման հմտություններ (**հատոր 4-րդ, գ.թ. 64-66**):

12. Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի պաշտոնեական հրահանգի համաձայն՝ տվյալ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են՝ բարձրագույն (ցանկալի է լրացուցիչ կրթության առկայություն, մենեջմենտի և անձնակազմի ղեկավարման ոլորտի սերտիֆիկատների առկայություն) կրթություն, նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ ծառայությունների մատուցման և վաճառքի ոլորտում, նվազագույնը 2 տարվա ղեկավար աշխատանքի փորձ, մեծ կոլեկտիվի կառավարման փորձ, ԱՀ (փորձառու օգտագործող), հայերենի և ռուսերենի պարտադիր, ցանկալի է անգլերենի իմացություն, վաճառքի կազմակերպման և **սպասարկման**, արտադրանքների և ծառայությունների խթանման ոլորտի, հեռահաղորդակցության շուկայի և դրա զարգացման միտումների վերաբերյալ գիտելիքներ, արտաքին գործընկերների հետ աշխատելու ունակություն, բանակցությունների անցկացման, լիազորությունների փոխանցման հմտություններ, ոչ ստանդարտ իրավիճակներում որոշումներ կայացնելու ունակություն, գործնական նամակագրության և բանակցությունների վարման հմտություններ, անձնակազմի կառավարման հմտություններ, արդյունավետ **Trade marketing ռազմավարության ձևավորման հմտություններ**, սեփական ցանցի ձևավորման ոլորտում գիտելիքներ (**հատոր 4-րդ, գ.թ. 82-85**):

13. Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի պաշտոնեական հրահանգի համաձայն՝ տվյալ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են՝ բարձրագույն, ցանկալի է **տնտեսագիտական կրթություն**, 1 տարուց ոչ պակաս աշխատանքային փորձ վաճառքի և **սպասարկման** գրասենյակներում (Երևան/տարածքներ), Ավագ/Առաջատար մասնագետի պաշտոնում կամ նմանատիպ պաշտոններում Ընկերության այլ ստորաբաժանումներում, նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձ Երևան/

տարածքների առաջատար մասնագետի պաշտոնում կամ Ընկերության այլ ստորաբաժանումների համանման պաշտոնում, ղեկավար աշխատանքի փորձ, վաճառքի և սպասարկման ոլորտում տեսական և գործնական գիտելիքներ և կազմակերպության այլ գործառնության ոլորտների իմացություն: ԱՀ հմուտ օգտագործող, հաճախորդների հետ փոխգործակցության իրավաբանական հիմքերի իմացություն, հայերենի և ռուսերենի պարտադիր, ցանկալի է անգլերենի իմացություն, հաղորդակցվելու հմտություններ, ճկունություն, կոլեկտիվում աշխատելու կարողություն, առաջնորդի որակներ, ուղղվածությունը դեպի վերջնական արդյունքը, ընկալունակություն, թիմ ձևավորելու լավ ունակություններ, ղեկավարելու կարողություն, նախաձեռնողականություն, նորարարություն, փոփոխություններին պատրաստականություն, անձնակազմի ընտրություն և ուսուցում, խրախուսում, արդյունքների վերահսկում, հաշվետվության պատրաստման և գործարար նամակագրության վարման հմտություններ, կոնֆլիկտի կառավարման մեթոդիկաներին տիրապետում, բանակցությունների վարման հմտություններ (**հատոր 4-րդ, գ.թ. 78-81**):

14. Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի (Երևան/տարածքներ) պաշտոնեական հրահանգի համաձայն՝ տվյալ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են՝ միջնակարգ մասնագիտական, ցանկալի է բարձրագույն կրթությունը, ցանկալի է 1 տարուց ոչ պակաս աշխատանքային փորձ վաճառքի և սպասարկման ոլորտում: ԱՀ առաջադեմ օգտագործող, հաճախորդների հետ համագործակցության իրավաբանական հիմունքների իմացություն, հայերենի և ռուսերենի պարտադիր, ցանկալի է անգլերենի իմացություն, հաղորդակցվելու հմտություններ, ճկունություն, կոլեկտիվում աշխատելու կարողություն, առաջնորդի հատկանիշներ, նպատակաուղղվածություն դեպի վերջնական արդյունք, ակտիվ վաճառքներ իրականացնելու ունակություններ, կոնֆլիկտային իրավիճակներում մարդկանց հետ շփվելու ունակություններ, սպասարկման հմտություններ, բանակցություններ վարելու հմտություններ (**հատոր 4-րդ, գ.թ. 74-77**):

15. Վաճառքի և սպասարկման գրասենյակի ավագ մասնագետի (Երևան/տարածքներ) պաշտոնեական հրահանգի համաձայն՝ տվյալ պաշտոնի որակավորման նվազագույն պահանջներն են՝ ցանկացած բարձրագույն կրթությունը, 1 տարուց ոչ պակաս աշխատանքային փորձ վաճառքի և սպասարկման ոլորտում, ԱՀ առաջադեմ օգտագործող, հաճախորդների հետ համագործակցության իրավաբանական հիմունքների իմացություն, ՎևՄԳ-ի ներքին համակարգի ազատ տիրապետում, հայերենի և ռուսերենի պարտադիր, ցանկալի է անգլերենի իմացություն, հաղորդակցվելու հմտություններ, ճկունություն, կոլեկտիվում աշխատելու կարողություն, առաջնորդի հատկանիշներ, նպատակաուղղվածություն դեպի վերջնական արդյունք, ակտիվ վաճառքներ իրականացնելու ունակություններ, կոնֆլիկտային իրավիճակներում մարդկանց հետ շփվելու ունակություններ, սպասարկման հմտություններ, բանակցություններ վարելու հմտություններ (**հատոր 4-րդ, գ.թ. 70-73**):

16. Արամ Կարապետյանի IT-I թիվ 1364103 աշխատանքային գրքույկի համաձայն՝ -01.12.1994թ. ընդունվել է աշխատանքի Վանաձորի կապի միավորումում թիվ 5 ԱՀԿ-ում որպես ինժեներ.

- 01.11.1996թ. նշանակվել է թիվ 5 ԱՀԿ-ի ճարտարագետ.

- 01.07.1997թ. ՀՀՑ ՊՁ լուծարման թիվ 25 հրամանով ազատվել է աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին կետով և փոխադրվել «ԱրմենՏել» ՀՀ «Վանաձորի հեռախոսային ցանցի շահագործում» առանձնացված ստորաբաժանումում.

- 08.01.2000թ. փոխադրվել է Լոռու մարզային տնօրինության տեխնիկական բաժին որպես առաջատար ճարտարագետ.

- 01.06.2007թ. նշանակվել է ՀՀ գլխավոր տնօրինության ՀՀ տարածքների տնօրինության Լոռու տարածքային կենտրոնի կոմերցիոն բաժնի պետի պաշտոնում.

- 26.09.2008թ. նշանակվել է վաճառքի տնօրինության Հյուսիսային տարածքի կոմերցիոն մենեջերի պաշտոնում.

- 03.10.2011թ. նշանակվել է վաճառքի տնօրինության արտաքին առևտրային ցանցի միջոցով վաճառքի ծառայության վաճառքի ուղղության ղեկավարի (Հյուսիս) պաշտոնում.

- 01.01.2013թ. նշանակվել է շարժական կապի բլոկի կոմերցիոն տնօրինության արտաքին առևտրային ցանցի (ԱԱՑ) միջոցով վաճառքի ծառայության Հյուսիսի վաճառքի ուղղության ղեկավարի պաշտոնում.

- 04.07.2014թ. լուծվել է աշխատանքային պայմանագիրը և ազատվել է աշխատանքից (**հատոր 2-րդ, գ.թ. 69**):

4. Վճռարեկ դատարանի պայրճատարանությունները և եզրահանգումները

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ արտադրության ծավալների և (կամ) արտեսական և (կամ) արտահանական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությանը պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հասարիքների կրճատման ղեկավարում գործարտի նախաձեռնությանը աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկություններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է գործատուի նախաձեռնությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման ղեկավարում:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել նույն օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու ղեկավարում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո

անցել է հինգ օրից ավելի ժամանակ, և գործատուն չի լուծել պայմանագիրը: Այդ ժամկետում չեն հաշվարկվում աշխատողի արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերը նշված նորմերի մեկնաբանությանը, արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը, մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով.
2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ.
3. պետք է կրճատված լինեն աշխատողների քանակը և (կամ) հաստիքները.
4. գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պետք է աշխատողին առաջարկված լինի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը պետք է հրաժարված լինի առաջարկված աշխատանքից, կամ
5. գործատուի մոտ պետք է բացակայեն աշխատողին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունն **ինքնին բավարար չէ աշխատողի հեն** անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը (*յուեն Արուսյակ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը և Եվգենիա Մանուկյանն ընդդեմ «Գաֆեժեան թանգարան» հիմնադրամի թիվ ԵԿԴ/3613/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **«մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում»** հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք (*յուեն Գայանե Դանիլովան ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/2378/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարելու հատուցում՝ միջին աշխատավարձի ոչ պակաս, քան կրկնապատիկի, բայց ոչ ավելի, քան տասներկուապատիկի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկով անդրադարձել է աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն աշխատանքային պայմանագրի լուծումը համարել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ներկայիս գործող խմբագրությամբ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի) և 3-րդ մասի պահանջների պահպանմամբ կատարված այն դեպքում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը, առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը չի ապացուցել գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում իր նախկին հաստիքային միավորի գոյություն ունենալու, ինչպես նաև գործատուի մոտ իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք լինելու փաստերը (յրեն Անասյան Գիշանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱՔԴ/0605/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու հիմքի առկայության պայմաններում դատարանի կողմից ընկերության վրա չի կարող դրվել այնպիսի պարտավորություն, որի փաստացի կատարումն օբյեկտիվորեն անհնար է, և նման դեպքերում դատարանի կողմից վերը նշված հոդվածը չկիրառելը կհանգեցնի գործատուի համար լրացուցիչ պարտավորության ստեղծելու կառուցվածքային նոր միավոր, նոր հաստիք, իսկ նման պարտավորության սահմանումը կհանգեցնի գործատուի՝ ՀՀ Սահմանադրության՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի երաշխիքային նորմերի և օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակմանը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ իսկ նպատակով օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասություն՝ որոշելու տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինությունը կոնկրետ գործի փաստերից ելնելով (յրեն Ջոյա Ծապուրյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ 3-496(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ անդրադարձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծված լինելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով աշխատանքում վերականգնելու առանձնահատկությունների՝ արձանագրելով, որ.

1. ոչ բոլոր դեպքերում է, որ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելը, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելը կարող է հիմք հանդիսանալ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար.

2. այդ կանոնից բացառություն է այն դեպքը, երբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում անգամ վերը նշված խախտումների վիստոր հաստատված համարելու պայմաններում աշխատողին չվերականգնել նախկին աշխատանքում, եթե դա անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով: Այս դեպքում նախկին աշխատանքում վերականգնելու փոխարեն դատարանը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է միայն նախկին աշխատանքում վերականգնվելու մասին, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ (*լրեն Բրիտանիա Նեբրիչի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1879/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Անդրադառնալով աշխատանքից ազատելու վերաբերյալ ծանուցմանը՝ ՀՀ վճարելի դատարանը նախկին որոշումներից մեկով հայտնել է, որ աշխատանքից ազատելու ծանուցումը տրամադրվում է աշխատանքային հարաբերությունների անկայության պայմաններում՝ նկատի ունենալով, որ աշխատողը դեռևս նույն գործատուի մոտ կատարում է աշխատանք, ստանում աշխատավարձ, հնարավորություն ունենում կատարվող աշխատանքին զուգահեռ փնտրել այլ աշխատանք, ինչը չէր կարող ապահովվել, եթե հաստիքն արդեն կրճատված լիներ կամ գոյություն չունենար: Այլ կերպ ասած՝ աշխատողին ծանուցում տրվում է այն ժամանակ, երբ գործատուն որոշում է աշխատակազմում կատարել փոփոխություններ, որոնք ապագայում հանգեցնելու են կամ կարող են հանգեցնել հաստիքների կրճատման: Ընդ որում, հաստիքների նախատեսված կրճատումը կարող է տարբեր պատճառներով տեղի չունենալ կամ չկատարվել նախատեսվող ժամանակահատվածում: Հնարավոր են նաև դեպքեր, երբ կատարվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ընդհանուր առմամբ հաստիքների կրճատում տեղի ունենա, սակայն ծանուցված աշխատողի կոնկրետ հաստիքը չկրճատվի: Օրենսդիրը գործատուին չի պարտավորեցնում ամենայն որոշակիությամբ բոլոր աշխատողներին ծանուցել, թե կոնկրետ որ հաստիքներն են ապագայում կրճատվելու, սակայն գործատուն պարտավոր է կոնկրետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս պահպանել սահմանված ծանուցման ընթացակարգի պահանջները, մասնավորապես՝ ժամկետը:

ՀՀ վճարելի դատարանի նման մոտեցումը պայմանավորված է աշխատողների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ՝ հնարավորություն տալով նախապես տեղեկանալ աշխատանքից հնարավոր ազատման մասին, փնտրել նոր աշխատանք, տեղեկացման ժամանակահատվածում աշխատել և ստանալ աշխատավարձ: Ընդ որում, ծանուցումն անպայմանորեն չի ենթադրում աշխատանքից ազատում՝ նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ ծանուցումը կարող է նաև ուժը կորցրած ճանաչվել՝ չհանգեցնելով աշխատանքային պայմանագրի լուծման (*լրեն Անահիթ Եազարյանն ընդդեմ Հրազդան համայնքի ղեկավարի թիվ ԿԴ/1490/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործատուի պարտականության չկատարման միակ իրավական հետևանք է հանդիսանում նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված տուժանքի վճարումը և չի կարող հանգեցնել աշխատանքային պայմանագրի լուծման կապակցությամբ ընդունված իրավական ակտի անվավերությանը (*լրեն Նունե Մանուկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ 3-34(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.01.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով նախկինում հայտնած դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այսպիսով հաստիքների կրճատում կատարելիս

համապատասխան աշխատակցին առնվազն 2 ամիս առաջ ծանուցելու պահանջից բացի օրենսդիրը նախատեսել է ևս մեկը, համաձայն որի՝ գործատուն ծանուցման ժամկետի ավարտից հետո 5 օրվա ընթացքում պետք է լուծի աշխատանքային պայմանագիրը: Հաշվի առնելով այն, որ ծանուցումն անպայմանորեն չի ենթադրում աշխատանքից ազատում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը ծանուցման ժամկետի ավարտից հետո 5 օրվա ընթացքում գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու պահանջը նախատեսել է, որպեսզի աշխատողի համար չստեղծվի անորոշություն: Այլ կերպ ասած՝ ծանուցման ժամկետի ավարտից հետո հնգօրյա ժամկետում աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենսդրական պահանջը հստակություն է մտցնում աշխատող-գործատու հարաբերություններում, այսինքն՝ դրանով աշխատողի համար պարզ է դառնում տվյալ գործատուի հետ ունեցած իր աշխատանքային հարաբերությունների հետագա ճակատագիրը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետն օրենսդիրը դիտարկել է որպես անհրաժեշտ և բավարար ժամանակահատված աշխատանքային պայմանագրի լուծման մասին աշխատողին ծանուցելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հատկապես ընդգծում է, որ նշված ժամկետը առնվազն երկու ամիսը, օրենսդիրը համարել է ծանուցման համար անհրաժեշտ նվազագույն ժամանակահատված՝ հնարավոր և ընդունելի համարելով նաև ծանուցման ավելի երկար ժամկետները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրական նման կարգավորումը հնարավորություն է տալիս գործատուին իր հայեցողությամբ տրամադրելու աշխատողին ավելի երկար ժամանակահատված փնտրելու նոր աշխատանք՝ տեղեկացման ժամանակահատվածում աշխատելով և ստանալով աշխատավարձ: Ընդ որում, ծանուցման համար նախատեսված այս ժամկետի մեջ չեն հաշվարկվում աշխատողի արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածները: Ուստի, եթե աշխատողը չի հիմնավորում հստակ ժամանակահատվածում իր՝ ժամանակավոր անաշխատունակ լինելու հանգամանքը, այդ ժամանակահատվածը մտնում է ծանուցման ժամկետի հաշվարկի մեջ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԱԲԴ/0008/02/14 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 28.12.2015 թվականի որոշմամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության այն հիմքով, որ ստորադաս դատարանը չի նշել այն ապացույցը, որը կհաստատեր Հյուսիսի վաճառքի և սպասարկման գրասենյակների ուղղության ղեկավարի պաշտոնը հայցվորի մասնագիտական պատրաստվածությունը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան լինելու փաստը:

Գործի նոր քննության ընթացքում հայցվորը փոխել է հայցի առարկան և պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության 29.11.2013 թվականի թիվ 3681-Կ հրամանը, Ընկերությունից բռնագանձել գումար՝ պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 04.07.2014 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, հայցվորին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով, ինչպես նաև ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու դիմաց տուժանք 60 օրվա համար՝ հիմք ընդունելով հայցվորի միջին աշխատավարձը:

Դատարանը, 21.11.2017 թվականի վճռով հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ գործատուի նախաձեռնությամբ Արամ Կարապետյանի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս պատասխանողի մոտ առկա է եղել հայցվորին նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորություն: Առնվազն կարող էին առաջարկվել՝

1. Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի,
2. Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի,
3. Վաճառքի և սպասարկման գրասենյակի ավագ մասնագետի,
4. Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի հաստիքները, իսկ Ֆիքսված կապի բյուրոյում առկա է եղել

1. Կոմերցիոն տնօրենի հաստիքը:

Չնայած վերոնշյալ հաստիքների առկայությանը՝ հայցվորին ուղարկված ծանուցման մեջ Ընկերությունը նշել է, որ Ընկերությունում աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և հաստիքների կրճատման պատճառով Ընկերության տնօրենների խորհրդի 13.11.2013 թվականի թիվ 17/13 որոշման հիման վրա և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ լուծվելու է հայցվորի և պատասխանողի միջև կնքված թիվ 4933/1 աշխատանքային պայմանագիրը, և հայտնել է, որ Ընկերությունում Արամ Կարապետյանին այլ աշխատանք չի առաջարկվում՝ համապատասխան հնարավորության բացակայության պատճառով:

Ուստի, Դատարանն արձանագրել է, որ Ընկերության նախաձեռնությամբ Արամ Կարապետյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտմամբ, հետևաբար Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Պյատախյանի 29.11.2013թ. աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 3681-Կ հրամանը ենթակա է անվավեր ճանաչման: Միաժամանակ, Դատարանը, արձանագրելով, որ պատասխանող ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքում հայցվորի նախկին հաստիքային միավորը գոյություն չունի, գտել է, որ պատասխանող ընկերության վրա չի կարող դրվել այնպիսի պարտավորություն, որի փաստացի կատարումն օբյեկտիվորեն անհնար է, և նման դեպքերում հայցվորին նախկին աշխատանքում վերականգնելը կհանգեցնի պատասխանողի համար լրացուցիչ պարտավորության՝ ստեղծելու կառուցվածքային նոր միավոր, նոր հաստիք, իսկ նման պարտավորության սահմանումը կհանգեցնի պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի երաշխիքային նորմերի և օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակմանը, այսինքն՝ հայցվորին նախկին աշխատանքում վերականգնելն անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով: Բացի այդ, Դատարանը գտել է, որ Ընկերության կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հայցվորին ուղարկվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի եզրահանգումները, Դատարանի վճիռը թողել է անփոփոխ:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Ուսումնասիրելով այն հաստիքների պաշտոնական հրահանգները, մասնավորապես՝ Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի (Երևան/տարածքներ), Վաճառքի և սպասարկման գրասենյակի ավագ մասնագետի (Երևան/տարածքներ), Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի, Կոմերցիոն տնօրենի, Շարժական կապի բլոկի կոմերցիոն տնօրինության արտաքին առևտրային ցանցի (ԱՄՑ) միջոցով վաճառքի տնօրինության Հյուսիսի վաճառքի ուղղության ղեկավարի պաշտոնների պաշտոնական հրահանգները, որոնք, համաձայն ստորադաս դատարանների պատճառաբանությունների, առնվազն պետք է առաջարկվեն գործատուի կողմից աշխատողին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորի զբաղեցրած հաստիքի կրճատման պարագայում Ընկերության կողմից Արամ Կարապետյանին պետք է առաջարկվեր վերջինիս «մասնագիտական պատրաստվածությամբ», «որակավորմամբ» և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք: Մինչդեռ վերոնշյալ պաշտոնական հրահանգները համակարգային վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ նշված պաշտոնները չեն կարող գնահատվել որպես գործատուի կողմից աշխատողին առաջարկվող համարժեք այլ պաշտոններ, քանի որ դրանց առաջադրված չափանիշներն էապես տարբերվում են հայցվորի՝ նախկինում զբաղեցրած պաշտոնին առաջադրված չափանիշներից: Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ գործատուի նախաձեռնությամբ Արամ Կարապետյանի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս

Ընկերությունում առկա էին Արամ Կարապետյանին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու առնվազն հետևյալ հնարավորությունները, այն է՝ Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի ավագ մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի հաստիքները, իսկ Ֆիքսված կապի բլոկում առկա է եղել կոմերցիոն տնօրենի հաստիքը, ինչը Ընկերության կողմից չի կատարվել, չի բխում սույն գործի փաստերից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի ավագ մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի և Ֆիքսված կապի բլոկում կոմերցիոն տնօրենի** հաստիքներն Ընկերության կողմից Արամ Կարապետյանին չէին կարող առաջարկվել, քանի որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք: Ընկերության կողմից Արամ Կարապետյանին աշխատանք առաջարկելու համար անհրաժեշտ էր, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին, միաժամանակ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը և կատարած աշխատանքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին ընդգծել, որ աշխատողի շահերը ենթակա են պաշտպանության բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դեպքում աշխատողների թվաքանակը կրճատելուց հետո համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) այդ աշխատողի նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք և այդ աշխատանքն իր տեսակով, բնույթով և գործառույթներով համահունչ է աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնին և կատարած աշխատանքին: Ընդ որում, գործատուն աշխատողին չի կարող առաջարկել վերջինիս նախկին հաստիքին ակնհայտորեն ոչ համարժեք կամ նախկինում կատարած աշխատանքի գործառույթներից տարբերվող, հավելյալ հմտություններ և կարողություններ, լրացուցիչ չափանիշներ պարունակող աշխատանք, այլ պարտավոր է աշխատողին առաջարկել միայն աշխատողի ընդունակություններին, պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համարժեք աշխատանք, որը համապատասխանում է աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնին, կատարած գործառույթներին, ունեցած հմտություններին և պաշտոնական հրահանգում ներառված այլ չափանիշներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերոնշյալ հաստիքների պաշտոնական հրահանգներում սահմանված են այլ չափանիշներ, որոնք բացակայում են հայցվորի նախկինում զբաղեցրած հաստիքի պաշտոնական հրահանգում նախատեսվածից: Մասնավորապես՝ **Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի ավագ մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի հաստիքներին** առաջադրված է **սպասարկման** ոլորտում տեսական և գործնական գիտելիքներ ունենալու պարտադիր պահանջ, իսկ **Ֆիքսված կապի բլոկում կոմերցիոն տնօրենի հաստիքին՝ անգլերենին ազատ տիրապետելու, արդյունքին հասնելու ուղղվածություն և շահույթաբերության բարձրացում, ռազմավարական պլանավորման, բանակցային հմտություններին, երկարատև համագործակցության հարաբերությունների կառուցման հմտություններ**, որպիսի պարտադիր պահանջներ ներկայացված չէին Արամ Կարապետյանի զբաղեցրած նախկին հաստիքին: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արամ Կարապետյանի կողմից սույն գործի քննության ընթացքում չի հիմնավորվել այն հանգամանքը, որ իր

ունակություններով, հմտություններով և մասնագիտական որակներով ինքը կարող էր համապատասխանել վերոնշյալ հաստիքներին ներկայացվող չափանիշներին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ պաշտոնները որպես Ընկերության մոտ առկա հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան համարժեք այլ աշխատանքի թափուր հաստիքներ, չէին կարող առաջարկվել Արամ Կարապետյանին:

Ավելին՝ գործի փաստերից հետևում է, որ հայցվորի աշխատանքն անմիջականորեն կապված էր ուղղակի վաճառքի կազմակերպման հետ և չէր պահանջում հմտություններ սպասարկման ոլորտում, ինչը նշանակում է, որ հայցվորի նախկին աշխատանքն իր չափանիշներով համարժեք չէր քննարկվող հաստիքներին առաջադրվող չափանիշներին: Ուստի, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Ընկերության տնօրենների խորհրդի 13.11.2013 թվականի թիվ 17/13 որոշման հիմքում ընկած այն պատճառաբանությունը, ըստ որի՝ համապատասխան հնարավորության բացակայության պատճառով Արամ Կարապետյանին այլ աշխատանք չի առաջարկվում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.12.2015 թվականի որոշմամբ Ընկերության վճռաբեկ բողոքը բավարարվել էր՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2015 թվականի որոշումը բեկանվել և գործն ուղարկվել էր Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության այն հիմքով, որ ստորադաս առյանը չի նշել այն ապացույցը, որը կհաստատեր Հյուսիսի վաճառքի և սպասարկման գրասենյակների ուղղության ղեկավարի պաշտոնը հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան լինելու փաստը: Չնայած նոր քննության հիմքին՝ գործի նոր քննության ընթացքում ստորադաս առյանները չեն վկայակոչել, թե որ ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման արդյունքում են հաստատված համարել, որ Արամ Կարապետյանն իր մասնագիտական պատրաստվածությամբ, որակավորմամբ և առողջական վիճակով համապատասխանում է Երևանի վաճառքի և սպասարկման գրասենյակների բաժնի պետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մասնագետի, Վաճառքի և սպասարկման գրասենյակի մենեջերի, կոմերցիոն տնօրենի հաստիքներին ներկայացվող պահանջներին: Ուստի, սույն գործի նոր քննության ընթացքում հստակ ապացույցների վկայակոչմամբ չի հիմնավորվել, թե որ ապացույցի հիման վրա է Արամ Կարապետյանը համարվում նոր հաստիքների չափանիշներին համապատասխանող: Ավելին՝ Վերաքննիչ դատարանն ընդամենը նշել է, որ Ընկերության նոր վարչակազմակերպչական կառուցվածի, հաստատված հաստիքացուցակի և նոր հաստիքների վերաբերյալ պաշտոնական հրահանգների ուսումնասիրությունից հետևում է, որ Ընկերությունում առկա էին առնվազն այդ թափուր հաստիքները, որոնք կարող էին առաջարկվել հայցվորին, սակայն չեն առաջարկվել:

Անդրադառնալով նաև հաստիքների կրճատման հետևանքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում Արամ Կարապետյանին առնվազն երկու ամիս առաջ ծանուցելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ընկերությունը 29.11.2013 թվականին ընդունել է թիվ 3681-Կ հրամանն առ այն, որ Ընկերությունում աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և հաստիքների կրճատման պատճառով 11.03.2014 թվականից լուծվելու է Արամ Կարապետյանի և Ընկերության միջև կնքված թիվ 4933/1 աշխատանքային պայմանագիրը: Նշված հրամանի և աշխատանքային պայմանագրի լուծման մասին Արամ Կարապետյանը տեղեկացվել է նույն օրով՝ 29.11.2013 թվականով թվագրվող թիվ Ե-11-1038 ծանուցմամբ, որն Արամ Կարապետյանը ստացել է 18.12.2013 թվականին: Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Պյատախինի՝ «Անհատական իրավական ակտում փոփոխություններ կատարելու մասին» 17.02.2014 թվականի թիվ 670-Կ, 29.04.2014 թվականի թիվ 1449-Կ և 21.05.2014 թվականի թիվ 2104-Կ հրամաններով Արամ Կարապետյանի հետ աշխատանքային պայմանագրի լուծման ամսաթիվը՝ 11.03.2014

թվականը, փոխարինվել է, համապատասխանաբար, 29.04.2014 թվականով, անաշխատունակության ժամանակահատվածի և դրան հաջորդող հերթական արձակուրդի վերջին օրվան հաջորդող օրով, այնուհետև՝ 04.07.2014 թվականի անսաթվով:

Արամ Կարապետյանը 26.11.2013 թվականից մինչև 03.02.2014 թվականը, 04.03.2014 թվականից մինչև 21.04.2014 թվականը, այնուհետև 22.04.2014 թվականից մինչև 08.05.2014 թվականը գտնվել է ժամանակավոր անաշխատունակության մեջ, որպիսի ժամանակահատվածը, հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները, չի հաշվարկվում աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցելու ժամկետում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստորեն 26.11.2013 թվականից մինչև 08.05.2014 թվականն Արամ Կարապետյանը գտնվել է ժամանակավոր անաշխատունակության մեջ, բացառությամբ 03.02.2014 թվականից մինչև 04.03.2014 թվականն ընկած ժամանակահատվածի, քանի որ Արամ Կարապետյանի՝ այդ ժամանակահատվածում ժամանակավոր անաշխատունակ լինելու վերաբերյալ ապացույց սույն գործով առկա չէ: Արդյունքում, Արամ Կարապետյանի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի միջակայքում առկա է եղել մի ժամանակահատված՝ 03.02.2014 թվականից մինչև 04.03.2014 թվականը, որը մտնում է աշխատողին աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցելու ժամկետի հաշվարկի մեջ:

Այնուհետև, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արամ Կարապետյանի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի ավարտից՝ 08.05.2014 թվականից հետո մինչև վերջինիս հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու օրը՝ 04.07.2014 թվականը, շարունակել է հոսել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Արամ Կարապետյանին ծանուցելու ժամկետը: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից պահպանվել է աշխատողին առնվազն 2 ամիս առաջ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցելու պահանջը, և աշխատանքային պայմանագրի լուծման մասին հրամանում նշված, այնուհետև փոփոխված օրը հենց լուծվել է պայմանագիրը: Ավելին՝ 29.11.2013 թվականին՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու և նույն թվականով թվագրվող ծանուցման օրվանից հետո մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելու փոփոխված ամսաթիվը՝ 04.07.2014 թվականը, ընդհանուր հաշվով հոսել է 29 օրացուցային օր՝ 03.02.2014 թվականից մինչև 04.03.2014 թվականը, և 57 օրացուցային օր՝ 08.05.2014 թվականից մինչև 04.07.2014 թվականը, որպիսի հաշվարկների արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերության կողմից ոչ միայն պահպանվել է Արամ Կարապետյանին առնվազն երկու ամիս առաջ աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցելու պահանջը, այլև հոսել է ծանուցման ավելի երկար ժամկետ, որն ավարտվելուն պես՝ 04.07.2014 թվականին, Ընկերության թիվ 3681-Կ հրամանով լուծվել է Արամ Կարապետյանի հետ կնքված պայմանագիրը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ օրենսդրի կողմից սահմանված՝ աշխատողին պայմանագրի լուծման վերաբերյալ առնվազն երկու ամիս առաջ ծանուցելու ժամկետը պահպանվել է, իսկ վերջինիս ժամանակավոր անաշխատունակության պատճառով պայմանագրի լուծման ամսաթիվը տեղափոխվել և նշվել է 04.07.2014 թվականը, հետևաբար Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին առնվազն երկու ամիս առաջ ծանուցելու հարցի վերաբերյալ հիմնավոր չեն և չեն բխում սույն գործի փաստերից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, եկել է սխալ եզրահանգման, հետևաբար Արամ Կարապետյանի պահանջը՝ անվավեր ճանաչել Ընկերության 29.11.2013 թվականի թիվ 3681-Կ հրամանը, Ընկերությունից բռնագանձել գումար՝ պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 04.07.2014 թվականից մինչև դատարանի վճիռ օրինական ուժի մեջ մտնելը, հայցվորին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով, ինչպես նաև ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու դիմաց տուժանք 60 օրվա համար՝ հիմք ընդունելով

հայցվորի միջին աշխատավարձը, անհիմն է և ենթակա էր մերժման սույն որոշմամբ նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործով հայցվորը՝ Արամ Կարապետյանը, վերոնշյալ իրավանորմի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ պատասխանող Ընկերության ներկայացուցչի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով նաև այն, որ օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ ընդհանուր իրավասության դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.07.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Արամ Կարապետյանի հայցն ընդդեմ «ՎեոնԱրմենիա» ՓԲԸ-ի (իրավանախորդ՝ «ԱրմենՏել» ՓԲԸ)՝ անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, Ընկերությունից հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գումար բռնագանձելու, Ընկերությունից աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցման գումարը բռնագանձելու և ծանուցման երկամսյա ժամկետը չպահպանելու համար տուժանքի գումարը բռնագանձելու պահանջների մասին, մերժել:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0521/02/15
դատարանի որոշում 2020թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0521/02/15
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ա. Սմբատյան
Ա. Խառատյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան), հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 09-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այ-
սուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Դավիթ Սրապիտյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 18.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Ռադիկ Սարոլիսանյանի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մա-
սին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ռադիկ Սարոլիսանյանը պահանջել է Ընկերությունից բռնա-
գանձել 34.030.980 ՀՀ դրամ, որից 6.347.225 ՀՀ դրամը՝ որպես պակաս վճարված աշխա-
տավարձի գումար, 1.746.920 ՀՀ դրամը՝ որպես արձակուրդի դրամական հատուցման գու-
մար, 17.346.988 ՀՀ դրամը՝ որպես աշխատավարձի տուժանքի գումար, 495.702 ՀՀ դրամը՝
որպես աշխատավարձի և վերջնահաշվարկի տուժանքի գումար, 8.094.145 ՀՀ դրամը՝ որ-
պես պակաս վճարված աշխատավարձի և չվճարված դրամական հատուցման տուժանքի
գումար:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) 16.09.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան, դատավորներ՝ Ա. Պետրոսյան, Կ. Զիլինգարյան) 03.03.2016 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.09.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.05.2016 թվականի որոշմամբ Ռադիկ Սարուխանյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.10.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ Ընկերությունից հօգուտ Ռադիկ Սարուխանյանի բռնագանձվել է 34.058.755 ՀՀ դրամ, որից 6.347.213 ՀՀ դրամը՝ որպես պակաս վճարված աշխատավարձի գումար, 1.741.814 ՀՀ դրամը՝ որպես արձակուրդի դրամական հատուցման գումար, 17.371.604 ՀՀ դրամը՝ որպես աշխատավարձի տուժանքի գումար, 506.655 ՀՀ դրամը՝ որպես աշխատավարձի վերջնահաշվարկի տուժանքի գումար, 8.091.547 ՀՀ դրամը՝ որպես պակաս վճարված աշխատավարձի և չվճարված դրամական հատուցման տուժանքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.04.2018 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.10.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռադիկ Սարուխանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասը, 198-րդ հոդվածի 1-ին մասը և 265-րդ հոդվածի 1-ին մասը, «Դատարանն ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ միջին աշխատավարձի հաշվարկման համար նախատեսվող տասներկու ամիսներն ընդգրկում են 2012 թվականի հուլիսից 2011 թվականի հուլիս ամիսները: Այդ ընթացքում հայցվորը չի ունեցել փաստացի հաշվարկված աշխատավարձ, ուստի նրա աշխատավարձի չափ պետք է դիտարկվի վերջինիս անսակն աշխատավարձի չափը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ թիվ ԵԿԴ/1883/02/08 և թիվ ԵԿԴ/2171/02/10 քաղաքացիական գործերով կայացված վճիռները մտել են օրինական ուժի մեջ և կատարվել են: Ընկերությունը հայցվորի նկատմամբ փաստացի կատարել է իր պարտականությունները, իսկ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հարուցված կատարողական վարույթն այդ հիմքով կարճվել է, ուստի Ընկերությունը հայցվորի նկատմամբ չկատարված պարտավորություն չունի: Վերաքննիչ դատարանն ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով ներկայացված պահանջի հասցեատերը կարող էր հանդիսանալ միայն Ծառայությունը՝ հաշվի առնելով այն, որ վերջինս է արձանագրել թիվ ԵԿԴ/1883/02/08 և թիվ ԵԿԴ/2171/02/10 գործերով կայացված վճիռների փաստացի կատարված լինելու հանգամանքը: Ուստի, եթե հայցվորը գտնում էր, որ նշված հաշվարկները սխալ էին կատարվել, ապա վերջինս կարող էր դիմել ՀՀ վարչական դատարան և վիճարկել Ծառայության որոշումները կամ գործողությունները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ չաշխատելու պայմաններում հայցվորը չէր կարող ունենալ չօգտագործված արձակուրդ, և դա չվճարելու համար չի կարող հաշվեգրվել տույժ: Այսինքն՝ ստացվում է, որ միևնույն ամիսների համար Ընկերությունը պետք է հայցվորին վճարի և՛ ենթադրյալ չվճարված միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի համար, և՛ չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց հատուցում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ չվճարված աշխատավարձի վրա տույժ հաշվարկելու համար պարտադիր պայման է գործատուի մեղքը, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Օրենքի միատեսակ կիրառության տեսանկյունից անհրաժեշտություն է առաջացել մեկնաբանել, թե ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքը ենթակա է արդյոք հաշվեգրման ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված հարկադիր պարապուրդի գումարների նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 18.04.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճարել բողոքի պարասիանի հիմնավորումները

Վճարել բողոքն անհիմն է, քանի որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, իրականացնելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, արձանագրել է, որ թիվ ԵԿԴ/1883/02/08 և թիվ ԵԿԴ/2171/02/10 քաղաքացիական գործերով հայցերի առարկաները չեն նույնանում, իսկ աշխատավարձի չափ չի կարող դիտարկվել հայցվորի ամսական աշխատավարձի չափը: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ հայցը ենթակա էր բավարարման, քանի որ հայցվորի աշխատավարձը պակաս է հաշվարկվել և վճարվել է ուշացումով:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Ռադիկ Սարոլիսայանի միջև 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Ռադիկ Սարոլիսայանն Ընկերությունում ընդունվել է աշխատանքի՝ որպես «Հյուսիս» մասնաճյուղի տնօրենի առաջին տեղակալ (**հատոր 1-ին, գ.թ. 122-123**):

2) Ընկերության գլխավոր տնօրենի 12.03.2008 թվականի թիվ 40-Կ հրամանի համաձայն՝ 15.05.2008 թվականից Ռադիկ Սարոլիսայանի հետ 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը լուծվել է:

Թիվ ԵԿԴ/1883/02/08 գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.10.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ռադիկ Սարոլիսայանը վերականգնվել է 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքում, ինչպես նաև Ընկերությունից հոգուտ Ռադիկ Սարոլիսայանի բռնագանձվել է վերջինիս միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 15.05.2008 թվականից մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը (**հատոր 1-ին, գ.թ. 7-16**):

3) Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալի 10.12.2012 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշման համաձայն՝ թիվ ԵԿԴ/1883/02/08 քաղաքացիական գործով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը կարճվել է՝ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 33**):

4) Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 08.01.2009 թվականի թիվ Ա-1-Կ հրամանի համաձայն՝ Ռադիկ Սարոլիսայանի հետ 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը լուծվել է:

Թիվ ԵԿԴ/2171/02/10 գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել Ընկերության 08.01.2009 թվականի թիվ Ա-1-Կ հրամանը և կողմերի միջև 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը համարվել է կնքված անորոշ ժամկետով, ինչպես նաև Ընկերությանը պարտավորեցվել է փոխհատուցել Ռադիկ Սարոյանյանին պատճառված վնասը, այն է՝ Ընկերությունից հօգուտ Ռադիկ Սարոյանյանի բռնագանձվել է վերջինիս միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 01.01.2009 թվականից մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 06.09.2012 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 17-28**):

5) Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալ Հ. Գասպարյանի 05.12.2012 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշման համաձայն՝ թիվ ԵԿԴ/2171/02/10 քաղաքացիական գործով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը կարճվել է՝ կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 125**):

6) Ընկերության գլխավոր տնօրենի 21.11.2012 թվականի թիվ 4-71-Ա հրամանով Ռադիկ Սարոյանյանը վերականգնվել է նախկին աշխատանքում (**հատոր 1-ին, գ.թ. 135**):

7) Ընկերության և Ռադիկ Սարոյանյանի միջև 22.11.2012 թվականին կնքվել է 2006 թվականի հունիսի 1-ի աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու մասին համաձայնագիր, որով 2013 թվականի հունվարի 13-ից նշված պայմանագիրը լուծվել է (**հատոր 1-ին, գ.թ. 80**):

8) Դատահաշվապահական փորձագետի 03.05.2017 թվականի թիվ 01-17 եզրակացության «Հետազոտություն» բաժնի համաձայն՝ փորձաքննությունը կատարվել է «փորձաքննությանը ներկայացված թիվ ԵԿԴ/0521/02/15 քաղաքացիական գործի և տրամադրված թղթապանակում արտացոլված տվյալների» հիման վրա, համաձայն որոնց 15.09.2012 թվականից հետո հաշվարկված աշխատավարձի և վերջնահաշվարկի վճարումը կատարվել է 22.03.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 70-86**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի, սույն օրենսգրքի 198-րդ հոդվածի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Միաժամանակ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի, 198-րդ և 265-րդ հոդվածների 1-ին մասերի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

1) *կարող է արդյոք աշխատողն իր հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի և փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի առկայության պայմաններում պահանջել միևնույն ժամանակահատվածի հարկադիր պարապուրդի գումարի վերահաշվարկի արդյունքում արացված այլ գումարի բռնագանձում:*

2) կարող է արդյոք աշխարհաբնից անօրինակա՞ն կերպով ազարված և դատարանի վճռով իր նախկին աշխատանքում վերականգնված աշխատողը պահանջել հարկադիր պարասպորտում գրնվելու ժամանակահատվածի համար ամենամյա արձակուրդի գումարը,

3) կարող է արդյոք աշխարհաբնից անօրինակա՞ն կերպով ազարված և դատարանի վճռով իր նախկին աշխատանքում վերականգնված աշխատողը պահանջել հարկադիր պարասպորտի գումարի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված րուժանքի գումարը, ինչպես նաև բուժազանձված գումարի վերահաշվարկի արդյունքում սրացված րարբերության գումարի և հարկադիր պարասպորտում գրնվելու ժամանակահատվածի համար ամենամյա արձակուրդի գումարի նկատմամբ նույն հոդվածով նախատեսված րուժանքի գումար՝ հարկադիր պարասպորտի գումարը բուժազանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի և դրա փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի ստկյություն պայմաններում:

1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարասպորտի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված դեպքերում աշխատողներին երաշխավորվում է միջին աշխատավարձ: Սույն օրենսգրքով նախատեսված միջին աշխատավարձի չափը որոշելու բոլոր դեպքերի համար սահմանվում է հաշվարկման միասնական կարգ: Միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելվածարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն), որոնք կիրառվում են տվյալ կազմակերպությունում՝ անկախ վճարման աղբյուրից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատողի միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է այդպիսի պահանջ առաջանալու ամսվան նախորդող վերջին տասներկու ամիսների ընթացքում տվյալ գործատուի կողմից աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրության բոլոր տեսակների (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելվածարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն) ընդհանուր գումարը տասներկուսի բաժանելու միջոցով: Հաշվառման ենթակա տասներկու ամիսներում չպետք է ներառվեն այն ամիսները, որոնց ընթացքում աշխատողը եղել է ժամանակավոր անաշխատունակության մեջ և (կամ) արձակուրդում և (կամ) ոչ իր մեղքով պարասպորտում (...):

Հիմք ընդունելով վերը վկայակոչված նորմերը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այն դեպքում, երբ գործատուն լուծում է աշխատանքային պայմանագիրն առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ, և հետագայում աշխատողը դատարանի վճռով վերականգնվում է աշխատանքում, օրենսդիրն աշխատողին հնարավորություն է տվել ստանալու դրա հետևանքով առաջացած հարկադիր պարասպորտի ողջ ժամանակահատվածի համար հաշվարկված միջին աշխատավարձի չափով հատուցում: Ընդ որում, սահմանելով միջին աշխատավարձի հաշվարկման միասնական կարգ՝ օրենսդիրը որպես հաշվարկի հիմք դիտարկել է պարասպորտի

գումարները վճարելու պահանջն առաջանալու ամսվան նախորդող վերջին տասներկու ամիսների ընթացքում տվյալ գործատուի կողմից աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրության բոլոր տեսակների հանրագումարը: Ուստի, վարձատրության նշված տեսակների ամբողջության հիման վրա գործատուն հաշվարկում է միջին աշխատավարձ և այն հիմք ընդունելով՝ աշխատողին վճարում ամբողջ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա գտնվել է հարկադիր պարապորդում:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավակիրառ պրակտիկայում հարկադիր պարապորդի համար վճարման ենթակա միջին աշխատավարձի հատուցման կապակցությամբ առաջացող վեճերը հիմնականում լուծում են ստանում դատական կարգով: Ընդ որում, դատական կարգով այդ վեճերի քննության և լուծման արդյունքում կայացված դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաճախ կատարվում են հարկադիր կերպով՝ Ծառայության միջոցով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարողի՝ իր իրավասության սահմաններում կայացրած որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ Եվրոպական դատարան) HORNSBY v. GREECE գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում

պահանջելու իրավունքն անսահման է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության» որպես դատավարական գործընթացի փուլ:

Նախկինում կայացված իր որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելիություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշն անմիջականորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի իրավակարգավորումից և ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում (*դեմս Ամսելա և Նունե Հարությունյաններն ընդդեմ Բեգլար Մկրտումյանի թիվ ԵՄԴԿ/0913/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան (տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Մուշ Իսպիրյանի թիվ ՎԴԿ/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց (տե՛ս Լյուրով Փիլոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և այլոց թիվ ՎԴԿ/2085/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վերոհիշյալ նորմերի և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. եթե աշխատողն անօրինական կերպով աշխատանքից ազատվելու վերաբերյալ վեճի դեպքում որոշակի ժամանակահատվածի համար պահանջել է հարկադիր պարապորդի ամբողջ գումարը՝ առանց կոնկրետ հաշվարկներ ներկայացնելու, դատարանը նույն կարգով վճիռ է կայացրել և այն մտել է օրինական ուժի մեջ, ապա ստացվում է, որ վճարման ենթակա հարկադիր պարապորդի ամբողջ գումարի

վերաբերյալ արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ, իսկ վճարման ենթակա հարկադիր պարապուրդի գումարի հաշվարկը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման վարույթում: Այդ դեպքում հաշվարկը կատարելիս հաշվի են առնվում ինչպես կատարողական վարույթում ձեռք բերված ապացույցները, այնպես էլ վարույթի կողմերի դիրքորոշումները, իսկ հաշվարկը վերջին հաշվով կատարվում է պատասխանատու պաշտոնատար անձի՝ հարկադիր կատարողի կողմից: Եթե վերջինս վճռի կատարման արդյունքում հանգում է այն եզրակացության, որ դատական ակտի պահանջն ամբողջությամբ կատարվել է, և նշված հիմքով կատարողական վարույթը կարճում է, իսկ կատարողական վարույթի կողմն էլ չի վիճարկում նշված որոշումը, ապա այն դառնում է պարտադիր կատարման ենթակա վարչական ակտ իրավահարաբերության բոլոր մասնակիցների համար: Այլ կերպ՝ սկսում է գործել վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը և դրանից հետո ոչ ոք, այդ թվում նաև կատարողական վարույթի մասնակիցները, իրավունք չունեն կասկածի տակ դնել այդ վարույթում հարկադիր կատարողի կատարած հաշվարկները: Հակառակ պարագայում օրինական ուժի մեջ մտած միևնույն դատական ակտը կարող է տարբեր հաշվարկների հիմքով կատարվել մեկից ավելի անգամ, ինչը կհանդիսանա իրավական որոշակիության սկզբունքի խախտում, ինչպես նաև կհանգեցնի վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի խաթարման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատողը նոր հաշվարկներ կատարելով չի կարող պահանջել միևնույն ժամանակահատվածի համար հարկադիր պարապուրդի այլ գումար, եթե այդ գումարը մեկ անգամ արդեն իսկ վճռվել է բռնագանձել գործատուից օրինական ուժի մեջ մտած վճռով, և բռնագանձվել է կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով կարճված կատարողական վարույթով: Հարկադիր պարապուրդի գումարների հաշվարկի հետ կապված իր անհամաձայնությունն աշխատողը կարող է հայտնել վճիռը բողոքարկելով, եթե վճարման ենթակա գումարները հաշվարկվել են վճռով, իսկ կատարողական վարույթի կարճման դեպքում՝ հարկադիր կատարողի որոշումը՝ վարչական ակտը, բողոքարկելով, եթե վճարման ենթակա գումարները հաշվարկվել են կատարողական վարույթի ընթացքում: Եթե նշված գործողությունները չեն կատարվել կամ կատարվելու պարագայում այլ արդյունքի չեն հանգեցրել, ապա դա նշանակում է, որ բռնագանձման ենթակա հարկադիր պարապուրդի գումարը ճիշտ է հաշվարկվել: Ուստիև աշխատողն իրավասու չէ արդեն իսկ կատարված դատական ակտի առկայության պայմաններում բարձրացնել միևնույն ժամանակահատվածի համար հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման հարց՝ այս անգամ պահանջի հիմքում դնելով իր կատարած նոր հաշվարկները՝ արդյունքում պահանջելով հարկադիր պարապուրդի գումարի՝ իր կարծիքով պակաս վճարված գումարը:

2) Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ամենամյա արձակուրդն օրացուցային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ վարձու աշխատանքային գործունեության մեջ ներգրավված յուրաքանչյուր աշխատող ունի ամենամյա արձակուրդի իրավունք՝ անկախ աշխատատեղից, գործատուի սեփականության ձևից, կազմակերպչի իրավական տեսակից, աշխատանքային գործառույթներից և աշխատանքային պայմանագրի տևողությունից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս:

Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատողի արձակուրդի իրավունքը նախատեսված է հանգստի և ուժերի լիակատար վերականգնման համար: Այսինքն՝ աշխատանք կատարելիս առողջական նորմալ վիճակի պահպանման և աշխատունակության վերականգնման համար աշխատողին ամեն տարի անհրաժեշտ է որոշակի ժամկետով շարունակվող անընդմեջ հանգիստ: Հենց այդ նպատակով է աշխատանքային օրենսդրությամբ սահմանվել ամենամյա արձակուրդի իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե աշխատողն աշխատանքից ազատվելու պատճառով շարունակաբար հարկադիր պարապուրդում գտնվելու պատճառով փաստացի աշխատանք չի կատարել գործատուի համար, ապա չի առաջանում նաև աշխատունակության վերականգնման խնդիր, այսինքն՝ անհրաժեշտություն՝ աշխատողին տրամադրելու շարունակական անընդմեջ հանգիստ, որպեսզի նա այնուհետև կարողանա արդյունավետ կատարել իր աշխատանքը: Նշված եզրահանգումը հիմնված է այն իրողության վրա, որ աշխատողը հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակահատվածում փաստացի չի աշխատում:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում որպես առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատողին աշխատանքից ազատելու հետևանք գործատուի համար նախատեսել է միայն հարկադիր պարապուրդի վճարումը: Փաստորեն, նման դեպքերի համար օրենսդիրը սահմանել է, որ աշխատողը կարող է պահանջել հարկադիր պարապուրդի գումարը՝ միջին աշխատավարձի չափով: Օրենսդիրը չի նախատեսել աշխատողի իրավունքը՝ պահանջելու հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում իրեն հասանելիք արձակուրդի գումարը՝ նկատի ունենալով այն, որ հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատողը փաստացի աշխատանք չի կատարում, իսկ սովորական պայմաններում տրամադրման ենթակա արձակուրդի ժամանակահատվածն ընդգրկված է հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում, այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկադիր պարապուրդի գումարը վճռով բռնագանձելիս, ըստ էության, միջին աշխատավարձի չափով գումար է բռնագանձվում նաև սովորական պայմաններում տրամադրման ենթակա արձակուրդի ժամանակահատվածի համար: Նման պայմաններում աշխատողն այլևս իրավունք չունի պահանջելու հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում ընդգրկված պարապուրդի ժամանակահատվածի համար առանձին փոխհատուցում, քանի որ դա կհանգեցնի աշխատանք կատարած չլինելու պայմաններում արձակուրդի ժամանակահատվածի համար կրկնակի փոխհատուցման, ինչը չի կարող իրավաչափ համարվել:

3) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 24.06.2010 թվականը գործած խմբագրության համաձայն՝ եթե գործատուի մեղքով աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ կատարվում են սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն աշխատողին օրենքով սահմանված չափերով և կարգով վճարում է տուժանք:

24.06.2010 թվականին ընդունված և 07.08.2010 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-117-Ն ՀՀ օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ սահմանելով հետևյալը. *եթե գործարարի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվում է նույն օրենսգրքով, կրկնկրիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտումով, ապա գործարարն աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար*

աշխատողին վճարում է փոժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 փոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրոյթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Տվյալ դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը մեկնաբանելով վերոհիշյալ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանման կանոններին համապատասխան, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը: Նախ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածն ընդգրկված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի «Աշխատավարձ» վերտառությամբ 19-րդ գլխում, որով կարգավորվում են աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցման աշխատավարձի սահմանումը, աշխատանքի վարձատրության կազմակերպումը տարբեր պայմաններում, աշխատավարձի վճարման ժամկետները և կարգը, աշխատավարձի ժամկետանց վճարման հետևանքները և այլն, այսինքն՝ նշված գլխի նորմերը կարգավորում են կատարված աշխատանքի դիմաց աշխատողին վարձատրելու իրավահարաբերությունները: Բացառություն են կազմում միայն նշված գլխում ընդգրկված 186-րդ հոդվածով սահմանված նորմերը, որոնցով կարգավորվում են պարապտրոդի ժամանակ աշխատողի վճարման հարցերը, սակայն այդ նորմերի ուսումնասիրությունը ևս հանգեցնում է այն հետևության, որ նշված կարգավորումները վերաբերում են այնպիսի իրավիճակների, որոնք բնականորեն աշխատանքային հարաբերությունների առկայության պայմաններում կրում են ժամանակավոր բնույթ: Ընդ որում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի նշված նորմերով սահմանված են որոշակի կանոններ, թե ինչպես պետք է գործատուն կատարի վճարում կամ կատարված աշխատանքի դիմաց, կամ թեկուզև չկատարված, սակայն այնպիսի աշխատանքի դիմաց, որն աշխատողը պատրաստ է եղել կատարել գործատուի կողմից համապատասխան պայմանների ապահովման դեպքում (ոչ աշխատողի մեղքով պարապտրոդի ժամանակ): Նշված բոլոր իրավակարգավորումների համար էական է այն ելակետային հանգամանքը, որ գործատուն հաստատապես գիտի, որ որոշակի պայմաններում, անկախ աշխատանքը կատարվելու հանգամանքից, պարտավոր է ապահովել աշխատանքի վարձատրությունն օրենքով սահմանված որոշակի կարգով և չափով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված նորմը նպատակաուղղված է տուժանքով ապահովելու գործատուի կողմից աշխատավարձը ժամանակին վճարելու պարտականության կատարումը, այսինքն՝ եթե գործատուն այդ պարտականությունը չի կատարում, նրա համար ակնհայտ է, որ խախտում է աշխատանքի դիմաց վարձատրելու օրենքով սահմանված իր նվազագույն պարտականությունները, այն է՝ ակնհայտ առկա է լինում գործատուի մեղքը: Մինչդեռ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային վեճ ծագելիս հարկադիր պարապտրոդի առաջացման հարցում գործատուի մեղքն ակնհայտ չէ, իսկ աշխատանքային վեճի լուծումն էլ պայմանավորված չէ գործատուի համար կանխատեսելի ժամկետներով: Նման պայմաններում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված հարկադիր պարապտրոդի գումարի նկատմամբ նույն չափերով տուժանքների կիրառումը, ինչ չափով որ կիրառման է ենթակա գործատուի կողմից օրենքով հստակ սահմանված և իրեն նախապես հայտնի իր պարտականությունը չկատարելու համար, չի կարող իրավաչափ համարվել: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հենց այդ հանգամանքի հաշվառմամբ է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասին աշխատանքային վեճն աշխատողի օգտին լուծվելու դեպքում գործատուի համար սահմանել է միայն հարկադիր պարապտրոդի գումար վճարելու պարտականություն և որևէ այլ տուժանք վճարելու պարտականություն չի նախատեսել: Այսպիսով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված

տուժանքը նույն օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված հարկադիր պարապուրդի գումարի նկատմամբ կիրառելի չէ, այդ գումարի նկատմամբ, համապատասխան պայմանների առկայության դեպքում, մասնավորապես՝ գործատուին վճարման իր պարտականությունը հաստատապես հայտնի լինելու և չկատարվելու դեպքում, կարող են հաշվարկվել դրամական պարտավորությունը չկատարելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին նշել, որ աշխատողը, նոր հաշվարկներ կատարելով, չի կարող պահանջել մինևնույն ժամանակահատվածի համար հարկադիր պարապուրդի այլ գումար, եթե այդ գումարը մեկ անգամ արդեն իսկ վճռվել է բռնագանձել գործատուից օրինական ուժի մեջ մտած վճռով, և բռնագանձվել է կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով կարճված կատարողական վարույթով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե նման պայմաններում աշխատողը դիմում է դատարան՝ պահանջելով նաև կատարողական վարույթի ընթացքում իր կարծիքով իրեն պակաս վճարված գումարի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով հաշվարկվող տուժանքը, ապա այդ պահանջը ենթակա է մերժման: Այս եզրահանգումը պայմանավորված է այն իրողությամբ, որ կատարողական վարույթը կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով կարճվելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալու և հետևաբար դատական ակտը պատշաճ կատարված լինելու պայմաններում գործում է այն կանխավարկածը, որ գործատուի կողմից վճարման ենթակա հարկադիր պարապուրդի գումարի հաշվարկը, ինչպես նաև վճարումը կատարվել են ճշգրիտ, որպիսի հանգամանքը բացառում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված տուժանքի առաջացումը:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ նկարագրված իրավիճակում, վերը շարադրված իրավական դիրքորոշումների համաձայն, հատուցման ենթակա չեն թե՛ հարկադիր պարապուրդի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա արդեն իսկ բռնագանձված գումարի վերահաշվարկի արդյունքում ստացված տարբերությունը, թե՛ հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակահատվածում ընդգրկված արձակուրդի հատուցման գումարը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ գումարների նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքի գումար հաշվարկվել և բռնագանձվել չի կարող:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ կողմերի միջև 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագրով Ռադիկ Սարուխանյանն Ընկերությունում ընդունվել է աշխատանքի՝ որպես «Հյուսիս» մասնաճյուղի տնօրենի առաջին տեղակալ:

Ընկերության գլխավոր տնօրենի 12.03.2008 թվականի թիվ 40-Կ հրամանի համաձայն՝ 15.05.2008 թվականից Ռադիկ Սարուխանյանի հետ 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը լուծվել է:

Թիվ ԵԿԴ/1883/02/08 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.10.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ռադիկ Սարուխանյանը վերականգնվել է 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքում, ինչպես նաև Ընկերությունից հոգուտ Ռադիկ Սարուխանյանի բռնագանձվել է վերջինիս միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 15.05.2008 թվականից մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալի 10.12.2012 թվականի «Կատարողական վարույթը կարճվելու մասին» որոշման համաձայն՝ թիվ ԵԿԴ/1883/02/08 քաղաքացիական գործով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով կարճվել է:

Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 08.01.2009 թվականի թիվ Ա-1-Կ հրամանի համաձայն՝ Ռադիկ Սարոխանյանի հետ 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը լուծվել է:

Թիվ ԵԿԴ/2171/02/10 գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել Ընկերության 08.01.2009 թվականի թիվ Ա-1-Կ հրամանը և կողմերի միջև 01.06.2006 թվականին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը համարվել է կնքված անորոշ ժամկետով, ինչպես նաև Ընկերությանը պարտավորեցվել է փոխհատուցել Ռադիկ Սարոխանյանին պատճառված վնասը, այն է՝ Ընկերությունից հօգուտ Ռադիկ Սարոխանյանի բռնագանձվել է վերջինիս միջին աշխատավարձը հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 01.01.2009 թվականից մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 06.09.2012 թվականին:

Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալ Հ. Գասպարյանի 05.12.2012 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշման համաձայն՝ թիվ ԵԿԴ/2171/02/10 քաղաքացիական գործով տրված կատարողական թերթերի հիման վրա հարուցված կատարողական վարույթը կարճվել է՝ կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով:

Ընկերության գլխավոր տնօրենի 21.11.2012 թվականի թիվ 4-71-Ա հրամանով Ռադիկ Սարոխանյանը վերականգնվել է նախկին աշխատանքում:

Ընկերության և Ռադիկ Սարոխանյանի միջև 22.11.2012 թվականին կնքվել է 2006 թվականի հունիսի 1-ի աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու մասին համաձայնագիր, որով 2013 թվականի հունվարի 13-ից նշված պայմանագիրը լուծվել է:

Դատահաշվապահական փորձագետի 03.05.2017 թվականի թիվ 01-17 եզրակացության «Հետազոտություն» բաժնի համաձայն՝ փորձաքննությունը կատարվել է «փորձաքննությանը ներկայացված թիվ ԵԿԴ/0521/02/15 քաղաքացիական գործի և տրամադրված թղթապանակում արտացոլված տվյալների» հիման վրա, համաձայն որոնց 15.09.2012 թվականից հետո հաշվարկված աշխատավարձի և վերջնահաշվարկի վճարումը կատարվել է 22.03.2013 թվականին:

Սույն գործով դիմելով դատարան՝ Ռադիկ Սարոխանյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 34.030.980 ՀՀ դրամ, որից 6.347.225 ՀՀ դրամը՝ որպես պակաս վճարված աշխատավարձի գումար, 1.746.920 ՀՀ դրամը՝ որպես արձակուրդի դրամական հատուցման գումար, 17.346.988 ՀՀ դրամը՝ որպես վճարված աշխատավարձի տուժանքի գումար, 495.702 ՀՀ դրամը՝ որպես վճարված աշխատավարձի և վերջնահաշվարկի տուժանքի գումար, 8.094.145 ՀՀ դրամը՝ որպես պակաս վճարված աշխատավարձի և չվճարված դրամական հատուցման տուժանքի գումար:

Դատարանն ամբողջությամբ բավարարելով հայցվորի պահանջը, պատճառաբանել է, որ թիվ ԵԿԴ/1883/02/08 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.10.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հայցվորը ոչ միայն պետք է վերականգնվեր իր նախկին աշխատանքում՝ պայմանագրով նախատեսված պայմաններով, այլ նաև դրանով հաստատվել է, որ հայցվորի հարկադիր պարապորդը սկսվել է 15.05.2008 թվականից և ավարտվել է 21.11.2012 թվականին: Անդրադառնալով հայցվորի կատարած հաշվարկներին՝ Դատարանը գտել է, որ դրանք ճիշտ են կատարվել, քանի որ նախկինում կայացված վճիռներով հիմնավորվել է վճարման ենթակա գումարի չափը, որն ավելին է, քան տուժանքի գումարը, որպիսի պայմաններում հայցվորի բոլոր պահանջները հիմնավոր են:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և Դատարանի 20.10.2017 թվականի վճիռը թողել է օրինական ուժի մեջ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցվորի կողմից կատարված հաշվարկները ճիշտ են, քանի որ Ծառայության կողմից 01.01.2009 թվականից մինչև 21.11.2012 թվականն Ընկերությունից

բռնագանձվել է 25.095.409 ՀՀ դրամ, իսկ այդ գումարի բռնագանձման հիմք է հանդիսացել բացառապես գործատուի կողմից Ռադիկ Սարուխանյանի միջին աշխատավարձի հաշվարկը 511.140 ՀՀ դրամով կատարված լինելը: Վերաքննիչ դատարանն, անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ օրինական ուժի մեջ մտած վճիռներով Դատարանի կողմից արդեն իսկ քննվել և բավարարվել են հայցվորի պահանջները, գտել է, որ սույն քաղաքացիական գործով հայցվորը պահանջել է վերը նշված աշխատավարձերի չափերի տարբերությունը, ինչը երբևէ չի քննարկվել, իսկ նման պայմաններում կրկնակի բռնագանձման մասին խոսք լինել չի կարող:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառարանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ թիվ ԵԿԴ/1883/02/08 և թե՛ թիվ ԵԿԴ/2171/02/10 քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած վճիռներով Ընկերությունից հոգուտ Ռադիկ Սարուխանյանի բռնագանձվել է վերջինիս միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ առաջին դեպքում՝ 15.05.2008 թվականից սկսած մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ երկրորդ դեպքում՝ 01.01.2009 թվականից սկսած մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ընդ որում, նշված վճիռներով հարկադիր պարապուրդի ընդհանուր գումարի հաշվարկման համար անհրաժեշտ միջին աշխատավարձի չափի հաշվարկներ չեն կատարվել և կոնկրետ չափի գումարներ չեն բռնագանձվել, ինչից հետևում է, որ վճիռները կամովին չկատարելու պարագայում բռնագանձման ենթակա գումարի հաշվարկները պետք է կատարվեին վճիռների հարկադիր կատարման ընթացքում: Սույն գործի փաստերի համաձայն՝ նշված վճիռները կատարվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ինչի վերաբերյալ գործում առկա են Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալի 05.10.2012 թվականի և 10.12.2012 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշումները: Դրանց բովանդակությունից հետևում է, որ վճիռներով որոշված բռնագանձման ենթակա բոլոր գումարները բռնագանձվել են, քանի որ կատարողական վարույթները կարճվել են՝ կատարողական թերթի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով:

Այսպիսով, հարկադիր պարապուրդի համար Ռադիկ Սարուխանյանին վճարման ենթակա գումարները բռնագանձվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով: Դրանց հիման վրա այդ գումարները հաշվարկվել և փաստացի բռնագանձվել են հարկադիր կատարողի կողմից, իսկ կատարողական վարույթները կարճվել են կատարողական թերթերի պահանջները փաստացի կատարված լինելու հիմքով:

Փաստորեն, հայցվորը սույն գործով պահանջել է բռնագանձել նշված դատական ակտերի հիման վրա բռնագանձված, սակայն ըստ իրեն՝ վճիռների հարկադիր կատարման ընթացքում պակաս հաշվարկված գումարները: Այսինքն՝ հայցվորն ըստ էության վիճարկել է վճիռների հարկադիր կատարման ընթացքում հարկադիր կատարողի կատարած հաշվարկներն այն դեպքում, երբ կատարողական թերթերի պահանջները լրիվ կատարված լինելու հիմքով կատարողական վարույթը կարճելու մասին որոշումները չեն վիճարկվել, չեն վերացվել, ոչ իրավաչափ կամ ուժը կորցրած չեն ճանաչվել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալի 05.10.2012 թվականի և 10.12.2012 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշումները Ռադիկ Սարուխանյանի կողմից վիճարկված չլինելու պայմաններում գործում է այդ որոշումների՝ որպես ուժի մեջ գտնվող վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածը, ինչից էլ հետևում է, որ բռնագանձումները կատարվել են լրիվ և ճիշտ, ուստի աշխատողն այլևս չի կարող պահանջել իր կարծիքով պակաս բռնագանձված գումարները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ նույն ժամանակահատվածների հարկադիր

պարապորդի գումարների բռնագանձման վերաբերյալ արդեն իսկ առկա են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռներ և դրանք փաստացի կատարված լինելու հիմքով կարճված կատարողական վարույթներ (հաստատված անբողոքարկելի վարչական ակտերով), որոնցով որոշված է եղել գործատուից հօգուտ աշխատողի բռնագանձել հարկադիր պարապորդի գումարը միջին աշխատավարձի չափով՝ հայցվորի պահանջած ամբողջ ժամանակահատվածի համար:

Ինչ վերաբերում է հայցվորի՝ արձակուրդի դիմաց փոխհատուցում բռնագանձելու պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պահանջը նույնպես անհիմն է, քանի որ, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված աշխատողի՝ ամենամյա արձակուրդ ունենալու իրավունքը և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործատուի՝ ամենամյա արձակուրդի համար աշխատողին վճարելու պարտականությունը չեն առաջանում այն դեպքում, երբ աշխատողը տվյալ գործատուի համար չի կատարել աշխատանք աշխատանքից ազատվելու հետևանքով հարկադիր պարապորդում գտնվելու պատճառով: Սույն գործով գործատուն չի կրում արձակուրդի դիմաց փոխհատուցում վճարելու պարտավորություն, քանի որ այն ժամանակահատվածում, որի համար հայցվորը պահանջում է արձակուրդի վճար, հայցվորը փաստացի չի աշխատել (գտնվել է պարապորդում):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնվում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման վրա, որով օրենսդիրը որպես առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատողին աշխատանքից ազատելու հետևանք՝ գործատուի համար նախատեսել է միայն հարկադիր պարապորդի վճարումը: Փաստորեն, նման դեպքերի համար օրենսդիրը սահմանել է, որ աշխատողը կարող է պահանջել հարկադիր պարապորդի գումարը՝ միջին աշխատավարձը, սակայն չի սահմանել աշխատողի իրավունքը՝ պահանջելու հարկադիր պարապորդի ժամանակահատվածում ընդգրկված իրեն հասանելիք արձակուրդի գումարը՝ նկատի ունենալով այն, որ հարկադիր պարապորդի ընթացքում աշխատողը փաստացի աշխատանք չի կատարում:

Անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված տուժանքի բռնագանձման մասին հայցվորի պահանջի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ՝ հարկադիր պարապորդի գումարի տարբերությունը և արձակուրդի համար վճարման ենթակա գումարները վճարելու վերաբերյալ հայցվորի պահանջները վերոնշյալ հիմնավորումներով մերժման ենթակա լինելու պայմաններում այդ դրամական պարտավորությունները չկատարելու համար Ընկերությունից ենթակա չեն բռնագանձման նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքի գումարները, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է 01.08.2012 թվականից մինչև 23.01.2013 թվականի համար վճարված աշխատավարձի և վերջնահաշվարկի տուժանքի վերաբերյալ 495.702 ՀՀ դրամի բռնագանձման պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործն ուղարկելու նոր քննության, հետևյալ պատճառաբանությամբ: Քանի որ թիվ ԵԿԴ/2171/02/10 քաղաքացիական գործով որոշվել է Ընկերությունից հօգուտ Ռադիկ Սարուխանյանի հարկադիր պարապորդի գումար բռնագանձել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ վճիռն օրինական ուժի մեջ է մտել, համաձայն վճռում կատարված դատարանի հավաստման, 06.09.2012 թվականին, հետևաբար նշված կատարողական վարույթով մինչև 06.09.2012 թվականի համար սահմանված հարկադիր պարապորդի գումարները բռնագանձվել են, և դրանց նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանք հաշվարկվել չի կարող: Ինչ վերաբերում է հետագա ժամանակահատվածին, ապա սույն գործով հաստատված փաստերից բխում է, որ Ընկերության 21.11.2012 թվականի հրամանով է միայն թույլատրվել Ռադիկ Սարուխանյանին անցնել իր նախկին աշխատանքային պարտականությունների կատարմանը, իսկ հաջորդ օրը՝ 22.11.2012 թվականին կողմերի

միջև կնքվել է աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ 2013 թվականի հունվարի 23-ից լուծելու մասին համաձայնագիր: Սույն գործի քննությամբ չի պարզվել, թե արդյոք այդ հրամանի արձակումից հետո Ռ-ադիկ Սարուխանյանն Ընկերությունում մինչև 23.01.2013 թվականն աշխատանք կատարել է, թե ոչ, կամ գործատուի պահանջով աշխատավայրում գտնվել է, թե ոչ (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 4-րդ մաս): Միաժամանակ սույն գործին կից փաստաթղթային թղթապանակ առկա չէ, իսկ դատահաշվապահական փորձագետի եզրակացությունից էլ պարզ չէ, թե 06.09.2012 թվականից մինչև 23.01.2013 թվականն աշխատավարձի վճարման ուշացումներն արդյոք արձանագրվել են սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ուսումնասիրման հիման վրա: Նկատի ունենալով, որ վերն արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա աշխատողի կողմից աշխատանքը կատարվելու կամ գործատուի պահանջով աշխատավայրում գտնվելու պայմաններում աշխատավարձի, հարկադիր պարապորդի (դրանց վերջնահաշվարկի) վճարման ժամկետները խախտելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքի գումարները ենթակա են բռնագանձման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոհիշյալ ժամանակահատվածի աշխատավարձի գումարների նկատմամբ տուժանքի բռնագանձման վերաբերյալ պահանջի մասով գործը ենթակա է նոր քննության:

Վճռաբեկ բողոքի պարտափաստում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է քավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու, ինչպես նաև գործը մասով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով, բացառությամբ 495.702 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասի, վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող

անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.04.2018 թվականի որոշումը և 01.08.2012 թվականից մինչև 23.01.2013 թվականի աշխատավարձի և վերջնահաշվարկի տուժանքի բռնագանձման վերաբերյալ մասով գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության: Մնացած մասով հայցը մերժել:

2. Հայցի մերժված մասով պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Բեկանված մասով դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է ստնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մանկության գործ թիվ ԱՎԴԻ/0049/04/16
2020թ.

Մանկության գործ թիվ

ԱՎԴԻ/0049/04/16

Նախագահող դատավոր՝

Կ. Հակոբյան

Դատավորներ՝

Ա. Սմբատյան

Ա. Մկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին
գրավոր ընթացակարգով քննելով Սպարտակ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի
Վարդան Պետրոսյանի՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Պետրոսյանը պահանջել է Սպարտակ Խաչատրյանին
ճանաչել սնանկ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դա-
տավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.09.2017 թվականի վճռով դիմումը
բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
23.05.2018 թվականի որոշմամբ Սպարտակ Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է,
և Դատարանի 06.09.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սպարտակ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բողոք բերած անձը Դատարան է ներկայացրել առարկություն այն մասին, որ անվճարունակ չէ, ունի բավարար միջոցներ Վարդան Պետրոսյանի հանդեպ իր դրամական պարտավորությունները կատարելու համար: Մասնավորապես, թիվ ԱՎԴԻ/0278/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման նպատակով կատարողական գործողությունների արդյունքում աճուրդի է ներկայացվել բողոք բերած անձին սեփականության իրավունքով պատկանող Վեդի քաղաքի Արարատյան փողոցի թիվ 73/5 հասցեի շինությունը: Նշված կատարողական գործողությունների արդյունքում հնարավոր է ամբողջությամբ մարել Վարդան Պետրոսյանի հանդեպ ունեցած իր դրամական պարտավորությունները, քանի որ գույքի արժեքը մի քանի անգամ գերազանցում է պարտավորության չափը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ դիմումը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԴԻ/0278/02/10 վճռի համաձայն՝ Սպարտակ Խաչատրյանից հօգուտ Վարդան Պետրոսյանի բռնագանձվել է 4.760.000 ՀՀ դրամ, որից 4.600.000 ՀՀ դրամը՝ որպես փոխառության գումար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսներ սկսած կետանցի օրվանից՝ 15.04.2008 թվականից, մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ գումարի բռնագանձումը տարածելով Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքի՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի թիվ 73/5 շինության վրա, 150.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, 10.000 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար, Սպարտակ Խաչատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ և 25.01.2011 թվականին տրվել է կատարողական թերթ (հատոր 2-րդ, գ.թ. 46-52):

2) 05.08.2014 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման համաձայն՝ պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի (հատոր 1-ին, գ.թ. 8):

3) 21.12.2015 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ ավարտվել է 02.02.2011 թվականին հարուցված թիվ 00032106 կատարողական վարույթը, քանի որ պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել և վերջինիս նկատմամբ 18.03.2015 թվականին հայտարարվել է հետախուզում (հատոր 2-րդ, գ.թ. 53):

4) 15.08.2016 թվականին Վարդան Պետրոսյանը դիմում է ներկայացրել դատարան՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին (հատոր 1-ին, գ.թ. 2-3):

5) 09.11.2016 թվականին Սպարտակ Խաչատրյանն առարկություն է ներկայացրել դատարան՝ նշելով, որ ունի բավարար գույք պարտատիրոջ հանդեպ պարտավորությունները կատարելու համար, ուստի առարկել է սնանկության դիմումի դեմ (հատոր 1-ին, գ.թ. 6-7):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորության հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդարձունալ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը նրա անվճարունակությունն է, որը հարկադրված սնանկության դեպքում դրսևորվում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային

պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանցի առկայության և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվելու հանգամանքով: Ընդ որում, անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններին անվճարունակության հետևանքով չտոնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը (*տե՛ս ըստ դիմումի «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԵՐ» ՓԲԸ-ն ընդդեմ Հարություն Կարդանյանի թիվ ԵՄԳ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Իրավահարաբերության ծագման պահին գործող 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են քաղաքացիական գործերով դատական ակտերը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՄԴՈ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ամսանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորված նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*յրեն՝ HORNBY v. GREECE գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյան ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը:

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան (*յրեն՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնին ընդդեմ Անուշ Իսայիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը (*յրեն՝ «Յունիքական» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «Յունիքական» ԲԲԸ) ընդդեմ «Հրաչք Այսպազ» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական

պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱԿԴ1/0278/02/10 վճռով Սպարտակ Խաչատրյանից հոգուտ Վարդան Պետրոսյանի բռնագանձվել է 4.760.000 ՀՀ դրամ, որից 4.600.000 ՀՀ դրամը՝ որպես փոխառության գումար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսներ սկսած կետանցի օրվանից՝ 15.04.2008 թվականից, մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ գումարի բռնագանձումը տարածելով Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքի՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի թիվ 73/5 շինության վրա, 150.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, 10.000 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար, Սպարտակ Խաչատրյանից հոգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ և 25.01.2011 թվականին տրվել է կատարողական թերթ: 05.08.2014 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշմամբ պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: 21.12.2015 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշմամբ ավարտվել է 02.02.2011 թվականին հարուցված թիվ 00032106 կատարողական վարույթը, քանի որ պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել և վերջինիս նկատմամբ 18.03.2015 թվականին հայտարարվել է հետախուզում: 15.08.2016 թվականին Վարդան Պետրոսյանը դիմում է ներկայացրել դատարան՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին: 09.11.2016 թվականին Սպարտակ Խաչատրյանն առարկություն է ներկայացրել դատարան՝ նշելով, որ ունի բավարար գույք պարտատիրոջ հանդեպ պարտավորությունները կատարելու համար, ուստի առարկել է սնանկության դեմ:

Դատարանը դիմումի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Սպարտակ Խաչատրյանի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների առկայության փաստը հաստատվում է ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի վճռով:

Անդրադառնալով Սպարտակ Խաչատրյանի այն պնդմանը, որ իր գույքի արժեքը մի քանի անգամ գերազանցում է առկա պարտավորության չափը, առկա չէ սնանկ ճանաչելու հիմքը և Վարդան Պետրոսյանը կարող է իր պահանջների բավարարումը ստանալ կատարողական վարույթի շրջանակներում, Դատարանը նշել է, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե հաշվեկշռային անվճարունակությանը, այլ փաստացի անվճարունակությանը: Բացի այդ, Դատարանը նշել է նաև, որ 25.01.2011 թվականի կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԴԱՀԿ ծառայությունում հարուցված կատարողական վարույթն ավարտվել է :

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, նշել է, որ Սպարտակ Խաչատրյանի վճարային պարտավորությունն անվիճելի է, քանի որ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

Մինչդեռ վերագրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական

վարույթը կասեցնելու և վերսկսելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանայուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (...) կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (կրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վերադատության կամ դատական կարգով վերացման դեպքերի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը կատարողական վարույթը կասեցնելու, ավարտելու և կարճելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածներով՝ սահմանելով կատարողական վարույթը կասեցնելու, ավարտելու և կարճելու հիմքերը և դրանց իրավական հետևանքները: Վկայակոչված հոդվածներում ամրագրված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կատարողական վարույթը կասեցնելը, ավարտելը և կատարողական վարույթը կարճելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանայու դեպքում կատարողական վարույթը կարող է վերսկսվել, իսկ կատարողական վարույթը կարճելու դեպքում կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վերադատության կամ դատական կարգով վերացման դեպքերի: Կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, այն չի կարող վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը նախատեսված է իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. **ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:**

Փաստորեն, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է, որ կատարողական վարույթը կարող է **վերսկսվել** միայն հետևյալ երեք դեպքերում.

1. եթե կատարողական վարույթը կասեցվել է, և կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են,

2. եթե կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն,

3. եթե վերադասության կամ դատական կարգով վերացվել է կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԳԻ/0278/02/10 վճիռը մտել է օրինական ուժի մեջ և 25.01.2011 թվականին տրվել է կատարողական թերթ: 05.08.2014 թվականին հարկադիր կատարողը դատական ակտի հետագա կատարումն ապահովելու նպատակով կայացրել է որոշում արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին և պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: 21.12.2015 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշմամբ հարկադիր կատարողն ավարտել է 02.02.2011 թվականին հարուցված թիվ 00032106 կատարողական վարույթը, քանի որ պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել և վերջինիս նկատմամբ 18.03.2015 թվականին հայտարարվել է հետախուզում:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԳԻ/0278/02/10 օրինական ուժի մեջ մտած վճիռը փաստացի չի կատարվել, պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունն արգելադրված է և **գտնվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի փուլում**, կատարողական վարույթն էլ ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Այսինքն պարտապանին հայտնաբերելու դեպքում ավարտված կատարողական վարույթը կարող է վերսկսվել և արգելադրված գույքն էլ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելով՝ կապահովվի դատական ակտի կատարումը:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճարային պարտավորության հաշվանցի (նվազեցման կամ զրոյացման) հնարավորությունը տվյալ դեպքում պահպանված է, քանի որ կատարողական վարույթի շարունակման դեպքում վճարային պարտավորությունը կարող է նվազել կամ իսպառ դադարել (ակնհայտ է, որ պարտապանն իր պարտքը փակելու համար անհրաժեշտ չափի գույք ունի, գույքն էլեկտրոնային աճուրդով իրացման գործընթացում է և դրա իրացմամբ պարտավորությունը կարող է դադարել): Դա նշանակում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ տվյալ դեպքում անձին սնանկ ճանաչելու համար առկա չի եղել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում եղած, «**և բացակայում է հաշվանցի հնարավորությունը**» պայմանը՝ հաշվանցի հնարավորությունը չի բացակայել, իսկ միայն վճարային պարտավորությունն օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված լինելու հանգամանքը բավարար չէ անձին սնանկ ճանաչելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, բավարարելով Վարդան Պետրոսյանի դիմումը՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, իսկ Վերաքննիչ դատարանը, մերժելով այդ վճռի դեմ Սպարտակ Խաչատրյանի բերած վերաքննիչ բողոքը, հանգել են սխալ եզրակացության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում հայցը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանում դատական ծախսերի բաշխման հարցը պետք էր համարել լուծված, քանի որ Վարդան Պետրոսյանը Սախապետ վճարել է պետական տուրքը: Բացի այդ, Վարդան Պետրոսյանից հոգուտ Սախարտակ Խաչատրյանի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ դիմումը մերժել:

2. ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Վարդան Պետրոսյանից հօգուտ Սյարտակ Խաչատրյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ԱՎԴՆ/0049/04/16 սնանկության գործով
18.12.2020 թվականին կայացված որոշման պատճառաբանական
և եզրափակիչ մասերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2020 թվականի դեկտեմբերի 18-ին գրավոր ընթացակարգով քննելով Սպարտակ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Վարդան Պետրոսյանի՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ դիմումը մերժել:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյան, Ռ. Հակոբյան, Ս. Միքայելյան և Մ. Դրմեյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարմություն նշել է հետևյալը

«Դիմելով դատարան՝ Վարդան Պետրոսյանը պահանջել է Սպարտակ Խաչատրյանին ճանաչել սնանկ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.09.2017 թվականի վճռով դիմումը քավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2018 թվականի որոշմամբ Սպարտակ Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.09.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սպարտակ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բողոք բերած անձը Դատարան է ներկայացրել առարկություն այն մասին, որ անվճարունակ չէ, ունի բավարար միջոցներ Վարդան Պետրոսյանի հանդեպ իր դրամական պարտավորությունները կատարելու համար: Մասնավորապես, թիվ ԱՎԴՆ/0278/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման նպատակով կատարողական գործողությունների արդյունքում աճուրդի է ներկայացվել բողոք բերած անձին սեփականության իրավունքով պատկանող՝ Վեդի քաղաքի Արարատյան փողոցի թիվ 73/5 հասցեի շինությունը: Նշված կատարողական գործողությունների արդյունքում հնարավոր է ամբողջությամբ մարել Վարդան Պետրոսյանի հանդեպ ունեցած իր դրամական պարտավորությունները, քանի որ գույքի արժեքը մի քանի անգամ գերազանցում է պարտավորության չափը:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ դիմումը մերժել»:

3. Վճուարել դատարանը որպես վճուարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«1) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԴ1/0278/02/10 վճռի համաձայն՝ Սպարտակ Խաչատրյանից հոգուտ Վարդան Պետրոսյանի բռնագանձվել է 4.760.000 ՀՀ դրամ, որից 4.600.000 ՀՀ դրամը՝ որպես փոխառության գումար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսներ սկսած կետանցի օրվանից՝ 15.04.2008 թվականից, մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ գումարի բռնագանձումը տարածելով Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքի՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի թիվ 73/5 շինության վրա, 150.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, 10.000 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար, Սպարտակ Խաչատրյանից հոգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ և 25.01.2011 թվականին տրվել է կատարողական թերթ (հատոր 2-րդ, գ.թ. 46-52):

2) 05.08.2014 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման համաձայն՝ պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի (հատոր 1-ին, գ.թ. 8):

3) 21.12.2015 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ ավարտվել է 02.02.2011 թվականին հարուցված թիվ 00032106 կատարողական վարույթը, քանի որ պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել և վերջինիս նկատմամբ 18.03.2015 թվականին հայտարարվել է հետախուզում (հատոր 2-րդ, գ.թ. 53):

4) 15.08.2016 թվականին Վարդան Պետրոսյանը դիմում է ներկայացրել դատարան՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին (հատոր 1-ին, գ.թ. 2-3):

5) 09.11.2016 թվականին Սպարտակ Խաչատրյանն առարկություն է ներկայացրել դատարան՝ նշելով, որ ունի բավարար գույք պարտատիրոջ հանդեպ պարտավորությունները կատարելու համար, ուստի առարկել է սնանկության դիմումի դեմ (հատոր 1-ին, գ.թ. 6-7):»:

4. Վճուարել դատարանը որպես Վճուարել դատարանի պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճուարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճուարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորության հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի խախտում, որը խայթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճուարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը նրա անվճարունակությունն է, որը հարկադրված սնանկության դեպքում դրսևորվում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանցի առկայության և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվելու հանգամանքով: Ընդ որում, անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններին անվճարունակության հետևանքով չուսնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը (յրեն ըստ դիմումի «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՈՒՄԱՆԿԻ ԽՈՒՄԱՐ» ՓԲԸ-ն ընդդեմ Հարություն Վարդանյանի թիվ ԵՄԳ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց

և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են քաղաքացիական գործերով դատական ակտերը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՌ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ամսացվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառնություններ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության» որպես դատավարական գործընթացի փուլ:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կոառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*լրեն HORNBY v. GREECE գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ*

կեպ, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կեպը:

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը:

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան (յրեն՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Իսպիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը (յրեն՝ «Յունիբանկ» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «Յունիբանկ» ԲԲԸ) ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԴ1/0278/02/10 վճռով Սպարտակ Խաչատրյանից հօգուտ Վարդան Պետրոսյանի բռնագանձվել է 4.760.000 ՀՀ դրամ, որից 4.600.000 ՀՀ դրամը՝ որպես փոխառության գումար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսներ սկսած կետանցի օրվանից՝ 15.04.2008 թվականից, մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ գումարի բռնագանձումը տարածելով Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքի՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի թիվ 73/5 շինության վրա, 150.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, 10.000 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար, Սպարտակ Խաչատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե

բռնագանձվել է 95.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ և 25.01.2011 թվականին տրվել է կատարողական թերթ: 05.08.2014 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշմամբ պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: 21.12.2015 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշմամբ ավարտվել է 02.02.2011 թվականին հարուցված թիվ 00032106 կատարողական վարույթը, քանի որ պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել և վերջինիս նկատմամբ 18.03.2015 թվականին հայտարարվել է հետախուզում: 15.08.2016 թվականին Վարդան Պետրոսյանը դիմում է ներկայացրել դատարան՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին: 09.11.2016 թվականին Սպարտակ Խաչատրյանն առարկություն է ներկայացրել դատարան՝ նշելով, որ ունի բավարար գույք պարտատիրոջ հանդեպ պարտավորությունները կատարելու համար, ուստի առարկել է սնանկության դեմ:

Դատարանը դիմումի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Սպարտակ Խաչատրյանի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների առկայության փաստը հաստատվում է ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի վճռով:

Անդրադառնալով Սպարտակ Խաչատրյանի այն պնդմանը, որ իր գույքի արժեքը մի քանի անգամ գերազանցում է առկա պարտավորության չափը, առկա չէ սնանկ ճանաչելու հիմքը և Վարդան Պետրոսյանը կարող է իր պահանջների բավարարումը ստանալ կատարողական վարույթի շրջանակներում, Դատարանը նշել է, որ սովյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե հաշվեկշռային անվճարունակությանը, այլ փաստացի անվճարունակությանը: Բացի այդ, Դատարանը նշել է նաև, որ 25.01.2011 թվականի կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԴԱՀԿ ծառայությունում հարուցված կատարողական վարույթն ավարտվել է:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, նշել է, որ Սպարտակ Խաչատրյանի վճարային պարտավորությունն անվիճելի է, քանի որ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական վարույթը կասեցնելու և վերսկսելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանայուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (...) կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելվել է կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վերադասության կամ դատական կարգով վերացման դեպքերի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը կատարողական վարույթը կասեցնելու, ավարտելու և կարճելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածներով՝ սահմանելով կատարողական վարույթը կասեցնելու, ավարտելու և կարճելու հիմքերը և դրանց իրավական հետևանքները: Վկայակոչված հոդվածներում ամրագրված իրավանքների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կատարողական վարույթը կասեցնելը, ավարտելը և կատարողական վարույթը կարճելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանալու դեպքում կատարողական վարույթը կարող է վերսկսվել, իսկ կատարողական վարույթը կարճելու դեպքում կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վերադասության կամ դատական կարգով վերացման դեպքերի: Կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, այն չի կարող վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը նախատեսված է իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. **ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:**

Փաստորեն, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է, որ կատարողական վարույթը կարող է **վերսկսվել** միայն հետևյալ երեք դեպքերում.

1. եթե կատարողական վարույթը կասեցվել է, և կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են,

2. **եթե կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն,**

3. եթե վերադասության կամ դատական կարգով վերացվել է կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԳՆ/0278/02/10 վճիռը մտել է օրինական ուժի մեջ և 25.01.2011 թվականին տրվել է կատարողական թերթ: 05.08.2014 թվականին հարկադիր կատարողը դատական ակտի հետագա կատարման ապահովելու նպատակով կայացրել է որոշում արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին և պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: 21.12.2015 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշմամբ հարկադիր կատարողն ավարտել է 02.02.2011 թվականին

հարուցված թիվ 00032106 կատարողական վարույթը, քանի որ պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել և վերջինիս նկատմամբ 18.03.2015 թվականին հայտարարվել է հետախուզում:

Շիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԴ1/0278/02/10 օրինական ուժի մեջ մտած վճիռը փաստացի չի կատարվել, պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունն արգելադրված է և **գտնվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի փուլում**, կատարողական վարույթն էլ ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Այսինքն՝ պարտապանին հայտնաբերելու դեպքում ավարտված կատարողական վարույթը կարող է վերսկսվել և արգելադրված գույքն էլ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելով՝ կապահովվի դատական ակտի կատարումը:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճարային պարտավորության հաշվանցի (սվագեցման կամ գրոյացման) հնարավորությունը տվյալ դեպքում պահպանված է, քանի որ կատարողական վարույթի շարունակման դեպքում վճարային պարտավորությունը կարող է նվազել կամ իսպառ դադարել (ակնհայտ է, որ պարտապանն իր պարտքը փակելու համար անհրաժեշտ չափի գույք ունի, գույքն էլեկտրոնային աճուրդով իրացման գործընթացում է և դրա իրացմամբ պարտավորությունը կարող է դադարել): Դա նշանակում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ տվյալ դեպքում անձին սնանկ ճանաչելու համար առկա չի եղել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում եղած, «**և բացակայում է հաշվանցի հնարավորությունը**» պայմանը՝ հաշվանցի հնարավորությունը չի բացակայել, իսկ միայն վճարային պարտավորությունն օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված լինելու հանգամանքը բավարար չէ անձին սնանկ ճանաչելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, բավարարելով Վարդան Պետրոսյանի դիմումը՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, իսկ Վերաքննիչ դատարանը, մերժելով այդ վճռի դեմ Սպարտակ Խաչատրյանի բերած վերաքննիչ բողոքը, հանգել են սխալ եզրակացության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վճռի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, Ռ. Հակոբյանս, Ս. Միրայեյանս և Մ. Դրմեյանս, համաձայն չինելով վերը նշված որոշման պարճատարանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արքաաաայրված կարծիքի հետ, շարտորում ենք մեր հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթաարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 364-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաարանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հիմքով վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթաարել է արդարադատության բուն էությունը: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենսգրքի 364-րդ հոդվածի իմաստով՝ նյութական իրավունքի նորմերի խախտման առումով այդպիսի խախտում, իսկ դրա արդյունքում՝ դատական ակտի բեկանման հիմք է համարում նյութական իրավունքի նորմերի այնպիսի խախտումը կամ դրանց սխալ կիրառումը, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ինչպես բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու հանգամանքով, այնպես էլ՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի խախտման արդյունքում արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալ թույլ տալով, և Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել է և այն փոփոխել՝ դիմումը մերժել է՝ հիմք ընդունելով բացառապես որոշման մեջ նշված պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Իրանից ելնելով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բացառապես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններին՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանցում նշվածները կարող էին բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանին նյութական իրավունքի նորմի այնպիսի խախտում վերագրելու համար, որը հանգեցրել է գործի սխալ լուծման, իսկ դրա արդյունքում՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և այն փոփոխելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով Վճռաբեկ դատարանը չի համաձայնվել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել է և փոփոխել՝ դիմումը մերժել է, ըստ էության, հետևյալ շարժառիթներով՝

- ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2010 թվականի թիվ ԱՎԴԼ/0278/02/10 օրինական ուժի մեջ մտած վճիռը փաստացի չի կատարվել, պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեի 14,6 քմ մակերեսով շինությունն արգելադրված է և գտնվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի փուլում, կատարողական վարույթն էլ ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Այսինքն՝ պարտապանին հայտնաբերելու դեպքում ավարտված կատարողական վարույթը կարող է վերսկսվել և արգելադրված գույքն էլ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելով՝ կապահովվի դատական ակտի կատարումը,

- վճարային պարտավորության հաշվանցի (նվազեցման կամ գրոյացման) հնարավորությունը տվյալ դեպքում պահպանված է, քանի որ կատարողական վարույթի շարունակման դեպքում վճարային պարտավորությունը կարող է նվազել կամ իսպառ դադարել (ակնհայտ է, որ պարտապանն իր պարտքը փակելու համար անհրաժեշտ չափի գույք ունի, գույքն էլեկտրոնային աճուրդով իրացման գործընթացում է և դրա իրացմամբ պարտավորությունը կարող է դադարել),

- ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ տվյալ դեպքում անձին սնանկ ճանաչելու համար առկա չի եղել «Մանակության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում եղած «, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը» պայմանը՝ հաշվանցի հնարավորությունը չի բացակայել, իսկ միայն վճարային պարտավորությունն օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված լինելու հանգամանքը բավարար չէ անձին սնանկ ճանաչելու համար:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու մասին դիմումի մերժման հիմքում, ըստ էության, դրել է այն պատճառաբանությունը, որ վերը նշված վճիռը փաստացի չի կատարվել՝ պարտապան Սպարտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող վերը նշված անշարժ գույքն արգելադրված է և դեռևս գտնվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի փուլում, ու պարտապան Սպարտակ Խաչատրյանին հայտնաբերելու դեպքում հնարավոր է վերսկսել վերը նշված հիմքով ավարտված կատարողական վարույթը, և արգելադրված գույքն էլ իրացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդով՝ ապահովելով դատական ակտի կատարումը, որի պայմաններում հաշվանցի հնարավորությունը չի բացակայի:

Կարծում ենք, որ վերը նշված շարժառիթները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ դիմումը մերժելու համար հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով կատարողական վարույթն ավարտելու դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու առանձնահատկություններին այն դեպքում, երբ պարտատիրոջ օգտին կայացված դատական

ակտի հիման վրա տրված կատարողական թերթով հարուցված կատարողական վարույթն ավարտվել է պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով այն պարագայում, երբ հարկադիր կատարողը և (կամ) պահանջատերը ձեռնարկել են օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները, իրավահարաբերության ծագման պահին՝ մինչև 09.01.2015 թվականի փոփոխությունները գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն հոդվածի 3-րդ մասի, որոշումը կայացնելու ժամանակ գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 42-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերափոխությունների արդյունքում այդ դրույթների հաշվառմամբ անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին, դիրքորոշումներ է հայտնել այն մասին, որ

- պարտատիրոջ օգտին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում պարտատերն ինքն է որոշում ընտրել դատական ակտի կատարման ճանապարհը՝ հարկադիր կատարման, թե սնանկության վարույթի միջոցով: Պարտատիրոջ կողմից ընտրված եղանակն ինքնանպատակ չպետք է լինի, այսինքն՝ եթե պարտատերն ընտրել է սնանկության վարույթով իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունը, ապա չի կարող դիմել նաև դատական ակտի հարկադիր կատարման, որպիսի արգելքը բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածից (այն է՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները, իսկ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ): Նույն տրամաբանությամբ եթե պարտատերն ընտրել է դատական ակտի հարկադիր կատարման ճանապարհը, ապա քանի դեռ կատարողական վարույթն իր համար բացասական ելքով չի ավարտվել, պարտատերը չի կարող դիմել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով (վերոգրյալ պատճառաբանությունը կիրառելի չէ այն դեպքի նկատմամբ, երբ կատարողական վարույթն ավարտվել է պարտատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմումի հիմքով, քանի որ այս դեպքում կատարողական վարույթի ավարտը պայմանավորված է պարտատիրոջ կամահայտնությամբ, ինչն էլ օբյեկտիվորեն բացառում է կատարողական վարույթը պարտապանի համար բացասական ելքով ավարտված որակելու հնարավորությունը),

- կատարողական վարույթը վերջնականապես, առանց վերսկսման հնարավորության ամփոփվում է կատարողական վարույթի կարճման դեպքում: Կատարողական վարույթի ավարտի դեպքում պահպանվում է վերսկսման հնարավորությունը, կատարողական վարույթի առկայության պայմաններում պարտատիրոջ կողմից սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է գնահատել կատարողական վարույթի ավարտի հիմքերի գնահատմամբ, և եթե կատարողական վարույթն ավարտվել է այնպիսի հիմքով, որն այդ պահին պարտատիրոջ համար բացասական է թեկուզև այն իմաստով, որ պարտատերն իր պահանջի անմիջապես բավարարում չի ստանում (*օրինակ, եթե սնանկարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են սպարյոյն*), ապա պարտատերը չպետք է գրկվի սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունից: Նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սնանկության վարույթը, ի տարբերության կատարողական վարույթի, ավելի ճկուն է պարտատիրոջ պահանջների բավարարում ստանալու տեսանկյունից (մասնավորապես՝ սնանկության կառավարիչն ունի պարտապանի դեբիտորական պարտքերը հավաքագրելու լիազորություն, անհատույց կատարված փոխանցումները հետ ստանալու լիազորություն և այլն):

Արդյունքում ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ եթե կատարողական վարույթն ավարտվել է այնպիսի հիմքով, որը տվյալ պահին պարտատիրոջ համար կարող է գնահատվել որպես բացասական ելքով կատարողական վարույթի ավարտ, ապա

պարտատերը չպետք է գրկվի սնանկության վարույթով իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով, որ հակառակ մեկնաբանության դեպքում կխախտվի պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռությունը, պարտատերը կգրկվի իր օգտին կայացված դատական ակտը կատարելու հնարավորությունից, որի արդյունքում կսահմանափակվեն վերջինիս դատական պաշտպանության և սեփականության իրավունքները (*տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության Կուրայքի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Մազանե» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/0017/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2019 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ սույն գործով պարտատեր Վարդան Պետրոսյանի օգտին առկա է թիվ ԱՎԴ1/0278/02/10 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որի համաձայն՝ սույն գործով պարտապան Սպարտակ Խաչատրյանից պետք է բռնագանձվի որոշակի գումար և բռնագանձումը տարածվի գրավի առարկա անշարժ գույքի վրա: Նշված վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ, հարուցվել է կատարողական վարույթ, որի արդյունքում հարկադիր կատարողը որոշում է կայացրել վերը նշված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին: Հետագայում հարկադիր կատարողը որոշում է կայացրել կատարողական վարույթն ավարտելու մասին այն պատճառաբանությամբ, որ անհնարին է եղել պարզել պարտապան Սպարտակ Խաչատրյանի գտնվելու վայրը, իսկ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Այսինքն՝ կատարողական վարույթը Վարդան Պետրոսյանի համար ավարտվել է բացասական ելքով, քանի որ վերջինս վերը նշված պատճառով իր պահանջի անմիջապես բավարարում չի ստացել: Այժմ պարտատեր Վարդան Պետրոսյանը, վերը նշված դիրքորոշման համատեքստում գրկված չլինելով նման պայմաններում սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունից (*տվյալ դեպքում ևս առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված նախարդակային որոշման մեջ բերված օրինակը՝ անհնարին է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն*), արդեն ընտրելով դատական ակտի կատարման մյուս՝ սնանկության վարույթի միջոցով ճանապարհը, դիմում է ներկայացրել դատարան՝ Սպարտակ Խաչատրյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին: Դիմումը ներկայացնելու պահին բացակայել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածում նշված արգելքը, քանի որ, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, կատարողական վարույթն ավարտված է եղել:

Նման պայմաններում կարծում են, որ սույն գործով վճռաբեկ դատարանի կողմից որոշման մեջ նշված շարժադիթները չեն բխում ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած վերը նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշումներից և այդ նույն դիրքորոշումների համաձայն՝ սույն գործով պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռության խախտման վտանգ են առաջացնում՝ պարտատեր Վարդան Պետրոսյանին գրկելով իր օգտին կայացված դատական ակտը կատարելու հնարավորությունից, որի արդյունքում սահմանափակվում է վերջինիս դատական պաշտպանության և սեփականության իրավունքները:

Նման պայմաններում, կարծում են, որ Վերաքննիչ դատարանին չէր կարող վերագրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի խախտում թույլ տալը, առավել ևս՝ արդարադատության բուն էությունը խաթարող, քանի որ Վերաքննիչ դատարանի գործողությունները՝ կապված Դատարանի կայացրած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հետ, բխում են ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումից և ընդհակառակը՝ տվյալ դեպքում նպատակ ունեն ապահովելու պարտատիրոջ շահերի հավասարակշռությունը և իր օգտին կայացված դատական ակտի կատարումը սնանկության վարույթի միջոցով իրականացնելու արդյունքում պահանջի բավարարում ստանալու հնարավորությունը:

Դրանից ելնելով կարծում են, որ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված շարժադիթները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու դիմումը մերժելու համար:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտը բեկանում է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտը չունի պատճառաբանական մաս:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանի համար պարտականություն է նախատեսել որպես կանոն դատական ակտը վերանայելու վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Նշված կանոնից նախատեսվել է բացառություն, և վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահվել դատական ակտը վերանայելիս դուրս գալու վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններից, երբ, օրինակ, վերաքննիչ դատարանը բողոքի քննությամբ հայտնաբերում է, որ դատարանի դատական ակտը չունի պատճառաբանական մաս: Այս դեպքում օրենսդիրը վերաքննիչ դատարանին անգամ ազատել է վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու պարտականությունից ու վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահել դատական ակտն անվերապահ բեկանելու բացառապես պատճառաբանական մաս չունենալու հիմքով՝ առանց անդրադառնալու վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին՝ այն համարելով դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որի դեպքում այլևս էական չէ՝ այն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծմանը, թե՛ ոչ, և այդպիսի խախտումը չի համարել ձևական:

Տվյալ դեպքում սույն գործի փաստերի համաձայն՝ Սպարտակ Խաչատրյանը Դատարանի 06.09.2017 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի կողմից նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի 132-րդ հոդվածը խախտված լինելու հիմքով՝ այն հիմնավորմամբ, որ «այդ վճռում բացակայում են պատճառաբանական և եզրափակիչ մասերը»:

Միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանը, խախտելով վերը նշված նորմերի պահանջները, վերաքննիչ բողոքի այդ հիմքին և հիմնավորմանն ընդհանրապես չի անդրադարձել, ու վերաքննիչ բողոքը մերժել է դրանում նշված մյուս հիմքերն ու հիմնավորումներն անհիմն ու մերժման ենթակա համարելու պատճառաբանությամբ՝ անտեսելով, որ եթե վերաքննիչ բողոքում առկա է հիմք այն մասին, որ բողոքարկվող դատական ակտը չունի պատճառաբանական մաս, ապա նախ անհրաժեշտ է պարզել այդ հիմքի առկայությունը կամ բացակայությունը, որից հետո նոր միայն անդրադառնալ վերաքննիչ բողոքում նշված մյուս հիմքերին և հիմնավորումներին, քանի որ եթե հաստատված համարվի այդ հիմքի հիմնավոր լինելը, ապա վերաքննիչ դատարանը պարտավոր է անվերապահ բեկանել դատարանի դատական ակտը՝ առանց անդրադառնալու վերաքննիչ բողոքում նշված մյուս հիմքերին և հիմնավորումներին:

Այժմ, Սպարտակ Խաչատրյանը Վերաքննիչ դատարանի 23.05.2018 թվականի որոշման դեմ ներկայացրած վճռաբեկ բողոքում որպես վճռաբեկ բողոքի հիմնավորում

վկայակոչել է Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերը նշված խախտումը՝ նշելով, որ «Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել վերաքննիչ բողոքի հիմքերից ամենակարևորին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի սխալ կիրառման վերաբերյալ բողոքում նշված հիմնավորումներին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկության կարգով բողոքի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը Վճռաբեկ դատարանի համար ևս պարտականություն է նախատեսել բողոքարկվող դատական ակտը որպես կանոն վերանայելու միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Միևնույն ժամանակ օրենսդիրը Վճռաբեկ դատարանի դեպքում ևս ընդհանուր կանոնից նախատեսել է ուղղակի բացառություն այն դեպքերի համար, երբ բողոքի քննությամբ Վճռաբեկ դատարանը հայտնաբերում է, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ դատական ակտի անվերապահ բեկանման համապատասխան հիմքը: Այս դեպքում Վճռաբեկ դատարանը, անկախ այդ հիմքի և դրա վերաբերյալ հիմնավորումների մասին վճռաբեկ բողոքում նշված լինելու հանգամանքից, պարտավոր է, դուրս գալով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, անվերապահորեն բեկանել բողոքարկվող դատական ակտը: Կարծում եմ, որ նշված կանոնը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը բերվել է նաև այն հիմքով, որ, օրինակ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված այն հիմքին, որ դատարանի դատական ակտը չունի պատճառաբանական մաս: Այս դեպքում ևս կարծում եմ, որ Վճռաբեկ դատարանը նախ պարտավոր է պարզել այդ հիմքի առկայությունը կամ բացակայությունը, որից հետո նոր միայն անդրադառնալ վճռաբեկ բողոքում նշված մյուս հիմքերին և հիմնավորումներին, քանի որ եթե հաստատված համարվի, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտը չի ունեցել պատճառաբանական մաս, որն անտեսվել է վերաքննիչ դատարանի կողմից, ապա Վճռաբեկ դատարանը պարտավոր է անվերապահ բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ առանց անդրադառնալու վճռաբեկ բողոքում նշված մյուս հիմքերին և հիմնավորումներին, քանի որ վերը նշված դիրքորոշումներից բխում է, որ վերաքննիչ դատարանն այս դեպքում անտեսել է, որ առկա է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

Մինչդեռ սույն գործով Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել վճռաբեկ բողոքի վերը նշված հիմքին և հիմնավորմանն ու վճռաբեկ բողոքը քննել է դրանում նշված նյութական նորմի խախտման հիմքի ու հիմնավորումների սահմաններում՝ անտեսելով, որ նման պայմաններում նախ պարտավոր էր պարզել այդ հիմքի առկայությունը կամ բացակայությունը, որից հետո նոր միայն անդրադառնալ վճռաբեկ բողոքում նշված մյուս նյութական իրավունքի նորմի խախտման վերաբերյալ հիմքին և հիմնավորմանը, քանի որ եթե հաստատված համարեր վերաքննիչ դատարանի կողմից նման դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ տալը, ապա պարտավոր էր անվերապահ բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ առանց անդրադառնալու վճռաբեկ բողոքում նշված նյութական իրավունքի նորմի խախտման վերաբերյալ հիմքին և հիմնավորմանը:

ԳՐԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Գ. Հակոբյան
Ռ. Հակոբյան
Ս. Միքայելյան
Մ. Դրմեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ **ԱՎԴ/0060/04/17**
2020թ.

Մասնկության գործ թիվ՝ ԱՎԴ/0060/04/17
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), հետևյալ կազմով

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2020 թվականի հունիսի 05-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Ամերիքանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռա-
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2018 թվականի որոշման
դեմ՝ ըստ Ժիրայր Մարգարյանի դիմումի՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի
մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ժիրայր Մարգարյանը (այսուհետ՝ Պարտապան) պահանջել է
իրեն ճանաչել սնանկ:

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դա-
տավոր՝ Ե. Քոչարյան) (այսուհետ՝ Դատարան) 28.09.2017 թվականի վճռով դիմումը բա-
վարարվել է:

Դատարանի 03.11.2017 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշա-
նակվել Սամվել Մանուկյանը (այսուհետ՝ Կառավարիչ):

Դատարանի 27.12.2017 թվականի որոշմամբ հաստատվել է պարտատերերի պա-
հանջների վերջնական ցուցակը:

Պարտապանի կողմից 29.03.2018 թվականին ներկայացվել է բողոք (դիմում)՝ Կառավարչի՝ քաղաք Արտաշատ, Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ Պարտապանին պատկանող բաժնեմասի օտարման գործողությունների վիճարկման վերաբերյալ:

Դատարանի 30.03.2018 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ Պարտապանի բողոքը (դիմումը) մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.07.2018 թվականի որոշմամբ Պարտապանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 30.03.2018 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը վերացվել է և ոչ իրավաչափ է ճանաչվել Կառավարչի՝ Պարտապանին պատկանող միակ բնակարանն օտարելու ուղղությամբ իրականացվող գործողությունները:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը, որը պետք է կիրառել, սիսայ է մեկնաբանել ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ քննվող իրավահարաբերությունների վրա պետք է տարածվի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, հիմնավորված չէ:

Վերաքննիչ դատարանը, որոշման կայացման հիմքում դնելով ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշումը, կիրառել է միայն վերոնշյալ որոշման առաջին մասը, որը տվյալ դեպքում կիրառելի չէր կարող լինել: Վերաքննիչ դատարանն անտեսել է նույն որոշման երկրորդ մասը, որը հնարավոր է կիրառելի լիներ սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Պարտապանին սեփականության իրավունքով պատկանում է ոչ թե բնակարան, այլև բաժնեմաս, ինչը և առանցքային նշանակություն ունի սույն գործով:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման առաջին պարբերությունը կիրառելի է այն դեպքերում, երբ իրացվում է պարտապանի միակ բնակարանն ամբողջությամբ: Սույն գործով օտարման ենթակա բնակարանի 1/4 բաժնեմասն է պատկանում Պարտապանին: Բնակարանը գնահատվել է 8.276.000 ՀՀ դրամ, ինչը նշանակում է, որ Պարտապանի 1/4 բաժնեմասը նշված անշարժ գույքում կազմում է 2.069.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանն անհասկանալի հաշվարկների հիման վրա եզրակացրել է, թե Պարտապանի գնահատված բաժնեմասը՝ 2.069.000 ՀՀ դրամի չափով, փոքր է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված գումարի չափից: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդուներ նույն որոշման 2-րդ պարբերությունը, որը հստակ սահմանում է իրացվող գույքի բաժնեմասի նվազագույն գինը: Մասնավորապես՝ տվյալ պարագայում 4.900.000 ՀՀ դրամը պետք է բաժանվեր Պարտապանի բաժնեմասին: Սույն դեպքի համար Պարտապանի միակ բաժնեմասի իրացման համար նվազագույն գումարը կազմում է ոչ թե 4.900.000 ՀՀ դրամ, այլ 1.225.000 ՀՀ դրամ: Հետևաբար, տվյալ դեպքում Պարտապանի բաժնեմասը, որը գնահատված է 2.069.000 ՀՀ դրամ, ավելին է ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն գումարից, այն է՝ 1.225.000 ՀՀ դրամից: Ուստի Պարտապանին պատկանող բաժնեմասն օտարելու ուղղությամբ Կառավարչի գործողություններն իրավաչափ են և բխում են ՀՀ օրենսդրության պահանջներից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.07.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 30.03.2018 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը:

- 1) Դատարանի 28.09.2017 թվականի վճռով Ժիրայր Մարգարյանը ճանաչվել է սնանկ (**հավելված գ.թ. 6-10**):
- 2) Դատարանի 27.12.2017 թվականի որոշմամբ հաստատվել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը: Բանկի պահանջը՝ 2.533.851,70 ՀՀ դրամի չափով, գրանցվել է որպես չսպահովված պահանջ՝ «է» հերթում (**հավելված գ.թ. 21-22**):
- 3) Պարտապանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Արտաշատ քաղաքի Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող բնակարանը «Էքսպերտ» ՄՊԸ-ի կողմից կատարված փորձաքննության հիման վրա գնահատվել է 8.276.000 ՀՀ դրամ: Նշված բնակարանի ¼ բաժնեմասի արժեքը կազմել է 2.069.000 ՀՀ դրամ (**հավելված գ.թ. 35-38**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, ու գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարտապանին պատկանող բռնագանձման ոչ ենթակա գույքի առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման սխալ մեկնաբանելու հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադրանալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- *արդյո՞ք պարտաբեկների պահանջների բավարարման նպատակով կարող է իրացվել քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի բաժնեմասը, եթե այդ բաժնեմասի արժեքը գերազանցում է ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի 808-Ն որոշմամբ սահմանված նվազագույն գումարի և միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալը.*
- *արդյո՞ք մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածով սահմանված պարտապանի գույքի իրացման արգելքը կարող է նույնացվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված գույքի իրացման արգելքի հետ:*

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ (...):

Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրացման (օտարման) ենթակա չէ պարտապանի այն գույքը, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բռնագանձում չի կարող տարածվել քաղաքացի-պարտապանին պատկանող միակ այն բնակարանի (այդ թվում՝ բնակարանի հետ մեկ միասնական գույքային միավոր կազմող տնամերձ հողամասի և այդ հողամասի վրա առկա օժանդակ կառույցների) կամ դրա բաժնի վրա, որը պարտապանի համար հանդիսանում է մշտական բնակության միակ վայր, և որի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից: Եթե միակ բնակարանն իրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված գումարը գերազանցող գնով, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված գումարը վերադարձվում է պարտապանին:

Վերոգրյալ իրավադրույթներից հետևում է, որ սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման համար պարտապանին պատկանող ոչ բոլոր գույքերն են ենթակա իրացման (օտարման): Այսինքն՝ պարտապանին պատկանող գույքերի իրացման հարցում առկա են որոշակի բացառություններ: Այդպիսի բացառությունների թվին է դասվում, մասնավորապես, այն գույքը, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել: Իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագանձում չի կարող տարածվել, ի թիվս այնի, նաև ֆիզիկական անձ պարտապանին պատկանող միակ բնակարանի վրա, եթե այն բավարարում է որոշակի չափանիշների:

Այսպես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով բռնագանձում չի կարող տարածվել այն բնակարանի կամ դրա բաժնի վրա, որը համապատասխանում է հետևյալ հատկանիշներին.

- 1) բնակարանը պատկանում է ֆիզիկական անձ պարտապանին,
- 2) այն ֆիզիկական անձ պարտապանի միակ բնակարանն է, այսինքն՝ նրա մշտական բնակության միակ վայրն է,
- 3) բնակարանի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից:

Ընդ որում, ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանելու մասին» թիվ 808-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարը կազմում է 4.900.000 ՀՀ դրամ: Իսկ նույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացի-պարտապանի՝ բռնագանձման ոչ ենթակա միակ բնակարանի բաժնեմասի նվազագույն գումարը որոշվում է նույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարի և քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սնանկության վարույթում բռնագանձում չի կարող տարածվել ֆիզիկական անձ պարտապանին պատկանող այն բնակարանի վրա, որը պարտապանի համար հանդիսանում է մշտական բնակության միակ վայր, եթե դրա մեկնարկային գինը ցածր է 4.900.000 ՀՀ դրամից: Մինևնույն ժամանակ բռնագանձում չի կարող տարածվել ֆիզիկական անձ պարտապանին պատկանող միակ այն բնակարանի **բաժնեմասի** վրա, որի մեկնարկային գինը ցածր է **4.900.000 ՀՀ դրամի** և **նրա միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալի գումարից**: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ եթե ֆիզիկական անձ պարտապանի միակ բնակարանը իրացվում է 4.900.000 ՀՀ դրամը գերազանցող գումարով կամ ֆիզիկական անձ պարտապանի միակ բնակարանի բաժնեմասը իրացվում է 4.900.000 ՀՀ դրամի և բաժնեմասի արտադրյալը կազմող գումարը գերազանցող գումարով, ապա պարտապանի

միակ բնակարանի կամ պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի իրացման համար ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված նվազագույն գումարը վերադարձվում է պարտապանին, իսկ գումարի մնացած մասն ուղղվում է պահանջների բավարարմանը:

Սույն գործի փաստերի համաձայն Դատարանի վճռով Ժիրայր Մարգարյանը ճանաչվել է սնանկ: Այնուհետև Դատարանը հաստատել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որի համաձայն՝ Բանկի պահանջը՝ 2.533.851,70 ՀՀ դրամի չափով, գրանցվել է որպես չապահովված պահանջ՝ «է» հերթում: Պարտապանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, քաղաք Արտաշատ, Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող բնակարանը «Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից կատարված փորձաքննության հիման վրա գնահատվել է 8.276.000 ՀՀ դրամ, ընդ որում պարտապանի ¼ բաժնեմասը նշված անշարժ գույքում կազմել է 2.069.000 ՀՀ դրամ: Ժիրայր Մարգարյանի կողմից ներկայացվել է բողոք (դիմում), որով վերջինս խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել քաղաք Արտաշատ, Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքի Ժիրայր Մարգարյանին պատկանող բաժնեմասի օտարմանն ուղղված Կառավարչի գործողությունները և արգելել բաժնեմասի վաճառքը:

Դատարանը, մերժելով Պարտապանի բողոքը (դիմումը), պատճառաբանել է, որ իրացման ոչ ենթակա գույքի ցանկը սահմանված է Օրենքով, մասնավորապես, Օրենքի 95-րդ հոդվածում: Իսկ ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի իրացման համար սահմանված նվազագույն գումարի չափը հիմք է հանդիսանում միայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի՝ քաղաքացի-պարտապանին պատկանող միակ բնակարանի վրա բռնագանձում չտարածելու համար:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Պարտապանի վերաքննիչ բողոքը, վերացրել է Դատարանի 30.03.2018 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը և ոչ իրավաչափ է ճանաչել Կառավարչի՝ պարտապանին պատկանող միակ բնակարանն օտարելու ուղղությամբ իրականացվող գործողությունները: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանելու մասին» թիվ 808-Ն որոշումը, կազմելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մասը, հավասարապես կիրառելի են սնանկության վարույթում՝ հաշվի առնելով, որ Օրենքի 96-րդ հոդվածը հղում է կատարում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ տվյալ դեպքում Կառավարչի կողմից վաճառքի է հանվել Պարտապանին պատկանող միակ բնակարանը, որը հանդիսանում է վերջինիս մշտական բնակության միակ վայրը, որի մեկնարկային գինը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից՝ 4.900.000 ՀՀ դրամից (սույն դեպքում Պարտապանի բաժնեմասի արժեքը կազմում է 2.069.000 ՀՀ դրամ): Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ տվյալ դեպքում Կառավարչին օրենքի ուժով իրավունք չունի սնանկության վարույթով օտարել Պարտապանին համասեփականության իրավունքով պատկանող միակ բնակարանը, ուստի Կառավարչի գործողությունները պետք է համարել ոչ իրավաչափ:

Վերը շարադրված վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավա-ցիորեն գտել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումները, որպիսի հիմքով և ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար

սահմանելու մասին» թիվ 808-Ն որոշումը կիրառելի են սնանկության վարույթում՝ հաշվի առնելով, որ Օրենքի 96-րդ հոդվածը հղում է կատարում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն իրողությունը, որ տվյալ դեպքում Կառավարչի կողմից վաճառքի է հանվել ոչ թե ամբողջ բնակարանը, այլ բնակարանի՝ Պարտապանին պատկանող բաժնեմասը: Հետևաբար սույն վեճի համար էական նշանակություն ունի այն փաստի պարզումը, թե արդյոք Պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի արժեքը պակաս է 4.900.000 ՀՀ դրամի և այդ բնակարանում Պարտապանի բաժնեմասի արտադրյալից:

Այսպես՝ սույն գործի նյութերից հետևում է, որ Պարտապանի բաժինը քաղաք Արտաշատ, Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքում դրա ¼ մասն է, որը դրամային արտահայտությամբ կազմում է 2.069.000 ՀՀ դրամ (**հավելված գ.թ. 38**): Իսկ ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված՝ միակ բնակարանի նվազագույն արժեքի՝ 4.900.000 ՀՀ դրամի, և ընդհանուր գույքում Պարտապանի բաժնեմասի՝ ¼-ի արտադրյալը կազմում է 1.225.000 ՀՀ դրամ ($4.900.000 \times \frac{1}{4} = 1.225.000$):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ընդհանուր գույքում Պարտապանի ունեցած բաժնեմասի արժեքը՝ 2.069.000 ՀՀ դրամը, ավելի մեծ է ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված՝ **միակ բնակարանի բաժնեմասի** նվազագույն արժեքից ($2.069.000 > 1.225.000$), ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում քաղաք Արտաշատ, Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքում Պարտապանին պատկանող բաժնեմասը ենթակա էր իրացման (օտարման), քանի որ այդ բաժնեմասի շուկայական արժեքն ավելի մեծ է, քան ՀՀ կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված՝ միակ բնակարանի բաժնեմասի նվազագույն արժեքը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաք Արտաշատ, Արարատյան 1-ին շենքի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքում Պարտապանին պատկանող բաժնեմասի օտարմանն ուղղված Կառավարչի գործողություններն իրավաչափ են, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ի վերջո, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ տվյալ դեպքում, ընդհանուր գույքի՝ պարտապանին պատկանող բաժինը 1.225.000 ՀՀ դրամից ($4.900.000 \times \frac{1}{4} = 1.225.000$) ավելի բարձր գնով իրացվելու դեպքում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ուժով 1.225.000 ՀՀ դրամը պետք է վերադարձնել Պարտապանին, իսկ մնացած գումարն ուղղել պահանջների բավարարմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելը և փոփոխելը բխում է

արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելով և փոփոխելով՝ դիմումը մերժելով, Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2018 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ Ժիրայր Մարգարյանի դիմումը՝ թիվ ԱՎԴ/0060/04/17 սնանկության գործով կառավարիչ Սամվել Մանուկյանի՝ պարտապանին պատկանող միակ բնակարանն օտարելու ուղղությամբ իրականացվող գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասին, մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ **ԵԷԴ/0057/04/15**
2020թ.

Մասնկության գործ թիվ

ԵԷԴ/0057/04/15

Նախագահող դատավոր՝

Ա. Սմբատյան

Դատավորներ՝

Ս. Միքայելյան

Հ. Ենոքյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի մայիսի 27-ին

գրավոր ընթացակարգով քննելով Երանուհի Ծովիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 07.12.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ Արա-
յիկ Սարգսյանի դիմումի ընդդեմ Երանուհի Ծովիկյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի
մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արայիկ Սարգսյանը պահանջել է Երանուհի Ծովիկյանին սնանկ
ճանաչել:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի 10.08.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի 16.10.2015 թվականի որոշմամբ հաստատվել է Երանուհի Ծովիկյանի սնան-
կության գործով պահանջների վերջնական ցուցակը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Ետյան) 24.06.2016 թվականի որոշմամբ Երանուհի Ծովիկյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահությամբ՝ Լ. Գրիգորյան, մասնակցությամբ՝ դատավորներ Ն. Բարսեղյան, Մ. Հարթենյան) 16.12.2016 թվականի որոշմամբ Երանուհի Ծովիկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2016 թվականի «Երանուհի Ծովիկյանի սնանկության գործով ֆինանսական առողջացման ծրագիրը քննության առնելու մասին» որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Ետյան) (այսուհետ՝ Դատարան) 26.05.2017 թվականի որոշմամբ Երանուհի Ծովիկյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.12.2017 թվականի որոշմամբ Երանուհի Ծովիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.05.2017 թվականի «Երանուհի Ծովիկյանի սնանկության գործով ֆինանսական առողջացման ծրագիրը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երանուհի Ծովիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 13-րդ, 61-րդ, 66-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 59-րդ, 60-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Երանուհի Ծովիկյանը 06.11.2015 թվականին Դատարան է ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր, որում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ներկայացվել է պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, իր վճարունակությունը վերականգնելու համար նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման կարգն ու ժամկետները, դրանց իրականացման արդյունքում իր գործունեությունը շարունակելու, պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման համար անհրաժեշտ կառավարչի և այլ ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը, ներկայացրել է նաև արժանահավատ փաստաթղթեր: Սակայն Դատարանն անտեսել է սնանկության գործընթացի գլխավոր նպատակը՝ անձին ֆինանսապես առողջացնելը և տնտեսական շրջանառության մեջ նրա վերադարձին նպաստելը:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս դադարեցնել ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքը, եթե այն չի ընթանում նախանշված պահանջներին համապատասխան, որպիսի պայմաններում ակնհայտ է, որ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատմամբ որևէ անձի վնաս չի պատճառվի: Ավելին, հարկ է նշել, որ ֆինանսական առողջացման ծրագիրն ապագայում կատարվելիք գործողությունների պլան է, որը կազմվում է պարտապահի ֆինանսական առողջացման և առկա պարտքերի մարման նպատակով, ուստի դրա իրագործման աստիճանի վերաբերյալ հաստատապես կարելի է եզրահանգումներ կատարել միայն առողջացման ծրագրի ավարտին, իսկ մինչ առողջացման ծրագրի մեկնարկը կարելի է եզրահանգումներ կատարել բացառապես դրա իրագործման վերաբերյալ ներկայացված փաստերի և ապացույցների արժանահավատության

վերաբերյալ, ուստի անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ ներկայացված ապացույցները բավարար չեն հաստատված համարելու այն հանգամանքը, որ դրանում նկարագրված բիզնեսն արդեն գործում է կամ դրա գործելու արդյունքում ինչ եկամուտներ են ստացվելու:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.12.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանի 10.08.2015 թվականի վճռով Երանուհի Ծովիկյանը ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին գ.թ. 32-34**):

2) Երանուհի Ծովիկյանը 06.11.2015 թվականին Դատարան է ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր, որում նշված է, որ իրականացվելիք ծրագրի շրջանակներում վճարումները սնանկության հատուկ հաշվին կկատարվեն յուրաքանչյուր ամսվա մեկին համաձայն ներկայացված ժամանակացույցի՝ ընդամենը՝ 64.687.993 ՀՀ դրամ: Ծրագրի գործողության սկիզբ է նշվել՝ 01.01.2016 թվականը, իսկ ավարտը՝ 01.12.2019 թվականը: Միջոցների բաշխումը պետք է կատարվի կառավարչի կողմից ներկայացվող բաշխման միջանկյալ ծրագրերի համաձայն՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ և 82-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Ֆինանսական առողջացման ծրագրին կից ներկայացվել է առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման պայմանագրի պատճենը, Աբրահամ Բալայանի անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի պատճենը, Երանուհի Ծովիկյանի և Հայկ Բալայանի ամուսնության վկայականի պատճենը, Աբրահամ Բալայանի ծննդյան վկայականի պատճենը, Երանուհի Ծովիկյանի անձնագրի պատճենը, Հայկ Բալայանի անձնագրի պատճենը (**հատոր 2-րդ, գ.թ. 15-26**):

3) Երանուհի Ծովիկյանը 12.02.2016 թվականին ներկայացրել է վերախմբագրված ֆինանսական առողջացման ծրագիրը՝ նշելով, որ իրացվելիք ծրագրի շրջանակներում վճարումները սնանկության հատուկ հաշվին կկատարվեն յուրաքանչյուր ամսվա մեկին սկսած 01.03.2016 թվականից՝ կից ներկայացվող հավելվածով սահմանված ժամանակացույցի համաձայն՝ ծրագրի գործողության սկիզբ սահմանելով 01.03.2016 թվականը, իսկ ավարտը՝ 01.02.2020 թվականը: Միջոցների բաշխումը պետք է կատարվի կառավարչի կողմից ներկայացվող բաշխման միջանկյալ ծրագրերի համաձայն՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ և 82-րդ հոդվածներով սահմանված կարգով (**հատոր 2-րդ, գ.թ. 56-61**):

4) Բանկը, որպես թիվ ԵԷԴ/0057/04/15 սնանկության գործով պարտատեր, 20.11.2015 թվականին ներկայացրել է Երանուհի Ծովիկյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն (**հատոր 2-րդ, գ.թ. 35-36**):

5) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 16.12.2016 թվականի որոշումով բեկանելով Դատարանի 24.06.2016 թվականի «Երանուհի Ծովիկյանի սնանկության գործով ֆինանսական առողջացման ծրագիրը քննության առնելու մասին» որոշումը, պատճառաբանել է, որ Դատարանի հետևությունն անհիմն է և գործում առկա ապացույցների թերի հետազոտման և ոչ պատշաճ գնահատման արդյունք է, քանի որ Երանուհի Ծովիկյանի կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը ներկայացվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների պահպանմամբ (**հատոր 3-րդ, գ.թ. 48-52**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

ստորադաս դատարանի կողմից «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի սխալ մեկնաբանելու և կիրառելու հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման փուլում պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված գործողությունները:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ միջոցառումները՝

- ա) պարտապանի ամբողջ գույքի կամ դրա մի մասի վաճառքը.
- բ) պարտապանի գույքը պարտատերերին հաշվանցով փոխանցելը.
- գ) պարտապանի գույքի գրավադրումը.

դ) շահութաբերություն չապահովող գործունեության դադարեցումը և ձեռնարկատիրական գործունեության ոլորտի փոփոխությունը.

- ե) անշահավետ գործարքների փոփոխումը կամ դադարեցումը.

զ) պարտքի վերականգնումը (պարտքի մարման ժամկետների հետաձգում, վերանակերպում, պարտավորությունների կատարումից ազատում).

- է) պարտքի փոխարինումը արժեթղթերով.
- ը) դերբիտորական պարտավորությունների բռնագանձումը.
- թ) նոր վարկի ստացումը.
- ժ) նոր ներդրումների իրականացումը.

- ժա) պարտապանի վերականգնակերպումը.
- ժբ) նոր բաժնետոմսերի թողարկումը կամ հետգնումը.

ժբ.1) պարտապան կազմակերպության մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրարեռնումը.

- ժգ) օրենքով չարգելված այլ միջոցառումներ:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել պարտապանը (...):

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի՝

ա) ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, այդ թվում՝ պահանջների բավարարման կարգը պարտապանին պատկանող անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքով.

բ) պարտապանին պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերանակերպելու կարգը և չափերը.

գ) պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար սույն օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման կարգն ու ժամկետները, դրանց իրականացման արդյունքում պարտապանի գործունեությունը շարունակելիս պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները, պարտապանին պատկանող գույքի վաճառքի դեպքում՝ վաճառվող գույքի կազմը.

դ) ֆինանսական առողջացման ծրագրի կատարման համար անհրաժեշտ՝ կառավարչի և այլ մասնագետների, պարտապանի ղեկավարի վարձատրության և վարչական ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում պարտապան իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթ սկսելու մասին (այսուհետ՝ պարտապանի լուծարում):

Մինչև 17.06.2016 թվականի թիվ ՀՕ-105-Ն փոփոխությունները գործող «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատարանը, եթե այն համապատասխանում է նույն օրենքով սահմանված պահանջներին: Ֆիզիկական անձի առողջացման ծրագրի առավելագույն ժամկետը չի կարող 4 տարուց ավելի լինել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձի առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից չի քվեարկվում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատիրոջ (պարտատերերի) կողմից կարող է վիճարկվել, եթե՝ ա) այն չի համապատասխանում նույն օրենքով սահմանված պահանջներին, բ) ծրագրի ժամկետը պակաս է 3 տարուց, և (որի արդյունքում) պարտատերերը իրենից պահանջների ամբողջական բավարարում չեն ստանում:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության վարույթում պարտապանի ֆինանսական առողջացումը սնանկության վարույթի առանցքային տարրերից է, որը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել իր բնականոն գործունեությունը՝ մինչև նույն ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը: Ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող՝ օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում:

Ֆինանսական առողջացման ծրագիրը սնանկության այնպիսի ընթացակարգ է, որը կիրառվում է պարտապանի նկատմամբ, նրա վճարունակությունը վերականգնելու և պահանջների մարման հերթականությանը համապատասխան պարտապանի պարտավորությունների մարման նպատակով: Ֆինանսական առողջացումը կարևոր օղակ է հանդիսանում սնանկության ընթացակարգերում, որոնք կիրառվում են սնանկ ճանաչված պարտապանների նկատմամբ: Եթե ֆինանսական առողջացման ընթացքում պարտապանի վճարունակությունը չի վերականգնվում և պարտատերերի պահանջները չեն բավարարվում, ապա պարտապանի նկատմամբ, դատարանի համապատասխան որոշմամբ, սկսվում է լուծարման գործընթաց: Այսպիսով, թե՛ ֆինանսական առողջացման, թե՛ լուծարման ընթացակարգերը նպատակ ունեն պարտատերերի պահանջների բավարարում ապահովել, ընդ որում առաջին դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են լրիվ ծավալով, իսկ երկրորդ դեպքում՝ մասնակիորեն՝ պահպանելով պահանջների բավարարման համամասնությունը:

Ֆինանսական առողջացման ընթացակարգի էությունը և նշանակությունն, ըստ էության, հանդիսանում է ոչ թե պարտապանի վճարունակության վերականգնումը, այլ այն հիմնականում նպատակ է հետապնդում ապահովել պարտատերերի պահանջների լրիվ բավարարում: Օրենսդիրը հնարավորություն է տալիս ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնողին օգտագործել օրենքով չարգելված ցանկացած միջոցառում (միջոցառումներ), որի արդյունքում պարտապանը կմարի իր դրամավճարային բոլոր պարտավորությունները և արդյունքում չի լուծարվի:

Սույն գործով Դատարանը, կրկին անգամ մերժելով Երանուհի Ծովիկյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը, պատճառաբանել է, որ պարտապան Երանուհի Ծովիկյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի իրագործմանն ուղղված որևէ հիմնավոր և պատշաճ ապացույց դատարան չի ներկայացվել: Իսկ ներկայացվածներով չի հիմնավորվել, որ այդ «Ընտանեկան բիզնես»-ն ունի և/կամ կարող է ունենալ բավարար ֆինանսական միջոցներ եկամուտներ, որը թույլ կտա կատարել ժամանակացույցով սահմանված բոլոր վճարումները: Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2016 թվականի որոշմամբ ըստ էության սահմանված ծավալին, այն է. «դատական նիստի շրջանակներում պահանջվող փաստերի շրջանակը պարտատերերի և Երանուհի Ծովիկյանի հետ քննարկելու դեպքում դատարանը կարող էր պարզել և վերջինիս հնարավորություն ընձեռել ներկայացնելու բոլոր հնարավոր ապացույցները», ապա Դատարանը նշել է, որ դատական նիստի ընթացքում քննարկվել են նշված հանգամանքները, ինչի արդյունքում հենց Երանուհի Ծովիկյանի ներկայացուցիչը հաստատել է, որ որևէ այլ ապացույց չունեն: Վերոգրյալի հիման վրա Դատարանը ֆինանսական առողջացման ծրագիրը համարել է ոչ իրատեսական ու արժանահավատ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Երանուհի Ծովիկյանի բողոքը, պատճառաբանել է, որ պարտապանը պարտավոր է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ներկայացնել իր կողմից ներկայացված ծրագրի իրագործմանն ուղղված բավարար ապացույցներ, մասնավորապես այն մասին, որ ծրագրում վկայակոչված բիզնեսի շնորհիվ կնևավորվեն բավարար միջոցներ նշված ժամանակացույցով վճարումներ կատարելու համար: Ինչ վերաբերում է ֆինանսական առողջացման ծրագրին կից ներկայացված փաստաթղթերին, այն է՝ վաճառակետի վարձակալության պայմանագրերին, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ դրանք ևս բավարար չեն հաստատված համարելու այն հանգամանքը, որ դրանում նկարագրված բիզնեսն արդեն գործում է կամ դրա գործելու արդյունքում ինչ եկամուտներ են ստացվել, ավելին, ներկայացված ժամանակացույցը ևս, բացի ենթադրությունների վրա հիմնված թվային տվյալներից որևէ կերպ չի հիմնավորվել, իսկ անձնագրերում առկա մուտքի և ելքի վերաբերյալ կնիքների առկայությունը չի նշանակում, որ դրանք կապված են պարտապանի առևտրային գործունեության հետ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը դա միջոցառումների համալիր է, որի իրականացման հետևանքով ակնկալվում է այնպիսի արդյունքի ստացում, որի շրջանակներում հնարավոր կլինի բավարարել պարտատերերի պահանջները: Ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է ունենալ իրականացման որոշակի հավանականություն, որի բարձր կամ ցածր լինելը պետք է որոշի դատարանը, հաշվի առնելով նաև պարտատերերի կողմից ներկայացված առարկությունները:

Սակայն սույն գործով Դատարանը, ըստ էության գնահատել է ոչ թե ֆինանսական առողջացման ծրագրի իրացվելիության հավանականությունը, այլ մինչև այդ ծրագրի հաստատումը պարտապանի կողմից առողջացման գործողություններ չկատարելը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի որոշումը ֆինանսական առողջացման ծրագիրը չհաստատելու մասին հիմնավորված չէ, իսկ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ չեն հերքում վերաքննիչ բողոքում բողոքաբերի ներկայացրած փաստարկները: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման հաջողության վերաբերյալ ապացույցները՝ ծրագրի հաստատման փուլում, գործնականորեն չեն կարող ներկայացվել և այդ կապակցությամբ է, որ օրենսդիրը նախատեսել է ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հնարավորություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի 07.12.2017 թվականի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի հիմքով 01.01.2019 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ սնանկության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել ՀՀ սնանկության դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.12.2017 թվականի որոշումը և գործը՝ պարտապան Երանուհի Ծովիկյանի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԵԿԴ/0287/04/15
2020թ.

Մասնկության գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ԵԿԴ/0287/04/15
Հ. Ենոքյան
Մ. Հարթեմյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի ապրիլի 30-ին
գրավոր ընթացակարգով քննելով Արաքսյա Բոժեվոլնովայի ներկայացուցիչ Կա-
րայետ Բադալյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
25.10.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Արաքսյա Բոժեվոլնովայի դիմումի ընդդեմ «Գլո-
բալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վերջինիս սնանկ ճանաչելու պա-
հանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

18.09.2015 թվականին դիմելով դատարան՝ Արաքսյա Բոժեվոլնովան պահանջել է Ըն-
կերությանը ճանաչել սնանկ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրա-
վասության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) 22.12.2015 թվականի վճռով դիմումը
բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Գ. Կա-
րայանյան, մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Խառատյան, Ս. Թորոսյան) 31.05.2016

թվականի որոշմամբ Ընկերության Հայաստանյան մասնաճյուղի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.12.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 17.04.2018 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2018 թվականի որոշմամբ Ընկերության Հայաստանյան մասնաճյուղի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 17.04.2018 թվականի վճիռը բեկանվել է, և սնանկության գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արաքսյա Բոժեվոլնովայի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է , որ սնանկության գործերը քաղաքացիական գործեր են, և դրանց քննությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը գործում է որպես հիմնական կարգավորող օրենք, իսկ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնները՝ միայն այն դեպքում, երբ դրանով այլ կանոններ են սահմանված:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սպառիչ սահմանում է, թե ով կարող է լինել սնանկության վարույթով պարտապան, և որոնք են բացառությունները, իսկ օտարերկրյա իրավաբանական անձինք բացառություն չեն կազմում, հետևաբար ընկնում են «ցանկացած իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ հասկացության ներքո»:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 17.04.2018 թվականի վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի 17.04.2018 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հատոր 3-րդ, գ.թ. 156-161**).

2) Վերաքննիչ դատարանի 25.10.2018 թվականի որոշմամբ Ընկերության Հայաստանյան մասնաճյուղի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 17.04.2018 թվականի վճիռը բեկանվել է, և սնանկության գործի վարույթը կարճվել է (**հատոր 4-րդ, գ.թ. 64-67**).

3) ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության պետի 05.11.2015 թվականի թիվ 3-2/2172-15 գրության համաձայն՝ ըստ պետական միասնական գրանցամատյանում 05.11.2005 թվականի դրությամբ առկա տեղեկությունների՝ Ընկերությունն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված չէ:

Լրացուցիչ տեղեկացվել է, որ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է «ԳԼՈՒԱԼ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ» Հայաստանյան մասնաճյուղը, որի հիմնադիրն է հանդիսանում «ԳԼՈՒԱԼ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ» օտարերկրյա կազմակերպությունը (**հատոր 1-ին, գ.թ. 85**).

4) Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման հիմնարկի հաշվառման թիվ 01Բ 001358 վկայականի համաձայն՝ «ԳԼՈՒԱԼ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ» Հայաստանի մասնաճյուղը հաշվառված է պետական ռեգիստրի Նորք-Մարաշ Տարածքային բաժնի կողմից (հաշվառման համարը՝ 273.060.03699), հիմնադիրն է «ԳԼՈՒԱԼ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ» ՄՊԸ-ն (**հատոր 1-ին, գ.թ. 52**).

5) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի արտոնագրված թարգմանիչ Գ.Սարյանի կողմից թարգմանված է ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ն.Սարգսյանի կողմից վավերացված (գրանցված է սեղանամատյանում 3254) թարգմանության պատճենի համաձայն՝ Ընկերությունը լուծարման ենթակա չէ, իսկ Դելավերի նահանգում գրանցված գրասենյակի հասցեն է՝ 2711, Սենթիբրվի Ռոուդ, գրասենյակ 400, քաղաք Վիլմինգտոն, ԴԵ19808 (**հատոր 1-ին, գ.թ. 59**):.

6) Ընկերության Հայաստանյան մասնաճյուղի ներկայացրած վերաքննիչ բողոքում Դատարանի վճիռը բողոքարկվել է, ի թիվս այլնի, նաև այն հիմքով, որ սույն գործը ենթակա չէ դատարանում քննության և բողոքաբերը գտել է, որ սնանկության գործի վարույթը պետք է կարճել (**հատոր 4-րդ, գ.թ. 9-34**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար: Բացի այդ, սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ սնանկության գործերը ենթակա են Հայաստանի Հանրապետության դատարանների քննությանը:

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառնությունները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ներկայացուցչությունները և մասնաճյուղերն իրավաբանական անձիք չեն ու գործում են իրավաբանական անձի հաստատված կանոնադրությունների հիման վրա: Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարները սնանկվում են իրավաբանական անձի կողմից ու գործում են նրա լիազորագրի հիման վրա:

Վերլուծելով նշված հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացուցչությունը չի հանդիսանում իրավաբանական անձ: Այն գործում է իրեն ստեղծող իրավաբանական անձի հաստատված կանոնադրության հիման վրա, իսկ նրա պարտավորություններով պատասխանատու է ստեղծող իրավաբանական անձը: Ներկայացուցչությունը, հանդիսանալով իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում, իրականացնում է վերջինիս գործառնությունները (ֆունկցիաները), կամ դրանց մի մասը, այն

վայրում, որտեղ տեղակայված է: Ներկայացուցչությունը հանդես է գալիս իրավաբանական անձի անունից և, ի թիվս այլ գործառույթների, պաշտպանում է նրա շահերը:

բ) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) ենթակայության և ընդդատության ինստիտուտներին վերաբերող իրավակարգավորումներին:

Այսպես, Նախկին օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Նախկին օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Նախկին օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին:

Ելնելով վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ենթակայությունը և ընդդատությունը ուղղված են գործը քննելու և լուծելու հարցում դատարանի լիազորությունները պարզելուն: Ենթակայությունը և ընդդատությունը թեև ունեն որոշակի նմանություններ, այնուամենայնիվ հանդիսանում են տարբեր ինստիտուտներ:

Մասնավորապես, անդրադառնալով ենթակայության ինստիտուտին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից է դատարանի մատչելիության իրավունքը, որի վարույթային երաշխիքներից է ենթակայության ինստիտուտը: Ենթակայությունն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումն օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր: Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից (յրեն *Գեղամուշ Հարությունյանի ընդդեմ Մարտին Մկրտչյանի թիվ ԱԲԳ/4024/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև (յրեն *«Վեսար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0823/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

գ) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սնանկության գործերով դատավարական նորմերի կիրառմանը.

Օրենսդիրը սնանկության գործընթացը կարգավորող որոշակի դատավարական նորմեր, որոնք առնչվում են սնանկության գործով դատավարության բոլոր փուլերին՝ սկսած սնանկության դիմում ներկայացնելուց մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացնելը, ընդգրկել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքում:

Մինչույն ժամանակ, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սահմանելով վերը նշված դրույթը, շեշտադրել է այն, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ կանոններ, քան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով են սահմանված, նախատեսված լինելու դեպքում կիրառվում են մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքում զետեղված դատավարական նորմերը: Օրենքի նման կարգավորումից հետևում է, որ այն դատավարական իրավահարաբերությունները, որոնք կարգավորված չեն մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով պետք է կարգավորվեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոններով:

դ) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ ունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ սնանկության վեճերի քննման հնարավորությանը:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես պարտապան՝ օտարերկրյա կամ քաղաքացիություն չունեցող անձի մասնակցությամբ անվճարունակության (սնանկության) հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենքի դրույթները, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ամրագրել է Հայաստանի Հանրապետության դատարաններում օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության վեճերի քննման հնարավորությունը, այսինքն՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության վեճերի ենթակայությունը:

Ավելին, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, բացառությամբ՝

- ա) Հայաստանի Հանրապետության.
- բ) համայնքի.
- գ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի.
- դ) բանկի.
- ե) վարկային կազմակերպության.
- զ) ներդրումային ընկերության.
- զ1.) ներդրումային ֆոնդի կառավարչի.
- է) ապահովագրական ընկերության.

ը) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամի:

Փաստորեն, օտարերկրյա իրավաբանական անձը մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բացառություններում ընդգրկված չէ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով օտարերկրյա իրավաբանական անձանց սնանկության հետ կապված գործերով ընդդատության կանոններ սահմանված չեն, ուստի նշված հարցը պարզելու համար մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է անդրադառնալ քաղաքացիադատավարական նորմերին:

Այսպես, Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններն օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերը քննում են, եթե պատասխանողն ունի բնակության վայր կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն նաև քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե օտարերկրյա անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Նախկին օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ Մասնկության դատարանը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից:

Նույն հոդվածի 21-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը սնանկության գործերը շարունակում են վարել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում սնանկության մասնագիտացված դատավորները:

Վերլուծելով վերոգրյալ իրավադրույթները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատարանները կարող են քննել այն քաղաքացիական գործերը, որոնցով կողմ հանդիսացող օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ տարածքում ունի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն:

Անդրադառնալով «քաղաքացիական գործեր» եզրույթին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, սահմանելով մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում սնանկության գործերի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննելու կանոն, չի ամրագրել որևէ դրույթ այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավանորմերի՝ սնանկության գործերի նկատմամբ կիրառման դեպքում պետք է տարբերակել և մատնանշել տվյալ նորմի՝ սնանկության գործով կիրառման ենթակա լինելու հնարավորությունը: Այլ կերպ ասած, անկախ այն հանգամանքից, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ամրագրել է «քաղաքացիական» գործերի վարման կարգ, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով դրա կանոններն ամբողջությամբ կիրառելի են սնանկության գործերի նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության դատարանները կարող են քննել օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիական՝ այդ թվում սնանկության գործեր, եթե օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ սնանկության գործերը՝ վերոնշյալ հոդվածների և «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի ուժով 01.01.2019 թվականից ընդդատյա են ՀՀ սնանկության դատարանին, իսկ մինչև 01.01.2019 թվականը ընդդատյա են եղել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը և կարճել է գործի վարույթը Հայաստանի Հանրապետության դատարաններին ենթակա չլինելու հիմքով՝ պատճառաբանելով, որ ՀՀ դատարանները կարող են քննել այն քաղաքացիական գործերը, որոնցով կողմ հանդիսացող օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ տարածքում ունի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն: Ըստ Վերաքննիչ դատարանի որոշման՝ նշված կարգը սահմանված է միայն քաղաքացիական գործերի քննման համար, սակայն այն սնանկության գործերի քննման վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակում, ինչից ելնելով՝ եզրահանգել է, որ սնանկության գործերը ՀՀ դատարանների կողմից քննվել չեն կարող, անգամ այն պարագայում, երբ վերջիններս ՀՀ տարածքում ունեն ներկայացուցչություն կամ մասնաճյուղ:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Սույն գործով պարտապան Ընկերությունը օտարերկրյա կազմակերպություն է, իսկ նրա մասնաճյուղը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշ տարածքային բաժնի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ կարգ սահմանված չլինելու պայմաններում, սույն գործի ենթակայության և ընդդատության հարցը պետք է պարզել՝ ղեկավարվելով քաղաքացիադատավարական նորմերով, տվյալ դեպքում՝ Նախկին օրենսգրքով:

Այսպես, ելնելով վերոգրյալ իրավական վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օտարերկրյա իրավաբանական անձի, տվյալ դեպքում Ընկերության մասնակցությամբ սնանկության գործը Հայաստանի Հանրապետության դատարաններում քննելու համար առկա է անհրաժեշտ պայմանը, այն է՝ Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում ունի գրանցված մասնաճյուղ, ինչը նշանակում է, որ Ընկերության մասնակցությամբ սնանկության գործը ենթակա է Հայաստանի Հանրապետության դատարանների քննությանը:

Նկատի ունենալով, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության գործերի ընդդատության կարգ չի սահմանել, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարության նորմերն ամբողջությամբ կիրառելի են սնանկության գործերի նկատմամբ: Ուստի, հաշվի առնելով այն, որ Արաքսյա Բոժեվոլնովան Ընկերությանը սնանկ ճանաչելու դիմումը ներկայացրել է 18.09.2015 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն սնանկության գործն ընդդատյա է եղել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Այսպիսով, Արաքսյա Բոժեվոլնովայի վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, գործը Հայաստանի Հանրապետության դատարաններին ենթակա չլինելու հիմքով բավարարելով Ընկերության Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցչի կողմից բերված վերաքննիչ բողոքը, բեկանելով Դատարանի վճիռը և կարճելով սնանկության գործի վարույթը, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության ընթացքում Ընկերության Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին ու հիմնավորումներին անդրադառնալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ սույն որոշմամբ նշված ծավալով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/2035/02/15
Քաղաքացիական գործ թիվ	ԵՄԴ/2035/02/15
Նախագահող դատավոր՝	Տ. Նազարյան
Դատավորներ՝	Ա. Պետրոսյան Ն. Բարսեղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2020 թվականի մայիսի 15-ին գրավոր ընթացակարգով քննելով Հենրիխ Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Հենրիխ Կարապետյանի, Մարինե Բալասանյանի, Հայկ Արմեն, Հրայր Գայանե, Լիանա և Ռուբեն Կարապետյանների՝ պատասխանողներին ք. Երևան, Բաբաջանյան փողոցի թիվ 108/1 հասցեում գտնվող բնակելի տնից վտարելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարանական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Հենրիխ Կարապետյանին, Մարինե Բալասանյանին, Հայկ Արմեն, Հրայր Գայանե, Լիանա և Ռուբեն Կարապետյաններին վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Երևան, Բաբաջանյան փողոցի թիվ 108/1 հասցեում գտնվող բնակելի տնից:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 15.02.2017 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ Դատարան) 08.06.2017 թվականի որոշմամբ Հենրիխ Կարապետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.02.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հենրիխ Կարապետյանը: Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտնող և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 220.4-րդ հոդվածի 2-րդ մասը, 219-րդ և 220-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Դատարանը չի կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չի ուսումնասիրել պատասխանողների իրավունքներն անշարժ գույքի նկատմամբ, չի պարզել նրանցից ովքեր ունեն գրանցված իրավունքներ տան նկատմամբ, իսկ ովքեր ուղղակի հաշվառված են: Նշված հանգամանքները պարզեցրելուց հետո միայն Դատարանը կարող էր հիմնավորված եզրահանգումներ կատարել բնակելի տան նկատմամբ վերջիններիս իրավունքների դադարման հիմքերի առկայության կամ բացակայության և հետևաբար նաև պատասխանողներից յուրաքանչյուրի մասով վտարման իրավաչափության և հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Նշված հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից, որը հանգեցրել է դատական ակտի հիմնավորվածության և օրինականության սկզբունքի խախտման:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքաբերի այն փաստարկներին, որ Դատարանը թույլ է տվել դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության սկզբունքի խախտում, պատշաճ չի հիմնավորել դատական ակտը, ինչպես նաև չի հիմնավորել թե կողմի ներկայացրած միջնորդությունները և ապացույցները ինչու են մերժվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել վերաքննիչ բողոքում նշված այն հիմքին, որ սույն գործով կայացված վճիռը ստորագրված չէ դատավոր Ա. Մկրտչյանի կողմից, ինչը հիմք է դատական ակտը բեկանելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

1. Վերաքննիչ բողոքում որպես բողոքը վարույթ ընդունելու հիմք և հիմնավորում նշվել է այն հանգամանքը, որ Նախկին օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ դատական ակտը ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից: Տվյալ դեպքում թիվ ԵՄԴ/2035/02/15 քաղաքացիական գործով կայացված վճիռը ստորագրված չէ դատավորի կողմից, իսկ «Ա. Մկրտչյան» շտամպի առկայությունը չի կարող նույնականացվել ստորագրության հետ և հավաստել վճիռը դատավորի կողմից ստորագրված լինելու հանգամանքը (**հատոր 4-րդ, գ.թ. 6-10**):

4. Վճռաբեկ դատարանի պարզապես անհիմնությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 220-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական

սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատական ակտը դատավորի կողմից ստորագրելու օրենսդրական պահանջի բովանդակության բացահայտմանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (յրեն Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (յրեն Մուսաննա Արարարի Միդդլսեյքսի ընդդեմ Մուսաննա Միրանի Միդդլսեյքսի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճռի յուրաքանչյուր էջը ստորագրում և կնքում է վճիռը կայացրած դատավորը:

Նախկին օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նախկին օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ դատական ակտը ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավորի կողմից դատական ակտը պատշաճ չստորագրելու իրավական հետևանքներին:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանդումների համակցված վերլուծությանը, հարկ է համարում արձանագրել, որ դատարանի վճռի յուրաքանչյուր էջը ստորագրում և կնքում է վճիռը կայացրած դատավորը: Դատավորի կողմից դատական ակտը պատշաճ կարգով չստորագրելու հանգամանքը պետք է վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսանա:

Վճռի անվերապահ բեկանման հիմքերի ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք:

Նախկին օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված մյուս խախտումները ևս վերաբերում են Կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված արդարադատության սկզբունքներին (օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարան, դատարանի օրինական կազմ, լաված լինելու իրավունք, դատավարության լեզու և այլն), ուստի դրանց առկայությունը կամակա՞ծի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը: Վերադաս ատյանի կողմից նման խախտումների արձանագրումը ipso facto հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ չկիրառման վերաբերյալ հիմքերի հիմնավոր լինելուց:

Նախկին օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործին մասնակցող անձանց համար երաշխավորված՝ դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքը դրսևորվում է նաև դատական ակտը բողոքարկելու իրավունքով և դրա իրացման ընթացակարգով, որը կոչված է վերացնելու ստորադաս դատարանում թույլ տրված և բողոք բերող անձի իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալը:

Նախկին օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Նախկին օրենսգրքի 220-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի՝ եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին՝

ա. արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում,

բ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ,

գ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է,

դ. բողոքը հիմնավոր լինելու դեպքում արդյո՞ք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա, թե՞ ոչ՝ պատճառաբանելով համապատասխան եզրահանգումը.

Վկայակոչված հոդվածներից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը կաշկանդված է բողոքում նշված հիմքերով և հիմնավորումներով և չի կարող դուրս գալ դրանց շրջանակից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ (*տե՛ս Համայնակ Ոսկանյանն ընդդեմ Վրոյոյա Հակոբյանի թիվ ԵԷԿ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Դատարանի դատավոր Ա. Մկրտչյանը 15.02.2017 թվականի վճռով պատասխանողներ՝ Հենրիխ Կարապետյանին, Մարինե Բալասանյանին, Հայկ Արմեն, Հրայր Կարապետյաններին, Գայանե Կարապետյանին, Լիանա և Ռուբեն Գևորգի Կարապետյաններին վտարել է Բանկին սեփականության իրավունքով պատկանող, քաղաք Երևան, Բաբաջանյան թիվ 108/1 հասցեում գտնվող բնակելի տնից:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Հենրիխ Կարապետյանի բողոքը, պատճառաբանել է, որ բողոքաբերը որևէ կերպ չի հիմնավորել վերաքննիչ բողոքում իր կողմից վկայակոչված այն հանգամանքը, թե բողոքարկվող դատական ակտը չի կայացվել, կազմվել և ստորագրվել անձամբ դատավոր Ա. Մկրտչյանի կողմից: Նման պայմաններում չի հիմնավորվում բողոքարկվող դատական ակտի ձևը ՀՀ օրենսդրության կամ դատավորի վարքագծի որևէ կանոնին հակասելու պնդումը, հատկապես այն պայմաններում, երբ բողոքաբերն իր դիրքորոշումը որևէ նյութական կամ դատավարական իրավունքի նորմով չի հիմնավորել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա նյութերից երևում է, որ Դատարանի 15.02.2017 թվականի վճիռը ոչ թե ստորագրված է, այլ դատական ակտի յուրաքանչյուր էջի վրա առկա է «Ա. Մկրտչյան» գրաֆիկական պատկերով (ֆաքսիմիլ) դրոշմակնիքը:

Սույն գործով բարձրացված իրավական հարցին պատասխան տալու համար անհրաժեշտ է բացահայտել «ստորագրություն» եզրույթի ստուգաբանական բովանդակությունը:

Այսպես՝ ըստ Էդուարդ Աղայանի բացատրական բառարանի «ստորագրություն» է՝ անուն-ազգանվան կամ դրանց կրճատումով կազմվող տառերի յուրահատուկ գրային-գծագրական ինքնագիրը, անուն-ազգանուն կամ կեղծանունը, որը մեկը դնում է իր գրածների տակ⁷: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ «ստորագրություն» է համարվում որևէ բանի տակ սեփական ձեռքով գրված անուն-ազգանունը⁸:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ ստորագրությունը դա անձի անվան, մականվան կամ այլ բառերի, նշանների ձեռագիր պատկերումն է (ինքնագիր), որի միջոցով տվյալ անձը հաստատում է իր ինքնությունը, միաժամանակ այլ անձանց հնարավորություն է ընձեռում նույնականացնել ստորագրողի անձը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատական ակտը դատավորի կողմից ստորագրված լինելու վերաբերյալ դատավարական օրենքի պահանջն ինքնանպատակ չէ: Այդ պահանջը պայմանավորված է դատավորի՝ արդարադատության առաքելության իրականացման սահմանադրական և միջազգային իրավունքի նորմերով ամրագրված մի շարք հանրաճանաչ սկզբունքներով, որոնցից մեկն էլ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պայմանների ապահովումն է:

Այսինքն՝ դատական ակտը կայացնում է այն դատավորը, որը ՀՀ Սահմանադրությամբ և դատավարական օրենքին համապատասխան հանդես է գալիս որպես դատարան:

Մինչդեռ դատավորի ստորագրությունը դրոշմի տեսքով դնելը կամ դրա արտատպումը (բացառությամբ էլեկտրոնային ստորագրության և նույնականացման օրենքով թույլատրված այլ միջոցների կիրառման) չի կարող համարվել դատական ակտը դատավորի կողմից ստորագրված լինելու հանգամանք:

Նշված պատճառաբանությամբ էլ Վերաքննիչ դատարանի կողմից վճռի բեկանման անվերապահ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում պետք է կիրառվեր դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը: Սակայն Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել առաջին ատյանի դատարանի դատական ակտը դատավորի անվամբ դրոշմակնիքի միջոցով հաստատելու հանգամանքը, որը չի կարող հավասարեցվել դատավորի կողմից դատական ակտը ստորագրելուն:

Այսպիսով, Հենրիխ Կարապետյանի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 08.06.2017 թվականի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ 25.01.2018 թվականից Երևան քաղաքում գործում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

⁷ Տե՛ս «Արդի հայերենի բացատրական բառարան», Էդուարդ Բագրատի Աղայան (1976):

⁸ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հրաչյա Աճառյանի ինվան Լեզվի ինստիտուտ (1969):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության, գտնում է, որ դատական ծախսերի այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2017 թվականի որոշմամբ հետաձգված վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
 դատարանի որոշում.

Վարչական գործ թիվ **ՎԴ/7809/05/16**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/7809/05/16**
 Նախագահող դատավոր՝ **Ք. Մկոյան**
 Դատավորներ՝ **Ա. Աբովյան**
Ա. Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան), հետևյալ կազմով՝

*Նախագահող
 զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴԻՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
 դռնբաց դատական նիստում քննելով Հարություն Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
 վարչական վերաքննիչ դատարանի 21.02.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հա-
 րություն Սարգսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»
 ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 19.09.2016 թվականի թիվ 1605073157 որոշումն
 անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հարություն Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայու-
 թյան 19.09.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1605073157 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 31.01.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 21.02.2018 թվականի որոշմամբ Հարություն Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարա-
 նի 31.01.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հարություն Սարգսյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածը, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայրնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի սուկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորի արարքը չի կարող դիտվել վարչական իրավախախտում և չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ խաչմերուկն այնքան անհարմար էր գծանշված, որ հնարավոր չէր այդ գիծը չհատել: Այսինքն վիճարկվող վարչական ակտով արձանագրված արարքի կատարման պահին Երևան քաղաքի Բաղրամյան և Օրբելի փողոցների խաչմերուկի հատվածում թիվ 1.1 գծանշման պահանջը պահպանելը հնարավոր չէր: Նշված հանգամանքն ընդունել է նաև Ծառայությունը՝ հետագայում այդ գծանշումը մի քանի մետրով հետ տանելով:

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների ճիշտ գնահատում: Հետևաբար Հարություն Սարգսյանը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ խաչմերուկում թիվ 1.1 գիծը հատելու համար, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.02.2018 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 19.09.2016 թվականի թիվ 1605073157 որոշմամբ Հարություն Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՄՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 29.08.2016 թվականին՝ ժամը 09:57-ին, Երևան քաղաքի Բաղրամյան և Օրբելի փողոցների խաչմերուկի հատվածում չի պահպանել թիվ 1.1 գծանշման պահանջը (գ.թ. 7).

2) Ծառայության պետի 21.10.2016 թվականի թիվ 17-4-22463 որոշմամբ Ծառայության 19.09.2016 թվականի թիվ 1605073157 որոշման դեմ Հարություն Սարգսյանի վարչական բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ որոշումը՝ անփոփոխ (գ.թ. 11):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի 4-րդ

հողվածի «ա» կետի մեկնաբանությունն առերևույթ հակասում է թիվ ՎԳ/5620/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, ինչպես նաև առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ճանապարհային գծանշման պահանջների՝ րեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար վարչական պարտախանսարկության հարցի լուծումը կարող է արդյոք պայմանավորվել արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջները ողջամտորեն պահպանելու հնարավորության հանգամանքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վերոհիշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելու համար: Ընդ որում, նշված զանցանքների համար օրենսդիրը որպես վարչական տույժի միջոց է ընտրել տուգանքը՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

«Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 08.02.2006 թվականին) 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ նույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերը (...) պարտավորվում են միջոցներ ձեռք առնել, որպեսզի իրենց տարածքում տեղակայված ճանապարհային նշանները և ազդանշանները, լուսային ճանապարհային ազդանշանները և ճանապարհների գծանշումը կազմեն միասնական համակարգ և պատրաստվեն ու տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի դրանք հեշտությամբ ընկալել:

Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող վերոգրյալ միջազգային պայմանագրի վկայակոչված իրավադրույթը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային գծանշումները պետք է կատարվեն այնպես, որ ճանապարհային երթևեկության մասնակիցները հեշտությամբ դրանք ընկալելու հնարավորություն ունենան: Այլ կերպ ասած՝ ճանապարհային գծանշումների պահանջները պետք է ողջամտորեն ընկալելի լինեն ճանապարհային երթևեկության մասնակիցներին, ինչն էլ հանդիսանում է այդ պահանջների կատարման անհրաժեշտ նախադրյալը: Փաստորեն, ճանապարհային գծանշումները՝ որպես ճանապարհային երթևեկությունը կարգավորող կարևոր միջոցներ, պետք է օժտված լինեն ընկալելիության և կատարելիության բավարար մակարդակով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ճանապարհային գծանշման պահանջները պահպանելու համար սահմանված պատասխանատվության կիրառման պայմաններին, արձանագրել է, որ այն դեպքում, երբ ճանապարհային գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել բնականոն երթևեկության պայմաններում, ապա երթևեկության մասնակիցը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ գծանշման պահանջները չկատարելու համար:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կարող են ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ գծանշման պահանջները հնարավոր է ողջամտորեն կատարել ճանապարհի տվյալ հատվածում: Այլ կերպ ասած՝ տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն

կրող սուբյեկտները չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը հատելու համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության, եթե այդ գիծը ճանապարհի տվյալ հատվածում և երթևեկության տվյալ պայմաններում ողջամտորեն հնարավոր չէր չհատել (որեն ըստ հայցի Հարություն Սարգսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5620/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային գծանշման պահանջների՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար վարչական պատասխանատվության հարցի լուծումը պայմանավորված է արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջները ողջամտորեն պահպանելու հնարավորության հանգամանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածի 168-րդ կետի համաձայն՝ ճանապարհային գծանշումները կիրառվում են ինքնուրույն կամ ճանապարհային նշանների և լուսացույցների հետ միասին:

Նույն որոշման թիվ 1 հավելվածի 169-րդ կետի համաձայն՝ ճանապարհային գծանշումները բաժանվում են 2 խմբի՝ (1) հորիզոնական, (2) ուղղաձիգ, իսկ 170-րդ կետի համաձայն՝ հորիզոնական գծանշումը երթևեկելի մասի վրա գծեր, սլաքներ, գրառումներ և այլ նշումներ են ու սահմանում են երթևեկության որոշակի ռեժիմ և կարգ (...):

ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 2 Ձևի համաձայն՝ թիվ 1.1 հորիզոնական գծանշումը հոծ գիծ, որը բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գիծ), նշում ճանապարհի վտանգավոր վայրերում երթևեկության գոտիների սահմանները և ցույց տալիս երթևեկելի մասի սահմանները, ուր մուտքն արգելված է, ցույց է տալիս տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները: Թիվ 1.1 գիծը հատելն արգելվում է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վստահում է, որ թիվ 1.1 գիծը՝ որպես հորիզոնական գծանշում, սահմանում է երթևեկության որոշակի ռեժիմ և կարգ: Ընդ որում, տրանսպորտային միջոցների վարորդներին արգելված է հատել այդ հորիզոնական գիծը: Փաստորեն, տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նաև թիվ 1.1 գծանշման պահանջները չկատարելու, այսինքն՝ հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող և այլ գործառույթներ իրականացնող հոծ գիծը հատելու համար: Ընդ որում, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջը ողջամտորեն պահպանելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ այն դեպքում, երբ թիվ 1.1 գծանշման պահանջը չկատարելը հայտնաբերվել է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով, ապա տվյալ տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար պատասխանատվություն կրող սուբյեկտը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների

համապատասխանությունը կասկած չի հարուցում (*լրեն Աիրա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԲ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճարել դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճարել դատարանն ընդգծում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում թիվ 1.1 գծանշման պահանջները չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ ընդունելու իրավական նախադրյալներից մեկն այն է, որ տվյալ իրավիճակում թիվ 1.1 գծանշման պահանջը կատարելու օբյեկտիվ հնարավորությունը ողջամտորեն կասկած չի հարուցում: Այսինքն՝ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարի կամ տեսանյութի ուսումնասիրությունից չպետք է կասկած հարուցի նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում թիվ 1.1 գծանշման պահանջը ողջամտորեն հնարավոր էր կատարել:

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հարություն Սարգսյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 19.09.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1605073157 որոշումը: Նշված վարչական ակտով Հարություն Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով այն բանի համար, որ Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 29.08.2016 թվականին ժամը 09:57-ին, Երևան քաղաքի Բաղրամյան և Օրբելի փողոցների խաչմերուկի հատվածում չի պահպանել թիվ 1.1 գծանշման պահանջը:

Դատարանը մերժել է Հարություն Սարգսյանի հայցը՝ Ծառայության կողմից ներկայացված տեսանյութի ուսումնասիրությամբ հաստատված համարելով վիճարկվող վարչական ակտով Հարություն Սարգսյանին վերագրվող իրավախախտման փաստը և գտնելով, որ վերջինս իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության:

Վերաքննիչ դատարանը մերժել է Հարություն Սարգսյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի պատճանաբանությունների հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճարել դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ծառայության 19.09.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1605073157 որոշմամբ Հարություն Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Երևան քաղաքի Բաղրամյան և Օրբելի փողոցների խաչմերուկի հատվածում տրանսպորտային միջոցների երթևեկության հանդիպակաց ուղղություններն իրարից բաժանող թիվ 1.1 գծանշման պահանջը չկատարելու համար, և այդ արարքը հայտնաբերվել է տեսանկարահանող սարքի միջոցով:

Տվյալ դեպքում վարչական վարույթում ձեռք բերված տեսանյութի ուսումնասիրության արդյունքում Վճարել դատարանն արձանագրում է, որ դրանում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում: Ընդ որում, Վճարել դատարանի գնահատմամբ կասկած չի հարուցում նաև այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին՝ 29.08.2016 թվականին ժամը 09:57-ին, Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը ողջամտորեն կարող էր, ուստի պարտավոր էր կատարել Երևան քաղաքի Բաղրամյան և Օրբելի փողոցների խաչմերուկի հատվածում գտնվող թիվ 1.1 գծանշման պահանջը, ինչը, սակայն, չի կատարել:

Այսպիսով, Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտում նկարագրված իրավախախտման, այն է՝ ՀՀ կառավարության 28.06.2007

թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 2 Ձևի թիվ 1.1 գծանշման պահանջի խախտման համար վարչական պատասխանատվության կիրառումը բխում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերոգրյալ իրավանորմերի պահանջներից, ինչպես նաև համապատասխանում է թիվ ՎԴ/5620/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշմամբ «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետին տրված մեկնաբանությանը, ուստի այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են, որպիսի իրավաչափ հետևության հանգել են ստորադաս դատարանները:

Անփոփոխելի վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, մերժելով Հարույթուն Մարգարյանի հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Տվյալ դեպքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի մինչև 01.01.2020 թվականը գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի «թ» կետի հիմքով ազատված լինելով վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը վիճարկելու պահանջ ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից Հարույթուն Մարգարյանը սույն վճռաբեկ բողոքի համար պետական տուրք չի վճարել, ուստի պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.02.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ

Նախագահող դատավոր՝

Դատավորներ՝

ՎԴ/6661/05/15

Ա. Սարգսյան

Ա. Աբովյան

Ք. Մկոյան

Վարչական գործ թիվ ՎԴ/6661/05/15
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.12.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քրիստինա Գևորկյանի ընդդեմ Ծառայության՝ Ծառայության 31.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503545128 որոշումն (այսուհետ՝ նաև Որոշում) անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Քրիստինա Գևորկյանը պահանջել է անվավեր ճանաչել Որոշումը: ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Անի Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 24.11.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.12.2017 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 24.11.2016 թվականի վճիռը թողնելով է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 1-ին և 21-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Տվյալ դեպքում ստորադաս դատարաններն անտեսել են, որ հայցվորի կողմից թույլ տրված խախտումը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի դիպագիցիայում նշվածին, քանի որ նրա կողմից չի պահպանվել «Կանգառն արգելվում է» 3.27 ճանապարհային նշանի պահանջը:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 21-րդ մասով պատասխանատվություն է նախատեսված կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու համար, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորին վերագրվել է ճանապարհային նշանների պահանջների խախտում, որը չի կարող նույնացվել կանգառի և (կամ) կայանման կանոնների խախտման հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.12.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 31.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503545128 որոշմամբ Քրիստինա Գևորգյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «LAND ROVER» մակնիշի «23 US 603» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 14.08.2015 թվականին ժամը 18:24-ին Երևան քաղաքի Մաշտոց/Իսահակյան խաչմերուկի հատվածում չի կատարել ՀՀ կառավարության 2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը (գ.թ. 10):

2) Ծառայության պետի 25.09.2015 թվականի թիվ 17-4-18829 որոշմամբ Որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման (գ.թ. 15):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու

արարքի որակման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե Կանոնների 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին և 21-րդ մասերով նախատեսված իրավախախտումներից որի հարկանիշներն է պարունակում:

Կանոնների 1-ին կետի համաձայն՝ Կանոններով սահմանվում է ճանապարհային երթևեկության միասնական կարգ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ կարգավորելով (...) **կանգառ և կայանում**, (...) իրականացնելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև **երթևեկությունը կարգավորող նշանները**:

Կանոնների «ԿԱՆԳԱՌԸ ԵՎ ԿԱՅԱՆՈՒՄԸ» վերտառությամբ IX բաժնի 78-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը թույլատրվում է ճանապարհի աջ մասում՝ մայթի մոտ կամ կողակից, դրանց բացակայության դեպքում՝ երթևեկելի մասի եզրին: Կանոնների 81-րդ կետով նախատեսված դեպքում կայանումը թույլատրվում է նաև մայթեզրին:

Կանոնների 79-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում, երթևեկելի մասի ձախ կողմում կանգառ ու կայանում թույլատրվում է՝

1) յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի ունեցող, մեջտեղում տրամվայի գծեր չունեցող ճանապարհներին:

2) միակողմ երթևեկության ճանապարհներին (3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին թույլատրվում է միայն կանգառ՝ բեռնելու կամ բեռնաթափելու, ինչպես նաև ուղևորի նստելու կամ իջնելու համար):

Կանոնների 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին գուգահետ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի (երթևեկելի մասի տեղային լայնացում), որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցները դասավորման այլ ձևեր: Առանց կողային կցորդի երկանիվ տրանսպորտային միջոցները թույլատրվում է կանգնեցնել երկու շարքով:

Կանոնների 81-րդ կետի համաձայն՝ երթևեկելի մասին սահմանակից մայթեզրին կայանման նպատակով կանգնեցնել թույլատրվում է միայն թեթև մարդատար ավտոմոբիլները, մոտոցիկլները, մոպեդները և հեծանիվները՝ 6.4՝ «Կայանման տեղ» նշանի և 8.6.2, 8.6.3, 8.6.6-8.6.9՝ «Տրանսպորտային միջոցի կանգնեցման ձևը կայանման տեղերում» ցուցանակներից որևէ մեկի առկայության դեպքում:

Կանոնների 82-րդ կետի համաձայն՝ բնակավայրերից դուրս երկարատև հանգստի, գիշերակացի և այլ նպատակներով կայանել թույլատրվում է միայն դրանց համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարհի սահմաններից դուրս:

Կանոնների իրավափոփոխության ծագման պահին գործող խմբագրությամբ 84-րդ կետի համաձայն՝ կանգառն արգելվում է՝

1) մայթերին, բացառությամբ 61-րդ կետում նշված դեպքերի, ինչպես նաև տրամվայի գծերի վրա և անմիջապես դրանց մոտ, եթե դա խոչընդոտում է տրամվայների երթևեկությունը:

2) երկաթուղային գծանցների վրա, թունելներում, ինչպես նաև էստակադների, կամուրջների, ուղեկամուրջների վրա և դրանց տակ:

3) այն վայրերում, որտեղ կանգնած տրանսպորտային միջոցի և հոծ գծի (բացառությամբ երթևեկելի մասի եզրը ցույց տվող) կամ բաժանարար գոտու կամ երթևեկելի մասի հակառակ կողմի եզրի կամ որևէ արգելքի միջև տարածությունը 3 մ պակաս է:

4) հետիոտնային անցումների վրա և երթևեկելի մասի հետ հետիոտնային անցումների շփման եզրերից (դեպի երթևեկելի մասեր) 5 մ պակաս վայրում:

5) երթևեկելի մասի վրա՝ ճանապարհի այն վտանգավոր շրջադարձերին և երկայնական պրոֆիլի ուռուցիկ բեկվածքներին մոտիկ, որտեղ ճանապարհի տեսանելիությունը թեկուզ մեկ ուղղությամբ պակաս է 100 մ-ից:

6) խաչմերուկներում, երթևեկելի մասերի հատման վրա և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում՝ բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա (շարունակություն չունեցող կողմի դիմաց)։

7) 1.17 գծանշմամբ նշված ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերից կամ, այդ գծանշման բացակայության դեպքում, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կամ տաքսիների կայանման տեղերի ցուցիչներից 15 մ մոտ։

8) այն վայրում, որտեղ տրանսպորտային միջոցը թույլ չի տա երթևեկության մասնակիցներին տեսնելու լուսացույցի ազդանշանները, ճանապարհային նշանները կամ որևէ այլ կերպ կսահմանափակի տեսանելիությունը մյուս տրանսպորտային միջոցների վարորդների ու հետիոտների համար։

Կանոնների 85-րդ կետի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառն արգելվում է նաև ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերի տարածքից դուրս՝ բացառությամբ հարկադրված կանգառի դեպքերի։

Կանոնների 86-րդ կետի համաձայն՝ կայանումն արգելվում է՝

1) կանգառն արգելված վայրում։

2) քնակավայրերից դուրս՝ 2.1. «Գլխավոր ճանապարհ» ճանապարհային նշանով նշված ճանապարհների երթևեկելի մասի վրա։

3) երկաթուղային գծանցներին 50 մ-ից մոտ։

Միևնույն ժամանակ, Կանոնների XXI բաժնով նախատեսվել են նաև ճանապարհային նշանները և գծանշումները։ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կանոնների 167-րդ կետով սահմանված են նաև արգելող նշանները, որոնք, ըստ թիվ 955-Ն որոշման հավելված 1-ի Ձև 1-ի, բնորոշվում են որպես երթևեկության որոշակի սահմանափակումներ մտցնող կամ վերացնող նշաններ։ Դրանցից է նաև 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը, որով արգելվում են տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը։

Վերը նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կանոններով հստակ սահմանվել են այն վայրերը, որտեղ թույլատրվում և արգելվում են կանգառը և (կամ) կայանումը։ Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ դեպքերում կարող է անհրաժեշտություն առաջանալ Կանոններով ուղղակիորեն չարգելված վայրերում բացառել տրանսպորտային միջոցների կանգառը և (կամ) կայանումը, Կանոններով սահմանվել է հնարավորություն ճանապարհային նշանների, այդ թվում՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի, և գծանշումների կիրառմամբ արգելել կանգառն այն վայրերում, որտեղ կանգառ և (կամ) կայանում կատարելու արգելք Կանոններով նախատեսված չէ։

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թե՛ կանգառի և կայանման կանոններով, թե՛ ճանապարհային նշաններով, այդ թվում՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանով, և գծանշումներով սահմանված՝ որոշակի վայրում կանգառի և (կամ) կայանման արգելքի չպահպանումն առաջացնում է վարչական պատասխանատվություն։

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից **ճանապարհային նշանների** կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով։

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից **կանգառի և (կամ) կայանման կանոնները** խախտելը, եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական

վիճակի հետ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վկայակոչված իրավանորմների բովանդակությունից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը վարչական պատասխանատվություն է սահմանում ճանապարհային նշանների կամ գծանշումների պահանջները չկատարելու համար, որոնք սահմանված են թիվ 955-Ն որոշման հավելված 1-ի Ձև 1-ի և Ձև 2-ի դրույթներով, մինչդեռ նույն հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 21-րդ մասը վարչական պատասխանատվություն է սահմանում կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու համար, որոնք սահմանված են Կանոնների 78-86-րդ կետերով: Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վարորդը չի ենթարկվել ճանապարհային նշանների (այդ թվում՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի) կամ գծանշումների պահանջներին, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 21-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել, երբ վարորդը խախտել է կանգառի և (կամ) կայանման կանոնները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ կանգառի և (կամ) կայանման կանոններն իրավական նորմեր են, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտով (թիվ 955-Ն որոշում) անորոշ թվով անձանց համար սահմանված վարքագծի պարտադիր կանոններ, որոնց պահանջները չկատարելու հետևանքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված պատասխանատվություն կիրառելն է, մինչդեռ Կանոնների 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը ոչ թե կանգառի և (կամ) կայանման կանոն (իրավական նորմ) է, այլ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այլ ձևի վարչական ակտ, որի պահանջը չկատարելը պարունակում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշները, ուստի, վարչական պատասխանատվություն է առաջացնում հենց այդ մասի համաձայն:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Քրիստինա Գևորկյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Որոշումը: Նշված վարչական ակտով Քրիստինա Գևորկյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «LAND ROVER» մակնիշի «23 US 603» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 14.08.2015 թվականին ժամը 18:24-ին, Երևան քաղաքի Մաշտոց/Իսահակյան խաչմերուկի հատվածում չի կատարել թիվ 955-Ն որոշմամբ սահմանված 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը:

Դատարանը բավարարել է Քրիստինա Գևորկյանի հայցը հետևյալ պատճառաբանություններով. նախ, Դատարանը գտել է, որ 12.08.2016 թվականին Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված գրությամբ հաստատվում է այն փաստը, որ Երևան քաղաքի Մաշտոց/Իսահակյան խաչմերուկի հատվածը 14.08.2015 թվականին ժամը 18:24-ին հանդիսացել է վճարովի ավտոկայանատեղի կարմիր գծանշմամբ, և որ 14.08.2015 թվականի դրությամբ Երևան քաղաքի Մաշտոց/Իսահակյան խաչմերուկի հատվածում առկա են եղել երկու իրարամերժ վարչական ակտեր՝ «կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի և «կանգառը թույլատրվում է՝ տեղական տուրքի վճարման պայմաններում» գետնանշման տեսքով: Դատարանի վճռի համաձայն՝ տվյալ պարագայում Քրիստինա Գևորկյանի կողմից կանգառի կատարումը չէր կարող գնահատվել որպես ճանապարհային

երթնեկության կանոնի խախտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավասար իրավաբանական ուժ ունեցող մեկ այլ վարչական ակտով կանգառի կատարումը նույն վայրում հաստատվել էր որպես թույլատրելի և իրավաչափ վարքագիծ:

Բացի այդ, Դատարանն արձանագրել է, որ «3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չպահպանելը չի համապատասխանում օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները կանոնները խախտելու հատկանիշին: Նշված արարքն առավել համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի հատկանիշներին»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ծառայության վերաքննիչ բողոքը, անփոփոխ է թողել Դատարանի 24.11.2016 թվականի վճիռը՝ հիմնավոր համարելով Դատարանի եզրահանգումն առ այն, որ «վարչական մարմինը ենթադրյալ իրավախախտման համար սխալ հիմք է կիրառել: (...) 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չպահպանելը չի համապատասխանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները կանոնները խախտելու հատկանիշին»:

Մինչնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ 12.08.2016 թվականին Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված գրությունն իր բովանդակությամբ ընդհանրական բնույթի է, և դրանով որևէ կերպ չի հաստատվում այն հանգամանքը, որ հայցվորի վարած տրանսպորտային միջոցի կայանման վայրը ևս գծանշված է վճարովի ավտոկայանատեղիի համար սահմանված գծանշմամբ: Ուստի, Վերաքննիչ դատարանը թեպետ այդ առումով Ծառայության բողոքը հիմնավոր է համարել, սակայն արձանագրել է, որ այն չի կարող հիմք հանդիսանալ բողոքարկվող դատական ակտը բեկանելու համար:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Քրիստինա Գևորգյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը: Ստորադաս դատարանների կողմից Ծառայության Որոշման անվավեր ճանաչման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չպահպանելը չի համապատասխանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջների կանոնները խախտելու հատկանիշին:

Մինչդեռ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Որոշումն իրավաչափ է, քանի որ Երևան քաղաքի Մաշտոց/Իսահակյան խաչմերուկի այն հատվածում, որտեղ կատարվել է Քրիստինա Գևորգյանին վերագրվող իրավախախտումը, տեղադրված է 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը, և տվյալ տարածքում կանգառի արգելման հիմք է հանդիսանում հենց վերոնշյալ նշանը, այլ ոչ թե Կանոնների 78-86-րդ կետերը, ինչը նշանակում է, որ Քրիստինա Գևորգյանին վերագրվող իրավախախտումը կատարելու, այն է՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու պարագայում, այդ արարքը պարունակում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներ, հետևաբար իրավախախտումը կատարած անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ

հողվածի հենց 1-ին մասի համաձայն: Այսինքն՝ Ծառայությունը, Քրիստինա Գևորգյանին վերագրվող արարքը որակելով որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի ոչ թե 21-րդ, այլ 1-ին մասով նախատեսված իրավախախտում, գործել է իրավաչափորեն, որպիսի հանգամանքը վերը նշված իրավանորմերի սխալ մեկնաբանման արդյունքում անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշում, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն (որեն Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության

«Ճանապարհային ուսրիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով
 ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Հաշվի առնելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վճռաբեկ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայրը ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման և փոփոխման արդյունքում մերժվում է վճռաբեկ դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից:

Հաշվի առնելով, որ Քրիստինա Գևորկյանը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է սույն գործով դատարանի դիմելու համար սահմանված պետական տուրքից, նրա կողմից ներկայացված հայրը ենթակա է մերժման, իսկ սույն գործով վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար Օտարայության կողմից վճարված օրենքով սահմանված չափով պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը չի կարող դրվել Քրիստինա Գևորկյանի վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.12.2017 թվականի որոշումը և այն փոփոխել: Քրիստինա Գևորկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ 31.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503545128 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
 ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/7748/05/18**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/7748/05/18**
Նախագահող դատավոր՝ **Ա. Սարգսյան**
Դատավորներ՝ **Ա. Առաքելյան**
Ք. Մկոյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում քննելով Վարդան Մկրտչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Վարդան
Մկրտչյանի հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանա-
պարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ որոշումն անվա-
վեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծա-
ռայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը, ինչպես նաև Ծառայությունից
բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես գործի քննության հետ կապված այլ ծախսի հա-
տուցման գումար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան)
23.11.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2019 թվականի որոշմամբ Վարդան Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդան Մկրտչյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքով.

Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ նորմատիվ իրավական ակտի միարժեք կիրառության համար.

Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պարզապես ցուցաբերում է հետևյալ հիմնավորումներով.

Բողոքում բարձրացված այն հարցի վերաբերյալ, թե կարո՞ղ է անձը վարչական պատասխանատվության ենթարկվել այն նշանի պահանջը չկատարելու համար, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Բացի այդ, ՀՀ վարչական դատարանի կողմից 04.05.2018 թվականին թիվ ՎԴ/2302/05/18, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.07.2019 թվականին թիվ ՎԴ/8394/05/18, 07.11.2019 թվականին թիվ ՎԴ/3146/05/18 և 08.11.2019 թվականին թիվ ՎԴ/5135/05/18 վարչական գործերով կայացված դատական ակտերում սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքում վկայակոչված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում 1) կիրառվել են Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշման մեջ սույն նորմերին տրված մեկնաբանությամբ հակասող մեկնաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ փոփոխել այն՝ հայրը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վարդան Մկրտչյանը, 05.05.2018 թվականին վարելով «BMW» մակնիշի 35AX162 պետհամարանիշի ավտոմեքենան, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայով իջնելիս սույն պողոտա-երգնկյան փողոց խաչմերուկում ձախ շրջադարձ է կատարել դեպի Վ. Համբարձումյան փողոց: Այդ վայրում տեղադրված «ճանապարհային նշան»-ի վրա պատկերված է երթևեկության երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել հետադարձ, մեջտեղի գոտում՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ երթևեկել ուղիղ կամ կատարել աջ շրջադարձ (**գ.թ. 5 և 17**).

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարդան Մկրտչյանի նկատմամբ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ խախտել է Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը՝ երթևեկել է այդ նշանով տվյալ գոտու համար չթույլատրված ուղղությամբ (**գ.թ. 5**).

3) Ծառայության պետի 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշմամբ Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1808064915, **1808059112**, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումները թողնվել են անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման (**գ.թ. 6**).

4) ՀՀ վարչական դատարանի կողմից 04.05.2018 թվականին թիվ ՎԴ/2302/05/18 վարչական գործով կայացված՝ օրինական ուժի մեջ մտած վճռում, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.07.2019 թվականին թիվ ՎԴ/8394/05/18, 07.11.2019 թվականին թիվ ՎԴ/3146/05/18 և 08.11.2019 թվականին թիվ ՎԴ/5135/05/18 վարչական գործերով կայացված՝ օրինական ուժի մեջ մտած որոշումներում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և **Որոշում 1-ը, ըստ էության**, կիրառվել են նաև այն մեկնաբանությամբ, որ համապատասխան ճանապարհային նշանը, որի պահանջը վարորդը չի կատարել, Որոշում 1-ով հաստատված չէ, չի համապատասխանում այդ որոշմանը, հետևաբար, այդ նշանի պահանջը չկատարելը չի կարող հանգեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության առաջացմանը, իսկ այդ նշանի պահանջը չկատարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը ոչ իրավաչափ է և ենթակա է անվավեր ճանաչման (**հիմք՝ «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգ**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործերով ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում (ՀՀ վարչական դատարանի կողմից 04.05.2018 թվականին թիվ ՎԴ/2302/05/18, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.07.2019 թվականին թիվ ՎԴ/8394/05/18, 07.11.2019 թվականին թիվ ՎԴ/3146/05/18 և 08.11.2019 թվականին թիվ ՎԴ/5135/05/18 վարչական գործերով կայացված դատական ակտեր) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և **Որոշում 1-ը** կիրառվել են հակասող մեկնաբանությամբ: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում տրանսպորտային միջոցների վարորդներին ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերագրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք տրանսպորտային միջոցի վարորդը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել վարչական պարասխանատվության ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ ճանապարհային նշանի պարկերը հասարակված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Որոշում 1-ի 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով»,

5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

Որոշում 1-ի 167-րդ կետի համաձայն՝ ճանապարհային նշանները բաժանվում են 8 խմբի՝

- 1) նախագգուշացնող.
- 2) առավելության.
- 3) արգելող.
- 4) թելադրող.
- 5) հատուկ թելադրանքի.
- 6) տեղեկատվության.
- 7) սպասարկման.
- 8) լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ):

Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5-րդ կետի համաձայն՝ հատուկ թելադրանքի նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ:

Նույն Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. կետի համաձայն՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները դրանցից յուրաքանչյուրով: Այդ նշանի պատկերը հետևյալն է՝ նշանի վրա պատկերված է երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտում՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ:

ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցների և ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) հաստատված «Ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները» Հավելված 3-ի 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներին, բնակավայրերի փողոցներում (այսուհետ՝ ճանապարհներ) կիրառվում են նշանների հետևյալ խմբերը՝

- ա) նախագգուշացնող,
- բ) առավելության,
- գ) արգելող,
- դ) թելադրող,
- ե) հատուկ թելադրանքի,
- զ) տեղեկատվական,
- է) սպասարկման,
- ը) լրացուցիչ տեղեկատվության նշաններ (ցուցանակներ):

Նույն Հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ (...) Նշանների մեջ փոփոխությունների կատարման դեպքում դրանք չպետք է փոխեն նշանների հիմնական բնութագրերը: Նշանների խմբերի, նշանների վրա պատկերների, պարամետրերի փոփոխությունները, նշանների թվի ավելացման և այլ ազդանշանների փոփոխությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վերը նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից՝ մի դեպքում, ամբողջ հոդվածների, իսկ մյուս դեպքում, ամբողջ բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտերի դրույթներից ելնելով, նաև ի կատարումն որոնց ընդունվել են Որոշում 1-ը և Որոշում 2-ը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի կատարած արարքը վարչական իրավախախտում համարելու և նրան Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման է, որ նա կատարած չլինի տվյալ դեպքում ճանապարհային նշանի պահանջը: Ընդ որում,

ՀՀ կառավարությունը սպառիչ սահմանել է այդ ճանապարհային նշանների ցանկը՝ դրա մեջ ներառելով նաև հատուկ թելադրանքի ճանապարհային նշանների խումբը, որոնց միջոցով մտցվում կամ վերացվում են երթևեկության որոշակի ռեժիմներ: Այդ խմբին է դասվում նաև «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը, որի միջոցով նշվում են գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով: Այսպես՝ այդ նշանի վրա պատկերված է երթևեկության երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, իսկ այժմ եզրային գոտուց՝ կատարել այժմ շրջադարձ: Ավելին՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով՝ դրանց առկայության դեպքում: Այսպես՝ որպեսզի տրանսպորտային միջոցի վարորդի կատարած արարքը համարվի «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի խախտում և նա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվի վարչական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ նա կատարած չլինի հենց 5.15.1 «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանի պահանջները: Ավելին՝ չի թույլատրվում նշանների մեջ այնպիսի փոփոխությունների կատարումը, որոնք փոխում են նշանների հիմնական բնութագրերը, իսկ նշանների խմբերի, նշանների վրա պատկերների, պարամետրերի փոփոխությունները, նշանների թվի ավելացման և այլ ազդանշանների փոփոխությունները պետք է հաստատվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Վճարակ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարդան Մկրտչյանը, 05.05.2018 թվականին վարելով «BMW» մակնիշի 35A X162 պետհամարանիշի ավտոմեքենան, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայով իջնելիս նույն պողոտա-Երզնկյան փողոց խաչմերուկում ձախ շրջադարձ է կատարել դեպի Վ. Համբարձումյան փողոց: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարդան Մկրտչյանի նկատմամբ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշմամբ նշանակվել է տուգանք 5.000 ՀՀ դրամի չափով այն բանի համար, որ խախտել է Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը՝ երթևեկել է այդ նշանով տվյալ գոտու համար չթույլատրված ուղղությամբ:

Վարդան Մկրտչյանը, դիմելով դատարան, պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը:

Դատարանը, հետազոտելով գործում առկա տեսանյութերը և տեսանյութերից հանված լուսանկարը, արձանագրել է, որ «դրանցում առկա 5.15.1 ճանապարհային նշանի ձախ երթևեկելի գոտիով որպես երթևեկության թույլատրելի ուղղություն նշված է հետադարձ և դեպի ուղիղ ուղղությունները, մինչդեռ հայցվորի վարած տրանսպորտային միջոցը երթևեկել է դեպի ձախ, ուստի (...) «BMW» մակնիշի 35A X162 համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 05.05.2018 թվականին ժամը 17:58-ին ք. Երևան, Վ. Համբարձումյան /Երզնկյան/ Բաղրամյան խաչմերուկի հատվածում չի պահպանել Որոշում 1-ով սահմանված 5.15.1 «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի պահանջը», «հայցվորի գործողություններում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը», «Որոշում 1-ի 5.15.1 ճանապարհային նշանի բովանդակությունից՝ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները դրանցից յուրաքանչյուրով», բխում է, որ նշանի վրա կարող է նշվել երթևեկության ցանկացած ուղղություն այդ գոտիով», ու գտել է, որ առկա չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով որևէ հիմք թիվ 1808059112 որոշումն անվավեր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը Վարդան Մկրտչյանի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 23.11.2018 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերը նշված պատճառաբանությունները ու հավելելով, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ճանապարհային նշանները երթևեկության մասնակիցների կողմից ընկալվում են որպես երթևեկության կանոններին հակասող, ապա, միևնույն է, վերջիններս պարտավոր են ենթարկվել այդ ճանապարհային նշանի պահանջներին, բացի այդ, Երևան քաղաքի Վ. Համբարձումյան /Երզնկյան/ Բաղրամյան խաչմերուկի հատվածում տեղադրված երթևեկության ուղղություններ ցույց տվող ճանապարհային նշանի համապատասխանությունը Ռոշում 1-ի Հավելված 1-ի պահանջներին, չի վիճարկվել, ինչը ևս վկայում է այն մասին, որ այդ նշանի պահանջները ենթակա են եղել պարտադիր կատարման:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Գործում առկա ապացույցների հետազոտմամբ պարզվեց, որ վերը նշված վայրում տեղադրված «ճանապարհային նշան»-ի վրա, ի տարբերություն վերը նշված Ռոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի, որտեղ պատկերված է երեք գոտի, որոնցից **ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ**, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, **իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ**, այստեղ ևս պատկերված է երեք գոտի, սակայն **ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել հետադարձ**, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, **իսկ աջ եզրային գոտուց՝ երթևեկել ուղիղ կամ կատարել աջ շրջադարձ**: Այսինքն՝ Ռոշում 1-ով հաստատված Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի մեջ՝ հաստատվածի համեմատ, կատարվել է փոփոխություն, որով փոխվել է նշանի վրայի պատկերը, պարամետրը՝ առանց ՀՀ կառավարության կողմից հաստատման, որն անթույլատրելի է:

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանապարհային երթևեկության մասնակիցը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ճանապարհային երթևեկության կանոնները (...):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունը, Վարդան Մկրտչյանին վերագրելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից չհաստատված ճանապարհային երթևեկության կանոնների խախտում և նրան Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելով այդ «ճանապարհային նշան»-ի պահանջը չկատարելու համար, Վարդան Մկրտչյանի վրա դրել է օրենքով չնախատեսված պարտականություն, քանի որ վերջինս, որպես ճանապարհային երթևեկության մասնակից, ունի ճանապարհային երթևեկության այն կանոնները պահպանելու պարտականություն, որոնք հաստատված են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, այդ թվում նաև՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վարչական դատարան դիմելու իրավունք, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե իր վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն կամ վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմինն ընդունել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի և 124-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, որպիսի հանգամանքն այդ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչելու հիմք է, հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ անվավեր ճանաչման ենթակա չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհիմն է:

Հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշման անվավերությունն ինքնին հիմք է նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտը Ծառայության պետի «Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808064915, **1808059112**, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշումը մասնակի՝ թիվ 1808059112 որոշման մասով, անվավեր ճանաչելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն բողոքի քննությանը վճռաբեկ բողոքի հիմքը հասարակաց, որի պայմաններում նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և Որոշում 1-ն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմանը տրված մեկնաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսեր են՝ դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով այն, որ Վարդան Մկրտչյանն ինչպես սույն գործով հայցադիմումը, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ բողոքները ներկայացնելիս մինչև 01.01.2020 թվականը գործող խմբագրությամբ «Դեռական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է եղել պետական տուրքի վճարման

պարտականությունից և պետական տուրք չի վճարել ինչպես հայցադիմումը դատարան ներկայացնելու, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, հետևաբար հայցապահանջը բավարարվելու դեպքում Ծառայությունը *Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/1115/05/16 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համատեքստում չի կարող կրել ինչպես հայցադիմումի, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված, սակայն չվճարված պետական տուրքը պետությանը հատուցելու պարտականություն:

Նման պայմաններում սույն գործով հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարդան Մկրտչյանի (Պատվիրատու) և անհատ ձեռնարկատեր Միեր Հակոբյանի (Կատարող) միջև 13.07.2018 թվականին կնքված իրավախորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1, 1.2 և 2.1 կետերից հետևում է, որ Կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել իրավաբանական խորհրդատվական վճարովի ծառայություններ սույն գործով վիճարկվող վարչական ակտի բողոքարկման հարցերով, ինչը ներառում է խորհրդատվության իրականացում (15.000 ՀՀ դրամ), հայցադիմումի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի կազմում և Պատվիրատուի ստորագրությամբ ներկայացում (ևս 15.000 ՀՀ դրամ), որոշման բողոքարկում արտադատական և դատական կարգով (ևս 20.000 ՀՀ դրամ), այսինքն՝ ծառայության գինը կազմում է 50.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարությունում ներկայացուցչի միջոցով հանդես գալը, որպես կանոն, պարտադիր չէ, և դատավարության մասնակիցն իրավունք ունի դատավարական գործողությունները կատարելու նաև անձամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մաս):

Միաժամանակ, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հայցվորը, դատարանում ինքնուրույն հանդես գալու, դատավարական գործողություններն ինքնուրույն կատարելու նպատակով, իրավախորհրդատվական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքելով, օգտվել է այլ անձի մատուցած ծառայություններից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի կատարած (կատարելիք) ծախսը պետք է ճանաչել անհրաժեշտ ծախս, այն ներառել դատական ծախսերի կազմում և օրենքով սահմանված կարգով բաշխել դատավարության մասնակիցների միջև:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարդան Մկրտչյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ինչի արդյունքում բավարարվում է նաև նրա ներկայացրած հայցը, ուստի, Ծառայությունից հօգուտ Վարդան Մկրտչյանի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների համաձայն, ենթակա է բռնագանձման վճռաբեկ բողոք ներկայացրած անձ Վարդան Մկրտչյանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված գործի քննության հետ կապված այլ ծախսը: Ընդ որում, հատուցման չափը որոշելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշելու չափանիշներին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մևի Դավթյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության* թիվ ՎԳ/6377/05/15 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև վերը նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշումները վերաբերում են ներկայացուցչի վճարի ողջամիտ չափը որոշելուն, սակայն դրանք կարող են կիրառվել նաև այն դեպքում, երբ դատավարության մասնակիցն իր իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնում է ոչ թե ներկայացուցչական, այլ միայն իրավախորհրդատվական ծառայություններից օգտվելու միջոցով:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով սույն գործի բարդությունը, իրավախորհրդատուի կատարած աշխատանքի ծավալը (հայցադիմումի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների կազմում, ինչը հաստատվում է այդ դատավարական փաստաթղթերում առկա գրառումներով), Վարդան Մկրտչյանի և անհատ ձեռնարկատեր Միեր Հակոբյանի միջև 13.07.2018

թվականին կնքված իրավախորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված՝ իրավախորհրդատուին վճարման ենթակա գումարի չափի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված տուգանքի գումարի չափի հարաբերակցությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ ծախսի ողջամիտ չափը կարող է կազմել հենց պայմանագրում նշված 50.000 ՀՀ դրամը: Հետևաբար Ծառայությունից հոգուտ Վարդան Մկրտչյանի անհրաժեշտ է բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսի հատուցման գումար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Վարդան Մկրտչյանի հայցը բավարարել՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը և «Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808064915, 1808059112, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշումը մասնակի՝ թիվ 1808059112 որոշման մասով, ճանաչել անվավեր:

2. Պետական տուրքի բաշխման հարցը համարել լուծված:

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հոգուտ Վարդան Մկրտչյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսի հատուցման գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/7748/05/18 վարչական գործով
03.07.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 03.07.2020 թվականին քննելով Վարդան Մկրտչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Վարդան Մկրտչյանի հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Վարդան Մկրտչյանի հայցը բավարարել՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը և «Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808064915, 1808059112, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշումը մասնակի՝ թիվ 1808059112 որոշման մասով, ճանաչել անվավեր:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Երվանդ Խունդկարյան և Մամիկոն Դրմեյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմանը Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը, ինչպես նաև Ծառայությունից բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես գործի քննության հետ կապված այլ ծախսի հատուցման գումար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 23.11.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2019 թվականի որոշմամբ Վարդան Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդան Մկրտչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ նորմատիվ իրավական ակտի միարեսակ կիրառության համար.

Բողոք բերած անձը նշված հիմքի ստկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Բողոքում բարձրացված այն հարցի վերաբերյալ, թե կարո՞ղ է անձը վարչական պատասխանատվության ենթարկվել այն նշանի պահանջը չկատարելու համար, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Բացի այդ, ՀՀ վարչական դատարանի կողմից 04.05.2018 թվականին թիվ ՎԴ/2302/05/18, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.07.2019

թվականին թիվ ՎԴ/8394/05/18, 07.11.2019 թվականին թիվ ՎԴ/3146/05/18 և 08.11.2019 թվականին թիվ ՎԴ/5135/05/18 վարչական գործերով կայացված դատական ակտերում սույն գործով ներկայացված վճարքեկ բողոքում վկայակոչված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում 1) կիրառվել են Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշման մեջ նույն նորմերին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Որպես վճարքեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճարքեկ դատարանն արձանագրել է հետևյալը

1) Վարդան Մկրտչյանը, 05.05.2018 թվականին վարելով «BMW» մակնիշի 35AX162 պետհամարանիշի ավտոմեքենան, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայով իջնելիս նույն պողոտա-Երզնկյան փողոց խաչմերուկում ձախ շրջադարձ է կատարել դեպի Վ. Համբարձումյան փողոց: Այդ վայրում տեղադրված «ճանապարհային նշան»-ի վրա պատկերված է երթևեկության երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել հետադարձ, մեջտեղի գոտու մ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ երթևեկել ուղիղ կամ կատարել աջ շրջադարձ (**գ.թ. 5 և 17**).

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարդան Մկրտչյանի նկատմամբ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշմամբ նշանակվել է տուգանք 5.000 ՀՀ դրամի չափով այն բանի համար, որ խախտել է Որոշում 1-ի Հավելված 1-ի 2և 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը՝ երթևեկել է այդ նշանով տվյալ գոտու համար չթույլատրված ուղղությամբ (**գ.թ. 5**).

3) Ծառայության պետի 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշմամբ Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1808064915, **1808059112**, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումները թողնվել են անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման (**գ.թ. 6**).

4) ՀՀ վարչական դատարանի կողմից 04.05.2018 թվականին թիվ ՎԴ/2302/05/18 վարչական գործով կայացված՝ օրինական ուժի մեջ մտած վճռում, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.07.2019 թվականին թիվ ՎԴ/8394/05/18, 07.11.2019 թվականին թիվ ՎԴ/3146/05/18 և 08.11.2019 թվականին թիվ ՎԴ/5135/05/18 վարչական գործերով կայացված՝ օրինական ուժի մեջ մտած որոշումներում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և Որոշում 1-ը, ըստ էության, կիրառվել են նաև այն մեկնաբանությամբ, որ համապատասխան ճանապարհային նշանը, որի պահանջը վարորդը չի կատարել, Որոշում 1-ով հաստատված չէ, չի համապատասխանում այդ որոշմանը, հետևաբար այդ նշանի պահանջը չկատարելը չի կարող հանգեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության առաջացմանը, իսկ այդ նշանի պահանջը չկատարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը ոչ իրավաչափ է և ենթակա է անվավեր ճանաչման (**հիմք՝ «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգ**):

4. Վճարքեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարքեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճարքեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործերով ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում (ՀՀ վարչական դատարանի կողմից 04.05.2018 թվականին թիվ ՎԴ/2302/05/18, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.07.2019 թվականին թիվ ՎԴ/8394/05/18, 07.11.2019 թվականին թիվ ՎԴ/3146/05/18 և 08.11.2019 թվականին թիվ ՎԴ/5135/05/18 վարչական գործերով կայացված դատական ակտեր) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և Որոշում 1-ը կիրառվել են հակասող մեկնաբանությամբ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում տրանսպորտային միջոցների վարորդներին ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք տրանսպորտային միջոցի վարորդը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ ճանապարհային նշանի պատկերը հաստատված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Որոշում 1-ի 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռեյսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

Որոշում 1-ի 167-րդ կետի համաձայն՝ ճանապարհային նշանները բաժանվում են 8 խմբի՝

- 1) նախազգուշացնող.
- 2) առավելության.
- 3) արգելող.
- 4) թելադրող.
- 5) հատուկ թելադրանքի.
- 6) տեղեկատվության.
- 7) սպասարկման.
- 8) լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ):

Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5-րդ կետի համաձայն՝ հատուկ թելադրանքի նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ:

Նույն Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. կետի համաձայն՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները դրանցից

յուրաքանչյուրով: Այդ նշանի պատկերը հետևյալն է՝ նշանի վրա պատկերված է երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտում՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ:

ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) հաստատված «Ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները» Հավելված 3-ի 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներին, բնակավայրերի փողոցներում (այսուհետ՝ ճանապարհներ) կիրառվում են նշանների հետևյալ խմբերը՝

- ա) նախագգուշացնող,
- բ) առավելության,
- գ) արգելող,
- դ) թելադրող,
- ե) հատուկ թելադրանքի,
- զ) տեղեկատվական,
- է) սպասարկման,
- ը) լրացուցիչ տեղեկատվության նշաններ (ցուցանակներ):

Նույն Հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ (...) Նշանների մեջ փոփոխությունների կատարման դեպքում դրանք չպետք է փոխեն նշանների հիմնական բնութագրերը: Նշանների խմբերի, նշանների վրա պատկերների, պարամետրերի փոփոխությունները, նշանների թվի ավելացման և այլ ազդանշանների փոփոխությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վերը նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից՝ մի դեպքում, ամբողջ հոդվածների, իսկ մյուս դեպքում, ամբողջ բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտերի դրույթներից ելնելով, նաև ի կատարումն որոնց ընդունվել են Որոշում 1-ը և Որոշում 2-ը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի կատարած արարքը վարչական իրավախախտում համարելու և նրան Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման է, որ նա կատարած չլինի տվյալ դեպքում ճանապարհային նշանի պահանջը: Ընդ որում, ՀՀ կառավարությունը սպառիչ սահմանել է այդ ճանապարհային նշանների ցանկը՝ դրա մեջ ներառելով նաև հատուկ թելադրանքի ճանապարհային նշանների խումբը, որոնց միջոցով մտցվում կամ վերացվում են երթևեկության որոշակի ռեժիմներ: Այդ խմբին է դասվում նաև «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը, որի միջոցով նշվում են գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով: Այսպես՝ այդ նշանի վրա պատկերված է երթևեկության երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ: Ավելին՝ ոչ ռեյսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով, 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով՝ դրանց առկայության դեպքում: Այսպես՝ որպեսզի տրանսպորտային միջոցի վարորդի կատարած արարքը համարվի «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի խախտում և նա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվի վարչական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ նա կատարած չլինի հենց 5.15.1 «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանի պահանջները: Ավելին՝ չի թույլատրվում նշանների մեջ այնպիսի փոփոխությունների

կատարումը, որոնք փոխում են նշանների հիմնական բնութագրերը, իսկ նշանների խմբերի, նշանների վրա պատկերների, պարամետրերի փոփոխությունները, նշանների թվի ավելացման և այլ ազդանշանների փոփոխությունները պետք է հաստատվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարդան Մկրտչյանը, 05.05.2018 թվականին վարելով «BMW» մակնիշի 35AX162 պետհամարանիշի ավտոմեքենան, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայով իջնելիս նույն պողոտա-Երզնկյան փողոց խաչմերուկում ձախ շրջադարձ է կատարել դեպի Վ. Համբարձումյան փողոց: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարդան Մկրտչյանի նկատմամբ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշմամբ նշանակվել է տուգանք 5.000 ՀՀ դրամի չափով այն բանի համար, որ խախտել է Ռոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը՝ երթևեկել է այդ նշանով տվյալ գոտու համար չթույլատրված ուղղությամբ:

Վարդան Մկրտչյանը, դիմելով դատարան, պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը:

Դատարանը, հետազոտելով գործում առկա տեսանյութերը և տեսանյութերից հանված լուսանկարը, արձանագրել է, որ «դրանցում առկա 5.15.1 ճանապարհային նշանի ձախ երթևեկելի գոտիով որպես երթևեկության թույլատրելի ուղղություն նշված է հետադարձ և դեպի ուղիղ ուղղությունները, մինչդեռ հայցվորի վարած տրանսպորտային միջոցը երթևեկել է դեպի ձախ, ուստի (...) «BMW» մակնիշի 35AX162 համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 05.05.2018 թվականին ժամը 17:58-ին ք. Երևան, Վ. Համբարձումյան /Երզնկյան/ Բաղրամյան խաչմերուկի հատվածում չի պահպանել Ռոշում 1-ով սահմանված 5.15.1 «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի պահանջը», «հայցվորի գործողություններում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը», «Ռոշում 1-ի 5.15.1 ճանապարհային նշանի բովանդակությունից՝ *«5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով»*, բխում է, որ նշանի վրա կարող է նշվել երթևեկության ցանկացած ուղղություն այդ գոտիով», ու գտել է, որ առկա չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով որևէ հիմք թիվ 1808059112 որոշումն անվավեր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը Վարդան Մկրտչյանի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 23.11.2018 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերը նշված պատճառաբանությունները, ու հավելելով, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ճանապարհային նշանները երթևեկության մասնակիցների կողմից ընկալվում են որպես երթևեկության կանոնների հակասող, ապա, մինչնույն է՝ վերջիններս պարտավոր են ենթարկվել այդ ճանապարհային նշանի պահանջներին, բացի այդ, Երևան քաղաքի Վ. Համբարձումյան /Երզնկյան/ Բաղրամյան խաչմերուկի հատվածում տեղադրված երթևեկության ուղղություններ ցույց տվող ճանապարհային նշանի համապատասխանությունը Ռոշում 1-ի Հավելված 1-ի պահանջներին, չի վիճարկվել, ինչը ևս վկայում է այն մասին, որ այդ նշանի պահանջները ենթակա են եղել պարտադիր կատարման:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Գործում առկա ապացույցների հետազոտմամբ պարզվեց, որ վերը նշված վայրում տեղադրված «ճանապարհային նշան»-ի վրա, ի տարբերություն վերը նշված Ռոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի, որտեղ պատկերված է երեք գոտի, որոնցից **ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ**, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, **իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ**, այստեղ ևս պատկերված է երեք գոտի, սակայն **ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել հետադարձ**, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, **իսկ աջ եզրային գոտուց՝**

Երթևեկել ուղիղ կամ կատարել աջ շրջադարձ: Այսինքն՝ Որոշում 1-ով հաստատված Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի մեջ՝ հաստատվածի համեմատ, կատարվել է փոփոխություն, որով փոխվել է նշանի վրայի պատկերը, պարամետրը՝ առանց ՀՀ կառավարության կողմից հաստատման, որն անթույլատրելի է:

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանապարհային երթևեկության մասնակիցը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ճանապարհային երթևեկության կանոնները (...):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Ծառայությունը, Վարդան Մկրտչյանին վերագրելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից չհաստատված ճանապարհային երթևեկության կանոնների խախտում և նրան Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելով այդ «ճանապարհային նշան»-ի պահանջը չկատարելու համար, Վարդան Մկրտչյանի վրա դրել է օրենքով չնախատեսված պարտականություն, քանի որ վերջինս, որպես ճանապարհային երթևեկության մասնակից, ունի ճանապարհային երթևեկության այն կանոնները պահպանելու պարտականություն, որոնք հաստատված են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, այդ թվում՝ նաև՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վարչական դատարան դիմելու իրավունք, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե իր վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն կամ վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և նույն հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմինն ընդունել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի և 124-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, որպիսի հանգամանքն այդ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչելու հիմք է, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ անվավեր ճանաչման ենթակա չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհիմն է:

Հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշման անվավերությունն ինքնին հիմք է նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտը՝ Ծառայության պետի «Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808064915, **1808059112**, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումներն անփոփոխ,

իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշումը մասնակի՝ թիվ 1808059112 որոշման մասով, անվավեր ճանաչելու համար:

Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն բողոքի քննությանը վճռաբեկ բողոքի հիմքը հաստատվեց, որի պայմաններում նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը և Որոշում 1-ն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմամբ տրված մեկնաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարել է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Վարդան Մկրտչյանի հայցը բավարարել՝ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը և «Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808064915, 1808059112, 1808058546, 1808053826, 1808053177, 1808049543, 1808040552 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 20.06.2018 թվականի թիվ 17-13-63422-18/17-13-1907 որոշումը մասնակի՝ թիվ 1808059112 որոշման մասով, ճանաչել անվավեր:

5. Հարուկ կարծիքի պարճատարանությունները և եզրահանգումները

5.1. Գտնում ենք, որ սույն գործով անհրաժեշտ էր անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. *արդյո՞ք Կրանսպորտային միջոցի վարորդը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ոլորտի կառավարման գործիքներով» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե տեղադրված ճանապարհային նշանի վրա պատկերված երթևեկության ոլորտի կառավարման գույքի վրա պահանջների ոլորտի կառավարման փոփոխված են:*

5.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Որոշում 1-ի 167-րդ կետի համաձայն՝ ճանապարհային նշանները բաժանվում են 8 խմբի՝

- 1) նախազգուշացնող.
- 2) առավելության.
- 3) արգելող.
- 4) թելադրող.
- 5) հատուկ թելադրանքի.
- 6) տեղեկատվության.
- 7) սպասարկման.
- 8) լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ):

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ճանապարհային նշանների վերը նշված խմբերը սահմանված են նաև Որոշում 2-ով հաստատված «Ճանապարհային նշանների ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները» Հավելված 3-ի 5-րդ կետով:

Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5-րդ կետի համաձայն՝ հատուկ թելադրանքի նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ:

Նույն հավելվածի Ձև 1-ով սահմանված է նաև 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը, որը ցույց է տալիս գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով: Որոշում 1-ում այդ նշանը պատկերված է հետևյալ կերպ. նշանի վրա պատկերված է երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտում՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ:

Միևնույն ժամանակ, Որոշում 1-ի 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմանը և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

5.3. Վերոգրյալից հետևում է, որ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հաստատված համարել վերջինիս կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելու փաստը:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ճանապարհային նշանները սահմանված են Որոշում 1-ով: Մասնավորապես՝ նշված որոշմամբ հաստատված Հավելված 1-ում առանձնացվում են թվով 8 խումբ ճանապարհային նշաններ, այդ թվում՝ «Հատուկ թելադրանքի նշանները»: Վերջիններս մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ: Սպառիչ կերպով սահմանվում են հատուկ թելադրանքի նշանները, այդ թվում նաև՝ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանը, որը ցույց է տալիս գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով: Փաստորեն, 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանը կոչված է ճանապարհային երթևեկության մասնակիցներին ցույց տալու հետևյալը.

- *երթևեկության գոտիների թիվը,*

- *երթևեկության թույլատրելի ուղղությունները երթևեկության գոտիներից յուրաքանչյուրով:*

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությունը Որոշում 1-ով սահմանել է նաև ճանապարհային նշանների պատկերները: ՀՀ կառավարության կողմից ճանապարհային նշանների պատկերների սահմանումը կոչված է ապահովել դրանց ճանաչողական գործառնություն իրականացումը, քանի որ այդ պատկերների միջոցով է ճանապարհային երթևեկության մասնակիցը կարողանում ճանաչել տեղադրված ճանապարհային նշանը, ընկալել դրա բնույթը, կարգավորման առարկան և դրանով ներկայացվող պահանջը: 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը ՀՀ կառավարության կողմից պատկերվել է հետևյալ կերպ. նշանի վրա պատկերված է երեք գոտի, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել ձախ շրջադարձ, մեջտեղի գոտում՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ:

5.4. Գտնում ենք, որ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի վերը նկարագրված պատկերն ընդամենն օրինակ է, որը ճանապարհային երթևեկության մասնակիցներին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այդ նշանի ընդհանուր տեսքի, հիմնական բնութագրիչների վերաբերյալ: Սակայն ՀՀ կառավարության կողմից 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի միայն վերը նկարագրված պատկերի սահմանումը չի նշանակում, որ այդ նշանը ցանկացած պարագայում պետք է ունենա հենց այդ տեսքը, այսինքն՝ ցույց տա երեք գոտուց կազմված ճանապարհ, որոնցից ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել

ուղիղ կամ կատարել ձայն շրջադարձ, մեջտեղի գոտում՝ երթևեկել ուղիղ, իսկ աջ եզրային գոտուց՝ կատարել աջ շրջադարձ: Մեր կարծիքով՝ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանով կարող են սահմանվել նաև երթևեկության գոտիների այլ քանակ և (կամ) դրանցով երթևեկության այլ ուղղություններ: Նման դատողության հիմքում ընկած են երկու հիմնական փաստարկներ: Այսպես՝

5.5. Առաջին, Որոշում 2-ի 52.15-րդ կետի համաձայն՝ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» (...) նշանները կիրառվում են խաչմերուկում յուրաքանչյուր գոտիով երթևեկության թույլատրելի ուղղությունները նշելու համար, որտեղ պահանջվում է գոտիների օգտագործումն ապահովել տարբեր ուղղություններով տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությանը համապատասխան (...):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի կիրառումը պայմանավորված է երթևեկության գոտիների օգտագործումը տարբեր ուղղություններով տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությանը համապատասխան ապահովելու անհրաժեշտությամբ: Մինևոյն ժամանակ տարբեր ուղղություններով տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությունը բոլոր ճանապարհներին միատեսակ չէ: Դա նշանակում է, որ իրավասու մարմինը պետք է հնարավորություն ունենա ըստ անհրաժեշտության կիրառել 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը: Այսինքն՝ քննարկվող նշանի վրա սլաքների ուղղությունները պայմանավորված են համապատասխան երթևեկության գոտիներով երթևեկության ինտենսիվությամբ:

Երկրորդ, Որոշում 2-ի 52.15-րդ կետի համաձայն՝ (...) 5.15.1 նշանը բնակավայրերից դուրս խաչմերուկից առաջ տվյալ ուղղությամբ երթևեկության երեքից ոչ ավելի, բնակավայրերում՝ **ոչ ավելի, քան երկու գոտիներ ունեցող ճանապարհներին** թույլատրվում է տեղակայել ճանապարհի աջ կողմում (...):

Վերոգրյալից հետևում է, որ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը և դրա պատկերը սահմանած մարմինը՝ ՀՀ կառավարությունը, առնվազն թույլատրելի է համարել քննարկվող նշանը նաև բնակավայրերում երեքից պակաս գոտիներ ունեցող ճանապարհներին տեղակայելը՝ սահմանելով դրա կարգը (տեղակայման թույլատրելի վայրը): Նման պայմաններում (5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանը, օրինակ, երկու երթևեկության գոտի ունեցող ճանապարհին տեղակայելու դեպքում) օբյեկտիվորեն հնարավոր չէ ապահովել այդ նշանի կիրառումը հենց ՀՀ կառավարության կողմից սահմանած պատկերով, քանի որ այդ պատկերը նախատեսված է երթևեկության երեք գոտիների համար: Փաստորեն, ՀՀ կառավարությունը, սահմանելով 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանը և դրա պատկերը, այդ նշանի կիրառումը չի սահմանափակել միայն իր կողմից սահմանված պատկերով: Հետևաբար, 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանը սլաքների այլ ուղղություններով տեղադրելու հնարավորության բացառումը չի բխում նաև այն սահմանող մարմնի՝ ՀՀ կառավարության կամքից:

Այսպիսով, գտնում ենք, որ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի վրա պատկերված երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքների ուղղությունները կարող են չհամընկնել Որոշում 1-ով սահմանված՝ այդ նշանի պատկերում ներկայացված սլաքների ուղղություններին, և նման ճանապարհային նշանի պահանջը չկատարելու դեպքում ևս անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

5.6. Սույն հատուկ կարծիքով, վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև Որոշում 2-ի Հավելված 3-ի 7-րդ կետով սահմանված իրավակարգավորմանը, որն ըստ էության ընկած է Վճռաբեկ դատարանի դատողությունների հիմքում: Մասնավորապես՝ նշված իրավանորմի համաձայն՝ (...) նշանների մեջ փոփոխությունների կատարման դեպքում դրանք չպետք է փոխեն նշանների հիմնական

բնութագրերը: Նշանների խմբերի, նշանների վրա պատկերների, պարամետրերի փոփոխությունները, նշանների թվի ավելացման և այլ ազդանշանների փոփոխությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գտնում ենք, որ այս դրույթը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել ճանապարհային նշանների պատկերները ՀՀ կառավարության կողմից սահմանելու նպատակը: Ինչպես նշվեց, ճանապարհային նշանների պատկերները սահմանելու նպատակն է ապահովել ճանապարհային երթևեկության մասնակիցների կողմից երթևեկության ընթացքում ճանապարհային նշանի ճանաչումը: Այդ տեսանկյունից ՀՀ կառավարության կողմից պետք է հաստատման ենթակա լինեն նշանի պատկերում այնպիսի փոփոխությունները, որոնք վերաբերում են նշանի այն բնութագրերին, որոնց փոփոխությունը կարող է անձանց մոտ անորոշություն, շփոթ առաջացնել այդ նշանի բնույթի, դրա կարգավորման առարկայի, դրանով ներկայացվող պահանջի վերաբերյալ: Մինչդեռ սլաքներով սահմանված երթևեկության ուղղությունները չեն կարող համարվել Որոշում 1-ում պատկերված 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանի էական հատկանիշ, քանի որ ակնհայտ է, որ այդ նշանը կարող է օգտագործվել ոչ միայն երեք (ինչպես պատկերված է Որոշում 1-ում), այլև այլ թվով գոտիներ ունեցող ճանապարհների վրա երթևեկությունը կարգավորելու նպատակով: Բացի այդ, ինչպես նշվեց, դրանում պատկերված սլաքների ուղղությունները պայմանավորված են համապատասխան երթևեկության գոտիներով երթևեկության ինտենսիվությամբ: Ուստի, Որոշում 1-ում պատկերված 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանում երթևեկության ուղղությունները պայմանական բնույթ են կրում և ըստ անհրաժեշտության ենթակա են փոփոխման, ինչի համար ՀՀ կառավարության կողմից հաստատում չի պահանջվում:

Ավելին՝ Որոշում 1-ում առկա են նաև այլ նշանների խիստ որոշակիացված պատկերներ, օրինակ, 5.23.1. «Բնակավայրի սկիզբ» և 5.23.1. «Բնակավայրի վերջ» նշանների պատկերների վրա գրված է «Ապարան» բառը, 5.25 «Բնակավայրի սկիզբ» և 5.26. «Բնակավայրի վերջ» նշանների վրա՝ «Թալին» բառը և այլն:

Եթե վերը նշված նշանների՝ սահմանված պարկերները համարվում են այդ նշանների միակ թույլարժեի պարկերները, և դրանցում ցանկացած փոփոխություն ենթակա է հասարակական ՀՀ կառավարության կողմից, արացվում է՝ ՀՀ կառավարությունը պետք է հասարակ, օրինակ, 5.23.1. «Բնակավայրի սկիզբ» և 5.23.1. «Բնակավայրի վերջ» նշանները Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերի անվանումներով, քանի որ հակառակ դեպքում տեղադրվող նշանը չի համապատասխանի սահմանված նշանի հատկանիշներին:

Գտնում ենք, որ նման մտքեցումը խիստ մեխանիկական է և չի բխում ճանապարհային երթևեկության մասնակիցների կողմից երթևեկության ընթացքում ճանապարհային նշանի ճանաչումն ապահովելու՝ ճանապարհային նշանների պարկերները սահմանելու նպատակից: Կարծում ենք, որ ինչպես 5.23.1, 5.23.1, 5.25 և 5.26 նշանների պարկերներում նշված բնակավայրերի անվանումները, այնպես էլ 5.15.1 նշանի պարկերում արտացոլված սլաքների ուղղությունները պայմանական են և ըստ անհրաժեշտության կարող են փոփոխվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրակացնում ենք, որ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի պահանջի խախտում կարող է առկա լինել ոչ միայն այն դեպքում, երբ տեղադրված ճանապարհային նշանի (որի պահանջը չի կատարվել) պատկերը՝ դրա վրա ներկայացված սլաքների ուղղությունների տեսանկյունից, լիովին համապատասխանում է այդ նշանի՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված պատկերին, այլև այն դեպքում, երբ տեղադրված նշանի վրա պատկերված երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքների ուղղությունները փոփոխված են:

5.7. Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարդան Մկրտչյանը, 05.05.2018 թվականին վարելով «BMW» մակնիշի 35AX162 պետհամարանիշի ավտոմեքենան, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայով իջնելիս նույն պողոտա-Երզնկյան փողոց խաչմերուկում ձախ շրջադարձ է կատարել դեպի Վ. Համբարձումյան փողոց: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարդան

Մկրտչյանի նկատմամբ Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշմամբ նշանակվել է տուգանք 5.000 ՀՀ դրամի չափով այն բանի համար, որ խախտել է Որոշում 1-ի Հավելված 1-ի Ձև 1-ի 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը՝ երթևեկել է այդ նշանով տվյալ գոտու համար չչորսված ուղղությամբ:

Վարդան Մկրտչյանը, դիմելով դատարան, պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 21.05.2018 թվականի թիվ 1808059112 որոշումը:

Դատարանը, հետազոտելով գործում առկա տեսանյութերը և տեսանյութերից հանված լուսանկարը, արձանագրել է, որ «դրանցում առկա 5.15.1 ճանապարհային նշանի ձախ երթևեկելի գոտիով որպես երթևեկության թույլատրելի ուղղություն նշված է հետադարձ և դեպի ուղիղ ուղղությունները, մինչդեռ հայցվորի վարած տրանսպորտային միջոցը երթևեկել է դեպի ձախ, ուստի (...) «BMW» մակնիշի 35AX162 համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 05.05.2018 թվականին ժամը 17:58-ին ք. Երևան, Վ. Համբարձումյան /Երզնկյան/ Բաղրամյան խաչմերուկի հատվածում չի պահպանել Որոշում 1-ով սահմանված 5.15.1 «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի պահանջը», «հայցվորի գործողություններում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը», «Որոշում 1-ի 5.15.1 ճանապարհային նշանի բովանդակությունից՝ *«5.15.1. Երթևեկության ուղղությունները գոտիներով» գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները դրանցից յուրաքանչյուրով»*, բխում է, որ նշանի վրա կարող է նշվել երթևեկության ցանկացած ուղղություն այդ գոտիով», ու գտել է, որ առկա չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով որևէ հիմք թիվ 1808059112 որոշումն անվավեր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը Վարդան Մկրտչյանի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 23.11.2018 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերը նշված պատճառաբանությունները, ու հավելելով, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ճանապարհային նշանները երթևեկության մասնակիցների կողմից ընկալվում են որպես երթևեկության կանոններին հակասող, ապա, մինևույն է, վերջիններս պարտավոր են ենթարկվել այդ ճանապարհային նշանի պահանջներին, բացի այդ, Երևան քաղաքի Վ. Համբարձումյան /Երզնկյան/ Բաղրամյան խաչմերուկի հատվածում տեղադրված երթևեկության ուղղություններ ցույց տվող ճանապարհային նշանի համապատասխանությունը Որոշում 1-ի Հավելված 1-ի պահանջներին, չի վիճարկվել, ինչը ևս վկայում է այն մասին, որ այդ նշանի պահանջները ենթակա են եղել պարտադիր կատարման:

5.8. Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած տեսանյութի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ այն նշանը, որի պահանջը չկատարելու համար հայցվորը ենթարկվել է պատասխանատվության, ունի հետևյալ տեսքը. առկա են երթևեկության երեք գոտիներ, աջ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ կամ կատարել աջ շրջադարձ, մեջտեղի գոտուց՝ երթևեկել ուղիղ, ձախ եզրային գոտուց՝ երթևեկել ուղիղ կամ կատարել հետադարձ: Ըստ տեսանյութի՝ հայցվորին պատկանող տրանսպորտային միջոցը ձախ եզրային գոտուց կատարել է ձախ շրջադարձ:

Ինչպես վերը նշվեց, այն հանգամանքը, որ տեսանյութում առկա ճանապարհային նշանի (որի պահանջը չի կատարվել) պատկերը՝ դրա վրա ներկայացված սլաքների ուղղությունների տեսանկյունից, ամբողջությամբ չի համապատասխանում 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» նշանի՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված պատկերին, դեռևս չի նշանակում, որ տեսանյութում առկա նշանը Որոշում 1-ի համաձայն գոյություն չունեցող ճանապարհային նշան է: Մեր գնահատմամբ, տեսանյութում առկա նշանը 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» և 6.3.1. «Հետադարձի տեղ» (որով ձախ շրջադարձն արգելվում է) ճանապարհային նշանների համակցություն է, ուստի այն պարունակում է նաև 5.15.1 նշանի հատկանիշները: Դա իր հերթին նշանակում է,

որ տրանսպորտային միջոցների վարորդները պետք է ենթարկվեն տեղադրված ճանապարհային նշանին՝ կատարելով դրա պահանջը: Ուստի, տվյալ դեպքում հայցվորը, ձախ եզրային գոտուց կատարելով ձախ շրջադարձ, խախտել է 5.15.1 նշանի պահանջը՝ հաշվի առնելով, որ տեղադրված նշանը ձախ եզրային գոտուց ձախ շրջադարձ կատարելու հնարավորություն չէր տալիս:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ եթե տեսանյութում առկա ճանապարհային նշանի պահանջները հայցվորի համար ամբողջությամբ հասկանալի չէին, քանի որ տեղադրված նշանի պատկերն ամբողջությամբ չէր համապատասխանում 5.15.1 նշանի՝ Որոշում 1-ում սահմանված պատկերին, ապա հայցվորը պետք է կատարեր այդ նշանի՝ իր համար հասկանալի պահանջը, այսինքն՝ ընտրեր երթևեկության՝ տեղադրված նշանով թույլատրված այն ուղղությունը, որը համապատասխանում է 5.15.1 նշանի՝ Որոշում 1-ում սահմանված պատկերում նշված ուղղությանը, այսինքն՝ երթևեկելու ուղի: Այսպիսով, գտնում ենք, որ տեսանյութում տեսանելի ճանապարհային նշանի առկայության պայմաններում հայցվորն ամեն դեպքում իրավունք չուներ ձախ եզրային գոտուց կատարել ձախ շրջադարձ:

Միաժամանակ, գտնում ենք, որ 6.3.1 նշանի առկայությունը տվյալ դեպքում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար անորոշություն չի առաջացնում, քանի որ առկա կարգավորումը հստակ է. ձախ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել ուղիղ, միաժամանակ այդ գոտուց թույլատրվում է նաև կատարել հետադարձ: Իսկ այն հարցը, թե արդյոք իրավաչափ է 5.15.1 և 6.3.1 ճանապարհային նշանների համակցումը, թե՛ ոչ, վերաբերում է տեղադրված ճանապարհային նշանի՝ որպես վարչական ակտի իրավաչափությանը, ինչը սույն գործով քննության առարկա չէ, ուստի տվյալ դեպքում պետք է ելնել չլիճարկվող և ոչ իրավաչափ չճանաչված վարչական ակտի իրավաչափության կանխավարկածից (վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի վերաբերյալ, *տե՛ս Հասմիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Նման պայմաններում իրավաչափ ենք համարում Ծառայության կողմից հայցվորին վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելը՝ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար: Նման իրավաչափ եզրահանգման է եկել նաև Վերաքննիչ դատարանը՝ հայցը մերժելու մասին Դատարանի վճռի դեմ Վարդան Մկրտչյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով:

5.9. Անփոփոխելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գրնում ենք, որ վճարելի բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, ուստի գրնում ենք, որ սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճարելի բողոքը մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը՝ սույն հարուկ կարծիքում շարադրված պարճատարանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ե. Խունդկարյան
Մ. Դրմեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ **ՎԴ/1500/05/17**
2020թ.
ՎԴ/1500/05/17
Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան
Կ. Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 27-ին
գրավոր ընթացակարգով քննելով Աշոտ Իսկանդարյանի ներկայացուցիչ Արտակ Խա-
չատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Իսկանդարյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանա-
պարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 13.02.2017 թվա-
կանի թիվ 1705723923 որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Իսկանդարյանը պահանջել է վերացնել Ծառայության
13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան)
22.05.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2018
թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի
22.05.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Իսկանդարյանի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները, սիսալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 28-րդ և 29-րդ հոդվածները, «Տեսանկյարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ, 11-րդ և 124.3-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պետքերը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի եզրահանգումները չեն բխում գործում առկա ապացույցի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումից: Այսպես, Աշոտ Իսկանդարյանը չէր կարող տեսնել լուսացույցի ազդանշանները, քանի որ առկա է եղել վարորդի տեսադաշտը փակող խոչընդոտ: Ինչպես հստակ երևում է ենթադրյալ իրավախախտումն ամրագրած, ապացույց հանդիսացող տեսանյութից, բողոքաբերին պատկանող ավտոմեքենան երևում է տեսանյութի 00:03 (տեսախցիկի ֆիքսած ժամանակով 12:40:28 վայրկյանին), իսկ այդ պահին խաչմերուկի աջ մասում, որտեղ տեղադրված է ելքի լուսացույցը, երթևեկում է ավտոբուս, իսկ խաչմերուկից հետո տեղադրված լուսացույցի մոտ կանգնած է բեռնատար, որպիսի պայմաններում հայցվորի կողմից լուսացույցները տեսանելի չեն եղել: Ընդ որում, հայցվորի մեքենան խաչմերուկին մոտենալու պահին հակառակ ուղղությամբ երթևեկությունն ինտենսիվ էր, և մի քանի մեքենաներ գտնվում էին խաչմերուկում կամ դրա շրջակայքում, որպիսի հանգամանքը ևս չէր կարող հուշել վերջինիս, որ լուսացույցի վրա վառված է արգելող ազդանշան:

Բացի այդ, կրկնող և հիմնական լուսացույցների միջև առկա հակասության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները և դատողությունները ևս չեն բխում ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտությունից և անհիմն են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.05.2017 թվականի վճռին:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշման համաձայն՝ Աշոտ Իսկանդարյանը 04.02.2017 թվականին, ժամը 12:40-ին, ք. Երևան, Սեբաստիա/Ա. Վեգներ խաչմերուկի հատվածում խախտել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 27-ի թիվ 955-Ն որոշման Հավելված 1-ի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը, այն է՝ չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին՝ առաջ անցնելով արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցից և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ենթարկվել է վարչական պատասխանատվության (**գ.թ. 10**):

2) Կարգավորվող խաչմերուկում առկա են հիմնական և կրկնող լուսացույցներ (**հիմք՝ գործում առկա տեսագրություն, գ.թ. 14**):

3) Աշոտ Իսկանդարյանի և «ԻՄԱՉԱՏՈՒՐՈՎ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Արտակ Խաչատրյանի միջև կնքվել է թիվ 299-17 փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 4.1 կետի համաձայն պայմանագրի գին է սահմանվել 50.000 ՀՀ դրամը (**հիմք՝ գ.թ. 13**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման առանձին տարրերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերթյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, եթե կարգավորվող խաչմերուկում առկա է անսարք լուսացույց, իսկ հիմնական լուսացույցը փեսանելի չէ փյվյալ համընթաց շարքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, եթե դա կատարվել է լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցներից առաջ անցնելով՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, կամ լուսանկարահանող սարքերով (այսուհետ՝ տեխնիկական միջոցներ) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերություններն ուղղակիորեն չեն կարգավորվում նույն օրենքի դրույթներով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հոգուտ անձի: Իրավախախտման հատկանիշները պարզվում են 15 աշխատանքային օրում:

«Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի թիվ 1699-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «Լուսացույցների տեղակայման կանոնները» բաժնի 43-րդ կետի համաձայն՝ (...) երկկողմ երթևեկությամբ ճանապարհներին խաչմերուկից առաջ բաժանարար գոտու, ուղղորդ կղզյակների կամ անվտանգության կղզյակների բացակայության դեպքում թույլատրվում է S(T).1.ձ լուսացույցը տեղակայել աջ կողմում, եթե բնականայրերում տվյալ ուղղությամբ գոտիների թիվը պակաս է երեքից (բնականայրերից դուրս՝ երկուսից ոչ ավելի), հակառակ դեպքում S(T).1.ձ լուսացույցը տեղակայվում է երթևեկելի մասի վրա: Այդ դեպքում «դեպի ձախ», «ուղիղ» կամ «ուղիղ և դեպի ձախ» սլաքներով S(T).2 լուսացույցները տեղակայվում են երթևեկելի մասի վրա (...): Նույն բաժնի 44-րդ կետի համաձայն՝ երթևեկելի մասի կողքին տեղակայված S(T).1 ցանկացած կատարման և S(T).2 լուսացույցները կրկնում են: Կրկնող լուսացույցը տեղակայվում է խաչմերուկում կամ անմիջապես դրանից հետո՝ հաշվի առնելով վարորդի կողմից լուսացույցի ազդանշանի տեսանելիությունը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմների վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (*լրեն Աիդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Պատասխանող կողմը վերաքննիչ բողոքում, իսկ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում անդրադարձել են խաչմերուկում տեղակայված լուսացույցի անխափան աշխատելու հարցին, մինչդեռ իրավական խնդիրը, ըստ ներկայացված հայցադիմումի, վերաբերել է խաչմերուկում ստեղծված իրավիճակում լուսացույցը վարորդին տեսանելի չլինելու հարցին:

Սույն գործի փաստերից հետևում է, որ երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին՝ «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում, և, բնականաբար, վարորդը պետք է կողմնորոշվեր կրկնող լուսացույցի լուսային ազդանշաններով, մինչդեռ հայցվորին վերագրվող արարքի կատարման պահին կրկնող լուսացույցը լուսային որևէ ազդանշան չէր արձակում:

Տվյալ դեպքում տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով խախտում արձանագրելիս վարչական մարմինը պետք է գնահատականի արժանացներ ոչ միայն տեսանյութում լուսացույցի երևալը, այլ նաև իրական ճանապարհային իրադրությունում վարորդի կողմից հիմնական և/կամ կրկնող լուսացույցի տեսանելի լինելու փաստը՝ այն համադրելով երթևեկության տվյալ հատվածում ձևավորված իրավիճակի հետ:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ հնարավոր են իրավիճակներ, երբ լուսացույցներից որևէ մեկը կարող է խափանվել՝ չարտացոլելով լուսացույցի ազդանշաններից որևէ մեկը կամ բոլորը միաժամանակ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված պարագայում տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ղեկավարվել այն լուսացույցով, որը տվյալ արտացոլումն իրականացնում է անխափան: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ նախատեսված չէ որևէ իրավական հետևանք լուսացույցի չվառվող ազդանշանի համար (բացառությամբ թարթելու, ինչպես նաև սեկցիայի պարագայում, որը սույն պարագայում բացակայում է), Վերաքննիչ դատարանը գտել է, որ լուսացույցի վրա որևէ ազդանշանի վառված չլինելու պարագայում (ինչը տվյալ պարագայում հաստատված է համարել Դատարանը) ողջամտորեն պետք է ենթադրել դրա խափանման մասին, հետևաբար տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր էր ղեկավարվել այն լուսացույցի ազդանշանով, որը գործում է անխափան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

Նույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը կարող է ընդունվել նաև լուսային, ձայնային, պատկերային, ազդանշանների, նշանների կամ օրենքով նախատեսված այլ ձևով (այսուհետ՝ այլ ձևի վարչական ակտեր):

Վերոգրյալ իրավանորմների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն պարագայում լուսացույցն ըստ էության հանդիսանում է այլ ձևով ընդունված վարչական ակտ, որի յուրաքանչյուր գույնի միացված ազդանշանը որոշակի պարտականություններ է սահմանում անձանց հատուկ կատեգորիայի (վարորդ, հետիոտն) համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (գանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ գանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգույշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (*լրե՛ս Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՄԴՈ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այլ ձևի վարչական ակտերը պետք է հասանելի (տեսանելի) լինեն այն անձանց (սուբյեկտների) համար, որոնց վրա դրվում են որոշակի պարտականություններ, հակառակ դեպքում պետք է բացառվի նաև պատասխանատվությունը դրա չկատարման համար, քանի որ այդ դեպքում բացակայում է անձի մեղքը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտում արձանագրել է, որ լուսացույցի՝ որպես վարչական ակտի օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ փաստարկները հայցվորը կաշկանդված չէ ներկայացնելու նշված վարչական ակտի վիճարկման վարդապետություն, իսկ սույն հայցապահանջի շրջանակներում դրանք քննարկման առարկա չեն կարող դառնալ՝ համապատասխան պահանջի բացակայության պատճառով, ուստի հայցվորի փաստարկներն ամբողջությամբ անհիմն են:

Վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի համար իրավական խնդիրը ճանապարհային երթուղիներում կարգավորող վարչական ակտի իրավաչափության հարցը չէ, այլ տվյալ տեսակի վարչական ակտի առանձնահատկությունից ելնելով՝ վարչական պատասխանատվության համար ելակետային նշանակության ունի վարչական ակտի հասցեատիրոջը դրա հասանելիության հարցը, որն էլ էական է վարչական պատասխանատվության համար առանցքային նշանակություն ունեցող պայմանի՝ մեղքի առկայությունը հաստատելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարնատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են **դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի կազմում ներառել է նաև ներկայացուցիչների վճարները:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (յո՛ւն Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեպրոյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո հաշվի առնելով գործով ներկայացուցչի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը, դատական նիստերի քանակը և տևողությունը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), ինչպես նաև վիճարկվող վարչական ակտում նշված տուգանքի գումարի և պահանջվող ներկայացուցչական վճարի չափի հարաբերակցությունը, համադրելով գործում առկա Աշոտ Իսկանդարյանի և «ԽԱՉԱՏՈՒՐՈՎ» ՍՊԸ-ի ի դեմն տնօրեն Արտակ Խաչատրյանի միջև կնքված թիվ 299-17 փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարի չափի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ողջամիտ է Ծառայությունից հօգուտ Աշոտ Իսկանդարյանի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես դատական բոլոր ատյաններում գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայությունից հօգուտ Աշոտ Իսկանդարյանի ենթակա է բռնագանձման 240 ՀՀ դրամ՝ որպես փոստային ծախսի փոխհատուցման գումար:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են (...) ֆիզիկական անձինք՝ (...) վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով (...):

Հաշվի առնելով, որ հայցվորը սույն գործով ազատված է պետական տուրքի վճարումից, ինչի հաշվառմամբ հայցադիմում և վճռաբեկ բողոք ներկայացնելիս պետական

տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ծառայությունը պարտավոր չէ պետությանը հատուցել հայցադիմումի և վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից Աշոտ Իսկանդարյանն ազատված է օրենքի ուժով, քանի որ սույն գործով հայցվորի կողմից պետական տուրքի գծով ծախսի կատարում անհրաժեշտ չէր: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից՝ դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է, և որոնք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար (*Կրեն նաև Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Միևնույն ժամանակ, սույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելու համար Ծառայությունը վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրք, հետևաբար ներկայացված հայցը բավարարվելու պայմաններում վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված և Ծառայության կողմից նախապես վճարված պետական տուրքի հատուցման խնդիր առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշումը բեկանել և փոփոխել. Աշոտ Իսկանդարյանի հայցը բավարարել՝ վերացնել ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշումը:

2. ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հոգուտ Աշոտ Իսկանդարյանի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի փոխհատուցման գումար, 240 ՀՀ դրամ՝ որպես փոստային ծախսի փոխհատուցման գումար:

ՀՀ վարչական, ՀՀ վերաքննիչ վարչական և ՀՀ վճռաբեկ դատարաններում պետական տուրքի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/1500/05/17 վարչական գործով 27.08.2020 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2020 թվականի օգոստոսի 27-ին գրավոր ընթացակարգով քննելով Աշոտ Իսկանդարյանի ներկայացուցիչ Արտակ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Իսկանդարյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) որոշումը վերացնելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշումը բեկանել և փոփոխել, Աշոտ Իսկանդարյանի հայցը բավարարել՝ վերացնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշումը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, դեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում են իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարմություն նշել է հերկյալը

«Դիմելով դատարան՝ Աշոտ Իսկանդարյանը պահանջել է վերացնել Ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 22.05.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2018 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 22.05.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Իսկանդարյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հերկյալը

«Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 28-րդ և 29-րդ հոդվածները, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայրնաբերված ճանապարհային երթուղիների կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ, 11-րդ և 124.3-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հերկյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանի եզրահանգումները չեն բխում գործում առկա ապացույցի բավանկողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումից: Այսպես, Աշոտ Իսկանդարյանը չէր կարող տեսնել լուսացույցի ազդանշանները, քանի որ առկա է եղել վարորդի տեսադաշտը փակող խոչընդոտ: Ինչպես հստակ երևում է ենթադրյալ իրավախախտումն ամրագրած, ապացույց հանդիսացող տեսանյութից, բողոքաբերին պատկանող ավտոմեքենան երևում է տեսանյութի 00:03 (տեսախցիկի ֆիքսած ժամանակով 12:40:28 վայրկյանին), իսկ այդ պահին խաչմերուկի աջ մասում, որտեղ տեղադրված է ելքի լուսացույցը, երթուղիներ

է ավտոբուս, իսկ խաչմերուկից հետո տեղադրված լուսացույցի մոտ կանգնած է բեռնատար, որպիսի պայմաններում հայցվորի կողմից լուսացույցները տեսանելի չեն եղել: Ընդ որում, հայցվորի մեքենան խաչմերուկին մոտենալու պահին հակառակ ուղղությամբ երթևեկությունն ինտենսիվ էր, և մի քանի մեքենաներ գտնվում էին խաչմերուկում կամ դրա շրջակայքում, որպիսի հանգամանքը ևս չէր կարող հուշել վերջինիս, որ լուսացույցի վրա վառված է արգելող ազդանշան:

Բացի այդ, կրկնող և հիմնական լուսացույցների միջև առկա հակասության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները և դատողությունները ևս չեն բխում ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտությունից և անհիմն են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.05.2017 թվականի վճռին»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«1) Ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշման համաձայն՝ Աշոտ Իսկանդարյանը 04.02.2017 թվականին, ժամը 12:40-ին, ք. Երևան, Սեբաստիա/Ա. Վեգներ խաչմերուկի հատվածում խախտել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 27-ի թիվ 955-Ն որոշման Հավելված 1-ի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը, այն է՝ չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին՝ առաջ անցնելով արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցից և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ենթարկվել է վարչական պատասխանատվության (գ.թ. 10):

2) Կարգավորվող խաչմերուկում առկա են հիմնական և կրկնող լուսացույցներ (հիմք գործում առկա տեսագրություն, գ.թ. 14):

3) Աշոտ Իսկանդարյանի և «ԽԱՉԱՏՈՒՐՈՎ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Արտակ Խաչատրյանի միջև կնքվել է թիվ 299-17 փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 4.1 կետի համաձայն պայմանագրի գին է սահմանվել 50.000 ՀՀ դրամը (հիմք գ.թ. 13)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես Վճռաբեկ դատարանի պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման առանձին տարրերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, եթե կարգավորվող խաչմերուկում առկա է անսարք լուսացույց, իսկ հիմնական լուսացույցը տեսանելի չէ տվյալ համընթաց շարքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, եթե դա կատարվել է լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցներից առաջ անցնելով՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, կամ լուսանկարահանող սարքերով (այսուհետ՝ տեխնիկական միջոցներ) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերություններն ուղղակիորեն չեն կարգավորվում նույն օրենքի դրույթներով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հոգուտ անձի: Իրավախախտման հատկանիշները պարզվում են 15 աշխատանքային օրում:

«Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի թիվ 1699-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «Լուսացույցների տեղակայման կանոնները» բաժնի 43-րդ կետի համաձայն՝ (...) երկկողմ երթևեկությամբ ճանապարհներին խաչմերուկից առաջ բաժանարար գոտու, ուղղորդ կղզյակների կամ անվտանգության կղզյակների բացակայության դեպքում թույլատրվում է S(T).1.ձ լուսացույցը տեղակայել աջ կողմում, եթե բնակավայրերում տվյալ ուղղությամբ գոտիների թիվը պակաս է երեքից (բնակավայրերից դուրս՝ երկուսից ոչ ավելի), հակառակ

դեպքում S(T).1.ձ լուսացույցը տեղակայվում է երթևեկելի մասի վրա: Այդ դեպքում «դեպի ձախ», «ուղիղ» կամ «ուղիղ և դեպի ձախ» սլաքներով S(T).2 լուսացույցները տեղակայվում են երթևեկելի մասի վրա (...): Նույն բաժնի 44-րդ կետի համաձայն՝ երթևեկելի մասի կողքին տեղակայված S(T).1 ցանկացած կատարման և S(T).2 լուսացույցները կրկնում են: Կրկնող լուսացույցը տեղակայվում է խաչմերուկում կամ անմիջապես դրանից հետո՝ հաշվի առնելով վարորդի կողմից լուսացույցի ազդանշանի տեսանելիությունը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանքումների վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (ընդ Ափրա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Պատասխանող կողմը վերաքննիչ բողոքում, իսկ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում անդրադարձել են խաչմերուկում տեղակայված լուսացույցի անխափան աշխատելու հարցին, մինչդեռ իրավական խնդիրը, ըստ ներկայացված հայցադիմումի վերաբերել է խաչմերուկում ստեղծված իրավիճակում լուսացույցը վարորդին տեսանելի չլինելու հարցին:

Մույն գործի փաստերից հետևում է, որ երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին՝ «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում, և բնականաբար, վարորդը պետք է կողմնորոշվեր կրկնող լուսացույցի լուսային ազդանշաններով, մինչդեռ հայցվորին վերագրվող արարքի կատարման պահին կրկնող լուսացույցը լուսային որևէ ազդանշան չէր արձակում:

Տվյալ դեպքում տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով խախտում արձանագրելիս վարչական մարմինը պետք է գնահատականի արժանացներ ոչ միայն տեսանյութում լուսացույցի երևալը, այլ նաև իրական ճանապարհային իրադրությունում վարորդի կողմից հիմնական և/կամ կրկնող լուսացույցի տեսանելի լինելու փաստը՝ այն համադրելով երթևեկության տվյալ հատվածում ձևավորված իրավիճակի հետ:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ հնարավոր են իրավիճակներ, երբ լուսացույցներից որևէ մեկը կարող է խափանվել՝ չարտացոլելով լուսացույցի ազդանշաններից որևէ մեկը կամ բոլորը միաժամանակ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված պարագայում տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է դեկավարվել այն լուսացույցով, որը տվյալ արտացոլումն իրականացնում է անխափան: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ նախատեսված չէ որևէ իրավական հետևանք լուսացույցի չվառվող ազդանշանի համար (բացառությամբ թարթելու, ինչպես նաև սեկցիայի պարագայում, որը սույն պարագայում բացակայում է), Վերաքննիչ դատարանը գտել է, որ լուսացույցի վրա որևէ ազդանշանի վատված չլինելու պարագայում (ինչը տվյալ պարագայում հաստատված է համարել Դատարանը) ողջամտորեն պետք է ենթադրել դրա խափանման մասին, հետևաբար տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր էր դեկավարվել այն լուսացույցի ազդանշանով, որը գործում է անխափան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն

որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

Նույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը կարող է ընդունվել նաև լուսային, ձայնային, պատկերային, ազդանշանների, նշանների կամ օրենքով նախատեսված այլ ձևով (այսուհետ՝ այլ ձևի վարչական ակտեր):

Վերոգրյալ իրավանորմների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն պարագայում լուսացույցն ըստ էության հանդիսանում է այլ ձևով ընդունված վարչական ակտ, որի յուրաքանչյուր գույնի միացված ազդանշանը որոշակի պարտականություններ է սահմանում անձանց հատուկ կատեգորիայի (վարորդ, հետիոտն) համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (*լրեն Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այլ ձևի վարչական ակտերը պետք է հասանելի (տեսանելի) լինեն այն անձանց (սուբյեկտների) համար, որոնց վրա դրվում են որոշակի պարտականություններ, հակառակ դեպքում պետք է բացառվի նաև պատասխանատվությունը դրա չկատարման համար, քանի որ այդ դեպքում բացակայում է անձի մեղքը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտում արձանագրել է, որ լուսացույցի՝ որպես վարչական ակտի օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ փաստարկները հայցվորը կաշկանդված չէ ներկայացնելու նշված վարչական ակտի վիճարկման վարույթում, իսկ սույն հայցապահանջի շրջանակներում դրանք քննարկման առարկա չեն կարող դառնալ՝ համապատասխան պահանջի բացակայության պատճառով, ուստի հայցվորի փաստարկներն ամբողջությամբ անհիմն են:

Վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի համար իրավական խնդիրը ճանապարհային երթևեկությունը կարգավորող վարչական ակտի իրավաչափության հարցը չէ, այլ տվյալ տեսակի վարչական ակտի առանձնահատկությունից ելնելով՝ վարչական պատասխանատվության համար ելակետային նշանակության ունի վարչական ակտի հասցեատիրոջը դրա հասանելիության հարցը, որն էլ էական է վարչական պատասխանատվության համար առանցքային նշանակություն ունեցող պայմանի՝ մեղքի առկայությունը հաստատելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը»:

Վճռաբեկ դատարանի դարավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պարտադրական և եզրափակիչ մասերում՝ Վճռաբեկ դատարանի դարավորների մեծամասնության կողմից արդահայտված կարծիքի հետ, շարադրում են իմ հասրուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

Աշոտ Իսկանդարյանը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով վերացնել Ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշումը:

Դատարանը 22.05.2017 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «ուսումնասիրելով police.am կայքում տեղադրված իրավախախտումն ամրագրած տեսանյութը և լուսանկարը, արձանագրում է, որ հիմնական և կրկնող լուսացույցերը չեն աշխատել մինևույն ժամանակահատվածի ռեժիմով, մասնավորապես, այն ժամանակ, երբ հայցվորի տրանսպորտային միջոցը, ընթանալով ճանապարհի երրորդ գոտով, չի ենթարկվում հիմնական լուսացույցի կարմիր ազդանշանին, հայցվորի համար առաջնային տեսանելի՝ կրկնող լուսացույցի վրա որևէ ազդանշան միացված չէ: Այսինքն, տեսանյութում արտացոլված տեղեկություններով հնարավոր չէ գալ այն միանշանակ եզրահանգման, որ քննարկվող իրավախախտման պահին կրկնող լուսացույցը նույնությամբ վերաբրտադրել է հիմնական լուսացույցի ազդանշանները, ինչն էլ վկայում է, որ հայցվորի՝ լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկվելու փաստը կասկած է հարուցում: Վերոգրյալից հետևում է, որ տեսանյութում և լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, որն էլ ենթակա է մեկնաբանման հոգուտ հայցվորի»:

Վերաքննիչ դատարանը 25.04.2018 թվականին որոշում է կայացրել Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարելու, Դատարանի 22.05.2017 թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու՝ Աշոտ Իսկանդարյանի հայցը մերժելու մասին այն պատճառաբանությամբ, որ «կից ներկայացված տեսանյութի, ինչպես նաև լուսանկարների ուսումնասիրությունից Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ենթադրյալ իրավախախտման կատարման վայրում առկա է կտր ազդանշաններով լուսացույց, իսկ նախքան լուսացույցին մոտենալը՝ հստակ երևացող «Կանգ-գիծ» գծանշում, որպիսի պարագայում լուսացույցի կարմիր ազդանշանը արգելում է երթևեկություն և, հետևաբար, դրա միացման պարագայում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման առջև: Տեսանյութի և լուսանկարների ուսումնասիրության հիման վրա Վերաքննիչ դատարանը հաստատված է համարում նաև, որ լուսացույցի կարմիր ազդանշանը միացած է 12:40:26-րդ վայրկյանի դրությամբ, որպիսի պահին առկա էր նաև նշված կարմիր արգելող ազդանշանին ենթարկված և «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոց: Նշված ժամանակահատվածում հայցվորը դեռևս չէր հատել առկա «Կանգ-գիծ» գծանշումը, ուստի կարմիր ազդանշանի պարագայում պարտավոր էր կանգ առնել տվյալ գծանշման դիմաց, մինչդեռ վերջինս, առաջ է անցնում լուսացույցի արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցից, մուտք է գործում խաչմերուկ և շարունակում երթևեկությունը, այսինքն՝ չի ենթարկվում լուսացույցի արգելող ազդանշանին՝ առաջ անցնելով լուսացույցի արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցից: Վերաքննիչ դատարանի համոզմամբ նշվածը բավարար էր հայցվորին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով վարչական պատասխանատվություն առաջադրելու համար: Ինչ վերաբերում է կրկնող և հիմնական լուսացույցների միջև հակասությունը, Վերաքննիչ դատարանը փաստում է հետևյալը. ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի թիվ 1699-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ S(T).1 և S(T).1.h (N 2 հավելված) լուսացույցները խաչմերուկներում կիրառվում են տվյալ ճանապարհով խաչմերուկին մոտենալիս բոլոր թույլատրված ուղղություններով տրանսպորտային միջոցների միաժամանակյա անցման դեպքում և խաչմերուկների միջև տեղաբաշխված կարգավորվող հետիոտնային անցումների վրա: Նույն որոշման 44-րդ կետի համաձայն՝ երթևեկելի մասի կողքին տեղակայված S(T).1 ցանկացած կատարման և S(T).2 լուսացույցները կրկնում են: Կրկնող լուսացույցը տեղակայվում է խաչմերուկում կամ անմիջապես դրանից հետո՝ հաշվի առնելով վարորդի կողմից լուսացույցի ազդանշանի տեսանելիությունը: Բաժանարար գոտու, ուղղորդ կղզյակների կամ անվտանգության կղզյակների առկայության դեպքում կրկնող լուսացույցները (բացի S(T).1.ա, «դեպի աջ» սլաքով S(T).2) տեղակայվում են խաչմերուկում, դրանից հետո՝ երթևեկելի մասերի միջև կամ խաչմերուկից ձախ: Վերոգրյալից հետևում է, որ վկայակոչված իրավանդումում տեղ գտած «կրկնող» արտահայտությունը ինքնին նշանակում է խաչմերուկի աջ հատվածում տեղակայված լուսացույցի (S(T).1) ազդանշանների նույնությամբ արտացոլում: Մինչնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ հնարավոր են իրավիճակներ, երբ լուսացույցերից որևէ մեկը կարող է խափանվել՝ չարտացոլելով լուսացույցի ազդանշաններից որևիցե մեկը, կամ բոլորը միաժամանակ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված պարագայում տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ղեկավարվել այն լուսացույցով որը տվյալ արտացոլումն իրականացնում է անխափան: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ նախատեսված չէ որևէ իրավական հետևանք լուսացույցի չվառվող ազդանշանի համար (բացառությամբ թարթելու, ինչպես նաև սեկցիայի պարագայում, որը սույն պարագայում բացակայում է)՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ լուսացույցի վրա որևէ ազդանշանի վառված չլինելու պարագայում (ինչը տվյալ պարագայում հաստատված է համարել Դատարանը) ողջամտորեն պետք է ենթադրել դրա խափանման մասին, հետևաբար տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ղեկավարվել այն լուսացույցի ազդանշաններով, որը գործում է անխափան: Սույն գործով տեսանյութի ուսումնասիրության արդյունքում Վերաքննիչ դատարանը գալիս է այն համոզման, որ առկա է եղել ոչ թե լուսացույցերի վրա առկայծող ազդանշանների հակասություն, այլ առավելագույնը նշվածը կարող էր մեկնաբանվել որպես ձախ կողմում

տեղակայված լուսացույցի կարմիր ազդանշանի խափանում, քանի որ նշված երկու լուսացույցերի կանաչ և դեղին ազդանշանները վառվում և անջատվում են համաչափորեն, իսկ կարմիր ազդանշանի միացման ժամանակ ձախ լուսացույցի վրա որևէ առկայծում տեսանելի չէ ընդհանրապես, այսինքն՝ վարորդը պարտավոր է ղեկավարվել այն լուսացույցով, որը գործում է անխափան (սույն պարագայում՝ աջ կողմում տեղադրված լուսացույցը), հետևաբար նշվածի համատեքստում անհիմն են Դատարանի փաստարկներն առ այն, որ «...տեսանյութում արտացոլված տեղեկություններով հնարավոր չէ գալ այն միանշանակ եզրահանգման, որ քննարկվող իրավախախտման պահին կրկնող լուսացույցը նույնությամբ վերարտադրել է հիմնական լուսացույցի ազդանշանները, ինչն էլ վկայում է որ հայցվորի լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկվելու փաստը կասկած է հարուցում: (...) Ինչ վերաբերում է հայցվորի փաստարկներին՝ կապված լուսացույցի ոչ տեսանելի լինելու և դրանով պայմանավորված՝ մեղքի բացակայության հետ, ապա Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ տվյալ պարագայում իր կողմից վկայակոչված բարենպաստ հանգամանքի ապացուցման բերք պետք է կրի հենց հայցվորը, մինչդեռ որևէ ապացույց ի հավաստումն իր կողմից վկայակոչված փաստարկի, ինչպես դատարանին, այնպես էլ Վերաքննիչ դատարանին չի ներկայացվել, ավելին, տեսանյութով լուսացույցը հստակ տեսանելի է, ուստի նշված փաստական հանգամանքը Վերաքննիչ դատարանը համարում է չհաստատված և անհիմն: Վերաքննիչ դատարանը չի անդրադառնում հայցվորի կողմից ի սկզբանե բերված փաստարկներին՝ կապված լուսացույցի՝ օրենսդրության պահանջների համապատասխանության հետ՝ հետևյալ հիմնավորմամբ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտավանություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը կարող է ընդունվել նաև լուսային, ձայնային, պատկերային, ազդանշանների, նշանների կամ օրենքով նախատեսված այլ ձևով (այսուհետ՝ այլ ձևի վարչական ակտեր): Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ սույն պարագայում ճանապարհային երթևեկությունը կարգավորող լուսացույցն ըստ էության հանդիսանում է այլ ձևով ընդունված վարչական ակտ, որի կողմից միացված յուրաքանչյուր գույնի ազդանշանը որոշակի պարտականություն է սահմանում անձանց հատուկ կատեգորիայի (վարորդ, հետիոտն) համար, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված վարչական ակտը որևէ կերպ չի վերացվել, ուժը կորցրած չի ճանաչվել, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել վերջինիս՝ իրավաչափ լինելու կանխավարկածից, հետևաբար, լուսացույցի որպես վարչական ակտի, օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ փաստարկները հայցվորը կաշկանդված չէ ներկայացնելու նշված վարչական ակտի վիճարկման վարույթում, իսկ սույն հայցապահանջի շրջանակներում դրանք քննարկման առարկա չեն կարող դառնալ՝ համապատասխան պահանջի բացակայության պատճառով, ուստի հայցվորի փաստարկներն ամբողջության անհիմն են: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների պահանջներին համապատասխան բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները և չի պարզել վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, սխալ է մեկնաբանել «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ վկայակոչված որոշումների իրավադրույթները, որի արդյունքում ելել է գործի ելքի վերաբերյալ սխալ եզրահանգման, ինչը բավարար է վճիռն ամբողջությամբ բեկանելու համար: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտնում է,

որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վարչական դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ վերաքննիչ դատարանի լիազորությունը»:

Այժմ Վճռաբեկ դատարանը, պատճառաբանելով, որ՝

1) պատասխանող կողմը վերաքննիչ բողոքում, իսկ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում անդրադարձել են խաչմերուկում տեղակայված լուսացույցի անխափան աշխատելու հարցին, մինչդեռ իրավական խնդիրը, ըստ ներկայացված հայցադիմումի, վերաբերել է խաչմերուկում ստեղծված իրավիճակում լուսացույցը վարորդին տեսանելի չլինելու հարցին,

2) սույն գործի փաստերից հետևում է, որ երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին՝ «Կանգ-գիծ» գծանշանն առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում, և բնականաբար, վարորդը պետք է կողմնորոշվեր կրկնող լուսացույցի լուսային ազդանշաններով, մինչդեռ հայցվորին վերագրվող արարքի կատարման պահին կրկնող լուսացույցը լուսային որևէ ազդանշան չէր արձակում,

3) լուսացույցն ըստ էության հանդիսանում է այլ ձևով ընդունված վարչական ակտ, որի յուրաքանչյուր գույնի միացված ազդանշանը որոշակի պարտականություններ է սահմանում անձանց հատուկ կատեգորիայի (վարորդ, հետիոտն) համար: (...) այլ ձևի վարչական ակտերը պետք է հասանելի (տեսանելի) լինեն այն անձանց (սուբյեկտների) համար, որոնց վրա դրվում են որոշակի պարտականություններ, հակառակ դեպքում պետք է բացառվի նաև պատասխանատվությունը դրա չկատարման համար, քանի որ այդ դեպքում բացակայում է անձի մեղքը,

4) սույն գործի համար իրավական խնդիրը ճանապարհային երթևեկությունը կարգավորող վարչական ակտի իրավաչափության հարցը չէ, այլ տվյալ տեսակի վարչական ակտի առանձնահատկությունից ելնելով՝ վարչական պատասխանատվության համար ելակետային նշանակության ունի վարչական ակտի հասցեատիրոջը դրա հասանելիության հարցը, որն էլ էական է վարչական պատասխանատվության համար առանցքային նշանակություն ունեցող պայմանի՝ մեղքի առկայությունը հաստատելու համար,

որոշմամբ արտահայտված վերը նշված իրավական դիրքորոշումներից ելնելով՝ եզրակացրել է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, գտնելով, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով վճռաբեկ դատարանը չի համաձայնել այդ ակտը կայացրած դատարանի հիմնավորումներին կամ եզրահանգումներին:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված պատճառաբանությունները՝ գալիս եմ հետևության, որ Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանի հիմնավորումներին և եզրահանգումներին չի համաձայնվել, ըստ էության, բացառապես այն շարժառիթից ելնելով, որ ըստ ներկայացված հայցադիմումի՝ իրավական խնդիրը վերաբերել է խաչմերուկում ստեղծված իրավիճակում լուսացույցը վարորդին տեսանելի չլինելու հարցին, իսկ սույն գործի փաստերից հետևում է, որ երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը վերը նշված պատճառաբանությամբ չէր կարող օբյեկտիվորեն լինել տեսանելի, որի պայմաններում վարորդը պետք է կողմնորոշվեր կրկնող լուսացույցի լուսային ազդանշաններով, մինչդեռ հայցվորին վերագրվող արարքի կատարման պահին կրկնող լուսացույցը լուսային որևէ ազդանշան չէր արձակել:

Գտնում եմ, որ վերը նշված շարժառիթը տվյալ դեպքում չէր կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար հետևյալ պատճառաբանությամբ:

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Վճռաբեկ դատարանը հաստատված է համարել, որ երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում, որից ելնելով էլ հետևություն է արել այն մասին, որ նման պայմաններում վարորդը պետք է կողմնորոշվեր կրկնող լուսացույցի լուսային ազդանշաններով, մինչդեռ հայցվորին վերագրվող արարքի կատարման պահին կրկնող լուսացույցը լուսային որևէ ազդանշան չէր արձակում: Վճռաբեկ դատարանը տվյալ հետևությանը հանգել է՝ բացառապես նշելով, որ դա բխում է սույն գործի փաստերից:

Նման պայմաններում, կարծում եմ, որ նախ առաջնային է պարզելը, թե արդյո՞ք Վճռաբեկ դատարանի կողմից «**Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**» վերնագիրը կրող բաժնում վկայակոչվել է այնպիսի փաստ, որից կարող էր բխել վերը նշված հետևությունն անելու Վճռաբեկ դատարանի հնարավորությունը:

Այսպես, այդ բաժնում վկայակոչվել են ընդամենը երեք փաստ, այն է՝

1) Ծառայության 13.02.2017 թվականի թիվ 1705723923 որոշման համաձայն՝ Աշոտ Իսկանդարյանը 04.02.2017 թվականին, ժամը 12:40-ին, ք. Երևան, Սեբաստիա/Ա. Վեգներ խաչմերուկի հատվածում խախտել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 27-ի թիվ 955-Ն որոշման Հավելված 1-ի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը, այն է՝ չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին՝ առաջ անցնելով արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցից և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

2) Կարգավորվող խաչմերուկում առկա են հիմնական և կրկնող լուսացույցներ:

3) Աշոտ Իսկանդարյանի և «ԽԱՉԱՏՈՒՐՈՎ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Արտակ Խաչատրյանի միջև կնքվել է թիվ 299-17 փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 4.1 կետի համաձայն պայմանագրի գին է սահմանվել 50.000 ՀՀ դրամը:

Կարծում եմ, որ միայն վերը նշված փաստերի առկայությունը չէր կարող հիմք հանդիսանալ հետևություն անելու այն մասին, որ «երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում», քանի որ դրանք վերաբերում են վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներին:

Միաժամանակ, ցանկանում եմ հայտնել, որ եթե Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակում ներառեր անգամ գ.թ. 14-րդում առկա էլեկտրոնային կրիչը, որը պարունակում է համապատասխան տեսակցություն, ապա այն ևս չէր կարող բավարար հիմք հանդիսանալ հետևության հանգելու համար այն մասին, որ «երթևեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում» հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի բովանդակությունից բխում է, որ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով է պարզում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Այդպիսի ապացույցներ են վկայի ցուցմունքը, **փորձագետի եզրակացությունը** (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

Նույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին:

Կարծում եմ, որ այն փաստը, որ «երթնեկության ձախ ելքային շարքում գտնվող մեքենայի վարորդի համար հիմնական լուսացույցը չէր կարող օբյեկտիվորեն տեսանելի լինել՝ հիմնական լուսացույցի կողքին «Կանգ-գիծ» գծանշման առջև կանգ առած տրանսպորտային միջոցի առկայության պայմաններում», չէր կարող հաստատվել միայն գործում առկա տեսանյութը դատարանի կողմից դիտվելու միջոցով, քանի որ նման հետևության հանգելու համար, անհրաժեշտ էր առնվազն երկու պայմանների միաժամանակյա առկայություն՝ գտնվել հայցվորի վարած մեքենայի դեկին և տեսանյութում ճիշտ պատկերված իրավիճակում:

Ինչ վերաբերվում է առանց վերը նշված առնվազն երկու պայմանների միաժամանակյա առկայության նման հետևություն անելու հնարավորությանը, ապա կարծում եմ, որ այս դեպքում այդ հետևության մեջ նշված հանգամանքները կարող էին պարզվել (հաստատված համարվել) բացառապես փորձաքննություն նշանակելու միջոցով, քանի որ այդ հարցերի պարզաբանումը նման իրավիճակում պահանջում է հատուկ գիտելիքներ:

Նման պայմաններում անհրաժեշտ չեն համարում անդրադառնալ այն հարցը պարզելուն, թե կրկնող լուսացույցը հայցվորին վերագրվող արարքի կատարման պահին լուսային որևէ ազդանշան արձակել է, թե՛ ոչ:

Վերը նշվածի հիման վրա հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի հետևության վերաբերյալ այն մասին, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը վերը նշված շարժառիթով քեկանելու, ու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար:

Դրանից ելնելով գտնում եմ, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման, իսկ Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը՝ անփոփոխ թողնման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/7527/05/16**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/7527/05/16**
Նախագահող դատավոր՝ **Ա. Սարգսյան**
Դատավորներ՝ **Ք. Մկոյան**
Ա. Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկա-
յացուցիչ Արման ՄՆԱԳԱԿԱՆՅԱՆԻ վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարա-
նի 01.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Նիկոլայ Բարխուդարյանի՝
1.118.422 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Նիկոլայ Բարխուդարյանից բռնագանձել
1.118.422 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)
05.06.2017 թվականի վճռով հայցը մերժվել է՝ անվավեր ճանաչելով 18.08.2016 թվականի
«Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշումը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.06.2018
թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.06.2017
թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նիկոլայ Բարխուդարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությանը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, 06.07.2000 թվականին ընդունված ՀՀ մաքսային օրենսգրքի (ուժը կորցրել է 02.01.2015 թվականին, բացառությամբ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 259-րդ հոդվածով սահմանված դրույթների) 201-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությունը և ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցված են եղել միմյանց հետ, և դրանց կիրառումը կախված է եղել խախտման չափերից: Դրա մասին է վկայում իրավախախտման երկու կազմերի մեկ ամբողջական լինելու հանգամանքը, թեև դրանք սահմանված են եղել երկու տարբեր իրավական ակտերում: Ուստի, օրենսդրի կողմից քրեական պատասխանատվության վերացումը ենթադրում է ոչ թե պատժի ամբողջական վերացում, այլ դրա փոխարինում վարչականով: Նշվածի արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելով, ոչ թե հրաժարվել է նման արարքը հանրային վտանգավոր որակելուց և, ըստ այդմ, ընդհանրապես վերացրել է դրա համար հանրային-իրավական պատասխանատվությունը, այլ ընդամենը մեղմացրել է արարքի իրավական գնահատականը և պատժի տեսակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Պատասխանողի արարքի պահին վարչական պատասխանատվություն սահմանված չի եղել, նախատեսված է եղել քրեական պատասխանատվություն, ինչը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով, բացառել է վարչական պատասխանատվությունը: Ճիշտ է հետագայում այդ արարքն ապաքրեականացվել է և նախատեսվել է վարչական պատասխանատվություն, սակայն նոր սահմանված վարչական պատասխանատվությունը չի կարող ռետրոակտիվությամբ տարածվել պատասխանողի արարքի վրա, քանի որ դա արգելված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածով:

Վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացրած անձը խնդրել է մերժել հայցվորի վճռաբեկ բողոքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) նախաբացթողումային հսկողության վարչության ԳՏԲ Բազրատաշենի բաժանմունքի մաքսային տեսուչի կողմից 02.08.2015 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ նույն թվականի օգոստոսի 2-ին ժամը 18:30-ի սահմաններում Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանած ՀՀ քաղաքացի Նիկոլայ Բարխուդարյանի վրած և վերջինիս սեփականություն հանդիսացող «Մերսեդես Բենց» С 180 մակնիշի ավտոմեքենան ենթարկվել է գնման, ինչի արդյունքում բեռնախցիկի պահեստային անվադողի վրայից

և շարժիչի կողքերից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված 6 անվանում դեղորայք: Դեղորայքը կապարակնքվել է և հանձնվել է մաքսային պահեստ (**հատոր 2-րդ, գ.թ. 9-10**).

2) ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 18.09.2015 թվականի թիվ 15-2407 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված հետազոտելու նմուշների (օբյեկտներ 1-6) բաղադրության մեջ Հայաստանի Հանրապետության հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց արեկուրստրների կազմում ընդգրկված որևէ թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր չեն պարունակվում: Փորձաքննության կատարման նպատակով տրամադրված 6 անվանում դեղերից 4-ի մանրածախ շուկայական հավանական արժեքների հանրագումարը կարող է կազմել 938.800 ՀՀ դրամ, իսկ մյուս 2 դեղերի արժեքների վերաբերյալ արտասահմանյան տարբեր երկրների ինտերնետային կայքերից ստացված տվյալների համաձայն՝ դրանց ընդհանուր միջինացված շուկայական արժեքների հանրագումարը 430.000 ՀՀ դրամ է: Եզրակացության «Ապրանքագիտական հետազոտություն» բաժնում նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունում շուկայի ուսումնասիրությամբ ի հայտ եկած տեղեկատվությունը ներկայացված է փորձաքննության իրականացման ժամանակահատվածի (03.09.2015-18.09.2015 թվականներ) դրությամբ (**հատոր 2-րդ, գ.թ. 45-59**).

3) Նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնի հետաքննիչի 01.10.2015 թվականի «Քրեական գործ հարուցելու մասին» որոշման համաձայն՝ ՀՀ մաքսային սահմանով առանց հայտարարագրման 1.368.800 ՀՀ դրամ արժեքով դեղորայքի տեղափոխման դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ (**հատոր 2-րդ, գ.թ. 62-63**).

4) Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչի 01.08.2016 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարացնելու մասին» որոշման համաձայն՝ թիվ 83163115 քրեական գործի վարույթը կարճվել է, և Նիկոլայ Բարխուդարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ նրա արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն, որ 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը (**հատոր 2-րդ, գ.թ. 64-65**).

5) Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 05.08.2016 թվականի թիվ 8-1/1178045/16 գրության համաձայն՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 18.09.2016 թվականի թիվ 15-2407 եզրակացությամբ ներկայացված դեղորայքի մաքսային արժեքը 2016 թվականի օգոստոսի 2-ի դրությամբ կկազմի 1.118.422 ՀՀ դրամ, իսկ մաքսային վճարները՝ 223.685 ՀՀ դրամ (ԱԱՀ)» (**հատոր 2-րդ, գ.թ. 69**).

6) Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշման համաձայն՝ Նիկոլայ Բարխուդարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով ճանաչվել է գանցառու և 6 անվանում դեղորայքը մաքսային հսկողությունից թաքցնելով՝ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար տուգանվել է այդ դեղորայքի մաքսային արժեքի չափով՝ 1.118.422 ՀՀ դրամի չափով (**հատոր 2-րդ, գ.թ. 73-76**).

7) Դատարանում գործի քննության ընթացքում Նիկոլայ Բարխուդարյանը, առարկելով հայցի դեմ, ներկայացրել է հետևյալ փաստարկները.

ա) խնդրո առարկա դեղամիջոցները Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն, ուստի հայցվորն իրավունք չունի համացանցի միջոցով որոշել գումարի չափը, և ըստ այդմ, իրեն ենթարկել պատասխանատվության.

բ) տվյալ դեպքում իր նկատմամբ չէր կարող կիրառվել վարչական հարկադրանքի միջոց:

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մաքսանենգության մասնակի ապաքրեականացման դեպքում անձին նույն արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք կարող է անձը, ում կողմից մաքսանենգություն կատարված լինելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումը մերժվել է կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է արարքի ապաքրեականացման արդյունքում, հեղազայում նույն արարքի համար ենթարկվել վարչական պարասխանատվության:

Մինչև 25.06.2016 թվականը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի (Մաքսանենգությունը) առաջին մասը քրեական պատասխանատվություն է սահմանել մաքսանենգության՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխման համար, **եթե դրանք կատարվել են խոշոր չափերով**, բացառությամբ նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված ապրանքների կամ արժեքների:

Նույն հոդվածի հինգերորդ մասը սահմանել է, որ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե տեղափոխված ապրանքների կամ առարկաների արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Նույն հոդվածի վեցերորդ մասը սահմանել է, որ նույն հոդվածում գույք են համարվում մաքսանենգության առարկաները, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ դրանց արժեքը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը (Մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով) սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝ **հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի չափով:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի (...) իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1.000 ՀՀ դրամը:

16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 25.06.2016 թվականին) 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 25.06.2016 թվականը գործել է մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու համար պատասխանատվության հետևյալ իրավակարգավորումը.

Այսպես՝ օրենսդիրը մաքսային կանոնի խախտում էր համարել անձի կողմից կատարված հետևյալ անօրինական գործողությունը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝ **հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում**՝ որպես դրա համար պատասխանատվություն նախատեսելով այդ ապրանքների մաքսային արժեքի չափով տուգանք նշանակելը:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը քրեական պատասխանատվություն էր նախատեսել այն դեպքերի համար, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբելությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով տեղափոխվում էին հանցագործության պահին 1.000.000 ՀՀ դրամ արժեքը գերազանցող ապրանքներ, մշակութային կամ այլ արժեքներ՝ այն որակելով որպես մաքսանենգություն՝ միևնույն ժամանակ դրա համար որպես պատիժ նախատեսելով նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով տուգանքը, կամ ազատազրկումը՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, բացառելով միևնույն արարքի համար միաժամանակ թե՛ քրեական, թե՛ վարչական պատասխանատվության առաջացումը, սահմանել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը կարող է առաջանալ անձի արարքում հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հիման վրա անձին պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է, ի թիվս այլնի, պարզել՝ արդյոք անձի արարքը, կիրառելի քրեական օրենքի համաձայն, պարունակում է հանցագործության հատկանիշներ, և այդ հարցին միայն բացասական պատասխան տալու դեպքում (նշված հանգամանքը հաստատվում է քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ) կարելի է քննարկել անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչև 25.06.2016 թվականը գործող իրավակարգավորումները մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու համար առաջացող պատասխանատվության տեսակը պայմանավորել են տեղափոխվող ապրանքների արժեքով, այսինքն՝ մինչև 25.06.2016 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով 1.000.000 ՀՀ դրամ արժեքը գերազանցող ապրանքների տեղափոխումն առաջացնում էր ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն (հանցագործության մնացած տարրերի առկայության դեպքում), ինչի արդյունքում այդ արարքի կատարման համար բացառվում էր ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության կիրառումը:

Մինչդեռ 16.05.2016 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածով 25.06.2016 թվականից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, իսկ նույն օրենքի 6-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով ՀՀ քրեական օրենսգրքը լրացվել է համապատասխանաբար 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում մաքսանենգության առանձին տեսակների համար: Այսինքն՝ օրենսդիրն ըստ էության ապաքրեականացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը, բացառությամբ որոշակի տեսակի ապրանքների մաքսանենգության:

Հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար քրեական պատասխանատվության վերացման հետևանքով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու դեպքում նույն արարքի

համար անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ օրենքի հետադարձ ուժի կիրառման առանձնահատկություններին:

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ (...) արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ որպես ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության հիմնական կանոն սահմանված է, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Միևնույն ժամանակ, այս կանոնից սահմանված է բացառություն այն դեպքերի համար, երբ արարքի կատարումից հետո ընդունված օրենքով վերացվում է արարքի հանցավորությունը, մեղմացվում է պատիժը կամ այլ կերպ բարելավվում է հանցանք կատարած անձի վիճակը: Ընդ որում, արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը ՀՀ Սահմանադրության, իսկ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի ուժով օժտված է հետադարձ ուժով, այսինքն՝ մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա այն տարածվում է անկախ այդ օրենքում հետադարձ ուժի մասին նշում առկա լինելու հանգամանքից:

Մաքսանենգության (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված դրա որոշ տեսակների) պատժելիությունը վերացվել է 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով, այսինքն՝ նշված օրենքն արարքի պատժելիությունը վերացնող է, և այդ հիմքով ունենալով հետադարձ ուժ, ըստ էության փոխարինում է մինչև դրա ուժի մեջ մտնելը գործող օրենքին: Ուստի, մինչև 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարքի հանցավորությունը տվյալ դեպքում ենթակա է որոշման ոչ թե արարքի կատարման պահին գործող, այլ դրանից հետո ընդունված և հետադարձ ուժով օժտված 16.05.2016 թվականի ՀՕ-83-Ն օրենքով:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը որևէ օրենսդրական փոփոխություն չի կատարել ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածում, ինչպես նաև ուժը կորցրած չի ճանաչել այդ նորմը, հետևաբար անձի արարքը կարող է որակվել ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով և առաջացնել դրանով սահմանված պատասխանատվություն, եթե անձի արարքում առկա չեն հանցագործության հատկանիշներ:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով մինչև 25.06.2016 թվականը կատարված, 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով ապաքրեականացված արարքի համար անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե անձի կողմից կատարվել է արարք, որը 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում հանցագործության հատկանիշներ չի պարունակում, հետևաբար, ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման

հատկանիշների առկայության դեպքում այդ անձը կարող է պատասխանատվության ենթարկվել մաքսային կանոնների խախտման համար: Նշված եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու համար էական է անձի կողմից կատարված արարքին տրված քրեաիրավական գնահատականը (արարքում հանցակազմի բացակայությունը)՝ հաստատված քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ: Իսկ այն հանգամանքը, թե քրեական որ օրենքի (արարքի կատարման պահին գործող, թե դրանից հետո ընդունված, արարքի պատժելիությունը վերացնող օրենքի) հիման վրա է իրավասու մարմինը եկել արարքում հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ եզրահանգման, բացառապես քրեաիրավական հարց է՝ կապված ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության և նոր քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման հետ, և այն որևէ նշանակություն չունի ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու իրավաչափության հարցը գնահատելու տեսանկյունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը թույլատրելի է համարում մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումն արարքի ապաքրեականացման հետևանքով մերժվելու կամ քրեական գործի վարույթը դրա հետևանքով կարճվելու դեպքում՝ վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում, անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելը, եթե, իհարկե, չեն լրացել անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նիկոլայ Բարխուդարյանի կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ մաքսային հսկողությունից թաքցնելով 02.08.2015 թվականին 1.000.000 ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր արժեքով 6 անվանում դեղորայք տեղափոխվելու փաստի առթիվ Նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում 01.10.2015 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչը, հիմք ընդունելով 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու հանգամանքը, 01.08.2016 թվականին որոշում է կայացրել Նիկոլայ Բարխուդարյանի արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով նշված քրեական գործի վարույթը կարճելու և Նիկոլայ Բարխուդարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Դրանից հետո Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշմամբ Նիկոլայ Բարխուդարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով ճանաչվել է զանցառու և 6 անվանում դեղորայքը մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար տուգանվել է այդ դեղորայքի մաքսային արժեքի՝ 1.118.422 ՀՀ դրամի չափով:

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Նիկոլայ Բարխուդարյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.118.422 ՀՀ դրամ:

Դատարանը, մերժելով Կոմիտեի հայցը և անվավեր ճանաչելով հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած՝ Կոմիտեի իրավախախտումների

հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշումը, պատճառաբանել է, որ 02.08.2015 թվականին պատասխանողի դրսևորած գործողությունը պարունակել է հանցագործության հատկանիշներ, այսինքն՝ առնվազն պատասխանողի գործողությունը չի կարող որակվել որպես վարչական իրավախախտում, քանի որ այդ արարքն իրավահարաբերության պահին գործած խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով առաջացնում էր քրեական պատասխանատվություն: Փաստորեն, 02.08.2015 թվականին պատասխանողի թույլ տված արարքը հանցագործության հատկանիշներ պարունակելու պայմաններում վարչական իրավախախտում (զանցանք) չէր: Հետևաբար 02.08.2015 թվականին պատասխանողի թույլ տված արարքն այդ պահին առնվազն վարչական իրավախախտման հատկանիշներ չի պարունակել, այսինքն՝ զանցանք չէր կարող որակվել, և, ըստ այդմ, ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանողի արարքը չէր հանգեցնում նրա նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի ուժով վարչական հարկադրանքի կիրառմանը, ուստի պատասխանողն արդեն 2016 թվականի օգոստոսին չէր կարող ենթարկվել վարչական հարկադրանքի:

Վերաքննիչ դատարանը, Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելով, ըստ էության համաձայնել է Դատարանի վերը նշված պատճառաբանություններին և եզրահանգումներին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող օրենքով այդ արարքը համարվել է հանցագործություն, սակայն տվյալ դեպքում արարքի հանցավորությունը որոշվում է ոչ թե դրա կատարման պահին գործող օրենքով, այլ դրանից հետո ընդունված, հետադարձ ուժ ունեցող 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով, որով այդ արարքն այլևս հանցագործություն չէ: Հետևաբար այն հանգամանքը, որ Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքը դրա կատարման պահին գործող օրենքով համարվել է հանցագործություն, սույն գործով հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս որևէ նշանակություն չունի, քանի որ արարքի կատարման պահին գործող օրենքը Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքի հանցավորությունը պարզելիս կիրառելի չէ:

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, քանի որ Նիկոլայ Բարխուդարյանի կողմից ՀՀ մաքսային սահմանով՝ մաքսային հսկողությունից թաքցնելով 02.08.2015 թվականին 1.000.000 ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր արժեքով 6 անվանում դեղորայք տեղափոխվելու փաստի առթիվ Նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում 01.10.2015 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է նրա արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով՝ 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու կապակցությամբ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման պայմաններում արդեն Նիկոլայ Բարխուդարյանի կողմից կատարված արարքը կարող էր որակվել որպես ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, եթե պարունակում էր այդ իրավախախտման բոլոր նշանները և չէին լրացել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 26.12.2017 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում

փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-260-Ն ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 01.04.2018 թվականին) 1-ին և 2-րդ հոդվածներով ուժը կորցրած են ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-ին կետը և 29.1-ին գլուխը:

Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանվել է, որ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդունված վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացված հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումները քննվում են Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող 29.1-ին գլխով սահմանված կարգով:

Մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-ին կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

Մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (այսուհետ՝ բռնագանձման վերաբերյալ գործեր) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

Մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի ա. կետի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը:

Մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշմամբ վերանում է տվյալ վարչական ակտի անբողոքարկելի լինելը:

Մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ նույն օրենսգրքի 216.4-րդ հոդվածի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերի քննության ընթացքում վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է համապատասխան վարչական ակտն ընդունած վարչական մարմինը:

Իսկ մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ նույն օրենսգրքի 216.5-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 216.1-ին հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարանը կայացնում է հետևյալ դատական ակտերից մեկը.

1) հայցադիմումն ամբողջությամբ բավարարելու մասին՝ ամբողջությամբ բռնագանձելով հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարը.

2) հայցադիմումը մասնակիորեն բավարարելու մասին՝ վարչական ակտը ճանաչելով մասնակիորեն անվավեր կամ առ ոչինչ՝ մասնակիորեն բռնագանձելով հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարը.

3) հայցադիմումն ամբողջությամբ մերժելու մասին՝ վարչական ակտը ճանաչելով ամբողջությամբ անվավեր կամ առ ոչինչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանները Կոմիտեի հայցը մերժման, իսկ հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած՝ Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու

մասին» թիվ-192 որոշումն անվավեր ճանաչման ենթակա լինելը պայմանավորել են Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքն այն կատարելու պահին հանցագործության հատկանիշներ պարունակելու հանգամանքով: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը սույն որոշման պատճառաբանությունների հիման վրա հանգում է այն եզրակացության, որ վերը նշված հանգամանքը տվյալ դեպքում չի բացառում Նիկոլայ Բարխուդարյանին մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանում գործի քննության ընթացքում Նիկոլայ Բարխուդարյանը, առարկելով հայցի դեմ, ներկայացրել է հետևյալ փաստարկները.

1) խնդրո առարկա դեղամիջոցները Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն, ուստի հայցվորն իրավունք չունի համացանցի միջոցով որոշել գումարի չափը, և ըստ այդմ, իրեն ենթարկել պատասխանատվության.

2) տվյալ դեպքում իր նկատմամբ չէր կարող կիրառվել վարչական հարկադրանքի միջոց:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի դատողությունները սահմանափակվել են Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքն այն կատարելու պահին հանցագործության հատկանիշներ պարունակելու հանգամանքով պայմանավորված՝ վերջինիս մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորության բացառմամբ: Փաստորեն, Դատարանը, հայցը մերժելով, այլևս չի քննարկել Նիկոլայ Բարխուդարյանի կողմից ներկայացված փաստարկը կապված դեղորայքի արժեքի որոշման հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան նոր քննության՝ խնդրո առարկա դեղորայքի արժեքը որոշելու վերաբերյալ Նիկոլայ Բարխուդարյանի կողմից ներկայացված փաստարկը քննության առարկա դարձնելու համար: Դրա արդյունքում հնարավոր կլինի պարզել հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած՝ Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշման իրավաչափությունը և լուծել Նիկոլայ Բարխուդարյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե 1.118.422 ՀՀ դրամ բռնագանձելու հարցը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/7527/05/16 վարչական գործով
03.07.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 03.07.2020 թվականին քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացուցիչ Արման Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Նիկոլայ Բարխուդարյանի՝ 1.118.422 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Արտակ Բարսեղյանս և Նախշուն Տավարացյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Նիկոլայ Բարխուդարյանից բռնագանձել 1.118.422 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2017 թվականի վճռով հայցը մերժվել է՝ անվավեր ճանաչելով 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշումը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.06.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.06.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նիկոլայ Բարխուդարյանը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է մինչև 25.05.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, 06.07.2000 թվականին ընդունված ՀՀ մաքսային օրենսգրքի (ուժը կորցրել է 02.01.2015 թվականին, բացառությամբ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 259-րդ հոդվածով սահմանված դրույթների) 201-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.05.2016 թվականը գործող խմբագրությունը և ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցված են եղել միմյանց հետ, և դրանց կիրառումը կախված է եղել խախտման չափերից: Դրա մասին է վկայում իրավախախտման երկու կազմերի մեկ ամբողջական լինելու հանգամանքը, թեև դրանք սահմանված են եղել երկու տարբեր իրավական ակտերում: Ուստի, օրենսդրի կողմից քրեական պատասխանատվության վերացումը ենթադրում է ոչ թե պատժի ամբողջական վերացում, այլ՝ դրա փոխարինում վարչականով: Նշվածի արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելով, ոչ թե հրաժարվել է նման արարքը հանրային վտանգավոր որակելուց և ըստ այդմ, ընդհանրապես վերացրել է դրա համար հանրային-իրավական

պատասխանատվությունը, այլ ընդամենը մեղմացրել է արարքի իրավական գնահատականը և պատժի տեսակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Որպես վճռարևկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռարևկ դատարանն արձանագրել է հետևյալը

1) ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) նախաբացթողումային հսկողության վարչության ԳՏԲ Բազրատաշենի բաժանմունքի մաքսային տեսուչի կողմից 02.08.2015 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ նույն թվականի օգոստոսի 2-ին ժամը 18:30-ի սահմաններում Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանած ՀՀ քաղաքացի Նիկոլայ Բարխուդարյանի վարած և վերջինիս սեփականություն հանդիսացող «Մերսեդես Բենց» С 180 մակնիշի ավտոմեքենան ելթարկվել է գնման, ինչի արդյունքում բեռնախցիկի պահեստային անվադողի վրայից և շարժիչի կողքերից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված 6 անվանում դեղորայք: Դեղորայքը կապարակնքվել է և հանձնվել է մաքսային պահեստ (հատոր 2-րդ, գ.թ. 9-10):

2) ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 18.09.2015 թվականի թիվ 15-2407 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված հետազոտելու նմուշների (օբյեկտներ 1-6) բաղադրության մեջ Հայաստանի Հանրապետության հսկման ենթակա թմամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների կազմում ընդգրկված որևէ թմամիջոցներ և հոգեմետ նյութեր չեն պարունակում: Փորձաքննության կատարման նպատակով տրամադրված 6 անվանում դեղերից 4-ի մանրաձախ շուկայական հավանական արժեքների հանրագումարը կարող է կազմել 938.800 ՀՀ դրամ, իսկ մյուս 2 դեղերի արժեքների վերաբերյալ արտասահմանյան տարբեր երկրների ինտերնետային կայքերից ստացված տվյալների համաձայն՝ դրանց ընդհանուր միջինացված շուկայական արժեքների հանրագումարը 430.000 ՀՀ դրամ է: Եզրակացության «Ապրանքագիտական հետազոտություն» բաժնում նշվել է, որ ՀՀ շուկայի ուսումնասիրությամբ ի հայտ եկած տեղեկատվությունը ներկայացված է փորձաքննության իրականացման ժամանակահատվածի (03.09.2015-18.09.2015 թվականներ) դրությամբ (հատոր 2-րդ, գ.թ. 45-59):

3) Նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնի հետաքննիչի 01.10.2015 թվականի «Քրեական գործ հարուցելու մասին» որոշման համաձայն՝ ՀՀ մաքսային սահմանով առանց հայտարարագրման 1.368.800 ՀՀ դրամ արժեքով դեղորայքի տեղափոխման դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ (հատոր 2-րդ, գ.թ. 62-63):

4) Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչի 01.08.2016 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում դադարացնելու մասին» որոշման համաձայն՝ թիվ 83163115 քրեական գործի վարույթը կարճվել է, և Նիկոլայ Բարխուդարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ նրա արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն, որ 16.05.2016 թվականին ընդունված «**Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը (հատոր 2-րդ, գ.թ. 64-65):

5) Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 05.08.2016 թվականի թիվ 8-1/1178045/-16 գրության համաձայն՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 18.09.2016 թվականի թիվ 15-2407 եզրակացությամբ ներկայացված դեղորայքի մաքսային արժեքը 2016 թվականի օգոստոսի 2-ի դրությամբ կկազմի 1.118.422 դրամ, իսկ մաքսային վճարները՝ 223.685 դրամ (ԱԱՀ) (հատոր 2-րդ, գ.թ. 69):

6) Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշման համաձայն՝ Նիկոլայ Բարխուդարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով ճանաչվել է զանցառու և 6 անվանում դեղորայքը մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար տուգանվել է այդ դեղորայքի մաքսային արժեքի չափով՝ 1.118.422 ՀՀ դրամի չափով (հատոր 2-րդ, գ.թ. 73-76),

7) Դատարանում գործի քննության ընթացքում Նիկոլայ Բարխուդարյանը, առարկելով հայցի դեմ, ներկայացրել է հետևյալ փաստարկները.

ա) խնդրո առարկա դեղամիջոցները Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն, ուստի հայցվորն իրավունք չունի համացանցի միջոցով որոշել գումարի չափը, և ըստ այդմ, իրեն ենթարկել պատասխանատվության,

բ) տվյալ դեպքում իր նկատմամբ չէր կարող կիրառվել վարչական հարկադրանքի միջոց:

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործը հարուցվել է Կոմիտեի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով Կոմիտեն պահանջել է Նիկոլայ Բարխուդարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.118.422 ՀՀ դրամ:

Դատարանը, մերժելով Կոմիտեի հայցը և անվավեր ճանաչելով հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշումը, պատճառաբանել է, որ 02.08.2015 թվականին պատասխանողի դրսևորած գործողությունը պարունակել է հանցագործության հատկանիշներ, այսինքն՝ առնվազն պատասխանողի գործողությունը չի կարող որակվել որպես վարչական իրավախախտում, քանի որ այդ արարքն իրավահարաբերության պահին գործած խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով առաջացնում էր քրեական պատասխանատվություն: Փաստորեն, 02.08.2015 թվականին պատասխանողի թույլ տված արարքը հանցագործության հատկանիշներ պարունակելու պայմաններում վարչական իրավախախտում (զանցանք) չէր: Հետևաբար 02.08.2015 թվականին պատասխանողի թույլ տված արարքն այդ պահին առնվազն վարչական իրավախախտման հատկանիշներ չի պարունակել, այսինքն՝ զանցանք չէր կարող որակվել, և, ըստ այդմ, ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանողի արարքը չէր հանգեցնում նրա նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի ուժով վարչական հարկադրանքի կիրառմանը, ուստի պատասխանողն արդեն 2016 թվականի օգոստոսին չէր կարող ենթարկվել վարչական հարկադրանքի:

Վերաքննիչ դատարանը, 01.06.2018 թվականի որոշմամբ մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը, ըստ էության համաձայնել է Դատարանի վերը նշված պատճառաբանություններին և եզրահանգումներին:

Վճռաբեկ դատարանը, քննելով Կոմիտեի ներկայացուցիչ Արման Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշման դեմ և թույլատրելի համարելով մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումն արարքի ապաքրեականացման հետևանքով մերժվելու կամ քրեական գործի վարույթը դրա հետևանքով կարճվելու դեպքում վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում, անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելը (որեն Վճռաբեկ դատարանի որոշման 7-րդ էջը), եզրահանգել է, որ թեև Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող օրենքով այդ արարքը համարվել է հանցագործություն, սակայն տվյալ դեպքում արարքի **հանցավորությունը որոշվում է ոչ թե դրա կատարման պահին գործող օրենքով, այլ դրանից հետո ընդունված, հետադարձ ուժ ունեցող** 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության

քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով, որով այդ արարքն այլևս հանցագործություն չէ: Մինևույն ժամանակ, արձանագրելով, որ այն հանգամանքը, որ Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքը դրա կատարման պահին գործող օրենքով համարվել է հանցագործություն, սույն գործով հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս որևէ նշանակություն չունի, քանի որ արարքի կատարման պահին գործող օրենքը Նիկոլայ Բարխուդարյանին վերագրվող արարքի հանցավորությունը պարզելիս կիրառելի չէ (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 9-րդ էջը), Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան, Արսակ Բարսեղյան և Նախշուն Տավարացյանս համաձայն չհինգով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմանը արտահայտած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հասցուկ կարծիքը դրա վերաբերյալ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անգգոյշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է նույն օրենսգրքով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից բխում է, որ արարքը կարող է որակվել վարչական իրավախախտում (զանցանք) և առաջ բերել վարչական պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ այդ արարքը հանցագործություն չի համարվում:

Հարկ ենք համարում նշել, որ քրեական և վարչական օրենսդրությամբ շատ հաճախ նկարագրվում են հակաօրինական արարքների կրկնօրինակներ, որոնց համար նշված օրենսդրություններով նախատեսվում են պատասխանատվության տարբեր միջոցներ: Դրանք հիմնականում վերաբերում են պատասխանատվության եղանակներին և չափին:

Անձանց կողմից կատարված հակաօրինական արարքի որակման հարցն առանցքային նշանակություն ունի նրանց նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու թույլատրելի իրավական ակտն ընտրելու և դրանով նախատեսված կարգով պատասխանատվության հարցը լուծելու համար, քանի որ որոշ արարքներ կատարելը կարող է հանգեցնել ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվության՝ կախված այդ արարքների որակման համար օրենքով նախատեսված պայմանների առկայությունից: Ընդ որում, արարքի որակումը կարող է տրվել բացառապես այն կատարելու պահին գործող օրենսդրության հիման վրա:

Այսպես. եթե անձի կողմից կատարվել է հակաօրինական այնպիսի արարք, որը տվյալ պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է որպես հանցագործություն, ապա այդ արարքը չի կարող որակվել որպես վարչական իրավախախտում (զանցանք) ու հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

Բացառություն կարող է դիտվել թերևս այն իրավիճակը, երբ անձի կողմից կատարված հակաօրինական արարքին տրվի քրեաիրավական գնահատական, սակայն հետագայում (գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու ընթացքում) պարզվի, որ արարքին տրվել է սխալ որակում ու այն ՀՀ քրեական

օրենսգրքով նախատեսված հանցագործություն չէ (այսինքն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է), ապա քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ եթե պարզվի, որ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ: Այնինչ, եթե արարքն ի սկզբանե որակվել է որպես հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքով, ապա դա նշանակում է, որ բացակայել է արարքը վարչական իրավախախտում որակելու իրավական և փաստական հիմքը: Ընդ որում, եթե անգամ հետագայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում տվյալ արարքն այլևս դադարի համարվել հանցագործություն (արարքը ապաքրեականացվի), ապա այդ հանգամանքը չի կարող ազդել արարքը կատարելու պահին դրան տրված իրավական գնահատականի վրա, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Այլ կերպ ասած, եթե արարքը կատարելու պահին այն հանդիսացել է հանցագործություն, ապա հետագայում այդ արարքն ապաքրեականացնելուց հետո չի կարող հետևություն արվել այն մասին, որ նախկինում տրված որակումը եղել է սխալ և փաստորեն արարքը ոչ թե հանցագործություն է եղել, այլ՝ վարչական իրավախախտում:

Այսպիսով, հանգում ենք եզրակացության, որ անձի կողմից կատարված հակաօրինական արարքին տվյալ պահին գործող օրենսդրության հիման վրա քրեաիրավական գնահատական տալու դեպքում այդ արարքը հետագայում այլևս չի կարող որակվել որպես վարչական իրավախախտում, եթե անգամ օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանցագործություն համարվող արարքը ապաքրեականացվի: Հակառակ մեկնաբանման դեպքում կարող է ստացվել այնպիսի իրավիճակ, երբ հնարավոր կլինի տուգանքի ձևով վարչական պատասխանատվություն կիրառել այն անձի նկատմամբ, որը մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով (Մաքսանենգություն) նախատեսված հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված լինելու հիմքով դատապարտված լինի ազատագրվման, սակայն պատիժը կրելու ընթացքում քրեական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքն ապաքրեականացվի ու քրեական գործի վարույթը կարճվի՝ դատապարտյալի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելու հիմքով: Նշված մեկնաբանությունը գոյության իրավունք չունի, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության հիմնարար սկզբունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրահանգում ենք, որ եթե արարքը կատարելու պահին հանցագործության հատկանիշներ պարունակելու հիմքով այն չի հանդիսացել վարչական իրավախախտում (զանցանք), ապա անգամ հետագայում այդ հատկանիշները կորցնելու հանգամանքը չի կարող արարքը դարձնել վարչական իրավախախտում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի չափով:

Մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի (Մաքսանենգությունը) առաջին մասը քրեական պատասխանատվություն է սահմանել մաքսանենգության՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխման համար, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով, բացառությամբ նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված ապրանքների կամ արժեքների:

Նույն հողվածի հինգերորդ մասի համաձայն՝ նույն հողվածի առաջին մասով նախատեսված արարքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե տեղափոխված ապրանքների կամ առարկաների արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ տեղափոխելու դեպքի, երբ խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Նույն հողվածի վեցերորդ մասի համաձայն՝ նույն հողվածում գույք են համարվում մաքսանենգության առարկաները, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ դրանց արժեքը:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հողվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի (...) իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1.000 դրամը:

16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 25.06.2016 թվականին) 5-րդ հողվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 18.04.2003 թվականի քրեական օրենսգրքի 215-րդ հողվածը:

Այսպիսով, մինչև 25.06.2016 թվականը գործել է մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու համար պատասխանատվության հետևյալ իրավակարգավորումը:

Օրենսդիրը վարչական իրավախախտում, այսինքն՝ զանցանք է որակել մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը, եթե բացակայում են հանցագործության հատկանիշները՝ որպես դրա համար պատասխանատվություն նախատեսելով այդ ապրանքների մաքսային արժեքի չափով տուգանք նշանակելով:

Մինևնույն ժամանակ, օրենսդիրը քրեական պատասխանատվություն էր նախատեսել այն դեպքերի համար, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով տեղափոխվում էին հանցագործության պահին 1.000.000 ՀՀ դրամ արժեքը գերազանցող ապրանքներ, մշակութային կամ այլ արժեքներ՝ այն որակելով որպես մաքսանենգություն՝ մինևնույն ժամանակ դրա համար որպես պատիժ նախատեսելով նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով տուգանքը, կամ ազատազրկումը՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Փաստորեն, օրենսդիրը մինևնույն արարք կատարելու համար նախատեսել է թե՛ վարչական և թե՛ քրեական պատասխանատվություն՝ այն պայմանավորելով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող արանքների արժեքով և/կամ ընույթով (մշակութային կամ այլ արժեքներ), հետևաբար, անձի կողմից կատարված հակաօրինական արարքին իրավական գնահատական տալու, կամ, որ նույնն է, արարքին համապատասխան որակում տալու համար անհրաժեշտ է ճշգրտորեն ընտրել կիրառման ենթակա օրենքը:

Դա նշանակում է, որ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման փաստ արձանագրելու յուրաքանչյուր դեպքում արարքին որակում տալու համար անհրաժեշտ է նախ և առաջ հաստատված համարել, որ

դրանում բացակայում են հանցագործության հատկանիշները, քանի որ միայն այդ պարագայում վարչական մարմինն իրավասու կլինի հարուցել վարչական վարույթ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հիման վրա ենթադրյալ իրավախախտի նկատմամբ վարչական պատասխանատվության հարցը լուծելու համար: Մինչդեռ հանցագործության հատկանիշների առկայության պարագայում վարչական վարույթ չի կարող հարուցվել, ուստի գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ «յուրաքանչյուր դեպքում ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հիման վրա անձին պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է, ի թիվս այնի, պարզել՝ արդյոք անձի արարքը, կիրառելի քրեական օրենքի համաձայն, պարունակում է հանցագործության հատկանիշներ, և այդ հարցին միայն բացասական պատասխան տալու դեպքում (նշված հանգամանքը հաստատվում է քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ) կարելի է քննարկել անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը» (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 5-րդ էջը) չի բխում վերոգրյալ իրավակարգավորումներից: Այլ կերպ ասած, եթե վարչական մարմինը հարուցել է վարչական վարույթ ու ձեռնամուխ եղել ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հիման վրա անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթացին, ապա դա նշանակում է, որ ի սկզբանե բացառվել է արարքի քրեորեն պատժելի, այսինքն՝ հանցագործություն լինելը և այն որակվել է որպես վարչական իրավախախտում (զանցանք), հետևաբար վարչական վարույթի ընթացքում արդեն հանցագործության հատկանիշներ պարզելու խնդիր առկա չի կարող լինել:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 16.05.2016 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածով 25.06.2016 թվականից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, իսկ նույն օրենքի 6-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով ՀՀ քրեական օրենսգրքը լրացվել է համապատասխանաբար 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում մաքսանենգության առանձին տեսակների համար: Այսինքն՝ օրենսդիրն ըստ էության ապաքրեականացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը, բացառությամբ որոշակի տեսակի ապրանքների մաքսանենգության:

Հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված վերոգրյալ փոփոխությունները՝ հարկ ենք համարում անդրադառնալ մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար քրեական պատասխանատվության վերացման հետևանքով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու դեպքում նույն արարքի համար անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությանը:

Ինչպես վերը նշեցինք, արարքի որակումը կարող է տրվել այն կատարելու պահին գործող օրենսդրության հիման վրա: Այսինքն՝ եթե արարքը կատարելու պահին այն պարունակել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված հատկանիշներ ու այդ հիմքով հարուցվել է քրեական գործ, ապա դա նշանակում է, որ նշված հոդվածի ապաքրեականացման դեպքում անգամ նույն արարքը չի կարող որակվել վարչական իրավախախտում (զանցանք), քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի իրավակարգավորումներից բխում է, որ արարքը կարող է որակվել վարչական իրավախախտում (զանցանք) և առաջ բերել վարչական պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ այդ արարքը հանցագործություն չի համարվում: Հետևաբար, եթե անգամ արարքի ապաքրեականացումից հետո այն ձեռք է բերում վարչական իրավախախտում (զանցանք) որակելու համար օրենքով նախատեսված հատկանիշներ, այդուհանդերձ դա բավարար չի կարող լինել անձի նկատմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու համար, քանի որ արարքի որակման համար էական են ոչ թե արձանագրված

հակաօրինական գործողություններից հետո կատարված օրենսդրական փոփոխությունները, այլ՝ արարքի կատարման պահը:

Ընդ որում գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար քրեական պատասխանատվության վերացման հետևանքով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու դեպքում նույն արարքի համար անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը պարզելու համար օրենքի հետադարձ ուժի կիրառման հարցը որևէ էական նշանակություն չի կարող ունենալ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը վերլուծելով արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը, ինչպես նաև մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի առաջին մասի, 13-րդ հոդվածի առաջին մասի իրավակարգավորումները՝ արձանագրել է, որ մաքսանենգության (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված դրա որոշ տեսակների) պատժելիությունը վերացվել է 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքով, այսինքն՝ նշված օրենքն արարքի պատժելիությունը վերացնող է, և այդ հիմքով ունենալով հետադարձ ուժ, ըստ էության փոխարինում է մինչև դրա ուժի մեջ մտնելը գործող օրենքին, ուստի մինչև 16.05.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարքի հանցավորությունը տվյալ դեպքում ենթակա է որոշման ոչ թե արարքի կատարման պահին գործող, այլ դրանից հետո ընդունված և հետադարձ ուժով օժտված 16.05.2016 թվականի ՀՕ-83-Ն օրենքով: Մինչև ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու համար էական է անձի կողմից կատարված արարքին տրված քրեաիրավական գնահատականը (արարքում հանցակազմի բացակայությունը)՝ հաստատված քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ: Իսկ այն հանգամանքը, թե քրեական որ օրենքի (արարքի կատարման պահին գործող, թե դրանից հետո ընդունված, արարքի պատժելիությունը վերացնող օրենքի) հիման վրա է իրավասու մարմինը ելել արարքում հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ եզրահանգման, բացառապես քրեաիրավական հարց է՝ կապված ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության և նոր քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման հետ, և այն որևէ նշանակություն չունի ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու իրավաչափության հարցը գնահատելու տեսանկյունից (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 6-7-րդ էջերը):

Լիովին ընդունելի է Վճռաբեկ դատարանի այն վերլուծությունը, ըստ որի՝ ՀՀ օրենսդրությամբ որպես ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության հիմնական կանոն սահմանված է, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Մինչև ժամանակ, այս կանոնից սահմանված է բացառություն այն դեպքերի համար, երբ արարքի կատարումից հետո ընդունված օրենքով վերացվում է արարքի հանցավորությունը, մեղմացվում է պատիժը կամ այլ կերպ բարելավվում է հանցանք կատարած անձի վիճակը: Այդուհանդերձ, գտնում ենք, որ այս վերլուծությունը կիրառելի կարող է լինել միայն անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու առումով: Այսինքն՝ արդյոք անձը պե՛տք է ենթարկվի քրեական պատասխանատվության կամ շարունակի կրել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը մի արարքի համար, որը թեև այն կատարելու պահին հանդիսացել է հանցագործություն, սակայն քրեական գործի քննության կամ պատիժը կրելու ընթացքում արարքն ապաքրեականացվել է կամ պատիժ սահմանող նորմով նախատեսվել է նախկինից տարբերվող, առավել մեղմ պատիժ: Նշված դիրքորոշումը բխում

է արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող, հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքները հետադարձ ուժով օժտելու սահմանադրական կանոնակարգման էությունից և բովանդակությունից, քանի որ ապաքրեականացումը ենթադրում է քրեական պատասխանատվությունից ազատում և երբևէ չի կարող ենթադրել այլ վարույթի շրջանակներում մեկ այլ պատասխանատվության կիրառում: Այսպես օրինակ՝ եթե օրենսդիրը որոշել որ թե ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության 18.04.2003 թվականի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, այլ՝ մեղմացներ նույն հոդվածի սանկցայով նախատեսված պատժի չափը, ապա ՀՀ Սահմանադրության իրավակարգավորումների հիմքով նշված օրենքը կունենար հետադարձ ուժ: Սակայն, եթե օրենսդիրը որոշել է ապաքրեականացնել արարքը, ապա դա ամենևին չի նշանակում, որ այն կարող է դիտարկվել որպես արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող, հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք՝ վարչական պատասխանատվություն կիրառելու առումով, քանի որ եթե, օրինակ, անձը կրել է երեք տարի ազատազրկման ձևով Հայաստանի Հանրապետության 18.04.2003 թվականի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի կիրառմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատժի մեծ մասը և մնացել է կրելու միայն երեք ամիս, ապա արարքի ապաքրեականացման հիմքով այդ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու և գործի վարույթը կարճելուց հետո նրա նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի սանկցիայի շրջանակներում սահմանված վարչական պատասխանատվության կիրառումը ոչ մի տրամաբանությամբ չի կարող դիտվել անձի վիճակը բարելավող: Ճիշտ հակառակը, որոշ դեպքերում այն կարող է դիտարկվել նույնիսկ անձի վիճակը վատթարացնող, որպիսի իրավիճակի առաջացումն ուղղակի կհակասի ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի տրամաբանությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ մինչև **25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ** ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումն արարքի ապաքրեականացման հետևանքով մերժվելու կամ քրեական գործի վարույթը դրա հետևանքով կարճվելու դեպքում՝ վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում, անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելն անթույլատրելի է:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նիկոլայ Բարխուդարյանի կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ մաքսային հսկողությունից թաքցնելով 02.08.2015 թվականին 1.000.000 ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր արժեքով 6 անվանում դեղորայք տեղափոխվելու փաստի առթիվ Նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում 01.10.2015 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչը, հիմք ընդունելով 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու հանգամանքը, 01.08.2016 թվականին որոշում է կայացրել Նիկոլայ Բարխուդարյանի արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով նշված քրեական գործի վարույթը կարճելու և Նիկոլայ Բարխուդարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Այնուհետև Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշմամբ Նիկոլայ Բարխուդարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով ճանաչվել է զանցառու և 6 անվանում դեղորայքը մաքսային հսկողությունից

թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար տուգանվել է այդ դեղորայքի մաքսային արժեքի 1.118.422 ՀՀ դրամի չափով:

Մինչդեռ գտնում ենք, որ 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության 18.04.2003 թվականի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու հանգամանքը չէր կարող ազդեցություն ունենալ 02.08.2015 թվականին կատարված արարքի որակման վրա, քանի որ արարքը կատարելու պահի դրությամբ այն վարչական իրավախախտում (զանցանք) չի հանդիսացել ու այդպիսին չի որակվել, ուստի գտնում ենք, որ Դատարանը մերժելով Կոմիտեի հայցը և անվավեր ճանաչելով հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած՝ Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 18.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-192 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանն անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, ուստի Կոմիտեի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Ա. Բարսեղյան
Ն. Տավարացյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/4860/05/16**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/4860/05/16**
Նախագահող դատավոր՝ **Ա. Բաբայան**
Դատավորներ՝ **Ա. Առաքելյան**
Ա. Թովմասյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսու-
հետ՝ Կոմիտե) ներկայացուցիչ Արման Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ
վարչական դատարանի 24.10.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ալմաքար» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտ-
ների կոմիտեի՝ 18.05.2016 թվականի թիվ 577/08 որոշումն (այսուհետ՝ Որոշում) անվավեր
ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Որոշումը:
ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան)
17.05.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.10.2018
թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.05.2017
թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության տնօրենը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սիսայ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղի է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը փոստային առաքմամբ ծանուցվել է իր նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին, որով տեղեկացվել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: Ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկվել է եռօրյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն ներկայացնել նշվածի վերաբերյալ Ընկերության գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները, սակայն նշված ժամկետում հայցվորը վարույթի շրջանակներում անցկացվող լուսններին չի մասնակցել և բացատրություններ/առարկություններ չի ներկայացել: Դա նշանակում է, որ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ լուսններ անցկացնելու կոնկրետ ժամի և օրվա մասին տեղեկատվության բացակայությունն ըստ էության չի ազդում հայցվորի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի անարգել իրականացման վրա և չի կարող հանգեցնել վարչական ակտի անվավերության:

Բացի այդ, նույնանման փաստական հանգամանքներով թիվ ՎԴ/7680/05/16 վարչական գործով ըստ հայցի «Նոյ 777» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 29.08.2016 թվականին ընդունված թիվ 1320/01 որոշումը և ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պաշտոնատար անձանց կողմից 16.09.2016 թվականին ընդունված թիվ 033470 որոշումը վերացնելու պահանջների մասին գործով կայացված վճռում Դատարանը վերոգրյալի կապակցությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը՝ «...հայցվոր ընկերությանը ծանուցելով՝ պատասխանող վարչական մարմինը վերջինիս հնարավորություն է ընձեռել արտահայտել իր դիրքորոշումները՝ բացատրությունները կամ առարկությունները: Դատարանն արձանագրում է, որ վարույթ հարուցելու և գրավոր բացատրություններ կամ առարկություններ ներկայացնելու առաջարկելու վերաբերյալ վարչական մարմնի ծանուցագիրը հայցվոր ընկերությունը ստացել է 22.08.2016 թվականին այն դեպքում, երբ վարչական վարույթը եզրափակող վարչական ակտը՝ թիվ 1320/01 որոշումն, ընդունվել է 29.08.2016 թվականին: Այսինքն՝ հայցվոր ընկերությունը, անկախ ծանուցագրով սահմանված եռօրյա ժամկետից, մեկ շաբաթ ժամանակ է ունեցել իր դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտելու, օգտվելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված բոլոր իրավունքներից, իսկ եթե նշված ժամանակը հայցվորին բավարար չէր, վերջինս որևէ կերպ կաշկանդված չէր դիմել վարչական մարմնին ժամկետը երկարաձգելու, նոր ժամկետ ներկայացնելու, կամ գրավոր դիրքորոշման փոխարեն բանավոր դիրքորոշումները ներկայացնելու հնարավորությունից: ...Դատարանի գնահատմամբ, ծանուցագիրը վարույթի մասնակից ընկերության կողմից ստանալուց մեկ շաբաթ հետո վարչական ակտ ընդունելով, ծանուցագրով քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել ընկերությանն առաջարկելով՝ պատասխանող վարչական մարմնին ապահովել է վերջինիս լաված լինելու իրավունքը, մինչդեռ ընկերությունն ինքն

է դրսևորել անտարբեր անգործություն, որի արդյունքում վարչական մարմնի գործողությունները չեն կարող գնահատվել ոչ իրավաչափ»:

Վերը հիշատակված վճռի դեմ հայցվոր «Նոյ 777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2018 թվականի որոշմամբ մերժվել է և վճիռը թողնվել է անփոփոխ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է քեկանել Վերաքննիչ դատարանի 24.10.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պայաստիսանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանություններն առ այն, որ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հարկային պարտավորություններ ստանձնող անձի մասնակցությունն ապահովելու և վերջինիս կողմից իր իրավունքները լիարժեքորեն իրացնելու իրական հնարավորություն ընձեռնելու տեսանկյունից, ուստի, Որոշումն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանման և կիրառման արդյունքում: Նման պայմաններում վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, և Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի պետի 06.05.2016 թվականի թվագրությամբ ծանուցագրով Ընկերության տնօրեն Արամ Մակարյանին հայտնվել է, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի՝ Ընկերությունը 05.05.2016 թվականի դրությամբ ունի 22.176.664 ՀՀ դրամ չկատարված պարտավորություն: Նշված հարկային պարտավորությունը սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Ընկերության տնօրեն Արամ Մակարյանը 13.05.2016 թվականին հրավիրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի (ք. Արովյան, Բարեկամության հրապարակ 1)՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու համար: Նշված ծանուցագրով Ընկերության տնօրենին միաժամանակ հայտնվել է, որ հարուցվել է վարչական վարույթ Ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով, և առաջարկվել է ետօրյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ գրավոր բացատրություններ և/կամ առարկություններ: Նշված ծանուցագիրն Ընկերությունում ստացվել է 13.05.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 46, 48**).

2) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի Որոշմամբ որոշվել է Ընկերությունից գանձել 21.214.664 ՀՀ դրամ պարտավորության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 43-44**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարճրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ

դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ծանուցելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե ի՞նչ տեղեկություններ պետք է պարունակի վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ վարույթի մասնակցին հասցեագրված ծանուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կանոնակարգման համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Հարուցման փուլը մեկնարկում է անձի (անձանց) դիմումով կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ, **ընթացիկ փուլի ընթացքում իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառնությունները**, որն ավարտվում է եզրափակիչ փուլով՝ վարչական ակտի ընդունմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝ (ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ, (բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ ետօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց (...) վարչական մարմինը **ծանուցում է** վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման **տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին**:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին **պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին**, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուումներ կարող են չանցկացվել, եթե՝ (ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն, (բ) դիմումն ակնհայտ անհիմն է, (գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում, եթե՝ (ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հարույթի համար որևէ վտանգի առաջացման, (բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններիս հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Միաժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի ընթացքում լուումներ անցկացնելու կանոնից որոշ բացառություններ: Ընդ որում, նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է լուումներ չանցկացնելու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վարչական մարմինն ունի հայեցողական լիազորություն ընտրելու լուումներ անցկացնելու կամ չանցկացնելու երկու իրավաչափ լուծումներից մեկը: Վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու հայեցողական հիմքերն են.

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն,

բ) վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած դիմումն ակնհայտ անհիմն է,

գ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բանավոր վարչական ակտ:

Մինչդեռ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է լուումներ չանցկացնելու իմպերատիվ հիմքերը, որոնք են՝

ա) անհրաժեշտություն է առաջացել անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման,

բ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է այլ ձևի վարչական ակտ:

Ընդ որում, լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում ամրագրված իմպերատիվ հիմքը համահունչ է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված այն իրավակարգավորման հետ, որ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու վերոգրյալ դեպքերը սպառիչ չեն, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ օրենքով կարող են նախատեսվել լուումներ չանցկացնելու հայեցողական և իմպերատիվ այլ հիմքեր:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածին, արձանագրել է, որ այդ հոդվածով նախատեսված իրավական նորմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի մասնակիցներին ծանուցման հետ կապված վարչական մարմնի հետևյալ պարտականությունները.

1) դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը,

2) վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը,

3) **վարույթի մասնակիցներին վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելը** (որեն Մարգհա Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական

եկամուրների կոմիտեի Շենգալիթի հարկային տեսչության թիվ ՎԴ/7107/05/14 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը):

Մեկ այլ թիվ ՎԴ/6067/05/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններիս հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը. այս փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լսումները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «... ծանուցագրով Տիգրան Սահակյանին առաջարկվել է ետօրյա ժամկետում Կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները, ինչը, սակայն, չի կարող փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված լսումներին՝ լսումներ չանցկացնելու, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու հիմքերի բացակայության պայմաններում: Փաստորեն, Կոմիտեի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լսումներ չանցկացնելու հետևանքով Տիգրան Սահակյանը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական վարույթի լսումների շրջանակում գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից (տե՛ս Տիգրան Սահակյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6067/05/16 վարչական գործով 25.12.2019 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լսումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերի, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքի բացակայության պայմաններում վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի ընթացքում անցկացնել լսումներ: Ընդ որում, վարչական մարմինը պետք է ապահովի վարչական վարույթի մասնակիցների պատշաճ ծանուցումը լսումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վարչական վարույթի մասնակցի՝ վարչական վարույթի լսումներին մասնակցելու հնարավորությունը չպետք է անհիմն կերպով սահմանափակվի, այդ հնարավորությունից վարչական վարույթի մասնակիցը չպետք է գրկվի վարչական մարմնի գործողությամբ կամ անգործությամբ: Մասնավորապես՝ վարչական վարույթի հարուցման և իրականացման մասին վարչական վարույթի մասնակցի իրազեկումը (ծանուցումը) պետք է կատարվի այնպես, որ ռոջանկորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին: Իսկ այդ մասնակցության ապահովման համար նախևառաջ

վարույթի մասնակիցը պետք է ծանուցված լինի ինչպես վարչական վարույթի հարուցման մասին, այնպես էլ հարուցված վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների, այդ թվում՝ լուումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին: Նման կերպ վարույթի մասնակիցներին հնարավորություն կտրվի վարչական վարույթի լուումների ժամանակ վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդել վարչական մարմնի վերջնական որոշման վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի հարուցման մասին միայն վարույթի մասնակցին ծանուցելու պարտականության կատարումը վարչական մարմնին չի ազատում վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ վարույթի մասնակցին պատշաճ ծանուցելու պարտականության կատարումից: Ըստ այդմ, վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ վարույթի մասնակցին հասցեագրված ծանուցագիրը, ի թիվս այլնի, պետք է տեղեկություններ պարունակի *լուումների* անցկացման տեղի, օրվա, ժամի մասին: Հակառակ դեպքում վարույթի մասնակիցը կհամարվի վարչական վարույթի ընթացիկ փուլում լուումների անցկացման վերաբերյալ պատշաճ կերպով չճանուցված:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի պետի 06.05.2016 թվականի թվագրությամբ ծանուցագրով Ընկերության տնօրեն Արամ Մակարյանին հայտնվել է, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի Ընկերությունը 05.05.2016 թվականի դրությամբ ունի 22.176.664 ՀՀ դրամ չկատարված պարտավորություն: Նշված հարկային պարտավորությունը սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Ընկերության տնօրեն Արամ Մակարյանը 13.05.2016 թվականին հրավիրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի (ք. Արվյան, Բարեկամության հրապարակ 1) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու համար: Նշված ծանուցագրով Ընկերության տնօրենին միաժամանակ հայտնվել է, որ հարուցվել է վարչական վարույթ Ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով, և առաջարկվել է եռօրյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ գրավոր բացատրություններ և/կամ առարկություններ: Նշված ծանուցագիրն Ընկերությունում ստացվել է 13.05.2016 թվականին: Քննարկվող վարչական վարույթի արդյունքում կայացվել է Որոշումը, որով որոշվել է Ընկերությունից գանձել 21.214.664 ՀՀ դրամ պարտավորության գումար:

Դատարանը, բավարարելով Ընկերության հայցը և անվավեր ճանաչելով Որոշումը, հաստատված է համարել, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի ծանուցվել գործի քննության ժամանակի և վայրի մասին՝ նշելով նաև, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 06.05.2016 թվականի ծանուցագիրը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, քանի որ դրանում բացակայում է վարչական վարույթի անցկացման ժամի մասին տեղեկությունը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտն ընդունելու նպատակով հարուցված վարչական վարույթի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրը որևէ տեղեկություն չի պարունակում, այլ դրանում ընդամենը նշում է կատարված եռօրյա ժամկետում գրավոր բացատրություններ և/կամ առարկություններ ներկայացնելու վերաբերյալ, ինչի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ

նշված ծանուցումը չի կարող դիտվել որպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական վարույթին հայցվոր կողմին պատշաճ ծանուցում ապահովելու վարչական մարմնի պարտականության իրականացում:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից վարչական մարմնի համար իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու և վարչական ակտ ընդունելու ինպերատիվ լիազորություն նախատեսված լինելու դեպքերից մեկն ամրագրված էր իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.1997 թվականին, ուժի մեջ է մտել 30.05.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին)՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) 29.1-րդ հոդվածով, որի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ընդ որում, նշված իրավանորմի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում լուումների անցկացման վերաբերյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ, ուստի այդ հարցի նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավանորմերը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող Որոշման կայացման նպատակով վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ: Ընդ որում, տվյալ դեպքում բացակայել են լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերը, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքը: Հետևաբար, վիճարկվող որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պետք է անցկացվեին լուումներ, որոնց մասին Ընկերությունը՝ որպես վարչական վարույթի մասնակից, պետք է պատշաճ կերպով ծանուցվեր: Իսկ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական վարույթի լուումների անցկացման վերաբերյալ Ընկերությանը հասցեագրված ծանուցագիրը, ի թիվս այլնի, պետք է պարունակեր տեղեկություններ լուումների անցկացման տեղի, օրվա և ժամի մասին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում վարչական գործի նյութերում առկա է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի պետի 06.05.2016 թվականի թվագրությամբ ծանուցագիրը՝ ուղղված Ընկերության տնօրեն Արամ Մակարյանին: Նշված ծանուցագրով Ընկերության տնօրեն Արամ Մակարյանին հայտնվել է, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի՝ Ընկերությունը 05.05.2016 թվականի դրությամբ ունի 22.176.664 ՀՀ դրամ չկատարված պարտավորություն: Նշված հարկային պարտավորությունը սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Ընկերության տնօրեն Արամ Մակարյանը 13.05.2016 թվականին հրավիրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի (ք. Արևմյան, Բարեկամության հրապարակ 1)՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու համար: Նշված ծանուցագրով Ընկերության տնօրենին միաժամանակ հայտնվել է, որ հարուցվել է վարչական վարույթ Ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի

29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով, և առաջարկվել է եռօրյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ գրավոր բացատրություններ և/կամ առարկություններ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված ծանուցագրի բովանդակությանը, փաստում է որ այն վերաբերում է երկու վարչական վարույթների:

1) *վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթ*. Ընկերության հարկային պարտավորությունը սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Ընկերության տնօրեն Արամ Մակարյանը 13.05.2016 թվականին հրավիրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 8-րդ բաժին (ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1)՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու համար:

2) *չվճարված հարկային պարտավորության գումարը գանձելու վերաբերյալ վարչական վարույթ*. այս վարույթի շրջանակում Ընկերության տնօրենին առաջարկվել է եռօրյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ գրավոր բացատրություններ և/կամ առարկություններ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված ծանուցագիրը սույն գործով վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած՝ չվճարված հարկային պարտավորության գումարը գանձելու վերաբերյալ վարույթի շրջանակում լուումների անցկացման կոնկրետ տեղի, օրվա, ժամի մասին նշում չի պարունակում: Իսկ գործի նյութերում բացակայում է այդ մասին Ընկերությանը պատշաճ կերպով ծանուցած լինելու վերաբերյալ որևէ այլ ապացույց:

Փաստորեն, Որոշման հիմքում ընկած վարչական վարույթի ընթացքում լուումների անցկացման մասին Ընկերությունը պատշաճ կերպով չի ծանուցվել այն դեպքում, երբ բացակայել են լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերը, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքը: Արդյունքում, Ընկերությունը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական վարույթի լուումների ժամանակ վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությանը եռօրյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն գրավոր բացատրություններ և/կամ առարկություններ ներկայացնելու մասին առաջարկությունը չի կարող փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված լուումներն անցկացնելուն և դրանց տեղի, օրվա, ժամի վերաբերյալ վարչական վարույթի մասնակիցներին ծանուցելուն այն դեպքում, երբ լուումների անցկացումն օրենքի պահանջն է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների խախտմամբ: Հետևաբար Որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով: Նման իրավաչափ եզրահանգման եկել է նաև Վերաքննիչ դատարանը՝ մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Որոշումն անվավեր ճանաչելու մասին Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ:

Միննույն ժամանակ, ամբողջ վերագրյալի լույսի ներքո անդրադառնալով թիվ ՎԴ/7680/05/16 վարչական գործով ստորադաս դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Տվյալ դեպքում բողոքաբերի կողմից, որպես իրավական փաստարկ, վկայակոչվել է թիվ ՎԴ/7680/05/16 վարչական գործով ըստ հայցի «Նոյ 777» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 29.08.2016 թվականին ընդունված թիվ 1320/01 որոշումը և ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պաշտոնատար անձանց կողմից 16.09.2016 թվականին ընդունված թիվ 033470 որոշումը վերացնելու պահանջների մասին գործով կայացված դատական ակտերում ստորադաս դատարանների արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ծանուցագիրը վարույթի մասնակից ընկերության կողմից ստանալուց մեկ շաբաթ հետո վարչական ակտ ընդունելով, ծանուցագրով քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելուն ընկերությանն առաջարկելով՝ պատասխանող վարչական մարմինն ապահովել է վերջինիս լաված լինելու իրավունքը:

Անհրաժեշտ համարելով ապահովել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների միատեսակ կիրառությունը սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական վարույթի հարուցման մասին վարույթի մասնակցին ծանուցելով և վերջինիս եռօրյա ժամկետում իր դիրքորոշումները ներկայացնելու առաջարկ ներկայացնելով չի կարող ապահովվել անձի լաված լինելու իրավունքի իրացման հնարավորությունը, քանի որ *վարչական վարույթի ընթացիկ փուլի, այսինքն՝ լուսնների իրականացման մասին վարչական վարույթի մասնակցի իրազեկումը (ծանուցումը) պետք է կատարվի այնպես, որ ողջամրորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին: Իսկ այդ մասնակցության ապահովման համար վարույթի մասնակիցը, բացի վարչական վարույթի հարուցման մասին ծանուցվելուց, պետք է ծանուցվի նաև հարուցված վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների, այդ թվում՝ լուսնների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:* Նման կերպ վարույթի մասնակիցներին հնարավորություն կտրվի վարչական վարույթի լուսնների ծանուցված վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդել վարչական մարմնի վերջնական որոշման վրա:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Որոշումն անվավեր ճանաչելու մասին Դատարանի վճիռը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 24.10.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/7317/05/16**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԳ/7317/05/16**

Նախագահող դատավոր՝ **Կ. Մաթևոսյան**

Դատավորներ՝ **Կ. Բաղդասարյան**

Կ. Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ**
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ**
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ**
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ**
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ**
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ**

2020 թվականի հուլիսի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Գագիկ Բարսեղյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի)՝ վարչական ակտը վերացնելու և, որպես հետևանք՝ որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Բարսեղյանը պահանջել է վերացնել Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) 31.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-229 որոշումը և որպես ակտի անվավերության հետևանք՝ Կոմիտեին պարտավորեցնել վերադարձնել իրեն պատկանող և Կոմիտեի կողմից ի պահ վերցված 35կգ քաշով 18 անվանում դեղորայքը՝ ձեռք բերման աղբյուրին վերադարձնելու (վերաարտահանելու) համար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 03.07.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.06.2018 թվականի որոշմամբ Գագիկ Բարսեղյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 03.07.2017 վճիռը մասնակիորեն վարչական ակտը վերացնելու պահանջը մերժելու մասով, բեկանվել և փոփոխվել է՝ այդ մասով հայրը բավարարվել է. մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 20-րդ, 35-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածները և 06.07.2000 թվականին ընդունված ՀՀ մաքսային օրենսգրքի (ուժը կորցրել է 02.01.2015 թվականին, բացառությամբ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 259-րդ հոդվածով սահմանված դրույթների) 205-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված հիմքի սուկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարչական գործի ապացույցներով հաստատվում է, որ Գագիկ Բարսեղյանը մասնակցել է վարչական վարույթի ընթացիկ փուլում հրավիրված լսումներին, արտահայտել է իր դիրքորոշումը վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, ներկայացրել է իր փաստարկներն իր կողմից թույլ տրված մաքսային կանոնների խախտման պատճառների և շարժառիթների վերաբերյալ: Մասնավորապես, մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է 20.04.2016 թվականին՝ արձանագրություն կազմելով: Նույն օրը Գագիկ Բարսեղյանը բացատրություն է տվել տեղի ունեցածի վերաբերյալ: 26.04.2016 թվականի թիվ 3491/13-2 ծանուցագրով վերջինս հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի ընթացիկ փուլին: Գագիկ Բարսեղյանը ներկայացել է բացատրություն է տվել այն մասին, որ գտնվում է վատառողջ վիճակում, ի վիճակի չէ տալ բացատրություններ, և պարտավորվել է առողջական վիճակը կարգավորվելու դեպքում ներկայանալ: 10.06.2016 թվականի թիվ 13-4/1125060-16, 08.08.2016 թվականի թիվ 6863/13-2 և 19.08.2016 թվականի թիվ 7184/13-2 գրություններով Գագիկ Բարսեղյանը փաստացի երեք անգամ հրավիրվել է մասնակցելու հարուցված վարույթին, սակայն չի ներկայացել:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է 06.07.2000 թվականին ընդունված ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված հիմքի սուկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի պարզել՝ արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունների արդյունքում Գագիկ Բարսեղյանի արարքը կարող է որակվել որպես ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված իրավախախտում, թե՛ ոչ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությունը և ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցված են եղել միմյանց հետ, ու դրանց կիրառումը կախված է եղել խախտման չափերից: Նման պայմաններում օրենսդրի կողմից քրեական պատասխանատվության վերացումը չի կարող ենթադրել պատժի ամբողջական վերացում. այն պետք է փոխարինվեր վարչական պատասխանատվությամբ, քանի որ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելով, ոչ թե՛ հրաժարվել է նման արարքը հանրային վտանգավոր որակելուց և, ըստ այդմ, ընդհանրապես վերացրել է դրա համար հանրային-իրավական պատասխանատվությունը, այլ ընդամենը մեղմացրել է արարքի իրավական գնահատականը, և ըստ այդմ, պատժի տեսակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.07.2017 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախաբացթողումային հսկողության վարչության ԳՏԲ Բագրատաշենի բաժանմունքի մաքսային տեսուչի կողմից 20.04.2016 թվականին կազմվել է «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրություն այն մասին, որ նույն թվականի ապրիլի 20-ին ժամը 06:00-ի սահմաններում Գագիկ Բարսեղյանը, «Toyota RAV4» մակնիշի ավտոմեքենայով Վրաստանից հատելով ՀՀ Բագրատաշեն մաքսային սահմանը, մուտք է գործել ՀՀ տարածք: Ավտոմեքենայի մանրակրկիտ զննության արդյունքում հայտնաբերվել է 18 անվանում չհայտարարագրված դեղորայք: Դեղորայքը կապարակնքվել է և հանձնվել է մաքսային պահեստ (**հատոր 1-ին, գ.թ. 17, 18**).

2) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 08.06.2016 թվականին տրված թիվ 16991605 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված հետազոտելու նմուշները (օբյեկտներ 1-18) հանդիսանում են գործարանային արտադրության դեղեր և իրենց բաղադրության մեջ թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր, պրեկուրսորներ, խիստ ներգործող և թունավոր նյութեր չեն պարունակում: Փորձաքննության կատարման նպատակով տրամադրված դեղերի ընդհանուր շուկայական արժեքը 20.04.2016 թվականի դրությամբ ՀՀ-ում գործող շուկայական գներով կարող էր կազմել 7.069.077 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 20-27**).

3) Վարչությունում դեպքի առթիվ 16.06.2016 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ (**հատոր 1-ին, գ.թ. 11, 12**).

4) Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչ Ա. Ասատրյանի կողմից 03.08.2016 թվականին որոշում է կայացվել Գագիկ Բարսեղյանի արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով նշված քրեական գործի վարույթը կարճելու մասին: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն, որ 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը (**հատոր 1-ին, գ.թ. 11, 12**).

5) Վարչության վարչական վարույթի իրականացման բաժնի առաջին կարգի մասնագետի կողմից Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիր է կազմվել այն մասին, որ վերջինս ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով իր նկատմամբ սկսված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցելու համար **17.08.2016 թվականին** ժամը 10:00-ին հրավիրվում է Վարչության վարչական վարույթի իրականացման բաժին: Նշված ծանուցագիրը փոստային առաքման միջոցով ուղարկվել է Գագիկ Բարսեղյանին՝ Երևանի Խորենացու փողոցի թիվ 209 շենքի 43-րդ բնակարան հասցեով, սակայն վարչական գործում բացակայում է վերջինիս կողմից այն ստացված լինելու վերաբերյալ ապացույցը (**հատոր 1-ին, գ.թ. 85, 86**).

6) Վարչության պետի կողմից Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիր է կազմվել այն մասին, որ վերջինս ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով իր նկատմամբ սկսված վարչական գործի քննությանը մասնակցելու համար **31.08.2016 թվականին**, ժամը 12:00-ին հրավիրվում է Վարչություն: Նշված ծանուցագիրը փոստային առաքման միջոցով ուղարկվել է Գագիկ Բարսեղյանին վերը նշված հասցեով, սակայն այն 22.08.2016 թվականին վերադարձվել է «Չպահանջված» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 88, 95**).

7) Վարչության պետ Ս. Սինանյանի կողմից 31.08.2016 թվականին որոշում է կայացվել վերը նշված խախտման համար Գագիկ Բարսեղյանին ՀՀ մաքսային օրենսգրքի

201-րդ հոդվածով զանցառու ճանաչելու և մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 18 անվանում դեղորայքի մաքսային արժեքի՝ 5.183.754 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 13-16**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը որոշակի դեպքերում վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ իրականացվելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝

կարող է արդյոք մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվել վարչական պարասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ՝ վերջինիս ուղարկված ծանուցագիրը «Չպահանջված» նշումով վերադարձվելու դեպքում:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի կենսագործման առանձնահատկությունների վերաբերյալ նախկինում արտահայտած իր դիրքորոշումները և անդրադառնալով այն հարցին, թե կարող է արդյոք անձը վկայակոչել պատշաճ ծանուցված չլինելու և իր լաված լինելու իրավունքը սահմանափակված լինելու փաստերն այն դեպքում, երբ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվել է իր բացակայությամբ՝ իրեն ուղարկված ծանուցագիրը «Չպահանջված» նշումով վերադարձվելու դեպքում, արձանագրում է հետևյալը.

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան

իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝ (ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ, (բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց (...) վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել **փաստական** հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուումներ կարող են չանցկացվել, եթե՝ (ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն, (բ) դիմումն ակնհայտ անհիմն է, (գ) ընդունվում է քանակոր վարչական ակտ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում, եթե՝ (ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, (բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում. արդյունավետ միջոցը պետք է օժտված լինի մարդու իրավունքի ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակումը կանխելու, կամ իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ապահովելու հատկանիշով (*յրեն İlhan v. Turkey (22277/93) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.06.2000 թվականի վճիռը, կետ 97*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց լաված լինելու իրավունքի

կենսագործման առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն անթույլատրելի է:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նաև գտել է, որ վարչական վարույթի մասին ծանուցելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգը անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու լավագույն իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լումաների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների լավագույն իրավունքի գործնական իրացումը (*տե՛ս Մարգիս Խոսչարյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Շենգայիթի հարկային տեսչության թիվ ՎԳ/7107/05/14 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Ավելին, վարույթի մասնակցի լավագույն իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը, քանի որ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս վարչական վարույթի ընթացքում անձի լավագույն իրավունքի պատշաճ իրացման (*տե՛ս Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԳ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

ՀՀ մաքսային օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է ՀՀ մաքսային օրենսգրքի 38-րդ գլխով և Վարչական իրավասահարումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նույն գլխին չհակասող մասով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պարասիսանարվոյթային ենթարկվող անձի մասնակցությամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործը կարող է քննվել նաև տվյալ անձի բացակայության դեպքում, եթե քննության տեղի ու ժամանակի մասին սահմանված կարգով նրան տեղյակ է պահվել, սակայն վերջինիս կողմից որևէ միջնորդություն

չի հարուցվել, կամ եթե անձը բացակայում է, և հայրնի չէ նրա գործադրումը վայրը, կամ եթե նա գործադրում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապարտադրելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը (...) 3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 278-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությունն սկսվում է Կրկնվող գործը քննող կոլեգիալ մարմնի կազմը հայտարարելով կամ պաշտոնատար անձին ներկայացնելով: Գործը քննող կոլեգիալ մարմնի նիստին նախագահողը կամ պաշտոնատար անձը հայտարարում է, թե ինչ գործ է քննվելու, ով է կանչված վարչական պարտախանաարվության, գործի քննությանը մասնակցող անձանց բացառում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, հրապարակում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը: Նիստում լսում են գործի քննությանը մասնակցող անձանց, հետազոտվում են ապացույցները և լուծվում միջնորդությունները (...):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ որպես ընդհանուր կանոն սահմանված է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը քննել վարչական պարտախանաարվության ենթարկվող անձի մասնակցությամբ, և նշված կանոնից բացառություն են միայն հետևյալ դեպքերը.

1. քննության տեղի ու ժամանակի մասին սահմանված կարգով վարչական պարտախանաարվության ենթարկվող անձին տեղյակ է պահել, սակայն վերջինիս կողմից որևէ միջնորդություն չի հարուցվել, կամ

2. վարչական պարտախանաարվության ենթարկվող անձը բացակայում է, և հայրնի չէ նրա գործադրումը վայրը, կամ

3. վարչական պարտախանաարվության ենթարկվող անձը գործում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Վճարել դատարանն արձանագրում է, որ վերը նշված հանգամանքների բացակայության դեպքում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը չի կարող իրականացվել վարչական պարտախանաարվության ենթարկվող անձի բացակայությամբ: Ընդ որում, օրենսդիրը ոչ միայն սահմանել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը վարչական պարտախանաարվության ենթարկվող անձի մասնակցությամբ իրականացնելու պահանջ (բացառությամբ վերը նշված դեպքերի), այլև վարչական իրավախախտման (այդ թվում՝ մաքսային կանոնների խախտման) վերաբերյալ գործը քննության նախապարտադրելիս գործը քննող մարմնի (պաշտոնատար անձի) կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակում ներառել է գործի քննության ժամանակի և տեղի մասին դրան մասնակցող անձանց ծանուցված լինելու հարցը, ավելին՝ սահմանվել է նաև, որ գործի քննության ընթացքում գործը քննող մարմինը (պաշտոնատար անձը), ի թիվս այլնի, լսում է գործի քննությանը մասնակցող անձանց:

Անդրադառնալով մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ իրականացնելու հնարավորությանը այն դեպքում, երբ այդ անձին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է «Չպահանջված» նշումով՝ Վճարել դատարանն արձանագրում է հետևյալը.

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոստային առաքանին կամ դրամական միջոցների փոստային փոխադրությունները, որոնք հնարավոր չէ տեղ հասցնել (հանձնել) փոստային ծառայություններից օգտվողների հասցեի անճշրտության կամ դրա անհրաժեշտ տվյալների բացակայության, հասցեատրիբոջ այլ բնակավայր մեկնելու կամ ուրիշ հանգամանքների պատճառով, որոնք բացառում են փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված՝ փոստային կապի օպերատորի կողմից իր պարտականությունների կատարումը, ողջամիտ ժամկետներում վերադարձվում են ուղարկողին: (...):

Հայաստանի Հանրապետության կառավարության «Փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» 16.02.2012 թվականի թիվ 211-Ն որոշման

1-ին կետի համաձայն՝ հասարարվել է փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի (այսուհետք՝ Կանոնակարգ):

Կանոնակարգի 44-րդ կետի համաձայն՝ փոստային առաքանիները հանձնվում և դրամական միջոցների փոստային փոխադրությունները վճարվում են դրանց վրա նշված հասցեին համապարասխան կամ տրվում են փոստային կապի օբյեկտներում:

Կանոնակարգի 48-րդ կետի համաձայն՝ փոստային առաքանիները և դրամական միջոցների փոստային փոխադրություններն ստացողին (օրինական ներկայացուցչին) հանձնելու կամ վճարելու անհնարինության դեպքում դրանք մինչև մեկ ամիս պահպանվում են փոստային կապի օբյեկտում: Պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել ուղարկողի կամ ստացողի (օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն:

Կանոնակարգի 49-րդ կետի համաձայն՝ առաջին տեղեկացումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոստային առաքանի և դրամական միջոցների փոստային փոխադրություններն ստանալու համար ստացողի չներկայանալու դեպքում ստացողի ստորագրությամբ նրան է հանձնվում երկրորդ տեղեկացումը:

Կանոնակարգի 51-րդ կետի համաձայն՝ սահմանված պահպանման ժամկետը լրանալուց հետո հասցեատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից չարագված հասարակ նամակագրական թղթակցությունը փոխանցվում է որպես չպահանջված փոստային առաքանի (...):

Կանոնակարգի 52-րդ կետով սահմանվել են այն դեպքերը, երբ փոստային առաքանի կամ դրամական միջոցների փոստային փոխադրությունները վերադարձվում են հետադարձ հասցեով: Մասնավորապես, նշված կետի համաձայն՝ փոստային առաքանի կամ դրամական միջոցների փոստային փոխադրությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված կարգով վերադարձվում են հետադարձ հասցեով՝

- 1) ուղարկողի դիմումի հիման վրա՝ մինչ արացողին հանձնելը.
- 2) փոստային առաքանի կամ դրամական միջոցների փոստային փոխադրություններն արացողի (օրինական ներկայացուցչի) կողմից արանալուց հրաժարվելու դեպքում.
- 3) նշված հասցեում արացողի բացակայության դեպքում.
- 4) արացողի հասցեի անընթեռնելիության դեպքում (ջնջված, պոկված և այլն).
- 5) այլ հանգամանքների դեպքում, որոնք բացառում են, փոստային կապի ծառայությունների մատուցման մասին պայմանագրին համապարասխան, փոստային կապի օպերատորի կողմից իր պարտավորությունների կատարումը:

Վերը նշված իրավանդությունների համակարգային վերլուծության արդյունքում Վճարել դատարանն արձանագրում է, որ փոստային առաքանի հանձնվում է դրա վրա նշված հասցեին համապարասխան կամ տրվում է փոստային կապի օբյեկտում: Միևնույն ժամանակ, գործնականում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ որոշակի հանգամանքներով պայմանավորված (օրինակ՝ միայն առաքման պահին հասցեատերը (արացողը) բացակայել է նշված հասցեից, կամ հասցեատերը (արացողը) տեղափոխվել է այլ բնակավայր) փոստային առաքանի հնարավոր չի լինում սահմանված վայրում հանձնել հասցեատիրոջը կամ նախքան այն հասցեատիրոջը հանձնելն ուղարկողը դիմում է փոստային կապի օպերատորին՝ խնդրելով վերադարձնել փոստային առաքանին: Առաջին դեպքում փոստային առաքանիները մինչև մեկ ամիս պահպանվում են փոստային կապի օբյեկտում: Ընդ որում, պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել ուղարկողի կամ ստացողի (օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն: Ավելին՝ առաջին տեղեկացումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոստային առաքանի ստանալու համար ստացողի չներկայանալու դեպքում ստացողի ստորագրությամբ նրան է հանձնվում երկրորդ տեղեկացումը, իսկ նշված ժամկետը լրանալուց հետո հասցեատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից այն չարանալու դեպքում չարացված հասարակ նամակագրական թղթակցությունը փոխանցվում է որպես չպահանջված փոստային առաքանի (...):

Դրանից ելնելով՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ փոստային առաքանի վերադարձվում է փոստային առաքանի վերադարձվելու վերաբերյալ CN 15 ձևաթղթում առկա «Չպահանջված» նշումով, պետք է ելնել այն կանխավարկածից, որ առաքման վայրից հասցեատիրոջ (արացողի) բացակայելու հիմքով փոստային

առաքանին մինչև մեկ ամիս պահպանվել է փոստային կապի օրյեկտում, *հասցեատերերը (արացողը) համապարասխան տեղեկացումները վերը նշված նորմերի խնամարով ստանալուց* հետո սահմանված ժամկետում չի ներկայացել առաքանին ստանալու համար, որի արդյունքում *չարացված առաքանին փոխանցվել է որպես չպահանջված փոստային առաքանի:*

Վերոգրյալի համարեքսրում քննարկելով մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունն առանց վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի մասնակցության իրականացնելու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ եթե վարչական պատասխանատվության ենթարկվող անձին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է մեկ անգամ «Չպահանջված» նշումով, ապա վերջինս չի կարող համարվել գործի քննության տեղի և ժամանակի մասին սահմանված կարգով տեղյակ պահված, իսկ առաքանին հանձնելու պահին նրա՝ համապատասխան հասցեից բացակայությունը՝ գնահատվել որպես վերջինիս գտնվելու վայրն անհայտ լինելու կամ նրա՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու փաստը հաստատող ապացույց:

Միևնույն ժամանակ, Վճարել դատարանն արձանագրում է, որ անձի բացակայության և գրնվելու վայրը հայրնի չլինելու հիմքով մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը կարող է իրականացվել վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի բացակայությամբ միայն այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում վարչական մարմնի մոտ ձևավորվել է ռոջամիսը ենթադրություն այն մասին, որ վարչական պարասխանաարվության ենթարկվող անձը չի գրնվում վարչական մարմնին հայրնի հասցեում: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը կարող է վերաբերել այն միջոցներին, որոնք ձեռնարկվել են համապարասխան ծանուցագիրը «Չպահանջված» նշումով վերադարձվելուց հետո, որի ժամանակ վարչական մարմինը պետք է ձեռնարկի հնարավոր և ռոջամիսը բոլոր միջոցներն անձին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի ու վայրի մասին ծանուցելու համար (օրինակ՝ անձին ծանուցել վարչական մարմնին հայրնի այլ հասցեով կամ ուղարկել կրկնակի ծանուցում վարչական մարմնին հայրնի միակ հասցեով, և այլն), և եթե դրանից հետո հնարավոր չի լինի ապահովել մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի և վայրի մասին վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի ծանուցումը, վարչական մարմինը կարող է ռոջամիսը ենթադրել, որ անձը բացակայում է, և հայտնի չէ նրա գտնվելու վայրը: Հակառակ դեպքում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը չի կարող իրականացվել վարչական պարասխանաարվության ենթարկվող անձի բացակայությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարչության վարչական վարույթի իրականացման բաժնի առաջին կարգի մասնագետի կողմից Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիր է կազմվել այն մասին, որ վերջինս ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով իր նկատմամբ սկսված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցելու համար 17.08.2016 թվականին, ժամը 10:00-ին հրավիրվում է Վարչության վարչական վարույթի իրականացման բաժին: Նշված ծանուցագիրը փոստային առաքման միջոցով ուղարկվել է Գագիկ Բարսեղյանին՝ Երևանի Խորենացու փողոցի թիվ 209 շենքի 43-րդ բնակարան հասցեով, սակայն վարչական գործում բացակայում է վերջինիս կողմից այն ստացված լինելու վերաբերյալ ապացույցը (ստացման-հանձնման փոստային հետադարձ ծանուցագրում առաքանու ստացման ամսաթիվը և ստորագրությունը բացակայում են): Դրանից հետո Վարչության պետի կողմից Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիր է կազմվել այն մասին, որ վերջինս ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով իր նկատմամբ սկսված վարչական գործի քննությունը մասնակցելու համար արդեն 31.08.2016 թվականին, ժամը 12:00-ին հրավիրվում է Վարչություն: Նշված ծանուցագիրը փոստային առաքման միջոցով ուղարկվել է Գագիկ Բարսեղյանին վերը նշված հասցեով, սակայն այն 22.08.2016 թվականին վերադարձվել է «Չպահանջված» նշումով:

Գագիկ Բարսեղյանը, պահանջելով վերացնել Վարչության 31.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-229 որոշումը, հայցի հիմքում դրել է նաև այն, որ վարչական մարմնի կողմից խախտվել է վարչական վարույթի ընթացքում իր լաված լինելու իրավունքը, քանի որ չի ստացել 31.08.2016 թվականին նշանակված վարչական գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը:

Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով նաև, որ «20.04.2016 թվականի մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրության մեջ որպես Գագիկ Հայկազի Բարսեղյանի (...) հասցե նշված է ք. Երևան, Խորենացի փ. 209շ., 43 բն. (փաստացի), 20.04.2016 թվականին Հայցվորի կողմից տրված բացատրության մեջ որպես բնակության հասցե նշված է ք. Երևան, Խորենացի փ. 209շ., 43 բն. (նշված արձանագրությունները ստորագրվել են նաև սույն գործով Հայցվորի կողմից): Վարչական մարմինը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գագիկ Հայկազի Բարսեղյանը նշված հասցեով ուղարկված ծանուցումն ստանալով ներկայանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (ծանուցում՝ AR193697187AM), շարունակել է հետագա ծանուցումները նույնպես ուղարկել Հայցվորի կողմից արձանագրություններում հայտնած վերը նշված հասցեով, սակայն այն ետ է վերադարձվել «տեղափոխված» նշումով»: Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտել է, որ հայցվորը պարտավոր էր վարչական մարմնին տրամադրել լրացուցիչ տեղեկություններ՝ նոր հասցե տեղափոխվելու մասին:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով նաև, որ «տվյալ պարագայում վարչական վարույթի մասին հայցվորին իրազեկելու վերաբերյալ վարչական գործի նյութերում առկա են հետևյալ ապացույցները. (...) թիվ AR223710539AM փոստային ծրարի պատճենը, որի համաձայն՝ «08.08.2016» թվագրված գրությունը պարունակող առաքանին հետ է վերադարձվել «Չպահանջված» նշումով», «վարչական մարմինը չի իրականացրել վարչական վարույթի մասին պատշաճ ծանուցում և վարչական վարույթն իրականացրել է առանց հայցվորի», վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ անվավեր ճանաչելով վիճարկվող որոշումը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ «08.08.2016» թվագրված գրությունը, որի համաձայն՝ Գագիկ Բարսեղյանը հրավիրվել է 17.08.2016 թվականին ժամը 10:00-ին հրավիրված վարչական վարույթի լսումներին, Դատարանը գնահատել է որպես հայցվորին հանձնված՝ նշելով, որ այդ գրությունը պարունակող առաքանին վերադարձվել է «տեղափոխված» նշումով:

Նախ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գագիկ Բարսեղյանին հասցեագրված 08.08.2016 թվականի և 19.08.2016 թվականի ծանուցագրերից և ոչ մեկը չի վերադարձվել «Տեղափոխված» նշումով: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Տեղափոխված» նշումով վերադարձված փոստային ծրարը պարունակում էր ոչ թե Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիրը, այլ՝ «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-229 որոշումը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի դատողությունները՝ այդ մասով Դատարանի պատճառաբանություններն անհիմն լինելու վերաբերյալ, իրավաչափ են:

Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտում արձանագրել է, որ թիվ AR223710539AM փոստային ծրարի պատճենի համաձայն՝ «08.08.2016» թվագրված գրությունը պարունակող առաքանին վերադարձվել է «Չպահանջված» նշումով, մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև AR223710539AM փոստային ծրարը վերադարձվել է «Չպահանջված» նշումով, սակայն այդ ծրարով Գագիկ Բարսեղյանին է ուղարկվել ոչ թե 17.08.2016 թվականին, ժամը 10:00-ին հրավիրված վարչական վարույթի լսումների, այլ՝ 31.08.2016 թվականին, ժամը 12:00-ին գործի քննության վերաբերյալ ծանուցագիրը:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությունների հիմնավորվածությանը, նկատի ունենալով այն, որ 17.08.2016 և 31.08.2016 թվականներին նշանակված գործի քննության վերաբերյալ ծանուցումները Գագիկ Բարսեղյանը չի ստացել, ընդ որում՝ դրանցից առաջինը ստանալու վերաբերյալ ապացույց ընդհանրապես առկա չէ վարչական գործի նյութերում, իսկ երկրորդը վերադարձվել է «Չպահանջված» նշումով, արձանագրում է, որ Վարչության 31.08.2016

թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-229 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը, հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին չտրամադրելով այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին, վերջինիս, ըստ էության, չծանուցելով վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին, չապահովելով նրա լաված լինելու իրավունքի գործնական իրացումը՝ «Չպահանջված» նշումով ծանուցագիրը վերադարձվելու պայմաններում չի ձեռնարկել համապատասխան միջոցներ Գագիկ Բարսեղյանին գործնականում ծանուցելու նպատակով, և ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գործի քննությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ իրականացնելու հիմքերի բացակայության պայմաններում գործի քննությունն առանց Գագիկ Բարսեղյանի մասնակցության իրականացնելով՝ խախտել է վերջինիս՝ որպես վարույթին մասնակցող անձի լաված լինելու իրավունքը, որի հետևանքով Գագիկ Բարսեղյանը զրկվել է իր իրավունքների պաշտպանությունը լիարժեք իրականացնելու հնարավորությունից, որպիսի իրավաչափ եզրահանգման եկել է նաև Վերաքննիչ դատարանը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն՝ վարչական ակտը վերացնելու պահանջը մերժելու մասով, բեկանելով և փոփոխելով Դատարանի 03.07.2017 թվականի վճիռը՝ այդ մասով հայցը բավարարելով և Վարչության 31.08.2016 թվականի թիվ-229 որոշումն անվավեր ճանաչելով վերը նշված հիմքով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Միևնույն ժամանակ, վճռաբեկ բողոքում նշված երկրորդ հիմքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» ՀՀ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կոլեգիալ կազմով որոշումներն ընդունվում են (...) Վճռաբեկ դատարանում՝ Վճռաբեկ դատարանի պալատի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը գործի քննության արդյունքներով կայացնում է որոշում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանի որոշումն ընդունվում է վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Սույն գործով բողոքի քննությանը հաջորդած քվեարկության արդյունքներով չեն ապահովվել Վճռաբեկ դատարանի՝ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի առաջին հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ կողմ քվեարկած դատավորների՝ վերը նշված իրավանդումների իմաստով բավարար թվով ձայներ սույն բողոքի երկրորդ հիմքի վերաբերյալ որևէ որոշում կայացնելու համար:

Սակայն վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու վերը նշված հիմքի առկայության պայմաններում սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը որևէ կերպ չի կարող ազդել գործի ելքի վրա, քանի որ վճռաբեկ բողոքի առաջին հիմքի քննության շրջանակներում Կոմիտեի կողմից Գագիկ Բարսեղյանի լաված լինելու իրավունքը խախտված լինելու փաստի հաստատումն արդեն իսկ բավարար է վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե իրավաչափ էր արդյոք Գագիկ Բարսեղյանին վերագրվող արարքն ապաքրեականացվելու արդյունքում քրեական գործի վարույթը կարճվելու պայմաններում վերջինիս նույն արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկելը, թե՛ ոչ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
թիվ ՎԳ/7317/05/16 վարչական գործով

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/7317/05/16
2020թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/7317/05/16
Նախագահող դատավոր՝ Կ. Մաթևոսյան
Դատավորներ՝ Կ. Բաղդասարյան
Կ. Ավետիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Գագիկ Բարսեղյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ վարչական ակտը վերացնելու և, որպես հետևանք՝ որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործը որոշել է. «Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ա. Բարսեղյանս և Է. Սեդրակյանս, համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 24.07.2020 թվականին թիվ ՎԳ/7317/05/16 վարչական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Բարսեղյանը պահանջել է վերացնել Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) 31.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ-229 որոշումը և որպես ակտի անվավերության հետևանք՝ Կոմիտեին պարտավորեցնել վերադարձնել իրեն պատկանող և Կոմիտեի կողմից ի պահ վերցված 35կգ քաշով 18 անվանում դեղորայքը՝ ձեռք բերման աղբյուրին վերադարձնելու (վերաարտահանելու) համար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 03.07.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.06.2018 թվականի որոշմամբ Գագիկ Բարսեղյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 03.07.2017 վճիռը մասնակիորեն վարչական ակտը վերացնելու պահանջը մերժելու մասով, բեկանվել և փոփոխվել է՝ այդ մասով հայցը բավարարվել է. մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 20-րդ, 35-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածները և 06.07.2000 թվականին ընդունված ՀՀ մարտային օրենսգրքի (ուժը կորցրել է 02.01.2015 թվականին,

բացատրությանը «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 259-րդ հոդվածով սահմանված դրույթների) 205-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքի սուկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարչական գործի ապացույցներով հաստատվում է, որ Գագիկ Բարսեղյանը մասնակցել է վարչական վարույթի ընթացիկ փուլում հրավիրված լուսններին, արտահայտել է իր դիրքորոշումը վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, ներկայացրել է իր փաստարկներն իր կողմից թույլ տրված մաքսային կանոնների խախտման պատճառների և շարժառիթների վերաբերյալ: Մասնավորապես, մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է 20.04.2016 թվականին՝ արձանագրություն կազմելով: Նույն օրը Գագիկ Բարսեղյանը բացատրություն է տվել տեղի ունեցածի վերաբերյալ: 26.04.2016 թվականի թիվ 3491/13-2 ծանուցագրով վերջինս հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի ընթացիկ փուլին: Գագիկ Բարսեղյանը ներկայացել է բացատրություն է տվել այն մասին, որ գտնվում է վատառողջ վիճակում, ի վիճակի չէ տալ բացատրություններ, և պարտավորվել է առողջական վիճակը կարգավորվելու դեպքում ներկայանալ: 10.06.2016 թվականի թիվ 13-4/1125060-16, 08.08.2016 թվականի թիվ 6863/13-2 և 19.08.2016 թվականի թիվ 7184/13-2 գրություններով Գագիկ Բարսեղյանը փաստացի երեք անգամ հրավիրվել է մասնակցելու հարուցված վարույթին, սակայն չի ներկայացել:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է 06.07.2000 թվականին ընդունված ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքի սուկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի պարզել՝ արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունների արդյունքում Գագիկ Բարսեղյանի արարքը կարող է որակվել որպես ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված իրավախախտում, թե՛ ոչ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությունը և ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցված են եղել միմյանց հետ, ու դրանց կիրառումը կախված է եղել խախտման չափերից: Նման պայմաններում օրենսդրի կողմից քրեական պատասխանատվության վերացումը չի կարող ենթադրել պատժի ամբողջական վերացում. այն պետք է փոխարինվեր վարչական պատասխանատվությամբ, քանի որ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելով, ոչ թե հրաժարվել է նման արարքը հանրային վտանգավոր որակելուց և, ըստ այդմ, ընդհանրապես վերացրել է դրա համար հանրային-իրավական պատասխանատվությունը, այլ ընդամենը մեղմացրել է արարքի իրավական գնահատականը, և ըստ այդմ, պատժի տեսակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.06.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.07.2017 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախաբացթողումային հսկողության վարչության ԳՏԲ Բագրատաշենի բաժանմունքի մաքսային տեսուչի կողմից 20.04.2016 թվականին կազմվել է «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրություն այն մասին, որ նույն թվականի ապրիլի 20-ին ժամը 06:00-ի սահմաններում Գագիկ Բարսեղյանը, «Toyota RAV4» մակնիշի ավտոմեքենայով Վրաստանից հատելով ՀՀ Բագրատաշեն մաքսային սահմանը, մուտք է գործել ՀՀ տարածք: Ավտոմեքենայի մանրակրկիտ զննության արդյունքում հայտնաբերվել է 18 անվանում չհայտարարագրված դեղորայք: Դեղորայքը կապարակնքվել է և հանձնվել է մաքսային պահեստ (**հատոր 1-ին, գ.թ. 17, 18**).

2) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 08.06.2016 թվականին տրված թիվ 16991605 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված հետազոտելու նմուշները (օբյեկտներ 1-18) հանդիսանում են գործարանային արտադրության դեղեր և իրենց բաղադրության մեջ թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր, պրեկուրսորներ, խիստ ներգործող և թունավոր նյութեր չեն պարունակում: Փորձաքննության կատարման նպատակով տրամադրված դեղերի ընդհանուր շուկայական արժեքը 20.04.2016 թվականի դրությամբ ՀՀ-ում գործող շուկայական գներով կարող էր կազմել 7.069.077 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 20-27**).

3) Վարչությունում դեպքի առթիվ 16.06.2016 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ (**հատոր 1-ին, գ.թ. 11, 12**).

4) Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչ Ա. Ասատրյանի կողմից 03.08.2016 թվականին որոշում է կայացվել Գագիկ Բարսեղյանի արարքում մաքսանենգության հանցակազմի բացակայության հիմքով նշված քրեական գործի վարույթը կարճելու մասին: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն, որ 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը (**հատոր 1-ին, գ.թ. 11, 12**).

5) Վարչության վարչական վարույթի իրականացման բաժնի առաջին կարգի մասնագետի կողմից Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիր է կազմվել այն մասին, որ վերջինս ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով իր նկատմամբ սկսված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցելու համար **17.08.2016 թվականին** ժամը 10:00-ին հրավիրվում է Վարչության վարչական վարույթի իրականացման բաժին: Նշված ծանուցագիրը փոստային առաքման միջոցով ուղարկվել է Գագիկ Բարսեղյանին՝ Երևանի Խորենացու փողոցի թիվ 209 շենքի 43-րդ բնակարան հասցեով, սակայն վարչական գործում բացակայում է վերջինիս կողմից այն ստացված լինելու վերաբերյալ ապացույցը (**հատոր 1-ին, գ.թ. 85, 86**).

6) Վարչության պետի կողմից Գագիկ Բարսեղյանին հասցեագրված ծանուցագիր է կազմվել այն մասին, որ վերջինս ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով իր նկատմամբ սկսված վարչական գործի քննությանը մասնակցելու համար **31.08.2016 թվականին**, ժամը 12:00-ին հրավիրվում է Վարչություն: Նշված ծանուցագիրը փոստային առաքման միջոցով ուղարկվել է Գագիկ Բարսեղյանին վերը նշված հասցեով, սակայն այն 22.08.2016 թվականին վերադարձվել է «Չպահանջված» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 88, 95**).

7) Վարչության պետ Ս. Մինանյանի կողմից 31.08.2016 թվականին որոշում է կայացվել վերը նշված խախտման համար Գագիկ Բարսեղյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով զանցառու ճանաչելու և մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 18 անվանում դեղորայքի մաքսային արժեքի՝ 5.183.754 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 13-16**):

4. Հարուկ կարծիքի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության արժանացնելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության «Փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» 16.02.2012 թվականի թիվ 211-Ն որոշմամբ հաստատված՝ փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 44-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ և 52-րդ կետերը, արձանագրել է, որ փոստային առաքանին հանձնվում է դրա վրա նշված հասցեին համապատասխան կամ տրվում է փոստային կապի օբյեկտում: Միննույն ժամանակ գործնականում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ որոշակի հանգամանքներով պայմանավորված (օրինակ՝ միայն առաքման պահին հասցեատերը (ստացողը) բացակայել է նշված հասցեից, կամ հասցեատերը (ստացողը) տեղափոխվել է այլ բնակավայր) փոստային առաքանին հնարավոր չի լինում սահմանված վայրում հանձնել հասցեատիրոջը

կամ նախքան այն հասցեատիրոջը հանձնելն ուղարկողը դիմում է փոստային կապի օպերատորին՝ խնդրելով վերադարձնել փոստային առաքանին: Առաջին դեպքում փոստային առաքանիները մինչև մեկ ամիս պահպանվում են փոստային կապի օբյեկտում: Ընդ որում, պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել ուղարկողի կամ ստացողի (օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն: Ավելին՝ առաջին տեղեկացումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոստային առաքանին ստանալու համար ստացողի չներկայանալու դեպքում ստացողի ստորագրությամբ նրան է հանձնվում երկրորդ տեղեկացումը, իսկ նշված ժամկետը լրանալուց հետո հասցեատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից այն չստանալու դեպքում **չստացված հասարակ նամակագրական թղթակցությունը փոխանցվում է որպես չպահանջված փոստային առաքանի (...):**

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ փոստային առաքանին վերադարձվում է փոստային առաքանին վերադարձվելու վերաբերյալ CN 15 ձևաթղթում առկա «Չպահանջված» նշումով, պետք է ելնել այն կանխավարկածից, որ առաքանի վայրից հասցեատիրոջ (ստացողի) բացակայելու հիմքով փոստային առաքանին մինչև մեկ ամիս պահպանվել է փոստային կապի օբյեկտում, հասցեատերը (ստացողը) համապատասխան տեղեկացումները վերը նշված նորմերի իմաստով ստանալուց հետո սահմանված ժամկետում չի ներկայացել առաքանին ստանալու համար, որի արդյունքում **չստացված առաքանին փոխանցվել է որպես չպահանջված փոստային առաքանի:**

Վերոգրյալի համատեքստում քննարկելով մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունն առանց վարչական պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցության իրականացնելու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե վարչական պատասխանատվության ենթարկվող անձին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է մեկ անգամ՝ «Չպահանջված» նշումով, ապա վերջինս չի կարող համարվել գործի քննության տեղի և ժամանակի մասին սահմանված կարգով տեղյակ պահված, իսկ առաքանին հանձնելու պահին նրա՝ համապատասխան հասցեից բացակայությունը՝ գնահատվել որպես վերջինիս գտնվելու վայրն անհայտ լինելու կամ նրա՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու փաստը հաստատող ապացույց:

Ընդհանուր առմամբ համաձայն լինելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնակարգի 44-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ և 52-րդ կետերի վերաբերյալ վերլուծությունների հետ՝ այնուամենայնիվ, համաձայն չենք այն եզրահանգման հետ, ըստ որի եթե վարչական պատասխանատվության ենթարկվող անձին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է մեկ անգամ՝ «Չպահանջված» նշումով, ապա վերջինս չի կարող համարվել գործի քննության տեղի և ժամանակի մասին սահմանված կարգով տեղյակ պահված հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնակարգի 49-րդ կետի համաձայն՝ առաջին տեղեկացումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոստային առաքանին և դրամական միջոցների փոստային փոխադրություններն ստանալու համար ստացողի չներկայանալու դեպքում ստացողի ստորագրությամբ նրան է հանձնվում երկրորդ տեղեկացումը:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ վերլուծությունից բացի, նշված կանոնի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել նաև, որ այն իր մեջ ներառում է փոստային կապի օպերատորի աշխատակցի կողմից որոշակի գործողությունների կատարում: Դրանք են՝ ստացողին երկու անգամ տեղեկացում հանձնելը, իսկ տեղեկացումը, ենթադրելի է, որ պետք է առնվազն նշում պարունակի այն մասին, որ հասցեատերն ունի փոստային առաքանի և այն կարող է ստանալ փոստային կապի օբյեկտում: Ընդ որում, կանոնից բխում է, որ առաջին տեղեկացումն ստացողին կարելի է հանձնել առանց վերջինից ստորագրություն վերցնելու կամ կարելի է կապի որևէ միջոցով վերջինիս տեղեկացնել փոստային առաքանի ունենալու մասին: Այդ գործողություններից որևէ մեկը կատարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում առաքանին ստանալու համար ստացողի չներկայանալը պարտադրում է, որ փոստային կապի օպերատորի աշխատակիցը կատարի կանոնով սահմանված մյուս գործողությունը, այն է երկրորդ անգամ տեղեկացում

հանձնի ստացողին, սակայն այս անգամ արդեն պարտադիր է, որ տեղեկացումն ստացողին հանձնվի վերջինիս ստորագրությամբ: Ասվածից կարելի է հանգել հետևության, որ տեղեկացումն առնվազն երկրորդ անգամ ստացողին հանձնելիս փոստային կապի օպերատորի աշխատակիցը պետք է հանդիպի ստացողին, քանի որ հակառակ դեպքում չի կարող ստանալ նրա ստորագրությունը տեղեկացումը նրան հանձնելիս: Կանոնի համաձայն՝ տեղեկացում հանձնելու իմաստը կայանում է նրանում, որ հասցեատերը հստակ իմանա, որ ունի իրեն հասցեագրված փոստային առաքանի, և որ այն գտնվում է փոստային կապի օբյեկտում: Ստացվում է, որ գործնականում տեղի ունեցող այն դեպքերում, երբ առաքանին հնարավոր չի լինում Կանոնակարգի 44-րդ կետի համաձայն հասցեատիրոջը հանձնել վերջինիս հասցեում, ապա նույն առաքանին հասցեատիրոջը կարելի է հանձնել փոստային կապի օբյեկտից ստանալու հնարավորություն ունենալու վերաբերյալ նրան երկու անգամ տեղեկացում հանձնելու միջոցով:

Հետևաբար, համաձայն լինելով Վճռաբեկ դատարանի առաջ քաշած այն կանխավարկածի հետ, ըստ որի եթե փոստային առաքանին վերադարձվում է փոստային առաքանին վերադարձվելու վերաբերյալ CN 15 ձևաթղթում առկա «Չպահանջված» նշումով, ապա պետք է համարել, որ առաքանին մինչև մեկ ամիս պահպանվել է փոստային կապի օբյեկտում և հասցեատերը (ստացողը) համապատասխան տեղեկացումները վերը նշված նորմերի իմաստով ստանալուց հետո սահմանված ժամկետում չի ներկայացել առաքանին ստանալու համար, գտնում ենք, որ այդ դեպքերում փոստային առաքանու հասցեատերը պետք է համարվի առաքանին ստացած, քանի որ այդպիսի դեպքերի ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հասցեատերն ինքն է իրեն զրկում փոստային առաքանին ստանալու հնարավորությունից: Այսինքն, եթե ենթադրենք, որ հնարավոր են դեպքեր երբ հասցեատերը միայն առաքանին ստանալու պահին է բացակայում առաքման հասցեից, ապա դա չի նշանակի, որ նույն հասցեատերը նույն հասցեից բացակայել է նաև երկու տեղեկացումները հանձնելիս: Ընդհակառակը, նման դեպքերում պետք է հանգենք հետևության, որ տեղեկացումն ստանալուց հետո հասցեատերը չի այցելել փոստային կապի օբյեկտ և չի ստացել փոստային իր առաքանին:

Ամբողջ վերոգրյալ վերլուծությունները սույն գործի փաստերի հետ համադրելով գտնում ենք, որ 31.08.2016 թվականին նշանակված գործի քննության վերաբերյալ ծանուցումը Գագիկ Բարսեղյանի չստանալու պայմաններում նույնիսկ վարչական մարմինը կարող էր համարել, որ ձեռնարկել է Գագիկ Բարսեղյանին ծանուցելու համար անհրաժեշտ և օրենքով սահմանված բոլոր գործողությունները, մինչդեռ Գագիկ Բարսեղյանը հստակ իմանալով, որ փոստային կապի օբյեկտում ունի ծանուցում, չի ստացել այն, ինքն իրեն զրկելով գործի քննության տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին իմանալու հնարավորությունից: Ինչն էլ իր հերթին նշանակում է, որ նման պայմաններում վարչական մարմինը կարող է համարել, որ գործի քննության տեղի և ժամանակի մասին վարույթի մասնակիցը տեղյակ է պահվել և չի հարուցել որևէ միջնորդություն: Հետևաբար առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գործը վարույթի մասնակցի բացակայությամբ քննելու հիմքը, այն է՝ գործի քննության տեղի և ժամանակի մասին վարույթի մասնակցին սահմանված կարգով տեղյակ է պահվել, սակայն վերջինիս կողմից որևէ միջնորդություն չի հարուցվել:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի այն եզրահանգմանը, ըստ որի վարչական մարմինը պետք է ձեռնարկի հնարավոր և ողջամիտ բոլոր միջոցներն անձին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի ու վայրի մասին ծանուցելու համար (օրինակ՝ անձին ծանուցել վարչական մարմնին հայտնի այլ հասցեով կամ ուղարկել կրկնակի ծանուցում վարչական մարմնին հայտնի միակ հասցեով, և այլն), և եթե դրանից հետո հնարավոր չի լինի ապահովել մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի և վայրի մասին վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ծանուցումը, վարչական մարմինը կարող է ողջամտորեն ենթադրել, որ անձը բացակայում է, և հայտնի չէ նրա գտնվելու վայրը, ապա այս վերլուծության հետ նույնպես համաձայն չենք, քանի որ անձին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի ու վայրի մասին ծանուցելու համար հնարավոր

և ողջամիտ միջոցներ վարչական մարմինը պետք է ձեռնարկի ոչ միայն համապատասխան ծանուցագիրը «Չպահանջված» նշումով վերադարձվելուց հետո, այլև վարչական վարույթի հարուցման պահից սկսած և ինչպես երևում է սույն գործով հաստատված հինգերորդ փաստից, վարչական մարմինը մեկ անգամ չէ, որ միջոցներ է ձեռնարկել Գագիկ Բարսեղյանի լաված լինելու իրավունքը գործնականում ապահովելու համար: Վարչական մարմինը 31.08.2016 թվականին նշանակված գործի քննության վերաբերյալ ծանուցումը Գագիկ Բարսեղյանին ուղարկելուց առաջ, ևս մեկ անգամ ծանուցել է նրան 17.08.2016 թվականին նշանակված գործի քննության վերաբերյալ, այսինքն վարչական մարմինն իր լիազորությունների շրջանակում ձեռնարկել է համապատասխան միջոցներ վարչական վարույթի մասնակցին վարչական գործի քննության տեղի և ժամանակի վերաբերյալ ծանուցելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ սույն գործով բերված վճռաբեկ բողոքն առաջին հիմքով ենթակա էր բավարարման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա.Բարսեղյան
Է.Սեդրակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԴ/1309/05/16
Ա. Բաբայան
Ա. Առաքելյան
Ա. Թովմայան

Վարչական գործ թիվ ՎԴ/1309/05/16
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին

դռնբաց դատական նիստում քննելով Արտաշես Հովհաննիսյանի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտաշես Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), երրորդ անձինք «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ամերիաբանկ), «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը՝ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզման կորպորատիվ

գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնելու կամ որպես ինքնուրույն պահանջ՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Բ Ջ Ե Ց

1. Գործի դադարակարգական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևյալ հիմնական հայցապահանջները.

1) վերացնել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը,

2) ճանաչել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առ ոչինչ լինելը,

3) անվավեր ճանաչել Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը:

Բացի այդ, Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևանքների վերացման հետևյալ ածանցյալ հայցապահանջները.

4) անվավեր ճանաչել Ամերիաբանկի բաժնետերերի ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 և 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները:

5) անվավեր ճանաչել Ամերիաբանկի բաժնետերերի ժողովի թիվ 02/12/01 որոշման արձանագրության հիման վրա 17.12.2012 թվականին Դեպոզիտարիայի համակարգում Ամերիաբանկի կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի համախմբման կորպորատիվ գործողության և Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները,

6) անվավեր ճանաչել Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02 և 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքը,

7) անվավեր ճանաչել Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը,

8) Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնել մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.12.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ վերացվել է Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից՝ Կենտրոնական բանկի անունից Ամերիաբանկին տրված՝ բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը, որպես հետևանք՝ անվավեր է ճանաչվել Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01,

02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքը և որպես դրա հետևանք՝ վերականգնվել է Արտաշես Հովհաննիսյանի սեփականության իրավունքը՝ մինչ բաժնետոմսերի կոնսուլիդացիան վերջինիս պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ՝ անվավեր ճանաչելով Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.03.2018 թվականի որոշմամբ Կենտրոնական բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 14.12.2017 թվականի վճիռը բեկանվել է: Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ մինչ կոնսուլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը՝ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնելու պահանջների մասով, վարչական գործի վարույթը կարճվել է: Դատարանի 14.12.2017 թվականի վճիռը՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, փոփոխվել է՝ այդ պահանջի մասով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտաշես Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կենտրոնական բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, 21.1-ին հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի «ժա» կետը, 3-րդ մասը, 36-րդ հոդվածը, 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատասխանողի կողմից Ամերիաբանկին տրամադրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճելու հիմքում դրել է այն, որ հիշյալ փաստաթուղթը վարչական ակտ չէ:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի այնպիսի մեկնաբանումը, որը քննարկվող արգելքի գործողության սահմաններից դուրս է դնում բանկի կողմից իր բաժնետոմսերի հետգնման այնպիսի դեպքը, որի պարագայում կարող է առաջանալ բանկի կանոնադրական կապիտալի նվազեցման և ֆինանսական կայունության խաթարման ռիսկ, ինչպիսին է կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնումը, չի կարող իրավաչափ համարվել ընդհանրապես «Բանկերի

և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նպատակների իրացման և խնդիրների լուծման և մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթով կարգավորվող հարցերի նշանակության տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ անկախ բաժնետոմսերի հետգնման պահանջի առաջացման պատճառից բաժնետոմսերի հետգնման բոլոր դեպքերն էլ պարունակում են բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման, իսկ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերության դեպքում նաև՝ ֆինանսական կայունության խաթարման ռիսկեր: Հետևաբար, բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հետգնման թույլատրելիության հարցը պարզելիս որոշիչ հանգամանք պետք է դիտարկել դրա հետևանքով առաջ եկող ռիսկերի բնույթը, իսկ այս հատկանիշով հետգնման դեպքերը դասակարգելու պարագայում հետգնման բոլոր դեպքերն էլ ընկնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքի ազդեցության դաշտ՝ բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի, որոնց վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված են հստակ կառուցակարգեր, որոնք բացառում են հետգնման վերոգրյալ հետևանքների առաջացումը:

Վերոգրյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Վերաքննիչ դատարանի քննարկվող եզրահանգումն անհիմն և անիրավաչափ է: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթի ուժով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքը վերաբերում է կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը, հետևաբար այն արգելված է: Նշված մեկնաբանություններից և վերլուծություններից հետևում է, որ արգելված հետգնում առաջացնող կոնսոլիդացիա իրականացնելու իրավունք բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունը չունի: Այլ կերպ ասած՝ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունը կարող է իրականացնել միայն այնպիսի կոնսոլիդացիա, որի արդյունքում չեն առաջանա կոտորակային բաժնետոմսեր, քանզի դրանց հետգնումն արգելված է օրենքի ուժով:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պատասխանողը վարչական ակտով երրորդ անձին թույլատրել է իրականացնել այնպիսի կոնսոլիդացիա և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնում, որն անիրավաչափ է: Դա նշանակում է, որ անկախ նրանից՝ պատասխանողն օրենքով սահմանված իրավասություն և/կամ պարտականություն ունեցել է վիճարկվող վերահսկողական դրական դիրքորոշումը տալու համար, թե՛ ոչ, միևնույն է, նա դա տրամադրել է և դրանով թույլատրել է երրորդ անձին իրականացնել կոնսոլիդացիան և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի՝ օրենքով արգելված հետգնումը: Նշված վերահսկողական դրական դիրքորոշման կայացմամբ և տրամադրմամբ պատասխանողն առաջացրել է փաստական և իրավական հետևանքներ, քանզի դրա արդյունքում երրորդ անձը կոնսոլիդացիա իրականացնելու և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ որոշումներն իրավական ուժ ստացած է համարել: Դրանց հիման վրա բողոք բերող անձը դադարել է երրորդ անձի բաժնետեր հանդիսանալուց: Վերահսկողական դրական դիրքորոշումը պատասխանողն ընդունել է հանրային իրավահարաբերությունների բնագավառում՝ ֆինանսական կայունության ապահովման իր պարտականության կատարման շրջանակներում, ուստի վիճարկվող վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ է, այն էլ՝ ապօրինի վարչական ակտ: Վերահսկողական դրական դիրքորոշումը (թույլտվությունը, համաձայնությունը) պատասխանողի կողմից տրվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավասության սահմանազանցմամբ: Ասվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կարճելու հիմք չի ունեցել:

Բացի այդ, շարադրվածը հիմք է եզրակացնելու նաև, որ երրորդ անձի կանոնադրության փոփոխության գրանցման վիճարկման ինքնուրույն հայցապահանջը նույնպես

հիմնավոր է, քանի որ դրանով, ըստ էության, գրանցում են ստացել օրենքով արգելված կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզհետե ման արդյունքները, որոնք ազդել են հայցվորի սեփականության իրավունքի վրա՝ դադարեցնելով այն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.12.2017 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը

Կենտրոնական բանկը առարկայազուրկ է համարում բաժնետոմսերի համախմբման անօրինականության և անիրավաչափության վերաբերյալ վճռաբեկ բողոքի պնդումները: Դրանք առհասարակ ենթակա չեն սույն գործի շրջանակում քննության:

Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրամադրված դիրքորոշում-նամակը վարչական ակտ չէ: Այդ դատողության մանրամասն հիմնավորումները ներկայացված են հայցադիմումի պատասխանում և վերաքննիչ բողոքում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12 արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/01 որոշումը, որով որոշվել է համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանկի կողմից տեղաբաշխված թվով 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում թվով 8 հատ, յուրաքանչյուրը 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերը փոխարինվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջանում են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ (Արտաշես Հովհաննիսյան-5 հատ՝ 200.000 ՀՀ դրամ, Անահիտ Աղիսյան-1 հատ՝ 40.000 ՀՀ դրամ, Ասյա Սարկիսովա-1 հատ՝ 40.000 ՀՀ դրամ) բաժնետոմսերի համախմբումից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/02 որոշումը, որով որոշվել է, որ համախմբման (կոնսոլիդացման) հետևանքով առաջացած կոտորակային բաժնետոմսերը ենթակա են հետզհետե ման Ամերիաբանկի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված Ամերիաբանկի տնօրենների խորհրդին հանձնարարվել է կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Միաժամանակ, որոշվել է բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) հետ կապված՝ Ամերիաբանկի կանոնադրության փոփոխությունները և այդ մասով Դեպոզիտարիայում համապատասխան գրանցումները (ձևակերպումները) կատարելուց հետո Ամերիաբանկի տնօրենների խորհրդի կողմից սահմանված կարգով, ժամկետներում և չափով Ամերիաբանկի կողմից կատարել վճարումներ բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզհետե դիմաց:

Նույն արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/03 որոշումը, որով որոշվել է՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.640.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝

320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետրոմսերի, որոնք առաջացել են նախկին անվանական արժեքով թվով 7 հաւր 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետրոմսերի համախմբման արդյունքում: Ամերիաբանակի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է դրամով: Ընդ որում սույն կետում նշված կոտորակային բաժնետրոմսերը ենթակա են հետգնման ՀՀ օրենսդրությամբ և Ամերիաբանակի իրավասու մարմնի կողմից սահմանված կարգով» (**հատոր 1-ին, գ.թ. 75-79**):

2. Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին հայտնելով, որ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը 15.10.2012 թվականի որոշել է՝

1) համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանակի կողմից տեղաբաշխված թվով 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում առաջացել են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետոմսերի համախմբումից,

2) Ամերիաբանակի կողմից հետ գնել կոտորակային բաժնետոմսերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված հանձնարարել Ամերիաբանակի տնօրենների խորհրդին կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Վերոգրյալի հիման վրա Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը խնդրել է տրամադրել Կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը (համաձայնությունը) (**հատոր 1-ին, գ.թ. 74**):

3. Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ տեղեկացնելով, որ Ամերիաբանակի տնօրենների խորհրդի 19.11.2012 թվականի թիվ 29/12/05 որոշմամբ Ամերիաբանակի հասարակ անվանական բաժնետոմսի շուկայական արժեքը սահմանվել է 200.000 ՀՀ դրամ: Միաժամանակ հայտնվել է, որ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ամերիաբանակի տնօրենների խորհուրդը Ամերիաբանակի բաժնետոմսի շուկայական արժեքը որոշել է՝ հաշվի առնելով իրականացված անկախ գնահատման արդյունքները և Ամերիաբանակի բաժնետոմսերով իրականացված վերջին գործարքի գնանշումը: Քննարկվել է գնահատման արդյունքում ստացված Ամերիաբանակի մեկ բաժնետոմսի միջին շուկայական արժեքը, այն է՝ 78.912,69 ՀՀ դրամ (15.10.2012 թվականի դրությամբ), որը կազմում է մեկ բաժնետոմսի դիմաց 1,69 գործակից և հաստատվել է կոնսոլիդացիայի արդյունքում հետգնման ենթակա մեկ հասարակ անվանական բաժնետոմսի դիմաց տրվող արժեքը 200.000 ՀՀ դրամ, ինչը կազմում է 5 գործակից (**հատոր 1-ին, գ.թ. 80**):

4. Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալը, ի պատասխան Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունների, 30.11.2012 թվականի գրությամբ Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնել է, որ ստանալով 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունները, կատարելով համապատասխան ուսումնասիրություններ՝ Կենտրոնական բանկը Ամերիաբանակի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն) (**հատոր 1-ին, գ.թ. 83**):

5. Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 21.03.2013 թվականի թիվ 02/13 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/02 որոշումը, որով որոշվել է մարել

Ամերիաբանսկի սեփականության իրավունքով պատկանող, հետզնված 0,875 կոտորակային բաժնետոմսը և համապատասխանաբար 280.000 ՀՀ դրամի չափով նվազեցնել Ամերիաբանսկի կանոնադրական կապիտալը: Ի վերջո Ամերիաբանսկի կանոնադրական կապիտալը մարված կոտորակային բաժնետոմսի անվանական արժեքով չնվազեցնելու նպատակով միաժամանակ հայտարարել, թողարկել և տեղաբաշխել թվով 1 հատ ոչ փաստաթղթային ձևի անժամկետ, (լրացուցիչ) հասարակ անվանական բաժնետոմս՝ փակ բաժնետիրագրության ձևով: Ամերիաբանսկի տեղաբաշխվող հասարակ անվանական բաժնետոմսի տեղաբաշխման գինը սահմանել 1 բաժնետոմսի անվանական արժեքի չափով՝ 320.000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանսկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/03 որոշումը, որով որոշվել է, որ կոտորակային բաժնետոմսի մարման արդյունքում Ամերիաբանսկի կանոնադրական կապիտալը կկազմի 25.447.360.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանսկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/04 որոշումը, որով որոշվել է՝ կանոնադրության 4.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 *Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.360.000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ հանարված է ՀՀ դրամով*» (**հատոր 1-ին, գ.թ 23-24**):

6. Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետի 15.05.2014 թվականի թիվ 15-2-06/001146-14 գրությամբ փաստաբան Գագիկ Գրիգորյանին հայտնվել է, որ բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման վերաբերյալ Կենտրոնական բանկի մանրամասն դիրքորոշումն արտահայտված է Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանմամբ: Կենտրոնական բանկը, առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ և վերոհիշյալ պարզաբանմամբ, գրանցել է Ամերիաբանսկի բաժնետերերի 15.10.2012 թվականի արտահերթ ընդհանուր ժողովում հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրությունը (**հատոր 1-ին, գ.թ 15**):

4. *Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը*

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները վարչական ակտի հատկանիշների մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ իրավական համակարգում վարչական ակտին բնորոշ հարկանիշներին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (*լրեն՝ Սվեյթլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է:

Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*լրեն՝ Սամվել Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԳ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե՛ ոչ: Նույն դատողությունը հավասարապես կիրառելի է նաև ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցի դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը (*տե՛ս «Օլիմպ» արտադրական կոդավերաբիլի ընդդեմ ՀՀ կառավարությանն առնջթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը*):

Ընդհանրացնելով վարչական ակտի հասկացության մեջ մտնող տարրերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

7) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հատկորեն որոշված հասցեատեղ,

8) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

9) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

10) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

11) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

12) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար՝ գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտին բնորոշ կարևորագույն հատկանիշն այն է, որ վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (տե՛ս Վարդիթեր Ալիյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Ջարգացնելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն որոշմամբ առավել մանրամասն անդրադառնալ վարչական ակտի երկու՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված լինելու և կոնկրետ անձանց համար իրավական հետևանքներ առաջացնելու հատկանիշներին:

Այսպես՝ օրենսդրի ձևակերպման համաձայն՝ վարչական ակտի նպատակն է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործ: Դա նշանակում է, որ վարչական մարմնի որևէ գրավոր փաստաթուղթ, որտեղ արտահայտված են տեսակետներ, դիրքորոշումներ, կարծիքներ, մեկնաբանություններ, համաձայնություններ, որը, սակայն, ուղղված չէ կոնկրետ գործի կարգավորմանը, չի կարող համարվել վարչական ակտ: Ընդ որում, նշված հատկանիշի հետ սերտորեն կապված է վարչական ակտի մյուս՝ կոնկրետ գործով իրավական հետևանքներ առաջացնելու հատկանիշը, ըստ որի՝ եթե վարչական մարմնի որևէ փաստաթուղթում կոնկրետ անձի համար կոնկրետ իրավունքներ և պարտականություններ չեն սահմանվում, փոփոխվում, վերացվում կամ (հարցը) ճանաչվում, ապա այն չի կարող հանդիսանալ վարչական ակտ: Այսպիսով, վարչական ակտի քննարկվող հատկանիշներին համապատասխանելու համար վարչական մարմնի որևէ գրավոր փաստաթուղթ ոչ միայն պետք է ուղղված լինի կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը, այլև պետք է անմիջականորեն կարգավորի այդ գործը (հարցը)՝ առաջացնելով կոնկրետ անձի իրավունքների ու պարտականությունների սահմանում, փոփոխում, վերացում կամ ճանաչում: Այդ պատճառով էլ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրել է վարչական ակտի որոշակի լինելու պահանջը, սահմանելով, որ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, որպեսզի դրա բովանդակությունից դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Հանրային իրավունքի բնագավառում վարչական ակտով կոնկրետ գործի (հարցի) հստակ կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ուժի մեջ մտնելուց հետո վարչական ակտը ենթակա է կատարման, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև հարկադիր կատարման, այսինքն՝ վարչական ակտը ենթակա է պարտադիր կատարման վարչական ակտով տրված լուծմանը համապատասխան, իսկ եթե վարչական մարմնի տրված փաստաթուղթով որևէ գործի կոնկրետ (հարցի) լուծում չի տրվել, ապա այդ փաստաթուղթը գուրկ կլինի նաև կատարելիության հատկանիշից: Այսպես, եթե վարչական մարմնի՝ գրավոր փաստաթուղթով իր համաձայնությունը կամ անհամաձայնությունն է արտահայտում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հնարավոր վարքագծի վերաբերյալ, ապա ակնհայտ է, որ այդ համաձայնությունը կամ անհամաձայնությունը որևէ կերպ չի կարող կատարվել, քանի դեռ անձը չի դրսևորել իր վարքագիծը, իսկ

վարչական մարմինն էլ իր իրավասության սահմաններում կոնկրետ կարգավորում չի տվել այդ անձի վարքագծին կամ դրա իրավական հետևանքներին: Այսինքն՝ այդ պարագայում վարչական մարմինը չի ընդունել վարչական ակտ, որն ուժի մեջ մտնելուց հետո ենթակա կլինի պարտադիր կատարման այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

Վարչական մարմնի դիրքորոշումն անկախ նրանից՝ դա անձի համար բարենպաստ է, թե ոչ, անձը կարող է հաշվի առնել իր հնարավոր վարքագիծն ընտրելիս: Սակայն այդ դիրքորոշումն անձի համար պարտադիր չէ, քանի դեռ վարչական մարմինն այն չի արտահայտել կոնկրետ գործի (հարցի) լուծման նպատակով ընդունված վարչական ակտում՝ վարչարարության իրականացմամբ իրացնելով կոնկրետ գործի (հարցի) կարգավորման իր հանրային-իշխանական լիազորությունը: Հարկ է նաև արձանագրել, որ գրավոր փաստաթղթում դիրքորոշում արտահայտելով անձի հնարավոր վարքագծի իրավաչափության վերաբերյալ՝ վարչական մարմինը չի կարող ենթադրել, որ անձը հետագայում անպայման կդրսևորի իր դիրքորոշմանը համապատասխան ենթադրյալ իրավաչափ վարքագիծ: Վարչական գործին կոնկրետ լուծում չտվող ակտում վարչական մարմնի արտահայտած դիրքորոշումն անձի վարքագծի վրա անմիջականորեն չի կարող ազդել, քանի որ անձը տվյալ իրավահարաբերության վերաբերյալ կարող է ունենալ սեփական դիրքորոշումը և պարտավորված չէ ղեկավարվելու վարչական մարմնի դիրքորոշմամբ: Հետևաբար վարչական մարմնի այնպիսի գրավոր փաստաթուղթը, որն անձին չի պարտադրում հարկադրանքի միջոցով երաշխավորված կատարման ենթակա վարքագիծ, վարչական ակտ համարվել չի կարող:

Նշված վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտ չի կարող համարվել վարչական մարմնի կողմից տրված այնպիսի գրավոր փաստաթուղթը, որը թեև պարունակում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի (հարցի) լուծման վերաբերյալ դատադրություններ, դիրքորոշումներ (այդ թվում՝ համաձայնության կամ անհամաձայնության ձևով), սակայն դրանք ուղղված չեն կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը և չեն լուծում այդ գործը (հարցը):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևյալ հիմնական պահանջները.

1) վերացնել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը,

2) ճանաչել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առ ոչինչ լինելը,

3) անվավեր ճանաչել Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը:

Դատարանը բավարարել է Արտաշես Հովհաննիսյանի հայցը՝ վերացնելով Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը և բավարարելով հետևանքների վերացման ածանցյալ պահանջները (այդ թվում նաև՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը, որը ներկայացված է և՛ որպես ածանցյալ և՛ որպես հիմնական պահանջ):

Նախ՝ Դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը համապատասխանում է օրենսդրորեն սահմանված վարչական ակտի նկարագրին, և այն կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, իսկ դրանից ածանցվող քաղաքացիաիրավական պահանջները կարող են քննվել վարչական դատավարության կարգով: Ընդ որում, Դատարանն արձանագրել

է, որ վիճարկվող դիրքորոշումն ուղղված է կոնկրետ գործի կարգավորմանն այնքանով, որքանով նման վերահսկողական դիրքորոշմամբ թույլատրվում է բաժնետոմսերի կոնսոլիդացիան և իրավաբանական ուժ է տրվում Ամերիաբանկի համապատասխան որոշմանը:

Այնուհետև, Դատարանը եզրահանգել է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված դրական վերահսկողական դիրքորոշումն անվավեր վարչական ակտ է, քանի որ կայացվել է առանց սույն գործով հայցվոր Արտաշես Հովհաննիսյանին որպես երրորդ անձ վարույթին ներգրավելու՝ վերջինիս լսված լինելու իրավունքի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Կենտրոնական բանկի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը: Վերաքննիչ դատարանը կարճել է սույն վարչական գործի վարույթը՝ (1) Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու և (2) դրա առ ոչինչ լինելը ճանաչելու հիմնական պահանջների, ինչպես նաև դրանցից ածանցվող պահանջների մասով, իսկ (3) Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջը մերժել է:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ամերիաբանկը բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու և դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու իր իրավունքն իրականացնելու նպատակով որևէ օրենքով Կենտրոնական բանկին դիմելու և վերջինիս կողմից վարչական ակտ (համաձայնություն, թույլտվություն) ստանալու պարտականություն չի ունեցել: Իսկ Կենտրոնական բանկի նախագահին, Կենտրոնական բանկի խորհրդին կամ կառավարման որևէ այլ մարմնին «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով վերապահված չէ լիազորություն բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու իրավունքն իրացնելու կապակցությամբ ընդունելու այդ իրավունքը տրամադրող կամ այդ իրավունքի տրամադրումը մերժող վարչական ակտ (համաձայնություն կամ անհամաձայնություն): Ընդ որում, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման մասին 24.07.2012 թվականին տրված թիվ 8 պաշտոնական պարզաբանումն ընդամենը կարող է կրել զուտ խորհրդատվական բնույթ:

Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ ՀՀ իրավական համակարգում չի հանդիսանում վարչական ակտ: Հետևաբար, (1) Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու և (2) դրա առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հիմնական պահանջները չեն կարող վարչական դատարանում համապատասխանաբար վիճարկման կամ ճանաչման հայցի առարկա հանդիսանալ:

Իսկ (3) Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջի մասով Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ամերիաբանկի կողմից իր բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, ինչպես նաև դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ

գնելու համար Կենտրոնական բանկի կողմից որևէ վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: Ուստի Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը չի կարող անվավեր ճանաչվել վերահսկողական դրական դիրքորոշման բացակայության հիմքով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի ներկայացրած հիմնական պահանջներով վիճարկվող գրությունը՝ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշումը (համաձայնությունը), չունի վարչական ակտի բոլոր անհրաժեշտ հատկանիշները: Մասնավորապես՝ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեայանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), չի ընդունվել որևէ օրենքով Կենտրոնական բանկին վերապահված հանրային-իշխանական լիազորության կիրառման արդյունքում: Այլ կերպ՝ Կենտրոնական բանկը, գործող օրենսդրության համաձայն, չունի բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը հավանություն տալու լիազորություն: Հետևաբար, սույն գործով վիճարկվող Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չի կարող պարտադիր իրավաբանական հետևանքներ առաջացնել Ամերիաբանկի կամ այլ սուբյեկտի համար. այն ունի զուտ խորհրդատվական նշանակություն: Անկախ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առկայությունից կամ բացակայությունից՝ Ամերիաբանկը կարող էր կատարել համապատասխան կորպորատիվ գործողությունը, որի իրավաչափության գնահատումը դուրս է սույն վարչական գործի քննությանն առարկայի շրջանակից:

Փաստորեն, սույն գործով վիճարկվող՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չի ընդունվել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի (հարցի) կարգավորման նպատակով. այն ուղղված չէ կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը և չի լուծում այդ գործը (հարցը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու և ամանցյալ պահանջների մասով Վերաքննիչ դատարանը կարճել է իրավաչափ կերպով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ այդ փաստաթուղթն անվավեր կամ առոչինչ ճանաչելու հայցապահանջների մասով Արտաշես Հովհաննիսյանի ներկայացրած հայցադիմումի ընդունումը Դատարանում ենթակա էր մերժման այն հիմքով, որ այդ հայցապահանջների մասով վերջինիս ներկայացրած հայցը ենթակա չէ դատարանի քննությանը:

Վճռաբեկ դատարանի սույն հետևությունը հիմնավորվում է նրանով, որ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշմամբ Ամերիաբանկին կամ հայցվորին առնչվող կոնկրետ գործ (հարց) չի կարգավորվել, նրանց համար ուղղակի իրավունքներ կամ պարտականություններ չեն առաջացել, այսինքն՝ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշումը վարչական ակտ չէ, իսկ Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիան և կանոնադրության

փոփոխությունն իրականացվել են նրա բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչը սույն գործով վիճարկման առարկա չէ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու հիմնական պահանջով դատարան դիմելը չի կարող հետապնդել Արտաշես Հովհաննիսյանի որևէ իրավունքի դատական պաշտպանության նպատակ: Տվյալ դեպքում Արտաշես Հովհաննիսյանը չունի իր հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վիճարկելու պահանջով հայց հարուցելու իրավունք, իսկ դատարանը չունի իր առջև բարձրացված տվյալ վեճը քննելու և լուծելու իրավասություն: Այսինքն՝ հայցվորի կողմից վարչական դատարանի առջև բարձրացված հարցն իր էությունը առարկայագուրկ է և չի կարող քննության առնվել ոչ միայն վարչական դատարանի, այլ նաև առաջին ատյանի որևէ այլ դատարանի կողմից: Փաստորեն, տվյալ դեպքում առկա են այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու Արտաշես Հովհաննիսյանի կողմից դատարանի առջև բարձրացված հարցը: Հետևաբար, սույն վարչական գործի վարույթը ենթակա էր կարճման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Նման պայմաններում իրավաչափ է նաև Վերաքննիչ դատարանի կողմից Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին հայցվորի պահանջի մերժումը:

Նշված պարճառարանություններով հասարարվում են վճռաբեկ բողոքի պարասիստում բերված փաստարկները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և մի մասով կարճելով վարչական գործի վարույթը, իսկ մյուս մասով մերժելով հայցը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Արտաշես Հովհաննիսյանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի

հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ-1309/05/16 վարչական գործով
03.07.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 03.07.2020 թվականին քննելով Արտաշես Հովհաննիսյանի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտաշես Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), երրորդ անձինք՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ամերիաբանկ), «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը՝ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնելու կամ որպես ինքնուրույն պահանջ՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Մամիկոն Դրմեյանս և Գոռ Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևյալ հիմնական հայցապահանջները.

1) վերացնել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը,

2) ճանաչել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առ ոչինչ լինելը,

3) անվավեր ճանաչել Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը:

Բացի այդ, Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևանքների վերացման հետևյալ ածանցյալ հայցապահանջները.

4) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի բաժնետերերի ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները,

5) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի բաժնետերերի ժողովի թիվ 02/12/01 որոշման արձանագրության հիման վրա 17.12.2012 թվականին Դեպոզիտարիայի համակարգում Ամերիաբանսկի կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի համախմբման կորպորատիվ գործողության և Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանսկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները,

6) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02 և 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքը,

7) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը,

8) Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնել մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.12.2017 թվականի վճռով հայրը բավարարվել է՝ վերացվել է Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից՝ Կենտրոնական բանկի անունից Ամերիաբանսկին տրված՝ բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը, որպես հետևանք՝ անվավեր են ճանաչվել Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանսկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքը և որպես դրա հետևանք՝ վերականգնվել է Արտաշես Հովհաննիսյանի սեփականության իրավունքը՝ մինչ բաժնետոմսերի կոնսոլիդացիան վերջինիս պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ՝ անվավեր ճանաչելով Ամերիաբանսկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2018 թվականի որոշմամբ Կենտրոնական բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 14.12.2017 թվականի վճիռը բեկանվել է: Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանսկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանսկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը՝ Ամերիաբանսկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի

համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնելու պահանջների մասով, վարչական գործի վարույթը կարճվել է: Դատարանի 14.12.2017 թվականի վճիռը՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, փոփոխվել է՝ այդ պահանջի մասով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտաշես Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կենտրոնական բանկը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը սիսալ է մեկնաբանել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի, 21.1-ին հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի «ժա» կետը, 3-րդ մասը, 36-րդ հոդվածը, 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատասխանողի կողմից Ամերիաբանկին տրամադրած վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճելու հիմքում դրել է այն, որ հիշյալ փաստաթուղթը վարչական ակտ չէ:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի այնպիսի մեկնաբանումը, որը քննարկվող արգելքի գործողության սահմաններից դուրս է դնում բանկի կողմից իր բաժնետոմսերի հետգնման այնպիսի դեպքը, որի պարագայում կարող է առաջանալ բանկի կանոնադրական կապիտալի նվազեցման և ֆինանսական կայունության խաթարման ռիսկ, ինչպիսին է կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնումը, չի կարող իրավաչափ համարվել ընդհանրապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նպատակների իրացման և խնդիրների լուծման և մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթով կարգավորվող հարցերի նշանակության տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ անկախ բաժնետոմսերի հետգնման պահանջի առաջացման պատճառից, բաժնետոմսերի հետգնման բոլոր դեպքերն էլ պարունակում են բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման, իսկ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերության դեպքում նաև՝ ֆինանսական կայունության խաթարման ռիսկեր: Հետևաբար, բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հետգնման թույլատրելիության հարցը պարզելիս որոշիչ հանգամանք պետք է դիտարկել դրա հետևանքով առաջ եկող ռիսկերի բնույթը, իսկ այս հատկանիշով հետգնման դեպքերը դասակարգելու պարագայում հետգնման բոլոր դեպքերն էլ ընկնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքի ազդեցության դաշտ՝ բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի, որոնց վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված են հստակ կառուցակարգեր, որոնք բացառում են հետգնման վերոգրյալ հետևանքների առաջացումը:

Վերոգրյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Վերաքննիչ դատարանի քննարկվող եզրահանգումն անհիմն և անիրավաչափ է: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթի ուժով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքը վերաբերում է կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը, հետևաբար այն արգելված է: Նշված մեկնաբանություններից և վերլուծություններից հետևում է, որ արգելված հետգնում առաջացնող կոնսոլիդացիա իրականացնելու իրավունք բանկ հանդիսացող բաժնետիրական

ընկերությունը չունի: Այլ կերպ ասած՝ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունը կարող է իրականացնել միայն այնպիսի կոնսոլիդացիա, որի արդյունքում չեն առաջանա կոտորակային բաժնետոմսեր, քանզի դրանց հետգնումն արգելված է օրենքի ուժով:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պատասխանողը վարչական ակտով երրորդ անձին թույլատրել է իրականացնել այնպիսի կոնսոլիդացիա և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնում, որն անիրավաչափ է: Դա նշանակում է, որ անկախ նրանից՝ պատասխանողն օրենքով սահմանված իրավասություն և/կամ պարտականություն ունեցել է վիճարկվող վերահսկողական դրական դիրքորոշումը տալու համար, թե ոչ, մինևնույն է, նա դա տրամադրել է և դրանով թույլատրել է երրորդ անձին իրականացնել կոնսոլիդացիան և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի՝ օրենքով արգելված հետգնումը: Նշված վերահսկողական դրական դիրքորոշման կայացմամբ և տրամադրմամբ պատասխանողն առաջացրել է փաստական և իրավական հետևանքներ, քանզի դրա արդյունքում երրորդ անձը կոնսոլիդացիա իրականացնելու և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ որոշումներն իրավական ուժ ստացած է համարել: Դրանց հիման վրա բողոք բերող անձը դադարել է երրորդ անձի բաժնետեր հանդիսանալուց: Վերահսկողական դրական դիրքորոշումը պատասխանողն ընդունել է հանրային իրավահարաբերությունների բնագավառում՝ ֆինանսական կայունության ապահովման իր պարտականության կատարման շրջանակներում, ուստի վիճարկվող վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ է, այն էլ՝ ապօրինի վարչական ակտ: Վերահսկողական դրական դիրքորոշումը (թույլտվությունը, համաձայնությունը) պատասխանողի կողմից տրվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավասության սահմանազանցմամբ: Ավաճից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կարճելու հիմք չի ունեցել:

Բացի այդ, շարադրվածը հիմք է եզրակացնելու նաև, որ երրորդ անձի կանոնադրության փոփոխության գրանցման վիճարկման ինքնուրույն հայցապահանջը նույնպես հիմնավոր է, քանի որ դրանով, ըստ էության, գրանցում են ստացել օրենքով արգելված կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման արդյունքները, որոնք ազդել են հայցվորի սեփականության իրավունքի վրա՝ դադարեցնելով այն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.12.2017 թվականի վճռին:

2.2 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Կենտրոնական բանկն առարկայազուրկ է համարում բաժնետոմսերի համախմբման անօրինականության և անիրավաչափության վերաբերյալ վճռաբեկ բողոքի պնդումները: Դրանք առհասարակ ենթակա չեն սույն գործի շրջանակում քննության:

Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրամադրված դիրքորոշում-նամակը վարչական ակտ չէ: Այդ դատողության մանրամասն հիմնավորումները ներկայացված են հայցադիմումի պատասխանում և վերաքննիչ բողոքում:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը

1) Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12 արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/01 որոշումը, որով որոշվել է համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանկի կողմից տեղաբաշխված թիվ 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում թիվ 8 հատ, յուրաքանչյուրը 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերը փոխարինվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջանում են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ (Արտաշես Հովհաննիսյան-5 հատ՝ 200.000 ՀՀ դրամ, Անահիտ Աղիսյան-1 հատ՝ 40.000 ՀՀ դրամ, Այա Սարկիսովա-1 հատ՝ 40.000 ՀՀ դրամ) բաժնետոմսերի համախմբումից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/02 որոշումը, որով որոշվել է, որ համախմբման (կոնսոլիդացման) հետևանքով առաջացած կոտորակային բաժնետոմսերը ենթակա են հետգնման Ամերիաբանկի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված Ամերիաբանկի տնօրենների խորհրդին հանձնարարվել է կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Միաժամանակ, որոշվել է բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) հետ կապված՝ Ամերիաբանկի կանոնադրության փոփոխությունները և այդ մասով Դեպոզիտարիայում համապատասխան գրանցումները (ձևակերպումները) կատարելուց հետո Ամերիաբանկի տնօրենների խորհրդի կողմից սահմանված կարգով, ժամկետներում և չափով Ամերիաբանկի կողմից կատարել վճարումներ բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման դիմաց:

Նույն արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/03 որոշումը, որով որոշվել է՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.640.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսերի, որոնք առաջացել են նախկին անվանական արժեքով թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետոմսերի համախմբման արդյունքում: Ամերիաբանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է դրամով: Ընդ որում սույն կետում նշված կոտորակային բաժնետոմսերը ենթակա են հերզանման ՀՀ օրենսդրությամբ և Ամերիաբանկի իրավասու մարմնի կողմից սահմանված կարգով» (**հատոր 1-ին, գ.թ. 75-79**).

2) Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ հայտնելով, որ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը 15.10.2012 թվականի որոշել է՝

1. համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանկի կողմից տեղաբաշխված թվով 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում առաջացել են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետոմսերի համախմբումից,

2. Ամերիաբանկի կողմից հետ գնել կոտորակային բաժնետոմսերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված հանձնարարել Ամերիաբանկի տնօրենների խորհրդին կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Վերոգրյալի հիման վրա Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը խնդրել է տրամադրել Կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը (համաձայնությունը) (**հատոր 1-ին, գ.թ. 74**).

3) Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ տեղեկացնելով, որ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 19.11.2012 թվականի

թիվ 29/12/05 որոշմամբ Ամերիաբանակի հասարակ անվանական բաժնետոմսի շուկայական արժեքը սահմանվել է 200.000 ՀՀ դրամ: Միաժամանակ, հայտնվել է, որ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ամերիաբանակի տնօրենների խորհուրդը Ամերիաբանակի բաժնետոմսի շուկայական արժեքը որոշել է՝ հաշվի առնելով իրականացված անկախ գնահատման արդյունքները և Ամերիաբանակի բաժնետոմսերով իրականացված վերջին գործարքի գնանշումը: Քննարկվել է գնահատման արդյունքում ստացված Ամերիաբանակի մեկ բաժնետոմսի միջին շուկայական արժեքը, այն է՝ 78.912,69 ՀՀ դրամ (15.10.2012 թվականի դրությամբ), որը կազմում է մեկ բաժնետոմսի դիմաց 1,69 գործակից և հաստատվել է կոնսուլիդացիայի արդյունքում հետզնման ենթակա մեկ հասարակ անվանական բաժնետոմսի դիմաց տրվող արժեքը 200.000 ՀՀ դրամ, ինչը կազմում է 5 գործակից (**հատոր 1-ին, գ.թ 80**).

4) Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալը, ի պատասխան Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունների, 30.11.2012 թվականի գրությամբ Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնել է, որ ստանալով 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունները, կատարելով համապատասխան ուսումնասիրություններ՝ Կենտրոնական բանկը Ամերիաբանակի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսուլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնմանը տալիս է **դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն) (հատոր 1-ին, գ.թ 83)**.

5) Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 21.03.2013 թվականի թիվ 02/13 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/02 որոշումը, որով որոշվել է մարել Ամերիաբանակի սեփականության իրավունքով պատկանող, հետզնված 0,875 կոտորակային բաժնետոմսերը և համապատասխանաբար 280.000 ՀՀ դրամի չափով նվազեցնել Ամերիաբանակի կանոնադրական կապիտալը: Ի վերջո Ամերիաբանակի կանոնադրական կապիտալը մարված կոտորակային բաժնետոմսի անվանական արժեքով չնվազեցնելու նպատակով միաժամանակ հայտարարել, թողարկել և տեղաբաշխել թվով 1 հատ ոչ փաստաթղթային ձևի անժամկետ, (լրացուցիչ) հասարակ անվանական բաժնետոմս՝ փակ բաժանորդագրության ձևով: Ամերիաբանակի տեղաբաշխվող հասարակ անվանական բաժնետոմսի տեղաբաշխման գինը սահմանել 1 բաժնետոմսի անվանական արժեքի չափով՝ 320.000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/03 որոշումը, որով որոշվել է, որ կոտորակային բաժնետոմսի մարման արդյունքում Ամերիաբանակի կանոնադրական կապիտալը կկազմի 25.447.360.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/04 որոշումը, որով որոշվել է՝ կանոնադրության 4.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.360.000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով» (**հատոր 1-ին, գ.թ 23-24**).

6) Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետի 15.05.2014 թվականի թիվ 15-2-06/001146-14 գրությամբ փաստաթղթի Գագիկ Գրիգորյանին հայտնվել է, որ բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսուլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման վերաբերյալ Կենտրոնական բանկի մանրամասն դիրքորոշումն արտահայտված է Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանմամբ: Կենտրոնական բանկը,

առաջնորդվելով ՀՀ օրենսդրությանը և վերոհիշյալ պարզաբանմամբ, գրանցել է Ամերիկաբանկի բաժնետերերի 15.10.2012 թվականի արտահերթ ընդհանուր ժողովում հաստատված նոր խմբագրությանը կանոնադրությունը (**հատոր 1-ին, գ.թ 15**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Նախ՝ հարկ ենք համարում ընդգծել, որ վարչական ակտի բնորոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները համընկնում են մեր իրավական դիրքորոշումների հետ, սակայն սույն գործի փաստերի նկատմամբ այդ իրավական դիրքորոշման կիրառման Վճռաբեկ դատարանի հիմնավորումների հետ համաձայն չենք հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրվելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (*տե՛ս Սվերյանսա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՂ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է:

Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*լրեն՝ Սամվել Մելքունյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե ոչ: Նույն դատությունը հավասարապես կիրառելի է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցի դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը (*լրեն՝ «Օլիմպ» արդարադրական կոուպերաչրիվն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը*):

Ընդհանրացնելով վարչական ակտի հասկացության մեջ մտնող տարրերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցետեղ, որը չի պարունակում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցետեղ,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցետեղերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար՝ գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտին բնորոշ կարևորագույն հատկանիշն այն է, որ վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (*տե՛ս Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ հայտնելով, որ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը 15.10.2012 թվականին որոշել է՝

1) համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանկի կողմից տեղաբաշխված թվով 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում առաջացել են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետոմսերի համախմբումից,

2) Ամերիաբանկի կողմից հետ գնել կոտորակային բաժնետոմսերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված հանձնարարել Ամերիաբանկի տնօրենների խորհրդին կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Վերոգրյալի հիման վրա Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը խնդրել է տրամադրել **Կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը (համաձայնությունը) (հատոր 1-ին, գ.թ. 74)**:

Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ տեղեկացնելով, որ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 19.11.2012 թվականի թիվ 29/12/05 որոշմամբ Ամերիաբանկի հասարակ անվանական բաժնետոմսի շուկայական արժեքը սահմանվել է 200.000 ՀՀ դրամ: Միաժամանակ հայտնվել է, որ անհրաժեշտ է նկատի ունենալ,

որ Ամերիաբանսկի տնօրենների խորհուրդը Ամերիաբանսկի բաժնետոմսի շուկայական արժեքը որոշել է՝ հաշվի առնելով իրականացված անկախ գնահատման արդյունքները և Ամերիաբանսկի բաժնետոմսերով իրականացված վերջին գործարքի գնանշումը: Քննարկվել է գնահատման արդյունքում ստացված Ամերիաբանսկի մեկ բաժնետոմսի միջին շուկայական արժեքը, այն է՝ 78.912,69 ՀՀ դրամ (15.10.2012 թվականի դրությամբ), որը կազմում է մեկ բաժնետոմսի դիմաց 1,69 գործակից և հաստատվել է կոնսուլիդացիայի արդյունքում հետզմանան ենթակա մեկ հասարակ անվանական բաժնետոմսի դիմաց տրվող արժեքը 200.000 ՀՀ դրամ, ինչը կազմում է 5 գործակից (**հատոր 1-ին, գ.թ 80**):

Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալը, ի պատասխան Ամերիաբանսկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեյանի 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունների, 30.11.2012 թվականի գրությամբ Ամերիաբանսկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեյանին հայտնել է, որ ստանալով 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունները, կատարելով համապատասխան ուսումնասիրություններ՝ **Կենտրոնական բանկը Ամերիաբանսկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսուլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզմանանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն) (հատոր 1-ին, գ.թ 83)**:

Ամերիաբանսկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 21.03.2013 թվականի թիվ 02/13 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանսկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/02 որոշումը, որով որոշվել է մարել Ամերիաբանսկի սեփականության իրավունքով պատկանող, հետզմված 0,875 կոտորակային բաժնետոմսը և համապատասխանաբար 280.000 ՀՀ դրամի չափով նվազեցնել Ամերիաբանսկի կանոնադրական կապիտալը: Ի վերջո Ամերիաբանսկի կանոնադրական կապիտալը մարված կոտորակային բաժնետոմսի անվանական արժեքով չնվազեցնելու նպատակով միաժամանակ հայտարարել, թողարկել և տեղաբաշխել թվով 1 հատ ոչ փաստաթղթային ձևի անժամկետ, (լրացուցիչ) հասարակ անվանական բաժնետոմս՝ փակ բաժանորդագրության ձևով: Ամերիաբանսկի տեղաբաշխվող հասարակ անվանական բաժնետոմսի տեղաբաշխման գինը սահմանել 1 բաժնետոմսի անվանական արժեքի չափով՝ 320.000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանսկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/03 որոշումը, որով որոշվել է, որ կոտորակային բաժնետոմսի մարման արդյունքում Ամերիաբանսկի կանոնադրական կապիտալը կկազմի 25.447.360.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանսկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/04 որոշումը, որով որոշվել է՝ կանոնադրության 4.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.360.000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով» (**հատոր 1-ին, գ.թ 23-24**):

Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետի 15.05.2014 թվականի թիվ 15-2-06/001146-14 գրությամբ փաստաբան Գագիկ Գրիգորյանին հայտնվել է, որ բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսուլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզմանան վերաբերյալ Կենտրոնական բանկի մանրամասն դիրքորոշումն արտահայտված է Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանմամբ: Կենտրոնական բանկը, առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ և վերոհիշյալ պարզաբանմամբ, գրանցել է Ամերիաբանսկի բաժնետերերի 15.10.2012 թվականի արտահերթ ընդհանուր ժողովում հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրությունը (**հատոր 1-ին, գ.թ 15**):

Սույն վարչական գործը հարուցվել է Արտաշես Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է .

1) վերացնել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը,

2) ճանաչել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առ ոչինչ լինելը,

3) անվավեր ճանաչել Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը:

Մինևույն ժամանակ Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևանքների վերացման հետևյալ ածանցյալ հայցապահանջները՝ պահանջելով.

4) անվավեր ճանաչել Ամերիաբանկի բաժնետերերի ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները,

5) անվավեր ճանաչել Ամերիաբանկի բաժնետերերի ժողովի թիվ 02/12/01 որոշման արձանագրության հիման վրա 17.12.2012 թվականին Դեպոզիտարիայի համակարգում Ամերիաբանկի կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի համախմբման կորպորատիվ գործողության և Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները,

6) անվավեր ճանաչել Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02 և 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքը,

7) անվավեր ճանաչել Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը,

8) Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնել մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը:

Դատարանը բավարարել է Արտաշես Հովհաննիսյանի հայցը՝ վերացնելով Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը և բավարարելով հետևանքների վերացման ածանցյալ պահանջները (այդ թվում նաև՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը, որը ներկայացված է և՛ որպես ածանցյալ և՛ որպես հիմնական պահանջ):

Նախ՝ Դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը համապատասխանում է օրենսդրորեն սահմանված վարչական ակտի նկարագրին, և այն կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, իսկ դրանից ածանցվող քաղաքացիաիրավական պահանջները կարող են քննվել վարչական դատավարության կարգով: Ընդ որում, Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող դիրքորոշումն ուղղված է կոնկրետ գործի կարգավորմանն այնքանով, որքանով նման վերահսկողական դիրքորոշմամբ թույլատրվում է բաժնետոմսերի կոնսոլիդացիան և իրավաբանական ուժ է տրվում Ամերիաբանկի համապատասխան որոշմանը:

Այնուհետև Դատարանը եզրահանգել է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված դրական վերահսկողական դիրքորոշումն անվավեր վարչական ակտ է, քանի որ կայացվել է առանց սույն գործով հայցվոր Արտաշես Հովհաննիսյանին որպես երրորդ անձ վարույթին ներգրավելու՝ վերջինիս լսված լինելու իրավունքի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Կենտրոնական բանկի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը: Վերաքննիչ դատարանը կարճել է սույն վարչական գործի վարույթը՝ (1) Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական

բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու և (2) դրա առ ոչինչ լինելը ճանաչելու հիմնական պահանջների, ինչպես նաև դրանցից ածանցվող պահանջների մասով, իսկ (3) Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջը մերժել է:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ամերիաբանկը բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու և դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու իր իրավունքն իրականացնելու նպատակով որևէ օրենքով Կենտրոնական բանկին դիմելու և վերջինիս կողմից վարչական ակտ (համաձայնություն, թույլտվություն) ստանալու պարտականություն չի ունեցել: Իսկ Կենտրոնական բանկի նախագահին, Կենտրոնական բանկի խորհրդին կամ կառավարման որևէ այլ մարմնին «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով վերապահված չէ լիազորություն բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու իրավունքն իրացնելու կապակցությամբ ընդունելու այդ իրավունքը տրամադրող կամ այդ իրավունքի տրամադրումը մերժող վարչական ակտ (համաձայնություն կամ անհամաձայնություն): Ընդ որում, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման մասին 24.07.2012 թվականին տրված թիվ 8 պաշտոնական պարզաբանումն ընդամենը կարող է կրել զուտ խորհրդատվական բնույթ:

Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ ՀՀ իրավական համակարգում չի հանդիսանում վարչական ակտ: Հետևաբար, (1) Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու և (2) դրա առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հիմնական պահանջները չեն կարող վարչական դատարանում համապատասխանաբար վիճարկման կամ ճանաչման հարցի առարկա հանդիսանալ:

Իսկ (3) Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջի մասով Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ամերիաբանկի կողմից իր բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, ինչպես նաև դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու համար Կենտրոնական բանկի կողմից որևէ վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: Ուստի, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը չի կարող անվավեր ճանաչվել վերահսկողական դրական դիրքորոշման բացակայության հիմքով:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը մերժել և Վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ հետևյալ հիմնավորմամբ. «...հայցվորի ներկայացրած հիմնական պահանջներով վիճարկվող գրությունը՝ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշումը (համաձայնությունը), չունի վարչական ակտի բոլոր անհրաժեշտ հատկանիշները: Մասնավորապես, Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնմանը տալիս է

դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), չի ընդունվել որևէ օրենքով Կենտրոնական բանկին վերապահված հանրային-իշխանական լիազորության կիրառման արդյունքում: Այլ կերպ՝ Կենտրոնական բանկը, գործող օրենսդրության համաձայն, չունի բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնմանը հավանություն տալու լիազորություն: Հետևաբար, սույն գործով վիճարկվող՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չի կարող պարտադիր իրավաբանական հետևանքներ առաջացնել Ամերիաբանկի կամ այլ սուբյեկտի համար. այն ունի զուտ խորհրդատվական նշանակություն: Անկախ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առկայությունից կամ բացակայությունից՝ Ամերիաբանկը կարող էր կատարել համապատասխան կորպորատիվ գործողությունը, որի իրավաչափության գնահատումը դուրս է սույն վարչական գործի քննության առարկայի շրջանակից:

Փաստորեն, սույն գործով վիճարկվող՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չի ընդունվել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի (հարցի) կարգավորման նպատակով. այն ուղղված չէ կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը և չի լուծում այդ գործը (հարցը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առջին ճանաչելու և անանցյալ պահանջների մասով Վերաքննիչ դատարանը կարճել է իրավաչափ կերպով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ այդ փաստաթուղթն անվավեր կամ առջին ճանաչելու հայցապահանջների մասով Արտաշես Հովհաննիսյանի ներկայացրած հայցադիմումի ընդունումը Դատարանում ենթակա էր մերժման այն հիմքով, որ այդ հայցապահանջների մասով վերջինիս ներկայացրած հայցը ենթակա չէ դատարանի քննությանը:

Վճռաբեկ դատարանը սույն հետևությունը հիմնավորում է նրանով, որ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշմամբ Ամերիաբանկին կամ հայցվորին առնչվող կոնկրետ գործ (հարց) չի կարգավորվել, նրանց համար ուղղակի իրավունքներ կամ պարտականություններ չեն առաջացել, այսինքն՝ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշումը վարչական ակտ չէ, իսկ Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիան և կանոնադրության փոփոխությունն իրականացվել են նրա բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչը սույն գործով *վիճարկման առարկա չէ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առջին ճանաչելու հիմնական պահանջով դատարան դիմելը չի կարող հետապնդել Արտաշես Հովհաննիսյանի որևէ իրավունքի դատարանական պաշտպանության նպատակ: Տվյալ դեպքում Արտաշես Հովհաննիսյանը չունի իր հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վիճարկելու պահանջով հայց հարուցելու իրավունք, իսկ դատարանը չունի իր առջև բարձրացված տվյալ վեճը քննելու և լուծելու իրավասություն: Այսինքն՝ հայցվորի կողմից վարչական դատարանի առջև բարձրացված հարցն իր էությանը ստարկյալագուրել է և չի կարող քննության առնվել ոչ միայն վարչական դատարանի, այլ նաև առաջին աստիճանի որևէ այլ դատարանի կողմից: Փաստորեն, տվյալ դեպքում առկա են այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին աստիճանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված*

դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու Արցախյան Հովհաննիսյանի կողմից դատարանի առջև բարձրացված հարցը: Հերևաբար, սույն վարչական գործի վարույթը ենթակա էր կարճման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով» (տե՛ս **Վճռաբեկ դատարանի որոշման էջ 15-17**):

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան, Գոռ Հակոբյան և Մամիկոն Դովեցյան համաձայն չինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմանը արտահայտած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հասցույթ կարծիքը դրա վերաբերյալ:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշման վարչական ակտ հանդիսանալու հարցին՝ հարկ ենք համարում արձանագրել, որ այն ամբողջությամբ բավարարում է վարչական ակտի բնորոշման համար բոլոր պայմաններին, ուստի դրա իրավաչափության գնահատումն անվիճելիորեն վերապահված է վարչական դատարանի ենթակայությանը:

Այսպես. Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 30.11.2012 թվականի գրությունը՝

1) **ունի անհատական բնույթ**, քանի որ ուղղված է կոնկրետ անձի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին,

2) **ընդունված է հանրային իրավունքի բնագավառում**, քանի որ իր բնույթով այն վերահսկողական համաձայնություն է, որը տրված է պետության կողմից նման լիազորությանը օժտված հատուկ կարգավիճակ ունեցող իրավաբանական անձի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից,

3) **ուղղված է կոնկրետ գործի կարգավորմանն** այնքանով, որքանով նման վերահսկողական դիրքորոշմամբ թույլատրվում է բաժնետոմսերի կոնսոլիդացիան և իրավաբանական ուժ է տրվում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի համապատասխան որոշմանը:

4) **ունի արտաքին ներգործություն**, որն, ի դեպ հիմնավորվում է նաև երրորդ կետում նշված հատկանիշով, քանի որ դրանով, ըստ էության, կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կազմակերպարավական տիրույթից դուրս գտնվող հարց: Մինևսույն ժամանակ այն միջամտող է (ունի արտաքին ներգործություն) բանկի այն բաժնետերերի շահերին, ովքեր կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնման կանոնի հաշվառմամբ կարող են դադարել բաժնետեր լինելուց: Այսինքն՝ թեև դրական վերահսկողական դիրքորոշումն ուղղված է միայն բանկին և դրա հասցեատեր է հանդիսանում բանկը, սակայն այն շոշափում է նաև բանկի որոշ բաժնետերերի շահերը: Այս տեսանկյունից, մի կողմից նման վերահսկողական դիրքորոշումն ունի բարենպաստ ազդեցություն բանկի համար, որի համար այն ստեղծում է բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և կոտորակային բաժնետոմսերի հետգնման իրավական հնարավորություն, մյուս կողմից միջամտող է այն բաժնետերերի համար, որոնք կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման հետևանքով կարող են դադարել բաժնետիրական ընկերության բաժնետեր լինելուց:

Ավելին, տվյալ դեպքում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման հետ կապված հարցը լուծելու համար հիմք է ընդունել հենց սույն գործով վիճարկվող ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը՝ վարչական ակտը: Մասնավորապես, ինչպես արդեն վերը նշվել է, 29.10.2012 թվականին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կենտրոնական բանկին է հասցեագրվել թիվ ԲԳ-34 գրությունը, որով Կենտրոնական բանկին հայտնվել է կատարված բաժնետոմսերի կոնսոլիդացիայի (համախմբման) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի

բաժնետերերի 15.10.2012 թվականի ընդհանուր ժողովի որոշման մասին և հայցվել է ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը (համաձայնությունը): Ընդ որում, 15.10.2012 թվականին տեղի ունեցած ընդհանուր ժողովի թիվ 02/12/ արձանագրությունից քաղվածքի համաձայն՝ օրակարգի 1-ին հարցը վերաբերել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբմանը (կոնսոլիդացիային), որի առնչությամբ նշվել է, որ *«Կրօններին հարհրդի կողմից հասարակվել է նաև բաժնետերերի արտահերթ ժողովի նյութերի և փեդեկությունների ցանկը, որոնց կցվել է բաժնետերերի համախմբման հետ կապված Բանկի և ՀՀ կենտրոնական բանկի միջև տեղի ունեցած գրագրությունը, այդ թվում՝ վերջինիս 01.08.2012թ. պաշտոնական պարզաբանումը:*

Նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրությամբ Բանկի բաժնետերերի հետզգնման համար պահանջվում է ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը, Բանկի կողմից սույն ժողովով կայացվող որոշումներն իրավական ուժի մեջ կմերձեն ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան համաձայնություն փոխանցելու պահից» (հատոր 1-ին, գ.թ. 76):

Հարկ ենք համարում վկայակոչել նաև Մարտիրոսյան ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 05.02.2013 թվականի վճիռը, որով արձանագրվել է «(...) Ինչպես հետո նշել է Վճռաբեկ դատարանը, ցանկացած փաստաթուղթ, որին իշխանություններն իրավական նշանակություն են տալիս, անկախ նրանից այն տրվել է պետական մարմինների, թե առևտրային իրավաբանական անձանց կողմից, նոր ՔՕ-ի 325-րդ հոդվածով համապատասխանում է «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությանը: Դատարանը չի գտնում, որ «պաշտոնական փաստաթուղթ» հասկացության նման մեկնաբանությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կեղծման հանցանքի էությանը կամ, այն ընդունելով, ներպետական դատարանները ընդլայնել են հանցանքի հասկացությունը այնքան, որ այն բացահայտ կերպով դուրս է մնացել դրա գործողության շրջանակից (...)» (լրեն Մարտիրոսյան ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 5-ի (զանգար թիվ 23341/06) վճիռի 61-րդ կետը):

Թեև վերոգրյալ իրավական դիրքորոշումը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված «պաշտոնական այլ փաստաթուղթ» եզրույթին, սակայն գտնում ենք, որ այն հավասարապես կիրառելի է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրվող կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզգնման մասին դրական վերահսկողական դիրքորոշմանը (համաձայնությունը), քանի որ դրան (փաստաթղթին) իշխանություններն իրավական նշանակություն են տալիս այն առումով, որ օրենսդրորեն ամրագրվել է մասնակցության հետզգնման համար Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության անհրաժեշտ լինելը:

Այսպիսով՝ փաստում ենք, որ բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզգնման հետ կապված հարցը լուծելու համար տվյալ դեպքում հիմք է ընդունվել հենց սույն գործով վիճարկվող՝ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը, այսինքն՝ բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզգնման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվել է սույն գործով վիճարկվող վարչական ակտը:

Ամբողջ վերոգրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը համապատասխանում է օրենսդրորեն սահմանված վարչական ակտի նկարագրին և այն կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, իսկ դրանից ածանցվող քաղաքացիաիրավական պահանջները կարող են քննվել վարչական դատավարության կարգով, որպիսի իրավաչափ հետևությունն հանգել է Դատարանը և որն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ Բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզգնման մասին ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրական վերահսկողական դիրքորոշում տալու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ կենտրոնական բանկի

խորհրդի «Բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման մասին» 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանմամբ (այսուհետ՝ Պարզաբանում) և այդ պարզաբանմամբ կատարված հղմամբ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, Պարզաբանման 2-րդ կետի համաձայն՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը չի սահմանում բաժնետոմսերի համախմբման, ինչպես նաև դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման վերաբերյալ առանձնահատուկ իրավական նորմեր, ինչի արդյունքում վերլուծելով բանկի բաժնետոմսերի հետզմանը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության տրամադրման և մասնավորապես համաձայնության մերժման հիմքերը, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը գտել է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկի բաժնետոմսերի հետզման վերաբերյալ իրավական նորմերը կիրառելի են բանկի կապիտալի նվազեցման նպատակ հետապնդող բանկի բաժնետոմսերի հետզման հարաբերությունների նկատմամբ: Պարզաբանմամբ նշվում է նաև, որ ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ֆինանսական, այդ թվում՝ բանկային համակարգի կայունության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու Կենտրոնական բանկի խնդիրների իրականացման անհրաժեշտությունից, Կենտրոնական բանկի խորհուրդը կենսական է համարում բանկի կամ ապահովագրական ընկերության կողմից իր բաժնետոմսերի հետզման դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայնության տրամադրման մեխանիզմի նույնական կիրառումը նաև կոնսոլիդացիայի որոշման կայացման և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման դեպքերում, իսկ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակցության հետզման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Այսինքն՝ կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման մասին դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն) տալու իրավասությունը Պարզաբանմամբ և դրա հղմամբ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով վերապահված է **բացառապես ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին**, այնինչ սույն գործի պարագայում, ՀՀ կենտրոնական բանկի անունից նման դիրքորոշում է տվել ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությունը, իսկ դիրքորոշումը ստորագրված է վարչության պետի կողմից: Այս առումով, իրավաչափ ենք գնահատում Դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ վեճի առարկա վարչական ակտն ընդունված է օրենքի խախտմամբ և այդ մասով առկա է վարչական ակտի անվավերության հիմք: Հինավոր ենք համարում նաև Դատարանի կողմից նշված այն հանգամանքը, որ վարչական ակտի՝ օրենքի նման խախտմամբ, այսինքն՝ ակտը դրա համար չլիազորված մարմնի կողմից կայացված լինելը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի կարգավորմամբ (Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները՝ բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը) կարող էր դիտարկվել նաև վարչական ակտի առոչինչության հիմք, սակայն հաշվի առնելով, որ օրենսդիրը վարչական ակտը առոչինչ է համարել այն դեպքերում, երբ դրանում առկա են ակնառու կոպիտ սխալներ, այսինքն՝ նման սխալը պետք է տեսանելի լինի միայն վարչական ակտի ակնադիտական ուսումնասիրությունից, ուստի սույն գործով վիճարկվող վարչական ակտում առկա են անվավերության հիմքեր, քանի որ դրանում սխալն ակնառու չէ ակտի ուսումնասիրությունից, այլ այն պարզ է դառնում միայն համապատասխան օրենսդրական դաշտի ուսումնասիրության արդյունքում:

Գտնում ենք, որ Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշել է սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին հանդգնմամբ և իրավացիորեն վճռել է վարչական ակտը ճանաչել անվավեր:

Սույն գործի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև վիճարկվող ակտով «Ամերիաբանակ» ՓԲԸ-ի բաժնետերերի շահերը շոշափվելու հանգամանքին, քանի որ նրանց բաժնետոմսերը համախմբման արդյունքում փոխարկվել են կոտորակային բաժնետոմսերի: Այս տեսանկյունից, ակտն ակնհայտորեն շոշափում է նաև հայցվոր Արտաշես Հովհաննիսյանի շահերը, որն էլ իր հերթին ձևավորում է ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում վերջինիս երրորդ անձի կարգավիճակը և դրանից բխող համապատասխան կարգավորումների կիրառման անհրաժեշտությունը:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «բ» կետով սահմանելով, որ վարչական վարույթի մասնակիցներ են հանդիսանում նաև երրորդ անձինք, օրենսդիրը, ըստ էության, օրենքի ուժով վարչական վարույթի շրջանակներում երրորդ անձի կարգավիճակ է սահմանել այն անձանց համար, որոնց շահերը վարչարարությամբ կարող են շոշափվել: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից պարզ է, որ երրորդ անձանց ներգրավվածությունը վարչական վարույթին ապահովվում է վերջիններիս դիմումի հիման վրա կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ: Տվյալ կարգավորման տրամաբանությունից բխում է նաև, որ երրորդ անձի կողմից դիմում չստացվելու դեպքում, վերջիններիս պատշաճ վարչարարության, լաված լինելու իրավունքն ապահովվելու համար, վարչական մարմինը, ըստ էության, պարտավոր է ապահովել երրորդ անձանց ներգրավվածությունը վարչական վարույթին, մինչդեռ տվյալ դեպքում, վիճարկվող վարչական ակտը կայացվել է առանց վարույթին հայցվոր Արտաշես Հովհաննիսյանի ներգրավվածության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ ետօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցելու է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վարչական վարույթում երրորդ անձի կարգավիճակ ունեցող անձանց վարույթի հարուցման և լուումների օրվա, ժամանակի և վայրի մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականությանը՝ արձանագրելով, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված մարդու՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ներառում է նաև վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը, որի ապահովման պարտականությունն օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով դրել է վարույթն իրականացնող վարչական մարմնի վրա: Իսկ 2015

թվականի սահմանադրական փոփոխություններով վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը բարձրացվել է սահմանադրական մակարդակի. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի (*տե՛ս Արդա Ջաբարյանն ու Լևոն Խորշոռյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/3665/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց լաված լինելու իրավունքի կենսագործման առանձնահատկություններին, ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրագեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար (*տե՛ս Սարգիս Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության թիվ ՎԳ/7107/05/14 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը:

Ավելին, վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը, քանի որ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս վարչական վարույթի ընթացքում անձի լաված լինելու իրավունքի պատշաճ իրացման (*տե՛ս Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԳ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

Մույն գործի փաստերի համաձայն՝ վարչական վարույթին հայցվոր Արտաշես Հովհաննիսյանին մասնակից չդարձնելով՝ պատասխանողը խախտել է նաև վերը նշված նորմերի պահանջները, որոնք հանգեցրել են նաև հայցվորի նյութական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի խախտման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով...»:

Գտնում ենք, որ որպես օրենքի խախտմամբ ընդունված վարչական ակտ՝ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը՝ վարչական ակտը, ենթակա է վերացման, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Դատարանը՝ անվավեր ճանաչելով նշված վարչական ակտը:

Մինևույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ բաժնետոմսերի կոնսուլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման համար, որպես վավերապայման, սահմանվել է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի) համաձայնությունը, հետևաբար ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից՝ կենտրոնական բանկի անունից տրված 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը վերացնելը, այսինքն՝ նման դիրքորոշման բացակայությունը, հանգեցնում է նաև «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01 որոշման անվավերության և այդ որոշման հիմքով կայացված բոլոր որոշումները, գործարքներն ու գրանցումները, մասնավորապես, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, բանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած Արտաշես Հովհաննիսյանի 0.625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքը, որպես հետևանք, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համակարգում կոնսուլիդացիայի արդյունքում առաջացած 0.875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզման կորպորատիվ գործարքի գրանցումը անվավեր ճանաչելուն: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ ժամանակագրական առումով, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01 որոշումն ընդունվել է վիճարկվող վարչական ակտի կայացումից առաջ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 02/12/01 որոշմամբ լուծվող հարցերը, մասնավորապես, բաժնետոմսերի կոնսուլիդացիան և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզմումը թույլատրելի է, ուստի և իրավաչափ է միայն ՀՀ կենտրոնական բանկի դրական վերահսկողական դիրքորոշման առկայությամբ, ապա անկախ վիճարկվող վարչական ակտի կայացման օրվա թվագրումից, այն իր իրավական ազդեցությամբ նախորդում է թիվ 02/12/01 որոշմանը և դրա վերացումը հանգեցնում է նաև այդ որոշման և դրա հիման վրա կայացված բոլոր որոշումների, գործարքների և գրանցումների անվավերության:

Այսպիսով, գտնում ենք, որ Արտաշես Հովհաննիսյանի ներկայացրած հայցը հիմնավոր է և ողջ ծավալով ենթակա է բավարարման:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ սույն գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով չէր կարող կարճվել, հետևաբար վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար էր Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար, քանի որ Դատարանը, բավարարելով Արտաշես Հովհաննիսյանի հայցն ամբողջությամբ, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան
Ս. Դրմեյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/1309/05/16 վարչական գործով
03.07.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 03.07.2020 թվականին քննելով Արտաշես Հովհաննիսյանի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտաշես Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), երրորդ անձինք՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ամերիաբանկ), «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը՝ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնելու կամ որպես ինքնուրույն պահանջ՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Երվանդ Խոնդկարյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևյալ հիմնական հայցապահանջները.

1) վերացնել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը,

2) ճանաչել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առ ոչինչ լինելը,

3) անվավեր ճանաչել Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը:

Բացի այդ, Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևանքների վերացման հետևյալ ածանցյալ հայցապահանջները.

4) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի բաժնետերերի ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները,

5) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի բաժնետերերի ժողովի թիվ 02/12/01 որոշման արձանագրության հիման վրա 17.12.2012 թվականին Դեպոզիտարիայի համակարգում Ամերիաբանսկի կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի համախմբման կորպորատիվ գործողության և Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանսկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները,

6) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02 և 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքը,

7) անվավեր ճանաչել Ամերիաբանսկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը,

8) Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնել մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.12.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ վերացվել է Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից՝ Կենտրոնական բանկի անունից Ամերիաբանսկին տրված՝ բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման վերաբերյալ 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը, որպես հետևանք՝ անվավեր են ճանաչվել Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանսկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքը և որպես դրա հետևանք՝ վերականգնվել է Արտաշես Հովհաննիսյանի սեփականության իրավունքը՝ մինչ բաժնետոմսերի կոնսոլիդացիան վերջինիս պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ՝ անվավեր ճանաչելով Ամերիաբանսկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզնման կորպորատիվ գործարքի գրանցումը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2018 թվականի որոշմամբ Կենտրոնական բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 14.12.2017 թվականի վճիռը բեկանվել է: Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանսկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները, Ամերիաբանսկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները, Ամերիաբանսկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը՝ Ամերիաբանսկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի նիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը և դրա հիման վրա Դեպոզիտարիայի

համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետգնման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնելու պահանջների մասով, վարչական գործի վարույթը կարճվել է: Դատարանի 14.12.2017 թվականի վճիռը Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, փոփոխվել է՝ այդ պահանջի մասով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտաշես Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կենտրոնական բանկը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը սիսալ է մեկնաբանել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, 21.1-ին հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի «ժա» կետը, նույն հոդվածի 3-րդ մասը, 36-րդ հոդվածը, 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն էլ է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատասխանողի կողմից Ամերիաբանկին տրամադրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճելու հիմքում դրել է այն, որ հիշյալ փաստաթուղթը վարչական ակտ չէ:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի այնպիսի մեկնաբանումը, որը քննարկվող արգելքի գործողության սահմաններից դուրս է դնում բանկի կողմից իր բաժնետոմսերի հետգնման այնպիսի դեպքը, որի պարագայում կարող է առաջանալ բանկի կանոնադրական կապիտալի նվազեցման և ֆինանսական կայունության խաթարման ռիսկ, ինչպիսին է կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնումը, չի կարող իրավաչափ համարվել ընդհանրապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նպատակների իրացման և խնդիրների լուծման և մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրոյթով կարգավորվող հարցերի նշանակության տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ անկախ բաժնետոմսերի հետգնման պահանջի առաջացման պատճառից, բաժնետոմսերի հետգնման բոլոր դեպքերն էլ պարունակում են բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման, իսկ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերության դեպքում նաև՝ ֆինանսական կայունության խաթարման ռիսկեր: Հետևաբար, բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հետգնման թույլատրելիության հարցը պարզելիս որոշիչ հանգամանք պետք է դիտարկել դրա հետևանքով առաջ եկող ռիսկերի բնույթը, իսկ այս հատկանիշով հետգնման դեպքերը դասակարգելու պարագայում հետգնման բոլոր դեպքերն էլ ընկնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքի ազդեցության դաշտ՝ բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի, որոնց վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված են հստակ կառուցակարգեր, որոնք բացառում են հետգնման վերոգրյալ հետևանքների առաջացումը:

Վերոգրյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Վերաքննիչ դատարանի քննարկվող եզրահանգումն անհիմն և անիրավաչափ է: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթի ուժով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքը վերաբերում է կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը, հետևաբար այն արգելված է: Նշված մեկնաբանություններից և վերլուծություններից հետևում է, որ արգելված հետգնում առաջացնող կոնսոլիդացիա իրականացնելու իրավունք բանկ հանդիսացող բաժնետիրական

ընկերությունը չունի: Այլ կերպ ասած՝ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունը կարող է իրականացնել միայն այնպիսի կոնսոլիդացիա, որի արդյունքում չեն առաջանա կոտորակային բաժնետոմսեր, քանզի դրանց հետգնումն արգելված է օրենսքի ուժով:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պատասխանողը վարչական ակտով երրորդ անձին թույլատրել է իրականացնել այնպիսի կոնսոլիդացիա և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնում, որն անիրավաչափ է: Դա նշանակում է, որ անկախ նրանից՝ պատասխանողն օրենքով սահմանված իրավասություն և/կամ պարտականություն ունեցել է վիճարկվող վերահսկողական դրական դիրքորոշումը տալու համար, թե ոչ, միննույն է, նա դա տրամադրել է և դրանով թույլատրել է երրորդ անձին իրականացնել կոնսոլիդացիան և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի օրենքով արգելված հետգնումը: Նշված վերահսկողական դրական դիրքորոշման կայացմամբ և տրամադրմամբ պատասխանողն առաջացրել է փաստական և իրավական հետևանքներ, քանզի դրա արդյունքում երրորդ անձը կոնսոլիդացիա իրականացնելու և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ որոշումներն իրավական ուժ ստացած է համարել: Դրանց հիման վրա բողոք բերող անձը դադարել է երրորդ անձի բաժնետեր հանդիսանալուց: Վերահսկողական դրական դիրքորոշումը պատասխանողն ընդունել է հանրային իրավահարաբերությունների բնագավառում՝ ֆինանսական կայունության ապահովման իր պարտականության կատարման շրջանակներում, ուստի, վիճարկվող վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ է, այն էլ՝ ապօրինի վարչական ակտ: Վերահսկողական դրական դիրքորոշումը (թույլտվությունը, համաձայնությունը) պատասխանողի կողմից տրվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավասության սահմանազանցմամբ: Ասվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կարճելու հիմք չի ունեցել:

Բացի այդ, շարադրվածը հիմք է եզրակացնելու նաև, որ երրորդ անձի կանոնադրության փոփոխության գրանցման վիճարկման ինքնուրույն հայցապահանջը նույնպես հիմնավոր է, քանի որ դրանով, ըստ էության, գրանցում են ստացել օրենքով արգելված կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման արդյունքները, որոնք ազդել են հայցվորի սեփականության իրավունքի վրա՝ դադարեցնելով այն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է քեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.12.2017 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի պայտասխանի հիմնավորումները

Կենտրոնական բանկը առարկայագուրկ է համարում բաժնետոմսերի համախմբման անօրինականության և անիրավաչափության վերաբերյալ վճռաբեկ բողոքի պնդումները: Դրանք առհասարակ ենթակա չեն սույն գործի շրջանակում քննության:

Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրամադրված դիրքորոշում-նամակը վարչական ակտ չէ: Այդ դատողության մակրամասն հիմնավորումները ներկայացված են հայցադիմումի պատասխանում և վերաքննիչ բողոքում:

4. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը

1) Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12 արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/01 որոշումը, որով որոշվել է համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանկի կողմից տեղաբաշխված թվով 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում թվով 8 հատ, յուրաքանչյուրը 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերը փոխարինվում են նույն տեսակի

(դասի) մեկ նոր բաժնետոմսի՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջանում են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ (Արտաշես Հովհաննիսյան-5 հատ՝ 200.000 ՀՀ դրամ, Անահիտ Ադիսյան-1 հատ՝ 40.000 ՀՀ դրամ, Ասյա Սարկիսովա-1 հատ՝ 40.000 ՀՀ դրամ) բաժնետոմսերի համախմբումից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/02 որոշումը, որով որոշվել է, որ համախմբման (կոնսոլիդացման) հետևանքով առաջացած կոտորակային բաժնետոմսերը ենթակա են հետգնման Ամերիաբանկի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված Ամերիաբանկի տնօրենների խորհրդին հանձնարարվել է կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Միաժամանակ, որոշվել է բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) հետ կապված՝ Ամերիաբանկի կանոնադրության փոփոխությունները և այդ մասով Դեպոզիտարիայում համապատասխան գրանցումները (ձևակերպումները) կատարելուց հետո Ամերիաբանկի տնօրենների խորհրդի կողմից սահմանված կարգով, ժամկետներում և չափով Ամերիաբանկի կողմից կատարել վճարումներ բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման դիմաց:

Նույն արձանագրության համաձայն՝ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/12/03 որոշումը, որով որոշվել է՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.640.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսերի, որոնք առաջացել են նախկին անվանական արժեքով թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետոմսերի համախմբման արդյունքում: Ամերիաբանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է դրամով: Ընդ որում սույն կետում նշված կոտորակային բաժնետոմսերը ենթակա են հետգնման ՀՀ օրենսդրությամբ և Ամերիաբանկի իրավասու մարմնի կողմից սահմանված կարգով» (**հատոր 1-ին, գ.թ. 75-79**).

2) Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ հայտնելով, որ Ամերիաբանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը 15.10.2012 թվականի որոշել է՝

1. համախմբել (կոնսոլիդացնել) Ամերիաբանկի կողմից տեղաբաշխված թվով 636.191 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որի արդյունքում առաջացել են թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով և ընդամենը 0,875 կոտորակային բաժնետոմսեր, որոնք առաջացել են 40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 7 հատ 280.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ բաժնետոմսերի համախմբումից,

2. Ամերիաբանկի կողմից հետ գնել կոտորակային բաժնետոմսերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով, որի հետ կապված հանձնարարել Ամերիաբանկի տնօրենների խորհրդին կատարելու օրենքի պահանջից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Վերոգրյալի հիման վրա Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը խնդրել է տրամադրել Կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը (համաձայնությունը) (**հատոր 1-ին, գ.թ. 74**).

3) Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկի նախագահին՝ տեղեկացնելով, որ Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 19.11.2012 թվականի թիվ

29/12/05 որոշմամբ Ամերիաբանակի հասարակ անվանական բաժնետոմսի շուկայական արժեքը սահմանվել է 200.000 ՀՀ դրամ: Միաժամանակ հայտնվել է, որ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ամերիաբանակի տնօրենների խորհուրդը Ամերիաբանակի բաժնետոմսի շուկայական արժեքը որոշել է՝ հաշվի առնելով իրականացված անկախ գնահատման արդյունքները և Ամերիաբանակի բաժնետոմսերով իրականացված վերջին գործարքի գնանշումը: Քննարկվել է գնահատման արդյունքում ստացված Ամերիաբանակի մեկ բաժնետոմսի միջին շուկայական արժեքը, այն է՝ 78.912,69 ՀՀ դրամ (15.10.2012 թվականի դրությամբ), որը կազմում է մեկ բաժնետոմսի դիմաց 1,69 գործակից և հաստատվել է կոնսուլիդացիայի արդյունքում հետգնման ենթակա մեկ հասարակ անվանական բաժնետոմսի դիմաց տրվող արժեքը 200.000 ՀՀ դրամ, ինչը կազմում է 5 գործակից (**հատոր 1-ին, գ.թ 80**).

4) Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալը, ի պատասխան Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունների, 30.11.2012 թվականի գրությամբ Ամերիաբանակի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնել է, որ ստանալով 29.10.2012 թվականի թիվ ԲԳ-34 և 23.11.2012 թվականի թիվ ԲԳ-37 գրությունները, կատարելով համապատասխան ուսումնասիրություններ Կենտրոնական բանկը Ամերիաբանակի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն) (**հատոր 1-ին, գ.թ 83**).

5) Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 21.03.2013 թվականի թիվ 02/13 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/02 որոշումը, որով որոշվել է մարել Ամերիաբանակի սեփականության իրավունքով պատկանող, հետգնված 0,875 կոտորակային բաժնետոմսերը և համապատասխանաբար 280.000 ՀՀ դրամի չափով նվազեցնել Ամերիաբանակի կանոնադրական կապիտալը: Ի վերջո Ամերիաբանակի կանոնադրական կապիտալը մարված կոտորակային բաժնետոմսի անվանական արժեքով չնվազեցնելու նպատակով միաժամանակ հայտարարել, թողարկել և տեղաբաշխել թվով 1 հատ ոչ փաստաթղթային ձևի անժամկետ, (լրացուցիչ) հասարակ անվանական բաժնետոմս՝ փակ բաժնորդագրության ձևով: Ամերիաբանակի տեղաբաշխվող հասարակ անվանական բաժնետոմսի տեղաբաշխման գինը սահմանել 1 բաժնետոմսի անվանական արժեքի չափով՝ 320.000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/03 որոշումը, որով որոշվել է, որ կոտորակային բաժնետոմսի մարման արդյունքում Ամերիաբանակի կանոնադրական կապիտալը կկազմի 25.447.360.000 ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Նույն արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ամերիաբանակի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունել է թիվ 02/13/04 որոշումը, որով որոշվել է՝ կանոնադրության 4.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.447.360.000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է թվով 79.523 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320.000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով» (**հատոր 1-ին, գ.թ 23-24**).

6) Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետի 15.05.2014 թվականի թիվ 15-2-06/001146-14 գրությամբ փաստաբան Գագիկ Գրիգորյանին հայտնվել է, որ բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ Կենտրոնական բանկի մանրամասն դիրքորոշումն արտահայտված է Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանմամբ: Կենտրոնական բանկը,

առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ և վերոհիշյալ պարզաբանմամբ, գրանցել է Ամերիաբանկի բաժնետերերի 15.10.2012 թվականի արտահերթ ընդհանուր ժողովում հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրությունը (**հատոր 1-ին, գ.թ 15**):

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները հանգել են հերկային

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները վարչական ակտի հատկանիշների մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ՀՀ իրավական համակարգում վարչական ակտին բնորոշ հարկանիշներին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի, 66-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 2-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի վկայակցմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Մինևս այն ժամանակ, Վճռաբեկ դատարանը վկայակոչել է դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին, ինչպես նաև հայցի առարկայի բաղկացուցիչ մասը կազմող, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմք հանդիսացող նյութական օբյեկտին վերաբերող իրավական դիրքորոշումներով Սվետլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով, և Սամվել Մելքումյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխանաբար 05.04.2013 թվականի և 24.05.2013 թվականի որոշումները, եզրահանգել է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե՛ ոչ: Նույն դատողությունը հավասարապես կիրառելի է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցի դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով,

և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վճռաբեկ դատարանը վկայակոչելով նաև «Օլիմպ» արտադրական կոդաբրանտիվ ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործով 29.10.2010 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, նշել է, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը:

Ընդհանրացնելով վարչական ակտի հասկացության մեջ մտնող տարրերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը բավարար՝ գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ վարչական ակտին բնորոշ կարևորագույն հատկանիշն այն է, որ վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Զարգացնելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն որոշմամբ առավել մանրամասն անդրադառնալ վարչական ակտի երկու՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված լինելու և կոնկրետ անձանց համար իրավական հետևանքներ առաջացնելու հատկանիշներին:

Այսպես՝ օրենսդրի ձևակերպման համաձայն՝ վարչական ակտի նպատակն է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործ: Դա նշանակում է, որ վարչական մարմնի որևէ գրավոր փաստաթուղթ, որտեղ արտահայտված են տեսակետներ, դիրքորոշումներ, կարծիքներ, մեկնաբանություններ, համաձայնություններ, որը, սակայն, ուղղված չէ կոնկրետ գործի կարգավորմանը, չի կարող համարվել վարչական ակտ: Ընդ որում, նշված հատկանիշի հետ սերտորեն կապված է վարչական ակտի մյուս՝ կոնկրետ գործով իրավական հետևանքներ առաջացնելու հատկանիշը, ըստ որի՝ եթե վարչական մարմնի որևէ փաստաթուղթում կոնկրետ անձի համար կոնկրետ իրավունքներ և պարտականություններ չեն սահմանվում, փոփոխվում, վերացվում կամ (հարցը) ճանաչվում, ապա այն չի կարող հանդիսանալ վարչական ակտ: Այսպիսով, վարչական ակտի քննարկվող հատկանիշներին համապատասխանելու համար վարչական մարմնի որևէ գրավոր փաստաթուղթ ոչ միայն պետք է ուղղված լինի կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը, այլև պետք է անմիջականորեն կարգավորի այդ գործը՝ առաջացնելով կոնկրետ անձի իրավունքների ու պարտականությունների սահմանում, փոփոխում, վերացում կամ ճանաչում: Այդ պատճառով էլ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրել է վարչական ակտի որոշակի լինելու պահանջը, սահմանելով, որ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, որպեսզի դրա բովանդակությունից դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Հանրային իրավունքի բնագավառում վարչական ակտով կոնկրետ գործի (հարցի) հստակ կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ուժի մեջ մտնելուց հետո վարչական ակտը ենթակա է կատարման, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև հարկադիր կատարման, այսինքն՝ վարչական ակտը ենթակա է պարտադիր կատարման՝ վարչական ակտով տրված լուծմանը համապատասխան, իսկ եթե վարչական մարմնի տրված փաստաթուղթով որևէ գործի կոնկրետ (հարցի) լուծում չի տրվել, ապա այդ փաստաթուղթը զուրկ կլինի նաև կատարելիության հատկանիշից: Այսպես, եթե վարչական մարմինը գրավոր փաստաթուղթով իր համաձայնությունը կամ անհամաձայնությունն է արտահայտում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հնարավոր վարքագծի վերաբերյալ, ապա ակնհայտ է, որ այդ համաձայնությունը կամ անհամաձայնությունը որևէ կերպ չի կարող կատարվել, քանի դեռ անձը չի դրսևորել իր վարքագիծը, իսկ վարչական մարմինն էլ իր իրավասության սահմաններում կոնկրետ կարգավորում չի տվել այդ անձի վարքագծին կամ դրա իրավական հետևանքներին: Այսինքն՝ այդ պարագայում վարչական մարմինը չի ընդունել վարչական ակտ, որն ուժի մեջ մտնելուց հետո ենթակա կլինի պարտադիր կատարման այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

Վարչական մարմնի դիրքորոշումն անկախ նրանից՝ դա անձի համար բարենպաստ է, թե ոչ, անձը կարող է հաշվի առնել իր հնարավոր վարքագիծն ընտրելիս: Մակայն այդ դիրքորոշումն անձի համար պարտադիր չէ, քանի դեռ վարչական մարմինն այն չի արտահայտել կոնկրետ գործի (հարցի) լուծման նպատակով ընդունված վարչական ակտում՝

վարչարարության իրականացմամբ իրացնելով կոնկրետ գործի (հարցի) կարգավորման իր հանրային-իշխանական լիազորությունը: Հարկ է նաև արձանագրել, որ գրավոր փաստաթղթում դիրքորոշում արտահայտելով անձի հնարավոր վարքագծի իրավաչափության վերաբերյալ՝ վարչական մարմինը չի կարող ենթադրել, որ անձը հետագայում անպայման կդրսևորի իր դիրքորոշմանը համապատասխան ենթադրյալ իրավաչափ վարքագիծ: Վարչական գործին կոնկրետ լուծում չտվող ակտում վարչական մարմնի արտահայտած դիրքորոշումն անձի վարքագծի վրա անմիջականորեն չի կարող ազդել, քանի որ անձը տվյալ իրավահարաբերության վերաբերյալ կարող է ունենալ սեփական դիրքորոշումը և պարտավորված չէ ղեկավարվելու վարչական մարմնի դիրքորոշմամբ: Հետևաբար, վարչական մարմնի այնպիսի գրավոր փաստաթուղթը, որն անձին չի պարտադրում հարկադրանքի միջոցով երաշխավորված կատարման ենթակա վարքագիծ, վարչական ակտ համարվել չի կարող:

Նշված վերոնույնների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտ չի կարող համարվել վարչական մարմնի կողմից տրված այնպիսի գրավոր փաստաթուղթը, որը թեև պարունակում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի (հարցի) լուծման վերաբերյալ դատողություններ, դիրքորոշումներ (այդ թվում՝ համաձայնության կամ անհամաձայնության ձևով), սակայն դրանք ուղղված չեն կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը և չեն լուծում այդ գործը (հարցը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցվորի ներկայացրած հիմնական պահանջներով վիճարկվող գրությունը՝ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշումը (համաձայնությունը), չունի վարչական ակտի բոլոր անհրաժեշտ հատկանիշները: Մասնավորապես՝ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզանհանրը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), չի ընդունվել որևէ օրենքով Կենտրոնական բանկին վերապահված հանրային-իշխանական լիազորության կիրառման արդյունքում: Այլ կերպ՝ Կենտրոնական բանկը, գործող օրենսդրության համաձայն, չունի բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզանհանրը հավանություն տալու լիազորություն: Հետևաբար, սույն գործով վիճարկվող Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզանհան գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չի կարող պարտադիր իրավաբանական հետևանքներ առաջացնել Ամերիաբանկի կամ այլ սուբյեկտի համար. այն ունի զուտ խորհրդատվական նշանակություն: Անկախ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզանհան գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առկայությունից կամ բացակայությունից՝ Ամերիաբանկը կարող էր կատարել համապատասխան կորպորատիվ գործողությունը, որի իրավաչափության գնահատումը դուրս է սույն վարչական գործի քննության առարկայի շրջանակից:

Փաստորեն, սույն գործով վիճարկվող Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզանհան գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չի ընդունվել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի (հարցի) կարգավորման նպատակով. այն ուղղված չէ կոնկրետ գործի (հարցի) կարգավորմանը և չի լուծում այդ գործը (հարցը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն վարչական գործի վարույթը Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ

առոչինչ ճանաչելու և ածանցյալ պահանջների մասով Վերաքննիչ դատարանը կարճել է իրավաչափ կերպով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ այդ փաստաթուղթն անվավեր կամ առոչինչ ճանաչելու հայցապահանջների մասով Արտաշես Հովհաննիսյանի ներկայացրած հայցադիմումի ընդունումը Դատարանում ենթակա էր մերժման այն հիմքով, որ այդ հայցապահանջների մասով վերջինիս ներկայացրած հայցը ենթակա չէ դատարանի քննությանը:

Վճռաբեկ դատարանը սույն հետևությունը հիմնավորել է նրանով, որ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշմամբ Ամերիաբանկին կամ հայցվորին առնչվող կոնկրետ գործ (հարց) չի կարգավորվել, նրանց համար ուղղակի իրավունքներ կամ պարտականություններ չեն առաջացել, այսինքն՝ Կենտրոնական բանկի դրական դիրքորոշումը վարչական ակտ չէ, իսկ Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիան և կանոնադրության փոփոխությունն իրականացվել են նրա բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչը սույն գործով վիճարկման առարկա չէ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու հիմնական պահանջով դատարան դիմելը չի կարող հետապնդել Արտաշես Հովհաննիսյանի որևէ իրավունքի դատական պաշտպանության նպատակ: Տվյալ դեպքում Արտաշես Հովհաննիսյանը չունի իր հասարակ անվանական բաժնետոմսերի հետգնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վիճարկելու պահանջով հայց հարուցելու իրավունք, իսկ դատարանը չունի իր առջև բարձրացված տվյալ վեճը քննելու և լուծելու իրավասություն: Այսինքն՝ հայցվորի կողմից վարչական դատարանի առջև բարձրացված հարցն իր էության բնույթով առարկայագուրկ է և չի կարող քննության առնվել ոչ միայն վարչական դատարանի, այլ նաև առաջին ատյանի որևէ այլ դատարանի կողմից: Փաստորեն, տվյալ դեպքում առկա են այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու Արտաշես Հովհաննիսյանի կողմից դատարանի առջև բարձրացված հարցը: Հետևաբար, սույն վարչական գործի վարույթը ենթակա էր կարճման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Նման պայմաններում իրավաչափ է նաև Վերաքննիչ դատարանի կողմից Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին հայցվորի պահանջի մերժումը:

6. Հարուկ կարծիքի պարճատարանությունները և եզրահանգումները

6.1. Նախ պետք է արձանագրել, որ սույն գործի էությունը հանգում է հետևյալին.

Արտաշես Հովհաննիսյանը հանդիսացել է Ամերիաբանկի՝ որպես բաժնետիրական ընկերության, 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսի սեփականատեր: Ամերիաբանկն իրականացրել է իր բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա), որի արդյունքում Արտաշես Հովհաննիսյանին պատկանող 5 հատ բաժնետոմսերը դարձել են կոտորակային (0.625 հատ): Ամերիաբանկն իրականացրել է կոնսոլիդացիայի արդյունքում կոտորակային դարձած (այդ թվում նաև՝ Արտաշես Հովհաննիսյանին պատկանող) բաժնետոմսերի հետգնում և դրանց մարում՝ կատարելով համապատասխան փոփոխություններ իր կանոնադրության մեջ և գրանցելով դրանք: Արդյունքում Արտաշես Հովհաննիսյանը գրկվել է Ամերիաբանկի՝ իրեն պատկանող 5 բաժնետոմսից: Նկարագրված գործընթացն Ամերիաբանկն իրականացրել է Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման հիման վրա:

Արտաշես Հովհաննիսյանը, համաձայն չլինելով Ամերիաբանկի կողմից իրականացված կոնսոլիդացիայի և դրա արդյունքում իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման իրավաչափության հետ, դիմել է վարչական դատարան՝ ներկայացնելով հետևյալ հիմնական հայցապահանջները.

1) վերացնել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը,

2) ճանաչել Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առ ոչինչ լինելը,

3) անվավեր ճանաչել Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը:

Միևնույն ժամանակ, Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է հետևանքների վերացման հետևյալ ածանցյալ հայցապահանջները.

4) անվավեր ճանաչել Ամերիաբանկի բաժնետերերի ժողովի 15.10.2012 թվականի թիվ 02/12/01, 02/12/02, 02/12/03, 21.03.2012 թվականի թիվ 02/13/02, 02/13/03 որոշումները,

5) անվավեր ճանաչել Ամերիաբանկի բաժնետերերի ժողովի թիվ 02/12/01 որոշման արձանագրության հիման վրա 17.12.2012 թվականին Դեպոզիտարիայի համակարգում Ամերիաբանկի կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի համախմբման կորպորատիվ գործողության և Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումները,

6) անվավեր ճանաչել Ամերիաբանկի 15.10.2012 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 02/12/01, 02/12/02 և 02/12/03 որոշումների հիման վրա իրականացված կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած՝ Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքը,

7) անվավեր ճանաչել Ամերիաբանկի տնօրենների խորհրդի 14.12.2012 թվականի սիստի թիվ 30/12 արձանագրության թիվ 30/12/06 որոշումը,

8) Դեպոզիտարիայի համակարգում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած 0,875 հատ կոտորակային բաժնետոմսերի հետզման կորպորատիվ գործարքի գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով վերականգնել մինչ կոնսոլիդացիան հայցվորին պատկանած 5 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը:

6.2. Դատարանը բավարարել է Արտաշես Հովհաննիսյանի հայցը՝ վերացնելով Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը և բավարարելով հետևանքների վերացման ածանցյալ պահանջները (այդ թվում՝ նաև՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը, որը ներկայացված է և՛ որպես ածանցյալ և՛ որպես հիմնական պահանջ):

Նախ՝ Դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 30.11.2012 թվականի դրական վերահսկողական դիրքորոշումը համապատասխանում է օրենսդրորեն սահմանված վարչական ակտի նկարագրին, և այն կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, իսկ դրանից ածանցվող քաղաքացիաիրավական պահանջները կարող են քննվել վարչական դատավարության կարգով: Ընդ որում, Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող դիրքորոշումն ուղղված է կոնկրետ գործի կարգավորմանն այնքանով, որքանով նման վերահսկողական դիրքորոշմամբ թույլատրվում է բաժնետոմսերի կոնսոլիդացիան և իրավաբանական ուժ է տրվում Ամերիաբանկի համապատասխան որոշմանը:

Այնուհետև Դատարանը եզրահանգել է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված դրական վերահսկողական դիրքորոշումն անվավեր վարչական ակտ է, քանի որ կայացվել է առանց սույն գործով հայցվոր Արտաշես Հովհաննիսյանին որպես երրորդ անձ վարույթին ներգրավելու՝ վերջինիս լաված լինելու իրավունքի խախտմամբ:

6.3. Վերաքննիչ դատարանը, բավարարելով Կենտրոնական բանկի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը: Վերաքննիչ դատարանը կարճել է սույն վարչական գործի վարույթը՝ (1) Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու և (2) դրա առ ոչինչ լինելը ճանաչելու հիմնական պահանջների, ինչպես նաև դրանցից ածանցվող պահանջների մասով, իսկ (3) Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջը մերժել է:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ամերիաբանկը բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու և դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու իր իրավունքն իրականացնելու նպատակով որևէ օրենքով Կենտրոնական բանկին դիմելու և վերջինիս կողմից վարչական ակտ (համաձայնություն, թույլտվություն) ստանալու պարտականություն չի ունեցել: Իսկ Կենտրոնական բանկի նախագահին, Կենտրոնական բանկի խորհրդին կամ կառավարման որևէ այլ մարմնին «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով վերապահված չէ լիազորություն բանկերի կողմից բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու իրավունքն իրացնելու կապակցությամբ ընդունելու այդ իրավունքը տրամադրող կամ այդ իրավունքի տրամադրումը մերժող վարչական ակտ (համաձայնություն կամ անհամաձայնություն): Ընդ որում, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման մասին 24.07.2012 թվականին տրված թիվ 8 պաշտոնական պարզաբանումն ընդամենը կարող է կրել զուտ խորհրդատվական բնույթ:

Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեյանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ ՀՀ իրավական համակարգում չի հանդիսանում վարչական ակտ: Հետևաբար, (1) Արտաշես Հովհաննիսյանի 0,625 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի հետզնման գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու և (2) դրա առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հիմնական պահանջները չեն կարող վարչական դատարանում համապատասխանաբար վիճարկման կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման (վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու) հայցի առարկա հանդիսանալ:

Իսկ (3) Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջի մասով Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ամերիաբանկի կողմից իր բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, ինչպես նաև դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու համար Կենտրոնական բանկի կողմից որևէ վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: Ուստի, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը չի կարող անվավեր ճանաչվել վերահսկողական դրական դիրքորոշման բացակայության հիմքով:

6.4. Սույն գործի էության հակիրճ նկարագրությունը ցույց է տալիս, որ հայցվոր Արտաշես Հովհաննիսյանի կողմից բերված վճռաբեկ բողոքի քննության համար էական

նշանակություն ունի այն հարցը, թե արդյո՞ք Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաստությունը կարող է քննության առարկա դառնալ դատարանում (քննվել դատական կարգով), թե՛ ոչ:

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Դատարանը և Վերաքննիչ դատարանը միանգամայն իրավացիորեն գտել են, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի հարցը, թե արդյո՞ք Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ է, թե՛ ոչ: Ընդ որում, Դատարանը գտել է, որ այդ փաստաթուղթը վարչական ակտ է, իսկ Վերաքննիչ դատարանը հանգել է տրամագծորեն հակառակ եզրակացության: Այս հարցն էական նշանակություն ունի սույն գործի քննության համար, քանի որ Արտաշես Հովհաննիսյանը Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման դեմ վարչական դատարան է դիմել վիճարկման և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման (վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու) հայցատեսակներով, որոնց առարկան վերաբերում է բացառապես վարչական ակտին: Այսինքն՝ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման՝ վարչական ակտ լինելուց կամ չլինելուց է կախված սույն գործով ներկայացված երեք հիմնական հայցապահանջներից երկուսի դատավարական ճակատագիրը:

6.5. Անդրադառնալով Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման բնույթին՝ արձանագրում են, որ այն վարչական ակտ չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը (*տե՛ս «Օլիմպ» արտադրական կոոպերատիվին ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը*):

Ընդհանրացնելով վարչական ակտի հասկացության մեջ մտնող տարրերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

13) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ելթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

14) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

15) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

16) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությանը օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

17) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

18) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար՝ գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտին բնորոշ կարևորագույն հատկանիշն այն է, որ վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (*տե՛ս Վարդիթեր Ավդյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ հայցվորի ներկայացրած առաջին և երկրորդ հիմնական պահանջներով բողոքարկվող Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը չունի վարչական ակտի բոլոր անհրաժեշտ հատկանիշները: Մասնավորապես՝ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի 30.11.2012 թվականի գրությունը, որով Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանին հայտնվել է, որ Կենտրոնական բանկն Ամերիաբանկի կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզմանը տալիս է դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն), չի ընդունվել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված չէ կոնկրետ գործի կարգավորմանը և չի լուծում այդ գործը: Քննարկվող փաստաթղթի ընդունմամբ Կենտրոնական բանկը ոչ թե լուծել է հանրային իրավունքի բնագավառում որևէ հարց (գործ), այլ հայտնել է իր կարծիքը (տեսակետը, դիրքորոշումը) Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման գործընթացի վերաբերյալ:

Հետևաբար, պետք է համաձայնել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշման հետ, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ չէ:

6.6. Քանի որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ չէ, դրա իրավաչափությունը չի կարող քննության առարկա դառնալ վիճարկման կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման (վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու) հայցատեսակներով:

Մակայն Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափությունն այդ հայցատեսակների ներքո քննության առնելու իրավական հնարավորության բացակայությունն ինքնին չի կարող ենթադրել, որ Արտաշես Հովհաննիսյանի հայրը ենթակա չէ դատարանում քննության:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում բազմիցս ընդգծել է, որ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ գործի վարույթը ենթակա է կարճման հայցը (վեճը) դատարանին ենթակա չլինելու հիմքով (*լրեն օրինակ, Գագիկ Մաթևոսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վերոգրյալ գաղափարը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներդրվել է իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ ելնելով այն նկատառումից, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական հայցի տեսակները և դրանց օրենսդրական բնորոշումները չեն կարող խոչընդոտել անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը: Վարչական հայցի տեսակների գոյության նպատակն այն է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերն արդյունավետ կերպով քննության առնվեն վարչական դատարանի կողմից՝ հաշվի առնելով միայն տվյալ հայցատեսակին բնորոշ առանձնահատուկ հատկանիշները: Այլ կերպ ասած՝ վարչական հայցի տեսակներն ուղղված են անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը: Վարչական հայցի տեսակների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բնորոշումները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես գործիք՝ անձին դատական պաշտպանություն փաստացի չտրամադրելու և վարչական արդարադատությունից իրաժարվելու համար: Նման մոտեցումը ՀՀ վճռաբեկ դատարանը գնահատել է որպես դատավարական նորմերի մեխանիկական ընկալման և կիրառման հետևանք, ինչի արդյունքում խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը (*լրեն Գագիկ Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/8117/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.09.2019 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործով վարչական դատարանի առջև բարձրացված վեճը՝ գտնում են, որ այն ենթակա է դատարանի քննությանը և ընդդատյա է վարչական դատարանին՝ ստորև ներկայացվող պատճառաբանություններով:

6.7. Նախ՝ պետք է արձանագրել, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է (*լրեն Kreuz v. Poland (28249/95) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է այս կամ այն գործի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու կամ չլինելու հարցի հետ, քանի որ դատարանը՝ որպես իրավաբանական գործեր քննող և լուծող մարմին, օժտված չէ համընդհանուր իրավագործությամբ և իր գործառոյթներին ու խնդիրներին համապատասխան կարող է քննել և լուծել միայն իր իրավասությանը հանձնված գործերը: Այս հանգամանքն առաջացնում է, մի կողմից, դատարանի, իսկ մյուս կողմից, իրավաբանական

գործեր քննելու և լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների (օրինակ՝ վարչական մարմիններ, առևտրային արբիտրաժ և այլն) իրավասությունը հստակորեն սահմանազատելու անհրաժեշտություն: Դատարանի և իրավաբանական գործեր քննելու ու լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների իրավասությունը տարանջատելիս կիրառվում է «ենթակայություն» իրավաբանական եզրույթը. ենթակայությունն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումը օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր:

Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից: Այդ իսկ պատճառով օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության, իսկ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը (*լրեն Վարունյան Ավերիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*): Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված «որևէ դատարան» բառակապակցության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ Հայաստանի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների քննությանը և լուծմանը: Նման իրավակարգավորումը կոչված է բացատրելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման (*լրեն «Վեսթ» ՄՊԼ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Այսպիսով, անձի կողմից դատարանի առջև բարձրացված հարցի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու հանգամանքը հանդիսանում է հայց հարուցելու իրավունքի ընդհանուր դրական նախադրյալ, որի առկայության դեպքում միայն անձն իրավունք ունի իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության խնդրանքով դիմել դատարան: Հակառակ դեպքում, այսինքն՝ գործը դատարանին ենթակա չլինելու դեպքում, անձն իրավունք չունի հայց հարուցել դատարանում, և դատարանը պարտավոր է վարույթ չընդունել ներկայացված հայցադիմումը:

Իր որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը որդեգրել է այն կառուցակարգը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «հայցը ենթակա չէ դատարանում քննության» արտահայտությունը և նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության» արտահայտությունն ունեն միևնույն նշանակությունը, որը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է

կարճման, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Հետևաբար վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս կամ այդ հիմքով գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը պարտավոր է ցույց տալ այն իրավական և փաստական հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու տվյալ վեճը (տե՛ս «Օլիմպ» արտադրական կոդպերատիվն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0998/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

6.8. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումների և սույն գործի փաստական հանգամանքների համադրումից պարզվում է, որ սույն գործով վարչական դատարանի առջև բարձրացված վեճը ենթակա է դատարանի քննությանը:

Այսպես՝ Արտաշես Հովհաննիսյանը, դատական կարգով բողոքարկելով Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը, նպատակ է ունեցել իրացնելու Ամերիաբանկի բաժնետոմսերի նկատմամբ իր սեփականության իրավունքի դատական պաշտպանությունը, քանի որ Ամերիաբանկի բաժնետոմսերի նկատմամբ Արտաշես Հովհաննիսյանի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը (բաժնետոմսերի կոնսուլիդացիան և կոտորակային բաժնետոմսերի հետգնումը) կատարվել են հենց Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման հիման վրա:

Նշված դատողությունը հաստատվում է Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի «Բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսուլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման մասին» թիվ 8 պաշտոնական պարզաբանմամբ: Այդ պարզաբանման համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհուրդը գտել է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկի բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ իրավական նորմերը կիրառելի են բանկի կապիտալի նվազեցման նպատակ հետապնդող բանկի բաժնետոմսերի հետգնման հարաբերությունների նկատմամբ: Պարզաբանմամբ նշվել է, որ Կենտրոնական բանկի խորհուրդը կենսական է համարում բանկի կամ ապահովագրական ընկերության կողմից իր բաժնետոմսերի հետգնման դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայնության տրամադրման մեխանիզմի նույնական կիրառումը՝ նաև կոնսուլիդացիայի որոշման կայացման և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման դեպքերում, իսկ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակցության հետգնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Արդյունքում Կենտրոնական բանկի խորհուրդը պաշտոնապես պարզաբանել է հետևյալը.

«1. Բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերը և ապահովագրական ընկերությունները որպես կորպորատիվ գործողություն իրավասու են իրականացնել իրենց բաժնետոմսերի կոնսուլիդացիա և կոնսուլիդացիայի արդյունքում առաջացող կորպորակային բաժնետոմսերի պարտադիր հերզնում՝ այդ գործողությունների իրականացման համար սրբապաշտով Կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը:

2. Կոնսուլիդացիայի ու դրա արդյունքում առաջացող կորպորակային բաժնետոմսերի հերզնման, ինչպես նաև ֆինանսական կայունության և(կամ) բաժնետերերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ կորպորատիվ այլ գործողությունների կիրառման վերաբերյալ իր դիրքորոշումը Կենտրոնական բանկը տրամադրում է հիմնվելով յուրաքանչյուր դեպքի ստանձնահատուկ փաստերի վրա»:

Փաստորեն, տվյալ դեպքում Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը, ըստ Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանման, փաստացի բացասական իրավաբանական հետևանքներ է առաջացրել Արտաշես Հովհաննիսյանի համար. դրա հիման վրա տեղի ունեցած Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և կոտորակային բաժնետոմսերի հետգնման արդյունքում Արտաշես Հովհաննիսյանը գրկվել է Ամերիաբանկի՝ իրեն պատկանող 5 բաժնետոմսից:

Հետևաբար, Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափությունը կարող է քննարկման առարկա դառնալ դատարանի կողմից: Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափության վերաբերյալ վեճը, ըստ էության, վերաբերում է Ամերիաբանկի 5 բաժնետոմսի նկատմամբ Արտաշես Հովհաննիսյանի սեփականության իրավունքի պաշտպանության հարցին: Այլ կերպ՝ սույն գործով Արտաշես Հովհաննիսյանի կողմից դատարանի առջև բարձրացվել է «իրավունքի մասին վեճ», որը ենթակա է դատարանի քննությանը:

Այնուհանդերձ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը Արտաշես Հովհաննիսյանի հայցի ենթակայության հարցը լուծելիս առաջնորդվել է ներկայացված հայցապահանջների՝ վիճարկման կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման (վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու) հայցատեսակներին համապատասխանելու չափանիշով: Մինչդեռ հայցով ներկայացված այս կամ այն պահանջի դատական ենթակայությունը կապված է ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակի ճիշտ կամ սխալ ընտրության հետ, այլ դատարան դիմող սուբյեկտի մոտ հայց հարուցելու իրավունքի և դատարանի մոտ իր առջև բարձրացված տվյալ վեճը քննելու և լուծելու իրավասության առկայության կամ բացակայության հետ: Այսինքն՝ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ դատարանի առջև բարձրացված վեճը (հայցը) ենթակա չէ դատարանի քննությանը: Հետևաբար, Արտաշես Հովհաննիսյանի հայցի՝ վիճարկման կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման (վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու) հայցատեսակներին չհամապատասխանելու հանգամանքը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ ներկայացված հայցը դատարանում քննության ենթակա չլինելու վերաբերյալ եզրահանգում կատարելու համար:

Մյուս կողմից, տվյալ դեպքում առկա չեն այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին սայանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու Արտաշես Հովհաննիսյանի կողմից դատարանի առջև բարձրացված հարցը:

Հետևաբար, սույն վարչական գործի վարույթը՝ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու և հետևանքների վերացման ածանցյալ պահանջների մասով, ենթակա չէր կարճման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վեճը որևէ դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

6.9. Եթե Վերաքննիչ դատարանը, Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու և հետևանքների վերացման ածանցյալ պահանջների մասով սույն գործի վարույթը կարճելով, ենթադրել է, որ հայցի այդ մասով Արտաշես Հովհաննիսյանն իր դատական պաշտպանության իրավունքը չէր կարող իրացնել վարչադատավարական կարգով, ապա գործի վարույթը կարճելու փոխարեն պետք է միջոցներ ձեռնարկել վարչական դատավարությունում գործող՝ պահանջի վերահասցեագրման ինստիտուտի

կիրառությունը վարչական դատարանի կողմից ապահովվելու ուղղությամբ: Այդ ճանապարհով կարող էր ապահովվել Արտաշես Հովհաննիսյանի դատական պաշտպանության իրավունքի իրացումը:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը, նպատակ ունենալով վարչական արդարադատության համակարգում ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, նախատեսել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Ընդ որում, այս կառուցակարգը վարչական դատավարության համակարգ ներդրվեց 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (մինչ այդ գործող՝ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը նշված կանոնի խախտումը դիտում էր որպես գործի վարույթի կարճման հիմք): Հայցադիմումը վերահասցեագրելը սահմանելով որպես վարչական դատարանի պարտականություն՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ *վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդարյալ է իրեն, այն պարճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդարյության:* Այսպիսով, վարչական դատարանը, կաշկանդված լինելով արդարադատության պատշաճ իրականացման և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովման կոնվենցիոն կարգավորումներով, պարտավոր է պարզել, թե արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՛ ոչ, և գործը վարչական դատարանին ընդդատյա չլինելու պարագայում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը:

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է, որ վարչական դատարանին որևէ գործի ընդդարյալ չլինելու հանգամանքն այդ գործի քննության ընթացքում պարզվելու իրավաբանական հերևանքն այն է, որ վարչական դատարանը որոշում է կայացնում տվյալ գործն ըստ ընդդարյության վերահասցեագրելու մասին (տե՛ս «Վեստ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Հաշվի առնելով վարչական դատավարությունում գործող՝ պահանջի վերահասցեագրման կառուցակարգի վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ գրնում եմ, որ եթե Վերաքննիչ դատարանը բացառել է Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին տրված 30.11.2012 թվականի վերահսկողական դրական դիրքորոշումը վերացնելու կամ առ ոչինչ ճանաչելու և հերևանքների վերացման ածանցյալ պահանջների մասով վարչական դատարանի կողմից սույն գործի քննության հնարավորությունը, ապա պետք է այդ պահանջների մասով ոչ թե կարճեր սույն գործի վարույթը, այլ գործն ուղարկեր նոր քննության՝ վարչական դատարանի կողմից վերոհիշյալ պահանջները ընդհանուր իրավասության համապարասխան դատարան վերահասցեագրելու գործիքակազմը կիրառելու համար:

6.10. Այնուհանդերձ, գտնում եմ, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափության վերաբերյալ վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից և ընդդատյա է վարչական դատարանին:

Հիմք ընդունելով «Վեստ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափության վերաբերյալ վիճելի իրավահարաբերությունն օժտված է հետևյալ հատկանիշներով.

1. այդ իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ Կենտրոնական բանկը,

2. այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Կենտրոնական բանկի, կողմից Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանման համատեքստում իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը, համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 24.07.2012 թվականի թիվ 8 պաշտոնական պարզաբանման, Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման թույլտվությունն է՝ տրված հանրային իշխանության մարմնի կողմից իր հանրային-իշխանական լիազորությունների կիրառմամբ,

3. այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի՝ ֆինանսական, այդ թվում՝ բանկային համակարգի կայունության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու անհրաժեշտության, ապահովման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը):

Հետևաբար, Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափության վերաբերյալ վիճելի իրավահարաբերությունից բխող սույն գործը՝ առաջին և երկրորդ հիմնական պահանջների և ածանցյալ պահանջների մասով, ընդդատյա է վարչական դատարանին և ենթակա է քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

6.11. Սույն հատուկ կարծիքի 6.8 և 6.10 կետերում կատարված վերլուծություններից հետևում է, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու պահանջներով վարչական դատարանի առջև բարձրացված գործը ոչ միայն առհասարակ ենթակա է դատարանի քննությանը, այլ նաև ընդդատյա է վարչական դատարանին և պետք է քննվի վարչական դատավարության կարգով: Սակայն Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափությունը չի կարող քննության առնվել վիճարկման կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման (վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու) հայցատեսակներով:

Այս առումով րեդիկն եմ համարում հիշարարակել ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, սպա վերջինիս իրավունքների և շահերի դատարանի պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պարզաձև հայցարեւակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցարեւակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով րվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատարանի պաշտպանության սպահովմանը (տե՛ս Վարդման Ավետիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը):

Գրնում եմ, որ հանրային իրավահարաբերությունից ծագող վեճից բխող սույն գործի քննության ու լուծման միջոցով Արարշես Հովհաննիսյանի իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի իրացումը պետք է սպահովվի դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի կենսագործման միջոցով, որը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված դատավարական սկզբունքի էությանը և բովանդակությանը, նախկին որոշումներից մեկում նշել է, որ դատարանի կողմից

գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքի էությունից բխում է, որ այն դեպքում, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք, դիմելով վարչական դատարան, ճիշտ չեն ընտրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապարասխան հայցարեւասկը կամ ճիշտ չեն ձևակերպել իրենց հայցային պահանջները, վարչական դատարանը պարտավոր է մատնանշել ճիշտ հայցապահանջները կամ պարզաճ հայցարեւասկները՝ առաջարկելով հայցվորին ճշտել ոչ հարակ հայցային պահանջները կամ ոչ ճիշտ հայցարեւասկները փոխարինել պարզաճ հայցարեւասկներով (տե՛ս Վարուժան Ավետիքյանն ընդդէմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը): ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ հայցարեւասկի ընտրության առթիվերիվ իրավունքը բոլոր դեպքերում պարկանում է հայցվորին, և եթե ոչ հարակ կամ ոչ ճիշտ հայցարեւասկը հարակեցնելու կամ ճիշտ հայցարեւասկով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կարարված (տե՛ս Ալեքսանդր Կարալովն ընդդէմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Ընդհանրացնելով վերոգրյալ իրական վերլուծությունները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հանգել է հերկյալ եզրակացության.

1) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ դատարանի առջև բարձրացված վեճը (հայցը) ենթակա չէ դատարանի քննությանը,

2) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության դեպքում վարչական դատարանը ոչ թե պետք է որոշում կայացնի վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու մասին, այլ պարտավոր է առաջարկել հայցվորին ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ճիշտ հայցատեսակը),

3) եթե հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության և վարչական դատարանի կողմից պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականության պատշաճ կատարման պայմաններում հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված սկզբնական ոչ ճիշտ հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ (տե՛ս Գագիկ Մաթևոսյանն ընդդէմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում են, որ տվյալ դեպքում Դատարանը պարտավոր էր կատարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքից բխող՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու իր պարտականությունը, այն է՝ առաջարկել Արտաշես Հովհաննիսյանին ներկայացնելու տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և օրենքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային ընորոշ հայցապահանջ: Այսինքն՝ Դատարանը պարտավոր էր առաջարկել Արտաշես Հովհաննիսյանին հստակեցնել իր հայցապահանջն այնպես, որ այն համապատասխանի վիճելի իրավահարաբերությունից բխող պատշաճ հայցատեսակին (մատնանշել ճիշտ հայցատեսակը), քանի որ Արտաշես Հովհաննիսյանին կողմից ներկայացված ոչ ճիշտ հայցապահանջը չի կարող ապահովել վերջինիս իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը վարչական դատավարության կարգով: Ավելին՝ Դատարանը պարտավոր էր Արտաշես Հովհաննիսյանին ոչ միայն հայտնել ներկայացված հայցապահանջի հստակեցման անհրաժեշտության մասին, այլ նաև պատշաճ կարգով մատնանշել այն ճիշտ հայցատեսակը, որի միջոցով Արտաշես Հովհաննիսյանը կարող էր իրացնել իր

իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը վարչական դատավարության կարգով:

Մինչդեռ Դատարանը պատշաճ կերպով չի կատարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքից բխող դատավարության մասնակիցներին օժանդակելու իր վերոգրյալ պարտականությունը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Գտնում են, որ սույն գործով Արտաշես Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ճիշտ հայցատեսակը պարզելու համար անհրաժեշտ է ելակետ ընդունել Արտաշես Հովհաննիսյանի և Կենտրոնական բանկի միջև առկա վեճը, դրա էությունն ու բովանդակությունը:

Հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաբանական բնույթի և դրա առաջացրած իրավաբանական հետևանքների վերաբերյալ սույն հատուկ կարծիքի 6.5 և 6.8 կետերում կատարված վերլուծությունները՝ գտնում են, որ թեև այդ փաստաթուղթը, չունենալով վարչական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները, չի կարող համարվել վարչական ակտ, սակայն այն փաստացի իրավաբանական հետևանքներ է առաջացրել Արտաշես Հովհաննիսյանի համար: Բանն այն է, որ թե՛ Կենտրոնական բանկը, թե՛ Ամերիաբանկը իրենց վարքագծով ընդունել են, որ Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման գործընթացի իրավաչափությունը պայմանավորված է հենց Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման առկայությամբ: Փաստորեն, անկայն այն հանգամանքից, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումը վարչական ակտ չէ, դրա հիման վրա տեղի ունեցած Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և կոտորակային բաժնետոմսերի հետզնման արդյունքում Արտաշես Հովհաննիսյանը գրկվել է Ամերիաբանկի՝ իրեն պատկանող 5 բաժնետոմսից:

Այսպիսով, հաշվի առնելով խնդրո առարկա վեճի էությունն ու բովանդակությունը՝ գտնում են, որ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման՝ դատական կարգով բողոքարկման հնարավորություն տվող դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է, որով հայցվորը կարող է պահանջել *ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան*: Նշված հայցատեսակի միջոցով Արտաշես Հովհաննիսյանը կարող է պահանջել ճանաչել Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին՝ վերջինիս բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնմանը դրական վերահսկողական դիրքորոշում (համաձայնություն) տրված լինելու իրավահարաբերության բացակայությունը՝ դրանով իսկ, ըստ էության, դատական քննության առարկա դարձնելով սույն գործով վեճի առարկա՝ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափությունը:

6.12. Ամփոփելով վերոգրյալ փաստական և իրավական վերլուծությունները՝ գտնում են, որ սույն վարչական գործի վարույթը չէր կարող կարճվել վեճը որևէ դատարանում քննության ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կարճելով սույն վարչական գործի վարույթը՝ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առչինչ ճանաչելու և աժանցյալ պահանջների մասով, վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող հայցատեսակները կարգավորող դատավարական կանոնների նկատմամբ ցուցաբերել է չափազանց ձևական (ֆորմալ) մոտեցում, որի արդյունքում Արտաշես Հովհաննիսյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվել է

այն աստիճան, որ խաթարվել է արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների բուն էությունը:

Հետևաբար, գտնում են, որ սույն գործով Արտաշես Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության համար վիճելի իրավահարաբերությունից բխող ճիշտ հայցատեսակը հայցվորին պատշաճ կարգով մատնանշելու և այդ պարտականության կատարումից հետո սույն գործի հետագա ընթացքը որոշելու նպատակով գործը՝ Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու և անանցյալ պահանջների մատով, անհրաժեշտ է ուղարկել նոր քննության: Գործի նոր քննության ընթացքում վարչական դատարանը պարտավոր է Արտաշես Հովհաննիսյանին մատնանշել վերջինիս իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ճիշտ հայցատեսակը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցը: Վարչական դատարանի մատնանշած հայցատեսակը հայցվորի կողմից ընդունվելու դեպքում վարչական դատարանը պարտավոր է շարունակել գործի քննությունը՝ փոփոխված հայցապահանջին համապատասխանող ճիշտ հայցատեսակին բնորոշ կանոններով: Իսկ հայցվորի կողմից սկզբնական հայցապահանջը պնդելու դեպքում վարչական դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ՝ այդ թվում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածով սահմանված վերահասցեագրման գործիքակազմի կիրառմամբ:

6.13. Անդրադառնալով Արտաշես Հովհաննիսյանի կողմից սույն գործով ներկայացված երրորդ հիմնական հայցապահանջին՝ *Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին*, պետք է արձանագրել, որ այն Դատարանի կողմից քննության առարկա չի դարձվել որպես հիմնական պահանջ: Դատարանը, առանց անդրադառնալու այդ պահանջի իրավաչափության ինքնուրույն հիմքերին, բավարարել է այն՝ որպես անանցյալ պահանջ: Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և մերժելով (3) *Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու* պահանջը, նշել է, որ Ամերիաբանկի կողմից իր բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու, ինչպես նաև դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը հետ գնելու համար Կենտրոնական բանկի կողմից որևէ վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: Ուստի, ըստ Վերաքննիչ դատարանի, Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը չի կարող անվավեր ճանաչվել վերահսկողական դրական դիրքորոշման բացակայության հիմքով:

Գտնում են, որ (3) *Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու* պահանջը սույն գործի շրջանակներում չի կարող քննվել որպես հիմնական հայցապահանջ: Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցման իրավաչափությունը սույն գործի շրջանակներում կախված է Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման ողջ գործընթացի իրավաչափությունից, որն էլ իր հերթին պայմանավորված է Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման իրավաչափությամբ: Այդ իսկ պատճառով (3) *Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին* հիմնական պահանջը ենթակա է մերժման, քանի որ առանց Կենտրոնական բանկի կողմից Ամերիաբանկին 30.11.2012 թվականին տրված վերահսկողական դրական դիրքորոշման, ինչպես նաև Ամերիաբանկի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման գործընթացի ոչ իրավաչափության հաստատման՝ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումը սույն գործով չի կարող անվավեր ճանաչվել: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Ամերիաբանկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության

գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը սույն գործով հայցվորի կողմից ներկայացված է ն' որպես ածանցյալ ն' որպես հիմնական պահանջ:

Այսպիսով, գտնում են, որ Վերաքննիչ դատարանն իրավաչափ կերպով է մերժել Արտաշես Հովհաննիսյանի կողմից սույն գործով ներկայացված երրորդ հիմնական հայցապահանջը՝ *Ամերիաբասնկի կանոնադրության 4.1-ին կետի փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին*, և այդ մասով Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնվի օրինական ուժի մեջ՝ սույն հատուկ կարծիքի 6.13-րդ կետում նշված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ե. Խունդկարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ-1495/05/17**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ-1495/05/17**
Նախագահող դատավոր՝ **Ա. Պողոսյան**
Դատավորներ՝ **Ա. Բաբայան**
Ա. Թովմասյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴԻՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում քննելով «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) ներկայացուցիչ Էռնեստ Աբելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վար-
չական դատարանի 14.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկա-
յին տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահան-
ջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության
22.12.2016 թվականի թիվ 1011151 վարչական ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան)
20.03.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.05.2019
թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի

վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 20.03.2018 վճիռը բեկանվել ու փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է 19.12.2012 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող խնքազրությանը՝ «Հայաստանի Հանրապետությունում արտոգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 6-8-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Մասնանափակ պարտափանապովության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 29-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բացի վերաքննիչ բողոքով վիճարկված փաստարկներից, Դատարանի վճռում տեղ են գտել նաև այլ փաստարկներ, որոնք Տեսչությունը չի վիճարկել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետի կիրառման համար էական պայման է հանդիսանում ոչ թե ընկերության մասնակից հանդիսանալը, այլ՝ բաժնեմասի սեփականության իրավունքի պատկանելիությունը, քանի որ մեկնաբանվող դրույթում օգտագործվում է «բաժնեմասը պատկանում է» եզրույթը՝ «մասնակիցը հանդիսանում է» եզրույթի փոխարեն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ որպեսզի անձը համարվի ընկերության մասնակից, վերջինս պետք է գրանցված լինի որպես այդպիսին և հանդիսանա բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձ: Տվյալ դեպքում Պարույր Էֆենդյանը 19.12.2014 թվականի դրությամբ չի ունեցել բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք, ուստի վերջինս 19.12.2014 թվականի դրությամբ չէր կարող հանդիսանալ մասնակից՝ անկախ որպես այդպիսին գրանցված մնալու փաստից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ընկերությունը ոչ միայն չի ընդունել Պարույր Էֆենդյանի՝ «Որդի Ռաֆայել» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժին ունենալու հանգամանքը, այլ նաև այդ մասին իր անտեղյակությունն է հայտնել Դատարանին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 01.11.2016 թվականի թիվ Ս-1775-Ա հրամանը որևէ տեղեկություն չի պարունակում ստուգման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին, միաժամանակ Դատարան չի ներկայացվել թիվ Ս-1775-Ա հրամանի հիմքում դրված՝ Տեսչության գլխավոր հարկային տեսուչ Ա. Ալախվերդյանի և մյուսների 31.10.2016 թվականի զեկուցագիրը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ստուգման ժամկետի երկարաձգումը և ընթացքի կասեցումը պայմանավորված է եղել մեկ հանգամանքով, մինչդեռ ստուգման ժամկետի երկարաձգման հիմքերը և ստուգման ընթացքի կասեցման հիմքերը տարբերվում են, որի պայմաններում ստուգման ժամկետի երկարաձգման և ընթացքի կասեցման համար անհրաժեշտ են առնվազն երկու տարբեր հիմքեր հանդիսացող հանգամանքներ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Տեսչությունն ստուգման ընթացքը կասեցնելուց հետո օրենքով նախատեսված կարգով չի վերսկսել այն, մասնավորապես՝ չի կայացրել ստուգման ընթացքը վերսկսելու մասին հրաման և բնականաբար, չի հանձնել այն Ընկերությանը:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.05.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 20.03.2018 վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 19.12.2014 թվականին կնքված «Բաժնեմասի առուվաճառքի» պայմանագրի համաձայն՝ Պարույր Էֆենդյանն Ընկերությունում սեփականության իրավունքով իրեն պատկանող Ընկերության կանոնադրական կապիտալի իր բաժնեմասի 100 տոկոսը (բաժնեմասի չափը՝ 50 տոկոս) վաճառել է Հերմինե Գրիգորյանին (**հատոր 1-ին, գ.թ. 94**),

2) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային քաղվածքի տեղեկությունների համաձայն՝ Հերմինե Կամոյի Գրիգորյանն Ընկերության մասնակիցների գրանցամատյանում որպես մասնակից գրանցվել է 19.11.2015 թվականին: Նույն օրն Ընկերության մասնակիցների գրանցամատյանից դուրս է եկել Պարույր Էֆենդյանը (**հատոր 1-ին, գ.թ. 85**),

3) «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ» Ընկերության հայտարարությունը՝ 01.01.2015 թվականից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հարկային մարմին (**հատոր 1-ին, 63-64**),

4) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 31.08.2016 թվականի թիվ 1011151 հանձնարարագրի համաձայն՝ Տեսչության աշխատակիցներ Արսեն Ալախվերդյանին, Արմեն Պետրոսյանին և Հայկ Կարապետյանին հանձնարարվել է Ընկերությունում անցկացնել ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների և այլ փաստաթղթերի արժանահավատությունը պարզելու, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու նպատակով բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որն ընդգրկել է շահութահարկի գծով՝ 09.02.2012 թվականից մինչև 31.12.2015 թվականն ընկած ժամանակաշրջանը, իսկ ավելացված արժեքի հարկի գծով՝ 09.02.2012 թվականից մինչև 30.06.2016 թվականը: Ստուգման ժամկետ է սահմանվել մինչև 15 անընդմեջ աշխատանքային օր: Ստուգման հիմք է նշվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը: Հանձնարարագրի վրա առկա է Ընկերության տնօրեն Վ. Դաբաղյանի ստորագրությունը՝ հանձնարարագրի մեկ օրինակն ստանալու և ստուգումը 13.10.2016 թվականին փաստացի սկսվելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 7-8, 45-46**),

5) Տեսչության հարկային հսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Ա. Ալախվերդյանի և հարկային տեսուչ Դ. Ավետիսյանի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վ. Հարությունյանին ներկայացվել է 31.10.2016 թվականի զեկուցագիր, որով վերջինիս խնդրել են կարգադրել ստուգման ընթացքը 10 աշխատանքային օրով երկարաձգելու և 03.11.2016 թվականից 30 աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ (**հատոր 1-ին գ.թ. 82**),

6) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 01.11.2016 թվականի թիվ U-1775-Ա հրամանով Ընկերությունում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 31.08.2016 թվականի թիվ 1011151 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ժամկետը երկարաձգվել է մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Նույն հրամանով ստուգումը կասեցվել է նույն թվականի նոյեմբերի 3-ից 15 աշխատանքային օրով: Տվյալ հրամանի մեկ օրինակը Վ. Դաբաղյանը ստացել է 02.11.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 83-84**),

7) 13.12.2016 թվականին կազմվել է թիվ 1011151 ակտի նախագիծը, որով խախտումներ են արձանագրվել 1. «Շահութահարկ» և 4. «Ավելացված արժեքի հարկ» կետերում: Նախագծի վրա առկա է Ընկերության տնօրենի կողմից 14.12.2016 թվականին կատարված գրառումը՝ դրա վերաբերյալ առարկություններ ունենալու և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 77-82**),

8) 22.12.2016 թվականին կազմվել է Տեսչության թիվ 1011151 ակտը, որով խախտումներ են արձանագրվել «1. Շահութահարկ» և «4. Ավելացված արժեքի հարկ» կետերում:

Ակտի «1. Շահութահարկ» կետում որպես խախտման նկարագրություն արձանագրվել է.

«Ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը սույն ակտի «ԱԱՀ-ի» բաժնում ներկայացված հիմքերով 2015 թ.-ին պետք է հանդիսանար ԱԱՀ վճարող և հարկային մարմին պետք է ներկայացներ «Ռեզիդենտի կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 02.04.2005 թ.-ի թիվ 1-05/7-Ն հրահանգը հաստատելու մասին հրամանի հավելվածով նախատեսված շահութահարկի հաշվարկ, որը ընկերության կողմից չի կատարվել: Ստուգմամբ պարզվել է, որ ընկերության 2015 թ.-ի համախառն եկամուտը կազմում է 9.815.300 ՀՀ դրամ, նվազեցվող ծախսերը 1.292.610 ՀՀ դրամ, իսկ հարկվող շահույթը 8.522.690 ՀՀ դրամ: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն հաշվարկվում է շահութահարկ 20% դրույքաչափով, որը կազմում է 1.704.538 ՀՀ դրամ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկային մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին ներկայացվող հաշվարկը (հայտարարագիրը, հաշվետվությունը) հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 րոպե օրվա համար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝ հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով գումարով 1.278.404 ՀՀ դրամ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չուժված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով գումարով 249.491 ՀՀ դրամ: Այսպիսով շահութահարկի գծով լրացուցիչ ենթակա է գանձման բյուջե 3.232.433 ՀՀ դրամ»:

Ակտի «4. Ավելացված արժեքի հարկ» կետում արձանագրվել է հետևյալը.

«Ընկերության կողմից 27.01.2015 թ.-ին Կենտրոնի ՀՏ է ներկայացվել 2015 թ.-ի «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ» հայտարարություն, որով ընկերությունը 01.01.2015 թ.-ից իրեն ճանաչել է շրջանառության հարկ վճարող և 2015 թ.-ի համար ՀՏ է ներկայացրել շրջանառության հարկի հաշվարկներ: Սակայն ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ և ըստ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետ. ռեզիստրի Էլեկտրոնային համակարգով ստացված տեղեկությունների պարզվել է, որ ընկերությունը 2015 թ.-ին համարվում է ԱԱՀ վճարող՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ մասի համաձայն: Մասնավորապես «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ի 50% բաժնետեր է համարվել քաղաքացի Պարույր Էֆենդյանը, ում միաժամանակ պատկանել է նաև «ՈՐԴԻ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00813882) կանոնադրական /բաժնեհավաք/ կապիտալի 100% փայաբաժինը: Արդյունքում ընկերությունը 2015 թ.-ին համարվելով ԱԱՀ վճարող ՀՏ չի ներկայացրել ԱԱՀ-ի հաշվարկներ: «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացված «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ապրանքների և ստակարարում և ծառայությունների մատուցում համարվող բոլոր գործարքների նույն օրենքի 8-րդ հոդվածով որոշվող ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը, որի նկատմամբ ընկերությունը 2015 թ.-ի համար «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 20% դրույքաչափով պետք է հաշվարկեր ԱԱՀ և «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով այն վճարեր բյուջե, ինչը ընկերության կողմից չի կատարվել: Ստուգմամբ

պարզվեց, որ ընկերության ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառությունը կազմում է 9.815.300 ՀՀ դրամ, այդ թվում՝ 1-ին եռամսյակում 0 դրամ, 2-րդ եռամսյակում 0 դրամ, 3-րդ եռամսյակում 0 դրամ, 4-րդ եռամսյակում 9.815.300 ՀՀ դրամ, որոնց նկատմամբ 20% դրույքաչափով պետք է հաշվարկեր ԱԱՀ: Արդյունքում ընկերության 2015 թ.-ի հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը կազմում է 1.963.060 ՀՀ դրամ, այդ թվում 1-ին եռամսյակում 0 դրամ, 2-րդ եռամսյակում 0 դրամ, 3-րդ եռամսյակում 0 դրամ, 4-րդ եռամսյակում 1.963.060 ՀՀ դրամ: 2015 թ.-ի հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցման ենթակա գումար չի առաջանում: Ընդամենը 2015 թ.-ին բյուջե վճարման է ենթակա 1.963.060 ՀՀ դրամ ԱԱՀ, այդ թվում 1-ին եռամսյակում 0 դրամ, 2-րդ եռամսյակում 0 դրամ, 3-րդ եռամսյակում 0 դրամ, 4-րդ եռամսյակում 1.963.060 ՀՀ դրամ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկային մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին ներկայացվող հաշվարկը (հայտարարագիրը, հաշվետվությունը) հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք (նաև ստուգման ակտով)՝ վճարման ենթակա հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով գումարով 1.963.060 ՀՀ դրամ, այդ թվում 1-ին եռամսյակում 0 դրամ, 2-րդ եռամսյակում 0 դրամ, 3-րդ եռամսյակում 0 դրամ, 4-րդ եռամսյակում 1.963.060 ՀՀ դրամ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով գումարով 587.622 ՀՀ դրամ (հաշվի առած 20.01.2016 թ.-ին գրոյացված ԱԱՀ-ի գծով դերետային գերավճարը): Այսպիսով ԱԱՀ-ի գծով ընկերությունից ենթակա է գանձման բյուջե ընդամենը 4.513.742 ՀՀ դրամ» (**հատոր 1-ին, գ.թ. 9-15**),

9) Սույն գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Պարոյր Էֆենդյանը «Որդի Ռաֆայել» ՍՊԸ-ում ունեցել է 20 տոկոս կամ ավելի չափով բաժնեմաս:

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, այն իմաստով, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որի արդյունքում էլ խաթարվել է արդարադատության բուն էությունը:

4.1. Վճռաբեկ դատարանը, վերահասարակելով նախկինում արտահայտած դիրքորոշումը, նախևառաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե սահմանափակ պարասխանատվությամբ ընկերությունը համարվում է արդյո՞ք ավելացված արժեքի հարկ վճարող, եթե դրա միակ մասնակիցը, ում միաժամանակ պարկանում է մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալի 20 փոկոսից ավել բաժնեմասը, մինչև հաշվետու փարվա սկիզբը վաճառել է առաջին ընկերությունում իրեն պարկանող 20 փոկոսից ավել բաժնեմասը, սակայն մինչև հաշվետու փարվա սկիզբը բաժնեմասի օտարման պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է

պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված կամ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող իրավաբանական անձը, օտարերկրյա կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մասնաճյուղը (անկախ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսանալու հանգամանքից), նոտարը կամ անհատ ձեռնարկատերը՝ տվյալ օրացուցային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը, օրացուցային տարվա ընթացքում (պետական գրանցում ստացած, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված) անձի համար՝ պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը, (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, շրջանառության հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգերը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկը օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և (կամ) շահութահարկին փոխարինող հարկ է:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող կարող են համարվել նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք), բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության հիմնադիր փաստաթուղթ է հանդիսանում նրա հիմնադիրների (մասնակիցների) կողմից հաստատված կանոնադրությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ (...) ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի՝

- ա) ընկերության անվանումը.
 բ) ընկերության գտնվելու վայրը.
 գ) ընկերության կանոնադրական կապիտալի չափը, մասնակիցների բաժնեմասերի չափերը.

դ) տեղեկություններ ընկերության մասնակիցների մասին (...):

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընկերության կանոնադրությունում փոփոխությունները կատարվում են ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում նրանց պետական գրանցման պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին տեղյակ պահելուց հետո:

«Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:

«Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն, ի թիվս այլնի, օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում, ի թիվս այլ տեղեկությունների, գրառվում են մասնակիցների կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ, մասնակիցների՝ իրավաբանական անձի մասնակից դառնալու, մասնակցության չափի փոփոխության և մասնակցությունը դադարեցնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

Նույն օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փոփոխությունները համարվում են կատարված դրանք գրանցամատյանում գրառելու պահից (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (...) համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից կատարված գրանցման համաձայն՝ այդ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այնպիսի ֆիզիկական անձի, որն իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրանցված է որպես մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետուն, բաժնեմաս, փայաբաժին) սեփականատեր: Ընդ որում, (...) իրավաբանական անձանց մասնակիցների փոփոխությունը՝ որպես իրավաբանական փաստ, ծագում է ոչ թե իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի որոշակի մասի օտարման գործարքի կն քման, այլ միայն այդ գործարքից բխող իրավունքների պետական գրանցման պահից: Փաստորեն, (...) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնեմասի) սեփականատեր ֆիզիկական անձի կողմից իր բաժնեմասի օտարման գործարքը որևէ իրավաբանական նշանակություն չունի, եթե այդ գործարքից բխող իրավունքները (մասնակիցների փոփոխությունը) օրենքով սահմանված կարգով չեն ստացել պետական գրանցում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից (որն «Անիկոն» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամտարների կոմիտեի թիվ ՎԴ/0602/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոնշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները և այն համադրելով վերոգրյալ իրավանորմերով սահմանված իրավակարգավորումների հետ, և, միաժամանակ, անհրաժեշտ համարելով կրկին վերահաստատել այդ դիրքորոշումը, արձանագրում է, որ քննարկվող իրավահարաբերության պայմաններում շրջանառության հարկից դեպի ավելացված արժեքի հարկատեսակ անցում կատարելու համար բաժնետնասի օտարման գործարքը որևէ իրավաբանական նշանակություն ունենալ չի կարող, եթե նշված գործարքն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չի ենթարկվել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 19.12.2014 թվականին կնքված «Բաժնետնասի առուվաճառքի» պայմանագրի համաձայն՝ Պարույր Էֆենդյանն Ընկերությունում սեփականության իրավունքով իրեն պատկանող Ընկերության կանոնադրական կապիտալի իր բաժնետնասի 100 տոկոսը (բաժնետնասի չափը 50 տոկոս) վաճառել է Հերմինե Գրիգորյանին: Իսկ այդ գործարքից ծագած իրավունքները պետական գրանցում են ստացել 19.11.2015 թվականին:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերով նախատեսված կարգավորումներին, եզրահանգել է, որ «(...) անձը, փաստացի ձեռք բերելով սեփականության իրավունք բաժնետնասի նկատմամբ և հանդիսանալով իրավատեր, դեռևս չի օժտվում ընկերության մասնակցի կարգավիճակով: Այսինքն՝ բաժնետնասի սեփականատեր կամ իրավատեր լինելը, ինքնին («per se»), չի վկայում նույն ընկերության մասնակցից հանդիսանալու մասին, քանի որ անձը դառնում է ընկերության մասնակցի բացառապես համապատասխան գրանցման պահից»: Նշված եզրահանգումը համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ Վերաքննիչ դատարանը հետևության է հանգել, որ «(...) չնայած կնքված պայմանագրի հիմքով 19.12.2014 թվականին Պարույր Էֆենդյանն օտարել է իրեն պատկանող Ընկերության կանոնադրական կապիտալի իր բաժնետնասի 100 տոկոսը, սակայն վերջինս մինչև 19.11.2015 թվականը շարունակել է մնալ Ընկերության մասնակցի: Ստեղծված իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընկերության մասնակցների գրանցամատյանում վերջինիս դուրս գալու վերաբերյալ փոփոխություն տեղի է ունեցել մոտ մեկ տարի անց՝ 19.11.2015 թվականին: Որպիսի պարագայում մինչև համապատասխան փոփոխության գրանցման իրականացումը Պարույր Էֆենդյանը կրում էր ընկերության մասնակցին բնորոշ իրավունքների և պարտականությունների ծավալը»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ Պարույր Էֆենդյանը, 19.12.2014 թվականին վաճառելով իր բաժնետնասը Հերմինե Գրիգորյանին, դեռևս շարունակել է կրել Ընկերության մասնակցին բնորոշ իրավունքներն ու պարտականությունները, քանի որ նշված գործարքը պետական գրանցում է ստացել միայն 19.11.2015 թվականին, լիովին համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերոնշյալ որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն հարցի վերաբերյալ հանգել է իրավաչափ եզրահանգման, ինչն էլ հիմք է տալիս փաստելու, որ վճռաբեկ բողոքում ներկայացված հիմնավորումները այս մասով հիմնավոր չեն:

4.2. Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ քննարկվող իրավահարաբերության պայմաններում՝ ապացուցման պարզականություն կրելու և դրանք չկատարելու բացասական հետևանքներին, այն դեպքում, երբ մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետնասի կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետնաս, բաժնետնաս, փայտաբաժին) սեփականատեր հանդիսանալու փաստը վիճելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները,

որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: (...) ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին (*Կրեն Ջաջուրի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարության առնչված անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ էլ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որի չիրականացման պարագայում կարող են վրա հասնել որոշակի անբարենպաստ հետևանքներ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված): Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ, գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) (*տե՛ս Գագիկ Թովմասյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/2680/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով սույն որոշման 4.1.-րդ բաժնում ներկայացված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ քննարկվող իրավահարաբերության պայմաններում, երբ վարչական մարմինն իր կայացրած վարչական ակտի հիմքում դրել է կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայքբաժին) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին պատկանելու և այդ ֆիզիկական անձին միաժամանակ մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կամ կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայքբաժին) պատկանելու հանգամանքը, ապա նշված փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է տվյալ վարչական մարմինը: Ընդ որում, երկու դեպքում էլ նշված փաստական հանգամանքները պետք է հաստատվեն վարչական վարույթի նյութերում առկա գրավոր ապացույցներով՝ մասնավորապես՝ իրավունքների վերաբերյալ պետական գրանցումները հաստատող համապատասխան փաստաթղթերով:

Վերոգրյալ վերլուծությունները համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտի վարույթի նյութերում առկա չէ որևէ գրավոր ապացույց այն մասին, որ մինչև 19.11.2015 թվականը Պարույր Էֆենդյանը «Որդի Ռաֆայել» ՍՊԸ-ում եղել է 20 տոկոս կամ ավելի չափով մասնակից: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթի նյութերում բացակայում է Պարույր Էֆենդյանի անունով պետական գրանցում ստացած համապատասխան իրավահաստատող փաստաթուղթ առ այն, որ վերջինս մինչև 19.11.2015 թվականը «Որդի Ռաֆայել» ՍՊԸ-ում ունեցել է 20 տոկոս կամ ավելի չափով բաժնեմաս: Ավելին, սույն գործի նյութերում ևս առկա չէ որևէ ապացույց առ այն, որ մինչև 19.11.2015 թվականը Պարույր Էֆենդյանին պատկանել է «Որդի Ռաֆայել» ՍՊԸ-ի 20 տոկոս կամ ավելի չափով բաժնեմաս:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչությունը, կրելով վերը նշված փաստի ապացուցման պարտականությունը, պատշաճ չի իրականացրել այդ պարտականությունը, մասնավորապես՝ չի ապացուցել, որ մինչև 19.11.2015 թվականը Պարույր Էֆենդյանը «Որդի Ռաֆայել» ՍՊԸ-ում ունեցել է 20 տոկոս կամ ավելի մասի բաժնեմաս, որպիսի դեպքում էլ նշված փաստի ապացուցված չլինելու բացասական հետևանքները պետք է կրի Տեսչությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Տեսչության 22.12.2016 թվականի թիվ 1011151 որոշումը կայացվել է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում, մասնավորապես՝ վարչական մարմնի կողմից չի ապահովվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, այն իմաստով, որ իրավախախտումը հաստատված համարելու համար բազմակողմանիորեն չեն ուսումնասիրվել և գնահատվել վարչական վարույթի նյութերը, ինչպես նաև ամբողջական չի բացահայտվել իրավախախտման համար անհրաժեշտ փաստական կազմը, որն էլ

հիմք է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով այն անվավեր ճանաչելու համար:

4.3. Միաժամանակ, Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ստուգման ժամկետների պահպանված լինելու հարցին միաժամանակ վերահասարակելով նախկինում արտահայտած դիրքորոշումները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ քան նախատեսված չէ նույն օրենքով:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ, ի թիվս այլնի, նշվում են նաև ստուգման ժամկետը, ստուգման իրավական հիմքերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, (...): Վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին (...):

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ յուրաքանչյուր տարվա համար: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, նույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղտի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր գեկուցագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով, իսկ օտարերկրյա պետություններ հարցումներ

կատարելու դեպքում՝ հարցման պատասխանը ստանալուց հետո ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով: Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ **ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:**

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոգրյալ իրավանդությունների համադրված վերլուծությանը, արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելու համար Կոմիտեն կարող է իրականացնել ստուգում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված ընթացակարգերի, այդ թվում՝ ստուգման ժամկետների պահպանմամբ՝ ապահովելով նաև տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելու օրենսդրական պահանջի կատարումը: Այսինքն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) պետք է հրապարակի ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագրի, որտեղ, ի թիվս այլնի, պետք է նշում կատարի նաև ստուգման ժամկետի, ստուգման իրավական հիմքերի վերաբերյալ: Այնուհետև ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ (եթե բացակայում են այս կանոնից շեղվելու օրենքով նախատեսված դեպքերը) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը հանձնել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, իսկ վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ընդ որում, ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը, ուստիև տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ անարգել մուտք գործելու, ստուգման նպատակներին անմիջականորեն առկվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացառություններ, տեղեկանքներ պահանջելու և վերցնելու և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ լիազորությունները ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք իրավասու են իրականացնելու միայն այդ օրվանից սկսած: Մինևնույն ժամանակ ստուգումների ընթացքին չխոչընդոտելու, ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները կատարելու, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով փաստաթղթերը, տվյալները ներկայացնելու, դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ տրամադրելու, ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ստուգվող սուբյեկտի պարտականությունները նույնպես ծագում են ստուգումը փաստացի սկսելու օրվանից: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև ստուգման ժամկետը երկարաձգելու կամ կասեցնելու դեպքերն ու կարգը, համաձայն որի՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Մինևնույն ժամանակ ստուգման ընթացքը կարող է կասեցվել, եթե առկա է լինում հետևյալ հիմքերից որևէ մեկը.

1. առաջացել է ստուգման ընթացքում առանձին տեղեկություններ ճշտելու անհրաժեշտություն,
2. ստուգմանն առնչվող փաստաթղթերն առգրավվել են հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա,
3. տեղի է ունեցել տարերային աղետ,
4. տեղի է ունեցել ստուգումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանք:

Ընդ որում, ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ, իսկ ստուգման ընթացքի կասեցումը կարող է իրականացվել միայն ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ մտնելու կանոն, համաձայն որի՝ ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգումների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունների միասնական կարգավորումը, այդ թվում՝ ստուգման վարույթի տևողության, դրա երկարաձգման և կասեցման հետ կապված կանոնների սահմանումը միաված է իրավական որոշակիության սկզբունքի պահպանմանը: Նշված կանոնների միջոցով, փաստորեն, տնտեսավարող սուբյեկտին տրվել է ստուգման համար սահմանված ժամկետների ավարտից հետո վարչական մարմնի կողմից իր գործունեությանն այլևս չմիջամտելու երաշխիք: Ուստի, վարչական մարմինը պարտավոր է պահպանել ստուգման հետ կապված վարչական վարույթի ժամկետները, իսկ դրանց երկարաձգումն ու կասեցումը՝ իրականացնել բացառապես օրենքի պահանջների պահպանմամբ:

Արդյունքում, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են ստուգումն իրականացնել ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետում, սակայն ստուգման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգման ընթացքը կասեցնելու օրենքով նախատեսված հիմքեր առաջանալու դեպքում վերջիններս պետք է գրավոր հիմնավորում կամ գրավոր զեկուցագրի ներկայացնեն համապատասխան պետական մարմնի ղեկավարին (փոխարինող պաշտոնատար անձին), որն էլ պետք է ընդունի ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ: Ընդ որում, ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ: Ընդ որում, ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան ակտն ուժի մեջ մտնելն ապահովելու համար *(տե՛ս «Արայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/11476/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 31.08.2016 թվականի թիվ 1011151 հանձնարարագրով ստուգման ժամկետ է սահմանվել մինչև 15 անընդմեջ աշխատանքային օր: Ստուգման հիմք է նշվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը: Հանձնարարագրի վրա առկա է Ընկերության տնօրեն Վ. Դաբաղյանի ստորագրությունը՝ հանձնարարագրի մեկ օրինակը ստանալու և ստուգումը 13.10.2016 թվականին փաստացի սկսվելու մասին: Տեսչության հարկային հսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Ա. Ալախվերդյանի և հարկային տեսուչ Դ. Ավետիսյանի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վ. Հարությունյանին ներկայացվել է 31.10.2016

թվականի զեկուցագիրը, որով վերջինիս խնդրել են կարգադրել ստուգման ընթացքը 10 աշխատանքային օրով երկարաձգելու և 03.11.2016 թվականից 30 աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 01.11.2016 թվականի թիվ Ս-1775-Ա հրամանով Ընկերությունում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 31.08.2016 թվականի թիվ 1011151 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ժամկետը երկարաձգվել է մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Նույն հրամանով ստուգումը կասեցվել է նույն թվականի նոյեմբերի 3-ից՝ 15 աշխատանքային օրով: Տվյալ հրամանի մեկ օրինակը Վ. Դաբաղյանը ստացել է 02.11.2016 թվականին:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները և այն համադրելով սույն գործի փաստերի հետ, գտնում է, որ վիճարկվող ստուգման ակտն ընդունվել է ստուգման ժամկետի խախտմամբ հետևյալ հիմնավորմամբ.

Այսպես, ստուգումը փաստացի սկսվել է 13.10.2016 թվականին և տևել է 15 անընդմեջ աշխատանքային օր: Այսինքն՝ ստուգման վերջին օրը **02.11.2016 թվականն** է: Ստուգման ժամկետը երկարաձգելու և կասեցնելու վերաբերյալ հրամանը կայացվել է 01.11.2016 թվականին և Ընկերությանն է հանձնվել 02.11.2016 թվականին: Այսինքն՝ նշվածը հիմք է տալիս փաստելու, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության ուժով վերը նշված հրամանը ուժի մեջ է մտել միայն **03.11.2016 թվականին: Մինչդեռ 03.11.2016 թվականին ստուգման ժամկետն արդեն իսկ ավարտված էր և չէր կարող կասեցվել կամ երկարաձգվել, քանի որ ստուգման ժամկետի վերջին օրն է հանդիսացել 02.11.2016 թվականը:**

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից ստուգման ժամկետի կասեցման ու երկարաձգման հրամանն ուժի մեջ է մտել Ընկերության մոտ իրականացվող ստուգման համար սահմանված ժամկետի ավարտից հետո: Ասվածն էլ իր հերթին ենթադրում է, որ սույն գործով վիճարկվող ստուգման ակտն ընդունվել է այդ վարչական ակտի ընդունման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ խախտելով իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Այլ կերպ ասած՝ Տեսչությունը, ստուգման 15 աշխատանքային օրվա ժամկետի ավարտից հետո իրավունք չունենալով միջամտել Ընկերության գործունեությանը, խախտել է այդ պահից սկսած տնտեսվարող սուբյեկտի գործունեությանն այլևս չմիջամտելու երաշխավորված կանոնը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգումն իրականացնելիս վարչական մարմինը խախտել է ստուգման ժամկետը և ստուգողական գործողություններն իրականացրել է ու Ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններ է առաջադրել ստուգման ժամկետի ավարտից հետո:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 22.12.2016 թվականի թիվ 1011151 ստուգման ակտն ընդունվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ 15 աշխատանքային օրվա ժամկետի խախտմամբ, և ենթակա է անվավեր ճանաչման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

Սույն որոշման պատճառաբանական մասի 4.2. և 4.3. բաժիններում կատարված վերլուծությունների և եզրահանգումների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանող վարչական մարմնի՝ Տեսչության կողմից 22.12.2016 թվականի թիվ 1011151 վարչական ակտն ամբողջությամբ ենթակա է անվավեր ճանաչման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար չՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել չՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով չՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված լիազորությամբ, գտնում է, որ Դատարանի վճռին անհրաժեշտ է օրինական ուժ տալ սույն որոշման պատճառաբանություններով՝ նկատի ունենալով այն, որ Դատարանի պատճառաբանությունները թերի (մասնակի սխալ) են և անհրաժեշտ է Դատարանի պատճառաբանությունները լրացնել սույն որոշման պատճառաբանություններով, ինչպես նաև բացակայում է նոր քննության անհրաժեշտությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՉՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՉՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ Ընկերությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 չՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՉՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման ՉՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՉՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.05.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 20.03.2018 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «Գ Ը Ն Դ Հ Պ Ա Ր Տ Ն Ե Ր Ս» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/6212/05/15
2020թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/6212/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռա-
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.11.2018 թվականի որոշման դեմ՝
ըստ «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Կոտայքի տարածքային հարկային տեսչության՝
վարչական ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ն պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ֆի-
նանսների նախարարության Նաիրիի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝
Տեսչություն) 06.08.2015 թվականի թիվ 5011669 ակտի 1-ին կետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան)
04.04.2016 թվականի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության վերակազմակերպ-
ման հիմքով Տեսչությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեի Կոտայքի տարած-
քային հարկային տեսչությամբ:

Դատարանի 20.04.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.11.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.04.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է 30.09.1997 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված հոդվածների) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք) 6-րդ, 7-րդ, 10-րդ և 19-րդ հոդվածները, 14.04.1997 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենք) 22-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես ցուցաբերել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բոլոր այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտը հաշվարկում է իր հարկվող շահույթը և համախառն եկամտից կատարում է որոշակի նվազեցումներ, պետք է կարողանա հիմնավորել, որ այդ ծախսերը կապված են եղել հենց համախառն եկամտի ձևավորման հետ, և առկա են համապատասխան կարգով կազմված փաստաթղթեր, որոնք հիմնավորում են ծախսերի ոչ միայն առկայությունը, այլև՝ անհրաժեշտությունը: Ավելին՝ օրենսդիրը կարգավորել է այն բացառիկ դեպքերը, երբ հարկ վճարողին հնարավորություն է ընձեռված փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը նվազեցնել համախառն եկամտից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ բացառությամբ այն դեպքի, երբ առաջանում են այնպիսի իրավիճակներ, որոնք անհնար են դարձնում հարկ վճարողների պարտականությունների կատարումը, հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու իրավահարաբերություններում պատասխանատվությունը կրում են հարկ վճարողները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ տնտեսվարողի կողմից ստուգման ընթացքում ներկայացված փաստաթղթերն ամբողջությամբ հնարավորություն են ընձեռել ստուգողներին՝ կատարելու համապատասխան հաշվարկը: Դա նշանակում է, որ անուղղակի հարկման եղանակը կիրառելու հիմքն առկա չի եղել, ուստի «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառումն այս դեպքում կդիտվեր ոչ իրավաչափ: Հարկային մարմնի կողմից հարկվող շահույթի հաշվարկը կատարվել է՝ բացառապես ղեկավարվելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված իմպերատիվ պահանջներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.11.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 17.04.2015 թվականի թիվ 5011669 հանձնարարագրի համաձայն՝ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ում կատարվել է քյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**).

2) ստուգման արդյունքում Տեսչությունը 06.08.2015 թվականին կազմել է թիվ 5011669 ակտը, որի 1-ին կետով «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է 36.476.260 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն: Ստուգման ակտի 1-ին կետի հիմնավորումներում, մասնավորապես, նշվել է, որ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սկզբնական փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ 2013 թվականին «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմել է 114.386.300 ՀՀ դրամ, սակայն նույն թվականի շահութահարկի հաշվարկով ցույց է տրվել 103.747.000 ՀՀ դրամ կամ պակաս 10.639.300 ՀՀ դրամ, որը 2013 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների իրացման շրջանառությունն ամբողջությամբ նույն տարվա տարեկան համախառն եկամտում չներառելու արդյունք է. դրա հետևանքով խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջը: Բացի այդ, «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի կողմից 2013 թվականին համախառն եկամտից նվազեցվել են առանց ձեռքբերման փաստաթղթերի առկայության նյութական ծախսեր 58.608.000 ՀՀ դրամի չափով, որի հետևանքով խախտվել է նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը: Այսպիսով՝ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն 2013 թվականի հարկվող շահույթը պակաս է հաշվարկել 69.247.300 ՀՀ դրամի չափով: «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն չի ներկայացրել 2013 թվականի 4-րդ եռամսյակի ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունը (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**):

3) «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն 11.09.2015 թվականին անվանավոյսվել է «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի (**հատոր 1-ին, գ.թ. 27**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումը

4.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ շահութահարկով հարկվող շահույթը որոշելիս հարկ վճարողի կողմից նվազեցված ծախսերը փաստաթղթերով հիմնավորված չլինելու իրավական հետևանքների և այդ դեպքում հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հաշվարկելու լիազորության կիրառման իրավական հնարավորության հարցերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադանալ հետևյալ իրավական հարցադրմանը. ի՞նչ իրավական հետևանք է առաջանում այն դեպքում, երբ հարկային մարմինն օրենքով սահմանված կարգով հայրնաբերում է փաստաթղթերով չհիմնավորված, սակայն շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս հարկ վճարողի կողմից նվազեցված ծախսեր:

4.2. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն գլխով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով (...):

4.3. ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի վերը նշված իրավանորմների վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը՝ տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսվարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որի հիման վրա էլ հաշվարկվում է օրենքով սահմանված շահութահարկի գումարը: Ընդ որում, տնտեսվարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը անհրաժեշտ են եղել կապված եկամտի ստացման հետ և փաստաթղթերով հիմնավորված (*լրենս «ԻՆՏԳՐԱՄԱՆՏ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

4.4. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս որևէ ծախս նվազեցնելու համար այն պետք է, ի թիվս այլնի, լինի փաստաթղթերով հիմնավորված: Նշված կանոնից բացառություններ են սահմանված «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով: Փաստորեն, առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսերը շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս համախառն եկամտից ենթակա են նվազեցման միայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, իսկ այլ դեպքերում հիմնավորող փաստաթղթի բացակայությունը բացառում է համապատասխան ծախսը նվազեցնելու հնարավորությունը:

4.5. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հարկ վճարողները շահութահարկով հարկվող շահույթը հաշվարկելիս վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ նվազեցնում են փաստաթղթերով չհիմնավորված, նվազեցման ոչ ենթակա ծախսեր: Նման իրավիճակներում անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե ինչ լիազորություններ պետք է կիրառի հարկային մարմինը, մասնավորապես՝ արդյոք այդ դեպքերում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հաշվարկելու լիազորությունը:

Այսպես՝

4.6. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է՝ (ա) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում (...), կազմել հաշվետվություններ իր

Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ. (բ) հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե. (գ) սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացնել (...) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկատուները շահութահարկի գումարները որոշում են յուրաքանչյուր տարվա արդյունքներով (...), իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շահութահարկի հաշվարկման նպատակով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային տեսչության մարմնին օգտվում է նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված իրավունքից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մոցնում հարկային մարմնին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված կամ առևտրական (առքու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 5 հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել է, որ շրջանառության հարկ վճարողին տրամադրված՝ ապրանքների ձեռք բերումը հիմնավորող փաստաթղթերում գործարքի արժեքը ներկայացված է գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոս տարբերությամբ, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես, հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, ինչպես նաև նույն օրենքի 20 հոդվածով սահմանված այլ տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, համախառն եկամտի մեջ 25 տոկոս հաշվարկային հարկվող շահույթի կամ հարկվող եկամտի կամ օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա:

Այսինքն՝ շահութահարկ վճարողները պարտավոր են յուրաքանչյուր տարվա արդյունքներով ինքնուրույն հաշվարկել շահութահարկի գումարները և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը հարկային մարմնին ներկայացնել այդ հաշվարկը:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում հատուկ իրավակարգավորումներ է նախատեսել այն իրավիճակների համար, երբ հարկ վճարողի վերոգրյալ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում վերջինիս ունեցած հարկային պարտավորության չափը, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, հնարավոր չի լինում պարզել:

4.7. Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ անհնար է հարկային օրենսդրությանը սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, հարկային մարմինը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (*լրեն անհար ձեռնարկարեր Տիգրան Խոսրովյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության թիվ ՎԴ/0054/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում հստակորեն ամրագրված են այն իրավական հիմքերը, որոնց առկայության դեպքում հարկային մարմնի մոտ առաջանում է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու լիազորությունը: Այսպես, հարկային մարմինը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, եթե առկա է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը.

1) հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելը դարձել է անհնար,

2) օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված:

Ընդ որում՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է նաև այն փաստական հանգամանքների սպառիչ ցանկը, որոնք պատճառ են հանդիսանում վերոգրյալ իրավիճակների առաջացման համար. այդ ցանկը ներառում է հետևյալ դեպքերը.

1) հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը,

2) հարկ վճարողը հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով,

3) հարկ վճարողն ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմնի ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում:

Փաստորեն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ պայման է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելն անհնար դառնալու կամ հարկ վճարողի շրջանառություններն օրենքով սահմանված դեպքերում չհիմնավորված համարվելու իրավիճակներից որևէ մեկի և հարկ վճարողի կողմից թույլ տրված վերոգրյալ արարքներից որևէ մեկի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը ոչ միայն ամրագրել է այն հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների բովանդակությունը, այլ նաև սահմանել է հարկային մարմնի այդ լիազորության իրականացման պայմանները: Այսպես, քննարկվող իրավական նորմով օրենսդիրը նախևառաջ

թվարկել է այն չափանիշները, որոնք պետք է հիմք ընդունվեն հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելիս: Այդ գործողությունը կատարելիս հարկային մարմինը հիմնվում է, մասնավորապես, հետևյալ տվյալների վրա.

- 1) հարկ վճարողի ակտիվներ,
- 2) հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալներ,
- 3) հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսեր,
- 4) գույքագրման և չափագրման տվյալներ,
- 5) օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկություններ,
- 6) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկություններ,
- 7) համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գներ և այլ ցուցանիշներ,
- 8) օրենքով իրականացված հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված տվյալներ,
- 9) հաշվարկային հարկվող շահույթ կամ հաշվարկային հարկվող եկամուտ (համախառն եկամտի մեջ 25 տոկոս):

Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու կարգը հաստատելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը, 18.09.1998 թվականին ընդունել է թիվ 580 որոշումը (ուժի մեջ է մտել 01.10.1998 թվականին, ուժը կորցրել է 23.03.2018 թվականին), որով հաստատել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը (այսուհետ՝ Կարգ): Նշված ենթաօրենսդրական ակտով ՀՀ կառավարությունն անդրադարձել է, ի թիվս այլնի, հետևյալ հարաբերությունների կանոնակարգմանը.

- 1) հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) հաջորդականությունը (Կարգի 4-րդ կետ),
- 2) ելակետային չափերի որոշման համար անհրաժեշտ վերլուծության կատարումը և հարկվող օբյեկտների ու հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, վերագնահատման) համար անհրաժեշտ ելակետային չափերի որոշումը (Կարգի 5-րդ կետ), որն ընդգրկում է նաև՝
 - ակտիվների շարժի (օգտագործման) չափի մնացորդի որոշումը (Կարգի 6-8-րդ կետեր),
 - ակտիվների առաջացման աղբյուրների չափի մնացորդի որոշումը և վերլուծումը (Կարգի 9-11-րդ կետեր),
- 3) հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկումն ու ձևակերպումը (Կարգի 12-15-րդ կետեր):

Հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն անուղղակի եղանակով հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ ՀՀ վճարեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

- հարկային մարմինն օժտված է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու լիազորությամբ,
- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է կիրառվել միայն օրենքով հստակորեն նախատեսված և նույն որոշմամբ ներկայացված իրավիճակներում, որոնք առաջանում են հարկ վճարողի՝ օրենքով

սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով (18.09.1998 թվականի թիվ 580 որոշում)՝ հիմք ընդունելով օրենքով դրա համար հատուկ նախատեսված չափանիշները (տե՛ս «ԻՆՏԳՐԱՆՏ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):

4.8. Վճարեկ դատարանն արձանագրում է, որ պարզելու համար, թե արդյոք հարկ վճարողի կողմից առանց հիմնավորող փաստաթղթերի (նվազեցման ոչ ենթակա) ծախսերը նվազեցվելու դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հաշվարկելու լիազորությունը, անհրաժեշտ է գնահատել նշված լիազորության կիրառման համար անհրաժեշտ իրավիճակների (հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինություն կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելը) առկայությունը կամ բացակայությունը:

Մասնավորապես՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ հարկ վճարողի կողմից շահութահարկի հաշվարկում առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր (անթույլատրելի նվազեցումներ) ներառված լինելու հանգամանքն ինքնին չի վկայում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինության կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելու մասին: Վճարեկ դատարանի նման դատողության հիմքում ընկած է այն իրողությունը, որ եթե հայտնի են տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, ապա նշված տվյալները բավարար են տնտեսվարող սուբյեկտի հարկային պարտավորությունները հաշվարկելու համար, քանի որ հարկվող շահույթը համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում, ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսերը չնվազեցնելու դեպքում հարկվող շահույթը երբեմն կարող է համահունչ չլինել փաստացի կատարված ծախսերին, ապա Վճարեկ դատարանը ընդգծում է, որ որևէ ծախս կատարած լինելու հանգամանքը դեռևս չի նշանակում, որ այդ ծախսը ենթակա է համախառն եկամտից նվազեցման: Եթե որևէ ծախս չի համապատասխանում թույլատրելի նվազեցում համարվելու չափանիշներին, ապա այն ենթակա չէ նվազեցման՝ ոչ հարկ վճարողի, և ոչ էլ հարկային մարմնի կողմից՝ անկախ նրանից, թե այդ ծախսն իրականում առկա է, թե՛ ոչ: Այսինքն՝ ծախսերի գծով թույլատրելի նվազեցումները կարող են պակաս լինել հարկ վճարողի կողմից փաստացի կատարված ծախսերից:

4.9. Բացի այդ, Վճարեկ դատարանը գտնում է, որ նման դեպքերում շահութահարկի գծով հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից հարկային մարմնին ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալների հիման վրա հաշվարկելու կարգը համահունչ է նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտի ծախսերը նվազեցնելու կարգավորումներին: Մասնավորապես՝ հակառակ մոտեցման դեպքում, եթե միայն հարկ վճարողի կողմից հարկային մարմնին ներկայացված շահութահարկի հաշվարկում առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր (անթույլատրելի նվազեցումներ) ներառված լինելու հանգամանքը հանգեցնեք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկելու լիազորության կիրառման, ապա հարկային մարմինը յուրաքանչյուր դեպքում պարտավոր կլինեք պարզել և շահութահարկի գծով հարկային պարտավորությունները հաշվարկելու հաշվի առնել նաև այնպիսի ծախսեր, որոնց նվազեցումն օրենքով թույլատրված չէ:

Արդյունքում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտի ծախսերը նվազեցնելու վերաբերյալ կարգավորումները կիմաստազրկվեին, ինչը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, անթույլատրելի է:

4.10. Անփոփոխվող վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ հայտնի են տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ երկու տարրերը՝ համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, ապա միայն այն հանգամանքը, որ հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված փաստաթղթերում արտացոլված են նաև առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր (անթույլատրելի նվազեցումներ), չի վկայում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հաշվարկելու լիազորության կիրառման հիմքերից (հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինություն կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելը) որևէ մեկի առկայության մասին: Նման դեպքերում որպես հարկվող շահույթ պետք է դիտարկել համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը, որի հիման վրա էլ պետք է հաշվարկվի օրենքով սահմանված շահութահարկի գումարը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում.

4.11. Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 17.04.2015 թվականի թիվ 5011669 հանձնարարագրի համաձայն՝ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքում Տեսչությունը 06.08.2015 թվականին կազմել է թիվ 5011669 ակտը, որի 1-ին կետով «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է 36.476.260 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն:

Ստուգման ակտի 1-ին կետի հիմնավորումներում, մասնավորապես, նշվել է, որ ««ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սկզբնական փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ 2013 թվականին «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմել է 114.386.300 ՀՀ դրամ, սակայն նույն թվականի շահութահարկի հաշվարկով ցույց է տրվել 103.747.000 ՀՀ դրամ կամ պակաս 10.639.300 ՀՀ դրամ, որը 2013 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների իրացման շրջանառությունն ամբողջությամբ նույն տարվա տարեկան համախառն եկամտում չներառելու արդյունք է. դրա հետևանքով խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջը: Բացի այդ, «ԷԴՄԵՍ ՍՊԸ-ի» կողմից 2013 թվականին համախառն եկամտից նվազեցվել են առանց ձեռքբերման փաստաթղթերի առկայության նյութական ծախսեր 58.608.000 ՀՀ դրամի չափով, որի հետևանքով խախտվել է նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը: Այսպիսով՝ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն 2013 թվականի հարկվող շահույթը պակաս է հաշվարկել 69.247.300 ՀՀ դրամի չափով: «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն չի ներկայացրել 2013 թվականի 4-րդ եռամսյակի սալբանսների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծախսերի ու գների վերաբերյալ հաշվարկվությունը»:

«ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն 11.09.2015 թվականին անվանափոխվել է «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի:

Սույն վարչական գործը հարուցվել է «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 06.08.2015 թվականի թիվ 5011669 ակտի 1-ին կետն այն հիմքով, որ «տրվյալ դեպքում սուկա է ոչ թե սկսվում նշված չափի ծախսեր փաստացի կատարված չլինելու փաստը, այլ սուկա են փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ստուգողներին չներկայացնելու, այդ մասով հաշվառումը կուսիք խախտումով վարելու փաստերը: Այնպես է նաև նշված ծախսերը չընդունվելու պայմաններում օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով շահութահարկի հարկվող

օբյեկտը և շահութահարկը հաշվարկելու անհնարինության հանգամանքը», «(...) հարկվող օբյեկտը պետք է հաշվարկվեր հարկային մարմնի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառմամբ, ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով», «(...) հարկային մարմինը հնարավորություն ուներ և պարտավոր էր հաշվարկել հարկվող շահույթի և շահութահարկի իրարեասական չափը, ինչը չի կատարել»:

Դատարանը հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ Տեսչությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի (այն է՝ «հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման սահմանված փաստաթղթերը չներկայացնելը» կամ «դրանք սահմանված կարգի կոպիտ խախտումներով վարելը») առկայության պայմաններում «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի հարկվող օբյեկտներն ու հարկային պարտավորությունները չի հաշվարկել ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով սահմանված կանոններով: Դատարանը նշել է նաև, որ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ն վիճարկվող ակտի ընդունմանն ուղղված ստուգման ժամանակ հարկային մարմնին չի ներկայացրել իր կողմից 2013 թվականի շահութահարկի հաշվարկով ցույց տրված և հարկային մարմնի կողմից վիճարկվող ակտով արձանագրված համախառն եկամտի ու դրանից կատարված նվազեցումների տարբերությունները հիմնավորող փաստաթուղթ, որպիսի պայմաններում առկա է եղել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմքը, քանի որ այդ նորմի ուժով հարկ վճարողի կողմից հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման սահմանված փաստաթղթեր չներկայացնելը ևս իրավական հիմք է համարվում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները ՀՀ կառավարության սահմանված կարգով հաշվարկելու համար:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ հարկային մարմինը, ինքնուրույն հաշվարկելով շահութահարկի գծով հարկային պարտավորությունները (կարող էր կատարվել միայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով) ստուգման ակտի 1-ին կետում չի վկայակոչել և չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչը պարտավոր էր կատարել: Վերաքննիչ դատարանը նշել է, որ տվյալ դեպքում ստուգման ակտին կցված չեն և դատարանին նույնպես չեն ներկայացվել հարկվող օբյեկտների հաշվարկման, ինչպես նաև դրանից բխող համախառն եկամտի (իրացման շրջանառություն) չափի հաշվարկման արդյունքների ձևակերպում պարունակող համապատասխան փաստաթղթեր, որոնք կարող էին վկայել այն մասին, որ հարկային պարտավորությունները հարկային մարմինը հաշվարկել է՝ հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծավալների, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, համախառն եկամտի մեջ 25 տոկոս հաշվարկային հարկվող շահույթի կամ հարկվող եկամտի կամ օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա: Այլ կերպ ասած՝ սույն գործով բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ վարչական մարմինը պահպանել է շահութահարկի գծով «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի հարկվող հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության իրականացման պայմաններն ու կարգը և «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի 2013 թվականի հարկվող շահույթը որոշել է օրենքով սահմանված չափանիշների միջոցով:

4.12. Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հետևություն անելու համար այն մասին, որ «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի հարկվող օբյեկտներն ու հարկային պարտավորությունները վարչական մարմնի կողմից հաշվարկելու համար առկա են եղել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը, պետք է պարզել, թե արդյոք առկա են

օրենքով հստակորեն նախատեսված և սույն որոշմամբ նկարագրված իրավիճակները, և արդյոք դրանք առաջացել են «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցվորն ընդունել է, որ ստուգումն իրականացնող հարկային տեսուչներին չեն ներկայացվել 58.608.000 ՀՀ դրամի չափով ծախսերը հիմնավորող փաստաթղթեր: Վերը նշված դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկ վճարողի կողմից առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսեր նվազեցված լինելու հանգամանքն ինքնին չի վկայում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկելու լիազորության կիրառման հիմքերից (հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինություն կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները չհիմնավորված համարվելը) որևէ մեկի առկայության մասին: Ուստի, տվյալ դեպքում հարկային մարմինը, հիմնվելով հարկ վճարողի կողմից ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալների վրա, հարկվող շահույթը հաշվարկել է՝ համախառն եկամտից նվազեցնելով թույլատրելի նվազեցումները, որի հիման վրա էլ հաշվարկվել է օրենքով սահմանված շահութահարկի գումարը:

Փաստորեն, տվյալ դեպքում չի հաստատվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորության կիրառման համար անհրաժեշտ իրավիճակներից որևէ մեկի առկայությունը, որպիսի պայմաններում հարկային մարմինն իրավաչափորեն չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորությունը:

4.13. Ինչ վերաբերում է «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի կողմից շահութահարկը հաշվարկելիս թույլ տրված և վիճարկվող ստուգման ակտով արձանագրված մյուս խախտմանը՝ 2013 թվականի շահութահարկի հաշվարկում համախառն եկամուտը 10.639.300 ՀՀ դրամ պակաս ցույց տալուն (որը, ըստ հարկային մարմնի, 2013 թվականին հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների իրացման շրջանառությունն ամբողջությամբ նույն տարվա տարեկան համախառն եկամտում չներառելու արդյունք է), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային մարմինը 2013 թվականի շահութահարկի հաշվարկում համախառն եկամուտը 10.639.300 ՀՀ դրամ պակաս ցույց տալու հանգամանքը հաստատված է համարել 2013 թվականի շահութահարկի հաշվարկով ցույց տրված համախառն եկամուտը (103.747.000 ՀՀ դրամ) և «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սկզբնական փաստաթղթերում արտացոլված համախառն եկամուտը (114.386.300 ՀՀ դրամ) համադրելու արդյունքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով ևս չի հիմնավորվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորությունը կիրառելու հիմքի առկայությունը:

4.14. Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությանն այն մասին, որ հարկային մարմինն ինքնուրույն է հաշվարկել շահութահարկի գծով հարկային պարտավորությունները՝ վիճարկվող վարչական ակտում չվկայակոչելով և չկիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրում է, որ այն անհիմն է: Վերաքննիչ դատարանի այդ հետևությունը չի բխում սույն գործի նյութերից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով վիճարկվող վարչական ակտի 1-ին կետի բովանդակությունից բխում է, որ հարկային մարմինն այդ կետում նշված խախտումը «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ին վերագրել է՝ հիմք ընդունելով վերջինիս կողմից ներկայացված սկզբնական փաստաթղթերը: Նշված ակտում որևէ նշում չկա «ԷԴՄԵՍ» ՍՊԸ-ի հարկային պարտավորություններն անուղղակի եղանակով հաշվարկելու վերաբերյալ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմնին չի կարող վերագրվել այնպիսի գործողության կատարում, որ հարկային մարմինը շահութահարկի գծով ինքնուրույն հաշվարկ է կատարել, և որ այդպիսի գործողություն կատարելիս չի վկայակոչել և չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը: Վերաքննիչ դատարանը նման հետևության է

հանգել առանց գործում եղած ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու՝ իր կողմից կայացված դատական ակտի մեջ, ըստ էության, չպատճառաբանելով նման համոզմունքի ձևավորումը:

4.15. Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Տեսչության 06.08.2015 թվականի թիվ 5011669 ակտի 1-ին կետը չէր կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ վարչական մարմինը խախտել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը: Մինչդեռ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը Տեսչության 06.08.2015 թվականի թիվ 5011669 ակտի 1-ին կետի ոչ իրավաչափ լինելը հաստատված է համարել հենց այդ հիմքով: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի անվավեր ճանաչման ենթակա լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհիմն է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումի համար «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ն վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք: ՀՀ պետական

եկամուտների կոմիտեն վերաքննիչ բողոքի համար վճարել է 10.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ վճարել բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Վճարել դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճարել բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայցը ենթակա է մերժման, գտնում է, որ սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի հետևյալ կերպ.

- հայցադիմումի համար սահմանված և «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախապես վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված,

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված վերաքննիչ ու վճարել բողոքների համար սահմանված և նախապես վճարված պետական տուրքերի գումարները պետք է հատուցվեն «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարել դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.11.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայցը մերժել:

2. «ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայցադիմումի համար վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

«ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

«ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախատեսված և նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/5662/05/16**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/5662/05/16**
Նախագահող դատավոր՝ **Ա. Թովմասյան**
Դատավորներ՝ **Ա. Առաքելյան**
Ա. Բաբայան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴԻՄԵՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 25-ին

գրավոր ընթացակարգով, քննելով Սասուն Վարդազարյանի ներկայացուցիչ Սարգիս Մաղաթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սասուն Վարդազարյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ **Կոմիտե**) Կոմիտեի իրավաբանական վարչության (այսուհետ՝ **Վարչություն**) պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Սասուն Վարդազարյանը պահանջել է վերացնել Վարչության պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ **Լ. Հակոբյան**) (այսուհետ՝ **Դատարան**) 25.04.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 25.04.2017 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սասուն Վարդազարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, 8-րդ հոդվածի 6-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառարան է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններն իրար նկատմամբ չունեն ընդհանուր նորմի և հատուկ նորմի հարաբերակցություն և սահմանում են նույն կարգավորումները՝ օգտագործելով տարբեր տերմիններ: Այնուհայտ է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի նշված պարբերությունների միջև հակասություն չկա, և հետևաբար, 3-րդ պարբերությունը չի կարող հանդիսանալ 1-ին պարբերությունից բացառություն:

Բացի այդ, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը չի բավարարում որոշակիության սկզբունքի պահանջներին: Այդ հոդվածից միանշանակ չի ընկալվում, թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված մատակարարում հանդիսացող որ գործարքներն են ենթակա հարկման ԱԱՀ-ով՝ միայն հատուցելիները, թե նաև անհատույցները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ֆիզիկական անձի մոտ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ նրա կողմից կատարվել են ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի օտարման որևէ ձևով հատուցելի գործարքներ և այդ գործարքների գինը գերազանցել է 58,35 մլն դրամը: Հարկային մարմինն իրավասու է ելակետ ընդունել գույքահարկով հարկման նպատակով անշարժ գույքի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքը (կադաստրային արժեքը) միայն այն դեպքում, եթե առկա է գործարքի արժեք, որը ցածր է կադաստրային արժեքից: Իսկ նվիրատվության պայմանագրի պարագայում, երբ առկա չէ գործարքի արժեք, օբյեկտիվորեն անհնարին է որոշել ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարի չափը, և միաժամանակ հարկային մարմինը լիազորված չէ հարկման բազան որոշելու նպատակով ի սկզբանե կիրառել նվիրատվության օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի կադաստրային արժեքը: Հետևաբար, վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.04.2017 թվականի վճիռն կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Սասուն Վարդազարյանը 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Անդրանիկ Հայրապետյանին է նվիրել Երևան քաղաքի Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց, թիվ 63/13 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ ռեստորանը (նպատակային նշանակությունը՝ հասարակական) (**հատոր 1-ին, գ.թ. 83-84**):

2. Վարչության պետի 27.06.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին»

թիվ 695/03 որոշմամբ վերագրյալ գործարքի համար Մասուն Վարդագարյանի նկատմամբ առաջադրվել է գանձվել է ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն՝ 12.276.656 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից հասարակական նշանակության գույքի անհատույց օտարման գործարքներն ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա լինելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կարարված գույքի օտարման անհատույց գործարքները կարող են համարվել ապրանքի մատակարարում և առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության չափը նույն օրենքի կիրառման առումով համարվում է ԱԱՀ-ի շեմ, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների և նույն օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերի՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, որոնց համար նույն օրենքի կիրառման առումով ԱԱՀ-ի շեմ է համարվում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության 58,35 մլն դրամը:

Նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է նույն օրենքի 3.1 հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերում: Նույն պարբերությունում նշված գործարքների մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է՝

(...)

բ. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ԱԱՀ-ի շեմը գերազանցող

գումարից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե՝ մատուցել են այնպիսի ծառայություններ (բացառությամբ անշարժ գույքի վարձակալության գործարքների) կամ մատակարարել են այնպիսի ապրանքներ, որոնց իրականացումն օրենքի համաձայն չի դիտվում որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) **սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:**

Նշված կետով սահմանվել են նաև այն դեպքերը, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները ևս համարվում են ապրանքի մատակարարում:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է սնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կամ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Ընդ որում, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով ավելացված արժեքի հարկով հարկվում են, *inter alia*, ապրանքների մատակարարման գործարքները (գործառնությունները), այսինքն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելուն ուղղված գործարքները: Որպես կանոն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտը ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Մակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար, նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ (*տե՛ս օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ընդդեմ Ռազմիկ Սեդրակյանի թիվ ՎՋ/0560/05/15 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքներ են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանված գործարքները:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքում՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի *օտարումը*,

(...):

Վերը նշված իրավանքների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խմաստով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, եթե վերջինս օտարել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս: Ընդ որում, վերը նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի շեմ է սահմանվել 58,35 մլն դրամ: Այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն դրամ), ապա վերը նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի պարտավորության մեծությունը որոշվում է գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն դրամ) գերազանցող գումարից:

Հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետում կիրառված «օտարում» բառի նշանակությունը:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների (գործառնություններ) թվին դասելով ապրանքների մատակարարումը, միաժամանակ բացահայտում է նաև դրա հասկացությունը: Մասնավորապես, օրենսդիրն ապրանքների մատակարարում է համարել այն գործարքը, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը *որևէ ձևով կապարտվող հարստցման դիմաց* այլ անձի փոխանցելու միջոցով: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի մատակարարում են միայն հատուցելի գործարքները, այսինքն՝ այն գործարքները, որոնցով ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվում հատուցման դիմաց:

Մինևույն ժամանակ, օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող, ապրանքի մատակարարում համարվող գործարքները՝ դրանց թվին դասելով նաև ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված՝ վերը նշված դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե այդ հոդվածի ընդհանուր համատեքստից դուրս, այլ՝ հաշվի առնելով նաև դրանով սահմանված մնացած իրավակարգավորումները, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ *ապրանքի մատակարարում կարող են համարվել բացառապես հարուցելի գործարքները*: Փաստորեն, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված գույքի օտարումը համարվում է ապրանքի մատակարարում միայն այն դեպքում, երբ այդ գործարքով գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված հատուկ կարգավորումը նպատակ է հետապնդում սահմանափակել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող այն գործարքները, որոնք վերջինիս համար առաջացնում են ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի համաձայն՝ ապրանքի մատակարարում է համարվում ոչ թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կնքված գույքի օտարման հատուցելի ցանկացած գործարք, այլ միայն գույքի օտարման այն գործարքները, որոնց առարկան ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով համարվում է ապրանքի մատակարարում և անձի մոտ կարող է առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն այն դեպքում, երբ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել հատուցելի գործարքով, այսինքն՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Հետևաբար, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից

կատարված՝ վերոգրյալ գույքի օտարման *անհատույց գործարքները* չեն կարող համարվել ապրանքի մատակարարում և չեն կարող առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սասուն Վարդագարյանը 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Անդրանիկ Հայրապետյանին է նվիրել Երևան քաղաքի Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց, թիվ 63/13 հասցեում գտնվող անշարժ գույքը (նպատակային նշանակությունը՝ հասարակական):

Վարչության պետի 27.06.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 695/03 որոշմամբ վերոգրյալ գործարքի համար Սասուն Վարդագարյանի նկատմամբ առաջադրվել է գանձվել է ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն՝ 12.276.656 ՀՀ դրամի չափով:

Դատարանը բավարարել է Վարչության պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ Սասուն Վարդագարյանի հայցը: Դատարանը գտել է, որ Սասուն Վարդագարյանի կողմից 19.11.2014 թվականին կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն չի կարող առաջանալ, քանի որ այդ գործարքն անհատույց է: Դատարանն իր այդ եզրակացության հիմքում դրել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությունը, որի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են այն դեպքում, երբ իրականացնում են ապրանքների մատակարարման, այսինքն՝ հատուցելի գործարք:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը՝ պատճառաբանելով, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, եթե օտարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք: Վերաքննիչ դատարանը նշել է, որ անկախ այն հանգամանքից՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նշված գույքը կամ դրանում իրեն պատկանող բաժնեմասն օտարել է որևէ հատուցելի եղանակով (օրինակ՝ վաճառք, փոխանակություն), թե՛ անհատույց (օրինակ՝ նվիրատվություն), մինևսույն է՝ այդ գործարքն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, ուստի՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների վերոգրյալ պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Նախ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար սահմանում է ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն որոշակի կատեգորիայի գույքի հատուցելի օտարման գործարքների դեպքում:

Տվյալ դեպքում 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Սասուն Վարդագարյանն Անդրանիկ Հայրապետյանին է նվիրել Երևան քաղաքի Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց, թիվ 63/13 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը (ռեստորան): Այդ գույքը ներառվում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ

օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված ապրանքների ցանկում:

Անդրադառնալով 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը, որով կողմն իր պարտականությունների կատարման համար պետք է վճար կամ այլ հանդիպական կատարում ստանա, հատուցելի է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անհատույց է ճանաչվում այն պայմանագիրը, որով մի կողմը պարտավորվում է որևէ բան տրամադրել մյուս կողմին՝ առանց նրանից վճար կամ այլ հանդիպական կատարում ստանալու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Նման դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, որի բովանդակությունն է կազմում նվիրատուի պարտականությունը ապագայում ավելացնել նվիրառուի գույքն իր գույքի նվազման հաշվին մի կողմից և նվիրառուի՝ գույքը պահանջելու իրավունքը մյուս կողմից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նվիրատվության պայմանագրերին (անկախ դրա տեսակից) բնորոշ է դրանց անհատուցելի բնույթը, այսինքն՝ նվիրատուն, նվիրառուի սեփականությանը գույք կամ իրեն կամ երրորդ անձին ուղղված գույքային պահանջ հանձնելով կամ նվիրառուին իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից ազատելով, չի ստանում նվիրառուի կողմից որևէ հատուցում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձի կողմից իր գույքի նվիրատվությունը՝ որպես անհատույց գործարք, չի համարվում ապրանքի մատակարարում, հետևաբար չի կարող իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձի մոտ առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Սասուն Վարդապարյանի նկատմամբ ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների առաջադրումն ու գանձումը ոչ իրավաչափ են, քանի որ Սասուն Վարդապարյանի կողմից 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների թվին չի դասվում: Հետևաբար, սույն գործով վիճարկվող՝ Վարչության պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի խախտմամբ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Փաստորեն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի խախտմամբ ընդունված լինելու հիմքով

անվավեր ճանաչելով սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սասուն Վարդազարյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սասուն Վարդազարյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Կոմիտեի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 25.04.2017 թվականի վճռին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ Սասուն Վարդազարյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԳ/5662/05/16 վարչական գործով
25.12.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 25.12.2020 թվականին քննելով Սասուն Վարդագարյանի ներկայացուցիչ Սարգիս Մադաթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սասուն Վարդագարյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) Կոմիտեի իրավաբանական վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը վերացնելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 25.04.2017 թվականի վճռին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան և Մամիկոն Դրմեյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սասուն Վարդագարյանը պահանջել է վերացնել Վարչության պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 25.04.2017 թվականի վճռով բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սասուն Վարդագարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, 8-րդ հոդվածի 6-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններն իրար նկատմամբ չունեն ընդհանուր նորմի և հատուկ նորմի հարաբերակցություն և սահմանում են նույն կարգավորումները՝ օգտագործելով տարբեր տերմիններ: Ակնհայտ է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի նշված պարբերությունների միջև հակասություն չկա, և հետևաբար, 3-րդ պարբերությունը չի կարող հանդիսանալ 1-ին պարբերությունից բացառություն:

Բացի այդ, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը չի բավարարում որոշակիության սկզբունքի պահանջներին: Այդ հոդվածից միանշանակ չի ընկալվում, թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված մատակարարում հանդիսացող որ գործարքներն են ենթակա հարկման ԱԱՀ-ով՝ միայն հատուցելիները, թե նաև անհատույցները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ֆիզիկական անձի մոտ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ նրա կողմից կատարվել են ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի օտարման որևէ ձևով հատուցելի գործարքներ և այդ գործարքների գինը գերազանցել է 58,35 մլն դրամը: Հարկային մարմինն իրավասու է ելակետ ընդունել գույքահարկով հարկման նպատակով անշարժ գույքի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքը (կադաստրային արժեքը) միայն այն դեպքում, եթե առկա է գործարքի արժեք, որը ցածր է կադաստրային արժեքից: Իսկ նվիրատվության պայմանագրի պարագայում, երբ առկա չէ գործարքի արժեք, օբյեկտիվորեն անհնարին է որոշել ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարի չափը, և միաժամանակ հարկային մարմինը լիազորված չէ հարկման բազան որոշելու նպատակով ի սկզբանե կիրառել նվիրատվության օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի կադաստրային արժեքը: Հետևաբար, վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.04.2017 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռարևկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) Սասուն Վարդագարյանը 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Անդրանիկ Հայրապետյանին է նվիրել Երևան քաղաքի Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց, թիվ 63/13 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ ռեստորանը (նպատակային նշանակությունը՝ հասարակական) (**հատոր 1-ին, գ.թ. 83-84**):

2) Վարչության պետի 27.06.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 695/03 որոշմամբ վերոգրյալ գործարքի համար Սասուն Վարդագարյանի նկատմամբ առաջադրվել և գանձվել է ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն՝ 12.276.656 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Հարկ ենք համարում արձանագրել, որ սույն գործը հարուցվել է Սասուն Վարդագարյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Վարչության պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը:

Դատարանը բավարարել է հայցը՝ գտնելով, որ Սասուն Վարդագարյանի կողմից 19.11.2014 թվականին կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն չի կարող առաջանալ, քանի որ այդ գործարքն անհատույց է: Դատարանն իր այդ եզրակացության հիմքում դրել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությունը, որի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են այն դեպքում, երբ իրականացնում են ապրանքների մատակարարման, այսինքն՝ հատուցելի գործարք:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը՝ պատճառաբանելով, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար, նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, եթե օտարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք: Վերաքննիչ դատարանը նշել է, որ անկախ այն հանգամանքից՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նշված գույքը կամ դրանում իրեն պատկանող բաժնեմասն օտարել է որևէ հատուցելի եղանակով (օրինակ՝ վաճառք, փոխանակություն), թե՛ անհատույց (օրինակ՝ նվիրատվություն), միևնույն է՝ այդ գործարքն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, ուստի՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.04.2017 թվականի վճռին:

Ի հիմնավորումն վերոգրյալ եզրահանգման՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար սահմանում է ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն որոշակի կատեգորիայի գույքի հատուցելի օտարման գործարքների դեպքում:

Տվյալ դեպքում 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Սասուն Վարդագարյանն Անդրանիկ Հայրապետյանին է նվիրել Երևան քաղաքի Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց, թիվ 63/13 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը (ուեստորան): Այդ գույքը ներառվում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված ապրանքների ցանկում:

(...) ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Նման դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, որի բովանդակությունն է կազմում նվիրատուի պարտականությունը ապագայում ավելացնել նվիրառուի գույքն իր գույքի նվազման հաշվին մի կողմից և նվիրառուի՝ գույքը պահանջելու իրավունքը մյուս կողմից:

(...) նվիրատվության պայմանագրերին (անկախ դրա տեսակից) բնորոշ է դրանց անհատուցելի բնույթը, այսինքն՝ նվիրատուն, նվիրառուի սեփականությանը գույք կամ իրեն կամ երրորդ անձին ուղղված գույքային պահանջ հանձնելով կամ նվիրառուին իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից ազատելով, չի ստանում նվիրառուի կողմից որևէ հատուցում:

(...) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձի կողմից իր գույքի նվիրատվությունը որպես անհատուց գործարք, չի համարվում ապրանքի մատակարարում, հետևաբար չի կարող իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձի մոտ առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

(...) սույն գործով վիճարկվող վարչական ակտով Սասուն Վարդագարյանի նկատմամբ ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների առաջադրումն ու գանձումը ոչ իրավաչափ են, քանի որ Սասուն Վարդագարյանի կողմից 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների թվին չի դասվում: Հետևաբար, սույն գործով վիճարկվող՝ Վարչության պետի 27.06.2016 թվականի թիվ 695/03 որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի խախտմամբ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Փաստորեն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի խախտմամբ ընդունված լինելու հիմքով անվավեր ճանաչելով սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից»:

Վճարելի դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս և Մամիկոն Դրմեյանս, համաձայն չլինելով Վճարելի դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշումներ արդարահայտված կարծիքի հետ, շարադրում ենք մեր հաստատված կարծիքը դրա վերաբերյալ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ (...) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության չափը նույն օրենքի կիրառման առումով համարվում է ԱԱՀ-ի շեմ:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է նույն օրենքի 3.1 հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերում:

Նույն պարբերությունում նշված գործարքների մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է՝

ա. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառությունից, եթե անձի իրականացրած ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում գերազանցել է ԱԱՀ-ի շեմը,

բ. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե նրանց իրականացրած գործարքները, նույն օրենքի համաձայն, համարվում են ապրանքի մատակարարում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Նշված կետով սահմանվել են նաև այն դեպքերը, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները ևս համարվում են ապրանքի մատակարարում:

Մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետով սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման դեպքերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով՝

1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում (բացառությամբ նույն հոդվածով սահմանված դեպքերի) ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում: (...)

6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող նույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը: (...)

9) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է նույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից, բացառությամբ նույն կետով նախատեսված դեպքի: (...):

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերլուծության արդյունքում ՀՀ վճարելի դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտ, որպես կանոն, ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Մինևույն ժամանակ, սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս իրավահարաբերության

ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ: Նշված գործարքներից են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությանը սահմանված գործարքները (*լրեն թիվ՝ ՎԳ/0811/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016թ. որոշումը*):

Վերոգրյալ իրավանորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում ենք, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, եթե օտարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս: Ընդ որում, օրենսդիրը նշված գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի օտարումն ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք համարելը չի պայմանավորել այդ գույքը կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի օտարումը որևէ հատուցելի եղանակով օտարելու հետ: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նշված գույքը կամ դրանում իրեն պատկանող բաժնեմասն օտարել է որևէ հատուցելի եղանակով (օրինակ՝ վաճառք, փոխանակություն), թե՛ անհատույց (օրինակ՝ նվիրատվություն), մինչույն է այդ գործարքն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, և ըստ այդմ՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Հարկ ենք համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետում նշված գործարքը կատարվել է անհատույց, այսինքն՝ գույքը կամ դրանում անձին պատկանող բաժնեմասն օտարվել է ոչ հատուցելի եղանակով, այդ գործարքի մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետում նշված գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի ցանկացած եղանակով (հատուցելի կամ անհատույց) օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի կադաստրային արժեքը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ օրենսդիրը որպես ընդհանուր կանոն ԱԱՀ-ով հարկվող գործարքներ է համարում այն դեպքերը, երբ ապրանքների մատակարարումն իրականացվում է սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով (իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին պարբերության 1-ին կետ), սակայն այդ **ընդհանուր կանոնից օրենսդիրն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված որոշ գործարքների մասով նախատեսել է բացառություն**՝ սահմանելով, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում այն դեպքերում, երբ օտարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)),

արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասը՝ անկախ օտարման հատուցելի կամ անհատույց լինելու հանգամանքից (իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետ): Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ օտարելի ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք համարելու դեպքերն օրենսդիրը հստակ պայմանավորել է օտարումը որևէ ձևով կատարվող հատուցման հետ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետը շարադրելով հետևյալ կերպ. «Անհայր ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում (...) բ) մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հարուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում, (...)», իսկ նույն պարբերության «ա» ենթակետը շարադրելիս օրենսդիրը կիրառել է ոչ թե «որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքեր» ձևակերպումը, այլ հետևյալ ձևակերպումը. «Անհայր ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝ ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը, (...)»:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Ամբողջությամբ հիմնավոր ենք համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ անկախ այն հանգամանքից՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նշված գույքը կամ դրանում իրեն պատկանող բաժնեմասն օտարել է որևէ հատուցելի եղանակով (օրինակ՝ վաճառք, փոխանակություն), թե՛ անհատույց (օրինակ՝ նվիրատվություն), մինչև նույն է՝ այդ գործարքն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, ուստի՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Այսպես. սույն գործի փաստերի համաձայն՝ Սասուն Վարդագալայանը 19.11.2014 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Անդրանիկ Հայրապետյանին է նվիրել Երևան քաղաքի Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց, թիվ 63/13 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ ռեստորանը (նպատակային նշանակությունը՝ հասարակական) (հատոր 1-ին, գ.թ. 83-84):

Վարչության պետը, քննարկելով Սասուն Վարդագալայանի վերաբերյալ վարչական վարույթի կյուրթերը, պարզել է, որ համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության 03.06.2016 թվականի ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հաշվարկի ֆիզիկական անձ Սասուն Վարդագալայանի չկատարված հարկային պարտավորությունները 03.06.2016

թվականի դրությամբ կազմում են 12.276.656 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ԱԱՀ-ի գծով է, որից ապառք՝ 4.819.064 ՀՀ դրամ, տույժ՝ 2.638.437 ՀՀ դրամ, տուգանք՝ 4.819.064 ՀՀ դրամ, որն առաջացել է վերը նշված հաշվարկից, որի կատարումն իրականացվել է հիմք ընդունելով հարկային մարմնի ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունը՝ ըստ որի ֆիզիկական անձ Սասուն Վարդագարյանը 26.11.2014 թվականին օտարել է (սվիրատվություն) սեփականության իրավունքով իրեն պատկանող ք.Երևան, Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց թիվ 63/13 ռեստորանը, ինչպես նաև հաշվարկը կատարվել է համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի, 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի, 3-րդ հոդվածի 4-րդ կետի, 32-րդ, 33-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների:

Նշվածի հիման վրա Վարչության պետը 27.06.2016 թվականին ընդունել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 695/03 որոշումը, որով որոշվել է Սասուն Վարդագարյանից գանձել 12.276.656 ՀՀ դրամի չափով (հատոր 1-ին, գ.թ. 9):

Այսպիսով, վերոգրյալ իրավանդումների և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում գտնում ենք, որ հայցվորի կողմից կատարվել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով ապրանքի մատակարարում համարվող, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, այն է՝ 26.11.2014 թվականի սվիրատվության պայմանագրով օտարվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող ք.Երևան, Էրեբունի, Դավիթ Բեկի փողոց թիվ 63/13 ռեստորանը, ուստի սույն գործով վիճարկվող վարչական ակտով Սասուն Վարդագարյանին ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտականություններ առաջադրվել է իրավաչափորեն:

Նման պայմաններում գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը, Կոմիտեի վերաքննիչ բողոքի բավարարման արդյունքում բեկանելով Դատարանի 25.04.2017 թվականի վճիռը, փոփոխելով այն ու հայցը մերժելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի Սասուն Վարդագարյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ.Հակոբյան
Մ.Դրմեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/4450/05/17
Կ. Ավետիսյան
Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/4450/05/17**
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշման դեմ, ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Լիլիթ Մկրտչյանի՝ 59.554.967 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Մկրտչյանի ընդդեմ Կոմիտեի՝ 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Լիլիթ Մկրտչյանից բռնագանձել 59.554.967 ՀՀ դրամ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 10.10.2018 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.10.2018 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ Կոմիտեն պատշաճ կատարել է իր՝ որպես վարչական մարմնի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գրավոր վարչական ակտը վարույթի մասնակիցներին հանձնելու պարտականությունը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հարկային մարմնի վրա դրել է առավել ծանր պարտականություն, քան նախատեսված է կիրառելի իրավա-նորմով, որպիսի պարտականությունը միաժամանակ անիրատեսական է՝ հաշվի առնելով սույն գործում առկա փորձագիտական եզրակացությունները:

Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործում առկա ապացույցները չեն ուսումնասիրվել համակցության մեջ, որի արդյունքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նույնիսկ փորձագետների կողմից հնարավոր չի եղել միանշանակ հաստատել այն փաստը, որ հետադարձ փոստային անդորրագրի վրա առկա ստորագրությունը Լիլիթ Մկրտչյանինը չէ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշման համաձայն՝ որոշվել է Լիլիթ Մկրտչյանից գանձել 59.554.967 ՀՀ դրամ պարտավորության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**):

2. Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը Լիլիթ Մկրտչյանին ուղարկվել է ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Կաշեգործների փողոց, թիվ 478 տուն հասցեով, որը ստացվել է 07.02.2020 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 24**):

3. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2018 թվականի թիվ 17-0627Դ եզրակացության համաձայն՝ թիվ AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/ գրանցման ծանուցագրի ստորին ձախ հատվածում՝ «07.02» բառերի դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից (**հատոր 2-րդ, գ.թ. 7-8**):

4. «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.04.2018 թվականի թիվ 34271801 եզրակացության համաձայն՝ փորձաքննության տրամադրված՝ Շենգավիթ, Կաշեգործների փող. 478 Լիլիթ Ռոբերտի Մկրտչյանին հասցեագրված 07.02 թվագրված AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի բնօրինակի ստորին ձախ մասում՝ «Ամսաթիվ և ստորագրություն» տողագծից վեր, «07.02» թվային գրառման դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից (**հատոր 2-րդ, գ.թ. 49-52**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք փոստային հավաստագրի վրա առկա որպես արացողի արդարագրության պարկանելության վերաբերյալ փորձագետի հավանական եզրակացությունը բավարար է հասցեատիրոջ կողմից վարչական ակտի մասին իրագնելված չիմնելու փաստը հաստատված համարելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով)՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով)՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (այսուհետ՝ բռնագանձման վերաբերյալ գործեր) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով)՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է տեղեկություններ՝

- 1) վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին.

2) հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (այսուհետ՝ դրամական պահանջներ):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն (հոդվածի մասն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-259-Ն օրենքով)՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. Ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. Իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 29.1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 29.2-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքի իմաստով պատշաճ ծանուցում է համարվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վարչական ակտի ընդունման մասին իրազեկելը:

Վերը նշված իրավանդումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հարկային մարմնի հսկողությունը գործնականում ապահովելու նպատակով սահմանել է, որ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս, որից հետո, գումարը գանձելու վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում, գումարը գանձվում է օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ եթե առկա են իրավահարաբերության ծագման պահին գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերը, ապա վարչական ակտի հիման վրա դրամական պահանջը հարկադիր կատարման է ենթակա դատական կարգով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պարզման է ենթակա իրավական այն հարցը, թե Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումն արդյո՞ք օրենքով սահմանված կարգով մտել է ուժի մեջ, և ըստ այդմ

վարչական մարմինը կարող էր հայց ներկայացնել Դատարան ֆիզիկական անձի դեմ հանրային իրավական դրամական պահանջով, թե ոչ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրագեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրագեկում է նույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը: Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով: Մույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ վերոնշյալ հոդվածներով անձի՝ վարչական ակտին տեղեկանալու իրավունքը պաշտպանվում (երաշխավորվում) է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքային նորմերով: Դրանց համաձայն՝ **այդ իրավունքի խախտման հետևանք է վարչական ակտն այն ստանալու հաջորդող օրն ուժի մեջ մտնելը** (յրենս «Իզի Սյարար» ՄԳԸ ընդդեմ ՀՀ ԿԱ ՀԳԾ, թիվ 3-2238/ՏԴ քաղաքացիական գործ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշումը):

Վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ վարույթ իրականացնող վարչական մարմինը գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին ընդունված գրավոր վարչական ակտի մասին պետք է իրագեկի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով, այն է՝ հանձնման եղանակով: Մասնավորապես՝ գրավոր վարչական ակտը պետք է հանձնվի ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ: Բացի այդ, գրավոր վարչական ակտը վարույթի մասնակիցներին կարող է հանձնվել նաև այլ եղանակով, եթե որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա կամ վարչական ակտի հասցեատերն ինքն է խնդրել օգտագործել վարչական ակտի հանձնման այլ միջոցներ: Գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարույթի մասնակիցներին հանձնելու հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ, մտնում է ուժի մեջ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները,

որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության մեջ բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին (*լրեն Ջաշոտի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ5/0029/05/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կա՛մ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կա՛մ փորձագետին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցներն իրավունք ունեն դատարանին առաջադրելու հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, ինչպես նաև նշելու այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որին դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կազմվում է գրավոր: Այն բովանդակում է՝

- 1) նշում՝ հետազոտության կատարման վայրի և ժամանակի մասին.
- 2) նշում՝ կիրառված մեթոդների մասին.
- 3) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը.
- 4) հետազոտություններից արված հետևությունները.
- 5) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե փորձագետը փորձաքննություն կատարելիս պարզում է գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց կապակցությամբ նրան հարցեր չեն առաջադրվել, ապա նա իրավունք ունի այդ հանգամանքների վերաբերյալ հետևություններն արտացոլելու իր եզրակացությունում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հրապարակվում է, հետազոտվում դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է որոշում կայացնել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ ցուցմունք տալու

նպատակով դատարան հրավիրելու վերաբերյալ, եթե դա անհրաժեշտ է գործի առանձին հանգամանքներ պարզելու համար: Փորձագետի ցուցմունք տալու նկատմամբ կիրառվում են վկայի ցուցմունք տալուն վերաբերող կանոնները:

Վերոգրյալ իրավանքներով սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի կողմից նշանակված փորձաքննության արդյունքում փորձագետի եզրակացություն՝ որպես ապացույց, ձեռք բերելու և գնահատելու կանոնները:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ փորձագետի եզրակացությունը գնահատվում է ընդհանուր հիմունքներով և, ինչպես գործով ձեռք բերված ցանկացած այլ ապացույց, այն ենթակա է գնահատման գործում առկա մյուս ապացույցների հետ համակցության մեջ, ինչը հնարավորություն է տալիս ստուգելու ոչ միայն փորձագետի եզրակացության տրամաբանությունը, այլ նաև կատարված հետազոտության գիտական հիմնավորվածության աստիճանն ու կատարված հետևությունների լրիվությունն ու հավաստիությունը: Ընդ որում, օրենքով սահմանված ապացույցներից որևէ մեկը, այդ թվում նաև՝ փորձագետի եզրակացությունը որևէ առավելություն չունի գործում առկա մյուս ապացույցների նկատմամբ և ենթակա է գնահատման ընդհանուր կարգով՝ վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից: Այդուհանդերձ, ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով: Հետևաբար, անգամ ընդհանուր կարգով գնահատման անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ (*որեն Սամվել Ֆրանգույանն ընդդեմ Հենրիկ Ֆրանգույանի թիվ ԵԷԿ/1089/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Թեև նշված իրավական դիրքորոշումն արտահայտվել է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկությունները նույնական են:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձագիտական եզրակացության արդյունքում տրված *հավանական եզրահանգումները* ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի ուժով *չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի ստկայությունն ապացուցելու առումով*: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու քաղաքականներն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ոչ հավանական եզրակացությունն ինքնին և ոչ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն: Այդպիսին չեն համարվում նաև հիպոթետիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ շատ դրանք լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն: Հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշմամբ որոշվել է Լիլիթ Մկրտչյանից գանձել 59.554.967 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության գումար: Նշված որոշումը Լիլիթ Մկրտչյանին ուղարկվել է ՀՀ, ք. Երևան, Շենգավիթթ, Կաշեգործների փողոց, թիվ 478 տուն հասցեով, որի ստացման վերաբերյալ թիվ AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման հետադարձ ծանուցման ստորին ձախ հատվածում առկա է ստորագրություն և «07.02» նշում: Կոմիտեն, դիմելով Դատարան, պահանջել է Լիլիթ Մկրտչյանից բռնագանձել

59.554.967 ՀՀ դրամ՝ որպես անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա չվճարված պարտավորության գումար: Սույն գործով Դատարանի կողմից 27.11.2017 թվականին նշանակվել է դատաձեռագրաբանական փորձաքննություն, որի արդյունքում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2018 թվականի թիվ 17-0627Դ եզրակացության համաձայն՝ թիվ AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի ստորին ձախ հատվածում՝ «07.02» բառերի դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից: Դատարանի կողմից 27.03.2018 թվականին նշանակված լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննության արդյունքում կազմված «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.04.2018 թվականի թիվ 34271801 եզրակացության համաձայն՝ փորձաքննության տրամադրված՝ Շենգավիթ, Կաշեգործների փող. 478 Լիլիթ Ռոբերտի Մկրտչյանին հասցեագրված 07.02 թվագրված AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի բնօրինակի ստորին ձախ մասում՝ «Ամսաթիվ և ստորագրություն» տողագծից վեր, «07.02» թվային գրառման դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից:

Դատարանի 10.10.2018 թվականի որոշմամբ սույն գործի վարույթը կարճվել է այն պատճառաբանությամբ, որ գործում առկա փորձագիտական եզրակացություններով չի հաստատվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը ստանալու վերաբերյալ հետադարձ ծանուցման վրա առկա ստորագրությունը կատարվել է հայցվոր Լիլիթ Մկրտչյանի կողմից, որպիսի պայմաններում չի հաստատվում նաև այն հանգամանքը, որ Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը մտել է ուժի մեջ և հանդիսանում է անբողոքարկելի վարչական ակտ:

Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշմամբ Դատարանի 10.10.2018 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ հայցի հիմքում դրված վարչական ակտը հասցեատեր, գործով պատասխանող Լիլիթ Մկրտչյանին հանձնված լինելու՝ գործի հետագա ճակատագիրը (գործի ելքը) պայմանավորող, փաստի ապացուցման պարտականությունը կրել է Կոմիտեն, իսկ Դատարանի ձեռնարկած՝ ապացույցներ հավաքագրելու գործողություններով հնարավոր չէ միանշանակ եզրահանգման գալ հայցի հիմքում դրված վարչական ակտը հասցեատիրոջը հանձնված լինելու մասին, ուստի դրա բացասական հետևանքները կրում է Կոմիտեն: Իսկ այդ բացասական հետևանքները հանգում են Դատարանի վերջնական իրավացի եզրահանգմանն առ այն, որ գործի վարույթը ենթակա էր կարճման:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ սույն գործում առկա փորձագիտական եզրակացություններով չի ապացուցվում Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը Լիլիթ Մկրտչյանի կողմից ստացված չլինելու հանգամանքը, քանի որ նշված եզրակացությունները պարունակում են հավանական եզրահանգումներ, մասնավորապես փորձագետները չեն տվել միանշանակ պատասխաններ Դատարանի կողմից առաջադրված հարցադրման վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը փոստային ծառայության միջոցով Կոմիտեի կողմից ուղարկվել է Լիլիթ Մկրտչյանի հասցեով, որն էլ սույն գործում առկա՝ ստանալու վերաբերյալ թիվ AR234929360AM հետադարձ ծանուցման համաձայն՝ հանձնվել է վերջինին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործում բացակայում է ստանալու վերաբերյալ թիվ AR234929360AM հետադարձ ծանուցման վրա առկա ստորագրության՝ Լիլիթ Մկրտչյանի կողմից կատարված չլինելու հանգամանքն ապացուցող պատշաճ ապացույց:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը փոստային ծառայության միջոցով Լիլիթ Մկրտչյանին ուղարկված լինելու և այն վերջինիս կողմից ստացված լինելու փաստերը, ուստի, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի դրույթները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված որոշումը Կոմիտեի կողմից Լիլիթ Մկրտչյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ուղարկվել է, վերջինս իրազեկվել է վիճարկվող վարչական ակտի մասին, ըստ դրա՝ այն մտել է ուժի մեջ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քննադատելու համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի հիմքերն ու հիմնավորումները քննության առարկա դարձնելու համար գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԳ/4450/05/17 վարչական գործով
10.12.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 10.12.2020 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշման դեմ, ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Լիլիթ Մկրտչյանի՝ 59.554.967 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Լիլիթ Մկրտչյանի ընդդեմ Կոմիտեի՝ 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Գոռ Հակոբյանս և Ստեփան Միքայելյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Լիլիթ Մկրտչյանից բռնագանձել 59.554.967 ՀՀ դրամ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 10.10.2018 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.10.2018 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դարարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէր հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ Կոմիտեն պատշաճ կատարել է իր՝ որպես վարչական մարմնի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գրավոր վարչական ակտը վարույթի մասնակիցներին հանձնելու պարտականությունը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հարկային մարմնի

վրա դրել է առավել ծանր պարտականություն, քան նախատեսված է կիրառելի իրավա-նորմով, որպիսի պարտականությունը միաժամանակ անիրատեսական է՝ հաշվի առնելով սույն գործում առկա փորձագիտական եզրակացությունները:

Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործում առկա ապացույցները չեն ուսումնասիրվել համակցության մեջ, որի արդյունքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նույնիսկ փորձագետների կողմից հնարավոր չի եղել միանշանակ հաստատել այն փաստը, որ հետադարձ փոստային անդորրագրի վրա առկա ստորագրությունը Լիլիթ Մկրտչյանինը չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Որպես վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճարելի դատարանն արձանագրել է հետևյալը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշման համաձայն՝ որոշվել է Լիլիթ Մկրտչյանից գանձել 59.554.967 ՀՀ դրամ պարտավորության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**).

2) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը Լիլիթ Մկրտչյանին ուղարկվել է ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Կաշեգործների փողոց, թիվ 478 տուն հասցեով, որը ստացվել է 07.02.2020 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 24**).

3) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2018 թվականի թիվ 17-0627Դ եզրակացության համաձայն՝ թիվ AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/ գրանցման ծանուցագրի ստորին ձախ հատվածում՝ «07.02» բառերի դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից (**հատոր 2-րդ, գ.թ. 7-8**).

4) «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.04.2018 թվականի թիվ 34271801 եզրակացության համաձայն՝ փորձաքննության տրամադրված՝ Շենգավիթ, Կաշեգործների փող. 478 Լիլիթ Ռոբերտի Մկրտչյանին հասցեագրված 07.02 թվագրված AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի բնօրինակի ստորին ձախ մասում՝ «Ամսաթիվ և ստորագրություն» տողագծից վեր, «07.02» թվային գրառման դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից (**հատոր 2-րդ, գ.թ. 49-52**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործի հարուցման հիմք հանդիսացած հայցադիմումով Կոմիտեն պահանջել է Լիլիթ Մկրտչյանից բռնագանձել 59.554.967 ՀՀ դրամ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը:

Դատարանի 10.10.2018 թվականի որոշմամբ սույն գործի վարույթը կարճվել է այն պատճառաբանությամբ, որ գործում առկա փորձագիտական եզրակացություններով չի հաստատվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին»

թիվ 30/03 որոշումը ստանալու վերաբերյալ հետադարձ ծանուցման վրա առկա ստորագրությունը կատարվել է հայցվոր Լիլիթ Մկրտչյանի կողմից, որպիսի պայմաններում չի հաստատվում նաև այն հանգամանքը, որ Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը մտել է ուժի մեջ և հանդիսանում է անբողոքարկելի վարչական ակտ:

Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշմամբ Դատարանի 10.10.2018 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ հայցի հիմքում դրված վարչական ակտը հասցեատեր, գործով պատասխանող Լիլիթ Մկրտչյանին հանձնված լինելու՝ գործի հետագա ճակատագիրը (գործի ելքը) պայմանավորող, փաստի ապացուցման պարտականությունը կրել է Կոմիտեն, իսկ Դատարանի ձեռնարկված՝ ապացույցներ հավաքագրելու գործողություններով հնարավոր չէ միանշանակ եզրահանգման գալ հայցի հիմքում դրված վարչական ակտը հասցեատիրոջը հանձնված լինելու մասին, ուստի դրա բացասական հետևանքները կրում է Կոմիտեն: Իսկ այդ բացասական հետևանքները հանգում են Դատարանի վերջնական իրավացի եզրահանգմանն առ այն, որ գործի վարույթը ենթակա էր կարճման:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Ի հիմնավորումն վերագրյալ եզրահանգման՝ Վճռաբեկ դատարանը վկայակոչել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետը (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով), իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասը, 216.2-րդ հոդվածի 1-ին մասը (հոդվածներն ուժը կորցրել են 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը, նույն օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող 88-րդ հոդվածի 1.1-ին մասը (հոդվածի մասն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-259-Ն օրենքով), իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) 29.1-ին հոդվածի առաջին պարբերությունը, 29.2-րդ հոդվածի առաջին պարբերությունը և դրանց վերլուծության արդյունքում արձանագրել է հետևյալը. «(...) օրենսդիրը հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հարկային մարմնի հսկողությունը գործնականում ապահովելու նպատակով սահմանել է, որ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս, որից հետո, գումարը գանձելու վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում, գումարը գանձվում է օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ էթե առկա են իրավահարաբերության ծագման պահին գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերը, ապա վարչական ակտի հիման վրա դրամական պահանջը հարկադիր կատարման է ենթակա դարձնում կարգով:

(...) րվյալ դեպքում պարզման է ենթակա իրավական այն հարցը, թե Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումն արդյո՞ք օրենքով սահմանված կարգով մտել է ուժի մեջ, և ըստ այրվ վարչական մարմինը կարո՞ղ էր հայց ներկայացնել Դատարան ֆիզիկական

անձի դեմ հանրային իրավական դրամական պահանջով, թե ոչ» (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 3-5-րդ էջերը):

Համակարգային վերլուծության ենթարկելով նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը և վկայակոչելով նշված իրավանորմերի վերաբերյալ «Իզի Ստարտ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ ՀՊԾ, թիվ 3-2238/ՏԴ քաղաքացիական գործ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «(...) վարույթ իրականացնող վարչական մարմինը գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ ետօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին ընդունված գրավոր վարչական ակտի մասին պետք է իրազեկի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով, այն է՝ հանձնման եղանակով: Մասնավորապես՝ գրավոր վարչական ակտը պետք է հանձնվի արդրագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պատվիրված փոստով, այդ թվում՝ արանայու մասին ծանուցմամբ: Բացի այդ, գրավոր վարչական ակտը վարույթի մասնակիցներին կարող է հանձնվել նաև այլ եղանակով, եթե որևէ հիմնավոր պարճատով արդրագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա կամ վարչական ակտի հասցեատերն ինքն է խնդրել օգրագործել վարչական ակտի հանձնման այլ միջոցներ: Գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ ետօրյա ժամկետում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարույթի մասնակիցներին հանձնելու հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ, մերժում է ուժի մեջ» (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 5-6-րդ էջերը):

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը վկայակոչել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 37-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասերը, 40-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերը, ապացույցների հետազոտման և գնահատման, փորձագետի եզրակացության որպես ապացույցի գնահատման առանձնահատկությունների վերաբերյալ համապատասխանաբար Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնաթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ5/0029/05/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի և Սամվել Ֆրանգուլյանն ընդդեմ Հենրիկ Ֆրանգուլյանի թիվ ԵԵԴ/1089/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) փորձագիտական եզրակացության արդյունքում տրված հավանական եզրահանգումները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի ուժով չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի առկայությունն ապացուցելու առումով: Հերոսության ձևը (հավանական կամ կարեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու բաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ոչ հավանական եզրակացությունն ինքնին և ոչ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն: Այդպիսին չեն համարվում նաև հիպոթեթիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հերոսությունների թվից, որքան էլ որ շար դրանք լինեն, չի առաջանում հավասարի և իրական եզրակացություն: Հավանական հերոսությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը» (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 6-8-րդ էջերը):

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտել է, որ «արդարապես դատարանների կողմից խախտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ սույն գործում առկա փորձագիտական եզրակացություններով չի ապացուցվում Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը Լիլիթ Մկրտչյանի կողմից ստացված չլինելու

հանգամանքը, քանի որ նշված եզրակացությունները պարունակում են հավանական եզրահանգումներ, մասնավորապես փորձագետները չեն փակել միանշանակ պարասիսաններ Դատարանի կողմից առաջադրված հարցադրման վերաբերյալ:

(...) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուրների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը փոստային ծառայության միջոցով Կոմիտեի կողմից ուղարկվել է Լիլիթ Մկրտչյանի հասցեով, որն էլ սույն գործում առկա՝ սրանապու վերաբերյալ թիվ AR234929360AM հեղադրած ծանուցման համաձայն՝ հանձնվել է վերջինին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործում բացակայում է սրանապու վերաբերյալ թիվ AR234929360AM հեղադրած ծանուցման վրա առկա արտագրության՝ Լիլիթ Մկրտչյանի կողմից կատարված չի՞նելու հանգամանքն ապացուցող պատշաճ ապացույց:

(...) սույն գործում առկա ապացույցներով հաստատվում են «Հարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուրների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը փոստային ծառայության միջոցով Լիլիթ Մկրտչյանին ուղարկված չի՞նելու և այն վերջինին կողմից սրացված չի՞նելու փաստերը, ուստի, հիմք ընդունելով «Հարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի դրույթները, Վճարել դատարանը գտնում է, որ նշված որոշումը Կոմիտեի կողմից Լիլիթ Մկրտչյանին «Հարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ուղարկվել է, վերջինս իրազեկվել է վիճարկվող վարչական ակտի մասին, ըստ որս՝ այն մերել է ուժի մեջ» (տե՛ս Վճարել դատարանի որոշման 9-րդ էջը):

Վճարել դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան, Գոռ Հակոբյան և Սրելիան Միքայելյան համաձայն չի՞նելով Վճարել դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերո նշված որոշմանը արտահայտած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հասցույ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Վերաբերելիությունը վարչական դատավարությունում ապացույցները բնութագրող հատկանիշներից է: Այն ցույց է տալիս, որ տվյալ ապացույցն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Այսինքն՝ վերաբերելիությունը բնութագրում է ապացույցի և վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստերի միջև կապը, վերաբերում է ապացույցի բովանդակությանը: Օրենսդիրը սահմանել է նաև, որ որևէ փաստի հաստատված լինելու հարցը դատարանը որոշում է՝ անմիջականորեն

գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով)՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով)՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (այսուհետ՝ բռնագանձման վերաբերյալ գործեր) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-260-Ն օրենքով)՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է տեղեկություններ՝

1) վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին.

2) հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (այսուհետ՝ դրամական պահանջներ):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն (հոդվածի մասն ուժը կորցրել է 08.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-259-Ն օրենքով)՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. Ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. Իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 29.1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 29.2-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքի իմաստով պատշաճ ծանուցում է համարվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վարչական ակտի ընդունման մասին իրազեկելը:

Վերոգրյալ իրավանորմների համաձայն՝ մինչև 01.04.2018 թվականը գործող իրավակարգավորումներով սահմանվել է անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի հարուցման կարգ: Ըստ այդմ՝ բռնագանձման վերաբերյալ գործերը հարուցվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունված վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա: Նշված գործերով հայցադիմումը, ի լրումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով և 216.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ներկայացվող պահանջների, պետք է ներառեր նաև տեղեկություններ վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին: Նշված պահանջի սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ և ուղղված է ուժի մեջ չմտած վարչական ակտերի հիման վրա անձանցից գումարներ բռնագանձելու իրավական հնարավորության բացառմանը: Այսինքն՝ բռնագանձման վերաբերյալ գործերի ոչ միայն հարուցման, այլ նաև քննության ու լուծման համար որոշիչ նշանակություն է ունեցել վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու և անբողոքարկելի դառնալու հանգամանքների առկայությունը, քանի որ ուժի մեջ չմտած և անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը ՀՀ իրավական համակարգում չեն առաջացնում իրավական հետևանքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ (*տե՛ս Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուի Դայիբայթյանի թիվ ՎԴ/2499/05/14 և Հովհաննես Չամսարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/7268/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխանաբար 10.12.2014 թվականի և 15.07.2015 թվականի որոշումները*):

Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մինչև 01.04.2018 թվականը գործող 29.1-րդ գլխում ամրագրված իրավակարգավորումների համաձայն՝ ՀՀ վարչական դատարանին ենթակա են եղել միայն ուժի մեջ մտած և անբողոքարկելի դարձած վարչական ակտերի հիման վրա ներկայացվող հանրային իրավական դրամական պահանջների մասին հայցերը:

Ընդ որում, վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու և անբողոքարկելի դառնալու հանգամանքների ապացուցման պարտականությունն օրենսդիրը դրել է վարչական մարմնի վրա՝ սահմանելով դատարան ներկայացվող հայցադիմումում վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին տեղեկություններ ներկայացնելու պարտադիր պահանջ: Այդուհանդերձ, գործնականում հնարավոր են եղել նաև դեպքեր, երբ վարչական մարմնի կողմից ներկայացված հանրային իրավական պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու հանգամանքը դարձել է վիճելի: Նկարագրված դեպքերում կարևորվել են վարչական դատավարությունում առանցքային նշանակություն ունեցող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում ամրագրված գործի փաստերն ի պաշտոնե («*ex officio*») պարզելու սկզբունքի կիրառմամբ վիճելի փաստի առնչությամբ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ ՀՀ վարչական դատարանի կողմից ձեռնարկվող միջոցները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վարչադատավարական գործընթացում

գործի փաստերն ի պաշտոնն պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու գործով օբյեկտիվ ճշմարտությունը և արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը (տե՛ս Ալվարդ Եղիազարյան և Տեյնակ Եղիազարյան *ընդեմ ՀՀ աղետի գուրու քնակա-վայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների քնակարանային խնդիրների լուծման նպարակով պետական աջակցությամբ իրականացվող քնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված քնակելի տների հարկացման հարցերով հանձնաժողովի թիվ ՎԴ/3654/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միննույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Վերոգրյալ իրավանորմերով սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի կողմից նշանակված փորձաքննության արդյունքում փորձագետի եզրակացություն՝ որպես ապացույց, ձեռք բերելու և գնահատելու կանոնները, որը հանգում է հետևյալին. Եթե գործի քննության ժամանակ ծագում է հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտություն, ապա դատարանն իրավունք ունի ինչպես կողմի միջնորդությամբ, այնպես էլ իր նախաձեռնությամբ նշանակելու փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացությունը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի, ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Դիմելով Դատարան՝ Կոմիտեն պահանջել է Լիլիթ Մկրտչյանից բռնագանձել 59.554.967 ՀՀ դրամ՝ որպես անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա չվճարված պարտավորության գումար: Որպես նշված հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու և անբողոքարկելի դառնալու ապացույց՝ Կոմիտեն դատարան է ներկայացրել թիվ AR234929360AM

ստացման/հանձնման/վճարման/գրանցման հետադարձ ծանուցագրի պատճենը (հատոր 1-ին, գ.թ. 24):

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լիլիթ Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը:

Գործի քննության ընթացքում Լիլիթ Մկրտչյանը վիճարկել է թիվ AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման հետադարձ ծանուցագրի վրա առկա ստորագրությունն իրեն պատկանելու հանգամանքը: Փաստորեն տվյալ դեպքում սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, այն է՝ հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտի ուժի մեջ մտած լինելը գործի քննության ընթացքում դարձել է վիճելի:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը 27.11.2017 թվականին նշանակել է դատաձեռագրաբանական փորձաքննություն, որի արդյունքում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2018 թվականի թիվ 17-0627Դ եզրակացության համաձայն՝ թիվ AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/ գրանցման ծանուցագրի ստորին ձախ հատվածում՝ «07.02» բառերի դիմաց տեղադրված ստորագրությունը հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից:

Այնուհետև Դատարանի կողմից 27.03.2018 թվականին նշանակվել է լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննություն, որի արդյունքում կազմված «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.04.2018 թվականի թիվ 34271801 եզրակացության համաձայն՝ փորձաքննության տրամադրված Շենգավիթ, Կաշեգործների փող. 478 Լիլիթ Ռոբերտի Մկրտչյանին հասցեագրված 07.02 թվագրված AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի բնօրինակի ստորին ձախ մասում՝ «Ամսաթիվ և ստորագրություն» տողագծից վեր «07.02» թվային գրառման դիմաց տեղադրված ստորագրությունը **հավանաբար չի կատարվել Լիլիթ Մկրտչյանի կողմից**, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից: Այսինքն՝ փորձագիտական եզրակացություններով կատեգորիկ հետևություն չի արվել AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի վրա առկա ստորագրությունը Լիլիթ Մկրտչյանի կողմից կատարված չլինելու մասին: Միևնույն ժամանակ, սակայն, կատեգորիկ հետևություն չի արվել, որ այդ ստորագրությունն արվել է Լիլիթ Մկրտչյանի կողմից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, թե կոնկրետ հայցատեսակով (վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման, ճանաչման) պայմանավորված՝ ով է կրում ապացուցման բեռը:

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասում, որպես ընդհանուր կանոն, նախատեսել է վարչական դատավարությունում գործի ելքը պայմանավորող որևէ փաստի չապացուցված մնալու իրավական հետևանքները՝ սահմանելով, որ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է նաև վարչական դատավարությունում գործող տարբեր հայցատեսակների հիման վրա հարուցված գործերի շրջանակներում ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները:

Գտնում ենք, որ սույն գործով վերը նշված հատուկ կանոնները կիրառելի չեն, քանի որ Կոմիտեի ներկայացրած հանրային իրավական դրամական պահանջի մասին հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հայցատեսակներից չէ:

Տվյալ դեպքում հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու փաստի ապացուցման բեռը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մինչև 01.04.2018 թվականը գործող 29.1-րդ գլխում ամրագրված իրավակարգավորումների համատեքստում կրել է վարչական մարմինը: Նշվածի հաշվառմամբ էլ, որպես այդ փաստը հաստատող ապացույց, Կոմիտեի կողմից դատարան է ներկայացվել AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի պատճենը: Վարչական ակտի հասցեատերը, սակայն, վիճարկել է դրա վրա առկա ստորագրությունն իրեն պատկանելու փաստը, ինչի հաշվառմամբ էլ անհրաժեշտություն է առաջացել հաստատելու կամ հերքելու AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/ գրանցման ծանուցագրի վրա առկա ստորագրությունը վերջինիս պատկանելու հանգամանքը:

Դատարանը վիճելի փաստի առնչությամբ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով նշանակել է դատաձեռագրաբանական, այնուհետև լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննություններ, սակայն դրանց արդյունքում կազմված եզրակացություններով կատեգորիկ հետևություն չի արվել այն մասին, որ AR-234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագրի վրա առկա ստորագրությունը պատկանում է Լիլիթ Մկրտչյանին: Այսինքն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու փաստը մնացել է չապացուցված, ուստի դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը, տվյալ դեպքում Կոմիտեն, քանի որ, ինչպես վերը նշվեց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մինչև 01.04.2018 թվականը գործող 29.1-րդ գլխում ամրագրված իրավակարգավորումների համատեքստում Կոմիտեն է կրել հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու փաստի ապացուցման բեռը:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը 10.10.2018 թվականի որոշմամբ իրավացիորեն կարճել է սույն գործի վարույթը՝ գտնելով, որ չի հաստատվում այն հանգամանքը, որ Կոմիտեի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը մտել է ուժի մեջ և հանդիսանում է անբողոքարկելի վարչական ակտ, ինչը հաստատվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Մինչդեռ Վճարեկ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ Դատարանի ձեռնարկած՝ ապացույցներ հավաքագրելու գործողություններով և հնարավոր չի եղել միանշանակ եզրահանգման գալ հայցի հիմքում դրված վարչական ակտը հասցեատիրոջը հանձնված լինելու մասին և փաստը մնացել է վիճելի, այդուհանդերձ արձանագրել է, որ «սույն գործում առկա ապացույցներով հաստատվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 31.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը փոստային ծառայության միջոցով Լիլիթ Մկրտչյանին ուղարկված լինելու և այն վերջինիս կողմից արացված լինելու փաստերը, ուստի, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի դրույթները, Վճարեկ դատարանը գտնում է, որ նշված որոշումը Կոմիտեի կողմից Լիլիթ Մկրտչյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ուղարկվել է, վերջինս իրազեկվել է վիճարկվող վարչական ակտի մասին, ըստ դրա՝ այն մտել է ուժի մեջ»:

Հարկ ենթ համարում հատուկ ընդգծել, որ սույն գործում առկա չէ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց, որով կարող է հաստատվել 30.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումն ուժի մեջ մտնելու փաստը: Որպես նշված փաստը հաստատող միակ ապացույց

Կոմիտեի կողմից ներկայացված AR234929360AM ստացման/հանձնման/վճարման/գրանցման ծանուցագիրը չի կարող հանդիսանալ թույլատրելի, քանի որ դրա վրա առկա ստորագրությունն ակտի հասցեատիրոջը պատկանելու վերաբերյալ կատեգորիկ հետևություններ փորձագետների եզրակացություններով չեն արվել: Փաստորեն Վճռաբեկ դատարանը հաշվի չի առել Դատարանի ձեռնարկած ակտիվ գործողությունների հետևանքով ձեռք բերված ապացույցները՝ փորձագետների երկու եզրակացությունները և չի հիմնավորել դրանք անտեսելու իր դիրքորոշումը:

Այսպիսով, գտնում ենք, որ 30.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշումը կարող էր հիմք հանդիսանալ սույն գործով սկզբնական հայցով հանրային իրավական դրամական պահանջ ներկայացնելու և այդ պահանջի բավարարում ստանալու համար, ինչպես նաև վիճարկման առարկա դառնալ հակընդդեմ հայցով միայն այդ վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու փաստը հաստատող անհերքելի ապացույցների առկայության պարագայում: Հակառակ դեպքում, մասնավորապես նման ապացույցների բացակայության պարագայում 30.01.2017 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 30/03 որոշման հիմքով ներկայացված հանրային իրավական դրամական պահանջի մասին, ենթակա չի եղել ՀՀ վարչական դատարանի քննությանը, որպիսի պայմաններում հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթակա էր մերժման, իսկ վարույթ ընդունված գործի վարույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով՝ կարճման:

Մինչդեռ ժամանակ, գտնում ենք, որ վերոգրյալ իրավանորմերը կիրառելի են նաև ուժի մեջ չմտած վարչական ակտի վիճարկման հայցերի նկատմամբ, քանի որ ուժի մեջ չմտած վարչական ակտը չի կարող դառնալ վիճարկման առարկա:

Գտնում ենք, որ Դատարանը 10.10.2018 թվականի որոշմամբ սկզբնական և հակընդդեմ հայցերի մատով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով կարճելով սույն գործի վարույթը, իսկ Վերաքննիչ դատարանը 12.12.2019 թվականի որոշմամբ անփոփոխ թողնելով Դատարանի որոշումը կայացրել են հիմնավոր դատական ակտեր, ինչն անտեսվել է Վճռաբեկ դատարանի կողմից:

Ամիտիտելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ արդարադատ դատարանի դատական ակտն անհիտիտիս թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն հարույկ կարծիքում շարադրված պարճատարանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան
Ս. Միքայելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/3194/05/16**
2020թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/3194/05/16**
Նախագահող դատավոր՝ **Ք. Մկոյան**
Դատավորներ՝ **Ա. Առաքելյան**
Գ. Ղարիբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 21-ին
գրավոր ընթացակարգով քննելով Մհեր Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.06.2017 թվականի որոշման դեմ, ըստ Մհեր Մնացականյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Մհեր Մնացականյանը պահանջել է անվավեր ճանաչել քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 03.10.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2017 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 03.10.2016 թվականի վճիռը բեկանվել է, և վարչական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մհեր Մնացականյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը, որը պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 72-րդ հոդվածները.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Մհեր Մնացականյանի կողմից 29.02.2016 թվականին ներկայացված միջնորդությունը՝ վարչական բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը վերականգնելու մասին, ենթակա էր քննարկման և բավարարման, քանի որ այդ միջնորդությանը հայտնած փաստարկներն առ այն, որ վիճարկվող որոշումն առձեռն չի ստացվել, հավաստի են, որևէ կերպ չեն հերքվել Քաղաքապետարանի կողմից և հիմնավոր են: Ընդ որում, այդ միջնորդության ներկայացման պահին պատասխանողն իր տիրապետության տակ եղած տեղեկատվության համաձայն՝ պետք է հաստատված համարել Մհեր Մնացականյանի կողմից վիճարկվող որոշումը չստանալու հանգամանքը: Հետևաբար՝ Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշման՝ դատական կարգով բողոքարկման համար սահմանված ժամկետի հաշվարկը պետք է կատարվեր Քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 11.03.2016 թվականի թիվ 07/Մ-1397 գրությունը Մհեր Մնացականյանի կողմից ստանալու պահից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.10.2016 թվականի վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշման համաձայն՝ Մհեր Մնացականյանը 05 OL 909 պետհամարանիշով BMW 528 I մակնիշի տրանսպորտային միջոցը 24.03.2015 թվականին ժամը 10:44-ից մինչև 24.03.2015 թվականը ժամը 11:19-ը, 15 րոպեից ավելի ժամանակահատվածով, առանց տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար սահմանված տեղական տուրքը վճարելու կայանել է Երևանի Տիգրան Մեծ պողոտայում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 5.000 ՀՀ դրամ վարչական տույժի (գ.թ. 5).

2) Քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 16.12.2015 թվականի թիվ 07/Մ-8844 գրության համաձայն՝ ի պատասխան Մհեր Մնացականյանի կողմից Երևանի քաղաքապետին 04.12.2015 թվականին ուղղված դիմումի, Մհեր Մնացականյանին հայտնվել է, որ տեխնիկական խոտանի պատճառով հայցվող տեսագրությունները չեն պահպանվել: Միաժամանակ նշվել է, որ Մհեր Մնացականյանը կորցրել է նշված որոշումներն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում բողոքարկելու իրավունքը (գ.թ. 21).

3) 29.02.2016 թվականին Երևանի քաղաքապետին ուղղված դիմումով Մհեր Մնացականյանը խնդրել է վերականգնել բաց թողնված ժամկետը, այն համարել հարգելի, բեկանել թվով 7, այդ թվում՝ 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշումները և վարույթները կարճել (գ.թ. 68).

4) «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հ. Ավագյանի 24.08.2016 թվականի թիվ 2/3-2443 գրության համաձայն՝ ի պատասխան Քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 20.07.2016 թվականի գրության՝ հայտնվել է, որ «Մհեր Մնացականյանին հասցեագրված, ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Մարմարաշեն, 37-րդ փողոց, տուն 31 հասցեով «Հայփոստ» ՓԲԸ-ի Մարմարաշենի թիվ

2618 փոստային բաժանմունքում ստացվել են թվով 11 պատվիրված նամակներ, որոնք հետ են վերադարձվել հասցեատիրոջ տեղափոխված լինելու պատճառով» (գ.թ. 41)։

5) Մհեր Մնացականյանը 13.06.2016 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշումը (գ.թ. 3-10)։

6) Դատարանի 17.06.2016 թվականի որոշմամբ Մհեր Մնացականյանի հայցադիմումը վերադարձվել է՝ Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշման իրազեկման պահից երկամսյա ժամկետի պահպանմամբ դատարան դիմելու վերաբերյալ որևէ ապացույց կամ նման ժամկետների խախտման դեպքում՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու հիմքով (գ.թ. 11)։

7) Մհեր Մնացականյանը 07.07.2016 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշումը, միաժամանակ ներկայացնելով միջնորդություն՝ «հայցադիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին» (գ.թ. 15-25)։

8) Մհեր Մնացականյանի կողմից «հայցադիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին» միջնորդությամբ նշվել է. «...Քանի որ վարչական ակտը մինչ օրս չեմ սրացել, իսկ դրա գոյության մասին իմացել եմ պարտադարձ ինքնուրույն միջոցով, որից հետո իրավունքներիս պաշտպանության համար դիմել եմ համապարտասխան գործողությունների, ղեկավարվելով վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով, միջնորդում եմ հայցադիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը համարել հարգելի և վերականգնել» (գ.թ. 16)։

9) Դատարանի 13.07.2016 թվականի որոշմամբ Մհեր Մնացականյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Մհեր Մնացականյանի միջնորդությանը Դատարանը չի անդրադարձել՝ գտնելով, որ ըստ հայցվորի ներկայացրած փաստաթղթերի՝ դատավարական ժամկետ բաց չի թողնվել (գ.թ. 26)։

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքը ներկայացնելու և այն վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով գործի վարույթը կարճելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար։

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյոք վիճարկման հայցը դատավարական ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պարճառաբանությամբ Վերաքննիչ դատարանը կարող է կարճել գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, եթե արդարադատ դատարանում չի ապահովվել վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու և այն վերականգնելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություն կամ ներկայացված միջնորդությունը քննարկման առարկա չի դարձվել ու դրա վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել։

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրաշին իշխանության պարտականություններն են:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վարչական մարմնի ընդունած ակտը կամ ակտը չընդունելը կամ գործողություն կատարելը կամ չկատարելը բողոքարկվել է վարչական կարգով, նույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են **բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց կամ բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո**:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե լրացել է հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետը, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը:

Փաստորեն, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետների հարցի լուծումն ուղղակիորեն պայմանավորված է վիճարկվող վարչական ակտի, այդ թվում նաև վարչական բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելու կամ բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելու հանգամանքով:

Վիճարկման հայցադիմումը դատարան ներկայացնելու դատավարական ժամկետ սահմանելով՝ օրենսդիրը թեև նախատեսել է դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմք, այդուհանդերձ այդ ժամկետները բաց թողնված լինելու կամ չլինելու հարցի գնահատումը թողել է դատարանի հայեցողությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները սահմանելու հետ միաժամանակ օրենսդիրը սահմանել է ինչպես դատավարական ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքները, այնպես էլ այդ ժամկետները վերականգնելու ինստիտուտը:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների

ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՄԴՌ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՄԴՌ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՄԴՌ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՄԴՌ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՄԴՌ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՄԴՌ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն՝ Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով ՄԻԵԴ-ի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*):

Ըստ ՄԻԵԴ-ի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրեն՝ Khalfaoui v. France (34791/97) գործով ՄԻԵԴ-ի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

Մեկ այլ վճռով ՄԻԵԴ-ը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրեն՝ Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով ՄԻԵԴ-ի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Անդրադառնալով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներին՝ ՄԻԵԴ-ն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված այդպիսի սահմանափակումները հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավասարական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից: Ըստ Եվրոպական

դատարանի՝ սնանատիպ հայցերի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել հետավոր անցյալում տեղի ունեցած իրադարձություններ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: ՄԻԵԴ-ը գտել է, որ ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Irliu Stubbings and others v. The United Kingdom (22083/93, 22095/93) գործով ՄԻԵԴ-ի 22.10.1996 թվականի վճիռը, 51-րդ և 55-րդ կետեր*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետների վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ շահագրգիռ անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իր իրավունքներին միջամտող վարչական ակտը պահպանելով վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը, իսկ այդ դատավարական ժամկետը բաց թողնված լինելու դեպքում՝ այն վերականգնելու ընդհանուր կառուցակարգը:

Նշված կառուցակարգն առաջին հերթին ենթադրում է, որ վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը բաց թողած անձը պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն: Նման միջնորդության ներկայացումն օբյեկտիվ իրավական անհրաժեշտություն է և հետապնդում է վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու հարցը քննարկելու և լուծելու միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովելու իրավաչափ նպատակ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը կարող է հաստատված համարվել միայն վիճարկվող վարչական ակտի, այդ թվում նաև վարչական բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվա վերաբերյալ անհերքելի ապացույցների առկայության պարագայում: Իսկ նշված հանգամանքի վիճելի լինելու դեպքում հայցվորը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ այն դեպքում, երբ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը վիճելի է, այսինքն՝ առկա է դատական պաշտպանության դիմած անձի կողմից դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ ողջամիտ կանխած, անձը գործնականում պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պարտավոր է քննարկման առարկա դարձնել և գնահատել դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները, որովհետև այդ փաստը վիճելի մնալու դեպքում անձին դատական պաշտպանության տրամադրման մերժումը կհանդիսանա դատարանի մատչելիության

իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում, ինչի հետևանքով կխախտվի այդ իրավունքի բուն էությունը, քանի որ անձն այլևս կգրկվի իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու հնարավորությունից:

Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումները լրացուցիչ երաշխիք են հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը չսահմանափակելու իրավաչափ նպատակի իրագործման համար, քանի որ դատավարական նորմերի ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում գործնականում ապահովվում է դատավարական ժամկետները բաց չթողնելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները քննարկելու և համապատասխան եզրահանգում կատարելու օբյեկտիվ հնարավորություն:

Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև 72-րդ հոդվածը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրությամբ ու Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքների և ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո (*լրեն՝ Հովհաննես Չամսարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/7268/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե („ex officio“): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ավանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների համալիր վերլուծությունից բխում է, որ դատավարական ժամկետները բաց թողնելու և վերականգնելու մասին իրավակարգավորումները վերաբերում են ոչ միայն հայցադիմումի ընդունելիության, այլև վարչական դատավարության մյուս փուլերին: Ըստ այդմ, վարչական դատավարության բոլոր փուլերում վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի իրավակարգավորմանը համապատասխան պարտավոր է կատարել մատնանշման իր պարտականությունը, այդ թվում նաև՝ մատնանշելով կողմերին դատավարական ժամկետների բացթողնման դեպքում դրանք վերականգնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե դատավարության որոշակի փուլում վարչական դատարանը մատնանշման իր պարտականությունը չի կատարել, ապա նա գրկված չէ իր այդ պարտականությունը կատարելու հնարավորությունից դատավարության հետագա փուլերում՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունների և ներկայացրած նոր ապացույցների հիման վրա, իսկ այդ պարտականության կատարման պարագայում դատավարության մասնակցի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու դեպքում կիրառվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական հետևանքը, այն է՝ դատավարության մասնակցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը (*լրեն՝ Աշոտ Ուլիխանյանն ընդդեմ Երևան համալսրի, երրորդ անձինք Լուսիկ Պետրոսյանի, «Բարսայան IUS ապիսագիծ» ՍՊԸ-ի, ՀՀ կառավարությանն առընթեր անչարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/2731/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներ կիրառելուց առաջ դատարանները պարտավոր են ապահովել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու իրական (ոեալ) հնարավորություն: Միևնույն ժամանակ, դատարանները պարտավոր

են քննարկման առարկա դարձնել վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջնորդությունը և դրա վերաբերյալ կայացնել համապատասխան դատական ակտ: Հակառակ պարագայում, այսինքն՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորություն չընձեռեղով հանդերձ դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներ կիրառելով՝ կարող է խաթարվել արդարադատության բուն էությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հայցվորի իրավունքի իրացումը դատարանի կողմից ապահովված չլինելու կամ միջնորդությունը Դատարանի կողմից քննարկված չլինելու ու դրա վերաբերյալ որոշում կայացված չլինելու պարագայում Վերաքննիչ դատարանն իրավասու չէ վիճարկման հայցը դատավարական ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կարճել գործի վարույթը, քանի որ դրա հետևանքով ոչ իրավաչափորեն կսահմանափակվի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորը 13.06.2016 թվականին ՀՀ վարչական դատարան է ներկայացրել վիճարկման հայց՝ պահանջելով անվավեր ճանաչել վարչական տույժ նշանակելու մասին Քաղաքապետարանի 06.05.2015 թվականի թիվ Վ-0012459 որոշումը: Մինևսույն ժամանակ հայցվորը միջնորդել է հարգելի համարել վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետի բաց թողնումը և այն վերականգնել, որպես հիմնավորում հայտնելով, որ 2015 թվականի նոյեմբեր ամսվա վերջերին կամ դեկտեմբեր ամսվա սկզբներին պատահաբար մուտք է գործել Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք՝ yerevan.am և տեղեկացել, որ իր նկատմամբ առկա են տուգանքներ ավտոկայանատեղիի տուրքը չվճարելու համար:

Դատարանը չի քննարկել բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը՝ գտնելով, որ ըստ հայցվորի ներկայացրած փաստարկների՝ դատավարական ժամկետ բաց չի թողնվել:

Դատարանի 03.10.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է այն հիմնավորմամբ, որ գործում առկա վարչական ակտի կայացմանն ուղղված վարչական վարույթի նյութերով չի հիմնավորվում վարչական իրավախախտման դեպքը:

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կարճելով վարչական գործի վարույթը, պատճառաբանել է, որ «վիճարկվող վարչական ակտն ընդունվել է 06.05.2015 թվականին, որպիսի ակտի գոյության մասին հայցվորն առնվազն տեղեկացել է 04.12.2015 թվականից: Նշված ժամկետում էլ վարչական ակտի հասցեատերն օգտվել է իր իրավունքների պաշտպանությունը վարչական կարգով իրացնելու հնարավորությունից և վարչական ակտն ընդունած մարմնից պահանջել է վերացնել իր իրավունքների վրա միջամտող ազդեցություն ունեցող վարչական ակտը: Նշված իրավունքի իրացման արդյունքում վերջինս վարչական մարմնից ստացել է մերժում, որն արտահայտված է եղել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 16.12.2015 թվականի թիվ 07/Մ-8844 գրության մեջ, ըստ որի՝ Մհեր Մնացականյանին հայտնվել է, որ տեխնիկական խոտանի պատճառով հայցվորը տեսագրությունները չեն պահպանվել, բացի այդ՝ նշվել է, որ Մհեր Մնացականյանը կորցրել է նշված որոշումները օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում բողոքարկելու իրավունքը»: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «17.12.2015 թվականից հայցվոր Մհեր Մնացականյանը իրավունք է ունեցել խնդրո առարկա վարչական ակտի իրավաչափության հարցով իր իրավունքների պաշտպանության դատական ձևը իրացնել երկու ամսվա ընթացքում, այն է՝ մինչև 17.02.2016 թվականը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ իրավունքի պաշտպանությանն

ուղղված քայլեր հայցվորի կողմից ձեռնարկվել են միայն 13.06.2016 թվականին, այսինքն՝ գրեթե 4 ամիս անց այն բանից հետո, երբ հայցվորի մոտ օրենքի ուժով դադարել է գործել դատական պաշտպանության իրավունքը, ինչը նշանակում է, որ վերջինս այլևս չի հանդիսացել խնդրո առարկա հայցի շրջանակներում Դատարան դիմելու իրավասություն ունեցող անձ»։ Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ «հայցվորի կողմից Դատարան չի ներկայացվել ապացույց առ այն, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկվել են իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավակախացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար»։

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում սույն վարչական գործի հարուցման համար հիմք հանդիսացած հայցադիմումը, հայցադիմումին կից ներկայացված միջնորդությունը և կից փաստաթղթերը բավարար տեղեկություններ չեն պարունակում, որպեսզի հնարավոր լինի եզրահանգում անել վիճարկման հայցադիմումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետում ներկայացված լինելու կամ չլինելու վերաբերյալ։ Այդուհանդերձ, հաստատված համարելով այն փաստը, որ հայցվորը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը, Վերաքննիչ դատարանը կարճել է գործի վարույթը՝ անտեսելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից ներկայացված դատավարական ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունն ըստ էության մնացել է առանց քննարկման։

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնված լինելու հիմքով սույն գործի վարույթը կարճելու հետևանքով ոչ իրավաչափորեն սահմանափակվել է դատարանի մատչելիության հայցվորի իրավունքը, քանի որ վերջինս գրկվել է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին նոր միջնորդություն ներկայացնելու կամ ներկայացված միջնորդության քննարկման արդյունքում դատական ակտ ակնկալելու ու ստանալու իրավունքից։

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը Դատարանի կողմից քննարկված չլինելու ու այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշում կայացված չլինելու պարագայում Վերաքննիչ դատարանը չէր կարող վիճարկման հայցը դատավարական ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կարճել սույն գործի վարույթը՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով անձի դատական պաշտպանության, մասնավորապես դատարանի մատչելիության իրավունքը։

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար։

5. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի

Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.06.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/14079/05/17
2020թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/14079/05/17
Նախագահող դատավոր՝ Կ. Ավետիսյան
Դատավորներ՝ Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Ալեքսան Թումայանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ վարչական դատարանի 06.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ալեք-
սան Թումայանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծա-
ռայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 24.11.2017 թվականի թիվ 1707176767 որոշումը վե-
րացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ալեքսան Թումայանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառա-
յության 24.11.2017 թվականի թիվ 1707176767 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Մոսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.03.2018
թվականի վճռով հայցը բավարարվել է, անվավեր է ճանաչվել Ծառայության 24.11.2017
թվականի թիվ 1707176767 որոշումը, և Ծառայությունից հոգուտ Հայաստանի Հանրապե-
տության բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված պե-
տական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.05.2019 թվականի որոշմամբ Ալեքսան Թումասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 17.03.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ալեքսան Թումասյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 56-րդ և 58-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պատժը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանը չի լուծել դատական ծախսերի հարցը, մասնավորապես՝ չի անդրադարձել փաստաբանին վճարված վարձատրության հատուցման պահանջին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը հայցվորի օգտին կամ ի վնաս վերջինիս չի լուծել դատական ներկայացուցչության ծախսերի հարցը, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքի փաստարկներն օբյեկտիվորեն չեն կարող հիմնավոր որակվել, հետևաբար բացակայում է վերաքննիչ բողոքում մատնանշված փաստարկների հետազոտության և իրավական գնահատման անհրաժեշտությունը: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական գործում առկա է փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր, և հստակ սահմանված է այդ ծառայությունների արժեքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 06.05.2019 թվականի որոշումը՝ «դատական ծախսի մասնավորապես փաստաբանին վճարված ողջամիտ վարձատրության մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել ստորադաս դատարան նոր քննության»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 24.11.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1707176767 որոշմամբ Ալեքսան Թումասյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է 5.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանքի **(գ.թ. 3)**.

2) Մի կողմից՝ Ալեքսան Թումասյանի (Պատվիրատու) և մյուս կողմից՝ փաստաբան Տիգրան Ղազարյանի (Կատարող) միջև 14.12.2017 թվականին կնքված «Փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ» պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել նույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է վճարել այդ ծառայությունների համար: Նույն պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ Կատարողը Պատվիրատուի շահերի պաշտպանությունն ապահովելու համար, վարչական ակտը դատական կարգով բողոքարկման ըստ անհրաժեշտության մատուցում է հետևյալ ծառայությունները. ա/ Պատվիրատուի իրավունքների և պարտականությունների, այդ թվում՝ դատական համակարգի՝ Պատվիրատուի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ խորհրդատվության տրամադրում, բ/ փաստաթղթերի ուսումնասիրում, գ/ իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմում, դ/ դատական ներկայացուցչություն, իսկ նույն պայմանագրի 3.1. կետի համաձայն՝ այդ ծառայությունների գինը կազմում է 10.000 ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման անմիջապես: Նշված պայմանագիրը ներկայացվել է հայցադիմումին կից **(գ.թ. 4)**.

3) Դատարանը, 17.03.2018 թվականի վճռի «Դատական ծախսերի բաշխումը» կետով անդրադառնալով ներկայացուցչի վճարին, պատճառաբանել է, որ «(...) հայցվորի կողմից դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար կատարված (կատարվելիք) ծախսը չի ծառայել (ծառայելու) իր նպատակին, այն չի եղել (լինելու) անհրաժեշտ, փոխհատուցման համարժեք, արդյունավետ, ուստի ներկայացուցչի վճարի գծով

դատական ծախսը պետք է դրվի հենց հայցվորի վրա: (...) Դատարանի գնահատմամբ վարչական ակտերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով վիճարկելու գործերով ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունվելու փաստը հաստատվելու դեպքում ըստ էության բացակայում է այն ընդունելու ու դրա հետևանքները վերացնելու մեջ վարչական մարմնի անմիջական և ուղղակի պատասխանատվությունը, քանի որ տրանսպորտային միջոցի սեփականատերն է կրում վարչական իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու հանգամանքի ապացուցման պարտականությունը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունում է՝ ելնելով օրենքով սահմանված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանոնից, իսկ վարչական ակտը անվավեր (ոչ իրավաչափ) է ճանաչվում միայն այն դեպքում, երբ սեփականատերն ապացուցում է, որ խախտումը կատարվել է այլ անձի կողմից: Ուստի նման գործերով, եթե անձը վարչական ակտը որոշել է վիճարկել ոչ թե վարչական կարգով, որը ողջամիտ ժամկետների պահպանման և ծախսերի խնայողության տեսանկյունից առավել արդյունավետ կերպով է ապահովում խախտված իրավունքների գործնական վերականգնումը, այլ դատական կարգով, այդ թվում՝ ներկայացուցչի միջոցով՝ կատարելով ծախս, ապա նա պետք է հաշվի առնի, որ կատարում է այնպիսի անհարկի ծախս, որը չի ծառայում իր նպատակին, անհրաժեշտ չէ, փոխհատուցման համարժեք ու արդյունավետ չէ և ենթակա չի լինի հատուցման: Հետևաբար թեև վարչական ակտը վարչական կամ դատական կարգով վիճարկելու իրավունքը վերապահված է բացառապես տվյալ անձին, սակայն միաժամանակ վարչական մարմնի վրա չի կարող դրվել այնպիսի ծախս հատուցելու պարտականություն, որը կարող էր չկատարվել՝ նույնպիսի հաջողությամբ երաշխավորելով անձի իրավունքների լիարժեք վերականգնումը (...):» (գ.թ. 29-31):

4) Դատարանի 17.03.2018 թվականի վճռի եզրափակիչ մասում հայցվորի ներկայացուցչի վճարի՝ որպես դատական ծախսի բաշխման վերաբերյալ եզրահանգում առկա չէ (գ.թ. 29-31):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ և 58-րդ հոդվածների խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադրանալ վարչական դատարանի կողմից դատական ծախսերի բաշխման (ներառյալ՝ դատավարության մասնակցի ներկայացուցչի վճարի հարուցման) հարցի լուծմանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների ծախսերը վճարում է նրանց ներգրավված դատավարության մասնակիցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորվում են յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները, որոնց բաղկացուցիչ տարրերից մեկն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է, այդ իրավունքը երաշխիք է իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008 թվականի թիվ ՄԴՌ-765 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն սպահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները դատական ծախսերի մաս են կազմում և ենթակա են հատուցման օրենքով սահմանված կարգով:

Մինչև նույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Նույն հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝ դատարանի դիրքորոշումը դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը բովանդակում է եզրահանգում՝ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատարանի կողմից վճռով լուծման ենթակա հարցերից է դատավարության մասնակիցների միջև դատական

ծախսերի բաշխումը: Ըստ այդմ, օրենսդիրը վարչական դատարանի վրա դրել է դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ պարտադիր եզրահանգում կատարելու պարտականություն, որը պետք է արտացոլվի վճռի եզրափակիչ մասում: Այսինքն՝ վճռի եզրափակիչ մասն անվերապահորեն պետք է պարունակի վերջնական եզրահանգումներ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման, այդ թվում՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարների հատուցման վերաբերյալ: Ընդ որում, դատարանի կողմից կատարվող եզրահանգումը պետք է ունենա հստակ, միանշանակ, անպայմանական, հրամայական, կատեգորիկ բնույթ և բացառի դատական ակտը մեկնաբանելու անհրաժեշտությունը: Մինևույն ժամանակ, դատարանը պետք է նաև պատճառաբանի դատական ծախսերի բաշխումը դրա վերաբերյալ հիմնավորումները ներկայացնելով վճռի պատճառաբանական մասում, սակայն վճռի պատճառաբանական մասում տեղ գտած՝ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի դատողությունները չեն կարող փոխարինել այդ ակտի եզրափակիչ մասում արտացոլվող եզրահանգմանը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման (ներառյալ՝ դատավարության մասնակցի ներկայացուցչի վճարի հատուցման) հարցը համարվում է ամբողջությամբ լուծված միայն այն դեպքում, երբ վճռի եզրափակիչ մասը բովանդակում է դատարանի եզրահանգումը այդ դատական ակտով բաշխման ելթակա դատական ծախսերի բաշխման վերաբերյալ: Իսկ այն դեպքերում, երբ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է դիրքորոշում դատական ծախսերի բաշխման վերաբերյալ, իսկ դատական ակտի եզրափակիչ մասում նշված դիրքորոշումներից բխող եզրահանգումներն ամբողջությամբ արտացոլված չեն, այսինքն՝ բոլոր դատական ծախսերի բաշխման վերաբերյալ վերջնական և ամբողջական եզրահանգումը բացակայում է, սպա դատական ծախսերի բաշխման հարցն այդ դատական ակտով ամբողջությամբ լուծված չէ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև դատական ծախսերի հարցը վճռով լուծված չլինելու կամ թերի լուծված լինելու դեպքում վարչական դատավարության մասնակցին օրենքով վերապահված իրավունքներին:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 142-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ վճռի կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ լրացուցիչ վճռի կայացնել, եթե չի լուծել դատական ծախսերի հարցը:

Մյուս կողմից, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավանդությունների վերլուծությանը, արձանագրել է, որ եթե վարչական դատարանը համապատասխան ապացույցի առկայության դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք զրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի հիմքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ բացի լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով վարչական դատարան դիմելու հնարավորությունից՝ կողմերին վերապահված է վարչական դատարանի դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն, ինչը նշանակում է, որ այն **դեպքում, երբ վարչական դատարանը համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, կամ կողմերի կարծիքով վարչական դատարանի կողմից դատական ծախսերը բաշխվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ, կողմերը զրկված չեն դատական ծախսերի բաշխման մասով վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից** (ընդհանուր կարգի Բյուրեղավան քաղաքային համայնքն ընդդեմ Գյումրիի Սարգսյանի թիվ ԿԳ2/0189/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության ժամանակ գործող իրավակարգավորումների համաձայն՝ եթե վարչական դատարանը համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա վարչական դատավարության մասնակցին վերապահված է երկու հնարավորություն.

1. դատական ակտը կայացրած դատարան ներկայացնել լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ դիմում:

2. դատական ծախսերի բաշխման մասով բողոքարկել վարչական դատարանի դատական ակտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վերը նշված դիրքորոշումը կիրառելի է նաև 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում, քանի որ վերջինս նույնպես նախատեսում է գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ վճիռ կայացրած դատարանի նախաձեռնությամբ լրացուցիչ վճիռ կայացնելու հնարավորություն, մասնավորապես, այն դեպքում, երբ դատարանը չի լուծել կամ թերի է լուծել դատական ծախսերի հարցը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մաս):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Ալեքսան Թումայանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է անվավեր ճանաչել Ծառայության 24.11.2017 թվականի թիվ 1707176767 որոշումը: Նշված վարչական ակտով Ալեքսան Թումայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով: Ալեքսան Թումայանը նշված վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Տիգրան Ղազարյանի հետ, ով սույն գործով հանդես է եկել որպես Ալեքսան Թումայանի ներկայացուցիչ: Նշված պայմանագրով մատուցվելիք ծառայությունների գինը կազմել է 10.000 ՀՀ դրամ:

Սույն վարչական գործի քննության արդյունքում Դատարանի 17.03.2018 թվականի վճռով Ալեքսան Թումայանի կողմից ներկայացված հայցը բավարարվել է: Վճռի

«Դատական ծախսերի բաշխումը» կետով անդրադառնալով ներկայացուցչի վճարին՝ Դատարանը պատճառաբանել է, որ «(...) հայցվորի կողմից դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար կատարված (կատարվելիք) ծախսը չի ծառայել (ծառայելու) իր նպատակին, այն չի եղել (լինելու) անհրաժեշտ, փոխհատուցման համարժեք, արդյունավետ, ուստի ներկայացուցչի վճարի գծով դատական ծախսը պետք է դրվի հենց հայցվորի վրա: (...) Դատարանի գնահատմամբ, վարչական ակտերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով վիճարկելու գործերով ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունվելու փաստը հաստատվելու դեպքում ըստ էության բացակայում է այն ընդունելու ու դրա հետևանքները վերացնելու մեջ վարչական մարմնի անմիջական և ուղղակի պատասխանատվությունը, քանի որ տրանսպորտային միջոցի սեփականատերն է կրում վարչական իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու հանգամանքի ապացուցման պարտականությունը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունում է՝ ելնելով օրենքով սահմանված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանոնից, իսկ վարչական ակտը անվավեր (ոչ իրավաչափ) է ճանաչվում միայն այն դեպքում, երբ սեփականատերն ապացուցում է, որ խախտումը կատարվել է այլ անձի կողմից: Ուստի նման գործերով, եթե անձը վարչական ակտը որոշել է վիճարկել ոչ թե վարչական կարգով, որը ողջամիտ ժամկետների պահպանման և ծախսերի խնայողության տեսանկյունից առավել արդյունավետ կերպով է ապահովում խախտված իրավունքների գործնական վերականգնումը, այլ դատական կարգով, այդ թվում՝ ներկայացուցչի միջոցով՝ կատարելով ծախս, ապա նա պետք է հաշվի առնի, որ կատարում է այնպիսի անհարկի ծախս, որը չի ծառայում իր նպատակին, անհրաժեշտ չէ, փոխհատուցման համարժեք ու արդյունավետ չէ և ենթակա չի լինի հատուցման: Հետևաբար թեև վարչական ակտը վարչական կամ դատական կարգով վիճարկելու իրավունքը վերապահված է բացառապես տվյալ անձին, սակայն միաժամանակ վարչական մարմնի վրա չի կարող դրվել այնպիսի ծախս հատուցելու պարտականություն, որը կարող էր չկատարվել՝ նույնպիսի հաջողությամբ երաշխավորելով անձի իրավունքների լիարժեք վերականգնումը (...):»

Միաժամանակ, վճարի եզրափակիչ մասում բացակայում է դատավարության մասնակցի ներկայացուցչի վճարի հատուցման վերաբերյալ որևէ եզրահանգում:

Ալեքսան Թումասյանը Դատարանի վճարի դեմ՝ դատական ծախսերի մասով, ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 06.05.2019 թվականի որոշմամբ Ալեքսան Թումասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 17.03.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «(...) եթե վճարի եզրափակիչ մասը չի բովանդակում դատարանի որոշումը դատական ծախսերի կամ դրանց համապատասխան մասի բաշխման վերաբերյալ, ապա սա նշանակում է, որ այդ մասով դատարանը չի լուծել դատական ծախսերի հարցը: Հետևապես նման իրողության դեպքում կարող է գործի դրվել լրացուցիչ վճիռ կայացվելու օրենսդրական ինստիտուտը», «Դատարանն վճարի եզրափակիչ մասում որևէ եզրահանգում չի մատնանշել ներկայացուցչական ծախսերի մասով: Վճարի պատճառաբանական մասում ներկայացուցչական ծախսերի մասով Դատարանի արտահայտած պատճառաբանություններից պետք է կոտակել, որ Դատարանը գտել է, որ ներկայացուցչական ծախսերի մասով բացակայում է հայցվորին որևէ ծախս փոխհատուցելու իրավական և փաստական հիմքը, այդուհանդերձ Դատարանը նախ՝ վերջնական դիրքորոշում չի արտահայտել այդ հարցի շուրջ վճարի պատճառաբանական մասում, հետո՝ վճարի եզրափակիչ մասում չի նշել՝ ի վերջո որոշել է Ծառայությունից հօգուտ հայցվորի գանձել որևէ ներկայացուցչական ծախս, թե՛ ոչ, թե՛ այդ մասով հարցը համարել լուծված: Ստացվում է, որ քննարկելով ներկայացուցչական ծախսերի հարցը՝ Դատարանն ի վերջո հայցվորի օգտին կամ ի վնաս նրա չի լուծել, ներկայացուցչական ծախսերի, այն է՝ դատական ծախսերի հարցը, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքի փաստարկներն օբյեկտիվորեն չեն կարող հիմնավոր որակվել, հետևապես Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ստեղծված իրադրությունում բացակայում է վերաքննիչ

բողոքում մատնանշված փաստարկների հետազոտության և իրավական գնահատման անհրաժեշտությունը (...):»

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի հիմնավորումների և եզրահանգումների իրավաչափությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանը, բավարարելով Ալեքսան Թումասյանի հայցը, վճռի պատճառաբանական մասում նշել է Ալեքսան Թումասյանի ներկայացուցչի վճարի հատուցման վերաբերյալ իր պատճառաբանությունները, սակայն դրա վերաբերյալ վերջնական եզրահանգումը չի արտացոլել դատական ակտի եզրափակիչ մասում, այսինքն՝ այդ մասով չի լուծել դատական ծախսերի բաշխման հարցը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը տվյալ դեպքում պետք է դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան լուծեր նաև Ալեքսան Թումասյանի ներկայացուցչի վճարի հատուցման հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ալեքսան Թումասյանի ներկայացուցչի վճարի հատուցման, այսինքն՝ այդ դատական ծախսի բաշխման հարցը Դատարանի կողմից լուծված չլինելու վերաբերյալ իրավաչափ դատողություն կատարել է նաև Վերաքննիչ դատարանը: Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն Ալեքսան Թումասյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, նման պայմաններում Դատարանի վճիռը համապատասխան մասով ենթակա էր բեկանման, իսկ գործը՝ դատական ծախսերի, այն է՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, ենթակա էր ՀՀ վարչական դատարանի կողմից նոր քննության:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ եթե որևէ դատական ծախսի մասով դատարանը չի լուծել դատական ծախսերի բաշխման հարցը, ապա կարող է գործի դրվել լրացուցիչ վճիռ կայացվելու օրենսդրական ինստիտուտը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսի վերաբերյալ ապացույցի առկայության պայմաններում վարչական դատարանի կողմից այդ ծախսի բաշխման հարցը չլուծելու դեպքում դատավարության մասնակիցը կարող է նաև դատական ծախսերի բաշխման մասով բողոքարկել վարչական դատարանի դատական ակտը, որպիսի իրավունքից էլ օգտվել է Ալեքսան Թումասյանը: Ընդ որում, Ալեքսան Թումասյանը թեև վերաքննիչ բողոքում ներկայացրել է իր ներկայացուցչի վճարի հատուցման հարցը Դատարանի կողմից սխալ լուծված լինելու վերաբերյալ փաստարկներ, սակայն մինևույն ժամանակ նշել է նաև, որ «(...) Դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում՝ չի լուծել վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ և 58-րդ հոդվածներով նախատեսված դատական ծախսերի հարցը»: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Դատարանը չի լուծել Ալեքսան Թումասյանի ներկայացուցչի վճարի հատուցման հարցը, պետք է բավարարեր վերաքննիչ բողոքը, համապատասխան մասով բեկաներ Դատարանի վճիռը և այդ մասով գործն ուղարկեր նոր քննության:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, վճռի եզրափակիչ մասում առհասարակ չանդրադառնալով Ալեքսան Թումասյանի ներկայացուցչի վճարի հատուցման հարցին, այսինքն՝ չբաշխելով այդ դատական ծախսը, թույլ է տվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ և 58-րդ հոդվածների խախտում, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ալեքսան Թումասյանի ներկայացուցչի վճարի հատուցման հարցը սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից Դատարանի կողմից պարզելու և գնահատելու համար սույն գործը՝ դատական

ծախսերի, այն է՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռարեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ դատական ծախսերի, այն է՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռարեկ դատարանի պարտավարությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռարեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում (*տե՛ս «Ռեքվիզիտ» ՄՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՄՊԸ-ի թիվ ԵՇԳ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Վճռարեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ և ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար, վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի 17.03.2018 թվականի վճիռը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի 06.05.2019 թվականի որոշումը վճռարեկության կարգով բողոքարկվել են միայն դատական ծախսերի մասով, իսկ Ալեքսան Թումասյանը ՀՀ վճռարեկ դատարանի վերոգրյալ որոշման ուժով ազատված է այդ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ալեքսան Թումասյանը տվյալ դեպքում վերաքննիչ և վճռարեկ բողոքների համար պետական տուրք չի վճարել,

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.05.2019 թվականի որոշումը, և գործը դատական ծախսերի, այն է՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԴԵ/0054/05/15
Գ. Ղարիբյան
Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴԵ/0054/05/15
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 03-ին
դռնբաց դատական նիստում քննելով գործին մասնակից չդարձված անձ Վաչագան
Կյուրեղյանի ներկայացուցիչ Նարինե Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերա-
քննիչ դատարանի 12.05.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռուզաննա Սարգսյա-
նի ընդդեմ Շիրակի մարզի Մեծ Մանյաջ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնքի
ղեկավար), երրորդ անձինք Արթուր Բաղդասարյանի և ՀՀ կառավարության առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման
Համայնքի ղեկավարի որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ
կիրառելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ռուզաննա Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել Հա-
մայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումը և որպես անվավերության
հետևանք՝ անվավեր ճանաչել Արթուր Բաղդասարյանի սեփականության իրավունքի

գրանցման գրառումը Շիրակի մարզ, Մեծ Մանթաշ համայնքի 2-րդ խճուղի, թիվ 9 հասցեով տնատիրության՝ տան և հողամասի նկատմամբ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 30.05.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.05.2017 թվականի որոշմամբ Արթուր Բաղդասարյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 30.05.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ մասնակի՝ ՀՀ Շիրակի մարզ, Մեծ Մանթաշ համայնքի 2-րդ խճուղի, թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորների 1/2 մասով, անվավեր է ճանաչվել Համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձված անձ Վաչագան Կյուրեղյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, 19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ առկա է Դատարանի վճիռը բեկանելու հիմք, այն է՝ Վաչագան Կյուրեղյանը մասնակից չի դարձվել դատավարությանը, մինչդեռ պետք է մասնակից դարձվեր սույն գործին՝ որպես երրորդ անձ: Սույն գործում առկա է Արթուր Բաղդասարյանի կողմից ներկայացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122014-08-0028 վկայականը, որով Դատարանին հայտնի է դարձել Շիրակի մարզի Մեծ Մանթաշ 2-րդ խճուղի, թիվ 9 հասցեում գտնվող գույքի նկատմամբ 11.12.2014 թվականին անշարժ գույքի վաճառքի պայմանագրի հիմքով 16.12.2014 թվականին Վաչագան Կյուրեղյանի սեփականության իրավունքի առկայության փաստը՝ 0,14հա հողամասի նկատմամբ, որից 0,00205հա ընդհանուր օգտագործման (ճանապարհ), իսկ շինության տակ գտնվող հողամասի 1/2 մակերեսով 0,00882հա այլ անձի գույքի հողամաս: Նշված հանգամանքի առկայության մասին փաստարկվել է նաև վերաքննիչ բողոքում՝ որպես Դատարանի կողմից թույլ տրված դատավարական նորմի խախտման հիմք, որը նույնպես անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ստորադաս դատարանները, Վաչագան Կյուրեղյանին գործին մասնակից չդարձնելով և վերջնական դատական ակտեր կայացնելով, զրկել են վերջինիս իր խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.05.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշմամբ վերականգնվել է ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի 2 խճուղի թիվ 9 հասցեում գտնվող 08-079-21-84 կադաստրային ծածկագրով գույքային միավորների նկատմամբ Արթուր Բաղդասարյանի 0.14հա հողամասի (որից 0.01969հա հանդիսանում է ընդհանուր սեփականություն) նկատմամբ սեփականության իրավունքը և 08-079-21-84 կադաստրային ծածկագրով հողամասին ամրակայված շենք շինություններին տրամադրվել է 2-րդ խճուղի թիվ 9 հասցեն (**հատոր 1-ին, գ.թ. 6**).

2) 11.12.2014 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով Արթուր Բաղդասարյանը վերագրյալ հասցեի անշարժ գույքը վաճառել է Վաչագան Կյուրեղյանին **(անշարժ գույքի վաճառքի պայմանագրի պատճենը ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից)**.

3) անշարժ գույքի վաճառքի պայմանագրից ծագող Վաչագան Կյուրեղյանի սեփականության իրավունքը 11.12.2014 թվականին ստացել է պետական գրանցում և տրվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122014-08-0028 վկայականը **(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122014-08-0028 վկայականի պատճենը ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից)**.

4) Ռուզաննա Մարգարյանի կողմից ընդդեմ Համայնքի ղեկավարի, երրորդ անձինք Արթուր Բաղդասարյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման ներկայացրած հայցի հիման վրա հարուցված վարչական գործի քննության արդյունքում Դատարանի կայացրած վճռով անվավեր է ճանաչվել ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանյաշի համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումը, այսինքն՝ նշված վճիռը շոշափել է Վաչագան Կյուրեղյանի իրավունքներն ու պարտականությունները, սակայն վերջինս Դատարանի վճիռը վերաքննության կարգով չի բողոքարկել.

5) Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել միայն գործով երրորդ անձ Արթուր Բաղդասարյանը՝ վերաքննիչ բողոքում նշելով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122014-08-0028 վկայականի համաձայն՝ Մեծ Մանյաշ, 2-րդ խճուղի թիվ 9 հասցեում գտնվող գույքի նկատմամբ 11.12.2014 թվականի անշարժ գույքի վաճառքի պայմանագրի հիմքով 16.12.2014 թվականին գրանցվել է Վաչագան Կյուրեղյանի սեփականության իրավունքը՝ 0,14հա հողամասի նկատմամբ, ուստի Դատարանի կայացրած վճռով կարող է շոշափվել Վաչագան Կյուրեղյանի իրավունքներն ու սույն գործով դատավարությանը մասնակից չդառնալով՝ վերջինս զրկվել է իր իրավունքները պաշտպանելու համար փաստեր, ապացույցներ և դիրքորոշում հայտնելու հնարավորությունից, ինչն իր հերթին կարող էր ազդեցություն ունենալ Դատարանի կողմից համապատասխան բովանդակությամբ դատական ակտ կայացնելու վրա **(հատոր 2-րդ, գ.թ. 75-78)**.

6) երրորդ անձ Արթուր Բաղդասարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը Վաչագան Կյուրեղյանը վճռաբեկության կարգով բողոքարկել է որպես դատավարությանը մասնակից չդարձված անձ:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից իր իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը բողոքարկելու իրավունքի իրացման առանձնահատկությունների վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ *աներևույթ սուկա* է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, ինչը, սակայն սույն բողոքի քննության արդյունքում չհաստատվեց ստորև ներկայացվող հիմնավորումներով:

Անդրադատնալով այն իրավական հարցին, թե ինչ կարգով դատավարությանը մասնակից չդարձված անձը կարող է իրացնել իր իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը բողոքարկելու իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատավարության մասնակիցներն են՝ երրորդ անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դատական ակտը անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև որոշակի անձանց կամ մարմինների վրա, ապա վարչական դատարանը պարտավոր է այդ անձանց (մարմիններին) ներգրավել դատավարության մեջ որպես երրորդ անձ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է դատավարությանը մասնակից չդարձված անձանց ինստիտուտին՝ այն դարձնելով գնահատման առարկա: ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ (որեն *Լատուրա Մկրտչյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ասպահովող ծառայության թիվ ՎԳ/4107/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.08.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ մի կողմից՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում սահմանել է, որ վարչական դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավել այն անձանց, որոնց իրավունքները շոշափվելու են գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, այսինքն՝ ընդունվելիք դատական ակտն անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է այդ անձանց վրա: Մյուս կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածում նախատեսելով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը՝ օրենսդիրը որպես վարչական դատարանի վերոնշյալ դատավարական պարտականության կատարման նկատմամբ վերադաս դատական ատյանի կողմից իրականացվող հսկողության միջոց սահմանել է, որ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե այն շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները (որեն *«Բուրգեր Քինգ Քորփորեյշն» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մերավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0475/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Փաստորեն, օրենսդիրը, սահմանելով, որ վարչական դատարանը պարտավոր է դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավել այն անձանց կամ մարմիններին, որոնց վրա անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է գործի քննության արդյունքում կայացված դատական ակտը, միևնույն ժամանակ սահմանել է այդ կանոնը խախտելու իրավական հետևանքը, որը դատական ակտի անվերապահ բեկանումն է:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտը շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները: Ըստ այդմ, դատավարությանը մասնակից չդարձված անձի դատական պաշտպանության իրավունքն իրացնելու նպատակով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրվել է դատական ակտի բողոքարկման հնարավորությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև նույն

օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված անձինք վերաքննիչ դատարանում օգտվում են երրորդ անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

Նույնաբովանդակ կարգավորում է նախատեսվել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձինք վճռաբեկ դատարանում օգտվում են երրորդ անձի իրավունքներից և կրում նրանց համար սահմանված պարտականությունները:

Վերոգրյալ իրավանդումների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից բողոքարկման իր իրավունքն իրացնելու յուրաքանչյուր դեպքում որոշիչ է այն հարցի պարզումը, թե որ դատարանի՝ առաջին ատյանի, թե վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտով է շոշափվում տվյալ անձի իրավունքները և պարտականությունները:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հետևյալ իրավակարգավորումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը չի կարող բողոքարկվել վճռաբեկ դատարան, եթե այն **նույն հիմքերով չի բողոքարկվել վերաքննիչ դատարանում**, քացառությամբ սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու՝ սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

Այսինքն, օրենքով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ այն դեպքում, երբ դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափվում են առաջին ատյանի դատարանի դատական ակտով, ապա տվյալ անձը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հիմքով կարող է իրացնել առաջին ատյանի դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից նշված հիմքով իրականացված բողոքի քննության արդյունքով կայացված դատական ակտն ընդհանուր կարգով բողոքարկել ՀՀ վճռաբեկ դատարան: Այլ կերպ ասած, եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից, ապա վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատարանի դատական ակտը պետք է բողոքարկի վերաքննության կարգով, քանի որ վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու պարագայում, անձն այլևս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հիմքով չի կարող բողոքարկել վերաքննիչ դատարանի դատական ակտը: Մինչև նույն ժամանակ, եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է վերաքննիչ դատարանի կողմից, ապա վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատական ակտը կարող է բողոքարկել վճռաբեկության կարգով:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծության ենթարկել հետևյալ հնարավոր իրավիճակները.

1) առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ, որը մեկ այլ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում թողնվել է անփոփոխ: Քանի որ այդ դեպքում անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից (վերաքննիչ դատարանն ընդամենն այն անփոփոխ է թողել), անձն իրավունք ունի առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքարկել վերաքննության կարգով: Իսկ այդ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան: Քննարկվող իրավիճակում առանց առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու՝ անձը չի կարող վճռաբեկության կարգով բողոքարկել վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը.

2) առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները չշոշափող դատական ակտ, որը մեկ այլ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է, և վերաքննիչ դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ: Այդ դեպքում առաջին ատյանի դատարանի ամբողջությամբ բեկանված դատական ակտն այլևս գոյություն չունի, ուստի, քննարկվող իրավիճակում անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացվել է ոչ թե առաջին ատյանի դատարանի, այլ՝ վերաքննիչ դատարանի կողմից: Նման պայմաններում դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից կարող է բողոքարկվել ոչ թե առաջին ատյանի դատարանի, այլ՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը.

3) առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավարությանը մասնակից չդարձված անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտ, որը մեկ այլ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում մասնակիորեն է բեկանվել և փոփոխվել: Այդ դեպքում դատավարությանը մասնակից չդարձված անձն իրավունք ունի վճռաբեկության կարգով բողոքարկել վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու մասով: Նկարագրված դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ենթակա է գնահատման այն հարցը, թե վերաքննիչ բողոքի քննության արդյունքում մասնակիորեն բեկանված և փոփոխված դատական ակտն ինչ ծավալով է միջամտում գործին մասնակից չդարձված անձի իրավունքներին ու պարտականություններին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից բողոքարկման իրավունքն իրացնելու յուրաքանչյուր դեպքում պետք է որոշակի լինի, թե որ ատյանի դատարանի կայացրած դատական ակտով են շոշափվում տվյալ անձի իրավունքներն ու պարտականությունները, քանի որ եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափվող դատական ակտը կայացրել է առաջին ատյանի դատարանը, ապա վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատարանի դատական ակտը կարող է բողոքարկել միայն վերաքննության կարգով, իսկ եթե անձի իրավունքներն ու պարտականությունները շոշափող դատական ակտը կայացրել է վերաքննիչ դատարանը, ապա՝ վերջինս, որպես դատավարության մասնակից չդարձված անձ, տվյալ դատական ակտը կարող է բողոքարկել վճռաբեկության կարգով:

Ըստ այդմ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը կարող է կիրառելի լինել, և այդ հիմքով դատական ակտը ենթակա կլինի անվերապահ բեկանման միայն այն պարագայում, եթե դատավարությանը մասնակից չդարձված անձի կողմից բողոքարկման իրավունքն իրացվել է վերը նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ռուզաննա Սարգսյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումը և որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Արթուր Բաղդասարյանի սեփականության իրավունքի գրանցման գրառումը Շիրակի մարզի Մեծ Մանթաշ Համայնքի 2-րդ խճուղի թիվ 9 հասցեով տնատիրության՝ տան և հողամասի նկատմամբ:

Դատարանը, հաստատելով, որ վիճարկվող որոշման ընդունմամբ թույլ է տրվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի խախտում, հայցվորը վարչական վարույթին մասնակից չի դարձվել, դրանով իսկ խախտվել է նույն օրենքի 4-րդ և 5-րդ գլուխներով նախատեսված հայցվորի բոլոր իրավունքները, նույն օրենքի 37-րդ հոդվածի համաձայն չի ապահովվել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, ինչի արդյունքում 02.11.2012 թվականի որոշումն ընդունելիս Համայնքի ղեկավարն ըստ էության վարչական վարույթ չի իրականացրել՝ քննարկում չի կատարել և հայցվորին զրկել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականատիրոջ իր իրավունքներից, բավարարել է Ռուզաննա Սարգսյանի հայցը՝ անվավեր ճանաչելով Համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումը:

Վերաքննիչ դատարանը, մասնակի վերահաստատելով Դատարանի իրավական դիրքորոշումը, փաստել է, որ Դատարանը վիճարկվող որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելիս խախտել է նաև Արթուր Բաղդասարյանի սեփականության իրավունքը, քանի որ Մեծ Մանթաշ համայնքի վիճարկվող տնամերձ հողամասն ունի երկու սեփականատեր և այդ հողամասն իր հերթին բաժանվել է 2 առանձին միավորների: Այսինքն՝ հայցվորը հանդիսանում է Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի թիվ 2 խճուղի թիվ 9 հասցեի 0,07 հա մակերեսով տնամերձ հողամասի սեփականատեր, իսկ մյուս մասի սեփականատերն է Արթուր Բաղդասարյանը: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 30.05.2016 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ Ռուզաննա Սարգսյանի հայցը բավարարել է մասնակի. Համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումն անվավեր է ճանաչվել Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի 2-րդ խճուղի թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորների 1/2 մասով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում, որպես դատավարությանը մասնակից չդարձված անձ, վճռաբեկության կարգով բողոքարկելով Վերաքննիչ դատարանի դատական ակտը, Վաչագան Կյուրեղյանը, որպես մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկա լինելու փաստարկ, պնդել է, որ Վաչագան Կյուրեղյանը մասնակից չի դարձվել դատավարությանը, ուստի Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման:

Դատավարությանը մասնակից չդարձված անձանց կողմից դատական ակտի բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վաչագան Կյուրեղյանի բողոքի հիմքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Վաչագան Կյուրեղյանը, որպես դատավարությանը մասնակից չդարձված անձ, իրավունք ունի բողոքարկելու այն դատական ակտը, որով շոշափվում են նրա իրավունքներն ու պարտականությունները: Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանի որոշումը, որպես դատավարությանը մասնակից չդարձված անձ, վճռաբեկության կարգով բողոքարկելու համար Վաչագան Կյուրեղյանը նախնառաջ պետք է հիմնավորի, որ իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտը կայացրել է հենց Վերաքննիչ դատարանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև տվյալ դեպքում բողոքաբերը վճռաբեկ բողոքով պնդել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտմամբ, քանի որ Վաչագան Կյուրեղյանը մասնակից չի դարձվել դատավարությանը, այդուհանդերձ բողոքի քննության արդյունքում նշված հիմքի առկայությունը չհաստատվեց: Մասնավորապես, սույն գործի փաստերի համաձայն՝ Համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումն ամբողջությամբ անվավեր է ճանաչվել, այսինքն՝ Վաչագան Կյուրեղյանի իրավունքներն ու

պարտականությունները շոշափվել են Դատարանի վճռով: Վերաքննիչ դատարանը գործով երրորդ անձ Արթուր Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի՝ Դատարանի 30.05.2016 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ Ռուզաննա Սարգսյանի հայցը բավարարել է մասնակի: Համայնքի ղեկավարի 02.11.2012 թվականի թիվ 42-Ա որոշումն անվավեր է ճանաչվել Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի 2-րդ խճուղի թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորների՝ Ռուզաննա Սարգսյանին պատկանող 1/2 մասով միայն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն բողոքի քննությամբ չի հաստատվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայության, այն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման *ստերետյոթ* առկա լինելու հանգամանքը, ուստի բողոքը ենթակա է մերժման:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վաչագան Կյուրեղյանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.05.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/2549/02/17	2020թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱՔԴ/2549/02/17	
Նախագահող դատավոր	Ա. Պետրոսյան	
Դատավորներ	Ա. Մկրտչյան Ա. Մխիթարյան	

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին գրավոր ընթացակարգով քննելով Աշոտ Դումանյանի իրավահաջորդ Դավիթ Դումանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Դումանյանի ընդդեմ Արամայիս, Կարեն, Էմիլ Թումանյանների և Մարինա Մարտիրոսյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Իննա Շահնազարյանի, երրորդ անձ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ Երևան քաղաքի Վարչավյան թիվ 27/1 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով Աշոտ Դումանյանի սեփականության

իրավունքը ճանաչելու, որպես հետևանք՝ նույն հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Կենտրոն նոտարական տարածքի կողմից 20.12.2007 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) կողմից 15.12.2016 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Դումանյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևան քաղաքի Վարչավայան թիվ 27/1 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, մասնակի անվավեր ճանաչել Կենտրոն նոտարական տարածքի կողմից 20.12.2007 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը նշված հասցեի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, ինչպես նաև Կադաստրի կողմից 15.12.2016 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Շահնազարյան) (այսուհետ՝ Դատարան) 03.08.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Պետրոսյան, Ա. Մկրտչյան, Ա. Մխիթարյան) 04.10.2018 թվականի որոշմամբ Աշոտ Դումանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2018 թվականի որոշմամբ Աշոտ Դումանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Դումանյանի իրավահաջորդ Դավիթ Դումանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արամայիս Թումանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածը, 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված պահանջի պայմաններում ձեռքբերման վաղեմության ուժով «սեփականության իրավունքի ճանաչում» իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, քանի որ սեփականության իրավունքը՝ որպես գույքային իրավունք, ժառանգական հիմքերով համապարփակ իրավահաջորդության կարգով անցնում է ժառանգությունն ընդունած ժառանգներին: Հետևաբար, անկախ նրանից, թե դատավարության որ փուլում էր մահացել Աշոտ Դումանյանը, քանի որ մինչ իր մահը վերջինս ներկայացրել էր վերաքննիչ բողոք, դատարանը ոչ թե պետք է բողոքի ընդունումը մերժեր, այլ պետք է կասեցներ գործի վարույթը, լուծեր դատավարական իրավահաջորդության հարցը, այնուհետև իրավահաջորդի ի հայտ գալու դեպքում նրա դիրքորոշմանը համապատասխան լուծեր վերաքննիչ բողոքի հետագա ընթացքը, այդ թվում՝ կրկին ներկայացված բողոքի ընդունելիության հարցը, մինչդեռ ժառանգությունն ընդունած լինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը հայցվորի իրավահաջորդին գրկել է վերաքննության իրավունքից:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հեղուկալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը բողոքի ընդունումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ բողոքը ներկայացրել է մահացած Աշոտ Դումանյանի ներկայացուցիչը, որը բողոք բերելու իրավունք չունի, սակայն դատավարական այդ կանոնը վերաբերում է այն դեպքերին, երբ բողոքը ներկայացրել է մի անձ, որն ընդհանրապես դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի, այսինքն՝ երբ դատական ակտը չի վերաբերում նրա իրավունքներին, օրինական շահերին ու պարտականություններին: Դա չի վերաբերում այն դեպքերին, երբ բողոք ներկայացրած ներկայացուցիչը բողոքը ստորագրելու լիազորություն չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

2.2 Վճռաբեկ բողոքի պարտախանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատական նիստի ընդհանուր կանոնները տարածվում են նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության վրա՝ հաշվի առնելով դրանց քննության համար սահմանված առանձնահատկությունները:

Նշված իրավակարգավորումից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ գլխում ամրագրված իրավակարգավորումները պարտադիր են Վերաքննիչ դատարանի համար միայն դատական նիստի ընթացքում՝ հաշվի առնելով վերաքննության համար սահմանված առանձնահատկությունները: Վերաքննիչ դատարանի լիազորությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից իրավաչափ չէր լինի գործի վարույթի կասեցումը: Քանի որ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելիս ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանը պատշաճ լիազորված անձ չի հանդիսացել, Վերաքննիչ դատարանը կայացրել է իրավաչափ որոշում, իսկ Դավիթ Դումանյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի քննարկման փուլում վերաքննիչ դատարանի գործի վարույթը կասեցնելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հեղուկալ իրավական հարցադրումներին՝

- 1) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը կայացնելու գործի վարույթը կասեցնելու մասին որոշում,
- 2) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձի ներկայացուցիչ կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով այն պարճատարանությամբ, որ բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

1) ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում քաղաքացիական գործերով դատավարության իրականացման կարգը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ 3-րդ բաժնում ամրագրված իրավանքումերով սահմանված է նաև վերաքննության կարգով դատական ակտերի բողոքարկման կարգը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում (...) վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու փուլում օրենսդիրը վերաքննիչ դատարանին օժտել է բացառապես վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու լիազորությամբ, քանի որ այդ հիմքերի բացակայությամբ է պայմանավորել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը: Հակառակ դեպքում համապատասխան հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման կամ դրա ընդունումը ենթակա է մերժման, որի պայմաններում այլևս վերաքննիչ վարույթ չի հարուցվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարությունից գործին մասնակցող անձանցից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում և այլն) դատարանը որոշում է կայացնում գործին մասնակցող անձին նրա իրավահաջորդով փոխարինելու վերաբերյալ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում:

Սույն բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ համարելով անդրադառնալ քաղաքացու մահվան հիմքով դատավարությունից այդ անձի դուրս գալու դեպքում վերջինիս նրա իրավահաջորդով փոխարինելու քաղաքացիադատավարական կարգավորումներին վերաքննիչ դատարանում գործի վարույթը կասեցնելու միջոցով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ գործին մասնակցող անձը մահացել է, և վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ գլխում (հոդվածներ 374-387) ամրագրված իրավանքումերով կարգավորված է վերաքննիչ դատարանի կողմից վարույթ ընդունված բողոքների քննության կարգը:

Նույն գլխում է ներառված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածը, որի 5-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը

կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսդրական ակտերը կարող են ունենալ ընդհանուր և հատուկ մասեր: Տվյալ դեպքում օրենսդրական ակտի ընդհանուր մասը կազմող նորմերը նախորդում են հատուկ մասը կազմող նորմերին: Ընդհանուր և հատուկ մասերում ընդգրկվում են օրենսդրական ակտի բովանդակությամբ համասեռ գլուխները, բաժինները (...):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում (...):

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ (...) Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը (...):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածն ընդգրկված է նույն օրենսգրքի՝ «Վարույթ ընդունված բողոքի քննության կարգը վերաքննիչ դատարանում» վերնագիրը կրող 54-րդ գլխում, որը մանրամասն կարգավորում է վարույթ ընդունված բողոքների քննության կարգը վերաքննիչ դատարանում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 41-րդ հոդվածների հիմքով մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն բովանդակությամբ համասեռ այլ՝ 374-387-րդ հոդվածների հետ միավորված լինելով «Վարույթ ընդունված բողոքի քննության կարգը վերաքննիչ դատարանում» վերնագիրը կրող 54-րդ գլխում, դրանում նշված գործի վարույթը կասեցնելու վերաքննիչ դատարանի լիազորությունը կարող է իրացվել քացառապես վարույթ ընդունված բողոքների քննության ժամանակ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քանի դեռ վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունվել (վերաքննիչ վարույթ չի հարուցվել) վերաքննիչ դատարանն իրավասու չէ կայացնել գործի վարույթը կասեցնելու մասին որոշում:

Ելնելով վերոշարադրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացու մահվան հետևանքով դատավարությունից այդ անձի դուրս գալու դեպքում վերջինիս նրա իրավահաջորդով փոխարինելու հիմքով պայմանավորված վերաքննիչ դատարանն օժտված չէ գործի վարույթը կասեցնելու իրավագործությամբ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը դեռևս վարույթ ընդունված չէ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվոր է հանդիսացել Աշոտ Դումանյանը:

Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանը 01.09.2018 թվականին փոստային առաքմամբ վերաքննիչ բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան:

Վերաքննիչ դատարանի 04.10.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ այն ներկայացուցչի կողմից ստորագրված չլինելու հիմքով:

Թիվ ԲԱՕ21458 մահվան վկայականի համաձայն՝ Աշոտ Դումանյանը 01.09.2018 թվականին մահացել է: Այսինքն՝ վերջինիս մահվան փաստով դադարել է նրա իրավունակությունը: Այդուհանդերձ, Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանը, շտկելով վերաքննիչ բողոքի թերությունը, 31.10.2018 թվականին փոստային առաքմամբ Աշոտ Դումանյանի անունից, կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի առնչությամբ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր կայացնելու գործի վարույթը կասեցնելու մասին որոշում:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքը ներկայացրել է այն անձը, որը **դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի**:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի վճիռների և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը սահմանված է նույն օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի, ի թիվս այլոց, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք են կողմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակությունը ճանաչվում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հավասարապես (դատավարական իրավունակություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձի ներկայացուցիչն օրենքով նախատեսված դեպքում գործին մասնակցող անձի անունից դատարանում հանդես գալու իրավունք ունեցող անձն է:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարում անդրադառնալ քաղաքացիական դատավարությունում ներկայացուցչության ինստիտուտին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարությունում ներկայացուցչության ինստիտուտը կոչված է ապահովելու գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է դատական ներկայացուցչություն իրականացնելու լայն շրջանակ՝ չսահմանափակելով դրա գործառնությունը դատավարական այս կամ այն փուլում, այս կամ այն դատական ատյանում: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները, արձանագրում է, որ գործին մասնակցող անձինք դատական ակտն իրավասու են բողոքարկել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները և համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավանորմերը, արձանագրում է, որ փաստորեն վերաքննիչ բողոք բերելու իրավունքի կրողը գործին մասնակցող անձն է, այլ ոչ նրա ներկայացուցիչը:

Ընդ որում, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն միայն քաղաքացիական և դատավարական իրավունակությամբ օժտված անձինք, հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը կարող է մերժվել հետևյալ դեպքերում.

1) վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված սուբյեկտ չհանդիսացող անձը,

2) վերաքննիչ բողոք է ներկայացվել քաղաքացիական և դատավարական իրավունակություն չունեցող անձի անունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը գործին մասնակցող անձի ներկայացուցչի նկատմամբ չի կարող կիրառվել, քանի որ վերջինս հանդիսանում է ոչ թե գործին մասնակցող անձ, այլ նրա ներկայացուցիչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելը պատճառաբանել է նրանով, որ բողոք բերած անձ Աշոտ Դումանյանը 01.09.2018 թվականին մահացել է, հետևաբար, նրա ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանի լիազորությունները դադարել են և վերջինս վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք չունի:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև իրավաչափ է Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումն այն մասին, որ Աշոտ Դումանյանի մահվան փաստով նրա ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանի լիազորությունները դադարել են, այդուհանդերձ նշված հանգամանքը տվյալ դեպքում որևէ նշանակություն չէր կարող ունենալ և հիմք հանդիսանալ ներկայացուցչի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման համար, քանի որ նշված իրավանորմը վերաբերում է գործին մասնակցող անձանց, մինչդեռ Վերաքննիչ դատարանն այն կիրառել է նրա ներկայացուցչի նկատմամբ, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավաչափ չի կարող համարվել, քանի որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի կրողը գործին մասնակցող անձն է, այլ ոչ նրա ներկայացուցիչը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի կրող կարող է հանդիսանալ քաղաքացիական և դատավարական իրավունակությամբ օժտված անձը, ուստի մահվան փաստով իրավունակությունը դադարած անձը չի կարող համարվել բողոք բերելու իրավունք ունեցող, հետևաբար, նրա անունից ներկայացված բողոքի ընդունումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ենթակա է մերժման՝ վերաքննիչ բողոքն այն ներկայացնելու իրավունք, մասնավորապես՝ դատավարական իրավունակություն չունեցող անձի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

Վերոնշյալ պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանների փաստարկները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ վճռաբեկ բողոքում նշված երկրորդ հիմքի առումով թույլ տրված դատավարական իրավունքի նորմի խախտումը չի հանգեցրել գործի սխալ լուծման: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՐԿ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Թիվ ԵԱՔԴ/2549/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի (այսուհետ՝ Պալատ) 18.12.2020 թվականի որոշման (այսուհետ՝ Որոշում) վերաբերյալ, Պալատի դատավորներ՝ Տ. Պետրոսյանս, Ս. Անտոնյանս և Էդ. Մեդրակյանս, համաձայն չլինելով սույն գործով Պալատի դատավորների մեծամասնության կայացրած Որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ մասերին համապատասխան շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված Որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Դումանյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևան քաղաքի Վարչական թիվ 27/1 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, մասնակի անվավեր ճանաչել կենտրոն նոտարական տարածքի կողմից 20.12.2007 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը նշված հասցեի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, ինչպես նաև Կադաստրի կողմից 15.12.2016 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Շահնագարյան) (այսուհետ՝ Դատարան) 03.08.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Պետրոսյան, Ա. Մկրտչյան, Ա. Մխիթարյան) 04.10.2018 թվականի որոշմամբ Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2018 թվականի որոշմամբ Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Դումանյանի իրավահաջորդ Դավիթ Դումանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արամայիս Թումանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 40-րդ հոդվածները, 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 159-րդ հոդվածի 4-րդ մասը, 363-րդ հոդվածը, 372-րդ հոդվածի 4-րդ կետը, 386-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված պահանջի պայմաններում ձեռքբերման վաղեմության ուժով «սեփականության իրավունքի ճանաչում» իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, քանի որ սեփականության իրավունքը՝ որպես գույքային իրավունք, ժառանգական հիմքերով համապարփակ իրավահաջորդության կարգով անցնում է ժառանգությունն ընդունած ժառանգներին: Հետևաբար, անկախ նրանից, թե դատավարության որ փուլում էր մահացել Աշոտ Դումանյանը, քանի որ մինչ իր մահը վերջինս ներկայացրել էր վերաքննիչ բողոք, դատարանը ոչ թե պետք է բողոքի ընդունումը մերժեր, այլ պետք է կասեցներ գործի վարույթը, լուծեր դատավարական իրավահաջորդության հարցը, այսուհետև իրավահաջորդի ի հայտ գալու դեպքում նրա դիրքորոշմանը համապատասխան լուծեր վերաքննիչ բողոքի հետագա ընթացքը, այդ թվում և՛ կրկին ներկայացված բողոքի ընդունելիության հարցը, մինչդեռ ժառանգությունն ընդունած լինելու պայմաններում հայցվորի իրավահաջորդին գրկել է վերաքննության իրավունքից:

Վերաքննիչ դատարանը բողոքի ընդունումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ բողոքը ներկայացրել է մահացած Աշոտ Դումանյանի ներկայացուցիչը, որը բողոք բերելու իրավունք չունի, սակայն դատավարական այդ կանոնը վերաբերում է այն դեպքերին, երբ բողոքը ներկայացրել է մի անձ, որն ընդհանրապես դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի, այսինքն՝ երբ դատական ակտը չի վերաբերում նրա իրավունքներին, օրինական շահերին ու պարտականություններին: Դա չի վերաբերում այն դեպքերին, երբ բողոք ներկայացրած ներկայացուցիչը բողոքը ստորագրելու լիազորություն չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

2.2 Վճռաբեկ բողոքի պարտականի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատական նիստի ընդհանուր կանոնները տարածվում են նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության վրա՝ հաշվի առնելով դրանց քննության համար սահմանված առանձնահատկությունները:

Նշված իրավակարգավորումից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ գլխում ամրագրված իրավակարգավորումները պարտադիր են Վերաքննիչ դատարանի համար միայն դատական նիստի ընթացքում՝ հաշվի առնելով վերաքննության համար սահմանված առանձնահատկությունները: Վերաքննիչ դատարանի լիազորությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից իրավաչափ չէր լինի գործի վարույթի կասեցումը: Քանի որ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելիս ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանը պատշաճ լիազորված անձ չի հանդիսացել, Վերաքննիչ դատարանը կայացրել է իրավաչափ որոշում, իսկ Դավիթ Դումանյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Սույն գործի փաստերը և հարույկ կարծիքի պարճատարանությունները

Սույն քաղաքացիական գործով հաստատված է, որ Աշոտ Դումանյանը 27.06.2017 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևան քաղաքի Վարչալյան թիվ 27/1 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, մասնակի անվավեր ճանաչել Կենտրոն նոտարական տարածքի կողմից 20.12.2007 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը նշված հասցեի տան և տնամերձ հողամասի նկատմամբ: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 03.08.2018 թվականի վճռով հայցը մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 150-172**):

Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանը 01.09.2018 թվականին փոստային առաքմամբ վերաքննիչ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան (**հատոր 3-րդ, գ.թ. 8-15**) Վերաքննիչ դատարանի 04.10.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ այն ներկայացուցչի կողմից ստորագրված չլինելու հիմքով (**հատոր 3-րդ, գ.թ. 17**):

Թիվ ԲԱ021458 մահվան վկայականի համաձայն՝ Աշոտ Դումանյանը 01.09.2018 թվականին մահացել է (**հատոր 3-րդ, գ.թ. 117**):

Երևանի քաղաքապետարանի «Շտապօգնություն» ՓԲԸ-ի տեղեկանքի համաձայն՝ Աշոտ Դումանյանի կենսաբանական մահն արձանագրվել է 01.09.2018 թվականին ժամը 20:11-ին (**ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից**):

Աշոտ Դումանյանի ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանը 31.10.2018 թվականին փոստային առաքմամբ վերաքննիչ բողոքի թերությունը շտկելուց հետո կրկին վերաքննիչ բողոք է ներկայացրել (**հատոր 3-րդ, գ.թ. 48-62**):

Պատասխանողների ներկայացուցիչ Գնել Մուղնեցյանը 29.11.2018 թվականին դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ հայտնելով, որ ՔԿԱԳ-ի կողմից 28.11.2018

թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Աշոտ Դոմանյանը մահացել է, ուստի վերջինին ներկայացուցչի լիազորությունները դադարեցված են և իրավունք չունի հանդես գալու հայցվորի անունից (**հատոր 3-րդ, գ.թ. 65-66**):

Վերաքննիչ դատարանի 03.12.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է այն հիմքով, որ վերաքննիչ բողոքը բերվել է այն անձի կողմից, ով դատական ակտը բողոքարկելու իրավունք չի ունեցել (**հատոր 3-րդ, գ.թ. 69**):

21.03.2019 թվականի թիվ 7317 սեղանամատյանում գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Աշոտ Դոմանյանի իրավահաջորդ Դավիթ Դոմանյանն ընդունել է հոր՝ Աշոտ Դոմանյանի Երևան քաղաքի Վարչալվյան փողոցի թիվ 27 հասցեում գտնող անշարժ գույքի ժառանգությունը (**հատոր 3-րդ, գ.թ. 118**):

Սույն գործով ներկայացված վճարելի բողոքի քննության և գործի լուծման կապակցությամբ Պալատն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը կայացնելու գործի վարույթը կասեցնելու մասին որոշում,*

2) *արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձի ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով այն պարճառաբանությամբ, որ բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:*

Կատարելով որոշակի իրավական վերլուծություններ, Պալատն առաջին հարցի վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի քննարկման փուլում իրավասու չէ կայացնել գործի վարույթը կասեցնելու մասին որոշում:

Պատասխանելով Որոշմամբ առաջադրված երկրորդ հարցին, Պալատը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով (վերաքննիչ դատարանը մերժում է բողոքի ընդունումը, եթե բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի) կարող է մերժվել մահացած՝ դատավարական իրավունակություն չունեցող անձի կողմից ներկայացված բողոքի ընդունումը:

Գտնում ենք, որ առաջադրված երկու հարցերի կապակցությամբ էլ մեր գործընկերները հանգել են սխալ եզրահանգումների՝ հետևյալ պատճառներով:

1) Նախ անհրաժեշտ ենք համարում նշել, որ բողոք բերած անձն իր բողոքի հիմքում առաջին հերթին դրել է Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի խախտումը: Սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ սվյալ դեպքում իրավահաջորդության հարցի լուծման անհրաժեշտությունն ունի էական, որոշիչ նշանակություն, քանի որ դրանով են կանխորոշվում Պալատի Որոշմամբ առաջադրված մյուս երկու հարցերի պատասխանները:

Մեր կարծիքով, սույն գործի լուծման համար կարևորագույն հարցն այն է, թե դատավարության որևէ փուլում գործին մասնակցող անձի՝ գործից դուրս գալու, մասնավորապես՝ քաղաքացու մահվան դեպքում արդյո՞ք դատարանը պարտավոր է նրան փոխարինել իրավահաջորդով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարությունից գործին մասնակցող անձանցից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում և այլն) դատարանը որոշում է կայացնում գործին մասնակցող անձին նրա իրավահաջորդով փոխարինելու վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում:

Նշված հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դատավարությունից գործին մասնակցող անձանցից մեկի դուրս գալու, մասնավորապես՝ քաղաքացու մահվան դեպքում, դատարանը պարտավոր է որոշում կայացնել նրան իրավահաջորդով

փոխարինելու վերաբերյալ: Այս հետևությունը հիմնավորվում է օրենքի հստակ շարադրանքով, որի համաձայն դատարանի կողմից նման որոշման կայացումը թողնված չէ դատարանի հայեցողությանը («որոշում է կայացնում»):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե գործին մասնակցող անձը մահացել է, և վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

Դատարանի համար իրավահաջորդության և գործի վարույթի կասեցման իմպերատիվ պայմաններ սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել պաշտպանել գործին մասնակցող անձի արդար դատաքննության իրավունքը այն դեպքում, երբ վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն և դատավարության որևէ փուլում գործին մասնակցող անձը մահանում է: Ընդ որում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում, իսկ նույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նման դեպքում գործի վարույթի կասեցումը նախատեսել է իբրև դատարանի պարտականություն: Ինչ վերաբերում է նրան, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասը վերաքննիչ դատարանի համար սահմանել է գործի վարույթը կասեցնելու հայեցողական լիազորություն, ապա տվյալ դեպքում կիրառելի են դատարանի հայեցողական լիազորություններն իրականացնելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, այն է՝ դատարանն իր հայեցողական լիազորությունները պետք է իրականացնի այնպես, որպեսզի ապահովի կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ (*տե՛ս ՀՀ Ֆինանսների նախարարության Ընտրվածի հարկային տեսչության ընդհանր աճ Գուրգեն, Տիգրան, Արմեն Այվազյանների, Իրինա Ազոյանի թիվ ԵՇՊ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքի կանոններով, իսկ նույն օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Նշված նորմերի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ժառանգատուի գույքի հետ միասին նրա գույքային իրավունքները և պարտականությունները ևս համապարփակ իրավահաջորդության կարգով անցնում են ժառանգությունն ընդունած ժառանգներին: Եթե ժառանգատուն մինչ իր մահը դատարան դիմելով հավակնել է սեփականության իրավունք ձեռք բերել որևէ գույքի սկստամամբ, այսինքն՝ ձեռնամուխ է եղել իր գույքային իրավունքների պաշտպանությանը՝ դրանց շուրջ վեճի առթիվ քաղաքացիական գործ հարուցելով, ապա դրանից հետո նրա մահվան դեպքում նրա գույքային իրավունքների պաշտպանությունը գործի վարույթի ցանկացած պահի, այդ թվում և գործի վերաքննիչ վարույթում, կարող է իրականացվել միայն դատավարական իրավահաջորդության միջոցով: Իր հերթին դատավարական իրավահաջորդությունը կարող է ապահովվել միայն գործի վարույթի կասեցման միջոցով, քանի որ տվյալ հիմքով գործի վարույթը ենթակա է կասեցման՝ մինչև ժառանգի կողմից ժառանգության ընդունումը. դրանից հետո ժառանգի համապատասխան կամքի դրսևորման պայմաններում գործի վարույթը պետք է շարունակվի: Այսպիսով, գործի վարույթի կասեցումն ածանցյալ է իրավահաջորդության հարցից, քանի որ կատարվում է իրավահաջորդության հարցը լուծելու նպատակով:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին

մասի 4-րդ կետի հիմքով, պատճառաբանելով, որ բողոք բերած անձ Աշոտ Դումանյանը 01.09.2018 թվականին մահացել է, հետևաբար, նրա ներկայացուցիչ Հովհաննես Չամսարյանի լիազորությունները դադարել են և վերջինս վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք չունի:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները, գտնում ենք, որ դրանք անհիմն են, քանի որ Աշոտ Դումանյանի մահվան վերաբերյալ հավաստի տեղեկություն ստանալով, Վերաքննիչ դատարանն առաջին հերթին պետք է պարզեր այն հարցը, թե արդյոք վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն: Քանի որ ժառանգատուի մահվան դեպքում մահացածի գույքը, այդ թվում և գույքային իրավունքները, համապարփակ իրավահաջորդության կարգով անցնում են ժառանգությունն ընդունած ժառանգներին, ուստի տվյալ դեպքում վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կասեցնել գործի վարույթը և լուծել դատավարական իրավահաջորդության հարցը: Ընդ որում, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունված կամ չընդունված լինելը որևէ կերպ չէր կարող ազդել Վերաքննիչ դատարանի նշված պարտականության կատարման վրա, քանի որ **օրենսդիրը սահմանել է ոչ թե վերաքննիչ բողոքի, այլ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը, իսկ գործին մասնակցող անձի մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելը պետք է կատարվի դատավարության ցանկացած փուլում, այդ թվում և վերաքննիչ դատարանում, եթե դատավարության տվյալ փուլում բերված բողոքի հիման վրա քաղաքացիական գործը գտնվում է Վերաքննիչ դատարանում:**

Գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանի նշված պարտականությունը կատարելու խոչընդոտ չի կարող հանդիսանալ այն հանգամանքը, որ գործի վարույթը կասեցնելու Վերաքննիչ դատարանի լիազորությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «վարույթ ընդունված բողոքի քննության կարգը վերաքննիչ դատարանում» վերնագիրը կրող 54-րդ գլխի 380-րդ հոդվածում, քանի որ անտրամաբանական կլիներ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «ընդհանուր դրույթներ» բաժնում ունենալով իրավահաջորդության, իսկ «վարույթն առաջին ատյանի դատարանում» բաժնում՝ գործի վարույթի կասեցման վերաբերյալ ընդհանուր իրավակարգավորումներ, օրենսդիրը յուրաքանչյուր ատյանի դատարանի համար այդ լիազորությունները սահմանելը դատավարության յուրաքանչյուր փուլի կամ ենթափուլի համար առանձին-առանձին:

Բացի այդ, բողոք ներկայացնելուց հետո գործին մասնակցող անձի մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելու պայմանների առկայության դեպքում, եթե առաջնորդվենք Պալատի տրամաբանությամբ, բողոքը դեռևս վարույթ ընդունված չլինելու պատճառով գոյություն չի ունենա մի ատյանի դատարան, որը պետք է կատարի օրենսդրի իմպերատիվ պահանջները, մինչդեռ գործին մասնակցող քաղաքացու մահվան դեպքում, ինչպես վերը նշվեց, նրան իրավահաջորդով փոխարինելը պետք է կատարվի դատավարության ցանկացած փուլում: Այն թեզից, որ վերաքննիչ դատարանն իրավասու չէ կայացնել գործի վարույթը կասեցնելու մասին որոշում, քանի դեռ վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունվել, անխուսափելիորեն բխում է այն հետևությանը, որ անձի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու պահից սկսած մինչև բողոքը վերաքննիչ դատարանի կողմից վարույթ ընդունելու ժամանակահատվածը դուրս է քաղաքացիական դատավարության ոլորտից և դատավարության որևէ փուլ չի հանդիսանում, ինչը բնականաբար այդպես չէ:

Ընդ որում, Որոշման նման եզրահանգումը կատարվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը վկայակոչելով՝ անտեսելով, որ ըստ վկայակոչված նորմի առաջին նախադասության՝ «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը...»:

Մեր կարծիքով պատասխանելու համար այն հարցին, թե արդյո՞ք Վերաքննիչ դատարանն իրավասու էր գործին մասնակցող անձի մահվան դեպքում կասեցնելու գործի

վարույթը մինչև բողոքը վարույթ ընդունելը, Պալատը պետք է առաջնորդվեր ոչ թե օրենքի մեկ հոդվածի տառացի մեկնաբանությամբ, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ, 157-րդ, 372-րդ, 380-րդ հոդվածներով սահմանված նորմերի համակարգային և նպատակաբանական մեկնաբանությամբ՝ հաշվի առնելով ինչպես օրենսդրի նպատակը, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի հետևյալ իրավական դիրքորոշումները:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*լեւն Դումիտրու Գեորգիե v. Romania* (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28):

25.11.2008 թվականի թիվ ՄԴՈ-780 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՄԴՈ-1037 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, [2005 թվականի փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության

առումով (*յրեն՝ Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադրով ՄԻԵԴ 28.05.1985 թվականի վճիռը, կերպ 57*):

Վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը **բողոքարկման իրավունքն է**: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրեն՝ «Ֆասթ Սիբլայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կուրիորտի թիվ ՎԳՅ/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

Մինչդեռ Պալանտն իր Որոշմամբ չանդրադառնալով իրավահաջորդության հարցին և դրանից կտրված մեկնաբանելով դատավարության որոշակի փուլում գործի վարույթի կասեցման հնարավորության հարցը, նշված հարցերը կարգավորող նորմերին տվել է չափազանց ձևական (ֆորմալ) մեկնաբանություն, որպիսի պայմաններում այդ նորմերը կդադարեն ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակին և անձանց կյանքընդոտն հասնել իրավասու դատարանի կողմից իրենց գործի ըստ էության քննությանը, մասնավորապես՝ մահացած անձի իրավահաջորդին գրկելով վերաքննության իրավունքից:

2) Ինչ վերաբերում է Որոշմամբ առաջադրված երկրորդ հարցի պատասխանին, ապա դրա հետևս համաձայն չենք, քանի որ արձանագրելով, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի կրողը գործին մասնակցող անձն է, այլ ոչ նրա ներկայացուցիչը, հետևություն է արվել, որ վերաքննիչ բողոքը ներկայացնելու իրավունք չունեցող անձի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ կարող է մերժվել իրավունակություն չունեցող (մահացած) անձի ներկայացրած բողոքի ընդունումը:

Նախ արձանագրում ենք, որ իրավունակությունը կորցրած անձը, այն է՝ մահացած անձը, չի կարող վերաքննիչ բողոք ներկայացնել, որ դրա ընդունումն էլ մերժվի կամ չմերժվի որևէ հիմքով, իսկ եթե նա բողոք ներկայացնելու կամք է դրսևորել մինչև իրավունակությունը կորցնելը, այդ թվում և ներկայացուցչի միջոցով, ապա պետք է պարզվի այն հարցը, թե բողոքը ներկայացնելիս (այդ թվում՝ ներկայացուցչի կողմից ներկայացնելիս), քաղաքացին արդյոք օժտված է եղել իրավունակությամբ: Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորմանը համապատասխան վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և սահմանված ժամկետում կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Հետևաբար սույն գործով էական է այն հանգամանքը, որ առաջին անգամ վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահին բողոք բերած անձի իրավունակությունը դադարած չի եղել, իսկ բողոքի թերություններն ուղղելու, ինչպես նաև բողոքը պնդելու հնարավորությունը պետք է ընձեռվի բողոք բերած անձի իրավահաջորդին: Նշվածը լիովին համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային:

Եթե կրկին ներկայացված բողոքը դիտվում է որպես մահացած անձի ներկայացրած բողոք, ապա դատարանը զրկված է իր որոշմամբ այդ անձին նրա բերած բողոքի ընդունումը մերժելու մասին հայտնելու հնարավորությունից, ինչից հետևում է, որ Դատարանն իր կայացրած որոշման մասին կարող է իրազեկել կամ մահացած անձի իրավահաջորդին, կամ էլ բողոք ներկայացրած անձի ներկայացուցչին, եթե վերջինիս լիազորությունները չեն դադարել: Մակայն, քանի որ անձի մահվամբ ներկայացուցչի լիազորությունները դադարում են, ուստի անխուսափելի է դառնում իրավահաջորդության հարցի լուծումը և իրավահաջորդին հարցի լուծման մասին իրազեկումը: Դա համահունչ է Որոշմամբ արտահայտված այն մտքին, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի կրողը գործին մասնակցող անձն է, այլ ոչ նրա ներկայացուցիչը: Այլ խոսքով՝ եթե առկա է իրավահաջորդության կարգով փոխանցման ենթակա իրավունք, ապա

քաղաքացիական գործ հարուցված լինելու պայմաններում այն դատավարության որևէ փուլում չի կարող կորչել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի շարադրանքը հետևյալն է. «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ բողոքը ներկայացրել է **այն անձը, որը...**»: Նշված շարադրանքից հետևում է, որ այդ հիմքով բողոքի ընդունումը կարող է մերժվել, եթե այն ներկայացրել է **անձը**, այսինքն՝ բողոք ներկայացնողը որպես անձ գոյություն ունի, օժտված է իրավունակությամբ, սակայն այս կամ այն պատճառով տվյալ դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի: Հնարավոր չէ բողոքը համարել անձի ներկայացրած բողոք և միաժամանակ դրա ընդունումը մերժել այն հիմքով, որ բողոք ներկայացնողն անձ չէ, մինչդեռ Որոշմամբ դա համարվել է տրամաբանական: Ըստ Որոշման բնականոն է, եթե բողոքը ներկայացնի մահացած անձի ներկայացուցիչը, սակայն Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ պատասխանի մահացած անձին: Հատկանշական է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն իր որոշումը մահացած անձին չի ուղարկել և չէր կարող ուղարկել, այլ ուղարկել է այլևս լիազորություն չունեցող «ներկայացուցչին», այսինքն՝ Վերաքննիչ դատարանը բողոք ներկայացնելու իրավունքը կրող որևէ անձի իր որոշման մասին չի հայտնել. նրա ասելիքը վերաբերել է միայն «ներկայացուցչին» կամ նրա լիազորություններին, իսկ ներկայացուցչի նկատմամբ ինչպես իրավացիորեն արձանագրվել է Որոշմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը չի կարող կիրառվել: Ընդ որում, սույն անհեթեթ վիճակն առաջացել է այն բանի հետևանքով, որ իրավահաջորդության և Որոշմամբ առաջադրված գործի վարույթ կասեցման հնարավորության հարցերը Վերաքննիչ դատարանի կողմից սխալ են լուծվել, իսկ Պալատն էլ իր Որոշմամբ հավանություն է տվել այդ լուծմանը:

Կատարված վերլուծությունների արդյունքում գտնում ենք, որ հիմնավոր է նաև բողոքի այն հիմքը, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է դատավարական սխալ հիմքով:

Այսպիսով, գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը տվյալ դեպքում պարտավոր էր կասեցնել գործի վարույթը և լուծել դատավարական իրավահաջորդության հարցը, որից հետո միայն կարող էր անդրադառնալ վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցին, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներին հակառակ նշված դատավարական գործողությունները չկատարելով՝ վերաքննիչ բողոք ներկայացրած անձի իրավահաջորդ Դավիթ Դումանյանին գրկել է գործի վերաքննության փուլում իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունից:

Վճռաբեկ բողոքի դեմ Արամայիս Թումանյանի կողմից վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար էր՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Տ. Պետրոսյան
Ս. Անտոնյան
Է. Մեղրակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2174/02/15
Քաղաքացիական գործ թիվ	ԵԿԴ/2174/02/15
Նախագահող դատավոր՝	Ն. Կարապետյան
Դատավորներ՝	Ա. Մխիթարյան Ն. Մարգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Դվին Գոմցյանի (այսուհետ՝ Հայցվոր), ընդդեմ «Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի իրավահաջորդ «Արարատբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), երրորդ անձինք «Լևոն Ամիրխանյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արման Մարգարյանի, «Նոր-Նորք» նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանի՝ Ընկերության և «Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի միջև 27.06.2014 թվականին կնքված հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման պայմանագիրն անվավեր ճանաչելու, քաղաք Երևան, Սայաթ-Նովա 40-րդ շենք թիվ 67 բնակարանի նկատմամբ Դվին Գոմցյանի սեփականության իրավունքը ճանաչելու և որպես առոչինչ գործարքի անվավերության հետևանք՝ «Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի և Ընկերության միջև 22.04.2011 թվականին կնքված թիվ 158-12/2010 հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2019 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ Բանկի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Դվին Գոմցյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության և «Ջարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի միջև 27.06.2014 թվականին կնքված հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման պայմանագիրը, ճանաչել Դվին Գոմցյանի սեփականության իրավունքը քաղաք Երևան, Մայաթ-Նովա 40-րդ շենք թիվ 67 բնակարանի նկատմամբ և որպես առոչինչ գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել «Ջարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի և Ընկերության միջև 22.04.2011 թվականին կնքված թիվ 158-12/2010 հիփոթեքի պայմանագիրը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Ջարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

Դատարանի 25.04.2019 թվականի վճռի դեմ Հայցվորը 27.05.2019 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2019 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.11.2019 թվականի որոշմամբ նշանակվել է հաշտարարություն:

19.12.2019 թվականի դատական նիստի ընթացքում գործին մասնակցող անձանց ներկայացուցիչները հայտնել են, որ հաշտարարության ընթացքում կողմերը հաշտության համաձայնություն չեն կնքել:

Վերաքննիչ դատարանի 23.12.2019 թվականի որոշմամբ Դվին Գոմցյանի ներկայացուցիչ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, և քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Դվին Գոմցյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 157-րդ և 379-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բողոքի քննության ընթացքում գործի վարույթը կարող է կասեցվել միայն բողոքի հիմքում ընկած փաստերին առնչվող հիմքերի առկայության դեպքում: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կասեցնել գործի վարույթը միայն այն դեպքում, երբ կհիմնավորվեր սույն քաղաքացիական գործի քննության անհնարինությունը՝ պայմանավորված ՀՀ քննչական կոմիտեի վարույթում գտնվող թիվ 46101215 քրեական գործի քննությամբ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ սույն քաղաքացիական գործի քննությունն անհնարին է մինչև քրեական դատավարության կարգով քննվող գործով եզրափակիչ ակտ կայացնելը, քանի որ քրեական գործով կարող են հաստատվել այնպիսի հանգամանքներ, որոնք նահադատելի նշանակություն կարող են ունենալ սույն գործով պարզման ենթակա հանգամանքների վերաբերյալ, հիմնավոր չէ: Մասնավորապես, նշված քրեական գործի շրջանակներում անգամ պարտապանի տնօրենին մեղազգրվող հանցանքը հաստատվելու դեպքում, հայցվորը, տվյալ գործով ունենալով տուժողի կարգավիճակ, իրավունք կստանա քաղաքացիական հայց ներկայացնելու միջոցով վերականգնել իր խախտված իրավունքները: Միաժամանակ, եթե քրեական գործով պետք է հաստատվի խարդախության միջոցով գույքը հափշտակելը, ապա գույք որպես այդպիսին կարող է լինել միայն դրամը, այլ ոչ թե՛ անշարժ գույքը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից

նշված «օրինական սպասելիք» եզրույթը կվերաբերի ոչ թե բնակարանին, այլ դրամական միջոցներին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից չի հիմնավորվել, թե քրեական գործի շրջանակներում հանցագործության օբյեկտիվ կողմը կատարած լինելու հանգամանքը հաստատվելու դեպքում սույն քաղաքացիական գործով հայցվորի կողմից վկայակոչված որ փաստի հաստատման համար այն կունենա նախադատելի նշանակություն: Ուստի Դատարանի կողմից չի հիմնավորվել սույն քաղաքացիական գործի քննության անհնարինությունը՝ պայմանավորված ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 46101215 քրեական գործով: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե սույն քաղաքացիական գործով ո՞ր փաստը կամ իրավահարաբերությունը հնարավոր չէ հաստատել սույն քաղաքացիական գործով և այն հնարավոր է միայն քրեական գործի քննության միջոցով հաստատել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/2174/02/15 քաղաքացիական գործով 23.12.2019 թվականի կայացրած որոշումը և այն փոփոխել՝ Դվին Գունցյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի կողմից ներկայացված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պարտավանդի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն ուներ բոլոր հիմքերը սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու համար, իսկ բողոքաբերի պնդումներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե սույն քաղաքացիական գործով որ փաստը կամ իրավահարաբերությունը հնարավոր չէ հաստատել սույն քաղաքացիական գործով, և այն հնարավոր է հաստատել միայն քրեական գործի քննության միջոցով, իրավաչափ չէ, քանի որ Վերաքննիչ դատարանը չի հանդիսանում մասնագիտացված դատարան քրեական իրավահարաբերություններում և չի կարող նախապես պարզել և նշել այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել քրեական գործի շրջանակներում և էական նշանակություն ունենալ սույն գործի լուծման համար, մինչդեռ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից ևս, դեռևս առաջին ատյանի դատարանում միջնորդություն է ներկայացվել սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, ուստի և Վերաքննիչ դատարանն ուներ բոլոր հիմնավոր կասկածները սույն գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման արդյունքում առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը: Գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Համանման բովանդակության ունեցող դրույթ բովանդակում էր նաև 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը

կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մի շարք որոշումներում անդրադարձել է նշված իրավադրույթի մեկնաբանությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ [17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, դրանք են՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում*(լրեն Գայանե Ապանյանն ընդդեմ Սահակ, Կարեն, Տարևիկ, Թամարա Ապանյանների և Մարիամ Սրեպիանյանի թիվ ԵԱԲԴ/0169/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի վարույթի կասեցման հիմքը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է *(լրեն Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը):*

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնել գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը *(լրեն Վերա Ազիզյանն ընդդեմ Նունե Սարգսյանի թիվ ԵԱԴԴ/0452/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.01.2010 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ և 380-րդ հոդվածներով ամրագրված դրույթների համադրված վերլուծության արդյունքում գտնում է, որ և՛ առաջին ատյանի դատարանում, և՛ վերաքննիչ դատարանում գործի վարույթի կասեցումն օժտված է որոշակի առանձնահատկությամբ: Նշված առանձնահատկությունը հանգում է նրան, որ առաջին ատյանի դատարանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածում ամրագրված են՝ գործի վարույթը կասեցնելու պարտադիր և հայեցողական հիմքեր, որոնց առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը կամ պարտավոր է կասեցնել գործի վարույթը, կամ իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, մինչդեռ նույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է **«կարող է կասեցնել գործի վարույթը»** ձևակերպումը, ինչը ենթադրում է, որ վերաքննիչ

դատարանը գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում օժտված է հայտնաբերողական լիազորությամբ և տվյալ գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում վերաքննիչ դատարանն է որոշում, թե արդյո՞ք վերաքննիչ վարույթում ի հայտ եկած տվյալ հանգամանքը խոչընդոտում է վերաքննիչ բողոքի քննության հետագա ընթացքին, թե՛ ոչ: Նման իրավակարգավորումը թույլ է տալիս վերաքննիչ դատարանին ստուգել և գնահատել կոնկրետ գործի հանգամանքների համակցությունը՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կասեցման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը լուծելիս:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարույթը կասեցնելու հարցը լուծելիս պետք է առաջնորդվել մի կողմից գործի վարույթի կասեցման ինստիտուտի կիրառմամբ հետապնդվող վերոնշյալ իրավաչափ նպատակի և մյուս կողմից դատավարության մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջև ողջամիտ համաչափություն սպահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ գործի վարույթի կասեցման հանգամանքը կարող է խոչընդոտել գործին մասնակցող շահագրգիռ անձանց իրավունքների իրացմանը, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կողմից 30.01.2018 թվականին հարուցված թիվ 46101215 քրեական գործով Դվին Գումջյանը ճանաչվել է տուժող: Նախաքննությամբ պարզվել էր, որ Դվին Գումջյանը ք. Երևան, Սայաթ-Նովա 40-րդ շենքում կառուցվող բազմաբնակարան շենքից բնակարան ձեռք բերելու ակնկալիքով Ընկերությանը վճարել է 41.483.900 ՀՀ դրամին համարժեք 120.000 ԱՄՆ դոլար, սակայն հետագայում նշված բնակարանը նրան չի տրամադրվել և խարդախությանը հափշտակվել է վճարած գումարը՝ Դվին Գումջյանին պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս (**հատոր 8-րդ, գ.թ. 128-130**):

Վերաքննիչ դատարանում վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Դվին Գումջյանի ներկայացուցիչը միջնորդել է կասեցնել սույն քաղաքացիական գործի վարույթը մինչև ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կողմից 30.01.2018 թվականին հարուցված քրեական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, բավարարելով Դվին Գումջյանի ներկայացուցչի միջնորդությունը, որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ քաղաքացիական գործի քննությունն անհնարին է մինչև քրեական դատավարության կարգով քննվող գործով եզրափակիչ ակտ կայացնելը, քանի որ քրեական գործով կարող են հաստատվել այնպիսի հանգամանքներ, որոնք նախադատելի նշանակություն կարող են ունենալ սույն գործով պարզման ենթակա հանգամանքների համար: Մասնավորապես՝ քրեական գործը հարուցված է նաև խարդախության հանցակազմի հատկանիշներով, այն է՝ խարբեության կամ վատահոյությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը: Այլ կերպ ասած՝ հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հենց գույքը հափշտակելով: Իսկ սույն գործի շրջանակներում, ի թիվս այլնի, պետք է հաստատվի այն հանգամանքը, որ Դվին Գումջյանը՝ որպես հայցվոր, կարող է սույն գործով «օրինական սպասելիք» ունենալ վիճելի անշարժ գույքի նկատմամբ: Վերաքննիչ դատարանի համոզմամբ, եթե քրեական գործի շրջանակում հաստատվի հանցագործության օբյեկտիվ կողմը կատարած լինելու հանգամանքը, այն սույն գործի շրջանակում վկայակոչված փաստի հաստատման համար կունենա նախադատելի նշանակություն, ինչ էլ կազդի գործի ելքի վրա: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը ելել է այն եզրահանգման, որ սույն քաղաքացիական գործի քննությունն անհնարին է մինչև թիվ 46101215 քրեական գործով դատական ակտ կայացնելը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորը, ի հիմնավորումն ներկայացված հայցապահանջի, վկայակոչել է փաստարկ առ այն, որ իր մայրը՝ Սահականուշ Զաքարյանը, կատարել է վիճելի անշարժ գույքի ձեռքբերման ծախս, ինչպես նաև

նշել է, որ որպես իր մոր ժառանգություն՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքները փոխանցվել են իրեն, ապա նաև հավելել է, որ անշարժ գույքի շուկայական արժեքն իր կողմից կատարված բարեկարգումների արդյունքում անհամեմատ աճել է, ինքը կատարել է վիճելի հասցեի կոմունալ սպասարկումների վճարումներ, և առանց իր համաձայնության վեճի առարկա գույքը չէր կարող գրավադրվել և օտարվել:

Հայցվորի կողմից վկայակոչվածի հիմնավորումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է հիմնավորվի, որ՝

- *վիճելի անշարժ գույքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ծագել է հայցվորի մոր՝ Սահակյանուշ Զաքարյանի սեփականության կամ այլ գույքային իրավունքը և որպես ժառանգության զանգվածի գույք՝ այն փոխանցվել է հայցվորին,*

- *վիճելի անշարժ գույքը գրավադրման պահին ծանրաբեռնված է եղել այլ անձի՝ հայցվորի գույքային իրավունքով, և առանց վերջինիս համաձայնության՝ այն չէր կարող գրավ դրվել կամ այլ կերպ օրարվել:*

Վերոգրյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նշված հանգամանքները որևէ կերպ չեն կարող անհնարին դարձնել սույն քաղաքացիական գործի քննությունը, իսկ սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող վերը նշված փաստերը կարող են հաստատվել նաև սույն գործի քննության շրջանակներում և թիվ 46101215 քրեական գործով չի կարող հաստատվել այնպիսի իրավահարաբերություն կամ փաստ, որը չի կարող հաստատվել սույն գործի շրջանակներում: Այսինքն՝ թիվ 46101215 քրեական գործի քննությունը չի կարող հանգեցնել սույն քաղաքացիական գործի քննության անհնարինության:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները բավարար չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու համար:

Վերը նշված պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու լիազորությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 23.12.2019 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2019 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ՇԴՎ/0273/02/18 2020թ.
Քաղաքացիական գործ թիվ	ՇԴՎ/0273/02/18	
Նախագահող դատավոր՝	Ա. Պետրոսյան	
Դատավորներ՝	Դ. Սերոբյան Լ. Գրիգորյան	

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող և զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Մ. ԴՐՄԵՅԱՆ
	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
	Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
	Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հունիսի 29-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Ռազմիկ Մեդոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.11.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Բանկի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ռազմիկ Մեդոյանից հոգուտ իրեն բռնագանձել 1.058.921 ՀՀ դրամ՝ որպես վարկի ընդհանուր պարտքի և նախապես վճարված պետական տուրքի գումարներ, ինչպես նաև սկսած 01.02.2018 թվականից մինչև պարտավորության ամբողջական մարման օրը վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի՝ 1.030.370 ՀՀ դրամ գումարի վրա հաշվարկել և բռնագանձել

վարկային պայմանագրի 6.6. կետով նախատեսված օրական 0,4% տոկոսադրույքով հաշվարկված տուժանքի գումարը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչատրյան) 27.06.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է՝ Ռազմիկ Մեղոյանից հօգուտ Բանկի բռնագանձել 1.058.921 ՀՀ դրամ, որից 987.000 ՀՀ դրամ՝ որպես վարկի գումար, 43.371 ՀՀ դրամ՝ որպես կուտակված տոկոսագումար, 16.708 ՀՀ դրամ՝ որպես տուժանք, 11.842 ՀՀ դրամ՝ որպես սպասարկման վճար, ինչպես նաև 21.178 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից կատարված դատական ծախսի՝ նախապես վճարված պետական տուրքի գումար: Սկսած 01.02.2018 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ներառյալ վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի՝ 1.030.371 ՀՀ դրամի չվճարված մասի նկատմամբ հաշվարկել տույժ՝ օրական 0,4%-ի չափով և այն նույնպես բռնագանձել Ռազմիկ Մեղոյանից հօգուտ Բանկի:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է հարգելի համարել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը և վերականգնել այն՝ տրամադրելով կատարողական թերթ:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 04.10.2019 թվականի որոշմամբ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու, ինչպես նաև կատարողական թերթ տրամադրելու մասին Բանկի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.11.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետը՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, սիսալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, «Պետական րուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության առնչությամբ կայացված դատական ակտը բողոքարկելիս բողոք բերող անձը պարտավոր է վճարել պետական տուրք, չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ մասի կարգավորումներից և հետևանք է նշված իրավանորմների սիսալ մեկնաբանման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված որոշ որոշումների բողոքարկման դեպքում, որոնցից է նաև կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելը մերժելու մասին դատարանի որոշումը, պետական տուրք վճարելու պարտականություն սահմանված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 18.11.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ

առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք կարարողական թերթը կարարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու համար բողոք ներկայացնող անձը կրում է պետական փոքր վճարելու պարականություն:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լսված լինելու իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*լրեն Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Ժաննա Տերյանի թիվ ԵԱԿԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն Սուսաննա Արարարի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի

Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի «ա», «բ» և «գ» կետերի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ... պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է՝

ա) դրամական պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով,

բ) ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով,

գ) հատուկ վարույթների գործերով՝ բազային տուրքի ութապատիկի չափով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանել է պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը: Մասնավորապես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սպառիչ ամրագրվել են ինչպես դատարան դիմելու համար պետական տուրքի գանձման օբյեկտները, այնպես էլ՝ գանձվող պետական տուրքի դրույքաչափերը: Ընդ որում օրենսդիրը վերը նշվածը սահմանելիս որոշակի տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ ներկայացված հայցապահանջի տեսակը, քննվող գործով վարույթի տեսակը, բողոքարկման ենթակա ակտը և դրա բողոքարկման ծավալը: Այլ կերպ ասած՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ վարույթի կարգով է քննվում տվյալ գործը՝ տարբերակվել են հայցային և հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափերը: Տարբերակված մոտեցում է ցուցաբերվել նաև հայցային վարույթի կարգով քննվող գործերի դեպքում դրամական և ոչ դրամական պահանջների համար (*տես նաև Սևակ Արզարունին ընդդեմ Նարեգ և Սարո Հարթունյանների թիվ ԵԿԴ/2711/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դադարանի 07.06.2019 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ իրավական գնահատական տալով պետական տուրքի գանձման օբյեկտներին, արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը պետական տուրքի գանձման օբյեկտ, այսինքն՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողություն է դիտարկում, մասնավորապես, դատարան տրվող հայցադիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննությունը: Այդ իսկ նկատառումով ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույքային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար, այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ *ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ*, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի

միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը (տե՛ս «Ռեքվիզիտ» ՄՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՄՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը):

Անդրադառնալով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան ներկայացվող դիմումների և դրանց կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված բողոքների համար պետական տուրքի գանձման հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտեր են՝ (...) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքով կայացված որոշումը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները դիտարկել է որպես եզրափակիչ դատական ակտեր, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանել է նաև վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման կարգը և պայմանները: Ըստ այդմ էլ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածը, ի թիվս այլ պայմանների, սահմանել է նաև վերաքննիչ բողոքին պետական տուրքը վճարված լինելու մասին ապացույց կցելու բողոք բերող անձի պարտականությունը: Այդուհանդերձ, նշված պարտականության կատարումն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ բողոք բերող անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև նկատի ունենալով, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու դիմում ներկայացնելու և հարգելի պատճառների առկայության դեպքում այդ ժամկետը վերականգնելու օրենսդրական կառուցակարգի սահմանման նպատակը վերջնական դատական ակտի կատարման ապահովումն է, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է՝ դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա:

Սույն գործով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու դիմումը ներկայացնելու՝ 07.08.2019 թվականի դրությամբ գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթ

ստանալու համար դիմում ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջատերը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը ներկայացնում է կատարողական թերթ տալու իրավասություն ունեցող դատարան՝ կցելով դիմումը պարտապանին ուղարկելու մասին ապացույց: Նույն մասով սահմանված պահանջը չպահպանելու դեպքում ներկայացված դիմումը չի քննարկվում, որի մասին դիմումը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը դիմումը քննում է առանց դատական նիստ հրավիրելու՝ դիմումն ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում: Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում, իսկ 4-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ կատարողական թերթի տրամադրումը կոչված է կատարողական վարույթի միջոցով ապահովելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման գործընթացը, ինչն իր հերթին հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի, դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որ անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (յրեն Բուրդուվն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40):

Ըստ այդմ էլ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը սահմանել է հատուկ ընթացակարգ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան տրվող դիմումների համար: Մասնավորապես՝ պայմանավորված այդ դիմումների քննության առանձնահատկությամբ՝ տվյալ դիմումի քննության համար օրենսդիրը սահմանել է առավել սեղմ ժամկետ՝ 10 օր, դիմումը ստանալու օրվանից՝ միաժամանակ իրավունք վերապահելով գործին մասնակցող անձանց բողոքարկելու տվյալ գործերով կայացված դատական ակտը (տվյալ դեպքում՝ դատարանի որոշումը): ՀՀ վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ վերը նշված վարույթն անմիջականորեն ուղղված չէ որևէ վեճի լուծմանը կամ գործի փաստական հանգամանքների պարզմանը: Տվյալ դեպքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործի քննությունն արդեն իսկ ավարտվել է և դատարանի միակ գործողությունը կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու հարցի պարզումն ու գնահատումն է: Այսինքն՝ վերը նշվածը վկայում է, որ տվյալ վարույթի ընթացքում դատարանի կողմից կատարվող դատավարական գործողությունները կրում են սահմանափակ բնույթ, բացակայում է պետական տուրքի գանձման օբյեկտը, ըստ այդմ՝ նաև պետական տուրք վճարելու պարտականությունը:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սուկա չէ պետական տուրքի գանձման օբյեկտը, որպիսի պայմաններում դիմողների վրա չի կարող դրվել վերը նշված գործերով կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար պետական տուրքի վճարման պարտականություն (յրեն «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (իրավահաջորդ՝ «Վեոն Արմենիա» ՓԲԸ) դիմումը՝ կարարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված

ժամկետը հարգելի համարելու և կարարողական թերթ տրամադրելու պահանջի մասին թիվ ԱՎԴ2/1116/03/16 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.07.2019 թվականի որոշումը):

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի 27.06.2018 թվականի վճռով Բանկի հայցը բավարարվել է և վճիռն օրինական ուժի մեջ է մտել 28.07.2018 թվականին **(գ.թ. 45-49):**

Բանկը փոստային ծառայության միջոցով 07.08.2019 թվականին դիմում է ներկայացրել Դատարան կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու, այն վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու մասին **(գ.թ. 57-62):**

Դատարանի 04.10.2019 թվականի որոշմամբ մերժվել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ Բանկի դիմումը:

Վերաքննիչ դատարանի 18.11.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է եզրափակիչ դատական ակտի դեմ, իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ոչ դրամական պահանջի գործերով սահմանված է 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, մինչդեռ բողոք բերողը չի վճարել այդ գումարը և չի միջնորդել կիրառել պետական տուրքի վճարման գծով արտոնություններ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն քաղաքացիական գործով Բանկը վերաքննության կարգով բողոքարկել է Դատարանի 04.10.2019 թվականի որոշումը, որը կայացվել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում:

Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար պետական տուրքը վճարված չլինելը, ինչպես նաև պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության առկայությունը կամ բացակայությունը որևէ նշանակություն չունեն Բանկի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման համար, քանի որ Բանկը վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում պետական տուրքի վճարման պարտականություն չունի՝ բողոքարկման ենթակա դատական ակտի տեսակով և հայցվող գործողությամբ պայմանավորված՝ պետական տուրքի վճարման օբյեկտի բացակայության հիմքով:

Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով վերադարձրել է Բանկի վերաքննիչ բողոքը՝ վերջինիս գրկելով Դատարանի 04.10.2019 թվականի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, միաժամանակ սահմանափակելով նրա՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը՝ արդյունքում թույլ տալով այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Նման պայմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ ոչ իրավաչափորեն վերադարձնելով Բանկի վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել

է Բանկի՝ բողոքարկման իրավունքի իրականացման հնարավորությունը՝ արդյունքում գրկելով վերջինիս վերադաս դատարանի մատչելիության իրավունքից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը՝ վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ վերաքննիչ դատարանի 18.11.2019 թվականի «վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. վճռաբեկ բողոքը բավարարել: վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.11.2019 թվականի «վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4950/02/16 2020թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԿԴ/4950/02/16
Նախագահող դատավոր՝	Ն. Կարապետյան
Դատավորներ՝	Ա. Պետրոսյան Տ. Նազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող և գեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ Մ. ԴՐՄԵՅԱՆ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
-----------------------------	---

2020 թվականի օգոստոսի 27-ին գրավոր ընթացակարգով քննելով Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Մարգարյանի և Վեներա Գալստյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» 13.08.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտակ, Վեներա Գալստյանների ընդդեմ Արթուր Անդրեասյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Ասյա Գևորգյանի, Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի՝ 08.08.2012 թվականին Նոր Նորք նոտարական տարածքում Վեներա Գալստյանի կողմից տրված հայտարարությունն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքները կիրառելու և պայմանագրից ծագած գրավի իրավունքի պետական գրանցումը վերականգնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Մարգարյանը պահանջել է անվավեր ճանաչել Վեներա Գալստյանի կողմից Նոր Նորք նոտարական տարածքում 08.08.2012 թվականին տրված հայտարարությունը, կիրառել անվավերության հետևանք և վերականգնել Վեներա Գալստյանի՝ Երևան քաղաքի Փափազյան 11-րդ շենքի թիվ 60 բնակարանի նկատմամբ 27.07.2010 թվականի գրավի

իրավունքը և 29.07.2010 թվականի հիփոթեքի պայմանագրից ծագած իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) 31.10.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Միքայելյան, Ա. Սմբատյան, Հ. Ենոքյան) 29.03.2018 թվականի որոշմամբ Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Մարգարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 31.10.2017 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Եսոյան) (այսուհետ՝ Դատարան) 08.05.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Թորոսյան, Ն. Բարսեղյան, Ա. Խատատյան) 01.07.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Թորոսյան, Ն. Բարսեղյան, Ա. Մկրտչյան) 18.07.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը կրկին վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.08.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Մարգարյանը և Վեներա Գալստյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցչի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երկու անգամ ներկայացված վերաքննիչ բողոքներն ըստ էության չի քննել և որոշում չի կայացրել, այսինքն՝ բողոքներում ներկայացված հիմքերն ու հիմնավորումները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից քննարկման առարկա չեն դարձվել:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ինչը սահմանափակել է հայցվորների՝ արդար դատաքննության բաղկացուցիչ մաս հանդիսացող բողոքարկման և դատարանի մատչելիության իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 13.08.2019 թվականի թիվ ԵԿԴ/4950/02/16 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումը և գործն ուղարկել Վերաքննիչ քաղաքացիական դատարան ըստ էության քննության»:

2.1. Վեներա Գալստյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երկու անգամ ներկայացված վերաքննիչ բողոքներն ըստ էության չի քննել և որոշում չի կայացրել, այսինքն՝ բողոքներում ներկայացված հիմքերն ու հիմնավորումները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից քննարկման առարկա չեն դարձվել:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ինչը սահմանափակել է հայցվորների՝ արդար դատաքննության բաղկացուցիչ մաս հանդիսացող բողոքարկման և դատարանի մատչելիության իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 13.08.2019 թվականի թիվ ԵԿԴ/4950/02/16 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումը և գործն ուղարկել Վերաքննիչ քաղաքացիական դատարան ըստ էության քննության»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքների քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կարող է արդյոք դիպվել բողոքում նշված հիմքով նույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից արդեն իսկ կայացված որոշում:

Շաշվի առնելով, որ սույն գործով Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսանա Սարգսյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիմքը և հիմնավորումները և Վեներա Գալստյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիմքը և հիմնավորումները, ըստ էության, նույնաբովանդակ են, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում դրանց անդրադառնալ ներքոշարադրյալ ընդհանուր պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լաված լինելու իրավունք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*լրեն Շասնու Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Շասնու Տերյանի թիվ ԵԱԵԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն Սուսաննա Արարարի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրարանի Միրզոյանի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ **օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը** (*լրեն Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Եվրոպական դատարանի կողմից արտահայտված մեկ այլ դիրքորոշման համաձայն՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*լրեն Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով» վերտառությամբ 53-րդ գլխում, վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման կարգն ու պայմանները սահմանելու հետ միաժամանակ ամրագրել է ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու, ընդունումը մերժելու և վարույթ ընդունելու հիմքերը: Այսինքն, օրենսդիրը սահմանել է այն իրավական հետևանքները, որոնք վրա են հասնում կախված այն հանգամանքից, թե որքանով է վերաքննիչ բողոք բերած անձն իր վերաքննիչ բողոքարկման իրավունքն իրականացրել օրենքին համապատասխան: Ըստ այդմ էլ՝ ներկայացված վերաքննիչ բողոքի նկատմամբ կարող են կայացվել տարբեր դատավարական հետևանքներ ունեցող որոշումներ՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

1) չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները.

2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.

3) մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին.

4) բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.

5) վերաքննիչ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով ետօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համանման հիմք առկա է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Դատական ակտերի բողոքարկումը վճռաբեկության կարգով» վերտառությամբ 55-րդ գլխում, որի 396-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել: Ընդ որում համանման կարգավորում է սահմանված եղել նաև 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականից ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականից ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրքը) 233.1-րդ հոդվածով: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Համեմատական վերլուծության ենթարկելով վերաքննիչ և վճռաբեկ վարույթներում առկա վերը նշված կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ չնայած երկու վարույթներում առկա է նույնանման հիմքը (կապված ներկայացված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների հետ), այն է՝ բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանն արդեն իսկ որոշում է կայացրել, այդուհանդերձ տարբեր են այդ հիմքով վրա հասնող դատավարական հետևանքները: Այսպես, եթե այդ հիմքն առկա է վերաքննիչ ատյանում, ապա վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման, իսկ եթե այն առկա է վճռաբեկ ատյանում, ապա վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ երկու դեպքում էլ, այն է՝ ն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշում կայացնելու, և՛ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելու, վերաքննիչ և (կամ) վճռաբեկ բողոքների ըստ էության քննություն չի կատարվում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, իր 18.04.2017 թվականի թիվ ՄԴՈ-1363 որոշմամբ անդրադառնալով Նախկին

օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի սահմանադրականությանը, ինչպես նաև այն հարցին, թե արդյո՞ք վճարել բողոքը վերադարձնելու մասին ՀՀ վճարել դատարանի որոշումը կարող է դիտվել բողոքում նշված հիմքով նույն գործով ՀՀ վճարել դատարանի արդեն իսկ կայացրած որոշում, արձանագրել է հետևյալը. «(...) վճարել բողոքների վերաբերյալ (բացի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքերից) Վճարել դատարանը կայացնում է երկու տեսակի որոշումներ:

Առաջինն այն որոշումներն են, որոնք կայացվում են **առանց բողոքն ըստ էության քննելու**: Դրանք են՝

- 1) բողոքը վերադարձնելու մասին (օրենսգրքի 233-րդ հոդված),
- 2) բողոքն առանց քննության թողնելու մասին (օրենսգրքի 233.1-րդ հոդված),
- 3) բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին (օրենսգրքի 233.2-րդ հոդված),
- 4) բողոքը վարույթ ընդունելու մասին (օրենսգրքի 234-րդ հոդված):

Երկրորդն այն որոշումներն են, որոնք Վճարել դատարանը կայացնում է բողոքը վարույթ ընդունելու և քննելու արդյունքում՝ իրացնելով օրենսգրքի 240-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունները:

Հարկ է նշել, որ **բողոքը վերադարձնելու մասին, բողոքն առանց քննության թողնելու մասին և բողոքը վարույթ ընդունելու մասին** որոշումները, ի տարբերություն մյուս որոշումների, չեն կայացվում հանտն Հայաստանի Հանրապետության: Նման որոշումներ կայացնելիս Վճարել դատարանը չի անդրադառնում բողոքում նշված հիմքերի քննարկմանը:

Ըստ օրենսգրքի 226-րդ հոդվածի՝ վճարել բողոք բերելու հիմքերն են՝

- 1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.
- 2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ:

Այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճարել դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելն այն հիմքով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճարել դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, չի վերաբերում վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշմանն այն պարագայում, որ վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ չի կարող անդրադարձ կատարվել վճարել բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության առարկա չեն դառնում:

«Բողոքում նշված հիմքով նույն գործով վճարել դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել» ձևակերպման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում իր ՄԻՌ-709 որոշման մեջ, այն է՝ «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի՝ վիճարկվող 4-րդ մասում տեղ գրած դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճարել դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավագոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճարել դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 4-րդ մասում օգրագործվող «բողոքում նշված հիմքով» և «նույն գործով» ձևակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միևնույն առարկայի վերաբերյալ նույն պարագայում ներկայացված բողոքի հիման վրա ձգարում է հասնել նպատակներ որոշման»:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումներից ակնհայտ է, որ խոսքը վճարել բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ արտահայտված որոշման մասին է, քանզի Սահմանադրական դատարանը հարակ շեշտել է՝ «որոնց կապակցությամբ արդեն իսկ վճարել դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ»:

Ավելին, ըստ Սահմանադրական դատարանի՝ Վճարել դատարանը բողոքն առանց քննության պետք է թողնի այն դեպքում, երբ արդեն իրացվել է վճարել բողոք բերելու անձի իրավունքը, և բողոքում ներկայացված հարցերի առնչությամբ վճարել դատարանն արդեն

իսկ որոշում է կայացրել: Հսկառակ դեպքում, գործին մասնակցող փարքեր անձանց կողմից ինքնուրույն, սակայն նույն հիմքով բողոք բերելու պարագայում, եթե որևէ մեկի՝ վերադարձնելուց հետո նոր թերություններով ներկայացված բողոքի վերաբերյալ կայացվի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում այն հիմնավորմամբ, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, ապա հաջորդ բողոքաբերների՝ նույն հիմքով ներկայացրած բողոքները նույնպես պետք է թողնվեն առանց քննության, քանի որ կհամարվի, որ ներկայացված հիմքով արդեն իսկ առկա է Վճռաբեկ դատարանի որոշումը: Ենման իրավիճակը դատարանն պաշտպանության իրավունքի լուրջ սահմանափակում կհանդիսանա»:

Վերոգրյալ հիմնավորումներով ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ **վճռաբեկ բողոք վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված Վճռաբեկ դատարանի որոշում:**

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի մեկնաբանման և կիրառման պարագայում, քանի որ վերաքննիչ դատարանի կողմից բողոքի ընդունումը մերժելու մասին որոշում կայացնելու համար հիմք է նաև բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելու հանգամանքը:

Ըստ այդմ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված վերաքննիչ բողոքի վերադարձման կանոնակարգումներին, ինչից հետևում է, որ նախ՝ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները, որոնք նույն օրենսգրքով սահմանված ժամկետներում վերացնելուց հետո վերաքննիչ բողոքը կարող է կրկին ներկայացվել վերաքննիչ դատարան:

Հարկ է նշել, որ վերաքննիչ **բողոքը վերադարձնելու մասին** որոշումը, ի տարբերություն վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացրած որոշման, չի կայացվում Հայաստանի Հանրապետության անունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 363-րդ հոդվածի համաձայն՝ դատական ակտի բողոքարկման հիմքերն են՝

- 1) նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը,
- 2) դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը,
- 3) նոր երևան եկած կամ նոր հանգամանքը:

Այդ առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվում վերաքննիչ բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության և/կամ գնահատման առարկա չեն դառնում: Այլ կերպ ասած, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացվում է առանց բողոքն ըստ էության քննելու, որպիսի պայմաններում վերաքննիչ **բողոքը վերադարձնելու մասին որոշում** կայացնելիս վերաքննիչ դատարանը չի անդրադառնում բողոքում նշված հիմքերի քննարկմանը: Հետևաբար, բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելը չի վերաբերում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմանը:

Ըստ այդմ էլ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար, քանի որ բողոքի ընդունումը մերժելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու այնպիսի հարցերի քննությանը կրկին անդրադառնալը, որոնք վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ ըստ էության քննության և/կամ գնահատման առարկա են դարձել:

Այսինքն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված «բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել» իրավակարգավորումը վերաբերում է վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշում պարունակող որոշմանը, այսինքն՝ այն որոշմանը, որով վերաքննիչ դատարանն արդեն իսկ իրավական գնահատական է տվել վերաքննիչ բողոքի հիմքերին: Հակառակ մեկնաբանման դեպքում, այն է՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, որպես բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ կայացրած որոշում դիտարկելու պարագայում, կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը բոլոր դեպքերում ենթակա կլինի մերժման, քանի որ կհամարվի, որ բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Ամփոփելով վերագրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելու հանգամանքը նախատեսելով որպես բողոքի ընդունումը մերժելու հիմք՝ օրենսդիրը նկատի է ունեցել վարույթ ընդունված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված եզրակիսիչ դատական ակտերը, հետևաբար վերագրյալ հիմքով վերաքննիչ դատարանը կարող է բողոքի ընդունումը մերժել միայն այն դեպքում, երբ իրացվել է վերաքննիչ բողոք բերելու անձի իրավունքը, և բողոքում ներկայացված հիմքերի վերաբերյալ վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել ըստ էության քննելով վերաքննիչ բողոքը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 08.05.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Սարգսյանի կողմից 15.06.2019 թվականին, փոստային ծառայության միջոցով Դատարանի վերը նշված վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք (**հատոր 6, գ.թ. 3-35**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.07.2019 թվականի որոշմամբ Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Սարգսյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ « (...) կայացված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է բերվել միայն 15.06.2019 թվականին և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Բացի այդ ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կանոնի՝ վերաքննիչ բողոքին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց (որը տվյալ դեպքում կազմում է 20.000 ՀՀ դրամ), բացակայում է նաև պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ որևէ միջնորդություն՝ (...): Բացի այդ վերաքննիչ բողոքին չեն կցվել դրա օրինակը գործին մասնակցող անձանց ուղարկելու փաստը հավաստող ապացույցները»: Միաժամանակ վերը նշված որոշմամբ սահմանվել է 15-օրյա ժամկետ՝ որոշումը ստանալուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար (**հատոր 6, գ.թ. 39**):

Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացուցիչ Սուսաննա Սարգսյանի կողմից 13.07.2019 թվականին, փոստային ծառայության միջոցով կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք (**հատոր 6, գ.թ. 57-97**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.07.2019 թվականի որոշմամբ հայցվորների ներկայացուցիչ վերաքննիչ բողոքը կրկին վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ « (...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որն էլ ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 4-րդ մասի (...) անստորագիր է (...)»: Նշված որոշմամբ նաև արձանագրվել է, որ « (...) նշված խախտումը թույլ է տրվել կրկին ներկայացված

վերաքննիչ բողոքում, ուստի (...) այդ խախտումը վերացնելու համար նոր ժամկետ չի կարող տրամադրվել» (**հատոր 6, գ.թ. 101**):

Հայցվորների ներկայացուցիչ Սուսաննա Սարգսյանը 27.07.2019 թվականին, փոստային ծառայության միջոցով, կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք (**հատոր 6-րդ, գ.թ. 120-148**):

Վերաքննիչ դատարանի 13.08.2019 թվականի որոշմամբ 27.07.2019 թվականին ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «Վերաքննիչ դատարանը հարկ է համարում՝ նշել, որ 15.07.2019 թվականին և 27.07.2019 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքները ամբողջությամբ նույնն են, և դրանցում որևէ փոփոխություն առկա չէ: Ընդ որում, 15.07.2019 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքը դրանում մատնանշված հիմքերով Վերաքննիչ դատարանի այլ դատական կազմի կողմից արդեն իսկ վերադարձվել է, և հաշվի առնելով այդ բողոքը կրկին ներկայացված լինելու հանգամանքը՝ նոր ժամկետ չի տրամադրվել առկա թերությունները շրկելու համար: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքում նշված հիմքով արդեն իսկ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել: Հերոսաբար սույն բողոքի ընդունումը ենթակա է մերժման» (**հատոր 6, գ.թ. 151-153**):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով առաջին և երկրորդ անգամ ներկայացված վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված 01.07.2019 թվականի և 18.07.2019 թվականի որոշումներով վերադարձվել են վերաքննիչ բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքներն օրենքով սահմանված ձևին և բովանդակությամբ համապատասխան ներկայացված չլինելու հիմքով:

Մասնավորապես, «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 01.07.2019 թվականի որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով, մասնավորապես այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ և միջնորդություն չի պարունակել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, ինչպես նաև վերաքննիչ բողոքին չի կցվել պետական տուրքի վճարումը կատարելու փաստը հավաստող ապացույց և բացակայել է նաև պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ որևէ միջնորդություն, բացի այդ, վերաքննիչ բողոքին չեն կցվել նաև դրա օրինակները գործին մասնակցող անձանց ուղարկելու փաստը հավաստող ապացույցները:

«Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 18.07.2019 թվականի որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքը երկրորդ անգամ վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 4-րդ մասի և 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, մասնավորապես այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքն անստորագիր էր:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքները վերադարձնելու մասին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված 01.07.2019 թվականի և 18.07.2019 թվականի որոշումները դիտարկելով որպես բողոքում նշված հիմքով արդեն իսկ վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումներ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ մերժել է երրորդ անգամ բերած վերաքննիչ բողոքի ընդունումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքները վերադարձնելու մասին վերոգրյալ երկու որոշումներով ներկայացված վերաքննիչ բողոքների ըստ էության քննություն չի կատարվել, որպիսի պայմաններում նաև անդրադարձ չի կատարվել և չէր կարող կատարվել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին, սկստի ունենալով, որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության առարկա չեն դառնում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 13.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ ոչ իրավաչափորեն է մերժել Արտակ և Վեներա Գալստյանների ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը՝ վերջիններիս գրկելով Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, միաժամանակ սահմանափակելով նրանց՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 13.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մնանկության գործ թիվ **ՍնԴ/0104/04/19**
2020թ.

Մնանկության գործ թիվ ՍնԴ/0104/04/19
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Սմբատյան
Հ. Ենոքյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2020 թվականի մայիսի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ դիմումի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դիմումի՝ Ամալյա Բեգլարյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Կոմիտեի ներկայացուցիչ Արման Մնացականյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Ամալյա Բեգլարյանին ճանաչել սնանկ:
ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.03.2019 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 26.06.2019 թվականի որոշմամբ հաստատվել է Ամալյա Բեգլարյանի պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ՝

Դատարանի 26.06.2019 թվականի որոշման դեմ Կոմիտեի ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 114-րդ հոդվածի 1-ին մասը, 115-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 116-րդ հոդվածի 4-րդ մասը, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, 20-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերաքննիչ դատարանն որպես վերաքննիչ բողոքը վերադարձնելու իրավական հիմք հղում է կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածին, որի արդյունքում եզրահանգել է, որ սնանկության գործերով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին Դատարանի որոշման դեմ Կոմիտեի վերաքննիչ բողոք կարող էր ներկայացնել յոթօրյա ժամկետում, ինչն անհիմն է և հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասին և մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կոմիտեն վերաքննիչ բողոքը ներկայացրել է Դատարանի որոշման եզրափակիչ մասով նախատեսված և օրենքով սահմանված 15-օրյա ժամկետի պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանը որոշման պատճառաբանական մասում սխալ է նշել նաև Դատարանի որոշումը Կոմիտե մուտքագրվելու ամսաթիվը, այն է՝ 09.07.2019 թվական, մինչդեռ Դատարանի որոշումը մուտքագրվել է Կոմիտե 04.07.2019 թվականին:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 06.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սնանկության վարույթում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման և սնանկության վարույթի ընթացքում տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետները հաշվարկելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետները հաշվարկելու կարգին, ինչպես նաև հարցադրմանն առ այն, թե որ իրավական ակտն է ենթակա կիրառման սնանկության վարույթում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ժամկետները հաշվակելի:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ բողոքարկման ժամկետներին վերաբերող նորմերն անկասկած սահմանված են արդարադատության պատշաճ իրականացման և իրավական որոշակիության սկզբունքի ապահովման նպատակով, սակայն հիշյալ նորմերը կամ դրանց կիրառումը չպետք է գործին մասնակցող անձին գրկեն իրենց իրավունքի իրականացման հնարավորությունից (*լրեն՝ Pérez de Rada Cavanilles v. Spain գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, կետ 45*): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա (*լրեն՝ Bellet v. France գործով Եվրոպական դատարանի 04.12.1995 թվականի վճիռը, կետ 36, Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 16.03.2010 թվականի վճիռը, կետ 25*):

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ մինչև 15.04.2020 թվականը գործող իրավակարգավորման համաձայն՝ դատարաններում սնանկության

գործերի վարումն իրականացվում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնպանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթը: Նշված կանոնը վերաբերում է նաև սնանկության վարույթի շրջանակներում կայացվող դատական ակտերի տեսակները և դրանց բողոքարկման հնարավորությունը որոշելուն:

Անդրադառնալով սնանկության վարույթի ընթացքում կայացվող դատական ակտերի առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկում նշել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքն ինչպես նախորդ, այնպես էլ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության կարգավորումների պայմաններում չի տարանջատում սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի տեսակները, այլ միայն 17.1-րդ հոդվածով սահմանում է, որ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը (որոշումները, վճիռները) օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, ինչպես նաև 20-րդ հոդվածով սահմանում է սնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկման հետևյալ կարգը.

Այսպես, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով: Վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ առանձին պահանջների մասով (...):

Բացի նշված կարգավորումներից, «Մասնկության մասին» ՀՀ օրենքը որոշակի ակտերի դեպքում սահմանում է բողոքարկման այլ ժամկետներ (օրինակ՝ սնանկության դիմումի ընդունումը մերժելու մասին կամ դիմումը վերադարձնելու մասին որոշումների դեպքում):

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրքը) կարգավորման պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանը, 11.01.2011 թվականի թիվ ՄԴՈ-932 որոշմամբ կարևորելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, թե որ իրավական ակտով կամ ակտերով սահմանված կանոններն են ենթակա կիրառման սնանկության գործերով դատավարական կարգի նկատմամբ, արձանագրել է, որ Նախկին օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ սնանկության գործի քննության ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով: ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ հաշվի առնելով սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող առանձին վարույթների բնույթը, առանձնահատկությունները, սնանկության

գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ օրենսդիրը նշված վարույթներից առանձնացրել է երկուսը, և միայն այդ վարույթներով կայացված դատական ակտերն է դիտարկել որպես վեճն ըստ էության լուծող դատական ակտեր: Խոսքը վերաբերում է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ, և սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին: Օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու և սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին: Մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով սնանկության գործի ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանը, նշել է, որ օրենսդիրը, ելնելով սնանկության գործի մաս կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն: Այդ ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու, դիմումը վերադարձնելու, պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու, **պահանջների վերջնական ցուցակը հաստատելու**, պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը որոշելու, սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու, պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին որոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից իրավաչափ մոտեցում է ցուցաբերվել կապված սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը բողոքարկելի համարելու հետ:

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման՝ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության պայմաններում կիրառելիության հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախորդից էականորեն տարբերվող կարգավորումներ է նախատեսել ինչպես դատական ակտերի տեսակների, այնպես էլ դրանց բողոքարկման հնարավորությունների վերաբերյալ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտեր են՝

1) առաջին ատյանի դատարանի կայացրած՝

ա. վճիռը և օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը,

բ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր

կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արքիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները.

2) վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու, վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումները.

3) Վճռաբեկ դատարանի՝ վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտեր են նույն հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով թվարկվում են վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումները, որոնց ցանկը սպառիչ չէ՝ նկատի ունենալով, որ նույն հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են նաև առաջին ատյանի դատարանի այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով բողոքարկմանը, սպա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 388-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննում է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներն էականորեն տարբերվում են նախորդ օրենսգրքի կարգավորումներից, որպիսի պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումը՝ դատական ակտերի դասակարգմամբ պայմանավորված իրավական հետևանքների առաջացման մասով, ամբողջությամբ կիրառելն արդարացված չի կարող համարվել՝ նկատի ունենալով, որ այն վերաբերել է գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկմանը, մինչդեռ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունն օգտագործում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտ եզրույթները: Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, «Մասնկության մասին» ՀՀ օրենքը չի տարանջատում սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի տեսակները:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ անհրաժեշտ է սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը տարանջատելիս և դրանց բողոքարկման հնարավորությունը որոշելիս հիմք ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական ակտերի տեսակները՝ բացառելու համար երկու փոխկապակցված իրավական ակտերի միջև եզրութաբանության օտարացվածությունը:

Հիմք ընդունելով արդեն իսկ 09.04.2018 թվականից գործող քաղաքացիական դատավարության նոր օրենսդրության եզրութաբանությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը ևս պետք է տարանջատել եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի (*տե՛ս Հսկոր Մեհրաբյանի ընդդեմ Արփայկ Դուկասյանի թիվ ԿԻ/0023/04/17 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2018 թվականի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը*):

Նկատի ունենալով, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը եզրափակիչ դատական ակտերը սահմանել է սպառիչ ցանկով, իսկ «Մասնկության

մասին» ՀՀ օրենքը այդ մասով հատուկ կարգավորում չունի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանի 26.06.2019 թվականի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը պետք է համարել միջանկյալ դատական ակտ՝ հաշվի առնելով, որ վերջինս քաղաքացիական դատավարության օրենսդրության համապատասխան նորմերով թվարկված չէ եզրափակիչ դատական ակտերի ցանկում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումների բողոքարկման ժամկետների առանձնահատկություններին: Այսպես.

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել **դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում**, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ գույքի անբավարարության հիմքով կատարողական վարույթը կասեցնելու որոշումը 2 աշխատանքային օրվա ընթացքում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից հրապարակվում է «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան էլեկտրոնային կայքէջում:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2.1-րդ մասի «ա» կետի համաձայն՝ (...) դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն է ներկայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը՝ անհապաղ նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը: Պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ <http://www.azdara.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 80 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում:

(...):

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման համար նույն իրավանդումով սահմանվել է ժամկետ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացումից հետո 3 աշխատանքային օր:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողությունը կատարելու համար օրենսդիրը կառավարչի համար սահմանել է մեկ աշխատանքային օր ժամկետ:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի 2-րդ ելթակետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝ պարտապանի կամ պարտատերերի կամ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով ներգրավված ֆինանսավորողի պահանջով վերջիններիս տրամադրում է տեղեկություններ պարտապանի սնանկության վարույթի կամ ֆինանսական առողջացման վերաբերյալ պահանջը գրավոր ստանալուց հետո՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ

հողվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերոգրյալ իրավադրույթները և վեր հանելով օրենսդրի նպատակը, արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ տարբեր գործողությունների կատարման համար օրենսդիրը սահմանել է ըստ էության միմյանցից տարբերվող ժամկետներ: Այդ ժամկետները ճիշտ ընկալելու և ճշգրիտ հաշվարկելու համար «Մասնկության մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներում կատարվել է «**աշխատանքային օր» գրառումը**, իսկ մյուս դեպքերում նման գրառում առկա չէ:

Ըստ այդմ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքով տարբեր գործողությունների կատարման համար սահմանված ժամկետների հաշվարկը մի դեպքում պայմանավորել է միայն աշխատանքային օրերով, մյուս դեպքում՝ նաև ոչ աշխատանքային օրերով: Նման կարգավորումը սահմանվել է՝ հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով) և միտված է այդ վարույթի արդյունավետության ապահովմանն ու սնանկության վարույթի անհարկի ձգձգումները բացառելուն:

Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հակառակ պարագայում ի հայտ կգար մի իրավիճակ, երբ օրինակ դատարանի որոշմամբ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիմքով պարտատերերի առաջին ժողովը, որը նշանակվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան **80 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում**, առանց ոչ աշխատանքային օրերը հաշվարկի մեջ ներառելու՝ կնշանակվեր անհարկի ուշ ժամանակահատվածում, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հիմնավոր չէ: Նման դիրքորոշումը պայմանավորված է նաև սնանկության վարույթը ողջամիտ ժամկետներում և հնարավորինս արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու անհրաժեշտությամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե գործողությունների կատարման համար «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված է որևէ ժամկետ՝ **առանց «աշխատանքային օր» գրառման**, ապա այն պետք է հասկանալ և հաշվարկել ոչ աշխատանքային օրերը ներառելով, իսկ այն դեպքում, երբ ժամկետի հաշվարկի վերաբերյալ կարգավորումն ուղղակիորեն պարունակում է «**աշխատանքային օր» գրառումը**, ապա ժամկետի հաշվարկի մեջ չպետք է ներառել ոչ աշխատանքային օրերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը հիմնավորված է, եթե դրանում արտացոլված են այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական և իրավական հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված

ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Ելնելով վերոգրյալ իրավանորմերի վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով հնարավորինս ապահովել անձանց դատական պաշտպանության իրավունքը, նախատեսել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու ընթացակարգ՝ վերաքննիչ բողոքում առկա խախտումները շտկելու և օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի իրացումը ապահովելու համար: Հարկ է նկատել, որ վերոգրյալը մեծապես պայմանավորված է հենց դատարանի օրինական և պատշաճ գործողություններով, քանի որ հենց դատարանի օրինական գործողությունների արդյունքում անձը հնարավորություն կունենա վերացնել թույլ տրված խախտումները և ակնկալել դատական պաշտպանության միջոցով խախտված իրավունքների վերականգնում:

Սույն գործով Դատարանի վճռով Ամալյա Բեգլարյանը ճանաչվել է սնանկ (*գործի հավելված, գ.թ. 5-7*):

Այնուհետև Դատարանի **26.06.2019 թվականի** որոշմամբ հաստատվել է պարտապան Ամալյա Բեգլարյանի պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որով սահմանվել է վերաքննության կարգով բողոքարկման «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ որոշման կայացման պահից 15-օրյա ժամկետ, ինչի վերաբերյալ որոշման եզրափակիչ մատում կատարվել է համապատասխան գրառում (*գործի հավելված, գ.թ. 24-26*):

Կոմիտեի կողմից **19.07.2019 թվականին** փոստային ծառայության միջոցով ներկայացվել է Դատարանի **26.06.2019 թվականի** որոշման դեմ վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանը **06.08.2019 թվականի** որոշմամբ վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ «Դատարանի՝ **26.06.2019 թվականի** որոշման դեմ վերաքննիչ բողոք կարող էր ներկայացվել որոշումը ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում: Բողոքաբերը որոշումը ստացել է **09.07.2019 թվականին**, այսինքն՝ վերաքննիչ բողոք կարող էր ներկայացնել մինչև **18.07.2019 թվականը** ներառյալ, սակայն ներկայացրել է բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ **19.07.2019 թվականին**: Մինչնույն ժամանակ բողոքաբերը չի ներկայացրել միջնորդություն՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և վերականգնելու մասին»: Որպես նման եզրահանգման իրավական հիմք Վերաքննիչ դատարանը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածի 3-րդ մասը (*գործի հավելված, գ.թ. 33-36, 43, 46*):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանի **26.06.2019 թվականի** «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը հանդիսանում է միջանկյալ դատական ակտ, որի բողոքարկման ժամկետի հաշվարկման համար պետք է հիմք ընդունել մինչև **15.04.2020 թվականը** գործող խմբագրությամբ «Մասնկության

մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը, այսինքն՝ նշված որոշումը կարող էր բողոքարկվել կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված 7-օրյա ժամկետի խախտմամբ, վերաքննիչ բողոքի վերադարձման հիմքում դրել է սույն իրավահարաբերությունների հետ առնչություն չունեցող իրավանորմ, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածի 3-րդ մասը, որը վերաբերում է օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման գործով դատարանի որոշումների հրապարակմանը և հրապարակման պահից յոթ օր հետո օրինական ուժի մեջ մտնելուն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված վերը նշված իրավանորմը չէր կարող հիմք հանդիսանալ Դատարանի 26.06.2019 թվականի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը բողոքարկելու ժամկետը հաշվարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի՝ «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը կայացվել է 26.06.2019 թվականին, ուստի Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ այն կարող էր բողոքարկվել կայացման պահից 15-օրյա ժամկետում, այսինքն՝ ներառյալ **11.07.2019 թվականը**՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Կոմիտեի կողմից վերաքննիչ բողոքը ներկայացվել է նշված ժամկետի խախտմամբ, այն է՝ **19.07.2019 թվականին** և չի ներկայացվել բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդություն:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Վերաքննիչ դատարանը «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկի համար հիմք է ընդունել տվյալ իրավահարաբերության հետ որևէ առնչություն չունեցող իրավանորմ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածի 3-րդ մասը, այդուհանդերձ Կոմիտեի կողմից բաց է թողնվել նաև նշված որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկման համար կիրառելի իրավանորմով, այն է՝ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ որոշման կայացման պահից բողոքարկման 15-օրյա ժամկետը: Հետևաբար դատական պաշտպանություն Կոմիտեին կարող էր տրամադրվել միայն բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացվելու և այն բավարարվելու պարագայում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա է եղել վերադարձման, քանի որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ և չի ներկայացվել միջնորդություն ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 06.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերացնելու համար, քանի որ Կոմիտեն այդուհանդերձ բաց է թողել մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետը և չի ներկայացրել միջնորդություն՝ այդ ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին, ուստի Վերաքննիչ դատարանի 06.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.08.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2005/02/17
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԲԴ/2005/02/17
Նախագահող դատավոր՝	Մ. Հարթենյան
Դատավորներ՝	Կ. Չիլինգարյան Ա. Խառատյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 14-ին գրավոր ընթացակարգով քննելով Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցիչ Գրիգոր Քալաշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Հասմիկ Զատիկյանի ընդդեմ Պետրոս Սարգսյանի, Մարիաննա Սարգսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Մարիաննա Սարգսյանի, Պետրոս Սարգսյանի ընդդեմ Հասմիկ Զատիկյանի, Էրրորդ անձ Սամվել Զատիկյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու և ընդհանուր գույքից բաժնեմասն առանձնացնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան Հասմիկ Զատիկյանը պահանջել է ճանաչել իրեն իր մոր՝ Մարիաննա Զատիկյանի ժառանգությունն ընդունած ժառանգ քաղաք Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Աղստու փողոց, 34 բնակելի տան 1/3 մասի և նույն հասցեի 175 քմ ընդհանուր հողամասի 1/3 մասի նկատմամբ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Պետրոս և Մարիաննա Սարգսյանները պահանջել են ճանաչել իրենց մոր՝ Ալվարդ Զատիկյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ՝ քաղաք Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ադասու փողոց, 34 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/3 մասի մասի նկատմամբ, ինչպես նաև նույն հասցեում գտնվող անշարժ գույքի իրենց տատի՝ Մարիամ Զատիկյանի 1/9 մասի նկատմամբ, ընդհանուրը ամբողջ անշարժ գույքի 4/9 մասի նկատմամբ, և առանձնացնել նոր առաջացած անշարժ գույքն ընդհանուր գույքից և թույլատրել դրա նկատմամբ կատարել պետական գրանցում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշբարյան) (այսուհետ՝ Դատարան) 23.04.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2018 թվականի որոշմամբ Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.06.2018 թվականի որոշմամբ Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական փորձի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանի վճիռը վերաքննիչ բողոք բերած անձանց կողմից բողոքարկվել է մասնակի, որին համապատասխան վճարվել է պետական տուրքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքի բովանդակությունից հետևում է, որ բողոքարկվել է Դատարանի 23.04.2018 թվականի վճիռը: Մասնավորապես, ներկայացված վերաքննիչ բողոքով, ըստ էության, բողոքարդները Վերաքննիչ դատարանից խնդրել էին բեկանել Դատարանի 23.04.2018 թվականի վճիռը, իսկ վերաքննիչ բողոքում նշված՝ «05.02.2018 թվականի թիվ ԵԱԲԴ/2005/02/17» դատական ակտի նշումը գուտ տեխնիկական վրիպակ է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել և վերացնել Վերաքննիչ դատարանի 29.06.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ ամերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անորոշաբանապես դատարանական ակտեր վերաքննության կարգով մասնակիորեն՝ միայն հակընդդեմ հայցի մասով բողոքարկելիս դրա համար պետական փողերի չափը որոշելու ստանձնասարկություններին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լսված լինելու իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*դեռևս ի թիվս այլնի ժամանա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ ժամանա Տերյանի թիվ ԵԱԵԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*դեռևս ի թիվս այլնի Մուսաննա Արարատի Միրզոյանն ընդդեմ Մուսաննա Միրհրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*, «Ֆասթ Սիվայ» ՄԳԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտարների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից

ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է՝

ա) **դրամական պահանջի գործերով՝** վերաքննիչ բողոքում նշված **վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով**, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա **առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով**,

բ) **ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով**,
 գ) հատուկ վարույթների գործերով՝ բազային տուրքի ութապատիկի չափով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման պարտականությանը, արձանագրել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական տուրքն ընդգրկված է դատական ծախսերի կազմում, որի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը պետական բյուջե մուծվող պարտադիր վճար է, որը գանձվում է պետական մարմինների մատուցած ծառայությունների կամ կատարած գործողությունների համար: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք (*լրեսն Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանել է պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը: Մասնավորապես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սպառիչ ամրագրվել են ինչպես դատարան դիմելու համար պետական տուրքի գանձման օբյեկտները, այնպես էլ՝ գանձվող պետական տուրքի դրույքաչափերը: Ընդ որում, օրենսդիրը վերը նշվածը սահմանելիս որոշակի տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար հաշվի

առնելով մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ ներկայացված հայցապահանջի տեսակը, քննվող գործով վարույթի տեսակը, բողոքարկման ենթակա ակտը և դրա բողոքարկման ծավալը: Այլ կերպ ասած՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ վարույթի կարգով է քննվում տվյալ գործը՝ տարբերակվել են հայցային և հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափերը: Տարբերակված մոտեցում է ցուցաբերվել նաև հայցային վարույթի կարգով քննվող գործերի դեպքում դրամական և ոչ դրամական պահանջների համար (*լրեն ըստ «Արմեն-Տել» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԱՎԴ2/1116/03/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.07.2019 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը, 25.05.2010 թվականի թիվ ՄԴՌ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն անջվում է անձի դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ:

Վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքների դատական պաշտպանությունը, ինչպես վերը նշվեց, պահանջում է նաև որոշակի ծախսերի կատարում, որոնց մի մասն օրենսդիրը ներառել է դատական ծախսերի կազմում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերը քաղաքացիական գործի ընթացքում անհրաժեշտ միջոցառումների համար ծախսված և գանձման ենթակա գումարներն են, որոնք անհրաժեշտ են ներկայացված հայցադիմումների ու դիմումների հիման վրա քաղաքացիական գործը հարուցելու և այն հետագայում քննելու համար: Ըստ այդմ էլ օրենսդիրը սահմանել է, որ պահանջների քննության համար պետք է ներկայացվեն սահմանված չափով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցներ (կամ պետական տուրքի գծով որևէ արտոնություն կիրառելու վերաբերյալ համապատասխան միջնորդություն), ինչն իր հերթին ի թիվս հայցադիմումի (դիմումի, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների) ձևին և բովանդակության վերաբերող օրենքով նախատեսված այլ պահանջների պահպանման, հիմք է գործի հետագա քննությունն սկսելու և դատավարական այլ գործընթացներն իրականացնելու համար: Ընդ որում, հարկ է նկատել, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրելով, որ պետական տուրքը կազմում է դատական ծախսերի մաս, միաժամանակ սահմանել է, որ դրա վճարման չափերը, ըստ պահանջների և գործը քննող ատյանների, ամրագրված են ու կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքով օրենսդիրը, ելնելով դատական պաշտպանության իրավունքի մատչելիության սկզբունքից, առանձին հոդվածներով սահմանել է պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները: Այլ կերպ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը ոչ միայն սահմանում է պետական տուրքի գանձման օբյեկտները, դատարաններում պետական տուրքի վճարման դրույքաչափերը, այլ նաև հստակեցնում է դատարաններում պետական տուրքի գծով կիրառվող արտոնությունները, որոնք ուղղված են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

Վերը նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ինչպես նշվեց, քաղաքացիական դատավարությունում գործերը հարուցվում են հայցի և դիմումի հիման վրա, ուստի վերոգրյալ վերլուծությունները կապված դատական ծախսերի, և մասնավորապես՝ վճարվելիք պետական տուրքի հետ, անշեղորեն վերաբերելի են ու կիրառվում են հայցապահանջների և դիմումի հիման վրա հարուցված պահանջներով քննվող գործերի շրջանակներում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հակընդդեմ հայցով հարուցված պահանջների քննության դեպքերին:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է՝ 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել՝ 01.01.1999

թվականին, ուժը կորցրել է՝ 09.04.2018 թվականին) 96-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատասխանողն իրավունք ունի մինչև գործով վճիռ կայացնելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով:

Իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հակընդդեմ հայցն ընդունվում է, եթե՝

1) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը.

2) հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը.

3) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վճիռ առավել արագ և ճիշտ լուծումը:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ հակընդդեմ հայցի հարուցումը պայմանավորված է սկզբնական հայցի հարուցմամբ, այն իրենից ներկայացնում է հայցից պատասխանողի պաշտպանության միջոցներից մեկը և ամբողջությամբ կախվածության մեջ է գտնվում սկզբնական հայցի առկայության փաստից: Ընդ որում, հակընդդեմ պահանջը պետք է ուղղված լինի սկզբնական պահանջի հաշվանցմանը կամ հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ պետք է բացառի սկզբնական հայցի բավարարումը, այսինքն՝ գործով պետք է առկա լինի միատեսակ հանդիպական պահանջ, կամ հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև պետք է առկա լինի փոխադարձ կապ: Այլ կերպ ասած՝ հակընդդեմ հայցը, քաղաքացիական դատավարությունում հայցվորի դեմ պատասխանողի ներկայացրած ինքնուրույն պահանջն է, որը քննվում է դատարանում հայցի հետ համատեղ՝ նպատակ ունենալով կատարել հաշվանցում սկզբնական պահանջի հետ կամ մերժել սկզբնական հայցը կամ կատարել պահանջների համատեղ քննություն՝ հաշվի առնելով սկզբնական և հակընդդեմ հայցերի միջև փոխադարձ կապը: Միաժամանակ, իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունից հետևում է, որ հակընդդեմ հայցի քննության վրա տարածվում են հայց հարուցելու ընդհանուր կանոնները կանոնակարգող նորմերը, ներառյալ նաև՝ հակընդդեմ հայցին կից պետական տուրքի վճարման անդորրագիր կամ պետական տուրքի գծով համապատասխան արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը:

Ընդ որում, հարկ է նկատել նաև, որ պայմանավորված գործով առկա հայցապահանջների տեսակներով, բողոքարկման ենթակա ակտով և դրա բողոքարկման ծավալներով որոշվում է նաև գանձվող պետական տուրքի չափը, իսկ այդ պահանջները կարող են ներկայացվել թե՛ սկզբնական, թե՛ հակընդդեմ հայցերի շրջանակներում: Միաժամանակ, նկատի ունենալով, որ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանել է, որ հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով, ուստի նշվածից բխում է նաև, որ հակընդդեմ հայցադիմումի համար պետական տուրքը ևս գանձվում է հայցի համար սահմանված կարգով: Հետևաբար նույն գործի շրջանակներում քննվող և՛ սկզբնական, և՛ հակընդդեմ հայցերի դեպքում պետական տուրքը գանձվում է յուրաքանչյուր պահանջների համար առանձին-առանձին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ անկախ այն հանգամանքից, որ հայցը և հակընդդեմ հայցը փոխկապակցված են միմյանց հետ կամ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն առաջ է բերում հակընդդեմ հայցի մերժումը՝ պետք է առաջնորդվել վերը նշված ընդհանուր կանոնով: Հետևաբար՝ պետական տուրքի առարկան ներկայացված պահանջն է, այլ ոչ թե՛ գործի քննությամբ կայացվելիք պահանջի արդյունքը: Այսինքն, պետական տուրքի գումարի չափը և վճարման պարտականությունը ծագում է բացառապես պահանջի ներկայացման կամ ակտի բողոքարկման հետ միասին, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի հանգուցալուծում կստանա վճիռը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անհրաժեշտ է համակցության մեջ մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, (...) սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը ներկայացրել է նոր վերաքննիչ բողոք, որում չի վերացրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր խախտումները, կամ բողոքը ներկայացրել է նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ, կամ նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդություն, որը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերին, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով սահմանվել են վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ընդ որում, օրենսդիրն ամրագրել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգին կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մինչև նույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոք բերող անձին հնարավորություն է տվել օրենքով սահմանված ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված թերությունները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան (*յրեն Վաչագան Արրահամյանը, Անահիտ Մարգարյանն ընդդեմ Գագիկ Մարգարյանի, Կարմեն Մարգարյանի թիվ ԱՎԿ/0670/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.03.2019 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու և այն կրկին ներկայացնելու դատավարական նորմերի վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը տրամադրում է օրենքով սահմանված ժամկետ դրանք վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Ընդ որում, նշված ժամկետը բողոք բերած անձին տրամադրվում է օրենքի ուժով և ենթակա չէ որևէ սահմանափակման: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում (...):

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին: Մասնավորապես՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է (կամ բողոքում ներառվում է) դրա վերաբերյալ միջնորդությունը: (...) *(տե՛ս Գեորգի Ալեքիսյանն ընդդեմ «Հանրապետական անասնաբուժասանկուրարական և բուսասանկուրարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի թիվ ԵԷԴ/0327/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.03.2018 թվականի որոշումը):*

Բացի այդ, մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական ակտը բողոքարկելիս պետական տուրքի վճարման հիմնախնդրին, նշել է, որ յուրաքանչյուր գործով պետական տուրքի վճարման ենթակա չափը որոշվում է հաշվի առնելով տվյալ գործով ներկայացված հայցապահանջը, իսկ դատական ակտը բողոքարկելիս՝ **բողոքարկման ծավալը:** Ըստ այդմ էլ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանել է պետական տուրքի դրույքաչափերը՝ այն պայմանավորելով օրենքով սահմանված մի շարք հանգամանքներով: Օրինակ՝ ըստ ներկայացված հայցապահանջի տեսակի (գույքային և ոչ գույքային, դրամական և ոչ դրամական), ըստ բողոքարկվող առյանների (վերաքննիչ և վճռաբեկ), ըստ վարույթի տեսակների (հատուկ վարույթի վերաբերյալ գործերով դիմումների և այլ դիմումների): Ընդ որում օրենսդրի կողմից կարևորվել է նաև այն հանգամանքը, որ վերաքննության կարգով դատական ակտը բողոքարկելիս պետական տուրքի վճարման չափը կախված է դատական ակտի բողոքարկման ծավալից: Այսինքն՝ վերաքննության կարգով դատական ակտը բողոքարկելիս անձի կողմից վճարման ենթակա պետական տուրքի չափն անմիջականորեն կախվածության մեջ է գտնվում ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից: **Հետևաբար, անձն օգտվելով իր տնօրինչական իրավունքից ինչ ծավալով, որ բողոքարկում է դատական ակտը՝ այն չափով էլ օրենքով սահմանված դրույքաչափին համապատասխան ենթակա է հաշվարկման և վճարման պետական տուրքը** *(տե՛ս Կարեն Գևորգյանն, Ալիսա Զանթարյանն ընդդեմ Լևոն Գևորգյանի թիվ ԵԱԲԳ/4664/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.09.2018 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության հիմնարար իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման համար անձը ևս պարտավոր է վճարել պետական տուրք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում, պետական տուրքի գանձման (վճարման) ընդհանուր կանոնը գործում է նաև դատական ակտերի բողոքարկման պարագայում, ինչից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե դատական ակտը միայն հակընդդեմ հայցի մասով բողոքարկելու արդյունքում ինչպիսի իրավական հետևանքներ կառաջանան, օրենքի ուժով բողոքաբերը բողոք ներկայացնելու պահին պարտավոր է վճարել բացառապես դատական ակտի բողոքարկվող ծավալի համար նախատեսված պետական տուրքի գումարը:

Քննարկվող պարագայում սույն քաղաքացիական գործի շրջանակները ներառել են Հասմիկ Զատիկյանի սկզբնական, այն է՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հայցապահանջը, ու Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացրած՝ ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու և ընդհանուր գույքից բաժնետնան առանձնացնելու հակընդդեմ հայցապահանջը:

Դատարանի 23.04.2018 թվականի վճռով սկզբնական հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցիչը Դատարանի 23.04.2018 թվականի վճռի դեմ փոստային առաքման եղանակով 21.05.2018 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով «(...) որոշում կայացնելու ամբողջությամբ կամ **մասնակիորեն** բեկանելու Երևան քաղաքի 05.02.2018 թվականի թիվ ԵԱԲԳ/2005/02/17 դատական ակտը, վերադարձնելով այն համապատասխան ստորադաս դատարան նոր

քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ, կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը, կայացնել նոր դատական ակտ հակընդդեմ հայցը բավարարելու մասին, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության շահերից»: Վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է **10.000 ՀՀ դրամի չափով** պետական տուրքի վճարման անդորրագիրը (**հատոր 3-րդ, գ.թ. 4-9**):

Վերաքննիչ դատարանը «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 08.06.2018 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին հիմքով վերադարձրել է Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը՝ սահմանելով տասնհինգօրյա ժամկետ դրանում թույլ տված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Միաժամանակ, նշված որոշմամբ Վերաքննիչ դատարանը, ի թիվս այլ խախտումների, արձանագրել է, որ «(...) ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված կանոնի՝ վերաքննիչ բողոքը բովանդակող պահանջը վերաբերում է «Երևան քաղաքի 05.02.2018 թվականի թիվ ԵԱԲԴ/2005/02/17» վճռին, այն պայմաններում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.04.2018 թվականի թիվ ԵԱԲԴ/2005/02/17 վճռի դեմ: Ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասով և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետով սահմանված կանոնների՝ վերաքննիչ բողոքին կցվել է սահմանված չափից պակաս պետական տուրքի վճարման փաստը հավաստող ապացույց: Պատասխանողներ, հակընդդեմ հայցով հայցվորներ **Մարիաննա Սարգսյանի, Պետրոս Սարգսյանի կողմից բողոքարկվում է ոչ գույքային պահանջի գործով վճիռն ամբողջությամբ**, հետևաբար սույն գործով վերաքննիչ բողոքը բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 30.000 ՀՀ դրամ, մինչդեռ վճարվել է 10.000 ՀՀ դրամ (...):» (**հատոր 3-րդ, գ.թ. 11-13**):

Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցիչը 18.06.2018 թվականին փոստային առաքման եղանակով կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով «(...) որոշում կայացնելու մասնակի կամ լրիվ բեկանելու Երևան քաղաքի 05.02.2018 թվականի թիվ ԵԱԲԴ/2005/02/17 դատական ակտը, վերադարձնելով այն համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ, կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը, կայացնել նոր դատական ակտ հակընդդեմ հայցը բավարարելու մասին, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության շահերից»: Ընդ որում, կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքարբերը հստակեցրել է, որ «(...) վճիռը ենթակա է (իմ պահանջի, իմ հակընդդեմ հայցի մասով) բեկանման (...): Վերաքննիչ բողոքին կից՝ նախկինում վճարված 10.000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքի անդորրագրի հետ մեկտեղ, ներկայացվել է ևս **10.000 ՀՀ դրամի չափով** պետական տուրքի վճարման անդորրագիր (**հատոր 3-րդ, գ.թ. 20-22, 27, 29, 30**):

Վերաքննիչ դատարանը, 29.06.2018 թվականի որոշմամբ Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով, պատճառաբանել է, որ «(...) ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կանոնի՝ վերաքննիչ բողոքին կցված է սահմանված չափից պակաս պետական տուրքի վճարման փաստը հավաստող ապացույց: Բողոքը ներկայացրած անձինք պետք է վճարեին 30.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, ինչն արձանագրվել է Վերաքննիչ դատարանի 08.06.2018 թվականի որոշմամբ, մինչդեռ վերջիններս վճարել են միայն 20.000 ՀՀ դրամ: Բացի այդ, ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված կանոնի՝ վերաքննիչ բողոքը բովանդակող պահանջը կրկին վերաբերում է «Երևան քաղաքի 05.02.2018 թվականի թիվ ԵԱԲԴ/2005/02/17» վճռին, այն պայմաններում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի

23.04.2018 թվականի թիվ ԵԱԲԴ/2005/02/17 վճռի դեմ (...): Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ 08.06.2018 թվականի որոշմամբ մատնանշված թերությունները բողոք ներկայացրած անձի կողմից ամբողջությամբ չեն վերացվել, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքի ընդունումն ենթակա է մերժման (**հատոր 3-րդ, գ.թ. 31-32**):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Քննարկվող պարագայում պետական տուրքի հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը պետք է կարևորեր այն հանգամանքը, թե ինչ ծավալով է բողոքարկվել Դատարանի վճիռը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ, որ բողոքաբերների կողմից վճարման ենթակա պետական տուրքի չափն անմիջականորեն կախված է դատական ակտի բողոքարկման ծավալից, ինչպես նաև ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից: Հետևաբար՝ բողոք բերած անձինք պետք է հաշվարկելին և վճարելին պետական տուրքն այն չափով, որ պահանջի մասով, որ բողոքարկել են դատական ակտը, որպիսի փաստն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Մասնավորապես, ինչպես արդեն վերը նշվեց, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը հստակեցրել է, որ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար՝ ոչ դրամական պահանջների գործերով, պետք է վճարվի պետական տուրք յուրաքանչյուր պահանջի համար՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

Սույն գործով առկա է երեք ոչ դրամական պահանջ՝ սկզբնական հայցի մասով՝ 1. ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջը, իսկ հակընդդեմ հայցի մասով՝ 1. ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջը և 2. ընդհանուր գույքից բաժնեմասն առանձնացնելու պահանջը:

Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցիչը, բողոքարկելով Դատարանի 23.04.2018 թվականի վճիռը, ինչպես սկզբնական, այնպես էլ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքներով, ներկայացրել է այլընտրանքային պահանջ, միաժամանակ հստակեցնելով, որ Դատարանի վճիռը բողոքարկվում է **հակընդդեմ հայցը մերժելու մասով**: Ավելին, կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքաբերը հստակեցրել է, որ «(...) վճիռը ենթակա է (իմ պահանջի, իմ **հակընդդեմ հայցի մասով**) բեկանման (...):»

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հակընդդեմ հայցը բաղկացած է երկու ոչ դրամական պահանջներից, ինչից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե դատական ակտը միայն հակընդդեմ հայցի մասով բողոքարկելու արդյունքում ինչպիսի իրավական հետևանքներ կառաջանան, օրենքի ուժով բողոք ներկայացնելու պահին ենթակա էր վճարման բացառապես դատական ակտի բողոքարկվող պահանջի համար նախատեսված պետական տուրքի գումարը: Այսինքն, այնքանով, որ վերաքննիչ բողոքում ներկայացվել էր այլընտրանքային (ալտերնատիվ) պահանջ՝ բեկանել դատական ակտը հակընդդեմ հայցապահանջի բավարարման մասով, և քանի որ հակընդդեմ հայցապահանջի մասով երկու ոչ դրամական պահանջի համար բողոք բերած անձի կողմից վճարվել էր 20.000 ՀՀ դրամ, ուստի Վերաքննիչ դատարանի փաստարկը չի բխել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի դրույթներից:

Տվյալ դեպքում բողոքաբերների կողմից ներկայացվել են 20.000 ՀՀ դրամ վճարված լինելու փաստը հավաստող պետական տուրքի վճարման անդորրագրեր, ինչը նշանակում է, որ հակընդդեմ հայցապահանջի համար օրենքով սահմանված չափով պետական տուրքն ամբողջությամբ վճարվել է, որպիսի փաստն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերների կողմից վերաքննիչ բողոք բերելու համար վճարվել է օրենքով սահմանված կարգով և չափով՝ 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար, ուստի այդ հիմքով բողոքի ընդունումը մերժելն անհիմն է:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի մյուս հիմքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող 29.06.2018 թվականի որոշմամբ, որպես

բողոք բերած անձի կողմից չվերացված խախտում, արձանագրել է նաև այն փաստը, որ վերաքննիչ բողոքը բովանդակող պահանջը կրկին վերաբերում է «Երևան քաղաքի 05.02.2018 թվականի թիվ ԵԱՔԴ/2005/02/17 վճռին»՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության 23.04.2018 թվականի թիվ ԵԱՔԴ/2005/02/17 վճռի դեմ:

Գործում առկա՝ 18.06.2018 թվականին փոստային առաքմամբ ներկայացված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից հետևում է, որ բողոքի ներածական մասում նշվել է «վերաքննիչ բողոք՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (ստտավայր Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության) 23.04.2018 թվականի թիվ ԵԱՔԴ/2005/02/17 վճռի դեմ», բացի այդ բողոքի բովանդակությունից ևս հստակ է, որ բողոքը ներկայացվել է Դատարանի 23.04.2018 թվականի վճռի դեմ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկվել է Դատարանի 23.04.2018 թվականի վճիռը (**հատոր 3-րդ, գ.թ. 20-22, 30**):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհիմն կերպով մերժել է Մարիաննա և Պետրոս Սարգսյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը, վերջիններիս գրկելով Դատարանի 23.04.2018 թվականի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, միաժամանակ սահմանափակելով նրանց՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը՝ արդյունքում թույլ տալով այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 29.06.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 29.06.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ՎԳ/5605/05/19
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԳ/5605/05/19
2020թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի հուլիսի 01-ին
քննելով ըստ հայցի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝
Ընկերություն) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)
26.04.2019 թվականին ՀՀ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից
ընդունված թիվ 49-Ա ակտը վերացնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերա-
քննիչ վարչական դատարանի 23.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մա-
սին» որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչներ Արթուր Հովհաննիսյանի և Ռուբեն
Ժամազորձյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել 26.04.2019 թվականին ՀՀ
ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը:
ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան)
29.07.2019 թվականի որոշմամբ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումի ըն-
դունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.09.2019 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ: Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերության ներկայացուցիչները: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 80-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, «Վարչատարածքային հիմնաքննչի և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները մի կողմից հաստատել են ակտի բողոքարկման իրավունքի առկայությունը, սակայն մյուս կողմից բացառել են հայցադիմումի քննությունը վարչական դատավարության կարգով: Մինչդեռ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտն առհասարակ հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը: Այն հանգամանքը, որ վիճարկվող ակտով հայցվորին համապատասխան կարգադրություններ կամ հրամաններ չեն տրվել, որևէ կերպ չի կարող սահմանափակել հայցվորի դատական բողոքարկման իրավունքը, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը որևէ բացառություն չի սահմանում՝ կապված կարգադրություն կամ հրաման լինելու կամ չլինելու հետ:

Միաժամանակ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ ստուգումների իրականացման նպատակը պետությանը ներկայացված հաշվետվությունների իսկության ստուգումն է, որը հետապնդում է հանրային շահի պաշտպանության նպատակ:

Ինչ վերաբերում է սույն գործով ստուգման արդյունքում կազմված ակտին, ապա այն միջամտող վարչական ակտ է, քանի որ միջամտող վարչական ակտ է համարվում նաև այն ակտը, որը ցանկացած այլ եղանակով վատթարացնում է անձի իրավական կամ փաստացի դրությունը: Սույն դեպքում վարկաբեկվել է Ընկերության գործարար համբավը, որը փաստացի դրության վատթարացում է, բացի այդ, վատթարացել և կարող է վատթարանալ Ընկերության իրավական դրությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 23.09.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ բեկանել Դատարանի 29.07.2019 թվականի որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտի բողոքարկման հարցի և այդ վեճերի ընդդատության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենանանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

2) ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 80-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապարասիան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտի արդյո՞ք ենթակա է բողոքարկման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապարասիան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը, որով անմիջականորեն հարկային պարտավորություններ չեն սահմանափակում փնտրվարող սուբյեկտի համար, պետք է բողոքարկվի վիճարկման, թե՛ ճանաչման հայցի ներկայացմամբ:

1. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման

սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*ընՆու Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*ընՆու Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*ընՆու Khalfaoi v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևակերպություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*ընՆու Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ գտել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է այս կամ այն գործի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու կամ չլինելու հարցի հետ, (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից: Այդ իսկ պատճառով օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության (յրեն *Լուսակերտ Մարզայանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/7047/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.04.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը *հայց հարուցելու իրավունք ստիստարակ չունի*, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը (յրեն *Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև անհրաժեշտ է համարել ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը որդեգրել է այն կառուցակարգը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված «հայցը ենթակա չէ դատարանում քննության» արտահայտությունը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Հետևաբար, վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս վարչական դատարանը պարտավոր է ցույց տալ այն իրավական և փաստական հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու տվյալ վեճը: Ընդ որում, հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ դատարանի առջև բարձրացված վեճը (հայցը) ենթակա չէ դատարանի քննությանը (յրեն *նաև Գագիկ Մաթևոսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԳ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգումն իրականացնող անձը (...) ամփոփում է ստուգման արդյունքները *խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմում պեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտի նախագիծ*: (...) Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: (...) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում

իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից (...) ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունները կցվում են ակտին և կազմում դրա անբաժանելի մասը: (...)

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև *ստուգման արդյունքում կազմված ակտը* երկու ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում, կարող են բողոքարկվել այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է (են) ստուգող անձը (անձինք), կամ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով, *կամ դատարան:* (...) Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքները վերադասության կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Սույն կետով սահմանված ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընդունված որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի *բողոքարկել դատարան:* Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, *իսկ նշված ստուգման ընթացքում ստուգող անձի գործողությունները և ստուգման արդյունքում կազմված ակտը՝ նույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կարգով:*

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում, որ օրենսդիրը հստակորեն սահմանել է անձի իրավունքը՝ վարչական կարգով կամ դատական կարգով բողոքարկելու ստուգման արդյունքում կազմված ակտը: Ընդ որում, հատուկ նաև սահմանվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը ենթակա է բողոքարկման ընդհանուր կարգով, այսինքն՝ կարող է բողոքարկվել նաև դատարան այն նույն կարգով, ինչ ոչ քրեադատավարական կարգով նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը:

Հետևաբար, Եվրոպական դատարանի և ՀՀ Մահմանադրական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա կազմված ստուգման ակտի բողոքարկման իրավունքն արդար դատարանության իրավունքի անբաժանելի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի դրսևնորում է:

Միաժամանակ, նկատի ունենալով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում հայտնած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ եթե օրենսդիրը հստակ ամրագրել է ստուգման ակտի դատական բողոքարկման իրավունքը, նման ակտի բողոքարկմամբ պայմանավորված վեճը *ենթակա է քննության* դատարանում: Ուստի, վարչական դատավարության կարգով ներկայացված հայցադիմումի ընդունումը չի

կարող մերժվել կամ հարուցված գործի վարույթը չի կարող կարճվել այն հիմքով, որ հայցը կամ վեճը ենթակա չէ քննության որևէ դատարանում:

Ավելին, Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ օրենքով ուղղակիորեն սահմանված դատական բողոքարկման իրավունքի առկայության պայմանում ՀՀ վարչական դատարանը ոչ միայն չի կարող մերժել հայցադիմումի ընդունումը կամ կարճել գործի վարույթը, այլ նաև պարտավոր է օգտվել հայցադիմումի վերահասցեագրման կառուցակարգից, եթե կարծում է, որ տվյալ վեճը չի կարող քննվել վարչական դատավարության կարգով:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը, նպատակ ունենալով վարչական արդարադատության համակարգում ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, նախատեսել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Ընդ որում, այս կառուցակարգը վարչական դատավարության համակարգ ներդրվեց 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (մինչ այդ գործող՝ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը նշված կանոնի խախտումը դիտում էր որպես գործի վարույթի կարճման հիմք): Հայցադիմումը վերահասցեագրելը սահմանելով որպես վարչական դատարանի պարտականություն՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության: Այսպիսով, վարչական դատարանը, կաշկանդված լինելով արդարադատության պատշաճ իրականացման և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովման կոնվենցիոն կարգավորումներով, պարտավոր է պարզել, թե արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՛ ոչ, և գործը վարչական դատարանին ընդդատյա չլինելու պարագայում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը:

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է, որ վարչական դատարանին որևէ գործի ընդդատյա չլինելու հանգամանքն այդ գործի քննության ընթացքում պարզվելու իրավաբանական հետևանքն այն է, որ վարչական դատարանը որոշում է կայացնում տվյալ գործն ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին (որն «*Էտաթ*» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քրեադատավարական կարգով նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը ենթակա է բողոքարկման դատական կարգով, ուստի՝ վարչական դատավարության կարգով ակտի բողոքարկում իրականացված լինելու պայմաններում դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել կամ գործի վարույթը կարճել չի կարող՝ հայցը կամ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

2. Նախորդ կետում կատարված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե որ դատարանը պետք է քննի քրեադատավարական կարգով նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտի բողոքարկման վեճը:

ՀՀ դատական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դատարանները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնագիտացված դատարաններն են վարչական դատարանը և սնանկության դատարանը:

ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործը քննում են քաղաքացիական կամ քրեական մասնագիտացման դատավորները:

ՀՀ դատական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության դատարանին են ենթակա սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (կյուրեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում:

Վերը ներկայացված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե որ դատարանը պետք է քննի հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա նշանակված ստուգման արդյունքում կայացված ակտի դեմ ներկայացված բողոքը:

Նախ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները:

Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (տե՛ս «Վեսար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մերավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0823/05/14, թիվ ՎԳ/0830/05/14 և թիվ ՎԳ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նշված օրենքի շրջանակներում ստուգումների իրականացման արդյունքում ծագող իրավահարաբերությունները հանրային են, քանի որ նախ ստուգում իրականացնող անձը ստուգումների ընթացքում հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, որը հիմնավորվում է նույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ստուգում իրականացնող անձի լիազորությունների շրջանակով (օրինակ՝ պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, սահմանել ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն, ստուգման հրամանում նշված հարցերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջել անցկացնելու ակտիվների և պարտավորությունների գույքագրումներ և այլն): Բացի այդ, նույն օրենքի 2-րդ հոդվածով թվարկվում են այն պետական մարմինները, որոնք օժտված են Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ:

Ինչ վերաբերում է հանրային շահի իրացման կապակցությամբ իրավահարաբերության առաջացման պայմանին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված **ստուգման նպատակը** (այն է՝ ստուգման նպատակը *ունենալու արժանահավատության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և անարտասովոր սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատարանի օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում նաև անարտասովոր սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին պարբերի փաստացի իրավիճակը պարզելն է) բավարար է արձանագրելու համար, որ ստուգումների իրականացման հիմքում հենց հանրային շահն է:*

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ստուգումների արդյունքում ծագող իրավահարաբերությունները հանրային բնույթի են: Ուստի, բացառվում է ստուգումների իրականացման կապակցությամբ ստուգում իրականացնող մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև ծագող վեճերի քննությունը ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես քաղաքացիական գործ, կամ ՀՀ սնանկության դատարանում:

Նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով տարանջատվել է ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի **որոշման** բողոքարկումը ստուգման ընթացքում ստուգող անձի **գործողությունների** և ստուգման արդյունքում կազմված **ակտի** բողոքարկումից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի նպատակն է եղել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտը չտարբերակել նույն օրենքով իրականացվող այլ ստուգումների արդյունքում կազմված ակտերից:

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանման կանոնը (*Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փաստացի նշանակությունից, ակնթոյժ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համալրաբարից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից*), կարևորելով նաև ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 04.02.2010 թվականին ընդունված և 30.03.2010 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-17-Ն օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ արտահայտված օրենսդրի նպատակը (*մասնավորապես, նախագծի հիմնավորմանը կարևորվել է, որ քրեադատարարական կարգով իրականացված արուզումների վրա տարածվեն «Հայաստանի Հանրապետությունում արուզումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթները*) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում նշված բողոքարկումը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատարանում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը.

Սույն գործում առկա 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 04.10.2018 թվականի թիվ 49-Ա և 30.10.2018 թվականի թիվ 54-Ա հանձնարարագրերի համաձայն՝ Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունն Ընկերությունում իրականացրել է ֆինանսատնտեսական ստուգում՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության 10.09.2018 թվականի թիվ 18-482-կգ-18 գրությամբ ներկայացված՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների վարչության ՀԿԳ ավագ քննիչի կողմից 10.09.2018 թվականի «Ստուգում (ֆինանսատնտեսական) նշանակելու մասին» կայացրած որոշմամբ, ինչպես նաև 24.09.2018 թվականի թիվ 18-482ԿԳ-18 գրությամբ առաջադրված հարցերի շրջանակներում: Թիվ 49-Ա ակտով արձանագրվել են մի շարք փաստեր (այդ թվում՝ ենթադրաբար թույլ տրված խախտումներ): Ակտում կատարվել է եզրահանգում այն մասին, որ «Ընկերությունում իրականացված ստուգմամբ արձանագրված փաստերի գծով հնարավոր հարկային պարտավորությունների առաջացման հարցը կարող է պարզվել հարկային մարմնի կողմից» (**հատոր 1-ին, գ.թ. 41-48**):

ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2019 թվականի գրությամբ մերժվել է 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտի դեմ Ընկերության կողմից ներկայացված վարչական բողոքը (**հատոր 1-ին, գ.թ. 49-57**):

Դիմելով Դատարան՝ Ընկերությունը փորձել է հիմնավորվել, որ ստուգումների ընթացքում, ինչպես նաև ակտի ընդունման ժամանակ թույլ են տրվել ընթացակարգային խախտումներ, բացի այդ, ակտում արձանագրված խախտումներն իրականում առկա չեն: Ընկերությունը խնդրել է «վերացնել 26.04.2019 թվականին Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը» (**հատոր 1-ին, գ.թ. 3-40**):

Դատարանը 29.07.2019 թվականի որոշմամբ մերժել է հայցադիմումի ընդունումը՝ արձանագրելով, որ վիճարկվող ակտը վարչական ակտ չէ, քանի որ այն ուղղված չէ հայցվորի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, դրա միջոցով վարչական մարմինը չի մերժել, միջամտել, ընդհուպ սահմանափակել հայցվորի իրավունքների իրականացումը: Դատարանը գտել է, որ նշված ակտը տեղեկատվական բնույթի փաստաթուղթ է: Ուստի եզրահանգել է, որ այդ ակտի որպես միջամտող վարչական ակտի անվավեր ճանաչելու հայցը ենթակա չէ քննության դատարանում:

Վերաքննիչ դատարանը 23.09.2019 թվականի որոշմամբ արձանագրել է, որ վիճարկվող ակտը վարչական ակտ չէ և մերժել է Հնկերության վերաքննիչ բողոքը՝ հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները:

Սույն որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե („ex officio“): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: (...) Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝

ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը.

գ) զուգորդվող վարչական ակտն այն վարչական ակտն է, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ (որեն՝ *Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատարանական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

- վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

- վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

- վարչական ակտն **ուղղակի իրավական հետևանքներ** է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (*տե՛ս Ռոբերտ Հովհաննիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտն առնվազն այնքանով, որքանով ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում Հնկերության համար, այլ պարզապես արձանագրում է որոշակի խախտումներ, չի կարող դիտարկվել վարչական ակտ, քանի որ չի բավարարում վարչական ակտի բոլոր որակական չափանիշներին: Հետևաբար այս մասով հիմնավոր չէ բողոքաբերի այն պնդումը, որ նշված ակտը միջամտող վարչական ակտ է:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը նույնանման դիրքորոշում հայտնել է նաև ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտերի կապակցությամբ՝ դրանք չհամարելով վարչական ակտ (*տե՛ս օրինակ, «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության թիվ 3-1655(ՏԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը, «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/0155/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացված

ստուգման արդյունքում կազմված ակտը, որում պարզապես արձանագրվում են որոշակի խախտումներ, սակայն ուղղակի պարտավորություններ չեն առաջադրվում, **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում պետք է բողոքարկվի ճանաչման հայցի շրջանակներում**՝ նկատի ունենալով, որ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն տվող միակ դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքն է, որը մասնավորապես արտահայտվում է դատարանի ակտիվ դերակատարությամբ այնպիսի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելիս, ինչպիսիք են՝ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը ճիշտ ընտրելը կամ իրենց հայցային պահանջները ճիշտ ձևակերպելը: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (տե՛ս նաև Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը, Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կարարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը):

Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կարարումն ապահովող ծառայության գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում:

Ընդ որում, վերոգրյալ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև պրակտիկայում հանդիպող այն իրավիճակներին, երբ անձը, դիմելով վարչական դատարան, ցանկանում է հասնել **վարչական ակտ չհանդիսացող** անհատական իրավական ակտի վերացմանը և իր իրավունքների և շահերի դատական պաշտպանության համար ընտրել է ոչ ճիշտ հայցատեսակ՝ իր պահանջը ձևակերպելով տվյալ պարագայում ոչ կիրառելի՝ վիճարկման հայցատեսակի հայցի առարկային համապատասխան՝ պահանջելով վերացնել ոչ թե վարչական ակտ, այլ վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտ: Նման պայմաններում հայցվորի իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության համար պատշաճ հայցատեսակի ընտրության իրավական հնարավորության առկայության դեպքում վարչական դատարանը պարտավոր է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման միջոցով մատնանշել հայցվորին այդ իրավական

հնարավորությունը և առաջարկել վերջինիս ներկայացնելու տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և օրենքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային բնորոշ հայցապահանջ:

Հիմք ընդունելով *Վարուժան Ավերիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով բարձրացված իրավական խնդրի շրջանակներում արձանագրում է, որ վարչական ակտ չհանդիսացող, սակայն բողոքարկման ենթակա ստուգման ակտի վերացման պահանջով հայցը վարույթ ընդունելու հարցը որոշելիս Դատարանը, պարզելով, որ ներկայացվել է վիճարկման հայց, պետք է իրագործեր գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքի համաձայն իր վրա դրված պարտականությունը և հայցադիմումը վերադարձնելու միջոցով անձին առաջարկեր ճշտել ոչ հստակ հայցային պահանջները և ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով: Այսինքն՝ Դատարանը պարտավոր էր առաջարկել (մատնանշել) Ընկերությանն իր կողմից ներկայացված ոչ ճիշտ հայցատեսակը՝ 26.04.2019 թվականին ՀՀ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը վերացնելու պահանջի մասին վիճարկման հայցը փոխարինել պատշաճ հայցատեսակով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցով:

Այսպիսով, Ընկերության հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում Դատարանը պարտավոր էր հայցվորին մատնանշել պատշաճ հայցատեսակը, այսինքն՝ կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ Ընկերությանն առաջարկ անելու (ճիշտ հայցատեսակը մատնանշելու) իր պարտականությունը: Միայն այդ դատավարական գործողությունը կատարելու պայմաններում Դատարանը կարող էր լուծել Ընկերության հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը ենթակա էր վերադարձման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով, քանի որ տվյալ հայցադիմումը ներկայացվել է ոչ պատշաճ հայցատեսակով՝ վիճարկման հայցով, և չի բովանդակում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցատեսակին համապատասխան պահանջ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ 26.04.2019 թվականին ՀՀ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը վերացնելու վերաբերյալ Ընկերության ներկայացված հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով այն պայմաններում, երբ Դատարանը հայցադիմումը վերադարձնելու միջոցով չի կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ Ընկերությանն առաջարկ անելու իր դատավարական պարտականությունը:

Հետևաբար սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Ընկերության հայցադիմումը վերադարձնելու միջոցով պատշաճ հայցատեսակը մատնանշելու համար անհրաժեշտ է վերացնել Վերաքննիչ դատարանի 23.09.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԳ/5605/05/19 վարչական գործով 01.07.2020
թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 01.07.2020 թվականին քննելով ըստ հայցի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ 26.04.2019 թվականին ՀՀ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը վերացնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչներ Արթուր Հովհաննիսյանի և Ռուբեն Ժամագործյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Գոռ Հակոբյանս և Սուրեն Աստուխյանս համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել 26.04.2019 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 29.07.2019 թվականի որոշմամբ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.09.2019 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերության ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի ասհմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախրել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 80-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետությունում սրուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված սխառնքներ է հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները մի կողմից հաստատել են ակտի բողոքարկման իրավունքի առկայությունը, սակայն մյուս կողմից բացառել են հայցադիմումի քննությունը վարչական դատավարության կարգով: Մինչդեռ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտն առհասարակ հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ

վեճը: Այն հանգամանքը, որ վիճարկվող ակտով հայցվորին համապատասխան կարգադրություններ կամ հրամաններ չեն տրվել, որևէ կերպ չի կարող սահմանափակել հայցվորի՝ դատական բողոքարկման իրավունքը, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը որևէ բացառություն չի սահմանում՝ կապված կարգադրություն կամ հրաման լինելու կամ չլինելու հետ:

Միաժամանակ, ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ ստուգումների իրականացման նպատակը պետությանը ներկայացված հաշվետվությունների իսկության ստուգումն է, որը հետապնդում է հանրային շահի պաշտպանության նպատակ:

Ինչ վերաբերում է սույն գործով ստուգման արդյունքում կազմված ակտին, ապա այն միջամտող վարչական ակտ է, քանի որ միջամտող վարչական ակտ է համարվում նաև այն ակտը, որը ցանկացած այլ եղանակով վատթարացնում է անձի իրավական կամ փաստացի դրությունը: Սույն դեպքում վարկաբեկվել է Ընկերության գործարար համբավը, որը փաստացի դրության վատթարացում է, բացի այդ, վատթարացել է կարող է վատթարանալ Ընկերության իրավական դրությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 23.09.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ բեկանել Դատարանի 29.07.2019 թվականի որոշումը»:

3. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործով վիճարկվող 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 04.10.2018 թվականի թիվ 49-Ա և 30.10.2018 թվականի թիվ 54-Ա հանձնարարագրերի հիման վրա Նախարարության ֆինանսարկայության վերահսկողության վարչությունն Ընկերությունում իրականացրել է ֆինանսատնտեսական ստուգում՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության 10.09.2018 թվականի թիվ 18-482-կգ-18 գրությամբ ներկայացված՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների վարչության ՀԿԳ ավագ քննիչի կողմից 10.09.2018 թվականի «Ստուգում (ֆինանսատնտեսական) նշանակելու մասին» կայացրած որոշմամբ, ինչպես նաև 24.09.2018 թվականի թիվ 18-482ԿԳ-18 գրությամբ առաջադրված հարցերի շրջանակներում: Թիվ 49-Ա ակտով արձանագրվել են մի շարք փաստեր (այդ թվում՝ ենթադրաբար թույլ տրված խախտումներ): Ակտում կատարվել է եզրահանգում այն մասին, որ «Ընկերությունում իրականացված ստուգմամբ արձանագրված փաստերի գծով հնարավոր հարկային պարտավորությունների առաջացման հարցը կարող է պարզվել հարկային մարմնի կողմից» (**հատոր 1-ին, գ.թ. 41-48**):

ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2019 թվականի գրությամբ մերժվել է 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտի դեմ Ընկերության կողմից ներկայացված վարչական բողոքը (**հատոր 1-ին, գ.թ. 49-57**):

Իմելով Դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել 26.04.2019 թվականին Նախարարության ֆինանսարկայության վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը (**հատոր 1-ին, գ.թ. 3-40**):

Դատարանը 29.07.2019 թվականի որոշմամբ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, մերժել է հայցադիմումի ընդունումը՝ արձանագրելով, որ վիճարկվող ակտը վարչական ակտ չէ, քանի որ այն ուղղված չէ հայցվորի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, դրա միջոցով վարչական մարմինը չի մերժել, միջամտել, ընդհուպ սահմանափակել հայցվորի իրավունքների իրականացումը: Դատարանը գտել է, որ նշված ակտը տեղեկատվական բնույթի փաստաթուղթ է: Ուստի եզրահանգել է, որ այդ ակտի՝ որպես միջամտող վարչական ակտի անվավեր ճանաչելու հայցը ենթակա չէ քննության դատարանում:

Վերաքննիչ դատարանը 23.09.2019 թվականի որոշմամբ արձանագրել է, որ վիճարկվող ակտը վարչական ակտ չէ և մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն իրավական հարցադրումներին, թե չէ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը ենթակա է արդյո՞ք բողոքարկման չէ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, թե չէ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը, որով անմիջականորեն հարկային պարտավորություններ չեն սահմանվում փաստավարող սուբյեկտի համար, պետք է բողոքարկվի վիճարկման, թե՞ ճանաչման հայցի ներկայացմամբ, որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել չէ վերաքննիչ վարչական դատարանի 23.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել չէ վարչական դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը, հետևյալ հիմնավորմամբ. «(...) սույն գործով 26.04.2019 թվականի թիվ 49-Ս ակտն առնվազն պնդանով, որքանով ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում Ընկերության համար, այլ պարզապես արձանագրում է որոշակի խախտումներ, չի կարող դիտարկվել վարչական ակտ, քանի որ չի բավարարում վարչական ակտի բողոք որակական չափանիշներին: Հետևաբար, այս մասով հիմնավոր չէ բողոքարկի այն պնդումը, որ նշված ակտը միջանորոգ վարչական ակտ է:

(...) Հայտարարի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը, որում պարզապես արձանագրվում են որոշակի խախտումներ, սակայն ուղղակի պարտավորություններ չեն առաջադրվում, չէ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում պետք է բողոքարկվի ճանաչման հայցի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն փոխ միակ դատավարական կառուցվածքը չէ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է:

(...) վարչական ակտ չհանդիսացող, սակայն բողոքարկման ենթակա ստուգման ակտի վերացման պահանջով հայցը վարույթ ընդունելու հարցը որոշելիս Դատարանը, պարզելով, որ ներկայացվել է վիճարկման հայց, պետք է իրագործեր գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի համաձայն իր վրա դրված պարտականությունը և հայցադիմումը վերադարձնելու միջոցով անձին առաջարկեր ճշտել ոչ հարակ հայցային պահանջները և ոչ ճիշտ հայցարեալները փոխարինել պատշաճ հայցարեալներով: Այսինքն՝ Դատարանը պարտավոր էր առաջարկել (մատնանշել) Ընկերությանն իր կողմից ներկայացված ոչ ճիշտ հայցարեալները (26.04.2019 թվականին չէ ֆինանսարկային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ս ակտը վերացնելու պահանջի մասին վիճարկման հայցը փոխարինել պատշաճ հայցարեալով՝ չէ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցով:

Այսպիսով, Ընկերության հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում Դատարանը պարտավոր էր հայցվորին մատնանշել պատշաճ հայցարեալներ, այսինքն՝ կատարել ոչ ճիշտ հայցարեալներ պատշաճ հայցարեալով փոխարինելու վերաբերյալ Ընկերությանն առաջարկ անելու (ճիշտ հայցարեալներ մատնանշելու) իր պարտականությունը: Միայն այդ դատավարական գործողությունը կարարելու պայմաններում Դատարանը կարող էր լուծել Ընկերության հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը: Վճռաբեկ դատարանը գրնում է, որ փյայ դեպքում Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը ենթակա էր վերադարձման չէ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով, քանի որ փյայ հայցադիմումը ներկայացվել է ոչ պատշաճ հայցարեալներով՝ վիճարկման հայցով, և չի բովանդակում չէ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցարեալին համապատասխան պահանջ:

Ամիսիկելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ 26.04.2019 թվականին չէ ֆինանսարկային վերահսկողության վարչության կողմից

ընդունված թիվ 49-Ա ակտը վերացնելու վերաբերյալ Ընկերության ներկայացված հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով այն պայմաններում, երբ Դատարանը հայցադիմումը վերադարձնելու միջոցով չի կարարել ոչ ճիշտ հայցարեւասկը պարզան հայցարեւասկով փոխարինելու (պարզան հայցարեւասկը մատնանշելու) վերաբերյալ Ընկերությանն առաջարկ անելու իր դատավարական պարտականությունը:

Հետևաբար, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Ընկերության հայցադիմումը վերադարձնելու միջոցով պարզան հայցարեւասկը մատնանշելու համար անհրաժեշտ է վերացնել Վերաքննիչ դատարանի 23.09.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը» (դրեն Վճռաբեկ դատարանի որոշման 14-16 էջերը):

Վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյան, Գոռ Հակոբյան և Սուրեն Ասրոնյան, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմանը արտահայտած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը այդ որոշման պարճատարական մասի վերաբերյալ:

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել 26.04.2019 թվականին Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից ընդունված թիվ 49-Ա ակտը՝ պնդելով, որ նշված վարչական ակտով արձանագրվել են ենթադրյալ խախտումներ դրամական միջոցների ելքագրման և մուտքագրման վերաբերյալ, այլ տնտեսվարող սուբյեկտների հետ քաղաքացիաիրավական հարաբերություններում թույլ տրված խախտումներ, որով ոչ միայն վարկաբեկվում է հայցվորի գործարար համբավը, քանի որ դրա հետևանքով հայցվորը երրորդ անձանց կողմից դիտարկվում է որպես իրավախախտ կազմակերպություն, այլ նաև Հայաստանի Հանրապետությունն Ընկերությանը «մեղադրում է»՝ իրավախախտումներ կատարելու մեջ, որը չի կարող մեկնաբանվել այլ կերպ, քան փաստացի դրության վատթարացում, հետևաբար նշված ակտը հայցվոր Ընկերության համար ունի միջամտող ազդեցություն:

Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչները հավելել են, որ վիճարկվող ակտով ոչ միայն վատթարացել է հայցվորի փաստացի դրությունը, այլ նաև վատթարացել է և կարող է վատթարանալ իրավական դրությունը, մասնավորապես այն առումով, որ հայցվորը ակտի ընդունման պահից սկսած որևէ կերպ չի կարող իր վարքագիծը համապատասխանեցնել ակտին, քանի որ դրանով սահմանված չէ վերջինիս կողմից ընդունելի վարքագիծը և դրա բացակայության պայմաններում հայցվորի համար անորոշ է մնում որևէ վարքագծի ընտրությունը, իսկ ՀՀ իրավական համակարգում չպետք է տեղ գտնի միայն «մեղադրական» փաստերի շարադրությունը, այլ խախտումներ արձանագրելով, անգամ եթե օբյեկտիվ իրականությունում այդպիսիք չկան, պետք հստակեցվի տնտեսվարող սուբյեկտի համար հետագա իրավաչափ վարքագծի ընտրությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի վկայակոչմամբ Ընկերության ներկայացուցիչները պնդել են, որ քրեական դատավարության ընթացակարգով մինչդատական վարույթն իրականացնող մարմնի (քննիչի) հանձնարարականով մեկ այլ պետական մարմնի, տվյալ դեպքում՝ ՀՀ Ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված ակտը ենթակա է բողոքարկման և՛ վերադատության, և՛ դատական կարգով:

Գտնում ենք, որ սույն գործով վիճարկվող 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտը միջամտող վարչական ակտ հանդիսանալու և վիճարկման հայցով բողոքարկման ենթակա լինելու մասին բողոքաբերի փաստարկները հիմնավոր են, իսկ նշված վարչական ակտի բոլոր որակական չափանիշներին չհամապատասխանելու վերաբերյալ ինչպես ստորադաս դատարանների, այնպես էլ Վճռաբեկ դատարանի եզրահանգումները չեն բխում

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներից հետևյալ պատճառաբանությամբ.

Նախևառաջ հարկ ենք համարում ընդգծել, որ գործող վարչադատավարական կանոնների համաձայն՝ վիճարկման հայցի առարկա կարող է հանդիսանալ բացառապես միջամտող վարչական ակտը:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Օրենսդիրը, ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման և ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (*իրեն Սվեդլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դատարան է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*իրեն Սասնիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԳ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե ոչ:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վերլուծության ենթարկելով վարչական ակտին բնորոշ որակական հատկանիշները, գտել է, որ 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտը չի բավարարում վարչական ակտի բոլոր որակական չափանիշներին, հետևաբար առնվազն այնքանով, որքանով այն ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում Ընկերության համար, այլ պարզապես արձանագրում է որոշակի խախտումներ, չի կարող դիտարկվել միջամտող վարչական ակտ:

Գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգումը չի բխում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի պահանջներից, իսկ սույն գործով վիճարկվող 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտը համապատասխանում է նույն հոդվածով սահմանված միջամտող վարչական ակտի բնորոշմանը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիմքով կարող դառնալ վիճարկման առարկա հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դրանում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում (*լրեն Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/12466/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

Վերոգրյալից իրավակարգավորումների հիման վրա գտնում ենք, որ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչական վարույթն ու դրա արդյունքում ընդունվող վարչական ակտը պետք է համապատասխանեն ինչպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, այնպես էլ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վարչական մարմնի արտաքին ներգործություն ունեցող որևէ գործունեություն բնավ ինքնանպատակ չէ և պետք է հետապնդի նպատակներ, որոնց հասնելով էլ այդ գործունեությունը պետք է եզրափակվի: Վարչական մարմինը չի կարող գործունեություն ծավալել լոկ գործելու պատրանք առաջացնելու համար: Դա էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի:

Վարչական մարմինների հիմնական գործառնությանն նպատակը Սահմանադրության և օրենքների իրականացումն է (կատարումը) իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:

Այսպիսով, վարչական մարմինների վերոնշյալ նպատակներով պայմանավորված արտաքին ներգործությանն ուղղված գործունեությունը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի, արտահայտվելով որոշակի վարչական (իրավական) ակտի կամ փաստացի ներգործության տեսքով: Այդ գործունեությունը, ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես նաև գործողությամբ կամ անգործությամբ, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Հարկ ենք համարում առանձնահատուկ անդրադառնալ վարչարարության հետևանքներին՝ դրանց արդյունքով պայմանավորված:

Այսպես. վարչարարության արդյունքը վրա է հասնում հետևյալ եղանակներով.

1. վարչական կամ նորմատիվ ակտի ընդունում,
2. ռեալ ակտի ընդունում (գործողության կամ անգործության կատարում):

Առաջին դեպքում ընդունվում է իրավական (վարչական կամ նորմատիվ) ակտ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կամ այլ օրենքների պահանջներին, այդ թվում ընթացակարգերին համապատասխան, իսկ երկրորդ դեպքում ընդունվում է ռեալ ակտ, որը դրսևորվում է վարչական մարմնի կողմից գործողության կամ անգործության կատարմամբ, որն էլ անձանց համար առաջացնում է փաստացի հետևանքներ:

Օրենսդիրն անձանց իրավունքների և օրինական շահերի վարչական կամ դատական կարգով պաշտպանության միջոցները պայմանավորել է վարչական մարմնի գործունեության եզրափակման եղանակով: Մասնավորապես, վարչական կամ նորմատիվ ակտերից

իրավական պաշտպանությունն այդ ակտերի իրավաչափության վիճարկումն է վարչա-դատավարական կարգով՝ անվավերության կամ առոչնչության հիմքերով, ինչպես նաև պարտավորեցման հայցը, եթե ոչ իրավաչափ կերպով մերժվել է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը, իսկ ռեալ ակտից, այսինքն՝ վարչական մարմնի դրսևորած ոչ իրավաչափ գործողությունից կամ անգործությունից իրավական պաշտպանությունը գործողության կատարման հայցն է, եթե ոչ իրավաչափ կերպով մերժվել է հայցվող գործողության կատարումը կամ դրսևորվել է անգործություն:

Առանձին տեսակի հայցատեսակ է ճանաչման հայցը, որը, ըստ իս, սույն գործի հետ առնչություն չունի և որին անդրադարձ կկատարվի ստորև:

Սույն գործի փաստերի հաշվառմամբ հարկ ենք համարում անդրադառնալ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչական վարույթի առանձնահատկություններին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (**հարուցման փուլ**): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառույթները (**ընթացիկ փուլ**): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (**եզրափակիչ փուլ**):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը,

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ի թիվս այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության տարածքում իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված է նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման նպատակը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն

իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելն է:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը *(ըրենս ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հանքարարողորդների ոլորտային հարկային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սպառնիչ կերպով թվարկել է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքները. դրանք են՝

(1) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումը կամ բողոքը և (2) վարչական մարմնի նախաձեռնությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը կարող է տեղի ունենալ միայն օրենքով վարչական մարմնին համապատասխան վարչական ակտ ընդունելու իմպերատիվ կամ հայեցողական լիազորություն վերապահված լինելու դեպքում: Իրացնելով իր այդ լիազորությունը վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, որը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ *(ըրենս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ «Էդ-Վան» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0883/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը)*:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա հարկ ենք համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, օժտված լինելով իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ և նպատակ ունենալով ստուգումների միջոցով պարզել տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին, ինչպես նաև պետական հսկողություն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում նաև պարզել տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը, իր նախաձեռնությամբ կարող է հարուցել վարչական վարույթ (**հարուցման փուլ**), իրականացնել վարչական գործի քննարկման հետ կապված՝ օրենքով նախատեսված գործառույթները (**ընթացիկ փուլ**) և այդ վարույթը եզրափակել վարչական ակտի ընդունմամբ (**եզրափակիչ փուլ**):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և **ուղղված է** անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի իմաստով.

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ **նրանց համար ստեղծում**

են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա **կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:**

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, նշված հոդվածի 1-ին մասով, որպես ընդհանուր կանոն, վարչական ակտը սահմանել է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և **ուղղված է** անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսինքն՝ վարչական ակտի որակումն օրենսդիրը պայմանավորել է ոչ թե դրանով ուղղակի իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հանգամանքով, այլ միայն նշված իրավական հետևանքների առաջացմանն ուղղված լինելու հանգամանքով: Այլ կերպ ասած, բնավ պարտադիր չէ, որ վարչական ակտը անպայմանորեն անձանց համար ուղղակի սահմանի, փոփոխի, վերացնի կամ ճանաչի իրավունքներ և պարտականություններ, բավարար է միայն այն, որ այդ վարչական ակտն ուղղված լինի այդ իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը, վերացմանը կամ ճանաչմանը:

Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը կոնկրետացրել է բարենպաստ և միջամտող վարչական ակտերին ներկայացվող պահանջները, ի թիվս այլնի, ամրագրելով նաև վարչական ակտի միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող պայմանը: Այսինքն՝ վարչական վարույթը եզրափակող իրավական ակտի բնորոշումն օրենսդիրը պայմանավորել է նաև վարչական ակտի միջոցով անձանց **իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող հետևանքի առաջացմամբ:** Այլ կերպ ասած, եթե վարչական վարույթը եզրափակվել է այնպիսի վարչական ակտի ընդունմամբ, որի միջոցով ցանկացած եղանակով բարելավել կամ վատթարացել է անձանց իրավական կամ փաստացի դրությունը, ապա իրավական համակարգում այդ ակտը չի կարող բնորոշվել այլ կերպ, քան որպես համապատասխանաբար բարենպաստ կամ միջամտող վարչական ակտ, իսկ միջամտող վարչական ակտից դատական պաշտպանության միջոցը կարող է լինել միայն անվավերության կամ առոչնչության տեսանկյունից իրավաչափության վիճարկումը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվել են տնտեսավարող սուբյեկտների ծավալած գործունեության ստուգման վարույթի առանձնահատկությունները:

Այսպես. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում (Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության ղեկավարում ստուգման հարցերը), ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը, նույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված ղեկավարում՝ նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, իսկ նույն մասով նախատեսված դիմում

կամ տեղեկատվություն ստանալու դեպքերում՝ նաև դրանք տրամադրողի տվյալները: Հրամանում կամ հանձնարարագրում չնշված պաշտոնատար անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության պատճառով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին այլ անձով փոխարինելու դեպքում փոփոխությունը կատարվում է հրամանով, որի մասին տնտեսավարող սուբյեկտը ծանուցվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգումն իրականացնող անձը (...) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ամփոփում է ստուգման արդյունքները՝ խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմում տեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտի նախագիծ: Տեղեկանքը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունները կցվում են ակտին և կազմում դրա անբաժանելի մասը:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ակտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում:

(...)

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խախտումներ չհայտնաբերվելու դեպքում կազմված տեղեկանքում արձանագրվում են այն կազմելու ամսաթիվն ու վայրը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները:

Ակտում նշվում են՝

- 1) ակտի անվանումը, համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
- 2) ստուգում իրականացնող պետական մարմնի անվանումը.
- 3) ստուգում նշանակելու մասին հրամանի կամ հանձնարարագրի ամսաթիվն ու համարը.

4) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

5) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, ինչպես նաև վերջինիս պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը.

6) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը և ժամանակահատվածը.

7) փորձագիտական եզրակացությունը՝ ստուգման ընթացքում փորձաքննություն անցկացնելու դեպքում: Փորձագիտական եզրակացությունը կցվում է ակտին և կազմում է դրա անբաժանելի մասը.

8) ստուգաթերթի անվանումը, ընդունման ամսաթիվը, հերթական համարը, որում ընդգրկված հարցերի շրջանակներում իրականացվել է ստուգումը, ինչպես նաև ստուգաթերթի այն հարցերը, որոնց պատասխանները հիմք են հանդիսացել խախտումն արձանագրելու համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերի.

9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը.

11) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների ընդունման վերաբերյալ նշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման արդյունքներն ամփոփվում են տեղեկանքում (խախտումներ չհայտնաբերելու դեպքում) կամ ստուգման ակտում (խախտումներ հայտնաբերելու դեպքում), ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ է մտնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելուն հաջորդող օրվանից, իսկ նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ստուգման ակտը դառնում է բողոքարկման ոչ ենթակա (անբողոքարկելի), եթե բաց է թողնված դրա ուժի մեջ մտնելուն հաջորդող վարչական կարգով բողոքարկման համար սահմանված վեցամսյա ժամկետը:

Վերոհիշյալ նորմերի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ (*լրես՝ «Ռուբեն Գևորգյան» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ2/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիման վրա գտնում ենք, որ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը հարուցվում է համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ, որին հաջորդում է այդ վարույթի ընթացիկ փուլը՝ հանձնարարագրում նշված պաշտոնատար անձանց կողմից փաստացի ստուգողական գործողությունների իրականացումը սահմանված ժամկետներում և ստուգման նպատակների շրջանակներում, որը եզրափակվում է տեղեկանքի կազմմամբ, եթե խախտումներ չեն հայտնաբերվում և ակտի կազմմամբ, եթե հայտնաբերվում են խախտումներ: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթի եզրափակման հնարավոր եղանակները երկուսն են.

- տեղեկանքի կազմումը,
- ակտի կազմումը:

Ընդ որում, հարկ ենք համարում ընդգծել, որ նշված երկու փաստաթուղթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում են համապատասխանաբար բարենպաստ և միջամտող վարչական ակտեր, քանի որ տեղեկանքի կազմումը հաստատում է խախտումների բացակայությունը, ինչն անվիճելիորեն տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար ունի նրա իրավական և փաստացի դրությունը բարելավող ազդեցություն, իսկ ակտի կազմումը հաստատում է խախտումների առկայությունը՝ վատթարացնելով տնտեսավարող սուբյեկտի իրավական և փաստացի դրությունը: Այլ կերպ ասած, եթե տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը եզրափակվում է տեղեկանք կազմելով, այսինքն՝ նրա գործունեությունը գնահատվում է օրենքի պահանջներին համահունչ, ապա նշված սուբյեկտի հետագա գործունեությանը միջամտությունն այդ վարույթում քննարկված հարցերով պայմանավորված այլևս բացառվում է, մինչդեռ ստուգման վարույթն ակտի կազմմամբ եզրափակվելու պարագայում տվյալ տնտեսավարող սուբյեկտի ծավալած գործունեությունը գնահատվում է օրենքի պահանջների խախտմամբ իրականացրած՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

Հակառակ մեկնաբանումը կարող է հանգեցնել իրավական անորոշության, քանի որ կստացվի մի իրավիճակ, երբ օրենքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթը փաստացի կմնա անավարտ, այսինքն՝ կբացակայի վարույթի եզրափակիչ փուլը: Ընդ որում, հարուցված վարչական վարույթը, որի նպատակն է հանդիսացել վարչական ակտի ընդունումը, չի կարող եզրափակվել գործողությամբ կամ անգործությամբ, քանի որ գործողությունն ինքնին ուղղված չէ և չի կարող ուղղված լինել վարչական ակտի ընդունմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարը 04.10.2018 թվականին հրապարակել է Ընկերությունում ստուգում իրականացնելու թիվ 49-Ա հանձնարարագիրը, իսկ այնուհետև՝ 30.10.2018 թվականին՝ «ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 49-Ա հանձնարարագրով նշանակված ստուգման ժամկետը երկարաձգելու և հանձնարարագրում լրացում կատարելու մասին» թիվ 54-Ա հանձնարարագիրը: Ընդ որում, թիվ 54-Ա հանձնարարագրում, որպես այն ընդունելու իրավական հիմք, վկայակոչվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, 4-րդ հոդվածի 2-րդ կետը:

Նշված հանձնարարագրերի հիման վրա Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունն Ընկերությունում իրականացրել է ֆինանսատնտեսական ստուգում՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության 10.09.2018 թվականի թիվ 18-482-կգ-18 գրությամբ ներկայացված՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կոոպացիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների վարչության ՀԿԳ ավագ քննիչի կողմից 10.09.2018 թվականի «Ստուգում (ֆինանսատնտեսական) նշանակելու մասին» կայացրած որոշմամբ, ինչպես նաև 24.09.2018 թվականի թիվ 18-482ԿԳ-18 գրությամբ առաջադրված հարցերի շրջանակներում:

Ըստ ստուգման ակտի՝ ստուգմամբ ընդգրկվել է 01.01.2017 թվականից մինչև 10.09.2018 թվականն ընկած ժամանակահատվածը, իսկ ստուգումը տևել է 10.10.2018 թվականից մինչև 10.03.2019 թվականը: Ակտում ներառված տեղեկությունների համաձայն՝ 06.11.2018 թվականից ստուգման աշխատանքները կասեցվել են, իսկ 20.03.2019 թվականից վերսկսվել են ու ավարտվել 28.03.2019 թվականին:

Ստուգման արդյունքում կազմվել է նախ՝ ակտի նախագիծ, որի վերաբերյալ, ըստ ստուգման ակտի, Ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացվել է գրավոր առարկություն, որը, դրա առնչությամբ ստուգող խմբի դիրքորոշմամբ հանդերձ, որպես անբաժանելի մաս, կցվել է ակտին, ապա ստուգման արդյունքներն ամփոփվել են 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտի ընդունմամբ, որով արձանագրվել են դրամական միջոցների ելքագրման և մուտքագրման վերաբերյալ, այլ տնտեսավարող սուբյեկտների հետ քաղաքացիաիրավական հարաբերություններում թույլ տրված խախտումներ, այդ թվում

կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված կամ պակաս կատարված աշխատանքներ **(տե՛ս թիվ 49-Ա ստուգման ակտը, հ.1-ին, գ.թ. 41-48):**

Այսինքն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 04.10.2018 թվականի թիվ 49-Ա հանձնարարագրով հարուցվել և իրականացվել է վարչական վարույթ (ստուգում), որը եզրափակվել է թիվ 49-Ա ակտի ընդունմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական վարույթի արդյունքում կազմվել է ոչ թե տեղեկանք, այլ՝ ակտ, պետք է փաստել, որ ստուգման ընթացքում հայտնաբերվել են խախտումներ, որոնք արձանագրվել են ստուգման ակտում:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածում ամրագրվել են Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

(...)

7) **ինքնահայտարարագրում և հարկային կարգապահություն՝** հարկ վճարողները պետք է Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկեն ու վճարեն հարկերը, վճարները:

ՀՀ հարկային օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է Օրենսգրքով այլ բան սահմանված չլինելու դեպքում Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իր հարկային պարտավորությունները՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով կատարելով նաև հարկի և (կամ) վճարի կանխավճարներ:

Վերոգրյալ իրավակարգավորումները կառուցված են կարգապահ և օրինապաշտ հարկատուի կանխավարկածով, որոնք պարտավոր են ինքնուրույն հաշվարկել ու վճարել օրենքով նախատեսված հարկերն ու վճարները: Այսինքն՝ կարգապահ և օրինապաշտ հարկատուն համապատասխան ելակետների առկայության պարագայում, հիմք ընդունելով այդ ելակետներում պարունակվող տվյալներն ու տեղեկությունները, պետք է ինքնուրույն հաշվարկի վճարման ենթակա հարկերն ու վճարները և կատարի համապատասխան վճարումները, հետևաբար, եթե վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտով արձանագրվում են խախտումներ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել հարկային կամ այլ պարտավորությունների առաջացմանը, ապա կարգապահ և օրինապաշտ հարկատուն, հիմք ընդունելով արձանագրված տվյալներն ու տեղեկությունները, եթե չի վիճարկում դրանց առկայությունը, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել օրենքով նախատեսված հարկերն ու վճարները: Հակառակ պարագայում հարկային կամ այլ պարտավորությունների հաշվարկը կկատարի հարկային կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ վարչական մարմինը: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ստուգմամբ խախտումներ հայտնաբերելու և արձանագրելու պարագայում բնավ պարտադիր չէ, որ դրանցում ներառված տվյալների և տեղեկությունների հիման վրա հնարավոր հարկային կամ այլ պարտավորությունների առաջացման հարցը քննարկվի ու լուծվի հարկային կամ այլ մարմնի կողմից, այլ դա կարող է և նույնիսկ պարտավոր է կատարել հարկատուն՝ հիմք ընդունելով արձանագրված ելակետները:

Տվյալ դեպքում, սույն գործով վիճարկվող թիվ 49-Ա ակտով արձանագրվել են մի շարք փաստեր (այդ թվում՝ ենթադրաբար թույլ տրված խախտումներ), իսկ ակտում կատարվել է եզրահանգում այն մասին, որ «Ընկերությունում իրականացված ստուգմամբ արձանագրված փաստերի գծով հնարավոր հարկային պարտավորությունների առաջացման հարցը կարող է պարզվել հարկային մարմնի կողմից»: Փաստորեն վարչական մարմինն ի սկզբանե գործել է ոչ կարգապահ և ոչ օրինապաշտ հարկատուի

կանխավարկածով՝ բացառելով հարկերն ու վճարներն ինքնուրույն հաշվարկելու Ընկերության իրավաչափ վարքագծի դրսևորումը: Այդուհանդերձ, նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ թիվ 49-Ա ակտը վարչական ակտ չդիտարկելու համար՝ ելնելով միայն այն իրողությունից, որ նշված ակտով ուղղակի պարտավորություններ Ընկերության համար չեն սահմանվել: Ավելին, ակտում արձանագրված ելակետային տվյալների հիման վրա հարկային մարմինն ընդամենը պետք է կատարի հաշվարկներ՝ սահմանելով վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափը և իրավունք չունի իրավական գնահատական տալ այդ հաշվարկների համար հիմք հանդիսացող վարչական ակտի իրավաչափությանը:

Այսպիսով, գտնում ենք, որ Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտը բավարարում է վարչական ակտի բնորոշման համար բոլոր պայմաններին:

Այսպես. թիվ 49-Ա վարչական ակտն անհատական իրավական ակտ է և ունի հստակորեն որոշված հասցեատեր՝ Ընկերությունը, ընդունվել է վարչական մարմնի՝ Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից. ունի արտաքին ներգործություն, քանի որ Ընկերությունը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում ակտն ընդունած մարմնի հետ. ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա. ընդունվել է կոնկրետ գործի կարգավորման նպատակով, քանի որ այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի՝ տնտեսական գործունեության իրականացման ոլորտում Ընկերությանն առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ տնտեսական գործունեությունն օրենքին համապատասխան ծավալելու հանգամանքի պարզմանը. վարչական ակտում արձանագրված խախտումների ուղղակի հետևանքը Ընկերության իրավական կամ փաստացի դրության վատթարացումն է, լրացուցիչ հարկային կամ այլ պարտավորությունների հնարավոր առաջացման տեսքով: Ավելին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ստուգումը նշանակվել է քրեական գործի շրջանակներում, վարչական ակտը կարող է նաև հիմք հանդիսանալ քրեական պատասխանատվության կիրառման համար:

Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտը վարչական ակտ է, որի իրավաչափության դատական կարգով գնահատումն իրավասու է իրականացնել ՀՀ վարչական դատարանը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված հիմքերով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի շրջանակներում:

Հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ սույն գործով վիճարկվող ակտը վարչական ակտ չհանդիսանալու վերաբերյալ Վճարել դատարանի իրավական դիրքորոշման պայմաններում ստացվում է, որ ՀՀ ֆինանսների նախարարի հանձնարարագրի հրապարակմամբ վարչական վարույթի հարուցումը չի ունեցել որևէ կոնկրետ նպատակ և ուղղված չի եղել վարչական ակտի ընդունմանը, այլ «միտված է եղել» «Ընկերության համար իրավական հետևանքներ չառաջացնող տեղեկարկական բնույթի» փաստաթուղթ կազմելուն, որի վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու և իրականացնելու օրենսդրական պահանջ առկա չէ: Այլ կերպ ասած, եթե նշված վարչական վարույթի արդյունքում կազմված ակտը ունի միայն տեղեկատվական բնույթ և որևէ հետևանք չի առաջացնում Ընկերության համար, ապա այն նաև չի կարող հիմք ընդունվել ինչպես «Ստուգում (ֆինանսատնտեսական) նշանակելու մասին» որոշում կայացրած Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների

քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի, այնպես էլ հարկային մարմնի կողմից, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերի համաձայն իրականացված վարչական վարույթը, տվյալ դեպքում, ոչ այլ ինչ է, քան հարկատուների հաշվին գոյացող պետական միջոցների վատնում:

Տեղեկատվական բնույթի փաստաթղթեր կազմելն ու տրամադրելը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում է ռեալ ակտ, որի ընդունումն իրականացվում է գործողության կատարման, այլ ոչ թե վարչական վարույթի միջոցով: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերով հարուցվել է վարչական վարույթ, որն ուղղված է եղել վարչական ակտի ընդունմանը, իրականացվել է ընթացիկ փուլ՝ Ընկերության գործունեության ֆինանսատնտեսական ստուգում, որը եզրափակվել է թիվ 49-Ա ակտի ընդունմամբ:

Անդրադառնալով սույն վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ վկայակոչված վարչական ակտի բնորոշման համար անհրաժեշտ պայմանների սահմանման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված մի շարք որոշումներին՝ հարկ ենք համարում ընդգծել, որ դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությանը, այսինքն՝ վարչական ակտի ընդհանուր բնորոշմանը, և որևէ անդրադարձ չկա նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված միջանոց վարչական ակտի տարրերից մեկին, այն է՝ անձանց իրավական կամ փաստացի դրությունը ցանկացած այլ եղանակով վատթարացնելու պայմանին, հետևաբար տվյալ պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները չեն կարող բացառել սույն գործով վիճարկվող թիվ 49-Ա ակտի վարչական ակտ գնահատելու հնարավորությունը: Բացի այդ վերոգրյալ որոշումներով արտահայտված դիրքորոշումներում որոշիչ նշանակությունը տրվել է վարչական ակտով ուղղակի իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հանգամանքին, մինչդեռ, ինչպես վերը նշվեց, բարենպաստ և միջամտող վարչական ակտի որակումն օրենսդիրը պայմանավորել է դրանց միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող հետևանքի առաջացմամբ: Ըստ այդմ, կարծում ենք, որ սույն գործը հիանալի առիթ է զարգացնելու վարչական ակտի բնորոշման վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները և ամբողջացնելու վարչական ակտի բնորոշման համար անհրաժեշտ պայմանների սահմանումը:

Անդրադառնալով նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցի շրջանակներում բողոքարկման ենթակա լինելու մասին Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Նախ՝ հարկ ենք համարում ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման պարագայում ստացվում է, որ Ընկերությունը պետք է հայցի ճանաչել ինչ-որ իրավահարաբերության առկայություն այն դեպքում, երբ գոյություն ունի Նախարարության կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունված նյութական օբյեկտ՝ վարչական ակտ և դրա առկայությունն ինքնին տեսանելի է և առանձին ձևով հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Ընդ որում, եթե Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումից բխում է, որ հարուցված վարչական վարույթը չի եզրափակվել վարչական ակտի ընդունմամբ, ապա հարց է առաջանում, թե ո՞րն է եղել վարչական մարմնի ստուգում իրականացնելու նպատակով պայմանավորված արտաքին

ներգործությանն ուղղված գործունեության տրամաբանական ավարտը, այսինքն՝ ինչպե՛ս է եզրափակվել վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը՝ նորմատիվ ակտի ընդունմամբ, թե գործողությամբ կամ անգործությամբ: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը, ամրագրելով, որ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան արուզումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացված արուզման արդյունքում կազմված ակտը, որում պարզապես արձանագրվում են որոշակի խախտումներ, սակայն ուղղակի պարտավորություններ չեն առաջադրվում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում պետք է բողոքարկվի ճանաչման հայցի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորությունը փոխ միակ դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է», չի կոնկրետացրել, թե ի՞նչ իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին կարող է խոսք լինել, երբ, ինչպես վերը նշվեց, գոյություն ունի Նախարարության կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունված նյութական օբյեկտ՝ վարչական ակտ և նույնիսկ տեսականորեն հնարավոր չէ պատկերացնել, որ ճանաչման հայցի շրջանակներում օրինակ՝ կարող է անտեսվել նշված ակտի գոյությունը և չհաստատվել իրավահարաբերության առկայությունը:

Երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտը, որով թեև ուղղակի պարտավորություններ չեն առաջադրվում, սակայն արձանագրվում են որոշակի խախտումներ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում ճանաչման հայցի շրջանակներում բողոքարկելի լինելու դեպքում շրջանցվելու է փաստացի վարչական ակտ հանդիսացող բոլոր տեսակի ակտերի վիճարկման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը և այդ ակտերի հասցեատերերը փաստորեն ստանալու են հնարավորություն նշված ակտերը բողոքարկել 5 տարվա ընթացքում՝ հիմք ընդունելով նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետը: Նշվածից հետևելու է նաև այն, որ այդ ակտերն առնվազն 5 տարվա ընթացքում որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել, ուստի այդօրինակ ակտերի հիմքով չեն կարող հաշվարկվել ու առաջադրվել նաև հարկային պարտավորություններ, ինչպես նաև դրանք չեն կարող դրվել քրեական գործերով առաջադրվող մեղադրանքների հիմքում:

Երրորդ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

Վերոգրյալ իրավակարգավորումից ուղղակի հետևում է, որ նշված հայցատեսակով դատական պաշտպանության դիմելու համար պետք է բացառվի նույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան հայց հարուցելու հնարավորությունը:

Տվյալ դեպքում գտնում ենք, որ նախ՝ սույն հատուկ կարծիքում ներկայացված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան հայց հարուցելու հնարավորությունը ոչ միայն չի բացառվում, այլ դատական պաշտպանության ճիշտ եղանակն անվավերության կամ առոչնչության հիմքերով վարչական ակտի իրավաչափության ստուգումն է վիճարկման կամ ճանաչման հայցի շրջանակներում, երկրորդ՝ տվյալ դեպքում խոսք չի կարող լինել որևէ իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին այն պարագայում, երբ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է համապատասխան պետական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի արդյունքում, այսինքն՝ Նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության և Ընկերության միջև իրավահարաբերությունները ձևավորվել են վարչական մարմնի՝ Նախարարության նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հիման վրա, որի

ընթացիկ փուլում, իրացնելով իր իշխանական լիազորությունները, վարչական մարմինն իրականացրել է ֆինանսատնտեսական ստուգում, որի արդյունքում ընդունել է թիվ 49-Ա ակտը՝ արձանագրելով Ընկերության գործունեության ընթացքում դրամական միջոցների ելքագրման և մուտքագրման վերաբերյալ, այլ տնտեսվարող սուբյեկտների հետ քաղաքացիաիրավական հարաբերություններում թույլ տրված խախտումներ, այդ թվում կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված կամ պակաս կատարված աշխատանքներ: Հետևաբար հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլեր ունեցող վարչական վարույթում առկա և համապատասխան փաստաթղթերով (*հանձնարարագրեր, Հայրուկ քննչական ծառայության կոողացիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի 10.09.2018 թվականի «Սյուրգում (ֆինանսատնտեսական) նշանակելու մասին» որոշում, ակտ*) հաստատված իրավահարաբերություններն ինքնին առկա են և այն ճանաչելու իմաստն իսպառ բացակայում է:

Մինևոյն ժամանակ, գտնում ենք, որ սույն գործով Ընկերության կողմից ներկայացվել է ճիշտ հայցատեսակ, ուստի համաձայն չենք նաև Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշմանը, որ հայցատեսակն ընտրված է սխալ, որի պատճառով այն ենթակա է վերադարձման:

Այսպիսով, գտնում ենք, որ սույն գործով վիճարկվող՝ Նախարարության ֆինանսարկուցետային վերահսկողության վարչության 26.04.2019 թվականի թիվ 49-Ա ակտը վարչական ակտ է, դրա իրավաչափությունը դատական կարգով ենթակա է ստուգման ՀՀ վարչական դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի շրջանակներում, հետևաբար Դատարանը, մերժելով Ընկերության կողմից ներկայացված վիճարկման հայցադիմումն այն հիմքով, որ վեճը ենթակա չէ դատարանի քննությանը, իսկ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի որոշումը, Ընկերությանը գրկել են ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունից, այսինքն՝ թույլ են տվել այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը վերացնել ու կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 29.07.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը սույն հատուկ կարծիքում նշված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան
Ս. Անտոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ

Նախագահող դատավոր՝

ՎԴ/10906/05/18

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/10906/05/18
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «ՆորքՄար Սուիթ» բնակարանաշինարարական ոչ առևտրային սպառողական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ) սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձինք՝ Խաչատուր Երմագյան, Ազատուհի Երմագյան, Տիգրանուհի Երմագյան, Հրաչյա Յարմագյան՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 բնակարանների նկատմամբ պատասխանողի կողմից Տիգրանուհի Երմագյանի, Խաչատուր Երմագյանի, Ազատուհի Երմագյանի և Հրաչյա Յարմագյանի անվամբ 2011 թվականին իրականացված սեփականության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու կամ վկայակոչված պետական գրանցումների առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմագյանների, Հրաչյա Յարմագյանի ներկայացուցիչ Էմիլ Ամիրխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոռպերատիվի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 բնակարանների նկատմամբ Կադաստրի կողմից Հրաչյա, Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները կամ ճանաչել դրանց առ ոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) 07.11.2018 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 03.12.2018 թվականի որոշմամբ դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարվել է, և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.03.2019 թվականի որոշմամբ Դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասի դեմ Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների, Հրաչյա Յարմազյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների, Հրաչյա Յարմազյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը, 72-րդ հոդվածի 1-ին մասը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերը, 144-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ սահմանել է նաև բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորություն համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել է, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արձանագրվել է, որ հայցվորը պետք է ապացուցի, թե՛

1. երբ է իմացել իր իրավունքների ենթադրյալ խախտումների մասին և, արդյոք նախկինում չգիտեր և չէր կարող իմանալ այն հանգամանքների մասին, որոնցով նա հիմնավորում է իր իրավունքների ենթադրյալ խախտումը և,

2. իմանալով իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին, արդյոք օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններն իրականացնելու

ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները:

Թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերոգրյալը և հարգելի համարելով Կոռուպցիայի սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը, իրենց որոշումների հիմքում դրել են այն հանգամանքը, որ տվյալ դեպքում վիճարկվող գրանցման օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի ենթադրյալ բացակայության վերաբերյալ հայցվորն իմացել է միայն թիվ ԵԱԲԳ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով հաստատված հանգամանքներից: Դատարանները գտել են, որ դրանք էլ հիմք ընդունելով՝ հայցվորը վարչական կարգով վիճարկել է պետական գրանցումները և ստացել մերժում, ու եկել են այն եզրահանգման, որ հայցվորի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են ակտիվ գործողություններ:

Հայցվորը դատավարական ժամկետի բացթողման հիմքում դրել է այն հանգամանքը, որ նշված քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով արձանագրվել է, որ նշված գործով վիճարկվող և երրորդ անձանց սեփականության իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացող Կոռուպցիայի ընդհանուր ժողովի որոշումները գործարքներ չեն, հետևաբար չեն կարող առոչինչ ճանաչվել: Նշվածը նոր փաստ չէ, ինչն ընդունվել է նաև հայցվորի կողմից, ուստի ի՛նչն էր խանգարում հայցվորին դեռևս 2015 թվականին, երբ նշանակվել էր սնանկության գործով կառավարիչ, ուսումնասիրել կադաստրային գործը, վեր հանել ենթադրյալ խնդիրը և այդ հիմքով դիմել դատարան և վիճարկել գրանցումները: Հետևաբար անհիմն է Վերաքննիչ դատարանի՝ նաև այն եզրահանգումը, որ չնայած սնանկության գործով կառավարիչը մասնակցել է թիվ ԱՐԱԴ/0670/02/15 քաղաքացիական գործի քննությանը, սակայն դրա շրջանակներում չի քննարկվել այն հարցը, թե արդյոք Կոռուպցիայի արձանագրությունները կարող էին համարվել գործարքներ: Մասնավորապես՝ թե՛ վերոնշյալ գործով, թե՛ թիվ ԵԱԲԳ/4825/02/16 քաղաքացիական գործով վիճարկվում էին սույն գործով երրորդ անձանց սեփականության իրավունքի պետական գրանցումները և այդ իրավունքների ծագման համար հիմք հանդիսացող Կոռուպցիայի ընդհանուր ժողովի որոշումները, հետևաբար, Կոռուպցիայի սնանկության գործով կառավարիչը տեղյակ էր այն հանգամանքի մասին, որ վերջիններիս իրավունքը գրանցվել է այդ որոշումների հիման վրա:

Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել վերաքննիչ բողոքի այն հիմքին, որ Կոռուպցիայի գործադիր մարմնի փոփոխությունը չի կարող հանգեցնել նրան, որ դատավարական ժամկետների հոսքը սկսվի փոփոխված գործադիր մարմնի նշանակումից:

Անվիճելի են այն փաստերը, որ հայցվորը բաց է թողել նաև թիվ ԵԱԲԳ/1153/02/18 քաղաքացիական գործով 27.06.2018 թվականին կայացված դատական ակտից (օրինական ուժի մեջ է մտել 30.07.2018 թվականին) հաշված երկամսյա ժամկետը, մինչդեռ դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին միջնորդության մեջ փաստարկվում է, որ հայցվորը մինչև դատարան դիմելն օգտվել է վիճարկվող վարչական ակտերը վարչական կարգով բողոքարկելու իր իրավունքից, որն էլ Վերաքննիչ դատարանի կողմից որակվել է որպես «իր ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված ակտիվ գործողություններ»: Հակառակը՝ հայցվորն ընդամենը փորձել է արհեստական եղանակներով վերականգնել իր՝ դատարան դիմելու կորցրած իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռարեկ դատարանն արճանագրում է, որ սույն գործով վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայրը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն՝ Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն՝ Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրեն՝ Khalifaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են ի կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու

արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*Կրեն Դումիտրու Գեորգիե v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Անդրադառնալով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներին՝ Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված այդպիսի սահմանափակումները հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից: Ըստ Եվրոպական դատարանի՝ նմանատիպ հայցերի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել հեռավոր անցյալում տեղի ունեցած իրադարձություններ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Եվրոպական դատարանը գտել է, որ ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Կրեն Stubbings and others v. The United Kingdom (22083/93, 22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, 51-րդ և 55-րդ կետեր*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետների վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից՝ երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (յրեն՝ Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մելքոնյանի թիվ ՎԴ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում, և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրելու օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ գործադրելու օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները (յրեն՝ Սշուր Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբայթյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը, Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի որոշումը, «ՁԷԴ» ՓԲԸ-ի Կոնստանտին Էդգար Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5086/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը, Եղևզնուրի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային արտարաժամանան թիվ ՎԴ/0196/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2016 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 31.10.2018 թվականին ՀՀ վարչական դատարան է մուտքագրվել Կոռպորատիվի սնանկության գործով կառավարչի՝ 29.10.2018 թվականին փոստային ծառայության միջոցով ներկայացված հայցադիմումը, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 բնակարանների նկատմամբ Կադաստրի կողմից Հրաչյա Յարմագյանի, Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմագյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները կամ ճանաչել դրանց առոչինչ լինելը (**հավելված 1-ին, գ.թ. 2-8**): ՀՀ վարչական դատարանի 07.11.2018 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի կողմից կրկին ներկայացված հայցադիմումին կից ներկայացվել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն այն հիմնավորումներով, որ վիճարկվող գրանցումների՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի ենթադրյալ բացակայության մասին իմացել է միայն թիվ ԵԱՔԴ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության ընթացքում, մասնավորապես՝ 27.06.2018 թվականին

հրապարակված վճռից: Հայցվորը 13.09.2018 թվականին գրություն է ներկայացրել Կադաստր՝ պահանջելով վերացնել նշված գրանցումները: Ի պատասխան հայցվորի գրության Կադաստրի կողմից 28.09.2018 թվականի գրությամբ հայտնվել է, որ նշված գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարեցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման կարող է իրականացվել գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա (**հավելված 1-ին, գ.թ. 12-13**): Այնուհետև հայցվորը վիճարկման հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան և խնդրել վերականգնել վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված բաց թողնված դատավարական ժամկետը:

Դատարանի 03.12.2019 թվականի որոշմամբ Կոռպերատիվի սնանկության գործերով կառավարչի կողմից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը բավարարվել է և հայցադիմումն ընդունվել է վարույթ այն պատճառաբանություններով, որ սույն հայցի հարուցման, մասնավորապես՝ վիճարկվող վարչական ակտերի վիճարկման հիմք են հանդիսացել, ի թիվս այլնի, նաև թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով հաստատված հանգամանքները, որպիսի դատական ակտի ուժի մեջ մտնելով է հայցվորը պայմանավորում վիճարկվող վարչական ակտերով իր իրավունքների ենթադրյալ խախտման հանգամանքը, և նշված հիմքով է հայցվորը վարչական կարգով բողոքարկել վիճարկվող պետական գրանցումները, որի արդյունքում տրվել է մերժման պատասխան: Ուստիև նկատի ունենալով, որ հայցվորի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են ակտիվ գործողություններ, և քանի որ հայցվորի կողմից բերված միջնորդությամբ նշված փաստարկները հերքող այլ ապացույց հայցադիմումին կից առկա չէ հայցվորի միջնորդությունը՝ բերված փաստերի և այդ փաստերը հիմնավորող փաստաթղթերի առկայության պարագայում դատարանը համարել է հիմնավոր և բավարարման ենթակա:

Վերաքննիչ դատարանը, մերժելով երրորդ անձանց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն վարչական գործի փաստերին և ստորադաս դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում հայցվորը վիճարկել է Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների նկատմամբ Հրաչյա Յարմագյանի, Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմագյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները: Կոռպերատիվի սնանկության գործով կառավարիչը հայցադիմումին կից ներկայացրել է միջնորդություն բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու վերաբերյալ և որպես այդ միջնորդության հիմնավորում՝ նշել է, որ միայն թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործով 27.06.2018 թվականին հրապարակված վճռից հետո է հնարավորություն ունեցել տեղեկանալու, որ նշված բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հիմքերը գործարքներ չեն, որից հետո փորձել է այդ գրանցումները վիճարկել վարչական կարգով: Հայցվորը 13.09.2018 թվականին Կադաստր հասցեագրված թիվ 18-001 գրությամբ խնդրել է վերացնել վիճարկվող պետական գրանցումները, սակայն Կադաստրի 28.09.2018 թվականի գրությամբ մերժվել է հայցվորի պահանջն այն հիմնավորմամբ, որ նշված գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարեցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման կարող է իրականացվել գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա: Դատարանը, հիմնավոր համարելով հայցվորի պատճառաբանությունները, բավարարել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և հայցադիմումն ընդունել է վարույթ: Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները: Ստորադաս ատյանները գտել են, որ հայցվորն իր ենթադրյալ իրավունքների խախտումները

վերացնելու ուղղությամբ ձեռնարկել է ակտիվ գործողություններ, հետևաբար բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա է բավարարման:

Վճռաբեկ դատարանը, համադրելով սույն գործի փաստերը ստորադաս ատյանների պատճառաբանությունների հետ, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ Կոռուպերատիվի սնանկության գործով կառավարիչն իր իրավունքների ենթադրյալ խախտման, այն է՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեների բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հիմքում դրված Կոռուպերատիվի ընդհանուր ժողովի որոշումները գործարքներ չհանդիսանալու փաստերի վերաբերյալ տեղեկացել է թիվ ԵԱՔԳ/1153/02/18 քաղաքացիական գործով 27.06.2018 թվականին հրապարակված վճռից հետո, որից հետո էլ փորձել է սեփականության իրավունքի պետական գրանցումները վիճարկել վարչական կարգով, անհիմն են, քանի որ վերոնշյալ քաղաքացիական գործով դատական ակտի եզրահանգումները, այն է՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հիմքում դրված Կոռուպերատիվի ընդհանուր ժողովի որոշումները գործարքներ չհանդիսանալու վերաբերյալ դատարանի եզրահանգումները կատարվել են որոշակի իրավական նորմերի վերլուծության արդյունքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վիճարկվող պետական գրանցումների հիմքում դրվել են Կոռուպերատիվի 30.12.2010, 17.01.2011 թվականների կանոնադրությունները և 18.01.2011 թվականի քաղվածքը, որոնց վերաբերյալ Կոռուպերատիվի սնանկության գործով կառավարիչը գիտեր կամ թերևս հնարավորություն ուներ իմանալու 2015 թվականից, այլ ոչ թե թիվ ԵԱՔԳ/1153/02/18 քաղաքացիական գործով հրապարակված վճռից, քանի որ սույն գործի փաստերով հաստատվում է, որ Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2015 թվականի վճռով Կոռուպերատիվը ճանաչվել է սնանկ, և հայցվորը նշանակվել է սնանկության գործով կառավարիչ: Հետևաբար, Կոռուպերատիվի սնանկության գործով կառավարիչը դեռևս 2015 թվականից արդեն իսկ հնարավորություն էր ունեցել տեղեկանալու վիճարկվող անշարժ գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցումների հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ: Ինչ վերաբերում է ստորադաս ատյանների այն պատճառաբանություններին, որ հայցվորն իր իրավունքների ենթադրյալ խախտումների մասին հնարավորություն ուներ տեղեկանալու միայն իրավասու դատարանի կողմից այդ հիմքերին իրավական գնահատական տալուց հետո, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դրանք չեն բխում սույն գործի փաստերից և չեն կարող հիմք հանդիսանալ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու համար այն պատճառաբանությամբ, որ դատավարական ժամկետի բացթողումը կարող է վերականգնվել, եթե հիմնավորվում է, որ հայցվորը ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները հայրը սահմանված ժամկետում դատարան ներկայացնելու համար, և դատավարական ժամկետի բացթողումը տեղի է ունեցել իրենից անկախ պատճառներով, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորը, դեռևս 2015 թվականից տեղեկացված լինելով սեփականության իրավունքի գրանցման հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ, չի վիճարկել դրանք:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորը վերոնշյալ սեփականության իրավունքի պետական գրանցումները փորձել է վիճարկել վարչական, այնուհետև նաև դատական կարգով միայն դրանց հիմքում ընկած իրեն արդեն իսկ հայտնի հանգամանքների վերաբերյալ այլ քաղաքացիական գործի շրջանակներում համապատասխան դատարանի կողմից իրավական գնահատական տալուց հետո, որը որևէ կերպ չի կարող գնահատվել որպես հայցվորի կողմից ձեռնարկված ակտիվ գործողություններ, որպիսի գնահատականի արժանացել է ստորադաս ատյանների կողմից: Հակառակը՝ հայցվորն ուներ իրավական հնարավորություն վիճարկման հայց ներկայացնելու համար, մինչդեռ ձեռնամուխ չի եղել վիճարկելու վկայակոչված վարչական ակտերը,

ուստիև օբյեկտիվ պատճառներից ելնելով պետք է գրկվի դատավարական ժամկետի վերականգնման հնարավորությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Կոռուպցիայի սնանկության գործով կառավարչի միջնորդությունն անհիմն է, քանի որ վերջինս չի ապացուցել օրենքով սահմանված ժամկետի ընթացքում դատարան դիմելու ուղղությամբ իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ ձեռնարկելու և իր կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքների առկայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Կոռուպցիայի սնանկության գործով կառավարիչը կորցրել է Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ վիճարկման հայցով դատարան դիմելու իրավունքը: Այսինքն՝ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը ենթակա չէր բավարարման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար, հետևաբար, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասով վերացնել ՀՀ վարչական դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/10906/05/18 վարչական գործով 10.11.2020 թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 10.11.2020 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «ՆորքՄար Սուիթ» բնակարանաշինարարական ոչ առևտրային սպառողական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ) սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձինք՝ Խաչատուր Երմազյան, Ազատուհի Երմազյան, Տիգրանուհի Երմազյան, Հրաչյա Յարմազյան՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 բնակարանների նկատմամբ պատասխանողի կողմից Տիգրանուհի Երմազյանի, Խաչատուր Երմազյանի, Ազատուհի Երմազյանի և Հրաչյա Յարմազյանի անվամբ 2011 թվականին իրականացված սեփականության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու կամ վկայակոչված պետական գրանցումների առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների, Հրաչյա Յարմազյանի ներկայացուցիչ Էմիլ Ամիրխանյանի վճռաբեկ բողոքը, սույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասով վերացնել ՀՀ վարչական դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Գոռ Հակոբյանս և Ստեփան Միքայելյանս համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի թիվ 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 բնակարանների նկատմամբ Կադաստրի կողմից Հրաչյա, Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները կամ ճանաչել դրանց առ ոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) 07.11.2018 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 03.12.2018 թվականի որոշմամբ դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարվել է, և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.03.2019 թվականի որոշմամբ Դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի

համարելու միջնորդությունը բավարարելու մասի դեմ Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների, Հրաչյա Յարմազյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմազյանների, Հրաչյա Յարմազյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը, 72-րդ հոդվածի 1-ին մասը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերը, 144-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ սահմանել է նաև բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորություն համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել է, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արձանագրվել է, որ հայցվորը պետք է ապացուցի, թե՛

1. *երբ է իմացել իր իրավունքների ենթադրյալ խախտումների մասին և, արդյոք նախկինում չգիտեր և չէր կարող իմանալ այն հանգամանքների մասին, որոնցով նա հիմնավորում է իր իրավունքների ենթադրյալ խախտումը և,*

2. *իմանալով իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին, արդյոք օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պարճատնելով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները:*

Թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերոգրյալը և հարգելի համարելով Կոռուպցիայի սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը, իրենց որոշումների հիմքում դրել են այն հանգամանքը, որ տվյալ դեպքում վիճարկվող գրանցման օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի ենթադրյալ բացակայության վերաբերյալ հայցվորն իմացել է միայն թիվ ԵԱԳԴ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով հաստատված հանգամանքներից: Դատարանները գտել են, որ դրանք էլ հիմք ընդունելով՝ հայցվորը վարչական կարգով վիճարկել է պետական գրանցումները և ստացել մերժում, ու եկել են այն եզրահանգման, որ հայցվորի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են ակտիվ գործողություններ:

Հայցվորը դատավարական ժամկետի բացթողման հիմքում դրել է այն հանգամանքը, որ նշված քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով արձանագրվել է, որ նշված գործով վիճարկվող և երրորդ անձանց սեփականության իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացող Կոռուպցիայի ընդհանուր ժողովի որոշումները գործարքներ չեն, հետևաբար, չեն կարող առոչինչ ճանաչվել: Նշվածը նոր փաստ չէ, ինչն ընդունվել է նաև հայցվորի կողմից, ուստի ի՞նչն էր խանգարում հայցվորին դեռևս 2015 թվականին, երբ նշանակվել էր սնանկության գործով կառավարիչ,

ուսումնասիրել կաղաստրային գործը, վեր հանել ենթադրյալ խնդիրը և այդ հիմքով դիմել դատարան և վիճարկել գրանցումները: Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի նաև այն եզրահանգումը, որ չնայած սնանկության գործով կառավարիչը մասնակցել է թիվ ԱՐԱԴ/0670/02/15 քաղաքացիական գործի քննությանը, սակայն դրա շրջանակներում չի քննարկվել այն հարցը, թե արդյոք Կոոպերատիվի արձանագրությունները կարող էին համարվել գործարքներ: Մասնավորապես՝ թե՛ վերոնշյալ գործով, թե՛ թիվ ԵԱՔԴ/4825/02/16 քաղաքացիական գործով վիճարկվում էին սույն գործով երրորդ անձանց սեփականության իրավունքի պետական գրանցումները և այդ իրավունքների ծագման համար հիմք հանդիսացող Կոոպերատիվի ընդհանուր ժողովի որոշումները, հետևաբար, Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը տեղյակ էր այն հանգամանքի մասին, որ վերջիններիս իրավունքը գրանցվել է այդ որոշումների հիման վրա:

Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել վերաքննիչ բողոքի այն հիմքին, որ Կոոպերատիվի գործադիր մարմնի փոփոխությունը չի կարող հանգեցնել նրան, որ դատավարական ժամկետների հոսքը սկսվի փոփոխված գործադիր մարմնի նշանակումից:

Անվիճելի են այն փաստերը, որ հայցվորը բաց է թողել նաև թիվ ԵԱՔԴ/1153/02/18 քաղաքացիական գործով 27.06.2018 թվականին կայացված դատական ակտից (օրինական ուժի մեջ է մտել 30.07.2018 թվականին) հաշված երկամսյա ժամկետը, մինչդեռ դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին միջնորդության մեջ փաստարկվում է, որ հայցվորը մինչև դատարան դիմելն օգտվել է վիճարկվող վարչական ակտերը վարչական կարգով բողոքարկելու իր իրավունքից, որն էլ Վերաքննիչ դատարանի կողմից որակվել է որպես «իր ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված ակտիվ գործողություններ»: Հակառակը՝ հայցվորն ընդամենը փորձել է արհեստական եղանակներով վերականգնել իր՝ դատարան դիմելու կորցրած իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործի փաստերի համաձայն՝ 31.10.2018 թվականին ՀՀ վարչական դատարան է մուտքագրվել Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչի՝ 29.10.2018 թվականին փոստի միջոցով ներկայացված հայցադիմումը, որով Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը պահանջել է անվավեր ճանաչել Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի թիվ 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 բնակարանների նկատմամբ Կադաստրի կողմից Հրայրա Յարմագյանի, Խաչատուր, Ազատուհի, Տիգրանուհի Երմագյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները կամ ճանաչել դրանց առ ոչինչ լինելը (**հավելված 1-ին, գ.թ. 2-8**):

ՀՀ վարչական դատարանի 07.11.2018 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի կողմից կրկին ներկայացված հայցադիմումին կից ներկայացվել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն այն հիմնավորումներով, որ թիվ ԵԱՔԴ/1153/02/18 քաղաքացիական գործի փաստական հանգամանքներից չէր կարող տեղեկանալ, որ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի թիվ 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը գործարքներ չեն հանդիսանում, քանի որ դա փաստական հանգամանք չէ, այլ համապատասխան իրավական հետևանքներ առաջացնող իրավական գնահատական, որն իրավունք ունի տալու միայն իրավասու դատարանը: Հայցվորն այս իրավական հանգամանքի գոյության մասին իմացել է միայն թիվ ԵԱՔԴ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության արդյունքում, մասնավորապես՝ 27.06.2018 թվականին հրապարակված վճռից: Դրանից հետո հայցվորը փորձել է տեղի ունեցած իրավախախտումը վերացնել

վարչական կարգով, որի վերաբերյալ 13.09.2018 թվականին գրություն է ներկայացրել Կադաստր (**հավելված 1-ին, գ.թ. 69-70**): Մասնավորապես՝ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը 13.09.2018 թվականի գրությամբ Կադաստրից պահանջել է վերացնել նշված գրանցումները: Ի պատասխան հայցվորի գրության՝ Կադաստրի կողմից 28.09.2018 թվականի գրությամբ հայտնվել է, որ նշված գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարեցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման կարող է իրականացվել գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա (**հավելված 1-ին, գ.թ. 12-13**):

Դատարանի 03.12.2018 թվականի որոշմամբ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի կողմից ներկայացված՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը բավարարվել է, և հայցադիմումն ընդունվել է վարույթ այն պատճառաբանություններով, որ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի թիվ 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների (ձեղնահարկերի) նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի ենթադրյալ բացակայության վերաբերյալ իմացել է միայն թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության արդյունքում, մասնավորապես՝ 27.06.2018 թվականին հրապարակված դատական ակտից: Սույն հայցի հարուցման, մասնավորապես՝ վիճարկվող վարչական ակտերի վիճարկման հիմք են հանդիսացել, ի թիվս այնի, նաև թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով հաստատված հանգամանքները, որպիսի դատական ակտի ուժի մեջ մտնելով է հայցվորը պայմանավորում վիճարկվող վարչական ակտերով իր իրավունքների ենթադրյալ խախտման հանգամանքը, և նշված հիմքով է հայցվորը վարչական կարգով բողոքարկել վիճարկվող պետական գրանցումները, որի արդյունքում տրվել է մերժման պատասխան: Ուստիև նկատի ունենալով, որ հայցվորի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են ակտիվ գործողություններ, և քանի որ հայցվորի կողմից բերված միջնորդությանը նշված փաստարկները հերքող այլ ապացույց հայցադիմումին կից առկա չէ, հայցվորի միջնորդությունը՝ բերված փաստերի և այդ փաստերը հիմնավորող փաստաթղթերի առկայության պարագայում դատարանը համարել է հիմնավոր և բավարարման ենթակա:

Վերաքննիչ դատարանը, մերժելով երրորդ անձանց վերաքննիչ բողոքը, ըստ էության հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել Վերաքննիչ դատարանի 15.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասով վերացնել Դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը:

Ի հիմնավորումն վերոգրյալ եզրահանգման՝ Վճռաբեկ դատարանը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 54-րդ հոդվածի 1-ին մասը, 65-րդ հոդվածը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման մասին ՀՀ սահմանադրական դատարանի 10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դատարանի մատչելիության իրավունքի և այդ իրավունքի ժամկետային սահմանափակումների մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝

Եվրոպական դատարան) Kreuz v. Poland (28249/95) գործով 19.06.2001 թվականի վճռով՝ 52-րդ կետ, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով 13.07.1995 թվականի վճռով՝ 59-րդ կետ, Khalifaoui v. France (34791/97) գործով 14.12.1999 թվականի վճռով՝ 36-րդ կետ, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով 12.04.2016 թվականի վճռով՝ 28-րդ կետ, Stubbings and others v. The United Kingdom (22083/93; 22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճռով՝ 51-րդ և 55-րդ կետեր, արտահայտած իրավական դիրքորոշումները՝ եզրահանգելով, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Մինևույն ժամանակ, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությանը և գտնելով, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը, Վճռաբեկ դատարանը վկայակոչել է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի, ինչպես նաև անձանց կողմից իրենց դատական պաշտպանության իրավունքն օրենքով սահմանված ժամկետներում իրացնելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մելքոնյանի թիվ ՎԴ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի, Աշոտ Գազիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գազիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբալյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի, Հրայր Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի, «2ԷԴ» ՓԲԸ-ի տնօրեն Էդգար Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5086/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի, Եղեգնուտի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման թիվ ՎԴ/0196/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2016 թվականի որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները և արձանագրել հետևյալը. «Տվյալ դեպքում հայցվորը վիճարկել է Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գրավող բնակարանների նկարումներ Հրայր Զարմանյանի, Խաչատրյուր, Ազարուհի, Տիգրանուհի Երևանյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները: Կոուպերատիվի անանկության գործով կառավարիչը հայցադիմումին կից ներկայացրել է միջնորդություն բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի

համարելու և վերականգնելու վերաբերյալ և որպես այդ միջնորդության հիմնավորում՝ նշել է, որ միայն թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործով 27.06.2018 թվականին հրապարակված վճռից հետո է հնարավորություն ունեցել տեղեկանալու, որ նշված բնակարանների նկարումներ սեփականության իրավունքի գրանցման հիմքերը գործարքներ չեն, որից հետո փորձել է այդ գրանցումները վիճարկել վարչական կարգով: Հայցվորը 13.09.2018 թվականին Կադաստրի հասցեագրված թիվ 18-001 գրությանը խնդրել է վերացնել վիճարկվող պետական գրանցումները, սակայն Կադաստրի 28.09.2018 թվականի գրությանը մերժվել է հայցվորի պահանջն այն հիմնավորումներ⁹, որ նշված գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարեցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման կարող է իրականացվել գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դարական ակտի հիման վրա: Դատարանը, հիմնավոր համարելով հայցվորի պարճատարանությունները, բավարարել է բաց թողնված դարավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և հայցադիմումն ընդունել է վարույթ: Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պարճատարանությունները: Ստորադաս ապրյանները գրել են, որ հայցվորն իր ենթադրյալ իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկել է ակտիվ գործողություններ, հետևաբար բաց թողնված դարավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա է բավարարման:

(...) Վերաքննիչ դատարանի այն պարճատարանությունները, որ Կոուպերադիվի սնանկության գործով կառավարիչն իր իրավունքների ենթադրյալ խախտման, այն է՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեների բնակարանների նկարումներ սեփականության իրավունքի գրանցման հիմքում դրված Կոուպերադիվի ընդհանուր ժողովի որոշումները գործարքներ չհանդիսանալու փաստերի վերաբերյալ տեղեկացել է թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործով 27.06.2018 թվականին հրապարակված վճռից հետո, որից հետո էլ փորձել է սեփականության իրավունքի պետական գրանցումները վիճարկել վարչական կարգով, անհիմն են, քանի որ վերոնշյալ քաղաքացիական գործով դատական ակտի եզրահանգումները, այն է՝ Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գրվող բնակարանների նկարումներ սեփականության իրավունքի գրանցման հիմքում դրված Կոուպերադիվի ընդհանուր ժողովի որոշումները գործարքներ չհանդիսանալու վերաբերյալ դատարանի եզրահանգումները կարարվել են որոշակի իրավական նորմերի վերլուծության արդյունքում: (...) վիճարկվող պետական գրանցումների հիմքում դրվել են Կոուպերադիվի 30.12.2010, 17.01.2011 թվականների կանոնադրությունները և 18.01.2011 թվականի քաղվածքը, որոնց վերաբերյալ Կոուպերադիվի սնանկության գործով կառավարիչը գիտեր կամ թերևս հնարավորություն ուներ իմանալու 2015 թվականից, այլ ոչ թե թիվ ԵԱԲԴ/1153/02/18 քաղաքացիական գործով հրապարակված վճռից, քանի որ սույն գործի փաստերով հասարակվում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2015 թվականի վճռով Կոուպերադիվը ճանաչվել է սնանկ, և հայցվորը նշանակվել է սնանկության գործով կառավարիչ: Հետևաբար, Կոուպերադիվի սնանկության գործով կառավարիչը դեռևս 2015 թվականից արդեն իսկ հնարավորություն էր ունեցել տեղեկանալու վիճարկվող անշարժ գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցումների հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ: Ինչ վերաբերում է արդարադաս ապրյանների այն պարճատարանություններին, որ հայցվորն իր իրավունքների ենթադրյալ խախտումների մասին հնարավորություն ուներ տեղեկանալու միայն իրավասու դատարանի կողմից այդ հիմքերին իրավական գնահատական տալուց հետո, սպա (...) դրանք չեն բխում սույն գործի փաստերից և չեն կարող հիմք հանդիսանալ բաց թողնված դարավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու համար այն պարճատարանությամբ, որ դարավարական ժամկետի բացթողումը կարող է վերականգնվել, եթե հիմնավորվում է, որ հայցվորը ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները հայցը սահմանակալ

⁹ Ընդգծումն իմն է:

ժամկետում դադարան ներկայացնելու համար, և դադարավարական ժամկետի բացթողումը Կրեյտի է ունեցել իրենից անկախ պարճառներով, մինչդեռ Կրեյտը դեպքում հայցվորը, դեռևս 2015 թվականից Կրեյտից ստացված լիցենզիայի ստեղծման հրավերների գրանցման հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ, չի վիճարկել դրանք:

(...) հայցվորը վերոնշյալ սեփականության իրավունքի պետական գրանցումները փորձել է վիճարկել վարչական, այնուհետև, նաև դատական կարգով միայն դրանց հիմքում ընկած իրեն արդեն իսկ հայրնի հանգամանքների վերաբերյալ այլ քաղաքացիական գործի շրջանակներում համապատասխան դադարանի կողմից իրավական գնահատական տալուց հետո, որը որևէ կերպ չի կարող գնահատվել որպես հայցվորի կողմից ձեռնարկված ակտիվ գործողություններ, որպիսի գնահատականի արժանացել է արտադրատեսակների կողմից: Հակառակը՝ հայցվորն ունի իրավական հնարավորություն վիճարկման հայց ներկայացնելու համար, մինչդեռ ձեռնարկի չի եղել վիճարկելու վկայակոչված վարչական ակտերը, ուստի օրյեկտիվ պարճառներից ելնելով պետք է զրկվի դադարավարական ժամկետի վերականգնման հնարավորությունից:

(...) վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դադարավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Կոուպերարիվի սնանկության գործով կառավարչի միջնորդությունն անհիմն է, քանի որ վերջինս չի սպասուցել օրենքով սահմանված ժամկետի ընթացքում դադարան դիմելու ուղղությամբ իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ ձեռնարկելու և իր կամքից անկախ պարճառներով օրենքով սահմանված դադարավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքների առկայությունը:

(...) Կոուպերարիվի սնանկության գործով կառավարիչը կորցրել է Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի 24/3 շենքի թիվ 2, թիվ 6, թիվ 10, թիվ 13, թիվ 19, թիվ 48, թիվ 49, թիվ 54, թիվ 60, թիվ 68, թիվ 69 հասցեներում գտնվող բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ վիճարկման հայցով դադարան դիմելու իրավունքը: Այսինքն՝ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դադարավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը ենթակա չէր բավարարման, ինչն անարևել է արտադրատեսակների կողմից» (Կրեյտ Վճարել դադարանի որոշման 9-11 էջերը):

Վճարել դադարանի դադարվորներ Ռուզաննա Հակոբյան, Գոռ Հակոբյան և Սյուրիան Միքայելյան, համաձայն չլինելով Վճարել դադարանի դադարվորների մեծամասնության կողմից վերը նշված որոշման պարճառատարական մասի հետ, շարադրում ենք մեր հայրուկ կարծիքը որոշման նշված մասի վերաբերյալ:

Գտնում ենք, որ սույլ դեպքում հայցվորի կողմից բաց չի թողնվել վիճարկման հայց ներկայացնելու օրենքով նախատեսված դատավարական ժամկետը, հետևաբար վերջինիս վրա չի կարող դրվել իր կողմից բաց չթողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու պարտականություն և նրան դատական պաշտպանության իրավունքի տրամադրումն էլ չի կարող կախվածության մեջ դրվել, ըստ էության, առարկայագուրկ միջնորդության քննարկման արդյունքում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու դատարանի հայեցողությունից:

Այսպես. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝ ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը բողոքն ընդունելիս պարտավոր է ստուգել բողոքի համապատասխանությունը նույն օրենքի 70-րդ հոդվածի պահանջներին և պարզել արդյոք բողոքը բերվել է նույն օրենքի 71-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս բողոքը թողնվում է առանց քննարկման, եթե դա ներկայացված է նույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը, նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի չի ճանաչվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ:

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ գույքորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վարչական մարմնի ընդունած ակտը կամ ակտը չընդունելը կամ գործողություն կատարելը կամ չկատարելը բողոքարկվել է վարչական կարգով, **նույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց կամ բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե լրացել է հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետը, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վերոգրյալ իրավանդությունից հետևում է, որ վիճարկման հայցադիմումն օրենքով սահմանված դատավարական ժամկետի պահպանմամբ ներկայացնելը հայցադիմումը վարույթ ընդունելու անհրաժեշտ նախապայմաններից մեկն է: Մինչև նույն ժամանակ օրենսդիրը սահմանել է բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու իրավական հնարավորություն՝ համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված

դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Հարկ ենք համարում ընդգծել, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի հոսքն օրենսդիրը պայմանավորել է 2 գործոնով.

1. վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահով,

2. վարչական ակտի վարչական կարգով բողոքարկման արդյունքում բողոքի վերաբերյալ ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու կամ բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելու պահով:

Այսինքն՝ վիճարկման հայցը կարող է վարչական դատարան ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե վարչական մարմնի ընդունված ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կամ բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո երկամսյա ժամկետում: Ընդ որում, վարչական մարմնի ընդունված ակտը վարչական կարգով բողոքարկված լինելու դեպքում կարևորվում է բողոքի առնչությամբ վարչական մարմնի դրսևորած վարքագիծը: Մասնավորապես, արդյո՞ք վարչական մարմինը բողոքի վերաբերյալ ընդունել է որոշում, ցուցաբերել է անգործություն, թե բողոքը թողել է առանց քննարկման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո ներկայացված լինելու և ժամկետը բաց թողնելը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի ճանաչված չլինելու հիմքով:

Վերը նշվածի կարևորությունը կայանում է նրանում, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի հաշվարկման կանոնը կարող է գործել միայն այն դեպքերում, երբ վարչական մարմինը.

➤ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը, ընդունել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված որոշումը,

➤ բողոքի քննության համար սահմանված ժամկետում որևէ որոշում չի ընդունել (ցուցաբերել է անգործություն):

Միևնույն ժամանակ, եթե վարչական մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս բողոքը թողնում է առանց քննարկման, գտնելով, որ այն ներկայացված է նույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը, նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի չի ճանաչվել, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի հաշվարկման կանոնը չի կարող գործել, քանի որ առկա չի լինի նույն հոդվածով սահմանված պայմանը, այն է՝ բողոքի վերաբերյալ ընդունված որոշում: Նշված դեպքում վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը պետք է հաշվարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կանոնով, այն է՝ հիմք ընդունելով վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահը:

Սույն գործով գտնելով, որ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Կոռուպցիայի պայքարի կոմիտեի սնանկության գործով կառավարչի միջնորդությունն անհիմն է, քանի որ վերջինս չի ապացուցել օրենքով սահմանված ժամկետի ընթացքում դատարան դիմելու ուղղությամբ իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ ձեռնարկելու և իր կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքների առկայությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը ենթակա չէր բավարարման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասից հետևում է, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը տվյալ դեպքում

հաշվարկվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կանոնի կիրառմամբ:

Գտնում ենք, որ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության հիմնավորվածությանն անդրադառնալուց առաջ Վճռաբեկ դատարանը նախևառաջ պետք է անդրադառնար հայցվորի կողմից դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքին, որից հետո միայն՝ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջնորդությամբ ներկայացված փաստարկներին:

Տվյալ դեպքում ինչպես ստորադաս դատարանները, այնպես էլ Վճռաբեկ դատարանն անտեսել են բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդության մեջ նշված այն փաստարկը, որ վիճարկվող պետական գրանցումները 11.09.2018 թվականի դիմումով ինքը բողոքարկել է վարչական կարգով՝ պահանջելով վերացնել նշված գրանցումները (**հավելված 1-ին, գ.թ. 14**), որին ի պատասխան Կադաստրի կողմից 28.09.2018 թվականի գրությամբ հայտնվել է, որ նշված գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարեցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման կարող է իրականացվել գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա (**հավելված 1-ին, գ.թ. 12-13**):

Փաստորեն, 11.09.2018 թվականի դիմումով հարուցվել է բողոքարկման վարույթ, որի քննարկման արդյունքում Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալը մերժել է վիճարկվող պետական գրանցումները վերացնելու մասին հայցվորի բողոքը: Հարկ ենք համարում ընդգծել, որ Կադաստրը ոչ թե ցուցաբերել է անգործություն կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով բողոքը թողել առանց քննարկման, այլ քննարկել է այն և ընդունել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված որոշումը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը ևս արձանագրել է, որ Հայցվորը 13.09.2018 թվականին Կադաստր հասցեագրված թիվ 18-001 գրությամբ խնդրել է վերացնել վիճարկվող պետական գրանցումները, սակայն Կադաստրի 28.09.2018 թվականի գրությամբ մերժվել է հայցվորի պահանջը (**տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 9-րդ էջը**), այսինքն՝ հայցվորը սեփականության իրավունքի պետական գրանցումները փորձել է վիճարկել վարչական, այնուհետև նաև դատական կարգով (**տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 10-րդ էջը**), այդուհանդերձ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը հաշվարկելու համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, մինչդեռ տվյալ դեպքում պետք է հիմք ընդունվեր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը, որի պայմաններում սույն գործով վիճարկման հայցը Կոռպերատիվի սնանկության գործով կառավարչի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ: Մասնավորապես, սեփականության իրավունքի պետական գրանցումների վարչական կարգով բողոքարկման արդյունքում բողոքի վերաբերյալ միջամտող վարչական ակտը Կադաստրի կողմից ընդունվել է 28.09.2018 թվականին: Սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած հայցադիմումը Կոռպերատիվի սնանկության գործով կառավարիչը փոստին է հանձնել 29.10.2018 թվականին, որը ՀՀ վարչական դատարանում մուտքագրվել է 31.10.2018 թվականին, այսինքն՝ երկամսյա ժամկետում:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների և սույն գործի փաստերի հաշվառմամբ գտնում ենք, որ տվյալ դեպքում հայցվորի կողմից բաց չի թողնվել վիճարկման հայցը դատարան ներկայացնելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը, հետևաբար դատավարական ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը, որպես առարկայագուրկ, ենթակա չի եղել քննարկման:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ Դատարանի 03.12.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը ենթակա է վերացման՝ առարկայագուրկ միջնորդության քննարկման

արդյունքում ընդունված լինելու պատճառաբանությամբ: Գտնում ենք նաև, որ տվյալ դեպքում հայցվորին պետք է տրամադրվի դատական պաշտպանություն՝ վերջինիս վրա չդնելով դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու պարտականություն, քանի որ սույն գործով հայցադիմումը հայցվորի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի պահպանմամբ:

Այսպիսով, գրնում ենք, որ վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է վերացման սույն հարուկ կարծիքում նշված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան
Ս. Միքայելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ՎԳ/3118/05/19
Կ. Ավետիսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/3118/05/19
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Գարեգին Հարությունյանի ընդդեմ
Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձ Արմեն
Չատյանի՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար)
25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվություն անվավեր ճանաչելու
պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.09.2019
թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ Գարեգին Հարու-
թյունյանի ներկայացուցիչ Էդիկ Ոսկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գարեգին Հարությունյանը պահանջել է անվավեր ճանաչել Ղե-
կավարի 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան)
05.06.2019 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնե-
լու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.09.2019
թվականի որոշմամբ Արմեն Չատյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատա-
րանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու

վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասով, վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Չատյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29-րդ, 54-րդ, 66-րդ, 72-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ չի ներկայացվել ապացույց շինարարությունը 20.02.2019 թվականին սկսելու ժամկետի վերաբերյալ, իսկ ներկայացված ապացույցներն ընդամենը փաստում են Արմեն Չատյանի ցանկությունը սկսելու շինարարությունը:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով բողոքին կից թղթային կրիչով ներկայացված լուսանկարներին, որտեղ պատկերված է ցուցանակը, դրանք գնահատել է որպես պատշաճ ապացույցներ, չնայած այն հանգամանքին, որ այդ լուսանկարների վրա բացակայում է որևէ նշում լուսանկարների կատարման ժամկետի վերաբերյալ: Հետևաբար պարզ չէ, թե, երբ են սկսվել շինարարական թույլտվության հիման վրա շենքի կառուցման աշխատանքները, քանի որ վերոնշյալ լուսանկարներից պարզ չէ, թե դրանցով պատկերված ցուցանակը երբ է տեղադրվել, կամ արդյոք այն տեղադրվել է բոլորի համար հասանելի, տեսանելի վայրում, թե՛ ոչ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից նշված վարչական ակտով իր ենթադրյալ իրավունքների խախտման մասին տեղեկանալու և ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության՝ այդ թվում նաև դատական պաշտպանության իրավունքն իրացնելու գործընթացն օբյեկտիվորեն ենթադրում է տվյալ անձի կողմից որոշակի ողջամիտ գործողությունների ձեռնարկում:

Հետևաբար, սույն գործում առկա ապացույցների պարագայում պետք է փաստել, որ հայցվորը շինարարության թույլտվության վիճարկման հայց ներկայացնելու երկամյա ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ պատճառներով, քանի որ չի հանդիսացել վիճարկվող վարչական ակտի հասցեատեր: Նշված շինարարության թույլտվության հիման վրա կառուցվող շենքի՝ միայն որոշակի մասի հասնելու պայմաններում, իր տան սահմանագծով ու շատ մոտ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ Քաղաքապետարան դիմելու և 12.03.2019 թվականին ստացված պատասխան գրության ուսումնասիրության արդյունքում պարզելով վիճարկվող վարչական ակտի առկայությունը, ողջամիտ ժամկետում ձեռնարկել է իրենից կախված բավարար միջոցներ վիճարկման հայցով դատարան դիմելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 09.09.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ «օրինական ուժ տալ Դատարանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշմանը»:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Բողոքաբերի այն փաստարկը, որ Արմեն Չատյանի ներկայացրած լուսանկարներով և այլ ապացույցներով չի ապացուցվել, թե երբ են կատարվել դրանք և արդյոք շինարարությունը մեկնարկել է 21.02.2019 թվականին, իսկ պատատորը փակցված էր 20.02.2019 թվականին, անհիմն է, քանի որ վիճարկվող վարչական ակտով նախատեսված

շինարարությունը 20.02.2019 թվականից սկսվելու փաստը հաստատվում է այն հանգամանքով, որ 21.02.2019 թվականին կազմվել է «Հիմքերի համար բացված փոտորակների և խրամուղիների գնման» ակտ, որի կազմման պահին վիճելի հասցեում արդեն իսկ փորվել էին փոտորակները և շինության հիմքերի խրամուղիները:

Այն հանգամանքը, որ պաստառը փակցված է եղել առնվազն շինարարության սկսելուց մեկ օր առաջ, հաստատվում է նորմատիվ իրավական ակտով, ուստի դրա բացակայության դեպքում կառուցապատողը կտուգանվեր, ինչը սույն դեպքում տեղի չի ունեցել: Հետևաբար, հայցվորը վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է դեռևս 20.02.2019 թվականին, քանի որ փողոցի ամբողջ երկայնքով փակցված էր «Ավելի բարեկարգ Երևան» պաստառը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված

դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ խախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ

հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*Կրե՛ս Khalfaooui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (Ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*Կրե՛ս Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Անդրադառնալով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներին՝ Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված այդպիսի սահմանափակումները հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից: Ըստ Եվրոպական դատարանի՝ նմանատիպ հայցերի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել հեռավոր անցյալում տեղի ունեցած իրադարձություններ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Եվրոպական դատարանը գտել է, որ ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Կրե՛ս Stubbings and others v. The United Kingdom (22083/93, 22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, 51-րդ և 55-րդ կետեր*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետների վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած

որոշմամբ գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսամաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից՝ երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսամաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*յրեն Երևանի քաղաքապետարանի ընդդեմ Գայանե Մելքոնյանի թիվ ՎԴ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում, և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրելու օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ գործադրելու օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները (*յրեն Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբաջյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը, Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի որոշումը, «ՁԷԴ» ՓԲԸ-ի Կոնստանտին Էդգար Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5086/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը, Եղեգնուրի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման թիվ ՎԴ/0196/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2016 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գարեգին Հարությունյանը 26.04.2019 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրված թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը (**հավելված, գ. թ. 2-23**):

Միաժամանակ, Գարեգին Հարությունյանը հայցադիմումին կից ներկայացրել է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, որով հայտնել է, որ Արմենուհի Հարությունյանը (նախկին սեփականատերը) իրագեկվել է

25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվության վերաբերյալ միայն 07.03.2019 թվականի Ղեկավարի գրությամբ, որը վերջինիս կողմից ստացվել է 12.03.2019 թվականին, ինչը հավաստվում է փոստային ծրարով **(հավելված, գ. թ. 54-57)**:

ՀՀ վարչական դատարանի 03.05.2019 թվականի որոշմամբ Գարեգին Հարությունյանի հայցադիմումը՝ Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականի թիվ 23/25-23 շինարարական թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված չէ վիճարկվող վարչական ակտը կամ դրա պատճենը **(հավելված, գ.թ. 24-25)**: Դատարանի 05.06.2019 թվականի որոշմամբ Գարեգին Հարությունյանի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է և կրկին ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ այն հիմնավորումներով, որ վիճարկվող վարչական ակտի վերաբերյալ հայցվորն իրազեկվել է Ղեկավարի 07.03.2019 թվականի գրությունից, որը ստացվել է 12.03.2019 թվականին, և այդ պահից սկսած երկամսյա ժամկետում՝ 26.04.2019 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան, այսինքն՝ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում ձեռնամուխ է եղել իր իրավունքների պաշտպանությանը **(հավելված, գ. թ. 62-64)**:

Դատարանի 05.06.2019 թվականի մեկ այլ որոշմամբ Արմեն Չատյանը սույն գործով ներգրավվել է որպես երրորդ անձ **(հավելված, գ. թ. 65-66)**:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Արմեն Չատյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ վիճահարույց վարչական ակտով կառուցապատման ելքակալ Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/2 հասցեի շինության հարևանությանը գտնվող Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը ծագել է 27.03.2019 թվականից՝ Արմենուհի Հարությունյանի և Գարեգին Հարությունյանի միջև 22.03.2019 թվականին կազմված նվիրատվության պայմանագրի հիման վրա: Մինչդեռ վիճարկվող վարչական ակտն ուժի մեջ է մտել մինչև սեփականության իրավունքի ձեռք բերելը, ինչը նշանակում է, որ դատավարական ժամկետների հաշվարկման տեսանկյունից առանցքային է ոչ թե վարչական ակտի մասին հայցվորի իրազեկված լինելու պահը, այլ նվիրատու Արմենուհի Հարությունյանի իրազեկված լինելու պահը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճարկվող վարչական ակտի վերաբերյալ Արմենուհի Հարությունյանն իրազեկված էր ավելի վաղ, քան հայցվորը վկայակոչել է իր միջնորդության մեջ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Արմեն Չատյանի կողմից պահպանվել է համապատասխան պատահական վահանակը տեղադրված լինելու պահանջը, որը հիմնավորվում է վերաքննիչ բողոքին կից ներկայացված լուսանկարների համակարգչային պատճեններով: Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ շինարարության իրականացման սկզբնաժամկետի վերաբերյալ Քաղաքապետարան ներկայացված համապատասխան դիմումի վերաբերյալ ծանուցմամբ հիմնավորվում է, որ շինարարությունը փաստացի սկսված է եղել 21.02.2019 թվականից՝ սույն թվականի փետրվարի 20-ից շինհրապարակում պատահական վահանակ տեղադրված լինելու պայմաններում: Հետևաբար Վերաքննիչ դատարանը գտել է, որ շինարարության, ինչպես նաև շինարարության թույլտվության մասին Արմենուհի Հարությունյանը, հետևապես նաև հայցվորն իրազեկված են եղել 21.02.2019 թվականից:

Մինչդեռ վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն վարչական գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին Արմեն Չատյանին տրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում բնակելի տան կառուցման համար **(հավելված, գ.թ. 45-46)**: Սույն գործով Ղեկավարի տեղակալի կողմից ի պատասխան Արմենուհի Հարությունյանի 05.03.2019 թվականի դիմումի հայտնվել է, որ Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում իրականացվում է բնակելի տան կառուցման աշխատանքներ՝ Ղեկավարի 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվության համաձայն **(հավելված, գ.թ. 47)**:

Վճռաբեկ դատարանը, գնահատելով սույն գործի փաստերը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ առանցքային է նվիրատու Արմենուհի Հարությունյանի իրազեկված լինելու պահը, իսկ վերջինս վիճարկվող վարչական ակտի մասին իրազեկվել էր ավելի վաղ, հիմնավոր չէ և չի բխում սույն գործում առկա ապացույցներից:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորի պնդմամբ վերջինս վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է ի պատասխան Արմենուհի Հարությունյանի դիմումի՝ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի գրությունը 12.03.2019 թվականին ստանալուց հետո, որով հայտնվել է, որ վիճելի հասցեում բնակելի տան կառուցման աշխատանքներն իրականացվում են Արմեն Չատյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրված թիվ 23/35-23 շինարարության թույլտվության հիման վրա: Այսինքն՝ հայցվորի պնդմամբ վերջինս Արմեն Չատյանին տրամադրված շինարարության թույլտվության առկայության մասին տեղեկացել է վերոնշյալ գրությունից: Մյուս կողմից սույն գործում առկա ապացույցներով չի հաստատվում, որ հայցվորը վիճարկվող շինարարության թույլտվության մասին իմացել է ավելի վաղ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակառակը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում հայցվորի հայտնած տվյալը վիճարկվող շինարարության թույլտվության մասին իր իրազեկման ժամանակի վերաբերյալ, պետք է համարել հավաստի:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վերաքննիչ դատարանի այն փաստարկներին, որ գործում առկա լուսանկարների համակարգչային պատճեններից երևում է, որ Արմեն Չատյանի կողմից պահպանվել են «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008 թվականի թիվ 07-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Քաղաքապետարան ներկայացված՝ շինարարության սկսման մասին դիմումի գրանցման վերաբերյալ ծանուցմամբ և համապատասխան պատահ-վահանակը տեղադրված լինելու վերաբերյալ լուսանկարների համակարգչային պատճեններով չի հիմնավորվում այն հանգամանքը, թե փաստացի երբ է տեղադրվել համապատասխան պատահ-վահանակը, որը հնարավորություն կտար հայցվորին առնվազն տեղեկանալու վիճարկվող վարչական ակտի գոյության մասին: Ինչ վերաբերում է կառուցապատողի կողմից շինարարությունը սկսելուն, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, դա դեռևս չի փաստում այն մասին, որ հայցվորը պետք է անպայմանորեն եզրակացներ, որ Ղեկավարի կողմից Արմեն Չատյանին 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը, որով վերջինիս տրվել է իրավունք՝ վիճելի հասցեում բնակելի տուն կառուցելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պատասխան գրությունից հետո է միայն Գարեգին Հարությունյանն իրազեկվել, որ Արմեն Չատյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում շինարարություն իրականացնելու նպատակով, որով խախտվում են կամ կարող են խախտվել հայցվորի իրավունքները: Այսինքն՝ Գարեգին Հարությունյանը մինչև 12.03.2019 թվականը տեղեկացված չէր վարչական ակտի գոյության մասին, հետևաբար վերջինս, չհանդիսանալով վարչական ակտի հասցեատեր, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով և այդ մասին իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին, վիճարկման հայցով դիմել է դատարան: Նման պայմաններում դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման, ինչի կապակցությամբ Դատարանը կայացրել է իրավաչափ դատական ակտ, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պարտախանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճառաբանությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. ՀՀ վարչական դատարանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/3118/05/19 վարչական գործով
10.11.2020 թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 10.11.2020 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Գարեգին Հարությունյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձ Արմեն Չատյանի՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար) 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչ Էդիկ Ոսկանյանի վճռաբեկ բողոքը, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. ՀՀ վարչական դատարանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնել անփոփոխ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նշված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Գարեգին Հարությունյանը պահանջել է անվավեր ճանաչել Ղեկավարի 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2019 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.09.2019 թվականի որոշմամբ Արմեն Չատյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասով, վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Չատյանը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի ասանաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29-րդ, 54-րդ, 66-րդ, 72-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ չի ներկայացվել ապացույց շինարարությունը 20.02.2019 թվականին սկսելու ժամկետի վերաբերյալ, իսկ ներկայացված ապացույցներն ընդամենը փաստում են Արմեն Չատյանի ցանկությունը սկսելու շինարարությունը:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով բողոքին կից թղթային կրիչով ներկայացված լուսանկարներին, որտեղ պատկերված է ցուցանակը, դրանք գնահատել է որպես պատշաճ ապացույցներ, չնայած այն հանգամանքին, որ այդ լուսանկարների վրա բացակայում է որևէ նշում լուսանկարների կատարման ժամկետի վերաբերյալ: Հետևաբար պարզ չէ, թե, երբ են սկսվել շինարարական թույլտվության հիման վրա շենքի կառուցման աշխատանքները, քանի որ վերոնշյալ լուսանկարներից պարզ չէ, թե դրանցով պատկերված ցուցանակը երբ է տեղադրվել, կամ արդյոք այն տեղադրվել է բոլորի համար հասանելի, տեսանելի վայրում, թե՛ ոչ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից նշված վարչական ակտով իր ենթադրյալ իրավունքների խախտման մասին տեղեկանալու և ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության՝ այդ թվում նաև դատական պաշտպանության իրավունքն իրացնելու գործընթացն օբյեկտիվորեն ենթադրում է տվյալ անձի կողմից որոշակի ողջամիտ գործողությունների ձեռնարկում:

Հետևաբար, սույն գործում առկա ապացույցների պարագայում պետք է փաստել, որ հայցվորը շինարարության թույլտվության վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ պատճառներով, քանի որ չի հանդիսացել վիճարկվող վարչական ակտի հասցեատեր: Նշված շինարարության թույլտվության հիման վրա կառուցվող շենքի՝ միայն որոշակի մասի հասնելու պայմաններում, իր տան սահմանագծով ու շատ մոտ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ Քաղաքապետարան դիմելու և 12.03.2019 թվականին ստացված պատասխան գրության ուսումնասիրության արդյունքում պարզելով վիճարկվող վարչական ակտի առկայությունը, ողջամիտ ժամկետում ձեռնարկել է իրենից կախված բավարար միջոցներ վիճարկման հայցով դատարան դիմելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «Վերացնել Վերաքննիչ դատարանի 09.09.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ «օրինական ուժ տալ Դատարանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշմանը»:

2.1. Երրորդ անձ Արմեն Չարյանի վճարելի բողոքի պարասխանի հիմնավորումները

Վիճարկման հայցով հայցվորին իրավունք է տրված պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու միջամտող վարչական ակտը, որպիսի հայցը ներկայացնելու համար սահմանված է երկամսյա ժամկետ, որի հաշվարկը սկսվում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Հետևաբար, նշված ժամկետը բաց թողնելով՝ անձն այլևս կորցնում է այդ ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու, այն է՝ վիճարկման հայց ներկայացնելու իր իրավունքը: Անձի կողմից ժամկետի բացթողման պատճառը կարող է համարվել հարգելի միայն այն դեպքում, երբ առկա է այնպիսի իրավիճակ, որի հետևանքով վերջինս օբյեկտիվորեն զրկված էր օրենքով սահմանված ժամկետում հայց ներկայացնելու իրական որևէ հնարավորությունից, որպիսի հանգամանքն էլ պետք է ապացուցի հենց այդ դատավարական ժամկետի վերականգնում հայցողը՝ ներկայացնելով համապատասխան ապացույցներ, որը տվյալ դեպքում չի կատարվել:

3. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գարեգին Հարությունյանը 26.04.2019 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրված թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը (**հավելվածի գ. թ. 2-23**):

Միաժամանակ, Գարեգին Հարությունյանը հայցադիմումին կից ներկայացրել է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, որով հայտնել է, որ Արմենուհի Հարությունյանը (նախկին սեփականատերը) իրագեկվել է 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվության վերաբերյալ միայն

07.03.2019 թվականի Ղեկավարի գրությամբ, որը վերջինիս կողմից ստացվել է 12.03.2019 թվականին, ինչը հավաստվում է փոստային ծրարով (**հավելվածի գ. թ. 54-57**):

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ռ. Ազրոյան) 03.05.2019 թվականի որոշմամբ Գարեգին Հարությունյանի հայցադիմումը՝ Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականի թիվ 23/25-23 շինարարական թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված չէ վիճարկվող վարչական ակտը կամ դրա պատճենը (**հավելվածի գ.թ. 24-25**):

Դատարանի 05.06.2019 թվականի որոշմամբ Գարեգին Հարությունյանի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է և կրկին ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ այն հիմնավորումներով, որ վիճարկվող վարչական ակտի վերաբերյալ հայցվորն իրազեկվել է Ղեկավարի 07.03.2019 թվականի գրությունից, որը ստացվել է 12.03.2019 թվականին, և այդ պահից սկսած երկամսյա ժամկետում՝ **26.04.2019** թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան, այսինքն՝ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում ձեռնամուխ է եղել իր իրավունքների պաշտպանությանը (**հավելվածի գ. թ. 62-64**):

Դատարանի 05.06.2019 թվականի մեկ այլ որոշմամբ Արմեն Չատյանը սույն գործով ներգրավվել է որպես երրորդ անձ (**հավելվածի գ. թ. 65-66**):

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Արմեն Չատյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ վիճահարույց վարչական ակտով կառուցապատման ենթակա Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/2 հասցեի շինության հարևանությամբ գտնվող Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը ծագել է 27.03.2019 թվականից՝ Արմենուհի Հարությունյանի և Գարեգին Հարությունյանի միջև 22.03.2019 թվականին կազմված նվիրատվության պայմանագրի հիման վրա: Մինչդեռ վիճարկվող վարչական ակտն ուժի մեջ է մտել մինչև սեփականության իրավունքի ձեռք բերելը, ինչը նշանակում է, որ դատավարական ժամկետների հաշվարկման տեսանկյունից առանցքային է ոչ թե վարչական ակտի մասին հայցվորի իրազեկված լինելու պահը, այլ նվիրատու Արմենուհի Հարությունյանի իրազեկված լինելու պահը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճարկվող վարչական ակտի վերաբերյալ Արմենուհի Հարությունյանն իրազեկված էր ավելի վաղ, քան հայցվորը վկայակոչել է իր միջնորդության մեջ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Արմեն Չատյանի կողմից պահպանվել է համապատասխան պաստառ-վահանակը տեղադրված լինելու պահանջը, որը հիմնավորվում է վերաքննիչ բողոքին կից ներկայացված լուսանկարների համակարգչային պատճեններով: Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ շինարարության իրականացման սկզբնաժամկետի վերաբերյալ Քաղաքապետարան ներկայացված համապատասխան դիմումի վերաբերյալ ծանուցմամբ հիմնավորվում է, որ շինարարությունը փաստացի սկսված է եղել 21.02.2019 թվականից՝ սույն թվականի փետրվարի 20-ից շինհրապարակում պաստառ-վահանակ տեղադրված լինելու պայմաններում: Հետևաբար Վերաքննիչ դատարանը գտել է, որ շինարարության, ինչպես նաև շինարարության թույլտվության մասին Արմենուհի Հարությունյանը, հետևապես նաև հայցվորն իրազեկված են եղել 21.02.2019 թվականից:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել Վերաքննիչ դատարանի 09.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. ՀՀ վարչական դատարանի 05.06.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնել անփոփոխ:

Ի հիմնավորումն վերոգրյալ եզրահանգման՝ Վճռաբեկ դատարանը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 54-րդ հոդվածի 1-ին մասը, 65-րդ հոդվածը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը,

արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման մասին ՀՀ սահմանադրական դատարանի 10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դատարանի մատչելիության իրավունքի և այդ իրավունքի ժամկետային սահմանափակումների մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) Kreuz v. Poland (28249/95) գործով 19.06.2001 թվականի վճռով՝ 52-րդ կետ, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով 13.07.1995 թվականի վճռով՝ 59-րդ կետ, Khalfaoui v. France (34791/97) գործով 14.12.1999 թվականի վճռով՝ 36-րդ կետ, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով 12.04.2016 թվականի վճռով՝ 28-րդ կետ, Stubbings and others v. The United Kingdom (22083/93; 22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճռով՝ 51-րդ և 55-րդ կետեր, արտահայտած իրավական դիրքորոշումները՝ եզրահանգելով, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Մինևույն ժամանակ, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությանը և գտնելով, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը, Վճռաբեկ դատարանը վկայակոչել է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի, ինչպես նաև անձանց կողմից իրենց դատական պաշտպանության իրավունքն օրենքով սահմանված ժամկետներում իրացնելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մելքոնյանի թիվ ՎԴ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի, Աշոտ Գազիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գազիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբալյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի, Հրայր Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի, «ՁԷԴ» ՓԲԸ-ի տնօրեն Էդգար Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5086/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի, Եղեգնուտի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման թիվ ՎԴ/0196/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի

30.03.2016 թվականի որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները և արձանագրել հետևյալը. «(...) Սույն գործի փաստերի համաձայն՝ Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին Արմեն Չապչյանին տրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեաբան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում բնակելի տան կառուցման համար (հավելված, գ.թ. 45-46): Սույն գործով Ղեկավարի տեղակալի կողմից ի պարասիան Արմենուհի Հարությունյանի 05.03.2019 թվականի դիմումի հայտնվել է, որ Այգեաբան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում իրականացվում է բնակելի տան կառուցման աշխատանքներ՝ Ղեկավարի 25.12.2018 թվականի թիվ 23/35-23 շինարարության թույլտվության համաձայն (հավելված, գ.թ. 47):

(...) Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ ստանցքային է նվիրատու Արմենուհի Հարությունյանի իրազեկված լինելու պատի, իսկ վերջինս վիճարկվող վարչական ակտի մասին իրազեկվել էր ավելի վաղ, հիմնավոր չէ և չի բխում սույն գործում սուկա ապացույցներից:

(...) հայցվորի պնդմամբ վերջինս վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է ի պարասիան Արմենուհի Հարությունյանի դիմումի Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի գրությունը 12.03.2019 թվական արանապուց հետո, որով հայտնվել է, որ վիճելի հասցեում բնակելի տան կառուցման աշխատանքներն իրականացվում են Արմեն Չապչյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրված թիվ 23/35-23 շինարարության թույլտվության հիման վրա: Այսինքն՝ հայցվորի պնդմամբ վերջինս Արմեն Չապչյանին տրամադրված շինարարության թույլտվության սուկայության մասին տեղեկացել է վերոնշյալ գրությունից: Մյուս կողմից սույն գործում սուկա ապացույցներով չի հաստատվում, որ հայցվորը վիճարկվող շինարարության թույլտվության մասին իմացել է ավելի վաղ: Վճարելի դատարանը գտնում է, որ հակառակը հավաստող ապացույցների քանակության պայմաններում հայցվորի հայտնած տվյալը վիճարկվող շինարարության թույլտվության մասին իր իրազեկման ժամանակի վերաբերյալ, պետք է համարել հավասարի:

Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վերաքննիչ դատարանի այն փաստարկներին, որ գործում սուկա լուսանկարների համակարգչային պատճեններից երևում է, որ Արմեն Չապչյանի կողմից պահպանվել են «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008 թվականի թիվ 07-Ե հրամանով հաստատված կարգի պահանջները: (...) սույն գործով Քաղաքապետարան ներկայացված շինարարության սկսման մասին դիմումի գրանցման վերաբերյալ ծանուցմամբ և համապարասիան պատրաստ-վահանակը տեղադրված լինելու վերաբերյալ լուսանկարների համակարգչային պատճեններով չի հիմնավորվում այն հանգամանքը, թե փաստացի երբ է տեղադրվել համապարասիան պատրաստ-վահանակը, որը հնարավորություն կտար հայցվորին առնվազն տեղեկանալու վիճարկվող վարչական ակտի գոյության մասին: Ինչ վերաբերում է կառուցապարտողի կողմից շինարարությունը սկսելուն, Վճարելի դատարանի գնահատմամբ, դա դեռևս չի փաստում այն մասին, որ հայցվորը պետք է անպայմանորեն եզրակացներ, որ Ղեկավարի կողմից Արմեն Չապչյանին 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը, որով վերջինիս տրվել է իրավունք՝ վիճելի հասցեում բնակելի տան կառուցելու համար:

Այսպիսով, Վճարելի դատարանը գտնում է, որ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պարասիան գրությունից հետո է միայն Գարեգին Հարությունյանն իրազեկվել, որ Արմեն Չապչյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեաբան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում շինարարություն իրականացնելու նպատակով, որով հաստատվում են կամ կարող են խախտվել հայցվորի իրավունքները: Այսինքն՝ Գարեգին Հարությունյանը մինչև 12.03.2019 թվականը տեղեկացված չէր վարչական ակտի գոյության մասին, հետևաբար վերջինս, չհանդիսանալով վարչական ակտի հասցեատեր, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով և այդ մասին իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին, վիճարկման հայցով դիմել է դատարան: Ենան պայմաններում դատավարական ժամկետների քաղաքողումը հարգելի

համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման, ինչի կապակցությամբ Դատարանը կայացրել է իրավաչափ դատական ակտ, որպիսի հանգամանքն անսրեակել է Վերաքննիչ դատարանի կողմից (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշման 9-10 էջերը):

Վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանս, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերջ նշված որոշման պարզադատարանական մասի հետ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը որոշման նշված մասի վերաբերյալ:

Գտնում եմ, որ վիճարկման հայցը դատարան ներկայացնելու ժամկետի հաշվարկման և այն հարգելի ճանաչելու առանձնահատկությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը չի բխում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ վիճարկման հայցադիմումն օրենքով սահմանված դատավարական ժամկետի պահպանմամբ ներկայացնելը հայցադիմումը վարույթ ընդունելու անհրաժեշտ նախապայմաններից մեկն է: Մինչև նույն ժամանակ օրենսդիրը սահմանել է բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու իրավական հնարավորություն՝ համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Գտնում եմ, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետների հարցի լուծումն ուղղակիորեն պայմանավորված է վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով, իսկ վարչական ակտի ուժի մեջ մտնելու հարցը կարգավորված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով:

Այսպես. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

Նույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարչական ակտի հրապարակումը կատարվում է վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

Գրավոր վարչական ակտը ենթակա է պարտադիր հրապարակման, եթե վարչական մարմնին հայտնի չեն այդ ակտով ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի եզրափակիչ մասը: Նման եղանակով հրապարակման մեջ պետք է նշվի, թե որտեղ կարելի է ամբողջությամբ ծանոթանալ վարչական ակտին, այդ թվում՝ դրա հիմնավորմանը:

Վերոգրյալ իրավանդությունների վերլուծությունից ակնհայտ է, որ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահն օրենսդիրը պայմանավորել է այդ ակտի մասին **վարչական վարույթի մասնակիցների** օրենքով սահմանված եղանակներից որևէ մեկով իրազեկելու հանգամանքով, ինչը նշանակում է, որ վերջիններիս համար վարչական ակտը կարող է ուժի մեջ մտնել իրազեկվելու հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Ինչպես վերը նշվեց, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված է, թե ում և ինչպես պետք է վարչական մարմինն իրազեկի վարչական ակտի ընդունման մասին: Ըստ այդմ, վարչական մարմինը պարտավոր է իրազեկել վարչական վարույթի մասնակիցներին՝ իրազեկումն իրականացնելով հանձնման կամ հրապարակման եղանակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Գտնում եմ, որ վարչական վարույթի մասնակիցների՝ վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց համար վարչական ակտը կարող է ուժի մեջ մտնել այդ վարչական ակտի ընդունման մասին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված եղանակներից որևէ մեկով իրագրելու հաջորդ օրվանից: Ընդ որում, վարչական վարույթի մասնակիցների թիվը մեկից ավելի լինելու դեպքում վարչական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքը պայմանավորված է նրանցից յուրաքանչյուրի իրագրելմամբ:

Հարկ եմ համարում ընդգծել, որ օրենքով նախատեսված հանձնման եղանակով վարչական ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակիցներին իրագրելն առանձնակի բարդություն չի ներկայացնում այն դեպքերում, երբ վարչական վարույթի մասնակիցների կազմը հայտնի է: Այլ է իրավիճակը, սակայն, երբ վարչական մարմնին հայտնի չեն այդ ակտով ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները: Այլ կերպ ասած, վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձանց հանձնման եղանակով վարչական ակտի ընդունման մասին իրագրելու գործնականում անհնար է, եթե վարչական մարմինը չի տիրապետում բավարար տեղեկատվության այն անձանց մասին, ում իրավունքներն ուղղակիորեն կարող են շոշափվել վարչական ակտով: Նման դեպքերի համար օրենսդիրը սահմանել է վարչական ակտի իրագրելման այլ եղանակ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրելով վարչական ակտի հրապարակման պարտադիր կանոն:

Հարկ եմ համարում ընդգծել նաև, որ բարենպաստ վարչական ակտի ուժի մեջ մտնելը կարևորվում է այդ ակտի կատարման ենթակա լինելու առումով միայն, մինչդեռ միջամտող վարչական ակտի պարագայում դրա ուժի մեջ մտնելը կարևորվում է այն վիճարկելու ժամկետների հաշվարկման առումով, հետևաբար, որևէ նշանակություն չի կարող ունենալ ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ հանդիսացող վարչական ակտի մասին վերջինիս իրագրելվելու, այսինքն՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքն այն պարագայում, երբ վարչական ակտը վիճարկվում է երրորդ անձի կողմից՝ իր իրավունքներին միջամտելու հիմքով: Վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետների հաշվարկման համար էական նշանակություն ունի միայն այն հարցը, թե երբ է վարչական ակտն ուժի մեջ մտել ակտը վիճարկողի, այսինքն՝ հայցվորի համար: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, վարչական ակտը վիճարկվում է դրա հասցեատիրոջ, թե վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի կողմից, հայցվորը պետք է հայցադիմումը դատարան ներկայացնի երկամսյա ժամկետում՝ սկսած այն օրվան հաջորդող օրվանից, երբ ինքն է իրագրելվել վարչական ակտի ընդունման մասին:

Այսպիսով, գտնում եմ, որ վիճարկման հայցադիմումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետում ներկայացված լինելու հանգամանքն ուղղակիորեն պայմանավորված է այդ ակտի ընդունման մասին հայցվորի (և ոչ թե որևէ այլ անձի) իրագրելման հանգամանքով, ուստի վիճարկման հայցը կարող է ներկայացվել այդ ակտի ընդունման մասին հենց հայցվորի իրագրելվելուն հաջորդող օրվանից սկսած երկամսյա ժամկետում, իսկ այդ ժամկետը բաց թողնելու դեպքում նաև հայցվորը պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն: Ընդ որում, հայցվորի վրա չի կարող դրվել դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու պարտականություն՝ վիճարկման հայցի ժամկետի հաշվարկը պայմանավորելով վարչական ակտի ընդունման մասին վարչական վարույթի մնացած մասնակիցների (այդ թվում ակտի հասցեատիրոջ կամ հասցեատերերի, երրորդ անձանց) իրագրելման հանգամանքով, քանի որ նրանցից յուրաքանչյուրը կարող է կրել միայն իր համար սահմանված դատավարական ժամկետները բաց թողնելու բոլոր իրավական հետևանքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ վիճարկման հայցադիմումը կարող է համարվել դատավարական ժամկետների խախտմամբ ներկայացված, եթե այն ներկայացվել է վիճարկվող վարչական ակտի ընդունման մասին հայցվորի իրագրելման հաջորդող օրվանից սկսած երկամսյա ժամկետի ավարտից հետո: Նշված դեպքում հայցվորը պարտավոր է ներկայացնել նաև դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն: Հայցվորը պարտավոր չէ սակայն ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետը

հարգելի համարելու և վերականգնելու միջնորդություն այն դեպքում, երբ հայցադիմումը դատարան է ներկայացրել վիճարկվող վարչական ակտի ընդունման մասին իր իրազեկվելու հաջորդող օրվանից սկսած երկամսյա ժամկետում, սակայն վարչական վարույթի մյուս մասնակիցների իրազեկվելու հաջորդող օրվանից հաշված երկամսյա ժամկետի ավարտից հետո:

Միևնույն ժամանակ, հարկ են համարում ընդգծել, որ վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունների վերաբերյալ վերն արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի են միայն այն դեպքերում, երբ վիճարկման հայցը ներկայացվում է դրա իրավունքն ունեցող անձի, այսինքն՝ վարչական ակտի հասցեատիրոջ կամ վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի կողմից: **Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ վիճարկման հայցը ներկայացվում է վարչական ակտի հասցեատեր կամ վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ չունեցող անձի կողմից, վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրենսդրական կարգավորումները չեն կարող կիրառվել, քանի որ որևէ իրավական ակտով սահմանված չէ ակտի հասցեատեր կամ վարչական վարույթի հետ առնչություն չունեցող անձին վարչական ակտի ընդունման մասին իրազեկվելու կանոն:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է այն սուբյեկտների ցանկը, որոնք կարող են հայցել վարչական արդարադատություն: Այսպես. համաձայն նշված իրավանորմի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ **պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝**

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՄԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (տե՛ս Մվետլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ վերլուծության ենթարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձն

իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը: Նշվածից հետևում է նաև, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգիռ անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (տե՛ս Լը Քոնպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթհեմն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32):

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ, որոնք խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անձանց՝ իրենց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունք տրամադրելով հանդերձ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, վերջիններիս համար, սակայն, չի ընձեռում հանրության շահերը պաշտպանելու հնարավորություն, այն է՝ չի թույլատրում անձանց իրականացնել վարչական մարմինների վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության իրավաչափության օբյեկտիվ վերահսկողություն: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար, պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ որոշում, գործողություն կամ անգործություն, այլև նշված ոչ իրավաչափ որոշման, գործողության կամ անգործության արդյունքում անձանց սուբյեկտիվ իրավունքների խախտում կամ խախտման առաջացման վտանգ:

Այսինքն՝ վարչական արդարադատություն, բացառությամբ նույն օրենսգրքով սահմանված դեպքերի, կարող է հայցել միայն այն անձը, ով հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, կամ այլ կերպ ասած՝ այն անձը, ում սուբյեկտիվ իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել (*տե՛ս Միրվարդ Աբրահամյանն ընդդեմ ՀՀ կատավարությանն առընթեր անչարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի գարաձքային բաժնի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, Արմավիրի քաղաքապետարանի՝ թիվ ՎԳ/0432/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2020 թվականի որոշումը*):

Սույն գործով գտնելով, որ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պատասխան գրությունից հետո է միայն Գարեգին Հարությունյանն իրագեկվել, որ Արմեն Չատյանին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում շինարարություն իրականացնելու նպատակով, որով խախտվում են կամ

կարող են խախտվել հայցվորի իրավունքները, այսինքն՝ Գարեգին Հարությունյանը մինչև 12.03.2019 թվականը տեղեկացված չէր վարչական ակտի գոյության մասին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Գարեգին Հարությունյանը, չհանդիսանալով վարչական ակտի հասցեատեր, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով և այդ մասին իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին, վիճարկման հայցով դիմել է դատարան:

Հարկ եմ համարում ընդգծել, որ եզրահանգում անելով այն մասին, որ հայցվորը վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ, սակայն, չի նշել, թե որ պահն է դիտել որպես վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու օր, որից սկսած էլ, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումը, հաշվարկել է երկամսյա ժամկետը: Բացի այդ, վարչական ակտի գոյության մասին մինչև 12.03.2019 թվականը Գարեգին Հարությունյանի տեղեկացված չլինելը Վճռաբեկ դատարանը պայմանավորել է միայն այն հանգամանքով, որ Գարեգին Հարությունյանը չի հանդիսացել վարչական ակտի հասցեատեր՝ անտեսելով օրենսդրական այն կարգավորումը, որ վարչական ակտի մասին իրազեկելու կանոնը հավասարապես կիրառելի է նաև վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի, մասնավորապես վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի համար:

Գտնում եմ, որ բաց թողնված ժամկետը վերականգնելու հիմքերին անդրադառնալուց առաջ նախ անհրաժեշտ է անդրադառնալ հայցվորի կողմից դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքին, որից հետո միայն՝ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջնորդությամբ ներկայացված փաստարկներին: Այլ կերպ ասած, քանի դեռ չի հաստատվել, որ հայցվորը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը, խոսք չի կարող լինել «դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին»:

Մինևույն ժամանակ, հարկ եմ համարում ընդգծել, որ վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը կարող է բաց թողնվել միայն այն անձի կողմից, ով, հանդիսանալով վարչական ակտի հասցեատեր կամ վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձ, վիճարկման հայցը դատարան է ներկայացնում վարչական ակտի ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկվելուց, այսինքն՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետի խախտմամբ: Այլ կերպ ասած, վիճարկման հայցի դատավարական ժամկետները կարող են վերաբերել միայն վարչական ակտի հասցեատերերին կամ վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձանց, ում իրավունքներին և օրինական շահերին միջամտում է տվյալ վարչական ակտը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ վիճարկվող շինարարության թույլտվությունը տրամադրելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում և շինարարության թույլտվությունը տալու պահին, այն է՝ 25.12.2018 թվականի դրությամբ այդ վարչական ակտով կառուցապատման ենթակա՝ Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/2 հասցեի շինության հարևանությամբ գտնվող Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքի սեփականատերեր են հանդիսացել Արմենուի Հարությունյանը և Աննա Հարությունյանը (հիմք իրավունքների պետական գրանցման թիվ 2571277 վկայականի պատճենը, հավելվածի գ.թ. 52): Այսինքն՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտի տրամադրմանն ուղղված վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ կարող էին ունենալ Արմենուի Հարությունյանն ու Աննա Հարությունյանը:

Հայցվորը Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքը ձեռք է բերել 22.03.2019 թվականին կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա, որից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման 27.03.2019 թվականին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27032019-01-0100 վկայականի պատճենը, հավելվածի գ.թ. 48): Այսինքն՝ սույն գործով վիճարկվող շինարարության թույլտվությունը տրամադրելուն ուղղված

վարչական վարույթի ընթացքում և շինարարության թույլտվությունը տալու պահին, այն է՝ 25.12.2018 թվականի դրությամբ այդ վարչական ակտով կառուցապատման ենթակա՝ Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/2 հասցեի շինության հարևանությամբ գտնվող Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքի նկատմամբ հայցվորը չի ունեցել որևէ իրավունք, որը կարող էր խախտվել այդ վարույթի ընթացքում ընդունված վարչական ակտով: Ըստ այդմ, հայցվորը չի հանդիսացել վկայակոչված շինարարության թույլտվությունը տալուն ուղղված վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձ, ուստի վարչական ակտի ընդունման մասին օրենքով սահմանված կարգով նրան իրազեկելու որևէ պարտավորություն վարչական մարմինը չի ունեցել:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների և վկայակոչված փաստական հանգամանքների վերլուծությունների հիման վրա գտնում եմ, որ վարչական ակտի ուժի մեջ մտնելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների կանոնակարգումները սույն գործով հայցվորի նկատմամբ չեն կարող կիրառվել, քանի որ այդ կանոնակարգումների համաձայն վերջինս չի հանդիսացել ոչ ակտի հասցեատեր և ոչ էլ այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձ: Նշվածի հաշվառմամբ հայցվորի նկատմամբ չի կարող կիրառվել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դատավարական ժամկետը:

Մինևսյն ժամանակ, գտնում եմ, որ դատավարական ժամկետին անդրադառնալուց առաջ նախ անհրաժեշտ է անդրադառնալ հայցվորի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի սուբյեկտ հանդիսանալու հարցին, քանի որ դրանով է պայմանավորված լինելու նույն օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետների կիրառելիությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, որպես ինքնուրույն հայցատեսակ, ամրագրելով վիճարկման հայցը՝ օրենսդիրը երաշխավորել է անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումն իրենց իրավունքներին միջամտող ոչ իրավաչափ վարչական ակտերից: Ընդ որում, վիճարկման հայցով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմն օրենսդիրն ամրագրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն որի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Այսինքն՝ վարչական ակտը վիճարկելու իրավունքն օրենսդրորեն երաշխավորված է միայն այն անձանց համար, որոնց իրավունքներն ու ազատությունները խախտվել են կամ կարող են խախտվել վիճարկվող վարչական ակտով, իսկ խախտվել կարող են միայն վարչական ակտն ընդունելու պահին առկա և ոչ թե ապագայում ձեռք բերվելիք իրավունքները: Ըստ այդմ, խախտման վտանգ նույնպես կարող է առաջանալ միայն առկա իրավունքների պարագայում: Հակառակ մեկնաբանման դեպքում կարող է ստեղծվել իրավական անորոշ այնպիսի վիճակ, երբ տասնամյակներ առաջ ընդունված շինարարության թույլտվությունները կարող են վիճարկվել նաև դրանց հիման վրա կառուցված շենքերի հարևանությամբ գտնվող անշարժ գույքերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած այնպիսի անձինք, ովքեր շինարարության թույլտվությունները տալու ժամանակ նույնիսկ ծնված չեն եղել, սակայն դառնալով անշարժ գույքի սեփականատերեր իրազեկվել են հարևանությամբ գտնվող շենքի կառուցման համար հիմք հանդիսացած ոչ իրավաչափ շինարարության թույլտվության մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում անդրադառնալով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից այդ գույքի իրավանախորդի իրավունքի առերևույթ խախտումները վերացնելու պահանջ ներկայացնելու իրավական խնդիրներին և ելնելով

գործի փաստական տվյալներից, արձանագրել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով՝ գնորդը, որը գործով հայցվոր է, չունի վիճարկվող վարչական ակտով ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքով կամ այլ իրավական ակտերով երաշխավորված որևէ իրավունքի կամ օրինական շահի խախտում, իսկ հայցի առարկա վարչական ակտը կարող էին վիճարկել Սիմոն Սիմոնյանը և Ադալինի Սրապիոնյանը (գույքի նախկին սեփականատերերը¹⁰) (տե՛ս Սիրվարդ Աբրահամյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային բաժնի, Արմավիրի քաղաքապետարանի՝ թիվ ՎԳ/0432/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2020 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական արդարադատություն հայցող անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերից յուրաքանչյուրով պետք է պարզվի՝ արդյոք հայցվորը հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, այսինքն՝ «շահագրգիռ անձ», քանի որ միայն իրավական շահագրգռվածության առկայության պարագայում անձը կարող է ակնկալել իր խախտված իրավունքների դատական պաշտպանություն: Ընդ որում, իրավունքների խախտման, կամ այլ կերպ ասած՝ դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ լինելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է հենց հայցվորը (տե՛ս Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ա.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերությունն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ի դեմն Մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Այգեպատ» գինու-կոնյակի գործարան»՝ ՍՊԸ-ի թիվ ՎԳ/9190/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ գտնում են, որ 25.12.2018 թվականի շինարարության թույլտվությունը, որպես վարչական ակտ, որևէ ձևով չէր կարող խախտել հայցվորի իրավունքները, քանի որ այդ շինարարության թույլտվությունը տալու պահին վերջինս չի ունեցել գրանցված այնպիսի իրավունք, որը կարող էր խախտվել այդ ակտով, հետևաբար հայցվորը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով չի կարող հանդիսանալ 25.12.2018 թվականի շինարարության թույլտվությունը վիճարկելու իրավունք ունեցող սուբյեկտ: Նշված շինարարության թույլտվությունը կարող էին վիճարկել Արմենուհի Հարությունյանն ու Աննա Հարությունյանը, քանի որ վերջիններս էին հանդիսանում այդ ակտով կառուցապատման ենթակա՝ Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/2 հասցեի շինության հարևանությամբ գտնվող Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքի սեփականատերեր, ուստի շինարարության թույլտվությունը կարող էր միջամտել հենց նրանց իրավունքներին:

Այսպիսով, գտնում են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով 25.12.2018 թվականի շինարարության թույլտվությունը վիճարկելու իրավունք ունեցող սուբյեկտ չհանդիսանալու պարագայում հայցվորի նկատմամբ չի կարող կիրառվել լինել նաև սույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դատավարական ժամկետը:

Վճռաբեկ դատարանը, սակայն, որպես սույն գործով վիճարկվող շինարարության թույլտվության մասին հայցվորի իրազեկման օր, դիտարկել է Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պատասխան գրությունը, գտնելով, որ վերջինս մինչև նշված գրությունը 12.03.2019 թվականին ստանալը տեղեկացված չի եղել վարչական ակտի գոյության մասին: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հայցվորը, չհանդիսանալով վարչական ակտի հասցեատեր, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով և այդ մասին իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին, վիճարկման հայցով դիմել է դատարան: Նման պայմաններում դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման:

¹⁰ Գույքի նախկին սեփականատերեր նշումն իմն է:

Գտնում եմ, որ դատավարական ժամկետը հայցվորի կողմից բաց թողնելու փաստն արձանագրելու համար Վճռաբեկ դատարանը նախ պետք է հստակ ամրագրեր վիճարկվող շինարարության թույլտվության ուժի մեջ մտնելու օրը, որից հետո միայն եզրահանգում կատարեր այդ ժամկետի բաց թողնված լինելու մասին: Իսկ դրա համար անհրաժեշտ էր անդրադառնալ նաև հայցվորի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սուբյեկտ լինելու հանգամանքին:

Բացի այդ, եթե նույնիսկ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պատասխան գրության մասին իրազեկվելը Վճռաբեկ դատարանը բավարար է համարել նաև շինարարության թույլտվության մասին հայցվորի իրազեկված լինելու փաստն արձանագրելու համար, ապա այդ պարագայում իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին վիճարկման հայցը պետք է համարեր սահմանված ժամկետում ներկայացված, որի դեպքում դատավարական ժամկետը վերականգնելու անհրաժեշտություն առկա չի կարող լինել:

Մինչդեռ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ առանց ամրագրելու սույն գործով վիճարկվող շինարարության թույլտվության ուժի մեջ մտնելու օրը և առանց անդրադառնալու հայցվորի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի սուբյեկտ լինելու հանգամանքին, այդուհանդերձ գտել է, որ հայցվորը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը: Մինչև սույն ժամանակ, հարգելի համարելով վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորը մինչև 12.03.2019 թվականը չէր էլ կարող տեղեկացված լինել սույն գործով վիճարկվող շինարարության թույլտվության գոյության մասին: Ավելին նշված շինարարության թույլտվությունը տալու պահին հայցվորը չէր կարող հանդիսանալ վարչական վարույթում երրորդ անձի հնարավոր կարգավիճակ ունեցող անձ և վարչական մարմինն էլ չունէր պարտականություն օրենքով սահմանված կարգով նրան իրազեկելու վարչական ակտի ընդունման մասին, քանի որ առնվազն մինչև 27.03.2019 թվականը նշված վարչական ակտով կառուցապատման ենթակա՝ Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/2 հասցեի շինության հարևանությամբ գտնվող Երևանի Վանի 1915 թվականի հերոսամարտի (Այգեստան 10) փողոցի թիվ 17/1 հասցեի գույքի նկատմամբ հայցվորը չի ունեցել գրանցված որևէ իրավունք:

Այսպիսով, գտնում եմ, որ տվյալ դեպքում դատավարական ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը, որպես առարկայագուրկ, ենթակա չի եղել քննարկման, քանի որ բացակայել են դատավարական ժամկետները հաշվարկելու երկետային տվյալները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանի 09.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը ենթակա է վերացման սույն հատուկ կարծիքում նշված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ռ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ՎԴԻ2/0007/05/15
Ք. Մկոյան

Վարչական գործ թիվ **ՎԴԻ2/0007/05/15**
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2020 թվականի մարտի 12-ին քննելով Թերեզա Բաբայանի ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.03.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Թերեզա Բաբայանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Տավուշի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորաբաժանում)՝ թիվ 11-28-0032-0001 ծածկագրով անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 30.10.2003 թվականին տրամադրված վկայականի համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան համայնքում Ռազմիկ Չիբուխյանի անվամբ 2.600 քմ մակերեսով հողամասի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ 1.300 քմ մակերեսի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Թերեզա Բաբայանը պահանջել է մասնակի՝ 1.300 քմ մակերեսի մասով, անվավեր ճանաչել թիվ 11-28-0032-0001 ծածկագրով անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 30.10.2003 թվականին տրամադրված վկայականի համաձայն ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան համայնքում Ռազմիկ Չիբուխյանի անվամբ

2.600 քմ մակերեսով հողամասի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 13.02.2015 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նույն օրվա որոշմամբ դատավարությունում երրորդ անձինք են ներգրավվել Ռ-ազմիկ, Սվետլանա, Միքայել և Զինա Չիբուխյանները:

Դատարանի 23.01.2017 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է մինչև Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցի պարզումը:

Թերեզա Բաբայանի անունից Արևիկ Եղիազարյանը 16.05.2017 թվականին ներկայացրել է միջնորդություն՝ վարչական գործի վարույթը վերսկսելու մասին:

Դատարանի 22.06.2017 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը վերսկսելու մասին Թերեզա Բաբայանի ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանի միջնորդությունը մերժվել է:

Թերեզա Բաբայանը 18.10.2017 թվականին Դատարան է ներկայացրել միջնորդություն՝ խնդրելով Սվետլանա Չիբուխյանին փոխարինել նրա իրավահաջորդներ Ռ-ազմիկ Չիբուխյանով, Միքայել Չիբուխյանով, Զինա Չիբուխյանով և վարչական գործի վարույթը վերսկսել:

Դատարանը 28.11.2017 թվականի որոշմամբ մերժել է դատավարության մասնակցին իրավահաջորդով փոխարինելու և վարչական գործի վարույթը վերսկսելու մասին Թերեզա Բաբայանի միջնորդությունը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.03.2018 թվականի որոշմամբ Թերեզա Բաբայանի ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.11.2017 թվականի «Դատավարության մասնակցին իրավահաջորդով փոխարինելու և վարչական գործի վարույթը վերսկսելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Թերեզա Բաբայանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանն իր որոշմամբ չի անդրադարձել և իրավական գնահատական չի տվել Տավուշի մարզի Ենոքավան համայնքի ղեկավարի 05.05.2017 թվականի թիվ Ե9-51-17 գրությանը և հիմք է ընդունել միայն նոտարների կողմից տրված գրությունները, երբ ժառանգության ընդունման եղանակ է համարվում նաև վեցամսյա ժամկետում ժառանգական գույքի փաստացի տիրապետումը, կառավարումը և օգտագործումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը չի հիմնավորել, թե ինչու չպետք է կիրառվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կետերը, 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, 1227-րդ հոդվածը, այլ պետք է կիրառվի միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1245-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների, համատիրությունների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը, կամ այլ ապացույցները, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը: Նշված

տեղեկանքը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է ապացույց, որով հաստատվում է, որ Սվետլանա Չիրուխյանի մահից հետո ժառանգական գույքը փաստացի տիրապետում են ամուսինը՝ Ռազմիկ Չիրուխյանը, տղան՝ Միքայել Չիրուխյանը, և աղջիկը՝ Զինա Չիրուխյանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ եթե Դատարանին չէր բավարարում համայնքի ղեկավարի կողմից տրված գրությունը՝ փաստացի տիրապետման փաստի վերաբերյալ, ապա Դատարանն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության ձևակերպման մասին տեղեկություններ ստանալու համար պետք է դիմեր ոչ միայն նուտարներին, այլև համայնքի ղեկավարին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 05.03.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ և 95-րդ հոդվածների խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե երբ է դատարանը պարտավոր վերսկսել վարչական դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցված գործի վարույթը և պարզել դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդության հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (իրավաբանական անձի կամ վարչական մարմնի վերակազմակերպում, ֆիզիկական անձի մահ կամ պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր) դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով, որի վերաբերյալ կայացնում է որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանայույց հետո:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ վարչական գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերից է դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահը, որի դեպքում դատավարության մասնակիցներից մեկը դուրս է մնում հետագա դատավարությունից: Այսինքն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը բոլոր այն դեպքերում, երբ դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն: Ընդ որում, գործի վարույթը կասեցվում է մինչև կասեցումն առաջացրած հանգամանքի վերացումը, այն է՝ իրավահաջորդության հարցի լուծումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործին մասնակցող քաղաքացու մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործին մասնակցող քաղաքացու մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելը հետապնդում է դատավարությունում

կողմի ներկայությունն ապահովելու և դրա միջոցով նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակ *(ընն Սամվել, Սահակ և Սույթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԳ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախ՝ արձանագրել, որ այն հավասարապես կիրառելի է նաև վարչական գործերով՝ հաշվի առնելով քաղաքացու մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու հարցի վերաբերյալ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսդրությամբ համանման կարգավորումները, ապա հավելել, որ դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով իրավահաջորդությանը վերաբերող իրավանորմերը պետք է կիրառվեն այնպես, որ ապահովվի ողջամիտ հավասարակշռություն դատավարության տարբեր մասնակիցների (նրանց իրավահաջորդների) իրավունքների միջև: Այսինքն՝ գործի վարույթը կասեցնելու միջոցով դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդների իրավունքների պաշտպանությունն ապահովելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև դատավարության մնացած մասնակիցների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման անհրաժեշտությունը: Մասնավորապես, գործի վարույթը կասեցնելու միջոցով դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդների իրավունքների պաշտպանության ապահովումը չպետք է անհաղթահարելի խոչընդոտներ առաջացնի դատավարության մնացած մասնակիցների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում պարզաբանել, թե վարչական գործի վարույթը դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցվելու դեպքում երբ է իրավահաջորդության հարցը համարվում լուծված, իսկ կասեցումն առաջացրած հանգամանքը՝ վերացած:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ֆիզիկական անձի մահից հետո իրավահաջորդության հարցերի կարգավորմանն է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Ժառանգական իրավունք» վերտառությամբ տասնմեկերորդ բաժինը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը

կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (*լրեն Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նուորարական փարածքի նուրար Ալվարդ Մեքրոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, սահմանելով ժառանգելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ժառանգությունն ընդունելու եղանակները, միաժամանակ նախատեսել է նաև այն ժամկետը, որի ընթացքում կարող է ընդունվել ժառանգությունը:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի համաձայն՝

1. Ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

2. Եթե ժառանգության իրավունքն այլ անձանց համար ծագում է ժառանգությունից ժառանգի հրաժարվելու դեպքում, ապա նրանք կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետի մնացած մասի, իսկ եթե այն երեք ամսից պակաս է, ապա երեք ամսվա ընթացքում:

3. Այն անձինք, որոնց համար ժառանգության իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Վերը նշված իրավանորմերից հետևում է, որ ժառանգության ընդունման համար որպես ընդհանուր կանոն սահմանված է վեցամսյա ժամկետ, որը սկսում է հաշվարկվել ժառանգության բացման օրվանից: Մինևնույն ժամանակ, օրենսդիրը ժառանգությունն ընդունելու այլ ժամկետներ է սահմանել այն անձանց համար, որոնք ժառանգության իրավունք են ստացել ժառանգությունից այլ ժառանգի հրաժարվելու կամ վերջինիս կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում: Մասնավորապես, ժառանգությունից ժառանգի հրաժարվելու դեպքում ժառանգության իրավունք ստացած անձինք ժառանգությունը կարող են ընդունել ժառանգության բացման օրվանից հաշվարկվող վեցամսյա ժամկետի մնացած մասի ընթացքում, սակայն եթե այդ ժամկետը պակաս է երեք ամսից, ապա ժառանգությունը կարող է ընդունվել երեք ամսվա ընթացքում: Իսկ այն անձինք, որոնք ժառանգության իրավունք են ստացել այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, ապա կարող են ժառանգությունն ընդունել ժառանգության բացման օրվանից հաշվարկվող վեցամսյա ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում: Սահմանված ժամկետների ավարտից հետո ժառանգության ընդունումը հնարավոր է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով: Ընդ որում, նշված կարգավորումները կիրառելի են նաև ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելու (ժառանգության տրանսմիսիա) դեպքում ժառանգության իրավունքի իրացման նկատմամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդված):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետը ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետն է՝ սահմանված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 3-րդ կետով: Բացառություն է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգը, երբ հնարավոր է ժառանգությունն ընդունել սահմանված ժամկետի ավարտից հետո:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով վարչական գործի վարույթը կասեցնելու ժամանակահատվածն այն ժամանակահատվածն է, որն օրենքով սահմանված է որպես ժառանգությունն ընդունելու առավելագույն հնարավոր ժամկետ, քանի որ առավելագույնն այդ ժամկետում է լուծվում դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի իրավահաջորդության հարցը: Փաստորեն, դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահվան

հիմքով վարչական գործի վարույթը կասեցնելու առավելագույն ժամանակահատվածը ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետն է: Իսկ այդ ժամկետի ավարտը վկայում է գործի վարույթը կասեցնելու համար հիմք հանդիսացած հանգամանքի վերացման մասին: Վերջինս էլ իր հերթին նշանակում է, որ այդ ժամկետի ավարտից հետո դատարանը պարտավոր է վերսկսել գործի վարույթը և համարժեք միջոցներ ձեռնարկել դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի իրավահաջորդության հարցը պարզելու նպատակով: Այսինքն՝ այդ դեպքում դատարանը, վերսկսելով գործի վարույթը, պետք է համարժեք միջոցներ ձեռնարկի պարզելու համար, թե ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ինչպես է լուծվել իրավահաջորդության հարցը: Ընդ որում, դրա իրավական հնարավորությունը ևս սահմանված է օրենսդրությամբ, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, որի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»): Դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ վարչական դատավարությանը պատասխանողի կամ երրորդ անձի կարգավիճակով մասնակցող ֆիզիկական անձի իրավահաջորդները տարբեր պատճառներով, այդ թվում՝ իրենց իրավանախորդի մասնակցությամբ վարչական գործի առկայության մասին անտեղյակության կամ դիտավորությամբ, հնարավոր է համապատասխան դիմում չներկայացնեն դատարան, և գործի վարույթը կասեցված մնալու արդյունքում կարող է վրա հասնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավական հետևանքը, համաձայն որի՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործի վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել (բացառությամբ նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի), և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ դեպքում կխախտվի դատավարության մասնակիցների իրավունքների միջև ողջամիտ հավասարակշռությունը, իսկ դատավարության մնացած մասնակիցների իրավունքների դատական պաշտպանությունը կդառնա անհնարին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե վարչական գործի վարույթը կասեցվում է դատավարության մասնակից ֆիզիկական անձի մահվան հիմքով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ապա կասեցումն առաջացած հանգամանքը համարվում է վերացած՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետն ավարտվելու պահից, և գործի վարույթը ենթակա է վերսկսման: Հետևաբար, ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի ավարտից հետո դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ վերսկսել կասեցված գործի վարույթը և գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու սկզբունքի պահպանմամբ ձեռնամուխ լինել դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդության հարցը պարզելուն:

Մինչնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառելիության սահմաններին:

Նախ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի են բացառապես այն դեպքում, երբ վարչական գործի վարույթը կասեցվում է վարչական դատավարությունում պատասխանող կամ երրորդ անձ հանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով (եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն):

Գործի վարույթը սեփական նախաձեռնությամբ վերսկսելու դատարանի լիազորությունը կիրառելի չէ վարչական գործի վարույթը հայցվոր ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցվելու դեպքում, քանի որ օրենսդիրը հայցվորի փոխարինման համար անհրաժեշտ է համարել նաև հայցվորի իրավահաջորդի միջնորդության առկայությունը (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսինքն՝ հայցվոր ֆիզիկական անձի մահվան դեպքում վարչական գործի վարույթը վերսկսելու համար միայն ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի ավարտը բավարար չէ, այլ անհրաժեշտ է նաև հայցվորի փոխարինման վերաբերյալ հայցվորի իրավահաջորդի միջնորդությունը:

Երկրորդ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները չեն բացառում գործի վարույթի վերսկսումը մինչև ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի (ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետ) ավարտը: Մասնավորապես, գործի վարույթը ենթակա է վերսկսման նաև այն դեպքում, երբ մինչև վերջը նշված ժամկետի ավարտը դատարանին հայտնի են դառնում դատավարության մահացած մասնակցի իրավահաջորդության հարցը լուծված լինելու վերաբերյալ տեղեկություններ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Թերեզա Բաբայանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակի 1.300 քմ մակերեսի մասով, անվավեր ճանաչել թիվ 11-28-0032-0001 ծածկագրով անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 30.10.2003 թվականին տրամադրված վկայականի համաձայն ՀՀ Տավուշի մարզի Ետքավան համայնքում Ռազմիկ Չիբուխյանի անվամբ 2.600 քմ մակերեսով հողամասի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանի 13.02.2015 թվականի որոշմամբ դատավարությունում երրորդ անձինք են ներգրավվել Ռազմիկ, Սվետլանա, Միքայել և Զինա Չիբուխյանները:

Սվետլանա Չիբուխյանը մահացել է 13.08.2016 թվականին (**հատոր 7-րդ, գ.թ. 50**):

Դատարանի 23.01.2017 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է մինչև Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցի պարզումը:

Թերեզա Բաբայանի անունից Արևիկ Եղիազարյանը 16.05.2017 թվականին ներկայացրել է միջնորդություն՝ վարչական գործի վարույթը վերսկսելու մասին:

Դատարանի 22.06.2017 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը վերսկսելու մասին Թերեզա Բաբայանի ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանի միջնորդությունը մերժվել է:

Թերեզա Բաբայանը 18.10.2017 թվականին Դատարան է ներկայացրել միջնորդություն՝ խնդրելով Սվետլանա Չիբուխյանին փոխարինել նրա իրավահաջորդներ Ռազմիկ Չիբուխյանով, Միքայել Չիբուխյանով, Զինա Չիբուխյանով և սույն վարչական գործի վարույթը վերսկսել:

Դատարանը մերժել է դատավարության մասնակցին իրավահաջորդով փոխարինելու և վարչական գործի վարույթը վերսկսելու մասին Թերեզա Բաբայանի միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ Իջևան նոտարական տարածքի նոտարներ Գ. Անանյանի 09.11.2017 թվականի թիվ 01/14 և Անուշ Ամիրխանյանի 10.11.2017 թվականի թիվ Ն-123/17 գրությունների համաձայն՝ 13.08.2016 թվականին մահացած Սվետլանա Չիբուխյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ չկան, և ժառանգությունը չի ձևակերպվել: Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ վարչական գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ Թերեզա Բաբայանի ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանի 16.05.2017 թվականի միջնորդությունը մերժելու մասին Դատարանի 22.06.2017 թվականի որոշման կայացումից հետո նոր հանգամանք առկա չէ, իսկ ներկայացված փաստաթղթերին արդեն իսկ գնահատական տրվել է 22.06.2017 թվականի որոշմամբ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Թերեզա Բաբայանի ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցը դեռևս լուծված

չէ, իսկ պարզապես փաստացի տիրապետման հանգամանքի հիմքով Դատարանը իրավասու չէ կատարելու դատավարության մասնակցի փոխարինում իրավահաջորդության կարգով»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների վերոգրյալ պատճառաբանություններն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի վարույթը կատեցվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, այն է՝ մահացել է երրորդ անձ Սվետլանա Չիբուխյանը, իսկ վիճելի իրավահարաբերությունը թույլատրում է իրավահաջորդություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սվետլանա Չիբուխյանը մահացել է 13.08.2016 թվականին, հետևաբար նշված օրը բացվել է նրա ժառանգությունը: Սվետլանա Չիբուխյանի ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետն ավարտվել է 14.02.2017 թվականին, որից հետո եռամսյա ժամկետը՝ 15.05.2017 թվականին: Մինչև նշված ժամկետի ավարտը Դատարանում չեն ստացվել Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցը նախքան սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի ավարտը լուծված լինելու վերաբերյալ տեղեկություններ: Հետևաբար, Սվետլանա Չիբուխյանի ժառանգության ընդունման ժամկետի հարցը համարվում է լուծված, իսկ սույն գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքը՝ վերացած, Սվետլանա Չիբուխյանի ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետի ավարտից՝ 15.05.2017 թվականից, հետո: Նման պայմաններում Դատարանը պարտավոր էր վերը նշված ժամկետի ավարտից հետո վերսկսել գործի վարույթը և ձեռնամուխ լինել Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցի պարզմանը, որից հետո միայն կարող էր քննարկել նաև Սվետլանա Չիբուխյանին նրա իրավահաջորդներով փոխարինելու հարցը: Մինչդեռ Դատարանը մերժել է Սվետլանա Չիբուխյանին իրավահաջորդով փոխարինելու վերաբերյալ Թերեզա Բաբայանի միջնորդությունը՝ առանց գործի վարույթը վերսկսելու և Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցը պարզելու ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու՝ դրանով իսկ խախտելով վարչական դատավարության մահացած մասնակցին իրավահաջորդով փոխարինելու համար օրենսդրությամբ սահմանված կարգը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առանց գործի վարույթը վերսկսելու և Սվետլանա Չիբուխյանի իրավահաջորդության հարցը պարզելու ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու մերժելով Սվետլանա Չիբուխյանին իրավահաջորդով փոխարինելու վերաբերյալ Թերեզա Բաբայանի կողմից 18.10.2017 թվականին ներկայացված միջնորդությունը՝ Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ և 95-րդ հոդվածների պահանջները: Նշված խախտումները հանգեցրել են Թերեզա Բաբայանի արդար դատաքննության իրավունքի խախտման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների հիմքով վճռաբեկ բողոքը բավարարելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.03.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ դատավարության մասնակցին իրավահաջորդով փոխարինելու մասին

միջնորդությունը մերժելու մասով վերացնել ՀՀ վարչական դատարանի 28.11.2017 թվականի «Դատավարության մասնակցին իրավահաջորդով փոխարինելու և վարչական գործի վարույթը վերսկսելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ՎԴ/12139/05/18
Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/12139/05/18
2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2020 թվականի հուլիսի 08-ին
քննելով ըստ «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպության և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության հայցի ընդդեմ Ավետիք Միքայելյանի ու Յուրիկ Ավագյանի (այսուհետ՝ Համապատասխանողներ) վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) ներկայացուցիչներ Գենյա Պետրոսյանի, Երանուհի Թումանյանցի և Դավիթ Գյուրջյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպությունը և Կազմակերպությունը պահանջել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով Համապատասխանողներին ենթարկել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 19.12.2018 թվականի որոշմամբ Կազմակերպության կողմից ներկայացված մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է, իսկ «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված մասով հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.02.2019 թվականի որոշմամբ Կազմակերպության ներկայացուցիչների բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.12.2018 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու, մասով հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մասով մերժելու մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 6-րդ կետը, ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 214-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձինք չշված հիմքերի ստկայությունը պայմանադրանք են հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ օրենսդիրը որպես առանձին զանցանքներով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումով ՀՀ վարչական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտ սահմանել է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին. օրենսդրի կողմից որևէ վերապահում կամ սահմանափակում չի նախատեսվել ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության համար հիմք հանդիսացած տեղեկատվության աղբյուրի վերաբերյալ: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե հայցադիմումի համար հիմք հանդիսացած փաստն արձանագրվել է անմիջականորեն հայցվոր դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության դիտորդի, թե այլ կազմակերպության դիտորդի կողմից, թե միանգամայն այլ տեղեկատվության աղբյուրի միջոցով՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունն իրավասու է դիմելու ՀՀ վարչական դատարան՝ համապատասխան իրավախախտումը կատարած անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Տվյալ դեպքում Ազգային ժողովի 09.12.2018 թվականի արտահերթ ընտրությունների ընթացքում «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպության և Կազմակերպության կողմից հավատարմագրված դիտորդները, ինչպես նաև «www.asparez.am» և «Ասպարեզ» օրաթերթ լրատվամիջոցների ներկայացուցիչները «Ականատես» դիտորդական նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն են իրականացրել ՀՀ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում ընդգրկված մի շարք տեղամասերում, այդ թվում՝ թիվ 26/10 տեղամասում, իսկ հայցադիմումը ներկայացվել է Կազմակերպության և «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են վերացնել Վերաքննիչ դատարանի 18.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պայմանադրանքայինները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասի և 214-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների՝ անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունքի իրացման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասի, 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 214-րդ հոդվածի 1-ին մասի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 6-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

արդյո՞ք վարչական դատարանն իրավասու է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժել ընտրությունների ժամանակ նույն ընտրական տեղամասում դիրքորդական առաքելություն իրականացրած կազմակերպության կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի կարգով ներկայացված՝ ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չըրացնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումի ընդունումն այն պարճատարանությամբ, որ այդ խախտումը դիրքարկվել է նույն ընտրական տեղամասում դիրքորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպության դիրքորդի կողմից:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (...):

ՀՀ սահմանադրական դատարանը 23.04.2010 թվականի թիվ ՍԴՌ-880 որոշմամբ արձանագրել է, որ «ՀՀ Սահմանադրության 2-րդ անփոփոխելի հոդվածի 2-րդ մասը սահմանում է ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերը: Այսինքն՝ 2-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման առարկան 1-ին մասում հռչակված ժողովրդաիշխանության սկզբունքի կոնկրետացումն է դրա իրականացման ձևերի առնչությամբ:

Ընդ որում, ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է՝

ա) ազատ ընտրությունների և հանրաքվեների միջոցով,

բ) ինչպես նաև՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրության այս վերջին դրույթը սահմանում է, որ ներկայացուցչական հիմունքներով ժողովրդի իշխանությունն իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, որոնք պետք է նախատեսված լինեն Սահմանադրությամբ:

Ժողովրդաիշխանության սահմանադրական իմաստից, մասնավորապես, բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները. 1) լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող, 2) ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմիններ, 3) պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, 4) ունենալ իր այդ իրավունքների սահմանադրորեն ամրագրված կարգավիճակ:

Ժողովուրդն իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելու դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով (...), որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմինները պետք է արտահայտեն ժողովրդի կամքը և շահերը, հաշվետու լինեն ժողովրդի, ընտրողների առջև»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընտրությունները՝ որպես ժողովրդի իշխանության արտահայտման ուղղակի (անմիջական) ձև, ունեն կարևոր իրավական և քաղաքական նշանակություն: Դրանք ապահովում են ժողովրդի մասնակցությունը պետական գործերի կառավարմանը՝ ներկայացուցչական մարմինների ձևավորման միջոցով: Ժողովրդավարական պետությունում ընտրությունների դերը և նշանակությունը հաշվի առնելով՝ ՀՀ Սահմանադրությունը ոչ միայն հստակ սահմանել է, թե որ մարմիններն են ձևավորվում ընտրությունների միջոցով, այլև ամրագրել է այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է ընտրական իրավունքի համակարգը: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են *ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ*:

Ժողովրդավարական ընտրությունների չափանիշներից է դրանց թափանցիկությունը, քանի որ միայն թափանցիկ ընտրությունները կարող են ապահովել ընտրական իրավունքի՝ վերը նշված սկզբունքների կիրառումը և արտահայտել ժողովրդի կամքը: Նշված չափանիշը, օրինակ, սահմանված է «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 07.10.2002 թվականի կոնվենցիայում, որը վավերացնելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է 28.02.2005 թվականին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընտրությունների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օրենսդիրը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանել է նաև դիտորդական առաքելության իրավունքը: Այսպես՝

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիտորդական առաքելությունը ընտրությունների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու արդյունավետ միջոց է, որը հանրությանը հնարավորություն է տալիս վերահսկողություն իրականացնել ընտրությունների կազմակերպման և անցկացման նկատմամբ: Դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությունը, ի թիվս այլևի, կարող է նպաստել ընտրությունների ժամանակ օրինականության ապահովմանը, ապահովել ընտրական գործընթացի վերաբերյալ անկախ և անկողմնակալ տեսակետի տրամադրումը, կանխել ընտրախախտումները, խթանել ընտրական գործընթացի

թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահության աճին:

Օրենսդիրը դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացումն ապահովելու համար սահմանել է մի շարք իրավական միջոցներ և երաշխիքներ՝ նախատեսված ինչպես «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը» ՀՀ սահմանադրական օրենքով, այնպես էլ այլ իրավական ակտերով: Այս համատեքստում օրենսդիրն ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին նաև օժտել է օրենքով սահմանված դեպքերում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու հնարավորությամբ: Այսպես՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարող են դիմել նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմը՝ նույն օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխում ներառված 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված անձանց հայցադիմումով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 246-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի կարգը (...) դատարաններում որոշվում է (...) նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերով (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանները քննում են նույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի երրորդ պարբերության համաձայն՝ նույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը հայցադիմում են ներկայացնում անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրություն կազմած լինելու կամ չլինելու հանգամանքից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեք-հարյուրապատիկի չափով:

Վերը նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ինչպես նաև այդ հոդվածների կարգավորման համատեքստից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար

անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի համար սահմանել է որոշակի կարգ, որի համաձայն՝ այդ գործերը քննելու իրավասությունը վերապահել է ՀՀ վարչական դատարանին, իսկ այդ գործերը հարուցելու նպատակով վարչական դատարան դիմելու՝ հայցադիմումներ ներկայացնելու իրավունք է վերապահել նաև այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմված լինելու հանգամանքից: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շարքում նախատեսվելով նաև այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ օրենսդիրը վերջիններիս նշված իրավունքի իրացումը որևէ ձևով չի պայմանավորել համապատասխան վարչական իրավախախտումը հենց իրենց դիտորդի կողմից դիտարկված լինելու հանգամանքով: Ավելին, եթե օրենսդիրը նույն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական դատարան դիմելու իրավունք է վերապահել նույն մասում նշված հիմքերից որևէ մեկի պարտադիր առկայության պայմաններում, ապա 2.1-րդ մասով նախատեսված՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների դատարան դիմելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայման է համարել միայն օրենքով նախատեսված դեպքը՝ կոնկրետ դեպքում օրենքով այդ սուբյեկտներին դատարան դիմելու իրավունքի վերապահումը (տվյալ դեպքում նման հնարավորություն նախատեսված է **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 6-րդ կետով**): Այսինքն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունքը ծագում է այդ ընտրությունների ժամանակ հայցվոր կազմակերպության կողմից դիտորդական առաքելություն իրականացվելու փաստի ուժով, իսկ համապատասխան խախտումը հենց հայցվոր հասարակական կազմակերպության դիտորդի կողմից դիտարկված լինելը այդ կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի իրացման պայման չէ:

Վերը նշված եզրահանգումը բխում է նաև ժողովրդավարական հասարակությունում ընտրությունների ժամանակ իրականացվող դիտորդական առաքելության դերից և նշանակությունից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասով սահմանված իրենց իրավունքն իրացնում են ընտրությունների ժամանակ իրենց առջև դրված խնդիրները (օրինակ՝ ընտրությունների ժամանակ օրինականության ապահովմանը նպաստելը, ընտրախախտումները կանխելը, ընտրական գործընթացի թափանցիկությունը խթանելը) իրականացնելու շրջանակներում, ուստի, պետք է հնարավորություն ունենան օրենքով սահմանված ընտրախախտումների վերաբերյալ տեղեկությունների տիրապետելու դեպքում համապատասխան իրավախախտումը կատարած անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դիմել դատարան՝ անկախ այն հանգամանքից, թե որն է (ով է) այդ ընտրախախտման վերաբերյալ հայցվորի տեղեկատվության աղբյուրը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն գործի փաստերը, արձանագրում է, որ *ընտրությունների ժամանակ նույն ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավունք՝ անկախ այն հանգամանքից, թե այդ խախտումը դիտարկվել է հենց հայցվոր հասարակական կազմակերպության դիտորդի, թե՛ նույն ընտրական տեղամասում դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպության դիտորդի կողմից:*

Մույն գործի փաստերի համաձայն՝ 09.12.2018 թվականին տեղի են ունեցել Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: Այդ ընտրություններին որպես տեղական հասարակական կազմակերպություններ՝ դիտորդական առաքելություն են իրականացրել նաև «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպությունը և Կազմակերպությունը: 09.12.2018 թվականին ժամը 13.21-ին թիվ 26/10 տեղամասում գրանցվել է միջադեպ՝ «քվեարկողը քվեախցիկից դուրս է քվեարկել՝ բացահայտ: (...) Հանձնաժողովի նախագահը հրաժարվեց գրանցել գրանցամատյանում (...): Միջադեպի վերաբերյալ ձևաթուղթը լրացվել է Նեյլի Ղուլյանի կողմից, իսկ որպես այլ անձի տվյալներ նշվել են Հասմիկ Ռաֆայելյանի տվյալները **(հավելված, գ.թ. 20, 21):**

Դիմելով դատարան՝ «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպությունը և Կազմակերպությունը պահանջել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով Համապատասխանողներին ենթարկել վարչական պատասխանատվության:

Հայցադիմումով «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպությունը և Կազմակերպությունը հայտնել են, որ «Հասմիկ Ռաֆայելյանը 09.12.2018 թվականին գտնվել է թիվ 26/10 տեղամասում՝ որպես «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպության դիտորդ: Վերջինը դիտարկել է հետևյալ խախտումները (...): Դիտորդը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ավետիք Միքայելյանին և տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Յուրիկ Ավագյանին խնդրել է խախտումը գրանցել գրանցամատյանում, սակայն վերջինները հրաժարվել են խախտումը գրանցել (...):

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 19.12.2018 թվականին նաև որոշում է կայացրել Կազմակերպության կողմից ներկայացված մատվ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին այն պատճառաբանությամբ, որ «(...) պահանջի հիմքում դրված է «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդ Հասմիկ Ռաֆայելյանի կողմից դիտարկված խախտումը, որպիսի պայմաններում (...) հայցադիմումը՝ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված պահանջի մասով, ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից»:

Վերաքննիչ դատարանի 18.02.2019 թվականի որոշմամբ Կազմակերպության ներկայացուցիչների բերած վերաքննիչ բողոքը մերժվել է այն պատճառաբանություններով, որ «(...) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմը, հայցելով վարչական արդարադատություն, պետք է հիմնավորի գործով իր շահագրգիռ անձ լինելը», «(...) Ավետիք Միքայելյանին և Յուրիկ Ավագյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի հիմքում դրված է Հասմիկ Ռաֆայելյանի կողմից դիտարկված խախտումը, ով հանդիսանում է «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդ: Ստացվում է, որ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացվել է Ավետիք Միքայելյանին և Յուրիկ Ավագյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցապահանջ այն պարագայում, երբ ենթադրյալ խախտման փաստն արձանագրվել է այլ կազմակերպության՝ «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդի կողմից: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումն առ այն, որ «հայցադիմումը՝ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված պահանջի մասով, ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից»:

Վերոգրյալ դիրքորոշումների ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ այդ հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու համար անհրաժեշտ պայման է, որ հայցադիմումը ներկայացված լինի դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված «ակնհայտություն» եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չլրիպող ու կասկած չհարուցող ակնհայտություն: Այսինքն՝ սույն իրավական նորմում տեղ գտած կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն (*սրեն Տիգրան Սահասարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՊ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ 09.12.2018 թվականին տեղի ունեցած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացրած Կազմակերպությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասի և **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի** 6-րդ կետի հիման վրա իրավունք ուներ դիմել դատարան՝ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով՝ անկախ այն հանգամանքից, **թե այդ խախտումը դիտարկվել է հենց իր դիրքորդի, թե՛ սույն ընտրական փեդանստում դիրքորդական առաքելություն իրականացրած «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԷԼ ՀԱԿԱԿՈՆՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական կազմակերպության դիրքորդի կողմից**: Ընդ որում, ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասով սահմանված իր իրավունքն իրացնում է դիտորդական առաքելության նպատակների շրջանակներում, ուստի այդ դատական գործով իր իրավական շահը հիմնավորելու լրացուցիչ պարտականություն չի կրում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցադիմումը՝ Կազմակերպության կողմից ներկայացված պահանջի մասով, չի կարող համարվել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված, հետևաբար այդ մասով հայցադիմումի ընդունումը ենթակա չէր մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, Կազմակերպության կողմից ներկայացված պահանջի մասով մերժելով հայցադիմումի ընդունումը, իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին, մերժելով Կազմակերպության ներկայացուցիչների բերած վերաքննիչ բողոքը, և Դատարանի 19.12.2018 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու, մասով հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մասով մերժելու մասով, թողնելով անփոփոխ, թույլ են տվել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ Կազմակերպությանը զրկել են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով սահմանված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքից, որը տվյալ դեպքում դրսևորվել է դատական ակտը կայացնելիս, մի դեպքում, վերը նշված դատավարական իրավունքի նորմերը խախտելու, իսկ, մյուս դեպքում, դրանք սխալ կիրառելու եղանակով՝ խաթարելով արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ և

169-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 19.12.2018 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու, մասով հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման՝ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

ՀԱՏՈՐ XIV



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am